

Աստվածաբանութեան գրքերի  
ՀԱՅ մեկնությունների գրակարգը

Library of Armenian Commentary  
of the books of the Holy Bible

Commentaries on the Books of the New Testament

12

St. Grigor of Thatev

Commentary on the Gospel of John

By Rev. Father Ghukas Zakharian  
Edited by Arshavir Gaboujian

Holy See of St. Etchmiadzin  
2005

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՎԻ ԳՐՔԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

12

## Սուրբ Գրիգոր Տաթևացի

### ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅՈՐԱՍՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

Աշխատասիրությամբ՝ Ղուկաս աբեղա Զաքարյանի  
Խմբագիր՝ Արշավիր Գաբուջյան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ Էջմիածին  
2005

Յրամանաւ

**Ա.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ**

ՍՐԲԱՁՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՐԱՓԱՌ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

By order

of His Holiness KAREKIN II

Supreme Patriarch and  
Catholicos of All Armenians

*Տպագրվում է մեկենասությամբ*

**ԼԵՎՈՆ-ԿԱՌ-ԼՈՍ ԱՍԼԱՆՅԱՆԻ**

*(Բուենոս Այրես, Արգենտինա)*

*Խմբագրական աշխատանքները կարարվել են  
Եկեղեցիների համաշխարհային Խորհրդի հայաստանյան  
Միջեկեղեցական Կլոր Սեղանի հիմնադրամի միջոցներով*

*Printed by donations of*

***Levon - Carlos Aslanian***

*(Buenos Aires, Argentina)*

*Redaction was made by donations  
of The Armenian Inter-Church Round Table Foundation  
of the World Council of Churches*

**Մատենաշարի գլխավոր խմբագիր՝  
ԵԶՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**Chief editor of the serial publication  
BISHOP YEZNICK PETROSSIAN**

ՀՏԴ 23/28

ԳՄԴ 86.37

Գ - 885

Սուրբ Գրիգոր Տաթևացի

**Մ – 885 ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅՈՐԱՆՆՈՒ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ:** Աշխատասիրությանը՝ Ղուկաս աբեղա Զաքարյանի: Խմբագիր՝ Արշավիր Գաբուջյան: -Ս. Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2005, 632 էջ:

ԳՄԴ 86.37

ISBN 99930-75-28-0

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2005 թ.

## ԱՌԻՐԲ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ

### Ա Կյանքն ու գործունեությունը

Սուլր Գրիգոր Տաթևացին ծնվել է 1346 թվականին<sup>1</sup>: Հայոց Սարգիսը, մի արհեստավոր էր, որը գաղթում է Արճեց քաղաքից և հաստատվում Վայոց ձորում, մայրու՝ փարպեցի մի գեղջկուիի: Մի քանի վաղամեռ որդիներից հետո ուխտով դիմում են սուլր Գրիգոր Լուսավորչի բարեխոսությանը: Շուտով աստվածահաճ տեսիլքով նրա մայրը Աստծուց ստանում է իր խնդրանքների պատասխանը. Վայոց ձորի Թմուկ գյուղում ծնվում է Հայոց վարդապետը: Իրենց ուխտին հավատարիմ ծնողները 15-ամյա Գրիգորին ուղարկում են Տաթևի վանք, որտեղ պատանին աշակերտում է սուլր Յովհանն Որոտնեցուն: Տյառնաշունչ սրբավայրերն այցելելուց ուսուցիչը չի մոռանում նաև իր աշակերտին: Հայոց Եկեղեցուն պատկանող սրբոց Յակոբյանց տաճարում 1373 թվականին ձեռնադրվում է կուսակրոն քահանա՝ Գրիգոր անունով (ավազանի անունը՝ Խութլուշահ): Մի քանի տարի հետո Երգնկայի մեջ ստանում է վարդապետական գավազան, իսկ ժայրագույն վարդապետական աստիճանին արժանանում է Ապրակունյաց վանքում, սուլր Յովհանն Որոտնեցու կյանքի վերջին տարիներին: Քիչ ժամանակ անց վախճանվում է Որոտնեցին, և սուլր Գրիգոր Տաթևացին հաջորդում է նրան Հայոց վարդապետության կոչման մեջ: 1390 թվականին տեղափոխվում է Տաթևի վանք և իհմնականում այստեղ է անցկացնում իր կյանքի մնացած 20-22 տարիները: Այստեղ նա Ապրակունյաց վանքից իր հետ բերած աշակերտների շարքերը համալրում է ուրիշ այլ աշակերտներով: Մասնավորաբար այս շրջանում է բարձրանում Տաթևի վանք-համալսարանի ուսումնագիտական համբավը: Կյանքի վերջին տարիներին նա փոխադրվում է Վասպուրականի Սեծովիա վանքը, որտեղ փորձում է հաշտեցնան եզր գտնել Աղթամարի և Սսի կաթողիկոսությունների միջև, սակայն իր այս առաքելությունը չի հաջողվում: Աղթամարի Դավիթ կաթողիկոսը նրան վտարում է իր սահմաններից: Սուլր Գրիգոր Տաթևացին, արդեն հիվանդացած, հազիվ կարողանում է վերադառնալ Տաթևի վանք: Մեկ շաբաթ հետո՝ 1409 թվականին, սուլր Ստեփանոս Նախավկայի տոնի օրը հոգին ավանդում է առ Աստուած<sup>2</sup>:

<sup>1</sup> «Եջմիածին», 1959, դեկտ., էջ 3: Շնորհը արքեպակ. Գալուստյան, «Հայազգի սուլրբեր», 1997, էջ 127: Նորայր արք. Պողարյան, «Հայ գրողներ», Երուսաղեմ, 1971, էջ 396:

<sup>2</sup> Գևորգ վրդ. Կարպիսյան, Գր. Տաթևացի, «Եջմիածին» 1959, Ղեկտ., էջ 25-27:

## Բ Մատենագրական վաստակը

Տաթևացու ստեղծած կարևորագույն գործերն են. «Գիրք հարցմանց»-ը, «Ոսկեփորիկ»-ը, «Ամառան» և «Զմեռան» քարոզգործերը, «Եսայեայ» «Մատրէի», «Յովկիաննու», մեկնությունները և այլն: Առ այսօր հրատարակվել են «Գիրք հարցմանց»-ը (1729), «Ոսկեփորիկ»-ը (1747), «Ամառան» և «Զմեռան» քարոզգործերը, առաջինը՝ 1740թ., երկրորդը՝ 1741թ. (բոլորն էլ հրատ. Կ.Պոլսում), Սաղմոսաց մեկնության համառոտ տարբերակը (աշխատությանք՝ Ա. Քյոշկերյանի, Եր., 1992), ինչպես նաև «Ոսկեփորիկ»-ի Յ. Քյոսեյանի իրականացրած աշխարհաբար թարգմանությունը՝ ծանոթագրություններով (Եր., 1995):

Սուրբ Գրիգոր Տաթևացու մատենագրական ժառանգության վերաբերյալ կարելի է երկարորեն խոսել, սակայն գոհունակությամբ պետք է նշել, որ մեզանից առաջ արդեն բավականաչափ խոսվել է նրա թողած վաստակի մասին<sup>1</sup>, ուստի մենք այստեղ ավելորդ ենք համարում անդրադառնալ դրան: Յեղինակի հսկայածավալ մատենագրության մի կարևոր մասն են կազմում մեկնողական երկերը, որոնց մեջ իր արժանի տեղն է զբաղեցնում Յովկիաննու Ավետարանի մեկնությունը:

## ՄԵԿՆՈՂԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Եկեղեցական ժառանգության մեջ իրենց ուրույն տեղն ունեն սուրբգրական մեկնությունները, հատկապես ավետարանական մեկնությունները: Չորս Ավետարաններից առաջին երեքը, որոնք հայտնի են համատեսական անունով, աչքի են ընկնում Տիրոջ երկրային կյանքի, տնօրինական գործունեության պարզ նկարագրությամբ, մինչդեռ չորրորդ՝ Յովկիաննու Ավետարանը՝ աստվածաբանական դժվարընկալելի թափանցումներով: Ուստի վերջինիս մեկնաբանությունը պահանջում էր մասնավոր ճիգ ու ջանք՝ ունկնդրին կամ ընթերցողին աստվածաբանական ճշնարտությունները բացատրելու համար:

<sup>1</sup>Տե՛ս C. C. Արևշատյան, “Փիլոսոփական աշխատանքներ Հրատարակություններում”, Եր., 1957. Նորայր արքեպիսկ. Պողառյան, «Հայ գրողներ», Երևան, 1971, էջ 396-401: Շնորհը արքեպիսկ. Գալուստյան, «Հայազգի սուրբեր», 1997, էջ 127-135: Գևորգ Վոլոգդական կարպիսյան, «Գրիգոր Տաթևացի», Եջմիածին, 1959, մարտ, 25-32, ապրիլ, էջ 19-25: Սերժիկ Մարտիրոսյան, «Ս. Գրիգոր Տաթևացի, մեկնություն «Ժողովողի», «Ինաստութիւն Սոդոմնի»», Ս. Եջմիածնի Յովկեր ճեմարան, ավարտաճառ, 1989, էջ 17-22: Արա Մարտիրոսյան, «Ս. Գրիգոր Տաթևացի, մեկնություն «Երգ Երգոյն»», Ս. Եջմիածնի Յովկեր ճեմարան, ավարտաճառ, 1989, էջ 9-18:

Նախնի եկեղեցու մեջ հայտնի են Հովհաննու Ավետարանի հետևյալ մեկնություններ. նախ՝ վալենտինական Գերակլիոնի (150-180թ.) աշխատությունը, որը Հովհաննու Ավետարանի առաջին մեկնությունն է: Սրան հաջորդում է Որոգինեսի կատարած մեկնությունը<sup>1</sup>: Վերջինիս հաջորդում է սուրբ Հովհան Ոսկեբերանի 88 քարոզները<sup>2</sup>: Հունարեն պահպանվել են Թեոդորոս Մոպսուեստացու կատարած մեկնության պատառիկները, Կյուրեղ Ալեքսանդրացու մեկնությունը<sup>3</sup>, ինչպես նաև Օգոստինոս Երանելու 124 քարոզները՝ լատիներեն լեզվով:

Գրերի գյուտից անմիջապես հետո սուրբ Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարքե Հայրապետը ծեռնարկեցին առաջին հերթին Աստվածաշունչ մատյանի թարգմանության գործը: Այդ ժամանակվա հանրահայտ կրթական օջախներ մեկնած հայ ապագա թարգմանիչները վերադառնալով իրենց հետ Հայաստան են բերում հսկայական մեկնողական ժառանգություն, որոնց թվում էին սուրբ Հովհան Ոսկեբերանի «Մատքեռսի մեկնությունը», Եփրեմ Ասորու «Համաբարբառ Ավետարանի մեկնությունը», սուրբ Գրիգոր Նյուսացու «Ինն Երանությանց մեկնությունը» և «Հայր մեր»-ի մեկնությունը, սուրբ Կյուրեղ Ալեքսանդրացու «Ղուկասի մեկնությունը», Հիպողիտոս Բոստրացու «Հովհաննու մեկնությունը» և այլն<sup>4</sup>: Սուրբ Գրոց մեկնությունների թարգմանությունը շարունակվում է նաև հետագա դարերում: Հայաստանում մի շարք վանքեր դառնում են Աստվածաշնչի մեկնության կրթօջախներ, որոնցից ամենից նշանավորը Սյունյաց վարդապետարանն էր, որը երկար դարեր (Զ-Ժ դդ.) հայ իրականության մեջ կոչվում էր «Երկրորդ Աթենք»<sup>5</sup>:

Հայ միջնադարյան մատենագրության մեջ հայտնի են հետևյալ ավետարանական մեկնությունները.

«Չորս Ավետարանների մեկնություն» ս. Ստեփանոս Սյունեցի<sup>6</sup>:

Մատքեռսի Ավետարանի մեկնություններ՝ Անանիա Սանահնեցի, ս. Ներսես Շնորհալի, ս. Հովհան Որոտնեցի և ս. Գրիգոր Տաթևացի:

Մարկոսի Ավետարանի միայն մեկ թերի մեկնություն՝ Բարսեղ Մաշկորցի:

Ղուկասու Ավետարանի մեկնություններ՝ Իգնատիոս Սևեռնեցի, Սարգիս Կունդ, Մատքեն Չուլայեցի:

<sup>1</sup> Ն.Տ., էջ 142-143: Толковая Библия т. 3, втр. изд. 1987, ст. 305:

<sup>2</sup> Пётр. Д Акад. 1902.

<sup>3</sup> 1910 թ. Մոսկ. Դух. Академия.

<sup>4</sup> Տես Յ. Գարեգին Զարդիանալեան, «Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց» (Դ-Ժ), Վենետիկ, 1889:

<sup>5</sup> Տես Եգմիկ թին. Պետրոսյան, «Ավետարանների միջնադարյան հայկական մեկնություններ», «Եջմիածին» 1982, հունվար, էջ 35:

<sup>6</sup> Աշխարհաբար թարգմանությունը հրատարակվել է աշխատասիրությամբ Վիգեն դպիր Ղազարյանի, (Ս. Եջմիածին, 1997):

Յովիաննու Ավետարանի մեկանություններ՝ Սարգիս Կունդ, ս. Յովիան Որոտնեցի, ս. Գրիգոր Տաթևացի, Մատթեոս Զուղայեցի, Գրիգոր Խլաթեցի և ուրիշներ<sup>1</sup>:

Ընդհանուր պատկերը մեզ ցույց է տալիս, որ Ավետարանական մեկանությունները լրջորեն կարևորվել են հայ հետինակների կողմից, և նրանք տարբեր ժամանակներում, հակառակ հրապարակի վրա եղած համարնույթ մեկանությունների, իրենց օրվա հոգևոր պետքերը դարձանելու նպատակով, վերստին մեկնել, բացատրել են այս կամ այն Ավետարանը:

### ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ «ՄԵԿԱՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻ» ԱՌԱՍՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԸ

Ս. Գր. Տաթևացու այս գործը, ինչպես տեսնում ենք երկը պարունակող ՍՍ թիվ 3294 ձեռագրի հիշատակարանից, գրվել է վանական ուսանողության համար:

Յիշատակարանը հետևյալն է.

«Արդ, սա է մասն ինչ յաշխատութենէ վարժապետին իմոյ՝ Գրիգորի Մեծի, եւ մասն ինչ ի քրտանց հարանց, եւ բոլորն իսկ յառատաձիրն Տեառնէ, զոր եւ յոյժ աշխատութեամբ հաւաքեցի առ ի դիրքահասութիւն մանկանց նորածնելոցդ, զոր եւ հայցեմ, որք պատահիք այսմ, յիշեսջիք զՄատթեոս՝ սպասաւոր բանի:

Արդ, ոչ թէ լիապես գրեալ է աստ, այլ մասնաւոր բանից եղեւ լուծումն, իսկ զգերակատարն ի Մեծէն Գրիգորէ լուծեալ, անոր գտշիր ճշմարտապէս:

Դարձեալ՝ ծանիք, զի Մեծն Գրիգոր բազում աշխատանաւք եւ ջերմ սիրով զՅոհաննու Աւետարանս դաս ասաց եւ քաղուածու շինեաց մինչեւ յայն, որ ասէ. «Յառաջագոյն քան զտաւն Զատկին», եւ փոխեցաւ ի Քրիստոս, եւ գիրքս թերատ մնաց: Իսկ փանաքիս Մատթեոս էրէց զքաղուածս յորժամ գրեցի, զպակասն երրորդ տետրի Մատթեոս վարդապետի շինածէն լմնեցի: Աղաչեմ անմեղադիր լինել, զի սէր եւ փափագ բազում ունէի, վասն այն գրեցի թուին Ձե (1458)»<sup>2</sup>:

Այս հիշատակարանից կարելի է ենթադրել, որ սուրբ Գրիգոր Տաթևացին Յովիաննու Ավետարանի մեկանությունը որպես առարկա դասավանդել է իր աշակերտներին. «Մեծն Գրիգոր բազում աշխատանաւք եւ ջերմ սիրով

<sup>1</sup> Տես Եգմիկ քին. Պետրոսյան, «Ավետարանների միջնադարյան հայկական մեկանություններ», հումկար, էջ 35-41:

<sup>2</sup> ՍՍ ձեռ. թիվ 3294, թեր՝ 320ա:

գՅոհաննու Ալետարանս դաս ասաց», և միայն առաջին տասներկու գլուխներին է քաղվածքների տեսք տվել, այսինքն՝ զրի վերածել. «Եւ քաղուածուու շինեաց մինչեւ յայն, որ ասէ. «Յառաջագոյն քան գտաւն Զատկին», եւ փոխեցաւ ի Քրիստոս, եւ գիրքս թերատ մնաց»: Իսկ Մատթեոս երեցը, որը սուրբ Գրիգոր Տաթևոց աշակերտն է եղել («Սա է մասն ինչ յաշխատութենէ վարժապետին իմոյ»), իր ջերմ սիրո պատճառով չի ցանկացել գործը կիսատ թողնել. «Զի սէր եւ փափագ բազում ունէի, վասն այն գրեցի», և լրացրել է՝ քաղելով Մատթեոս Զուղայեցու Հովհաննու մեկնությունից («Իսկ փանաքիս Մատթեոս էրեց զքաղուածս յորժամ գրեցի, զպակասն երրորդ տետրի Մատթեոս վարդապետի շինածեն լճնեցի»):

Մեր ձեռքի տակ ունենք նաև մի հիշատակարան, որտեղ հիշատակություն կա սուրբ Գրիգոր Տաթևոցու Հովհաննու մեկնության մասին: Այդ գործը Տաթևոցու քարոզգիրքն է, որը ընդօրինակել է Թովմա Մեծոփեցին<sup>1</sup>: Մեծոփեցու հիշատակարանի մեջ հետևյալ տողերն ենք կարդում.

«Եւ յեր[որոր]դ ամին, շարժեալ ի Հոգոյն ազդմանէ, եկեալ բնակեցաւ յերկիրս Քաջբերունուոյ, ի սուրբ ուխտս Մեծոփոյ: Եւ ժողովեաց բազում վարդապետս եւ կրօնաւորս, աւելի քան զուբառուն ոգիս: Եւ զամ մի լընան դասիւ վարդապետութեան զամենեսեան լուսաւորեաց: Երիս գիրս բացայատեաց՝ «հանքերութիւն քաջ նահատակին Յոբայ, եւ զԳիրս գրչութեան Արիստակիսի եւ Մեծին Գեղրգեայ, եւ զՍուրբ Ալետարանն Հովհաննու: Եւ եհաս մինչ ի յայն տեղի, որ ասէ՝ յառաջագոյն քան զուօն Զատկին: Եւ եկեալ սիրելի աշակերտք նորա՝ գողացան զնա ի գիշերի: Եւ մեք ելեալ զնա // ցաք զկնի նորա՝ հանդերձ վարդապետաւք եւ եպիսկոպոսաւք եւ գորց աշակերտաւք, եւ հասաք նմա յերկիրն Արարատեան, լալով, ողբալով, արտասուօք, աղիողորմ կսկսանօք, եւ ոչ կարացաք դարձուցանել զնա, եւ անդ ետ մեզ հրաման վարդապետութեան»<sup>2</sup>:

Մեծոփեցու հիշատակարանից հստակ երևում է, որ սուրբ Գրիգոր Տաթևոցին Մեծոփա վանքում եղած ժամանակ դասավանդել է Հորի գրքի և Հովհաննու Ավետարանի մեկնության առարկան: Իհարկե, հնարավոր է, որ նա այս աշխատությունները կատարած լիներ ավելի վաղ ժամանակ, սակայն կարծում ենք, որ բոլորովին պատահական չէ, որ Թովմա Մեծոփեցին նշում է մինչև այն հատվածը, որտեղ հասել է սուրբ Գրիգոր Տաթևոցու Հովհաննու Ավետարանը մեկնելիս. «Եւ եհաս մինչ ի յայն տեղի, որ ասէ. «Յառաջագոյն քան զուօն Զատկին»<sup>3</sup>: Վերիիշելով նաև նախագաղափար հիշատակարանը, որտեղ գրիչ Մատթեոս երեցը նշում է, որ սուրբ Գրիգոր Տաթևոցին մահվան պատճառով չի հասցրել ավարտին հասցնել

<sup>1</sup> ՍՍ Զեռ. թիվ 2065:

<sup>2</sup> Տե՛ս Լ. Ս. Խաչիկյան, «Ճե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Ա, 1955, էջ 101:

<sup>3</sup> Տե՛ս Հովհ., ժգ, 1:

այս գործը, իսկ Թովմա Մեծոփեցին էլ հաղորդում է, որ. «Մինչ դեռ յառագաստի պարեաք եւ հոգով եւ մարմնով ուրախ էաք, իսկոյն համբաւ մահու նորա խոռվեցոյց զմեզ, զի յետ բաժանելոյն մեր ի նմանէ ԼԶ օր միայն եկաց ի մարմնի»<sup>1</sup>, հետևաբար մեր եզրակացությունն այն է, որ սուրբ Գրիգոր Տարեացին իր Յովհաննու մեկանության տասներկու գլուխները գոել է Մեծոփա վանքում՝ իրեն աշակերտած վանականների և հոգևորականների համար:

Շարունակելով մեկանության մյուս գլուխների քննությունը, մենք այն համեմատեցինք Մատթեոս Զուղայեցու մեկանության հետ<sup>2</sup>: Պարզվեց, որ Մատթեոս Զուղայեցու Յովհաննու մեկանությունը խիստ հաճառոտ մի գործ է, այնքան հաճառոտ, որ նույնիսկ Մատթեոս երեցը, իհմնականում բառացի օգտվելով նրա մեկանությունից, միաժամանակ բավականին հավելում ներ է կատարել:

Այսպիսով կարող ենք արձանագրել, որ սուրբ Գրիգոր Տարեացին «Յովհաննու մեկանությունը» գոել է 1406-1409 թթ. ընթացքում: Այդ աշխատանքը ընդգրկում է Յովհաննու Ավետարանի տասներկու գլուխները, որը շարունակել է սուրբ Գրիգոր Տարեացու աշակերտ Մատթեոս երեցը՝ օգտվելով Մատթեոս Զուղայեցու «Յովհաննու մեկանությունից»: Մեր ունեցած հիշատակարանը վկայում է, որ տասներեքերորդ գլխի հավելումը կատարվել է 1458 թվականին<sup>3</sup>:

Ամբողջ Ավետարանի մեկանության մեջ բացակայում է շնացող կնոջ դրվագը, այս հատվածը բացակայում է նաև Նանա Ասորու մոտ: Այդ հատվածին, որը համարվում է հետագայի հավելում, սուրբ Գրիգոր Տարեացին անդրադառնում է ութերորդ գլխի սկզբում: «Եւ աստ է աւելորդ աւետարանն, որ վասն կնոջն շնացելոյ, զոր մեք ի վերջոյ Աւետարանիս դիցուք զմեկանութիւն նորա»: Քասկանալի է, որ շնացող կնոջ դրվագի մեկանությունը չի բացակայում լոկ այն պատճառով, որ Նանայի մոտ այն չկա, և ոչ էլ այն պատճառով, որ այն հետագայի հավելում է, այլ որ հեղինակը պարզապես չի հասցրել իր ավարտին հասցնել այս ծավալուն աշխատանքը:

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Սայր Աքոռ Սուրբ Էջմիածնի ձեռագրատում, ձեռ. 524:

<sup>3</sup> ՍՍ ձեռ. թիվ 3294, թերթ՝ 320ա:

## ՆԱԽԱ ԱՍՈՐՈՒ ԽՆԴԻՔԸ

Նանա Ասորու կենսագրության ու ամբողջ հոգևոր գործունեությանը լավագույնս անդրադարձել է Յ. Քերոբե Ա Զրաքյանն իր «Նանայի Ասորու վարդապետի մեկնութիւն Յովհաննու Աւետարանին» աշխատության ներածության մեջ<sup>1</sup>, սակայն պետք է նկատել, որ այդ ներածության մեջ կան որոշ խնդիրներ, որոնք պարզաբանման կարիք են գտում:

Դավանաբանական քաջ հայտնի նկատառումներով Մխիթարյան միաբան Յ. Քերոբե վկր. Զրաքյանն իր ներածության մեջ որևէ խոսք չի ասում Տաթևացու կատարած աշխատանքի վերաբերյալ. աշխատանք, որն ըստ էության Նանա Ասորու մեկնության «Առաջարանության» մեկնություն-լուծմունքն է: Ավելին. հավատարիմ մնալով Մխիթարյանների կաթոլիկ դավանաբանությանը, նենգափոխելով ակնհայտ իրողությունը՝ Զրաքյանը Նանա Ասորուն ներկայացնում է իրեւ քաղկեդոնականության հետևորդ: Մինչդեռ եթե նա հիշեր ս. Գր. Տաթևացու մեկնության գոյությունը, ըստ ինքյան կօրվեր իր տեսակետը:

Խնդիրը հետևյալն է. Յ. Քերոբե Ա Զրաքյանը ներածության հե-հԶ է-ջերում փորձում է իր ընթերցողին համոզել այն փաստի մեջ, որ մեր հայրերը հավասարապես օգտագործել են թե՛ մեկ բնություն, թե՛ երկու բնություն հասկացությունները: Իհարկե ընդունելի է այն տեսակետը, ըստ որի կարելի է ասել և մեկ բնություն, և երկու բնություն բանաձևերը<sup>2</sup>, սակայն եթե ճիշտ ըմբռնենք: Այստեղ կա մի հիմնական ըմբռնում ևս. մեկ բնության և երկու բնության բանաձևերը ընդունելի էին նաև այն ժամանակ, բայց ոչ օգտագործելի<sup>3</sup>, որովհետև կար երկարնակության խնդիրը, այսինքն՝ կային մոնոֆիզիտ և դիոֆիզիտ հասկացությունները: Յետևաբար ոչ մոնոֆիզիտն էր ցանկանում դիոֆիզիտ դառնալ, և ոչ էլ հակառակը, այսինքն՝ միաբանակը երկու բնություն չէր օգտագործում, իսկ երկարնակն էլ՝ մի բնություն:

Թերևս որոշակի համաձայնություն լիներ «Երկու բնություն» բանաձևի հետ<sup>4</sup>, եթե առաջ չգար 681 թվականի Կ.Պոլսի ժողովը (Զ տիեզերական), որը իր հերթին ավելացրեց «Երկու կամք» և «Երկու ներգործություն» բանաձևը՝ բացահայտորեն հակասելով սուլոր Կյուրեղ Ալեքսանդրացու (†444) վարդապետությանը: Այսպիսով, երբ Քրիստոսին բաժանում են երկու տարբեր կամքերի և ներգործությունների միջև, չենք կարծում, որ արևելյան եկեղեցիներից որևէ ներկայացուցիչ հեշտությամբ կհամաձայն վեր օգտագործել «Երկու բնություն» բանաձևը, ընդհակառակն, երբ

<sup>1</sup> Տե՛ս Նանա, էջ Ը-ԾԴ:

<sup>2</sup> Տե՛ս Քրիստ., էջ 63:

<sup>3</sup> Տե՛ս Ազգ., էջ 1477-1478:

<sup>4</sup> Տե՛ս Քրիստ., էջ 10-11:

խոսքն ուղղվում է նրանց դեմ, ովքեր բաժանում են Քրիստոսին, ապա խոսքն ավելի հատու և խստությամբ է դրվում:

Այսու տեսնում ենք, որ Նանան ևս ոչ թե հարվածում է մի բնություն ասողներին, որոնք սխալ են հասկանում Քրիստոսի Աստվածությունը, այլ երկու բնություն ասողներին, որոնք սխալ են հասկանում Եկեղեցու քրիստոսարանական սկզբունքները<sup>1</sup>:

Արծարծված խնդրի հետ կապված հատկապես բնութագրական են Նանայի մելոնիթյան՝ Զրաքյանի իսկ վկայաբերած հետևյալ հատվածները.

«Աղբիւրաբար ընկալեալ (Նանա) զշնորհս վարդապետութեան ի Յոգ-տյն Սրբոյ՝ ուղղափառ հաւատոյն, որ ի Քրիստոս. որ եւ յանդիմանեալ զո՞ն եռետիկոս, զայր պերճաբան եւ ինաստասէր, վաճեալ հալածական առներ յաշխարհէն Յայաստանեաց, որ երբեմն խոտորնակս ուսուցանէր, յերկուս բարժանելով զքրիստոսի զանբարժանելի միաւորութիւնն, որ յետ անքակ եւ անշփոթ միաւորութեանն: Եւ հաստատէ վերստին զնոյն ուղղափառ որ ի Քրիստոս դաւանութիւնն, մի յերկուս (Օր. ի յերկուց) բնութեանց խոստովանել. զաստուածականսն՝ բնութեամբ, իսկ զնուաստականսն՝ կամաւոր յանձնառութեամբ»<sup>2</sup>:

«Զի՞նչ առ այնքան յիմարսն եւ կոյրսն մտօք ասացուք, որք քրիստոնեայս զինքեանս անուանեն եւ յերկուս զմի Քրիստոսն բարժանեն»<sup>3</sup>, «Անաչեսցէ Արիոս, որ արարած ասէր զՈրդի, կարկեսցին և երկարնակքն, որ յերկուս բարժանեն զմի Որդի»<sup>4</sup>:

Ի վերջո Նանա Ասորու մելոնիթյան նախաբանի լուծնունքը տալուց հետո սուրբ Գրիգոր Տարևացին անմիջապես անցնում է Յովիաննես Ավետարանչին. «Այժմ զՅոՒՀԱՆՆՈՒ ԱՍԱՑՈՒՔ»<sup>5</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Քրիստ., էջ 86-88:

<sup>2</sup> Տե՛ս Նանա, էջ 5:

<sup>3</sup> Տե՛ս Նանա, էջ իւ:

<sup>4</sup> Տե՛ս Նանա, էջ իթ:

<sup>5</sup> էջ 21:

**ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ  
«ՀՈՎՀԱՆՆՈՒ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ»**

**ԶԵՌԱԳՐԵՐ**

ՍՍ-ում կան քսաներկու ձեռագրեր, որոնք բովանդակում են սուրբ Գրիգոր Տաթևացու «Հովհաննու Ավետարանի» մեկնությունը: Այդ ձեռագրերն են. 923, 1260, 1294, 1300, 1351, 1352, 1353, 1354, 1355, 1394, 1395, 1396, 3010, 3011, 3191, 3212, 3295, 3500, 3584, 4034, 7464, 9240:

Այս ձեռագրերից ընտրել ենք երեք. A - 1394, B - 3295, C - 1294:

Նախապատվությունը այս երեք ձեռագրերին տվել ենք հետևյալ պատճառներով. նախ՝ A ձեռագրին՝ հնության պատճառով, այն գրվել է հեղինակի մահվանից 27 տարի անց, սակայն այս գրչագիրը պարունակում է միայն տասներկու գլուխները, այսինքն՝ աշխատանքի սուրբ Գրիգոր Տաթևացու հեղինակած մասը միայն:

Բ ձեռագիրը գրվել է ավելի ուշ՝ ժը դարում: Այն իր մեջ պարունակում է շատ արժեքավոր մի նախագաղափար հիշատակարան՝ 320ա (1458 թ.):

Այս երեք ձեռագրերի միջից երրորդը՝ C - 1294, թեև ժամանակային առումով ամենից ուշ է գրվել, սակայն կարծես սրբագրիչի դեր է կատարում մյուս երկու ձեռագրերի համար: Նրանում նկատելի է գրչի բարեխիղճ աշխատանքը. նա չի զլացել լրացնել աստվածաշնչային վկայությունների թերին, որ առկա է մյուս ձեռագրերում:

**A - 1394**

1437թ.: Կաֆա<sup>6</sup>: Գրիչ, ծաղկող՝ Ալսէնդր արեղայ: Ստացող՝ Տէր Սարգիս: Թերթ՝ 363: Մագաղաթ: 15x11: Միասյուն: Բոլորգիր: Տող՝ 23: Մնրնկը՝ Կիս, ԼԶ: Պահպանակ՝ մագաղաթ 6, ուղղագիծ երկարագիր, ճաշոց: Կազմ՝ կտղ: Աստառ՝ կարմիր և շերտազարդ մետաքս: Հիշատակարան գրչի՝ 151ա, 298թ, 363թ: 151ա թերթի հիշատակարանում գրիչը նշում է գրության տարեթիվը՝ հիշելով նաև ստացողին, 363թ թերթում եղած հիշատակարանում գրիչը նշում է, որ ինքն էլ հանդիսանում է գրքի ծաղկողը:

**B - 3295**

Ժը դ.: Գրիչ՝ Եգեկիել Երեց: Ստացող՝ Թորոս Շաբունապետ: Թերթ՝ 431: Թուղթ: 19,5 x 14: Հովհաննու մեկնությունը միասյուն է, մյուս գործեր՝ Երկայուն: Նոտրգիր: Տող՝ 24-31: Մնրնկը՝ նկար՝ Ս. Գր. Տաթևացի, Կիս,

ԼԶ: Կազմ՝ կտդ: Յշտկրն նախագաղափար՝ 320ա (1458 թ.), գրչի՝ 95ա, 233:

### C - 1294

1641-1642 թթ.: Ապրակունյաց վաճք: Գրիչ՝ Յովանէս: Ստացող՝ Եսայի վրդ. Կարճավանցի: Թերթ՝ 378: Թուղթ: 20,1x16: միասյուն: Նոտրգիր: Տող՝ 32: Մնակր՝ ԿԽ, ԼԶ: Պահպանակ՝ մազաղաք 2, բոլորազիծ երկարագիր, Աւետարան: Կազմ՝ կտդ: Աստառ՝ և մետաքս: Յշտկրն գրչի՝ 6ա, 39թ, 301ա, ստացողի՝ 200ա, 376թ (1663 թ.): 200-րդ ա թերթի հիշատակարանից իմանում ենք, որ ծերազդի ստացողը՝ Եսայի վարդապետը, Ապրակունյաց Սուրբ Կարապետ Եկեղեցու կառուցողն է, որն էլ վաճքի վերատեսուչն ու առաջնորդն է: Չեռագիրը պատկանել է վաճքին. «Առ ի մշտնջենաւոր յիշատակութեան անձին իւրոյ»:

Գրիգորի եռամեծի եւ քաջ հոետորի եւ իմաստափրի, աշակերտի  
Յովիաննու Որտոնեցոյ, մականուն կախելոյն ի սէրն Յիսուսի, ի  
յիղձ բաղձանաց բանասէր անձանց, նորին աշակերտաց՝  
արարեալ լուծումն համառաւտ յառաջարան Աւետարանին  
Յովիաննու:

Յառաջարան, Լուծմունք.

Նախերգանսս<sup>1</sup> ո՛չ է նանայի մեկնչի<sup>i</sup>, այլ վարդապետին, որ  
վասն խոնարհութեան զանուն իւր ոչ գրէ, որ թարգմանեալ է ի  
մեր լեզուս<sup>ii</sup>.

Բան. «Ոչինչ ըղձալի»<sup>iii</sup>:

Լուծմունք<sup>2</sup>. Քան բազում բարի այն է լաւ, որ զիղճն լուռն:  
Դարձեալ՝ քան բազում բարի մարմնական այն է լաւ, որ զհոգե-  
ւոր կարաւան<sup>3</sup> լուռն: Եւ լինի չորս շահ. նախ՝ կատարի բանն.  
«Ամենայն, որ խնդրէ ի քէն՝ տո՛ւր» (Մատթ. Ե 42): Երկրորդ. պա-  
տուէրք սիրոյն կատարի: Երրորդ. զընկերն սիրելով՝ զԱստուած  
սիրես: Եւ սէրն շաղկապէ երկու իրաց, որպէս սինձ: Զորրորդ. սի-  
րոյն<sup>4</sup> բարիքն, որպէս ասէ Պաւլոս. «Ո՛չ նախանձի, ո՛չ գրգորի» (Ա  
Կորնթ. Ժ 4-5) եւ այլն: Եւ սէրն ծածկէ զմեղս. նախ՝ զիւրն, զի ոչ  
առնէ, եւ ապա զընկերին, զի ոչ խաւսի:

Բան. «Թէ զանձեռնարկելին խնդրէ»<sup>iv</sup>:

Լուծմունք. Լաւ է զգժուարինն տալ, քան թէ զսէրն լուծա-  
նել: Եւ չորս գժուարութիւն ի գիւտ տպագիռնին. նախ՝ հեռու  
ճանապարհն, երկրորդ՝ քարշեպն, երրորդ՝ բոլմ<sup>5</sup> աւերակն կամ  
մութն, չորրորդ՝ անփայփայքն գժուարին:

Եւ վասն ականց պատմեն, թէ յաշխարհին հնդկաց է ձոր խո-  
րին եւ գժուարին մարդկան կոխելոյ, եւ վասն ջերմութեան տեղ-  
ւոյն եւ ի զաւրութենէ աստեղաց գոյանան: Եւ թագաւորք հնա-  
րեալ շաղիղ գառին կամ ոչխարի, թաւալեն ի ձօրն եւ փակին ա-  
կունքն ի նա, եւ արծուիք եւ անգեղք տեղւոյն հանեն ի բոյնն  
կերակուր ձագացն եւ ակունքն մնան ի տեղն: Եւ թագաւորք ի  
ձեռն մահապարտ արանց առնուն զակունքն զանազան: Այլ եւ  
ասեն, թէ արծուիքն զակունս ի բոյնս իւրեանց շարեն, զի մի  
վնասեսցին յաւձիցն: Այսպէս եւ աւետարանիչս զաստուածաբա-  
նութիւնսն դնէ ընդդէմ հերձուածողաց: Նոյնպէս եւ խոր էջն, որ

<sup>1</sup> Ը Լուծումն, Յառաջարան, Նախերգանս

<sup>2</sup> Ա Բ չեք

<sup>3</sup> Ը կերակուրն

<sup>4</sup> Ա Բ չեք սիրոյն

<sup>5</sup> Բ փոխ

Հանէ զմարգարիտն, չորս ունի դժուարութիւն. նախ. խորութիւն ծովուն, երկրորդ՝ կուտակեալ ալիք, երրորդ՝ սաստիկ խոռվութիւն, չորրորդ՝ թանձր խտութիւն: Եւ զինքն տկար ասելով՝ զերծանի ի գործոյն, եւ սէրն սերտ մնայ սիրելոյն: Այսպէս ասեն վասն մարգարտաց, որ լինի ի ծովն հնդկաց, որ այժմ կոչի Քէշուբահրայ:

Անձրեւն, որ գայ ի մայիս ամիս, ոստրէոս ձուկն գայ յերեսն եւ բանայ զպատեանսն եւ առնու զկաթ անձրեւուն եւ դարձեալ խփէ եւ սնուցանէ յինքեան: Եթէ բազում ընկալաւ զշիթս, լինի մանր, եւ թէ սակաւ, լինի մեծ մարգարիտ, եւ թէ ծեր է, դեղնագոյն լինի, եւ թէ տղայ՝ սպիտակ, եւ թափէ յատակս ծովուն: Եւ զիսոր էջն ասեն, թէ զանդրանիկ ծնիցելոյն զփառսն ածէ զերեսաւքն, զի թափանցէ, հանէ զշունչն, որպէս յարգանդին, և արգիլէ զջուրն և զբուշտն լցեալ ձիթով իջանէ ի խորն և լուսով նորին ժողովէ զմարգարիտս եւ յետոյ պատառէ, զի ձէթն յերեսն ելցէ, եւ ընդ շողն նորա ելանէ յերես ծովուն:

Եւ սոքա նիւթականք սոյնպէս<sup>1</sup> դժուարինք են, քանի<sup>2</sup> առաւել բանք աստուածայինք, որ սիրելի են քան զամենայն ոսկի եւ զտպազիոն, եւ անխաւս մարգարիտն, որ ի յերկնից իջեալ, այսինքն՝ անգին, որ բարձր է եւ անհաս մտաց, զի միտք մեր թանձր է եւ վայրաքարչ, ընդ մարմնոյս կապեալ, ոչ կարեմք ի հեռու տեսանել, քան եթէ քննութեամբ յայտնել:

Բան. «Բաղրամական»<sup>v</sup>:

Լուծմունք. Գովութիւն է քեզ:

Բան. «Վսեմանիտ»<sup>vi</sup>:

Լուծմունք. Քննասէր մտաց:

Բան. «Ապաւարտակ»<sup>vii</sup>:

Լուծմունք. Անկատարս:

Բան. «Իրողութիւն»<sup>viii</sup>:

Լուծմունք. Գործառնութիւն:

Կոնքիլոսն է գազան, որոյ արեամք զծիրանիս ներկեն, եւ մետաքս պրիսիմն է, որ ի յորդանց լինի բազարկեալ<sup>2</sup>, ժողովեալ ունի:

«Յայրենի կամ զբագրատունիս»<sup>ix</sup> ասէ, կամ զի յազգէ Դաւթի էին սոքա, որ նախ թագաղիրք էին Հայոց եւ յետոյ թագաւորեցին յԱնի եւ ապա մտին յԱփխազս:

Բան. «Յաւակնելի»<sup>x</sup>:

<sup>1</sup> Ը այսպէս

<sup>2</sup> Ա բաղարկել

Լուծմունք. Անբաւական լինէի<sup>2</sup>: Գիտութիւն չորիւք է. նախ՝ բնական, երկրորդ՝ կրթական, երրորդ՝ չնորհական, չորրորդ՝ ինքն ասէ՝ գիտութիւն մաքրութեան:

«Մեղքն շղթայէ»<sup>xii</sup>. Նախ, զի ի միմեանս են կապեալ, երկրորդ՝ կապեն զմիտս եւ զգայութիւնս, որպէս Մանասէին (տես Դ Թագ. ԻԱ):

«Գլուխ»<sup>xiii</sup> զմիտքն ասէ, որ կորանայ մեղաւք: Խնդիրդ քո ոչ միայն սիրով է, այլ հրամանաւ, վասն այն ոչ կարեմ զտկարութիւն պատճառել, որպէս վերոյ ասացաւ, զի սիրելի ես հաւատով եւ բարի վարուք, եւ իշխան՝ թագաւորութեամբդ: Եւ պատճառ ճողովրելոյ երեք են, այսինքն՝ չգիտել, չկամել, որ չլսելն, եւ չկարել<sup>3</sup>: Արդ, չգիտել ի դէմս ատելեաց է, եւ չլսել ի դէմս չարաց, եւ չկարել ի դէմս տկարաց, այլ մեծագունիցն ամենայն բան կարելի է եւ սիրելեացն գիտելի եւ բարեացն լսելի:

Բան. «Ծանրաբեռն»<sup>xiv</sup>:

Լուծմունք. Որպէս իմաստուն մտաց ծանր բեռն է տգիտութիւն, եւ սուրբ մտաց՝ անսրբութիւն, նոյնպէս տգիտաց գիտութիւն բեռն է եւ անսրբոցն բեռն է սրբութեան գործն եւ սուրբ մարդն:

Բան. «Յաջ եւ յահեակ»<sup>xv</sup>:

Լուծմունք. Յամենայն կողմանց չկայ աւգնութիւն ի մարդկանէ. ո՛չ յաջ ի քահանայից եւ ո՛չ յաշխարհականաց, ո՛չ ի վերուստ ի թագաւորէդ, եւ ո՛չ ի փոքունց, ո՛չ յառաջ մեկնչաց, եւ ո՛չ յաշակերտաց, վասն որոյ ապաւինիմ ի Հոգին Սուրբ, որ աննախանձ բաշխէ եւ ձրի տայ:

Բան. «Խանայ»<sup>xvi</sup>:

Լուծմունք. Սարկաւագ է ասորոց, որպէս սուրբն Եփրեմ<sup>4</sup> ուղղափառ հաւատով եւ վարժ մտաւք, պարկեշտ վարուք:

«Բագրատն Բագրատունի»<sup>xvii</sup>. Նա իշխանաց էր իշխան, նախնդրեաց զմեկնութիւնս Յովհաննու<sup>5</sup> Աւետարանիս ի սրբոյն նանայ սարկաւագէ<sup>6</sup> ասորոց, եւ նա երեք անդամ շրջեալ ի վանորայս ասորոց բազում ճգնութեամբ եւ գտեալ յուղղափառ վարդապետաց յՈսկեբերանէն, եւ համառաւտէ ինքն եւ թարգմանէ յասորոց լեզուէն յարապ լեզու եւ առաքէ ի հայս, որ եւ անաւրէն Զաքրն<sup>6</sup> բռնութեամբ շրջէ զԲագրատն ի հաւատոց:

<sup>1</sup> Ը Յաւակնելի էի

<sup>2</sup> Ա Յ չեք անբաւական լինէի

<sup>3</sup> Յ չկատարելն

<sup>4</sup> Կ Յոհաննու

<sup>5</sup> Կ սարկաւագէն

<sup>6</sup> Կ Զաքրին

«Յրեշտակացաւ»<sup>xvii</sup>. Համբաւեցաւն է:

Բան. «Մեծն այն հոեստոր»<sup>xviii</sup>:

Լուծմունք. ԶԱմբատ իշխանն ասէ<sup>xix</sup>, որ յետ Աշոտոյ<sup>xx</sup> եւ թոռն Բագրատայ:

Եւ զի կրկին են Սմբատ նահատակ. առաջինն իշխան է, որ ի Բուղայէ ըմբռնեցաւ եւ վասն հաւատոցն Քրիստոսի նահատակեցաւ երեք հարիւր եւ երկու թուականին Հայոց (853) եւ եղաւ ի վկայարանին սրբոյն Դանիէլի մարգարէին, ուր ընկեցաւ ի գուբն առիւծուց: Առ սա գրէ Նանայ զմեկնութիւն Աւետարանիս: Իսկ երկրորդ Սմբատ նահատակն<sup>1</sup> թագաւոր է եւ թոռն է<sup>2</sup> առաջին Սմբատին եւ որդի Աշոտ թագաւորի, որ նահատակեցաւ յանաւրինէն Յուսփայ՝ կախեալ ի Դուին քաղաքի զփայտէ: Եւ աւիշ նորա, որ կաթէր ի սուրբ մարմնոյն, բժշկութիւն լինէր ամենայն ախտից: Եւ այս եղեւ ընդ թուականին ինը հարիւր երեք տասան ամին (913):

Եւ Մարեմն Բագրատունի Սիւնեաց տիկինն է, զոր գովէ բարեպաշտութեամբ, քոյր է թագաւորին Սմբատայ եւ դուստր Մեծին Աշոտոյ, եւ վասն յայտնութեան բանիս եղից զպատմութիւն<sup>3</sup> նորա:

Այս Աշոտ Բագրատունի սպարապետ էր Հայոց, որ է իշխանաց իշխան երեսուն ամ<sup>4</sup> կացեալ: Եւ այն, որ ասէ՝ միացեալ էր խորհրդովն, որ է բանական մասն, ի Քրիստոս<sup>xxi</sup>, վասն այն ցանկականն ոչ խաբեցաւ ի խոստմունքն եւ ոչ ցասմնականն երկեաւ ի տանջանաց: Եւ վասն առաւել լաւութեան նորա իշխանն իսմայէլի Աբդա անուն առաքեաց նմա թագ ի ձեռն Յուսփայ զաւրավարին իւրոյ: Եւ լուեալ արքայն յունաց Վասիլ կայսր, առաքէ եւ նա թագ Աշոտոյ եւ պսակեալ յերկուց թագաւորացն՝ եղեւ ճոխ թագաւոր բարեպաշտ եւ<sup>5</sup> խաղաղարար: Սա առաջին թագաւոր եղեւ յազգէն Բագրատունի<sup>6</sup> յամի երեք հարիւր երեսուն եւ չորս թուականին Հայոց (885), եւ հինգ ամ թագաւորեաց: Ի բառնալ Արշակունեաց թագաւորացն<sup>7</sup> մինչեւ ի թագաւորել Բագրատունեացս լինին ամք չորս հարիւր երեսուն եւ չորս ամ (434):

<sup>1</sup> A B նահատակ

<sup>2</sup> A B չեք

<sup>3</sup> A B զյայտնութիւն

<sup>4</sup> A B չեք

<sup>5</sup> B չեք

<sup>6</sup> C Բագրատունոյ

<sup>7</sup> A B չեք

Զոր վասն խոնարհութեան իւրոյ զանունն իւր ոչ գրէ. «Աւելիս ոչ պատմեմ, այլ զջանն նոցա ցուցանեմ, ~ ասէ, ~ զի որպէս փառք է վարդապետն աշակերտաց, նոյնպէս աշակերտն՝ վարդապետին, ~ ասէ»<sup>xxii</sup>:

Բան. «Փոքր ինչ ներեսցես»<sup>xxiii</sup>:

Լուծմունք. Այլ ինչ բան առաջի դնէ. որպէս<sup>1</sup> իմաստուն բժիշկ նախ ի ձեռն երակաց զցաւն ճանաչեն, եւ ապա բժշկեն: Նոյնպէս, որ զգիրս ընթեռնու, նախ պարտ է, որ զսխալն ճանաչէ. թէ ի մեկնչէ<sup>2</sup>ն է, թէ<sup>3</sup> ի թարգմանէն, թէ<sup>4</sup> ի գրոյն, եւ ապա հոգ տանի եւ ուղղէ: Եւ մի մախալով եւ ատելութեամբ եպերանս դնել, այլ հոգեւոր սիրովն մի լինել, որպէս լոյս եւ աւդ եւ աչք մի են լուսով, եւ այլն, զի ցուրտն ամենայն ուրեք<sup>5</sup> տգեղացնէ, որպէս զպատկեր մարդոյ, եւ զբոյս եւ զերկիր, եւ ջերմն գեղեցկացնէ, սոյնպէս<sup>6</sup> եւ դուք ջերմ սիրովն սոցա մխեալ էք՝ անարատ սէր առ մեզ բերելով, զամենայն ցուրտ եւ<sup>7</sup> զատելութիւն բառնայ՝ մին միտք եւ մի<sup>8</sup> խորհուրդ ստացեալք ի գիտութիւն սորա:

«Աղ»<sup>xxiv</sup> զշնորհ հոգեւոյն ասէ եւ «ճաշակելիք» մտացն է, որպէս ի վերոյ զչորս զգայութեանցն ասաց: Այս շահ ուսանողացն է, իսկ թէ ոք պարսաւէ, մեք ոչ հակառակեմք նոցա, այլ գոհացարուք զԱստուծոյ, զի եւ այն շնորհք է մեզ: Եւ բառից փոխարերելն զանազան գիտութիւն է<sup>9</sup>, որ տայ՝ Հոգին Սուրբ, այլ աւետարանչաց պատմութիւն գրեալ է ի մեկնութիւնս նոցա:

### Այժմ զՅոհաննուն ասասցուք

Սա զամենայն ժամանակս իւր անգիր քարոզեաց. նախ՝ զի եւ Տէրն այնպէս քարոզեաց<sup>8</sup>, եւ այլն գրեալ է ի Մատթէոսի մեկնութեան սկիզբն<sup>xxv</sup>: Եւ թէ յետոյ վասն է՛ր գրեցին. զի երեք աւետարանիչքն յետ մատնութեան Յովհաննու գրեն եւ զյառաջն, մինչ քարոզէր Յովհաննէս<sup>9</sup>, մի ամ եւ կէս լուցին, եւ Յոհաննէս զայն գրեաց:

<sup>1</sup> C չիք

<sup>2</sup> C իրօք

<sup>3</sup> C այսպէս

<sup>4</sup> C չիք

<sup>5</sup> C մին

<sup>6</sup> A B զանազանութիւն է

<sup>7</sup> A B չիք

<sup>8</sup> B չիք զի ...քարոզեաց

<sup>9</sup> B Յոհաննէս, ... Յովհաննէս

Իսկ Մատթէոս գրեաց զԱւետարանն իւր յԱնտիռք քաղաքի, յերայեցւոց լեզուն յետ<sup>1</sup> եւթն ամ ի վերանալոյ Փրկչին, եւ գլխաւոր Աւետարանքն եւթանասուն եւ վեց: Եւ Մարկոս յԱղեքսանդրիայ՝ Խպտի լեզուաւ, յետ Հնգետասան ամի վերանալոյ Տեառն, եւ գլխաւոր աւետարանք յիսուն եւ երկու: Իսկ Ղուկաս ի Հոռմ գրեաց յետ քսան եւ երկու ամի վերանալոյ Տեառն ի լատին լեզուն, եւ գլխաւոր Աւետարանքն<sup>2</sup> յեւթանասուն եւ երկու: Իսկ Յոհաննէս յԵփեսոս գրեաց<sup>3</sup> ի յոյն լեզուաւն, յետ եւթանասուն եւ մէկ<sup>4</sup> ամի վերանալոյ Տեառն, եւ գլխաւոր աւետարանքն<sup>5</sup> յիսուն եւ վեց:

### Վասն եւթն Աթոռոց

Արդ, չորեսին Աւետարանս, ուր եւ գրեցան, եղեն<sup>6</sup> չորք Աթոռք գլխաւորք՝ չորից կողմանց տիեզերաց<sup>7</sup>. այսինքն՝ Անտիռք արեւելից, Աղէքսանդրիա Հարաւոյ, Հոռմ արեւմտից, Եփեսոս ասիացւոց եւ Հիւսիսոյ: Իսկ երեք ազգ ինքնազլուխ են. այսինքն՝ Երուսաղէմ վասն գերեզմանին Տեառն, եւ Կիպրոս վասն Ղազարու, եւ Հայք վասն Սրբոյն Գրիգորի: Եւ այս սահմանեցաւ ի ժողովոյն Նիկիայ:

Եւթն սիւնք տիեզերաց վասն եւթն ժողովոց, այլ եւ եւթն ժողովք ի Հայս.

Առաջինն. Լուսաւորչին, որ համաձայնեցաւ Նիկիային:  
Երկրորդ. Սրբոյն Ներսէսի<sup>8</sup>, որ համաձայնեցաւ Կոստանդինուպալսի:

Երրորդն. Սրբոյն Սահակայ եւ Մեսրովբայ, որ համաձայնեցան Եփեսոսին:

Չորրորդ. Սուրբն Յովսէփ՝ աշակերտ մեծին Սահակայ եւ Մեսրովբայ, արար ժողովք ի Շահապիվանս:

Հինգերորդ. Բաբգէնի ժողովն ընդդէմ հերձուածոյն Ակակայ եւ Բարձումայի:

Վեցերորդ. ժողովն Դւնայ ի սկիզբն թուականին, Ներսէս եւ Մովսէս ընդդէմ գանազան հերձուածոց:

<sup>1</sup> С չիք յԱնտիռք ... յետ

<sup>2</sup> С Աւետարանք

<sup>3</sup> А В չիք

<sup>4</sup> В Եւթանասունիինգ

<sup>5</sup> С Աւետարանք

<sup>6</sup> С Եղեն Երեց

<sup>7</sup> С չիք չորք Աթոռք ... կողմանց տիեզերաց

<sup>8</sup> С Ներսիսի

Եւթներորդ. արար ժողով մեծն եւ իմաստասէրն սուրբն Յոհան Աւձնեցին ի Մանազկերտ ընդդէմ Քաղկեդոնի ժողովոյն, որ ի Կարնոյ քաղաք, հրամանաւ Հերակլեայ ժողովեցան եւ թիւրեցաւ եզր կաթողիկոս:

Եւ սոքա են եւթն գլխաւոր Աթոռք եւ եւթն ժողովք ուղղափառութեան ազգիս Հայոց: Իսկ վասն չորս գետոցն եւ քառակերպ կառացն տե՛ս եւ ի սկիզբն Մատթէոսի<sup>xxvi</sup>:

Իսկ զի՞ «Որդի Որոտման» կոչեցաւ:

Վասն չորից. նախ՝ զի յերկնից որոտաց զԲանն ի սկզբանէ ծնեալ: Երկրորդ. ընդոստուցիչ եղեւ՝ բանալով զմիտս մարդկան: Երրորդ. զի ի հողմոյ Հոգւոյն Սրբոյ որոտաց: Չորրորդ. եւ ցեղեալ զերկինս զԲանն Աստուծոյ լսելի արար մարդկան լսելեաց:

Իսկ զի՞ արծուի կոչի. նախ՝ զի թագաւորական է, երկրորդ՝ զի բարձրաթոփիչ, երրորդ՝ սրբնթաց, չորրորդ՝ սրատես աչաւք, հինգերորդ՝ նորոգ մանկանայ, վեցերորդ՝ զանազան ակամք պարսպէ զբոյնն, եւ այլն ասացաւ ի սկիզբն Մատթէոսի<sup>xxvii</sup>:

### Դարձեալ նախադըռութիւն

Եւ զի առաջին նախադըռութիւն յայտնի է ըստ ինքեան վասն խնդրողաց եւ թարգմանողաց Աւետարանիս մեկնութեան, իսկ աստանաւր կամիմ նախադըռութիւն ժողովել վասն աւետարանչին եւ վասն աստուածաբանութեան: Եւ մի՛ ոք ձանձրացեալ եպերեսցէ զմեզ, որպէս է սովորութիւն աշակերտաց մերոց, որ ի սկիզբն գրոց զմուղթսն համարեն եւ զաւուրս թուեն եւ ի կատարումն իբրեւ զսանդիտոռն թափուր ելանեն՝ մոռացաւնքն յաւելեալ յառաջին անգիտութեանցն: Այլ դու՝ համշիրակ հարազատ իմ, ընդ փոյթ ուսման եւ զջերմն յոյժ լծակցեա՛, զի միովն զճշմարտութիւն գտցես եւ միովն զբարին հաստատեսցես:

Մարգարէն եզեկիէլ, որում բացեալ եղեն երկինք եւ ետես զտեսիլ Աստուծոյ ի վերայ չորեքկերպեան կենդանեացն. այսինքն՝ մարդոյ, առեւծոյ, եզին եւ արծուոյ կերպարանք (Եզկ Ա): Մարդն նշանակէ զՄատթէոս, զի առաւել ճառէ զմարդեղութենէ Բանին, եւ առիւծն՝ զՄարկոս, որ թագաւոր ասի ամենայն գաղանաց, եւ նա բազումս ճառէ զթագաւորութենէն Քրիստոսի: Ղուկաս՝ եզին, որ է պատարագելի եւ սուրբ կենդանի, եւ նա յոլով ճառէ զՔրիստոսի քահանայապետութիւն, որ եւ զսկիզբն ի քահանայութենէն Զաքարիա առնէ: Իսկ կերպարանք արծուոյն

նշանակէ զՅոհաննէս, զի սլացաւ գերագոյն, քան զամենայն ստեղծուածս, եւ զաստուածային ծնունդն Քրիստոսի<sup>1</sup> ճառէ:

Եւ թէպէտ աւետարանիչքն իւրաքանչիւրքն վասն միոյ իրաց առաւել ճառեն, այլ հաւասարեցան ի միապէս ճանաչումն մարմնացեալ Բանին: Իսկ որ ասէ բնաբանն, թէ կերպարանք արծուոյն ի վերայ չորեցունցն էին<sup>xxviii</sup>, երեք գերազանցութիւն ցուցանէ Յոհաննու<sup>2</sup>, քան զայլոցն, զի աւետարանիչն Յոհաննէս նրբագոյն, բարձրագոյն եւ կատարելագոյն ճառեաց: Եւ զնրբութիւն ցուցանէ արագ տեսութիւն, որ ասէ՝ ի վերայ, եւ զկատարելութիւն ցուցանէ թիւն, որ ասէ՝ չորից: Վասն առաջնոյն գիտելի է, զի տեսութիւն ամենայն սրբոց եւ աւետարանչացն զանազանի ի տեսութենէ իմաստասիրացն, քանզի իմաստասէրքն ի ստեղծուածոցս վերահասու եղեն ճանաչմանն Աստուծոյ, նոյնպէս եւ սուրբք, սակայն այլ եւ այլ կերպիւ իբր ներհակաբար, զի տեսութիւն է գործ, որ ելանէ ի տեսողին եւ եզերի առ Աստուած, որպէս յառաջ եղեալ իրս, վասն որոյ<sup>3</sup> ի մէջ տեսողին եւ տեսանելոյն է բաղդատութիւն իմն: Իսկ թէ տեսութիւն վերաբերի առ տեսաւղն, ըստ այսմ լինի տեսութիւն իմաստասիրացն. զի իմաստասէրք<sup>4</sup> խնդրեն զԱստուած ճանաչել ի ստեղծուածոցս եւ այնու լինի կատարելութիւն տեսողին, զի առնէ նրբութիւն մտաց եւ սրութիւն հանճարոյ: Բայց թէ տեսութիւն իրացն բաղդատի առ տեսանելի իրն, այսինքն՝ զի ի տեսութենէն ջերմանայ ի սէրն Աստուծոյ: Եւ այս տեսութիւնս լինի սրբոցն եւ<sup>5</sup> աւետարանչացն, զի ո՛չ միայն տեսանէ, այլ եւ սիրէ զտեսեալն: Եւ սոյնպիսիս ոչ միայն<sup>6</sup> առնէ նրբութիւն մտաց, այլ եւ ջերմութիւն կամաց, որպէս ասէ Դիոնեսիոս ի հինգերորդ գլուխն «Երկնային քահանայապետութեան», թէ՝ «տեսութիւն աստուածայնոցն յատուկ է ունել զջերմութիւն սիրոյն եւ թափանցիկ, զի ուր գիտութիւն արտաքոյ մնայ, սէրն ի ներքս մտանէ»: Եւ սէր աւետարանչին Յոհաննու առաւել էր, քան զայլոցն, վասն որոյ<sup>7</sup> «Սիրելի աշակերտ» կոչեցաւ: Եւ նրբագոյն մտաւք եւ անթարթ ակամք նկատեաց զբոլորակութիւն արեգականն ըստ նմանութեան արծուոյ: Եւ զի սէրն կրկին է, այսինքն՝ հոգեւոր

<sup>1</sup> A B չիք

<sup>2</sup> B չիք Յոհաննու

<sup>3</sup> C վասն այն

<sup>4</sup> B իմաստասէրքն

<sup>5</sup> B չիք

<sup>6</sup> A B չիք

<sup>7</sup> C վասն այն

եւ մարմնաւոր, եւ ներհակ միմեանց ունին զպատճառս<sup>1</sup>, զի հոգեւոր սէրն նրբահայեաց առնէ զտեսութիւն, որպէս զհրեշտակաց, իսկ մարմնաւորն՝ ախտ թանձր, եւ խելայեղ առնեն զհանճարն, վասն որոյ կոյս գոլով աւետարանչին եւ սիրով հոգւոյն, ելի բարձունս մտաւք եւ նրբագոյնս գրեաց, քան զայլ աւետարանիչսն:

**Այս առաջին մասն բնաբանիս:**

Երկրորդ. զի բնաբանն ցուցանէ զբարձրութիւն աւետարանչիս: Եւ այլ է բարձրութիւն եւ այլ է նրբութիւն, զի յաղագս անարդ իրաց եւ ստորին կատարելի է նուրբ բանիւ իմաստասիրել, իսկ բարձրութիւն այսմ գծագրութեան նշանակէ զբարձրութիւն նիւթոյ տեսանելի իրին, զի ըստ իմաստասիրացն նիւթ երեքկին ասի: Առաջին նիւթ. որպէս քար եւ հող նիւթ է պարսպի, զի ի նոցանէ պարիսպն լինի: Երկրորդ նիւթ է. որպէս մարմին մերումս հոգւոյ նիւթ ասի եւ հոգին որպէս տեսակ ի նիւթ: Երրորդ. է նիւթ շուրջ, որպէս ճանաչելն նիւթ ասի ճանաչմանն<sup>2</sup> եւ գիտութեան, զի տեսութիւն շուրջ զնովաւ է եւ առ նա եղերի: Եւ սոյնպէս աւետարանիչս Յոհաննէս ըստ նիւթոյն բարձրագոյն է, քան զայլ աւետարանիչսն, զի նոքա զմարդեղութիւն Քրիստոսի ճառեն, իսկ Յոհաննէս բարձրագոյն մտաւք զԱստուածութիւն Քրիստոսի գրէ, վասն որոյ երեք աւետարանիչքն նշանակեցան ի կենդանիքն, որ յերկրի շրջին, այսինքն՝ մարդոյ, առեւծոյ<sup>3</sup>, եղին, իսկ Յոհաննէս՝ արծուոյ, որ բարձրագոյն ունի զթոիչս, վասն որոյ ասէ բնաբանս՝ ի վերայ: Զայս եւ Դաւիթ ասէ. «Ել ի վերայ քրովբէս եւ թօեաւ, սլացաւ նա» (տես Սաղմ. ժէ 11), զի քերովքէն «Յաճախ գիտութիւն»<sup>4</sup> անուանի եւ բազմաչեայք են, որ ցուցանէ զբարձրագոյն գիտութիւն աւետարանչին Յոհաննու:

**Այս<sup>5</sup> երկրորդ մասն բնաբանիս:**

Երրորդ. ցուցանէ բնաբանն զկատարեալ տեսութիւն<sup>5</sup> եւ գծագրութեան Յոհաննու, ըստ այնմ, որ ասէ՝ ի<sup>6</sup> չորից: Եւ գիտելի է, զի Յոհաննէս երկու իրաւք կատարելագոյն գրեաց, քան զայլսն. նախ՝ զի ի<sup>7</sup> ժամանակս Յոհաննու յարեաւ հերձուածն արիոնացոց, որք ասէին զՔրիստոս սոսկ մարդ գոլ եւ ոչ՝ Աստուած, եւ

<sup>1</sup> Հ զպատճառն

<sup>2</sup> Հ ճանաչման

<sup>3</sup> Հ առիւծոյ

<sup>4</sup> Հ որ է

<sup>5</sup> Հ Ա Յ զկատարելութիւն տեսութեան եւ

<sup>6</sup> Հ չեք

<sup>7</sup> Բ չեք ի

Հետեւի ըստ նոցա, զի Քրիստոս ոչ էր յառաջ, քան զՄարիամ, վասն որոյ եպիսկոպոսքն<sup>1</sup> աղաչեցին զՅոհաննէս գրել Աւետարան, եւ նա գրեաց: Եւ ի<sup>2</sup> սկիզբն Աւետարանին զՔրիստոսի Աստուածութիւն եցոյց, ըստ որում Քրիստոս նախկին գոյր, քան զՄարիամ: Երկրորդ. զի յորժամ ընթերցաւ զերեք Աւետարանքն, հաւանեցաւ եւ վկայեաց ճշմարիտ գոլ, բայց ասաց, թէ միայն զմիոյն<sup>3</sup> ամի զգործսն գրեցին, այսինքն՝ զայն ամին, յորում Քրիստոս խաչեցաւ, վասն զի զպատմութիւն իւրեանց<sup>4</sup> սկիզբն արարին ի մատնելոյն Յովհաննու<sup>5</sup> ի բանտ: Իսկ Յոհաննէս գրեաց իր ինչ, զոր Քրիստոս ներգործեաց ի մի ամի յառաջ, քան զմատնիլն Յովաննու ի բանտ<sup>6</sup>: Եւ սոյնպէս յայտ է, զի Յոհաննէս կատարելագոյն գրեաց, քան զայլ աւետարանիչսն:

Իսկ ասելն ի վերայ չորեցունց, զի չորս թիւն քառանկիւնի ասի եւ քառանկիւնին զկատարեալն նշանակէ. նախ՝ որպէս Արիստոտէլ զառաքինի այր քառանկիւնի մարմնոյ<sup>7</sup> բաղդատէ, զի որպէս քառանկիւնի մարմինն յամենայն կողմանէ հաստատուն նստի<sup>8</sup>, սոյնպէս եւ առաքինի այր յոր բախտ որ պատահի, անդրդուելի մնայ. եթէ՛ ի փառս, եթէ՛<sup>9</sup> յանարգանս՝ ամենայնի համբերէ:

Դարձեալ՝ քառանկիւնին նախ գտանի ի թիւս, քան ի մարմին, զի միութիւն նախկին ասի<sup>10</sup>, քան զկէտ, եւ երկրորդ է գիծն, եւ երրորդ է մակերեւոյթն, եւ չորրորդ՝ մարմինն: Եւ սոյնպէս չորս թիւն նշանակէ զկատարելութիւն, որ է քառանկիւնի մարմին<sup>xxx</sup>: Եւ կատարելութիւն առաւել գտանի ի<sup>11</sup> Յոհաննէս, քան յայլ աւետարանսն<sup>12</sup>: Եւ սոյնպէս իմանի բանն, որ յԵզեկիէլ յառաջին գլուխն, յորժամ տեսանէր զկենդանիսն, երեւեցաւ անիւ մի, որ ունէր չորս դէմս (հմնտ. Եզեկ. Ա 15): Արդ, եթէ հայիմք ի չորսեսին Աւետարանսն, Յոհաննուն քան զայլսն կատարելագոյն երեւի, վասն այն մի անիւ կոչի, զի բոլորակ ձեւն կատարեալ ասի, քան զայլ ձեւս<sup>xxxi</sup>, բայց ասէր, թէ անիւն այն չորս դէմս ունէր, զի Աւետարանն Յոհաննու չորս մասն ունի.

<sup>1</sup> Եպիսկոպոսապետքն

<sup>2</sup> Բ չիք ի

<sup>3</sup> Ա Ը զիհում

<sup>4</sup> Կ իրացն

<sup>5</sup> Յ Յոհաննու, Յ Յովաննու

<sup>6</sup> Կ չիք

<sup>7</sup> Կ չիք որպէս Արիստոտէլ ... քառանկիւնի մարմնոյ

<sup>8</sup> Բ լինի

<sup>9</sup> Կ եւ եթէ

<sup>10</sup> Ա Բ ասէ

<sup>11</sup> Կ չիք

<sup>12</sup> Ա Բ աւետարանիչսն

**Առաջին ցուցանէ զՈրդւոյն Աստուծոյ զյաւիտենական ծնունդն եւ ելումն ի Հաւրէ, որպէս ասէ՝ ի սկզբանէ էր Բանն (Յովի. Ա 1):**

**Երկրորդն ցուցանէ զամենայն արարածոց ստեղծումն նովաւ, որպէս ասէ՝ Ամենայն ինչ նովաւ եղեւ (Յովի. Ա 3):**

**Երրորդն ցուցանէ զժամանակաւոր մարդեղութիւն, որպէս ասէ. «Բանն մարմին եղեւ» (Յովի. Ա 14) եւ զգործն զոր արար մարդեղութեամբն:**

**Չորրորդն ցուցանէ զընդհանուր փրկութիւն մարդկայինս ազգի, որ եղեւ մարմնացեալ Բանիւն, որպէս ասէ ի վերջք Աւետարանիս, եթէ՝ «Այս այն չափ գրեցաւ, զի հաւատայցէք, թէ<sup>1</sup> Յիսուս Քրիստոս է Որդի Աստուծոյ, եւ զի հաւատայցէք եւ զկեանսն<sup>2</sup> ընդունիցիք յանուն նորա» (հմտ. Յովի. Ի.31): Եւ սոյնպէս յայտնի է կարգ այսմ Աւետարանի, քան զայլսն, զի նախկին է, քան զայլ Աւետարանսն ըստ կարգի կատարելութեան, թէպէտ վերջին ասի ըստ կարգի ժամանակի եւ լինելութեանս:**

**Այս առաջին նախադրութիւն Աւետարանին:**

**Իսկ վասն է՞ր կոչի Աւետարան, եւ թէ՝ Աւետարան Յոհաննու եւ այլն, գտցես ի սկիզբն Մատթէոսի գլխոյն<sup>xxxi</sup>:**

**Իսկ որ ասի՝ Սուրբ Աւետարան. նախ՝ զի Սուրբ է Հոգին, որ խաւսեցաւ: Երկրորդ. Սուրբ է աւետարանիչն, որ գրեաց: Երրորդ. Սուրբ են բանք եւ գիրք եւ նիւթք Աւետարանին: Չորրորդ. Սուրբ<sup>3</sup> եւ սրբարար, որք ընթեռնուն եւ որք<sup>4</sup> լսեն, այսինքն՝ որք ուսուցանեն եւ որ<sup>5</sup> ուսանին, սրբէ զնոսա: Եւ այս է չորրորդ պատճառն, որ ասեն վարդապետք, այսինքն<sup>6</sup> «Ներգործական պատճառ է Տէր մեր եւ Հոգի նորա, եւ գործիական պատճառ է աւետարանիչն<sup>7</sup> Յոհաննէս, եւ նիւթական պատճառ՝ բանք Աւետարանին, եւ կատարունական պատճառ, զի սրբէ զընդունողս իւր եւ ուսուցանէ զճշմարտութիւն»:**

**Այսքան նախերգան Բանին:**

**Եւ գիտելի է, թէպէտ չորս են աւետարանիչք, սակայն Յոհաննէս առաւել յայտնիչ է աստուածային գործոցն: Եւ զի Աստուածաբան կոչի սա, ո՛չ միայն վասն սկզբանն, զի զանձառ**

<sup>1</sup> С եթէ

<sup>2</sup> С զկեանս

<sup>3</sup> А В չիք

<sup>4</sup> В չիք

<sup>5</sup> А В չիք

<sup>6</sup> А В չիք

<sup>7</sup> С Աւետարան

ծնունդն աստուածաբանէ, այլ եւ բովանդակ գլուխ Աւետարանիս կատարելապէս ցուցանէ զԱստուածութիւն<sup>1</sup> Քրիստոսի՝ ի քսան գլուխս բաժանելով, զոր յայլ վարդապետաց ի նոր թարգմանս հաւաքեալ են, վասն որոյ ի<sup>2</sup> սկիզբն Աւետարանիս եղի զամենայն առհասարակ: Եւ զիւրաքանչիւրսն գրեցից յիւրում գլխոջն ծիրանի գլխագիր<sup>3</sup>: Եւ հաճոյ թուեցաւ մեզ վասն չորից.

Նախ՝ զի ընդդէմ է անհաւատից, որք ուրանան Աստուածութիւն Քրիստոսի, որպէս Հրէայք եւ այլազգիք:

**Երկրորդ.** ընդդէմ հերետիկոսաց, որպէս Արիոս, Եւնոմիոս եւ այլք, որք ոչ խոստովանին զծնունդ Բանին Աստուծոյ:

**Երրորդ.** ընդդէմ է մարդադաւան հերձուածողաց, որպէս նեստորականք եւ քաղկեդոնիկք, որք բաժանեն զԲանն ի մարմնոյն:

**Չորրորդ.** հաստատութիւն է ուղղափառ Եկեղեցւոյ եւ սուրբ վարդապետաց, որք ճշմարտապէս<sup>4</sup> խոստովանիմք զՔրիստոս բնութեամբ Աստուած եւ Որդի Աստուծոյ՝ մարմնացեալ ի Սուրբ եւ յԱստուածածին կուսէն Մարիամայ:

**Երկրորդ.** նախազրութիւն վասն աստուածաբանութեան ասացաւ ի վերոյ վասն աւետարանչին Յոհաննու:

**Այժմ ասելի է յաղագս աստուածաբանութեան.**

Եւ զայս, որ վասն Երրորդական անձնաւորութեան է առեալ, խաւսելի է վասն յԵրկարութեան, այլ վասն Բանին Աստուծոյ աստուածաբանելի է: Եւ նախ գտեալ է, զի աստուածաբանութիւն Բան Աստուծոյ ասի.

Նախ՝ վասն նոյնութեան, զի Բանն Աստուծոյ Աստուած է, եւ ասի որպէս Քրիստոս, ըստ այնմ. «Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն» (Յովհ. Ա 1-2):

**Երկրորդ.** բան ինչ Աստուծոյ բան ասի, զի յԱստուծոյ յայտնեալ է: Եւ սոյնպէս ամենայն ճշմարտութիւն Աստուծոյ բան է, զի ամենայն ճշմարտութիւն ի Հոգւոյն Սրբոյ է: Եւ առաւել ճշմարտութիւն Սուրբ Գրոց<sup>5</sup> Բան Աստուծոյ ասի, որպէս ասէ Պետրոս Բ Կաթողիկեաց. «Ո՛չ ըստ կամաց տուաւ մարդարէութիւնք, այլ ի Հոգւոյն Սրբոյ կրեալք խաւսեցան մարդիկ յԱստուծոյ» (ԲՊետր. Ա 21): Մարդարէութիւն աստ ո՛չ միայն վասն բանից մարդարէիցն առնու, այլ վասն ամենայն վարդապետութեան Սուրբ Գրոց:

<sup>1</sup> Բ զԱւետարանն

<sup>2</sup> Բ չեք

<sup>3</sup> Ը ծիրանի գլխագիր եւ տոռ մանր, զի դիւրաւ գտցես

<sup>4</sup> Ա Բ ճշնարիտ

<sup>5</sup> Բ Գրոց սրբոց

**ԵՐՐՈՐԴ.** բան ինչ բան Աստուծոյ ասի, զի առ Աստուած զմիտս համբառնայ եւ յերանութիւն հասուցանէ: Եւ սոյնպէս պատուիրանք Աստուծոյ եւ խրատքն Քրիստոսի, որ յԱւետարանս<sup>1</sup> գրեալ է, եւ ամենայն բան, որ ի բարիս ածէ զմարդիկ, բան Աստուծոյ ասի:

**ՉՈՐՐՈՐԴ.** բան Աստուծոյ ասի, որ զԱստուծոյ յատկութիւն յայտնէ, որպէս այնք, որ ցուցանեն զԱստուած ամենակարող, իմաստուն<sup>2</sup>, բարի, ողորմած եւ այլն: Այլ եւ վասն երրորդական անձնաւորութեան եւ միոյ բնութեան եւ վասն ծննդեան Որդւոյն եւ բղխման Հոգւոյն Սրբոյ, եւ վասն մարդեղութեան Քրիստոսի:

Եւ սոյնպէս բազում ունի տեսութիւն եւ գովութիւն աստուածաբանութեան, այլ զբնաբանս, որ ասացեալ է աւետարանիչն վասն Բանին Աստուծոյ, կարեմք ասել վասն աստուածաբանութեան, որպէս ասէ<sup>3</sup>.

Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած (Յովի. Ա 1-2):

Եւ բնաբանս չորս իրս ցուցանէ վասն աստուածաբանութեան.

**Առաջինն.** կատարեալ արժանաւորութիւն, յորժամ ասէ՝ Ի սկզբանէ:

**ԵՐԿՐՈՐԴՆ.** կատարեալ հաստատութիւն, յորժամ ասէ՝ Էրանն:

**ՉՈՐՐՈՐԴՆ.** կատարեալ երանութիւն, յորժամ ասէ՝ առ Աստուած:

Վասն առաջնոցն գիտելի է<sup>4</sup>, որ է կատարեալ արժանաւորութիւն, զի սուրբ աստուածաբանութիւն ասի գլուխ ամենայն գիտութեանց, որ ի բնութենէ գրեալք եղեն վասն իւրաքանչիւր արժանաւորութեան, որպէս ասէ՝ ի սկզբանն: Եւ այսու աւրինակաւ մեկնելի է զբանն, որ յԱրարածքն. «Ի սկզբանէ ստեղծեաց Աստուած զերկին եւ զերկիր» (ԾԱՅ. Ա 1): Եւ բանս այս երեք պատճառաւ ցուցանէ զարժանաւորութիւն աստուածաբանութեան.

**Առաջին.** վասն նախկնութեան, որպէս ասէ՝ Ի սկզբանն:

**ԵՐԿՐՈՐԴ.** զազնուական ծնունդն, որպէս ասէ՝ ստեղծեաց Աստուած:

**ԵՐՐՈՐԴ.** զարձակ պարագրութիւն, որպէս ասէ՝ զերկին եւ զերկիր:

Բայց առաջինն, որ նախկին ասի, զի կատարեալ է, քան զայլ ամենայն գիտութիւնս, եւ զամենայն գիտութիւնս ուսանելի է վասն նմա, եւ ոչ զնա՝ վասն այլոց, վասն որոյ ասէ Արիստոտէլ,

<sup>1</sup> Ա ՅԱԼԵՏՈՎՐԱՆԱՆ

<sup>2</sup> Ը ամենակարող եւ իմաստուն

<sup>3</sup> Ա ՅՈՒԱՆԻ ԱՍԻ (ԺԻՐԱՆԻ ԱԺԻՄԻ ԼԻՆԻ ԱՅՍ ԵՎ ՎԵՐԻՆ ԳԼԽԱԳԻՐՆ):

<sup>4</sup> Յ ԳՐԵԱԼ Է

թէ՝ նախկին ասի, որ առաջին սկզբանն առաւել հպաւորէ, իսկ աստուածաբանութիւնս մեր առ Աստուած մերձենայ առաւել, քան զամենայն գիտութիւն, զի ի վերայ միեւնոյն ճշմարտութեան է աստուածաբանութիւն, որպէս ասէ յԱռակսն ի դէմս աստուածաբանութեան. «Տէր ստացաւ զիս սկիզբն ճանապարհաց իւրոց<sup>1</sup>, յառաջ քան զառնելն ի սկզբանէ» (հմնտ. Առակ. Ը 22): Եւ Սիրաք ասէ. «Յառաջ քան զամենայն ստեղծաւ իմաստութիւն, եւ հանճար՝ յաւիտենից» (Սիրաք. Ա 4): Աստուածաբանութիւնս մեր իմաստութիւն ասի վասն ճանաչելոյ զերկնայինսն, որոց չեմք նոցին արարող, եւ հանճար ասի, զի ուսուցանէ զառաքինութիւնս, զոր կարող եմք առնել: Ապա յայտ է, զի աստուածաբանութիւն է նախկին ի մէջ ամենայն մարդկային գիտութեանցս:

Երկրորդ. աստուածաբանութիւն ունի զազնուական ծնունդն, որպէս ասէ՝ ստեղծեաց Աստուած: Գիտելի է թէպէտ ամենայն գիտութիւն յԱստուծոյ իցէ անընդմիջաբար կամ միջնորդով, սակայն աստուածաբանութիւն եզականապէս յԱստուծոյ է, այսինքն՝ ստեղծողական<sup>2</sup> յայտնութեամբ կամ հեղմամբ, զի աստուածաբանութիւն մեր ի վերայ այնմ իրի է, յորում ոչ հասանի բնական բանականութիւն, որքան ի մարմնի եմք, որպէս են աստիճանք հաւատոյ մեր եւ խորհուրդ եկեղեցւոյ: Վասն այն եզական ասէ. «Ստեղծեաց Աստուած», այսինքն՝ յայտնեաց եւ ի միտս գրողաց Սուրբ Գրոց եհեղ, որպէս ասէ Սիրաք. «Նա ինքն Աստուած ստեղծ զնա<sup>3</sup> ի Հոգի Սուրբ, եւ թուեաց եւ սփուեաց յամենայն արարածս իւր» (հմնտ. Սիրաք. Ա 9-10), այսինքն՝ յառաքեալս եւ յաշակերտս եւ յամենայն քրիստոնեայս:

Երրորդ. աստուածաբանութիւն ունի զընդարձակ պարագրութիւն, որպէս ասէ. «Զերկին եւ զերկիր»: Եւ գիտելի է, թէպէտ ամենայն գիտութիւնք գտեալք ի մարդկանէ, ընդարձակ ունի զճանաչումն, բայց ոչ այնպէս ընդարձակ պարագրութիւն ունի, որպէս աստուածաբանութիւն, զի զամենայն էակքս պարունակէ ընդ ինքեամբ միով գիտութեամբ, որպէս երկինք եւ երկիր զամենայն զգալիսս պարունակեն, քանզի աստուածաբանութիւն նախ է որպէս երկինք՝ ճանաչելով զԱստուածութիւն Քրիստոսի, եւ զերկիր՝ ճանաչելով զմարդկութիւն Քրիստոսի: Երկրորդ. երկինք է, զի ուսուցանէ զհոգեւոր ստեղծուածս, եւ երկիր է՝ ճանաչելով զմարմնաւոր ստեղծուածս: Երրորդ. երկինք է, զի ուսուցանէ

<sup>1</sup> Ա Բ չեք

<sup>2</sup> Բ Ստեղծական

<sup>3</sup> Յ նա

զվարձու երանութեան, եւ երկիր է՝ ցուցանելով զպատիժ դժուխոցն։ Չորրորդ. երկինք է՝ ցուցանելով զվարս բարիս մարդկան, եւ երկիր է՝ նշանակելով զմեղս մեղաւորաց։ Վասն այն ասէ. «Զերկինս եւ զերկիր»։ Եւ եսայի ասէ. «Երկինք աթոռ իմ են, եւ երկիր՝ պատուանդան ոտից իմոց» (Եսայի ԿԶ 1)։ Եւ յԵրեմիայ ի դէմս աստուածաբանութեան գրեալ է. «Զերկին եւ զերկիր ես լնում, - ասէ Տէր» (Երեմ. ԻԳ 24)։ Ապա յայտ է երեքկին արժանաւորութիւն աստուածաբանութեան, որպէս ցուցաւ։

Երկրորդ մասն բնաբանիս ցուցանէ զկատարեալ հաստատութիւն աստուածաբանութեան, որպէս ասէ՝ Եր։

Դիմելի է, զի իմաստութիւն այսմ աշխարհիս, գտեալ ի մարդկանէ, ոչ ունի հաստատութիւն, քանզի ոչ են յարմարեալ ի վերայ հաստատուն հիման. նախ՝ զի ոմանք գիտութիւնք հիմնացեալ են ի վերայ ծիսոյ, այսինքն՝ մարդկային բարակ եւ անաւսր հանճարոյ, որպէս գիտութիւնք փիլիսոփայիցն տեսական եւ գործնական։ Երկրորդ. ոմանք տրամադրեալք են ի վերայ հողոյ, այսինքն՝ մարմնական փափկութեանց, որպէս աւրէնքն զազիր ամենաչարին Մահմէտի։ Երրորդ. ոմանք հիմնաւորեալք են ի վերայ աւազոյ, այսինքն՝ ի վերայ մարդկային ագահութեան, որպէս արհեստ եւ գիտութիւնք շահաբերք, որպէս են բժշկականք եւ քաղաքական իրաւունք։ Եւ վասն այսմ երիս գիտութեանցս ասէ Յակոբոս ի Կաթողիկէն. «Ոչ է իմաստութիւնս [այս] իջեալ ի վրուստ, այլ երկրաւոր, շնչաւոր եւ դիւական» (Յակ. Գ 15)։ Դիւական ասէ զարտաքին փիլիսոփայիցն, եւ շնչաւոր՝ վասն մարմնասէր աւրինացն, իսկ երկրաւոր՝ վասն երրորդին, որք են գիտութիւնք շահաբերք<sup>1</sup> մարմնական շահուց։ Բայց մերս իմաստութիւն, այսինքն՝ աստուածաբանութիւնս, հաստատագոյն է, զի հիմնացեալ է յաստուածային յանշարժ<sup>2</sup> մեծութիւն եւ իմաստութիւն, որպէս ասէ Աւետարանն Ղուկասու. «Ամենայն, որ լսէ զբանս իմ եւ առնէ, նման է առն իմաստնոյ, որ շինիցէ տուն, որ փորեաց եւ խորեաց եւ եղ զհիմն ի վերայ վիմի, ի յառնել հեղեղաց բախեաց գետն զտունն եւ ո՛չ կարաց շարժել, զի հաստատեալ էր հիմն ի վերայ վիմին» (Սատթ. Է 24-26, Ղուկ. Զ 47-48)։ Բանս այս ցուցանէ զաստուածաբանութիւն եւ զ Սուրբ Գրոց անշարժութիւն երեք պատճառաւ. նախ՝ վասն բռնութեան ընդհարմանն, որպէս ասէ. «Բախեաց գետն զտունն»։ Երկրորդ. վասն պահպանութեան, որպէս

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> B անշարժ, C աստուածային անշարժ

ասէ. «Եւ ոչ կարաց շարժել»: Երրորդ. վասն անդրդուելի հիմանն, որպէս ասէ. «Հաստատեալ էր հիմն ի վերայ վիմի»:

Առաջինն ցուցանէ զաստուածաբանութեան հաստատութիւն ի ներհակաբանութենէ, որ ասէ. «Բախեաց գետն»: Գիտելի է, զի որքան սաստիկ է բախումն ընդդէմ շինուածոց, պարտ է, զի այնքան շինուածն առաւել հաստատուն լիցի, զի կարասցէ տոկալ: Արդ<sup>1</sup>, աստուածաբանութիւն կարի զաւրաւոր ունի զհակառակս, զի նախ կրեաց զսաստիկ բախումն ի նուրբ եւ ի խորին գետոյն, այսինքն՝ արտաքին իմաստափրաց, մանաւանդ յանիծելոյն Ավեռիոսէ<sup>2</sup>, որ մեկնիչն է Արիստոտէլի գրոցն, որ զհաւատ մեր եւ զաստուածաբանութիւն ծաղր առնէ, եւս առաւել զՍուրբ Երրորդութեան դաւանութիւն<sup>xxxiii</sup>:

Երկրորդ. աստուածաբանութիւնս մեր կրեաց հակառակութիւն ի պղտորեալ գետոց, այսինքն՝ ի հերձուածողաց եւ ապականողաց քրիստոնէական հաւատոյս եւ Սուրբ Գրոց, այսինքն՝ յԱրիոսէ, Մակեդոնէ, ի նեստորէ եւ վերջին՝ ի քաղկեդոնիկ չար ժողովոյն Պողքերի:

Երրորդ. կրեաց հակառակութիւն զառիթափ եւ յախուռն բերմանէ յորդահոս գետոց, այսինքն՝ ի չար թագաւորացն հալածանաց:

Չորրորդ. կրեաց հակառակութիւն ի սկախառն եւ ի տղմաբեր գետոյն, այսինքն՝ յԱրարիոյ եւ ի Տաճկաստանաց մոլար աւրինացն<sup>3</sup>, վասն որոյ ասէ. «Բախեաց գետ զտուն», այսինքն՝ զսուրբ աստուածաբանութիւնս, որ է. «Տուն Աստուծոյ եւ Դուռն երկնից» (հմնտ. Ծննդ. Ի՛ւ 17), որպէս գրեալ է յԱրարածքն: Հանգոյն այսմ եւ Մատթէոս ասէ. «Իջին անձրեւք, խաղացին գետք, շնչեցին հողմք եւ բախեցին զտունն» (Մատթ. Է 25): Անձրեւն նշանակէ զբազմութիւն հերձուածողաց եւ տաճկաց: Գետք՝ զբոնութիւն հալածիչ չար թագաւորացն: Յնչնունք հողմոց՝ զնրբութիւն փիլիսոփայից:

Երկրորդ. ցուցանի աստուածաբանութեան հաստատութիւն ի պահպանութենէն, որպէս ասէ. «Ոչ կարաց շարժել»: Գիտել պարտ է, զի թէպէտ յարեան բազում փորձութիւնք եւ հակառակութիւնք, եւ ոչ կարացին շարժել զաստուածաբանութիւն, զի ունի յինքեան կացուցեալ հիմն զաւրավիգն եւ աւժանդակ առ ի պահպանութիւն իւր գեւթն սիւնսն, որ գրեալ է յԱռակսն. «Ինաս-

<sup>1</sup> Ա Յ Երրորդ

<sup>2</sup> Բ Եվառիոսէ

<sup>3</sup> Ը օդինացն պիղծ

տութիւն, – **այսինքն՝ Քրիստոս**, – շինեաց իւր տուն եւ կանգնեաց սիւն եւթն» (տես Առակ. թ 1), **որ է եւթն առաքինութիւնք. երեքն<sup>1</sup> աստուածայինք եւ չորսն՝ մարդկայինք:** Եւ կամ վասն եւթն պարգեւաց Հոգւոյն Սրբոյ, կամ եւթ սիւնս այս նշանակեն զեւթ պատճառ հաստատութեան աստուածաբանութեան. առաջինն է մարդարէական բանից լրումն: Երկրորդ. սքանչելեաց ներգործութիւնք: Երրորդ. հակառակաց ի բաց բարձումն: Չորրորդ. քերթողացն սրբութիւն: Հինգերորդ. ընդունողացն քննութիւն ջանիւ եւ երկամբ: Վեցերորդ. է Սուրբ Գրոց համաձայնութիւն: Եւթներորդ. Եկեղեցւոյ անբիծ հաւատոյ մշտակայութիւն:

**Եւ սոյնպիսի եւթն սեամբ հաստատի աստուածաբանութիւն:**  
**Այս աւժանդակացն պահպանութիւն:**

Երրորդ. ցուցանի աստուածաբանութեան հաստատութիւն յանշարժութենէ հիման, որպէս ասէ. «Հաստատեալ էր ի վերայ վիմի» (տես Մատթ. է 25), այսինքն՝ ի վերայ Քրիստոսի, ըստ Պաւլոսի. «Վէմն էր Ինքն Քրիստոս» (ԱԿորնթ. ժ 4): Յաղագս այսմ վիմի ասաց առ Պետրոս. «Ի վերայ այսր վիմի շինեցից [զեկեղեցի իմ]» (Մատթ. ժ 28): Նախ՝ քանզի Քրիստոս է վէմն ազնուագոյն եւ սկիզբն մերոյ<sup>2</sup> ազնուագոյն ծննդեան, որպէս ասէ Եսայի. «Նայեցարուք ի վէմն հաստատուն, յորմէ կոփեցարուք» (Եսայի ծԱ 1): Երկրորդ. Քրիստոս է քար հատանող առ ի թլփատութիւն մեր<sup>3</sup>, որպէս աւրինակեալն եղեւ յԵլիցն, առաւել Սեփովրայ գայլախազ եւ որդւոյ իւրոյ (հնմտ. Ելք Դ 25): Երրորդ. Քրիստոս է վէմ քաղցրագոյն ի կերպել զմեզ, ըստ այնմ. «Ի վիմէ մեղլ յագեցոյց նոցա» (տես Սաղմ. Զ 17): Չորրորդ. Քրիստոս է վէմ զաւրաւոր ի հաստատել զմեզ, որպէս ասէ Դաւիթ. «Տէր վէմ իմ եւ ամրութիւն իմ» (Բ Թագ. ԻԲ 2): Հինգերորդ. Քրիստոս է վէմ քարանձաւ, այսինքն՝ ծերպ եւ ծակ վասն մերոյ<sup>4</sup> բնակութեան, որպէս ասէ Յոր. «Ի քարանձաւ վիմաց եւ ի ծածուկս անդնդոց» (հնմտ. Յոր ԼԹ 28): Ի վերայ այսր վիմի շինեալ է մեր աստուածաբանութիւնս, որպէս ասէ Պետրոս, զոր առնու յԵսայեայ. «Ահաւասիկ ես դնեմ ի Սիովն<sup>5</sup> վէմ ընտիր գլուխ անկեան զպատուականն<sup>6</sup>, եւ որ ի նա հաւատացէ, մի՛ ամաչեսցէ» (հնմտ. Եսայի ԻԸ 16): Աստուստ յայտնի է սուրբ աստուածաբանութեանս հաստատութիւն:

<sup>1</sup> Բ գործն

<sup>2</sup> Բ մարմնոյ

<sup>3</sup> Բ մարմնոյ

<sup>4</sup> Բ մարմնոյ

<sup>5</sup> Ը Սիոն

<sup>6</sup> Ա Բ Ը պատուական

**Այժմ վասն երրորդին ասասցուք, որ է կատարեալ ճշմարտութիւն, յորժամ ասէ.**

Բառ:

Գիտելի է, զի զանազանութիւն է ի մէջ աստուածաբանութեան եւ այլ գիտութեանց, զի թէպէտ այլ գիտութիւնք երբեմն ճշմարտութիւն ունին, սակայն բազում ստութիւնք եւ խարէ՛ութիւնք խառնեալք են: Եւ այս է պատճառն, զի այլ գիտութիւնք յենուն ի բանական<sup>1</sup> եւ ի մոլորեալ բանականութիւն<sup>2</sup> մարդկան, բայց մեր աստուածաբանութիւնս եւ աստուածային Գիրք միշտ ճշմարիտ են, վասն որոյ կարելի է ասել. «Աստուածաբանութիւն է բան պարզաբար եւ առանց տարորշման»: Իսկ բան սուտ ո՞չ ասի բան պարզաբար, այլ միայն աստուածաբանութիւն պարզաբար բան ասի, քանզի աստուածաբանութիւն է բան ճշմարիտ պատմութեան, բան ճշմարիտ նշանական, բան ճշմարիտ փորձեալ: Եւ միայն աստուածաբանութիւն սուրբ եւ ոչ այլ գիտութիւն ունի քառակի ճշմարտութիւն, զի ունի չորս միտք բանն Սուրբ Գրոց, այսինքն՝ ըստ ճառին տեսութեան եւ ըստ բարոյականին քննութեան, եւ ըստ այլաբանութեան փոխաբերութեան, եւ ըստ մտաւորականին վեր հայեցութեան: Եւ քանզի աստուածաբանութիւն այնպէս յայտնիչ է ճշմարտութեան, վասն որոյ ասէ Սիրաք.

**Առաջին. «Աղբիւր իմաստութեան է բանն Աստուծոյ ի բարձունս» (տե՛ս Սիրաք Ա 5)<sup>3</sup>:**

Եւ բանս այս ցուցանէ զճշմարտութիւն աստուածաբանութեան երեք կերպիւ. նախ՝ քանզի աստուածաբանութիւն ուսուցանէ զճշմարտութիւն բազմութեան աստուածային կոչմանցն, վասն որոյ ասէ. «Աղբիւր իմաստութեան»: Երկրորդ. ցուցանէ զյատկութիւն աստուածային անձանց, վասն որոյ ասի. «Բան Աստուծոյ»: Երրորդ. ցուցանէ զբարձրութիւն<sup>4</sup> աստուածային խորհրդոց<sup>5</sup> եւ սքանչելեաց, վասն որոյ ասէ. «Ի բարձունս»: Բայց առաջին ցուցանէ զբազմութիւն աստուածային կոչմանց, վասն որոյ ասէ. «Աղբիւր իմաստութեան»: Եւ գիտելի է, զի իմաստութիւն կոչումն է Աստուծոյ, եւ թէ այլ ինչ գիտութիւն իմաստութիւն ասի, դուզնաքեայ եւ անկատար իմաստութիւն ասի<sup>6</sup>: Եւ

<sup>1</sup> Ա Բ բանականն

<sup>2</sup> Բ Ընականութիւն

<sup>3</sup> 1860 թվականի գրաբար Աստվածաշնչի մեջ այս համարը բացակայում է: Այն առկա է 1994 թվականի «Էջմիածնի» արևելահայերեն թարգմանության մեջ:

<sup>4</sup> Բ զյատկութիւն

<sup>5</sup> Բ անձանց

<sup>6</sup> Ա չիք դոյզնաքեայ...ասի

զսոյնպիսի իմաստութիւնս աստուածաբանութիւն սուրբ յայտնէ, եւ ոչ միայն զաստուածային իմաստութիւն, այլ եւ զաստուածային էութեան կարողութիւն առ ի ծնանել, եւ զկարողութիւն աստուածային գիտութեան առ ի դատել, եւ զկարողութիւն աստուածային արդարութեան առ ի պատճել եւ վարձատրել<sup>1</sup>, եւ զմեծութիւն աստուածային կարողութեան առ ի ստեղծանել, եւ զայլ սոյնպիսի աստուածային կոչմունք ցուցանէ աստուածաբանութիւն, վասն որոյ ասի աղբիւր ինաստութեան: Նոյնպէս եւ յԱռակսն ասէ. «Աւրէնք իմաստոց աղբեր կենաց» (տես Առակ. ԺԳ 14), զի աստուածաբանութիւն աւրէնք է Աստուծոյ՝ միջնորդութեամբ Մովսիսի առեալ զՀին Կտակարանս եւ Քրիստոսիւ շնորհեալ զՆոր Աւետարանս: Եւ աղբիւր ասի վասն առաւել<sup>2</sup> յստակութեան եւ աւգտակարութեան:

Երկրորդ. ցուցանէ զյատկութիւն աստուածային անձանց: Եւ ոչ երբեք այլ գիտութիւն համեմատի այսմ, վասն այն եզական ասի՝ Բան Աստուծոյ, քանզի այս աստուածաբանութիւնս ցուցանէ զյատկութիւն աստուածային Բանին, ցուցանէ եւ զյատուկ ելումն իւր ի Հաւրէ, յայտնէ եւ զբղխումն, որ ի Հաւրէ Հոգւոյն Սրբոյ, ուսուցանէ եւ զյատուկ մարդեղութիւն Բանին, ըստ այնմ. «Բանն մարմին եղեւ» (Յովի. Ա 14): Եւ վասն երից անձանցն եւ միոյ բնութեան ասէ Յոհաննէս ի կաթուղիկէքն. «Երեքն են, որ վկայեն յերկինս. Հայր, Բանն եւ Հոգին Սուրբ. եւ սոքա երեքեանն մի են»<sup>xxxiiv</sup>: Եւ ի դէմս այլ գիտութեանց ասէ Ղուկաս. «Զամենայն գիշերս աշխատեցաք, կալաք եւ ոչինչ» (Ղուկ. Ե 5), եւ ի դէմս աստուածաբանութեան ասէ. «Բայց վասն քո բանիդ արկցուք զուռկանս» (Ղուկ. Ե 5), քանզի այլ գիտութիւնք, նսեմ եւ սուտ եւ ընդունայն զբոլոր գիշեր մարդկային մոլորութեան աշխատին եւ ոչ ինչ կալնուն, իսկ աստուածաբանութիւն զուռկանն ի բանն Աստուծոյ դնէ եւ բմբոնէ զԱստուած, այսինքն՝ զյատկութիւնս աստուածային ճանաչելով:

Երրորդ. ցուցանէ սուրբ աստուածաբանութիւնս զբարձրութիւն աստուածային խորհրդոց<sup>3</sup> եւ սքանչելեաց, որ անհաս գոն<sup>4</sup> բնական<sup>5</sup> զաւրութեան մարդոյ<sup>6</sup> եւ հանճարոյ, քանզի յայտնէ զստեղծումն աշխարհի եւ զնախախնամութիւն Աստուծոյ եւ

<sup>1</sup> Ը վարձաւորել

<sup>2</sup> Ը առաւելութեան

<sup>3</sup> Ը Աստուած խորհրդոց

<sup>4</sup> Ա Բ գոլ

<sup>5</sup> Բ բանական

<sup>6</sup> Ը մերոյ

զփրկութիւն եւ զկատարած աշխարհիս ի դատաստանն Քրիստոսի եւ զանազանութիւն հատուցման, զի զոմանս պատժէ եւ զոմանս վարձատրէ: Եւ սոյնպիսիք են բարձրագոյն խորհուրդ եւ արհեստ Աստուծոյ, վասն որոյ այլ գիտութիւնք առ երկրաւ ընթանան, բայց աստուծաբարանութիւն յերկինս բնակչ, վասն որոյ ասէ. «Բարձունք», քանզի սուրբ աստուծաբարանութիւն ասէ. «Աւրհնեցէք զՏէր յերկնից, աւրհնեցէք զնա ի բարձունս, աւրհնեցէք զնա ամենայն<sup>1</sup> հրեշտակք նորա<sup>2</sup>, աւրհնեն զնա ամենայն զաւրութիւնք նորա» (Սաղմ. ճԽԸ 1-2) եւ այլն: Եւ թէպէտ այլ գիտութիւնք զոմանց ասացեալ բանս ուսուցանեն, մանաւանդ զլինելութիւն աշխարհիս, յորմէ իմաստաէրք բազումս ճառեցին, բայց ո՛չ ճշմարտութեամբ<sup>3</sup>, այլ ստութեամբ՝ ասելով, զի Աստուած ի հարկէ արար զաշխարհս, եւ յաւիտենից է, եւ այլ բազում ստութիւնք յաւդէն, վասն այնորիկ եզականաբար աստուծաբարանութիւն ասի «Բան», վասն կատարեալ ճշմարտութեան, քանզի աստուծաբարանութիւն ի վեր<sup>4</sup>, քան զամենայն ունի ճշմարտութիւն երեքկին, վասն զի յայտնէ ճշմարտապէս զաստուածային էութիւն, զաստուածային կարողութիւն, զաստուածային գիտութիւն: Նախ յայտնէ զաստուածային էութիւն, որպէս գրէ Դաւիթ. «Բղիսեաց սիրտ իմ զբան բարի եւ ասեմ զգործս իմ թագաւորի<sup>5</sup>» (Սաղմ. ճԽԸ 1-2): Այս Բան է Աստուծոյ Հաւը, որ բոլիեաց զբան բարի՝ ծնանելով զՈրդի, եւ ասաց զգործս իւր թագաւորի, այսինքն՝ Քրիստոսի, որ մի Աստուած է ընդ Հաւը եւ Աստուծոյ Հաւը լեզու ասի, զի նովաւ Հայր Աստուած ընդ մեզ խաւսեցաւ եւ նա յԱստուծոյ Հաւը իբրեւ զԲան ելանէ: Նա եւ գրիչ կոչեցեալ լինի Աստուծոյ Հաւը, զի նովաւ Աստուած Հայր գրեաց իսիրտս<sup>6</sup> մարդկան զաւետարանական աւրէնս:

Երկրորդ. աստուածաբարանութիւն յայտնէ զաստուածային կարողութիւն, որով զամենայն արար, որպէս գրէ յերբայեցւոցն. «Հաւատով իմանամք հաստատեալ զյաւիտեանս բանիւն Աստուծոյ՝ յաներեւութից զերեւելիս եղեալ» (Եբր ԺԱ 3): Եւ գիտելի է, զի նախ քան զստեղծումն աշխարհի ամենայն աշխարհ ի կամս Աստուծոյ եւ ի հանճարս նորա տպաւորաբար որպէս ի նախայարացոյց աներեւութաբար յաւիտենականապէս կայր, եւ ապա ներ-

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> A B չեք

<sup>3</sup> A C ճշմարտապէս

<sup>4</sup> A B ի վեր է

<sup>5</sup> A B չեք իմ թագաւորի

<sup>6</sup> C սիրտ

**գործութեամբ յառաջ եկն ստեղծմամբ յաներեւութենէ երեւելի<sup>1</sup> լինելով:**

Երրորդ. սուրբ աստուածաբանութիւն յայտնէ զԱստուծոյ գթութիւն, որպէս գրէ Յակովոս ի կաթուղիկեայց վարժողացն յաստուածաբանական<sup>2</sup> իմաստու. «Որով ի բաց թաւթափեալ զամենայն աղտեղութիւն եւ զյաւելուածու չարաց, հեզութեամբ ընդունել զբանն ընդաբոյս<sup>3</sup>, որ կարողն է կեցուցանել զոգիս ձեր» (Յակ. Ա 21), այսինքն՝ զաստուածային բան, որ ի մարդկային բնութիւն պատուաստեալ կայր<sup>4</sup>: Ապա ուրեմն յայտնի է աստուածաբանութեան կատարեալ ճշմարտութիւն, որպէս ասեն վարդապետք. «Զոր ինչ Գիրք Սուրբ ուսուցանէ, ճշմարտութիւն է, զոր ինչ պատուիրէ, բարութիւն է, զոր ինչ խոստանայ, երանութիւն է, քանզի Աստուած ճշմարտութիւն է թարց պատրանաց, բարութիւն է առանց չարութեան, երանութիւն է առանց թշուառութեան<sup>5</sup>»: Եւ դարձեալ ասեն. կալցուք զմիջնորդն մեր Քրիստոս, յորում է ամենայն գանձ<sup>6</sup> իմաստութեան եւ գիտութեան ծածկեալ, զի մի սուտ մարդարէութեան յաճախ բանից խաբեսցուք, եւ ոչ սնոտի առաքինութեան երեւմամբ զարհուրեսցուք: Եւ յորժամ զաստուածային Գիրս ընթեռնումք ի յոլովութիւն մտացն բանից<sup>7</sup> Սուրբ Գրոց, որք ուղղափառ հաւատով ողջմտութեամբ աճեն, զայնպիսի մեկնութիւն հաճութեամբ ընկալցուք, որ է ընդդիտման մտաց զրոց<sup>8</sup> զրողին:

Զորրորդ. բնաբանս այս ցուցանէ զկատարեալ երանութիւն, յորժամ ասէ. «Աև Աստուած»: Գիտելի է, զի աստուածաբանութիւն ըստ կերպի աստուածային առաքինութեան զնոյն ունի<sup>9</sup> հանդէպ եղեալ ենթակայ եւ վախճան, քանզի աստուածային առաքինութեան, այսինքն՝ հաւատոյ, յուսոյ եւ սիրոյ, Աստուած ասի հանդէպ եղեալ ենթակայ եւ յառաջադրութիւն, վասն զի հաւատով զԱստուած հաւատամք<sup>10</sup>, յուսով յուսամք եւ սիրով սիրեմք: Նոյնպէս եւ աստուածաբանութեան առաջադրութիւն է Աստուած, նմին վասն եւ աստուածաբանութիւն ասի: Եւ<sup>11</sup> նոյնպէս

<sup>1</sup> Երեւոյթ

<sup>2</sup> Աստուածաբանական

<sup>3</sup> Կ պատրուսեալ ընդանաբույս

<sup>4</sup> Կ կայ

<sup>5</sup> Երանութիւն է... թշուառութեան

<sup>6</sup> Կ գանձք

<sup>7</sup> Կ մտաց բանիցն

<sup>8</sup> Կ զրոցն

<sup>9</sup> Ե առաքինութեան, այսինքն՝ հաւատոյ, հուսոյ եւ սիրոյ, զնոյն ունի

<sup>10</sup> Ա Կ չիք

<sup>11</sup> Ե չիք

աստուածաբանութեան վախճան եւ պտուղ է Աստուած, վասն որոյ ասէ. «Առ Աստուած», ցուցանելով զվախճան եւ զպտուղ նորա. նախ՝ զի սուրբ աստուածաբան պտուղն ոչ է իբրեւ<sup>1</sup> զհողմ սնոտի համբաւոյ, որպէս է պտուղ բնական իմաստութեան եւ կամ իմաստամիրական գիտութեանց: Երկրորդ. սուրբ աստուածաբանութեան պտուղ ոչ է առ ի ստանալ զինչս եւ լնուլ քսակս, որպէս եւ է պտուղ ժամանակաւորս գիտութեանց. բժշկականին ասեմ եւ դատաստանականին, մանաւանդ եւ բազմահնար ճարտասանութեան: Երրորդ. սուրբ աստուածաբանութեան պտուղ ոչ էառ խաւսս քմազարդս եւ լեզուս պաճուճաբանս, որպէս եւ են պտուղ բանական գիտութեանց, այլ սուրբ աստուածաբանութեան շահաւէտութիւն եւ վախճան են առ Աստուած եւ առ կեանս, որպէս զրէ Դաւիթ. «Աղաւթք իմ առ Աստուած վասն կենաց [իմոց]: Ասացի Աստուծոյ՝ ընդունելի իմ ես<sup>2</sup>» (Սաղմ. ԽԱ 9-10): Աստ ցուցանէ երեքկին պտուղ եւ արգասաւորութիւն աստուածաբանութեան. առաջինն է աւգտակար ի կրաւնաւորական ըղձից, վասն այն ասէ. «Աղաւթք իմ առ Աստուած»: Երկրորդ. ունի արգասաւորութիւն<sup>3</sup> կատարեալ կենդանութեան, մինչ ասէ. «Վասն կենաց իմոց»: Երրորդ. ունի շահաւէտութիւն երանութեան եւ ստացման<sup>4</sup>, յորժամ ասէ. «Ասացի Աստուծոյ՝ ընդունելի իմ ես<sup>5</sup>»: Բայց առաջին պտուղ աստուածաբանութեան է կրաւնաւորական իղձքն, որպէս ասէ. «Աղաւթք իմ առ Աստուած»:

Գիտելի է, զի սուրբ աստուածաբանութիւն ուսուցանէ աղաւթել եւ զԱստուած պաշտել, որպէս ուսուցանէ աւրէնքն զԱստուած սիրել յամենայն սրտէ եւ յամենայն յանձնէ<sup>6</sup> եւ յամենայն մտաց եւ յամենայն զաւրութենէ (հնմտ. Բ Օր. 6 5, Սատթ. ԻԲ 37): Այլ եւ ուսուցանէ աղաւթել մեծաւ ջանիւ, խոնարհութեամբ, անմեղութեամբ, հաճութեամբ եւ իմաստութեամբ: Այլ եւ ուսուցանէ զներգործութիւն սիրոյն Աստուծոյ եւ ընկերին, զի զայս երկոսին պատուիրանքս ամենայն աւրէնք եւ մարգարէք կախեալ կան (հնմտ. Սատթ. ԻԲ 38-40): Եւ ըստ այնմ պտուղ է աստուածաբանութեան մէր, խնդութիւն, խաղաղութիւն եւ այլն, զոր թուէ ի Գաղատացիս (Գաղ. Ե 22-23): Այլ եւ աղաւթք եւ իղձք աստուածաբանին արժանաւորէ զինքն վարձուն երկնային, ըստ այնմ. «Աղաւթք իմ ի ծոց իմ դարձցին» (Սաղմ. ԼՂ 13):

<sup>1</sup> Հ իբր

<sup>2</sup> Հ իմ ես դու

<sup>3</sup> Ե ՃՔ առաջինն է աւգտակար...Երկրորդ, ունի արգասաւորութիւն

<sup>4</sup> Ե երանութեան, միաւորութեան եւ ստացման

<sup>5</sup> Ա Ե ՃՔ իմ ես, Հ իմ ես դու

<sup>6</sup> Ա անձնէ

**Երկրորդ.** սուրբ աստուածաբանութիւն ունի արգասաւորութիւն կատարեալ կենդանութեան<sup>1</sup>, մինչ ասէ վասն կենաց իմոց: Գիտելի է, զի ի մէջ այլ գիտութեանց աստուածաբանութիւն միայն կենդանական ասի, զի ցուցանէ զկեանս գերագոյն բնութեան, այսինքն՝ Աստուծոյ, եւ զկեանս աստուածային շնորհաց եւ զկեանս աստուածային փառաց, վասն զի պտուղ ունի կատարեալ կենդանութեան եւ ճանաչմանն Աստուծոյ, ըստ այնմ. «Այս են կեանք յաւիտենական, զի ծանիցեն զթեզ միայն ծշմարիտ Աստուած, եւ զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս» (Յովի. ժ 3-4): Այլ եւ իւրոյ աշակերտացն ասէր. «Բանն, զոր [ես] խաւսեցայ ընդ ձեզ, հոգի է եւ կեանք» (Յովի. Զ 64): Եւ Պետրոս ասէր ընդ Քրիստոսի. «Տէ՛ր, առ ո՞վ երթիցուք. բանս կենաց յաւիտենականաց ունիս» (Յովի. Զ 69):

**Երրորդ.** աստուածաբանութիւն ունի շահաւէտութիւն երանելի միաւորութեան եւ ստացման: Գիտելի է, զի ի մէջ այլ գիտութեանց աստուածաբանութիւն միայն փրկական ասի, զի հասուցանէ յերանութիւն անվախճան, յոր եւ հասանի աստուածաբանն՝ ընդունելով յԱստուծոյ զաստուածային տեսութիւն եւ զանդորրիչ սէրն եւ զկատարեալ ստացումն աստուածային: Նմին իրի աստուածաբանն մեծաւ ըղձիւք կարէ ասել զբան սաղմոսին. «Կալար զաջոյ ձեռանէ իմմէ ի խորհուրդս քո առաջնորդեցեր ինձ<sup>4</sup>, եւ փառաւք ընկալար զիս<sup>5</sup>: Զի՞նչ կայ իմ ընաւ յերկինս, կամ ի քէն զի՞նչ եւս խնդրեցից յերկրի<sup>6</sup>: Նուաղեաց սիրտ իմ եւ մարմին իմ<sup>7</sup>, Աստուած սրտի իմոյ, բաժին իմ Աստուած յաւիտեան» (Սաղմ. ՂԲ 24-26): Ապա աստուստ յայտնի եղեւ երեքկին աւգտակարութիւն աստուածաբանութեան ի վասս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. Ամէն<sup>8</sup>:

**Իսկ թէ վա՞սն էր կոչի Աւետարան.**

**Պատասխանի.** Անունն<sup>10</sup> Աւետարան ըստ գործոյն է եղեալ. եւ ասեմ վասն չորեքտասան պատճառի. նախ՝ զի աւրէնքն եւ մարգարէք զերկրի բարութիւնս խոստանային պահողացն զաւրէնս, այսինքն՝ այգիս եւ ձիթենիս եւ այլս, իսկ սա զարքայութիւն

<sup>1</sup> Կատարեալ կենդանութեան ընդ Աստուծոյ

<sup>2</sup> A B չեք զՅիսուս Քրիստոս

<sup>3</sup> A B չեք

<sup>4</sup> A B չեք քո առաջնորդեցեր ինձ

<sup>5</sup> A B չեք զիս

<sup>6</sup> A B չեք քեն զի՞նչ եւս խնդրեցից յերկրի

<sup>7</sup> A B չեք եւ մարմին իմ

<sup>8</sup> A B չեք Աստուած սրտի ... յաւիտեան

<sup>9</sup> A Աստուծոյ մերոյ աւրինելոյն, B Աստուծոյ մերոյ աւրինելոյն

<sup>10</sup> A B չեք

Երկնից աւետէ եւ խոստանայ: Երկրորդ. զի աւետէ զծնունդն եւ<sup>1</sup> զմկրտութիւն, զվարդապետութիւն, զսքանչելագործութիւն, զչարչարանս<sup>2</sup> եւ<sup>3</sup> զյարութիւն, զվերանալն առ Հայր եւ զմեզ ընդ ինքեանս հանել<sup>4</sup>: Երրորդ. զի աւետէ մեզ զԱստուած ի յերկրի, այն, որ գնաց ի դրախտէն Աղամայ, որպէս ասէ Գիր. «Լուայ զձայն Տեառն» (Ծննդ. գ 8), իսկ սա աւետէ զգալուստն առ մեզ: Զորրորդ. զմարդիկ յերկինս բարձրացուցեալ, զոր նախ եհան ի դրախտէն, այժմ նստոյց ընդ ինքն ընդ աջմէ Հաւը: Հինգերորդ. զհրեշտակս բնակակից մարդկան, որք հրեղէն սրովն հեռացան, այժմ իջին առ մեզ ի ծնունդն Քրիստոսի: Վեցերորդ. մարդիկք խառնուրդ հրեշտակաց եղեն, ըստ որում հովիւքն եւ մոգքն ընդ հրեշտակս փառս երգէին: Այլ եւ դասակից հրեշտակաց արար: Եւթներորդ. զերկայն պատերազմն քակեալ. աւձին եւ կնոջ պատերազմ<sup>5</sup>, աստ զգլուխ աւձին ետ կոխել: Ութներորդ. զթշնամին ամաչացեցուցեալ, որ զբնութիւնս չարախաւսէր մեղանչական գոլ, կամ զինքն աստուածս տայր պաշտել, ամաչեցուցաւ աստ: Իններորդ. զանէծս լուծեալ, որ Աղամայ եւ կնոջն ասացաւ, աստ լուծաւ ի ծնանելն Որդոյն Աստուծոյ եւ ի խաչելն: Տասներորդ. զդրախտն բացեալ, որ փակեցաւ Աղամայ եւ աւազակին՝ եբաց: Մետասաներորդ. զմոլորութիւն բազմաստուածութեան խափանեալ: Երկոտասաներորդ. զճմարտութիւն եկեալ հասեալ, ընդդէմ աւրինացն<sup>7</sup> եւ ստուերին: Երեքտասաներորդ. զճառս աստուածապաշտութեան բանիւ, հաւատով եւ արդարութեամբ եւ<sup>8</sup> գործովք ուսուցեալ մեզ: Զորեքտասաներորդ. զերկնաւոր առաքինութիւն յերկիր տնկեալ, այսինքն՝ զկուսութիւն եւ զայլսն, այլ եւ զմեզ որդիս Աստուծոյ արարեալ եւ ժառանգ<sup>9</sup> արքայութեան: Վասն այսր ամենայնի կոչի «Աւետարան». տասն՝ վասն տասնեաբանեան աւրինացն եւ չորս՝ վասն չորս Աւետարանացն, որ զՀին եւ զՆորս յինքեան ունի Աւետարանն<sup>10</sup>:

<sup>1</sup> C չիք<sup>2</sup> B եւ զչարչարանս<sup>3</sup> C չիք<sup>4</sup> B հանեալ<sup>5</sup> A B չիք<sup>6</sup> C չիք<sup>7</sup> A աւրինակացն<sup>8</sup> C չիք<sup>9</sup> C ժառանգս<sup>10</sup> C Աւետարան

Համառաւտ մեկնութիւն Աւետարանին Յովիաննու<sup>1</sup>  
 Նորին Գրիգորի՝ աշակերտի Յոհաննու Որոտնեցւոյ,  
 հաւաքեալ ի իին եւ ի նոր թարգմանութեանց<sup>2</sup>, ի խնդրոյ համա-  
 շունչ աշակերտաց  
 Աւգնեա՝ ինձ, Հոգին Սուրբ Աստուած ճշմարիտ, եւ կատարեա<sup>3</sup>:

## Գլուխ Ա

Բան<sup>4</sup>. «Ի սկզբան»:

Լուծումն<sup>5</sup>. Նախ ասելի է վասն սկզբան, զի բազում են սկզբունք. Նախ՝ որպէս սկիզբն ժամանակին, յորում եղեն ամենայն գոյք: Երկրորդ. սկիզբն աշխարհի<sup>6</sup>, երկինք եւ երկիր<sup>7</sup>, ըստ Մովսիսի (Ծննդ. Ա 1): Երրորդ. հիմն տան եւ ողնափայտ նաւի եւ սիրտ կենդանւոյ: Չորրորդ. երկիւղն իմաստութեան եւ արդարութեան եւ ամենայն առաքինութեան<sup>8</sup>: Բայց այս սկիզբն ոչ ընդումեք կապակցի, եւ առ ումեք տեսանի կամ համեմատի մարդոյ, այլ սուրբ աւետարանիչս Յոհաննէս ընդդէմ մոլորութեան աբիանոսացն<sup>9</sup> գրեաց զԱւետարանս, առ ի ցուցանել յայտնապէս զԱստուածութիւն Քրիստոսի, զոր նոքա ուրանային: Եւ նախ ի սկիզբն Աւետարանիս ցուցանէ զԱստուածութիւն Քրիստոսի ընական պատճառաւ, որքան կարելի իցէ մարդոյ, եւ ապա զնոյն Աստուածութիւն<sup>10</sup> Քրիստոսի ցուցանէ սքանչելաւքն, մինչ ի կատարումն Աւետարանիս: Դարձեալ՝ ի սկիզբն ցուցանէ զծնունդն<sup>11</sup> յաւիտենական ի Հաւրէ, եւ ապա ցուցանէ զնորին ժամանակեայ ծնունդն ի մաւրէ: Դարձեալ<sup>12</sup> եթէ ի բարձրագոյնն թռուցեալ էր աւետարանիչս, ամենայն մարդկեղէն բնութիւնս ո՛չ կարէր տանել զԲանն, վասն որոյ իջեալ ի խոնարհ՝ ասէ. «Եղեւ այդ մի առա-

<sup>1</sup> Յոհաննու

<sup>2</sup> Ա Յարգմանչաց

<sup>3</sup> Ա Յագնեա՝ ինձ, Հոգի Աստուած

<sup>4</sup> Ա Յ չեք

<sup>5</sup> Ա Յ չեք

<sup>6</sup> Յ յաշխարհի

<sup>7</sup> Յ յերկինք եւ յերկիր

<sup>8</sup> Ա Յ առաքինութեան է

<sup>9</sup> Յ արիանացոցն

<sup>10</sup> Յ զԱստուածութիւն

<sup>11</sup> Ա Յ զծնունդ

<sup>12</sup> Ա Յ եւ դարձեալ

քեալ» (Յովի. Ա 6): *Եւ դարձեալ՝ առ ի ցուցանել զծնունդն յաւիտենական. նախ ցուցանէ, թէ<sup>1</sup> որպէ՞ս յատկապէս ծնանի, եւ ապա, թէ՝ որպէ՞ս ներգործէ, որպէս ասէ. «Ամենայն ինչ նովաւ եղեւ»* (Յովի. Ա 3):

Բան. «Ի սկզբանէ էր Բանն» (Յովի. Ա 1):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** *Արդ, առաջին մասն բանիս չորք ունի մասունս փոքունս<sup>2</sup>. նախ՝ ցուցանէ զՔրիստոսի յաւիտենական ծնունդն ի Հաւրէ՝ ասելով. «Ի սկզբանէ էր Բանն»: Երկրորդ. ցուցանէ զզանազանութիւն անձինն, որ ի Հաւրէ՝ ասելով. «Եւ Բանն էր առ Աստուած» (Յովի. Ա 1): Երրորդ. ցուցանէ Հաւր եւ Որդւոյ մի էութիւն՝ ասելով. «Եւ Աստուած էր Բանն» (Յովի. Ա 2): Չորրորդ. ցուցանէ զՀաւր եւ Որդւոյ յաւէտակցութիւն՝ ասելով. «Նա էր ի սկզբանէ առ Աստուած» (Յովի. Ա 2):*

*Եւ դարձեալ առաջին բառին չորս է<sup>3</sup> տեսութիւն. նախ՝ որ ասէ. «Ի սկզբանէ», այսինքն՝ ի Հաւրէ ի պատճառէն, որպէս ասեմք զլոյսն ի յարեւէ: Երկրորդ. իսկ՝ Հայր, Բան՝ Որդին, Է՝ Հոգին Սուրբ: Երրորդ. Ի սկզբանէ, այսինքն՝ ո՛չ յետոյ կամ եկամուտ, այլ անդստին եւ ի բնէ: Չորրորդ<sup>4</sup>. դարձեալ զբնաբանս զայս ունին. ոմանք՝ ի սկզբանէ, եւ ոմանք՝ ի սկիզբն, եւ երկրքեանն բարւոք իմանի, զի մինն ցուցանէ ի պատճառէն, եւ միւսն՝ ի պատճառն, զի Որդի<sup>5</sup> է ի Հաւրէ եւ ի Հայր:*

Բան. «Եր»:

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** *Չորս իմն նշանակէ. նախ՝ անեղ, Երկրորդ՝ անսկիզբն, Երրորդ՝ անժամանակ, չորրորդ՝ վերագոյն արարածոցս:*

*Հարց. Որպէ՞ս է Հայր անսկիզբն եւ Որդի անսկիզբն:*

*Պատասխան. Հայր անսկիզբն, նախ՝ զի անեղ է, Երկրորդ՝ անպատճառ, Երրորդ՝ անծին<sup>6</sup> է: Եւ Որդի անսկիզբն. նախ՝ զի անեղ, Երկրորդ՝ անժամանակ, Երրորդ՝ ի յանսկիզբն<sup>7</sup> սկզբանէ<sup>8</sup>, նոյնպէս<sup>9</sup> եւ Հոգին Սուրբ, բայց խնդրելի է, թէ վասն է՞ր ասէ՝ Եր, եւ ո՛չ ասէ՝ Է կամ՝ եկաց:*

*Պատասխան. Նախ ասելի է, զի յորժամ տարակոյս լինի վասն անցելոյ իրին, առաւել գնելի է Եր, քան թէ՝ եկաց, որպէս թէ Հար-*

<sup>1</sup> B չեք ցուցանէ, թէ

<sup>2</sup> A B չեք

<sup>3</sup> A B չորս տեսութիւն է

<sup>4</sup> C եւ չորրորդ

<sup>5</sup> A B զՈրդին

<sup>6</sup> C զի անեղ է, անպատճառ, Երկրորդ՝ անծին է

<sup>7</sup> B անսկիզբն

<sup>8</sup> A B սկզբնէ

<sup>9</sup> B Որպէս

ցանես, թէ՝ զի՞նչ էր, նոյնպէս եւ աստ իբր թէ ոմն հարցանէ, թէ զի՞նչ էր ի սկզբանէ<sup>1</sup> աշխարհի<sup>2</sup> եւ կամ ժամանակի:

Պատասխանէ աւետարանիչն, թէ՝ յայնժամ էր Բանն:

Երկրորդ պատճառ. զի սոյնպէս ասելով առաւել ցուցանէ զգոլ Բանին նախ քան զաշխարհս: Երկրորդ պատճառ ասեն վարդապետք. «Զի թէ ասէլ եկաց, զԲանն անցաւոր ցուցանէ, եւ թէ ասէր՝ է<sup>3</sup>, ո՛չ ցուցանէր զգոլ Բանին նախկնաբար քան զաշխարհս, ուստի ի միասին ցուցանէ զԱստուծոյ Բանին զյարատեւութիւն եւ զգոլ նորա նախ քան զաշխարհս, յորժամ ասէ՝ Էր»:

Երկրորդ հարցումն. թէ՝ ընդէ՞ր ոչ ասաց նախ քան զսկիզբն աշխարհիս<sup>4</sup> կամ յաւիտեանց, կամ յառաջ քան զամենայն, զի սոյնպէս ասելով առաւել ցուցանէր զյաւիտենականութիւն Բանին:

Պատասխան. Վասն կրկին պատճառի սոյնպէս ասաց.

Նախ՝ առ ի նմանապէս խաւսիլն երկրորդ գրոյն, որ զստեղծումն աշխարհի<sup>5</sup> ճառէ: Երկրորդ. առ ի յուշ ածել զԲանն, որով ամենայն ինչ եղեւ: Երրորդ. առ ի ցուցանել, թէ վասն նոյն բանին գրէ, յորմէ Մովսէս գրեաց:

Երկրորդ պատճառ, զի այնպէս ասաց. նախ՝ զի բան նորա առաւել հաճոյ եւ ընդունելի լինէր: Երկրորդ. զի զմեզ ըստ կարգի բանին ի յաւիտենականութիւն ածէր: Երրորդ. ըստ հետակայ բանիցդ, որ հետեւին պարզաբար, երեւի յաւիտենականութիւն Բանին, զի թէ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն, պարտ էր ասել, զի Բանն<sup>6</sup> էր յաւիտենից եւ նախ քան զամենայն ստեղծուածու:

Երրորդ հարցումն, որ ասաց. «Ի սկզբանէ էր», ընդէ՞ր ոչ ասաց՝ ի սկզբանէ աշխարհի, կամ ժամանակի, կամ ամենայն իրաց:

Պատասխան. Նախ՝ զի սոյնպէս ասելն առաւել համառաւտ եւ ընդհանրական ցուցանէ: Երկրորդ. զի նմանապէս խաւսի Գրոցն Արարածոց (Ծննդ. Ա 1): Երրորդ. պատասխանէ Ոսկեբերանն. «Զորաւրինակ եթէ ոք առընթեր ծովու լինի, առ եզերաւքն, եւ տեսանիցէ զքաղաքն եւ զնաւահանդիստն, իսկ թէ նաւաստին ի մէջ ծովուն զնա տանիցի նաւաւն, ի նախկին տեսութենէն զնա հեռա-

<sup>1</sup> Ը սկզբան

<sup>2</sup> Յ յաշխարհի

<sup>3</sup> Ը եւ թէ ասեր, թէ՝ է

<sup>4</sup> Յ յաշխարհիս

<sup>5</sup> Յ յաշխարհի

<sup>6</sup> Ը Բան

ցուցանէ եւ այլ ինչ, որ երեւին, բնաւ ոչ տեսանէ<sup>1</sup>, նոյնպէս եւ աւետարանիչս ի վերագոյն քան զամենայն ստեղծուածս զմեզ էած եւ ոչ ի տեսութիւն եզերեալ իրի կացոյց, այլ ասելովն՝ ի սկզբանէ էր, զյաւիտենականութիւն Բանին եցոյց եւ ոչ զեզերեալ ինչ էութիւն ծանոյց»:

### Վասն Բանին Աստուծոյ

Բան. «Ի սկզբանէ էր Բանն» (Յովհ. Ա 1):

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Եւ ի յայտնութիւն բանի Աւետարանիս նախ պարտ է գիտել, թէ ըստ որոյ<sup>2</sup> եղանակի Բան անուանի Աստուծած: Եւ ասեմք ի կարճոյ, թողեալ զյերկար քննութիւն մերս բանի, եթէ երեքին ասի բան մարդկային. առաջին՝ է ներտրամադրեալ բան, երկրորդ է յառաջ բերեալն բան ձայնիւ նշանական, երրորդ. է բան գրեալ:

Եւ առաջին ներտրամադրեալն, որ է յղացումն եւ ծնունդ մտաց, եւ նա կոչի խորհուրդ սրտի եւ բան հանճարոյ մերոյ, եւ նա առաւել համեմատի աստուծային Բանին անմարմին ծննդեան, քան զերկրորդն եւ զերրորդն, որպէս ցուցանելոց եմք յառաջիկայդ:

### Վեց Հարց Վասն Բանին

Աստ լինի վեց հարց<sup>3</sup>.

Առաջին. Ընդէ՛ր ոչ ասէ՝ Տէր Աստուծած, այլ Բան:

Պատասխան. Վասն չորից. նախ՝ զի Աստուծած եւ Տէրն հասարակ է երից<sup>4</sup> անձանց, այլ Բան Որդին միայն է յատուկ: Երկրորդ, զի Բանիւն հանէ զմեզ ի ճանաչումն Հաւը ըստ իմաստնոյն, որ ի պատճառելեաց ծանաւթ լինիմք պատճառին: Երրորդ, զի ամենայն մարդարէքն զԲանն Աստուծոյ ասեն, որպէս Մովսէս. «Ասաց Աստուծած եւ եղեւ» (Ծննդ. Ա 3-4), եւ Եսայի՝ Բան Տեառն եղեւ ի Վերայ իմ, եւ Դաւիթ՝ Նա ասաց եւ եղեւ (տես Սահմ. ԼԲ 9), Երեմիա, Զաքարիա եւ այլոցն: Չորրորդ, զի Բանն առաւել ցուցանէ զծնունդն Որդւոյ: Եւ զայս ցուցցուք կրկին կերպիւ. նախ սոյնպէս՝ զի այն, որ նախկին սկիզբն է ամենեցուն, պարտ է զի իմացական բնութիւն ունիցի, որպէս յամենայն իմաստասիրաց սահ-

<sup>1</sup> Ը ցուցանէ

<sup>2</sup> Ա Յ Վասն որոյ

<sup>3</sup> Ը հարցումն

<sup>4</sup> Ը երիցն

մանի, վասն որոյ զի կատարեալ տեսանէ զինքն եւ զամենայն բնութիւնքս, իսկ իմացական բնութեան կատարելութիւն է, զի բան ունիցի ծնեալ ի նմանէ: Եւ զի յԱստուած<sup>1</sup> ոչ գոյ պատահումն, վասն որոյ Բանն ծնեալ ի նմանէ գոյացութիւն է: Եւ զի յԱստուած ոչ գոյ զանազան տեսութիւն, այլ մի եւ կատարեալ, վասն որոյ Բանն Աստուածոյ ծնեալ ի նմանէ մի գոյացութիւն է եւ կատարեալ: Երկրորդ. սոյնպէս ըստցուք, զի Բանն ծնեալ յԱստուածոյ Որդի է Աստուածոյ, զի ամենայն կենդանի ելեալ ի կենդանւոյ ըստ միութեան բնութեան<sup>2</sup> եւ նմանութեան Որդի ասի<sup>3</sup> նմին, իսկ Բանն Աստուածոյ այնպէս ելանէ յԱստուածոյ: Ապա ուրեմն Աստուածոյ Բանն Աստուածոյ Որդի է: Եւ զի յայտնի լիցի բանս, բացայայտեացուք նախ, զի թէպէտ յանկենդան<sup>4</sup> տարերց մի ի միւսոյն ելանէ, որպէս հուր ի հրոյ, այլ ոչ ասի որդի, զի կենդանիք ոչ են: Երկրորդ. թէ ոչ կենդանի ինչ ելանէ ի կենդանւոյ<sup>5</sup>, որպէս արհեստ յարհեստաւորէ, ոչ ասի նմա որդի, զի պարտէ լինել կենդանի<sup>6</sup> ի կենդանւոյ: Երրորդ. զի քրտնածին ոջիլք եւ լանեն ի մարդոյ եւ են կենդանի, բայց ոչ ասին որդիք, զի ոչ են նման<sup>7</sup> ըստ բնութեան: Այս հասարակ ամենայն մարդկան, զի տկարք եւ անկատարք են, վասն այն ծնողն եւ ծնեցեալն ոչ են մի բնութիւն ըստ անհատին, այլ ըստ տեսակին միայն: Սակայն ի յԱստուած Բան ելանէ ի Հաւրէ իրը կենդանի ի կենդանւոյ ըստ նմանութեան բնութեան, ոչ միայն տեսակաբար, այլ անհատաբար միութեամբ, եւ համեմատի առ ծնողն, զի առ ի կատարելութիւն Բանին խնդրի, զի իւր խաւսողին կատարեալ նմանութիւն ունիցի, վասն որոյ Աստուածոյ Որդի եւ Բան նոյն են: Ապա ուրեմն Աստուածոյ Բանն Աստուածոյ Որդի է, եւ զայս ամենայն յայտնէ աւետարանիչս՝ ասելով. «Ի սկզբանէ եր Բանն»:

**Այս առաջին հարց վասն ներտրամադրեալ բանին:**

**Երկրորդ հարց<sup>8</sup>. Որպէս ասի «Բան» Որդին Աստուածոյ:**

Պատասխան. Բազում յեղանակաւ: Նախ՝ զի ներտրամադրեալ բանս մեր ոչ է յինքենէ եւ ոչ յոչնչէ եւ ոչ արտաքուստ, այլ ի մտացն է, նոյնպէս Բանն ի Հաւրէ: Երկրորդ. զի բանս մեր ոչ է արարած մտացն, այլ ի բնութենէ, նոյնպէս եւ Բանն ի բնութենէ

<sup>1</sup> Ըստուած

<sup>2</sup> Ա Յ զի ամենայն կենդանւոյ ըստ միութեան բնութեան

<sup>3</sup> Յ Աստուածոյ

<sup>4</sup> Յ անկենդան

<sup>5</sup> Ա Յ կենդանեաց

<sup>6</sup> Յ կենդանւոյ

<sup>7</sup> Յ նմա

<sup>8</sup> Յ հարցումն

Հաւր, այլ ոչ՝ արարած: Եւ թէ ոք ասէ. «Վասն է<sup>1</sup> ըանաստեղծ մարդ», ասեմք, եթէ ստեղծուած բանն եւ ուսմամք ոչ է աւրինակ բանին, այլ ներտրամագրեալն: Երբորդ. որպէս բանս ծնունդ է մտաց, սոյնպէս Բանն Աստուած: Չորրորդ. անախտ է ծնունդ բանին, սոյնպէս անախտ է ծնունդն Աստուծոյ: Հինգերորդ. ոչինչ է ի<sup>2</sup> մէջ բանին<sup>3</sup> եւ մտացն, այլ որքան է միտք, է եւ բան, սոյնպէս ոչինչ է ի<sup>4</sup> մէջ Բանին եւ ծնողին, այլ որքան է Հայր, է եւ Որդին, որպէս ճառագայթ արեւու եւ լոյս ճրագի: Վեցերորդ. նոյն է բնութիւն բանին<sup>4</sup> եւ մտաց, սոյնպէս մի է բնութիւն Հաւր եւ Որդւոյ: Եւթներորդ. այլ է միտք եւ այլ է<sup>5</sup> բան, սոյնպէս յատուկ է անձն<sup>6</sup> Հաւր եւ անձն Որդւոյ: Ութերորդ. անբաժանելի է բանն ի մտաց, սոյնպէս անբաժանելի է Բանն ի Հաւրէ: Իններորդ. բանն իմաստութիւն է մտաց, սոյնպէս Բանն է իմաստութիւն Հաւր: Տասներորդ. բանն է զաւրութիւն մտաց, սոյնպէս՝ «Քրիստոս Աստուծոյ զաւրութիւն եւ Աստուծոյ իմաստութիւն» (Ա. Կորնթ. Ա. 24), որպէս ասէ առաքեալ, ուրեմն յայտ է, որք եղեալ ասեն զՈրդի անբան, անիմաստ եւ տկար ասեն զՀայր:

### Վասն յառաջ բերեալ բանին

Երբորդ Հարցումն<sup>7</sup>. Որպէս ասի բան, ըստ յառաջ բերեալ բանիս:

Պատասխան. Եւ ասեմ, նոյնպէս տասն կերպիւ. նախ՝ զի նոյն է ներտրամագրեալ բանն եւ յառաջ բերելն, սոյնպէս նոյն է Բանն անմարմին ծնեալ եւ մարմնով երեւեալ: Երկրորդ. բանն անշփոթի ձայնն է միացեալ, սոյնպէս Բանն անշփոթի մարմինն<sup>8</sup> միացեալ: Երրորդ. զի բանս մեր անբաժանելի է ի մտաց ասողաց եւ լսողաց, սոյնպէս Բանն Աստուած անբաժանելի է ի Հաւրէ եւ յամենայն սրտէ: Չորրորդ. զի բոլոր բանն է ի միտս ասողին եւ լսողաց, եւ բոլոր Բանն Աստուած էր առ Հաւր եւ բոլորն յարգանդի կուսին եւ բոլորն ի մարմինն միացեալ: Հինգերորդ. բանն պատմող է մտաց, սոյնպէս Որդւով ծանեաք զՀայր, զի նա է հրեշտակ

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> C բանի

<sup>3</sup> B չեք

<sup>4</sup> C բանի

<sup>5</sup> C չեք

<sup>6</sup> B յանձն

<sup>7</sup> A B չեք

<sup>8</sup> B ի մարմնի

**մեծի խորհրդոյ** (Եսայի թ 6): **Վեցերորդ.** բանն պատկեր եւ նկարագիր է մտաց<sup>1</sup>, սոյնպէս Բանն Աստուած պատկեր եւ նկարագիր է էռութեան Հաւը. «Որ ետես զիս՝ ետես զՀայր» (Յովի. ժԴ 9): **Եւթներորդ.** որպէս բանն<sup>2</sup> է սահման ըստ<sup>3</sup> իմաստասիրացն, յայտնիչ բնութեան ենթակայ իրին, սոյնպէս Որդին սահման է Հաւը՝ դնելով եւ բառնալով<sup>4XXXXV</sup>: Ութերորդ. որպէս գիտէ միտք զբանս եւ գիտէ բան զմիտս, սոյնպէս գիտէ Հայր զՈրդի եւ Որդի՝ զՀայր: Իններորդ. Բան կոչի Քրիստոս, զի բան եւ իմաստութիւն ետ մեզ զառաջինն, եւ զերկրորդ՝ գալստեամբն իւր: Տասներորդ. Բան կոչի, զի բանիս մեր երեք է տեղի, այսինքն՝ միտք ասողին, եւ սիրտ լսողաց, եւ գրեալն ի վերայ թղթոց, սոյնպէս Բանն Աստուած է առ Հայր եւ ի սիրտ հաւատացելոց եւ ի մարմնի<sup>6</sup> միաւորեալ անբաժանելի:

### Զի յաւդիւն ասաց՝ Բանն

**Զորըրորդ Հարց<sup>7</sup>.** **Վասն է՞ր ոչ ասաց Բան, այլ՝ Բանն:**  
**Պատասխան.** Յաւելուած տառին ամենայն ուրեք նշանակէ<sup>8</sup> եւ առանձնութեան է ցոյցք: Եւ տասն կերպիւ Բանն Աստուծոյ յատկանայ ի բանից մարդոյ. նախ՝ զի Բանն Աստուծոյ մի է եւ բան մարդոյ՝ յաճախ: Երկրորդ. զի Բանն Աստուծոյ անորիշ է, եւ բան մարդոյ՝ որոշեալ: Երրորդ. Բանն Աստուծոյ անձնաւոր է, եւ բան մարդոյ՝ անանձն: Չորրորդ. Բանն Աստուծոյ գոյացութիւն է, եւ բան մարդոյ՝ անգոյ եւ յաւզս ցնդեալ: Հինգերորդ. Բանն Աստուծոյ միշտ է, եւ բան մարդոյ՝ երբեմն: **Վեցերորդ.** Բանն Աստուծոյ անփոփոխ է, եւ բան մարդոյ՝ դադարեալ եւ փոփոխեալ<sup>9</sup>: Եւթներորդ. Բանն Աստուծոյ բոլոր է եւ կատարեալ, եւ բան մարդոյ՝ մասն եւ անկատար: Ութերորդ. Բանն Աստուծոյ անմուաց է, եւ բան մարդոյ<sup>10</sup>՝ մոռացմամբ: Իններորդ. Բանն Աստուծոյ ուսուցա-

<sup>1</sup> Ա Յ պատկեր է եւ նկարագիր մտաց

<sup>2</sup> Բ բան

<sup>3</sup> Բ չեք

<sup>4</sup> Ա բարբառելով

<sup>5</sup> Ը թըրոյ

<sup>6</sup> Ա Յ մարմին

<sup>7</sup> Ը հարցումն

<sup>8</sup> Ը նշանական

<sup>9</sup> Ը փոփոխեալ եւ դադարեալ

<sup>10</sup> Բ մարդոյ բանն

նող է, եւ բան մարդոյ<sup>1</sup> ուսմամբ: Տասներորդ. Բանն Աստուծոյ  
Աստուած է, եւ բան մարդոյ մարդ<sup>2</sup> ոչ է:

### Զի ոչ ասաց Որդի

Հինգերորդ հարց. Վասն է՞ր ոչ ասէ<sup>3</sup> Որդի, այլ Բան:  
Պատասխան. Նախ՝ զի տկար մտաց ալէկոծումն լինէր ի վեց իրս,  
զի որդին ժամանակաւ ծնանի ե՛ւ ախտիւ, ե՛ւ կարեաւք, ե՛ւ կցոր-  
դիւ, ե՛ւ կամաւք, ե՛ւ բաժանմամբ: Դարձեալ՝ յետ յարութեան ա-  
սացաւ Որդի<sup>4</sup>, յորժամ զմիտս աշակերտացն ի բարձունս եհան՝ ա-  
սելով. «Մկրտեցէք յանուն Հաւը եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»  
(Մատթ. ԻԸ 19): Իսկ այլ վարդապետք ասեն չորս պատճառս. նախ՝  
զի համեմատ Պղատոնի եւ յունացն խաւսի եւ առ նոսա գրէ զԱ-  
ւետարանս, որք մի մեծագոյն Բան ասէին գոյ Աստուծոյ, բայց ոչ  
Որդի խոստովանէին: Յայսմանէ մոլորեալ Արիոս արարած ասէ  
զԲանն Աստուծոյ: Երկրորդ. զի Բանն առաւել ցուցանէ զՈրդին  
աննիւթ եւ անապական ծնունդ Հաւը: Երրորդ. զի Բանն առաւել  
ցուցանէր զՈրդին ի Հայր գոյ, քան Որդւոյ անուն: Չորրորդ. զի  
առաւել ցուցանի ի բանէն Որդին, քան յՈրդւոյն<sup>5</sup> Բանն, վասն  
որոյ նախ եղին զանուն Բանին եւ ապա զանուն Որդւոյն:

### Զի ոչ կոչեաց Յիսուս Քրիստոս:

Վեցերորդ հարց. Ընդէ՞ր ոչ կոչեաց Յիսուս Քրիստոս:  
Պատասխան. Նախ՝ զի սոքա միաւորութեան են կոչմունք եւ  
ոչ սոսկ բանին: Երկրորդ. զի յորժամ փրկեաց զմեզ ի մեղաց, կո-  
չեցաւ Յիսուս, որ է Փրկիչ, եւ յորժամ էաւծ զմեզ Հոգւովն, կոչե-  
ցաւ Քրիստոս: Երրորդ. ասեմք, թէ ի հինն ի թլփատութեան կո-  
չէին զանունն, եւ ի նորս ի<sup>6</sup> մկրտութեան, սոյնպէս Տէրն ի թլփա-  
տութեան կոչեցաւ Յիսուս եւ ի մկրտելն Քրիստոս Յովհաննէս  
կոչեաց, սոյնպէս յետ յարութեան՝ Որդի Աստուծոյ: Եւ թէ ոք ա-  
սիցէ, թէ<sup>7</sup> յետ մկրտութեան եղեւ Աւծեալ, եւ յետ յարութեան՝ Որ-  
դի Աստուծոյ, սոյնպէս եւ Նեստոր: Ասեմք առ այս, եթէ յղացեալ

<sup>1</sup> Ե մարդոյ բանն

<sup>2</sup> Ե բան

<sup>3</sup> Ա Բ ասաց

<sup>4</sup> Ա Բ չեք

<sup>5</sup> Ա Բ Ծ ի յՈրդւոյն

<sup>6</sup> Բ չեք

<sup>7</sup> Ը ասիցէ, ապա յայտ է, թէ

յարգանդին եղեւ Աւծեալ, յորժամ միաւորեցաւ Բանն եւ էաւծ զմարմինն, որպէս ասաց հրեշտակն. «Ծնաւ ձեզ այսաւը փրկիչ, որ է աւծեալ Տէր» (Ղուկ. Բ 11): Նոյնպէս եւ յարգանդին, յորժամ Բանն մարմին եղեւ եւ մարմինն միաւորեալ Աստուած եւ Որդի Աստուծոյ, որպէս ասաց հրեշտակն. «Որ ծնանի ի քէն սուրբ է եւ Որդի Աստուծոյ» (տես Ղուկ. Ա 35): Եւ մարգարէիւն ասէ. «Տէր ասաց ցիս՝ Որդի իմ ես դու եւ ես այսաւը ծնայ զքեզ<sup>1</sup>» (Սաղմ. Բ 7): Ապա յայտ է, զի յարգանդի կուսին Փրկիչ եւ Աւծեալ եւ Որդի Աստուծոյ է միաւորութեամբն<sup>2</sup>:

Այս վեցերորդ հարց յառաջին<sup>3</sup> բանն, որ ասէ. «Ի սկզբանէ եր Բանն» (Յովհ. Ա 1):

Արդ, յորժամ եցոյց աւետարանիչս զԲանին Աստուծոյ զյաւիտենական էութիւն, այժմ ճառէ զյատուկ անձնաւորութիւն Բանին:

Բան<sup>4</sup>. «Եւ Բանն եր առ Աստուած» (Յովհ. Ա 1):  
Մեկնութիւն. Բանս այս ութ ինչ նշանակէ. նախ՝ զի մշտնջենաւոր էր: Երկրորդ՝ առանձին անձն: Երրորդ. հաւասար եւ ոչ մեծ եւ փոքր: Չորրորդ. ցուցանէ, թէ ոչ է բան մարդոյ կամ հրեշտակի, այլ Աստուծոյ<sup>5</sup> եւ առ Աստուած: Հինգերորդ. զի ոչ տեղեաւ պարագրի, այլ Աստուած առ Աստուած: Վեցերորդ. զի չէ<sup>6</sup> բաժանեալ, այլ առ Աստուած է: Եւթներորդ. զի ոչ է հակառակ, այլ Աստուած առ Աստուած է: Ութերորդ. զի ոչ է շփոթեալ, այլ յատուկ անձն<sup>7</sup> է:

Հարց. Զի՞նչ է անձն:

Պատասխան. Անձն սահմանի սոյնպէս. «Անձն է<sup>8</sup> իմացական բնութեան անհաղորդելի գոյացութիւն», թէպէտ եւ այլ բազում սահմանք ասեն անձին, սակայն այս կատարելագոյն է: Գիտելի է, զի աստուածային Բանն ոչ է պատահումն, զի պատահումն<sup>9</sup> անկատար ունի զէութիւն իւր, այլ եւ ենթակայ պատահման անկատար է ըստ ինքեան, զի որպէս պատահումն ենթակայիւն հաստատի, սոյնպէս ենթակայն կերպիւ ինչ պատահմամբ կատարի:

<sup>1</sup> A B չեք եւ ես այսաւը ծնայ զքեզ

<sup>2</sup> C միաւորութեամբն եւ յետոյ կոչեցաւ տնաւրէնութեամբն

<sup>3</sup> B առաջին

<sup>4</sup> C չեք

<sup>5</sup> B առ Աստուծոյ

<sup>6</sup> B չէր

<sup>7</sup> B յանձն

<sup>8</sup> A B չեք

<sup>9</sup> C կատարումն

**Բայց Աստուած եւ Աստուծոյ Բանն ոչ են անկատար եւ ոչ են<sup>1</sup> կարաւա այլում կատարման, վասն այն պարտ է ասել, զի Բանն Աստուծոյ ոչ է պատահումն, այլ գոյացական ունի էութիւն<sup>2</sup>, որպէս նախ գրեցաք, եւ ամենայն<sup>3</sup> իմաստունք հաւանին: Աստուած ունի իմացական բնութիւն, սակայն Բանն Աստուծոյ անհաղորդելի է ծնողին, զի ոչ հանճար մարդոյ եւ ոչ բնութիւն ըմբռնել ոչ<sup>4</sup> կարէ, զի ելեալ եւ ծնեալն նոյն անձն լիցի ընդ ծնողին իւրոյ, իսկ Բանն Աստուծոյ յԱստուծոյ ելանէ եւ ծնանի իրական ելմամբ, վասն այն պարտ է ասել, զի ի մէջ Աստուծոյ Հաւր եւ Աստուծոյ Բանին անձնական զանազանութիւն լիցի, ըստ իւրեանց յատկութեանցն անհաղորդելի, զի Հայր ո՛չ հաղորդէ Բանին զհայրութիւն եւ Հաւր ո՛չ հաղորդի որդիութիւն, վասն այն պարտ է ասել, զի Հայր եւ Բանն այլ եւ այլ են անձամբ: Եւ զայս յայտնէ<sup>5</sup> աւետարանիչս՝ ասելով. «Եւ Բանն էր առ Աստուած» (Յովի. Ա 1): Քանզի իր ինչ ոչ ասի գոլ առ ինքն, վասն այն ի մէջ բանին եւ սկզբանն, առ որ գոյ,<sup>6</sup> պարտ է անձնական<sup>7</sup> զանազանութիւն լինել: Իսկ ասելն՝ առ Աստուած, զի Բանն ելումն է յԱստուծոյ ո՛չ բաժանմամբ, այլ ելանէ անձամբ<sup>8</sup> եւ մնայ ի ներս առ Աստուած սկզբնական էութեամբ: Դարձեալ, նախադրութիւնս այս՝ առ, նախ ցուցանէ զկցորդութիւն Որդւոյն առ Հայր: Երկրորդ. անձնական զանազանութիւն: Երրորդ. զպէտութիւն ինչ Հաւր<sup>9</sup> առ Որդի, զի սկիզբն է Որդւոյ եւ ոչ ըստ մեծութեան, որպէս ասէ Արիոս, այլ ըստ ծնողութեան եւ պատճառին: Եւ այս գիտելի է, զի Հայր գոյ յՈրդի<sup>10</sup> եւ Որդի՝ ի Հայր: Նոյնպէս Հոգին ի Հայր եւ յՈրդի<sup>11</sup>, ըստ այնմ. «Ես ի Հայր եւ Հայր յիս է» (հմնտ. Յովի. Ժ 38), սակայն ոչ ասի<sup>12</sup> Հայր առ Որդի եւ առ Հոգի Սուրբ, զի պատճառ է Որդւոյ ծննդեան եւ Հոգւոյ բղխման: Նոյնպէս եւ Որդին ոչ ասի առ Հոգին կերպիւ ինչ, զի թէպէտ ոչ է պատճառ Որդին Հոգւոյն բղխման, այլ պատճառ է բաշխման իմաստութեան եւ շնորհաց,**

<sup>1</sup> Ը Հեք<sup>2</sup> Յ գեութիւն<sup>3</sup> Յ յամենայն<sup>4</sup> Ը Հեք<sup>5</sup> Յ ասէ<sup>6</sup> Յ առ Որդոյ<sup>7</sup> Յ անձնեն<sup>8</sup> Յ այլ ելանէ Աստուծոյ անձամբ<sup>9</sup> Յ առ Յօր<sup>10</sup> Յ Որդի<sup>11</sup> Ա Յ Որդի<sup>12</sup> Յ սակայն հատկաբար ոչ ասի

զի Հոգին բղխի ի Հաւրէ եւ առնու յՈրդւոյ<sup>1</sup> եւ բաշխի ամենեցուն: Դարձեալ գիտելի է, զի անունս այս Աստուած զանազան կերպիւ ասի ի Սուրբ Գիրս, զի երբեմն ցուցանէ զմի անձն, յորժամ ասեմք. «Աստուած ծնաւ զԱստուած եւ Աստուած բղխեաց զԱստուած», այս նշանակէ նախ զՀայր եւ ապա զՈրդին, եւ նախ զբղխողն եւ ապա զբղխեալն: Նոյնպէս յորժամ ասեմք<sup>2</sup>. «Աստուած ծնանի յԱստուծոյ եւ Աստուած բղխէ յԱստուծոյ», այս նշանակէ նախ զՈրդի եւ ապա զՀայր, եւ նախ զՀոգին եւ ապա՝ զբղխողն: Այսոքիկ զմի<sup>3</sup> անձն ցուցանեն: Երբեմն նշանակեն զերկու անձն, յորժամ ասեմք. «Աստուած տեսանէ զԱստուած, կամ Աստուած իմանայ զԱստուած»: Այս ցուցանէ զերկու անձն, որ տեսանեն զմինն եւ իմանան, եւ կամ մի անձն, որ տեսանէ զերկուն եւ իմանայ: Երբեմն ցուցանէ զերիս անձինս, յորժամ ասեմք. «Աստուած ստեղծեաց զամենայն աշխարհս<sup>4</sup> եւ Աստուած խնամէ կամ նորոգէ զամենայն աշխարհս<sup>5</sup>: Իսկ յորժամ եցոյց աւետարանիչս զանձնաւորութիւն Բանին, այժմ ցուցանէ զէութիւն Բանին՝ ասելով.

Բան. «Եւ Աստուած էր Բանն» (Յովի. Ա 1):

Մեկնութիւն<sup>6</sup>. Երեք ինչ ցուցանէ. նախ՝ զի էութիւն Աստուած է: Երկրորդ. զի Աստուած<sup>7</sup> ո՛չ գոյ բնութիւն ստեղծական, այլ բոլորն Աստուած, այսինքն՝ ծնողն եւ ծնունդն, բղխաւղն եւ բղխումն, անձն եւ բնութիւն: Երրորդ. զի ո՛չ է հնար եղականի ընդ անեղի էակցիլ, եւ թէ ոք ասիցէ. «Զմարմինն ընդ Բանին միացեալ<sup>8</sup>», ասեմք առ այս, եթէ Բանն մարմին եղեւ եւ ոչ աւտար եւ նոր եկամուտ մարդ ընդ Աստուած լծակցեալ: Դարձեալ, բարւոք ասէ, թէ՝ Աստուած էր Բանն, այսինքն՝ Բանն էր առ Աստուած, զի ասէ Արիստոտէլ ի Պերի Արմենիասն, թէ՝ «Անուանք եւ բայք փոփոխեալք զնոյն նշանակեն», որպէս աւետարանիչս ասէ, զի թէպէտ Բանն առ Աստուած իցէ, սակայն ոչ ունի այլ բնութիւն, քան զԱստուած առ Որդւոյ<sup>9</sup>: Որպէս բան մտաց մեր ո՛չ ունի այլ բնութիւն, քան զմիտս մեր, վասն որոյ ասէ. « Աստուած էր Բանն», որպէս եւ ծնողն Աստուած է:

<sup>1</sup> A յՈրդի, B Որդի

<sup>2</sup> B չիք «Աստուած ծնաւ ... յորժամ ասեմք»

<sup>3</sup> C ոչ զմի

<sup>4</sup> B յաշխարհս

<sup>5</sup> B յաշխարհս

<sup>6</sup> B չիք

<sup>7</sup> A յԱստուած

<sup>8</sup> C չիք «Եւ թէ ոք ... Բանին միացեալ»

<sup>9</sup> A առոր գոյ

Եւ երեք ինչ գիտելի է, զի երեք խնդիրք էին յաղագս Բանին Աստուծոյ. Նախ՝ թէ ե՞րբ էր Բանն: Այսմ պատասխանի ետ, թէ՝ Ի սկզբանէ էր:

Երկրորդ. Խնդիր էր, թէ՝ ո՞ւր էր: Եւ այսմ պատասխանեաց, թէ՝ առ Աստուած էր: Երկրորդ. Խնդիր էր, թէ՝ զի՞նչ էր: Եւ այսմ<sup>1</sup> պատասխանէ<sup>2</sup>, թէ՝ Աստուած էր Բանն:

Երկրորդ. Գիտելի է, զի զանազան կերպիւ առաւել լինի աստ Աստուած անունն, զի նախ ցուցանէ<sup>3</sup> զշայր, յորժամ ասաց. «Բանն էր առ Աստուած»: Իսկ ասելն.« Բանն էր առ Աստուած», այս ոչ ցուցանէ զշայր, այլ ցուցանէ զբնութիւն Աստուծոյ, որ է Աստուածութիւն:

Երրորդ. Գիտելի է, զի աւետարանիչս զայս<sup>4</sup> երիս բացերեւական բանս պատշաճաւոր եւ զարդարանաւք կարգեաց վասն երկու պատճառի. Նախ՝ զի որ վախճան է առաջնոյն, սկիզբն է Երկրորդին, եւ վախճան Երկրորդին սկիզբն է Երրորդին, բաց ի շաղկապէն, որ է բաղհիւսական եւ միաւորական: Եւ Երկրորդ պատճառ է, զի որպէս ճանաչումն պատճառելոյն ածէ ի ճանաւթութիւն պատճառին, նոյնպէս առաջին բացերեւութիւն ածէ<sup>5</sup> ի ճանաչումն Երկրորդին, զի յաւիտենից Բանն էառ յաւիտենից խաւսողն, վասն որոյ եթէ Բանն էր ի սկզբանէ, այսինքն՝ յաւիտենից, պարտ էր լինել առ Աստուած, որ միայն է յաւիտենական: Իսկ Երկրորդ բացերեւութիւն ածէ ի ճանաչումն Երրորդին, զի որ ինչ է ի յԱստուած<sup>6</sup> Աստուած է, վասն որոյ պարտ է, զի Աստուծոյ Բանն, որ առ<sup>7</sup> Աստուած է, Աստուած լիցի, որպէս ցուցաւ ի վերոյ:

Իսկ յորժամ եցոյց աւետարանիչս զԲանին էութիւն, զկնի ճառէ զԲանին յաւիտենականութիւն՝ ասելով.

Բան. «Նա էր ի սկզբանէ առ Աստուած» (Յովհ. Ա 2):

ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ. Զորս ինչ ցուցանէ. Նախ՝ է առ էն Աստուած կայացեալ: Երկրորդ. զհաւասարութիւն անձանցն զուգակցեալ: Երրորդ. զմիշտն լինել Հայր՝ Հայր եւ Որդին՝ Որդի<sup>8</sup>: Զորրորդ. զնախասացեալ բանսն վերստին կրկնէ, որ ասաց՝ ի սկզբանէ եւ առ Աստուած:

<sup>1</sup> Ը այժմ

<sup>2</sup> Ե պատասխանէր

<sup>3</sup> Ե ցուցանէր

<sup>4</sup> Ե այս

<sup>5</sup> Ա Ե չեք

<sup>6</sup> Ե Աստուած

<sup>7</sup> Ա Ե չեք

<sup>8</sup> Ը Որդի՝ Որդի

Դարձեալ գիտելի է, զի վասն երեք պատճառի ելեալն վերջին լինի ըստ ժամանակի, քան յորմէ ելաւն. նախ՝ վասն անկատարութեան ծնողին, որպէս այր ի տղայութեան ոչ կարէ ծնանել<sup>1</sup> որդի, զի անկատար է, վասն որոյ Որդին վերջին ասի ժամանակաւ քան զշայր: Երկրորդ. ըստ կերպի ելման<sup>2</sup>, զի յորժամ շարժմամբ ինչ ելանիցէ, պարտ է, զի յետին լիցի, քան զծնողն, զի ըստ իմաստասիրացն ամենայն շարժումն ժամանակաւ լինի եւ ոչ անժամանակ, վասն որոյ պարտ է որ ինչ շարժմամբ ծնանի, այնչափ վերջին լինի, որքան շարժումն յերկարի<sup>3</sup>: Երրորդ պատճառ. վասն ազատութեան ծնողին կամ սկզբանն<sup>4</sup>, զի յորժամ ազատ կամաւք իր ինչ առնէ, կարէ յերկարել զժամանակ գործոյն, որպէս ստեղծուածք են Աստուծոյ<sup>5</sup>, թէպէտ Աստուած ամենակարող է եւ առանց շարժման առնէ, սակայն արարածք ոչ են յաւէտակիցք<sup>6</sup> Աստուծոյ, այլ ի սկիզբն ժամանակի ստեղծան: Եւ ըստ այսմ երեք պատճառիս Որդին Աստուծոյ ոչ ասի վերջին գոլ քան զշայր. նախ՝ զի յԱստուած կարողութիւն ծննդեան<sup>8</sup> ոչ է անկատար: Երկրորդ. զի Աստուծոյ Բանն ոչ ելանէ ի Հաւրէ շարժմամբ եւ այլայլութեամբ, որպէս ասէ Յակոբոս ի Կաթողիկեայց. «Առ Աստուած ոչ գոյ փոփոխումն եւ ոչ շարժելոյ ստուեր» (տես Յակ. Ա 17): Երրորդ. զի Որդի ծնանի ի Հաւրէ ի հարկէ բնութեան, թէպէտ առանց բոնութեան<sup>9</sup>, վասն զի հարկ է, որ Աստուած իմանայ զինքն, եւ զինքն իմանալով՝ զՈրդի<sup>10</sup> ծնանի, վասն որոյ պարտ է ասել, զի Բանն հաւասարի Աստուծոյ յաւիտենականութեամբ: Եւ այս է զոր ասէ աւետարանիչս. « Նա էր ի սկզբանէ առ Աստուած» (Յովի. Ա 2):

**Դարձեալ՝ չորս ինչ ցուցանէ:** Զորս բանս, այսինքն՝ ի սկզբանէ էր Բանն՝ զծնունդն, եւ Բանն էր առ Աստուած՝ զանձնաւորութիւն, եւ Աստուած էր Բանն՝ զԱստուածութիւն, Նա էր ի սկզբանէ առ Աստուած՝ զանեղութիւն ընդ Հաւր:

<sup>1</sup> Ա ծնանիլ

<sup>2</sup> Ը ելնանն

<sup>3</sup> Յ Երկարի

<sup>4</sup> Ը սկզբան

<sup>5</sup> Յ Երկարել

<sup>6</sup> Ա յԱստուծոյ

<sup>7</sup> Յ աւետակիցք

<sup>8</sup> Ա Յ ծննդեանն

<sup>9</sup> Յ բնութեան

<sup>10</sup> Յ Որդի

Եւ ի վերայ չորիցս<sup>1</sup> ասասցես զէրն եւ խափանեսցես զնոցա ոչ էրն, զի ի չորս կողմանէ պարսպեալ ամրացոյց ընդդէմ նոցա, որք ուրանան զանեղութիւն Բանին:

Դարձեալ՝ չորս է յաւիտենական. նախ՝ անսկիզբն եւ անվախան: Երկրորդ. յարածգական, որ անսկիզբն է եւ վախճան<sup>2</sup>: Երրորդ. միշտն, որ է սկիզբն եւ անվախճան: Չորրորդ. ժամանակ, որոյ է սկիզբն եւ է վախճան:

**Արդ չորս երս այս նախ քան զամենայն յաւիտեանս ցուցանեն<sup>3</sup> զԲանն Աստուած ի Հաւրէ ծնեալ:**

Դարձեալ՝ նա էր ի սկզբանէ առ Աստուած:

Երիս իրս ցուցանէ. նախ՝ զմիութիւն Բանին, յորժամ ասէ՝ նա, իբր թէ երիս անգամ յիշատակեաց ի բան, իսկ այս բանս մի է: Երկրորդ. ցուցանէ զգոլ Բանին առ Աստուած, զի ասէ՝ նա էր առ Աստուած: Երրորդ. ցուցանէ զԲանին գոլն, եւ առ Աստուած գոլ, եւ Աստուած գոլ<sup>4</sup> եւ յաւիտենից գոլ, վասն որոյ ասէ. «Նա էր ի սկզբանէ առ Աստուած»:

**Հարց. Վասն է՞ր զԲանն եւ զՀայր յիշեաց եւ ոչ զՀոգին Սուրբ:**

Պատասխան. Վասն երեք պատճառի. նախ ասեմք, եթէ Բանն էր մարմնացեալ եւ կարծէին եղեալ, վասն որոյ զնա եցոյց անեղ գոլ: Երկրորդ. ասեմք, թէ աստ վասն Որդւոյ ասէ, եւ յիւրում տեղւոջ վասն Հոգւոյն աստուածաբանէ: Երրորդ. ասեմք, թէ եւ աստ յիշեաց զԵրրորդութեան անձինք, այն, որ ասէ՝ Բանն էր առ Աստուած՝ Հայր, եւ Աստուած էր Բանն՝ Որդի, եւ նա էր առ Աստուած՝ Հոգին Սուրբ, զի հասարակաբար Հայր ի յՈրդի եւ ի<sup>5</sup> Հոգի է, եւ Որդի ի Հայր եւ ի Հոգին Սուրբ, եւ Հոգին Սուրբ ի Հայր եւ ի Որդին: Այլ զայս ոչ կամին, որք զՀոգին ի Հաւրէ եւ յՈրդւոյ ասեն, որպէս ասացաւ ի վերոյ:

### Ընդդէմ Հերձուածողաց

**Այլ վարդապետք ասեն, թէ աստուածաբանութիւն աւետարանչիս է ընդդէմ տասն ազգ հերձուածողաց, որք ի հրէից եւ ի հեթանոսաց. նախ՝ զի ոմանք ասացին, թէ անմարմին Բանն ոչ էր յառաջ քան զյաւիտեանս, այլ ի կուսէն էառ սկիզբն, ասէ. «Ի**

<sup>1</sup> C եւ ի չորիցս վերայ

<sup>2</sup> Բ անվախճան

<sup>3</sup> Բ ցուցանէ

<sup>4</sup> Բ չիք եւ Աստուած գոլ

<sup>5</sup> C չիք

սկզբանէ էր Բանն» (Յովի. Ա 1), եւ ոչ յետոյ սկսեալ: Երկրորդ. ոմանք ասացին զերեք անձինքն մի անձն գոլ եւ մի բնութիւն, ասէ. «Բանն էր առ Աստուած» (Յովի. Ա 1): Երրորդ. ոմանք ասացին, թէ Բանն ոչ էր ստեղծող, այլ ստեղծուած, ասէ. «Աստուած էր Բանն» (Յովի. Ա 1): Զորրորդ. ոմանք ասացին երկու Աստուած. մինն երեւելեաց եւ մինն աներեւութից, ասէ. «Ամենայն ինչ նովաւ եղեւ» (Յովի. Ա 3): Հինգերորդ. ոմանք ասացին, թէ ամենայն ինչ նովաւ եղեւ, յայտ է, թէ չարն եւս նովաւ եղեւ, ասէ. «Առանց նորա եղեւ եւ ոչինչ» (Յովի. Ա 3), որ է չարն եւ մեղք, զի ոչինչ է եւ ոչ արարեալ յԱստուծոյ: Վեցերորդ. ոմանք ասեն, թէ անկարգ եւ անյարմար էստեղծ զարարածս, ասէ. «Որ ինչ եղեւն նովաւ՝ կեանք էր» (Յովի. Ա 3-4), զի ամենայն կենդանի ունի կարգ եւ սահման: Եւթներորդ. ոմանք ասացին, թէ զարարածս ոչ հասարակ խնամէ, այլ ակնառութեամբ, ասէ. «Կեանք էր լոյս մարդկան» (Յովի. Ա 4), զի թէ զգալի արեգակն հասարակ խնամէ, որչափ<sup>1</sup> իմանալի արեգակն՝ Քրիստոս Աստուած: Ութերորդ. ոմանք ասացին, թէ Քրիստոս զսքանչելիսն կախարդութեամբ առնէր, ասէ. «Խաւար ննա ոչ եղեւ հասու» (Յովի. Ա 5): Իններորդ. ոմանք ասացին, թէ մարդեղութիւն Քրիստոսի առաջաւք էր, ասէ. «Բանն մարմին եղեւ» (Յովի. Ա 14): Տասներորդ. ոմանք ասացին, թէ մարմին միայն էառ առանց հոգւոյ եւ մտաց, վասն այն ասէ. «Աւանդեաց զիոդին» (Յովի. ԺԹ 30):

### Զի արարիչ է Բանն Աստուծոյ

**Յորժամ եցոյց աւետարանիչս զծնունդ Բանին Աստուծոյ, զկնի ասէ եւ ցուցանէ զներգործութիւն նորա՝ սսելով.**  
Բան. «Ամենայն ինչ նովաւ եղեւ» (Յովի. Ա 3):

**Մեկնութիւն.** Հինգ ինչ ցուցանէ. նախ՝ թէ արարչակից է Հաւը: Երկրորդ. թէ ոչ է եղեալ ընդ երկնի եւ երկրի<sup>2</sup>: Երրորդ. նշանակէ եւ զլինելն հրեշտակաց ըստ ամենայնին, զոր Մովսէս<sup>3</sup> ճառեաց (Ելք Իգ 20): Զորրորդ. կարկէ զբերանս նոցա, որք ասեն երկու արարիչ՝ չար եւ բարի: Հինգերորդ. յամաւթ առնէ զնոսա, որք ասեն զհրեշտակս արարչակից Աստուծոյ:

Եւ գիտելի է, զի Բանին Աստուծոյ ներգործութիւն տարածի ընդհանուր յամենայն ստեղծուածս, զի ստեղծուածք<sup>4</sup> լինին յԱստուծոյ, որպէս յարհեստաւորէ, որպէս ասէ իմաստութիւն յԱ-

<sup>1</sup> Ը որչափ եւս առաւել

<sup>2</sup> Ե ընդ երկնի եւ ընդ երկրի

<sup>3</sup> Ը Մովսէս ոչ

<sup>4</sup> Ը ստեղծուածս

**ուակսն.** «Ամենեցուն ճարտարապետն Աստուած» (Ինաստ. է 21), քանզի Աստուած, զոր ինչ գործէ, իմաստութեամբ ներգործէ, իսկ իմաստութիւն Աստուծոյ է Բանն իւր, յղացմամբ մտացն, վասն այն ասէ Արիստոտէլ, թէ՝ «Ճուն արտաքին շինի ի տանէ, որ ի միտքն է», իսկ աստուածային Բանն է յղացումն աստուածային հանճարոյն<sup>1</sup>: Ապա ուրեմն ամենայն գործ Աստուծոյ Բանիւն Աստուծոյ լինին: Եւ այս է, որ ասէ աւետարանիչս. «Ամենայն ինչ նուվաւ եղեւ», այսինքն՝ Բանիւն, որպէս ասէ Դաւիթ. «Բանիւն Տեառն երկինք հաստատեցան» (Սաղմ. ԼԲ 6): Եւ Պաւլոս վկայէ. «Յորմէ ամենայն եւ որով ամենայն», այսինքն՝ Որդւով: Եւ քանզի անիմաստ միտք կարէ կարծել, թէ այս Բան, որ է ամենայնի արարիչ, միայն մարմնաւոր ստեղծուածոցս ասէ, վասն զի Մովսէս միայն զստեղծումն զգալեացս յիշէ, իսկ ի բառնալ զսոյնպիսի կարծիք, զկնի ասէ.

Բան. «Առանց նորա եղեւ եւ ոչինչ» (Յովի. Ա 3):

**Մեկնութիւն.** Այսինքն՝ զի ոչ միայն մարմնաւոր արարածք, այլ եւ հոգեւորք յԱստուծոյ են եւ Բանիւն Աստուծոյ եղեն:

Դարձեալ գիտելի է, զի Մանիքոս առնու զայս բանս, որ ասէ՝ ոչ ինչ՝ ստորասական իմանալով: Ասաց, թէ անուամբ ոչինչն իմացեալ լինին մարմնաւոր ստեղծուածքս, որ սակաւ ունին զէութիւնս իւրեանց եւ վասն որոյ ոչինչ ասին: Եւ սոյնպէս մեկնէ զբանս Աւետարանիս. «Առանց նորա եղեւ եւ ոչինչ», այսինքն՝ առանց Բանին Աստուծոյ եղեւ մարմնաւոր ստեղծուածքս, քանզի Մանիքոս երկու ասէ սկզբունս. զմինն պարզ բարի՝ թարց ամենայն չարութեան, զոր ասէ՝ սկիզբն գոլ ամենայն հոգեւոր արարածոց, եւ զմիւսն պարզ չար՝ առանց բարութեան, զոր ասէ սկիզբն գոլ ամենայն մարմնաւոր ստեղծուածոցս: Բայց կարծիքս ներհակ են ոչ միայն Սուրբ Գրոց, այլ եւ ամենայն իմաստասիրաց. նախ՝ զի ըստ իմաստասիրացն էակն եւ բարին անդրադարձին, վասն որոյ որքան ունի մարմնաւոր ստեղծուածքս էութիւն, նոյն չափ ունին եւ բարութիւն: Վասն այն պարտ է, զի զբարի սկիզբն է ելցէ: Երկրորդ. Մանեայ ստութիւն յայտնի ի կարգէ եւ ի շաղկապութենէ ամենայն իրաց, զի ամենայն ստեղծուածք մարմնաւորք եւ հոգեւորք ընդ միմեանս կարգին եւ առ մի, վասն այն պարտ է ասել, զի ի միոյ սկզբնէ ելանեն եւ առ մի վախճան վերաբերին, վասն այն Արիստոտէլ կարգէ եւ ի շաղկապութենէ ամենայն իրաց զմիութիւն առաջին սկզբանն ցուցանէ՝ ասելով. «Էակք ոչ

<sup>1</sup> С չիք իսկ աստուածային ... հանճարոյն

կամին անկարգ գոլ, եւ ոչ է բարի բազմութիւն իշխանութեանց, ապա ուրեմն իշխան մի է»:

Դարձեալ գիտելի է, զի ոմանք զբանն զայն, զոր ասէ. «Առանց նորա եղեւ եւ ոչինչ», սոյնպէս մեկնեցին՝ անուամբ ոչնչին զստանայ կոչելով։ Առանց նորա, այսինքն՝ սատանայ։ Սուտ է կարծիք սոցա եւ մեկնութիւն, զի սատանայ ոչ է չար բնութեամբ, զի թէ չար էր, ամենեւիմբ չար լինէր եւ զինքն եւս ապականէր, այլ բնութիւն սատանայի բարի է եւ ի բարոյն Աստուծոյ ստեղծեալ է, այլ կամաւք իւրովք չարացաւ սատանայ։ Ապա յայտ է, թէ վասն հոգեւոր եւ մարմնաւոր ստեղծուածոց ասէ. «Առանց նորա եղեւ եւ ոչինչ», այսինքն՝ ոչինչ իր կայ, եւ ոչինչ է եղեալ առանց ներգործութեան Բանին։ Բայց Որոգինէս այլ յեղանակաւ մեկնէ. առանց նորա եղեւ եւ ոչինչ, այսինքն՝ մեղքն առանց նորա եղեւ, զի մեղքն ոչինչ է, եւ ոչ ասի յԱստուծոյ, այլ ի կամաց մերոց։ Արդ, թէպէտ բանս այս ճշմարիտ է, Բայց ոչ է միտք աւետարանչիս զայս ասել, զի աւետարանիչս կամի աստ միայն հաստատել զԲանն հասրակ պատճառ գոլ ամենայնի։

Հարց. Վասն է՞ր կրկնէ զեւն՝ եղեւ եւ ոչինչ։

Պատասխան. Յամենայն ուրեք եւն երկու դէմ նշանակէ, իսկ աստ ցուցանէ կրկին չար. նախ՝ սատանայի եւ մարդկան։ Երկրորդ. հոգւոյ եւ մարմնոյ մեղք։ Երրորդ. զմեղս եւ զկուապաշտութիւն, զի ոչինչ են եւ կազմեցան առանց կամաց նորա։

Բան. «Որ ինչ եղեւն։»

Մեկնութիւն. Ընդդէմ է նոցա, որք ասեն. «Եւ զհոգին նովաւ եղեալ։» Ասէ՝ ամենայն ինչ, որ եղեւ՝ նովաւ եղեւ, այլ Հոգին ո՛չ է եղեալ, այլ ելեալ եւ բղխեալ ի Հաւրէ, ապա ուրեմն Հոգին Սուրբ Աստուծ է եւ Արարիէ։

Բան. «Նովաւ կեանք էր» (Յովի. Ա 4):

Մեկնութիւն. Երեք ինչ յայտնէ. նախ՝ փչումն Ադամայ, որ եղեւ մարդն յոգի<sup>1</sup> կենդանի։ Երկրորդ. նոր արարչութիւնս, որ կենդանացաք հոգւով՝ մարդեղութեամբն Քրիստոսի։ Երրորդ. կեանքն անմահ, որ ասէ ի Կաթողիկեայց. «Կեանքն յայտնեցաւ եւ տեսաք եւ շաւշափեցաք զԲանն կենաց» (տես Ա Յովի. Ա 2):

Դարձեալ ասէ Արիստոտէլ, թէ<sup>2</sup> չորս են աստիճանք կենաց եւ կամ կենդանեաց, այսինքն՝ աճողական, զգայական, շարժական՝ ըստ տեղւոյն, եւ իմացական։ Իսկ ի մէջ սոցա իմացականն պատուական է, վասն որոյ, զի որ ինչ յոմն ըստ կերպի իմացականն

<sup>1</sup> Ե ոգի

<sup>2</sup> Ե չիք

գոյ ի նմա, ըստ կերպի ամենայն կենդանեացն։ Բայց արդ<sup>1</sup>, ամենայն ստեղծուածք նախ գոյին ի Բանն, որպէս յղացումն արհեստի կամ հանճարոյ, ապա յայտնի է, զի ամենայն ստեղծուածք նախ գոյին ի Բանն Աստուծոյ, ըստ կերպի իմացական կենաց, վասն որոյ ասէ աւետարանիչս. «Որ ինչ եղեւն, նովաւ կեանք էր», զի որ ինչ եղեւն արտաքոյ Աստուծոյ, նախ գոյր ի Բանն Աստուծոյ, ո՛չ ըստ էութեան իրին, այլ ըստ նմանութեան իրին, զի աստուածային էութիւն վասն իւրոյ կատարելութեան յինքեան ունի զնմանութիւն ամենայն իրաց, զի յայտնիչ եւ ցուցիչ է ամենայն իրաց։ Նա եւ ամենայն ստեղծուածք նախ գոյին յԱստուծած, որպէս իմացեալն եւ ճանաչեալն գոն ի ճանաչողն։ Եւ այսու յայտնի է կերպ ստեղծուածոցս ելման ի Բանէն Աստուծոյ, զի ելանեն ի նմանէ, որպէս արհեստեալք յարհեստաւորէն կամ ի ներքին արհեստէն։ Եւ այս է վեհագոյն նախագաղափարն եւ պատկերն ամենայն իրաց կրեալ ի միտս Արարչին։

Դարձեալ՝ այլ յեղանակաւ մեկնի բան Աւետարանիս ըստ գոյլոյն ամենայն իրաց նախկնաբար ի կամս Բանին Աստուծոյ, զի ամենայն ինչ, որ ի կամս Բանին Աստուծոյ գոն, կեանք ասին ի<sup>2</sup> նմա, իսկ ամենայն ինչ, որ ելանէ, ի կամացն Աստուծոյ է, վասն որոյ պարտ է ասել, թէ նախ գոյին ի կամս Աստուծոյ, զի կամեցեալ էին յԱստուծոյ։ Զայս ասէ աւետարանիչս՝ որ ինչ եղեւն, այսինքն՝ ստեղծուածք, նովաւ կեանք էր, այսինքն՝ կամեցեալ էր ի Բանէն Աստուծոյ, որ կամէր ստեղծանել զնոսա։ Եւ այսու բառնի մոլորութիւն ոմանց իմաստասիրաց, որք ասացին, թէ Աստուած զոր ինչ գործէ, ի հարկէ գործէ եւ ոչ կարէ չգործել։ Այլ սուտ է այս, զի Աստուած ոչ կարաւտի բարութեան ստեղծուածոցս եւ ոչ ի հարկէ կամի զէութիւն եւ զբարութիւն ստեղծուածոցս<sup>3</sup>, այլ ազատապէս կամի եւ ստեղծանէ զնոսա, որպէս մարգարէն ասէ. «Զամենայն, զոր ինչ կամեցաւ եւ արար» (տես ԽԶ 10) եւ այլն։ Բայց վասն այսմ բանի՝ որ ինչ եղեւն նովաւ, եւ միւս բանին՝ ամենայն ինչ նովաւ եղեւ, ոչ է պարտ<sup>4</sup> իմանալ, թէ Բանն Աստուծոյ գործիք է Աստուծոյ։ Եւ ոչ է պարտ իմանալ, թէ Հաւը զաւրութիւն ի Բանէն կատարի, որպէս ի մեզ, այլ պարտ է

<sup>1</sup> Ը կարգաւ

<sup>2</sup> Ը ո՞ք ի

<sup>3</sup> Յ չիք ոչ ի հարկէ ... ստեղծուածոցս

<sup>4</sup> Ա Յ չիք

իմանալ, զի այսու յայտնի եւ ցուցանի, զի Հայր զզաւրութիւն իւր հաղորդէ Որդւոյն, թէպէտ նոյն զաւրութիւն միշտ ի Հայր մնայ եւ այսու զաւրութեամբ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգին համանգամայն ներգործեն եւ ստեղծանեն: եւ այս գիտելի է, զի պատճառ գոլոյ, ե՛ւ գաղափար, ե՛ւ լոյս, ե՛ւ կեանք եւ այլն ամենայն պատշաճին Սուրբ Երրորդութեանն, սակայն աստ Աստուծոյ յատկական ասին, զի առաւել պատշաճի անձնաւորութեան Բանին, քան այլոց անձանցն, զի Բանն ելանէ ի Հաւրէ որպէս իմաստութիւն խաւսեալ, վասն այն գաղափարն եւ ցուցումն իրաց ու պայծառութիւն լուսոյն Բանին յատկական:

Իսկ յորժամ եցոյց աւետարանիչս զներգործութիւն Բանին առ հանուր ամենայն ստեղծուածքս, այնուհետեւ ցուցանէ զնոյն, որ առ մարդիկս, յորժամ ասէ.

Բան. «Եւ կեանքն էր լոյս նարդկան» (Յովի. Ա 4):

Մեկնութիւն<sup>1</sup>. Ոչ զայս կեանքս ասէ լոյս նարդկան, նախ՝ զի զգայականաց է, երկրորդ՝ զի անցաւոր է, երրորդ՝ զի խաւար է ըստ վկայութեան, այլ զմշտնջենաւորն ասէ, որ հաւատովն ծանեաք զԱրարիչն մեր եւ հաւատոյն լուսովն զկեանսն ժառանգեցաք, ըստ այնմ. «Այս են կեանք, զի ծանիցեն զՔեզ միայն ճշմարիտ Աստուած<sup>2</sup>» (տես Յովի. ԺԵ 3) եւ այլն:

Բան. «Եւ լոյսն ի խաւարի անդ<sup>3</sup> լուսաւոր էր» (Յովի. Ա 5):

Մեկնութիւն. Կրկին է իմացումն. նախ զաշխարհս ասէ, որ մարդիկ խաւար լինին<sup>4</sup> մեղաւք եւ անգիտութեամբ հեռանալով ի սուրբ վարուց<sup>5</sup>, եւ<sup>6</sup> Բանն Աստուած վառեաց զճրագ մարմնոյն եւ լուսաւորեաց զմեզ Աստուած գիտութեամբ եւ մաքուր<sup>7</sup> վարուք, զի թէ խաւար է տգիտութիւն եւ մեղք, լոյս եղիցի գիտութիւն եւ վարք աստուածայինք:

Դարձեալ՝ ի մէջ թանձրամած մարմնոյն լուսաւոր էր Աստուածութիւն: Տե՛ս, զի բնութեամբ ասէ զմիաւորութիւն, ե՛ւ անապական, ե՛ւ անմեղ զմարմին Փրկչին, որպէս հուր զերկաթ ջերմացուցեալ եւ լուսաւորեալ:

Բան<sup>8</sup>. «Խաւար նմա ո՛չ եղեւ հասու» (Յովի. Ա 5):

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> A B չեք միայն ճշմարիտ Աստուած

<sup>3</sup> A B չեք

<sup>4</sup> A B խաւարին

<sup>5</sup> A B չեք հեռանալով ի սուրբ վարուց

<sup>6</sup> C զի

<sup>7</sup> A B սուրբ

<sup>8</sup> B մեկնութիւն

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ<sup>1</sup>. Նախ՝ զի աստուածային լոյսն, կամ Բան մեր բնական ճանաչմամբ ոչ տեսանի, զի բնական<sup>2</sup> ճանաչումն մեր միայն լինի յարարածոց, վասն որոյ բնական ճանաչմամբ, որ լինի միջնորդութեամբ արարածոցս, ոչ կարեմք տեսանել զԱստուած: Երկրորդ. ասէ վասն ճանաչմանն, որ ի վեր է քան զբնութիւն եւ քան զճանաչումն մեր, այն, զոր ասէ առաքեալ. «Զոր ակն ոչ ետես» (ԱԿորնթ. Բ 9) եւ այլն, զոր մարդ ո՛չ կարէ տեսանել, եթէ ոչ չնորհաց լուսովն Աստուծոյ, որ պարգեւէ մարդկան: Երրորդ. սատանայ է խաւար, այսինքն՝ մտաւք, կամաւք եւ գործովք, նա ոչ եղեւ հասու տնաւրէնութեան Քրիստոսի: Զորրորդ. անհաւատք եւ մեղաւորք ոչ ունին զլոյս չնորհաց, ոչ ճանաչեն զՔրիստոս: Հինգերորդ. մեղքն խաւար է, եւ՝ «Նա ոչ արար մեղս» (Իմնտ. Եսայի ԾԳ 9), - կնքէ մարգարէն: Տե՛ս, ի բարձրագոյնսն սարսէր սատանայ եւ ի խոնարհագոյնսն մոլորէր:

Եւ դարձեալ՝ բարձրն հաւատացելոցն հաստատութիւն է, եւ խոնարհն՝ անհաւատիցն մոլորումն: Եւ որ վասն խոնարհագոյնին սոսկ մարդ ասէ զՔրիստոս, ըստ սատանայի մոլորի:

Եւ աստ լինի երեք հարց. առաջին՝ վասն է՞ր կոչէ զԲանն լոյս մարդկան:

Պատասխան. Վասն երկու պատճառի. նախ՝ զի ցուցցէ, թէ Բանն ոչ է մարմնաւոր լոյս, այլ հոգեւոր, զի ի մէջ ամենայն զգայական կենդանեաց մարդս միայն ընդունի զհոգեւոր լոյսն: Երկրորդ. զի կամէր իջանել Բանն ի մեծութենէ իւրմէ եւ հովուէր զմարդիկ:

Երկրորդ հարց. Թէ Բանն որպէ՞ս է լոյս մարդկան:

Պատասխան. Երեք կերպիւ. առաջին է նախադրութեամբ, զի որպէս<sup>3</sup> զգալի լոյսն նախ տեսանի եւ ապա պատճառ լինի այլոց տեսութեան, սոյնպէս յաւիտենական իմաստութիւն<sup>4</sup> նախ տեսանի ի հանճարս մեր եւ նովաւ այլք տեսանելի լինին: Երկրորդ. Բանն է լոյս մարդկան իբր լուսաւորող, քանզի լուսաւորութիւն մտաց մեր յԱստուծոյ է, միջնորդութեամբ հրեշտակաց կամ առանց միջնորդի: Երրորդ. լոյս ասի աւրինակաբար, զի Բանն Աստուած ընդհանուր գործովքն, զոր արար եւ խնամեաց, այլ եւ մարդկութեամբն, զոր գործեաց, աւրինակ լուսոյ եցոյց:

Երրորդ հարց. Վասն է՞ր ասէ լոյս մարդկան եւ ոչ՝ հրեշտակաց:

<sup>1</sup> Բ չիք

<sup>2</sup> Բ չիք ճանաչմամբ... զի բնական

<sup>3</sup> Բ Երկու

<sup>4</sup> Բ չիք նախ տեսանի ... յաւիտենական իմաստութիւն

Պատասխան. Ասէ Ոսկեբերանն, եթէ՝ «Կամէր աւետարանիչս ճառել վասն մարդեղութեան Քրիստոսի, որ արար փրկութիւն մարդկան»: Եւ Որոգինէս ասէ, թէ՝ «Այսու ցուցանէ զամենայն բանաւոր մարդիկ<sup>1</sup> ստեղծուածս»: Բայց գիտելի է, զի որպէս Բանն Աստուծոյ ըստ Աստուածութեան է, որով ամենայն ինչ եղեւ ըստ բնական էութեան իւրեանց ի Բանէն, նոյնպէս եւ Բանն մարմնացեալ է, որով ամենայն ինչ եղեւ ըստ<sup>2</sup> շնորհացն: Եւ ամենայն ոք, որ շնորհաց կենդանութիւն ունի, Բանն մարմնացեալ կեանք է նմա, որպէս զրէ Պաւղոս գաղատացւոց. «Կենդանի եմ այսուհետեւ, ոչ ես, այլ կենդանի է յիս Քրիստոս» (Գաղ. Բ 20), որում փառք յաւիտեանս, եւ յաւիտենից յաւիտեանս. ամէն:

### Վասն Յովհաննու

Նախ եցոյց աւետարանիչս զԲանին Աստուծոյ անմարմին ծնունդն յաւիտենից, եւ զներգործութիւն, այժմ ցուցանէ աստ զժամանակաւոր մարդեղութիւն, յորժամ ասէ.

Բան. «Եղեւ այր նի առաքեալ յԱստուծոյ, անուն<sup>3</sup>» (Յովի. Ա 6):

Մեկնութիւն<sup>4</sup>. Եւ աստ ցուցանէ նախ զառաքումն Կարապետին: Երկրորդ. ցուցանէ զգալուստ Փրկչին, ըստ այնմ. «Եր լոյսն ծշմարիտ» (Յովի. Ա 9):

Եւ աստ Յովհաննու չորս գովութիւն դնէ. նախ՝ այր մի ասէ, զի մաքուր էր վարուք եւ ուղիղ մտաւք: Եւ նի, զի<sup>5</sup> սոսկ մարդ էր միայն: Երկրորդ. յԱստուծոյ առաքեալ եւ ոչ ի մարդոյ կամ ի հրեշտակէ: Երրորդ. անունն Յովիաննէս, որ թարգմանի «շնորհք»: Զանուն սորա Աստուած կոչեաց Գաբրիէլիւ, նա եւ զանունն իսահակայ Աստուած կոչեաց, որ է «խնդութիւն»: Չորրորդ. ի գործոյն ասէ. «Սա եկն ի վկայութիւն Որդույն Աստուծոյ» (Յովի. Ա 7): Եւ բազում մարգարէք գոյին վկայք, զՅովհաննէս յիշէ վասն վեցից. նախ՝ զի մաւտ էր, երկրորդ՝ զի սուրբ էր, երրորդ՝ զի շնորհ մարգարէութեան ունէր, չորրորդ՝ զի վարդապետ էր, հինգերորդ՝ զի վկայեաց Տեառն, վեցերորդ՝ զի մկրտեաց զնա:

Եւ չորիցս վկայեաց. նախ՝ բանիւ ասէր. «Գայ զաւրագոյն քան զիս» (Սարկ. Ա 7): Երկրորդ. ի ջուր մկրտելովն ասէր. «Ես մկրտեմ զձեզ յանուն այնմ, որ գալոցն է» (հմնտ. Գործք Բ 38, ԺԹ 5),

<sup>1</sup> Ը մարդկան

<sup>2</sup> Ը ըստ քոլոր

<sup>3</sup> Ա չիք Աստուծոյ, անուն, Բ Աստուծոյ անուն, Ը չիք անուն

<sup>4</sup> Բ չիք

<sup>5</sup> Բ չիք

**որպէս գրեալ է ի Գործս Առաքելոցն:** Երրորդ. յորժամ մկրտեաց՝ ասէ. «Ես վկայեցի, եթէ սա է Որդին Աստուծոյ» (Յովի. Ա 34): **Զորրորդ.** դնելովն զանունն ասէ. «Ահա Գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշ-խարհի<sup>1</sup>» (Յովի. Ա 29) եւ այլն:

**Յորժամ եցոյց աւետարանիչս զմեծութիւն Կարապետին Քրիստոսի, զկնի բառնայ զմոլորութիւն, զի մի կարծեսցեն զնա Քրիստոս գոլ, որպէս ոմանք կարծեցին վասն մեծագոյն սրբութեան իւրոյ, յորժամ առաքեցին առ նա յերուսաղէմէ Հարցանել, թէ՝ նա<sup>2</sup> իցէ Քրիստոսն, վասն որոյ ասէ.**

Բան. «Ո՛չ էր նա լոյսն» (Յովի. Ա 8):

**ՄԵԼԱՆՈՒՐԻՆ. Նախ՝ կարապետ էր լուսոյն, որպէս արուսեակ:** Երկրորդ. նախընթաց թագաւորին մեծաշուք լինի, բայց ի գալ թագաւորին նուսաստանայ, որպէս աստեղք ի ծագել արեգականն: Երրորդ. ասէ՝ ո՛չ է բաւական լուսաւորել զմարդիկ, այլ ուղղաւորել<sup>2</sup> առ լոյսն:

### Վասն լուսոյն

**Յորժամ ճառեաց աւետարանիչս զգալուստ Կարապետին, այսուհետեւ ճառէ զգալուստ Փրկչին՝ ասելով.**

Բան. «Էր լոյսն ճշմարիտ» (Յովի. Ա 9):

**ՄԵԼԱՆՈՒՐԻՆ. Եւ աստ երեք ինչ ցուցանէ. նախ ցուցանէ Հարկաւոր գոլ զգալուստ Փրկչին, յորժամ ասէ. «Որ լուսաւոր առնէ զամենայն մարդ, որ գալոց էր յաշխարհ<sup>3</sup>» (Յովի. Ա 9): Երկրորդ. ցուցանէ զպտուղ գալստեան իւրոյ, յորժամ ասէ. «Իսկ որ ընկալան զնա, ետ նոցա իշխանութիւն» (Յովի. Ա 12): Երրորդ. ցուցանէ զկերպ գալստեանն՝ ասելով. «Եւ Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ» (Յովի. Ա 14):**

**Վասն առաջնոյն, որ ասէ. «Էր լոյսն ճշմարիտ» (Յովի. Ա 9), Երկու ինչ գիտելի է. նախ՝ զի բնական բանականութիւնս մեր ոչ հասանէ ի ճանաչումն Աստուծոյ, եթէ ոչ ի ստեղծուածոցդ, եւ ամենայն ստեղծուածք հեռի են եւ պակաս ի գիտութենէն Աստուծոյ: Երկրորդ. գիտելի է, զի Հին Կտակարանքն անկատար էին վասն Աստուծոյ յայտնել, զի աւրինակաւ էին իբրեւ ստուերք վասն այն նախքան զգալուստն Քրիստոսի մարդիկ զանազան կերպիւ մոլորեալ էին առ ի ճանաչել զԱստուծ, վասն որոյ եկն լոյսն**

<sup>1</sup> А В չեք զմեղս աշխարհի

<sup>2</sup> С ուղեւորել

<sup>3</sup> А В չեք յաշխարհ

ճշմարիտ եւ զճշմարիտ Աստուած գիտութիւն ուսոյց մարդկան եւ եբարձ զկուապաշտութիւն:

Իսկ աւետարանիչս երեք պատճառաւ ցուցանէ զՔրիստոս լոյս, առ ի լուսաւորել զամենայն մարդ. նախ՝ վասն այսմ լուսոյ ճշմարտութեան, որպէս ասէ. «Եր լոյսն ճշմարիտ» (Յովհ. Ա 9): Երկրորդ. վասն այսմ լուսոյ մերձաւորութեան, որպէս ասէ. «Յաշխարիի էր» (Յովհ. Ա 10): Երրորդ. վասն նորա յայտնութեան, որպէս ասէ. «Եւ աշխարի նովաւ եղեւ» (Յովհ. Ա 10):

Վասն առաջնոյն գիտելի է, զի իր ինչ երեք կերպիւ ճշմարիտ ասի. նախ՝ որպէս ճշմարիտն ընդդէմ բաժանի ստին: Երկրորդ. որպէս բաժանի ճշմարիտն<sup>1</sup> ընդդէմ աւրինակին: Երրորդ. որ բաժանի ընդդէմ հաղորդակցին, քանզի մասնակիցն եւ հաղորդակիցն ոչ է կատարեալ ճշմարտութիւն, որպէս այն, որ բնութեամբ է ճշմարտութիւն:

Արդ, ըստ առաջին կերպին բնական լոյս մարդկան խաւարեալ էր ստութեամբ ի ճանաչումն Աստուծոյ, որպէս Պաւղոս ի<sup>2</sup> Հռովմայեցիս, թէ. «Նանրացան ի խորհուրդս իւրեանց եւ խաւարեցան անմտութեամբ սիրտք նոցա» (Յովհ. Ա 21): Եւ յայտ է յԱրիստոտէլէ, որ ի մէջ ամենայն իմաստասիրացն ճշմարտագոյն խաւսէր, սակայն նա բազում մոլորեցաւ վասն աշխարհի, զի յաւիտենից ասաց, եւ վասն հրեշտակաց, ե՛ւ հոգւոց, ե՛ւ երանութեանց, եւ այլոցն սուտ գրեաց:

Երկրորդ. լոյս ճանաչմանն Աստուծոյ եղեւ ի Հին Կտակարանս, սակայն ստուեր եւ աւրինակ էր նորոյս Աւետարանի:

Երրորդ կերպ. լոյս հրեշտակայինն պակասէր ի ճշմարիտ լուսոյն, զի մասնաւոր էր եւ պատահմամբ, բայց աստուածային լոյսն ճշմարիտ է, զի էութեամբ եւ բնութեամբ է լոյս եւ ոչ պատահմամբ: Եւ այսու երեւին, զի նա է բաւական լուսաւորել զամենայն, զի որ ինչ այնպիսի էութեամբ պատճառ է, զի եւ այլքն այնպիսի լինիցին, որպէս հուր, զի ջերմ է բնութեամբ, պատճառ է, զի եւ այլքն ջերմ լինիցին: Եւ այս լուսաւորութիւնս յատկանայ Որդոյն Աստուծոյ, զի Բանին է լուսաւորել զամենեսեան, վասն որոյ ասէ աւետարանիչս. «Եր լոյսն ճշմարիտ» (Յովհ. Ա 9), այսինքն՝ առանց ստութեան, առանց ստուերականութեան եւ առանց մասնակցութեան, զի լոյս է ըստ էութեան իւրոյ, վասն այն ամենեցուն լուսաւորիչ է, որպէս եւ զկնի ասէ.

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> C չեք

Բան. «Որ լուսաւոր առնէ զամենայն մարդ<sup>1</sup>» (Յովի. Ա 9):

**ՄԵԼԻՆՈՒԹԻՒՆ<sup>2</sup>.** Նախ՝ ի կողմանէ լուսոյն պարտ է իմանալ, իսկ թէ ոմանք ոչ լուսաւորին, այս ի կողմանէ նոցա է, որք ոչ ընդունին գհեղումն լուսոյն:

**ԵՐԿՐՈՐԴ.** լոյս զբնական բնաւորութիւն<sup>3</sup> ասէ, զոր Աստուած շնորհէ ամենեցուն առհասարակ, բարեաց եւ չարեաց: Իսկ որ ասէ. «Լուսաւոր առնէ զամենայն մարդ եկեալ յաշխարհ» (Յովի. Ա 9) եւ զայս ոչ է պարտ իմանալ, թէ մարդիկ յայլ աշխարհէ եկին յայս աշխարհս<sup>4</sup>, եւ կամ հոգիք նոցա ի սկզբանէ աշխարհի ստեղծան եւ ապա ի մարմին գան ըստ դիպման ժամանակին<sup>5</sup>, որպէս ումանք հերձուածողք իմանան:

Բայց աւետարանիչս սոյնպէս ասէ. նախ՝ առ ի ցուցանել, թէ հոգի բանական արտաքուստ լինի ի մեզ յԱստուծոյ եւ ոչ ի բնութենէ: Եւ հոգի աստ նարդ ասի, զի երբեմն ի պատուական մասնէ զբոլորն կոչէ, ըստ այնմ. «Եւթանասուն եւ հինգ ոգիք մտին յեղիպտոս» (տես ԾԱՆԴ. ԽԶ 27):

**ԵՐԿՐՈՐԴ.** գալ ասէ նոցա, որք վերստին ծննդեամբ շնորհաց յաշխարհ առաքինութեանց գան, եւ ոչ վասն նոցա, որք յաշխարհ մեղաց անկանին: **ԵՐՐՈՐԴ.** գալ յաշխարհս ցուցանէ գալ բնական ծննդեամբ կամ բանաւորութեամբ<sup>6</sup>, յորժամ ի չափ գիտութեան հասանիցէ:

**ԱՅՍ ԸՍՏ ԱՅԼ ՎԱՐԴԱՎԱՓԵՏՈՎ ՄԵԼԻՆՈՒԹԻՒՆ:**

**ԴԱՐՁԳՈՒՔ ԱՅԺՄ Ի ԲԱՆՆ ՎԱՐԴԱՎԱՓԵՏՈՎ ՄԵՐ,** որ ասէ.

Բան. «Եր լոյսն Ծշմարիտ» (Յովի. Ա 9):

**ՄԵԼԻՆՈՒԹԻՒՆ.** Հինգ բան ցուցանէ. նախ ասէ՝ Էր, այսինքն՝ անեղ, անսկիզբն, անժամանակ: Զի թէպէտ եղեւ ի կուսէն ի ժամանակի, այլ անսկիզբն, անժամանակ եւ անեղ է: Եւ թէպէտ եղեւ ի ծառայի կերպարանս, այլ Տէր է, եւ այլն ամենայն նոյնպէս:

**ԵՐԿՐՈՐԴ.** ասէ՝ լոյսն՝ այսինքն՝ ոչ շնորհաւք ունի զլոյսն, այլ անեղ եւ անսկիզբն եւ անժամանակ: Եւ բնութեամբ ի Հաւրէ, եւ միացաւ ի մարմնի:

<sup>1</sup> Ը մարդիկ

<sup>2</sup> Տ ԵՒՔ

<sup>3</sup> բանաւորութիւն

<sup>4</sup> Տ այս յաշխարհս

<sup>5</sup> Տ ժամանակի

<sup>6</sup> Տ գալ բանաւորութեամբ

<sup>7</sup> Ա Տ Եցոյց

**ԵՐՐՈՐԴ.** ասէ՝ ճշմարիտ: **ԶՈՐԻՒՔ** իմանի. նախ՝ զի անեղ լոյս, երկրորդ՝ իմանալի, երրորդ՝ անփոփոխ, չորրորդ՝ անստուեր: Իսկ լոյս արեգականն չորիցս այս ընդ դէմ է:

**ԶՈՐԻՐՈՐԴ.** ասէ՝ լուսաւորեաց, եւ այս չորս կերպիւ. նախ՝ հաւատով, երկրորդ՝ Աւետարանաւ, երրորդ՝ մկրտութեամբ, չորրորդ՝ սուրբ գործով, հինգերորդ՝ ասէ. «Լուսաւորէ զամենայն մարդ» (Յովի. Ա 9):

**ԵՐԿՐՈՐԴ.** Քրիստոս զամենայն ոք լուսաւորէ, այլ ոմանք ի խաւարի իւրեանց կամաւն մնան, որպէս արեգակն զամենայն լուսաւորէ, այլ կոյրն ոչ տեսանէ, եւ որ խփէ զաչսն, կամաւ խաւարին:

**ԵՐՐՈՐԴ.** զայն ասէ, որ ի կատարածի ամենայն լեզու խոստովան լիցին ըստ առաքելոյ, եւ ամենայն ոք, որ տեսանէ զթիսուսի փառս Հաւը՝ արդարք եւ մեղաւորք, թէպէտ ոչ հաւասար տեսլեամբ:

**ԶՈՐԻՐՈՐԴ.** ճանաչումն կրկին է, որպէս յերկրի զթագաւորս այլ ազգ տեսանեն մերձաւորքն եւ<sup>1</sup> այլ ազգ<sup>2</sup> լսեն հեռաւորքն, սոյնպէս զՔրիստոս բազում կարծեն գերագոյն, քան զմարդարէս եւ յԱստուծոյ եկեալ, բայց ազգս քրիստոնէից միայն հաւատամք զնա Որդի Աստուծոյ եւ Տէր ամենայնի:

**ՀԻՆԳԵՐՈՐԴ.** ասեն, թէ նա, որ լոյսն էր ճշմարիտ, ստեղծ զլոյսն<sup>3</sup> արեգականս, որ լուսաւորէ զաշխարհս:

### Վասն աշխարհի

**Բան.** «Յաշխարիի էր» (Յովի. Ա 10):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Նախ ասաց. «Բանն էր առ Աստուած», եւ այժմ, թէ՝ յաշխարիի էր: Անդ զանձնաւորութիւն ասաց եւ աստ զէութիւն Աստուածութեան, որ անսահման է: Դարձեալ՝ զի անձամբ առ Հայր է էակցեալ եւ բնութեամբ ի մարմնի միաւորեալ, շնորհաւք յամենայն սուրբս բնակեալ եւ խնամաւք յամենայն տիեզերս, որ կը զամենայն բանիւ զաւրութեան իւրոյ: Եւ սոքա բնութեամբ են առ Աստուած, այլ պարզ բնութիւն Աստուծոյ յերիս անձինս

<sup>1</sup> A չիք

<sup>2</sup> C չիք

<sup>3</sup> C զլոյս

միայն տեսանի եւ ոչ ի քարի կամ ի փայտի: Եւ այլք ասեն, թէ իր ինչ գոլ ի տեղի ինչ երեք կերպիւ է. նախ՝ ըստ կարողութեան, որպէս թագաւորն է ի բոլոր թագաւորութիւն: Երկրորդ. ըստ մերձաւորութեան, որպէս թագաւորն յապարանս բազմեալ եւ շուրջ զամենայն տեսանէ, որ ի տանն իցեն: Երրորդ. ըստ էութեան, որպէս թագաւոր նստի ի պատշաճաւոր տեղի, որ զուգի ըստ մարմնոյ նորա:

Իսկ այս երեք կերպիւս Աստուած է յամենայն տեղիս. նախ՝ զաւրութիւն նորա յամենայն իրս տարածի: Երկրորդ. զի ամենայն ինչ մերկ եւ յայտնի է առաջի նորա: Երրորդ. զի ըստ էութեան յամենայն տեղիս գոյ: Եւ այս յայնմանէ երեւի, զի Աստուած ոչ միայն տայ զգոլն ամենայն իրաց, այլ եւ պահէ զգոլն ամենայն իրաց:

Բան. «Եւ աշխարհ նովաւ եղեւ» (Յովի. Ա 10):

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Նախ ասէ՝ Եղեւ, զի մի յարակից եւ յաւետակից կարծեսցես Աստուածոյ զերկին եւ զերկիր, այլ եղեալ յոչնչէ: Երկրորդ. զի մի կարծեսցես զԲանն ըստ սոսա եղեալ, այլ Արարիչ ամենայնի:

Բան. «Եւ աշխարհ զնա ոչ ծանեաւ» (Յովի. Ա 10):

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Աշխարհասէրք եւ մարմնասէրք ի մարդկանէ յան է<sup>1</sup>, որ ասէ առաքեալ. «Սէր աշխարհիս թշնամութիւն է առ Աստուած» (Յակ. Դ 4): Եւ զայսմանէ ասէր Տէրն. «Գայ իշխան աշխարհիս այսորիկ<sup>2</sup>, եւ յիս [ինչ ոչ գտանե]» (Յովի. ԺԴ 30):

### Թէ քանի է աշխարհ

Դարձեալ զիտելի է, զի ըստ Հոմերոսի երեքն են աշխարհ, այսինքն՝ Աստուած իմանալի աշխարհ, որ է նախագաղափարն Աստուածոյ, եւ աշխարհս զգալի<sup>3</sup>, որ է յերկնէ եւ յերկրէ բաղկացեալ<sup>xxvii</sup>, ըստ Պղատոնի, իսկ մարդու՝ իմանալի եւ զգալի աշխարհ, զի ունի զնմանութիւն երկնի եւ երկրի, իմանալեաց եւ զգալեաց<sup>xxviii</sup>:

Վասն առաջնոյն ասէ՝ յաշխարհի էր, վասն երկրորդին՝ աշխարհս նովաւ եղեւ, վասն երրորդին՝ աշխարհ զնա ո՛չ ծանեաւ, այսինքն՝ ոչ բոլոր սեռ մարդկան, այլ աշխարհասէրքն միայն, որպէս ասացաւ:

<sup>1</sup> Բ չեք

<sup>2</sup> Ա Բ չեք

<sup>3</sup> Բ եւ սոյնպէս զգալի

### Վասն գալստեան Տեառն

Բան. «Յիւրան Եկն» (Յովի. Ա 11):

**ՄԵԿՆՈւԹԻՒՆ. Ի ՎԵՐԱՅ Այսմ բանի ԵՐԻՍ ԻՆՀ ՄԵՍԱՆԵԼԻ Է.**

**Առաջին՝ թէ որպէ՞ս եկն, զի յաշխարհի էր եւ տեղիք ոչ է թափուր ի նմանէ:**

**Ասեմք, թէ գալն Աստուծոյ զմարմնով երեւելն ասէ:**

**ԵՐԿՐՈՐԴ. ՄԵՍԱՆԵԼԻ Է, թէ ընդէ՞ր յայս ժամանակս եկն եւ ոչ յառաջ կամ յետոյ: Պատասխանէ Ոսկեբերանն. «Որպէս բժիշկ հիւանդաց, թէ նախ քան զժամանակն դեղ տայ, ի ցաւ փոխի եւ ի մաղձ դառնայ, եւ ոչ է յաւգուտ, եւ թէ կարի եւս յետոյ, յայն ժամն ցաւն զբնութիւն յաղթէ եւ ոչինչ աւգոտէ: Այլ ի միջին ժամանակն տայ, զի յայն ժամ կարաւտանայ հիւանդն դեղոյ եւ փոխի յառողջութիւն: Սոյնպէս եւ Քրիստոս, թէ յառաջ էր եկեալ, ոչ հաւատային մարդիկ վասն երկու պատճառի<sup>1</sup>. նախ՝ զի ոչ գիտէին զգալուստ նորա, զի ոչ փափագէին, եւ թէ յետին ժամանակն, եւ այս վնաս էր վասն երկու պատճառի. նախ՝ զի մարդիկ յուսահատեալք լինէին ի գալստենէն Քրիստոսի: Երկրորդ<sup>2</sup>. զի այսքան բազմութիւն մարդկան կորուսեալ լինէին անհաւատութեամք: Այլ ի միջին ժամանակն եկն, որ ակն ունէին գալստեանն Քրիստոսի եւ փափագէին, յայնժամ եկն եւ ետ մեզ առողջութեան դեղ զմարմին եւ զարիւնն իւր ի սովեալ ժամուս, եւ մեք հաւատով ընկալաք զփրկութիւն»:**

### Վասն ՀՐԵՒՑ

**ԵՐՐՈՐԴ. ՄԵՍԱՆԵԼԻ Է, որ ասէ՝ իւր: Եւ ասեմ, թէ իւր անուանէ զհրէայսն վասն տասն պատճառի. նախ՝ վասն ամենայն ազգաց ընդունելոյ եւ ժողովելոյ զնոսա: ԵՐԿՐՈՐԴ. Եղեւ բաժին Տեառն ժողովուրդ իւր Յակոբ: ԵՐՐՈՐԴ. զի յազգէ նոցա մարմնացաւ: ԶՈՐՐՈՐԴ. նոցա քարոզեաց եւ սքանչելիս գործեաց: Հինգերորդ. ի հինն Որդի անդրանիկ կոչեաց: Վեցերորդ. այգի եղեւ սիրեցելոյն ասէ: Եւթներորդ. նոցա էին հարք եւ մարգարէք: Ութերորդ. նոցա ետ զաւրէնս եւ զաւրինակս: Իններորդ. նոցա էր<sup>3</sup> աւետիս եւ խոստմունք: Տասներորդ. խաշն եւ ոչխար կոչեաց զհովուել զնո-**

<sup>1</sup> Ըլք նախ՝ զի ոչ գիտէին ... վասն երկու պատճառի

<sup>2</sup> Ը եւ դարձեալ

<sup>3</sup> Ը ետ

սա եւ նոքա ոչ ընկալան, այլ խաչեցին: Իսկ հեթանոսք ոչ մի յայսցանէ ոչ ունէին եւ հաւատացին:

### Վասն Հաւատոց

Իսկ յորժամ ճառեաց աւետարանիչս զհարկաւորութիւն գալստեանն Փրկչին, զկնի ճառէ զպտուղ գալստեան նորա, յորժամ ասէ.

Բան. «Իսկ որք ընկալան զնա» (Յովհ. Ա 12):

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Այսինքն՝ հաւատով եւ սիրով ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել: Գիտելի է, զի հաւատքն առաջին շնորհք է մարդկան, եւ հաւատովն բազում ինչ պարզեւի. նախ՝ զՔրիստոս հաւատով ընդունիմք, երկրորդ՝ զԱւետարանն, երրորդ՝ զորդեգրութիւն, չորրորդ՝ զՀոգին Սուրբ, հինգերորդ՝ զթողութիւն, վեցերորդ՝ զկեանքն, եւ զայլ բարիսն հաւատոյ, զոր թուէ առաքեալ ի յերայեցւոց:

Հարց. Զի՞նչ է, որ կրկնէ զհաւատն. «Որք ընկալան զնա, ~ ասէ, ~ եւ որոց հաւատացեն յանուն նորա» (Յովհ. Ա 12:13):

Պատասխան. Զորս է միտքն, նախ՝ զի կրկին է լոյս հաւատոյն, այսինքն՝ բնական լոյս մտաց մեր եւ լոյս շնորհացն Աստուծոյ: Երկրորդ. սրտիւ հաւատալ եւ բերանով խոստովանելն: Երրորդ. գիտութեամք հաւանել եւ պարզապէս հաւատքն: Չորրորդ. անտեսակ եւ տեսակաւոր, որ է մեռեալ եւ կենդանի հաւատ:

Հարց. Զի՞նչ է անխտիրն ամենայն ումեք:

Պատասխան. Նախ՝ հաւատան, որ ոք հաւատայ, հաւատացեալ կոչի: Երկրորդ. մկրտութիւն, թէ ծեր<sup>1</sup> է, թէ տղայ, անխտիր սրբութիւն: Երրորդ. խոստովանել զմեղս, թէ մեծ, թէ նուազ: Չորրորդ. ճգնութիւն եւ<sup>2</sup> հեղումն արեան, եւ այլն նմանապէս:

### Վասն մկրտութեան մերոյ

Հարց. Ընդէ՞ր ոչ ասէ. «Արար որդիս Աստուծոյ», այլ՝ նոցա ետ<sup>3</sup> իշխանութիւն:

Պատասխան. Վասն երեք պատճառի. նախ՝ որ ոք զԱստուծոյ որդեգրութեան պատկերն յինքեան նկարէ, բազում արթնութիւնն եւ հոգս պարտ է ստանալ, զի պատկերն Աստուծոյ անջինջ մնասցէ:

<sup>1</sup> C չեք

<sup>2</sup> A B չեք

<sup>3</sup> C ետ նոցա

Երկրորդ. զի ոչ ոք բռնութեամբ կարէ ի նմանէ շորթել զպատիւն զայն, զի իշխան է քաւել, թէ ինքն իւր կամաւ զրկի:

Երրորդ. զի իշխանութեամբ զմեծութիւն իրին ցուցանէ:

Իսկ ասելն՝ որդիս, նախ՝ զբազումսն նշանակէ, երկրորդ՝ զշնորհաւքն, երրորդ՝ զի ամենեքեան որդիք ծնանին եւ ո՛չ դստերք, ըստ այնմ. «Ես ասացի, թէ աստուածք [իցէք], կամ որդիք Բարձրելոյ ամենեքեան<sup>1</sup>» (Սաղմ. ԶԱ 6), զի այլ է մարմնաւոր ծնունդն:

Բան<sup>2</sup>. «Ոյք ոչ յարենէ» (Յովի. Ա 13) եւ այլն:

Մեկնութիւն<sup>3</sup>. Ի յասացեալ բանիցս կարեն ոմանք կասկածել, թէ մարդիկ մարմնաւորապէս ծնանին յԱստուծոյ, վասն որոյ բառնայ զայս կարծիս՝ ասելով. «Ոյք ոչ յարեանց»: Եւ պարտ է բազմաւորական գրել, զի սոյնպէս է ի յունին, զի առ ի ծնունդ մարդոյ կրկին արիւն խնդրի, այսինքն՝ արիւն ի կողմանէ մաւրն, որ է արիւն դաշտանին, եւ արիւնն այն է նիւթ մարմնոյ տղային: Եւ ի կողմանէ հաւր խնդրի սերմն, որ ունի զաւրութիւն ձեւացուցանել զմարմին մանկանն, զի այն սերմն է յաւելուած կերակրոյ սննդականին եւ զբնութիւն արեան ունի: Եւ զայսպիսի արիւնքս բառնայ աւետարանիչս ի հոգեւոր ծննդենէ, յորժամ ասէ. «Ոյք ո՛չ յարեանց ծնան»: Բայց ոմանք մեկնեն, թէ յաղագս հրեշտակաց եւ յաղագս Աղամայ ասէ. «Ոյք ո՛չ յարենէ», այլ յանդիմանին ի բառէն, որ ասէ. «յԱստուծոյ ծնան», զի նոքա ստեղծեալք են յԱստուծոյ եւ ոչ թէ՝ ծնեալ: Ապա յայտ է, զի չնորհք մկրտութեան հաւատացելոց գերազանց է պատուով, քան զհրեշտակաց եւ զԱղամայն: Եւ գիտելի է, զի չորս բառիւս զհոգեւոր ծնունդն ի մարմնականաց որոշէ, որպէս սահման մարդոյ զմարդն յատկացնէ եւ սահման հրեշտակի՝ զհրեշտակն. նախ՝ զի մարմնոյ որդիք յարենէ, այսինքն՝ ցանկութիւն սերման նախ արիւն է եւ փոխի ի սերմն եւ դարձեալ լինի արիւն, որպէս ցուցաւ, ըստ այնմ. «Մանկունք հաղորդեսցին արեան եւ մարմնոյ» (Եբր. Բ 14): Իսկ հաւատացեալքն ի Քրիստոս Հոգեւովն Սրբով ծնանին որդիս Աստուծոյ: Երկրորդ. մարմնոյ որդիք ի մարմնոյ ծնանին, այսինքն՝ ի կնոջէ, ըստ այնմ. «Առ մի ի կողիցն եւ ելից ընդ այնր մարմին» (Ծննդ. Բ 21), իսկ հաւատացեալքն՝ յաւազանէն: Երրորդ. մարմնոյ որդիք ի կամաց առն եւ կնոջ յառաջ գան եւ ո՛չ ինքեանց կամաւք, իսկ հաւատացեալքն ինքեանց կամաւք ծնանին եւ ոչ այլոց: Զոր-

<sup>1</sup> Ա Բ չեք

<sup>2</sup> Կ չեք

<sup>3</sup> Կ չեք

ըորդ. զի որդիք մարմնոյ ի քառասուն եւ հինգ աւրն ապա հոգեւորին եւ յինն ամիս եւ հինգ աւրն, ապա ծնանին: Եւ սոյնպէս ասեն իմաստունք, թէ երկուց սեղմանց խառնումն մածնուն ընդ իրար եւ յաւուրս վեց ի նմանութիւն թարախի մնայ, որպէս եւ է իսկ, եւ յետ այլ ինն աւուր<sup>1</sup> յարիւն փոխարկի: Եւ յետ այլ եւ երկոտասան աւուր<sup>2</sup> հաստատի, եւ յետ այլ եւս ութ եւ տասան աւուր ձեւանայ մինչ ի կատարումն անդամոցն հասանի, որ լինի աւուր քառասուն եւ հինգ: Իսկ հաւատացեալք ի նմին<sup>3</sup> ժամն եւ այլ շոյտ որդիս Աստուծոյ ծնանին սուրբ<sup>4</sup> աւագանաւն:

### Վասն Բանին մարդեղութեան

Իսկ աւետարանիչս յորժամ եցոյց զգալուստ Փրկչին եւ զպառող գալստեան նորա, զկնի ճառէ զկերպ գալստեան նորա, յորժամ ասէ.

Բան. «Բանն մարմին եղեւ» (Յովի. Ա 14):

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ<sup>5</sup>. Քանզի յորժամ ասաց. «Յիւրան եկն», մի գուցէ կարծիցեն ոմանք, թէ միայն հոգեւորապէս եկն, որպէս եկն նախ ի մարգարէսն, կամ թէ եկն միայն նոր ներգործութեամբ, որպէս իջեալ ասի, յորժամ զՍոդոմ հրդեհէր, վասն այն ասէ այլ կերպիւ եկն, այսինքն՝ զբնութիւնս միաւորելով ընդ իւրում Աստուծութեան, վասն որոյ ասէ. «Բանն մարմին եղեւ»:

Դարձեալ՝ ասաց զբարձրութիւնս մեր առաւել, քան զհրեշտակաց, զի յԱստուծոյ ծնաք եւ ի վեր<sup>6</sup> քան զԱղամայն, զի շնորհաւք որդիք Աստուծոյ եղաք: Այժմ ասէ զպատճառն, զի Որդին Աստուծոյ Որդի Մարդոյ եղեւ, վասն որոյ մեք եղաք որդիք Աստուծոյ: Եւ զի պատճառն եւ պատճառելին հակադարձին առ միմեանս, սոյնպէս վասն այն խոնարհեցաւ նա, զի մեք բարձրացուք<sup>7</sup>, վասն որոյ մեք բարձրացաք, զի նա խոնարհեցաւ: Եւ խոնարհիլն է մարմին լինելն եւ աղքատանալն, որ զաղքատ բնութիւնս էառ եւ անպատիւն, զի յայրի ծնաւ, եւ այլն:

<sup>1</sup> С չեք հաստատի, եւ յետ ... աւուր

<sup>2</sup> В եւ յետ այլ եւս ԺԲ եւս աւուր

<sup>3</sup> С առաջին

<sup>4</sup> А В չեք

<sup>5</sup> А В չեք

<sup>6</sup> А В չեք ի վեր

<sup>7</sup> С չեք վասն այն ... բարձրացուք

### Հարցումն Գէորգեայ եւ պատասխանի Գրիգորի

Նորին համշիրակի հարցումն<sup>1</sup>. որպէ՞ս իմանամք զբանն, թէ երեւեցաւ շնորհքն Աստուծոյ փրկիչ ամենայն մարդկան, զի Բանն բնութեամբ ծնունդ է Հաւը եւ շնորհաւք ծնաւ ի կուսէն, սոյնպէս ասելի<sup>2</sup> է, թէ՝ ո՛չ, աղաչեմք զքեզ:

Պատասխան. Ասեմք ի կարճոյ. նախ՝ ընդդէմ, եթէ յորժամ Բանն բնութեամբ Որդի է Հաւը եւ շնորհաւք Որդի կուսին, եւ մարմինն բնութեամբ Որդի կուսին եւ շնորհաւք Որդի Աստուծոյ Հաւը, յայնժամ լինի չորս որդիք. Երկու բնութեամբ եւ երկու շնորհաւք: Ահա նոր չար, եւս առաւել, քան զնեստորին, զի նա երկու որդի ասաց եւ զու չորս իմանաս:

Երկրորդ. ասեմք, թէ զի՞նչ բնութեամբն եւ զինչ շնորհաւք որդի: Ասեմք, եթէ<sup>3</sup> բնութեամբն ցուցանէ չորս ինչ, այսինքն՝ էութեամբ, անձամբ, գոյացութեամբ եւ միաւորութեամբ որդի, իսկ շնորհքն ընդ դէմ այսմ ցուցանէ չորս ինչ, այսինքն՝ որդեգրութեամբ եւ կոչմամբ եւ պատուվ եւ բնակութեամբ որդիք:

Ուսեալք զայս ասասցուք զերրորդն պարզապէս իբր ի ներքուստ. նախ՝ յորժամ ի մէջ մեր եւ Քրիստոսի համեմատես<sup>4</sup>, սոյնպէս ասա. «Մեք՝ շնորհաւք որդիք Աստուծոյ, եւ Քրիստոս՝ բնութեամբ, մեք՝ որդեգրութեամբ, եւ Քրիստոս՝ էութեամբ, մեք՝ կոչմամբ, եւ Քրիստոս՝ անձամբ, մեք՝ պատուվ, եւ Քրիստոս՝ գոյացութեամբ, մեք՝ բնակութեամբ որդիք, եւ Քրիստոս՝ միութեամբ Որդի Աստուծոյ: Նմանապէս ե՛ւ Աստուած ե՛ւ Տեր ե՛ւ<sup>5</sup> Յիսուս Քրիստոս, զի այլ կերպիւ է Հայր մեր, եւ այլ կերպիւ՝ Քրիստոսի, այլ կերպիւ Աստուած մեր, եւ այլ կերպիւ՝ Քրիստոսի<sup>6</sup>, ըստ որում ինքն ուսուցանէ. «Ելանեն [ես] առ Յայր[ն] իմ եւ առ Յայր ձեր, եւ Աստուած[ն] իմ եւ Աստուած ձեր» (Յովի. Ի 17): Սոյնպիսի իսկ յորժամ առ մեզ եւ առ Քրիստոս<sup>6</sup> եւ զբանն եւ զմարմինն տեսցես, սոյնպէս ասա (նախ ի կողմանէ Բանին). «Բանն էութեամբ Որդի Հաւը եւ էութեամբ Որդի մաւր: Անձամբ Որդի Աստուծոյ եւ անձամբ Որդի կուսի: Գոյացութեամբ Որդի Աստուծոյ եւ գոյացութեամբ Որդի մարդոյ»: Այսպէս, ի կողմանէ մարմնոյն սոյնպէս ասա. «Մարդկութիւն Քրիստոսի էութեամբ Որդի կուսին եւ էութեամբ Որդի

<sup>1</sup> Հ հարց

<sup>2</sup> Բ չեք բնութեամբն եւ ...: Ասեմք եթէ

<sup>3</sup> Կ չեք պարզապէս իբր ... Քրիստոսի համեմատես

<sup>4</sup> Բ չեք

<sup>5</sup> Կ չեք այլ կերպիւ Աստուած ... Քրիստոսի

<sup>6</sup> Կ չեք

**Աստուծոյ:** Մարմինն Քրիստոսի անձամբ Որդի մաւրն եւ անձամբ Որդի Հաւրն: Այլ ե՛ւ գոյացութեամբ, ե՛ւ բնութեամբ, ե՛ւ միութեամբ Որդի Մարիամու: Ե՛ւ գոյացութեամբ, ե՛ւ բնութեամբ, ե՛ւ միութեամբ մարմինն, որ ի կուսէն, Որդի Հաւր Աստուծոյ: Սոյնաէս Աստուած եւ Տէր եւ Յիսուս եւ<sup>1</sup> Քրիստոս. միաւրութեամբն ասս անխտրաբար եւ անորոշապէս զԱստուածն մարդ եւ զմարդն Աստուած, եւ այլն նմանապէս:

Այսքան ի պատասխանիսն Գչորդեայ:

Դարձցուք ի բանն, որ ասէ. «Բանն մարմին եղեւ» (Յովհ. Ա 14):

Գիտելի է, զի ընդգէմ է չորից հերձուածաց<sup>2</sup>. նախ՝ որ ասեն. «Առ աչաւք էառ մարմին»:

Ասէ. «Բանն մարմին եղեւ», զի մարմինն թանձր եւ շաւշափելի ոչ է առ աչաւք եւ ուրուական:

Երկրորդ. ասեն ոմանք, թէ որոշմամբ էառ զմարմինն, եւ բնակութեամբ:

Ասէ. «Բանն մարմին եղեւ» ո՛չ որոշմամբ, այլ միութեամբ, զի եղեւն զմիութիւն նշանակէ, այսինքն՝ Բանն Աստուած միացաւ ի մարմնի եւ նովաւ եղեւ մի՛ անձն եւ մի՛ բնութիւն, մի՛ կամաւք եւ մի՛ ներգործութեամբ, մի՛ Որդի Աստուծոյ եւ մարդոյ:

Երրորդ. ոմանք ասեն. «Եղեւ, ապա շփոթելի է»:

Ասէ. «Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ», որ ցուցանէ, թէ անշփոթ միացեալ է: Եւ ասէ սուրբն Կիւրեղ. «Տէ՛ր, ապաւէն եղեւ մեզ», եւ ո՛չ թէ ի Տէր լինելոյն փոխեցաւ եւ եղեւ ապաւէն, նոյնպէս Բանն մարմին եղեւ եւ ո՛չ փոխեցաւ ի բան գոլոյ: Եւ սուրբն նանա ասէ. «Որպէս մեք չնորհաւք եղաք որդիք Աստուծոյ եւ ոչ փոխեցաք ի մեր բնութենէս, սոյնապէս Բանն մարմին եղեւ եւ ոչ փոխեցաւ յաստուածային բնութենէն, այլ արար զմարմինն Աստուած, որպէս լոյսն առնէ զաւդն լոյս միութեամբ, եւ հուրն՝ զերկաթն ջերմ ոչ փոփոխմամբ, այլ միութեամբ»<sup>xxviii</sup>:

Չորրորդ. ոմանք ասեն. «Բանն մարմին եղեւ», ապա յայտ է, զի մարմին միայն էառ եւ ոչ՝ հոգի:

Ասէ աւետարանիչս յետոյ. «Աւանդեաց զՅոգին» (Յովհ. ԺԹ 30):

Եւ սուրբն Կիւրեղ ասէ, թէ «ի մասնէ կոչէ զբոլորն, որպէս այն առ քեզ ամենայն մարմին եկեսցէ, եւ տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն: Ոչ թէ միայն մարմինն առանց հոգւոյ, այլ

<sup>1</sup> B չիք

<sup>2</sup> A B հերձուածողաց

մարմին ասելով եւ զհոգին եցոյց, նոյնպէս եւ աստ զմարմին եւ զհոգին<sup>1</sup> ցուցանէ»:

Եւ Աստուածաբանն ասէ. «Մարմին էառ, զի զմարմինս փրկեսցէ, հոգի էառ, զի զհոգիս ազատեսցէ», վասն այն ասացին ի ժողովն Նիկիայ. «Որով էառ մարմին, հոգի, միտք<sup>2</sup> ճշմարտապէս»: Եւ այլ ոմանք ասացին զԲանն ընդ մարմնոյն լինել, եւ ոմանք ասեն անանձն եւ անգոյ զԲանն: Այսմ պատասխանեաց անդ, որ ասէ. «Ի սկզբանէ էր Բանն» եւ այլն:

### Բանին մարմին լինել

**Չորս ինչ հարցանելի է.**

Առաջին հարցանելի է. Որպէ՞ս եղեւ Բանն մարմին:

Պատասխան. Ասեմք, որպէս բանս գրովն մարմին լինի, եւ այս չորս կերպիւ. նախ՝ որպէս բանն անմարմին է եւ գրովն ճանաչի, նոյնպէս Բանն Աստուած ինքն ըստ ինքեան անմարմին է եւ մարմնով երեւեցաւ մեզ: Երկրորդ. որպէս բանն անորոշ<sup>3</sup> միանայ ի մելանն, սոյնպէս Բանն Աստուած անքակ միացաւ ի մարմնի: Երրորդ. գիրն ծածկէ զբանն, նոյնպէս եւ մարմին եւ հոգին ծածկեալ էր զԱստուածութիւն Քրիստոսի: Չորրորդ. որպէս թէ ոք<sup>4</sup> զգրեալ քարտէզն չարչարէ, բանն ընդ գրոյն անչարչարելի մնայ, նոյնպէս Բանն Աստուած միութեամբն ի մարմնի չարչարեցաւ եւ անչարչարելի մնաց, զի Աստուած էր:

Երկրորդ հարց. Վասն է՞ր ասէ. «Բանն մարմին եղեւ», եւ ոչ թէ՝ մարդ եղեւ կամ հոգի:

Պատասխան. Ոչ ասաց, թէ՝<sup>5</sup> մարդ եղեւ, նախ՝ զի մի՛ կարծեսցեն երկու անձն ի Քրիստոս, այլ՝ մարմին եղեւ<sup>6</sup>, զի մարմին եւ հոգին եւ միտքն միաւորեցաւ ի նախագոյացեալ անձն Բանին Աստուծոյ, որով դաւանի յերկուց բնութեանցն մի Տէր, մի Քրիստոս, մի անձն եւ մի բնութիւն, որպէս ցուցաւ ի վերոյ: Երկրորդ. ասեմք՝ ոչ ասաց հոգի, զի մի կարծեսցի զպատուական մասն առաւել, այլ՝ մարմին, որ ցուցանէ զընդհանուր միաւորութիւն: Զի թէ Բանն Աստուած զանարդ մարմինն միաւորեաց, առաւել հաւատալի է, որ զպատուականն միաւորեաց, որ է հոգին, որպէս ասէ

<sup>1</sup> Ե զհոգի եւ զմարմին

<sup>2</sup> Ե հոգի, մարմին եւ միտք

<sup>3</sup> Ե անորիշ

<sup>4</sup> Ա Յ չեք

<sup>5</sup> Կ չեք

<sup>6</sup> Կ չեք նախ՝ զի մի մարմին եղեւ

Աստուածաբանն, թէ՝ «Միջնորդիւ Հոգւոյն եղեւ մարմին»: Երբ ըորդ. ցուցանէ զառաւել խոնարհութիւն Բանին, զի ոչ միայն պատուական մասին միաւորեցաւ, որ է Հոգին, այլ եւ անարդ եւ նուաստ մասին, որ է մարմինն: Եւ չորրորդ. նարնին ասէ, զի ունի զհոգի ե՛ւ զմիտս, ե՛ւ զոսկերս, ե՛ւ զմասունս ընդ ինքեան: Նոյնպէս Բան ասէ, զի ունի զգոյացութիւն եւ զէութիւն եւ զբնութիւն ընդ ինքեան, զի ցուցցէ, թէ բոլոր Բանն բոլոր մարդ եղեւ եւ ոչ թէ մասն Բանին զմասն մարդոյն առեալ, այլ բոլորն զբոլորն առեալ միաւորեաց ընդ իւրում Աստուածութեան:

Երբորդ Հարց. Վասն Է՞ր Աստուած մարդ եղեւ եւ ոչ ի ձեռն հրեշտակաց կամ ի ձեռն մարդկան փրկեաց զմարդիկ:

Պատասխան. Ասեմք առաջին, թէ հրեշտակն ոչ կարէր փրկել, նախ՝ զի արարածք են, ոչ կարեն նորոգել եւ ոչ փրկել զմեզ: Երկրորդ. զփրկիչն մեր պարտ էաք պաշտել, եւ լինէր այն կոապաշտութիւն, այլ Արարիչն նորոգեաց եւ զՓրկիչն մեր պաշտելով լինիմք աստուածապաշտք: Առ երկրորդն ասեմք, եթէ մարդ ոչ կարէր փրկել վասն վեցից. նախ՝ զի մահկանացուք էին եւ ոչ կարէին զմեզ կենդանացուցանել, վասն որոյ անմահն Աստուած կենդանացոյց զմեզ մարմնովն: Երկրորդ. զի անկեալ էին ընդ մեղաւք եւ ոչ կարէին զմեզ արդարացուցանել, վասն այն Բանն Աստուած<sup>1</sup> անմեղ մարմնովն արդարացոյց զմեզ: Երբորդ. բնութիւնս մեր խոնարհեալ եւ ապականեալ էր, Բանն Աստուած բարձրացոյց զմեզ անապական մարմնովն: Զորրորդ. ցաւս մեր սաստիկ էր եւ ոչ կարէին արդարք կամ<sup>2</sup> մարդարէքն բժշկել, վասն այն ճարտար եւ իմաստուն բժիշկն Քրիստոս եկն եւ բժշկեաց զմեզ, ըստ այնմ. «Առաքեաց զԲան իւր եւ բժշկեաց զնոսա<sup>3</sup>» (Սաղմ. 62 20): Հինգերորդ. մեղքն Աղամայ անհուն էր, զի ընդդէմ Աստուծոյ էր, եւ աւրէնքն զայն բառնալ ոչ կարէր, զի հեռաւոր էր, վասն որոյ Աստուած մարդ եղեւ եւ երարձ զմեղքն: Վեցերորդ. որպէս ի պատկերս է տեսանել, յորժամ զձեւն նկարեն եւ ապա զգլուխն կցեն, սոյնպէս Աստուած զերկին եւ զերկիր եւ զամենայն ըստ կարգի արար եւ ի վեցերորդ աւուրն՝ զԱղամ: Եւ յետ յանցանացն յորժամ գլուխն արարածոցս մեռաւ, վասն որոյ հարկ եղեւ իջանել Բանին Աստուծոյ յորովայն կուսին եւ լինել երկրորդ Աղամ: Եւ այս հակառակ ընդդէմ, զի յառաջինն Աղամայ եւա ստեղծաւ, իսկ ի կուսէն Քրիստոս ծնաւ եւ եղեւ երկ-

<sup>1</sup> В չեք Բանն Աստուած

<sup>2</sup> С արդարքն եւ

<sup>3</sup> А В չեք

ըորդ Աղամ, եւ ապա կատարեցան երկինք եւ երկիր եւ ամենայն զարդք նոցա, զի չորք են արարածք. նախ՝ անշարժ էութիւնք, երկրորդ՝ շարժականք, երրորդ՝ զգայականք, չորրորդ՝ բանականք: Արդ, չորեքին սոքա գտանին առ մարդս եւ ի մարդանալն Քրիստոսի ամենեքեան սոքա կատարեցան ընդ մարդոյն, զի մարդս զբոլոր աշխարհս պարունակեալ ունի յինքեան:

Այս առ երրորդ հարց:

Վասն է՞ր Բանն մարմնացաւ եւ ոչ Հայր եւ Հոգին Սուրբ<sup>1</sup>

Զորրորդ Հարց. Թէ վասն է՞ր Բանն մարմին եղեւ եւ ոչ Հայր եւ Հոգի:

Պատասխան. Ասեն վարդապետք բազում պատճառս. նախ՝ զի Հայր անսկիզբն է, զի թէ լինէր սկսեալ մարմնով, յաշխարհս ոչ ոք լինէր անսկիզբն, այլ սկսեալն ի Հաւրէ Բանն սկսաւ ի մաւրէ:

Երկրորդ. Հայր առաքող է Որդւոյն Միածնի եւ Հոգւոյն ճշմարտի: Արդ, թէ մարմնացեալ էր, ոչ ոք լինէր առաքող, այլ երեք անձինքն՝ առաքեալ:

Երրորդ. թէ Հայր մարմնացեալ էր, լինէր որդի, յայնժամ անվայելուչ էր Հաւրն լինել երբեմն Հայր, երբեմն՝ Որդի:

Չորրորդ. թէ<sup>2</sup> Հոգին էր առեալ մարմին, շփոթեալ լինէին անձինքն, այլ ծնունդն ծնաւ եւ Որդին Որդի եղեւ:

Հինգերորդ. զի Բանն է պատկեր Հաւր եւ նկարագիր էութեան, եւ մարդն պատկեր Աստուծոյ եղեալ պարտ էր պատկերին առնուլ զպատկերն իւր:

Վեցերորդ. Որդին ըստ կոչման անձանցն է ի մէջ Հաւր եւ Հոգւոյն, նոյնպէս պարտ էր լինել միջնորդ ընդ մարդ եւ ընդ Աստուծոյ:

Եւթներորդ. Բանն էր իմաստութիւն Հաւր եւ Արարիչ մարդոյն, եւ յապականեալ մարդոյն<sup>3</sup> պարտ էր իմաստութեան Աստուծոյ նորոգել զնա:

Ութերորդ. Բանն է զաւրութիւն Աստուծոյ ըստ առաքելոյ. «Պարտ էր զաւրութեան Աստուծոյ Հասանել ի թիկունս տկարութեանս մարդկան» (Խնմտ. Յոռմ. Ը 26):

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> B զի

<sup>3</sup> C չեք եւ յապականեալ մարդոյն

Իններորդ. զի Բանն Աստուծոյ եւ բան մարդոյս ունին բազում հասարակութիւն, որպէս ցուցաւ ի սկիզբն Աւետարանին, վասն այն Բանն Աստուծոյ մարդացաւ:

Այսքան առ չորրորդ հարցումն:

### Վասն բնակելոյ ի մեզ

Բան. «Եւ բնակեաց ի մեզ» (Յովի. Ա 14):

Մեկնութիւն. Կրկին է բնակելն. նախ՝ միութեամբ, որպէս հոգին ի մարմինն բնակէ: Երկրորդ. որոշմամբ, որպէս մարմին ի հանդերձն բնակէ:

Արդ, միութեամբ բնակիլ ասի Բանին ի մարմնի, ըստ այնմ. «Ի նմա բնակէ ամենայն լրումն աստուածութեան մարմնապէս» (տես Կողոս. Ա 19), որ է էապէս, զի բունն եւ էն եւ գոյն զմի իր ցուցանէ. բնակից, էակից, գոյակից, իսկ որոշմամբ բնակիլ ասի, որպէս ի տեղի: Եւ սոյնպէս Բանն մարմնացեալ ի յերկրի շրջեցաւ եւ ընդ մարդկան բնակեցաւ, որպէս ասէ Բարուք. «Յետ այսորիկ ի յերկրի երեւեսցի եւ ընդ մարդկան շրջեսցի» (տես Բարուք Գ 38):

Արդ, չորս կերպիւ Բանն բնակեցաւ. նախ՝ միութեամբ ի մարմնի, երկրորդ՝ բաժանմամբ ի կոյսն, երրորդ՝ որոշմամբ<sup>1</sup> ի յերկրի, չորրորդ՝ շնորհաւք ի սուրբս:

### Թէ որպէս տեսաք զնա

Իսկ յորժամ աւետարանիչս եցոյց զծնունդ եւ զմարդեղութիւն Աստուծոյ Բանին, այժմ ցուցանէ, թէ որպէս աւետարանիչքն եւ առաքեալքն կարացին վերայ հասու լինել եւ ճանաչել զծնունդ եւ զմարդեղութիւն Բանին<sup>2</sup>, վասն որոյ ասէ.

Բան. «Եւ տեսաք զիառս նորա»<sup>3</sup>:

Մեկնութիւն. Տեսանելն կրկին է. նախ՝ մարմնով զմարմինն տեսին առաքեալքն եւ հոգով զԱստուածութիւն Քրիստոսի: Եւ տեսանելն հոգեւորագոյն է, քան զայլ զգայութիւնսն, վասն որոյ ասեմք. «տե՛ս զայդ բանդ, տե՛ս զհամն, եւ զայլն»: Տեսաք նեք զիառս նորա, այսինքն՝ մեք, որ առաքեալք եւ աշակերտք եմք Քրիստոսի, տեսաք, այսինքն՝ ճանաչեցաք զմեծութիւն անչափելի Աստուածութեան Քրիստոսի եւ զգործոց նորա, որ ի վեր է,

<sup>1</sup> Ա Բ չեք

<sup>2</sup> Բ Աստուծոյ Բանին

<sup>3</sup> Ա Ը Եւ տեսաք նեք զիառս

քան զամենայն ստեղծուածս, վասն այն ասէ աւետարանիչս. «Զփառս իբրեւ զՄիածնի առ ի Յաւրէ» (Յովի. Ա 14), այսինքն՝ ի նորին մեծութենէն, որ յայտնեցաւ մեզ, ծանեաք ճշմարտապէս զՔրիստոս Որդի Աստուծոյ, ոչ որպէս որդեգրութեամբ որդւոց, այլ Միածնին Որդի եւ մարմնացեալ Բանի, վասն այն Սիածին ասէ, եւ վասն մեծութեան մարմնացեալ Բանին ասէ Յոհաննէս ի կաթողիկեայց. «Որ էրն ի սկզբանէ, զորմէ լուաքն, որում ականատեսն իսկ եղաք<sup>1</sup> (ընդ որ Հայեցաքն], եւ ձեռք մեր շաւշափեցին ի վերայ Բանին կենաց» (Ա Յովի. Ա 1), այսինքն՝ որ է աղբիւր կենաց եւ կենդանութեան ըստ էութեան իւրոյ:

Եւ կեանքն յայտնեցաւ մարմնով, բայց յորժամ ասէ աւետարանիչս. «իբրեւ զՄիածնի» (Յովի. Ա 14), զիբրեւս զայս պարտ է իմանալ, թէ ճշմարտապէս Միածնի, զի որպէս եւ իբրեւն<sup>2</sup> երբեմն դնին վասն ճշմարտութեան, ըստ այնմ. «Իբրեւ զի բարի է Աստուած Իսրայէլի<sup>3</sup>» (Սաղմ. ՂԲ 1), եւ Պաւղոս ասէ ի կորնթացիս. «Սոյնպէս Համարեսցին զմեզ մարդիկ իբրեւ պաշտաւնեայս Աստուծոյ» (Տե՛ս Բ Կողմթ. Չ 4), եւ Յակոբոս ասէ. «Յանդիմանեալք յաւրինացն իբր աւրինազանցք» (Յակ. Բ 9), այսինքն՝ ճշմարտապէս յանցաւորք աւրինացն Աստուծոյ: Նոյնպէս եւ աստ ասէ. «Իբրեւ զՄիածնի առ ի Յաւրէ», այսինքն՝ որ է Քրիստոս ճշմարտապէս Միածնն Հաւր Աստուծոյ<sup>4</sup>: Արդ, առաքեալքն հնդիւք ծանեան զԱստուածութիւն Քրիստոսի. նախ՝ զի Հայր վկայեաց ի Յորդանան եւ ի Թաբաւր. «Դա է Որդի իմ սիրելի» (Սատթ. ԺԵ 15): Երկրորդ. ի հրեշտակացն սպասաւորութենէ, զի միայն Աստուծոյ երկրպագեն հրեշտակք: Երրորդ. զի ամենայն արարածք հնազանդիցին նմա՝ ծով եւ երկիր եւ լուսաւորքն: Զորրորդ. ի վարդապետութեանցն, զի իշխանութեամբ էր բան նորա: Հինգերորդ. ի մեծամեծ սքանչելեացն, զորգործէր:

Յորժամ ճառեաց աւետարանիչս զմեծութեան Քրիստոսի զծանաւութիւն իւր եւ առաքելոցն, զնոյն մեծութիւն մարմնապէս ցուցանէ՝ ասելով.

### Վասն շնորհաց

Բան. «Լի շնորհաւք» (Յովի. Ա 15):

Մեկնութիւն. եւ աստ երիս իրս տեսանելի է.

<sup>1</sup> A B չեք իսկ եղաք

<sup>2</sup> C իբրեւս

<sup>3</sup> C Իսրայելի Աստուած

<sup>4</sup> C Աստուծոյ Յաւր

Առաջին. Զի՞նչ է<sup>1</sup> պարզեւք եւ զի՞նչ շնորհք:

Պատասխան. Ասեմք, եթէ չորիւք որոշին. Նախ՝ զի պարզեւքն է որպէս տուրք, եւ շնորհքն որպէս<sup>2</sup> ձիր: Երկրորդ. պարզեւքն մարմնական եւ շնորհքն՝ հոգեկան: Երրորդ. պարզեւքն ի հինն, որպէս մարգարէիցն, եւ<sup>3</sup> շնորհքն ի նորս, որպէս առաքելոցն:

Չորրորդ. պարզեւքն է վասն խնդրոյ եւ շնորհքն վասն հաւատոց:

Երկրորդ. Տեսանելի է, զի՞նչ է շնորհքն ըստ ինքեան:

Պատասխան. Ասեմք նախ՝ եթէ շնորհք կոչին Սուրբ ըստ եւթնարփեան շնորհացն: Երկրորդ. շնորհքն է ձիր, որպէս ասացաւ: Երրորդ. շնորհքն է ի մէջ բնութեան եւ փառաց երկնիցն: Չորրորդ. շնորհքն է ի մէջ առաքինութեան եւ երանութեան վերին, եւ ունի յինքեան զերանութիւն եւ զփառս երկնային, որպէս արմատ՝ զծաղիկն, եւ սերմ՝ զպտուղն:

Երրորդ. տեսցուք զի շնորհաւք:

Պատասխան. Նախ ցուցանէ, թէ ո՛չ է ստացական, այլ ի Հաւրէ լի բնութեամբ եւ միաւորութեամբ: Երկրորդ. ոչ թերի եւ մասն, այլ բոլոր եւ կատարեալ միաւորութեամբ Բանին Աստուծոյ, որպէս զմարդն<sup>4</sup> աստուած ասի եւ Աստուածն՝ Մարդ: Երրորդ. ոչ չափաւոր, այլ անչափ, զի ոչ չափով տայ Աստուած զՀոգին Որդւոյ: Չորրորդ. լի եւ աննուազ շնորհէ մեզ զշնորհս իւր: Եւ այսու զանազանի ի մարդկանէ, թէ լի էր շնորհաւք սուրբն Ստեփաննոս եւ Աստուածածին Կոյսն, այլ ստացմամբ ունէին եւ ոչ՝ բնութեամբ, եւ ոչ տային այլոց, այլ բաւական ինքեանց:

Դարձեալ չորս կերպիւ ասի Քրիստոս լի շնորհաւք. Նախ՝ Աստուածութեան կարէ ասիլ լի շնորհաւք, ոչ պատահական շնորհաւք, որպէս մեր, այլ յաւիտենական ողորմութեամբ եւ գթութեամբ եւ սիրով, սոյնպիսի անպատճելի շնորհաւք լի ասի:

Երկրորդ. լի ասի ունակութեամբ շնորհաւք, զի անչափ ունի<sup>5</sup> եւ անչափ տայ եւ անբաժանելի մնայ ի տուողէն եւ յընդունողաց նորա:

Երրորդ. Քրիստոս լի ասի շնորհաւք, համեմատեալ առ աւրէնսն Մովսիսի: Նախ՝ զի աւգնութիւն շնորհաց ոչ տայր ի կա-

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> C չեք

<sup>3</sup> C չեք

<sup>4</sup> A B զի մարդն

<sup>5</sup> B ընդունի

տարել զաւրէնսն<sup>1</sup>, եւ երկրորդ, զի դժուարաւ պատմէր զյանցաւորսն: Իսկ Քրիստոս ընդդէմ այսմ նախ չնորհս ետ կատարել զտասն բան աւրինացն: Երկրորդ՝ ներումն եւ թողութիւն չնորհչեաց յանցաւորաց:

**Զորորդ՝** Քրիստոս լի ասի շնորհաւք, համեմատեալ առ քարոզութիւն իւր, զի զոր ինչ բանիւ քարոզէր, գործով կատարէր: Իսկ<sup>2</sup> Քրիստոս ո՛չ միայն լի ասի շնորհաւք, այլ եւ լի ճշնարտութեամբ, որպէս ասէ.

Բան. «Եւ ճշնարտութեամբ» (Յովի. Ա 15):

**Մեկնութիւն.** Եւ այս եւս չորս կերպիւ. նախ՝ զի ստեղծող<sup>3</sup> եւ ճշմարիտ Բանն միացեալ էր ի մարմնի եւ լի ճշմարտութեամբ, զի բանական հոգին Քրիստոսի զճանաչումն ամենայն իրաց, զոր Աստուած տեսանէր, ճշմարտութեամբ տեսանէր: Երկրորդ. համեմատեալ առ Մովսէս ճշմարիտ ասի, զի Քրիստոս ճշմարիտ Աստուած է, եւ Մովսէս՝ կոչմամբ եւ մարդ մահկանացու: Երրորդ. Աւետարանն ի վեր աւրինացն ճշմարիտ ասի, զի այն անցաւոր էր, եւ Աւետարանն՝ մնացական: Զորորդ. ճշմարիտ ասի, զի բնաւ ոչ ստեաց: Տեսցե՛ս վասն չնորհաց ի գիրս Հարցմանց, յերրորդ հատորն ի մետասաներորդ համարն<sup>xxxxix</sup>:

Յորժամ եցոյց աւետարանիչս, թէ որպէս տեսանելեաւք ճանաչեցին առաքեալքն զՔրիստոս, այժմ ճառէ, թէ որպէս լսելեաւք ծանեան զփառս եւ զմեծութիւն Քրիստոսի, յորժամ ասէ.

Բան. «Յովիաննես վկայէ» (Յովի. Ա 15):

**Մեկնութիւն.** Զի աւետարանիչս Յոհաննէս լուաւ զվկայութիւնս զայս ի Մկրտչին վասն սքանչելի ծննդեանն եւ բարձրագոյն վարուց նորին: Այս է, զոր ասէ. «Յովիաննես վկայէ», իսկ զի ներկայ բառիւ ասէ, թէ՝ վկայէ, նախ ցուցանէ, թէ հաստատ եւ մնացական է վկայութիւն Յովիաննու: Երկրորդ. զի ոչ մի անգամ, այլ եւ բազում անգամ վկայեաց եւ միշտ պատրաստ էր ի վկայութիւն: Եւ զի յայտնապէս եւ ոչ ծածկեալ, վասն որոյ ասէ. «Աղաղակէր առաջի ժողովրդեանն եւ քահանայից», որպէս ասէ.

Բան. «Աղաղակեաց եւ ասէ<sup>4</sup>» (Յովի. Ա 15):

Հարց. Վասն է՞ր զՄկրտչին վկայութիւն ի մէջ էած:

Պատասխան. Ասէ Ոսկեբերանն. «Նախ՝ զի մի ասիցեն հակառակողքն, թէ դուք՝ առաքեալքդ, վասն երես հաճութեան վկայէք վասն Քրիստոսի, զի ընդ նմա բնակեցայք եւ ընդ նմա շրջեցայք,

<sup>1</sup> Ը զպատուիրանսն

<sup>2</sup> Ը նա եւ

<sup>3</sup> Ը անստեղօ

<sup>4</sup> Ը չեք եւ ասէ

վասն որոյ զվկայութիւն Մկրտչին ի մէջ բերէ, զի զնա ոչ էր տեսեալ եւ ոչ բնակեալ ընդ նմա»:

Երկրորդ. դարձեալ ասէ Ոսկեբերանն. «Զի հրէայքն զՅովհաննէս մեծ եւ սուրբ համարէին, վասն այն զվկայութիւն նորա ի մէջ ածէ»:

Դարձեալ վասն չորս պատճառի զՅովհաննէս վկայ բերէ. նախ՝ զի բազումս վկայեաց: Երկրորդ. զմարգարէացեալսն ետես: Երրորդ. զի մարգարէ էր եւ առաքեալ: Չորրորդ. զի անուանակից ինքեան էր<sup>1</sup>:

Բան. «Աղաղակեաց» (Յովի. Ա 15):

ՄԵԼՈՒԹԻՒՆ. ՄԵծ ձայնն է, դարձեալ՝ իղձք սրտին եւ բան մտաց, եւ ձայն լեզուին խառնեալ աղաղակ կոչի:

Բան. «Սա է, զորմէ եսն ասէի» (տես Յովի. Ա 15):

ՄԵԼՈՒԹԻՒՆ. Այսինքն՝ նախ վկայեցի եւ արդ վկայեմ:

**Թէ՝ որպէ՞ս առաջին է Յովհաննէս եւ որպէս՝ Քրիստոս:**

Բան. «Որ զկնի իմ գալոց էր» (Յովի. Ա 15):

ՄԵԼՈՒԹԻՒՆ. Չորիւք առաջին էր Յովհաննէս. նախ՝ ծննդեամբ, երկրորդ՝ քարոզութեամբ, երրորդ՝ մահուամբ, չորրորդ՝ մարգարէութեան պատուովն:

Իսկ Քրիստոս չորիւք յառաջ էր, քան զՅովհաննէս. նախ՝ Աստուածութեամբն, զի անսկիզբն էր: Երկրորդ. անսերմն<sup>2</sup> յղացմամբն, թէպէտ Յովհաննէս յարգանդէ սրբեցաւ, որպէս Երեմիա եւ Աստուածածին Կոյսն սուրբ, այլ ի սերմանէ ծնան: Երրորդ. կերպիւ առաջին էր Քրիստոս, զի տղայն մինչ ի ծնունդն միշտ ի լինելութեան կայ, իսկ Քրիստոս ի յղացմանէն ունէր զկատարելութիւն, որպէս ասէ Երեմիա. «Նոր ինչ արացէ Տէր ի վերայ երկրի, զի կին պարունակեսցէ զայր» (հնատ. Երեմ. ԼԱ 22), այսինքն՝ Մարիամ զՔրիստոս: Չորրորդ. կերպիւ առաջին էր, զի Քրիստոս Փրկիչ եւ փեսայ էր, եւ Յովհաննէս՝ փեսաւէր:

Բան. «Առաջի իմ եղեւ» (Յովի. Ա 30):

ՄԵԼՈՒԹԻՒՆ. Այսինքն՝ նախ կատարեցաւ, քան զիս, որպէս ցուցաւ: Դարձեալ՝ առաջի իմ տեսութեանս եղեւ Աստուածն մարդ, որ յորովայն տեսի եւ երկրպագեցի<sup>3</sup>:

<sup>1</sup> С չիք Բան. «Աղաղակեաց եւ ասէ» ... զի անուանակից ինքեան էր

<sup>2</sup> С անսերմ

<sup>3</sup> С չիք Բան. «Առաջի իմ .... եւ երկրպագեցի

Բան. «Զի ի լրութենէ [անտի] նորա մեք ամենեքեան առաք շնորհս փոխանակ շնորհաց» (Յովի. Ա 16):

**Մեկնութիւն.** **Աւետարանչին** է բանս այս եւ ոչ՝ **Մկրտչին**:

Նախ գիտելի է վասն այսմ բանի, զի կրկին է շնորհք Աստուծոյ. ոմն առաջին ասի, եւ ոմն՝ երկրորդ: **Առաջին** շնորհ ասի, զոր առնու ոք յԱստուծոյ ո՛չ վասն գործոց, այլ նախ քան զբարի գործս եւ յայնժամ այն շնորհաւքն զբարիս գործէ եւ արժանի լինի այլ գերազոյն շնորհս ընդունել յԱստուծոյ: Եւ այս երկրորդ շնորհք ասի առաւել փոխանակ առաջնոյն, զի առաջնովն արժանի եղեւ երկրորդ շնորհին:

Երկրորդ. ասէ վասն հնոյ աւրինացն եւ նորոյս, զի աւրէնքն հին նախկին շնորհք կոչի, զի մեծ շնորհք էր տալ աւրէնս<sup>1</sup> անհնազանդ ժողովրդեանն, զի ասէ Սաղմոս. «Ո՛չ սոյնպէս արար ամենայն ազգաց Տէր, եւ զգատաստանս [իւր ոչ յայտնեաց նոցայ]» (Սաղմ. ճիւտ 20): Իսկ աւրէնքն Մովսիսի անկատար էր, վասն այն նոր աւրէնքն եւ կատարեալ փոխանակ այն Մովսիսի եղեւ, զայն ասէ ընկալաք շնորհս փոխանակ շնորհաց, այսինքն՝ աւրէնք փոխանակ աւրինացն:

Երրորդ. սոյնպէս ասեն շնորհք փոխանակ շնորհաց, այսինքն՝ զերանութիւն փոխանակ առաքինութեան, որպէս հաւատոյ, յուսոյ եւ սիրոյն եւ այլոցն, զի առաքինութեան շնորհ յինքեանս ունի զերանութեան շնորհն, որպէս սերմ կամ արմատ զպտուղն, որպէս ցուցաւ ի վերոյ:

### Վասն աւրինաց

Բան. «Աւրէնքն ի ձեռն Սովուէսի» (Յովի. Ա 17):

**Մեկնութիւն.** Պատուելի էր **Մովսէս** եւ աւրէնքն ի հնումն, բայց նոքա աւրինակ էին. **Մովսէս՝ Քրիստոսի**, եւ աւրէնքն՝ **Աւետարանին**, եւ ժողովուրդ՝ նոր եկեղեցւոյ:

Նախ՝ զի<sup>2</sup> այն՝ մարմնաւոր, եւ այս՝ հոգեւոր: Երկրորդ. այն՝ մասնաւոր եւ անցաւոր, եւ այս բոլոր՝ ամենայն ազգի եւ մնացական: Երրորդ. նա՝ մարդարէ, եւ սա՝ Աստուած: Չորրորդ. նա՝ աւրինակ, եւ սա՝ ծշմարտութիւն:

Նոյնպէս մեք՝ անդամք Քրիստոսի, եւ նոքա՝ ժողովուրդք: Երկրորդ. նոքա՝ յաւրէնս, եւ մեք՝ ի շնորհս: Երրորդ. նոքա՝ երկրին ժառանգորդ, եւ մեք՝ երկնիցն: Չորրորդ. նոքա՝ ծառայք եւ

<sup>1</sup> Հ շնորհս օրէնս

<sup>2</sup> Հ չեք

վարձկանք, եւ մեք՝ որդիք: Վասն այն ասէ՝ պատկառեսցո՛ւք, զի պատկառելն որդւոց է, եւ երկիւղն՝ ծառայից եւ վարձկանաց: Եւ զայլ բաղդատութիւն հնոյն եւ նորոյս տեսցես ի գիրս Հարցմանց ի վեցերորդ հատորն ի երեսուն եւ եւթներորդ համարն<sup>1st</sup>:

**Այսքան առաջին փոխն, մի ի չորից վկայութեանցն, թէ Աստուած է Քրիստոս:**

Առաջին այս է. մի<sup>2</sup> որ ոք ծնեալ է յԱստուծոյ հոգեւոր եւ յաւիտենական ծննդեամբ, Աստուած է, ապա ուրեմն Քրիստոս Աստուած է, զի ծնեալ է ի Հաւրէ նախ քան զյաւիտեանս, որպէս ասէ Յոհաննէս. «Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն», եւ զայլ ամենայն աստուածաբանութիւն ընդ նմա կարգեաց: Իսկ աստ զերկրորդն ասէ վասն մարդարէից վկայութեան, որպէս ասէ Եսայի. «Պատրաստ արարէք զճանապարհ» (Եսայի Խ 3), եւ Յովհաննէս ձայն եւ կարապետ եղեւ գալստեան Տեառն:

### Թէ որպէս տեսանի Աստուած

Յառաջագոյն եցոյց աւետարանիչս, թէ առաքեալքն որպէս ծանեան զՔրիստոս լի շնորհաւք, այժմ ցուցանէ, թէ որպէս ծանեան զնա լի ճշմարտութեամբ, յորժամ ասէ.

Բան. «ԶԱՍՏՈՒԱԾ ՈՅ ՈՔ ԵՏԵՍ ԵՐԵՒՔ» (Յովի. Ա 18):

ՄԵԼՈՆԻՔԻՆ<sup>3</sup>. Զի առաքեալքն զՔրիստոս լի դոլ ճշմարտութեամբ ուսան ի Քրիստոսէ, որ ուսոյց նոցա զաստուածային խորհուրդն, զորոյ խորհուրդն ոչ ոք կարէ ըմբռնել, եթէ ոչ իցէ լի ճշմարտութեամբ, վասն որոյ ասէ. «զԱՍՏՈՒԱԾ ՈՅ ՈՔ ԵՏԵՍ»: Եւ աստ զոյ ոքն առնու ոչ միայն վասն մարդկան, այլ եւ վասն ամենայն ստեղծուածոց, զի մարդս համեմատէ ամենայն արարածոցս, որպէս իմացմամբ հրեշտակաց, զգայութեամբ անասնոց, ածելութեամբ բուսոց եւ տնկոց: Վասն այն մարդս երբեմն ստեղծուածոյ անուամբ անուանի եւ երբեմն ամենայն ստեղծուածք մարդոյ անուամբ յիշատակին, որպէս աստ. «զԱՍՏՈՒԱԾ ՈՅ ՈՔ ԵՏԵՍ», այսինքն<sup>4</sup> ոչ ոք ստեղծուած ամենեւին ոչ կարաց տեսանել՝ ըմբռնելով զաստուածային էութիւն, իսկ թէ յորմէ ըմբռնի, ասէ զկնի. «Բայց Միածին Որդին<sup>5</sup>,

<sup>1</sup> Ը վկայութեանցն համարն

<sup>2</sup> Ը զի

<sup>3</sup> Ա Բ չեք

<sup>4</sup> Բ չեք

<sup>5</sup> Ը Միածինն Որդին

որ է ի ծոց Յաւը<sup>1</sup>» (Յովի. Ա 18), **այսինքն<sup>2</sup>** որ էակից է Հաւը եւ համարնութիւն, նա ըմբռնէ եւ ճանաչէ զԱստուած՝ միացեալ մարդկութեամբն:

### Եւ նա պատմեաց մեզ<sup>3</sup>

**Այսինքն<sup>4</sup>** առաքելոցն եւ այլ աշակերտացն՝ ուսուցանելով նոցա զխորհուրդ երրորդութեան եւ զայլս բազումս, զոր աւրէնքն Մովսէսի եւ այլ մարդարէքն այնպէս յայտնապէս ոչ ուսուցին:

**Աստ լինի երեք հարց.**

**Առաջին.** Զի Սովուս ետես զԱստուած եւ Դանիէլ եւ Եսայի եւ այլ մարգարէն, եւ աստ ասէ. «Ոչ ոք ետես» (Յովի. Ա 18):

**Պատասխան.** **Ասեմք** առ այս եթէ զէութիւն բնութեան Աստուծոյ ո՛չ ոք ետես, բայց Միածին Որդին<sup>5</sup>, իսկ մարդարէքն զանազան կերպիւ տեսին, որպես Մովսէս լոյս եւ հուր, եւ եղիա՝ աւդ, եւ Դանիէլ՝ հին աւուրց, նոյնպէս եղեկիէլ եւ Եսայի՝ նստեալ ի վերայ աթոռոյ, եւ այլն՝ նմանապէս:

**Երկրորդ.** այլ եւ տարակուսին ոմանք, եթէ սա ասէ. «Ոչ ոք ետես զԱստուած», նոյնպէս եւ Պաւղոս. «Ո՛չ ոք ետես զԱստուած<sup>6</sup> եւ ոչ<sup>7</sup> տեսանել կարող է» (տես Ա Տիմ. Զ 16): եւ յաւրէնսն ասէ. «Ոչ ոք կարէ տեսանել զերեսս իմ եւ ապրի» (տես Ելք ԼԳ 20):

**Ապա ուրեմն ո՞չ ոք կարէ տեսանել զԱստուած:**

**Պատասխան.** **Առ այս ասեմք,** նախ՝ բազում վկայութեամբ, որպէս ինքն աւետարանիչն աւետիս տայ, թէ՝ «տեսանելոց եմք զնա որպէս եւ էն» (Ա Յովի. Գ 2), եւ Պաւղոս ասէ. «Այժմ տեսանեմք [իրբեւ ընդ] հայելի աւրինակաւ, [այլ] յայնժամ դէմ յանդիման» (Ա Կորնթ. Ժ Գ 12), եւ վասն հրեշտակաց ասէ Տէր. «Հանապազ տեսանեն զերեսս Հաւը իմոյ<sup>8</sup>» (Սատթ. Ժ Ը 10), եւ դարձեալ, թէ՝ «Երեւեցուցից ննա զիս» (Սարկ. Ժ Զ 14), եւ թէ՝ «Տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ ի վերայ ամպոց երկնից» (Սատթ. Ի Դ 30) եւ այլ բազում, ապա ուրեմն տեսանեմք զԱստուած:

<sup>1</sup> A B չեք ծոց Յաւը

<sup>2</sup> B չեք

<sup>3</sup> C չեք մեզ

<sup>4</sup> B չեք

<sup>5</sup> C Միածինն Որդին

<sup>6</sup> B չեք նոյնակս եւ Պաւղոս. «Ոչ ոք ետես զԱստուած», C չեք զԱստուած

<sup>7</sup> C կամ

<sup>8</sup> A B չեք Յաւը իմոյ

**Երկրորդ.** ասեն վարդապետք, եթէ տեսանեմք զԱստուած<sup>1</sup> որքան կարեմք, այլ ո՛չ ըստ որում է Աստուած, եւ զծովն տեսանեմք, այլ ո՛չ զբովանդակն, եւ աթոռն տեսանէ զհիւսն, այլ ոչ զամենայն զաւրութիւն նորա:

**Երրորդ.** ասեն, թէ տեսութիւն այն ոչ է ըստ բնութեան կարգի, այլ ըստ շնորհացն Աստուածոյ, որպէս ասեն իմաստունք, թէ ամենայն, որ սկսեալ է, վախճանի, այլ եւ<sup>2</sup> հրեշտակք եւ հոգիք, զի անվախճան են, ոչ ըստ բնութեան կարգի, այլ ըստ կամացն Արարչին: Նոյնպէս եւ տեսութիւն Աստուածոյ է ի շնորհացն կարգի, զի արքայութիւն է տեսութիւն Աստուածոյ:

**Չորրորդ.** ասեն, թէ սուլրբքն հաւատով եւ սրբութեամք տեսանեն զԱստուած, ըստ այնմ՝ «Սուլրբքն սրտիւք զԱստուած տեսցեն» (հմնտ. Մատթ. Ե 8), այլ անսուլրբքն եւ անհաւատք ոչ երբէք տեսանեն<sup>3</sup>, որպէս հեթանոսք, զի ոչ ինչ համարեալ են<sup>4</sup> նմա:

**Այս առ երկրորդն:**

**Իսկ երրորդ.** Տարակուսեն, եթէ ոչ ոք տեսանէ զԱստուած, ապա դու ընդէ՞ր ասացեր. «Ի սկզբանէ էր Բանն» (Յովհ. Ա 1) եւ այլն, եւ «Տեսաք մեք զփառս նորա» (Յովհ. Ա 14) եւ այլն:

**Պատասխան.** Ասէ՝ Միածինն պատմեաց մեզ եւ Հոգին Սուլրբյայտնեաց, ի նմանէ ուսաք եւ խաւսեցաք վասն նորա: Ապա յայտ է, որ զԵրրորդական անձնաւորութիւն եւ զմի բնութիւն եւ զմարդեղութիւն Բանին եւ զայլն ամենայն Աւետարանն ուսուցանէ մեզ: Իսկ որք ոչ գիտեն զԱւետարանն, ոչ ճանաչեն զԱստուած գիտութիւն:

### Վասն Միածնին

Եւ Միածին ասի վասն բազում պատճառի. նախ՝ ասի Միածին, զի նա միայն է համագոյ ծնողին ծնունդ՝ ըստ այնմ. «Բանն էր ի սկզբանէ առ Աստուած» (տես Յովհ. Ա 1), իսկ այլ ամենայն ծնող յառաջ է, քան զծնեալն:

**Երկրորդ.** զի նա միայն ի Հաւրէ ծնեալ անմայր՝ ըստ այնմ. «Ելի ի Դաւրէ եւ Եկի յաշխարհ» (Յովհ. ԺԶ 28):

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> C չեք

<sup>3</sup> C չեք ոչ երբէք տեսանեն

<sup>4</sup> C ոչ ինչ են համարեալ

**Երբորդ.** զի նա միայն է ի Հաւրէ ծնեալ<sup>1</sup> եւ չունի եղբայր, եւ զի Հոգին ի Հաւրէ է, սակայն բղխումն եւ ոչ ծնունդ, որպէս ցուցաւ ի վերոյ վեցերորդ գլուխն:

**Չորրորդ.** զի նա միայն է ծնունդ անբաժանելի ի ծնող Հաւրէ, ըստ այնմ. «Բանն էր առ Աստուած» (Յովի. Ա 1):

**Հինգերորդ.** Նա միայն է ծնունդ համահաւասար կատարելութեամբ, զաւրութեամբ եւ իմաստութեամբ ընդ Հաւր՝ ըստ այնմ. «Որպէս գիտ զիս Յայր, գիտեն եւ ես զՅայրն» (Յովի. Ժ 15):

**Վեցերորդ.** Նա միայն է ծնունդ անուր եւ աներբ, որպէս ասէ. «Յառաջ քան զամենայն բլուրս ծնաւ զիս» (Առակ. 25) եւ «Յառաջ քան զարեւ է [անուն նորա]» (Սաղմ. ՂԱ 17):

**Եւթներորդ.** Նա միայն է միշտ եւ անդադար ծնունդ, զի որպէս ոչ ի ժամանակի սկսաւ եւ ոչ ի ժամանակի դադարի, այլ որպէս լոյս ի հրոյ միշտ եւ անհատապէս ծնանի:

**Ութերորդ.** Նա միայն է ծնունդ ի Հաւրէ եւ ոչ երբէք հայրանայ, զի ոչ ունի յինքենէ ծնունդ, որպէս նա՝ ի Հաւրէ:

**Իններորդ.** ասի Միածին ըստ մարմնաւոր ծննդեանն, ի մաւրէ ծնեալ առանց Հաւր, ըստ այնմ որպէս ասաց հրեշտակն. «Որ ծնանելոցն է ի քէն, ի Հոգւոյն Սրբոյ է» (տես Ղուկ. Ա 35):

**Տասներորդ.** ասի յոմանց, թէ ի ժամ ծննդեանն Քրիստոսի արգելան ամենայն ծնունդք, մինչեւ ծնաւ բարձողն երկանց ամենայն ծննդոց, զի նա լինէր անդրանիկ ամենայն ծննդոց:

### Վասն ծոցոյ

**Տեսցուք,** թէ զինչ է ասելն՝ ի ծոց Յալը (Յովի. Ա 18):

Եւ ասեմք զայս վասն տասն պատճառի. նախ՝ զի ծոցն զմերձաւորութիւն նշանակէ, եւ Տէր մեր ասէ. «Հայր իմ ընդ իս է» (տես Յովի. ԺԴ 11):

**Երկրորդ.** զի ծոցն անբաժանելի է ի մարդոյն եւ վասն Տեառն մերոյ ասէ<sup>3</sup>, թէ՝ Բանն էր առ Աստուած (Յովի. Ա 1):

**Երրորդ.** զի ծոցն յէռթենէ մարդոյն է, սոյնպէս եւ Տէր մեր յէռթենէ Հաւր Աստուծոյ է:

**Չորրորդ.** զի անյայտ է ծոցն, եւ Տէր մեր ասէ. «Ոչ ոք գիտէ զՈրդի, եթէ ոչ Հայր, եւ ոչ զՀայր ոք գիտէ, եթէ ոչ Որդին»<sup>4</sup> (հմնտ. Յովի. Ը 19):

<sup>1</sup> Ե ծնեալ անմայր

<sup>2</sup> Ա Ե չեք

<sup>3</sup> Ե չեք

<sup>4</sup> Ա Ե չեք

**Հինգերորդ.** զի ծոցն յայլմէ է ի մարմնոյն ըստ իրին, այլ նովաւ մի մարդն երեւի, նոյնպէս այլ է անձնաւորութիւն Որդւոյ, բայց բնութիւն մի է ընդ Հաւը, ըստ այնմ. «Յայր, փառաւորեա՛ զՈրդի քո» (Յովի. Ժ 1), որ ցուցանէ զհամարնութիւն եւ զառանձնաւորութիւն անձանց:

**Վեցերորդ.** զի յորժամ կամենայ մարդն, յայտնէ, զոր ի ծոցին է, սոյնպէս եւ Աստուած, յորժամ կամեցաւ, յայտնեաց զՈրդին իւր, զի մինչ ի մարդեղութիւն Բանին ծածուկ էր երրորդութեան խորհուրդ:

**Եւթներորդ.** զի ծոցն է մերձ սրտին եւ զառաւել սէրն ցուցանէ, սոյնպէս եւ Հայր սիրէ զՈրդի եւ զամենայն ինչ ցուցանէ նմա<sup>1</sup>:

**Ութերորդ.** զի զոր ինչ ի սիրտն ծնանի, ոչ է ծածուկ ի ծոցոյն, սոյնպէս եւ Հայրն երկնաւոր ոչինչ առնէ առանց Որդւոյ՝ ըստ այնմ. «Անենայն ինչ նովաւ եղեւ» (Յովի. Ա 1), եւ թէ՝ «Գիտեմ եւ ես զՅայր» (Յովի. Ժ 15):

**Իններորդ.** զի նախ ծոցն երեւի եւ ապա նովաւ ներքոյքն, սոյնպէս եւ Բանիւն ճանաչեցաք զՀայր, զի նա է պատկեր եւ նկարագիր էութեան նորա:

**Տասներորդ.** զի ծոցն է կրող ամենայն իրաց, զոր ունի մարդն, սոյնպէս Հոգին, որ ի Հաւը ելանէ, առ Որդի դադարի, եւ նովաւ առ արարածս բաշխի, եւ զայս իսկ ուսոյց Աւետարանն:

#### Վասն վկայութեան Յովհաննու

**Յորժամ եցոյց աւետարանիչս,** թէ ինքն եւ այլ առաքեալքն որպէս ճանաչեցին զմեծութիւն Քրիստոսի տեսանելեաւք, այժմ ցուցանէ, թէ որպէս ծանեան զնալ լսելեաւք, յորժամ ասէ.

Բան. «Եւ այս է վկայութիւն Յովիաննու» (Յովի. Ա 19):

**Մելանութիւն<sup>2</sup>.** Արդ, Յովհաննէս աւետարանիչն լուաւ ի Յովհաննէ զվկայութիւն, որ վասն Քրիստոսի: Եւ կրկին է վկայութիւն Յովհաննու. նախ՝ որ վկայեաց, մինչ Քրիստոս նմա մերձ ոչ գոյր, որպէս աստ պատմէ: Երկրորդ. պատմէ զվկայութիւն, մինչ Քրիստոս նմա մերձ գոյր<sup>3</sup>, յորժամ ասէ. «Ի վաղիւ անդր տեսաներ զՅիսուս, զի գայր առ նա» (Յովի. Ա 19):

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> B չեք

<sup>3</sup> C կայր

Իսկ առաջին վկայութիւն Յովհաննու յերկուս բաժանի, զի նախ վկայէ բացասաբար, որպէս ասէ. «Ես ոչ եմ Քրիստոսն» (Յովհ. Ա 20): Երկրորդ. խտորասաբար, որպէս<sup>1</sup> անդ. «Իսկ ասա մեզ, ո՞վ ես դու» (Յովհ. Ա 22): Եւ վասն առաջնոյն սկիզբն առնէ:

Բան. «Եւ այս է վկայութիւն Յովիաննու» (Յովհ. Ա 19):

Մեկնութիւն. Դարձեալ ի մեջ ածէ զվկայութիւն Յովհաննու, որով եւ զեսայի մարգարէն վկայ բերէ:

Բան. «Յորժամ<sup>2</sup> առաքեցին առ նա հարցանել» (Յովհ. Ա 19):

Մեկնութիւն. Նախ հարցանեն յաղագս անձինն, թէ՝ դու<sup>3</sup> ո՞վ ես (Յովհ. Ա 19): Երկրորդ. վասն ներգործութեան, զի խափանել կամէին զմկրտութիւն նորա, եւ ի հարցանել զՅովհաննէս չորս իրաւք մեծապատուեն զնա. Նախ՝ զի առաքողքն<sup>4</sup> մեծք էին՝ յազգէն Յուղայ: Երկրորդ. զի տեղիքն մեծ քաղաք էր՝ Երուսաղէմ, յորմէ առաքեցան, եւ թագաւորք եւ քահանայք անդ էին, տաճարն եւ այլն: Երրորդ. զի առաքեալքն քահանայք եւ զեւտացիք եւ փարիսեցիք էին: Զորրորդ. զի խոնարհութեամբ հարցին, թէ՝ դու ո՞ ես, որպէս թէ պատրաստք էին պատախանւոյ նորա հաւանութիւն տալ: Իսկ սուրբն Նանա ասէ, թէ՝ «Դաւաճանութեամբ հարցանէին»: Այս է, զի յայտնի կերպարանքն հարցանելոյն պատուոյ էր, այլ ծածուկ նենգութիւն էր, զի յերկու կողմն կամէին խափանել զմկրտութիւն նորա<sup>xli</sup>:

Բան. «Յարցին եւ ասեն ո՞վ ես դու» (տես Յովհ. Ա 19):

Մեկնութիւն<sup>5</sup>. Եւ վասն երեք պատճառի հարցանեն.

Նախ՝ վասն նորագոյն մկրտութեան Յովհաննու, զի ոչ ոք ի մարգարէիցն զնա արար, եւ յորժամ այնպիսի նոր ինչ լինի, պարտ է առաջնորդին հարցանել եւ զպատճառն իմանալ, զի մի մոլորեցուցիչ լիցի:

Երկրորդ. զի ժողովուրդն ժողովէր առ Յովհաննէս, Երկեան, թէ ժողովուրդն ի բաց կտրին ի<sup>6</sup> քահանայիցն, եւ փառք եւ շնորհք նոցա պակասի:

Երրորդ. զի Յովհաննէս յանդիմանէր զնոսա առաջի ժողովրդեանն, վասն այն շարժեցան ի նախանձ եւ կամէին խափանել զնա:

<sup>1</sup> C չեք

<sup>2</sup> B չեք

<sup>3</sup> A B չեք

<sup>4</sup> B առաքեալըն

<sup>5</sup> B չեք

<sup>6</sup> C չեք

### Վասն է՞ր կարծեցին զՔրիստոս

**Հարց.** Եւ զիա՞րդ կարծէին զՅովհաննէս, թէ Քրիստոսն է:

**Պատասխան.** Վասն չորս պատճառի.

Նախ՝ զի մերձեալ էր ժամանակ գալստեան Մեսիային, զի Յակոբ աւրհնեաց զՅուղա, եւ ասէ. «Մի պակասեսցէ իշխան ի Յուղայէ եւ մի պետ յերանաց [նորա]» (Ծննդ. Խթ 10), եւ յայնժամ պակասեալ էր, զի Հերովդէս արքայ այլազգի էր, այլ եւ եւթանասուն շաբաթ, ամացն, զոր ասաց Դանիէլ (հմնտ. Դան. Թ 25-27), զկատարումն առին:

**Երկրորդ.** Վասն զարմանալի ծննդեանն եւ Վասն առաւել սրբութեան կարծէին, թէ Քրիստոսն <sup>Էլլի</sup> է:

**Երրորդ.** Վասն նոր մկրտութեան, եւ ամենայն ժողովուրդն առնա ժողովէր:

**Չորրորդ.** Վասն ճշմարիտ քարոզութեան եւ պատրաստելոյն զՃանապարհ Տեառն, զի ասէր զինքն առաքեալ Վասն ճանապարհին (հմնտ. Յովհ. Ա 23):

### Վասն խոստովանութեան

Բան. «Եւ խոստովան<sup>1</sup> եղեւ եւ ոչ ուրացաւ» (Յովհ. Ա 20):

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Նախ խոստովանեցաւ եւ յայտնեաց զինքն եւ ոչ ուրացաւ զանունն Քրիստոսի, կամ խոստովանեցաւ զՔրիստոս եւ ոչ ուրացաւ զինքն:

### ԶԻ՞՞ կրկնէ զխոստովանութիւն

Եւ Վասն չորից կրկնէ զխոստովանելն.

Նախ՝ խոստովանի զտկարութիւն իւր եւ դաւանէ զանունն Տեառն:

**Երկրորդ.** Կրկնէ զխոստովանութիւնս առ մեզ, նախ՝ մեղաց, եւ երկրորդ՝ դաւանութեանց, որպէս յորժամ գամք ի մկրտիլ, նախ հրաժարիմք եւ ապա դաւանեմք:

**Երրորդ.** Կրկին է դաւանութիւն. նախ՝ սրտին, եւ երկրորդ՝ բերանոյն՝ ըստ այնմ. «Մըտիւ հաւատալ յարդարութիւն եւ բերանով խոստովանել զփրկութիւն» (տես Յոռն. Ժ 10):

---

<sup>1</sup> Եւ Նա խոստովան

**Զորբորդ.** կրկին է եւ մեղացն՝ նախ ի սիրտն զղջմամբ առ Աստուած խոստովանել, եւ ապա լեզուաւ առաջի քահանային յայտնաբանել:

Եւ տե՛ս, զի չէ պարտ առանց հարցանելոյ ի մէջ այլ ազգաց խոստովանել բան ինչ հակառակութեամբ, զի առաւել յանդգնութիւն է, այլ յորժամ հարցանեն, պարտ է յայտնի խոստովանել եւ ոչ ուրանալ, վասն որոյ ասէ. «Խոստովան եղեւ եւ ոչ ուրացաւ»:

Եւ այս վասն չորս պատճառի. նախ՝ զի ցուցցէ զծմարիտ խոնարհութիւն իւր, զի թէ համարէին զնա, եթէ Քրիստոսն է, ոչ զինքն Քրիստոս ասաց եւ ոչ զանունն Քրիստոսի լոեաց: Երկրորդ. զի ածցէ զնոսա ի հաւատան Քրիստոսի, վասն այն ուրացաւ զինքն Քրիստոս կոչել: Երրորդ. զի զամենայն վկայութիւն իւր ցուցցէ ճշմարիտ, զի թէ ստութեամբ եւ<sup>1</sup> փառասիրութեամբ վկայէր վասն Քրիստոսի, պարտ էր վասն ինքեան վկայել, յորժամ հարցանէին զնա: Զորբորդ. զի յորժամ հարցին, թէ յայտնապէս ոչ խոստովանէր զՔրիստոս, զծմարտութիւն ուրանայր, վասն որոյ ասէ, թէ<sup>2</sup>. «Խոստովան եղեւ, թէ ես ոչ եմ Քրիստոսն» (Յովհ. Ա 20):

### Վասն Եղիայի

Բան. «Եղիա՝ ես դու» (Յովհ. Ա 21):

Հարց<sup>3</sup>. Զիա՞րդ համարէին զնա Եղիա, զի գիտէին զՀայր նորա զԶաքարեայ, եւ ժամանակաւ երեսնամեայ էր:

Պատասխան. Վասն կրկին իրաց. նախ՝ զի Մաղաքիա խոստանայ զգալուստն Եղիայի՝ նախընթաց լինել Քրիստոսի (հմնտ. Մաղաք. Դ 5): Երկրորդ. Վասն խիստ քարոզութեան եւ յանապատի բնակելոյն եւ վասն հանդերձին եւ սրբութեան:

Բան. «Ասէ՞ ոչ եմ» (Յովհ. Ա 21):

Մեկնութիւն. Թուի, թէ հակառակ խաւսի, զի Տէրն ասէ. «Նա է Եղիա, որ գալոցն է» (Մատթ. ԺԱ 14), եւ հրեշտակն ասաց առ Զաքարիա, թէ՝ «Գայցէ առաջի նորա հոգուվ զաւրութեամբ Եղիայի» (հմնտ. Ղուկ. Ա 17): Ասեմք, եթէ ոչ է հակառակ, զի Տէրն ասաց նման Եղիայի գոլ (հմնտ. Մատթ. ԺԵ 12), որպէս Եղիա վերջին գալստեանն, եւ Ցովհաննէս յառաջինն եղեւ կարապետ, այլ անձն նորա ոչ Եղիային:

<sup>1</sup> Ը կամ

<sup>2</sup> Ը չեք

<sup>3</sup> Ը մեկնութիւն

Բան. «Մարգարէ<sup>1</sup>ն ես դու, եւ ասէ, թէ<sup>1</sup> ո՛չ» (տե՛ս Յովի. Ա 21):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ<sup>2</sup>.** Եւ աստ թուի, թէ Հակառակի, զի Տէրն ասաց վասն Յովհաննու, թէ. «Մարգարէ է եւ առաւել քան զմարգարէ» (տե՛ս Մատթ. ԺԱ 9), այլ ոչ է Հակառակ, զի մարգարէ էր, այլ յաւդիւն ասաց. «Ոչ եմ մարգարէն», զոր Մովսէս<sup>3</sup> վասն Քրիստոսի էր ասացեալ, իսկ յորժամ Յովհաննէս պատասխանեաց բացասութեամբ, զկնի ստորասարար վկայէ, յորժամ ասացին ցնա.

Բան. «Ո՞վ ես դու»<sup>4</sup> (Յովի. Ա 21):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Յորժամ առաքեալքն ի հրէից տեսին, թէ Յովհաննէս բացասարար վկայեաց, կամեցան լսել ի նմանէ բան ինչ ստորասարար ասացեալ, վասն պատասխանի տալոյ առաքողացն իւրոց, վասն այն զկնի ասէ.

### Վասն ձայնի

Բան. «Ես ձայն բարբառոյ յանապատի<sup>5</sup>» (տե՛ս Յովի. Ա 23):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Զայն կոչէ զինքն, եւ բարբառ՝ զՔրիստոս.

Նախ՝ զի ի մէջ ձայնին եւ բարբառոյն ոչ ինչ է, եւ ի մէջ Տեառն եւ Յովհաննու ո՛չ այլ մարգարէ:

Երկրորդ. զի ձայնն յայտնէ զբանն եւ Յովհաննէս յայտնիչ աստուածային Բանին, որ էր Քրիստոս:

Երրորդ. նախ ձայնն է եւ ապա բանն, եւ նախ Յովհաննէս քարոզեաց, եւ ապա՝ Քրիստոս:

Չորրորդ. զի ձայնն ոչ յինքենէ, այլ ի բանէ մտացն զաւրաւոր լինի եւ զարթուցանէ զմիտս լսողացն, նոյնպէս եւ Յովհաննէս յորովայնէ<sup>6</sup> մաւրն ի Քրիստոսէ սրբութիւն ընկալաւ եւ ի Քրիստոսէ առաքեցաւ, զի առ Քրիստոս ածցէ զմարդիկ:

Հինգերորդ. ձայնն՝ անցաւոր է, եւ բանն՝ մնացական, սոյնպէս Յովհաննէս եւ Քրիստոս:

Հարց. Վասն է՞ր զեսայի բերէ վկայ:

Պատասխան. Վասն երկու պատճառի.

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> B չեք

<sup>3</sup> B չեք

<sup>4</sup> C չեք

<sup>5</sup> A չեք

<sup>6</sup> C յորովայնի

<sup>7</sup> C որպէս

Նախ՝ զի եսայի յայն բանէ մինչ ի վերջք գրոցն վասն գալստեանն Քրիստոսի եւ եկեղեցւոյ նորա մարգարէանայ, որ թուի առաւել աւետարանիչ գոլ, քան թէ մարգարէ:

Երկրորդ. ցուցանէ եսայի, թէ<sup>1</sup> որպիսի<sup>2</sup> բան եւ ի գործ եկեալ էր Յովհաննէս, այսինքն՝ կարապետ լինել Քրիստոսի եւ ձայն բարբառոյ յանապատի:

Եւ է այս երկրորդ վկայութիւն՝ ցուցանել, թէ Քրիստոս Աստուած է.

**Առաջին որ ասէ.** «Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն», եւ ի վերայ բերէ. «Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ<sup>3</sup>» եւ այլն:

Երկրորդ. այս է վկայութիւն Յովհաննու եւ եսայեայ, որ ասէ.

Բան<sup>4</sup>. «Ես ձայն բարբառոյ յանապատի. պատրաստ արարէք զճանապարհս Տեառն, եւ ուղիղ արարէք զշաւիղս Աստուածոյ մերոյ<sup>5</sup>» (տես Եսայի Խ 3) եւ այլն, «Եւ տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուածոյ մերոյ» (տես Եսայի Խ 5), որպէս գրեալ է ի մեկնութիւն Մատթէոսի գլխոյն (Մատթ. Գ 3):

Բայց յորժամ առաքեալքն հարցին զՅովհաննէս վասն անձին նորա, զկնի հարցանեն եւ վասն գործոյն նորա, որպէս ասեն. «Իսկ զի՞ մկրտես» (Յովհ. Ա 25) եւ այլն:

Բան. «[Ել] որք առաքեցանն, ի փարիսեցւոց [անտի] էին» (Յովհ. Ա 24):

**Մեկնութիւն.** Փարիսեցիքն ի մէջ հրէիցն առաւել ճգնաւորք եւ աւրինապահք երեւէին, վասն որոյ փարիսեցի կոչին, զի փարէսն բաժանումն թարգմանի: Եւ նոքա առանձնացեալք էին հանդերձիւ եւ համեստութեամբ, կերակրաւք եւ վարուք, վասն որոյ առաւել նախանձաւորք էին<sup>6</sup> աւրինացն, եւ հակառակ էին Յովհաննու եւ Քրիստոսի: Այլեւ վասն մկրտութեան Յովհաննու, թէ առաւել քան զՄովսէսին, եւ մկրտութիւն Քրիստոսի առաւել քան զՅովհաննուն գտցես ի Մատթէոս գլխոյն<sup>xliii</sup>: Այս երկրորդ վկայութիւն է, թէ Աստուած է Քրիստոս: Զառաջինն ասէ. «Աւտարանիչս վկայեաց», զերկրորդն՝ եսայի մարգարէն:

Բան. «Ի միջի ձեր կայ» (տես Յովհ. Ա 26):

**Մեկնութիւն.** Նախ՝ առ ձեզ եկեալ է, որպէս զմիջնորդ ձեր առ Աստուած: Երկրորդ՝ զմիջին եւ զհասարակ վարս ունի:

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> A յորպիսի

<sup>3</sup> A B չեք եւ բնակեաց ի մեզ

<sup>4</sup> C չեք

<sup>5</sup> A B չեք Աստուածոյ մերոյ

<sup>6</sup> B չեք

Բան. «Զոր դուքն ոչ գիտեք» (Յովի. Ա 26):

**ՄԵԼԱՆՈՒՐԻ ՅՈՒԹ.** Զաստուածութիւն եւ զտնաւրէնութիւն նորա ո՛չ գիտէք: Դուքն՝ յաւդիւն, նախ՝ յառաջն ոչ գիտէիք մինչ ի մկրտելն, երկրորդ՝ զի ըստ տգիտացն եւ անհաւատիցն էիք:

Բան. «Զիսրաց կաւշկաց նորա» (Յովի. Ա 27):

**ՄԵԼԱՆՈՒՐԻ ՅՈՒԹ.** Նախ՝ զիւր խոնարհութիւն ցուցանէ, թէ եւ ոչ ոտից նորա արժանի եմ ծառայել: Այս ըստ ճառին:

Երկրորդ. զԱստուածութիւն Քրիստոսի ցուցանէ եւ զիւր ծառայական բնութիւն<sup>1</sup>:

Երկրորդ. մի բան ի տնաւրէնութեանցն Քրիստոսի<sup>2</sup> ոչ կարեմ հասու լինել կամ ճառել: Եւ խորաց կաւշկաց զկապ կաւշիկն ասէ:

### Զի ոչ ագանէր կաւշիկ

Եւ թէ քննես, երեւի բազում վկայութեամբ ոչ լինել կաւշիկ ի յոտսն Քրիստոսի եւ ո՛չ առաքելոցն, եւ ո՛չ Յովհաննու, եւ ո՛չ Եղիայի, եւ ո՛չ Մովսիսի<sup>3</sup>, եւ ո՛չ Յեսուայ, սոյնպէս եւ ամենայն մարդարէիցն:

Եւ ի<sup>4</sup> բազմաց յայտնի է, զի Քրիստոս կաւշիկ ոչ ունէր. նախ՝ զի առաքելոցն ասաց<sup>5</sup> ունել հողաթափս, եւ ոչ՝ կաւշիկս, ապա եւ ինքն ո՛չ զգեցաւ: Երկրորդ. յայտնի է, զի կինն, որ արտասուաւք թանայր զոտսն Յիսուսի եւ հերովն սրբէր եւ աւծանէր (հմնտ. Դով. Է 37-38): Արդ, եթէ Քրիստոս կաւշիկ ունէր յոտսն, ոչ կարէր զայն առնել:

Երկրորդ. զի յորժամ ելուաց<sup>6</sup> զոտս աշակերտացն, գրեալ է, թէ եհան զհանդերձս (հմնտ. Յովի. ԺԳ 4), այլ վասն Քրիստոսի եւ առաքելոցն ոչ է գրեալ, թէ եհան զկաւշիկս, նոյնպէս յորժամ բաժանեցին զինուորքն զհանդերձս Քրիստոսի եւ վասն կաւշկաց ոչ երբեք գրեալ ինչ է (հմնտ. Յովի. ԺԹ 23-24): Եւ վասն այլակերպութեան գրեալ է, թէ հանդերձ նորա եղեն փայլուն սպիտակ (հմնտ. Սատր. ԺԵ 2), եւ կաւշիկ ոչ յիշէ: Եւ ասաց առաքելոցն. «Յորժամ առաքեցի զձեզ առանց կաւշկաց եւ մախաղի, կարաւտացա՞ք իմիք, ~ եւ ասեն, ~ եւ<sup>7</sup> ո՛չ իմիք» (հմնտ. Դով. ԻԲ 35-36): Այսպէս ե-

<sup>1</sup> С չիք Երկրորդ. զԱստուածութիւն ... բնութիւն

<sup>2</sup> С նորա

<sup>3</sup> В չիք եւ ո՛չ Մովսիսի

<sup>4</sup> С չիք

<sup>5</sup> С հրամայեաց

<sup>6</sup> В լուաց

<sup>7</sup> С չիք

ղիայի եւ Յովհաննու Մկրտչին գրեալ է, թէ որպիսի ինչ հանդերձ ունէին, եւ յորժամ Եղիա յափշտակեցաւ, գրեալ է, թէ զմաշկեակն եթող (հմնտ. Դ Թագ. Բ 12-13), այլ ոչ է գրեալ, թէ կաւշիկ տանէր ի դրախտն կամ ետ Եղիսէի: Եւ բոկոտն լինել Քրիստոսի բազում աւրինակեցաւ. Նախ՝ զի մարգարէն Եսայի զերիս ամս բոկ շրջեցաւ: «Դարձեալ՝ Մովսիսի ասաց Աստուած. «Լոյծ զկաւշիկս յոտից» (տես Ելք Գ 5): Եւ ոչ է գրեալ, թէ յայնմ հետէ այլ կաւշիկ զգենոյր: Նոյնպէս եւ առ Յեսու ասաց զաւրավար Տեառն. «Լոյծ զկաւշիկս [քո] յոտից քոց» (Յս Ե 16): Նոյնպէս վասն Աղամայ գրեալ է, թէ՝ «Արար Աստուած Հանդերձ մաշկեղէն» (տես Ծննդ. Գ 21) եւ կաւշիկս ոչ յիշեաց: Նոյնպէս եւ վասն Ահարոնի գրեալ է, զի հրամայեաց Աստուած, զոր ինչ հանդերձ պիտոյ էր, առնել, եւ կաւշիկ ոչ յիշեաց (հմնտ. Ելք Ի՛ 1-4): Նոյնպէս եւ<sup>1</sup> հրեշտակք ի Հին եւ ի Նոր Կտակարանս միշտ ասին երեւեալ առանց կաւշկաց: Եւ սոքա ամենեքեան նշանակէին զՔրիստոս եւ զառաքելսն, զի բոկոտն ընթանային, վասն որոյ թէ ոք Քրիստոսի կաւշիկս ասէ ունել, հակառակի Սուրբ Գրոց, իսկ այն, որ ասէ. «Այս ի Բեթաբրիհայ եղեւ» (Յովհ. Ա 28), եւ ի գիրս ոմանս գտանի «Բեթանիա», տիմար գրչաց է սխալեալ, ասէ Որոգինէս: Արդ, թէ՝ Բեթանիա գրի, եւ թէ՝ Բեթաբրիհա<sup>2</sup>, այլ գեղ է եւ ոչ Ղազարուն, զի Բեթանիա, ուր Ղազարն էր, յայս կոյս Յորդանանու էր, եւ զոր աւետարանիչս յիշէ, յայն կոյս Յորդանանու գոյ, ի վիճակ երկուց ցեղիցն եւ կիսոյն:

Յորժամ ընդարձակ ճառեաց զվկայութիւն Յովհաննու մինչ ի բացեայ էր Քրիստոս, այժմ դնէ զվկայութիւն մինչ մերձ կայր Քրիստոս,<sup>3</sup> յորժամ ասէ.

Բան. «Ի վաղիւ անդր կայր Յովաննէս» (Յովհ. Ա 35):

Լուծմունք. Եւ բաժանի բանս այս յերկու մասն. Նախ՝ զի վկայէ Յովհաննէս առաջի ժողովրդեանն: Երկրորդ՝ առաջի աշակերտացն միայն, յորժամ ասէ. «Ի վաղիւ անդր կայր Յովաննէս, եւ յաշակերտաց [անտի նորա երկու]» (Յովհ. Ա 35):

Եւ առաջին մասն յերիս բաժանի, զի նախ վկայութիւն Յովհաննու դնի: Երկրորդ՝ կարծիք ինչ աստ ի բաց բառնի, մինչեւ ասէ. «Սա է, վասն որոյ եսն ասէի» (Յովհ. Ա 30): Երրորդ՝ վկայութիւն հաստատի, մինչ ասէ. «Վկայեաց Յովհաննէս» (Յովհ. Ա 32):

Վասն առաջնոյն ասէ աւետարանիչս.

<sup>1</sup> Բ չեք

<sup>2</sup> Ը թէ՝ Բեթաբրիհա գրի, եւ թէ՝ Բեթանիա

<sup>3</sup> Ը թիստոսի

Բան. «Ի վաղիւ անդր» (Յովի. Ա 29):

**ՄԵԿԱՆՈՒԹԻՒՆ.** Վաղիւն այգ ասէ, եւ անդր՝ զայլն իբր ասել յայշում աւուր, զի մի կարծիցի, թէ զոր ճառեցաք եւ զոր ճառելոց եմք, թէ ի միում աւուր եղեւ, կամ զկնի միմեանց, առանց այլ աւուր միջոցի: Ոմանք ասեն յետ հարցանելոյն Յովհաննու է, յորժամ եկն ի մկրտութիւն կրկին իմացմամք. նախ՝ զի ասէ. «Գայր առ նա» (Յովի. Ա 29): Երկրորդ՝ զի ասէ. «Գառն Աստուծոյ» (Յովի. Ա 29), զոր յետ մկրտութեան կոչեցաւ Քրիստոս, այլ սուրբն նանա ասէ. «Յետ մկրտութեան երկրորդ գալուստ»<sup>xliv</sup>, զի զմկրտութեան աւր Մատթէոս ասէ (Մատթ. Գ 13-17), իսկ սա զերկրորդ գալուստն<sup>1</sup>: Երկրորդ՝ զի զամենայն բան պատմութեամք ասէ. «Տեսանէի զՅոգին եւ վկայեցի» (հմնտ. Յովի. Ա 32-34), եւ այլն:

Բան. «Ահա»:

Լուծմունք. Իբր թէ այժմ տեսաք եւ գտաք, զոր Եսայի բանիւ ասաց, եւ Մովսէս գործով աւրինակեաց:

Բան. «Բառնայ զմեղս աշխարհի» (Յովի. Ա 29):

**ՄԵԿԱՆՈՒԹԻՒՆ.** Նախ՝ ցուցանէ, թէ ոչ է կարաւտ սրբութեան: Երկրորդ՝ զի ոչ յինէն սրբի: Երրորդ՝ զաշխարհս սրբէ եւ փրկէ, եւ ոչ միայն զիսրայէլ:

Իսկ բառնայ ասելն. նախ՝ զի խաչիւն եբարձ, երկրորդ՝ զի միշտ բառնայ յամենայն աւր ի պատարագելն: Տե՛ս, զի մին պատարագն զբոլոր աշխարհի<sup>2</sup> մեղս բառնայ, որպէս ի կշիռն ծանր զթեթեւն բառնայ<sup>3</sup>: եւ այս է չորեքկերպեան կենդանեացն խորհուրդ՝ որ գառն զենաւ ի խաչին:

### Վասն գառին

Եւ այն, զի Գառն կոչէ զՄիածինն, եւ այս վասն տասն պատճառի.

Նախ՝ զի սուրբ կենդանի է գառն, սոյնպէս եւ Տէր մեր սուրբ էր էութեամք, զի Աստուած է մարմնովն:

Երկրորդ. զի պատարագելի է գառն, եւ Տէր մեր վասն պատարագելոյ եկն եւ մարմնացաւ, որպէս ասէ. «Ես եկի, զի զկեանս ունիցին<sup>4</sup>» (Յովի. Ժ 10):

<sup>1</sup> Ա զալն

<sup>2</sup> Յաշխարհի

<sup>3</sup> Յ չիք որպէս ... բառնայ, Ս որպէս ի կշեռքն ծանրն բառնայ ի թեթեւ

<sup>4</sup> Ը ունիցիք

**Երրորդ.** զի գառն ոչ վասն իւր զենանի, այլ վասն այլոց, սոյնպէս եւ Տէր մեր ոչ էր պարտապան մահու, ըստ աւրինի բնութեանս, այլ վասն մեր կամաւ մահացաւ:

**Չորրորդ.** զի անմուռնչ է գառն ի զենումն, եւ Տէր մեր ի չարչարանս մահուն անպատասխանի եկաց, որպէս ասէ. «Եղէ ես<sup>1</sup> մարդ<sup>2</sup>, որ ոչ խաւսի» (տես Սաղմ. ԼԵ 15):

**Հինգերորդ.** խոնարհ<sup>3</sup> գառն, քան զամենայն կենդանի, եւ Տէր մեր ասէ. «Ես հեզ եմ եւ խոնարհ սրտիւ» (տես Մատթ. ԺԱ 29):

**Վեցերորդ.** զի գառն է անմեղ<sup>4</sup> բնութեամբ, եւ Տէր մեր ոչ արար մեղս եւ «Ոչ գտաւ նենգութիւն ի բերան նորա<sup>5</sup>» (տես Սաղմ. ԼՍ 2):

**Եւթներորդ.** զի քան զամենայն կենդանիս<sup>6</sup> պարարտ եւ գաւրաւոր է գառն, եւ Տէր մեր ասէ. «Ես եմ հացն կենաց, որ ուտէ ի հացէս<sup>7</sup>, ոչ քաղցից» (հմնտ. Յովի. Զ 48, 50):

**Ութերորդ.** զի գառն էր աւրինագրեալ ի հնումն, հանապազ պատարագ մատուցանել՝ երեկոյին եւ առաւաւտին, յաւրինակ Տեառն մերոյ, որ հանապազ պատարագի յեկեղեցի յամենայն առուր անծախապէս:

**Իններորդ.** զի նիւթ զգեստուց ի նմանէ առնումք, սոյնպէս եւ Տէր մեր Քրիստոս զգեստ եղեւ մեզ, ըստ այնմ. «Որք [միանգամ] ի Քրիստոս մկրտեցարուք, զՔրիստոս զգեցեալ էք» (Գաղ. Գ 27):

**Տասներորդ.** զի յեղիպտոս զենմամբ գառանց ազատեցան որդիքն իսրայէլի ի փարաւոնէ, սոյնպէս եւ ի պատարագել Տեառն մերոյ ազատեցաւ բնութիւնս ի սատանայէ, վասն որոյ Գառն կոչի, զի երարձ զդատապարտութիւն Աղամայ:

**Այսքան առ այս:**

Բան. «Սա է» (Յովի. Ա 30):

**Մեկնութիւն.** Ցառաջագոյն վկայեցի եւ այժմ վկայեմ, որպէս ցուցաւ նախ, իսկ՝ զկնի իմ գայր (Յովի. Ա 30), այսինքն՝ զի յետոյ ճանաչեցաւ քան զՅովհաննէս, եւ յետոյ քարոզեաց եւ յետոյ մկրտեցաւ եւ այլն: Իսկ՝ առաջի իմ եղեւ (Յովի. Ա 30), այսինքն՝ առաջի իմ կատարեցաւ այր եւ առաջի իմ տեսութեանս՝ Բանն մարմին եղեւ, իսկ նախքան զիս էր Աստուածութեամբն եւ անսերմ

<sup>1</sup> A **չեք**

<sup>2</sup> C որպէս մարդ

<sup>3</sup> C զի խոնարհ է

<sup>4</sup> C անմեղ է

<sup>5</sup> A B **չեք** նենգութիւն ի բերան նորա

<sup>6</sup> C անասունս

<sup>7</sup> C ի սնանէ

ծննդեամբ, եւ անապական մարմնով, եւ զմեղս բառնալով եւ այլ:

Բան. «Եւ ես ոչ գիտէի զնա» (Յովի. Ա 31):

ՄԵԼԱՆՈՒՐԻ ՅՈՒԹ. Գիտէր զէութիւն Քրիստոսի, զի Աստուած էր մարդացեալ, եւ յայտ է, զի երկրպագեաց յորովայնի: Այլ ոչ գիտէր. նախ՝ թէ որպէ՞ս մարդ եղեւ: Երկրորդ. չգիտէր զգէմք մարմնոյն, զի չէր ստեղծեալ:

### Վասն մկրտութեան Յովհաննու

Բան. «Վասն այն եկի ես ջրով մկրտել» (Յովի. Ա 31):

ՄԵԼԱՆՈՒՐԻ ՅՈՒԹ. Զորս է պատճառ մկրտութեան Յովհաննու. Նախ՝ յորժամ գայցէ ժողովուրդն ի մկրտիլ, անդ վկայեսցէ վասն Քրիստոսի, զի չէր պատշաճ յիւրաքանչիւր քաղաքս մտանել եւ վկայել: Երկրորդ. զի ընտելասցին ի մկրտութիւն Քրիստոսի: Երրորդ. զի ապաշխարեսցեն զմեղս: Զորրորդ. զի փոխեսցէ զմկրտութիւն Մովսէսի ի նորագոյն ձեւ մկրտութեան:

Հարց. Որպէ՞ս ծանեաւ զՔրիստոս:

Պատասխան. Նախ՝ աստուածային յայտնութեամբն, որ ազգեաց ի նա, երկրորդ՝ իջմամբ Հոգւոյն Սրբոյ զգալի կերպիւ:

### Վասն մկրտութեան Տեառն<sup>1</sup>

Հարց. Վասն է՞ր մկրտեցաւ Քրիստոս:

Պատասխան<sup>2</sup>. Վասն վեց պատճառի.

Նախ՝ զի ջրոյն զաւրութիւն տացէ Որդիս Աստուծոյ ծնանել, որպէս Հոգին Սուրբ ի ստեղծումն աշխարհի ետ զաւրութիւն ջրոյն սեռն կենդանեաց բղիսել:

Երկրորդ. զի ճշմարտեսցէ<sup>3</sup> զվկայութիւն Յովհաննու, որ ասաց. «Նա մկրտեսցէ [զձեզ] Հոգւովն Սրբով» (Մարկ. Ա 8):

Երրորդ. զի աւրէնս դնէր հաւատացելոց զմկրտութիւն, վասն որոյ նախ ինքն մկրտեցաւ, զի մեք ուսցուք:

Չորրորդ. զի ոչ չէր արժան ինքն զինքն մկրտել, վասն որոյ ի Յովհաննէ մկրտեցաւ:

<sup>1</sup> B չիք

<sup>2</sup> A B չիք Հարց ... Պատասխան

<sup>3</sup> A B վկայեսցէ

**Հինգերորդ.** Եցոյց մկրտութեամբն, զի որպէս ջուր զաղտ մարմնոյ լուանայ, սոյնպէս եւ ես զաղտ հոգւոյ մարդկան<sup>1</sup> մաքրեմ:

**Վեցերորդ.** ի հինն թլփատութիւն նշանակ էր հաւատացելոցն յայնժամ, եւ ի նորս ետ թլփատութիւն մեղաց ի ձեռն աւազանին սրբութեան:

### Վասն իջման Հոգւոյն

**Հարց.** Վասն է՞ր էջ Հոգին ի վերայ Քրիստոսի:

**Պատասխան.** Ոչ վասն կարաւառութեան ինչ, զի Աստուածութեամբն էակից էր եւ յարգանդին սրբիչ, այլ վասն չորս պատճառի էջ Հոգին Սուրբ. նախ՝ զի Հոգւովն մկրտեսցէ: Երկրորդ. ի նշանակ ցուցման Որդւոյն Աստուածոյ: Երրորդ. զի գլուխ գոլով մեզ յանդամմ<sup>2</sup> սփռեսցէ: Չորրորդ. զի ցուցցէ, թէ ի մեր մկրտութիւն իջանէ Հոգին Սուրբ:

Իսկ որ ասէ՝ «Յանգեաւ ի վերայ նորա» (տես Յովի. Ա 32), զի այլ ոչ բաժանեցաւ ի նմանէ, որպէս յառաջինն Աղամայ: Զայն ցուցանէ, որ յետ Քրիստոսի, ի նա մկրտելոցս ոչ բաժանի Հոգին Սուրբ<sup>3</sup>, որպէս յառաջն երբեմն իջանէր եւ երբեմն վերանայր:

**Հարց.** Զի՞նչ է շնորհ մկրտութեան:

**Պատասխան.** Վեց ինչ. նախ՝ որդեգրութիւն, երկրորդ՝ Հոգին Սուրբ, երրորդ՝ զանազան պարդեւք, չորրորդ՝ Սրբութիւն մեղաց, հինգերորդ՝ ազատութիւն պարտուց, վեցերորդ՝ բացումն արքայութեան երկնից: Իսկ զՔրիստոս զգենուլն նոյն որդեգրութիւն է, որ ասացաւ: Իսկ թէ վասն է՞ր աղաւակերպ Հոգին, ասացաւ ի Մատթէոս գլուխն<sup>4</sup>:

### Վասն վկայութեան

**Բան.** «Ես տեսի եւ վկայեցի» (Յովի. Ա 34):

**Մեկնութիւն.** Երեք կերպ վկայիցն ճշմարիտ է. նախ՝ տեսեալն, երկրորդ՝ լուեալն, երրորդ՝ ըմբռնեալն: Եւ ի սոցանէ տեսանելովն առաւել հաստատէ: Իսկ Յովհաննուն առաւել ճշմարիտ է. նախ՝ զի ետես զՀոգին իջեալ: Երկրորդ՝ լուաւ զձայնն Հաւը: Երրորդ՝ մկրտեաց ձեռամբ, վասն որոյ ասէ. «Ես տեսի եւ վկայեցի»:

<sup>1</sup> Ըիք

<sup>2</sup> Ըներ յանդամբս

<sup>3</sup> Ըիք

7 - Մեկն. Յովի.

Բան. «Սա է Որդին Աստուծոյ» (Յովի. Ա 34):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ<sup>1</sup>**. Դա եւ սա եւ նա դերանուն է, որպէս Հայր վկայեաց. «Դա՛ է Որդի իմ» (Մատթ. Գ 17): Եւ չորս է իմացումն.

Նախ գիտելի է, զի է անուն, որ զբնութիւն ցուցանէ, որպէս՝ մարդ, եւ է, որ զանձն, որպէս Պետրոս, եւ է, որ զանձն եւ զբնութիւն, որպէս՝ սա, դա, նա:

**ԵՐԿՐՈՐԴ**. ոչ ասէ, թէ դոքա<sup>2</sup>, որ է երկու անձն, եւ ոչ թէ, որ ի սա, որ է երկու բնութիւն, այլ ասէ՝ սա, որ զմիութիւն Բանին եւ մարմնոյն ցուցանէ:

**ԵՐՐՈՐԴ** միտք. «Սա ե», երեք գիր է, մին անձայն եւ երկուքն ձայնաւոր, որ է երեք միութիւն ի Քրիստոս, այսինքն՝ մարմին եւ Հոգի եւ Բան միացեալ, որ կոչի Որդի Աստուծոյ:

**ՉՈՐՐՈՐԴ** միտք. «Սա ե», ոչ ասէ՝ եր, որ ցուցանէ զանսկիզբն, այլ՝ սա է, որ ցուցանէ զմշտնջենաւորն, զի որպէս Բանն է անսկիզբն, նոյնպէս եւ մարդկութիւն անվախճան միացեալ, որպէս ասէ առաքեալ. «Յիսուս Քրիստոս երէկ եւ այսաւր, նոյն եւ յաւետեան» (Եբր. Ժ 8):

**ԻՆԿ ԱՍԵԼՆ՝ ՈՐԴԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ**, այսինքն՝ բնութեամբ եւ ոչ շնորհաւոք: **ՏԵ՛Ա**, զի մարմնով է Միածին եւ ճշմարտութեամբ, եւ բնութեամբ՝ Որդի Աստուծոյ, որպէս նախ անմարմին<sup>3</sup>, նոյնպէս եւ այժմ մարմնով խոստովանիմք զՏէր մեր Յիսուս Քրիստոս Միածին Որդի եւ Աստուած ճշմարիտ:

**ԱՅՍ ԵՐՐՈՐԴ** վկայութիւն, զի Աստուած է Քրիստոս, որպէս ցուցաւ ըստ կարգի:

Բան. «Ի վաղիւ անդր կայր Յովիաննէս եւ յաշակերտաց անտի նորա<sup>4</sup> երկու<sup>5</sup>» (Յովի. Ա 35):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ<sup>6</sup>**. Եւ այս բաժանի յերկուս մասունս, զի նախ դնէ զվկայութիւն Յովհաննու, երկրորդ՝ դնէ զպտուղ վկայութեան, մինչ ասէ. «Լուան ի նմանէ» (Յովի. Ա 37):

Վասն առաջնոյն գիտելի է, զի այս վաղիւս, որ ասէ աւետարանիչս, ոչ է ի կարգ ասացեալ երկու աւուրցն, եւ յայտնի է ի չորրեց. նախ՝ զի ասէ. «Եւ<sup>7</sup> յատրեն երրորդի հարսանիք էին» (Յովի. Բ 1), զի թէ ի կարգին էր, պարտ էր ի հինգերորդ աւրն ասել զհարսանիսն:

<sup>1</sup> B չեք

<sup>2</sup> C սոքա

<sup>3</sup> C մարմնովն

<sup>4</sup> A B չեք անտի նորա

<sup>5</sup> B չեք անտի նորա երկու

<sup>6</sup> B C չեք

<sup>7</sup> C չեք

Երկրորդ. զի եւ աստ ասէ. «Ահա՛ Գառն Աստուծոյ» (Յովի. Ա 29), որ ցուցանէ բազում աւուրք ի մէջ անցեալ: Երրորդ. զի յանապատին առանձին էր Տէրն եւ ոչ ոք ետես զաւուրս քառասուն: Չորրորդ. զի Մարկոս յետ մկրտելոյն ի նոյն ժամն ասէ. «Վարեցաւ ի Յոգևոյն յանապատ» (Իմնտ. Մատթ. Դ 1, Սարկ. Ա 12), ապա տե՛ս մտաւոր, թէ սոյնպէս է, նա առաջին վաղիւն զաւը մկրտութեան ասէ, իսկ ումանք ասեն, թէ այս միջին վաղիւս յետ մկրտութեան է միոյ ամի երկուս աւուրց պակաս գոլոյ, զի ըստ աւանդութեան եկեղեցւոյ Քրիստոս զկնի մկրտութեան յետ միոյ ամի ի նոյն աւուրն զջուրն ի գինի փոխեաց: Եւ աւրն այն երրորդ է ի սոյն աւրէ, իսկ վաղիւն՝ յայլ աւուր, կամ յաւուր միոյ:

Բան. «Կայր» (Յովի. Ա 35):

Մեկնութիւն. Ցուցանէ զյաւժարութիւն Յովհաննու, առ ի վկայել վասն Քրիստոսի բազում անգամ, այսինքն՝ մկրտելովն եւ քարոզելովն ի մէջ բազում ժողովրդոց եւ առաջի իւր աշակերտացն:

Բան. «Զ[ի] գնայր» (Յովի. Ա 36):

Մեկնութիւն. Շրջէր:

Բան. «Քրիստոս Գառն Աստուծոյ» (Յովի. Ա 36):

Մեկնութիւն. Տե՛ս, յետ մկրտութեան կոչէ զնա Քրիստոս, որպէս քահանայն ի մկրտութիւն դնէ զանունն: Իսկ՝ Գառն Աստուծոյ. նախ՝ որպէս գառն ծնունդ է ոչխարին, նոյնպէս Քրիստոս Որդի է Աստուծոյ: Երկրորդ. գառն զբնութիւն ոչխարին ունի եւ Քրիստոս Աստուած է բնութեամբ: Եւ այլն ասացաւ տասն մտաւք:

### Վասն փորձութեան

Հարց. Վասն է՞ր այլ երեք աւետարանիչքս գրեն զփորձութիւնն եւ Յոհաննէս՝ ոչ:

Պատասխան. Ասեմք վասն չորից. նախ՝ զի Աւետարանքն զմարդեղութիւն ուսուցանեն, պարտ էր եւ զփորձութիւն գրել, իսկ Յոհաննէս զԱստուածութիւն Քրիստոսի ուսուցանէ, ոչ զրէ զփորձութիւն «Զի Աստուած անփորձ է չարեաց» (Յակ. Ա 13), ասէ առաքեալ: Երկրորդ. ցուցանէ առ մեզ, թէ յերիս հասակս փորձի մարդ, եւ ի՛ ծերութեան՝ ոչ, վասն տկարութեան մարմնոյն:

<sup>1</sup> Ե չեք

Երրորդ. զի յերրորդ փոխիլն<sup>1</sup> մարդոյս փորձիմք ի չարէն, այլ յետ մահու՝ ոչ, զի՝ «Հոգիք արդարոց ի ձեռին Աստուծոյ են. եւ ոչ մերձեսցի առ նոսա չար», - ասէ Սողոմոն:

Չորս տեսութիւն, զի յերիս որպիսութիւնս մեր փորձիմք մինչ յաւը դատաստանին, այլ յորժամ փառաւք պատկիմք, այլ ոչ է փորձութիւն:

Բան. «Երկու աշակերտք զիետ Յիսուսի» (հմնտ. Յովի. Ա 37):

ՄԵԼՈՒԹԻՒՆ<sup>2</sup>. Նախ՝ յաւըինակ Հրէից եւ Հեթանոսաց, որ հաւատացելոց էին: Երկրորդ. զկրկին սէրն ցուցանէ, զոր ունիմք առ նա, այսինքն՝ զհոգեւորս եւ զմարմնաւորս, կամ զաստիս եւ զհանդերձեալն: Երրորդ. զեկեղեցականս եւ զաշխարհականս ցուցանէ: Չորրորդ. զկուսանս եւ զապաշխարողս նշանակէ:

Բան. «Զի՞նչ խնդրէք» (Յովի. Ա 38):

ՄԵԼՈՒԹԻՒՆ<sup>3</sup>. Ո՛չ վասն անգիտութեան հարցանէ, այլ որպէս զԱղամ եհարց՝ ո՞ւր ես (Ծննդ. Գ 9), զի խաւսելոյ պատճառս տացէ:

Բան. «Ռաբբի» (Յովի. Ա 38):

ՄԵԼՈՒԹԻՒՆ. Որպէս պետն վարդապետաց եւ ըաբունի վարդապետն է: Ոչ թէ վարդապետութիւն ինչ լուեալ էին ի Քրիստոսէ, այլ վկայութեամբն Յովհաննու համարէին զնա լի գոլ իմաստութեամբ:

### Վասն վանաց

Բան. «Ո՞ւր են արեւանք քո<sup>4</sup>» (Յովի. Ա 39):

ՄԵԼՈՒԹԻՒՆ. Նախ հարց. Այլուր ասաց. «Որդւոյ Մարդոյ ոչ գոյ տեղի, ուր դնէ զգլուխ իւր<sup>5</sup>» (տես Սատր. Ը 20), աստ տուն ասէ:

Պատասխան. Ոչ ունէր տուն, որպէս թէ ինքն շինեալ, որպէս աղուէսք եւ թռչունք շինեն (հմնտ. Սատր. Ը 20), այլ ունէր աւթեւան յայյում տան: Դարձեալ՝ վասն ոչ սրբութեան առն ասաց Տէրն. «Ո՛չ գոյ տեղիք Աստուծոյ ի նմա, այլ խաբողին»:

Երկրորդ հարց. Զի՞նչ է աւթեւանն:

Պատասխան. Նախ՝ զտեղիք խաղաղութեան նշանակէ, ըստ այնմ. «Ի տան Յաւը ինոյ արեւանք բազում են» (Յովի. ԺԴ 2): Երկրորդ. զտեղիք սրբութեան, ըստ այնմ. «Արեւանս առ ննա արասցուք» (Յովի. ԺԴ 23): Երրորդ. զտեղիք առանձնութեան, որպէս վանք: Ապա

<sup>1</sup> Ը փոփոխիլն

<sup>2</sup> Յ չեք

<sup>3</sup> Ա Յ Ց մեկնիշ

<sup>4</sup> Ա Յ չեք

<sup>5</sup> Ա Յ չեք

յայտ է, զի վանք զխաղաղութեան եւ զսրբութեան եւ առանձնութեան տեղն նշանակէ: Դարձեալ՝ ստուգաբանի վանք, այսինքն՝ վայանք, որ զսուգ եւ զարտասուս նշանակէ:

Դարձեալ՝ վանք է ի մէջ քաղաքի եւ անապատի. նախ՝ զի քաղաք եւ գեւղ ժողովրդոց է տեղիք, եւ վանք՝ քահանայից, անապատ՝ միայնակեցաց: Երկրորդ. քաղաք՝ մեղաւորաց տեղիք, վանք՝ ապաշխարողաց, անապատ՝ սրբոց, որպէս եղիա եւ Յովհաննէս: Երրորդ. քաղաք՝ ի դէմս Հաւը, վանք՝ ի դէմս Որդւոյ, անապատ՝ ի Հոգւոյն Սրբոյ:

Իսկ զի<sup>1</sup> առ երկու աշակերտոն աւթեւանս կալաւ, եւ այս չորս ինչ ցուցանէ. նախ՝ զի յետ հասարակաց քարոզին առանձին քարոզն առաւել զմարդն ի հաւանութիւն ածէ, զի յայն ժամն գիտէ, որ առ ինքն է հաւաստութեան<sup>2</sup> բանն: Երկրորդ. առաւել ցուցանէ զսէր վարդապետին առ աշակերտոն, եւ զուղիղն ուսուցանէ նոցա առանձին: Երրորդ. զի թերահաւատութիւն ժողովրդեանն յոյժ արգիլէ եւ խափան լինի քարոզութեան, բամբասեն կամ ձանձրանան այլ իմն խաւսին: Զորրորդ. եցոյց, թէ երկուսն լաւ են, որ լսեն եւ<sup>3</sup> առնեն, քան զբազումն, որ ոչ լսեն եւ ոչ առնեն, ըստ այնմ. «Բազումք են կոչեցեալք, եւ<sup>4</sup> սակաւք են ընտրեալք» (տե՛ս Մատթ. Ի 26):

### Վասն տասներորդ ժամուն

Բան. «Ժամ էր իբրեւ տասներորդ» (Յովհ. Ա 39):

Մեկնութիւն<sup>5</sup>. Վեց իր ցուցանէ. նախ՝ զկատարեալ յաւժարութիւն նոցա, որ ոչ կացին յայգն, այլ երեկոյն գնացին առ Տէրն: Երկրորդ. մերձ էր մետասան ժամն, որ յետինքն առաջինք եղեն<sup>6</sup>, այսինքն՝ Քրիստոսի աշակերտքն, որք առաքեցան յայգին առ ի գործել: Երրորդ. զի Տասնաբանեան աւրէնքն ոչ կարացին ազատել: Եկն Տէրն մեր իբր մետասան ժամ, իբր սկիզբն է ազատութեան մերոյ<sup>7</sup>: Զորրորդ. զերեկոյացեալ դարն նշանակէ, յորում եկն Տէր Յիսուս Քրիստոս եւ աւթեւանեցաւ առ մարդիկ: Հինգերորդ. նշանակէ<sup>8</sup> զդարձ հեթանոսաց, որք ի վախճան ժամանակին

<sup>1</sup> Կ հաւաստեալ

<sup>2</sup> Կ չիք լսեն եւ

<sup>3</sup> Կ կոչեցեալ, բայց

<sup>4</sup> Ա Բ Ը սակաւ են ընտրեալ

<sup>5</sup> Բ չիք

<sup>6</sup> Կ լինիին

<sup>7</sup> Կ մարդոյ

<sup>8</sup> Ա Բ չիք

թողին զիւրեանց բնական աւանդութիւն եւ գնացին առ Յիսուս: Վեցերորդ. զայն ցուցանէ, թէ յամենայն ժամ պարտ է ուսանել եւ ուսուցանել, եւ ոչ ընտրել զժամս<sup>1</sup> կամ ծերութիւն եւ տղայութիւն:

Հարց. Վասն է՞ր ասէ. «Իբրեւ տասներորդ»:

Պատասխան. Վասն երից. Նախ՝ զիբրեւն դնելով, առ ի ցուցանել, թէ ծայրք ժամանակաց անստոյգ են մեզ: Դարձեալ՝ զի մասմբ ի վայր լինի, կամ մասամբ ի վեր քան զտասներորդն, վասն այն եղեալ լինի իբրեւն, զի մին ժամն երեսուն մասն է:

Եւ դարձեալ գիտելի է, զի իբրեւն ի Գիրս աստուածային ի տեղի ճշմարիտ ստուգութեան է եղեալ, որպէս այն, որ ասէ Դաւիթ. «Իբրեւ զի բարի է Աստուած Խսրայէլի»<sup>2</sup> (Սաղմ. ՂԲ 1), եւ թէ. «Սուրբ Հոգին իբրեւ զաղաւնի էջ» (հմնտ. Սատր. Գ 16), այսինքն՝ հաստատ եւ ճշմարտապէս աղաւնակերպ եւ ոչ առ աչաւք երեւումն միայն:

### Վասն առաքելոցն

Բան. «Էր Անդրեաս» (Յովի. Ա 40):

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Եւ թէ վասն է՞ր զմիւսն ոչ յիշեաց: Ոմանք ասեն, թէ Պետրոս էր, եւ յանդիմանին յառաջիկայ բանէդ: Ոմանք ասեն՝ չէր<sup>3</sup> ազնուական եւ անուանի ոք, այլ ինքն էր Յոհաննէս, եւ վասն խոնարհութեան զանունն իւր ոչ գրէ, որպէս անդ. «Եւ Պետրոս եւ միւս աշակերտն» (Յովի. Ի 3):

Բան. «Գտանէ սա նախ» (Յովի. Ա 41):

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Ոչ պատահմամբ, այլ ջանիւ հոգ տարաւ եւ ի խնդիր ել, զի որպէս Անդրէսս առաջին աշակերտ եղեւ Քրիստոսի, կամեցաւ եւ զ Պետրոս ածել առ Յիսուս, զի որպէս մարմնով, եւ հոգով եղբարք լիցին:

Բան. «Գտաք զՄեսիա» (Յովի. Ա 41):

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Գտաքն երեք իր ցուցանէ. Նախ՝ զի բազում խնդրեալ էին եւ քննեալ յաւրինաց եւ ի մարգարէից, զի որ խնդրէ, գտանէ (հմնտ. Ղուկ. ԺԱ 9): Երկրորդ. զի գիւտն յանկարծ լինի, եւ Տէր մեր յանկարծ ժամաւ երեւեցաւ: Երրորդ. զի գիւտն ուրախ առնէ զգտողն, եւ որք գտանեն զՏէր մեր, ուրախանան հաւատով, իսկ Մեսիա ի յերայեցւոցն Մեսիա, յունարէն՝ Քրիստոս, հայերէն՝ Աւծեալ:

<sup>1</sup> Ը զժամանակս

<sup>2</sup> Ը հսրայէլի Աստուած

<sup>3</sup> Ը թէ չէր

### Վասն աւծելոց

*Եւ բազմայեղանակ է աւծումն. Նախ՝ աւծումն մարմնական, որպէս փափկասիրաց:*

*Երկրորդ. աւծումն մարտական, որպէս ըմբշամարտիցն:*

*Երրորդ. աւծումն մաքրական, որպէս հիւանդաց:*

*Չորրորդ. աւծումն զմռոյ, որպէս մեռելոց:*

*Հինգերորդ. աւծումն քահանայից, վասն միջնորդութեան:*

*Վեցերորդ. աւծումն թագաւորաց, վասն տիրութեան:*

*Եւթներորդ. աւծումն զաւրութեան<sup>1</sup>, որպէս Կիւրոսին, ըստ Եսայեայ. «Այսպէս ասէ Տէր [Աստուած] ցաւծեալ իւր ցԿիւրոս<sup>2</sup>» (Եսայի Ծօ 1):*

*Ութերորդ. աւծումն ի Հոգւոյն, որպէս մարդարէիցն. «Մի՛ մերձենայք, ասէ, յաւծեալս իմ<sup>3</sup> եւ ի մարդարէս» (Սաղմ. 6Դ 15):*

*Իններորդ. աւծումն որդեգրութեան, որպէս մկրտութիւն:*

*Տասներորդ. աւծումն գերագոյն սոցա ըստ բնութեան միաւորութեան, որպէս Բանին Աստուծոյ ընդ մարդկութիւնս, վասն որոյ կոչի Աւծեալ եւ Քրիստոս: Եւ տե՛ս, զի ի բնութեամբ միաւորութեանց իմանի Քրիստոս, յայտ է, զի յորոշն<sup>4</sup> ըստ ոմանց ոչ եւս մնայ Քրիստոս:*

*Բան. «Սա ած զնա առ Յիսուս» (Յովի. Ա 42):*

*Մեկնութիւն. Նախ՝ զի կատարելապէս ուսցի ի Քրիստոսէ: Երկրորդ. զի դիւրաւ գտցէ պատճառս դառնալոյ առ Քրիստոս, զի բազում բանս եհարց Պետրոս ընդ Անդրէաս, եւ քննեաց եւ ապա եկն առ Քրիստոս<sup>5</sup>, թէպէտ եւ աւետարանիչս համառաւտ անցանէ:*

*Բան. «Ճայեցեալ ընդ նա Յիսուսի» (Յովի. Ա 42):*

*Մեկնութիւն<sup>6</sup>. Ոչ միայն զգայական տեսութեամբն, այլ ներքին տեսութեամբն գրաւեաց զնա:*

### Զի՞ փոխեաց զանունն

*Եւ նախ ասաց զանուն նորա եւ զՀաւրն, զի ցուցցէ զամենաւես գիտութիւն Աստուածութեան իւրոյ: Եւ վեց կերպիւ ամենա-*

<sup>1</sup> Ըստ զօրութեան

<sup>2</sup> Ըօծեալն

<sup>3</sup> A չիք

<sup>4</sup> Ըորոշելն

<sup>5</sup> ԸՅիսուս

<sup>6</sup> B չիք

տես, այսինքն<sup>1</sup> տեսանէ զներքին եւ զարտաքին, այլ եւ զմերձն  
եւ զհեռուն, այլ եւ զանցեալն եւ զհանդերձեալն ներկայապէս  
տեսանէ, իսկ մեք միայն զմերձն եւ զյայտնին տեսանեմք:

Բան. «Կեփաս, որ է Պետրոս» (տես Յովհ. Ա 42):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Կեփաս ի յերայեցւոցն Վէմ կոչի, եւ ի<sup>2</sup> յունացն՝  
Պետրոս, եւ ի մերս՝ Վէմ, զի վէմ եղեւ դաւանութեամբն Քրիստոսի:  
Իսկ զի փոխեաց զանունն. նախ՝ զի ցուցցէ զինքն Տէր եւ իշխան  
գոլ, որպէս անդ զԱբրամամու անունն փոխեաց (իմնտ. Ծննդ. Ժէ 5) եւ  
աստ՝ զ Պետրոսին: Երկրորդ. զի նոր շնորհացն նոր անունս փո-  
խեմք ի յեկեղեցիս: Երրորդ. զի կոչել զանունն Աստուծոյ Արար-  
չի<sup>3</sup>, որպէս ի լինելութեան կոչեաց երկինք եւ երկիր, ծով, ցա-  
մաք եւ այլն, եւ զԱղամ գործակից իւր արար, զի եղ անունս ա-  
մենայն կենդանեաց, եւ քահանայն փոխանորդ է Քրիստոսի<sup>4</sup>,  
վասն այն դնէ զանուանս տղայոց:

### Վասն կոչման աշակերտաց

Եւ գիտելի է, զի կոչումն աշակերտացն չորս անգամ է. նախ՝  
կոչեաց զաշակերտս ի հաւատու: Եւ զայս ասէ Յոհաննէս աստ:  
Երկրորդ. կոչեաց ի սիրելութիւն եւ ի հասարակ աշակերտութիւն:  
Եւ զայս ցուցանէ Ղուկաս, թէ՝ «Ել մի ի նաւուցն, որ էր Պետրո-  
սի» (իմնտ. Դուկ. Ե 3): Երրորդ. յաշակերտութիւն, որ հանապազ ընդ  
իւր շրջէին, եւ զայս ցուցանէ Մատթէոս, Մարկոս յեզր ծովուն,  
զի ձուկն որսային եւ ասէ. «Յայսմ հետէ զմարդիկ որսայք»<sup>5</sup>  
(իմնտ. Մատթ. Դ 19, Մարկ. Ա 17): Զորրորդ. կոչեցան յառաքելութեան  
շնորհն, եւ զայս պատմեն երեք<sup>6</sup> աւետարանիչքն, եւ կոչեցեալ  
երկոտասսան, զորս եւ առաքեալս անուանեաց եւ ետ նոցա իշխա-  
նութիւն եւ առաքեաց ի քարոզութիւն:

Այսքան առ այս:

### Զի ել ի Գալիլեայ

Բան. «Ի վաղիւ անդր» (Յովհ. Ա 43):

<sup>1</sup> Բ որպէս

<sup>2</sup> Ը

<sup>3</sup> Ը Աստուծոյ է Արարչի

<sup>4</sup> Ը փոխանորդ Քրիստոսի է

<sup>5</sup> Ը Այսուհետև զմարդիկ որսացէք զկեանս

<sup>6</sup> Բ չորս

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Այս երրորդ<sup>1</sup> աւր է զկնի կոչման առաքելոցն:

Բան. «Կամեցաւ ելանել ի Գալիլեա» (Յովհ. Ա 43):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ<sup>2</sup>.** Գիտելի է, զի Քրիստոս զկնի<sup>3</sup> մկրտութեան իւրոյ ի տեղի ինչ, որ ոչ ամենեւին բացեայ էր ի Յովհաննէ, անդ լինէր առ ի տալ նմա պատճառ բազում անգամ վկայելոյ, եւ այժմ դառնայ ի Գալիլեայ: Նախ՝ զի թէ կացեալ էր առ Յովհաննէս, ամենայն ժողովուրդն թողոյր զնա եւ գայր առ Քրիստոս, որպէս երկու աշակերտքն գնացին առ Քրիստոս: Եւ վասն պատուելոյ զՅովհաննէս ել անտի, եւ աւրինակ տայ մեզ մի՛ լինել մարդահաճոյ կամ զրկել զփառս այլոց:

Երկրորդ. ել ի Գալիլեայ, զի զաշակերտոսն անտի ընտրեսցէ: Եւ այս վասն վեց պատճառի.

Նախ՝ զի կարգ եւ սահման կատարեաց, զի պարտ է նախ զմերձաւորսն լնուլ բարեաւ եւ ապա զհեռաւորս, որպէս արեգակն նախ զմերձաւորս լուսաւորէ եւ ապա զբացեայն:

Երկրորդ. զի նախկին ծանաւթութիւն տայ առաւել յոյս եւ սէր, հաւանիլ վարդապետութեան նորա:

Երրորդ. զի բարձրացոյց զխոնարհութիւն եւ կործանեաց զհպարտութիւն, զի ոչ ի մեծամեծ քաղաքաց, այլ յանարդ տեղւոջէ ընտրեաց զաշակերտոսն:

Չորրորդ. զի թէ յիւր գաւառէն ոչ էր ընտրեալ զաշակերտոսն, անգէտք ոմանք կարծէին, թէ վասն պակասութեան ինչ յաւտար տեղաց արար զհետեւողսն:

Հինգերորդ. զի լցցի բանն Եսայեայ. «Երկիր Զաքողոնի եւ երկիր Նեփթաղիմայ եւ Գալիլեա, ժողովուրդ, որ նստէր<sup>4</sup> ի խաւարի, լույս ծագեաց նոցա» (հնմտ. Եսայի թ 1-2):

Վեցերորդ. զի կամեցաւ ի Գալիլեա յախմարաց ընտրել զաշակերտոսն: Ո՞չ ի գիտնոց եւ ո՞չ ի մեծատանց, եւ ո՞չ յիշխանաց, նախ՝ զի ասիցեն, թէ բռնութեամբ, կամ ընչիւք, կամ գիտութեամբ խարեցին: Երկրորդ. զի զաւրութիւն Քրիստոսի լիցի եւ ոչ՝ աշակերտացն:

#### Գոտանէ զՓիլիպպոս

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Ոչ պատահմամբ ինչ, այլ եզիտ զնա ըստ իւրում նախախնամութեան ի կոչել եւ ի լուսաւորել զնա:

<sup>1</sup> C Երկրորդ

<sup>2</sup> B չեք

<sup>3</sup> C յետ

<sup>4</sup> A B չեք որ նստէր

Բան. «Եւ ասէ Եկ զկնի իմ» (Յովի. Ա 43):

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ<sup>1</sup>. Եւ նա առժամայն գնաց զհետ նորա վասն չորից. նախ՝ զի բազում վկայութիւն լուեալ էր ի Յովհաննէ վասն Քրիստոսի: Երկրորդ. վասն զաւրաւոր հրամանացն Քրիստոսի, որ կարող էր քարշել առ ինքն: Երրորդ. զի ուսեալ էր ի յԱնդրեայ եւ ի Պետրոսի, վասն որոյ ասէ, թէ Փիլիպպոս էր ի քաղաքէ Անդրեայ եւ Պետրոսի: Չորրորդ. լինի եւ այս, թէ Քրիստոս բազում բանս խաւսեցաւ ընդ Փիլիպպոսի եւ ապա ասէ. «Եկ զկնի իմ»:

Եւ այս գիտելի է, զի յորժամ ոչ ունէր Քրիստոս աշակերտս, ոչ ասաց ումեք, թէ՝ Եկ զիետ իմ, այլ յորժամ վկայութեամբն Յովհաննու Անդրէաս եւ Յոհաննէս աշակերտեցան նմա, յայնժամ ասաց Փիլիպպոսի, թէ՝ Եկ զիետ իմ: Եւ վկայել էր, զի առաջին աշակերտքն այլոց միջնորդութեամբ ածեալ լինէին առ Քրիստոս, առ ի բառնալ զցոյցս մարդասիրութեան<sup>2</sup> ի Քրիստոսի:

### Վասն Նաթանայէլի

Բան. «Գտանէ Փիլիպպոս զեաթանայէլ» (Յովի. Ա 45):

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ<sup>3</sup>. Ոչ պատահմամբ, այլ ի խնդիր ելեալ եգիտ զնա, զի որպէս էր մարմնով եղբայր, լիցի եւ հոգւով եղբայր նորա: Այս Նաթանայէլ գիտէր զԳիրս եւ վարժ էր յաւրէնս եւ ի մարգարէս, եւ Փիլիպպոս թէպէտ սակաւ գիտէր զԳիրս, սակայն ուսեալ էր ի Քրիստոսէ զվկայութիւնս յաւրինաց եւ ի մարգարէից վասն Քրիստոսի:

Բան. «Գրեաց Մովսէս յաւրէնս» (հմնտ. Յովի. Ա 45):

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Նախ՝ յԱրարածքն է գրեալ զաւրհնութիւնսն Յակովբայ վասն Յուղայի. «Մի պակասեցէ իշխան ի Յուղայ» (Ծննդ. Խթ 10) եւ այլն: Դարձեալ՝ յԵրկրորդ Աւրէնս ասէ. «Մարգարէ յարուսցէ Տէր Աստուած իբրեւ [զիս]» (տես Բ Օր. ԺԸ 15): իսկ մարգարէքն բազում վասն Քրիստոսի ճառեն:

Բան. «Գտաք զՅիսուս» (Յովի. Ա 45):

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Գտանելն է որպէս նախ ասացաւ, իսկ գտաք՝ բազմաւորական, որպէս Յոհաննէս, Անդրէաս, Պետրոս եւ այլք: Յիսուսն՝ Փրկիչ ասէ, զոր մարգարէքն բազումս ասացին, որպէս Դաւիթ. «Յարդարութեան քում փրկեա<sup>5</sup>» (Սաղմ. Լ 2) եւ «Տէր, Հաս-

<sup>1</sup> Բ չիք

<sup>2</sup> Ա Բ փառասիրութեան

<sup>3</sup> Բ չիք

<sup>4</sup> Ը Բան Յիսուսի

<sup>5</sup> Ը փրկեա զիս

տատիչ իմ, [ապաւէն իմ] եւ փրկիչ իմ» (տես Սաղմ. ԺԷ 2) եւ «Առաքեաց զԲան իւր եւ փրկեաց<sup>1</sup>» (տես Սաղմ. ՇԶ 20), Ամբակում. «Ուրախ եղէց յԱստուած փրկիչ իմ» (Ամբակ. Գ 18) եւ Եսայի. «Աստուած փրկիչ մեր եւ նա փրկեացէ զմեզ<sup>2</sup>» (տես Եսայի ԼԳ 22), եւ ի գիրս Եզր դպրի է գրեալ, թէ՝ «Զկնի ամսոցս այսոցիկ մեռցի փրկիչ որդի իմ<sup>3</sup> եւ դարձցի վերստին յաշխարհ<sup>4</sup>, այսինքն՝ յառութեամբն եւ միւսանգամ գալուստն:

Բան. «Որդի Յովսէփայ ի Նազարեթէ» (Յովի. Ա 45):

Մեկնութիւն<sup>5</sup>. Զի Յովսէփի խաւսեալն այր էր<sup>6</sup> Մարիամու, թէ-պէտ ոչ գիտաց զնա, որդի կոչի նմա Քրիստոս։ Եւ դարձեալ՝ Յովսէփի յազգէն Դաւթի է, իսկ նազարն յերրայեցւոց ծաղիկ լսի, որպէս ասէ Եսայի. «Բղինեացէ գաւազան յարմատոյն Յեսսեայ եւ ելցէ նազաւրացի յարմատոյ անտի, զոր մեք ունիմք ծաղիկ» (հննտ. Ես ԺԱ 1)։ Յերրայեցւոցն այնպէս է գրեալ, վասն որոյ յորժամ Նաթանայէլ իմացաւ զբանն Փիլիպպոսի եւ զԵսայեայն, Համաձայն գոլ՝ ասէ.

Բան. «Ի Նազարեթէ մա՞րթ ինչ [իցէ բարւոյ իմիք լինել]» (Յովի. Ա 46):

Մեկնութիւն<sup>7</sup>. Նաթանայէլ անուանն Յիսուսի եւ Որդի գոլ Յովսէփայ եւ ի Դաւթէ<sup>8</sup> հաւանութիւն ետ, բայց նազաւրացի գուլոյն ի տարակոյս անկաւ, զի մարգարէքն զՅիսուս ի Բեթղէմէ<sup>9</sup> ասեն գոլ, եւ Փիլիպպոս ոչ էր հասու աւրինաց եւ մարգարէիցն, ոչ կարաց պատասխանել նմա, վասն որոյ ասէ. «Եկ եւ տես»։

Դարձեալ՝ բանս Նաթանայէլի իմանի ոչ հարցմամբ, այլ գրութեամբ, որպէս թէ ասել. «Ի Նազարէթէ ասես ծնեալ զՅիսուս, եւ բարւոք է, զի համաձայնի բանին Եսայեայ»։ Եւ գիտելի է, զի ըստ ճշմարտութեան Աւետարանին եւ Միքիայ ձայնին Քրիստոս ծնաւ ի Բեթղէմ (հննտ. Սիթիա Ե 2), բայց ի Նազարէթ յղացեալ եղեւ եւ անդ սնաւ, վասն այն Նազաւրացի կոչեցաւ։

Բան. «Ետես [Յիսուս] զՆարանայէլ, զի գայր» (Յովի. Ա 47):

Մեկնութիւն. Նախքան զհասանելն Նաթանայէլի առ Յիսուս գովեաց զնա վասն երկու պատճառի. նախ՝ զի ցուցցէ, թէ աստուածային տեսութեամբն գիտաց զբարեմտութիւն նորա։ Երկ-

<sup>1</sup> B բժշկեաց

<sup>2</sup> A B չեք

<sup>3</sup> C Փրկիչ որդի իմ մեռանիցի

<sup>4</sup> Տե՛ս «Անկանոն գիրք Հին Կտակարանի» Վենետիկ, 1898:

<sup>5</sup> B չեք

<sup>6</sup> C խոսնայր էր

<sup>7</sup> C չեք

<sup>8</sup> C ի Դաւթէ փիւ Դաւթի

<sup>9</sup> C Բեթղայեմէ

ըորդ. ի բառնալ զկարծիս երեսհաճութեան, զի թէ առաջի նախանայէլի էր ասացեալ կարծէին, թէ մարդահաճութիւն առնէ եւ թէշէտ ոչ էր հասեալ առ Քրիստոս, այլ մերձ էր մինչ կարէր լսել:

Հարց. Թէ վասն է՞ր այնպէս խաւսէր:

Պատասխան. Վասն երից. նախ՝ զի հաստատեաց<sup>1</sup> զբանն Փիլիպոսի: Երկրորդ. զի քարշեսցէ զնաթանայէլ ի հաւատս: Երրորդ. զի հաստատեացէ զմերձակայսն ի բարիսն, վասն որոյ ասէ.

Բան. «Արդարեւ իսրայէլացի, յորուն նենգութիւն ոչ գոյ» (Յովի. Ա 47):

ՄԵԼՈՆԻՔԻՆ<sup>2</sup>. Արդարեւն ճշմարիտ լսի, որ բառնայ զսուտն եւ զչարն, եւ նենգութիւն է, յորժամ այլ ինչ լինի եւ այլ ինչ երեւի: Եւ չորս կերպիւ ոչ ունէր նենգութիւն. նախ՝ զի ոչ պատրէ զայլս եւ ոչ պատրի, ուստի ոչ պատրեցաւ ի բանիցն Փիլիպոսի, այլ փութացաւ ականատես լինել: Երկրորդ. աննենգ է, որ ճշմարիտ տեսանէ եւ ասէ, որպէս նա՝ զվկայութիւն մարգարէիցն: Երրորդ. աննենգ էր ի պահպանութիւն աւրինացն: Չորրորդ. աննենգ եւ ուղիղ գայր առ Քրիստոս զճշմարտութիւն ճանաչել: Եւ զի ճշմարտասէր եւ խոնարհ էր այրն, ոչ ասաց, թէ ճշմարիտ ասես, եւ ոչ շնորհակալ եղեւ, այլ ասէ.

Բան. «Ուստի՝ ճանաչես զիս» (Յովի. Ա 48):

ՄԵԼՈՆԻՔԻՆ. Այսինքն՝ ի տեսոյ, թէ ի լրոյ ի սիրտս, թէ յերեսս, եւ կամէր, զի այլ իմն ծածուկ յայտնեսցէ նմա:

Բան. «Ի ներքոյ թգենւոյն տեսի զբեզ» (Յովի. Ա 48):

ՄԵԼՈՆԻՔԻՆ. «Հրէայքն նշան հայցէին» (Ա Կորնթ. Ա 22), ~ ասէ առաքեալ, վասն որոյ Տէրն երեք նշան ետ նախանայէլի, զի հաւատասցէ. նախ՝ զծածուկ սրտին յայտնեաց, որ միայն Աստուծոյ է գործ, թէ արդարեւ սուրբ սրտիւ ես դու: Երկրորդ նշան. զի ասաց, թէ՝ «Եթիր ի ներքոյ թգենւոյն, տեսի զբեզ», զոր ոչ ետես զգալապէս: Երրորդ նշան. «Թէ տեսանիցէք զերկինս բացեալ» (Յովի. Ա 51) եւ այլն:

Իսկ ի ներքոյ թգենւոյն երեք է հարց. նախ՝ ի ներքոյ զգալի թգենւոյն էր, յորժամ կոչեաց զնա Փիլիպոս: Երկրորդ. այն թգենին, որ նախաստեղծքն ծածկեցին զամաւթս իւրեանց, յորժամ ապականեցան մեղաւք: Երրորդ. թգենի էր ստուերական աւրէնքն Մովսիսի, զի ունէին տերեւ միայն, այսինքն՝ զբանս աւրինացն եւ ոչ զպտուզս բարեգործութեան, եւ Քրիստոս այնմ աւրինակաւ անէծ զթգենին, որ միայն զտերեւն ունէր: Ապա յայտ է, զի Քրիստոս ճանաչեաց զնա մինչ յերանս նախահաւրն էր մե-

<sup>1</sup> Ը հաստատեսցէ

<sup>2</sup> Ա Բ չեք

զուցելոյ, եւ մինչ յաւրէնս ստուերին էր, սահմանեաց զնա կոչել առ ինքն եւ առ շնորհս իւր:

Բան. «Դու ես Որդի Աստուծոյ» (Յովի. Ա 49):

Մեկնութիւն. Դու ասելն զմի դէմն ցուցանէ, եւ ոչ ասէ՝ դուք, որ երկուութեան է ցոյցք:

Դարձեալ՝ երեք գիծ է, ցուցանէ զերեք միաւորութիւն ի Քրիստոս, այսինքն՝ մարմին, հոգի եւ բան:

Այս չորրորդ վկայութիւն է, թէ Աստուած է Քրիստոս<sup>1</sup>:

Հարց. Վասն Է՞ր Պետրոս զնոյնս դաւանեաց եւ գովեցաւ, եւ սա՝ ոչ:

Պատասխան. Ասեն ոմանք, եթէ ի նշանացն հաւատաց: Ասեմք, եթէ Պետրոս բազում սքանչելիք ետես եւ վարդապետութիւն, եւ ապա դաւանեաց, իսկ սա՝ երկու ծածուկ յայտնութիւն, եւ դաւանեաց եւ ոչ գովեցաւ: Այլ այս է պատճառն, զի Պետրոս զՔրիստոս բնութեամբ Որդի Աստուծոյ խոստովանեցաւ, իսկ նախայէլ խոստովանեցաւ զնա մարդ, եւ շնորհաւք եւ առաքենութեամբ նմանեալ Աստուծոյ, վասն որոյ ասաց շնորհաւք որդեգրութեամբ որդի Աստուծոյ:

Այս է թերի եւ կարծեաւք դաւանեալն, եւ այս յայտ է յերկու իրաց. նախ՝ զի ասաց. «Ուաբբի, Դու ես թագաւորն Իսրայէլի», իսկ բնութեամբ Որդին Աստուծոյ ոչ միայն Իսրայէլի է թագաւոր, այլ եւ ամենեցուն<sup>2</sup>: Երկրորդ. յայտ է ի պատասխանոյն Քրիստոսի, զի ոչ երանեաց զնա որպէս զՊետրոս, այլ վասն կարաւտութեան մտացն բարձրագոյն իմաստ աւանդէ նմա:

Դարձեալ՝ դաւանութիւն Պետրոսի գովի, որպէս թէ յայտնեալ ի Հաւրէ, եւ նախանայէլին ոչ գովի, զի ի կարծեաց մտաց իւրոց: Եւ երեք բան ասաց. նախ՝ Ուաբբի, զի յայտնեաց նմա զծածուկն: Երկրորդ. ասէ՝ Որդի Աստուծոյ, խոստովանի զմեծութիւն ի ծննդենէ ունել ի կողմանէ Աստուծոյ: Երրորդ. ասէ՝ Թագաւոր Իսրայէլի: Ի վերայ ժողովրդեանն ասաց, որպէս եւ հրէայքն ժամանակեայ թագաւոր կարծէին զՔրիստոս:

Բան. «Ամէն, ամէն ասեմ ձեզ» (Յովի. Ա 51):

Մեկնութիւն. «Ճշմարիտ» թարգմանի յերբայեցւոցն, իսկ կրկնելն նախ զառաւել ստուգութիւն ցուցանէ: Երկրորդ. զի Աստուած է մարդացեալ: Երրորդ. զհինն եւ զնորս ինքն ասաց: Զորըրորդ. զերկրաւորս եւ զերկնաւորն ճշմարիտ ասեմ ձեզ՝ ի դէմս ամենայն հաւատացելոց:

<sup>1</sup> С չիք այսիքն՝ մարմին, հոգի եւ բան ... Աստուած է Քրիստոս

<sup>2</sup> С ամենայն արարածոց

Բան. «Փոխանակ զի ասացի<sup>1</sup>» (Յովի. Ա 50):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Նախ՝ փոխանակ փոքր հաւատոցդ զմեծամեծս ուսուցանեմ քեզ: Դարձեալ՝ չնորհիւ որդեգրութեան դաւանեցար զիս, եւս մեծագոյն տեսցես՝ ճանաչելով զիմս ճշմարտութիւն: Եւ դարձեալ՝ վասն սակաւ յայտնութեանդ զիս Որդի Աստուծոյ դաւանեցար, եւս մեծամեծ հրաշս տեսցես, որով կատարեալ հաւատացիս: Եւ այս է, որ ասէ:

Բան. «Տեսանիցէք զերկինս բացեալ» (Յովի. Ա 51):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Զորս կերպիւ իմանի. Նախ՝ երկինքն բացեալ եղեւ ի մկրտութիւն, որպէս ետես զերկինս բացեալ (հնմտ. Մատթ. Գ 16): Երկրորդ. բացեալ եղեւ ի խաչելութիւն, որպէս ասաց աւազակին. «Այսաւը ընդ իս իցես ի դրախտին» (Ղուկ. ԻԳ 43): Երրորդ. բացեալ եղեւ ի համբարձումն, որպէս ասէին. «Համբարձէք իշխանք զդրունս ձեր<sup>2</sup>» (Սաղմ. ԻԳ 7): Զորրորդ. բացեալ լինի ի դատաստանի, յորժամ գալարին երկինք:

Դարձեալ երկինք զ Գիրս աստուածայինս կոչէ. «Երկինք բացցին» (հնմտ. Յայտն. Դ 1) ասէ, այսինքն՝ միտք գրոց եւ հրեշտակաց, այսինքն՝ սպասաւորք Բանին մտցեն ի նա եւ ելցեն, բաշխեն մարդկան ի չնորհաց նորա:

Բան. «Եւ զիրեշտակս Աստուծոյ, զի ելանիցեն եւ իջանիցեն» (Յովի. Ա 51):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Զորս մտաւք է.

Նախ՝ զայն ցուցանէ, թէ՝ «Ես այն Աստուածն եմ, որ ի գլուխ սանդիստոցն<sup>3</sup> նստէի առ Յակոբ, զի ինեւ հրեշտակք յերկիր իջանեն, եւ մարդիկ արժանաւորին յերկինս ելանել»:

Երկրորդ. թէպէտ մարդ<sup>4</sup> եղէ, այլ ի Հաւրէ ոչ բաժանեցայ, վասն որոյ հրեշտակք ի յերկինս ելցեն ի փառաբանութիւն ինձ, յաջմէ Հաւր նստեալ, եւ իջցեն ի սպասաւորութիւն մարդկութեանս, զի ես յերկինս եմ եւ յերկրի, ըստ այնմ. «Աստուած մեր յերկինս եւ յերկրի» (Սաղմ. ճԺԳ 3):

Երրորդ. Ի ձեռն մարդեղութեանս իմ իջցեն հրեշտակք եւ բերեն առ մարդիկ զողորմութիւն իմ, եւ զմարդկան բարեգործութիւնս յերկինս հանեն:

<sup>1</sup> Ա ասաց

<sup>2</sup> Ա Բ չեք զրդումս ձեր

<sup>3</sup> Ա սանդիստոցն, Ը սանդիստոցն

<sup>4</sup> Բ մարդ թէպէտ

**Զորբորդ.** յերկինս ասելով վերացուցանէ զմիտս եւ զկամս մեր առ երկնային փառսն, որ է վախճան հաւատոյ եւ յուսոյն<sup>1</sup>, որ ի Քրիստոս:

Իսկ թէ ուր իջին հրեշտակք, ասեմք նախ՝ թէ<sup>2</sup> ի ծնունդն, որ «Փառք ի բարձունս» երգէին (հմնտ. Ղուկ. Բ 14): Երկրորդ. առ մկրտութիւն սպասաւորէին երրորդական անձնաւորութեանցն (հմնտ. Մատթ. Գ 16-17): Երրորդ. յանապատին հրեշտակք մերձեալ պաշտէին զնա (հմնտ. Մատթ. Դ 11): Զորբորդ. «Առ խաչին հրեշտակք Աստուծոյ զաւրացուցանէին» (հմնտ. Ղուկ. Իբ 43) ասէ: Հինգերորդ. ի յարութեան աւետիս տային (հմնտ. Մատթ. ԻԸ 2-8): Վեցերորդ. ի համբարձումն ասէ. «Արք երկու հասին առ նոսա ի հանդերձս լուսաւորս» (տես Գործք Ա 10): Եւթներորդ. «Ի միւսանգամ գալուստն ելցեն հրեշտակք եւ մեկնեսցեն ի միմեանց» (Մատթ. ԺԳ 49) եւ այլ բազում:

Իսկ որ ասէ՝ Որդի մարդոյ. նախ՝ զի մի եւ նոյն է Որդին Աստուծոյ՝ ծնեալն ի Հաւրէ, եւ նոյն<sup>3</sup> ծնեալն ի մաւրէ. մի Որդի, մի դէմ<sup>4</sup>, մի անձն, մի բնութիւն միաւորեալ: Երկրորդ. տայ աւրինակ խոնարհութեան, զի նաթանայէլ Որդի Աստուծոյ կոչեաց, եւ Քրիստոս զինքն Որդի Մարդոյ ասաց<sup>5</sup>. ուսուցանէ, զի յորժամ ի պատիւ ելանեմք, զչափ անձին մեր մի մոռացուք, այլ ի խոնարհ կացցուք, որպէս ասէ Սաղմոս. «Որքան ի բարձրութիւն հասանես, զանձն քո ի խոնարհութեան կալջիր եւ ի Տեառնէ գտցես շնորհս» (տես Առակ. ԺԶ 3):

Հարց. Նաթանայէլ վասն է՞ր ոչ գրեցաւ ի թիւ երկոտասասանիցն:

Պատասխան. Զի նաթանայէլ եւ Նիկոդիմոս վարդապետք եւ իմաստունք էին, ոչ կարգեաց զնոսա ի թիւ երկոտասանիցն, զի մի ասիցեն, թէ իմաստութեամք պատրեցին զմարդիկ, սակայն կոչեաց զնոսա ի հաւատոս եւ ի կարգ աշակերտացն: Այլ յետոյ կոչեաց զՊաւղոս, որ իմաստուն եւ ճարտար աւրէնսգէտն էր եւ կարգեաց ի թիւ երկոտասանիցն, զի մի ասիցեն մարդիկ, թէ տգիտութեամք մոլորեցան:

Եւ աստ աւարտումն առաջին գլխոյն, թէ Քրիստոս Աստուածէ չորիւք վկայութեամբ.

Առաջինն. աւետարանչին. «Ի սկզբանէ էր Բանն» (Յովի. Ա 1):

<sup>1</sup> Ե սիրոյն

<sup>2</sup> Ե չիք

<sup>3</sup> Ե նոյն է

<sup>4</sup> Ե չիք մի դէմ

<sup>5</sup> Ե ասէր

**ԵՐԿՐՈՐԴՆ. ԵՍԱՅԵԱՅ.** «ՃԱՆԱՊԱՐՀ ԱՐԱՐԵՔ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵՐՈՅ»  
(հմնտ. Ես Խ 3):  
**ԵՐՐՈՐԴՆ. ՅՈՎԱՆՆՈՆ.** «Սա է Որդին ԱՍՏՈՒԾՈՅ» (Յովի. Ա 34) **Եւ այլն:**  
**ՉՈՐՐՈՐԴՆ. ՆԱԺՄԱՆԱՅԷԼԻ.** «Դու ես ՈՐԴԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ<sup>1</sup>»:  
**Այսքան առ այս<sup>2</sup>:**

---

<sup>1</sup> A B չեք Չորրորդն. Նախանայէլի ... Աստուծոյ»  
<sup>2</sup> C չեք Այսքան առ այս

## Գլուխ Բ

Իսկ աստ ցուցանել<sup>1</sup> երկրորդ պատճառ, թէ Աստուած է Քրիստոս, ըստ այնմ արինակի, զի որ որ հաւասարի Աստուծոյ կարողութեամբ՝ Աստուած է, իսկ Քրիստոս հաւասարի Աստուծոյ կարողութեամբ, ապա ուրեմն Աստուած է<sup>2</sup> Քրիստոս, եւ զիաւասարութիւն Քրիստոսի առ Աստուած ցուցանել չորս կերպի. զառաջինն ի փոխարկելոյն զջուրն ի զինի, որպես աստ ասէ<sup>3</sup>.

### Վասն Հարսանեաց

Բան. «Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին» (Յովի. Բ 1):

**Մեկնութիւն<sup>4</sup>.** Ասէ իմաստասէրն Արիստոտէլ. «Եւ հինգ իրի հետեւի<sup>5</sup> ներգործութիւն, եւ ամենայն էութեան գոյ ներգործութիւն», սոյնպէս աւետարանիչս, յորժամ եցոյց զէութիւն Քրիստոսի, ծնանելով ի մաւրէ, այժմ ասէ զսքանչելագործութիւն Քրիստոսի, որով յայտնի աստուածային կարողութիւն, զի գործ սքանչելեաց գեր ի վերոյ են, քան զամենայն կարողութիւն արարածոցս, եւ գործ սքանչելեացն Քրիստոսի ցուցանի չորս կերպիւ:

**Առաջին.** ի ծնունդն, զոր արար Քրիստոս յղացմամբ եւ ծնանելովն ի Կուսէն:

Երկրորդ. գործն, զոր արար Քրիստոս՝ շրջելով ի մէջ մարդկան:

Երրորդ. գործն<sup>6</sup>, զոր արար մեռանելովն:

Չորրորդ. գործն, զոր ինչ արար՝ յառնելովն ի մեռելոց:

Արդ, աւետարանիչս, զոր ինչ վասն ծննդեանն էր, ասաց, իսկ աստ ասէ զգործ սքանչելեացն, զոր արար Քրիստոս՝ շրջելովն ի վերայ երկրի: Եւ այսմ սքանչելեաց պատճառ էր պակասութիւն գինոյն ի հարսանիսն, վասն որոյ նախ զրէ զհարսանիսն եւ նախ ցուցանէ զժամանակն եւ գտեղին, որպէս ասէ. «Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին ի Կանա Գալիլեացւոց<sup>7</sup>» (Յովի. Բ 1):

<sup>1</sup> Ծ ցուցանի

<sup>2</sup> Ե չիք իսկ Քրիստոս հաւասարի Աստուծոյ կարողութեամբ, ապա ուրեմն Աստուած է

<sup>3</sup> Ը ասի

<sup>4</sup> Ե չիք

<sup>5</sup> Ե երեւի

<sup>6</sup> Ե բանն

<sup>7</sup> Ա Ե չիք

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Թիւ աւուրցս յետ մկրտութեան եւ յետ փորձութեան, եւ յետ ամի միոյ է ստուգաբար տեսեալ: Եւ է առաջին աւր միջին վաղիւն, որ Անդրէաս եւ Յոհաննէս աշակերտեցան, երկրորդ աւրն վերջին վաղիւն<sup>1</sup>, որ զՓիլիպպոս եւ զՆաթանայէլ կոչեաց, իսկ երրորդ աւր Հարսանեացն ի Կանա, որ էր քաղաք Նաթանայէլի:

Եւ աւրս այս երիւք պատիւ ունի. նախ՝ զի աւր է ծննդեան Տեառն: Երկրորդ. աւր է մկրտութեան յետ երեսուն ամի: Երրորդ. աւր է զջուրն ի գինի փոխարկելոյն եւ սկիզբն նոր նշանաց, որպէս նոր էր ծնունդն եւ մկրտութիւն:

Դարձեալ ի միտս. առաջինն նշանակէ զծնունդն ի Հաւրէ նախքան զյաւիտեանս, ըստ որում. «Ընդ քեզ է սկիզբն աւուրն վայելչութեան» (տես Սաղմ. ճթ 3): Երկրորդ. զծնունդն ի մաւրէ, որ եղեւ սրբութիւն մարդկան. «Զոր Դայր սրբեաց եւ առաքեաց» (Յովհ. ժ 36) ասէ: Երրորդն. զյարութիւն ի գերեզմանէ, զի այն էր աւր Հարսանեաց, որպէս եւ խաչն պսակեաց եւ փեսայութեան ասէ Սաղովմոն (հմնտ. Սաղմ. Ը 6, Եբր. Բ 9):

Այլ եւ վասն աւուրս այս գիտելի է ըստ տումարին, զի յունուարի վեցը, որ է աւր ծննդեան Տեառն եւ մարտի յոթ եւ տասն, որ է առաջին աւր արարչութեան, որ ըստ երրայեցւոցն ի մինն աւելեացն է, եւ ապրիլի եւթն, որ է աւր աւետեաց: Երեքեան աւրս այս ի մին պատկեր դիպի, որ նշանակէ զեռանձնեայ Աստուածութիւն, այլ լոյսն առաջին, ծնեալ ի Հաւրէ, էջ ի կոյսն եւ ծնաւ ի մաւրէ: Իսկ առ մեզ. առաջին՝ աւր է ծննդեան, երկրորդ՝ աւր մահուանն, երրորդ՝ աւր յարութեան մեր, որ է Հարսանեաց եւ գալստեան փեսային:

Դարձեալ՝ ի յայս միտս երեք աւր Հարսանիք առնեմք ըստ մարմնոյ, իսկ Հարսանիք, այսինքն՝ Հաւանութեամբ փեսային եւ Հարսին զյայտնի<sup>2</sup> միաւորութիւն նշանակէ: Իսկ թէ ո՞ւմ էր Հարսանիք, ասեն ուղղափառ վարդապետք, եթէ Շմաւոնի էր՝ որդւոյն Կղէովպայ, եղբաւրն Յովսէփայ Աստուածահաւրն:

Եւ սուտ են, որ ասեն Յոհաննու գոլ: Եւ յայտ է ի չորից. նախ՝ ի ժամանակէն, որ ի յեռանդեան աւրն աշակերտեցաւ Քրիստոսի Անդրեաւ Հանդերձ ըստ Աւետարանին, այժմ զիա՞րդ առնէր Հարսանիս: Երկրորդ. յայտ է ի պատմութեանցն, որ ասէ զՀարսանիսն լինել Շմաւոնի եւ ոչ՝ Յոհաննու: Երրորդ. անպատշաճ էր, եթէ Տէրն աւրհնէր, եւ ոչ լինէր ծնունդ եւ աճումն: Զոր-

<sup>1</sup> Ըիլք որ Անդրէաս եւ ... վերջին վաղիւն

<sup>2</sup> Յ զի յայտնի

ըորդ. անյարմար էր աւրհնել զամուսնութիւն եւ խափանել զնա, որ միմեանց ընդդէմ երեւի՝ գործով խափանել եւ բանիւ հրամայեալ:

### Թէ Քրիստոս ի հարսանիսն գնաց

Հարցումն<sup>1</sup>. Քրիստոս եւ Աստուածածինն վասն է՞ր գնացին ի հարսանիսն, զի անվայելուչ երեւի, զի թէ կրաւնաւոր ոք երթայի հարսանիս, անպատեհ է, մանաւանդ յորժամ կոյս լիցի, զի բազում անվայելուչ բանք լինին ի հարսանիս:

Պատասխան. Ասեն վարդապետք՝ վասն հինգ պատճառի գնաց Տէր մեր ի հարսանիսն. նախ՝ զի ըստ աւրինացն Մովսիսի ամուսնութիւն առաւել պատիւ ունէր, քան զկուսութիւն: Երկրորդ. զի Յիսուս եւ մայր նորա գիտէին ճշմարիտ, զի ոչ կարէին մեղանչել: Երրորդ. զի յայն հարսանիսն ոչ գոյր այնպիսի խեղկատակութիւն, որպէս այժմ լինի, որ<sup>2</sup> ոչ է առանց մեղաց: Չորրորդ. Քրիստոս գնաց ի հարսանիսն եւ աւրհնեաց՝ ցուցանելով, թէ սուրբ է ամուսնութիւն եւ ոչ՝ պիղծ, որպէս ոմանք ասացին: Հինգերորդ. գնաց Քրիստոս ի հարսանիսն՝ ցուցանելով, թէ նոյն ինքն է, որ ի դրախտին զԱղամ եւ զեւայ աւրհնեաց եւ ասէ. «Աճեցէք եւ բազմացարուք եւ լցէք զերկիր<sup>3</sup>» (Ծննդ. Ա 28), նոյնպէս եւ ասոտ<sup>4</sup> աւրհնեաց զաւրինաւոր կարգ ամուսնութեան:

Բան. «Ասէ մայրն ցՅիսուս» (Յովի. Բ 3):

Մեկնութիւն. Նախ՝ զի պատճառ լիցի սքանչելեացն Քրիստոսի, ասէ. «Գինի ոչ ունին»: Երկրորդ. հայեցաւ ի կարիս նոցա եւ կամեցաւ բառնալ զպատճառս ամաւթոյն:

Հարց. Ուստի՝ յուսայր Մարիամ սքանչելիք լինել յՈրդւոյն, զի դեռ չէր արարեալ:

Պատասխան. Ի վեց իրաց. նախ՝ յաւետեացն Գաբրիէլի, թէ Որդի է Աստուծոյ եւ զամենայն զոր ինչ կամի եւ առնէ: Երկրորդ. զի Հոգւոյն Սրբոյ բնակարան էր Մարիամ: Երրորդ. զի տեսեալ էր զայնքան հրաշս ի ծննդեանն, եւ զգալ մոգուցն եւ այլն: Չորրորդ. զի լուեալ զվկայութիւն Հաւը ել<sup>5</sup> Յովաննու, եւ զի ջումն Հոգւոյն Սրբոյ յաւուր մկրտութեան: Հինգերորդ. յորժամ զաշա-

<sup>1</sup> Ը հարց

<sup>2</sup> Ե եւ

<sup>3</sup> Ա Յ Հեք

<sup>4</sup> Ը նոյն եւս

<sup>5</sup> Ա Յ Հեք

կերտսն հաւաքէր, իմացաւ, թէ յայտնելոց է եւ<sup>1</sup> զփառս իւր։ Վեցերորդ զի ի նոյն ժամու եղեւ ազդումն ի նա։

### Թէ խիստ պատասխանի ետ մաւրն

Բան. «Զի՞ կայ իմ եւ քո, կին դու» (Յովի. Բ 4):

Հարց. Սա<sup>2</sup>, որ յամենայնի հնագանդ էր ծնողացն (հմտ. Ղուկ. Բ 50), ասէ Ղուկաս, աստ վասն է՞ր սաստիւ պատասխանէ։

Պատասխան. Ասեմք վասն բազում պատճառի.

Նախ՝ զի պարծանս եւ փառս ստանալոյ խնդրեաց։ Ասէ. «Իմ գործս ոչ է<sup>3</sup> վասն փառասիրութեան, այլ յաւգուտ եւ ի փրկութիւն մարդկան»։

Երկրորդ. զի դեռեւս ամենեւին ոչ էր պակասեալ գինին, վասն որոյ ոչ փափագէին եւ ոչ խնդրէին։

Երրորդ. զի հրամայքար ասաց զաւրէն մարց ի վերայ սոսկ որդւոց։

Չորրորդ. զի բազումք էին անդ բազմեալ, բայց նա յառաջեաց, ասաց սաստկաբար, զի կամէր, թէ այլ ոք յաւտարացն խնդրեաց։

Հինգերորդ. զի դեռ չէր հասեալ ժամանակ սքանչելեացն, զի սքանչելիս առնէր առ ի հաստատել զվարդապետութիւն իւր եւ տակաւին ոչ էր քարոզեալ եւ վարդապետեալ յայտնապէս, վասն որոյ ասէ. «Չեւ է հասեալ ժամանակ իմ» (Յովի. Բ 4):

Վեցերորդ. զի յաւժարէր ի սքանչելիս առնելն եւ վասն այն եկն ի հարսանիս, այլ սաստելով ասէ. «Զի՞ կայ իմ եւ քո», այսինքն՝ առ ի գիտել զպատշաճաւոր ժամանակն սքանչելեաց ոչ է հասարակ իմ եւ քո։

Եւթներորդ. յորժամ սոսկ իմանաս եւ ոչ հարցմամք։ Ասէ. «Կայ իմ կարողութիւն սքանչելիս առնել, զի Աստուած եմ, այլ չէ ժամանակ»։

Ութերորդ. ասէ. «Կայ իմ կարողութիւն ըստ Աստուածութեանս, որ ի Հաւրէ, առնել զինչ եւ կամիմ, այլ մարմինս, որ ի քէն ունիմ, զի՞նչ ունի կարողութիւն, զոր դու հրամայելով առես»։

<sup>1</sup> C չեք

<sup>2</sup> C նա

<sup>3</sup> A B չեք

իններորդ. ասէ. «Կայ իմ կամք, որպէս ըստ Աստուածութեանս, որ ի Հաւըէ առաքեցայ, զի զկամս նորա առնեմ, սոյնպէս արարից եւ զքոյդ<sup>1</sup>, զի սկիզբն մարդկութեանս իմ ի քէն է»:

Տասներորդ. սոսկ իմայ. «Չի՞ կայ իմ եւ քո, կին դու», այսինքն՝ թէ ի միանալ<sup>2</sup> բնութեամբ Աստուածութեանս եւ մարդկութեանս, որ անքակ մնայ բնութեամբ, կայ, զի արարից ի ժամանակի, այլ դու շուտափոյթ եղեր զաւրէն կնոջ:

Բան. «Ոչ էր հասեալ ժամանակ նորա»:

Հարց. զի՞նչ է. «Չեւ էր հասեալ ժամանակ նորա»:

Պատասխան. Նախ՝ ոչ էր հասեալ ժամանակ սքանչելեաց, զի սքանչելիս առնէր առ ի հաստատել զիւր վարդապետութիւն, եւ դեռեւս ոչ էր քարոզեալ յայտնապէս:

Երկրորդ. «Չեւ է հասեալ ժամանակ իմ», այսինքն՝ ժամանակ պատշաճաւոր առնել սքանչելիս, զոր ես գիտեմ, եւ ոչ՝ դու, զի պակասութիւն զինւոյն դեռեւս ոչ էր յայտնեալ ամենեցուն, վասն որոյ եւ ոչ կարաւտէին:

Երրորդ. ոմանք ասեն. «Ոչ է հասեալ ժամանակ չարչարանաց իմ», զի յայնժամ առ քեզ<sup>3</sup> խոնարհիմ կատարելով զկամս քո, այն է, որ ի խաչին յանձնեաց զնա ի սիրեցեալ աշակերտն:

Չորրորդ. ոմանք հերձուածողք ասեն, թէ գործն Քրիստոսի եւ այլ մարդկան կախեալ կան ի զաւրութիւնս աստեղաց: Եւ այս կարի սուտ է<sup>4</sup>, զի ոչ միայն վասն Քրիստոսի, այլ եւ<sup>5</sup> ամենայն մարդկան բանաւոր զաւրութիւն ոչ է կապեալ ընդ մարմնաւոր գործիս, վասն այն զաւրութիւնք աստեղաց ոչ ուղղակի ազդեն ի բանաւոր հոգիս, այլ միայն անուղղաբար, զի ազդելով ի մարմինն, միջնորդութեամբ մարմնոյն խոնարհեցուցանէ, զի մարդ բանականութեամբն կարէ հակառակիլ կամաց մարմնոյն, վասն որոյ ճարտար աստեղաբաշխք ասեն<sup>6</sup>, թէ այր իմաստուն տիրէ աստեղաց, այսինքն՝ զի յորժամ հետեւի մարմնոյն կամաց, այլ բանական ընտրութեամբն տիրէ աստեղաց, վասն որոյ պարտ է սոյնպէս մեկնել. «Չեւ է հասեալ ժամանակ իմ», այսինքն՝ պատշաճ ժամանակն առնելոյ սքանչելիս:

Հարց. Եթէ չէր ժամանակ սքանչելեաց, ապա վասն է՞ր արար:

<sup>1</sup> B չեք զի զկամս ... եւ զքոյդ

<sup>2</sup> B իմանալ

<sup>3</sup> C չեք առ քեզ

<sup>4</sup> C չեք

<sup>5</sup> B չեք

<sup>6</sup> A B չեք

**Պատասխան.** Թէպէտ ոչ էր ժամանակ սքանչելեացն, առ ի հաստատելոյ զքարողութիւն, այլ արար վասն չորից. նախ՝ վասն աղաչանաց մաւրն: Երկրորդ. վասն պիտոյից գինւոյն: Երրորդ. վասն ամաւթոյ նոցին բառնալոյ: Զորրորդ. զաշակերտսն հաստատելոյ ի հաւատս ժամանակ եղեւ, որպէս թէ թագաւոր ոմն վասն յանցանաց կշտամբից զմարդ եւ ազնուականք ոմանք աղաչեն զնա ոչ պատուհասել, եւ թագաւորն ասէ. «Դեռեւ ոչ է ժամանակ թողլոյ նոցա զմեղանսն», այլ վասն աղաչանաց նոցա թողու:

Եւ այն, զի ասեն, թէ Աստուածածինն փառասիրութեամբ խնդրեաց առնել սքանչելիս, սուտ ասեն, զի փառասիրութիւն մահու չափ մեղք է, եւ Աստուածածին Կոյսն ոչ կարէր մեղանչել ո՛չ մահու չափ եւ ո՛չ ներելի: Եւ այս յայտ է նախ, զի փառք մեղացն այն է, որ միայն վասն անձին լինի, իսկ փառք սքանչելեացն էր փառք Քրիստոսի եւ փառք Հաւը նորա եւ Հոգւոյն, եւ փառք տեսողացն եւ փառք գործոյն սքանչելեաց, ապա ուրեմն ոչ էր մեղք: Դարձեալ՝ մեք յամենայն ժամ փառս տամք Քրիստոսի, եւ ոչ է մեղք: Եւ գարձեալ՝ Տէր զփառաւորիչս իւր փառաւորի, եւ ոչ է մեղք, նոյնպէս եւ փառք Սրբոյ Կուսին վասն սքանչելեացն Քրիստոսի ոչ էր մեղք: Դարձեալ՝ պատասխանին Քրիստոսի առ մայրն թէպէտ անպատիւ երեւի, սակայն վեհագոյն պատուոյ եւ սիրոյ է նշան չորս պատճառաւ:

Նախ՝ զի որքան որդին կատարեալ է, այնքան եւ մայրն պատուել, եւ Քրիստոս կոպիտ պատասխանաւն եցոյց, թէ ոչ ունի առ մայրն մարմնական սէր, որ անկատար է, այլ միայն հոգեւոր սէր, որ պատուական է եւ կատարեալ:

Երկրորդ. Եցոյց Քրիստոս զհաստատ եւ զկատարեալ սէրն Մարիամու, որ ոչ է մարդահաճոյ, եւ ոչ վասն<sup>1</sup> խիստ պատասխանւոյն խռովէր, վասն այն համարձակ խաւելովն պատուեաց զնա:

Երրորդ. առ ի բառնալ զամենայն կարծիս փառասիրութեան ի սքանչելեաց իւրոց, զի թէ քաղցր պատասխան էր տուեալ, ասէին, թէ վասն մարմնական սիրոյն արար զսքանչելիսն:

Զորրորդ. պատճառ. առ ի ցուցանել ըստ հասարակ պատճառի եւ կարգի, թէ ոչ էր հասեալ ժամանակն սքանչելեաց, եւ այս մեծ պատիւ է մաւրն, զի Քրիստոս զոչ ժամանակն վասն պատուոյ մաւրն ժամանակ արար:

<sup>1</sup> Ա Բ չեք

Բան. «Ասէ մայրն ցսպասաւորսն, որ զինչ ասիցէ (ձեզ,) արասջիք» (Յովի. Բ 5):

**Մեկնութիւն<sup>1</sup>.** Նախ ցուցանէ, թէ գիտէր, որ առնելոց էր Քրիստոս սքանչելիս: Երկրորդ. եւ զկերպ սքանչելեացն իմացաւ մասնաւորապէս, այսինքն՝ զի Քրիստոս ի յառնել սքանչելեացն հրամայելոց էր ինչ սպասաւորացն, վասն որոյ ասաց մայրն. «Զոր ինչ ասիցէ ձեզ, արասջիք»:

### Վեց թակոյկը

Բան. «Անդ էին թակոյկը կճեայք վեց» (Յովի. Բ 6):

**Մեկնութիւն.** Ցորժամ ճառեաց աւետարանիչս զպատճառ սքանչելեացն, որ էր պակասութիւն գինւոյն, այժմ ճառէ, թէ որպէս<sup>2</sup> եղեւ, մինչ ասէ. «Անդ էին թակոյկը կճեայք վեց<sup>2</sup>»:

**Մեկնութիւն.** Կուճ մարմարն է, թակոյք ամանն է ջրոյ, որպէս կուժ կամ փարչ:

Բան. «Ըստ սրբութեան» (Յովի. Բ 6):

**Մեկնութիւն.** Ասէ զայս, զի մի կարծեսցի գինի լինել ի նոսա, այլ վասն լուացման էր պատրաստեալ, զի գետք եւ աղբիւրք պակասէ ի Պաղեստինէ, որովք սրբէին զինքեանս ի հրապարակէ մտեալ կամ բռնալիր լուանալ, եւ ջրհորոց ջուրն ոչ էր ի սրբութիւն, եւ թէ երբէք գինի լցեալ լինէր ի թակոյսն, ոչ էր պիտոյ այնմ գործոյ:

Բան. «Տանէին մի-մի ի նոցանէ մարս Երկուս» (Յովի. Բ 6):

**Մեկնութիւն.** Սարն չափոյ անուն է, որպէս մեք «փաս» ասեմք, եւ յոյնք՝ «սաւսարիաւս»: Եւ է սաւսարիաւսն, այսինքն՝ մարն, երկու լիտր, ո՛չ առաւել մեծ եւ ո՛չ փոքր, այլ միջակ: Ասեն, թէ երկուքն ի նոցանէ տանէին մարս երկուս-երկուս, այսինքն՝ չորս-չորս լիտր եւ չորս թակոյկքն ի նոցանէ<sup>3</sup> տանէին երեք-երեք մարս, որ է վեց-վեց լիտր, եւ լինի ամէնն վեշտասան մար եւ երեսուն եւ երկու լիտր:

Բան. «Եւ ասէ. “Լցէք զթակոյկսդ ջրով”» (Յովի. Բ 7):

**Մեկնութիւն.** Եւ վասն է՞ր ասէ՝ լցէք ջրով, զի<sup>4</sup> կարող էր հրամանաւ լնուլ զջուրն, որպէս յանապատին հրամանաւ զհացն անեցոյց, եւ այլն:

<sup>1</sup> B չեք

<sup>2</sup> C չեք

<sup>3</sup> A B չեք ի նոցանէ

<sup>4</sup> C չեք

**Ասեմք վասն երեք պատճառի.** Նախ՝ զի ցուցցէ, թէ ոչ ըստ իւրում կարողութեան առնէր զսքանչելիսն, այլ ըստ մերում աւգտի: Երկրորդ. զի առաջին նշան էր, պարտ էր հաստատուն եւ յայտնի լինել, զի եւ այլոց նշանացն հաւատասցեն: Երրորդ. զի թէ զլասցին, ոտք եւ ձեռք իւրեանց յանդիմանեսցեն զնոսա, որք բերին եւ արկին զջուրն:

Բան. «Տաճարապետն» (Յովի. Բ 8):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ.** Ոմանք զիեսեղբայրն ասեն, որք զհարսանիսն Շմաւոնի ասեն եւ զՅոհաննէս փեսեղբայր եւ տաճարապետ, իսկ Ոսկերեանն ասէ, թէ քահանայ էր եւ ունէր իշխանութիւն ի տաճարին, վասն որոյ եւ պետ ասէ, իսկ խորհրդաբար ասեն տաճարապետ զԱրբահամ<sup>1</sup>, իսկ այլք՝ զՅոհաննէս: Անուշ գինի՝ նոր աւրէնքս եւ յոռի հնոյն ասէ:

### ԱՆՈՒՇ ՊԻԽԱՌՈՅՆ

Բան. «Իբրեւ ճաշակեաց» (Յովի. Բ 9):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ.** Նախ՝ զարմացաւ վասն ազնուութեան գինւոյն, եւ ոչ գիտէր, թէ զաւրութեամբն Քրիստոսի եղեալ էր: Դարձեալ՝ բնութիւն եւ զաւրութիւն, եւ համ, եւ հոտն գինւոյ էր փոխեալ, իսկ գոյնն ջրոյն, ուստի յայտ է յայնմանէ, որ իբրեւ ճաշակեաց, ապա գիտաց, թէ գինի է: Խաւսի ընդ փեսային տաճարապետն՝ յանդիմանելով. «Ամենայն նարդ» (Յովի. Բ 10), այսինքն՝ որ գիտութեամք վարի. «Զանոյշ գինին յառաջագոյն» (Յովի. Բ 10), այսինքն՝ ի սկիզբն կերակրոյն, զի յայնժամ ճաշակելիքն առաւել ճաշակէ զազնուութիւն գինւոյն եւ ոչ զկնի արբեցութեան, եւ յետոյ զյուին, այսինքն՝ զանպիտանն ի ժամ արբեցութեան տան, որ ոչ կարեն զանազանել զլաւն ի վատէն, դու պահեցեր, որպէս թէ յիմարութեամբ արարեր: Եւ աստ պատասխանի ետ փեսայն տաճարապետին, բայց Աւետարանս համառաւտ անցանէ, միայն գրէ զփոխել ջրոյն: Յայսմանէ<sup>2</sup> սովորեալ քրիստոնէից ի յըմպել գինւոյն «անոյշ» ասեմք միմեանց, որպէս տաճարապետն անոյշ գինի ասաց: Եւ զայս ասէ սուրբն եւագրիոս. «Ամենեւիմբ<sup>3</sup> գինի մի ըմպիցես<sup>4</sup>, - այսինքն՝ կրաւնաւորացն կանոն է, - ապա թէ ըմպիցես, զԱրարիչն աւրհնեսցես», զայս աշխարհականաց ասէ:

Բան. «Զայս արար սկիզբն նշանաց» (Յովի. Բ 11):

<sup>1</sup> Հ զԱրբահամ

<sup>2</sup> Հ Եւ յայսմանէ

<sup>3</sup> Հ ամենեւիմն

<sup>4</sup> Հ ըմպեսցես

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ<sup>1</sup>.** Նշան, որ բանիւ լինի<sup>2</sup>, եւ արուեստ, որ ձեռաւք առնէր:

Բան. «Եւ հաւատացին [ի նա] աշակերտը նորա» (Յովի. Բ 11):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Անդրէաս եւ Յոհաննէս եւ այլքն յայնժամ հաւատացին, յորժամ եկին զհետ նորա, այլ աստ առաւել հաստատեցան: Եւ գիտելի է, զի յորժամ աշակերտքն զհետ<sup>3</sup> Յիսուսի կոչեցան ի հարսանիսն, դեռեւս ոչ էին աշակերտեալ նմա, այլ միայն հաւատացեալ, որպէս ցուցաւ ի վերոյ, այլ աշակերտ կոչէ, զի աշակերտելոց էին, որպէս ասեմք. «Պաւղոս առաքեալ, ծնեալ<sup>4</sup> ի Տարսոն», ոչ թէ առաքեալ ծնաւ, այլ իմանամք առաքեալ, յորժամ զայս ասեմք: Ոմանք թիւրեն զբանս զայս, թէ ոչ է սկիզբն ամենայն նշանաց իւրոց, այլ միայն ի Գալիլեա էր առաջին:

Եւ սուտ են վասն երկու պատճառի.

Նախ՝ զի ասաց Մկրտիչն, թէ՝ ես<sup>5</sup> ոչ գիտէի զնա (Յովի. Ա 31), եւ դարձեալ ասէ. «Ի միջի ձերում կայ, զոր դուքն ոչ գիտէք» (Յովի. Ա 26): Արդ, եթէ սքանչելիս էր արարեալ, ոչ լինէր անծանաւթ նոցա:

Երկրորդ. թէ սքանչելիս էր արարեալ մինչ ի մկրտութիւն, ապա ոչ էր պարտ կարապետ ունենալ եւ վկայ, զի սքանչելիքն ըաւական էր ցուցանել, եւ մանաւանդ, զի տղայական հասակին սքանչելիքն առաւել զարմանալի լինէր<sup>6</sup> եւ յերկար ժամանակաւ:

Եւ գիտելի է, զի Քրիստոս սքանչելիք առնէր վասն երկու պատճառի. Նախ՝ զի ցուցցէ զԱստուածութիւն իւր:

Երկրորդ. զի հաստատեսցէ զվարդապետութիւն իւր, որով զմարդիկ ածէր ի հաւատս: Արդ, վասն վարդապետութեան պարտ էր մնալ ի կատարեալ հասակն, որ էր երեսնամեայ հասակն<sup>7</sup>, որպէս Յովսէփ երեսնամեայ ընկալաւ զտէրութիւն ի վերայ Եգիպտոսի, եւ Դաւիթ երեսնամեայ թագաւորեաց, եւ Եգեկիէլ երեսնամեայ մարգարէացաւ, սոյնպէս պարտ էր Քրիստոսի երեսնամեայ լինել եւ ապա յայտնապէս քարոզել: Նա եւ ոչ վայել էր յառաջքան զերեսուն ամն սքանչելիս առնել՝ առ ի հաստատել զվարդապետութիւն իւր: Երկրորդ. զի մինչ ի մկրտութիւն եցոյց զծշմարիտ մարդեղութիւն<sup>8</sup> իւր, զի մի առ աշաւք կարծեսցեն,

<sup>1</sup> B չիք

<sup>2</sup> C չիք

<sup>3</sup> A C ընդ

<sup>4</sup> C ծնաւ

<sup>5</sup> C թէ՝ ես փխ եւս

<sup>6</sup> B առաւել լիներ զարմանալի

<sup>7</sup> C չիք

<sup>8</sup> A B նարդկութիւն

վասն որոյ ոչ էր պարտ առնել սքանչելիս, իսկ յետ մկրտութեան եցոյց զԱստուածութիւն իւր, վասն այն պարտ էր առնել սքանչելիս<sup>1</sup>:

### Վասն Հարսանեաց

**Եւ աստ լինի վեց հարց.**  
**Նախ՝ թէ ընդէ՞ր ի հարսանիսն արար զառաջին նշանս:**  
 Պատասխան. Նախ՝ զի աւրինակ տացէ մեր հոգեւոր հարսանեացն, զի ինքն է<sup>2</sup> փեսայ անմահ եւ հոգիք հաւատացելոց՝ հարսունք նմա, ըստ առաքելոյ. «Խորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմ ի Քրիստոս եւ յեկեղեցի<sup>3</sup>» (Եփես. Ե 32), որ մկրտութեամբն զգեստ լինի մեզ եւ մարմնովն կերակուր եւ գլուխ անդամոցս եւ այլն:

Երկրորդ. այն, զի յետ փորձութեան յաղթելոյ գնաց ի հարսանիսն: Ցուցանէ, թէ որք յաղթեն փորձողին, ի հարսանիսն յաւիտենական վայելեն եւ ուրախանան, իսկ Սրբոյ Կուսին գնալն աւրինակ է մեզ, զի որք սրբութեամբ եւ կուսութեամբ մնան ի կատարումն կենաց իւրեանց, արժանի լինին հոգեւոր հարսանեացն եւ արքայութեան երկնից:

### Վասն յատկութեանց գինւոյն

Երկրորդ. հարց. Վասն է՞ր զսկիզբն<sup>4</sup> նշանացն<sup>5</sup> ի<sup>6</sup> ջուրն աւար:

Պատասխան. Նախ՝ յաւրինակ հին աւրինացն, զի փոխելոց էր զսառնասառոյց աւրէնս, որ էր՝ ակն ընդ ական եւ մահ ընդ մահու (հնատ. Ելք Իւ 24-25), ի նոր քաղցր վարդապետութիւնս, որ ասէ. «Լուծ իմ քաղցր է, եւ բեռն իմ՝ փոքրովի<sup>7</sup>» (Մատթ. ԺԱ 30): Երկրորդ. Ջրովն ցուցանէ զբնութիւնս մեր, զի ցրտացեալ էաք ի սիրոյն Աստուծոյ եւ լուծեալ հոգւով եւ անհամ մտաւք, գէջ ախտիւք, իսկ գալստեամբն Քրիստոսի ջերմացոյց ի սէրն Աստուծոյ եւ քաղցր գործովք, որով<sup>8</sup> տանի<sup>1</sup> առ Աստուծոյ:

<sup>1</sup> C չեք իսկ յետ մկրտութեան ... առնել սքանչելիս

<sup>2</sup> B չեք

<sup>3</sup> A B չեք ի Քրիստոս եւ յեկեղեցի

<sup>4</sup> B սկիզբն

<sup>5</sup> C նշանաց

<sup>6</sup> B չեք

<sup>7</sup> A B չեք իմ փոքրովի

<sup>8</sup> B որք

Եւ այլ երկոտասան յատկութիւնս ունի գինին, որ յարմարի առ մեզ. նախ՝ զի ջուր է որթոյ<sup>2</sup> որակացեալ<sup>3</sup>, քաղցրահամ է, անուշահոտ է, ջերմացնէ, զաւրացնէ, արբեցնէ, ուրախարար է, առողջարար է եւ պատճառ սիրոյ<sup>4</sup>, ի բազում պտղոց ժողովի, ի հնձանս ճմլի, պարզի եւ լինի գինի: Այսաէս ի ճշմարիտ որթոյն որակացաք եւ քաղցրացաք ի բարիս անուշահոտ վարուք եւ այլն:

Երրորդ հարց. Ընդէ՞ր ի սկիզբն նշանացն զբնութիւն փոխեաց:

Պատասխան. Նախ՝ զի ցուցցէ, թէ որպէս ըստ բնութեան կարգի է, որ ի մէջ որթոյն ջուրն ի գինի փոխարկի, իսկ որ ի մէջ թակուկացն շրջեցաւ, այն Աստուծոյ էր կարողութիւն, սոյնպէս եւ անսերմն յղութիւն, եւ անխախտ կուսութեամբ ծնունդն աստուածային է հրաշք, եւ ի վեր, քան զբնութեան գործն: Եւ գարձեալ՝ վկայ լինել վերջին սքանչելեացն, այսինքն՝ յարութեան եւ յաղթութեան մահու, որ ոչ կարաց տիրել նմա: Եւ թէ ոք ասիցէ. «Ապա ջուրն ի գինի եղեալ աւրինակ է Քրիստոսի, որ Բանն մարմին եղեւ», ասեմք թէ՝ ոչ, զի թէպէտ որպէս Բանն մարմին եղեւ, եւ մարդկային տեսակն ոչ փոխեցաւ, եւ ջուրն գինի եղեւ, եւ գոյնն ոչ փոխեցաւ, այսու նման է, այլ անդ միաւորութիւն եղեւ, իսկ աստ՝ փոփոխումն, այսու չէ նման: Եւ թէ ասիցէ ոք. «Ապա աւրինակ է, զի հացն եւ գինին փոխին ի մարմին եւ յարիւնն<sup>5</sup> Քրիստոսի», ասեմք, թէ՝ ոչ, զի գոյացութիւն ջրոյն փոխեցաւ ի գոյացութիւն գինւոյ, եւ մնաց գոյնն, այնու նման է, այլ զի անդ համն եւ հոտն<sup>6</sup> փոխեցաւ, եւ աստ՝ ոչ, այնու չէ նման:

Այս առ երրորդն:

### Խորհուրդ վեցիցն

Հարց. Վասն է՞ր վեցն են թակոյկք:

Պատասխան. Ասեմք, թէ չորս ինչ նշանակէ.

Նախ՝ զի վեց թիւն կատարեալ է, զի յիւր մասանցն բաղկանայ առ ի ցուցանել, թէ որ զմարդն ստեղծ ի<sup>7</sup> վեցերորդ աւուրն

<sup>1</sup> Կ տեսամի

<sup>2</sup> Ա յորթոյ Բ յորթէ

<sup>3</sup> Բ յորթէ որոկացեալ

<sup>4</sup> Ա սիրոյ Ս սիրոյ է

<sup>5</sup> Ս յարիւնն

<sup>6</sup> Ս հոտն եւ համն

<sup>7</sup> Բ չեք

Եւ ի վեցերորդ ժամն յանցեաւ, եւ Տէրն ի վեցերորդ դարն եկն ի վեցերորդ աւրն եւ ի վեցերորդ ժամն<sup>1</sup> վերստին նորոգեաց զնա:

**Երկրորդ.** վեց ի նմանութիւն վեցեկի շարժմանցն ի շարժումն գործոց բարեաց:

**Երրորդ.** ի յաւրինակ հինգ զգայութեանցս եւ միոյ մտացս, որ փոխելոց էր ի յիմացումն, ի տեսութիւն եւ ի լսողութիւն աստուածային աւրինացն, ե՛ւ զհոտոտումն, ե՛ւ զճաշակումն, ե՛ւ զշաւշափումն արդարութեան գործոց, ե՛ւ յիւրն նոր ուխտ փրկութեան մերոյ:

**Չորրորդ.** ի յաւրինակ վեցեկի շարժմանց ամենայն էից լինելութեան ասեմ, եւ յապականութեան<sup>2</sup>, աճելութեան եւ նուազութեան, այլայլութեան, եւ ըստ տեղւոջ փոփոխման, զի փոխելոց էր զմեզ ի նորոգութիւն:

**Հինգերորդ.** դարձեալ գիտելի է, զի վեց թակոյկքն աւրինակ էին միոյն Կուսի Աստուածածնի Մարիամու. Նախ՝ զի որպէս թակոյկքն առանց լնլոյ գինոյ լցան գինով, սոյնպէս Կոյսն Մարիամ առանց սերման առն յղացաւ զՔրիստոս: Երկրորդ. զի որպէս թակոյկքն միանգամ ծնան զգինին եւ այլ ոչ եւս յաւել ծնանել, սոյնպէս եւ Մարիամ մի անգամ ծնաւ զէմմանուէլն եւ այլ ոչ եւս: Երրորդ. զի թակոյկքն ծնան ի տկարութենէ ի<sup>3</sup> զաւրութիւն եւ ի յանարգութենէ ի պատուականութիւն, իսկ Քրիստոս զընդդէմ նոցին ի մեծութենէ ի նուազութիւն, ի փառաց յանարգութիւն, ի ծնունդն եւ յայլն ամենայն՝ ըստ առաքելոյ. «Զանձն ունայնացոյց, զկերպսն ծառայի էառ<sup>4</sup>»:

**Վեցերորդ.** Հարց. Թէ վասն է՞ր զսկիզբեն<sup>5</sup> վարդապետութեան իւրոյ ի յաւազան սրբութեանցն արար:

**Պատասխան<sup>6</sup>.** Զի ցուցցէ, թէ ոչ է հակառակ հնոյն, այնու, ուրով զվարդապետութիւն իւր ի նոցանէ սկսաւ:

**Այս** առաջին վկայութիւն ի կարողութենէ, թէ Աստուած է Քրիստոս, յորում զջուրն ի գինի փոխեաց:

**Այսքան առ այս:**

<sup>1</sup> A B չեք յանցեաւ, եւ Տէրն .. ի վեցերորդ ժամն

<sup>2</sup> C ապականութեան

<sup>3</sup> B չեք

<sup>4</sup> C չեք Երրորդ. զի թակոյըն ... ծառայի էառ»

<sup>5</sup> B սկիզբն

<sup>6</sup> A B հարց

### Թէ զսքանչելիս առնէր

Բան. «Յետ այսորիկ» (Յովի. Բ 12):

**Մեկնութիւն.** Յետ մկրտելոյն եւ զաշակերտսն ժողովելոյ զվարդապետութիւն եւ զնշանսն առնէր<sup>1</sup> վասն չորից. նախ՝ զի ցուցցէ զիմաստութիւն եւ զկարողութիւն իւր: Երկրորդ. տեսցեն եւ լուիցեն ժողովուրդն: Երրորդ. զի փրկեսցին եւ ուղղեսցեն զինքեանս: Զորրորդ. զի վարդապետք ուսուցանեն եւ արասցեն, թէպէտ ոչ սքանչելիք, այլ ճգնութիւն եւ կուսութիւն եւ այլն, որ ի վեր է, քան զբնութիւն:

**Իսկ ասելն.** «Էջ ի Կափառնաումն<sup>2</sup>», (Յովի. Բ 12) որ է մայրաքաղաք գալիեացւոց նախ ցուցանէ, թէ ցած է, քան զկանայ: Երկրորդ. ցուցանէ, թէ այսրանդը<sup>3</sup> շրջէր եւ քարոզէր վասն փրկութեան մարդկան: Երրորդ. ցուցանէ, թէ յորժամ տեսական մտաւք յափշտակի ոք ի վեր եւ ի սուրբ Գիրս, պարտ է գործնականաւ իշանել եւ քարոզել այլոց եւ մխիթարել զաղքատս եւ զտրտմեալս:

Բան. «Ինքն եւ մայրն իւր» (Յովի. Բ 12):

**Մեկնութիւն.** Զի Աստուածահայրն Յովսէփ վախճանեալ էր եւ ի մկրտութենէն ինքն՝ Որդին Միածին, սպասաւորէր ծնողին Աստուածածին Կուսին մինչ ի խաչն, որ յանձնեաց ի կոյսն Յոհաննէս: Եւ եղբարք կոչէին որդիքն Յովսէփայ Յակովոս եւ Յովսէս, որք են յեւթանասնիցն, եւ Շմաւոն եւ Յուղա, որք են յերկոտասանիցն:

Բան. «Եւ անդ լինէր ոչ բազում ինչ աւուրս<sup>4</sup>» (Յովի. Բ 12):

**Մեկնութիւն.** Զի ժամանակն մերձ էր ի յերուսաղէմ գնալոյն, այլ անդ բազում սքանչելիս արար, որպէս Մատթէոս պատմէ:

### Վասն զատկին Հրէից

Բան. «Եւ էր մերձ Զատիկն իրէից» (Յովի. Բ 13):

**Մեկնութիւն.** Եւ զիտելի է, զի պարտ էր Հրէիցն յերիս հանդիսաւոր տաւսն յերուսաղէմ գնալ, որ է Զատիկն, Պենտակոստէն եւ տաղաւարահարքն: Եւ երկութն ներումն ունէր, թէ ոչ ելանէին, բայց ելից Զատիկն անհնար էր, ոչ երթալ ի տաւնն, վասն որոյ ասէ. «Ել Յիսուս յերուսաղէմ» (Յովի. Բ 13): Եւ երուսաղէմն բարձր է, քան զամենայն երկիրն յամենայն կողմանցն, վասն որոյ ելա-

<sup>1</sup> Ը գործէր

<sup>2</sup> Յ Կափառնայում

<sup>3</sup> Յ այսր եւ անդր

<sup>4</sup> Ա Յ չեք ինչ աւուրս

**նել ասի:** Եւ Զատիկ հրեց ասի առ ի բաժանել ի Զատկէս քրիստոնէից, եւ Զատիկ մեր զենաւ Քրիստոս եւ ազատեցաք ի մեղաց եւ ի դժոխոց, զի Զատիկն ազատութիւն լսի, իսկ հրէից Զատիկն գառն էր խորովեալ, որ կերան յեգիպտոս եւ ելին եւ մարմնապէս ազատեցան:

Հարց. Զի՞նչ է, որ հրէայքն նախ Զատիկ առնեն եւ ապա բաղարջով պահք կենան, եւ քրիստոնեայք նախ պահեմք եւ ապա Զատիկ առնեմք:

Պատասխան<sup>1</sup>. Կրկին ինչ ցուցանէ. նախ՝ որ ի դրախտին փափկութեան էր Աղամ, եւ յետոյ յերկիր դառնութեան անկաւ, զայս ցուցանէ հրէից Զատիկն, եւ յետոյ բաղարջ եւ դառնիճ, իսկ Քրիստոսիւ դարձեալ ի դրախտն ել, զայս նշանակէ քրիստոնէից պահքս եւ յետոյ՝ Զատիկն:

Երկրորդ. մեղաւորք նախ ի յերկրի հեշտանան եւ յետոյ տանջին, որպէս Զատիկ հրէիցն, եւ արդարք աստ տանջին եւ յետոյ հանգչին, որպէս Զատիկ քրիստոնէից: Եւ այս առաջին Զատիկն է յետ մկրտութեան, որ ել յերուսաղէմ եւ նշանս արար:

Եւ վասն կրկին պատճառի ել. նախ՝ վասն տաւնին, զի հարկ էր ելանել: Երկրորդ. վասն բազում ժողովրդեանն, որ ուսուցանէր:

Բան. «Եհան ի տաճարէն զաղաւնեվաճառսն, եւ եգիտ ի [տաճարին]<sup>2</sup>» (հմնտ. Յովի. Բ 14):

ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ. Տաճար ոչ զներքին խորանն ասէ, ուր սեղան խնկոցն էր եւ աշտանակն, եւ ոչ՝ սրահ քահանայիցն, որ սեղան ողջակիզացն էր, այլ արտաքին սրահն, որպէս մերս ժամատուն, ուր ժողովուրդն աղաւթէին, եւ վարդապետքն ուսուցանէին: Եւ անդ վաճառէին, զոր ինչ ի տաճարին մատուցանէին: Եւ բարւոք ասէ, զի եգիտ, զի պարտ է դատաւորին ստուգել զմեղսն եւ ապա պատժել:

Բան. «Արջառ, եւ ոչխար, եւ լումափոխս» (տես Յովի. Բ 14):

ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ. Քահանայապետքն վասն ագահութեան հնարեցան. նախ՝ վասն հեռաստանէ եկելոցն, որ ոչ կարէին անասունս բերել: Երկրորդ. զի մի մերձաւորքն պատճառս դնիցեն չմատուցանելոյ: Երրորդ. զի զմի մատուցեալն միւսանգամ եւս վաճառէից: Զորրորդ. զլումմայսն դնէին, զի որք ոչ ունէին արծաթ, փոխ տային: Հինգերորդ. զի փոխէին զարծաթ ընդ փողոյ եւ զոսկի ընդ արծաթոյ եւ այնպէս շահէին: Վեցերորդ. որք ի փոխ տա-

<sup>1</sup> Ընդունակ է այս հայությունը.

<sup>2</sup> Բան. «Եւ եգիտ ի տաճարին»

յին, վաշխ եւս առնուին, ոչ յայտնապէս արծաթ, որ ընդդէմ էր աւրինացն, այլ ինչ կերպիւ, որ աղքատացնէին զժողովուրդն, վասն այն եհան զնոսա ի տաճարէն:

Դարձեալ՝ ի վաճառն լինի չորս իմն չարութիւն. նախ՝ խաբէութիւն, երկրորդ՝ ստութիւն, երրորդ՝ սուտ երդումն, չորրորդ՝ ագահութիւն եւ զրկանք: Վասն այն եհան զնոսա ի տաճարէն, որ գնէին եւ վաճառէին: Իսկ Մատթէոս երկու բան աւելի ասէ. մին, որ զաթոռս աղաւնավաճառացն կործանեաց, եւ միւս, որ ասէ. «Գրեալ է, տուն իմ տուն աղաւթից կոչեսցի<sup>1</sup>» (Մատթ. ԻԱ 13):

Եւ այս է պատճառն. նախ՝ զի այս ի սկիզբն քարոզութեան էր, կակղագոյն առնէր, իսկ անդ՝ մերձ առ խաչին: Երկրորդ. զի մի անգամ աստ խրատելովն ոչ զգաստացան, վասն որոյ յետոյ խստագոյն պատուհասեաց:

### Վասն խարազանին

Բան. «Եւ արար խարազան չուանեայ» (Յովհ. Բ 15):

Մեկնութիւն. զգաւտին իւր կրկնեալ ոլորեաց եւ արար<sup>2</sup> խարազան վասն անասնոցն, եւ չուան՝ վասն չուելոյ եւ վարելոյ<sup>3</sup> զնոսա որպէս զանմիտ:

Հարց. Ընդէ՞ր ոչ փայտիւ եւ այլ կարծր իրաւք:

Պատասխան. Զի տացէ աւրինակ մեզ, զի ոչ է պարտ խրատողի եւ ուսուցչի գաւագանաւ կամ այլ իրաւք հարկանել, որպէս մարմնաւոր իշխանք, այլ բանիւ խրատել եւ փոքր ինչ սաստել:

Դարձեալ հարց. Ընդէ՞ր ոչ բնդդիմանային Քրիստոսի:

Պատասխան. Վասն երկու իրաց. նախ՝ վասն աստուածային զաւրութեան, որ երբեմն յերեսն փայլէր Քրիստոսի, մինչ զի հայել ոչ եւս իշխէին: Երկրորդ. վասն ազնիւ բանին. «Զի իշխանութեամբ էր բան նորա» (Յակ. Դ 32), ասէ, որպէս այն, որ ի մին ձայնէն ի վայր անկան բազմութիւն զինուրացն, որ ասաց, թէ՝ զո՞ իննորեք (Յովհ. ԺԸ 4):

Հարց. Վասն է՞ր այնպէս զայրացաւ Քրիստոս, ե՛ւ բանիւ, ե՛ւ գործով, զոր ոչ այլ ուրեք երեւի, զի յորժամ սամարացի ասէին, հանդարտութեամբ պատասխանէր, նոյնպէս յորժամ այպանէին խաչողքն:

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> A C չեք

<sup>3</sup> C չեք եւ վարելոյ

Պատասխան. Ասեն վարդապետք՝ չորս<sup>1</sup> պատճառի.

Նախ՝ զի ցուցցէ, թէ Տէր էր տաճարին, պարտ էր վրէժինդիր լինել սրբութեան նորին:

Երկրորդ. զի կամէր ի շաբաթու բժշկութիւնս<sup>2</sup> առնել եւ հրէայքն յանցաւոր<sup>3</sup> աւրինացն ասէին, արար զայս, զի ցուցցէ, թէ ոչ է հակառակ Աստուծոյ, այլ համակամ եւ համաբնութիւն ընդ Հաւը:

Երրորդ. զի ցուցցէ, թէ գալստեամբն իւր խափանելոց է ի տաճարէն զամենայն զոհս եւ զպատարագս մարմնական, եւ զհոգեւոր եւ զբանաւոր պատարագս աւետարանեսցէ:

Չորրորդ. ի յաւրինակ մեզ, զի եւ մեք ուսեալ տաճարին Աստուծոյ վրէժինդիր լինիցիմք եւ զմեր համբերութեամբ տանիմք:

Եւ այս չորս կերպիւ.

Նախ՝ է տաճարն մարմնական շինեալ, զոր չէ պարտ ներել մարմնական ինչ եւ անսուրբ ի նմա տեսանել:

Երկրորդ. վասն<sup>4</sup> հասարակ եկեղեցւոյս պարտ է վրէժ խնդրել, իսկ զանձանց մերոց՝ ներել:

Երրորդ. զհոգիս մեր, որ տաճար է Աստուծոյ, պարտ է սրբել, այլ մարմնոյս սրբութեան՝ անփոյթ առնել:

Չորրորդ. վասն երկնից տաճարին փոյթ առնել, եւ վասն երկրաւոր բնակութեանս՝ ոչ: Վասն այն կանոնեցին հարքն, թէ ոչ է պարտ ոչխար կամ այլ ինչ անասուն յեկեղեցիս թողուլ, եւ տես զպատճառն ի գիրս Հարցմանց յիններորդ հատորն, երեսուն եւ ինը համարն<sup>xlvii</sup>:

Բան. «Ապա յիշեցին աշակերտք՝ նախանձ տան քո [կերիցէ զիս]»

(Յովի. Բ 17):

ՄԵԼՈՒԹԻՒՆ<sup>5</sup>. Թէպէտ զՀոգին Սուրբ գեռեւս չէին առեալ աշակերտքն, սակայն զգործսն Յիսուսի մասնաւորապէս իմացեալ ծանեան եւ զմտաւ ածին զբան սաղմոսին (Սաղմ. ԿԸ 10): Եւ վասն երկու պատճառի գրէ աւետարանիչս զայս. նախ՝ զի մի կարծեսցի, թէ առաքեալքն զՔրիստոս մոլեալ համարեցան, զի առանց բանիւ խրատելոյ յանկարծակի արտաքս մերժեաց ի տաճարէն, այլ վասն վրէժինդրութեան Աստուծոյ: Երկրորդ. առ ի ցուցանել, թէ յայնմ հետէ սկիզբն արարին առաքեալքն իմանալ<sup>6</sup> զբանս

<sup>1</sup> Ը վասն չորս

<sup>2</sup> Ը բժշկութիւն

<sup>3</sup> Յ անցաւոր

<sup>4</sup> Ա Յ զի

<sup>5</sup> Յ Ե

<sup>6</sup> Ա Յ Ե

**Գրոց:** իսկ ասելն. «Նախանձ տան քո կերիցէ զիս<sup>1</sup>», այսինքն՝ վառիցէ զիս. նախ՝ զի աստուածային<sup>2</sup> նախանձուն վառեալ էր, որպէս Փեռնէջս, Եղիա եւ Մատաթիա: Երկրորդ. «Նախանձ տան քո կերիցէ զիս<sup>3</sup>», այսինքն՝ նախանձաւոր ցասումն այնպէս<sup>4</sup> եխած զսիրտ իմ, զի ոչ կարացի զնախանձ սիրոյ եւ զսրտմտութեան թագուցանել: Եւ զի կրկին է նախանձ, այսինքն՝ բարի եւ չար, եւ չար նախանձ է, որ յատելոյ սկիզբն առնու եւ բարկանայ ընդդէմ սիրոյ եւ բարեաց ընկերին: Եւ այս է նախանձն սատանայի, որ ընդդէմ Ադամամայ արար: Իսկ բարի նախանձ է, որ սկիզբն ի սիրոյ<sup>5</sup> լինի եւ բարկանայ ընդդէմ այնմ, որ ներհակի ընդդէմ սիրոյ, եւ յայնժամ նախանձն սատուածային է եւ սուրբ, յորժամ ի ջերմեռանդ սիրոյն Աստուծոյ լինի<sup>6</sup> եւ ուղիղ<sup>7</sup> բարկութիւն, եւ ըստ հաճութեան Աստուծոյ կամացն չափեալ, որպէս աստ, սոյնպէս եւ<sup>8</sup> ամենայն ուրեք, թէ վասն Աստուծոյ եւ ընդ Աստուծոյ լինի նախանձ սրտմտութեան, եւ բարկութեան հակառակութիւն բարի նախանձ ասի:

Այս երկրորդ գլխոյն, որ ի կարողութենէն եցոյց, զի Աստուած է Քրիստոս, յորժամ վարեաց զնա ի տաճարէն:

### Զի՞նչ է պատասխանին

Բան. «Պատասխանի ետ» (Յովի. Բ 19):

Դարց<sup>9</sup>. Զի՞նչ է ասել եւ զի՞նչ պատասխանել:

Պատասխան. Երկրոքինն իսաւաք է եւ արտաքերեալ բան, այլ երիւք որոշին. նախ՝ զի ասելն նախ է որպէս հարցանել, իսկ պատասխանելն՝ զինի: Երկրորդ. ասելն<sup>10</sup> ըստ կամաց ասողին է<sup>11</sup>, իսկ պատասխանելն՝ ըստ իմացմանց հարցողին: Երրորդ. ասելն որպէս տարակոյսն է, եւ պատասխանելն՝ որպէս լուծանել:

Բան. «Քակեցէք զտաճարս» (Յովի. Բ 19):

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> A յաստուածային

<sup>3</sup> A B չեք

<sup>4</sup> B այսինքն

<sup>5</sup> B որ ի սկիզբն ի սիրոյ

<sup>6</sup> A B չեք յորժամ ... լինի

<sup>7</sup> C եւ սուրբ եւ ուղիղ

<sup>8</sup> B չեք

<sup>9</sup> A B C մեկնութիւն հարց

<sup>10</sup> B կրկ

<sup>11</sup> C ըստ կամաց է ասողին

**ՄԵԼԱՆՈՎԱՅԻՆ. Ոչ թէ խրատ տայ սպանանել զինքն, այլ մարդ-ըէանայ:**

**Հարց. Վասն Է՞ր ոչ երետ նշան:**

Պատասխան. Նախ՝ գիտէր<sup>1</sup>, զի չէին աւգտելոց: Երկրորդ. զի նենգութեամբ խնդրէին<sup>2</sup>: Երրորդ. նոքա շրջեցին զբանն, եւ նա<sup>3</sup> շրջեաց զպատասխանին: Չորրորդ. զի մեծ նշան առ խաչիւն եղեւ, այսինքն՝ յերկնէ եւ յերկրէ, ի մեռելոց ի կենդանւոյ, եւ յայլն: Հինգերորդ. զի ցուցցէ զինքն կանխագէտ գոլ եւ քննող սրտից նոցա:

Բան. «Զքառասուն եւ զվեց ամ շինեցաւ» (Յովհ. Բ 20):

**ՄԵԼԱՆՈՎԱՅԻՆ. Նախ՝ այպանելով զբանն Քրիստոսի, իբր թէ անհնարին է, ասեն, զայս: Երկրորդ. զի թանձրամիտք էին, ոչ կարացին իմանալ զբանն Քրիստոսի:**

### Վասն մտաց

**Հարցումն<sup>4</sup>. Զի՞նչ է թանձրամիտն:**

Պատասխան. Ցործամ հարցեր զայս, նախ զայն գիտելի է<sup>5</sup>, թէ միտք վասն Է՞ր կոչի, եւ ապա զթանձրամիտն:

Ասեմք զառաջինն, թէ միտք կոչի վասն կրկին իրաց. նախ՝ յամենայն իր մտանէ, այսինքն՝ ի գոյացութիւն, ի պատահումն, ի յերկինս, ի յերկրի, եւ յայլն<sup>6</sup> ամենայն, եւ ոչ ինչ իր կարէ արգիւել զմիտքն, եւ առաւել է, քան զլոյսն, որ միայն ի պարզն թափանցի եւ ի կարծրն ոչ կարէ: Երկրորդ. կոչի միտք, որ ամենայն բան եւ գործ եւ էութիւն եւ տեսութիւն ի յինքն մտանէ եւ զամենայն<sup>7</sup> ժողովէ եւ պահէ անշփոթ, եւ առաւել քան զհայելի, որ գտեսեալն ոչ պահէ:

Առ երկրորդն ասեմք, թէ յերից է թանձրամիտն գոլ. նախ՝ ի թանձրութենէ մարմնոյն հանդիպեալ, երկրորդ՝ յանկիրթն գոլոյ, երրորդ՝ ընդ<sup>8</sup> երկրաւորս կապի:

Նոյնպէս եւ սրամիտն է ընդդէմ սոցա. նախ՝ ի թեթեւ մարմնոյն, երկրորդ՝ ի կրթութենէ, երրորդ՝ զերկնայինսն խորհելոյ, զոր հրէայքն ոչ ունէին:

<sup>1</sup> Բ գիտէին

<sup>2</sup> Բ խորհիեն

<sup>3</sup> Ա Յ Հեք

<sup>4</sup> Ը հարց

<sup>5</sup> Ը զայն էր գիտելի

<sup>6</sup> Ա յայլ

<sup>7</sup> Ը Հեք

<sup>8</sup> Բ Հեք

### ԹԵ ՔԱՌԱՍՈւՆ ԵԼ ՎԵց ԱՃ ՀԻՆԵցաւ ՄԱԾԱՐՆ

Հարց<sup>1</sup>. Իսկ զի՞նչ է զքառասուն ել վեց աճ շինեցաւն.

Պատասխան<sup>2</sup>. Զառաջին շինուածն Սողոմոնի<sup>3</sup> այրեաց նարուզարդան<sup>4</sup> դահճապետն ել գերեաց զերուսաղէմ ի Բաբիլոն, իսկ յորժամ թագաւորեաց Կիւրոս, արձակեաց զՍաղմանասար իշխանն հրէից հինգ բիւրաւք, զի շինեցեն զտաճարն Աստուծոյ: Ել խափանեցաւ մինչեւ<sup>5</sup> ի Դարեհի վեցերորդ ամն, գումարին ամք քառասուն ել վեց, զի մերձակայ այլազգիքն, որ շուրջ կային երուսաղէմի, խափանումն առնէին շինութեան: Ել գիտելի է, զի Կիւրոս թագաւորեաց երեսուն աճ, ել յետ նորա<sup>6</sup> Կամբիւրոս՝ որդի նորա, տասն աճ: Ել յետ նորա երկու ի մոգուցն թագաւորեցին ելթն ամիս, բայց ի ժամանակս ոչ թուին: Ել զկնի նոցա թագաւորեաց Դարեհ, ել յերկրորդ ամի թագաւորութեան իւրոյ առաքեաց զԶաւրաբարէլ ել զՅեսու Յովսեղեկեանց<sup>7</sup> քահանայ յերուսաղէմ բազում ծախիւք՝ տալով նոցա զմնացեալ կահ տաճարին ի պատկերէն, զոր կանգնեաց նաբուգողոնսոր, ել ի չորրորդ ամն շինեաց զտաճարն, որ էր վեցերորդ ամն Դարեհի: Ել սոյնպէս զքառասուն ել վեց աճ շինեցաւ:

### Մարմինն որպէս է տաճար

Հարց. Որպէ՞ս ասի մարմինն Քրիստոսի տաճար:

Պատասխան. Տաճարն կրկին է. նախ՝ էութեամբ, երկրորդ՝ բնակութեամբ: Էութեամբ տաճար է որպէս մարմինս հոգւոյս, ել բնակութեամբ՝ որպէս տունս՝ մեզ, որ երբեմն ի բաց թողուի<sup>8</sup>: Արդ, մարմինն Քրիստոսի տաճար է էութեամբ ել միաւորութեամբ, ըստ այնմ. «Բանն մարմին եղեւ ել բնակեաց ի մեզ» (Յովհ. Ա 14), ել առաքեալ ասէ. «Ի նմա բնակէ ամենայն լրումն Աստուծութեան մարմնապէս» (Կողոս. Բ 9), որ է հապէս: Իսկ բնակութեամբ տաճար են սուրբք Աստուծոյ, որպէս մարգարէք ել առա-

<sup>1</sup> A B C չեք

<sup>2</sup> A B չեք

<sup>3</sup> C Սողովնոնի

<sup>4</sup> B Նաբուզարդ

<sup>5</sup> B կրկ

<sup>6</sup> A B չեք յետ նորա

<sup>7</sup> B Ովսերեկեանց

<sup>8</sup> A B թողլի, C թողլու

<sup>9</sup> A B չեք ի մեզ

քեալքն<sup>1</sup> եւ այլք, սոյնպէս ուղղափառքս ասեմք էութեամբ տաճար, իսկ չարափառքն՝ բնակութեամբ:

Երկու ինչ նշանակէ տաճարն. նախ՝ զանշփոթ միաւորութիւն Բանին եւ մարմնոյն: Երկրորդ. զծածկելն մարմնով զԱստուածութիւն, սոյնպէս թէ ուրեք զգեստ կամ վարագոյր լսես, վասն ծածկելոյն ասէ եւ անշփոթ միութեան, եւ ոչ՝ վասն բաժան բնութեան կամ անձին:

### Այլաբանութիւն ի շինութիւն տաճարին

Եւ գիտելի է, զի քառասուն եւ վեց թիւն ունի մտաւոր իմն տեսութիւն ի մարմինն Քրիստոսի չորս կերպիւ.

Նախ՝ զի ի քառասուն վեց աւրն կատարի ամենայն անդամք մարմնոյ տղային յարգանդի, սոյնպէս զի ի վեց աւրն զերդ զկաթն<sup>2</sup> մակարդեալ լինի եւ ապա ինն աւրն այլ յարիւն փոխարկի եւ ապա երկոտասան աւր այլ հաստատի եւ ամրանայ եւ շնչաւորի, եւ ապա ութ եւ տասան աւր<sup>3</sup> այլ կատարեալ ձեւանայ եւ հաստատի. վեց, ինն, երկոտասան, ութ եւ տասան, որ լինի քառասուն եւ հինգ, եւ ի քառասուն եւ վեցերորդ աւրն՝ հոգեւորի անդրանիկին<sup>4</sup>, բայց ոչ է պարտ իմանալ, թէ Քրիստոսի մարմինն սոյնպէս ձեւացաւ, որպէս մերս, այլ յորժամ Կոյսն Սուրբ Հաւանեցաւ բանին՝ ասելով. «Ահաւասիկ կամ աղախին Տեառն<sup>5</sup>» (Ղուկ. Ա 38), ի նոյն կէտն էջ Բանն Աստուած յարգանդ Կուսին: Եւ առումն եւ բաժանումն արեան, եւ ձեւանալ կատարեալ անդամաւք, եւ հոգեւորիկ բանական հոգւով եւ աստուածանալ միութեամբ Բանին, ի նոյն կէտն եղեւ:

Երկրորդ իմացումն. եթէ զքառասուն եւ վեցն վեց անդամ բազմապատկես, լինի երկու հարիւր եւթանսուն վեց աւր, որ է ինն ամիս եւ վեց աւր<sup>6</sup>, եւ սոյնպէս թուին յեւթներորդ կաղանդէն ապրիկի մինչեւ ի վեցն յունուարի<sup>7</sup>, յորում ծնաւ Քրիստոս ըստ մարմնոյ:

Երրորդ իմացումն. ըստ այլոց, թէ զքառասուն եւ վեց ժամն ասէ, զոր եկաց Քրիստոս ի գերեզմանի, սոյնպէս յերրորդ ժամէ

<sup>1</sup> Ը մարգարեքն եւ առաքեալք

<sup>2</sup> Ը կարն

<sup>3</sup> Ը լիք

<sup>4</sup> Ա Բ հոգի անդրանիկն

<sup>5</sup> Ա Բ չիք

<sup>6</sup> Բ չիք որ է ինն ամիս եւ վեց աւր

<sup>7</sup> Ա Բ Ը յունվարի

ուրբաթին, որպէս ասէ Մարկոս, մինչեւ ի լոյս կիրակէին այսքան ժամ է:

**Զորորդ** իմացումն. զի գիր անուան Աղամայ ըստ յունարէն տառիցն ցուցանի քառասուն եւ վեց, քանզի «ալֆայն», որ է առաջին գիրն Աղամայ, նշանակէ մի, եւ «գեպելդա»<sup>1</sup>, որ է<sup>2</sup> երկրորդ գիրն, նշանակէ չորս, եւ միւս եւս «ալֆայն» նշանակէ մի, եւ վերջին գիրն, որ է «էմ» նշանակէ քառասուն, որ լինի քառասուն եւ վեց, եւ այս խորհուրդ է, զի Քրիստոս առեալ զմարմին հինն Աղամայ եւ եղեւ նոր Աղամ:

Բան. «Եւ զերիս աւուրս կանգնեցից զդա» (Յովի. Բ 19):

**Մեկնութիւն.** Մարմինն Քրիստոսի, որ քակտեցաւ մահուամբն եւ կանգնեցաւ երեքաւրեայ յարութեամբն: Եւ զսոյնպիսի միտս բանին առժամայն ոչ իմացան առաքեալքն, քանզի զկնի այսմ բանի Պետրոս յորժամ լուաւ վասն չարչարանաց եւ մահուանն Քրիստոսի, կամէր խափանումն առնել, մինչեւ սաստեաց<sup>3</sup> Տէրն՝ սատանայ կոչելով զնա<sup>4</sup>, այսինքն՝ հակառակ:

Բան. «Իսկ յորժամ յարեալն ի մեռելոց, յիշեցին աշակերտքն [նորա], թէ այն է, զոր ասացն<sup>5</sup>» (Յովի. Բ 22):

**Մեկնութիւն<sup>6</sup>.** Եւ հաւատացին ի նախատեսութիւն Քրիստոսի:

Բան. «Եւ հաւատացին Գրոյն» (Յովի. Բ 22):

**Մեկնութիւն.** Այսինքն՝ մարգարէիցն, որպէս գրէ Ովսէէ. «Ողջացուսցէ զմեզ յետ երկուցն<sup>7</sup> աւուրց եւ յաւուրն երրորդի յարուսցէ զմեզ» (տես Ովս. Զ 3): Զայս ցուցանէ միտք մարգարէութեանս, թէ յարութիւն Քրիստոսի պատճառ է մերոյ<sup>8</sup> յարութեան: Եւ դարձեալ աւրինակաւ վասն յարութեան Քրիստոսի գրեալ է. «Յունան զերիս տիւս եւ զերիս գիշերս եկաց ի փոր կէտին» (Յովի. Բ 1):

Բան. «Եւ բանին» (Յովի. Բ 22):

**Մեկնութիւն.** Զոր ասաց Քրիստոս աստ եւ յայլում վայրի. «Որդի մարդոյ բազումս չարչարելոց է ի քահանայից եւ ի դպրաց եւ յերրորդ աւուր յարիցէ» (հմնտ. Մարկ. Ը 31-32, Մատթ. Ժ 21-

<sup>1</sup> Բ դէլպէլդա

<sup>2</sup> Ա Բ չեք

<sup>3</sup> Բ ասաց

<sup>4</sup> Ա Բ չեք

<sup>5</sup> Ա Բ չեք, Ը ասացն նախ

<sup>6</sup> Ը չեք

<sup>7</sup> Ը երկուց

<sup>8</sup> Բ մարմնոյ

28, Ղուկ. Թ 22-27), զի յայնժամ ծանեան զճշմարտութիւն բանին զկնի յարութեան Քրիստոսի, յորժամ երաց զմիտս նոցա՝ իմանալ զ Գիրս:

### Այլաբանութիւն երրորդ աւուրն

Դարձեալ<sup>1</sup> գիտելի է, զի երեք աւուրց թիւս յարմարի մտաւոր տեսութեամբ խորհրդաւոր մարմնոյն Քրիստոսի չորս կերպիւ.

Նախ՝ ժողովուրդք քրիստոնէից մինչ ի ժամանակս նեռինն, որպէս յուրբաթու բազում չարչարանս կրեմք յանհաւատից եւ յայլ ազգաց, եւ ի հերձուածողաց, եւ ի գալուստ նեռինն, որպէս ի գերեզմանի յատուկ յառանձնական աղաւթից ծածկելոց է: Իսկ զկնի մահուան նեռինն՝ յարութիւն, զի ամենայն լեզու խոստովան լիցի զՔրիստոս, եւ գայցէ Քրիստոս ի գատաստան հասարակ մարդկան:

Երկրորդ. դարձեալ երեք աւրս այս ցուցանեն զժամանակս բնական աւրինացն եւ զգրաւորն եւ զշնորհաց Աւետարանին, զի բնական եւ գրաւոր աւրինաւքն դեռեւս բնութիւնս մեռեալ էր մեղաւք եւ ապա շնորհաւք Աւետարանին յարութիւն եղեւ թողութեամբ մեղաց եւ մաքուր վարուք:

Երրորդ. ըստ մտաց երեք աւրս այս տեսանի յերեք որպիսութիւն մարդկան. առաջին աւր է ծննդեան մինչ ի մահ, որ ի չարչարանս եմք, երկրորդ աւր՝ յետ մահու ի գերեզմանի հանգչիմք ընդ Քրիստոսի, երրորդ՝ աւր յարութեան, յորժամ գայ Քրիստոս եւ յարուցանէ զմեզ:

Չորրորդ տեսութիւն երեք աւուրց. առաջին աւրն արարչութեան, որ ունէր երեկոյ անառաւաւտ, յորում եղեն ամենայն, երկրորդ աւրն ունի առաւաւտ եւ երեկոյ՝ մինչ ի կատարած, երրորդ աւրն ունի առաւաւտ եւ է աներեկ, որ է աւր յարութեան մերոյ<sup>2</sup> եւ հանդերձեալ կեանքն, որք փառաւորին ի Քրիստոսէ եւ նմա փառք յաւիտեանս. Ամէն<sup>3</sup>:

Այս երրորդ վկայութիւն ի կարողութենէ, զի Աստուած է Քրիստոս, որ ասաց. «Քակեցէք զտաճարս եւ զերիս աւուրս կանգնեցից յարութեամբ» (տես Յովհ. Բ 19):

<sup>1</sup> Եւ դարձեալ

<sup>2</sup> Բ մարմնոյ

<sup>3</sup> Ա Բ չեք

### Վասն տաւնի Զատկին

Բան. «Եւ էր Յիսուս յերուսաղեմ ի Զատկի տաւնին» (Յովհ. Բ 23):

**Մեկնութիւն.** Տաւն Զատկին ոչ է մի աւր, այլ եւթն աւր, զոր բազում նշանս գործեաց եւ բազումք հաւատացին յանուն նորա, այսինքն թէ՝ նա է ճշմարիտ Քրիստոսն խաւսեցեալ մարդարէիւքն:

Բան. «Բայց ինքն Յիսուս ոչ հաւատայր զանձն նոցա<sup>1</sup>» (Յովհ. Բ 24):

**Մեկնութիւն.** Նախ՝ զբարձրագոյն խորհուրդ հաւատոյ աստուածգիտութեան իւրոյ ոչ յայտնէր նոցա: Երկրորդ. զԱստուածութեան փառաց նշոյլս գիտութեան ոչ ծագեաց ի սիրտս նոցա, որպէս Պետրոսին եւ Նաթանայէլին:

### Վասն թերի հաւատոյ

**Եւ ասէ զպատճառն, զի թերի էին ի հաւատն եւ նենգութեամբ:**

Եւ այս յերիս դէմս. Նախ՝ ի սկիզբն հաւատոյն, զի ի նշանացն յաղթեցան եւ հաւատացին, եւ ոչ կամաւ եւ յաւժարութեամբ: Երկրորդ. ստութեամբ միայն ի լեզուս, եւ ոչ ի սրտի հաւատացին:

Երրորդ. Նենգութիւն ունէին սպանման նորա, եւ սոյնպէս ի սկիզբն եւ ի մէջն եւ ի վախճան հաւատոյն, թերի էին եւ ոչ կատարեալ, զի այն է բոլոր եւ կատարեալ, որ կամաւ եւ յաւժարութեամբ հաւատայ, եւ սրտիւ եւ լեզուաւ եւ յուսով ի սէրն Աստուծոյ:

Եւ դարձեալ գիտելի է, զի ոմանք ի սրտի եւ ի լեզուի հաւատան, կատարեալ է, եւ ոմանք լեզուաւ եւ ոչ սրտիւ, սուտ է, եւ ոմանք սրտիւ եւ ոչ լեզուաւ, պակաս է, որպէս Նիկոդիմոսին, որ գիշերով եկն առ Քրիստոս:

**Եւ աստ ճառէ զկերպ ճանաչմանն:**

Բան. «Զի ոչ էր պիտոյ, թէ որ վկայեսցէ վասն մարդոյ» (Յովհ. Բ 25):

**Մեկնութիւն.** Զի մարդիկ պատրին յերեւելի բանս եւ ի գործս, այլ Քրիստոս զծածուկ բանս եւ զվարս ճանաչէր եւ գիտէր՝ զինչ կըէր ի մարդն, եւ այնու եւս ցուցանի, թէ Աստուած է Քրիստոս եւ ծածկագէտ, որ քննէ զսիրտս եւ զերիկամունս:

Այս չորրորդ վկայութիւն, զի Աստուած է Քրիստոս ի կարողութենէ բազում սքանչելեացն, զոր գործեաց յերուսաղէմ:

<sup>1</sup> A B չեք

Արդ, առաջին կարողութիւն այն է, որ զջուրն ի գինի փոխեաց: Երկրորդ կարողութիւն, որ զհրէայսն եհան ի տաճարէն խարազանաւ: Երրորդ կարողութիւն վասն յարութեան, որ ասաց. «Յերիս աւուրս կանգնեցից զդա»: Չորրորդ կարողութիւն ի բազում սքանչելեացն, որ արար ի տաւնի Զատկին, յորում բազումք հաստացին ի նա:

---

## Գլուխ Գ

**Վասն Նիկողիմոսի**

Բան. «Եւ էր այր մի ի փարիսեցւոց» (Յովհ. Գ 1):

**ՄԵԼԿԱՆՈՒԹԻՒՆ. Ասաց նախ<sup>1</sup> վասն կարողութեան Քրիստոսի, ասէ այժմ վասն փրկագործութեան Քրիստոսի, որով հաւասարի Աստուծոյ: Եւ այս չորս կերպիւ. նախ՝ վասն կացուցանելոյն զխորհուրդ մկրտութեան, որով փրկին մարդիկ, զոր աստ ասէ առ Նիկողիմոս<sup>2</sup>:**

Բան. «Եւ էր այր մի» (Յովհ. Գ 1):

**ՄԵԼԿԱՆՈՒԹԻՒՆ. Սա մի էր ի բազմացն, որք հաւատացին յերուաղէմ:**

**Եւ երեք գովութիւն դնէ.**

Նախ՝ փարիսեցի ասէ, այսինքն՝ բաժանեալ յատուկ վարուք եւ գիտութեամբ, զի առաքինիք էին եւ պահողք եւ աղաւթողք: Այլ եւ գիտութեամբ առաւել, զի յարութեան մեռելոց եւ հոգեւոր ստեղծուածք խոստովանէին, զոր տգիտութեամբ սադուկեցիքն ուրանային, վասն որոյ ասէր<sup>3</sup> Պաւղոս. «Ուսմամբ փարիսեցի եմ» (Գործք ԻԶ 5):

**Երկրորդ. իշխան հրէիցն ասէ, զի յայնժամ քահանայապետքն եւ քահանայք եւ վարդապետքն իշխանութիւն ունէին ի վերայ ժողովրդեանն, եւ սա քահանայապետ էր, այլ Աննաեւ Կայիափա մեծագոյնք էին, քան զսա:**

**Երրորդ. զի վարդապետ<sup>4</sup> Քրիստոս ասէ. «Դու ես վարդապետ իսրայէլի<sup>5</sup>» (Յովհ. Գ 10): Եւ գիտելի է, զի Քրիստոս զառաքեալսն ի տգիտաց ընտրեաց, զի հաւատս մեր ոչ իմաստութեամբ մարդկան լինէր, այլ իմաստութեամբն Աստուծոյ, այլ զոմանս իմաստուն կոչեաց, որպէս զնաթանայէլ եւ նիկողիմոս եւ Պաւղոս, զի մի արհամարհիցեն ոմանք, թէ հաւատս<sup>6</sup> մեր ի պարզամտաց է ե-դեալ:**

Բան. «Եկան առ նա ի գիշերի» (Յովհ. Գ 2):

<sup>1</sup> Բ կրկ

<sup>2</sup> Ա Բ Նիկողենոս

<sup>3</sup> Բ ասէ

<sup>4</sup> Ա Բ չեք

<sup>5</sup> Ա զի վարդապետ ասէ Քրիստոս դու ես իսրայէլի

<sup>6</sup> Ը հաւատք

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Նախ՝ վասն երկիւղի, զի մի բարկասցին այլքն։ Երկրորդ. վասն ամաւթոյ, զի վարդապետի անուն ունէր եւ առաջի ժողովրդեանն ամաչէր ուսանիլ։

Եւ կրկին վարդապետ կոչեաց զՔրիստոս. Նախ՝ վասն ուսուցանելոյն, երկրորդ՝ վասն յատուկ առմանն<sup>1</sup>, իբր յԱստուծոյ ընկալար։ Եւ բարւոք ասէ, թէ՝ «Ոչ ոք կարէ զայդ նշանդ առնել, զոր դուդ առնես» (Յովի. Գ 2), զի անքննելի իրաց ճշմարտութիւն սքանչելեաւք հաստատի։ Եւ ոչ խոստովանէր զնա բնութեամբ Որդի Աստուծոյ, այլ սուրբ մարդ եւ յԱստուծոյ առաքեալ, որպէս զմարդարէսն, այլ զի ոչ նենգութեամբ եկն, այլ յստակ մտաւք եւ խոնարհութեամբ կամէր ուսանել, վասն այն Քրիստոս կամեցաւ ուսուցանել նմա զճշմարտութիւն Աւետարանին եւ վասն ճանաչման իւրոյ, որպէս ասէ։

### Վասն վերստին ծննդեանն, որ է մկրտութիւն

Բան. «Եթէ ոչ ոք ծնցի ի ջրոյ, ո՛չ կարէ տեսանել» (տես Յովի. Գ 3):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Նախ՝ զի միայն Աստուած ունի զԱստուած տեսանել բնութեամբ, իսկ մարդիկ տեսանեն զնա շնորհաւք մկրտութեան եւ հաւատով, որպէս գրէ Պետրոս ի Կաթուղիկեայց, եթէ մկրտութեամբն «Մեծամեծ եւ պատուական աւետիքն պարգեւեալ են ձեզ, զի նոքիմք աստուածեղէն բնութեան լինիցիմք հաղորդակիցք» (հմնտ. Բ Պետր. Ա 3-4): Երկրորդ. ցուցանէ, թէ մկրտութիւն է առաջին խորհուրդ քրիստոնէից եւ նա է դուռն արքայութեան երկնից։

Եւ գիտելի է, զի չորս կերպիւ ասի դուռն. Նախ՝ ծնունդն դուռն է մարմնաւոր կենաց։ Երկրորդ. մկրտութիւն դուռն է հոգեւոր կենացն յաւիտենից։ Երրորդ. հաւատն դուռն է տեսութեան Աստուծոյ։ Չորրորդ. խոստովանութիւն դուռն է արդարութեան եւ շնորհաց։

Եւ թէ ոք ընդդէմ ասիցէ, զի նախահարքն հին աւրինաւքն փրկեցան, թէպէտ եւ ոչ մկրտեցան, ասեն վարդապետք, թէ յայնժամ ոչ էր հարկ մկրտութեան, այլ նոքա արդարացան<sup>2</sup> շնորհաւք մկրտութեան։ Նախ՝ զի ունէին նահապետքն հաւատովք զմկրտութիւն, այլ եւ աւրինակաւ զմկրտութիւն ունէին, որպէս յառաջ՝ թլիքատութիւն եւ յետոյ՝ զլուացումն աւազանացն։

<sup>1</sup> Յ ուսմանն

<sup>2</sup> Յ մկրտեցան

Եւ թէ ոք ասիցէ. «Ապա հաւատն միայն մկրտութիւն է առանց ջրոյ», և ասեմք, թէ՝ ոչ, զի մարդ հաւատացեալ առանց ջրոյ ոչ մտանէ յարքայութիւն, եւ այս յայտ է ի Գործքն. նախ՝ որպէս ասաց ներքինին. «Ահա՝ ջուր, զի՞նչ արգելու ի մկրտելոյ», և ասէ Փիլիպպոս. «Եթէ հաւատաս բոլորով սրտիւ», եւ նա ասէ. «Հաւատամ, եթէ Յիսուս է Որդի Աստուծոյ», եւ մկրտեցաւ (հմտ. Գործք Ը 36-38):

Երկրորդ. յայտ է, մինչ խաւսէր Պետրոս ի տանն Կոռնելիոսի, հանգեաւ Հոգին ի վերայ նոցա, որ լսէին զբանն, յայնժամ ասէ Պետրոս. «Մի՞թէ զջուր ոք արգելու», եւ հրամայեաց նոցա մկրտիլ յանուն Յիսուսի Քրիստոսի (Գործք Ը 47): Ահա՝ որ հաւատով մկրտած էին եւ ջրով մկրտեցան, եւ գիտելի է, թէ մարդ արտաքոյ բնութեան<sup>1</sup> մեռանի եւ ոչ կարէ ընդունել զմկրտութիւն ջրոյն եւ կամի մկրտիլ, բաւական է անդ հաւատով մկրտեալն, սոյնպէս եւ արեամբ մկրտեալն<sup>2</sup>, թէ ոչ կարէ ջրով մկրտիլ, բաւական է, թէ զկամսն ունիցի<sup>3</sup>:

Դարձեալ գիտելի է, թէ մարդ մկրտի միայն ջրով, առանց էութեան բանին, զոր Քրիստոս հրամայեաց, ոչ է մկրտեալ, վասն այն Պաւղոս զմկրտեալն Յովաննու վերստին մկրտեաց, զի Յովաննէս զձեւ բանին<sup>4</sup> ոչ ասէր, որպէս Քրիստոս<sup>5</sup>:

Եւ դարձեալ գիտելի է, զի յայնժամ, յորժամ ասաց Քրիստոս զբանս զայս, ոչ էր հարկ ամենեցուն մկրտութիւն, մինչեւ ի մահն Քրիստոսի, զի գեռեւս թլփատութիւն զաւրութիւն ունէր, իսկ յետ յարութեան, յորժամ մկրտութիւն ընդհանուր քարոզեցաւ, յայնմ հետէ հարկ էր ամենեցուն մկրտիլ:

Բան. «Որ ծերն իցէ» (Յովհ. Գ 4):

Մեկնութիւն. Նախ՝ զի ինքն ծեր էր<sup>6</sup>: Երկրորդ. զի ծերին անհաւատալի թուի միւսանգամ ծնանիլ<sup>7</sup>, քան տղային: Տկար էր մտաւք, զի միայն զմարմնոյ ծնունդս գիտէր, եւ ոչ՝ զհոգւոյ, այլ եւ ոչ զբանին Աստուծոյ զծնունդն իմանայր, զի ահա մարդիկ ծնեալք ի հողոյ մաւրէ եւ մտանեմք ի հող եւ ծնանիմք յարութեամբ: Եւ դարձեալ՝ Բանն Աստուած ծնեալ ի Հաւրէ, եւ ծնաւ ի մաւրէ, եւ ել առ Հայր, եւ դարձեալ գալոց է յերկիր եւ ելանէ առ

<sup>1</sup> Ը բնակութեան

<sup>2</sup> Ա Յ մկրտիլն

<sup>3</sup> Ը ունի

<sup>4</sup> Ը բանին Քրիստոսի

<sup>5</sup> Յ որպէս եւ Քրիստոս

<sup>6</sup> Յ զի ծեր էր ինքն

<sup>7</sup> Ը ծնանել

**Հայր:** Այսպէս եւ մեք՝ ծնեալք մարմնով ի մաւրէ ծնանիմք հոգւով յաւազանէ:

Բան. «Եթէ ոք ոչ ծնցի ի ջրոյ եւ ի Յոգոյ» (Յովի. Գ 5):

**Մեկնութիւն.** Որպէս թէ ասել՝ ծնունդն այն, սոյնպէս պարտ է իմանալ.

Նախ՝ զի ջուրն արտաքոյ լուասցէ, եւ Հոգին Սուրբ ի ներքուստ սրբեսցէ:

Երկրորդ. զի այսու ծննդեամբս լինիմք պատկեր Քրիստոսի, որպէս Քրիստոս ունի մարմին տեսանելի եւ Աստուածութիւն անտեսանելի, նոյնպէս աստ ջուր է զգալի եւ ներգործութիւն Հոգւոյն անտեսանելի:

Երրորդ. որպէս ի մարմնական ծնունդն պիտոյ է սերմ եւ արգանդ, յորոյ տղայն ղաւղեալ գոյանայ, նոյնպէս ի հոգեւոր ծնունդս պիտոյ է Հոգին Սուրբ եւ ջուր, յոր թաղիմք մկրտութեամք, ըստ առաքելոյ որպէս յարգանդի մաւր:

### Սահման մկրտութեան

**Մկրտութիւն** է տուրք սրբութեան վերստին եւ աստուածայնոյն<sup>1</sup> ծնունդ: Դարձեալ՝ լուացումն Հոգեւոր վերստին եւ աստուածային ծնունդ:

Եւ վերստինն կրկին ասի, իսկ կրկինն չորս կերպիւ է. նախ՝ զի կրկին է<sup>2</sup> մարդս. Հոգի եւ մարմին, եւ կրկին է ծնունդ մարդոյս: Երկրորդ. կրկին է, զի նախ պարտ է մարմնով ծնանիլ եւ ապա՝ հոգով: Երրորդ. կրկին է, զի զանմահ կեանքն ժառանգէ, ուստի զրկեցաւ Աղամ<sup>3</sup>: Չորրորդ. կրկին է ի վերայ մարմնական սրբութեանցն եւ աւրինակին, սա կրկին է եւ ճշմարտութիւն:

Դարձեալ վերստին վերին եւ առաւել ասէ, եւ բազում է առաւելութիւն երկրորդ ծննդեանս, քան զառաջինն. նախ՝ զի այն երկրաւոր<sup>4</sup>, իսկ այս՝ երկնաւոր: Երկրորդ. այն մարմնաւոր, այս հոգեւոր: Երրորդ. այն ի կեանս ժամանակեայ, այս ի կեանս յաւետնից: Չորրորդ. այն ի մաւրէ եւ ի հաւրէ, այս յաւազանէն եւ ի հոգւոյն: Հինգերորդ. այն մեղաւք, այս շնորհաւք: Վեցերորդ. այնու պատկեր եմք<sup>5</sup> հինն Աղամայ, այսու լինիմք պատկեր նորն

<sup>1</sup> Ը աստուածայնագոյն

<sup>2</sup> Յ չեք

<sup>3</sup> Ը ձեռագրում երկրորդի փոխարեն երրորդն է գրված, իսկ երրորդի փոխարեն՝ երկրորդը:

<sup>4</sup> Յ յերկրաւոր

<sup>5</sup> Ը այնու եմք ի պատկեր

**Աղամայ:** Եւթներորդ. այնու ծնանիմք որդի մարդոյ, այսու ծնանիմք որդիս Աստուծոյ, վասն այն ասէ՝ վերստին եւ աստուածային ծնունդ:

Դարձեալ՝ որ ասէ. «Որ ոչ ծնցի ի ջրոյ եւ ի հոգւոյ» (Յովի. Գ 5):

Գիտելի է, վասն տասն իրաց զջուր եւ զոգի յիշատակէ.

Նախ՝ զստեղծումն Աղամայ ի մէջ երեր. ջուր ասելով զչորս<sup>1</sup> տարերս նշանակէ, իսկ հոգի՝ զբանական հոգին փշեաց: Ասէ. «Շունչ կենդանի, եւ եղեւ մարդն հոգի կենդանի<sup>2</sup>» (Ծննդ. Բ 7): Ասէ. «Որք ունին զբանական հոգին եւ զնոյն մարմինն, նոքա մտանեն յարքայութիւն Աստուծոյ»:

Երկրորդ. ցուցանէ, թէ նոյն Աստուածն է, որ զնախնի ծնունդն ի ջրոյ եւ ի հոգւոյ գոյացոյց եւ եղ ի դրախտին եւ այժմ զերկրորդ ծնունդս ի ջրոյ եւ ի հոգւոյ կազմէ եւ տայ զդրախտն ի ժառանգութիւն:

Երրորդ. դարձեալ որպէս ասէ մարդարէն. «Հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց» (Ծննդ. Ա 2), այսինքն՝ կամէր ստեղծանել զթոչունս ի ջրոց,<sup>3</sup> որ վերանան յաւդդ, սոյնպէս ասէ. «Որ ոչ ծնցի ի ջրոյ եւ ի հոգւոյ<sup>4</sup>, ոչ վերանայ յարքայութիւն Աստուծոյ» (հմնտ. Յովի. Գ 5):

Չորրորդ. ջուր եւ հոգի ասելով ցուցանէ զանգիտութիւն մերոյս ծննդեան, զի որպէս ոչ գիտեմք զառաջին ծնունդն, թէ որպէս բաղկանայ մարմինն ի չորից տարերց, կամ որպէս տուի նմաբանական հոգին, այլ հաւատովք իմանամք, սոյնպէս ոչ է քննելի երկրորդ ծնունդս ի ջրոյ եւ ի հոգւոյ, այլ հաւատով ծնանիմք:

Հինգերորդ. ցուցանէ, զի պէտս ունէաք առ երկրորդ ծնունդս, զի առաջին ծնունդն ի ջրոյ եւ ի հոգոյ,<sup>5</sup> բանական հոգւով կենդանացաք եւ ի դրախտն եղաք, եւ լուծմամք պատուիրանին արտաքս անկաք, պարտ էր ջրով եւ հոգւով յանմահ կեանս ելանել:

Վեցերորդ. ջուր եւ հոգի ասելով ցուցանէ զաւրինակ մկրտութեանս, որպէս ի հնումն լուացումն ի տաճարին, այլ եւ սրբութիւն Սելովամայ (հմնտ. Մատթ. Գ 11), այլ եւ նէեման Ասորին (հմնտ. Ղ Թագ. Ե 14), որ սրբեցաւ ի Յորդանանն<sup>6</sup>, որպէս անդ ի յաւրինակին բոլորովին մարմնով սրբեցան եւ մասամք ինչ հոգւով, սոյն-

<sup>1</sup> С չեք զստեղծումն ... զչորս

<sup>2</sup> А В չեք

<sup>3</sup> С ջուրց

<sup>4</sup> А В չեք եւ ի հոգւոյ

<sup>5</sup> С հոգւոց

<sup>6</sup> В С Յորդանան

պէս ի ճշմարտութիւնս բոլորովիմք հոգւոյն է սրբութիւն եւ մարմնոյն:

**Եւթներորդ.** Զուր եւ հոգի ասելով յիշումն ածէ զՄովսէսին, որ յամպն<sup>1</sup> եւ ի ծովն մկրտեցան ժողովուրդն, որպէս ասէ առաքեալ (հմնտ. Ա Կորնթ. Ժ 2):

**Ութերորդ.** յիշումն ածէ զմկրտելն Յովաննու, որ ասաց. «Ես մկրտեմ զձեզ ջրով», եւ հոգւովն այն է, որ ասաց. «Նա մկրտեսցէ Հոգւովն Արքով<sup>2</sup>» (հմնտ. Մատթ. Գ 11):

**Իններորդ.** Զուր եւ հոգի ասելով զայն ցուցանէ, որ ամենայն զգայական կենդանիք ի ջրոյ գոյանան, նաեւ տունկք եւ բոյսք ի յերկրի ջրով ծնանին եւ պտղաբերեն, եւ Հոգւոյն, զի հրամանաւն սոյնպէս բանական մարդս ջրով ծնանի եւ պտղաբերէ ի հոգեւոր կեանս:

**Տասներորդ.** զոր ասաց ինքն. «յԱստուծոյ Եկեալ ես վարդապետ, եւ նշան առնես» (տես Յովի. Գ 2), պարտ էր ի միտ ածել, թէ հաւատարիմ է բան նորա: Եւ այս<sup>3</sup> եւս նշան է, զոր ուսուցանէ, վասն այն ասէ.

**Բան.** «Ծնեալն ի մարմնոյ մարմին է եւ ծնեալն ի հոգւոյ հոգի է<sup>4</sup>» (Յովի. Գ 6):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ.** Նախ՝ որպէս ծնեալն ի մարմնոյ մարմին է՝ ի մարմնաւոր կեանս կացուցեալ, նոյնպէս ծնեալն ի հոգւոյ հոգի է՝ ի հոգեւոր կեանս<sup>5</sup> կացուցեալ՝ ընդ ունել զներգործութիւն Հոգւոյն Արքոյ:

**Երկրորդ.** ամենայն, որ ծնանի յայլմէ կերպիւ ինչ զնմանութիւն ծնողին ունի, որպէս մարմին զմարմնոյ, սոյնպէս ի հոգւոյն ծնեալն նման է հոգւոյն, ոչ ըստ միութեան սեռի եւ տեսակի, այլ նման<sup>6</sup> միայն<sup>7</sup> հոգեւոր կենաց եւ միաւորութեամբ առ Աստուած:

**Երրորդ.** մարմին ամէ<sup>8</sup> զյաւժարութիւն ի մեղս, եւ հոգի՝ զյաւժարելն յարդարութիւնս, ըստ այնմ. «Որ միանալ<sup>9</sup> ի պոռնիկ՝ մի մարմին է, եւ որ միանալ<sup>10</sup> ի Տէր՝ մի հոգի է» (հմնտ. Ա Կորնթ. Զ 16-17):

<sup>1</sup> A B ի յամպն

<sup>2</sup> A B չեք

<sup>3</sup> B այլ

<sup>4</sup> A չեք հոգի է

<sup>5</sup> B չեք կացուցեալ, նոյնպէս ... ի հոգեւոր կեանս

<sup>6</sup> B չեք

<sup>7</sup> A C չեք

<sup>8</sup> B ասէ մարմին

<sup>9</sup> A B միայն

<sup>10</sup> A B միայն

Բան. «Դու մի՛ զարմանար» (Յովի. Գ 7):

Մեկնութիւն. զարմացումն է, որ ի վեր է, քան զմիտս, եւ նա զմարմնաւոր ծնունդս միայն գիտէր, վասն այն զարմացաւ եւ անհաւան լինէր:

### Հողմ եւ հոգին

Բան. «Ճողմ ուր կամի, շնչէ» (Յովի. Գ 8):

Մեկնութիւն. Զհողմ աւրինակ տայ հոգւոյն. նախ՝ վասն առուանն, զի հոգի կոչի հողմ, ըստ այնմ. «Հոգի Տեառն շնչեաց ի նմա» (տես Եսայի Խ 7), եւ ոգի է Հոգին Սուրբ:

Երկրորդ. վասն զաւրութեան, ըստ այնմ. «Ած հողմ եւ դադարեցոյց զջուրն» (տես ԾԱՅ. Ը 1), եւ հողմով զաշտարակն ցրուեաց, եւ հողմով էջ ի Վերնատունն, որ է Հոգին Սուրբ:

Երրորդ. վասն ներգործութեան, զի հողմն կենդանեաց է զաւրութիւն, եւ առողջութիւն եւ սրբութիւն, եւ Հոգին Սուրբ՝ բանականաց:

Չորրորդ. վասն անդիտութեան զձայն նորա լսեմ, այլ ոչ գիտեմ ուստի գայ կամ յո<sup>՞ւ</sup> երթայ, սոյնպէս ի հոգեւոր ծնունդս ոչ գիտեմք զսկիզբն եւ ոչ զվախճան, զի յայսմ ծննդեանս սկիզբն է Հոգին Սուրբ, եւ վախճան՝ երանութիւն կենացն. նախ՝ զի զգայարանաւք ոչ ճաշակեմք: Երկրորդ. եւ ոչ կատարեալ մտաց տեսութեամք, որքան ի մարմնի եմք, սակայն զձայն նորա լսեմք, այսինքն՝ զջուրն եւ զձեւ բանին զգայութեամք ճանաչեմք: Այլ գիտելի է, զի սուրբն Ոսկեբերան զայս հողմս<sup>1</sup> զտարրականս ասէ:

Այլ ոմանք ասեն վասն Հոգւոյն Սրբոյ կրկին պատճառաւ<sup>2</sup>. նախ՝ զի ասէ. «Ուր կամի, շնչէ»: Ասեմք, նախ եթէ կամք զԱրարչին ասէ՝ ուր նա կամի, սա շնչէ: Երկրորդ. կամք<sup>3</sup> զանարգել շարժումն ասէ, զի յումեքէ ոչ խափանի, այլ զաւրաւոր եւ իշխանութեամք շարժի:

Դարձեալ ասեն ոմանք, եթէ կամքն յերեք յեղանակաւ իմանի<sup>4</sup>.

Նախ՝ նշանակէ կամքն զմի զաւրութիւն բանական հոգւոյն, որ սկիզբն է սիրոյն, որպէս<sup>5</sup> հանձարն սկիզբն է ճանաչման: Երկրորդ. նշանակէ կամք զմի զաւրութիւն զգայական հոգւոյն, որ

<sup>1</sup> Ը հողմ

<sup>2</sup> Ա պատճառաւ

<sup>3</sup> Ը նշանակէ կամք

<sup>4</sup> Յ եղանակաւ յիմանի

<sup>5</sup> Ը որպէս Ել

ցանկայ պատշաճ իրաց եւ փախչի ի հակառակաց: Երրորդ. նշանակէ կամք զբանական շարժումն, որ է յաւժարութիւն, որպէս տնկոց եւ տարերց:

Եւ աստ կամք ասէ ոչ զբանականին կամ զգայականին, այլ զբնական յաւժարութիւն, որ ազատաբար շարժի, եւ հնչումն արձակէ հողմ եւ երբեմն յայս կոյս եւ երբեմն յայն կոյս ընթանայ: Երկրորդ պատճառաւ ասեն զՀոգին Սուրբ, զի անգիտելի է, զի հողմ զգալի յարեւելից յարեւմուտա շարժի կամ ի հիւսիսոյ, կամ ի հարաւոյ գայ: Ասեմք առ այս, թէպէտ հասարակաբար գիտեմք՝ ուստի գայ՝ յարեւելից, թէ ի<sup>1</sup> հիւսիսոյ, սակայն մասնաւոր ոչ գիտեմք, թէ յայնմ կողմանէ յոր յերկրէ ելանէ, որ ի մերձն է, թէ ի հեռուն, թէ յոր մասն<sup>2</sup> տեղի զգայ առնու, եւ թէ մասնաւորապէս իմանամք, թէ յո՞ր յերկրէ ելանէ, այլ ոչ գիտեմք, թէ յորպիսի<sup>3</sup> պատճառաց ելանէ կամ յոր ներգործութիւնս կատարի, եւ սոյնպէս բանս իմանի վասն զգալի հողմոյն: Դարձեալ՝ որք վասն Հոգւոյն Սրբոյ իմանան. «Հոգին ուր կամի, շնչէ», այսինքն՝ որպէս հաճոյ է նմա զմիտս լուսաւորէ: Դարձեալ՝ ուր կամի, այսինքն՝ զի ոչ ի հարկէ, այլ ազատաբար զոր ինչ կամի եւ առնէ:

Բան. «Զձայն նորա լսես» (Յովի. գ 8):

ՄԵԼՈՆԻՔԻՆ. Նախ զհեղումն Հոգւոյն Սրբոյ, որ ի սիրտ ումեմն ազդէ, ոչ գիտեմք՝ ուստի գայ կամ յո՞ր երթայ: Երկրորդ. ձայն, այսինքն՝ սուրբ մարգարէիցն բանք եւ զՍուրբ Գիրս հրէայքն ընթեռնուն եւ ոչ գիտեն՝ ուստի գայ կամ յո՞ր երթայ, այսինքն՝ զի Աստուած անհաս է զգայութեանց, ոչ գիտեն, թէ ուստի<sup>4</sup> ելանէ մարգարէութիւն կամ յո՞ր վախճան ածի, այսինքն՝ յերանութիւն զգայութեամք ոչ<sup>5</sup> ճանաչեն, սոյնպէս որ ծնանի հոգեւոր, սկիզբն եւ վախճանն անգիտելի է զգայութեանց մերոց<sup>4</sup>, եւ սոյնպէս պատշաճ համարին զբանս զայս վասն Հոգւոյն Սրբոյ ասացեալ, քան վասն հողմոյ, զի առաւել համեմատի մկրտութիւն Հոգւոյն Սրբոյ, քան զգալի հողմոյ:

Այսքան առ այս<sup>5</sup>:

<sup>1</sup> B չիք

<sup>2</sup> B յարմատն

<sup>3</sup> A B չիք

<sup>4</sup> C զգայութեանց մերոյ: Այսպէս, որ ծնանի հոգեւոր, սկիզբն եւ վախճանն անգիտելի է

<sup>5</sup> A չիք

### Վասն Նիկողիմոսի

Բան. «Պատասխանի ետ Նիկողիմոս եւ ասէ ցնա<sup>1</sup>. «Զիա՞րդ մարթի [այդմ լինել]» (Յովի. Գ 9):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Որպէս ասէ Արիստոտէլ. «Սովորութիւն է հաստատել՝ բնութիւն ինչ է, եւ որպէս անհնար է հաստատել յայն, որի վեր է, քան զբնութիւն, նոյնպէս գժուարին է հաստատել յայն, որի վեր է, քան զսովորութիւն<sup>2</sup>»: Սոյնապէս Նիկողիմոս ի մարմին եւ յաւրինակն սովորեալ էր<sup>3</sup>. զհոգեւորն եւ զծմարտութիւն ոչ կարէր իմանալ:

Բան. «Դու ես վարդապետ Խորայէլի» (տես Յովի. Գ 10):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Վասն երեք պատճառի յանդիմանեաց Քրիստոս զՆիկողիմոս. նախ՝ զի վարդապետ էր եւ զաւրէնս ոչ գիտէր: Երկրորդ. զի վարդապետ կոչեաց զՔրիստոս եւ բանիցն ոչ լսէր: Երրորդ. զի գիւրին էր բան մկրտութեան եւ նա ոչ իմանայր:

Արդ, վասն առաջնոյն, զի վարդապետ էր եւ ընթեռնոյր զսրբութիւն ջրոյն, որպէս ի Սելովամ, եւ Յորդանան առ Նէեման Ասորին, եւ ի տաճարին, եւ որպէս ամպովն ի ծովն մկրտեցաւ ժողովուրդն: Այլ եւ աւրէնքն ասէ. «Լուասջի՛ք<sup>4</sup> ջրով եւ մի՛ մեռջիք» (տես Ելք Լ.20), եւ Եղեկիէլ ասէ. «Յանեցից ի վերայ ձեր ջուր սուրբ<sup>5</sup> եւ սրբեսջի՛ք յամենայն պղծութեանց ձերոց<sup>6</sup>» (Եզեկ. Լ.2 25): Եւ Զաքարիա ասէ. «Յաւուր յայնմիկ եղիցի աղբիւր բացեալ տանն Դաւթի եւ բնակչացն Երուսաղէմի» (Իննտ. Զաքար. ԺԲ 8), ի լուացումն մեղաւորին եւ տեռատեսին, նոյնպէս վասն հոգւոյն բազում է վկայութիւն: Եւ պարտ էր գիտել, թէ գոյ այլ աւրինակ ծննդեան, քան զայն, որ յարուէ եւ իգէ, որպէս Աղամ ի հողոյ միայն ծնաւ, իսկ Եւա՝ ի կողէն միայն, եւ իսահակ՝ յամուլ արդանդէ, եւ խոյն ի ծառոյն Սարեկայ, եւ գաւազանն Ահարոնի, որ ծաղկեցաւ, եւ գաւազանաւ վէմն ջուր բղխեաց, եւ այլ բազում սքանչելիք<sup>7</sup> աւրինակ էին ծննդեան աւազանին, որ հոգեւոր է եւ սքանչելեաւք:

Եւ թէ ոք հարցանէ՝ վասն է՞ր այժմ յեկեղեցի սուրբ ոչ լինի սքանչելիք, որպէս յառաջն:

<sup>1</sup> C չիք եւ ասէ ցնա

<sup>2</sup> B զբնութիւն

<sup>3</sup> C է

<sup>4</sup> A B լուասջիր

<sup>5</sup> C սրբութեան

<sup>6</sup> A B չիք

<sup>7</sup> C սքանչելեօք

Պատասխան. Ասեմք վասն կրկին պառճառի. նախ՝ զի սքանչելիք վասն թերահաւատիցն է, իսկ այժմ հաւատքս կատարեալ է, ոչ եմք կարաւտ սքանչելեաց: Երկրորդ. զի յառաջն լինէր մարմնական<sup>1</sup> սքանչելիք, իսկ այժմ՝ հոգեւոր, զի մկրտութիւն սքանչելիք է, սոյնպէս թողութիւն, Պատարագն եւ պսակն եւ այլ խորհուրդք:

Այս վասն առաջնոյն:

Երկրորդ պատճառաւ յանդիմանեաց գնա, որ զՔրիստոս վարդապետ կոչեաց եւ յԱստուծոյ եկեալ, եւ ոչ հաւատայր բանից նորա, զի որքան<sup>2</sup> վարդապետն մեծ գիտութիւն ունի, այնքան բան նորա առաւել հաւատարիմ է:

Բան. «Ամէն, ամէն» (Յովի. Գ 11):

ՄԵԼՈՆԹԻՒՆ. Զորս է տեսութիւն, որպէս վերոյ ասացաւ. նախ՝ ստոյգ, ստոյգ: Երկրորդ. զի Աստուած եմ մարդացեալ: Երրորդ. զերկնաւորն եւ զերկրաւորս<sup>3</sup> ասեմ: Զորրորդ. զհին եւ զնորս ուսուցանեմ:

Բան. «Զոր ինչ գիտեմք» (Յովի. Գ 11):

ՄԵԼՈՆԹԻՒՆ<sup>4</sup>. Այն է՝ հաստատ վկայութիւն, զոր գիտէ եւ զոր տեսանէ կամ առնէ, վկայ է: Դարձեալ՝ Քրիստոս ըստ Աստուածութեան նոյն է՝ գիտութեամբ ընդ Հաւը եւ մարդկութեամբն վասն միութեան Բանին:

Բան. «Վկայեաց եւ ոչ ընդունիք» (տես Յովի. Գ 11):

ՄԵԼՈՆԹԻՒՆ. Այսինքն<sup>5</sup> ոչ հաւատայք, զի թէպէտ նիկողիմոս հաւատացեալ էր, ոչ կատարեալ, այլ թերի: Եւ դարձեալ՝ առիմանալ զբանն Քրիստոսի թանձրամիտ:

### Վասն երկնաւոր ծննդեանն

Բան. «Զերկրաւորս ասացի» (Յովի. Գ 12):

ՄԵԼՈՆԹԻՒՆ. Այս երրորդն է, որ գիւրալուր է: Եւ գիտելի է, զի երկնային է վերստին ծնունդն վասն չորից. նախ՝ զի ի Հոգւոյն Սրբոյ է, երկրորդ զի Որդի Աստուծոյ, երրորդ՝ զի շնորհս ընդունի, չորրորդ՝ եւ զերկնաւորսն ժառանգէ:

<sup>1</sup> Ե մարդկան

<sup>2</sup> Ա Ե որպէս

<sup>3</sup> Ը գերկնաւոր եւ գերկրաւորն

<sup>4</sup> Ա Ե չեք

<sup>5</sup> Ա Ե չեք

իսկ աստ երկրաւոր ասէ վասն չորից. նախ՝ զի ի վերայ երկրի լինի, երկրորդ՝ զգալի ջրով, երրորդ. մարմնաւոր սպասաւորաւք, չորրորդ՝ ընդ բանին ծննդեանն համեմատեալ երկրաւոր կոչէ:

Բան. «Թէ զերկնաւորն ասացից» (Յովի. Գ 12):

Մեկնութիւն. Երկնաւոր եւ դժուարին է եւ անաւրինակ.

Նախ՝ ծնունդն ի Հաւրէ անեղ, անսկիզբն, անժամանակ եւ անբաժան, եւ անվախճան, նոյնպէս բղխումն Հոգւոյն անեղ, անսկիզբն եւ այլն:

Երկրորդ. Երկնաւոր է Բանին ծնունդն ի մաւրէ. նախ՝ զի Աստուած է, որ ծնաւ, երկրորդ՝ նոր եւ անաւրինակ<sup>1</sup>, երրորդ՝ անսերմն յղացումն, չորրորդ՝ անապական ծնունդ:

Ուստի յայտ է, զի չորք են սոքա. Երկու երկնաւորին՝ անմարմին եւ մարմնաւոր ծնունդն, որ Միածին կոչի, եւ երկուքն մեզ ի մաւրէ եւ յաւազանէ, եւ միածին կոչիմք: Այսպէս ապա ի մարմնաւորէս զհոգեւոր ծնունդն իմանամք եւ յաւազանէն զմարդեղութիւն Բանին, եւ ապա յայնմանէ զծնունդ անմարմին Բանին: Յիրաւի ապա այլ ազգին, որ ոչ գիտէ զաւազանին ծնունդն եւ ոչ հաւատայ Աստուածածին Կուսին, վասն այն ուրանայ եւ զհայրական ծնունդն:

### Աստուածաբանութիւն միութեան Քրիստոսի

Բան. «Եւ ոչ ոք ել յերկինս» (տես Յովի. Գ 13):

Մեկնութիւն. Աստ չորս ինչ հարցանելի է.

Առաջինն. թէ վասն է՞ր զայս ասէ յայսմ տեղւոշ:

Ասեմք վասն չորից. նախ ասսաց, թէ. «Զոր զիտեմք՝ խաւսիմք եւ վկայեմք» (Յովի. Գ 11): Եւ կամէին հարցանել, թէ դու մարդ ես ի վերայ երկրի<sup>2</sup> ընդ մեզ, ասէ. «Ես եմ, որ էն, որ<sup>3</sup> ի յերկնից, եւ դարձեալ ելանեմ»:

Երկրորդ. զոր խոստացաւ զերկնաւորէն ասել, այս է, զոր ասէ:

Երրորդ. տգէտ գոլով նիկողիմոս կարծէր այր սուրբ եւ վարդապետ կոչելով, վասն այն<sup>4</sup> ասէ. «Յերկնից իջեալ եմ եւ բնութեամք Որդի Աստուծոյ»:

<sup>1</sup> А В աւրինակ

<sup>2</sup> В յերկորի

<sup>3</sup> С չիք

<sup>4</sup> С վասն որոյ

**Չորրորդ.** զի անկար թուէր նիկողիմոսի միւսանգամ ծնանելոյն՝ վերստին ի նոյն տեղիսն<sup>1</sup> մտանել։ Պատասխանէ զայս, թէ կարելի է, որպէս ես, ասէ, ելի ի Հաւըէ իմմէ<sup>2</sup> եւ իջի եւ դարձեալ ի նոյն Հայրն ելանեմ։

**Երկրորդ.** գիտելի է, զի Բասիլիդէս չարն յայսմանէ ասաց զմարմինն յերկնից բերեալ եւ ընդ Կոյսն իբր ընդ խողովակ անցեալ։

**Ասեմք,** եթէ սուտ է վասն չորից պատճառաց. նախ՝ թէ յերկնից եբեր զմարմինն, ապա ոչ կոչի Որդի Սարհամու, այլ Սուրբ Աւետարանս գՔրիստոս Որդի Սարհամու ասէ, եւ ոչ՝ որդի յերկնից<sup>3</sup>: Երկրորդ. զի թէ յերկնից եբեր զմարմինն եւ անց ընդ Կոյսն, ապա առ աչաւք է մարդ, որպէս հրեշտակն առ աչաւք մարմին ձեւանայ ի յաւդոյ։ Երրորդ. զի թէ յերկնից եբեր, ապա ոչ է<sup>4</sup> չարչարելի մարմնով եւ ոչ մահկանացու, եւ ոչ քաղց եւ ծարաւ կրէր, այլ զայսոսիկ կրեաց Քրիստոս։ Չորրորդ. զի թէ յերկնից եբեր զմարմինն, ապա մարդոյս ոչ եղեւ փրկութիւն, այլ երկնիցն, որ է սուտ։

**Երրորդ.** գիտելի է, թէ ընդէ՞ր նախ զելն ասէ եւ ապա՝ զէջն, զի նախ էջ եւ ապա ել։ Եւ Պաւղոս ասէ. «Էջ նախ ի ստորին կողմն երկրի եւ ել ի վերոյ, քան զամենայն երկինս» (տես. Դ 9): **Ասեմք** առ այս. նախ՝ եթէ իջանելն անյայտ էր ոչ միայն ի մարդկանէ, այլ եւ ի հրեշտակաց, իսկ յելանելոյն զիջանելն իմացաք։ Երկրորդ. ընդդէմ հնոյն Աղամայ, որ էջ ի յերկիր, նորն Աղամ ել ի յերկինս։ Երրորդ. նախ Տէրն մեր ել յերկինս եւ ապա այլք ընդ նմա, զի թէպէտ եղիա եւ ենովք ելին, սակայն ոչ յերկին, այլ ի դրախտոն։ Չորրորդ. իջանել Բանին յարմարի, որ խոնարհեցաւ, եւ ելանել մարմնոյն, որ բարձրացաւ միութեամբ Բանին, վասն այն<sup>5</sup> զայս նախկին դնէ՝ ցուցանելով զբարձրութիւն բնութեանս մերոյ, ըստ Պաւղոսի. «Աստուած զնա առաւել բարձրացոյց» (Փիլիպ. Բ 9), եւ Դաւիթ. «Որ ելն ի բարձունս եւ գերեաց զգերութիւն<sup>6</sup>» (տես Սաղմ. Կէ 19), - ասէ։

**Չորրորդ.** գիտելի է, վասն է՞ր բացասելով ասէ. «Ոչ ոք ել», եւ ահա բազումք ելին յերկինս եւ ելանեն։

**Ասեմք** առ այս. նախ՝ եթէ երկու բացասութիւն. մին ստորա-

<sup>1</sup> Ը տեղիս

<sup>2</sup> Ա Բ Ը ինէ

<sup>3</sup> Ը երկնից

<sup>4</sup> Բ ո՞վ է

<sup>5</sup> Ը վասն որոյ

<sup>6</sup> Ա Բ չեք

սութիւն է, որ ասէ. «Ոչ ոք ել յերկինս<sup>1</sup> եւ ոչ էջ», իբր թէ ելին ընդ Քրիստոսի յերկինս, յորժամ էջ նա յերկնից: Երկրորդ. «Ոչ ոք» ասէ, այսինքն՝ ոչ<sup>2</sup> մկրտելոցն եւ յանհաւատիցն ոչ ոք ել<sup>3</sup> յերկինս, այլ մկրտեալք եւ հաւատացեալք: Երրորդ. «Ոչ ոք», այսինքն՝ որ ոչ է անդամ Քրիստոսի, ոչ ելանէ, այլ անդամք Նորին, զի յորժամ որդի մարդոյ ասէ, զգլուխն մեր նշանակէ: Զորրորդ. յայտ է, զի անարժանք ոչ ելանեն, այլ արժանաւորք:

Այժմ տեսցուք զմեկնութիւն բանին:

#### ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱԲԱՆՈՒԹԵԱՄԸ<sup>4</sup>

Բան. «Ոչ ոք ել յերկինս» (տե՛ս Յովհ. Գ 13):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Զորս բառ է, այսինքն՝ ել, էջ Որդի մարդոյ, որ են յերկինս: Իսկ երեք գիրն յաւղէ. առաջին<sup>5</sup> զանցեալն նշանակէ, միջինն՝ զյատուկն ցուցանէ, վերջինն՝ զմիշտն:

Նախ եւ առաջին<sup>6</sup> զայս ցուցանէ, թէ Քրիստոս ոչ է մարդ աստուածացեալ եւ բարձրացեալ չնորհիւ, ըստ Պաւղոսի Սամոսատացւոյն այլ Աստուած է խոնարհեալ եւ մարդ եղեալ եւ մարմնովն բարձրացեալ, զի յատուկ է նմա, զի ահա եղիա բարձրացաւ եւ ոչ խոնարհեցաւ, սոյնպէս եւ ամենայն սուրբք:

**ԵՐԿՐՈՐԴՆ.** զայն ցուցանէ, թէ ոչ այլ է, որ էջն, եւ այլ ոք, որ ելն, այլ մի եւ նոյն Բանն էջ անմարմին, եւ ել Բանն մարմնով իւր:

**ԵՐՐՈՐԴ.** որդին մարդոյ զայն ցուցանէ, եթէ որպէս Բանն վասն միութեան որդի մարդոյ է բնութեամբ, նոյնպէս մարմնովն Որդի Աստուծոյ է բնութեամբ:

**ԶՈՐՐՈՐԴ.** Որ են յերկինս զայն ցուցանէ առ հասարակ, թէպէտ ել յերկինս<sup>7</sup> մարմնով, այլ միշտ յերկինս էր Աստուածութեամբն: Եւ ոչ թէ նախքան զիշանելն յերկինս միայն էր, այլ եւ յերկրի անհաս բնութեամբ: Ապա յայտ է, թէ իջանելն եւ ելանելն ոչ տեղական ինչ շարժմամբ, այլ իջանել ասի մարմնով՝ երեւելն եւ խոնարհելն ի մեզ: Իսկ համբառնալն՝ ոչ բաժանեալ յաշխարհէ, այլ անտես լինել ի յերկրաւորացս: Իսկ յորժամ ասաց զայս, թէպէտ

<sup>1</sup> С չիք

<sup>2</sup> А С յոչ

<sup>3</sup> В եւ ոչ ոք ել

<sup>4</sup> А աստուածաբանութեան

<sup>5</sup> С առաջինն

<sup>6</sup> С առաջինն

<sup>7</sup> В չիք

մարմնով յերկրի էր, այլ Աստուածութեամբն ի յերկինս էր եւ յամենայն տեղիս, վասն որոյ ասէ . «Որդի<sup>1</sup> Մարդոյ, որ էն յերկինս», եւ ոչ թէ, որ լինի յերկինս: Տե՛ս, վասն միացեալ բնութեանցն զաստուածայինսն մարմնոյն ասէ եւ զմարմնականս աստուածութեան, զի զմրդին Մարդոյ, որ էնն ասաց, եւ զոր էնն Որդի Մարդոյ: Եւ դարձեալ՝ ելանել եւ իջանել նոյն Որդոյն Մարդոյ, որ էն յերկինս: Իսկ թէ բաժանեալ իմանաս զյատկութիւն երկուց բնութեանցն, յայնժամ որպէ՞ս ել նախ քան զհամբարձումն, կամ զիա՞րդ էջ որդին մարդոյ, կամ որպէ՞ս միշտ ի յերկինս էր Որդին Մարդոյ, որ ի Կուսէն առեալ մարմին Որդի Դաւթի կոչեցաւ: Այլ զայս վասն անքակ միաւորութեան ասէ Բանին մարդացելոյ, զի զոր Աստուածութեան էր զմիշտ լինելն առ Հայր նախքան զմարմնանալն, զայն մարդկութեան ասէ, եւ որ մարդկութեան էր, այսինքն՝ Որդին Մարդոյ գոլ, զայն Բանին Աստուծոյ ասէ, եւ զինքն Բանն Աստուած Որդի Մարդոյ ասէ, զոր յայսմանէ ի բանիցս փախչին<sup>2</sup>, մեք<sup>3</sup> խոստովանիմք մի՛ Տէր՝ Յիսուս Քրիստոս, մի՛ անձն եւ մի՛ բնութիւն, մի՛ կամս եւ մի՛ ներգործութիւն Բանին մարմնացելոյ: Եւ նզովեմք զերկատողս նորին:

**Այսքան առ այս:**

### Վասն Խաչին

**Հարց. Վասն էր աստ զիսաչէն ճառէ:**

**Պատասխան.** Վասն չորից. նախ՝ որպէս մկրտութեամբն յերկինս ելանէ ոք<sup>4</sup>, սոյնպէս եւ խաչիւն յերկինս ելանէ: Երկրորդ որպէս սրբութիւն եւ փրկութիւն է մկրտութիւն, նոյնպէս սրբութիւն եւ փրկութիւն է խաչն: Երրորդ. զի զաւրութիւն մկրտութեան խաչիւն կատարի՝ ըստ այնմ. «Որք ի Քրիստոս մկրտեցաք, ի մահ անդր նորա մկրտեցաք» (տես Հռոմ. Զ 3): Զորբորդ. վասն տկարութեան Նիկողիմոսի, որ զշնորհս մկրտութեան ոչ ճանաչեաց, զիսաչէն ճառէ, զի լիցի պատճառ փրկութեան նորա, որ եղեւ իսկ:

Եւ գիտելի է, զի փրկագործութեամբն ցուցանի, թէ Աստուած է Քրիստոս: Եւ զառաջինն եցոյց ի մկրտութիւն, որ չնորհէ մարդկան զփրկութիւն: Զերկրորդն ցուցանի ի խաչելութիւն, ու

<sup>1</sup> Ը Որդին

<sup>2</sup> Ա Յ Փրկչին

<sup>3</sup> Ա Յ Հեք

<sup>4</sup> Ը Ելաներ

<sup>5</sup> Ա Յ Հեք նորա մկրտեցաք

*ըով փրկեցան մարդիկ:*

*եւ այս է, որ ասէ.*

Բան. «Որպէս Սովուն բարձրացոյց» (Յովհ. Գ 14):

Մեկնութիւն. Նախ ցուցանէ, թէ միեւնոյն է հին եւ նոր աւ-  
րէնսդիրն: Երկրորդ. թէ այն ստուեր է, եւ այս՝ ճշմարտութիւն:

Իսկ պարտն ասել ոչ թէ ի հարկէ մեռաւ, որպէս հրէայքն ա-  
սէին, թէ պարտի դա մեռանել, այլ նախ զի պարտ զկամաւորն ա-  
սէ, զի թէպէտ Որդի Ագամայ եղեւ, եւ թէպէտ Հայր ետ ի մահ, եւ  
թէպէտ մարդարէքն գրեցին զմահն, այլ զայս ամենայն կամաւ  
կատարեաց: Երկրորդ. ի մեր կողմանէ ցուցանէ զպարտն, զի ի  
մէջ ոչ կարէաք ազատիլ, այլ միայն Աստուծով, այլ յիւր կողմա-  
նէն կամաւ չարչարեցաւ:

Երրորդ. Նշանակէ, թէ պարտ է մեզ բառնալ զխաչն Քրիստո-  
սի եւ ի վերայ սրտից մերոց կացուցանել, որպէս զգին մեր եւ  
զգործիք յաւիտեանց փրկութեան:

*Հարց. Վասն է՞ր ոչ ասէ չարչարիլ, այլ բարձրանալ:*

Պատասխան. Ասեն վարդապետք վասն չորս պատճառի. Նախ՝  
զի խաչիւն բարձրացաւ Քրիստոս, ըստ այնմ. «Որ զխաչն փառս  
իւր կոչեաց»: Երկրորդ. զի խաչիւն բարձրացաւ Քրիստոս<sup>1</sup> յաւդս  
եւ զթշնամին հալածեաց: Երրորդ. զի մի գայթակղեսցի Նիկոդի-  
մոս, վասն այն ոչ ասաց կախիլ եւ չարչարիլ, այլ բարձրանալ:  
Չորրորդ. զի բարձր ասելովն եցոյց զբարձրութիւն եւ զարու-  
թիւն խաչին Քրիստոսի:

Բան. «Որ հաւատայ՝<sup>2</sup> ի նա» (Յովհ. Գ 15):

Մեկնութիւն. Որպէս պատմէ ի Գիրս Թուղցն, յորժամ աւձն  
հարկանէր զժողովուրդն, ըստ այնմ. «Լարս առանց բժշկութեան  
արձակեաց», հրամանաւն Աստուծոյ արար Մովսէս<sup>3</sup> աւձ պղնձի  
եւ բարձրացոյց ի փայտ, որ էր աւրինակ խաչին Քրիստոսի: Արդ,  
աւձն պղնձի էր եւ ունէր զպատգամն Աստուծոյ, եւ ժողովուրդն  
ունէր զհաւատն եւ զտեսանելն:

*Եւ վեց կերպիւ աւրինակ դնէ.*

Նախ՝ որպէս անդ, որք հաւատով տեսանէին զաւձն՝ ապրէին,  
եւ անհաւատքն մեռանէին, սոյնպէս որ հաւատով տեսանէ զխա-  
չեալն Աստուծ եւ բնութեամբ՝ Որդի Աստուծոյ, ստանայ զյաւի-  
տենից կեանքն, եւ որ անհաստատութեամբ սոսկ մարդ ասէ զխա-  
չեալն, կրեսցէ զյաւիտենից մահն: Նոյնպէս որ այժմ զխաչս տե-

<sup>1</sup> A C չեք

<sup>2</sup> c Յաւատա

<sup>3</sup> A B չեք

սանէ, այլ եւ որք յերեսն դրոշմեն, այլ որ<sup>1</sup> զ Պատարագն մարմին եւ արիւն Աստուծոյ հաւատայ, կեցցէ հոգւով, եւ որ սոսկ մարդ, մեռցի:

Երկրորդ. որպէս աւձն պղնձի մեռեալ էր եւ կեանք չնորհէր տեսողացն, սոյնպէս Տէր մեր մեռեալ մարմնով զմահ մեռոյց եւ զմեզ կենդանացոյց:

Երրորդ. որպէս անիծեալ աւձն ի դրախտին<sup>2</sup> եւ աւրհնութիւն տայր տեսողացն, եւ Տէր մեր զաւձածեւ մարմինս առեալ եւ խաչեալ եւ աւրհնութիւնս ետ հաւատացելոց իւրոց:

Չորրորդ. որպէս նա ի մարմնաւոր աւձից փրկէր եւ ժամանակաւոր կեանս տայր, եւ Տէր մեր յիմանալի աւձէն փրկէր եւ զյաւիտենից կեանս պարզեւէր:

Հինգերորդ. որպէս աւձն պղնձի ազատ գոլով ի թիւնից մաղկատող աւձից, վասն այն զհարեալսն բժշկէր, սոյնպէս եւ Տէր ազատ գոլով<sup>3</sup> ի մեղաց, վասն այն մեզ կեանս չնորհեաց:

Վեցերորդ. որպէս այն ժողովուրդն, թէ հեռանայր յաւձէն պղնձի, կրկին հարկանիւր յաւձիցն, նոյնպէս թէ մեք հեռանամք ի բարեաց, սատանայ կրկին հարկանէ զմեզ մեղաւք:

Իսկ այլ վարդապետք դնեն չորս պատճառս.

Նախ՝ զի աւձն այն ի բարձր տեղի եւ ի փայտ եղաւ, որպէս զի<sup>4</sup> ամենայն ժողովուրդն կարէին հայել, սոյնպէս Քրիստոս ի բարձր տեղի եւ ի փայտ խաչին բեւեռեցաւ, զի ամենեքեան ի նա հայեցեն:

Երկրորդ. որպէս աւձիւն ոչ ամենեքեան փրկէին, այլ որք ի նա հայէին, նոյնպէս Քրիստոսիւ հաւատացեալքն միայն ապրէին:

Երրորդ. որպէս աւձն այն բարձրացաւ յանապատին, սոյնպէս եւ Քրիստոս խաչեցաւ արտաքոյ քաղաքին:

Չորրորդ. որպէս իսրայէլացիքն փրկեցան ի ժամանակեայ մահուն եւ ի հիւանդութենէ, հայելով յաւձն պղնձի, նոյնպէս եւ հաւատով խաչելոյն Քրիստոսի փրկին յաւիտենից մահուն եւ յամենայն մեղաց: Եւ տես վասն աւձին ի Գիրս Հարցմանց, վեցերորդ հատորն, վաթսուն եւ վեց համարն<sup>xlvii</sup>:

Իսկ որ ասէ ի վերջոյ յորդորակին՝ ոչ առնել զչարս եւ առնել զբարիս, չորս ինչ ցուցանէ. նախ՝ այն է, որ ասէ Դաւիթ. «Խոտորեցո՛ ի չարէ եւ արա՛ զբարի» (Սաղմ. ԼԳ 15), եւ Մովսէս հրաժարա-

<sup>1</sup> B այլ եւ

<sup>2</sup> C անիծեալն օձ յանապատին

<sup>3</sup> C չիք

<sup>4</sup> B չիք

կան եւ յանձնառական ասէ զաւրէնս: Երկրորդ. այն է, որ ի մկրտելն նախ հրաժարիմք եւ ապա դաւանեմք<sup>1</sup>: Երրորդ. յորժամ<sup>2</sup> զմեղս խոստովանիմք, ապա ապաշխարեմք: Չորրորդ. ոչ առնել զչարս զերծանիմք ի տանջանաց եւ առնել զբարիս ժամանեմք յարքայութիւն: Ամէն:

### Թէ սիրեաց Աստուած զմարդիկ

Բան. «Այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ» (Յովհ. Գ 16):

**Մեկնութիւն.** Ասաց նախ զառաջին փրկագործութիւն ի մկրտութին: Զերկրորդն ասաց ի խաչելութիւն: Զերրորդն ասէ աստ:

Եւ վեցիւք ցուցանէ զանչափ սէրն Հաւր. նախ՝ զի Աստուած սիրեաց, երկրորդ՝ զՄիածինն առաքեաց, երրորդ՝ ի չարչարանս ետ, չորրորդ՝ անարժանից ետ, հինգերորդ՝ զի փրկեաց եւ կենդանացոյց, վեցերորդ՝ ետ զՀոգին Սուրբ, զոր յետոյ յիշէ:

Այսպէս վեց իմն առ Որդին երեւի ի բանէս. նախ՝ զի ոչ վասն<sup>3</sup> տկարութեան եկն ի խաչ: Երկրորդ. եւ ոչ վասն զաւրութեան հրէիցն բռնութեամբ: Երրորդ. զի կամաւ եկն: Չորրորդ. զի եւ Հաւր կամաւ, զի մի են կամք Հաւր եւ Որդւոյ: Հինգերորդ. վասն սիրոյ մարդկան: Վեցերորդ. զի փրկեաց զմարդիկ եւ լուսաւորեաց:

Հարց. Զի՞նչ է սիրելն:

Պատասխան. Կամելն<sup>4</sup> այլում բարի: Եւ դարձեալ՝ սկիզբն սիրոյն կամքն է, եւ կատարումն՝ բարի առնելն, եւ մէջն՝ սէրն, զի կամքն առ մեզ է, եւ բարին՝ առ այլս, եւ սէրն՝ ի մէջն:

### Կենդանի հաւատոն

Բան. «Ամենայն, որ հաւատոյ ի նա, մի՛ կորիցէ» (Յովհ. Գ 16):

**Մեկնութիւն.** զի անհաւատութիւն է պատճառ կորստեան, իսկ հաւատն կենդանի կենաց եւ փրկութեան է պատճառ, եւ թէ ոք ասիցէ՝ ո՞ւր է մեռեալ հաւատ, ասեմք, եթէ առանց գործոց հաւատոն մեռեալ է, որպէս ասէ Յակոբոս, իսկ կենդանի հաւատն է սիրով եւ բարեգործութեամբ կենդանացեալ, որպէս ասէ Պաւղոս՝ հաւատք սիրով յաջողեալ, վասն այն աստ ասէ. «Որ հաւատոյ ի

<sup>1</sup> Ե դաւանիմք

<sup>2</sup> Ե այն է, յորժամ

<sup>3</sup> Ե չիք

<sup>4</sup> Ե Այսինքն՝ կամելն

նա», այսինքն՝ սիրով վերանալով առ նա մի՛ կորիցէ, իսկ ասելն.  
«Ամենայն, որ հաւատայ», այսինքն՝ ոչ որոշակի, որպէս հրէայ  
կամ հեթանոս, այլ հասարակ դնէ զհաւատալն<sup>1</sup>, որպէս զմկրտելն,  
զի չիք խտիր:

Բան. «Զի ոչ առաքեաց Աստուած<sup>2</sup> [զՈրդի իւր յաշխարհ], թէ դատես-  
ցի զաշխարհ» (Յովի. Գ 17):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Աշխարհ աստ զմարդիկ ասէ, առաւել զհաւա-  
տացեալք, որք յաշխարհի են, որպէս ցուցաւ ի վերոյ համարն, զի  
թէ Քրիստոս ի կատարածի աշխարհիս դալոց է ի դատել զաշ-  
խարհ, այսինքն՝ քննել եւ հատուցանել, սակայն յառաջին դա-  
լուստն ոչ եկն ի դատել, այլ ի<sup>3</sup> դատիլ, զի ինքն դատեցաւ եւ դա-  
տապարտեցաւ, եւ չարչարեցաւ, եւ մեռաւ, եւ էջ ի դժոխս եւ  
զմեզ ազատեաց եւ ոչ միայն այս, այլ եւ զմեղսն եթող զկուց եւ  
զգործոց՝ զնախնեացն եւ զմերն: Եւ զԱւետարանն ուսոյց՝ քարո-  
զելով, այլ եւ զհիւանդս բժշկեաց եւ զմեռեալս կենդանացոյց  
նշանաւք, եւ այնպէս ետ զհաւատն, վասն այն ասէ.

Բան. «Որ հաւատայ ի նա» (Յովի. Գ 18):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Այսինքն՝ կենդանի հաւատով ոչ դատապար-  
տեսցի, զի ոչ ունի զպատճառ դատապարտութեան, այլ զկենաց  
եւ զփրկութեան պատճառ:

### Ընդդէմ, որք ասեն զբերքաթուրն<sup>xlviii</sup>

Բան. «Եւ որ ոչն հաւատայ ի նա, արդէն իսկ դատապարտեալ է» (Մեն  
Յովի. Գ 18):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ<sup>4</sup>.** Ոչ ասէ զայս ըստ կարծեաց այլազգեաց, թէ  
այժմ լինի մեղաւորացն պատիժ, այսինքն՝ զոր ասեն ի ժամանա-  
կիս յայս<sup>5</sup>, յետ մահուն հոգի մեղաւորին երթայ ի բերքաթուրն,  
որ ի յաւդդ, այսինքն՝ ի քաւարան, եւ անդ քաւին տանջանաւք  
ըստ չափոյ մեղաց իւրեանց, զի<sup>6</sup> քաւ եւ մի լիցի ասել զայս մեզ,  
զի բազում են յայսմանէ վնաս, զոր ի զիրս Հարցմանցն ասացաք  
ի տասներորդ հատորն, [չորեքտասասներորդ] համարն<sup>xlix</sup>:

Իսկ աստ դիցուք կրկին պատճառ.

Նախ՝ թէ լինէր այս, անիրաւութիւն գոյր յԱստուած, զի որք

<sup>1</sup> Ծ զհաւատն

<sup>2</sup> Ա Բ չիք

<sup>3</sup> Բ չիք

<sup>4</sup> Ա Բ չիք

<sup>5</sup> Բ Կ այս

<sup>6</sup> Ծ այլ

մարմնով եւ հոգւով գործեցին աստ չար եւ բարի<sup>1</sup>, առանց մարմնոյ հոգին փառաւորի կամ տանջի, զորս յանդիմանէ զնոսսա Պաւղոս՝ մեզ ամենեցուն յանդիման լինել կայ առաջի ատենին Քրիստոսի<sup>2</sup>, զի ընկալեալ ըստ գործոց, թէ բարի եւ թէ՛ չար:

Երկրորդ. զի բառնայ այս զաւը դատաստանին, զի թէ այժմ լինի հատուցումն արդարոց եւ մեղաւորաց, յի՞նչ պէտս գայ Քրիստոս եւ առնէ դատաստան եւ հատուցումն: Եւ զի ի գալստեանն լինի հատուցումն եւ դատաստան, վկայէ եւ սոյն աւետարանիչս. «Մեռեալք լսիցեն ձայնի Որդւոյն Աստուծոյ, որոց բարիս գործեալ<sup>3</sup> յարութիւն կենաց, եւ որոց չար՝ յարութիւն դատաստանաց» (հմնտ. Յովի. Ե 27-29), եւ Մատթէոս. «Յորժամ գայցէ փառաւք Հաւր, յայնժամ բաժանեացէ զաւդիսն [յայծեաց]» (հմնտ. Սատր. Ի 31-34), եւ արդարքն ի կեանս<sup>4</sup> յաւիտենից, եւ մեղաւորք՝ ի տանջանս<sup>5</sup>: Եւ այլ եւս բազում է վկայութիւն Աւետարանին իշանդիմանութիւն նոցա:

Իսկ որ ասէ. «Արդէն իսկ դատապարտեալ է», երեք է իմացումն.

Նախ՝ զի մեղաւորք մեղանչելով մտանեն ի ներքոյ դատապարտութեան, որպէս Աղամ ուտելով զպտուղն եղեւ մահկանացու, թէպէտ ապրեցաւ ինը հարիւր երեսուն ամ, այլ ի ներքոյ մահուն էր գրաւեալ, սոյնպէս զմեղաւորն իմա: Սապէս եւ արդարքն արդէն իսկ փառաւորին յուսով, զի գրեալ են ի գիրն կենաց:

Երկրորդ. «Արդէն իսկ դատապարտեալ է», այսինքն՝ զի ունի յինքեան<sup>6</sup> յայտնի զպատճառս դատապարտութեան իւրոյ, որ է անհաւատութիւն, որպէս մարդ մեռեալ ասի յորժամ յայտնապէս ունի զպատճառ մահուն:

Երրորդ. անհաւատն արդէն իսկ դատապարտեալ է, զի որպէս հաւատացեալն զամենայն շնորհս յինքեան<sup>7</sup> ստացեալ ունի. զթողութիւն մեղաց, զորդեգրութիւն, զհաղորդութիւն եւ զայլս, իսկ անհաւատն արդէն իսկ զրկեալ է յայսմանէ, վասն այն ասէ.

Բան. «Զի ոչ հաւատաց յանուն Միածնի Որդւոյն» (Յովի. Գ 18):

Մեկնութիւն. Դարձեալ գիտելի է, զի անհաւատքն թէպէտ արդէն, այսինքն՝ այժմ ունին զպատճառս դատապարտութեան, այլ ոչ դատապարտին մինչեւ ի միւսանգամ գալուստն Քրիստո-

<sup>1</sup> С բարի եւ չար

<sup>2</sup> А В չեք կայ առաջի ատենին Քրիստոսի

<sup>3</sup> С չեք

<sup>4</sup> С կեանսն

<sup>5</sup> С տանջանսն

<sup>6</sup> А В յինքն

<sup>7</sup> С յինքեանս

սի: Եւ անդ ոչ ընդունին դատաստան, այլ դատապարտութիւն, որպէս ասէ Սաղմոսն. «Վասն այսորիկ ոչ յարիցեն ամբարիշտք ի դատաստան<sup>1</sup>» (Սաղմ. Ա 5): Եւ Պաւղոս ասէ. «Որք արտաքոյ աւրինացն մեղան, արտաքոյ աւրինացն եւ կորնչին<sup>2</sup>» (Յոռն. Բ 2), զի պատճառ դատապարտութեան նոցա ոչ քննի ի դատաստանին, բայց նոքա, որ հաւատ միայն ունին եւ ոչ՝ գործս, գան ի դատաստան եւ յանդիմանին: Եւ ի սոցանէ ոմանք կորնչին եւ ոմանք՝ ոչ: Եւ աւրինակ այսմ ի մէջ ածէ զժամանակաւոր իշխանս, որք<sup>3</sup> զանցաւորքս քաղաքին իւրեանց<sup>4</sup> ըստ խրատու աւրինացն սպանանեն եւ զվճիռ դատապարտութեան իւրոյ յանդիման նոցա<sup>5</sup> ցուցանեն, իսկ զթշնամիսն, որք արտաքուստ հակառակին, յորժամ ըմբռնին, տանջանաւք սպանանեն, զի ոչ է հարկ աւրինաւք սպանանել, որ ոչ է ի ներքոյ աւրինացն:

Բան. «Եւ այս իսկ է դատաստան» (Յովի. Գ 19):

ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ. Այսինքն՝ պատճառ դատապարտութեան անհաւատիցն: Դարձեալ՝ վասն այն կրեն զմեծ դատաստանս եւ զհատուցմունս: Դարձեալ՝ սկիզբն աստ է դատաստանին, եւ կատարումն՝ անդ:

### Թէ լոյս է Քրիստոս<sup>6</sup>

Բան. «Զի լոյս եկն յաշխարհ» (Յովի. Գ 19):

ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ. Քրիստոս եկն յաշխարհ մարդեղութեամբն՝ ներգործելով զմարդկան փրկութիւն:

Բան. «Եւ սիրեցին մարդիկ զխաւար առաւել քան զլոյս<sup>7</sup>» (Յովի. Գ 19):

ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ. Այսինքն՝ զխաւար անհաւատութեան լաւ համարեցան, քան զլոյս հաւատոյ:

Եւ չորս կերպիւ լուսաւորէր. նախ՝ հաւատով, երկրորդ՝ բարի գործովք, երրորդ՝ քարոզութեամբ, չորրորդ՝ նշանաւք: Եւ նոքա ընդ դիմանային անհաւատութեամբ, եւ չարութեամբ, եւ ստութեամբ, եւ հակառակութեամբ, նման են այնոցիկ, որք զխաւար առաւել սիրեն քան զլոյս:

Բան. «Զի էին գործք իւրեանց չարութեան» (Յովի. Գ 20):

<sup>1</sup> А В չեք

<sup>2</sup> А В չեք եւ կորնչին

<sup>3</sup> С որ

<sup>4</sup> С իւրոյ

<sup>5</sup> С նմա

<sup>6</sup> С թէ Քրիստոս լոյս է

<sup>7</sup> А В չեք առաւել քան զլոյս

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Զպատճառն ասէ զատելոյն զՔրիստոս, զի դպիրքն եւ աւրինաց գէտքն ճանաչէին զնա գոլ ճշմարիտ Քրիստոս, որպէս ասէ Մատթէոս. «Սա է ժառանգն» (Մատթ. ԻԱ 38), այլ զի<sup>1</sup> Քրիստոս յայտնապէս յանդիմանէր զնոսա, նախանձեցան ընդդէմ նորա եւ կուրացան ի ճանաչմանէն, որ վասն Քրիստոսի, որպէս ասէ Արիստոտէլ. «Ախտ մտացն թիւրէ զդատաստան բանաւորութեան», սոյնպէս եւ հրէայքն ատելութեամբ եւ նախանձու հալածեցին զՔրիստոս։ Եւ զայս ցուցանէ Քրիստոս աւրինակաւ՝ ասելով.

Բան. «Ամենայն, որ զչար գործէ՝ ատեայ զլոյս» (Յովի. Գ 20):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Եւ երեք<sup>2</sup> ոմանք ատեն զլոյս. նախ՝ կոյրք, երկրորդ՝ տկար աչաւք, երրորդ՝ չարագործք, որպէս գողք եւ շնացողք, եւ այլք։

Բան. «Եւ ոչ գայ առ լոյսն» (Յովի. Գ 20):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Այսինքն՝ ոչ առնէ զիւր չարն յայտնապէս։

Բան. «Զի մի յանդիմանեսցին գործք նորա<sup>3</sup>» (Յովի. Գ 20):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Այսինքն՝ զի մի պատճեսցին վասն չար գործոց իւրեանց։ Այլ ես ոչ թէ դատաստանաւ պատմէի զնոսա, որպէս զլոյսն, թէպէտ նոքա սոյնպէս կարծէին, այլ ընդ մաքսաւորս եւ ընդ մեղաւորս ուտէի եւ ըմպէի, եւ զլուծ իմ քաղցրասցի եւ ոչ ակն ընդ ական, այլ զամենայն շնորհեցի։

Բան. «Իսկ որ առնէ զծմարտութիւն, գայ առ լոյսն<sup>4</sup>» (Յովի. Գ 21):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Այսինքն՝ որ ոք առնէ զբարի գործս ըստ հաճոյիցն Աստուծոյ, գայ առ լոյսն, այսինքն՝ յայտնապէս առնէ զգործս իւր։ Դարձեալ՝ լոյս է Քրիստոս, որպէս ասաց. «Եր լոյսն ծշմարիտ» (Յովի. Ա 9), եւ թէ՝ «Որք նստէին ի խաւարի եւ ի ստուերս մահու լոյս ծագեաց նոցա<sup>5</sup>» (Մատթ. Դ 16)։ Եւ զպատճառ յայտնապէս առնելոյն զգործս ցուցանէ՝ ասելով.

Բան. «Զի յայտնի լիցին<sup>6</sup> գործք նորա, թէ Աստուծով գործեցան» (Յովի. Գ 21):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Նախ՝ զի Աստուած է Քրիստոս, զոր ցուցանէ գործքն յԱստուծոյ գործեցեալ։ Դարձեալ՝ բարի մարդիկ ոչ յայտնեն զգործս իւրեանց փառասիրութեամբ վասն գովութեան, այլ ի

<sup>1</sup> Բ չեք որպէս ասէ ... այլ զի

<sup>2</sup> Բ չորք

<sup>3</sup> Ա Բ չեք

<sup>4</sup> Ա Բ չեք

<sup>5</sup> Ա Բ չեք

<sup>6</sup> Ը լիցի

**փառս Աստուծոյ եւ ի<sup>1</sup> շինութիւն եղբաւրն, զի ամենայն բարի գործ ոչ լինի միայն զաւրութեամբ առն, այլ Աստուծոյ զաւրութեամբն, վասն որոյ ասէ, թէ՝ Աստուծով գործեցան:**

Եւ գիտելի է, զի Քրիստոս աստ վասն երեք պատճառի յիշէ զանուն լուսոյ եւ խաւարի. նախ՝ զի ցուցցէ զմեծ չարութիւն անհաւատ հրէիցն, զի զլոյսն՝ եկեալ առ նոսա, արհամարհեցին: Երկրորդ. զի ցուցցէ զյիմար ընտրութիւն նոցա, զի յայտնի է, որ լոյսն պայծառ է եւ գեղեցիկ, իսկ խաւարն՝ գարշելի եւ տգեղ: Երրորդ. ցուցանէ, զի չար գործոցն վատթարութիւն ոչ միայն յայտնի է բարի արանց, այլ եւ չարաց, զի նոքա եւս չար գիտեն զգործն, վասն այն ի ծածուկ խնդրեն առնել:

**Եւ աստ կատարումն:**

**Երկրորդ.** Քրկագործութեանցն ի ձեռն հաւատոյն, որ ասաց. «Որ հաւատայ ի նա, մի՛ կորիցէ, այլ ընկալցի զկեանս յալիտենական» (տես Յովի. Գ 18):

**Բան.** «Յետ այսորիկ եկն Յիսուս եւ աշակերտք նորա ի Հրեաստան» (տես Յովի. Գ 21):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Յորժամ ուսոյց զնիկողիմոս եւ զայլս բազումս յերուսաղէմ, որ է մայրաքաղաք Հրէաստանի, եկն ի կողմանս Յորդանանու, զի եւ այն Հրէաստան է եւ ոչ Գալիլիա, զի եւ<sup>2</sup> յետ տաւնին, որ յերուսաղէմ, բազում հաւատացեալք անդ երթային ի մկրտութիւն:

Իսկ Ոսկեբերանն չորս դնէ պատճառս. նախ՝ զի տարածեսցէ զքարոզութիւն, երկրորդ՝ զի արասցէ զնշանսն, երրորդ՝ զի զաւրէնս յԱւետարանս փոխեսցէ, չորրորդ՝ զկատարեալ հաւատս Երրորդութեան ծանուսցէ:

**Տե՛ս,** զի թերի էր հաւատան նոցա, որք միայն մի Աստուած աւսեն եւ ոչ խոստովանին զերրորդական անձնաւորութիւն:

### Վասն մկրտելոյն Տեառն

**Բան.** «Եւ անդ շոջէր Յիսուս<sup>3</sup> եւ մկրտէր» (տես Յովի. Գ 22):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Նախ տեսցուք՝ զի<sup>1</sup>նչ է, որ այժմ ասէ. «Յիսուս մկրտէր», եւ յետոյ ասէ. «Ոչ թէ Յիսուս ինքն մկրտէր, այլ աշակերտքն նորա» (Յովի. Դ 2): **Ասեմք,** թէ Յիսուս ոչ մկրտէր ինքնին, այլ աշա-

<sup>1</sup> B չեք

<sup>2</sup> C չեք

<sup>3</sup> C Յիսուս աշակերտօքն

կերտքն<sup>1</sup> նորա հրամանաւն մկրտէին, վասն այն<sup>2</sup> ի նա յարէ զմկրտելն, որպէս ամենայն գործ ծառայի ի տէրն վերաբերի:

Երկրորդ. տեսցուք, թէ վասն Է՞ր ոչ մկրտէր Քրիստոս:

Ասեմք վասն չորս պատճառի.

Նախ՝ զի ցուցցէ, թէ մկրտելն հասարակաց է գործ, որք ունին զիշխանութիւն քահանայութեան, վասն այն Քրիստոս ոչ մկրտէր:

Երկրորդ. զի մի լիցի կագ եւ հակառակութիւն մկրտելոցն ի Քրիստոսէ եւ իւր առաքելոցն մեծ եւ փոքր կարծելով, որպէս եղեւ ի Կորնթոս. մինն պարծէր պաւղոսեան, եւ մինն՝ ապաւղոսեան եւ կեփայեան:

Երրորդ. զի որպէս ի տեղիս տեղիս գլխոնարհութիւն ցուցանէր վասն ճշմարիտ մարդ գոլոյն, սոյնպէս երբեմն զբարձրութիւն ցուցանէր, զի Աստուած էր, որպէս այժմ աշակերտացն հրամայէ մկրտել, զի որք կարծէին զՅովաննէս մեծ գոլ, քան զՔրիստոս, իւմանայցեն այսու, զի աշակերտացն Քրիստոսի միայն հաւսարէր էր Յովաննէս:

Չորրորդ. զի Քրիստոս նախ մկրտեաց զաշակերտան իւր, եւ ուսոյց զնոսա, եւ զկնի աշակերտքն մկրտէին, այլ Քրիստոս վարդապետութեան միայն պարապէր, որպէս եւ Պաւղոս սակաւ ինչ մկրտեաց եւ յետոյ քարոզէր, զի միտքն պարապ մնասցէ ի քարոզել, որպէս ասէ. «Ոչ առաքեաց զիս Քրիստոս մկրտել, այլ քարոզել» (տես Ա Կորնթ. Ա 17):

Բան. «Սկրտէր եւ Յովաննէս Յայենովը<sup>3</sup>» (Յովհ. Գ 23):

Մեկնութիւն. Որ թարգմանի ջուրը<sup>4</sup> բազում: Իսկ Սաղիմն գեղ է մերձ առ Յորդանան, զոր ոմանք ասեն, թէ Մելքիսեդեկ անդ թագաւորեաց, եւ սուտ են, զի Մելքիսեդեկ յերուսաղէմ թագաւորեաց<sup>5</sup>, ուր Աբրահամ ի լերինն զիսահակ պատարագ մատոյց, որ յետոյ Լուզ կոչեցաւ: Եւ յերուսացիք բնակէին, զոր էառ Դաւիթ, եւ մեծացոյց, եւ Սողոմոն զտաճարն անդ շինեաց եւ խաչն եւ յարութիւն Տեառն անդ եղեւ, եւ նախ կոչէր Սաղէմ, որ է՝ խաղաղութեան, իսկ այժմ կոչի երուսաղէմ, որ է տեսութիւն խաղաղութեան, իսկ Սաղիմն գեղ է միայն:

Տեսցուք զայն, թէ Յովանննէս միշտ ի Յորդանան մկրտէր,

<sup>1</sup> С չիք ասեմք ... աշակերտքն

<sup>2</sup> В վասն որոյ

<sup>3</sup> А В Յայենով, С Յայենոն

<sup>4</sup> С ջուր

<sup>5</sup> С չիք եւ սուտ են ... թագաւորեաց

**այժմ վա՞սն էր եկն ի Յայենովն<sup>1</sup>:**

**Ասեմք վասն երկու իրաց. նախ՝ զի Քրիստոս տեղի ետ մկրտել ի Յորդանան: Երկրորդ. զի կարապետ էր, պարտ էր յամենայն տեղիս զՔրիստոս քարոզել:**

Բան. «Զի չեւ եւս էր<sup>2</sup> արկեալ զՅովաննէս ի բանտ» (Յովի. Գ 24):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Վասն երկու իրաց յիշէ զբանտն<sup>3</sup>. նախ՝ վասն Ժամանակին: Երկրորդ. վասն մկրտելոյն Յովաննու:**

**Եւ նախ վասն Ժամանակին գիտելի է, զի այլ երեք աւետարանիչքն յետ մատնելոյն Յովաննու ասեն զքարոզութիւն Քրիստոսի, եւ սա՝ յառաջ: Ասեմք, թէ չեն հակառակ միմեանց. նախ՝ զի Քրիստոս յառաջ քան զմատնիլն Յովաննու ի բանտ ոչ ամենայն ուրեք եւ ոչ յայտնի քարոզէր, զոր սա ասէ, իսկ յետ մատնելոյն սկսաւ յամենայն տեղիս յայտնապէս քարոզել, զոր նոքա ասեն:**

**Դարձեալ՝ զի երեք աւետարանիչքն զմի տարէն պատմեն զսքանչելիսն, զոր յետ մատնութեան Յովաննու, իսկ Յոհաննէս զամի եւ զկիսոյ, որ յառաջն էր, զոր նոքա ամենելին ոչ յիշատակեցին:**

**Իսկ վասն մկրտելոյն Յովաննու գիտելի է, զի յորժամ մկրտէր Քրիստոս, պարտ էր դադարել Յովաննու, որպէս<sup>4</sup> ի ծագել արեգականն ծածկի արուսեակն, այլ Փրկիչն թոյլ ետ Մկրտչին վասն երեք պատճառի. նախ՝ զի մի լիցի ատելութիւն եւ հերձուած աշակերտացն Քրիստոսի եւ աշակերտացն Յովաննու: Երկրորդ. զի միապէս գործ ապաշխարութեան էին առաքելոցն եւ Յովաննու մկրտութիւն<sup>5</sup>: Երրորդ. զի երկուցն միակամ էին խորհուրդն, որք զժողովուրդն ճեպէին, յետոյ մկրտիլ կատարեալ մկրտութեամբն, որ է թողութիւն եւ նորոգութիւն մարդկան: Զայս ասէ Ոսկեբերանն:**

**Իսկ այլ վարդապետք ասեն երեք պատճառս. նախ՝ զի մի սուտ կարծիցեն զմկրտութիւն Յովաննու, թէ յորժամ Քրիստոս եկն, յայնժամ<sup>6</sup> նորայն խափանեցաւ, եւ այնու դերեւս լինի վկայութիւն Յովաննու<sup>7</sup>: Երկրորդ. զի որք գային առ Յովաննէս, ի Քրիստոս հրաւիրէր եւ յաւժարեցնէր: Երրորդ. զի այսու զմեծութիւն Քրիստոսի յայտնեցէ, զի մինչ մկրտէր Յովաննէս, բա-**

<sup>1</sup> A B C Յայենոն

<sup>2</sup> B չեք

<sup>3</sup> A B զբանսն, C զերկու տարեն

<sup>4</sup> C վասն զի

<sup>5</sup> C Մկրտչին

<sup>6</sup> A B չեք

<sup>7</sup> C վկայութիւն Յովաննու դերեւս լինի

գումք թողին զՅովաննէս<sup>1</sup> եւ եկին առ Քրիստոս:

Տարածայնին վասն մկրտութեան յոյնք եւ լատինք

Եւ աստ գիտելի է, զի է ինչ հակառակութիւն ի մէջ վարդապետացն յունաց եւ հոռմայեցւոց ի վերայ բանիս այս, զի Յոհան Ուկերերանն ասէ, թէ առաքելոց մկրտութիւն նախքան զիսաչն հաւասար մկրտութեան Յովաննու է անկատար մկրտութիւն եւ ապաշխարութիւն:

Եւ դնէ այսմ երեք պատճառ. նախ՝ ասէ, զի եւ զՀոգին չեւ էին<sup>2</sup> առեալ, որ ասաց Մկրտիչն, թէ՝ «Նա մկրտեսցէ հոգւովն սրբով» (տես Սատր. Գ 11): Երկրորդ. զի Որդի Աստուծոյ չէին հաւատացեալ, զոր յետոյ ասաց. «Մկրտել յանուն Հաւը եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ» (տես Սատր. ԻՇ 19): Երրորդ. զի Քրիստոս չէր խաչեալ, ուստի զաւրութիւն մկրտութեան ի խաչէն եղեւ, զի՝ «Որք ի Քրիստոս մկրտիմք, ի մահ Նորա մկրտիմք» (հմնտ. Յոռմ. Զ 3), - ասէ առաքեալ: Չորրորդ. այլք ոմանք ասեն, թէ թլփատութիւն ոչ էր տկարացեալ: Իսկ այս սուտ է, զի թլփատութիւն մկրտութեամբն Քրիստոսի բարձաւ եւ տկարացաւ:

Իսկ հոռմայեցիքն ասեն, թէ առաւել էր մկրտութիւն առաքելոցն քան զՅովաննու, եւ յառաջ քան զխաչն, նախ՝ զի Քրիստոս ետ նոցա մասնաւրաբար զՀոգին Սուրբ, թէպէտ զկատարեալն ի Վերնատունն, ուստի յայտ է, զի ետ նոցա իշխանութիւն հանել զդեւս եւ բժշկել զցաւս, զի Հոգւովն Աստուծոյ հալածէին զդեւս: Դարձեալ՝ զի Յովաննու մկրտեալքն գային եւ մկրտէին յառաքելոցն Քրիստոսի: Արդ, եթէ նոյն էր առաքելոցն եւ Յովաննու, վասն է՞ր գային եւ մկրտէին յառաքելոցն: Դարձեալ՝ որպէս ասէ. «Եղեւ ինդիր յաշակերտացն<sup>3</sup> Յովաննու ընդ իրէի՝ վասն մկրտութեան» (հմնտ. Յովի. Գ 25), զի Յովաննու անարդանք էր, յորժամ առաքեալքն մկրտէին: Արդ, եթէ նոքա մկրտէին ի Յովաննու մկրտութիւն, ոչ լինէր<sup>4</sup> անարդանք, այլ մեծութիւն պատուոյ: Եւ դարձեալ՝ մարդիկ ընդունելով զմկրտութիւն ի Քրիստոսէ եւ<sup>5</sup> յառաքելոցն, յաշակերտութիւն Քրիստոսի մտանէին, վասն այն ոչ վայել էր տալ նոցա զմկրտութիւն Յովաննու, այլ զմկրտութիւն Քրիստոսի: Եւ դարձեալ՝ ասաց առ Նիկողիմոս, «Եթէ ոչ ոք ծնցի ի

<sup>1</sup> Ը զնա

<sup>2</sup> Ը չէին

<sup>3</sup> Ը աշակերտացն

<sup>4</sup> Ը լինի

<sup>5</sup> Ը կամ

ջրոյ եւ ի Հոգւոյ<sup>1</sup>, ոչ մտանէ յարքայութիւն Աստուծոյ<sup>2</sup>» (տես Յովի. գ 5), առպա ոչ է հաւատալի, թէ Քրիստոս թոյլ տայր, որ<sup>3</sup> առաքեալքն յայլ աւտար մկրտութիւն մկրտէին, այլ ի Քրիստոսի մկրտութիւն:

Իսկ առաջնոյն պատասխանի, որ ասէ<sup>4</sup>. «Զեւ էր հոգի», զայն ասէ, որ յայտնապէս զՀոգին չէին առեալ զգալի կերպիւ, որպէս ի Վերնատունն, այլ մկրտութեամբն Քրիստոսի լինէր շնորհք ծածկապէս, որպէս այժմ առ մեզ:

Առ երկրորդն ասեն, թէ աշակերտքն հաւատացեալ էին Որդւոյ ի բանից եւ ի սքանչելեաց նորա, այլ յետ յարութեան առին հրաման ամենեցուն ուսուցանել եւ յանուն երրորդութեան մկրտել:

Առ երրորդն ասեն, թէ մկրտութիւն զաւրութիւն ունի ի չարչարանացն Քրիստոսի վասն աստուածային միաւորութեան, եւ նոյն էր Քրիստոս յառաջ քան զիսաչն եւ յետ խաչին, վասն այնորիկ մկրտութիւն յայնժամ կացուցաւ, յորժամ մկրտեցաւ եւ էառ զաւրութիւն վասն շաւշափման մարմնոյն Քրիստոսի ի ջուրն: Եւ չորրորդին վերոյ ասացաւ:

### Թէ որպէս մկրտեցան առաքեալքն Քրիստոսի<sup>5</sup>

Եւ աստ է հարց, թէ առաքեալքն Քրիստոսի մկրտեալք է՞ին, թէ՝ ոչ, զի ասէ ի համբառնալն. «Յովաննէս<sup>6</sup> մկրտեց ի ջուր, այլ դուք մկրտեսջի՛ք ի Հոգին Սուրբ» (տես Գործք Ա 5):

Պատասխան. Ասեմք առ այս, եթէ առաքեալքն Քրիստոսի նախքան զիսաչն Քրիստոսի<sup>7</sup> մկրտեալք էին: Եւ յայտ է յերից.

Նաև՝ թէ ինքեանք չէին մկրտեալք, զայլ ոք զիսա՞րդ կարէին<sup>8</sup> մկրտել:

Երկրորդ. զի Քրիստոս վկայեաց վասն մկրտութեան նոցա. «Լուացենոյն չէ ինչ պիտոյ, այլ զի զոտսն լուանայցէ» (Յովի. ԺԳ 10):

Երրորդ. զի թէ ոչ էին մկրտեալք, զիսա՞րդ տայր նոցա Քրիստոս զմարմին եւ զարիւն իւր, զի ասաց առ նիկողիմոս. «Զի թէ ոք<sup>9</sup>

<sup>1</sup> Ծ ի հոգւոյ եւ ի ջրոյ

<sup>2</sup> Ա Բ չեք

<sup>3</sup> Ծ եւ

<sup>4</sup> Բ ասէր

<sup>5</sup> Ա Կ չեք

<sup>6</sup> Ծ Յոհաննէս

<sup>7</sup> Ծ չեք

<sup>8</sup> Ծ չեք

<sup>9</sup> Ծ չեք

ոչ ծնցի ի ջրոյ եւ ի Շոգաւոյ, ոչ մտանէ յարքայութիւն<sup>1</sup> [Աստուծոյ]» (տես Յովի. Գ 5), եւ արքայութիւն Քրիստոս է, իսկ թէ որպիսի<sup>2</sup> եղանակաւ<sup>3</sup> մկրտեցան, ասեն ոմանք, թէ որպէս Յովաննէս աստուածային Բանիւն մկրտեցաւ եւ սրբեցաւ, որ առաքեաց զնա մկրտել, սոյնպէս բանն Քրիստոսի առաքելոցն եղեւ սրբութիւն, որպէս ասաց. «Դուք սուրբ էք վասն բանին, զոր խաւսեցայ ընդ ձեզ<sup>4</sup>» (Յովի. ԺԵ 3): Եւ ոմանք ասեն, թէ մկրտեալք էին ի ջուրն Յովաննու, եւ Քրիստոս գնելով գձեռն ի վերայ նոցա, ընկալան զՀոգին Սուրբ: Եւ այսմ ընդդէմ է, որ ասէ. «Յովաննէս մկրտեաց ի ջուր, այլ գուք մկրտեսջի՞ք ի Հոգին Սուրբ» (տես Գործք Ա 5): Այլ ոմանք ասեն, եւ ուղիղ<sup>5</sup>, թէ զերկու աշակերտսն ինքն Քրիտոս մկրտեաց եւ ուսոյց նոցա, եւ նոքա զայլսն ամենայն: Եւ թէ ոք ասիցէ՝ խոնարհութիւն է Քրիստոսի<sup>6</sup> մկրտել զայլս, ասեմք, եթէ առաւել խոնարհութիւն է մկրտիլ յայլմէ, քան մկրտել զայլս: Եւ դարձեալ՝ թէ խոնարհութեամբ ելուաց զոտս աշակերտացն, նոյնպէս խոնարհութեամբ մկրտեաց զաշակերտսն: Եւ դարձեալ՝ պարտ էր Քրիստոսի մկրտել եւ ուսուցանել, որպէս ասէ ի Գործսն. «Քրիստոս առնէր եւ ուսուցանէր» (տես Գործք Ա 1), զի որպէս զխորհուրդ Պատարագին նախ ինքն արար եւ ուսոյց առաքելոցն, եւ որպէս զխորհուրդ դրոշմին նախ ինքն արար՝ ձեռն գնելով ի վերայ տղայոցն, նոյնպէս հաւատալի է, թէ նախ ինքն մկրտեաց եւ ուսոյց զաշակերտսն: Իսկ առաջին տարակոյսն, թէ՝ «Յովաննէս մկրտեաց ի ջուր, այլ գուք մկրտիցիք ի Հոգին Սուրբ<sup>6</sup>» (Գործք Ա 5) սոյնպէս լուծանի, զի առաքեալքն նախ քան զչարչարանան Քրիստոսի մկրտեցան մկրտութեամբն Քրիստոսի, որպէս ցուցաւ նախ, իսկ այն, որ ի համբարձումն ասաց. «Դուք մկրտեսջիք ի Հոգին Սուրբ», պարտ է իմանալ ոչ վասն խորհրդական մկրտութեան, այլ վասն հեղման Հոգւոյն Սրբոյ տեսանելի երեւմամբ ի վերայ առաքելոցն, զի այս հեղումն<sup>7</sup> կերպիւ ինչ մկրտութիւն ասի, զի որպէս ի խորհրդական մկրտութիւն անտեսանելի շնորհք Հոգւոյն Սրբոյ տուեալ լինի ըստ տեսանելի լուացման ջրոյն, նոյնպէս եւ Հոգին Սուրբ անտեսանելի տուաւ տեսանելի նշանաւ ի Վերնատունն սուրբ:

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> C յեղանակաւ

<sup>3</sup> A B չեք ընդ ձեզ

<sup>4</sup> C չեք եւ ուղիղ

<sup>5</sup> B քեզ

<sup>6</sup> A B չեք ի Շոգին Սուրբ

<sup>7</sup> C հեղումս

**Այսքան առ այս:**

**Խնդիր վասն մկրտութեան**

**Այժմ դարձցուք ի բանն, որ ասէ.**

Բան. «Եղեւ խնդիր յաշակերտացն Յովաննու» (Յովի. Գ 25):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Խնդիրն տարակոյս լսի կամ հակառակութիւն, զի Քրիստոս մկրտէր, եւ Յովաննէս մկրտէր, վասն այն աշակերտքն Յովաննու նախանձեցան: Եւ եղեւ խնդիր վասն սրբութեան, այսինքն՝ վասն մեծութեան մկրտութեան, զի աշակերտքն Յովաննու զմկրտութիւն Յովաննու մեծ համարէին վասն չորից. նախ՝ զի յանապատի էր սնեալ, երկրորդ՝ վասն նեղ վարուցն, երրորդ՝ զի նախ քարոզեաց եւ մկրտեաց, չորրորդ՝ զի Քրիստոս մկրտեաց:

Իսկ հաւատացեալ հրէայքն զմկրտութիւն Քրիստոսի մեծ համարէին վասն չորից.<sup>1</sup> նախ՝ զոր մկրտէր Յովաննէս, առաքէր առ Քրիստոս, իսկ Քրիստոս ոչ առաքէր առ Յովաննէս: Երկրորդ. վասն վկայութեան Յովաննու, որ մեծամեծ վկայեաց ի վերայ Քրիստոսի: Երրորդ. զի Քրիստոս նշանս եւ սքանչելիս առնէր:

**Չորրորդ.** զի եւ<sup>2</sup> Հայր ի վերայ Որդւոյ վկայեաց եւ Հոգին էջ:

Եւ զայսպիսի խնդիրս ոչ կարէին լուծանել, վասն որոյ երկոքեանն զՅովաննէս բարի վարդապետ եւ սուրբ<sup>3</sup> համարէին, եկին հարցանել ի նա: Եւ թէպէտ երկու կողմ զոյգ եկեալ էին, այլ միայն աշակերտքն հարցանէին Յովաննու:

Բան<sup>4</sup>. «Ուաբրի» (Յովի. Գ 26):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Չորս բան խաւսեցան չար. նախ՝ «Որ էրն ընդ քեզ յայնկոյս Յորդանանու» (Յովի. Գ 26), իբր թէ դու<sup>5</sup> վարդապետ էիր, եւ նա առ քեզ եկն, որպէս ամենայն աշակերտ առ վարդապետ: Երկրորդ. որում<sup>6</sup> դուն վկայեցեր, որպէս թէ զայն փառքն ի վկայութեանց քոց ընկալաւ: Երրորդ. «Ահաւասիկ նա մկրտէ» (Յովի. Գ 26), իբր թէ զքո գործդ յափշտակէ: Չորրորդ. «Եւ ամեներին զան առ նա» (Յովի. Գ 26), իբր թէ անարգեցին զքեզ եւ առ նա երթան:

<sup>1</sup> С չիք նախ՝ զի յանապատի էր ... վասն չորից

<sup>2</sup> С չիք

<sup>3</sup> С Սուրբ Աստուծոյ

<sup>4</sup> С չիք

<sup>5</sup> С չիք

<sup>6</sup> В յորում

### Պատասխանին Յովաննու

Բան. «Պատասխանի ետ Յովաննէս» (Յովի. Գ 27):

**Մեկնութիւն.** Նախ գիտելի է, որպէս յառաջն ասացաւ, զի պատասխանի ի հարցմանէն չորիւք որոշի. նախ՝ զի յետ հարցմանն է, երկրորդ՝ ըստ կամաց հարցողին է, երրորդ՝ ըստ կարգի հարցմանն է, չորրորդ՝ հրաժարական կամ հաւանական է, որպէս աստ:

**Դարձեալ գիտելի է,** զի աշակերտքն Յովաննու զՔրիստոս բամբասէին վասն կրկին պատճառի. նախ՝ զի ասէին զգործսն Յովաննու յափշտակեալ: Երկրորդ. զի ասէին այնու զանունն Յովաննու նուաստանալ, վասն այն աստ պատասխանի տայ հրաժարական եւ հաւանական:

Բան. «Ոչ կարէ մարդ առնուլ յանձնէ» (Յովի. Գ 27):

**Մեկնութիւն.** Նախ՝ զառաջինն հրաժարէ եւ հակառակ նոցա պատասխանէ, թէ սուտ է բամբասելդ ձեր, նա ոչ յափշտակէ զգործս իմ, որ է մկրտելս: Եւ յայտ է ի չորից.

Նախ՝ զի իշխանաբար մկրտէ, ի վերուստ ի Հաւրէ ունի զիշխանութիւն<sup>1</sup>, եւ ես՝ ծառայաբար, որպէս նախընթաց, եւ ոչ իշխանաբար, վասն որոյ Քրիստոս ոչ յափշտակէ զգործս իմ:

Երկրորդ. դուք ձեզէն վկայէք, այսինքն՝ պարտիք վկայել, որ ասացի, թէ՝ «Ես մկրտեմ ի ջուր, այլ նա մկրտեսցէ<sup>2</sup> ի Հոգին Սուրբ եւ ի հուր» (Իմնտ. Մատթ. Գ 11), ապա յայտ է, թէ ոչ յափշտակէ զգործս իմ, զի այլ է իմ մկրտութիւնս եւ այլ՝ նորա:

Երրորդ. դուք պարտիք վկայել, յորժամ հարցին ղեւտացիքն եւ փարիսեցիքն. «Ասացի, թէ չեմ ես Քրիստոսն, այլ առաքեալ եմ եւ պատրաստող ճանապարհի նորա» (Իմնտ. Յովի. Ա 23), ապա թէ Քրիստոսն մկրտէ եւ աւծանէ, ոչ յափշտակէ զգործս իմ:

Չորրորդ. Նա փեսայ է եւ փեսային է գործ որդիս ծնանել վերստին մկրտութեամբն, իսկ ես բարեկամ եմ եւ չունիմ հարսն, թէ որդի ծնանիմ՝ չնութիւն եւ թշնամութիւն է, վասն այն նա ոչ յափշտակէ զգործս իմ մկրտութեամբն:

Այս հրաժարականն է, այժմ այլ իմն մեկնութիւն դիցուք ի միջի եւ ապա ասասցուք զհաւանականն:

### Զի յԱստուծոյ է ամենայն պարգեւք

Բան. «Ոչ կարեմ առնուլ յանձնէ» (Յովի. Գ 27):

<sup>1</sup> Յ իշխանութիւն

<sup>2</sup> Ա Յ մկրտէ

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Նախ՝ յերկու դէմս հայի. մին ի դէմս Յովաննու, թէ՝ ես վկայեցի վասն նորա, ոչ յանձնէ ինչ էր, այլ յԱստուծոյ, եւ երկրորդ. ի դէմս Քրիստոսի, զի ոչ թէ յանձնէ ինչ եկեալ է վասն փառս որսալոյ, այլ ի վերուստ առաքմամբ: Դարձեալ՝ հասարակ հայի բանս առ ամենայն ոք, որպէս եւ առաքեալ ասէ. «Ոչ ուստեք է իշխանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ» (Յոն. ԺԳ 1), զի ամենայն իշխանութիւն յԱստուծոյ է, այլ ըստ զանազան պարգեւացն եւ գործն զանազանի: Եւ զայս ասէ. «Ոչ կարէ մարդ առնուլ յանձնէ» (Յովի. Գ 27), այսինքն՝ հոգեւոր գործ կամ սքանչելիք, կամ այլ ինչ, այլ զմարմնաւոր գործ կամ զչար յանձնէ առնեն: Դարձեալ՝ հոգեւոր գործն այն, որ բարեպէսն<sup>1</sup> կամաւ տայ Աստուծած, իսկ չարեացն ներելով եւ թոյլ տալով: Եւ կամաւն առաջին կամք ասի Աստուծոյ, եւ թոյլ տալովն՝ երկրորդ կամք: Եւ սոյնպէս տեսցեն զամենայն, եթէ իշխանք են բարի եւ չար, առաջնորդք եւ քահանայք՝ բարի եւ չար, եւ այլն:

### Վասն փեսայի եւ հարսին

Նախ գիտելի է, զի Քրիստոս միայն է փեսայ եւ ոչ Հայր, կամ Հոգի, զի Բանն մարմին եղեւ եւ չարչարեցաւ: Եւ ի մէջ ամենայն աշխարհի մարդս միայն է հարսն, որ է հոգի եւ մարմին: Եւ ի մէջ մարդկան՝ եկեղեցի Սուրբ, որ է հաւատացեալ եւ սրբեալ: Դարձեալ գիտելի է, զի բազում յեղանակաւ ասին՝ փեսայ Քրիստոս եւ հարսն հաւատացեալք:

Եւ ասեմ աստ տասն կերպիւ.

Նախ՝ վասն առաւել սիրոյն, զորմէ ասաց Աղամ. «Թողցէ այր զհայր իւր<sup>2</sup> եւ զմայր [իւր] եւ երթիցէ<sup>3</sup> զհետ կնոջ [իւրոյ]» (Մենական. Բ 24), եւ Տէրն. «Ոչ ոք ունիցի այնպիսի սէր, որպէս ես զանձն իմ եղի»:

Երկրորդ. կոչի հարսն, զի ի կողից<sup>4</sup> Տեառն շինեցաւ:

Երրորդ. զի եթող զՀայր ի յերկինս եւ զմայր ի յերկրի, եւ եկն ի խաչ:

Չորրորդ. զի եղիցին երկուքն ի մարմին մի:

Հինգերորդ. զի ծննդական է հոգեւոր:

Վեցերորդ. զի նա գլուխ է, եւ հաւատացեալք՝ անդամք:

Եւթներորդ. զի մկրտութեամբն զգեցաք զՔրիստոս:

<sup>1</sup> Ը բարեպէսն է

<sup>2</sup> Ա Յ ՀԵՊ

<sup>3</sup> Ա Յ Երթայ

<sup>4</sup> Զ կողիցն

Ութերորդ. զի եւ հաղորդեցաք զմարմին եւ զարիւն նորա:  
Իններորդ. զի նա միայն է Տէր հարսին, որ է մարմնացեալ  
Բանն:

Տասներորդ. զի հաւասար իւր թագեալ պսակեաց զեկեղեցի:  
Եւ գտցես վասն փեսայի եւ հարսին ի Մատթէոս գլուխն, յեր-  
րորդ հատորն<sup>1</sup> համարն<sup>1</sup>: Այլ եւ յերգ երգոցն վեցերորդ<sup>2</sup> համարն  
վասն հարսանեաց է:

### Վասն բարեկամին հարց

Վասն է՞ր կոչէ զինքն բարեկամ, եւ այլ ուր սպասաւոր ա-  
սաց:

Պատասխան. Վասն չորից. նախ՝ բարեկամ ասէ վասն առաւել  
խոնարհութեան<sup>3</sup>: Երկրորդ. բարեկամ ասէ, զի մի չարախաւսեա-  
ցեն զՔրիստոսէ<sup>4</sup>:

Երրորդ. զի աշակերտքն ի նախանձ էին շարժեալ վասն Քրիս-  
տոսի, կամի զնոցա սիրտն ի քաղցրութիւն շարժել:

Չորրորդ. կամի զբանն իւր հաւատարիմ առնել, վասն այն  
զինքն ոչ կոչէ ծառայ, այլ բարեկամ:

Բան. «Ուրախութեամբ ուրախ լինի» (Յովի. Գ 29):

Մեկնութիւն. Նախ զայն ասէ, թէ վայել է ուրախակից լինել  
փեսային, յորժամ լսէ, թէ որդիս ծնանի, սոյնպէս եւ ես վասն  
մկրտութեան Քրիստոսի<sup>5</sup> ուրախ եմ, իսկ որ կրկնէ զուրախու-  
թիւն, չորիւք է իմացումն. նախ՝ գերադրական ցուցանէ զուրա-  
խութիւն: Երկրորդ. մարմնով եւ հոգւով: Երրորդ. վասն նորա  
մկրտութեան եւ վասն իմ վկայութեան: Չորրորդ. վասն նորա մե-  
ծութեան եւ վասն ժողովրդեան ճանաչելոյն եմ ուրախ:

Իսկ զի՞նչ է ասելն. «Որ կայ» (Յովի. Գ 29):

Պատասխան. Նախ ցուցանէ, թէ վկայութիւն իմ զկատարումն  
էառ: Երկրորդ. գործն իմ զկայ էառ: Երրորդ. ի կարգ սպասաւո-  
րացն եմ: Չորրորդ. կանգնեալ եմ եւ լսեմ զծածուկ խորհուրդ նո-  
րա եւ զբարձր բարբառն:

Բան. «Ուրախութիւնս իմ լցեալ է<sup>6</sup>» (Յովի. Գ 29):

<sup>1</sup> Բ չորրորդ հատորն

<sup>2</sup> Ա Բ չեք

<sup>3</sup> Ա Բ չեք վասն առաւել խոնարհութեան, Փխ. զի մի չարախօսեսցեն զՔրիստոսէ

<sup>4</sup> Ա Բ չեք երկրորդ. բարեկամ ասէ ... զՔրիստոսէ

<sup>5</sup> Բ չեք

<sup>6</sup> Ա Բ լցին

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Նախ՝ զվկայութիւն ասէ, որ վասն Քրիստոսի: Երկրորդ. զսպասաւորութիւն, ասէ, կատարեալ է: Երրորդ. ժամանակ եւ ամենայն ինչ իմ լցեալ է, այլ մի ինչ նախանձ բերէք ընդ Քրիստոսի, եւ մի սոյնպիսի հարցանիցէք:

### Աստուածաբանութիւն Յովաննու

Բան<sup>1</sup>. «Նմա պարտ է աճել, եւ ինձ մեղմանալ» (Յովի. Գ 30):

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Աստ զհաւանականն ասէ, զի նախ եցոյց Յովաննէս, թէ ոչ յափշտակեաց Քրիստոս զգործս իմ, իսկ աստ ցուցանէ, թէ պարտ է նուազել ինձ եւ խոնարհել, եւ նմա աճել եւ բարձրանալ:

Եւ զայս ցուցանէ չորս պատճառաւ, զոր եւ մեք ասասցուք ի կարծոյ: Առաջին պատճառ. վասն գերագոյն ծննդեանն Քրիստոսի, որ ի Հաւրէ եւ ի մաւրէ ասէ, որ ի վերուստն գայ, ի վերոյ է<sup>2</sup>, քան զամենայն: Երկրորդ.<sup>3</sup> վասն ստոյգ վարդապետութեան, ասէ. «Որ յերկնիցն օայ» (Յովի. Գ 31), զոր ետես եւ լոււաւն՝ պատմէ: Երրորդ. վասն լրութեան չնորհացն, ասէ. «Ոչ թէ չափով տայ Աստուած զՅոգին» (Յովի. Գ 34): Չորրորդ. վասն Քրիստոսի որդիութեան, ըստ որում բնութեամբ Միաժին Որդի է Աստուծոյ:

Այս համառաւտ տեսութիւն:

### Վասն աճմանն Քրիստոսի

Իսկ այժմ տեսցուք ըստ կարգի, որ ասէ. «Նմա պարտ է աճել» (Յովի. Գ 30):

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Աճումն Քրիստոսի ոչ ասի, զի Քրիստոս Աստուած է բնութեամբ եւ Աստուծոյ աճումն ոչ է: Դարձեալ՝ ըստ մասին, զի Քրիստոս ըստ Աստուածութեան ի Հաւրէ է<sup>4</sup> եւ ոչ ունի աճումն, այլ եւ ոչ ըստ բանական հոգւոյն, զի թէպէտ բանական հոգին յԱստուծոյ ստեղծաւ որպէս ամենեցուն, այլ ի կէտ յղութեան ստեղծումն միաւորութեամբն եղեւ ի Բանն Աստուած, վասն որոյ ի սկիզբն յղացմանն կատարեցաւ իմաստութեամբ, զաւրութեամբ եւ փառաւք, եւ այս այլում հոգւոյ ոչ պատահեցաւ: Նա եւ մարմինն Քրիստոսի, թէպէտ ի նիւթոյն Մարիամայ

<sup>1</sup> C չեք

<sup>2</sup> B չեք

<sup>3</sup> C Երկրորդ պատճառ

<sup>4</sup> A B չեք

էր, այլ զաւրութեամբ Հոգւոյն կերպարանեցաւ, եւ կերպարանիլն ընդ Բանին միաւորութեան եղեւ, այսինքն՝ ի կէտ յղացմանն անապական, անմեղ<sup>1</sup>, կատարեալ սրբութեամբ։ Եւ սոյնպէս է հոգին եւ մարմինն Քրիստոսի Աստուած, ի սկիզբն<sup>2</sup> եւ ի կէտ յղացմանն միաւորութեամբն ի Բանն Աստուած։ Եւ զայս ասէ Աստուածաբանն Գրիգոր. «Համարձակիմ եւ ասեմ զոյգ Աստուած, որպէս առօղն, նոյնպէս՝ առեալն<sup>3</sup>։ Եւ սոյնպէս մի անձն եւ մի դէմ եւ միաւորեալ մի բնութիւն խոստովանիմք զԲանն Աստուած մարմնացեալ եւ մարդացեալ»<sup>4</sup>։ Ապա յայտ է, զի Քրիստոս ոչ ըստ Աստուածութեան եւ ոչ ըստ մարդկութեան աճել ոչ ունի։ Եւ սոյնպէս ըստ Աստուածութեան եւ ըստ մարդկութեան ի վերուստ ասի։

Հարց. Ապա զի՞նչ է ասելն. «Նմա պարտ է աճել եւ ինձ մեղմանալ»։

Պատասխան. Այսինքն՝ ի միտս ժողովրդեանն մեծանալ եւ բարձրանալ աճիլ ասի նմա, եւ ոչ յիւրում<sup>5</sup> էութեան։ Դարձեալ՝ մեք յորժամ հաւատով ճանաչեմք եւ աճեմք, բազմութիւն հաւատացելոց նմա ասի աճել եւ մեծանալ, եւ սոյնպէս իմասցիս զառաքելոյ ասելն ի Փիլիպպեցիսն. «Աստուած զնա առաւել բարձրացոյց եւ շնորհեաց ննա անուն» (Փիլիպ. Բ 9): Եւ զայս ցուցանէ<sup>6</sup> ասելով. «Նմա պարտ է», այսինքն՝ վայել է, զի համբաւ նորա եւ իշխանութիւն ի վերայ մարդկան մեծանայ, եւ ինձ նուաստանալ, որպէս արուսեակն նուաստանայ ի տեսութենէ մարդկան, յորժամ արեգակն ծագէ<sup>7</sup>, եւ որպէս իշխանութիւն դեսպանին դադարէ, յորժամ թագաւորն գայ<sup>8</sup>։

Եւ զպատճառն այսմ զկնի դնէ Յովաննէս՝ ասելով.

Բան<sup>9</sup>. «Որ ի վերուստն օյայ, ի վերոյ է քան զամենայն» (Յովհ. Գ 31):

Մեկնութիւն. Այս առաջին պատճառ մեծութեան Քրիստոսի ի վերուստ գալն ցուցաւ ըստ Աստուածութեան եւ մարդկութեան Քրիստոսի, որպէս ցուցաւ, իսկ ի վերոյ քան զամենայն, այսինքն<sup>9</sup> նախ քան զամենայն հրեշտակս, զի նոքա սպասաւորք են Քրիստոսի։ Դարձեալ՝ ի վերոյ է, քան զամենայն մարդկան դի-

<sup>1</sup> Ը անեղ

<sup>2</sup> Ը չիք

<sup>3</sup> Ը նոյնպէս եւ առեալն

<sup>4</sup> Ը իւրում

<sup>5</sup> Ը ցուցանէ Յովաննէս

<sup>6</sup> Ը յորժամ ծագէ արեգակն

<sup>7</sup> Ը իշանէ թագաւորն

<sup>8</sup> Ը չիք

<sup>9</sup> Ը ոյ

տութիւն, վասն ստոյգ վարդապետութեան ասէ: Այս երկրորդ պատճառ մեծութեան Քրիստոսի, զի Քրիստոս Աստուած է եւ զգիտութիւն Աստուծոյ Հաւր ունի: Եւ բանական հոգին Քրիստոսի միաւորեալ<sup>1</sup> Բանիւն գիտէ զՀայր Աստուած եւ զՀոգին Սուրբ, եւ գիտէ զամենայն անցեալ եւ<sup>2</sup> զներկայ եւ զհանդերձեալ, վասն որոյ կարէ ստուգապէս ուսուցանել զամենայն բարձրագոյն բանս, որպէս ասէ.

Բան. «Որ յերկրէ է եւ յերկրէ խաւսի» (Յովի. Գ 31):

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Ամենայն մարդ բաց ի Քրիստոսէ է յերկրէ աստի<sup>3</sup>, զի մարմինն ի սերմանէ է եւ զերկրաւորս խաւսի: Իսկ թէ Յովաննէս եւ Յոհաննէս աւետարանիչս եւ այլ սուրբք յաղագս երկնայնոցն խաւսեցան, սակայն ոչ յինքենէ, այլ իբրեւ յԱստուծոյ լուսաւորեալք, իսկ Քրիստոս յինքենէ խաւսի: Դարձեալ ասէ Ոսկերեանն, թէ Յովաննէս<sup>4</sup> անդստին լցաւ Հոգւովն Սրբով, վասն այն զերկնաւորն խաւսի, այլ զինքն յերկրէ ասէ՝ համեմատելով ընդ Քրիստոսի, որպէս առ Նիկոդիմոս զվերստին ծնունդն, որ երկնաւոր է եւ հոգեւոր, երկրաւոր ասաց Տէրն՝ համեմատելով ընդ Բանին ծնունդն հայրական, սա երկրաւոր կոչի:

Բան. «Որ ի յերկնիցն գայ» (Յովի. Գ 32):

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Զոր ստուգապէս ճանաչէ, զոր ի Հաւրէ ունի տեսանել եւ լսելն, իսկ ասելն՝ ետեն եւ լուաւ:

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Ոչ թէ կարաւտէր ուսման, զի Աստուածութիւն ոչ է<sup>5</sup> մասնաւոր ակն կամ<sup>6</sup> ունկն, այլ բոլորովին ակն է եւ ամենեւին ունկն, եւ մարմինն թէպէտ ունէր մասն, այլ միաւորութեամբն ի Բանն գիտէր զամենայն: Այլ վասն չորից տեսանել եւ լսել ասէ. նախ՝ զի առ մեզ իջանէ<sup>7</sup> բանիւ: Երկրորդ. զի այս երկու զգայութիւնս հաստատէ ի վկայութիւնս: Երրորդ. զի մեք սովորեմք այսու ուսանել: Զորրորդ. զի տեսանել եւ լսել զընդունելն ասէ:

Հարց. Զի՞նչ ետես եւ լուաւ:

Պատասխան. Ոչ մասնաւոր ինչ, այլ զբոլորն. զԱստուածութիւն, զանձնաւորութիւն, զարարչութիւն, զկարողութիւն եւ զայլն տեսանել ասի: Իսկ լսել՝ զբան, զիմաստութիւն, զբարու-

<sup>1</sup> А В միաւոր

<sup>2</sup> В չեք

<sup>3</sup> А В բաց ի Քրիստոսէ յերկրէ ասի

<sup>4</sup> В Յովիաննէս

<sup>5</sup> А В չեք

<sup>6</sup> С եւ կամ

<sup>7</sup> А С զիջանէ

թիւն, զանցեալն եւ զհանդերձեալն, եւ զայլն լսել ասի, զի զայսոսիկ մեք տեսանեմք եւ լսեմք, դնեմք նմա, այլ նա զբոլորն էութեամք ունի եւ ոչ մասամք:

### Վասն վկայից

Բան. «Վկայեաց» (Յովի. Գ 32):

Մեկնութիւն. Այս է վկայելն սքանչելեաւք եւ բանիւ, զոր ետես եւ լուալ՝ եցոյց մեզ: Եւ յայտ է յասացելոցս, զի չորս են վկայք. նախ՝ բանիւ, որպէս վարդապետք: Երկրորդ. գործով, որպէս սուրբք: Երրորդ. արեամբ, որպէս մարտիրոսք: Չորրորդ. սքանչելեաւք, որպէս մարդարէքն:

Իսկ Տէր մեր այս չորիւքս վկայեաց, այսինքն՝ զի սուրբ էր եւ քարոզէր եւ նշանս առնէր եւ զարիւնն եհեղ:

Բան. «Եւ զվկայութիւն նորա ոչ ոք ընդունի» (Յովի. Գ 32):

Մեկնութիւն. Դժուարին է բանս, զի աշակերտքն Քրիստոսի հաւատացեալք էին, այլ եւ Յովաննու աշակերտքն, որ առ նմա ագան, յորժամ վկայեաց, թէ՝ գարն Աստուծոյ: Եւ դարձեալ՝ ինքն ասէ. «Որ ընդունի [զվկայութիւն նորա], կնքեաց, թէ Աստուած ճշմարիտ է<sup>1</sup>» (Յովի. Գ 33):

Արդ չորիւք է իմանալ. նախ՝ զոչ ոքն եղ, զի սակաւք ընդունեցան, որպէս հասարակ կերպիւ ասեմք, յորժամ սակաւ ոք լինի ի հրապարակն, ասեմք՝ ոչ ոք կայ ի հրապարակն<sup>2</sup>: Երկրորդ. զոչ ոքն ասէ ընդդէմ անհաւատիցն, որպէս այն. «Յիւրսն եկն եւ իւրքն զնա ոչ ընկալան» (Յովի. Ա 11): Երրորդ. այսու յորդորէ զաշակերտսն իւր ընդունել զնա:

Չորրորդ. զի չասաց՝ ոչ ոք ընդունիցի, զի բազումք<sup>3</sup> յետոյ ընդունելոց էին:

### Վասն կնքելոյն զնա

Յետ այսորիկ ցուցանէ, զոր ինչ բարութիւն լինի<sup>4</sup> ընդունողացն զնա:

Բան. «Որ ոք ընդունի զնա, կնքեաց, թէ Աստուած ճշմարիտ է<sup>5</sup>» (տե՛ս Յովի. Գ 33):

<sup>1</sup> A B չեք է

<sup>2</sup> C չեք ասեմք ... հրապարակն

<sup>3</sup> B զի որպէս բազումք

<sup>4</sup> B ունի

<sup>5</sup> A B չեք թէ Աստուած ճշմարիտ է

**ՄԵԼԻՆՈՒԹԻՒՆ. ՎԵց իմն մտաւք տեսանի.**

Նախ ասէ Նանա. «Որ հաւատով ընդունի զվկայութիւն Քրիստոսի<sup>1</sup>, կնքեաց, այսինքն՝ վկայեաց, թէ ճշմարիտ Աստուած է Քրիստոս, իսկ որ ոչ ընդունի զվկայութիւն, ոչ հաւատայ<sup>2</sup>, թէ ճշմարիտ Աստուած է Քրիստոս»<sup>iii</sup>:

Երկրորդ. ասէ Ոսկեբերանն. «Որ հաւատով ընդունի զվկայութիւն, կնքեաց, այսինքն՝ եցոյց, թէ Հայր Աստուած ճշմարիտ է, եւ կատարեաց զխոստումն իւր՝ առաքելով զՈրդին, վասն այն ասէ զկնի, զի զոր Աստուածն առաքեաց զԲանն Աստուծոյ<sup>3</sup> իւաւսի»:

Երրորդ միտք. որ ոք ընդունի, կնքեաց, այսինքն՝ ի սրտի իւրում զրոշմեաց եւ եղ, թէ Աստուած ճշմարիտ է, զի Աստուծոյ ճշմարտութիւն լինի որպէս կնիք իմն զրոշմեալ ի մոմ կակուդ:

Չորրորդ միտք. որ ընդունի զվկայութիւն նորա, կնքեաց, այսինքն՝ նշան եղ յինքեան, զի Քրիստոս է Աստուած ճշմարիտ, զի հաւատն է նշան, որ հաստատէ յինքեան<sup>4</sup>, թէ ճշմարիտ Աստուած է Քրիստոս ի ճշմարիտ Աստուծոյ Հաւրէ առաքեալ, որպէս յետագայ բանն վկայէ: Եւ սոյնպէս չորս մտաւքս ըստ ինքեան յայտնի է առ մեզ:

Դարձեալ հինգերորդ. թէ նոյն ինքն կնքեաց Քրիստոս ի սիրտ իւր, թէ Աստուած ճշմարիտ է, որպէս այլ ուր ասէ. «Աստուած զնա Հայր<sup>5</sup> կնքեաց» (տես Յովի. Զ 27), եւ որ ոք ընդունի զվկայութիւն նորա, զկնիքն Հաւր յինքեան ունի:

Դարձեալ վեցերորդ. ի դէմս իւր ասէ Յովաննէս յայսմ բանէ, թէ «Ձոր ետես եւ լուաւ, վկայեաց» (տես Յովի. Գ 32), այսինքն՝ իբր թէ տեսի զերկինս բացեալ եւ զՀոգին աղաւնակերպ իջեալ, եւ լուայ զձայն Հաւր, եւ վկայեցի, թէ սա է Որդին Աստուծոյ: Եւ զվկայութիւն նորա ոչ ոք ընդունի, այսինքն՝ որք տմարդիք են յաշակերտացս<sup>6</sup>, իսկ որք ընդունին զայն վկայութիւն Հաւր, որ ասաց. «Դա է Որդի ին սիրելի<sup>7</sup>», եւ զՀոգւոյն իջումն կնիք է ամենայնի, որ դիցեն ի սիրտս իւրեանց, թէ Քրիստոս Աստուած է ճշմարիտ վասն վկայութեան Հաւր<sup>8</sup>:

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> C հաւատաց

<sup>3</sup> B կրկ

<sup>4</sup> C չեք զի Քրիստոս է ... հաստատէ յինքեան

<sup>5</sup> C չեք

<sup>6</sup> B աշակերտացս C աշակերտացս ին

<sup>7</sup> A B չեք ին սիրելի

<sup>8</sup> A B չեք

Բան. «Զի զոր Աստուածն առաքեաց, զբանս Աստուծոյ խաւսի» (Յովի. գ 34):

**Մեկնութիւն.** Նախ ասէ, թէ զվկայութիւն նորա ընդունիք, զառաքեալն նորա ճշմարիտ համարիք, զի զոր ինչ ասէ, ի նմանէ ասէ: Երկրորդ. յայտնէ զմեծութիւն վարդապետութեան Քրիստոսի, զի յատուկ զաւրութեամբն իւր զԲանն Աստուծոյ խաւսի, զոր ոչ յայլ ոք տեսանի:

### Վասն անչափ շնորհացն

Բան. «Ոչ թէ չափով տայ Աստուած զՅոգին» (Յովի. գ 34):

**Մեկնութիւն.** Տալ եւ առաքել եւ լսել. սոքա առ մեզ զիջանելով են, որպէս յայտ է ի մեկնիչդ<sup>լին</sup>: Դարձեալ՝ ըստ Աստուածաբանին. «Ոչ թէ չափով տայ, այսինքն՝ զի ոչ տայ եւ ոչ չափէ, զի էակից իւր է», զայս ասէ ընդդէմ Արիոսի: Այս երրորդ պատճառն է, զի պարտ էր Քրիստոսի անուանն հռչակիլ վասն լրութեան շնորհացն, զի որպէս զգայարանք մարմնոյն ի գլուխն է, սոյնպէս եւ ի գլուխն մեր Քրիստոս գոյ ամենայն լրումն շնորհաց<sup>1</sup>: Իսկ<sup>2</sup> այլ ամենայն սուրբք<sup>3</sup> մասնաւոր ունին զշնորհս, ըստ այնմ<sup>4</sup> բաժինք շնորհաց են եւ բաժինք յաջողութեանց, եւ այլն, որ ըստ կարողութեան բաժանէ Հոգին: Իսկ Քրիստոս, զի յերկնից է եւ զոր լուաւ եւ ետես, պատմեաց, վասն այն զկատարեալ եւ<sup>5</sup> զլրումն շնորհաց ունի<sup>6</sup>, եւ կատարեալ պարգեւէ այլոց: Եւ այլ սուրբք մասն շնորհաց ընդունին եւ մասն այլոց պարգեւեն:

Հարց. Վասն է՞ր:

**Պատասխան.** Այս է պատճառ, զի ամենայն մարդիկ չափաւորեն, զի որպէս էութիւն չափաւոր է, սոյնպէս եւ ամենայն շնորհք<sup>7</sup> նորա, քանզի յորժամ ենթակայն չափաւորէ, անհնար է, զի պատահումն անչափ լիցի: Իսկ մարդկութիւն Քրիստոսի անչափ ունի շնորհս, զի զամենայն ներգործութիւն եւ զտեսակ շնորհաց ունի ընդ միութեան ի Բանն Աստուծոյ, որ է անչափ եւ նոյն Բանն Աստուծոյ<sup>8</sup> եղեւ ենթակայ մարդկութեան Քրիստոսի անորիշ միութեամբ եւ անշփոթ խառնմամբ:

<sup>1</sup> Ե ամենայն լրումն շնորհաց ունի: Եւ կատարեալ պարգեւէ այլոց

<sup>2</sup> Ե եւ

<sup>3</sup> Ա սուրբք ամենայն

<sup>4</sup> Ա չիք

<sup>5</sup> Ե չիք իսկ այլ սուրբք ... Վասն այն զկատարեալ եւ

<sup>6</sup> Ե ամենայն լրումն շնորհաց ունի

<sup>7</sup> Ե շնորհըն

<sup>8</sup> Ը չիք որ է ... Աստուծոյ

### Վասն սիրոյ Հաւը

Բան. «Հայր սիրէ զՈրդի» (Յովի. Գ 34):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Այս չորրորդ պատճառն է, զի պարտ էր Քրիստոսի ածել եւ մեծանալ եւ Յովաննու մեղմանալ, վասն զի Քրիստոս քնութեամբ Որդի է Աստուծոյ, եւ այլ ամենայն սուրբք եւ հրեշտակք եւ երանեալքն չնորհիւ որդեգրութեամբ: Եւ տես զկարգ աստուածաբանութեանս Մկրտչին. նախ ասաց զբարձրագոյնն՝ ի վերուստ է: Եւ ապա զիջոյց ըստ մեզ, զոր լուաւ եւ առաքեցաւ եւ ետ զՀոգին: Այժմ դարձեալ ի բարձրագոյնն հանէ զԲանն<sup>1</sup>, զի մի կարծիս փոքրութեան լիցի կամ արարած ասել: Ասէ. «Հայր է Որդւոյ եւ ոչ՝ արարիչ, եւ Որդի է Հաւը, ո՛չ՝ արարած», իսկ ասելն՝ Հայր սիրէ զՈրդի, ցուցանէ, թէ զնոյն կարողութիւն ունի ընդ Հաւը եւ զնոյն Աստուծութիւն: Իսկ որ ասէ՝ սիրէ, ոչ պատճառաբար իմանի ասելն՝ Հայր սիրէ զՈրդի, զի Որդին Աստուծոյ ոչ թէ կամաւորաբար ելանէ ի Հաւրէ, այլ բնականաբար, վասն այն սէրն Հաւը ոչ է պատճառ ելման Որդւոյ, այլ պարտ է զայն իմանալ կցորդաբար եւ նշանակաբար, զի Հաւը Աստուծոյ սէրն կցորդ է եւ յաւէտակից ելման Որդւոյ:

### Վասն տալոյն Հաւը

**Իսկ ասելն.** «Զամենայն ինչ ետ ի ձեռս նորա» (Յովի. Գ 35), այսինքն՝ զԱստուածութիւն, զկարողութիւն, զիշխանութիւն, զշնորհն, եւ զայլն: Տալն զունելն նշանակէ, զի ունի էութեամբ ի Հաւրէ, որպէս զբնութիւն, սոյնպէս զկարողութիւն եւ զներգործութիւն եւ զայլն:

**Այս ըստ աստուածութեան:**

Դարձեալ՝ ըստ մարդկութեան ամենայն ինչ տուեալ է ի ձեռս նորա՝ միաւորութեամբ Բանին Աստուծոյ, որպէս ասէ ինքն<sup>2</sup> ի Մատթէոսն. «Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս եւ յերկրի» (Մատթ. ԻԾ 18), եւ սոյնպէս իմանալ զբանս զայս, այսինքն՝ զսէր Հաւրն: Աստ պատճառաբար դնի, զի սէրն Աստուծոյ առ մարդկութիւն Քրիստոսի պատճառ է<sup>3</sup> ամենայն պարգեւաց, զոր Հայր Աստուած ետ մարդկութեան Քրիստոսի:

<sup>1</sup> Ը զբանս

<sup>2</sup> Ը ինքն ասէ

<sup>3</sup> Յ ճառէ

Յորժամ եցոյց Յովաննէս չորս պատճառաւ<sup>1</sup>, թէ պարտ էր Քրիստոսի մեծանալ փառաւք եւ համբաւաւք, ապա զկնի եղրակացուցանէ զբանն, զի յոյժ բարի է հաւատալն ի Քրիստոս, եւ այնու զաշակերտսն ածէ առ Քրիստոս:

### Վարձք հաւատոյն

Բան. «Որ հաւատայ յՈրդի ընդունի զկեանս յաւիտենականս» (Յովի. Գ 36):

**Մեկնութիւն.** Եւ զայս պարտ է իմանալ վասն կատարեալ հաւատոյ, որ կենդանացեալ է սիրովն Աստուծոյ: Եւ հաւատն այն սերմ է եւ արմատ<sup>2</sup> յաւիտենից կենացն, նա եւ ունի յուսով զկեանսն յաւիտենից: Եւ տե՛ս զաստուածաբանութիւն, զի ասաց՝ Որդի է եւ զամենայն ինչ ունի եւ հաւատալի է, եւ կենացն յաւիտենից տուող է, ապա ուրեմն Աստուծոյ է եւ արարած<sup>3</sup>: Այս ընդդէմ Արիոսի: Դարձեալ՝ ընդդէմ Նեստորի, զի Քրիստոս մարմնով է բնութեամբ Որդի Աստուծոյ եւ մարմնովն ունի զամենայն<sup>4</sup> իշխանութիւն, եւ մարմնովն հաւատամք ի Քրիստոս, եւ մարմնովն է Տէր յաւիտենից կենացն, ապա ուրեմն մարմնովն է Քրիստոս Աստուծ ճշմարիտ, եւ սոյնպէս խոստովանողացն տայ զկեանսն յաւիտենից: Իսկ որք բաժանեն զԲանն ի մարմնոյն, եւ որք ուրանն զԱստուծութիւն Որդւոյն, եւ որք ոչ հաւատան ի Քրիստոս, ցուցանէ զպատիժն նոցա:

Բան. «Որ ոչ հնազանդի Որդւոյ» (Յովի. Գ 36):<sup>5</sup>

**Մեկնութիւն<sup>6</sup>.** Նոյն է, զի հաւատալն եւ հնազանդիլն բանին մասինն է եւ կամացն, իսկ ոչ հաւատալն եւ ոչ հնազանդիլն նորին կամացն եղիցի:

Աստ ցուցանէ կրկին պատիժ. նախ՝ որ բնաւ ոչ կարեն հասանել յարքայութիւն երկնից<sup>7</sup>, որպէս ասէ. «Ոչ տեսանեն զկեանսն յաւիտենից» (հմնտ. Յովի. Գ 3, 36): Երկրորդ. այն, թէ բարկութիւն Աստուծոյ մնայ ի վերայ նորա:

Այսքան առ այս:

<sup>1</sup> Յ պատճառ

<sup>2</sup> Յ չիք եւ արմատ

<sup>3</sup> Ա Յ ոչ արարած գիւ.Արարիչ

<sup>4</sup> Յ չիք

<sup>5</sup> Յ «Որ ոչ հնազանդի Որդւոյ»: Բան.

<sup>6</sup> Յ չիք

<sup>7</sup> Յ որ բնաւ յարքայութիւն երկնից ոչ կարեն հասանել

*Եւ աստ աւարտումն<sup>1</sup> չորից փրկագործութեանցն Քրիստոսի. նախ՝ որ կացոյց զխորհուրդ մկրտութեան, որպէս առ Նիկողիմոս:* Երկրորդ. որ ասաց վասն խաչին զաւձն պղնձի: Երրորդ. որ ասաց զառաքումն իւր վասն փրկութեան աշխարհի. «Այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ» (Յովհ. Գ 16):

*Զորրորդ. Մկրտիչն վկայեաց յետ բազում բանից. «Որ հաւատայ յՈրդին, ընդունի զկեանս յաւիտենականս<sup>2</sup>» (Յովհ. Գ 36), որ եւ զմեզ<sup>3</sup> արժանի արասցէ Քրիստոս Աստուած ուղիղ հաւատով հասանել առ ինքն:*

*Եւ նմա փառք յաւիտեանս. Ամէն:<sup>4</sup>*

<sup>1</sup> Բ աւարտումն է

<sup>2</sup> Ա Բ յաւիտենից

<sup>3</sup> Ա Բ չեք եւ զմեզ

<sup>4</sup> Բ որ արժանի արասցէ Քրիստոս Աստուած հասանել անանց կենացն եւ անվախճան ուրախութեանցն Այնուհետև հաջորդում է գրչի հիշատակարանը:

## Գլուխ Դ

Բան. «Եւ<sup>1</sup> իրեւ գիտաց Յիսուս, եթէ լուան փարիսեցիքն» (Յովի. Դ 1):

Մեկնութիւն<sup>2</sup>. Ասաց ի վերոյ վասն չորից փրկագործութեանցն<sup>3</sup>, որով ցուցանի, թէ Աստուած է Քրիստոս: Աստ ասէ վասն Զորբորդ գլխոյն, որ է անչափութիւն եւ զգաղտնիս մարդկան գիտելոյ: Եւ նախ առ կինն սամարուհի եցոյց: Դարձեալ՝ մինչեւ ցայժմ ասաց<sup>4</sup> զհրէից փրկութիւն, աստ զհեթանոսաց<sup>5</sup> փրկութիւն կամի ցուցանել: Եւ գիտելի է, զի փարիսեցիք եւ սադուկեցիքն նախանձէին ընդ քարոզութիւն Յովաննու, վասն որոյ թոյլ ետուն մատնիլ ի բանտ, որպէս ասէ Մատթէոս. «Եղիա եկեալ իսկ է, եւ ոչ ծանեան, այլ արարին ընդ նմա զինչ եւ կամեցան» (Մատթ. ԺԵ 12), նոյնպէս եւ զՔրիստոս հալածէին եւ զկնի մատնեցին ի մահ: Եւ սոքա սուտ վկայէին վասն Քրիստոսի:

### Վասն մկրտելոյն Քրիստոսի

Բան. «Ոչ թէ Յիսուս ինքն մկրտէր» (Յովի. Դ 2):

Մեկնութիւն. Որպէս սովորութիւն էր Քրիստոսի առնել եւ ուսուցանել, նոյնպէս նախ<sup>6</sup> ինքն մկրտեաց զերկու աշակերտան եւ նոքա զայլս մկրտէին հրամանաւ նորա: Նախ՝ զի մկրտութիւն Քրիստոսի է, յորում ձեռաց եւ իցէ, զի յանուն եւ ի սահմանն Քրիստոսի մկրտեն: Եւ այլ պատճառն ցուցաւ նախ:

Բան. «Եթող զԴիտաստան Երկիր» (Յովի. Դ 3):

Մեկնութիւն. Վասն չորս պատճառի. Նախ՝ զի հրէայքն վասն նախանձու հալածէին զՔրիստոս: Ել ի Հրէաստանէ ոչ վասն ահի հալածելոյ, այլ զի շիջուցէ զնախանձ նոցա: Երկրորդ. զի թէ ոչ փախչէր, կարծէին ոմանք, թէ առ աչաւք է մարմինն, վասն այն յումեքէ ոչ երկնչի, այլ նա խոյս տայր, զի ճշմարիտ մարմին ունէր՝ առանց մեղաց: Երրորդ. առ ի պատուել զՅովաննէս: Զորրորդ. թէ ոչ նախանձու եւ փառասիրութեամբ մկրտէր եւ զմարդիկ առ ինքն քարշէր:

<sup>1</sup> C չիք

<sup>2</sup> B Բան, C մեկնիչ

<sup>3</sup> A B փրկութեանցն

<sup>4</sup> B չիք

<sup>5</sup> B զհրէից հեթանոսաց

<sup>6</sup> B նախ նոյնպէս

Եւ յաւրինակ մեզ կրկին իրաց. նախ՝ թէ նորագոյն վարդապետք որչափ եւ իմաստունք լիցին, պարտական են պատուել զառաջին վարդապետս, եւ այնու ճշմարտութիւն ոչ կորիցէ: Եւ երկրորդ. որպէս Քրիստոս վասն հակառակութեան հրէիցն ել ի Հրէաստանէ, նոյնպէս եւ առաքեալքն յետոյ արարին: Պաւղոս եւ Բառնաբաս ասէին. «Առ ձեզ նախ պարտ էր խաւսել զբանն Աստուծոյ, եւ զի դուք մերժեցիք զնա, այսուհետեւ դառնամք ի հեթանոսս» (տես Գործք Ժ 46): Նոյնպէս պարտ է ամենայն վարդապետաց առնել եւ մի լինել հակառակ չարի:

### Թէ ճշմարիտ է մարմնով

**Հարց.** Քրիստոս վասն է՞ր ցուցանէր զճշմարիտ մարմինն իւր<sup>1</sup>, որպէս զԱստուածութիւն իւր:

Պատասխան. Վեց պատճառ ասէ Ոսկեբերանն. նախ՝ զի մարմնովն պարգեւեցաւ մեզ մեծամեծ շնորհք, այսինքն՝ թողութիւն մեղաց, եւ կեանք, եւ յարութիւն եւ այլն, եւ հաւատովն մեր ընդունիմք զշնորհն: Երկրորդ. զի գիտասցուք, թէ վասն մեր՝ մարդկան, եւ վասն մերոյ փրկութեան մարմին, հոգի եւ միտք էառ, զի փրկեսցէ զսոսա: Երրորդ. զի մարմնով ազգակից մեզ եղեւ<sup>2</sup>, եւ մեք Տեառն ազգ կոչեցաք, ըստ այնմ. «Պատմեսցի Տեառն ազգ, որ գալոցն է» (տես Սաղմ. ԻԱ 32): Զորբորդ. զի մարմնով աւրինակ եղեւ մեզ, լաւագոյն կենացն երկնաւորաց: Հինգերորդ. զի առաջնորդ եղեւ ամենայն առաքինութեանց: Վեցերորդ. ուսոյց մեզ համբերութիւն ի վիշտս եւ այլն:

**Հարց**<sup>3</sup>. Զի՞նչ է, որ Քրիստոս նախ մկրտեցաւ եւ ապա փորձեցաւ եւ ապա քարոզեաց:

Պատասխան. Զայն ցուցանէ նախ, որ յետ շնորհաց ինչ ընդունելոյ, ապա փորձէ զմեզ խարողն: Երկրորդ. զի պարտ է մեզ շնորհաւք Հոգւոյն յաղթել փորձողին: Իսկ որ յետ փորձութեան քարոզեաց, այն է, յորժամ յաղթեմք, որ ի մեզ մարմնական ախտիցս, ապա այլոց քարոզեսցուք եւ քահանայագործեսցուք:

### Վասն Սամարիայ

Բան. «Եւ էր ննա անցանել ընդ Սամարիայ» (Յովհ. Դ 4):

<sup>1</sup> A C չեք

<sup>2</sup> B եղեւ մեզ

<sup>3</sup> B Պատասխան

Մեկնութիւն. Վասն երեք պատճառի անցանել ասի. նախ՝ զի Սամարիա ի մէջ Հրէաստանի եւ Գալիլեայ է: Երկրորդ. զի գիտէր զհաւատալն սամարացւոց: Երրորդ. զի անցանէր եւ ոչ բնակէր ի Սամարիայ, զի մի պատճառ լիցի բամբասանաց հրէից: Եւ գիտելի է, զի Սամարիա անուն է մայրաքաղաքին թագաւորութեանցն իսրայէլի, եւ ի նմանէ շրջակայ գաւառն Սամարիա անուանեցաւ:

Հարց. Վասն է՞ր կոչեցաւ Սամարիա:

Պատասխան. Նախ՝ ի Սամիրոն լեռնէն կոչեցաւ: Երկրորդ. զի Սամարոն շինեաց զքաղաքն եւ կոչեաց Սամարիա ըստ անուան իւրոյ: Երրորդ. ի բնակչացն կոչեցաւ, զի սամարացին պահապան ասի, որպէս գրեալ է Զորրորդ թագաւորութեանցն, յորժամ տասն ցեղն իսրայէլի գերեցան ի թագաւորէն ասորւոց (տե՛ս Դ Թագ. ԻԴ, ԻԵ), որ եւ քաղաք շինեաց ի Բաբիլոն եւ անուանեաց Սամարիա, եւ անդ բնակեցոյց զնոսա: Եւ յետոյ թագաւորն այն, որ էր Նաբուգոդոնոսոր (տե՛ս Դ Թագ. ԻԴ 1, Բ Մնաց. ԼԶ 6, Դան. Ա 1), առաքեաց ի հեթանոսաց յազգէն ասորւոց, զի բնակեսցեն ի քաղաքսն վասն պարարտութեան երկրին: Եւ նոքա եկեալ<sup>1</sup> յերկիրն իսրայէլի ըստ սովորութեան չար<sup>2</sup> գործոց<sup>3</sup> իւրեանց վարէին, վասն որոյ առաքեաց Տէր առիւծս սատակել զնոսա: Եւ վասն այն խորհուրդ<sup>4</sup> արարեալ ի խրատու հրէիցն եւ առաքեաց քահանայ մի յազգէն հրէից, որում անուն էր Եզր (տե՛ս Ա Եզր. Ը 69-Թ), զոր ի<sup>5</sup> գերութիւն էր ածեալ: Եւ քահանայն Եզր ուսոյց նոցա զաստուածպաշտութիւն, զաւրէնս եւ զթլիփատութիւն եւ ունէր հրաման խորտակել զկուռս, սակայն ի պաշտելն զԱստուած զոյգ նմին պաշտէին եւ զկուռս ի ծածուկս, եւ ոչ ընդունէին զամենայն Գիրս Հին Կտակարանաց, այլ միայն զհինգ Գիրսն Մովսիսի: Եւ այնպէս մասսամբ ինչ հեթանոսք էին եւ մասամբ ինչ՝ հրէայք: Իսկ յորժամ եցոյց աւետարանիչս, թէ ուստի ել Քրիստոս, այսինքն՝ ի Հրէաստանէ, եւ ընդ որ գնաց, այսինքն՝ ընդ Սամարիա, այնուհետեւ ցուցան, թէ ուր եհաս:

Բան. «Գայ նա ի քաղաք մի սամարացւոց, որում անուն էր Սիւքար»

(Յովի. Դ 5):

Մեկնութիւն<sup>6</sup>. Եբրայեցին Սիկիմ ասէ, եւ սաղմոսն՝ Սիւքէմ (հմնտ. Սաղմ. Ծթ 8, ճէ 8), եւ Աւետարանն՝<sup>7</sup> Սիւքար (հմնտ. Յովի. Դ 5) եւ

<sup>1</sup> Ե Եկին

<sup>2</sup> Ա ըստ չար սովորութեանց

<sup>3</sup> Ը ըստ չար գործոց սովորութեան

<sup>4</sup> Ը թագաւորն խորհուրդ

<sup>5</sup> Ե չիք

<sup>6</sup> Ա Ը չիք

**Սամարիա,** եւ այժմ կոչի Նէուպաւլիս եւ **Սեբաստէ:** իսկ մերձ ասելն ոչ թէ զգեւղն<sup>2</sup> ասէ Յակովայ, զոր ետ որդւոյ իւրում Յովսեփայ, մերձ էր ի քաղաքն, այլ Յիսուս մերձ նստաւ քաղաքին եւ ոչ եմուտ զառաջինն:

Բան. «Եւ անդ էր աղբիւր մի Յակովայ» (Յովի. Դ 6):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** **Աղբիւրն** այն ջրհոր է եւ աղբիւր Յակովայ ասի, զի նա փորեաց զայն եւ զագարակն զայն ստացաւ Հարիւր ոչխարի ի սիկիմացւոցն, քանզի բազում ժամանակս մերձ ի Սիւքէմ բնակեցաւ Յակոբ, քանզի Դինա դուստր Յակովայ յորժամ եկն ի Սիւքէմ, երեք կամ չորս ամաց էր, եւ անդ եկաց մինչեւ Դինայի հասեալ էր ժամանակ ամուսնութեան, որպէս գրեալ է (հմնտ. Ծննդ. ԼԳ 18-ԼԴ 2):

### Վաստակիլն եւ կիրքն

Բան. «Եւ Յիսուս վաստակեալ ի ճանապարհին՝ նստաւ<sup>3</sup>» (Յովի. Դ 6):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** **Վասն չորից ասէ վաստակեցաւ.** նախ՝ զի ցուցէ, թէ Քրիստոս ոչ էր փափկակաց, այլ աշխատասէր եւ գրաստ ոչ ունէր, այլ հետիոտս երթայր առ ի խրատ մեզ: Երկրորդ. զի ցուցցէ զծշմարիտ մարդեղութիւն: Երրորդ. զի ցուցցէ, թէ առաւել քնքուշ եւ յարմար ունէր զկազմուածն վասն հաւասար որակութեանցն, զի ոչ էր ի սերմանէ, այլ ի կուսական արենէ, վասն որոյ առաւել վաստակէր: Չորրորդ. զի զվաստակ դատապարտութեան Աղամայ բառնայր ի բնութենէս, եւ նստէր, այսինքն՝ յեզեր աղբերն, ի վերայ գետնի եւ ոչ ի բարձի կամ ի վերայ աթոռի:

Եւ վասն չորս պատճառի նստէր<sup>4</sup>. նախ՝ զի վաստակեալ էր: Երկրորդ. ի սպասաւորել աշակերտացն, զի գնասցեն եւ գնեսցեն հաց: Երրորդ. առ ի զովացնել զմարմինն մերձ յաղբիւրն, զի ժամանակն տաւթ էր, որպէս ասէ<sup>5</sup>. «Ժամ էր իբրեւ վեցերորդ» (Յովի. Դ 6): Չորրորդ. զի գիտէր զհաւատս սամարացւոցն: Եւ այս բան գրի առ ի ցուցանել զպատճառս ծարաւոյն եւ զիսնդիրս ջրոյն:

Հարց. **Վասն է՞ր ծարաւեցաւ եւ քաղցեցաւ**<sup>6</sup> կամ զայլ կիրսն կրեաց Քրիստոս:

<sup>1</sup> C չեք

<sup>2</sup> B զգեողն, C զգեղն

<sup>3</sup> C նստէր

<sup>4</sup> B նստաւ

<sup>5</sup> A B չեք

<sup>6</sup> C քաղցեաւ

Պատասխան. Վասն երկու պատճառի. նախ՝ զի ցուցցէ, թէ ճշմարիտ մարդ եղեւ: Երկրորդ. զկիրս նախաստեղծին բժշկէր, այսինքն՝ զքաղց, զծարաւ, զվաստակ, զքիրտն եւ զայլն:

Եւ չորիւք զանազանի կիրք Փրկչին. նախ՝ զի նորայն կամաւոր էր, եւ<sup>1</sup> մերս՝ հարկաւոր: Երկրորդ. նորայն երբեմն, եւ<sup>2</sup> մերս՝ հանապազ: Երրորդ. նորայն չափաւոր, իսկ մերս՝ անչափ: Զորորդ. նա միայն զանանգոսնելիսն կրէր, իսկ մեք՝ զանգոսնելիսն եւ զանանգոսնելիսն, այսինքն՝ է զչարս եւ զբարիս կրեմք: Եւ տե՛ս վասն կրից ի գիրս Հարցմանց յութներորդ հատորն, քսան եւ հինգերորդ համարն<sup>liv</sup>:

### Վասն սամարացի կնոջն

Բան. «Գայ կին մի ի Սամարեայ<sup>3</sup> հանել ջուր» (Յովի. Դ 7):

Մեկնութիւն. Ահա պատճառ քարոզութեան Քրիստոսի ի խնդրել ջրոյն, եւ զի ոչ վասն կարաւտութեան զջուրն խնդրեաց, ուստի յայտ է, զի յետոյ ոչ ըմպեաց: Այս վասն երեք պատճառի. նախ՝ զի տացէ ճանապարհ խաւսից: Երկրորդ. զի տացէ նմա զհոգեւորն ի խնդրելն զմարմնաւոր ըմպելին: Երրորդ. զի աշակերտն ոչ էին անդ, վասն այն ի կնոջէն խնդրէր: Եւ տե՛ս զխորհուրդ ջրոյն, զի ջրովն մկրտեցաւ (հնմտ. Սատթ. Գ 16) եւ զջուրն ի գինի փոխեաց (հնմտ. Յովի. Բ 1-12), եւ աստ ջրովն էած ի հաւատս: Եւ մեք ջրով յղանամք եւ ջրով վերստին ծնանիմք, եւ ջրով սնանին բոյսք, եւ ի ջուր բաղդատի Հոգին Սուրբ:

Բան. «Աշակերտքն [նորա] երթեալ էին ի քաղաք անդր, զի կերակուրս [գնեսցեն]» (Յովի. Դ 8):

Մեկնութիւն. Քանզի կամէին մաւտ յաղբիւրն<sup>4</sup> հաց ուտել, որպէս աղքատք:

Եւ Քրիստոս վասն երեք պատճառի ոչ գնաց ի քաղաքն. նախ՝ զի վաստակեալ էր առաւել, որպէս ասացաք: Երկրորդ. զի ոչ վայել էր ինքն ինքեամք կերակուր գնել: Երրորդ. զի ոչ կամէր մտանել ի քաղաքն հեթանոսաց, եթէ ոչ հաւատքն նոցա եւ իդաքն բռնադատէր զնա:

Հարց. Վասն է՞ր ամենքն չոգան:

Պատասխան. Նախ՝ զի յայնժամ սակաւ ունէր յաշակերտացն: Երկրորդ. վասն խոնարհութեան, զի թէ կամէր, կարող էր զոմանս

<sup>1</sup> Ը իսկ

<sup>2</sup> Ը իսկ

<sup>3</sup> Ա Յ Սամարիայ

<sup>4</sup> Յ աղբիւրն, Յ յաղբեւրն

առաքել եւ զոմանս առ ինքն պահել: Այլեւ կարող էր նոր ստանալ ի սպասաւորութիւն իւր, բայց ոչ կամեցաւ: Այնու ուսոյց զաշակերտսն կոխել զամենայն ամբարտաւանութիւն: Ուսի՞ր աստ զգաւրաւոր արիութիւն Տեառն մերոյ ի ճանապարհի, այլեւ զանփութութիւն կերակրոց, զի աշակերտքն նորա<sup>1</sup> ոչ տանէին ընդ ինքեանս կերակուր:

Հարց<sup>2</sup>. Ուստի ունէին զգրամն, զոր Տէրն հրամայեաց մի՛ ստանալ ոսկի եւ արծաթ (հմնտ. Սատր. ժ 9), եւ զստացեալն հրամայեաց (հմնտ. Սատր. ժ 9) վաճառել եւ տալ աղքատաց:

Պատասխան<sup>3</sup>. Նախ՝ զի ընդ հեթանոսս սամարացիս անցանելոց էին եւ չունէին կարծիս, թէ ընդունէին զնոսա յայն սակս բարձին: Երկրորդ. այս նախ էր քան զպատուէրն այն աղքատութեան, թէ՝ մի՛ ստանայք ոսկի եւ արծաթ:

### Նշան ազգաց

Բան. «Դու, որ հրեայդ ես» (Յովի. Ղ 9):

Հարց. Ուստի՝ գիտաց կինն, թէ հրէայ է:

Յերից. Նախ՝ ի լեզուէն: Երկրորդ. ի գիմացն: Երրորդ. ի հանգերձէն, զի ասէ ի թիւքն. «Առնել ծոպս ի տառւնս հանդերձիցն եւ ասղանի կապուտակ ի վերայ նոցա» (տե՛ս Թիւք ժԵ 38): Ապա պարտ է, զի երրայեցին կապոյտ նշան գիցէ ի գլուխն, եւ սամարացին՝ գեղին, որ միջակ է, եւ քրիստոնեայն՝ կարմիր, զի արեամբն Քրիստոսի գնեցաք:

Բան. «Ոչ երբէք խառնակին հրեայք ընդ սամարացիս» (Յովի. Ղ 9):

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Ոչ առնուն ի միմեանց կերակուր կամ ըմպելի, եւ առաւել հրէայքն գարշէին ի սամարացւոցն, քան թէ նոքա ի նոցանէ, որպէս այժմ քրիստոնեայք գարշին յայլազգեաց, թէպէտ նոքա ոչ գարշին ի մէնչ:

Հարց. Եւ զի՞նչ էր պատճառ գարշելոյն:

Պատասխան. Երեք ինչ. Նախ՝ զի այլազգիք էին սամարացիքն, որպէս ցուցաւ: Երկրորդ. ասեն ոմանք, թէ հակառակ էին ի շինուած տաճարին յետ գարձին: Երրորդ. զի ի մէջ նոցա բնակէին, վասն որոյ առաւել գարշէին:

Հարց. Ընդէ՛ր ապա Քրիստոս ջուր խնդրեաց եւ աշակերտքն կերակուր գնէին:

<sup>1</sup> B չեք

<sup>2</sup> A B չեք

<sup>3</sup> A B չեք

Պատասխան. Նախ՝ վասն հաւատոց նոցա պարտ էր զՀրէական խտրութիւն թողուլ: Երկրորդ. զի Քրիստոս Աստուած եւ Տէր էր, վայել էր երբեմն պահել զաւրէնսն եւ զսովորութիւն հրէիցն եւ երբեմն ոչ պահել: Երրորդ. զի կամէր յետոյ զազգս հեթանոսաց իւր ժողովուրդ սրբել:

*Այսքան առ այս:*

### Յորդորակ սակաւ

Եւ արդ, մեք եղբարք, որ ունիմք զճշմարտութեան աւրէնս, կամ ո՛չ գիտեմք, կամ արհամարհեմք զնա, զի գաղափար եւ ուսուցիչ ունիմք զՔրիստոս ամենայն առաքինութեան, որպէս ասցաւ, իսկ նա<sup>1</sup> խոնարհութեամք հետիոտս շրջէր, եւ մեք հպարտութեամք երիվարաւք հեշտանամք: Նա վաստակէր ի ճանապարհի, եւ մեք ի հանգիստ փափկանամք, Նա ոչ ստանայր ինչս, եւ մեք մեծութեամք յղփանամք: Նա շրջէր եւ քարոզէր միշտ, եւ մեք ի հոգս աշխարհի զբաղիմք: Նա հասարակաց ունէր զգեստ, եւ մեք պճնելով խենեշանամք: Նա զպէտսն հատանէր, եւ մեք՝ զպէտս եւ զանպէտս, զհարկաւորն եւ զվայելչականն ստանամք: Նա քաղց եւ ծարաւ, եւ պահաւք եւ տքնութեամք կայր, եւ մեք յագեալ եւ արբեալ եւ քնով նիրհեալ դանդաշեմք:

Տեսէք, եղբա՛րք, զի անուամք միայն եմք նմանեալ Քրիստոսի եւ իրաւք հեռացեալ ի նմանէ: Գիտեմ, զի այսու ոչ արդարանամ, այլ անձամք զանձն իմ դատապարտեմ, եւ ձեզ առ յապա եկելոցդ աւրինակ թողում:

*Դարձցուք այժմ ի բան Աւետարանիս.*

### Մեծութիւն պարզեւացն

Բան<sup>2</sup>. «Պատասխանի ետ [ննա] Յիսուս [եւ ասէ]. “Թէ գիտէիր [դու] զպարզեւան [Աստուծոյ] ”» (Յով. Դ 10):

Մեկնութիւն. Այսինքն<sup>3</sup> զշնորհս Հոգւոյն Սրբոյ, որ մեծ է ի մէջ այլ պարզեւացն Աստուծոյ, զի յորժամ նա պարզեւի, եւ այլքն եւս պարզեւին, եւ առանց շնորհացն Աստուծոյ այլ պարզեւքն անաւգուտ են, այլեւ երբեմն վնասազործք:

Բան. «Եւ ով է, որ ասէդ ցըեզ» (Յով. Դ 10):

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> B ձեռագրում դրված է «Մեծութիւն պարզեւացն»-ից առաջ:

<sup>3</sup> A B չեք

**Մեկնութիւն.** Աստ երեք ինչ ցուցանէ. նախ՝ զմեծութիւն շնորհաց Հոգւոյն, որպէս ցուցաւ: Երկրորդ. զիւր մեծութիւն եւ զկարողութիւն առ ի պարզեւել զպարզեւսն Աստուծոյ: Երրորդ. զիւր կամաւոր յաւժարութիւն ի տալն սորին:

Իսկ ի գիմաց կնոջն զխնդրելն ասէ.

Բան. «Դու արդեաւք խնդրէիր ի նմանէ<sup>1</sup>» (Յովհ. Դ 10):

**Մեկնութիւն.** Այսինքն՝ լինի, թէ խնդրէիր: Այս ոչ ցուցանէ զկեղակարծութիւն ի Քրիստոս, զի ճմարիտ գիտէր զխնդրել կնոջն, այլ վասն երեք պատճառի այնպէս ասաց. նախ՝ զի ցուցցէ զանձնիշխան կամս մեր: Երկրորդ. ուսուցանէ մեզ, թէ պարտ է վասն հանդերձեալ բանին պարկեշտութեամբ խաւսել: Երրորդ. զի երբեմն պակաս ասելով առաւել ցուցանեմք եւ տարակուսանաւք ասել զստոյգն ստոր ասեմք, որպէս Պաւղոս ի կորնթացիսն ասէ. «Ես սոյնպէս համարիմ, թէ եւ յիս իցէ Հոգի Աստուծոյ» (տես Ա Կորնթ. Է 40), զի ասելն համարիմ, ոչ թէ տարակոյս ինչ էր, այլ զգուշութեամբ խաւսէր, զի նա ստոյգ գիտէր, թէ Հոգի Աստուծոյ ունէր:

### Կենդանի ջուր

Բան. «Եւ տայր քեզ զջուրն կենդանի» (Յովհ. Դ 10):

**Մեկնութիւն.** Զուր ասելն իմանալի է զշնորհս Հոգւոյն Սրբոյ, որ զովացուցանէ զտաւթ մարմնական ցանկութեանցն<sup>2</sup>: Եւ ասի նոցա ջուր կենդանի, որպէս սովոր են մարդիկ ջուր կենդանի ասել, որ յաղբերէ ելանէ եւ ոչ որոշի յաղբերէն, այլ յընթացս կայ, իսկ ջուր ծովացեալ ի սահրիճ, կամ յաման ծողովեալ, կամ յանձրեւէ տեղացեալ ո՛չ ասի կենդանի:

Դարձեալ՝ սոյնպէս անուանի ի նմանութենէ մարդկային կենդանութեան, զի այն անդամն կոչի կենդանի, որ միաւորեալ կայ ի սիրտն եւ ի նմանէ զկենդանութիւն ընդունի:

Եւ յայսմանէ չորս ինչ իմանամք. նախ՝ զի անձնաւորութիւն Հոգւոյն<sup>3</sup> բղիսէ ի Հաւրէ աղբիւրաբար<sup>4</sup>, ըստ այնմ. «Ի քէն է, Տէ՛ր, աղբիւր կենդանութեան» (տես Սաղմ. ԼԵ 10), եւ Որդւովն բաշխի ամենայն արարածոց: Երկրորդ. սկիզբն շնորհաց է Հոգին Սուրբ, որպէս աղբերաբար, եւ ի նմանէ շնորհի ամենայն մարդկան:

<sup>1</sup> A չիք

<sup>2</sup> A B ցանկութեանցն, այլ եւ գիշացուցանէ զսիրտս գրութեամբ, C ցանկութեանց

<sup>3</sup> C չիք

<sup>4</sup> C աղբերաբար

**Այս առաջին<sup>1</sup> աւրինակն:**

Երրորդ. առաքեալքն ընկալան զՀոգին Սուրբ եւ բաշխեցին ամենայն ազգաց: Չորրորդ. վարդապետք եւ քահանայք առեալ զշնորհս Հոգւոյն եւ բաշխեն այլոց, զի բնաւ շնորհք ոչ լինի ի սիրտ մարդոյ, եթէ Հոգին Սուրբ ոչ է բնակեալ ի նմա:

**Այս յերկրորդ աւրինակն:**

Իսկ կինն մարմնաւոր իմացաւ եւ ասէ ցնա.

Բան. «Տէ՛ր, եւ դոյլ ոչ ունիս» (Յովի. Դ 11):

**Մեկնութիւն. Տէր կոչեաց այժմ, բարձրագոյն իմացաւ, զի նախ երայեցի ասաց:**

Եւ չորս եղեւ տարակոյս կնոջն. նախ՝ զի գոյլ ոչ ունի: Երկրորդ. յերես ոչ է աղբեւրն: Երրորդ. յայլ տեղիս ջուր ոչ գոյ: Չորրորդ. եւ սքանչելեաւք ոչ կարէ, զի հայրն Յակովը աշխատելով եւ փորելով եհան: Եւ այսմ աղբիւր ջուր նմա բաւական թուեցաւ, վասն այն եւ նա յայսմ աղբերէ ըմպեաց:

Դարձեալ, որ ասէ. «Ինքն աստի արբ, եւ որդիք նորա» (Յովի. Դ 12), զբարութիւն ջրոյն ցուցանէ, եւ խաշինքն նորա՝ այս զառատութիւն ցուցանէ:

### Զի հայր կոչէ զՅակոբ եւ մեծ

Իսկ կինն զՅակոբ մեծ ասէ վասն չորից. նախ՝ զի թոռն էր մեծին Աբրահամու: Երկրորդ. հայր էր բաժան ազգաց: Երրորդ. զի հսրայէլ կոչեցաւ ի Տեառնէ: Չորրորդ. եւ զաւրհնութիւն անդրանկին էառ: Այլ զՏեառն մեծութիւն ոչ գիտէր:

Դարձեալ՝ զՅակոբ հայր անուանէ վասն չորից. նախ՝ զի սամարացիք զԱբրահամ հայր իւրեանց ասէին, որպէս ծնեալ ի քաղդէացւոց աշխարհն, յորմէ եւ նոքա իսկ էին, եւ վասն այն զՅակոբ հայր իւրեանց կոչէին, զի թոռն էր Աբրահամու: Զայս եւ մեկնիչդ ասէ<sup>1</sup>, զի սամարացիք Յոթորայ էին եւ սահմանակից քաղդէի: Երկրորդ. զի զուխտ թլփատութեան յիսրայէլացւոցն առեալ էին, եւ զաւրէնսն Մովսիսի, թէպէտ ոչ զմարդարէս<sup>2</sup>: Երրորդ. զի քաղաքն Սիւքէմ, զոր ետ Յակոբ որդւոյ իւրում Յովսէփու, ստացեալ ունէին, եւ այն են որդիք, որ զժառանգութիւն հաւրն ունին: Չորրորդ. վասն պատւոյն եւ սիրոյն առ նա հայր կոչէին:

<sup>1</sup> Ը առաջին

<sup>2</sup> Ը զմարդարէսն

## Զի ջուր կոչէ զՀոգին Սուրբ

Բան. «Որ ըմակէ ի ջրոյդ, միւսանգամ ծարաւէ» (Յովհ. Դ 13):

**Մեկնութիւն.** Զգալի ջուր ոչ լնու զպասքումն ծարաւոյն<sup>1</sup>, իսկ հոգեւոր ջուրն յագեցուցանէ կատարելապէս, վասն այն ասէ.

Բան. «Բայց որ ըմակէ ի ջրոյն, զոր ես տաց» (Յովհ. Դ 13):

**Մեկնութիւն.** Այսինքն<sup>2</sup> շնորհաց Հոգւոյն Սրբոյ մի՛ ծարաւեսցի յաւիտեան:

Հարց. Վասն Է՞ր զշնորհս Հոգւոյն Սրբոյ ջրով աւրինակէ:

**Պատասխան.** Վասն բազում պատճառի, որպէս ասէ մեկնիչդ<sup>3</sup>. նախ՝ զի ջուրն զովացուցանէ զծարաւն, սոյնպէս եւ Հոգին Սուրբ լնու զկարաւտեալս: Երկրորդ. ջուրն լուանայ զաղտեղութիւն, սոյնպէս եւ Հոգին Սուրբ մաքրագործէ զհոգիս մարդկան: Երրորդ. ջուրն շիջուցանէ զջերմութիւն, սոյնպէս եւ Հոգին Սուրբ շիջուցանէ ի մէնջ զցանկութիւն մեղաց: Չորրորդ. ջուրն խափանէ զկիզումն հրոյ, սոյնպէս եւ Հոգին Սուրբ զկիզումն մահու չափ մեղաց: Հինգերորդ. ջուրն բուսուցանէ զսերմանիս, սոյնպէս եւ Հոգին Սուրբ զբոյսս արդարութեան: Վեցերորդ. ջուրն զբուսեալսն առողանէ, սոյնպէս եւ շնորհք Հոգւոյն Սրբոյ առաջնորդէ, զաւրացուցանէ եւ ի կատարումն առաքինութեան ածէ: Ելթներորդ. ջուրն պարզ է որակութեամբն իւր, սոյնպէս եւ Հոգին Սուրբ անխառն է յամենայն աղտեղութեանց: Ութներորդ. ջերմանայ եւ ցրտանայ ջուրն, սոյնպէս եւ Հոգին Սուրբ ի բարեգործս գթայ եւ ի չարեացն բառնայ զողորմութիւն: Իններորդ. քաղցր է ջուրն, սոյնպէս եւ Հոգին Սուրբ քաղցր է եւ քաղցրացուցանէ զամենեսեան: Տասներորդ. ջուրն ըստ չափոյ տայ զկենդանութիւն, սոյնպէս եւ Հոգին Սուրբ ըստ չափոյ<sup>4</sup> տանողացն տայ զշնորհս: Մետասաներորդ. ջուրն անդադար է, սոյնպէս եւ Հոգին Սուրբ մշտաշարժ է: Երկուտասաներորդ. ջուրն խեղդէ զընդդիմացողս իւր, սոյնպէս եւ որ զՀոգին Սուրբ հայհոյէ. «Մի՛ թողցի նմա, այլ կորնչի» (հմնտ. Մատթ. ԺԲ 32), - ասէ<sup>5</sup> Տէր:

## Թէ հարկաւոր կոչի Հոգին Սուրբ

Դարձեալ՝ այլ կերպիւ ունի Հոգին Սուրբ զյատկութիւն հրոյ, որպէս ասէր Մկրտիչն. «Նա մկրտեսցէ [զձեզ] ի Հոգին Սուրբ եւ

<sup>1</sup> Ծ ծարաւոյ

<sup>2</sup> A B չեք

<sup>3</sup> C չեք որպէս ասէ մեկնիչդ

<sup>4</sup> B ըստ չափոյ տայ

<sup>5</sup> C յԱւետարանն ասէ

*ի հուր» (Մատթ. գ 11), եւ ինքն Տէրն ասէր. «Հուր եկի արկանել յերկիր» (Ղուկ. ժԲ 49), եւ կատարեցաւ, յորժամ էջ հրեղէն լեզուաւք<sup>1</sup> ի Վերնատունն:*

Եւ այս ըստ բազում գաղափարաւ. նախ՝ որպէս հուրն այրէ եւ ապականէ, սոյնպէս եւ Հոգին Սուրբ կիզու եւ ապականէ զամենայն ունակութիւնս մեղաց: Երկրորդ. Հուրն լուսաւորէ, սոյնպէս եւ Հոգին Սուրբ լուսաւորէ զհոգիս, յորս բնակէ: Երրորդ. միարար է հուրն, սոյնպէս եւ Հոգին Սուրբ միաւորէ զհոգիս մեր ընդ Հաւր եւ ընդ Որդւոյ, այլ եւ յաւրէնս Աստուծոյ: Զորրորդ. բաժանարար է հուր ժանգոյ եւ արծաթոյ, սոյնպէս Հոգին Սուրբ բաժանանէ զժանգ մեղաց ի հոգւոց մարդկան: Հինգերորդ. մշտաշարժ է հուր, սոյնպէս Հոգին Սուրբ միշտ ներդորձէ զսրբութիւն: Վեցերորդ. ինքնաշարժ է հուր, եւ Հոգին Սուրբ ուր կամի եւ չնչէ<sup>2</sup> որչափ եւ որքան: Եւթներորդ. ծածուկ եւ յայտնի է հուր, սոյնպէս եւ Հոգին Սուրբ նախ ծածուկ եւ ապա յայտնի ներդորձէ: Ութերորդ. աճէ հուր, եւ Հոգին Սուրբ աւր ըստ աւրէ առաւելու զզաւրութիւն առ մերձաւորս: Իններորդ. ընդ հանուր առ ամենեսեան է հուր<sup>3</sup>, եւ. «Հոգի Տեառն ելլից զտիեզերս» (Ինաստ. Ա 7), ասէ: Տասներորդ. ի յորս մերձի, որպէս զինքն հուր առնէ, սոյնպէս եւ չնորհք Հոգւոյն Սրբոյ<sup>4</sup> զընդունողս իւր չնորհաբաշխ առնէ: Մետասաներորդ. անփոփոխ է հուր, սոյնպէս չնորհք Հոգւոյն անփոփոխապէս պահէ ճշմարիտ<sup>5</sup> զընդունողս իւր: Երկոտասաներորդ. ջերմացուցանէ հուր, սոյնպէս եւ Հոգին Սուրբ ջերմացուցանէ ի սէրն Աստուծոյ եւ զաստուածայինս, յորս բնակելոյ արժանի առնէ: Ապա յայտ է, որ Հոգին Սուրբ ի հողմ գաղափարի, ըստ այնմ. «Ուր կամի, չնչէ» (Յովի. գ 8), այլ եւ ի հուր, որպէս աստ ցուցաւ<sup>6</sup>:

Բան. «Ձուրն, զոր ես տաց, մի՛ ծարաւեսցէ<sup>7</sup> յաւիտեան» (Յովի. Դ 13):

Մեկնութիւն<sup>8</sup>. նախ՝ ջուր մկրտութեան է, զի միանդամ մկրտիմք եւ այլ ոչ կարաւտիմք<sup>9</sup>, որպէս մարդարէն ասէր. «Անձն

<sup>1</sup> А В լեզուաւ

<sup>2</sup> А В հնչէ

<sup>3</sup> А В չիք

<sup>4</sup> С չիք

<sup>5</sup> А В չիք

<sup>6</sup> С ասացաւ

<sup>7</sup> В ծարաւեսցի

<sup>8</sup> В չիք

<sup>9</sup> С չիք եւ այլ ոչ կարաւտիմք

իմ առ քեզ, *Sէ՛ր*<sup>1</sup>, ծարաւի է» (տես Սաղմ. ԽԱ 3), այսինքն՝ չնորհաց աւագանին:

Դարձեալ՝ չնորհք Հոգւոյն Արբոյ այնպէս կատարեալ լնու, զի ոչ ունի այլ կարաւտութիւն նուազութեան:

Դարձեալ՝ չնորհք Հոգւոյն Արբոյ<sup>2</sup> հասուցանէ զմարդիկ<sup>3</sup> ի կեանս յաւիտենականս, ի տեղի, ուր բնաւ ոչ ծարաւեսցի, այլ ընդդէմ այսմ առարկի, որպէս ասէ Յեսու՝ որդի Սիրաքայ. «Որ ըմպէ յինչն, դարձեալ փափագեսցի յիս» (հմնտ. Սիրաք ԻԴ 29), եւ զայս ասէ վասն իմաստութեան ջրոյ:

Պատասխանեն վարդապետք, թէ ծարաւն երեք կերպիւ իմանի. նախ՝ ցուցանէ զկարաւտն իրաց ինչ, զոր մարդն յառաջ ոչ ունէր, որպէս ջուր մարմնաւոր եւ հաց, որ ի ժամանակ<sup>4</sup> մի բառնայ զկարաւտն եւ դարձեալ կարաւտի, եւ սոյնպէս ամենայն ժամանակաւոր իր առաւել ծարաւ առնէ, քան թէ բառնայ զծարաւն, զի զցանկութիւն մեծացուցանէ: Երկրորդ. ծարաւն ցուցանէ զցանկութիւն, որ կերպիւ ինչ ունի մարդն եւ փափագի կատարելագոյն եւս ունել, որպէս մարդ, որ չնորհաւք ընդունի զաստուածայինքն<sup>5</sup>, ո՛չ ծարաւի, թէ շնորհաւք բնակեսցի ի նմա, սակայն ծարաւէ, զի կատարելագոյն կերպիւ ունիցի, այսինքն՝ փառաւք, եւ սոյնպէս իմանի բանն Յեսուայ՝ որդւոյն Սիրաքայ<sup>6</sup>:

Դարձեալ՝ Երրորդ կերպ ծարաւոյն նշանակէ զսէրն առանց ձանձրութեան: Եւ սոյնպէս երանեալքն ի հանդերձեալն ծարաւիլ ուսին, զի զԱստուած, որ ունին<sup>7</sup>, առանց ձանձրութեան սիրեն, վասն այնորիկ ասէ *Sէրն*. «Որ ընպէ ի ջրոյն, զոր ես տաց նմա, նի՛ ծարաւեսցէ յաւիտեան» (Յովի. Դ 13): Պարտ է իմանալ ըստ միջի կերպի ծարաւոյն, որ ունի զշնորհս Աստուծոյ, ոչ փափագէ այլ շնորհիւ ունել, այլ փափագէ կատարելագոյն<sup>8</sup> ունել զԱստուած, այսինքն՝ երանութեամբ, վասն որոյ ասէ.

<sup>1</sup> Հ չիք

<sup>2</sup> Հ չիք

<sup>3</sup> Հ զմարդն

<sup>4</sup> Ա Բ ի ժամանակ փիւ ժամանակ

<sup>5</sup> Հ որպէս մարդ, որ զԱստուած շնորհօք ընդունի յինքն

<sup>6</sup> Հ որդւոյն Սիրաքայ Յեսուայ

<sup>7</sup> Հ չիք առանց ձանձրութեան ... որ ունին

<sup>8</sup> Հ կատարելագոյնս

## Վասն շնորհաց Հոգւոյն<sup>1</sup>

Բան. «Զուրճ, զոր ես տաց [նմա], Եղիցի [նմա] աղբիւր<sup>2</sup> ջրոյ բղխելոյ ի կեանսն յալիտենականս<sup>3</sup>» (Յովի. Դ 14) եւ այլն:

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Աստ Քրիստոս երիս յատկութիւնս շնորհաց իւրոց ցուցանէ. նախ՝ զի կատարեալ յագեցուցանէ զհոգիս, որպէս ցուցաւ: Երկրորդ. զի որպէս աղբիւր ի սիրտ մարդոյն արմատացեալ, այնպէս շնորհք Հոգւոյն երանութեամբ կենացն արմատանայ ի նմա եւ միշտ անպատմելի ուրախութեամբ ջուր բղխէ ի սրտի, վասն որոյ ասէ. «Եղիցի նմա աղբիւր ջրոյ»: Երրորդ. զի շնորհն Աստուծոյ կարող է փութով վերացուցանել զմեզ մինչեւ ի վերջին կատարածն, որ է Աստուծ, եւ է կատարեալ հանգիստ եւ ստացումն ամենայն բարեաց, վասն որոյ ասէ. «Խաղացելոյ ի կեանս յալիտենականս»:

Յայնժամ գիտաց կինն զջուրն փափագելի եւ բարւոք, զոր խոստացաւ նմա, թէպէտ եւ ոչ կատարեալ իմացաւ, վասն այն խնդրեաց ի Քրիստոսէ:

Բան. «Տէ՛ր, տուր ինձ զջուրն»<sup>4</sup> (Յովի. Դ 15):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Եւ զկնի զպատճառ խնդրելոյն ցուցանէ՝ ասելով. «Զի մի՛ ծարաւեցից եւ մի՛ եկից այսր հանել ջրուր» (Յովի. Դ 15), այսինքն՝ զի ազատիմ ի վտանգէ ծարաւոյս եւ յաշխատանաց մարմնոյս, զոր ունիմ աստ գալովն եւ զջուրն քարշելովն, եւ բառնալովս յանձին:

Եւ մեկնիչն չորս ինչ ցուցանէ<sup>5</sup>. նախ՝ զի արագ<sup>5</sup> հետեւեցաւ ի ճշմարտութիւն: Երկրորդ. զի ծանեաւ զտենչումն, զոր խնդրեաց: Երրորդ. հաւատաց, զի մի՛ ծարաւեսցի ըմպելովն զնա: Չորրորդ. մեծ իմացաւ զՓրկիչն քան զՅակոբ՝ տալով զայնպիսի ջուրն:

Իսկ այլ վարդապետք ասեն, եթէ յայտնի է այսու, զի կինս այս տակաւին զգալի ջուր խնդրէր, եւ թուի, թէ իմացաւ նա զխոստացեալ ջուրն ի Քրիստոսէ, զի երեք զաւրութիւնս ունէր. նախ՝ առ ի բառնալ զամենայն ծարաւ եւ զպատճառ ծարաւոյն: Երկրորդ. առ ի տալ կատարեալ առողջութիւն եւ ուրախութիւն: Երրորդ. առ ի յալիտենականաբար հաստատել զկենդանութիւն եւ զառողջութիւն:

<sup>1</sup> Բ չիք

<sup>2</sup> Բ «Զուրճ զոր ես տաց» բան. «Եղիցի...»

<sup>3</sup> Ը բոլոր բաններու ի կեանսն յալիտենականս

<sup>4</sup> Ը զջուրն զայն

<sup>5</sup> Ը երաց

### Վասն ծարաւոյն կենաց

**Որպէս ծառն կենաց առնէր Աղամայ, եթէ ոչ էր կերեալ ի գետութեան պտղոյն, իցէ<sup>1</sup> արդեաւք, եթէ կինն այլ լուեալ էր յաւրինացն Մովսիսի զյատկութիւն ծարաւոյն կենաց:** Ուստի յայտ է, զի պտուղ գիտութեան չորիւք վնասեաց զԱղամ. նախ՝ զի կարաւտ եղեւ ամենայն<sup>2</sup> պիտոյից: Երկրորդ. զի հիւանդութիւն եմուտ ի մարմինն: Երրորդ. եւ տրտմութիւն, ի հոգին: Չորրորդ. մահ եւ ապականութիւն: Ապա ուրեմն կենաց պտուղն չորիցս ընդդէմ ունէր զյատկութիւն:

Բան. «Ասէ ցնա Յիսուս. “Երթ, կոչեազայր քո”» (Յովի. Դ 16):

**Մեկնութիւն.** Նախ՝ ի պատասխանոյ կնոջն յայտնեսցի ծածուկ նորա: Երկրորդ. որպէս ասելն եթէ գութանձրամիտ ես, ոչ կարես հասու լինել իմոյս բանի, կոչեա՛ զայր քո, զի նովաւ եւ դու իմանալ կարասցես:

Բան. «Ասէ կինն չիթ իմ այր» (Յովի. Դ 17):

**Մեկնութիւն.** Նախ՝ ասէ զայս, զի չկամէր մեկնել ի վարդապետութենէ նորա: Երկրորդ. զի աւրինաւք չունէր այր, այլ միայն անուամբ:

Բան. «Բարտոք ասացեր»<sup>3</sup>:

**Մեկնութիւն.** Նախ՝ զի ոչ ստեաց իրը աւտար կարծելով զնա, զի չէր ծանաւթ, որ զսուտն պատճառէր: Երկրորդ. հաւանեցաւ, զի ախորժութեամբ լսէր:

Բան. «Ասէ. “Զայդ արդար ասացեր» (տես Յովի. Դ 17-18):

**Մեկնութիւն.** Այժմ ճշմարիտ ասես, բայց յորժամ զնա այր կոչեցեր, սուտ ասացեր:

Բան. «Զի իինգ այր փոխեալ է քո եւ զոր այժմ ունիս, չէ քո այր» (Յովի. Դ 18):

**Մեկնութիւն.** Ոմանք զհինգ այրն աւրինաւք ասեն, եւ զոր ունէրն՝ չնութեամբ, իսկ մեկնիչդ յարելով եւ կոչմամբ ասէ<sup>4</sup>: Եւ այս էր պատճառն,<sup>5</sup> զի ի մէջ նոցա ամուլն եւ այրին անարգելի լինէր: Եւ զի հինգ այր փոխեալ էր կինն, պեղծ եւ գարշ համարէին եւ ոչ առնուին յամուսնութիւն, վասն որոյ հնարս իմացաւ եւ կոչմամբ այր կալաւ, զի մի անարգեսցի ի մարդկանէ: Իսկ ոմանք պոռնկութեամբ ասեն ունել:

<sup>1</sup> Ա Բ չեք

<sup>2</sup> Ա Բ չեք մեկնութիւն. Նախ՝ ասէ զայս ... Բարտոք ասացեր»

<sup>3</sup> Ը պատճառ

### Թէ երեք կինն պոռնկութիւն է

Եւ գիտելի է, զի սուտանուն քրիստոնեայք, որք են ախթարմայք, որք բազում կանանց ամուսնանան, նախ զայս կինս ածեն վկայ, որ հինգ այր փոխեալ էր, առ որս ասեմք, եթէ բազում ամուսնութիւն հրէից էր եւ ոչ՝ քրիստոնէից: Երկրորդ. ասեն յԱւետարանն է գրեալ: Ասեմք, թէ եւ բազում անկողին կինն, որ եղեւ եւթն եղբարցն յԱւետարանն է գրեալ (հնմտ. Մատթ. ԻԲ 25:28), եւ նոցա է աւրէնք: Երրորդ. ասեն՝ առաքեալ հրամայեաց. «Կին կապեալ է, ցորքան կենդանի է այրն, եւ յորժամ մեռանի, ում կամիցի, լիցի<sup>1</sup>» (տես Ա Կորնթ. Է 39): Ասեմք, եթէ երկրորդ ամուսնութեան հրամայէ եւ ոչ՝ բազմաց: Եւ յայտ է յերկուց. նախ՝ ի նոյն առաքելոյն բանէ, որ առ կինն խաւսեցաւ, որ երկրորդ է առն (հնմտ. Ա Կորնթ. ԺԱ 9): Երկրորդ. յայտ է յընդհանրական կանոնաց, զի առաջին պսակն հալալ ամուսնութիւն է, եւ երկրորդն՝ ներելով եւ թոյլ տալով վասն տկարութեան բնութեանս:

Եւ զի երկրորդ ամուսնութիւն ոչ է սուրբ որպէս զառաջինն, յայտ է յերկուց. նախ՝ զի արարողութիւն պսակին ոչ է որպէս զառաջինն: Երկրորդ. զի առաքեալ վասն երիցանց ասաց միո՛յ կնոջ այր լինել, ապա յայտ է, զի երկուքն թոյլ տալով է, եւ աւելին քան զայն ի պոռնկութիւն է համարեալ:

### Թէ Քրիստոս եբարձ զբազում կանայս

Եւ գիտելի է, զի Քրիստոս եւ առաքեալքն չորս ինչ բարձին ի հին սովորութեանց ի կարգէ ամուսնութեանց. նախ՝ զպոռնկութիւն, որ էր հեթանոսաց ընդ աւտարս խառնակիլ: Երկրորդ. զհարճ, որ ունէին նահապետքն նախքան զաւրէնս: Երրորդ. զբազում կանայս, որ առնէին վասն որդենութեան: Զորրորդ. զարձակելն, զոր Մովսէս հրամայեաց, որպէս ասէ ի Մատթէոս գլուխն<sup>2</sup>. «Ի սկզբանէ ոչ եղեւ այնպէս»:

Եւ յայտ է, զի յառաջինն հաստատեաց, որպէս զԱդամ. միո՛յ կնոջ՝ մի՛ այր: Եւ ի վերայ այնմ զսրբութիւն կուսութեան ուսուցին մեզ: Եւ գիտելի է, զի պոռնկութիւն չորս կերպիւ է. նախ՝ ընդ առնակինն, երկրորդ՝ ազգապիղծ, երրորդ՝ կուսապիղծ, չորրորդ՝ ուխտապեղծն, զոր Մովսէս հրամայեաց: Իսկ հարճն է ի մէջ

<sup>1</sup> Ը Ասեմք, թէ եւ բազում ... ում կամիցի՝ լիցի

<sup>2</sup> Ը Ասեմք

ամուսնութեան եւ պոռնկութեան: Իսկ բազում կանայք մին<sup>1</sup> առն լինէր, եւ ոչ մի կի՞ն՝ բազում արանց: Իսկ արձակել վասն պոռնկութեան<sup>2</sup> լինէր, այլ ոչ վասն<sup>3</sup> ամլութեան: Ուստի յայտ է յԱբը բահամէ, որ ամուլ էր Սառա, այլեւ Ռեքեկա, այլեւ Աննա՝ մայրն Սամուէլի, այլեւ Եղիսաբեթ՝ մայրն Յովաննու: Ապա յայտ է, զի սուտ է, որ զամուլ կինն արձակեն եւ ընդդէմ հրամանին Աստուծոյ: «Զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի մեկնեցէ» (Մատթ. Ժթ 6): Եւ թէ ոք ասիցէ՝ վասն էր՝ ապա ազգն Փոանկաց բազում ամուսնանայ, ասեմք, եթէ աւտար է յամենայն ազգաց Քրիստոնէից եւ արտաքոյ կանոնաց եւ Սուրբ Գրոց: Եւ ոչ միայն այս է չարութիւն նոցա, այլեւ զանկեալ քահանայս կանգնեն եւ զպահքն լուծանեն եւ ձկամք յագենան, եւ զամենայն պիղծ եւ զպիր կերակուր ոչ ընտրեն, եւ ի զանազան պոռնկութիւնս անխտիր են: Թողում ասել զշար աղանդ հայհոյութեան եւ հերձուածոյ նոցա, որով պատրեն զպարզամիտ:

**Այսքան առ այս:**

Դարձցուք ի մեկնութիւն բանիս, որ ասէ. «Յինգ այր փոխեալ է քո եւ զոր այժմ ունիս, չէ քո այր» (Յովի. Դ 18): Այս է<sup>4</sup> առաջինն, որ զծածուկս կնոջն յայտնեաց: Յուցանէ, թէ ծածկագէտ է եւ Աստուած է Քրիստոս: Եւ վասն կրկին պատճառի<sup>5</sup> նախ զհինդ այրն յիշեաց. առաջին՝ զի նախքան հնգեքեանն էին եւ ապա՝ պոռնիկն: Երկրորդ. որպէս ճարտար բժիշկ նախ մխիթարէ զհիւանդն եւ ապա զդառն դեղն տայ: Եւ նախ դիւրագոյն շաւշափէ զմարմինն եւ ապա կտրէ զվերսն, նոյնպէս եւ Քրիստոս արար:

Դարձեալ՝ վասն է<sup>6</sup> ր զհինդ արսն յիշեաց, զի կարէր ասել՝ զոր այժմ ունիս, պոռնիկ է:

Ասեն վարդապետք, թէ վասն<sup>6</sup> չորս պատճառի. նախ՝ զի այնու պոռնկութիւն նորա ամաւթալի լինէր, որ յետ հինդ արանցն պոռնկեցաւ: Երկրորդ. զի ի տղայութեան ոչ շնացաւ, այլ ի ծերութեան սխալեցաւ՝ առաւել նախատինք էր: Երրորդ. զի փոփոխումն է<sup>7</sup> հինդ արանցն զկնի միմեանց յոյժ անարգել ցանկութեան էր նշանակ: Զորրորդ. զայն ցուցանէ, զի մարմնական ցանկութիւն ոչ շիջանի բազմութեամք արանց, այլ առաւել բորբոքի:

<sup>1</sup> Ը մի

<sup>2</sup> Ը բանի պոռնկութեան

<sup>3</sup> Ա Բ չեք

<sup>4</sup> Ա Բ չեք

<sup>5</sup> Ա Բ չեք

<sup>6</sup> Ա Բ չեք

<sup>7</sup> Կ չեք է

## Այլաբանութեամբ մեկնութիւն<sup>1</sup>

**Արդ,** զայս մասն բանի կարեմք բարոյականաբար մեկնել<sup>2</sup>.  
**Քրիստոս** է լուսաւորիչ եւ ոչ մարմնասէր մարդ, յիրաւի ապա  
 կինն այն Լուսիանէ կոչեցաւ, զի ի Քրիստոսէ լուսաւորեցաւ:

Բան. «Թուի, թէ մարգարէ ես դու» (տես Յովհ. Դ 19):

**Մեկնութիւն.** Զի յայտնեաց զծածուկ մեղս նորա, մարգարէ  
 համարեցաւ:

Հարց. Զի՞նչ է ճշմարտասէրն, որ ասէ մեկնիչն<sup>3</sup>:

Պատասխան. Նախ՝ որ զծածուկն յայտնեաց, ո՛չ խոժոռեցաւ:  
 Երկրորդ. զծմարիտ բանն Քրիստոսի: Երրորդ. զհաւատն ճշմա-  
 րիտ: Չորրորդ. զծմարիտ երկրպագութիւն, վասն որոյ երարձ  
 տարակոյս մի, որ կայր ի մէջ հրէիցն եւ սամարացւոցն, զի  
 հրէայքն ասէին, թէ պարտ է յերուսաղէմ երկիրպագանել<sup>4</sup>, զի  
 անդ էր տաճարն եւ անդ՝ կտակարանքն, եւ անդ էր թագաւորու-  
 թիւն մեծ, եւ ի Սիոնէ ելին աւրէնք, այլեւ յետոյ տնաւրէնութիւն  
 Քրիստոսի անդ կատարեցաւ:

### Վասն Գարեգին լերինն

Իսկ սամարացիքն ասէին<sup>5</sup>, թէ ի լերինս յայսմիկ, որ էր լեառն  
 Գարեգին. նախ՝ զի յաւանդութենէ գիտէին, որ Աբրահամ ի Գա-  
 րեզին մատուցանէր զիսահակ պատարագ: Տե՛ս, զի ոմանք ի  
 Գողգոթայ ասեն վասն խորհրդոյ խաչին, եւ ոմանք ի Գարեգին,  
 որ առաւել հաւանելի է, զի երեք աւուր ճանապարհ ոչ է մինչեւ<sup>6</sup>  
 ի Գողգոթայ, այլեւ քաղաքն Լուզ շինութիւն էր, զոր յետոյ յե-  
 րուսացիք բնակէին:

Դարձեալ, զի Յակոբ որդւովքն իւրովք անդ բնակեցաւ, այլեւ  
 յորժամ մտին ժողովուրդն յերկիրն պարզեւաց, հասին ի լեառն  
 Գարեգին եւ անդ աւրհնեցին զԱստուած, որպէս եւ<sup>7</sup> գրեալ է  
 յերկրորդ<sup>8</sup> Աւրէնքն Մովսիսի (հմնտ. Բ Օր. ԺԱ 29): Այլեւ նախքան

<sup>1</sup> A չիք Այլաբանութեամբ մեկնութիւն

<sup>2</sup> B չիք «Արդ, զայս...մեկնել»

<sup>3</sup> B «Զի՞նչ ասէ մեկնիչն, որ ասէ, թէ ճշմարտասէրն»

<sup>4</sup> C Երկրպագել

<sup>5</sup> A B չիք

<sup>6</sup> C մինչ

<sup>7</sup> C չիք

<sup>8</sup> C ի յերկրորդ

գշինութիւն տաճարին հրէայքն ամենայն ի լերինն յայնմիկ<sup>1</sup> երկիր պագանէին, նոյնպէս եւ Սողոմոն մեծ պատարագաւն անդգնաց եւ յերազի ետես զԱստուած, վասն այն<sup>2</sup> ասէ.

Բան. «Դարբն մեր ի լերինս յայսմիկ երկիր պագին» (Յովի. Դ 20):

ՄԵԼՈՆԻՔԻՆ<sup>3</sup>. Է եւ այլ իմն պատճառ, զի յորժամ հրէայքն դարձան ի գերութենէն բարելացւոց, ոչ կամեցան ընդունել զսամարացիքն ի շինուած տաճարին, որպէս գրեալ է յԱռաջին գիրս Եղրի<sup>4</sup> (Բ Եզր Դ 1-5), վասն որոյ սամարացիքն արարին իւրեանց տեղի պաշտաման ի լեառն, որ կոչի Գարեզին: Սակայն Յովսէպոս այլ իմն պատճառ ասէ, թէ հրէայ ոմն անուն Մանասէ, էառ զդուստր սամարացւոց իշխանին ի կնութիւն<sup>5</sup>, եւ զի քահանայութիւն ցանկալի էր ի մէջ հրէիցն, աղաչեաց զաներ իւր, զի արացէ ինքեան տաճար մի ի լեառն Գարեզին, զի անդ զքահանայութիւն արացէ, եւ վասն այնմ շինեցաւ տաճարն անդ եւ սամարացիքն անդ պաշտէին:

Բան. «Եւ դուք ասէք՝ յերուսաղէն եւեթ» (Յովի. Դ 20):

ՄԵԼՈՆԻՔԻՆ. Վասն զի յայնժամ Երուսաղէմ միայն էր ընտրեալ ի յԱստուծոյ տեղի աղաւթից, որպէս ասացաւ պատճառն:

Բան. «Ասէ ցնա Յիսուս. “Կին դու, հաւատա՛ ինձ”» (Յովի. Դ 21):

ՄԵԼՈՆԻՔԻՆ. Տե՛ս, զի եթող զլուծումն տարակուսին եւ նախ ի հաւատն յաւժարեցոյց, որպէս առ Նիկոդիմոս արար: Եւ որք գային ի բժշկել, նախ զհաւատն խնդրէր, որպէս ասէ Պաւլոս. «Հաւատալ արժան է այնմ, որ մերձենայ առ Աստուած» (Եբր. ԺԱ 6): Եւ եսայի ասէ. «Եթէ ոչ հաւատայք, ոչ ի միտ առնոյք» (Տեհն Եսայի Ե 9): «Դարձեալ ասէ Քրիստոս. «Դաւատա՛ ինձ», ցուցանելով, զի ստոյգ գիտէր, զոր ինչ եւ խաւսէր, եւ այնու բանն նորա հաւատալի լինէր:

Եւ ապա լուծանէ զտարակոյսն.

### Երկրպագութիւն ամենայն աղքաց

Բան<sup>6</sup>. «Եկեսցէ ժամանակ, յորում ո՛չ ի լերինս եւ ո՛չ յերուսաղէն» (Յովի. Դ 21):

<sup>1</sup> Ա այնմիկ

<sup>2</sup> Ը վասն որոյ

<sup>3</sup> Ը Եղր

<sup>4</sup> Հմմտ. Բ Եղր Դ 1-5: Եղրասի Առաջին գրքում չփանք համապատասխան հատվածը:

<sup>5</sup> Ը եառ ի կնութիւն զդուստր սամարացոց իշխանին

<sup>6</sup> Բ Եղր

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Ժամանակն է ընդհանուր քարոզութիւն Աւետարանին, զի յորժամ Աւետարանն քարոզեցաւ ի բազում տեղիս, բարձաւ երկրպագութիւն հեթանոսաց, եւ հրէից տաճարն քակտեցաւ ի խնամոցն Աստուծոյ յետ քառասուն ամի խաչելութեան Տեառն, զի ամենեցուն մի՛ լիցի ժողովարան յեկեղեցիս Սուրբ, եւ ոչ յերկու տեղիսն յայն, այլ յամենայն տեղիս: Եւ աստ անուամբ Հաւր իմանի Աստուծած, որ է Հայր ամենեցուն, որպէս ասեմք. «Յայր մեր, որ յերկինս<sup>1</sup>»: Դարձեալ Յայր կոչեաց զԱստուծած, ածելով ի հաւատս վասն ծննդեանն Որդւոյ ի Հաւրէ: Եւ գիտելի է յառաջ քան զԱւետարանն երկրպագութիւն հրէիցն բարի էր, եւ հեթանոսացն՝ չար: Եւ տեղիք երկրպագութեան երուսաղէմ էր ընտրեալ յԱստուծոյ, տեղիք աղաւթից եւ զոհից, եւ ոչ՝ Գարեզին, որպէս գրեալ է յերկրորդ Մնացորդաց Գիրս: Դարձեալ գիտելի է, զի ասելն. «Ոչ ի լերինս յայսնիկ եւ ոչ յերուսաղէն», ոչ թէ բառնայ ի լեռնէն կամ յերուսաղէմէ զերկրպագութիւն Աստուծոյ, այլ զյեղանակ երկրպագութեան բառնայր, այսինքն՝ յերուսաղէմէ զենմամբ անբանից պատարագացն եւ ողջակիզաց երկրպագութիւն երարձ եւ փոխանակ ինքն զենաւ՝ Քրիստոս՝ Գառն Աստուծոյ: Եւ ի սամարացւոցն երարձ զանգիտութեամբ երկրպագութիւն կուցն, որ թաղեալ էին հարքն նոցա ի լեառն յայն, եւ աւանդութեամբ երկիր պատանէին<sup>2</sup>, եւ փոխանակ զինքն ծանոյց նոցա ի ձեռն հաւատոց եւ էած յերկրպագութիւն իւր: Դարձեալ՝ զի հրէայքն յամենայն կողմանց ի դէմս երուսաղէմի երկրպագէին, սոյնպէս եւ սամարացիքն ի լեառն Գարեզին, զայն ասէ, թէ՝ Խափանեսցին, զի այժմ յարեւելս երկրպագեմք ըստ սաղմոսին. «Ճանապարհ արարէք այնմիկ, որ նստի յերկինս երկնից ընդ արեւելս» (Սաղմ. Կէ 33-34): Եւ գիտելի է, զի չորեքին ազգս այս ի տեղի երկրպագեն. նախ՝ հրէայք ի յերուսաղէմ յամենայն կողմանց: Երկրորդ. սամարացիքն նոյնպէս ի Գարեզին լեառն: Երրորդ. կուպաշտք<sup>3</sup> թէպէտ յարեւմուտս, սակայն յամենայն կողմանց ի կուռսն երկրպագէին: Զորրորդ. այլազգիք ի տունն Խսմայէլի, զոր Քահբա եւ Ղբլա<sup>4</sup> կոչեն, յամենայն կողմանց անդ երկրպագեն: Խսկ քրիստոնեայք յամենայն կողմանց ի կողմ յարեւելից երկրպագեմք.<sup>5</sup> նախ՝ զի յարեւելից կուսէ համբարձաւ Քրիստոս, եւ առաքեալքն անդ երկրպագեցին: Դարձեալ՝ յարեւելից գալոց է

<sup>1</sup> Յերկինսդ եւ

<sup>2</sup> Ա երկիր պագէին, Ը երկրպագէին

<sup>3</sup> Ծ կոսապաշտ

<sup>4</sup> Բ զոր Գահբա եւ Բլա, Ը Դըպլա

<sup>5</sup> Ը երկրպագեն

**Քրիստոս, ըստ այնմ. «Որպէս փայլակն, որ ելանէ յարեւելից, այնպէս եղիցի գալուստն Որդւոյ Մարդոյ<sup>1</sup>» (Մատթ. ԻԴ 27):**

**Բան.** «Դուք երկիր պագանէք որում ոչն գիտէք, մեք երկիր պագանմք, որում գիտենք» (Յովհ. Դ 22):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Նախ զայն ասէ ո՛չն գիտել, որ զկուռսն թաղէին ի լերինս, որպէս ցուցանէ մեկնիչդ<sup>2</sup>: Դարձեալ՝ հեթանոսք բազում մոլորութեամբ զԱստուած պաշտէին մարմնական կերպիւ, վասն այն ասէ անգիտութեամբ պաշտել, իսկ Հրէայքն ճշմարիտ զԱստուած պատճառ եւ Արարիչ ամենայնի ճանաչէին, ըստ այնմ յայտնի է ի Հրէաստանի Աստուած, վասն որոյ ասէ Քրիստոս. «Մեք երկիր պագանեմք, որում գիտենք»: Նախ Քրիստոս գիտէր տեսութեամբն որում երկիր պագանէին, եւ Հրէայքն՝ հաւատով, զի թէպէտ սաղուկեցիքն մոլորեալք էին, սակայն Հրէայքն ուղիղ հաւատով երկիր պագանէին Աստուծոյ:

Դարձեալ՝ վասն մարգարէիցն եւ առաքելոցն, որք ի Քրիստոս հաւատացեալք էին, իմանի բանս այս. «Մեք երկիր պագանեմք, որում գիտենք», իսկ Քրիստոս, թէ<sup>3</sup> վասն է՞ր զինքն ընդ Հրէայսն ասէ, այնու, որ ասաց. «Մեք գիտենք»: Ասեմք վասն երեք պատճառի. նախ՝ ըստ կարծեաց կնոջն, որ ասաց. «Դու, որ հրեայդ ես» (Յովհ. Դ 9): Երկրորդ. ըստ ազգակցութեան, որ ի Մարիամայ ծնեալ էր<sup>4</sup>: Երրորդ. ըստ առակաւոր բանին, որ ասաց. «Փրկութիւն ի հրեից է» (Յովհ. Դ 22), որպէս եւ Պաւղոս ասէ. «Յորոց եւ Քրիստոս ըստ մարմնոյն, որ է [ի վերայ ամենեցուն] Աստուած աւրհնեալ յաւիտեանս. ամէն» (Յոռմ. Թ 5):

**Բան.** «Այլ եկեսցէ ժամանակ, եւ այժմ իսկ է» (Յովհ. Դ 23):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Նախ ասէ վասն Հրէիցն, թէպէտ նոքա երկիր պագանեն, որում գիտեն, սակայն եւ այն եւս խափանեցի այժմ: Դարձեալ՝ հասեալ է ժամանակ, որ կատարեալ եւ ճշմարիտ ասուածապաշտք լիցին:

### Յաղագս աստուածաբանութեան

**Բան.** «Յորժան ճշմարիտքն երկրպագուք երկիր պագանիցեն Յաւը՝ հոգւով եւ ճշմարտութեամբ» (Յովհ. Դ 23):

<sup>1</sup> A B չեք գալուստն Որդւոյ Մարդոյ

<sup>2</sup> C իսկ թէ Քրիստոս

<sup>3</sup> C չեք Երկրորդ. ըստ ... ծնեալ էր

<sup>4</sup> C չեք

Մեկնութիւն<sup>1</sup>. Յայտնի է վասն երրորդութեան անձանց Հայր եւ Հոգին Սուրբ, եւ ճշմարտութիւն ինքն Քրիստոս, որպէս ասէր. «Ես եմ Ծշմարտութիւն եւ Կեանք» (հնմտ. Յովի. ԺԴ 6), այլ աստ նախ լինի<sup>2</sup> երեք Հարց.

Առաջին Հարց. Վասն է՞ր զՀոգին նախքան զինքն դասէր:

Պատասխան. Ասեմք վասն կրկին պատճառի. նախ՝ զի Հոգւովն ճանաչեմք զՔրիստոս, որպէս Որդւովն զՀայր, ըստ Պաւղոսի. «Ոչ ոք ասէ Տէր զԹիսուս, եթէ ոչ Հոգւովն Սրբով<sup>3</sup>» (հնմտ. ԱԿորնթ. ԺԲ 3): Երկրորդ. զի Հոգին բղխումն է ի Հաւրէ անձնաւորութեամբ եւ առումն յՈրդւոյ՝ իմաստութեամբ, վասն այն ընդ Հաւրդնէ զՀոգին:

Երկրորդ Հարց<sup>4</sup>. Ճշմարիտ Երկրպագուք ո՞վ է եւ ո՞ւր եւ ե՞րբ:

Պատասխան. Այսինքն՝ Հաւատացեալքն ի Քրիստոս եւ յԵկեղեցիս Սուրբ, իսկ ժամանակն նախ ի գալստենէն Տեառն: Երկրորդ. ի մկրտութենէն ի Յորդանան: Երկրորդ. ի սուրբ աւագանէն, յոր Հաւատացաք եւ մկրտեցաք ի Սուրբ Երրորդութիւնն<sup>5</sup>: Զորբորդ. ի կեանս եւ ի մահ եւ յետոյ յաւիտեանս:

Երրորդ Հարց. «Զի՞նչ է Յաւր՝ հոգւով եւ Ծշմարտութեանք»:

Պատասխան. Ունի վեց իմն տեսութիւն. նախ՝ բառնայ զմարմնական եւ զաւրինական Երկրպագութիւն հրէիցն, այն Հոգւովն է եւ ճշմարտութեամբ ասելն: Բառնայ զԵրկրպագութիւն հեթանոսաց, որ ստութեամբ եւ մոլորութեամբն էր: Երկրորդ. բառնայ զՀրէից զտեղական եւ զոհիւք Երկրպագութիւն, որ ի մին տեղի էր, այլ ի Հոգեւոր սրտի եւ Հոգեւոր զոհիւք, այն Հոգւովն է եւ ճշմարտութեամբն, բառնայ զԵրկրպագութիւն սամարացւոցն, որ անդիտութեամբն էր: Երրորդ. բառնայ զանկատար եւ զմասամբ Երկրպագութիւնս նոցա, որ ի դէմս Հաւր, եւ ուսուցանէ զկատարեալ եւ ճշմարիտ Երկրպագութիւն ի դէմս Երից անձնաւորութեանցն եւ միոյ բնութեան Աստուծոյ, վասն այն ասէ. «Յաւր՝ հոգւով եւ Ծշմարտութեանք»: Զորբորդ. բառնայ զմիայն մարմնով Երկրպագութիւն նոցա, այլ մաքուր Հոգւով եւ մտաւք պաշտաւն եւ փառաբանութիւն եւ Երկրպագութիւն մատուցանել, այն է՝ հոգւով եւ Ծշմարտութեանք, ո՛չ զաւրինական եւ զստուերն, զի չունիմք զաւրինակ զենման գառանց, այլ զնոյն ինքն զճշմարիտ գառն Քրիստոս զենեալ եւ ոչ՝ զթլիատութիւն եւ զայլ լուցմունքն, այլ

<sup>1</sup> A չեք

<sup>2</sup> C լինի նախ

<sup>3</sup> A B չեք

<sup>4</sup> C չեք

<sup>5</sup> A Երրորդութիւնն, C յԵրրորդութիւն Սուրբ

գնոյն ճշմարիտ մկրտութիւն սուրբ: Հինգերորդ. ցուցանէ, թէ որպիսի գործով լինի երկրպագութիւնս մեր<sup>1</sup>, քանզի լինի կատարեալ փափագմամբ եւ սիրով, եւ վասն այսմ ասէ՝ Յոգևով, եւ լինի հաստատուն հաւատով եւ ուղիղ հանճարով, եւ վասն այն ասէ՝ ճշմարտութեամբ: Վեցերորդ. ցուցանէ, թէ որպէ՞ս վերայդառնամբ առ Աստուած, զի մարդեղութեամբ Բանին Աստուծոյ եղեւ այն, վասն որոյ ասէ՝ ճշմարտութեամբ, եւ հեղմամբ Հոգւոյն Սրբոյ, վասն որոյ ասէ՝ Յոգևով: Եւ զայս հոգեւոր երկրպագութիւնս Աստուծոյ հաճոյ ցուցանէ<sup>2</sup> Քրիստոս, յորժամ ասէ. «Թանզի եւ Յայր այնպիսի երկրպագուս իւր խնդրէ» (Յովի. Դ 24):

Եւ ապա զպատճառն ասէ.

Բան. «Յոգի է Աստուած եւ երկրպագուացն նորա՝ հոգւով եւ ճշմարտութեամբ պարտ է երկիր պագանել» (Յովի. Դ 24):

**ՄԵԼՈՆԻՔԻՆ.** Գիտելի է, զի ասեն վարդապետք. «Աղաւթք է ելումն մտաց առ Աստուած», վասն այն խնդրէ աղաւթքն նմանութիւն ինչ երկրպագողին առ երկրպագելին որքան կարելի է, իսկ Աստուծոյ էութիւն հոգեւոր եւ իմացական է, վասն այն երկիր պագանեմբ հոգւով եւ ճշմարտութեամբ:

Դարձեալ լինի աստ երեք հարց.

**Առաջին.** Թէ<sup>3</sup> վասն է՞ր կրկնէ զաստուածաբանութիւնս:

**Պատասխան.** Նախ՝ զի հաստատուն լիցի, որպէս այն. «Խնդրեսցուք եւ առնուցուք, հայցեցէք եւ գտջիք» (հմմտ. Դուկ. ԺԱ 9), եւ այլն: Եւ դարձեալ կրկնէ վասն հաստատութեան. «Որ խնդրէ, առնուր», եւ այլն, նոյնպէս եւ աստ առնէ: Երկրորդ. զի երեք դէմք են, այսինքն՝ երկրպագողն<sup>4</sup>, երկրպագութիւն եւ երկրպագելին: Վասն առաջնոյն ասէ. «Յորժամ ճշմարիտ երկրպագուքն երկիր պագանցեն» (Յովի. Դ 23): Վասն երկրորդին. «Պարտ է հոգւով<sup>5</sup> եւ ճշմարտութեամբ»: Վասն երրորդին՝ Հայր եւ Հոգի եւ ճշմարտութիւն է:

Երկրորդ հարց. Վասն է՞ր երիցս յիշէ զՀայր, երիցս՝ զՀոգի, երիցս՝ զՃշմարտութիւն:

**Պատասխան.** Նախ՝ ըստ բոլորին, զի երրորդութեամբն ստեղծաք ի սկիզբն, եւ երրորդութեամբն փրկեցաք ի մէջն, եւ երրորդութեամբն նորոգիմք ի վերջոյ: Երկրորդ. ըստ մասին տեսութիւն՝ երիցս զՀայր. նախ՝ զի բնութեամբ Հայր է Քրիստոսի: Երկրորդ. շնորհաւք՝ մեզ: Երրորդ. արարչութեամբ՝ բոլորիցս: Իսկ ե-

<sup>1</sup> Ը գործով երկրպագութիւն լինի մերս

<sup>2</sup> Ը հաճոյացուցանէ

<sup>3</sup> Ը չեք

<sup>4</sup> Ա Բ չեք

<sup>5</sup> Ը եւ հոգւով

ըիցս զՀոգին. նախ՝ զի բղխումն է ըստ անձնաւորութեան: Երկրորդ. արարիչ է ըստ ներգործութեան: Երրորդ. բաշխող է ըստ շնորհաց: Իսկ երիցս զՃմարտութիւն. նախ՝ զի Աստուած է մարդացեալ ըստ գոյացութեան: Երկրորդ. Ճմարիտ փրկիչ է ըստ նորոգման: Երրորդ. ճշմարիտ է ի բանս խոստման:

Երրորդ Հարց. Զի՞նչ է՝ Շոգի է Աստուած:

Պատասխան. Չորս իր<sup>1</sup> ցուցանէ. նախ՝ զի էութիւն Աստուածոյ անմարմին<sup>2</sup> եւ մաքուր եւ սուրբ է, որպէս ասացաւ: Երկրորդ. ի դէմս երից անձանցն հոգի՝ Հոգին Սուրբ, Է՛ Բանն, Աստուած՝ Հայր: Երրորդ. զՀոգին Սուրբ աստուածաբանէ: Չորրորդ. միահեգեան գիրն անփակ սոյնպէս մեկնի. «Որ էրն<sup>3</sup> եւ Եսդ եւ Էդ Աստուած», այսինքն՝ Հայր եւ Որդի եւ Հոգին Սուրբ, ընդ Սրբոյն Բարսղի եւ ի շարականս երգի:

#### Գալուստ Մեսիային

Բան. «Ասէ ցնա կինն. “Գիտեմ<sup>4</sup>, զի Մեսիա գայ<sup>5</sup>”» (Յովի. Դ 25):

Մեկնութիւն. Այսինքն<sup>6</sup> վաղվաղակի գալոց է:

Վասն կրկին պատճառի դարձեալ խաւսակցի. նախ՝ զի տկարացաւ իմանալ զաստուածաբանութիւն, կամի զի յայտնեացէ: Երկրորդ. զի ախորժելով լսէր, կամի, զի յերկարեացէ: Մեսիա զայս կինն ասաց ի յերայեցւոց լեզուն, իսկ անուանելն Քրիստոս զայս Աւետարանիչն ասէ ի յունական լեզուն, որ ի մերս Աւօնալ թարգմանի:

Հարց<sup>7</sup>. Եւ<sup>8</sup> ուստի՝ գիտէր զՄեսիայն:

Պատասխան. Ի չորից. նախ՝ ի յԱրարածոց եւ ի Մարգարէիցն, զոր ընթեռնուին: Երկրորդ. ի նշանաց գալստեանն Քրիստոսի, որ էր փոփոխումն թագաւորութեան հրէից, որպէս ասաց Յակոբ. «Մի՛ պակասեացէ իշխան ի<sup>9</sup> Յուղայ<sup>10</sup> եւ մի՛ պետ յերանաց նորա<sup>11</sup>» (Ծննդ. Խթ 10) եւ այլն: Եւ ի ժամանակս յայս բարձեալ էր իշ-

<sup>1</sup> B ինչ

<sup>2</sup> A B անմարմին է

<sup>3</sup> C էնդ

<sup>4</sup> A B գիտենք

<sup>5</sup> A B չեք Մեսիայ գայ

<sup>6</sup> B չեք

<sup>7</sup> A B չեք

<sup>8</sup> C չեք

<sup>9</sup> A B չեք

<sup>10</sup> C Յուղայէ

<sup>11</sup> A B չեք յերանաց նորա

խանութիւն հրէից, եւ Հերովդէս այլազգի էր: Երրորդ գալստեամբ մոգուցն, եւ Հերովդէս, որ զմանկունս կոտորեաց, ի մերձակայն էր: Զորրորդ. մկրտութիւն Ցովաննու տարածեալ էր<sup>1</sup>, վասն այն ասէ.

Բան. «Յորժան Եկեսցէ, նա պատմեսցէ մեզ զամենայն» (Յովի. Դ 25):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ<sup>2</sup>.** Այսինքն<sup>3</sup> զամենայն հարկաւոր բան առ ի փրկութիւն մարդկան:

Բան. «Ես են, որ խաւսիմս<sup>4</sup> ընդ քեզ» (Յովի. Դ 27):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Վասն չորից արագապէս<sup>5</sup> զինքն յայտնեաց կնոջն. նախ՝ զի կինն այն յուսայր ի Քրիստոս եւ զգալուստն մերձ համարէր: Երկրորդ. զի զԱստուած պաշտութեան տեղն խնդրեաց եւ զջուրն գիտութեան: Երրորդ. զնախահարցն յիշեաց պատուով: Զորրորդ. ետես զհաւատ կնոջն, զի առանց արատոյ ընդունելոց էր, իսկ հրէիցն ոչ յայտնեաց զինքն, զի չէին ընդունելոց: Եւ այս երկրորդ յայտնութիւն է, որ զծածուկ հաւատս կնոջն գիտաց Քրիստոս եւ յայտնեաց զինքն նմա՝ ասելով. «Ես են, որ խաւսիմս<sup>6</sup> ընդ քեզ» (Յովի. Դ 26):

Իսկ ասելն՝ Ես են, նախ ցուցանէ զմի դէմն միաւորեալ: Երկրորդ. զներկայն գոլ: Երրորդ. ի հանդերձեալն եմ մշտնջենաւոր՝ որ խաւսիմս: Եւ այս եւս զմիութիւն ցուցանէ, զի խաւսքն բան է եւ ձայն միաւորեալ:

Դարձեալ՝ նոյն ներտրամադրեալ Բանն է յառաջ բերեալ Ընդ քեզ ասելն, այսինքն՝ բանն Քրիստոսի ի սիրտ նորա հանգուցեալ:  
**Այսքան առ այս:**

### Ա. ԱՐԵՎԱՆՈՒԹԵԱՄԲ ՄԵՍՈՒԹԻՒՆ

Եւ գիտելի է, զի սուրբն նանա մտաւոր տեսութեամբ զծածուկն մեկնէ, այսինքն՝ զի բանն որպէս մարմին է, եւ մեկնութիւն որպէս հոգի, եւ այլ ծածուկն որպէս միտքն է:

Եւ զհոգին ասէ առաջնորդ վասն չորից. նախ՝ զի<sup>7</sup> հոգին է քննող խորոցն Աստուծոյ: Երկրորդ. որպէս Հոգւովն ծանեաք զՔրիստոս, նոյնպէս Հոգւովն իմանամք զբանն Քրիստոսի: Եր-

<sup>1</sup> Բ կատարեալ էր

<sup>2</sup> Բ չեք

<sup>3</sup> Բ Կ չեք

<sup>4</sup> Ա Բ խաւսիմ

<sup>5</sup> Ը Երագապէս

<sup>6</sup> Ա Բ խաւսիմ

<sup>7</sup> Բ վասն զի

ըորդ. զի Սուրբ Հոգւովն խաւսեցան մարգարէքն եւ առաքեալքն<sup>1</sup> եւ մեք նոյն<sup>2</sup> Հոգւովն քննեմք: Չորրորդ. զի մարգարէքն ի դէմս Հաւը են եւ առաքեալքն ի դէմս Քրիստոսի քարոզեն եւ վարդապետք ի դէմս Հոգւոյն մեկնեն: Եւ զբանն ի գործ արկաք, այսինքն՝ զներտրամադրեալ բանս մտաց կամ զյառաջ բերեալս, որ խաւսիմք:

Եւ բաժան միտք ասէ<sup>3</sup>. առաջին՝ զփախուստ Տեառն ի հրէից եւ գնալ ի հեթանոսս: Երկրորդ. առաքեալքն թողին զհրէայս եւ քարոզեցին ի հեթանոսս: Երրորդ. որպէս ի ձեռն կնոջն ջնջեցաւ քաղաքն եւ ի ձեռն կնոջն նորոզեցաւ: Չորրորդ. մարմնոյն ցանկութեամբ կործանեցան եւ հոգւոյն ցանկութեամբ կանգնեցան: Հինգերորդ. Դինա՝ մերձաւոր յԱբրահամէ<sup>4</sup>, եւ սամարուհին՝ հեռաւոր<sup>5</sup> յազգէ նորին: Վեցերորդ. սոյնպէս տեսանելի է՝ կոյսն եւա կործանեաց զբնութիւնս, կոյսն Սուրբ կանգնեաց զմեզ: Եւթներորդ. եւա ցանկացաւ պտղոյն, կոյսն Աստուածածին՝ Պտղոյն կենաց: Ութերորդ. Եւա<sup>6</sup> ի յԱդամայ եւ կոյսն Սուրբ ի յազգէ նորա: Իններորդ. Ծրհորովն նորոզեցաւ քաղաքն, եւ աւազանաւն՝ մարդկային ազգ: Տասներորդ. ի վեցերորդ ժամուն եկին ի հաւատոս, եւ ի վեցերորդ դարում<sup>7</sup> լուսաւորեցաք հաւատով: Եւ չորս այս ի վեցերորդ ժամուն եղեն. այսինքն՝ նախ մկրտութիւն Տեառն, երկրորդ՝ նստիլն առ Ծրհորին, երրորդ՝ բարձրանալն ի խաչին, չորրորդ. Համբարձումն յերկինս: Մետասաներորդ. հանգչելն ի նորս եկեղեցի: Երկոտասաներորդ. հացիւ կերակրեալ,<sup>8</sup> որպէս Յովսէփ զեղբարսն իւր:

#### Այսքան առ այս:

Բան. «Եւ յայն բան եկին աշակերտքն նորա» (Յովի. Դ 27):

Մեկնութիւն. տե՛ս զաստուածային նախախնամութիւն, զի յորժամ հաւատաց կինն, յայնժամ եկին աշակերտքն եւ ոչ յառաջ, զի մի՛ լիցի խափան<sup>9</sup> քարոզին, եւ ոչ յետոյ, զի ի Քրիստոսէ իմասցին զհաւատալն նորա:

<sup>1</sup> Ը մարգարէք եւ առաքեալք

<sup>2</sup> Ա Բ չեք

<sup>3</sup> Ը չեք կամ զյառաջ ... միտք ասէ

<sup>4</sup> Բ Աբրահամէ, Ը յԱբրահամու

<sup>5</sup> Ը հեռու

<sup>6</sup> Ա Բ եւ նա

<sup>7</sup> Ը դարուն

<sup>8</sup> Ը կերակրել

<sup>9</sup> Ը խափան լիցի

### Թէ ընդ կնոջն խաւսէր

Բան. «Եւ զարմանային, զի ընդ կնոջն խաւսէր» (Յովի. Դ 27):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Ոչ թէ չար կարծելով զարմացան, այլ նախ՝ զի միայն ընդ կնոջն խաւսէր: Երկրորդ. վասն մեծ բարեացն: Երրորդ. վասն բարձրագոյն խոնարհութեան, որպէս ասէ Ռոկեբերանն<sup>խ</sup>:

Եւ այս յերեք դէմս. նախ՝ զի մեծ վարդապետ եւ սքանչելագործ էր: Երկրորդ. զի կինն այլազգի եւ աղքատ էր: Երրորդ. զի յերկար խաւսեցաւ մինչ դարձան աշակերտքն ի քաղաքէն:

Խնդրի աստ, թէ պատշաճ է՞ր, որ Քրիստոս ընդ կնոջն միայն խաւսեցաւ: Ասեն վարդապետք, թէ պատշաճ էր, յորժամ վեց ինչ ի միտ ածցուք. նախ՝ զտեղին, որ հասարակաց էր եւ յայտնի: Երկրորդ. զժամանակն, որ կէս աւր էր եւ նախքան զճաշելն: Երրորդ. զպատճառ գալստեան կնոջն, այսինքն՝ առ ի ջուր հանել: Զորրորդ. զհասակ կնոջն, զի հինգ այր փոխեալ էր եւ միւս եւս ի վերայ նոցին ստացեալ, ուստի հաւատալի է, զի պառաւ էր: Հինգերորդ. զբարութիւն Քրիստոսի, որ արար նմա: Վեցերորդ. եւ<sup>1</sup> ի միտ ածցուք զինչ խաւսեցաւ ընդ նմա, յայնժամ յայտնի է, զի վայելչաբար խաւսէր ընդ կնոջն:

Բան. «Բայց ոչ ոք ի նոցանէ եհարց» (Յես Յովի. Դ 27):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Նախ՝ զի պատուէին զՔրիստոս, Երկրորդ՝ զի ամաչէին, Երրորդ՝ զի Երկնչէին: Եւ Երբեմն՝ զի համարձակ խաւսէին ընդ Քրիստոսի: Այն է պատճառն, զի վասն ինքեանց հարցանէին եւ ուսանէին: Զորրորդ. պատճառաւ ոչ հարցին, զի գիտէին աշակերտքն, թէ բանքն Քրիստոսի ոչ էին ընդունայն եւ անաւգուտ, այլ յոյժ շահաւէտ եւ պտղալի: Եւ այս էր պտուղն, զի յորժամ ուսաւ կինն, գնաց վաղվաղակի զայլս ածել առ Քրիստոս:

Բան. «Եթող կինն զսափորն իւր» (Յովի. Դ 28):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Նախ՝ զի փութով ընթասցէ: Երկրորդ. զի կամէր վերստին դառնալ առ Քրիստոս<sup>2</sup>: Երրորդ. մոռացաւ զջուրն զգալի, զի աւետարանեսցէ զջուրն իմանալի:

Այլեւ Տէրն նստէր եւ սպասէր գալստեան նորա. նախ՝ զի ծանեաւ զջերմ յաւժարութեան նորա: Երկրորդ. ծանեաւ զհաւատս սամարացւոցն:

Բան. «Չոգաւ ի քաղաքն եւ ասէ ցմարդիկն» (Յովի. Դ 28):

<sup>1</sup> Բ զի

<sup>2</sup> Ը Երկրորդ. զի կամէր ... առ Քրիստոս

**ՄԵԿՆՈւԹԻՒՆ.** Հարց. զի՞նչ է այն, որ ասէ ցմարդիկն<sup>1</sup> նկատեա՛ ինձ:

**Պատասխան.** Դիտեա՛, նկատեա՛ կամ<sup>2</sup> տե՛ս ինձ, եւ այլն այն է, որպէս ասել՝ լո՛ւր ինձ:

Եւ տես զիմաստութիւն կնոջն ի յերիս իրս. նախ՝ զի յորժամ լուաւ, թէ՝ ես եմ Քրիստոսն, յայնժամ գնաց: Երկրորդ. չասաց, թէ՝ գտի զՔրիստոս, այլ դուք եկայք եւ տեսէք:

Եւ այս կրկին մտաւք. նախ՝ զի մարդիկ առաւել յաւժարին ի տեսանել նոր եւ զարմանալի իրս, քան առանց տեսութեան հաւատալ, երկրորդ. զի նոքա ի Քրիստոսէ առաւել ուսանէին, քան ի վկայութեանց նորա:

Երրորդ իմաստութիւն. «Տեսէք, զայր մի, որ ասաց ինձ զամենայն» (Յովի. Դ 29). նախ՝ զի Տէրն զմին ծածուկն յայտնեաց եւ նա զամենայն ասէ, երկրորդ. յայտնելով զծածուկն եցոյց զնա Քրիստոս գոլ:

Բան. «Մի՞թէ նա իցէ Քրիստոսն» (Յովի. Դ 29):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Իբրու ասել՝ գործով յայտնի է, զի նա է Քրիստոսն: Իսկ Քրիստոս աւետարանիչս ասէ ի յոյն լեզու, այլ նա իւրեանց լեզուաւն ասաց:

Եւ գիտելի է, զի չորս իրաւք ամենայնի գիտող քարոզեաց. նախ՝ առ ինքն, զի յերկու գլխաւոր գաղտնեացն զբովանդակն իւմացաւ գիտակ գոլ: Երկրորդ. որ մաւտենայ առ նա, գիտակ լինի նորա: Երրորդ. ապա եւ հեռաւորացն գիտակ լինի: Չորրորդ. ապա որ եղեն եւ որ լինին, մեռելոց եւ կենդանեաց գաղտնեացն գիտակ է: Եւ է իմանալ, թէ զամենայն գործս իւր պատմեաց նորա, այլ աւետարանիչս համառաւտ անցանէ:

Բան. «Ելին ի քաղաքէն եւ գային առ նա» (Յովի. Դ 30):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ<sup>3</sup>.** Սամարացիքն յուսային գալստեանն Քրիստոսի. նախ՝ վասն երեւման ժամանակին: Երկրորդ. վասն լրման նշանին, զի Յակոբ մարդարէացեալ էր: Երրորդ. վասն քարոզութեան Յովաննու, որ հնչեաց ընդ ամենայն աշխարհն ընդ այն, վասն այն դիւրագոյն հաւատացին բանի կնոջն, որպէս ասէ. «Ելին եւ գային առ նա», զի զոր ունկամբ լուան, կամէին աչաւք տեսանել:

<sup>1</sup> А В մեկնիչն

<sup>2</sup> С եւ

<sup>3</sup> В չիք

### Վասն Հաց ուտելոյ

Բան. «Եւ մինչ չեւ եկեալ էին նոքա» (Յովի. Դ 31):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ<sup>1</sup>. Այսինքն՝ սամարացիքն:** Կամի աստ յաւժարեցուցանել զաշակերտսն ի քարոզութիւն:

Բան. «Ուաբբի՛, հաց կեր» (Յովի. Դ 31):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Վասն չորից. նախ՝ զի վաստակեալ էր, երկրորդ՝ նստեալ, երրորդ՝ մերձ յաղբերն, որ էր յարմար տեղի, չորրորդ՝ զի վեցերորդ ժամ էր:

Աստ գիտելի է, զի կրկին անգամ ուտի Հաց. մին ի ճաշն, որ կոչի «Ճաշ», եւ մի<sup>2</sup> յերեկոյն, որ կոչի «ընթրիս»:

Եւ այս վասն չորից. նախ՝ զի ի վեց ժամն հալի կերակուրն եւ փոխի ի մարմինն: Երկրորդ. մինն տուլնջեան եւ մինն՝ գիշերոյ: Երրորդ. զի Ադամ ի ճաշն եկեր եւ Տէրն մեր<sup>3</sup> յընթրիսն ետ զմարմինն: Զորրորդ. ի խորհուրդ աստի եւ հանդերձելոյն: Եւ տե՛ս, զի միայն Հաց ուտելին եւ ոչ այլ զանազան խորտիկք, որ փափկասիրացն է: Եւ մարգարէն ասէ. «Հաց հաստատէ զսիրտ մարդոյ» (հմնտ. Դտ ԺԹ 8), այլեւ բնական Հացն կերակուր է մարդոյ, որ գլուխ է, եւ խոտն՝ անասնոց, եւ արմատն՝ սողնոց, վասն այն աշաչին<sup>4</sup> հաց կեր:

### Վասն կերակրոյն Քրիստոսի

Իսկ Քրիստոս ի մարմնաւոր կերակրոյն պատճառէ առ խաւսելոյ, որպէս ասէ.

Բան. «Ես կերակուր ունիմ ուտել<sup>5</sup>, զոր դուքն<sup>6</sup> ոչ գիտէք» (Յովի. Դ 32):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Զորս է իմացումն. նախ՝ ցուցանէ, զի նորա կերակուրն կամաւոր էր եւ ոչ հարկաւոր, որպէս մերս, զի նա Տէր էր բնութեան<sup>7</sup> մարմնոյն<sup>8</sup> եւ նոյն<sup>9</sup> կրից նորա եւ ոչ որպէս մեք տիրեալք, եւ վասն կրիցդ ասացաւ առ սամարացին: Երկրորդ. իմ

<sup>1</sup> C չիք

<sup>2</sup> C մին

<sup>3</sup> C չիք

<sup>4</sup> C աղաչեն

<sup>5</sup> A C՝ չիք

<sup>6</sup> A C դուք

<sup>7</sup> A B բնութեանս

<sup>8</sup> A B չիք

<sup>9</sup> C չիք

կերակուր եւ կարաւտութիւն<sup>1</sup> է փրկութիւն մարդկան, զոր դուք ոչ գիտէք: Երրորդ. զսամարացիքն ասէ, որ գային ի հաւատն Քրիստոսի եւ ոչ գիտէին նոքա<sup>2</sup>.

Եւ զի աշակերտքն իմացան զբանն Քրիստոսի վասն<sup>3</sup> զգալի կերակրոյն, վասն այն ասէին ընդ միմեանս.

Բան. «Մի՞ եքեր ոք ինչ դնա ուտել» (Յովհ. Դ 33):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Նախ՝ վասն պատուոյ վարդապետին զանխլաբար ասէին ընդ միմեանս: Երկրորդ. զի գիտէին, թէ ոչ ինչ գոյր կերակուր ընդ Ցիսուսի: Երրորդ. գիտէին, զի ընդունէր կերակուր, յորժամ ոք բերէր առ նա, որպէս զի այնու վարձք լինէր բերողացն: Եւ այս ցուցանէ, զի պատշաճ է վարդապետաց յայլոց կերակրիլ եւ չէ ամալթ, վասն զի զմարմնաւոր կերակուրսն<sup>4</sup> անփոյթ առնելով առաւել կարիցեն վասն բանին Աստուծոյ հոգ տանել, եւ չէ զարմանք, թէ<sup>5</sup> կինն սամարացի ոչ իմացաւ զջուրն, զի եւ աշակերտքն ոչ իմացան զկերակուրն, վասն այն Քրիստոս մեկնէ նոցա զբանն իւր:

Բան. «Իմ կերակուր այն է, զի արարից զկամս Յաւր եւ կատարեցից զգործն<sup>6</sup> նորա<sup>7</sup>» (Ստեն Յովհ. Դ 34):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Այսինքն<sup>8</sup> դարձն հեթանոսաց, որպէս գրէ Պաւղոս առ Տիմոթէոս վասն Աստուծոյ, որ զամենայն մարդ կամի<sup>9</sup>, զի կեցցեն եւ ի գիտութիւն ճշմարիտ:

Եւ չորս ինչ ցուցանէ. Նախ՝ զմի կամքն ընդ Հաւր: Երկրորդ. զմի գործն, զի գործն ի կամացն է, որպէս բանն ի մտաց: Երրորդ. զդարձն հեթանոսաց վերաբերէ առ Հայր, որ է սկիզբն եւ պատճառ իւր: Չորրորդ. ի յաւրինակ մեզ, զի յամենայն գործս մեր պարտ է առաւել սիրել զԱստուծոյն<sup>10</sup>, քան զմերս:

### Վասն Հնձոց

Բան. «Ո՞չ դուք ասէք, թէ այլեւս չորք ամիսք են եւ հունձք գան» (Յովհ. Դ 35):

<sup>1</sup> Ե Իմ կերակուր այնէ եւ կարօտութիւն, Ը կենդանութիւն

<sup>2</sup> Ը նորա ոչ գիտէին

<sup>3</sup> Ե

<sup>4</sup> Ը կերակուրս

<sup>5</sup> Ե զի

<sup>6</sup> Ը զգործս

<sup>7</sup> Ա Ե

<sup>8</sup> Ե Հեկնութիւն. այսինքն, Ը Հեկնութիւն

<sup>9</sup> Ը որ կամի զամենայն մարդ

<sup>10</sup> Ե պարտ է զԱստուծոյն սիրել

**ՄԵԼԻՆՈՒԹԻՒՆ.** Առակաւոր է բանս, որպէս թէ ասել՝ ժամանակ մարմնաւոր հնձոց դեռեւս ոչ է հասեալ, այլ ժամանակ հոգեւոր հնձոցն հասեալ է, որ է դարձումն հեթանոսաց: Եւ զարմանալի է բանս, թէ՝ զիա՞րդ յետ չորս ամսոյ հնձի, յորժամ սպիտակացեալ լինի, զի ոչ միայն զմիտս, այլեւ զնկարագիրն պարտ է հասկանալ եւ ոչ զանց առնել, վասն որոյ երիւք լուծանեն վարդապետք. Նախ՝ չորս ամիսք թուէին առաքեալքն ի տաւնէ Զատկին կամ<sup>1</sup> ի սկզբանէ այնմ լուսնոյ, յորժամ Զատկին ի չորեքտասանն լինէր, որ է մուտն Նիսանայ ի քսան եւ երկու մարտի, յայնժամ ըստ Գրոյն կարէ իմանալ, զի հունձքն լինէին ի չորրորդ ամիսն, որ է յունիս եւ թամուզ, որ է ամառն եւ հունձք: Իսկ թէ իմանաս զբանն ի ժամանակէն, յորժամ ասաց Քրիստոս, ո՛չ լինին չորսք ամիս, զի Քրիստոս ի տաւնի Զատկին յերուսաղէմ էր, եւ զկնի ի Հրէստան բազում վարդապետեալ էր եւ ապա եկն ի Սամարիայ: Ուստի յայտ է, զի յորժամ զայս ասաց ի յապրիլ էր եւ իար ըստ եբրայեցւոցն: Երկրորդ. սոյնպէս ասեն, եթէ հունձ յետ չորս ամսոյ ոչ զկտրելն ասէ արտօրէից, այլ զկասելն եւ զշտեմարանելն, զի յերկիրն յայն զորայն դիզեն մինչ զի խիստ շողն սակաւ ինչ բարեխառնի եւ ապա կասեն: Երրորդ. ասեն, զի թէպէտ յաշխարհին յայն սպիտակացեալ էին արտօրէից, յայնժամ, սակայն, յայլ տեղիս զկնի չորս ամսոյ գայ ի հունձ, զի դեռ սակաւ էր<sup>2</sup> անցեալ ի Զատկին: Եւ սոյնպէս իմանալով Քրիստոսի բանն ճշմարիտ է վասն մարմնաւոր որայից, սակայն բանս այս առաւել թուի ի վերայ հոգեւոր հնձից, որ է դարձումն հեթանոսաց ի հաւատս, զի որպէս մարմնաւոր հնձողք հաց ժողովեն ի շտեմարանս, նոյնպէս հոգեւոր հունձ կոչի ժողովումն մարդկան ի հաւատս, որ ժողովին ի շտեմարանս Աստուծոյ: Եւ քանզի սամարացիքն գային առ նա յաւժարութեամբ<sup>3</sup> ի հաւատս, վասն որոյ ասէ.

Բան. «Ամբարձէք զաշս ձեր եւ տեսէք զարտորայն<sup>4</sup>» (Յովի. Դ 35):

**ՄԵԼԻՆՈՒԹԻՒՆ.** Նախ՝ զսամարացիսն ասէ եւ ապա զայլ հեթանոսս: Աստ ցուցանէ զերրորդ գլուխն, որ ծածկագէտ է Քրիստոս, յորժամ ասաց զգալն սամարացւոց եւ զհաւատալն յառաջագոյն: Իսկ սպիտակութիւն նախ նշանակէ զմաքուր եւ զպարզ ուղղութիւն մտացն սամարացւոցն, որ գային առ Քրիստոս: Երկրորդ. սպիտակութիւն լուսաւորութիւն մտաց նոցա է, զոր ի բանէ կնոջն ընկա-

<sup>1</sup> Ը եւ կամ

<sup>2</sup> Ա Յ չեք էր

<sup>3</sup> Ա Յ չեք

<sup>4</sup> Ս զարտորայս

լեալ էին: Երբորդ. զի մերձեալ առ Քրիստոս ի խաւարէ մեղաց մաքրեալք լինէին:

### Թէ Քրիստոս առակաւ խաւսէր

Հարց<sup>1</sup>. Վասն է՞ր առակաւ խաւսէր<sup>2</sup>:

Պատասխան. Վասն հնգից. նախ՝ զի կատարեսցի բանն. «Բացից առակաւ զբերան իմ» (Սաղմ. 3:2), եւ այլն: Երկրորդ. զի առակաւոր բանն սիրելի է մարդկան, քան զպարզն: Երբորդ. զի միջնորդիւ ի ճշմարտութիւն ելանեմք, որպէս սանդղով ի բարձունս: Չորրորդ. զի առաւել հաստատուն մնայ: Այս վասն իւրոցն: Հինգերորդ. վասն աւտարաց, զի ծածկեսցի բանն, ըստ այնմ՝ «Տեսցեն եւ մի տեսցեն» (հնմտ. Ես Զ 9) եւ այլն:

### Սպիտակութիւն որայից

Հարց<sup>3</sup>. Զի՞նչ է սպիտակութիւն արտորայից:

Պատասխան<sup>4</sup>. Նախ՝ բնականապէս, զի յորժամ չորս տարերքն կատարին, սպիտակի եւ հնձի, զի արմատն հողոյն է, եւ կանաչելն՝ ջրոյն, ծաղկելն՝ աւղոյն, եւ սպիտակելն՝ հրոյն, իսկ նշանակաբար ցուցանէ զծերութիւն մարդկան, յորժամ չորս տարերքն փոփոխին, զի աւղն ի տղայութեան է, հուրն՝ յերիտասարդն, հողն՝ ի կատարեալ հասակն, ջուրն՝ ի ծերութեան, եւ ապա հունձ՝ մահուն: Դարձեալ՝ չորս<sup>5</sup> փոփոխմունք աշխարհի. մին՝ բնական աւրէնքն Աղամայ, երկրորդ՝ բանականն նոյի, երրորդ՝ գրաւորն Մովսիսի, չորրորդ՝ Աւետարանն Քրիստոսի, եւ ապա կատարած եւ հունձ աշխարհի:

Դարձեալ իմանի ըստ տումարին, որ ասէ. «Կալ Զատիկն<sup>6</sup>, ութն ի վերայ ած, տուր՝<sup>7</sup> ի չորրորդ ամիսն վարդավառ է», որ է պատկեր հանդերձեալ աւուրն եւ կատարածի եւ ժողովումն ցորենոյ՝ արդարոցն ի շտեմարանս արքայութեան երկնից եւ որոմանց՝ մեղաւորացն ի յայրումն դժոխոց, յորոց փրկեսցէ զմեզ Քրիստոս Աստուած մեր:

<sup>1</sup> A B C չեք

<sup>2</sup> C չեք Վասն է՞ր ... խաւսէր

<sup>3</sup> A B չեք

<sup>4</sup> C չեք

<sup>5</sup> A B չեք

<sup>6</sup> C զատիկն

<sup>7</sup> C եւ տուր

### Հոգեւոր Հնձոցն

**Յորժամ ուսոյց Քրիստոս զաշակերտսն ի քարոզութիւն վասն փրկութեան մարդկան, դարձեալ յաւժարացուցանէ զնոսա վասն վարձուցն հատուցման, մինչ զի ասէ.**

Բան. «Որ ինձէ, վարձս առցէ» (տես Յովի. Դ 36):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Զի որպէս սամարացիքն եկին ի հաւատսան Քրիստոսի, նոյնպէս գիտէր, թէ բազմութիւն հեթանոսաց ընդ ամենայն աշխարհս ի ձեռս<sup>1</sup> առաքելոցն հաւատասցեն, վասն այն վարձս խոստանայ զկեանսն յաւիտենից: Իսկ հնձելն<sup>2</sup> է ի չարաշար մեղացն ի բաց խլել եւ զպտուղ կենացն ժառանգել:**

Եւ կրկին ասին հունձք հոգեւոր. առաջին՝ որով մարդիկ ածին ի հաւատս, եւ այսմ հնձողք էին առաքեալքն, երկրորդ հունձք. ի ձեռն հրեշտակաց, յորժամ ժողովին հաւատացեալք ի շտեմարանն արքայութեան երկնից, վասն այն ասէ. «Ժողովէ<sup>3</sup> զպտուղ ի կեանս» (տես Յովի. Դ 36), այսինքն՝ զբազմութիւն հեթանոսաց ի կեանսն յաւիտենից: Եւ սոքա կրկին են, այսինքն՝ զի առաքեալքն նախ հնձեն ի հաւատս, երկրորդ՝ ի բարի գործս: Նոյնպէս եւ հրեշտակք. նախ հնձեն<sup>4</sup> ի կայանս հոգւոց, եւ երկրորդ՝ ի կատարածի հոգւով եւ մարմնով ժողովեն ի փառս երկնից:

**Տե՛ս, զի ի կատարածի է փառք արդարոցն:**

Բան. «Որ սերմանեն եւ որ ինձեն, առ հասարակ [ցնծասցեն]» (Յովի. Դ 36):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Նախ՝ սերմանող նախահարք եւ մարդարէք, եւ հնձող՝ առաքեալք, զի նոքա սերմանեցին զառաջին սերմանս հաւատոյ, բայց առաքեալքն հնձեցին, զի զժողովուրդս ի կատարեալ հաւատս ածեն, սակայն երկուսն ուրախանան ի միասին, ասէ:**

Եւ չորս մի է ի նոսա, եւ չորս՝ այլ. նախ՝ մի է սերմն պատուիրանացն: Երկրորդ. միոյ աւետարանչին հրամանաւ: Երրորդ. ի մի միտս մարդկան: Չորրորդ. մի բան հաւատոյ:

Եւ չորս այլ. նախ՝ զի այլ են մարդարէք, եւ այլ՝ առաքեալք: Երկրորդ. մարդարէքն՝ զաւրինակն, եւ առաքեալքն՝ զծմարտութիւն: Երրորդ. նոքա՝ հրէից, եւ սոքա՝ քրիստոնէից: Չորրորդ. նո-

<sup>1</sup> Ը ի ձեռս

<sup>2</sup> Ա Յ հանդերձեալն

<sup>3</sup> Ա Յ ժողովեն

<sup>4</sup> Ը ինձեն զիոգիս

քա՝ զանկատար հաւատս միայն զմինն Աստուած, սոքա՝ կատարեալ<sup>1</sup> զերրորդական անձնաւորութիւնս ուսուցին:

Երկրորդ. սերմանող մարդիկ եւ հնձող հրեշտակք, որպէս ցուցաւ: Այս առ նոսա:

Իսկ այժմ առ մեզ. չորս են սերմանդք եւ չորս՝ հնձողք<sup>2</sup> նախ՝ սերմանող<sup>3</sup> վարդապետք, եւ հնձող<sup>4</sup> աշակերտք: Երկրորդ. սերմանող<sup>5</sup> քահանայք, եւ հնձող՝ ժողովուրդք: Երրորդ. սերմանող՝ տեսականք, եւ հնձող՝ գործնականք: Չորրորդ. սերմանող Հոգին, զոր ինչ իմանայ եւ կամի եւ տեսանէ եւ լսէ, եւ կրող եւ հնձող մարմինն, եւ սոցա ասէ՝ ի միասին ցնծասցեն:

### Զի ի միասին է փառք<sup>6</sup>

Բան. «Յայսմ իսկ<sup>7</sup> է բանն ճշմարիտ» (Յովի. Դ 37):

Մեկնութիւն. Չորս մտաւք է. նախ՝ ընդդէմ երկրի է, զի որ այլք սերմանեն եւ այլք հնձեն, տրտմին սերմանողք եւ ցնծան հնձողք: Իսկ այս ճշմարիտ է, զի երկուքն ի միասին ցնծան:

Երկրորդ. գոյ<sup>8</sup> ի յերկրի, որ մինն աշխատի եւ սերմանէ եւ ժողովէ, իսկ մինն յափշտակէ եւ վայելէ, որք են զրկողք: Իսկ աստ արդար է, զի ի միասին վայելեն:

Երրորդ. ի մէջ հրէիցն առակաւ ասիւր բանս այս<sup>9</sup> յորժամ ոք աշխատանաւք վասն իրաց ինչ ցաւէր, եւ միւսն վայելէր զնորայն, ասէին՝ մինն սերմանէ, եւ միւսն<sup>10</sup> հնձէ, իսկ այս բանս ճշմարտեցաւ ի վերայ հոգեւոր սերմանողաց եւ հնձողաց:

Չորրորդ. ինքն Տէրն ասէ. «Այլք վաստակեցին առաւել, եւ դուք ինձէք բազումս, նոցա առաւելն ձեզ, եւ ձեր բազումդ՝ նոցա» (հմնտ. Յովի. Դ 38): Եւ այս է բանն ճշմարիտ, քանզի նախահարքն եւ մարդարէք յոյժ վաստակեցին՝ աւետարանելով զգալուստն Քրիստոսի, վասն այն ասէ. «Այլք վաստակեցին, եւ դուք ի վաստակս նոցա մտէք» (Յովի. Դ

<sup>1</sup> Ը կատարեալ

<sup>2</sup> Ա Յ սերմանող

<sup>3</sup> Ա Յ չեք

<sup>4</sup> Ա հնձող

<sup>5</sup> Ը սերմանող

<sup>6</sup> Ը փառքն

<sup>7</sup> Ա Յ Յայսմիկ

<sup>8</sup> Ը դարձեալ գոյ

<sup>9</sup> Ը առակ ասիւր այս բան

<sup>10</sup> Ա Յ մինն

38), այսինքն՝ զկատարումն մարդարէութեանց<sup>1</sup> նոցա քարոզեցէք:  
 Եւ գիտելի է, զի ասելն՝ ի միասին ցնծասցեն, երկու տարա-  
 կոյս լուծանէ. նախ՝ զի ոմանք ասեն, եթէ հոգիք նախ քան զդա-  
 տաստանն առնուն զփառս, աստ ասէ. «Ի միասին ցնծասցեն»:  
 Զնոյնս եւ առաքեալ ասէ յերայեցւոցն. «Աստուծոյ վասն մեր  
 լաւագոյն համարեալ, զի մի առանց մեր կատարեսցին» (Եբր. ԺԱ  
 40), այսինքն՝ մի՛ առաջինքն՝ առանց վերջնոցս, եւ մի հոգիքն՝ ա-  
 ռանց մարմնոցս: Երկրորդ. լուծանէ զտարակոյս ոմանց, որք ա-  
 սեն, թէ Աղամ չէր կերեալ ի պտղոյն մահու, այլ ի կենաց, եւ կամ  
 թէ՝ լինէր անդ աճումն, որպէ՞ս փոխելոց էին յերկինս, առանձին  
 թէ հասարակ: Ասէ աստ այնմ լուծումն, թէ ի միասին ցնծասցեն,  
 որպէս աստ եղեւ, նոյնպէս անդ լինելոց էր:

Բան. «Եւ ի քաղաքէն յայն<sup>2</sup> բազումք հաւատացին» (տե՛ս Յովի. Դ 39):

ՄԵԼՈՒԹԻՒՆ. Երեք միտք յայտնի է ի մեկնիչդ<sup>3</sup>: Դարձեալ  
 վկայութիւն այսմ կնոջ հաւատալի է վասն կրկին պատճառի.  
 նախ՝ զի կինն ընդդէմ պատուոյ եւ հարկեաց իւրոց ասէր վասն  
 նախանձու ճշմարտութեան: Երկրորդ. զի այնու յայտնէր, որ  
 Քրիստոս զծածուկս նորա յայտնեաց, սակայն վկայութիւնս այս<sup>4</sup>  
 ոչ կատարելապէս հաւատացոյց զսամարացիս<sup>5</sup>, այլ կարողու-  
 թիւն<sup>6</sup> հաւատոց նոցա ի Քրիստոսէ եղեւ, վասն այն աղաչէին լի-  
 նել առ նոսա, զի առաւել եւս ուսցին: Եւ վասն այն լուսաւ նոցա,  
 զի գիտէր զաւգուտն, որ եղեւ նոցա, զի որք ոչ հաւատացին բա-  
 նից կնոջն, հաւատացին բանիցն Քրիստոսի:

Բան. «Ասէին ցկինն. “Ոչ վասն քո խաւսիցդ հաւատամք<sup>6</sup>”» (տե՛ս Յովի.  
 Դ 42):

ՄԵԼՈՒԹԻՒՆ<sup>7</sup>. Որպէս փոքր լոյսն աներեւոյթ լինի առաջի  
 մեծ լուսոյն, նոյնպէս եւ աստ եղեւ:

### Հաւատք սամարացւոց

Բան. «Գիտենք» (Յովի. Դ 42):

ՄԵԼՈՒԹԻՒՆ. Այսինքն՝ հաստատ հաւատամք, եւ հաւատալն  
 է հետեւիլ ճշմարտութեան, զի հաւատն հիմնաւորի ի վերայ

<sup>1</sup> A B մարդարէութեան

<sup>2</sup> B այն

<sup>3</sup> A B չիք

<sup>4</sup> B C ընդ զսամարացիս

<sup>5</sup> A կատարելութիւն

<sup>6</sup> A չիք

<sup>7</sup> B չիք

ճշմարտութեան<sup>1</sup> Քրիստոսի: Դարձեալ գիտելն գտանել լսի, եւ դարձեալ հաւատն քան զգիտութիւն հաստատագոյն ստուգութիւն ունի, որոյ նշան է, զի հաւատացեալն վասն հաւատոյն զմահ ի յանձն առնու, եւ ոչ իմաստասէրն՝ վասն գիտութեան<sup>2</sup>:

Բան. «Եթէ դա է ճշնարտիւ փրկիչ<sup>3</sup> աշխարհաց» (Յովի. Դ 42):

Մեկնութիւն. Աստանաւր սամարացիքն երեք իրս խոստովանեցան ի Քրիստոս. նախ՝ եղական միութիւն եւ բարձրութիւն՝ ասելով՝ Սա է: Երկրորդ. փրկական ներգործութիւն՝ ասելով՝ փրկիչն: Երրորդ. հասարակաբար խնամարկութիւն՝ ասելով՝ աշխարհաց, զի ոչ միայն հրէից, այլ ամենայն աշխարհի եղեւ փրկիչ:

### Դարձեալ այլաբանութիւն Հնձոց

Դարձեալ գիտելի է ի վերայ առաջնոց մտացն, զի չորեսին ամիսքն հոգեւորապէս նշանակեն զչորս ընթացս շնորհաց մինչեւ ի հունձս յաւիտենական կենացն, որպէս չորս են ընթացք մարմնաւոր որայից. նախ՝ արձակումն արմատոցն ի խոր: Երկրորդ. բուսոցն յերկրէ բողբոջումն: Երրորդ. հասկաց արձակումն եւ ձեւացումն: Չորրորդ. պաղոյն ի նմանէ կատարելապէս հասումն, եւ ապա ի հնձել ձեռն արկեն<sup>4</sup>: Այսպէս եւ սերմն հոգեւոր, որ է Բանն Աստուծոյ, նախ արմատն Աստուծոյ<sup>5</sup> ի սիրտ մարդոյն հաւատով եւ սիրով, եւ յայնժամ մարդն այն մեռանի յաշխարհի եւ մեղաց, որպէս ասէ Պաւլոս. «Զոր սերմանես, ո՛չ կենդանանայ, թէ ոչ նախ մեռանիցի» (տես Ա Կորնթ. Ժ 36): Երկրորդ. ի վեր բողբոջէ կանաչ, այսինքն՝ առաքինութեան գործ, եւ յորժամ այս մինչեւ ի վեր աճեցեալ կատարի, յայնժամ լինի հասկ, այսինքն՝ Երկնայնոց փափագումն եւ<sup>6</sup> վերամբարձումն մտաց, եւ ապա լինի ցորեան ատոք ի հասկին, այսինքն՝ աղաւթից եւ մտաց տեսութիւն:

Նոյնպէս եւ ըստ այլ իմն յեղանակի այսու նշանակի չորս ընթացք հին ժողովարանին մինչեւ ի հունձս շնորհացն Քրիստոսի. նախ՝ արմատն է բնական աւրէնքն: Երկրորդ. բոյսն աւրէնքն Մովսիսի մինչեւ ի ժամանակս Դաւթի մեծացաւ: Երրորդ. ի ժամանակս մարգարէիցն հասկ արձակեաց: Եւ ապա չորրորդ. յղացաւ

<sup>1</sup> Բ չեք զի հաւատն ... ճշնարտութեան

<sup>2</sup> Ը իւրոյն գիտութեան

<sup>3</sup> Ա Բ Ը ճշնարիտ փրկիչն

<sup>4</sup> Ա ձեռնարկեն

<sup>5</sup> Ը արմատանայ

<sup>6</sup> Բ ի

զկատարեալ ցորեանն զՔրիստոս եւ զառաքեալսն, որովք վերստին միւսանգամ սերնանեցաւ յաշխարհ։

**Այսքան առ այս:**

Բան. «Եւ յետ երկուց աւուրց ել անտի» (Յովի. Դ 43):

ՄԵԼՈՒԹԻՒՆ. Զիա՞րդ է, զի երկու աւր միայն զսամարացիսն դարձոյց եւ ի գաւառ իւր զբազում աւուրս կացեալ զսակաւս դարձոյց։

### Վասն մարդարէից

**Ասէ,** զի ինքն Յիսուս վկայեաց, թէ՝ «Մարգարէ ի գաւառի իւրում պատիւ ոչ ունի» (տես Յովի. Դ 44), եւ յայտնի է այս ի մարդարէիցն, զի եղիա ոչ միայն ի Թեզբէ, այլ յամենայն հսրայէլ ոչ ընկալան, վասն այն գնաց յերկիրն Սիրոնի ի գեղ մի Սարեփիթա, առ կին մի այրի, զորոյ զորդին յարոյց (հմնտ. Գ Թագ. ԺԵ): **Ասեն ոմանք,** թէ Յունան մարդարէն էր մանուկն այն։ Սոյնպէս եւ ոչ զերեմիաս Թովթ ընկալաւ, եւ ոչ զեղիսէէ, սոյնպէս եւ զՍամուէլ Հուամա ոչ ընկալաւ, սոյնպէս ժողովուրդն զՄովսէս չընկալաւ, սոյնպէս եւ Հրէայքն զՔրիստոս չընկալան։

Եւ այս լինի վասն չորս պատճառի. նախ՝ վասն նախանձու ընկերացն, զի վասն ապականեալ բնութեանս բուսաւ ի մէջն նախանձ, որ ամենայն արուեստագէտ զհամարուեստս իւր ատէ, որպէս դարբին՝ զդարբին, եւ եղբայրն<sup>1</sup> զեղբայր, վարդապետ՝ զվարդապետ եւ այլն, զի նման եւ հաւասարն ատեն զմիմեանս եւ ոչ աննման եւ անհաւասարն։ Երկրորդ. զի մինն ի միւսոյն յանդիմանի, իսկ առաւել մարդարէն յանդիմանէ զանկարգութիւնս այլոց, վասն այն ատեն զնա, ըստ այնմ՝ «Ատեցին զյանդիմանիչս ի դրունս իւրեանց» (տես Անովս Ե 10): Երրորդ. զի առաւել սիրեն զնոր իրս, քան զհին եւ զծանաւին, որպէս ի կերակուրս է տեսանել, յորժամ բազում ուտէ՝ տաղտկանայ, եւ զոր առ ձեռն պատրաստ ունի մարդ, անարդ համարի եւ նուազ, թէպէտ պատուական իցէ։ Զորրորդ. վասն տղայութեան հասակին տեսանելոյն եւ գործոյն անմտութեան ուրանան զշնորհքն, որ յետոյ հանդիպեցան նմա։

Դարձեալ զիտելի է, զի Յիսուս դառնալով ի Գալիլեայ, ո՛չ գնաց ի Նազարեթ գաւառ իւր, զորոյ զպատճառն ցուցանէ Աւետարանն՝ ասելով. «Զի ինքն իսկ<sup>2</sup> Յիսուս վկայեաց» (Յովի. Դ 44), այ-

<sup>1</sup> Ը եղբայր

<sup>2</sup> Ա Յ Հեք

**սինքն՝ նախ վկայեալ էր, որպէս Ղուկաս գրէ, թէ.** «Մարգարէ յիւրում զաւարի պատիւ ոչ ունի<sup>1</sup>» (Ղուկ. Դ 24, Մատթ. Ժ 57, Մարկ. Զ 4), **Քրիստոս այժմ ոչ գնաց ի Նազարեթ, զի նախ գնաց անդ եւ արհամարհեցաւ, յորժամ կամեցան զնա գահավէժ առնել, այլ չոգաւ ի միւս մասն գալիլեացւոց եւ անդ ընկալան զնա պատուով, որպէս ասէ.**

Բան. «Այլ յորժամ եկն նա ի Գալիլեայ, ընկալան» (Յովհ. Դ 45):

**Մեկնութիւն. Այսինքն<sup>2</sup> հաւատալով<sup>3</sup> զնա իբրեւ զՔրիստոս յԱստուծոյ առաքեալ ընդունելով:**

Բան. «Զի տեսեալ էին զնշանսն, զոր արար յերուսաղէմ<sup>4</sup>» (տես Յովհ. Դ 45):

**Մեկնութիւն. Ցուցանէ, թէ ի մէջ նոցա ոչ արար նշանս, այլ յերուսաղէմ՝ ի տաւնին, յորժամ նիկողիմոս վարդապետն հաւատաց, նոյնպէս եւ նոքա հաւատացին:**

Բան. «Զի նոքա եկեալ էին ի տաւնն» (տես Յովհ. Դ 46):

**Մեկնութիւն. Որպէս ասացաք յառաջագոյն, թէ ամենայն հրէյքն պարտական էին գալ ի տաւնն յայն:**

### ՈՐՔԱ<sup>5</sup> Է ԳԱԼԻԼԻԱ

**Հարց. Քանի՞ է Գալիլիա:**

**Պատասխան. Թուի, թէ երեք է. նախ՝ Գալիլիա լեառն, որ է մերձ յերուսաղէմ, ուր ժամադիր եղեւ նոցա Յիսուս: Երկրորդ. Գալիլիա հրէյց, ուր Կանա գալիլեացւոցն էր եւ Նազարէթ, եւ Կափառնայում մայրաքաղաք է նոցա: Երրորդ. Գալիլեա հեթանոսաց, որպէս ասէ Եսայի. «Որ նստէր ի խաւարի, լոյս ծագեաց» (հմնտ. Եսայի Թ 2), կամ Երկու կողմ է գալիլեացւոց Երկիրն. մինն հրէյց եւ մինն հեթանոսաց կոչի:**

**Հարց. Վասն է՞ր գալիլեացիքն արհամարհեալ էին ի մէջ նոցա:**

**Պատասխան. Վասն երկուց. նախ՝ զի սահմանակիցք էին հեթանոսաց եւ ծոյլք: Երկրորդ. զի ծեքական էր լեզուն, ըստ այնմ՝ «Լեզու քո յայտ առնեն զքեզ» (հմնտ. Մատթ. Ի 2 73):**

### ՎԱՍՆ ԹՎԱԳԱԼՐԱՊԱՂՆԻՆ

Բան. «Թագաւորազն նի» (Յովհ. Դ 46):

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> B չեք

<sup>3</sup> C պատուելով

<sup>4</sup> A B չեք

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Զի ի ցեղէն Հերովդէի էր, կամ զի իշխանութիւն ինչ ունէր ի հռոմայեցւոցն, զինչ եւ իցէ՝ հեթանոս էր:

Եւ վասն երեք պատճառի ոմանք նոյն ասեն զսա եւ զհարիւրապետն, զոր Մատթէոսն ասէ (հնմտ. Ը 5-13). նախ՝ զի իշխան էին, երկրորդ՝ ի Կափառնայումն, երրորդ՝ հեթանոս:

**Այլ** ոչ է նոյն վասն վեց պատճառի, որպէս ասէ Ոսկերեանն. նախ՝ զի նա հրաժարէր զերթալն Փրկչին ի տունն՝ ասէ. «Զեմ բաւական, այլ ասա բանիւ» (հնմտ. Սատր. Ը 8), վասն որոյ եւ գովեցաւ, իսկ սա զերթալն աղաչէր եւ ոչ չոգաւ, այլ յանդիմանեցաւ: Երկրորդ. նա ի Կափառնայումն հանդիպեցաւ, յորժամ էջ ի լեռնէն, իսկ սա՝ յորժամ դարձաւ ի սամարացւոցն եւ եկն ի Գալիլեայ ի Կանայ: Երրորդ. վասն որակութեան ցաւոցն, զի աստ ջերմ ասէ եւ անդ՝ անդամալոյծ: Զորրորդ. վասն դիմաց հիւանդին. այն ծառայ էր, եւ այս՝ որդի: Հինգերորդ. վասն կերպի աղաչողացն՝ անդ. «Զծերսն առաքեաց» (տես Ղուկ. Է 3), ասէ Ղուկաս, եւ աստ՝ ինքն եկն թագաւորազն: Վեցերորդ. ի պատւոյն, զի նա հարիւրապետ էր, եւ սա՝ թագաւորազն<sup>1</sup>: Ուրեմն յայտ է, զի այլ էր հարիւրապետն, զոր Մատթէոս եւ Ղուկաս յիշեն, եւ այլ՝ թագաւորազն, զոր Յոհաննէս յիշէ<sup>2</sup>:

Բան. «Իբրեւ լուաւ, թէ Յիսուս եկեալ է ի Յրէաստանէ ի Գալիլեայ» (Յովի. Դ 47):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Յուսացաւ գալ առ նա եւ առնուլ զառողջութիւն որդւոյն, քանզի Քրիստոս յայլ գեւզ կեայր, այսինքն՝ ի Կանայ:

Բան. «Եւ աղաչէր, զի իջցէ եւ բժշկեցէ» (Յովի. Դ 47):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Քանզի Կափառնայում ի դաշտի եւ նուաստագոյն է տեղեաւ քան զ Կանայ<sup>3</sup>:

### Վասն հաւատոց եւ նշանաց

Բան. «Ասէ ցնա Յիսուս. «Եթէ ոչ նշանս ինչ եւ արուեստս տեսանէք, ոչ հաւատայք»» (Յովի. Դ 48):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Զի Աստուած կամի զմիտս հաւատացելոց յայնպիսի կատարեալ<sup>4</sup> հաւատն հանել, զի մի կարաւտասցի սքանչելեաց, որպէս այժմ ի յեկեղեցի մարմնական սքանչելիք ոչ լինի վասն կատարեալ հաւատոց:

<sup>1</sup> С չիք Վեցերորդ ... թագաւորազն

<sup>2</sup> С Վեցերորդ. ի պատուոյն, զի նա հարիւրապետ եւ սա թագաւորազն

<sup>3</sup> С զկանա

<sup>4</sup> С այնպէս ի կատարեալ

Եւ գիտելի է, զի երեք կերպիւ է հաւատոն. նախ՝ ի շնորհացն Աստուծոյ, յորժամ ծածկապէս զմիտու լուսաւորէ, որպէս մարդարէքն եւ առաքեալքն եւ Պետրոսի, որ դաւանեաց զՔրիստոս: Երկրորդ. ի ձեռն լրոյ, որպէս ասէ Պաւղոս. «Զի թէ ոչ լուիցեն, ո՛չ հաւատացեն» (հնմտ. Յօնմ. Ժ 17): Երրորդ. սքանչելեաւք, յորժամ տեսանեն եւ հաւատան:

Արդ, ի կողմանէ հաւատոյն միեւնոյն է, զի ի ճշմարտութիւն հիմնաւորի, եթէ սքանչելեաւք, եւ եթէ Քրիստոսի լսելով, զի ի նոյն ճշմարտութենէն յառաջ գայ սքանչելիք եւ քարոզութիւնք<sup>1</sup> եւ շնորհք, այլ ի կողմանէ հաւատացելոցն զանազանի, զի բռնութեամբ հաւատայ, որ սքանչելիք խնդրէ, քան որ բանիւն է:

### Զի յանդիմանեաց զթագաւորազն

Իսկ աստ, որ սաստիւ յանդիմանէ զթագաւորազն վասն չորից. նախ՝ զի ոչ ունէր բոլոր եւ սերտ հաւատ<sup>2</sup> առ Քրիստոս, որպէս ցուցանէ մեկնիչդ չորս կերպիւ<sup>lxiii</sup>: Երկրորդ. որպէս ասեն ոմանք, թէ՝ հաւատայր Քրիստոսի, զի ողջացուցանէր զորդին, սակայն այնպէս գիտէր, թէ ոչ առանց մարմնոյ մերձաւորութեամբ, վասն որոյ աղաչէր իջանել ի տունն: Երրորդ. յուսայր ի Քրիստոս առողջութիւն տալ որդւոյն, վասն որոյ ի հեռուստ եկն, այլ ոչ հաւատայր ի յարուցանել, թէ մեռեալ էր, վասն որոյ ասէ. «Էջ մինչ չեւ մեռեալ իցէ մանուկն իմ<sup>3</sup>»: Չորրորդ. զի բազում անգամ տեսեալ էին զնշանս եւ լուեալ եւ ոչ հաւատացեալ, վասն որոյ այժմ զսա եւ զհրէայսն ի միասին յանդիմանէ իբրեւ զոչ տեսեալ:

Բան. «Ե՛րթ, որդին քո կենդանի է» (Յովհ. Դ 50):

Մեկնութիւն. Այսինքն՝ ողջացեալ է, զի ապրին իբրեւ զհրէւանդ մերձ է ի մահ, որպէս զոչ ապրել,<sup>4</sup> եւ թէ յորժամ թերի էր ի հաւատոն, վասն է՞ր բժշկեաց: Ասէ Ոսկէբերանն, զի ետես կանխատես զաւրութեամբն, զոր յետոյ լինելոց էր ի հաւատոցն: Իսկ այլք ասեն, եթէ կրկին անգամ աղաչեաց եւ խոնարհութեամբ, վասն այն լուալ: Զայն ցուցանէ, թէ հանապազորդ խնդրելն լսելի առնէ զհայցուածն, վասն որոյ ասէ. «Յաւատաց այրն բանին, զոր ասաց ննա Յիսուս» (Յովհ. Դ 50), այսինքն՝ զի կենդանի վասն առողջութեան ասաց:

<sup>1</sup> С չեք եւ քարոզութիւնը

<sup>2</sup> С սերտ եւ բոլոր հաւատ

<sup>3</sup> А С չեք մանուկն իմ

<sup>4</sup> С ապրեալ

<sup>5</sup> А В չեք ննա Յիսուս

Եւ վասն երեք պատճառի Քրիստոս ոչ կամեցաւ իջանել ընդ նմա. նախ՝ առ ի ցուցանել, զի Քրիստոս բացեայ գոլով մարմնով, Աստուածութեամբն մերձ գոյր ընդ ամենայն տեղիս: Երկրորդ. ի ցուցանել զխոնարհութիւն իւր, զի ընդունայն համարէր զմարմնաւոր ինչս<sup>1</sup> եւ զփառս աշխարհիս, զոր կարծէին ոմանք տալ նմա թագաւորագինն վասն որդւոյն առողջութեան<sup>2</sup>: Երրորդ. յուսուցանել<sup>3</sup> զմեզ, թէ ոչ է պարտ առնել սքանչելիս կամ այլ ինչ գործ աստուածային վասն երկիւզի եւ սիրոյ իշխանաց:

Բան. «Եւ մինչ դեռ իջանէր, ընդ առաջ եղեն [նմա] ծառայքն նորա» (Յովի. Դ 51):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Վասն կրկին պատճառի. նախ՝ զի ցուցեն զմտերմութիւն իւրեանց եւ զուրախութիւն վասն առողջութեան տեառն որդւոյն: Երկրորդ. աւետիս տալ եւ ուրախացնել զտէրն իւրեանց, թէ մանուկն նորա կենդանի է:

Բան. «Յարցանէր ցնոսա վասն ժամուն, յորում բժշկեցաւ» (տես Յովի. Դ 52):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Զայս կամէր իմանալ, թէպէտ համբաւէր առողջութիւն որդոյն, թէ պատահմա՞մբ էր առողջութիւն որդւոյն<sup>4</sup>, թէ ի սքանչելեացն Քրիստոսի<sup>5</sup>, զի գեռ անկատար էր ի հաւատն:

Բան. «Ասեն ցնա. «Երէկ, յեւթներորդ ժամուն եթող զնա ջերմն»» (Յովի. Դ 52):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Եւ այնու ծանեաւ, թէ սքանչելեաւք էր առողջացեալ, որպէս ասէ.

Բան. «Գիտաց հայր նորա, թէ յայնն ժամու, յորում ասաց Քրիստոս<sup>6</sup>, առողջացաւ որդին» (տես Յովի. Դ 53):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Գիտէր այրն զժամանակն<sup>7</sup> եւ ի բանից ծառայիցն եւս ծանեաւ, թէ մի եւ նոյն ժամն էր: Դարձեալ գիտելի է, թէ ծառայք նորա ի մէջ ճանապարհին պատահեցան նմա եւ այնու եւս ծանեաւ, զի ի նոյն ժամանակի, յորժամ ել նա ի Քրիստոսէ, եւ նոքա ի տանէն ելեալք էին: Եւ չորսս այս ի նոյն եւթներորդ ժամուն եղեւ, այսինքն՝ հրամանն Քրիստոսի եւ առողջութիւն մանկանն եւ ելանել թագաւորագնին ի Քրիստոսէ եւ ծառայքն ելին ի տանէն:

<sup>1</sup> Ը փառաւորիչս

<sup>2</sup> Ը ողջութեան

<sup>3</sup> Ը ցուցանել

<sup>4</sup> Ա Բ չեք թէ պատահմա՞մբ ... որդւոյն

<sup>5</sup> Ը թիսուսի

<sup>6</sup> Ա Բ չեք ասաց Քրիստոս

<sup>7</sup> Ը զժամն

Բան. «Եւ հաւատաց ինքն եւ ամենայն տուն իւր» (Յովի. Դ 53):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ. Այսինքն՝ կատարելագոյն հաւատաց նա:**

### Հաւատ թագաւորազնին

Քանզի այն թագաւորազն երեք աստիճան հաւատոյ ունէր գկնի միմեանց. նախ՝ զի սակաւ աղաչեաց զՔրիստոս ի տունն<sup>1</sup>: երկրորդ. բարձրագոյն, յորժամ հաւատաց բանին Քրիստոսի եւ գնաց: Երրորդ. գերագոյն, յորժամ լուաւ ի ծառայիցն:

Եւ յայսմանէ գիտելի է, զի հաւատն աստիճանք ունի, եւ ի սոցանէ է<sup>2</sup> եւ այլ առաջինութիւնքն, որոց սկիզբն է հաւատն, այսինքն՝ նախ՝ սկիզբն, երկրորդ՝ աճումն, երրորդ՝ կատարումն, որպէս հաւատոցն, նոյնպէս յուսոյ, նոյնպէս սիրոյ եւ ամենայն առաջինութեանց:

### Վասն առողջութեան

Իսկ որ ասէ մեկնիչն<sup>3xiv</sup>, թէ եթող զնա ջերմ<sup>3</sup> եւ այլ ոչ կարծիս ունէր ախտին. նախ սովորութիւն է՝ այսաւը թողու ջերմն եւ այլ վերստին<sup>4</sup> դառնայ, իսկ մանուկն յանկարծակի առողջացաւ: Երկրորդ. բժիշկ սակաւ-սակաւ տան զառողջութիւն, իսկ նա կատարեալ առողջացաւ, զի աստուածային զաւրութեան<sup>5</sup> էր հրաշագործութիւն: Եւ գիտելի է, զի հիւանդութիւն եւ առողջութիւն մարմնոյ սակաւ-սակաւ աճեն, որպէս առաւաւտ եւ երեկոյ, եւ բժիշկ յորժամ զցաւն բուժէ ի ձեռն փահրէզի<sup>6</sup> եւ շարբաթի, ի կատարեալ առողջութիւն տանի, նոյնպէս մեղք, որպէս խաւար սակաւ-սակաւ աճէ ի մարդն, ըստ այնմ. «Փոքր ի շատէ եղեւ կորուստն իսրայէլի» (հնմտ. Յօն. ԺԱ 25), սոյնպէս արդարութիւն որպէս լոյս փոքր-փոքր աճէ, վասն այն քահանայքն ի խոստովանելն զախտ մեղացն բուժեն ի մարդոյն<sup>7</sup>, իսկ ապաշխարութեամբ սակաւ-սակաւ զարդարութիւն շնորհեն:

Բան. «Զայս դարձեալ Երկրորդ նշանս արար Յիսուս<sup>8</sup>» (Յովի. Դ 54):

<sup>1</sup> Սակաւ զի աղաչեաց զՔրիստոս իջանել ի տունն

<sup>2</sup> Ըեթէ

<sup>3</sup> Ծերմն

<sup>4</sup> Եւ այլ ոչ կարծիս ուներ ախտին վերստին

<sup>5</sup> Կօրութեամբն

<sup>6</sup> Բ բահրէզի

<sup>7</sup> Կ մարմնոյն

<sup>8</sup> Բ չիք Յիսուս

**ՄԵԼԻՆՈՒԹԻՒՆ.** Թո՛ղ զայլ տեղաց նշանսն, զի առաջին զջուրն ի գինի փոխեաց, եւ այս երկրորդ նշան է ի Կանայ գալիլեացւոց, որպէս ասէ.

Բան. «Եկեալ ի Յրեաստանէ ի Գալիլեայ» (Յովի. Դ 54):

**ՄԵԼԻՆՈՒԹԻՒՆ.** Այսու ցուցանէ, թէ եւ յայլ տեղիս սքանչելիս արար: Եւ աստ կատարումն չորրորդ ծածկագիտութեան Քրիստոսի, զի անչափ է ամենայն ուրեք եւ սրտագէտ:

**Առաջին.** որ յայտնեաց զծածուկ սամարացի կնոջն վասն հինգ արանցն փոխելոյն: Երկրորդ. որ յայտնեաց զինքն նմա՝ ասելով. «Ես եմ, որ խաւսիմս ընդ քեզ» (Յովի. Դ 26): Երրորդ. որ նախագէտ եղեւ գալստեանն սամարացւոցն ի հաւատու: Չորրորդ. աստ<sup>1</sup>, որ յարոյց զորդի թագաւորագնինն ի բացուստ:

### Այլաբանութեամբ մելինութիւն

Եւ զայս սքանչելիքս այլաբանութեամբ մեկնեն վարդապետք, զի առաջին սքանչելիքն ի Գալիլեա, յորում զջուրն գինի<sup>2</sup> արար ի վեց թակուկացն: Նոյնպէս յառաջին գալն Քրիստոսի ի վեց դարուն զազգս հեթանոսաց դարձոյց յԱստուած գիտութիւն, իսկ երկրորդ՝ գալոց է առողջացուցանել զորդի թագաւորագնինն, այսինքն՝ զժողովուրդս հրէից, որ որդի ասի Աբրահամու եւ մերձ ի մահ հասեալ, յորժամ «Լրումն հեթանոսաց մտցէ, յայնժամ<sup>3</sup> ամենայն հսրայէլ կեցցէ» (Յովմ. ԺԱ 25-26): Եւ եւթներորդ ժամքն ջերման եւթն փոփոխմունք են ընդդէմ եկեղեցւոյ Սրբոյ. առաջին՝ կիրք մեղացն է ի սատանայէ, որ ի պատկեր այլազգոյն չերովդէի հակառակի եկեղեցւոյս<sup>4</sup> Քրիստոսի: Երկրորդ կիրք. հրէայքն՝ Քրիստոսի եւ սուրբ առաքելոցն: Երրորդ. հեթանոսք, կուապաշտք եւ չար թագաւորք<sup>5</sup>, յորոց մարտիրոսացան բազումք: Չորրորդ արտաքին իմաստունք, որք ընդդէմ խաւսեցան Քրիստոսի եւ եկեղեցւոյ նորին: Հինգերորդ. հերձուածողացն դասք, որ յանմարմին էութիւն եւ ի մարդեղութիւն<sup>6</sup> հայհոյութիւն<sup>7</sup> խաւսեցան: Վեցերորդ. այլազգիք, այժմ կարապետ նեռինն, հակառակին Քրիստոսի եւ եկեղեցւոյ նորին: Եւթներորդ<sup>8</sup>. նոյն

<sup>1</sup> Բ չիք

<sup>2</sup> Ա Յ ի գինի

<sup>3</sup> Ը ապա

<sup>4</sup> Ը եկեղեցւոյս

<sup>5</sup> Ը եւ կոսապաշտ չար թագաւորք

<sup>6</sup> Ը եւ ի մարդեղութիւն

<sup>7</sup> Ը Տեառն հայհոյութիւն

<sup>8</sup> Բ չիք Եւթներորդ

ինքն նեռն, որ ազգեցութեամբն սատանայի է, զոր Տէր Յիսուս զնա եւ զսոսա սատակեսցէ Հոգւով բերանոյ իւրոյ: Եւ յայնժամ ամենայն հրէայք հաւատասցեն ի Քրիստոս, եւ ամենայն լեզու խոստովան լիցի գԱստուծոյ:

Դարձեալ եւ այլ կերպիւ տեսանի որդի թագաւորագինն, որ է ջերմոտ՝ նշանակէ զամենայն մեղաւորս: Եւ եւթ ժամ ջերմանն նշանակեն զեւթն զլխաւոր մեղս եւ կամ զարմատս նոցա:

Դարձեալ՝ առաջին ժամն է, որ փորձութիւն<sup>1</sup> մեղաց մինչ ի սիրտ մարդոյն ժամանէ եւ հաճութեամբ սրտին ընկալեալ լիցի: Երկրորդ ժամն՝ կատարեալ հաւանումն մտաց: Երրորդ. արտաքին գործ մեղաց: Չորրորդ. հանապազ սովորութիւն մեղաց: Հինգերորդ<sup>2</sup>. է յայտնի ներգործութիւն մեղացն: Վեցերորդ<sup>3</sup>. է պատճառ յաւդել եւ խնամ տանել վասն մեղաց, յորժամ յանդիմանի: Եւթներորդ<sup>4</sup>. է խրատողաց հալածումն եւ տարածումն մեղաց իւրոց յայլս: Եւ յորժամ յայս եհաս մերձ<sup>5</sup> ի մահ, զի թէ ոչ ի Քրիստոսէ զարմանալի եւ անսովոր սքանչելեաւք բժշկի, մերձ է ի յաւիտենական մահն, յորոց փրկեսցէ զմեզ Քրիստոս Աստուած՝ յոյսն մեր, եւ նմա փառք յաւիտեանս: Ամէն:

Եւ աստ աւարտումն առաջին հատորի մեկնութեան Աւետարանիս Յոհաննու, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս<sup>6</sup>. Ամէն:

<sup>1</sup> A B թողութիւն

<sup>2</sup> C հինգն

<sup>3</sup> C վեցն

<sup>4</sup> C եւթն

<sup>5</sup> C մերձ է

<sup>6</sup> C աւրհնելոյն յաւիտեանս

## Գլուխ Ե

Երկրորդ հատոր մեկնութեանս

Հինգերորդ գլուխ ըստ կարգի եւ<sup>1</sup> առաջին՝ ըստ հատորի:

Բան. «Յետ այսորիկ տաւն էր հրեից» (Յովի. Ե 1):

**Մեկնութիւն.** Յառաջագոյն ճառեաց աւետարանիչս վասն հոգեւոր եւ վերստին ծննդեանն, աստանաւոր ճառէ զբազմութիւն պարգեւացն Աստուծոյ, որք հետեւին վերստին ծննդեանն<sup>2</sup>: Զոր աւրինակ որդիք մարմնաւոր ծննդեան, ելեալք ի հաւրէ, ի նմանէ ունին կեանք եւ սնունդ եւ գիտութիւն, այսպէս լինի եւ ի<sup>3</sup> հոգեւոր ծնունդս, վասն որոյ աւետարանիչս նախ ճառէ աստ զկենդանական պարգեւսն: Երկրորդ. ճառէ զհոգեւոր սնունդն, յորժամ ասէ. «Յետ այսորիկ օնաց Յիսուս յայն կոյս ծովլւն» (Յովի. Զ 1): Երրորդ. ճառէ զուսումն եւ զվարդապետութիւն Քրիստոսի, յորժամ ասէ. «Յետ այսորիկ<sup>4</sup> Շրջէր Յիսուս ի Գալիեայ» (Յովի. Ե 1):

Եւ գիտելի է, զի որ ոք զուգի Աստուծոյ ներգործութեամք, Աստուած է, իսկ Քրիստոս սոյնպէս զուգի Աստուծոյ, ապա ուրեմն Աստուած է Քրիստոս:

Եւ զներգործութիւն Քրիստոսի ցուցանէ չորս կերպիւ.

**Առաջին.** անդամալուծին բժշկութեամբ:

Երկրորդ. յորժամ հալածէին, թէ ի շաբաթու բժշկէ: Պատասխանի ետ. «Դայր իմ մինչեւ ցայժմ գործէ, եւ ես գործեմ» (Յովի. Ե 17):

Երրորդ. յարութեամբն հասարակաց, զոր յերկար ճառէ:

Չորրորդ. վասն դատաւոր լինելոյն նորա:

Իսկ այժմ սկիզբն դնէ վասն առաջնոյն՝ ասելով. «Յետ այսորիկ տաւն էր հրեից» (Յովի. Ե 1): Տաւնս այս Պենտակոստէին է, որ հինգ տասան է յետ Զատկին: Եւ ամենայն ոք պարտական էր ի տարին երիցս ելանել յերուսաղէմ. նախ ի Զատկին, Երկրորդ՝ ի Պենտակոստն, որ էր նոցա տուչութիւն աւրինացն, եւ մեր գալուստ Հոգւոյն<sup>5</sup>, Երրորդ՝ ի տաղաւարահարսն<sup>6</sup> նոցա եւ մեր տաւն Սուլր

<sup>1</sup> B չիք

<sup>2</sup> C ծննդեանն

<sup>3</sup> C չիք ի

<sup>4</sup> A B չիք Յետ այսորիկ

<sup>5</sup> C չիք որ էր նոցա ... գալուստ Հոգւոյն

<sup>6</sup> B ի տաղաւար հարսն, C տաղաւարահարքն

Խաչին: Եւ ոմանք գտաղաւարահարացն<sup>1</sup> ասեն զայս տաւնս, վասն այն մեկնիչն զերկուսն յիշէ Պենտակոստէն եւ գտաղաւարահարքն<sup>lxx</sup>, եւ ոմանք ասեն, թէ մին ամ ի միջէ անցեալ Զատկին, որ ասաց եւ միւս Զատկին, որ դեռեւս ասէ վասն հացին աճման, այլ զայս մին ամս, որ ի մէջ է, զայն<sup>2</sup> ասեն, որ յետ մկրտութեան միոյ ամի զջուրն գինի արար ի հարսանիսն:

Բան. «Եւ ելեալ Յիսոս յԵրուսաղէմ» (Յովհ. Ե 1):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Նախ՝ ի պատիւ տաւնին, զի մի ասիցեն հակառակ գոլ: Երկրորդ. վասն բազում ժողովրդոցն՝ ուսուցանել զնոսա եւ նշանս ցուցանէ:

### Վասն Պրոպատիկէ աւազանին

Բան. «Եւ էր [յԵրուսաղէմ] ի Պրոպատիկէ աւազանին» (Յովհ. Ե 2):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Զաեղիքն ասէ, ուր արար զսքանչելիս, որպէս ի Զատկին արար խարազան չուանեայ եւ եհան ի տաճարէն, իսկ այժմ ի պրոպատիկէն զբժշկութիւն առնէ, որ էր աւազան, եւ անձրեւային ջուրք իջեալ ժողովէին անդր, եւ քահանայքն յառաջագոյն անդ լուանային զմիս անասնոց եւ զփորոտիսն, եւ ապա լուանային միւսանգամ եւս յանաւթ ի սրահ քահանայիցն՝ մերձ տաճարին, եւ ապա տանէին յայրել կամ յեփել<sup>3</sup>: Եւ թէպէտ այլ եւս անասունք բերէին անդ, այլ առաւել եւս ոչխար, եւ զմիսն ածէին ի լուացումն, վասն այն եւ աւազանս այս «յոչխարացն» ընկալաւ զանունն, զի պրոբատիկէն յունարէն ոչխարային լսի, եւ եբրայեցերէն «Բեթհեզդա» ասի, որ է՝ տուն ոչխարաց: Եւ թէպէտ Յոհաննէս զԱւետարանս յունարէն գրեաց, բայց զսորա անունն եբրայեցի Բեթսայիդա նոյն է եւ Բեթհեզդա՝ առ ի ծանուցանել զտեղին եւ յայտնի առնել: Իսկ Ոսկեբերանն «Ողորմութեան իջումն» ասէ, կամ «Հանգիստ», կարծեմ թէ այնպէս յսի ի յոյնքն, եւ կամ «գործոյն» ասէ, որ լինէին անդ հիւանդացն: Եւ սրահ ասի, զի ունէր զառ ինքն ծածկոյթ, թէպէտ եւ զորմունս ոչ ունէր, ի մին կողմանէ ունէր որմն զարտաքին պարիսպ տաճարին, եւ ի միւս կողմանէ սիւնք էին կանգնեալ եւ առ իքն ի վերայ սեանցն հաստատեալ:

<sup>1</sup> Յ զտաղաւարահարացն, Ը զտաղաւարացն

<sup>2</sup> Ա Յ զայս

<sup>3</sup> Յ այրել կամ Եփել

*Եւ սոյնպիսի հինգ<sup>1</sup> սրահս անդ կառուցեալ էին<sup>2</sup>, որպէս զի քահանայքն ընդ<sup>3</sup> բազում տեղիսն իջեն ի ջուրսն եւ լուասցեն զմիս զոհիցն:*

*Դարձեալ՝ զի սրահքն շինեալ էին վասն հանգստեան հիւանդաց, որպէս եւ ասէ.*

Բան. «Յորս անկեալ դնէր բազմութիւն յոյժ հիւանդաց կուրաց, կադաց, գաւացելոց, որ ակն ունէին ջրոցն յուզելոյ» (Յովի. Ե 3):

*ՄԵԼՈՆԻՔԻՆ<sup>5</sup>. Վասն կրկին պատճառի ախտաժէտքն անդ ժողովէին. նախ՝ վասն ողորմութեան, զի աղքատք էին:*

*Երկրորդ. վասն ջրոյն շարժման, զի հրեշտակ Տեառն<sup>6</sup> ըստ ժամանակին իջանէր<sup>7</sup> յաւազանն եւ յուզէր<sup>8</sup> զջուրն, եւ որ յառաջագոյն իջանէր յետ շարժման ջրոյն, առողջանայր ի հիւանդութենէն, յոր ինչ եւ ըմբռնեալ կայր ի ցաւս: Եւ այն, որ ասէ. «Ըստ ժամանակին», ցուցանէ, թէ սահմանաւ ի կարգեալ ժամանակն իջանէր, թէպէտ ոչ ասէ, թէ որքան ի տարւոջն կամ յամիսն:*

*Եւ աստ լինի չորս հարց.*

*Առաջին. Թէ վասն է՞ր այն լինէր:*

*Պատասխան. Ասեմք, թէ վասն երեք պատճառի.*

*Նախ՝ զի հսրայէլ յայնմ ժամանակի ոչ ունէր մարգարէս, զի բժշկէին զախտաժէտքն, որպէս եղիա եւ եղիսէոս: Զայս նոցա իսփոփումն եւ ի բժշկութիւն չնորհեաց Աստուած:*

*Երկրորդ. Ասեն ըստ պատմութեան, թէ անդ էր եղեալ փայտ խաչին Քրիստոսի<sup>9</sup>, ըստ ոմանց, թէ Սողոմոն եղ, եւ այլք, թէ քահանայքն յետոյ եղին, զի ձգեալ էր ի դրան տաճարին, եւ վասն զարդուց փայտին այն, զի մերձ էր ժամանակ բեւեռել ի նմա Փրկչին մերոյ եւ Աստուծոյ, որպէս հարսն զի զարդարեն ի ժամ պսակելոյն, վասն այն իջանէր հրեշտակն եւ կատարէր զբժշկութիւն:*

*Երրորդ պատճառ. զի աւրինակ լինէր այն աւազանիս մերոյ, որպէս ցուցանեմք յառաջիկայտ:*

<sup>1</sup> Բ անդ

<sup>2</sup> Կ այսպիսի հինգ պահըն անդ կառուցեալը էին

<sup>3</sup> Բ ի

<sup>4</sup> Ա Յորս անկեալ դնէր բազում կուրաց, կաղաց, գոսացելոց, որ ակն անէին, Բ Յորս անկեալ դնէին բազմութիւն կաղաց, գոսացելոց, որ ակն ունէին ջրոցն, Ծ Յորս անկեալ դնէին բազում յոյժ հիւանդաց, եւ այլն, Եւ ակն ունէին ջուրոցն յուզելոյ

<sup>5</sup> Բ չիք

<sup>6</sup> Կ չիք

<sup>7</sup> Բ հրեշտակ Տեառն իջանէր ըստ ժամանակին

<sup>8</sup> Ա Հ շարժէր

<sup>9</sup> Կ անդ էր փայտ խաչին Քրիստոսի եղեալ

Երկրորդ հարց. Վասն է՞ր հրեշտակն իջեալ շարժէր զջուրն:

Պատասխան. Վասն երկու պատճառի. նախ՝ զի այնու յայտնի լինէր իջումն հրեշտակին, եւ սքանչելիք բժշութեան ոչ լինէր պատահմամբ եւ ոչ բնական զաւրութեամբ ջրոյն, այլ զաւրութեամբն Աստուծոյ, որոյ հրամանաւն իջանէր հրեշտակն:

Երկրորդ. զի հրեշտակը այնու գիտէին, թէ երբ է ժամանակն իջանելոյն յաւագանն եւ բժշկելոյն:

Երրորդ հարց. Վասն է՞ր միայն յառաջագոյն իջեալն բժշկէր:

Պատասխան. Վասն չորս պատճառի. նախ՝ զի այնու սքանչելիքն պատուական երեւէր, որ միոյն լինէր, քան հասարակ: Երկրորդ. զի ցուցցէ, թէ սքանչելիքն այն կամաւրապէս եւ ազատութեամբ լինէր, եւ ոչ՝ բնական զաւրութեամբ ջրոյն<sup>1</sup>: Երրորդ. զի հիւանդք սպասեցեն աստուածային շնորհացն եւ առաւել հաճոյացին Աստուծոյ:

Չորրորդ. զի պարտ էր բազմութիւն սքանչելեացն, զի լիցի ի յայտնութեան փառացն Քրիստոսի<sup>2</sup>, եւ ոչ վայել էր յառաջագոյն եւ վասն այսմ պատճառի Յովաննէս Մկրտիչ ոչ արար սքանչելիմ<sup>3</sup>:

Այլեւ ըստ մտաց ցուցանէ երիս ինչ. նախ՝ զի յորժամ խափան լինէր բժշկութիւն հիւանդին խղճի մտացն, դատէր<sup>4</sup> զինքեանս եւ ի բարին յաւժարէին: Երկրորդ. զի ցուցցէ, թէ սակաւք են ընտրեալք, եւ բազում<sup>5</sup> դատապարտեալք: Երրորդ. զի ցուցցէ, թէ սակաւք են<sup>5</sup>, որ ի ջուր ապաշխարութեան իջանեն եւ սրբին ի մեղաց:

Չորրորդ հարց. Վասն է՞ր ամենայն հիւանդք ողջանային:

Պատասխան. Նախ՝ զի ամենայն հիւանդք եկեսցեն, զի թէ մին ազգ հիւանդն բժշկէր, այլքն ոչ գային: Երկրորդ. զի ցուցցէ զաստուածային զաւրութիւն, զի ոչ երբէք գտանի մին դեղ, որ զամենայն ախտս բժշկէ: Երրորդ. ի ցուցանել զզաւրութիւն մկրտութեան<sup>6</sup> սրբոյ աւագանին, որ սրբէ ոչ միայն զմի մեղս, այլ զամենայն:

<sup>1</sup> С չիք Երկրորդ ... ջրոյն

<sup>2</sup> В զի յայտնի փառացն Քրիստոսի

<sup>3</sup> С սքանչելիս: Երրորդ պատճառ. զի ցուցցէ եթէ սքանչելիքն այն կամաւրապէս եւ ազատութեամբ լինէր եւ ոչ բնական օրութեամբ ջրոյն

<sup>4</sup> В ասէր

<sup>5</sup> В թէ սակաւք են ընտրեալք եւ բազումք դատապարտեալք

<sup>6</sup> В սրբոյ մկրտութեան

### Թէ աւրինակ է աւազանիս

**Այլ այժմ ասասցուք, թէ որպէս է աւրինակ աւազանիս մերոյ:**  
**Ասեմք, թէ չորս իրաւք.**

Նախ՝ որպէս այն աւազան մաքրէր զմարմինն ի ցաւոց, սոյն-պէս եւ մերս աւազան մաքրէ զհողի եւ զմարմին ի սկզբնական եւ ի ներգործական մեղաց, որպէս մարմինն Աբգարու եւ Կոստանդիանոսի բժշկեցաւ:

**Երկրորդ. որպէս անդ ոչ թէ ջուրն տայր զառողջութիւն, այլ հրեշտակին իջումն, նոյնպէս աստ ոչ միայն լոկ ջուրն սրբէ, այլ իջումն Հոգւոյն Արքոյ:**

**Երրորդ. որպէս անդ զգալի շարժէր ջուրն<sup>1</sup>, եւ ծածուկ զաւրութեամբ հիւանդքն ողջանային, սոյնպէս եւ աստ զգալի տարր ջրոյն հաստատեալ ի մարմինն, եւ ծածուկ զաւրութիւն բանին սրբէ զհողին:**

**Չորրորդ. որպէս անդ միանգամ բժշկէր զիջանողն<sup>2</sup>, եւ ոչ կրկնէր, նոյնպէս աստ մի՛ է մկրտութիւն եւ ոչ կրկին, ըստ Պաւղոսի. «Մի է Տէր, մի՛ հաւատ, եւ<sup>3</sup> մի՛ մկրտութիւն» (Եփես.Դ 5):**

Եւ թէ ոք ասիցէ. «Թէական մկրտութեամբ մկրտեմ, զի թէ մկրտեալ է, ոչ է<sup>4</sup> մկրտութիւն, եւ թէ ոչ է<sup>5</sup> մկրտեալ, մկրտի»: Ասեմք՝ նմանէ արեւորդւոց, որք երկիր պագանեն արեգականն թէականութեամբ. թէ դու ես աստուած՝ քեզ, եթէ<sup>6</sup> ոչ, Աստուծոյ լիցի: Եւ զի՞նչ ասէ առաքեալ ի յերայեցւոց, որք կրկին մկրտին. «Անձանց ի խաչ հանիցեն զՈրդին Աստուծոյ եւ դարձեալ խայտառակեն» (Իմնտ. Եբ Զ 6):

**Այս ըստ նմանութեան աւազանիս մերոյ, բայց զի աւրինակն անկատար է, քան զաւրինակեալն, որ է ճշմարտութիւն:**

Տեսցուք եւ զայն եւս, զի վեց իրաւք բարձրագոյն է խորհուրդ նորոյս. նախ՝ զի անդ հրեշտակն իջանէր, որ ծառայ էր, եւ աստ՝ Տէրն հրեշտակաց: Երկրորդ. անդ<sup>7</sup> մի ոմն սրբէր, եւ աստ՝ ամենայն աշխարհ: Երրորդ. անդ ողջութիւն միոյ ցաւոց, աստ՝ մաքրութիւն բոլորին, որպէս ցուցաւ: Չորրորդ. անդ երբէք ի

<sup>1</sup> Բ զջուրն

<sup>2</sup> Ը զիշեալն

<sup>3</sup> Բ Ը

<sup>4</sup> Ա Բ Ը

<sup>5</sup> Ը

<sup>6</sup> Ը եւ թէ

<sup>7</sup> Ը

տարին կամ յամիսն<sup>1</sup> անգամ, աստ հանապազ սրբին, որք ոչ են մկրտեալք: Հինգերորդ. անդ միայն սոսկ փայտ խաչին եղեալ յաւազանն, աստ ճշմարիտ խաչն Քրիստոսի<sup>2</sup>, եղեալ յաւազանն սուրբ, զի ի մահն Քրիստոսի մկրտիմք: Վեցերորդ. անդ ախտն<sup>3</sup> արգիլիչ լինէր մկրտութեան, «մինչ ես դանդաղիմ, - ասէ, այսինքն՝ դեղեւիմ եւ սողամ, - այլ ոք քան զիս յառաջազոյն իջանէ» (Յովի. Ե 7), իսկ աստ որք կամին, սրբին:

**Այսքան առ այս:**

### Վասն անդամալուծին

Բան. «Եւ անդ էր այր նի, որոյ երեսուն եւ ութ ամ էր ի հիւանդութեան իւրում<sup>4</sup>» (Յովի. Ե 5):

Մեկնութիւն<sup>5</sup>. Յայտ է, զի վասն մեղաց յայնպիսի ախտն անկեալ կայր, եւ երեսուն եւ ութ ամ համբերութեամբ կրեաց զայն, այսինքն՝ գոհութեամբ տարաւ զայնքան<sup>6</sup> ժամանակին հիւանդութեան, վասն որոյ եւ ողորմութեան արժանացաւ ի Քրիստոսէ: Յայսմանէ ոմանք ասեն վասն Յորբայ, թէ երեսուն եւ ութ ամ եկաց ի փորձութիւն, զի որպէս նա համբերութեամբ տարաւ, եւ սա: Եւ որպէս ընդ նմա խաւսեցաւ յամպոյն եւ բժշկեաց զնա, սոյնպէս մարմնով ընդ սմա խաւսեցաւ եւ բժշկեաց զսա: Այլ որք ուղիղ իմացան, եւթ ամ ասացին զփորձութիւնքն Յորբայ, որպէս ցուցաւ ի գիրս իւր:

Բան. «Ասէ ցնա. “Կամի՞ս ողջ լինել”» (Յովի. Ե 6):

Մեկնութիւն. Քրիստոս ոչ եհարց զնա վասն գիտութեան, այլ նախ ի յաւժարեցնել զցանկութիւն նորա, զի ընդունիցի զփրկութիւն Աստուծոյ: Երկրորդ. ճանապարհ տայ խաւսից, զի զարթուցէ զնա ի<sup>7</sup> հաւատսն Քրիստոսի: Երրորդ. եհարց զնա, զի պատասխանելովն յայտնեսցի կարիս հիւանդին:

Բան. «Եւ նա ասէ. “Տէ՛ր, ոչ զոք ունիմ, [թէ յորժան ջուրքն յուգիցին], արկցէ զիս յաւազանն”» (Յովի. Ե 7):

**Մեկնութիւն. Նախ՝ ցուցանէ զչափ տկարութեան:**

<sup>1</sup> Ե յամիսն

<sup>2</sup> Ե եղեալ յաւազանն ... խաչն Քրիստոսի

<sup>3</sup> Ե անախստն

<sup>4</sup> Ա Ե չեք

<sup>5</sup> Ե չեք

<sup>6</sup> Ը զայնքան

<sup>7</sup> Ե չեք

**Երկրորդ.** զի անհոգաբարձու էր, որպէս թէ ասել. «Ես անկար եմ իջանել եւ զայլ ոք ոչ ունիմ զիս իջուցանել»: Զայս ասէր հիւանդն, զի տեսանէր զթիսուս զաւրաւոր գոլ եւ յաջողակ առ ի յիջուցանել զնա յաւագանն, իսկ Քրիստոս վասն փոքր փափագմանն զմեծ պարգեւսն չնորհեաց նմա զկատարեալ առողջութիւն, որպէս<sup>1</sup> ասէ ցնա.

Բան. «Արի՛, առ զնահիճս քո եւ զնա՛» (Յովհ. Ե 8):

**ՄԵԼՈՆԻՔԻՆ<sup>2</sup>.** Շատ է ասել՝ արի՛, քան թէ՝ ողջացի՛ր, քանզի միտք բանիս այս է. այնպէս կատարեալ ողջ լիջի՛ր, մինչ զի իսկոյն կարասցես գործ առողջութեան առնել:

**Նախ<sup>3</sup> Հարց.** Վասն է՞ր ոչ խնդրեաց ի նմանէ հաւատ, որպէս ասաց Երկու կուրին. «Հաւատա՞յք, եթէ<sup>4</sup> կարող եմ առնել ձեզ զայդ» (Մատթ. Թ 28):

**Պատասխան.** Ասելի է, եթէ<sup>5</sup> կոյրքն այն լուեալ էին զլուրն Քրիստոսի եւ ի համբաւէ զթիսուս ճանաչէին, վասն որոյ պարտական էին հաւատալ ի նա, իսկ հիւանդս այս ոչ<sup>6</sup> ճանաչէր զթիսուս, վասն որոյ ոչ խնդրեաց ի նմանէ հաւատ:

**Երկրորդ Հարց.** Վասն է՞ր ասաց. «Առ զնահիճս քո»:

**Պատասխան.** Վասն չորից. նախ՝ զի հրամանն արդիւնացեալ Երեւեսցի, եւ մի՛ կարծեսցի առ աչաւք ինչ եւ ստութեամբ եղեալ: Երկրորդ. վասն աւգտութեան առողջացելոյն, զի չունէր պատճառ մնալոյ<sup>7</sup>, եւ ոչ ունէր պատճառ թողլոյ անդ զմահիճս իւր, զի աղքատ էր: Երրորդ. զի յառաջն իբրեւ զանդամայլոյծ էր, որ ոչ կարէր կանգնել եւ ոչ իր ինչ ձեռաւք բռնել, վասն այն ընդդէմ այսմ ասաց Քրիստոս. «Արի՛, առ զնահիճս քո եւ զնա՛»:

**Չորրորդ.** զայն ցուցանէ, թէ կատարեալ յառաջին առողջութիւն էած միով բանիւ, եւ ոչ որպէս բժիշկ սակաւ-սակաւ տան զառողջութիւն:

**Նոյնպէս<sup>8</sup>** յարուցեալ մեռելոցն հրամայէր տալ նմա ուտել. մին՝ զի մի առ աչաւք Երեւեսցի, եւ միւս՝ թէ ի կատարեալ առողջութիւն եհան զամենայն հիւանդն եւ զմեռեալս: Զայս ցուցանէ մեզ, զի յորժամ էջ Բանն Աստուած յարգանդի Կուսին, իսկոյն զբնութիւնս մեր միաւորելով Աստուած արար՝ անապական

<sup>1</sup> Ը որպէս եւ

<sup>2</sup> Յ չեք

<sup>3</sup> Յ չեք

<sup>4</sup> Ա Յ թէ

<sup>5</sup> Ա թէ

<sup>6</sup> Յ դեմւս ոչ

<sup>7</sup> Յ մնալոյ անդ

<sup>8</sup> Յ նոյնպէս որպէս

**մարմնով եւ անմեղ հոգւով, որպէս էր նախքան զմեղանչելն ի դրախտին, եւ ոչ յետոյ ի մկրտութիւն կամ ի<sup>1</sup> յարութիւն, որպէս ասեն ոմանք:**

Բան. «Եւ առժամայն ողջացաւ, եւ յարեաւ, առ զնահիճն իւր եւ շրջէր» (Յով. Յով. Ե 9):

**Մեկնութիւն. Բարւոք ասէ՝ առժամայն, զի աստուածային զաւրութիւն վասն անչափութեան իւրոյ վաղվաղակի ներգործէ, իսկ բնական զաւրութիւն ժամանակաւ ներգործէ:**

**Այս առաջին բանն, որ ցուցանէ ըստ գործոյն, թէ Աստուած է Քրիստոս:**

### Վասն շաբաթուց

Բան. «Եւ էր շաբաթ յաւուրն յայնմիկ» (Յով. Ե 9):

**Մեկնութիւն<sup>2</sup>. Այս է առաջին լուծումն շաբաթուն, վասն որոյ ասեն, թէ երեսուն եւ ութ ամ հիւանդին շաբաթ ունի հազար ինը հարիւր ութսուն աւուրս: Եւ այնքան ամ ասեն յԱբրահամէ, որ զթլիատութիւն եւ զշաբաթս եւ զայլ աւրէնս հին հրամայեաց եւ աստ աւարտեաց:**

**Հարց. Վասն է՞ր Քրիստոս առաւել ի շաբաթու բժշկէր, քան ի յայլ աւուրս:**

Պատասխան. Վասն հինգ պատճառի.

**Նախ՝ ի յայտնութիւն սքանչելեաց իւրոց եւ քարոզութեան, զի հրէայքն ի շաբաթ աւուրս առաւել ժողովէին ի սուրբ տեղիսն եւ սրբութեան պարապէին:**

**Երկրորդ. զի ցուցցէ զուղիղ միտսն աւրինացն Մովսիսի, զի արգելումն ի գործոց յաւուր շաբաթու ոչ էր պարտ իմանալ վասն աստուածային գործոյ կամ վասն հարկաւոր գործոց, զի կարէին զեզինս ի ջուր տանել եւ զդրաստ անկեալ ի ջրհորոյ հանել, եւ ի շաբաթի աւր զմանուկն թլիատել եւ զմեռեալն թաղել:**

**Երրորդ. պատշաճ էր Քրիստոսի բանիւ եւ գործով լուծանել զշաբաթս, զի տալոց էր նոր աւրէնս եւ վախճան հնոյն սկիզբն է նորոյս:**

**Չորրորդ. ցուցանէ, թէ ինքն է Տէր եւ իշխանութիւն ունի ի վերայ շաբաթու աւրինացն դնել եւ փոխել, ըստ այնմ. «Տէր է Որ զի Մարդոյ եւ շաբաթու» (Մարկ. Բ 28):**

<sup>1</sup> C չիք ի  
<sup>2</sup> B չիք

**Հինգերորդ.** ուսուցանէ մեզ զհոգեւոր շաբաթս, զի պարտ է միշտ<sup>1</sup> զգործս առաքինութեան գործել՝ թողլով զմարմնական շաբաթս:

Բան. «Ասեն հրեայքն [բժշկեալն]. «Շաբաթ է, եւ ոչ է արժան առնուլ [քեզ] զնահիճս [քոյ]»» (Յովհ. Ե 10):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ.** Սուտ ասեն նոքա, զի պատշաճ էր յաւուր շաբաթու զայնպիսի մարմնական գործ առնել, որք կարգեալ են յաստուածպաշտութիւն, առ ի պատիւ Աստուծոյ, որպէս քահանայքն ի տաճարին առնէին զգործ մարմնաւոր, այսինքն՝ զարդարելով զտաճարն, զոհելով զանասունս եւ լուանալով եւ վառելով զհուրն, եւ այլ սոյնպիսիս, որպէս ասէ ի Մատթէոս: Իսկ բառնալ զմահիճս էր գործ առ ի յայտնութիւն սքանչելեացն Աստուծոյ, իսկ ողջացեալն այլ իմն կերպիւ պատասխանեաց.

Բան. «Որ բժշկեացն [զիս], նա ասաց ցիս» (Յովհ. Ե 11):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ.** Որպէս թէ ասել. նա զիս աստուածային<sup>2</sup> զաւրութեամբն ողջացոյց եւ նոյն զաւրութեամբն զայս ինձ հրամայեաց, եւ ես պարտական եմ նմա հնազանդել, քան ձեզ, եւ նա լաւ գիտէ, քան զձեզ:

Բան. «Յարցին ցնա [եւ ասեն]. «Ո՞վ է այրն<sup>3</sup>»» (Յովհ. Ե 12):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ.** Իբրու ասել. չար է այրն այն, որ այնպէս ասաց ընդդէմ աւրինացն Մովսիսի: Եւ ողջացեալն կրկին բան ասաց վասն Քրիստոսի. մի՝ որ բժշկեաց, եւ մի՝ որ հրամայեաց առնուլ զմահիճս, բայց նոքա զմինն ասէին, որ ատելոյն<sup>4</sup> էր, եւ զսքանչելիսն, որ ի պատիւ Քրիստոսի էր, ծածկէին:

Բան. «Եւ բժշկեալն ոչ գիտէր» (Յովհ. Ե 13):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ.** Զի բազում ամս ի հիւանդութեան էր, եւ ոչ գիտէր զՅիսուս, թէ ո՞վ ոք էր:

### Թէ Քրիստոս խոյս ետ

Բան. «Եւ Յիսուս խոյս ետ վասն ամբոխին» (Յովհ. Ե 13):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ.** Վասն չորս պատճառի. նախ՝ զի վկայութիւն ողջացելոյն առաւել հաստատ լինէր, յորժամ Քրիստոս հեռու էր, քան ի մերձն: Երկրորդ. զի զհակառակութիւն հրէիցն զիջուսցէ, զի յորժամ ատեն զոք, ի տեսանելն առաւել զայրանան: Երրորդ. զի յորժամ ի բացեայ էր, սքանչելիքն Քրիստոսի առաւել յայտ-

<sup>1</sup> Ը մեզ միշտ

<sup>2</sup> Ա Աստուծոյ

<sup>3</sup> Ը այրն այն

<sup>4</sup> Բ ատելոցն

նեցան, զի քննէին ի միտս, թէպէտ ոչ հաւատային: Զորրորդ. ուսուցանէ մեզ զխոնարհութիւն, զի վասն ամբոխին, որ փառաւորէին, խոյս ետ:

Բան. «Եւ գտանէ զնա [Յիսուս] ի տաճարին» (Յովի. Ե 14):

Մեկնութիւն. Զի բժշկեալն միշտ երթայր ի տաճարն, առ ի գոհանալ զԱստուծոյ վասն առողջութեան իւրոյ, եւ Քրիստոս եղիտ զնա, զի բժշկեացէ զմիտս նորա, որպէս զմարմինն ողջացոյց:

Հարց. Վասն է՞ր ծանոյց զինքն նմա:

Պատասխան. Ի դէմս ողջացելոյն վասն չորից. նախ՝ զի ծանիցէ բժշկեալն զբժիշկն: Երկրորդ. զի հաւատացէ զգոհութիւն: Երրորդ. զի հաւատացէ ի Քրիստոս: Զորրորդ. զի խրատեացէ զնա մի մեղանչել:

Իսկ ի դիմաց հրէիցն. նախ՝ զի յանդիմանեացէ զնոսա վասն նշանացն: Երկրորդ. զի տեսցեն զնա, որ յանդէտս լինէին եւ հարցանէին:

Բան. «Ողջացար, մի՛ եւս մեղանչեր» (Յովի. Ե 14):

Մեկնութիւն. Երեք պատճառ ի դիմաց նմա. նախ՝ ցուցանէ, թէ վասն մեղաց էր պատահեալ հիւանդութիւն այն: Երկրորդ. զի մի մոռասցի զերախտիքն ըստ կամաց հրէիցն: Երրորդ. զի դժոնութիւն եւ վերստին կրկնելն ի մեղս յոյժ ծանրացուցանէ զպատիժ մեղացն:

Ոմանք ասեն<sup>1</sup> զառաջին ապտակն սա եհար<sup>lvi</sup>, այլ եւ սուրբն Նարեկացին ասէ յիսունութերորդ ճառն<sup>lxvii</sup> երեք պատճառ ի դէմս մեր. նախ՝ յորժամ ի պատուհասէ զերծանիմք, այլ մի մեղիցեմք: Երկրորդ. յետ մկրտութեան թէ մեղանչեմք, տանջանքն է անվախճան: Երրորդ. թէ յետ խոստովանութեան դարձեալ կրկնեմք, լինիցի յետինն մարդոյն չար քան զառաջինն, որպէս ասէր Տէր.

Բան. «Գնաց այրն եւ պատմեաց հրէիցն» (Յովի. Ե 15):

Մեկնութիւն. Ոչ չարութեան, այլ սիրոյ է ցոյցք:

Եւ յայտ է ի չորից. նախ՝ զի ասէ. «Որ բժշկեացն զիս»: Երկրորդ. զի Քրիստոս զոր առողջացոյց մարմնով, առողջացոյց եւ մտաւք: Երրորդ. զի «Ահաւասիկ ողջացար» ցուցանէ զբոլոր առողջութիւն հոգւոյն եւ մարմնոյն<sup>2</sup>: Զորրորդ. վասն սորա ասէ Քրիստոս. «Ողջոյն իսկ մարդ բժշկեցի ի շաբաթու» (Յովի. Ե 23):

Եւ այն, զի ասէ Քրիստոս պատուիրելով. «Սի՛ եւս մեղանչեր» (Յովի. Ե 14), ոչ այնքան վաղվաղակի անկանէր ի մեղս մատնու-

<sup>1</sup> Կ ասեն, թէ

<sup>2</sup> Կ մարմնոյն եւ հոգւոյն

թեան, վասն այն ասելի է, թէ բարի մտաւք ասաց նոցա<sup>1</sup>, բայց հրէայքն չար մտաւք ընկալան, որպէս եւ զքարոզութիւն Քրիստոսի ի չար փոխարկէին:

Բան. «Վասն այնորիկ զՅիսուս հալածէին<sup>2</sup> հրէայքն, զի զայն առնէր ի շաբաթու» (Յովի. Ե 14):

Մեկնութիւն. Քանզի համարէին, զի այնու անցանէր զաւրէնսն Մովսէսի, թէպէտ սքանչելիքն Քրիստոսի ոչ է լուծումն աւրինացն Մովսէսի, զի հարկաւոր գործք եւ այնք, որք էին առ ի պատիւ Աստուծոյ, ոչ լուծանէին զշաբաթս, որպէս ցուցաւ ի վերոյ:

Եւ զի թարգմանիչ ասէ մեկնիչդ<sup>lxxviii</sup>, գիտելի է, զի երեքն են թարգմանիչք. նախ՝ գրոյն, որպէս եւթանասունքն: Երկրորդ. բանին, որպէս լեզուագէտք: Երրորդ. մտաց, որպէս մեկնիչք:

Հարց. Վասն է՞ր զայս եւ զայն անդամալոյծն մի ասեն:

Պատասխան. Զի եւսերի ի ցանդն զհամաձայնութեան նշանն մի գրէ չորից գլխոյն, առ որս ասեմք, եթէ եւսերի ոչ զանդամալոյծն գրէ մի գոլ, այլ բժշկութիւն նոցա<sup>lxxix</sup>:

Եւ զի այլ է սա եւ այլ նա, յայտ է յերից. նախ՝ ի տեղւոյն, Երկրորդ՝ ի ժամանակէն, Երրորդ՝ ի բանից կարգէն:

### Զի Քրիստոս առնէր եւ ուսուցանէր

Իսկ այն, որ ասէ Ոսկերեանն վասն վարդապետութեան եւ նշանացն Տեառն. նախ՝ զի յաւգուտ նոցա առնէր երբեմն զմի, քան զմիւսն յառաջ: Երկրորդ. զի միմեանց վկայք լինիցին, այսինքն՝ քարոզութիւն նշանացն եւ նշանն քարոզութեան հաստատութիւն :

Իսկ առ մեզ՝ վարդապետացս, կրկին<sup>3</sup> կերպիւ ունիմք. նախ՝ զբանս ճշմարիտ եւ զգործս բարիս: Երկրորդ. աշխատութիւն մտացն եւ ուսումն բանիցն է վկայ<sup>4</sup>, եւ բանքն աշխատանացն:

Իսկ այլ վարդապետք ասեն, թէ նախ առնէր զնշանս եւ ապա քարոզէր, վասն զի բանական<sup>5</sup> ճանաչումն մարդկան ի զգալեացս ածի յիմանալիսն, զի ամենայն ճանաչումն մեր ծնանի ի զգայարանացս, վասն այն սովորութիւն է աւետարանչիս, զի նախ ճառէ զսքանչելիս եւ ապա՝ զվարդապետութիւն:

<sup>1</sup> Ընա

<sup>2</sup> Ե չիք

<sup>3</sup> Ա Ե կըկ

<sup>4</sup> Ե Եւ ուսումն է բանիցն վկայ

<sup>5</sup> Ե Ընական

Բան. «Հայր իմ մինչեւ ցայժմ գործէ, եւ ես գործեմ» (Յովհ. Ե 17):

**ՄԵԿԱՆՈՒԹԻՒՆ.** Այս երկրորդն է, որ ի գործոյն ցուցանի, թէ Աստուած է Քրիստոս:

Հարց. «Զի՞նչ է, որ<sup>1</sup> ասէ Մովսէս. «Հանգեաւ Աստուած ի գործոց իւրոց» (հմնտ. Ծննդ. Բ 2), եւ աստ ասէ. Մինչեւ ցայժմ գործէ»:

Պատասխան. Կրկին է գործն Աստուածոյ, այսինքն՝ ստեղծանել եւ նախախնամել: Արդ, ի ստեղծանելոյն հանգեալ է, զի այլ նոր ինչ ոչ ստեղծանէ, այլ զեղեալն միշտ խնամէ: Դարձեալ՝ հայր ասաց պահեալ զշաբաթս եւ ինքն գործէ, զայն տայ իմանալ, թէ աւրէնսդիրն ընդ աւրինաւք ոչ մտանէ, որպէս ասաց՝ մի՛ սպանաներ եւ մի՛ դատեր, եւ ինքն դատէ եւ սպանանէ, նոյնպէս եւ զշաբաթս իմասցիս: Դարձեալ՝ տե՛ս, յորժամ զաշակերտքն չարախաւսէին, թէ անցանեն զաւրէնս եւ ի շաբաթու հասկ փշրեն, նա զԴաւիթ բերէ վկայ, զի մարդ էր, որպէս եւ<sup>2</sup> առաքեալքն զծառայն ծառայակցաւն<sup>3</sup>, իսկ յորժամ զՔրիստոս հալածէին վասն գործոյ շաբաթուն, վկայ իւր բերէ զՀայր<sup>4</sup>, զի Աստուած է համազուգ Հաւը:

### Վասն նախախնամութեան

Դարձեալ՝ Հայր իմ, որ հրամայեաց պահել զշաբաթս, եւ ինքն գործէ միշտ՝ նախախնամելով զմարդիկ, որպէս յաւուր շաբաթու զարեգակն ծագէ, եւ զլուսին<sup>5</sup> եւ զաստեղս եւ զայլս: Նոյնպէս եւ ես յաւուր շաբաթու գործեմ զգործս Հաւը իմոյ, զի Աստուած եմ:

Եւ գիտելի է, զի գլխաւրէն չորս կարգ է<sup>6</sup> նախախնամութեան Աստուածոյ. Նախ՝ զտիւ եւ զգիշեր եւ զեղանակս տարւոյն փոփոխելով խնամէ<sup>7</sup>: Երկրորդ. զկենդանեաց տեսակս ծննդեամբ խնամէ, շարժութեամբ<sup>8</sup> երկնային մարմնոց: Երրորդ. զբնականս ի նոյնութեան պահէ եւ ի տեղի իւրեանց, որպէս զչորս տարերս. զքարինս, զգետս եւ զայլս: Չորրորդ. զբանականս խնամէ զանազան խրատով եւ պիտոյիւք եւ այլն:

<sup>1</sup> Բ զոր

<sup>2</sup> Բ չեք

<sup>3</sup> Ը ծառայակցացն

<sup>4</sup> Ը զՅայր բերէ

<sup>5</sup> Բ լուսինն

<sup>6</sup> Ը կերպ է

<sup>7</sup> Ա Բ խնամէ, այսինքն

<sup>8</sup> Ը շարժնամբ

**Այսպէս եւ Քրիստոս չորիւք խնամէր զմարդիկ. նախ՝ քարոզելովն ի գիտութիւն ածէր: Երկրորդ. սքանչելեաւք ի հաւատութէրէր: Երրորդ. զախտու մարմնոյն բժշկէր: Զորրորդ. զմեղս ի հոգւոյն սրբէր:**

### Ընդդէմ բաժանողաց

Բան. «Վասն այնորիկ հրեայքն խնդրէին սպանանել զնա» (տես Յովի. Ե 18):

**ՄԵԿԱՆՈՒԹԻՒՆ. Այսինքն<sup>1</sup> խորհէին եւ կամէին:**

Բան<sup>2</sup>. «Զի ոչ միայն լուծանէր օշաբաքս, այլ եւ Յայր իւր կոչէր զԱստուած<sup>3</sup> եւ հաւասար առնէր զանձն Աստուծոյ՝» (Յովի. Ե 18):

**ՄԵԿԱՆՈՒԹԻՒՆ. տե՛ս եւ զայս, զի հրէայքն հակառակ Աստուծոյ<sup>5</sup> եւ թշնամիք համարէին զՔրիստոս ըստ իւրն բանին, թէ հաւասար է Աստուծոյ, եւ վասն այն խնդրէին սպանանել, եւ սոքա անուամբ միայն քրիստոնեայք յերկուս բաժանեն զմի Քրիստոսն, որ քան զհրէայսն անարդ են եւ վատթարք, որպէս ցուցանէ մեկնիչդ յերկար աստուածաբանութեամբ ընդդէմ Քաղկեդոնի<sup>6</sup>, որ յերկու<sup>6</sup> բնութիւնս՝ բաժանեն եւ ընդդէմ նեստորի, որ յերկուս բաժանեն:**

Հարց. Ո՞րն է առաւել չար, որ զբնութիւն բաժանէ, թէ՞ որ զանձն:

Պատասխան. Այն, որ զանձն բաժանէ, յայտնի չար է<sup>8</sup>, եւ որ զբնութիւնս՝ բաժանէ, ծածուկ չար: նախ՝ որ զբնութիւն բաժանէ եւ զկամս եւ զգործս, նա եւ զանձն<sup>10</sup> բաժանէ: Երկրորդ. զի անձն առանց բնութեան միայն կոչումն է, վասն որոյ որ անձամբ ասէ միացեալ եւ ոչ՝ բնութեամբ, անուամբ ասէ միացեալ եւ ոչ՝ էութեամբ: Եւ տե՛ս, որ բաժանէ զմարմինն ի Բանէն, թէ՝ բնութեամբ եւ թէ՝ անձամբ, զմարմինն Աստուած ոչ խոստովանի: Եւ թէ Աստուած է միութեամբն, յայնժամ զաւրաւոր եւ տկար ոչ է, այլ միայն զաւրաւոր<sup>11</sup>, եւ ոչ հաւասար կամ անհաւասար, այլ միայն

<sup>1</sup> B չիք Մեկանութիւն. այսինքն

<sup>2</sup> A B չիք

<sup>3</sup> A չիք

<sup>4</sup> A B չիք, C ինքն Աստուծոյ

<sup>5</sup> A B Քրիստոսի

<sup>6</sup> B Երկու, C Երկուս Որդիս

<sup>7</sup> C չիք բնութիւնս ... յերկուս

<sup>8</sup> A որպէս յայտնի չար է, B որպէս յայտնի ցուցանէ

<sup>9</sup> C զբնութիւնսն

<sup>10</sup> B անձն

<sup>11</sup> B զաւրութեամբ

Հաւասար<sup>1</sup>, եւ ոչ ապականացու եւ անապական, եւ ոչ Տէր եւ ծառայ, այլ Բանն Աստուած մարդացեալ մարմնովն է Տէր, եւ մարմնովն անապական, եւ մարմնովն Որդի Աստուծոյ, եւ մարմնովն հաւասար Հաւը, որպէս յայտնապէս ցուցանի ի գիրս Հարցմանց<sup>lxxi</sup>:

### Վասն ոչ կարելոյն

Բան. «Ոչ կարէ Որդի Մարդոյ առնել յանձնէ եւ ոչ ինչ<sup>2</sup>» (Յովի. Ե 19):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Չորս կերպիւ ընդդիմութեամբ լուծանէ զբանս. նախ՝ զսքանչելիսն, զոր արար, եւ զկիրսն, զոր կրեաց, զայս ոչ է տեսանել ի Հայր: Երկրորդ. զի ասաց. «Անձամբ իմով դնեմ զանձն ին» (Իմմտ. Յովի. Ժ 18): Երրորդ. զի ամենայն բանականք անձնիշխանք են, ապա եւ Քրիստոս ոչ է ի ներքոյ Հարկի: Չորրորդ. զի ոչ կարելն բազմայեղանակ է եւ ոչ պարզ մի կերպիւ, որպէս ասէ Աստուածաբանն «յԱռ որս գիրս<sup>3</sup>»<sup>lxxii</sup>:

Ապա ուրեմն երբեմն զբարձրագոյնս եւ երբեմն զնուաստականս վասն տնաւրէնութեան ասէ, ըստ պիտոյից ժամանակին:

Դարձեալ՝ ոչ կարելն Որդւոյ հինգ իրս ցուցանէ աստ. նախ՝ յորժամ զբարձրագոյնս ասաց, չարացան հրէայքն, այժմ զնուաստականսն ասէ ի շիջումն բարկութեան<sup>4</sup> նոցա: Երկրորդ, ոչ կարէ առնել, այսինքն՝ անաւգուտ ինչ<sup>5</sup>: Երրորդ. ոչ կարէ առնել եւ ոչ ինչ, այսինքն՝ մեղք եւ չար, ըստ այնմ. «Առանց նորա եղեւ եւ ոչ ինչ» (Յովի. Ա 3): Չորրորդ. այսու առաւել զմիակամութիւն ցուցանէ, զի մի՛ է կամք իւր եւ Հաւըն, վասն այն առանց Հաւըն ոչ կարէ առնել ինչ: Հինգերորդ. զի զաւրութիւն աստուածային կարողութեան ուստի առնելն է, այլ եւ<sup>6</sup> Աստուածութիւն, ե՛ւ տէրութիւն, ե՛ւ իշխանութիւն եւ այլն ոչ են յատուկ անձանցն, այլ Հաւասար միոյ Աստուածութեան, վասն այն որդին ոչ կարէ առնել ինչ<sup>7</sup> առանց Հաւը, որպէս ցուցաւ:

Բան. «Եթէ ոչ տեսանիցէ զՅայրն, զի առնէ»<sup>8</sup> (Յովի. Ե 19):

<sup>1</sup> Ե Յաւը

<sup>2</sup> Ե եւ ոչ ինչ եւ այլն

<sup>3</sup> Ե կիրս

<sup>4</sup> Ե բարկութեանց

<sup>5</sup> Ա Ե չեք Երկրորդ ... ինչ

<sup>6</sup> Ա Ե այլ

<sup>7</sup> Ա չեք

<sup>8</sup> Ա Ե չեք զի առնէ

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Որպէս թէ ասել. ձեզ թուի թէ անցանեմ զաւըէնս, եւ այս անհնար է, զի ոչ կարեմ թիւրիլ յաստուածային ճշմարտութենէս, զոր ունիմ ընդ Հաւը:

### Ըսդդէմ Արիոսի

**Բան.** «Զի զոր նայն առնէ, զնոյն եւ Որդին նմին նման գործէ» (Յովի. Ե 19):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Եւ աստ բառնայ երիս պատճառաւ, որով զՈրդին փոքր կարծէին, քան զՀայր.

**Առաջին.** զի ասէին. «Հայր գործէ ինչ, զոր եւ Որդի ոչ կարէ առնել»: Եւ զայս բառնայ՝ ասելով. «Զի զոր նայն առնէ, - այսինքն՝ Հայր, - զնոյն եւ Որդին գործէ»:

**Երկրորդ.** զի մոլորեալք ոմանք ասէին, որպէս Արիոս, թէ՝ «Զոր ինչ առնէ հայր, առնէ եւ Որդի, ըստ տեսակին եւ ոչ ըստ անհատին առնէ», եւ զայս բառնայ ասելովն. «Զնոյն եւ Որդին գործէ»:

**Երրորդ.** դարձեալ՝ թէ ոք ասիցէ, զի թէպէտ եւ ըստ անհատին Որդին նման գործէ Հաւը, սակայն ոչ նոյնաբար, այլ Որդի Հաւը գործիք է, որպէս ուրագն հիւսան, եւ ուռն՝ դարբնին: Եւ զայս չար կարծիս, եւս բառնայ Քրիստոս՝ ասելով. «Նմին նման գործէ»:

**Դարձեալ՝ ընդդէմ Արիոսի,** որ արարած ասէ, զի թէ Որդի<sup>1</sup> արարած է, յայնժամն ոչ կարէ առնել, զոր ինչ Հայրն առնէ, զի եթէ<sup>2</sup> Որդի արարած է, ապա Հայր արար զնա, որ է սուտ, իսկ Որդի զինքն ոչ կարէ առնել, վասն այն Քրիստոս յորժամ ասէ. «Զոր ինչ Հայր առնէ, զնոյն եւ Որդին նմին նման գործէ», ցուցանէ, թէ Որդի ոչ է արարած, այլ անեղ, այլ մարդկութիւն Քրիստոսի է արարած: Եւ գիտելի է, զի որպէս Արիոս զԲանն ասէր գործիք Հաւը, սոյնպէս Նեստոր զմարդն ասէ գործիք Բանին, նոյնպէս եւ քաղկեդոնիկք զՔրիստոս ասեն գործիք եւ անաւթ Աստուածութեան: Զնոյնս եւ ոմանք ասացին զմարմինս մեր գործիք հոգւոյս մեր, եւ ոչ էութեամբ միաւորեալ հոգի եւ մարմինն: Եւ սոքա երեքեանս հերձուած են եւ սուտ<sup>3</sup>:

**Բան.** «Հայր սիրէ զՈրդի» (Յովի. Ե 20):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Զի կցորդ եւ յաւետակից է Հաւը էութեամբ եւ գիտութեամբ<sup>4</sup>: Եւ դարձեալ՝ ըստ մարդկութեան Հայր սիրէ զՈր-

<sup>1</sup> Ը Որդին

<sup>2</sup> Ը երե

<sup>3</sup> Ը հերձուածք են եւ սուտ

<sup>4</sup> Ը գոյութեամբ

դի եւ զամենայն ինչ ցուցանէ, այսինքն՝ զլրութիւն գիտութեան տուեալ նմա ըստ միաւորութեան Բանին Աստուծոյ ի մարդկութիւն իւր:

Բան. «Եւ մեծամեծս<sup>1</sup> եւս [քան զսոյնս] ցուցանէ նմա» (Յովհ. Ե 20):

Մեկնութիւն. Զորս ինչ նշանակէ ցուցանելն. նախ՝ զհաստատութիւն, որպէս ասացաւ յառաջին հատորն: Երկրորդ. վասն տնաւրէնութեան ասէ: Երրորդ. զարտաքին ցուցանելն ասէ, որ գործով զգաւրութիւն եւ զգիտութիւն Քրիստոսի ցուցանէր մարդկան:

Այլ ոչ է պարտ<sup>2</sup> իմանալ, թէ Քրիստոս յապառնի ժամանակ իր ինչ ուսանի, որպէս մեք եւ որպէս առաքեալքն ուսան ի Հոգւոյն, զի ի սկիզբն յղացման ի կուսական յարգանդի ընդ միաւորութեամբ Բանին զամենայն ճանաչեաց եւ գիտաց<sup>3</sup> հոգւովն, եւ մարմինն Աստուած եւ անապական եղեւ, որպէս ասէ մեկնիչդ յետոյ<sup>lxxiii</sup>, թէ Հայր ցուցանէ նմա զամենայն, զոր առնէ, ապա լուծանելով զշաբաթն ոչ է հակառակ Աստուծոյ<sup>4</sup>: Տե՛ս, որպէս Յովաննէս Մկրտիչն զաստուածաբանութիւն բարձրացոյց եւ նուաստացոյց եւ դարձեալ բարձրացոյց, սոյնպէս եւ աստ առնէ:

### Բարձր եւ նուաստ գործք

Հարց. Վասն է՞ր երբեմն բարձրագոյն խաւսէր եւ գործէր, երբեմն՝ զնուաստ:

Պատասխան. Վասն վեց պատճառի.

Նախ՝ մի եւ նոյն, զի Աստուած էր մարդացեալ:

Երկրորդ. նուաստութեամբն զատելութիւն հրէիցն խափանէր եւ բարձրութեամբն զիշխանական զաւրութիւն իւր ցուցանէր:

Երրորդ. նուաստութեամբն զպարտիք նախահաւրն լուծանէ եւ բարձրութեամբն զհաւատն ի մեզ հաստատէ:

Չորրորդ. զի ցուցցէ զխոնարհութիւն նորա վասն մեր եւ բարձրութիւնս մեր ընդ նմա:

Հինգերորդ. ընդդէմ սատանայի, զի ի բարձրագոյնսն սարսէր սատանայ եւ ի խոնարհագոյնսն մոլորէր:

Վեցերորդ. դարձեալ բարձրն հաւատացելոց հաստատութիւն է, որպէս ասացաւ, եւ խոնարհն անհաւատից մոլորութիւն: Եւ որ վասն խոնարհագունիցն սոսկ մարդ ասէ զՔրիստոս, ընդ սատա-

<sup>1</sup> Ա մեծամեծ

<sup>2</sup> Ա Բ չեք

<sup>3</sup> Ը գիտաց եւ ճանաչեաց

<sup>4</sup> Ը Աստուծոյ այն

նայի մոլորի, որպէս ասացաւ յառաջին հատորն, ի սկիզբն գրոցս, որ ասէ. «Խաւար նմա ոչ եղեւ հասու» (Յովհ. Ա. 5): տե՛ս զշար մտածումն հրէից վասն նշանացն չորս կերպիւ, եւ զբարի մտածելն քրիստոնէից վեց կերպիւ<sup>1</sup>, որպէս ասէ մեկնիչդ<sup>լքիւ</sup>: եւ սոյնպէս ամենայն ուղղափառ եւ չարափառ ըստ իւրում մտացն իմանայ զՍուրբ Գիրս:

### Վասն յարութեան

Բան. «Զգործս, ընդ որ դուք զարմանայք» (Յովհ. Ե 21):

ՄԵԼՆՈՒԹԻՒՆ. Զարմացումն է ի վեր քան զմիտս, եւ իմացումն հաւասար մտաց, եւ զգացումն ի ներքոյ մտաց: Զարմանալի է բժշկութիւն հիւանդին, եւ մեծամեծ գործ յարութեան է եւ դատաստան առնել, այլ ասեն վարդապետք, եթէ զմեռեալս յարուցանել եւ զմեղաւք հոգին արդարացուցանել մեծագոյն գործ է, քան թէ նոր երկինք եւ երկիր ստեղծանել:

Հարց. Զի՞նչ է. «Չորս կամի, կենդանի առնէ» (Յովհ. Ե 21):

Պատասխան. Վասն չորից<sup>2</sup>. նախ՝ ընդդէմ թանձրամտացն, որ տկար կարծէին զՔրիստոս, ասէ. «Հաւասար է Հաւր կարող զաւրութեամբ<sup>3</sup>, եւ զորս կամի կենդանի առնէ»: Երկրորդ. ի յամբարշտութենէ յարդարի<sup>4</sup> գորս կամի, այսինքն՝ ազատ կամաւք եւ ոչ ի հարկէ բերէ: Երրորդ. նկատէ ի մեռեալսն, զոր մարմնով յարոյց: Չորրորդ. ի հասարակ յարութիւն զոմանս յարուցանէ, որպէս ցուցանէ յառաջիկայդ:

Այս առաջին գործ յարութեան, որ ցուցանէ, թէ Աստուած է Քրիստոս:

Իսկ չորրորդ՝ զգործ դատաստանին ասէ.

### Վասն դատաստանին

Բան. «Եւ ոչ եթէ Հայր դատի զոք, այլ զամենայն դատաստան ետ Որդույ իւրոյ<sup>5</sup>» (Յովհ. Ե 22):

ՄԵԼՆՈՒԹԻՒՆ. Զայս ոչ է պարտ իմանալ, եթէ Հայր ոչ դատի, ի բաց կտրելով զՀայր ի դատաստանէ, այլ զայն ասէ, թէ Հայր ոչ

<sup>1</sup> B չիք եւ զբարի ... վեց կերպիւ

<sup>2</sup> C չորս իրաց

<sup>3</sup> C կարողութեամբ

<sup>4</sup> C յարդարութիւն

<sup>5</sup> A B չիք

դատի առանց Որդւոյ, զի մի է ներգործութիւն Հաւը եւ Որդւոյ<sup>1</sup> եւ Հոգւոյն Արբոյ, որպէս էութիւն եւ բնութիւն եւ Աստուածութիւն, վասն այն Հայր եւ Որդի եւ Հոգին Սուրբ զվերջին դատաստանն առնէ, իսկ Քրիստոս մարմնոյ երեւմամբն նստցի դատաւոր, զի այնպէս վայել է, զի դատաւորն յայտնի լիցի ամենեցուն, որ գան ի դատաստան, իսկ ըստ Աստուածութեան ոչ կարեն տեսանել զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին, զի թէ տեսանէին, երանեալք լինէին, որպէս ասէ ի սոյն Աւետարանի. «Այս են կեանք յաւիտենականք, զի ծանիցեն զքեզ միայն ճշնարիտ Աստուած, եւ զոր առաքեցեր՝ զՅիսուս Քրիստոս»<sup>2</sup> (Յովհ. ժէ 3), վասն այն մարմնացեալ Որդին նստցի դատաւոր:

Դարձեալ գիտելի է, զի իշխանութիւն դատաւորութեան Քրիստոսի ի Հաւը է եւ այնպէս հաղորդի, զի նոյն իշխանութիւն միշտ առ Հայր մնայ, որպէս եւ Աստուածութիւն, նոյնպէս զկեանքն եւ զներգործութիւն եւ զգիտութիւն իմասցիս, իսկ որ Աստուած Հայր ետ զգատաստանն Որդւոյ. Նախ՝ տալն զունեն ցուցանէ, որպէս ունի զէութիւն ի Հաւը, նոյնպէս զկեանսն<sup>3</sup>, զիշխանութիւն, զգատաստան եւ զայլ:

Դարձեալ՝ վասն տնաւրէնութեան ասէ.

### Թէ Որդի է դատաւոր

Եւ թէ վասն է՞ր Հայր ոչ առնէ զգատաստան, այլ Որդի:  
Ասեմք՝ տաս պատճառաւ.

Նախ՝ զի դատաստանն իմաստութեամբ լիցի, եւ Քրիստոս է իմաստութիւն եւ զաւրութիւն Աստուծոյ Հաւը ըստ առաքելոյ (հմնտ. Ա Կորնթ. Ա 24):

Երկրորդ. զի Որդին ետ զԱւետարանն ի նորս եւ զաւրէնս ի հինն, ըստ որում. «Բան է Աստուծոյ» (Յովհ. Ա 1), վասն այն Որդին դատէ:

Երրորդ. այսու զԱստուածութիւն իւր ցուցանէ, զի ամենայն մարգարէք զԱստուած ասացին գոլ դատաւոր, ըստ այնմ. «Աստուած դատաւոր արդար» (Սաղմ. Է 12), եւ թէ՝ գոլ հատուցանես իւրաքանչիւր զգործունոցան:

Չորրորդ. պարտ է կատարել գըեալքն ի մարգարէից, զի դիւրին է երկնի եւ երկրի անցանել, քան յաւրինաց եւ ի մարգարէից,

<sup>1</sup> Ե Հիք զի մի է ... Որդւոյ

<sup>2</sup> Ա Ե Հիք զՅիսուս Քրիստոս

<sup>3</sup> Ը զկեանս

<sup>4</sup> Ե ըստ գործս

իսկ Դաւիթ ասէ վասն դատաւորութեան Որդւոյ. «Աստուած զի՞րաւունս քո արքայի տուր<sup>1</sup>, եւ զարդարութիւնս քո<sup>2</sup> Որդւոյ թագաւորի՝ դատել զժողովուրդս» (Սաղմ. ՂԱ 2), եւ Դանիէլ ետես զհին աւուրցն, եւ զի Որդւոյ տուաւ դատել զազգս (հնմտ. Դան. Է 13-14):

Հինգերորդ. զի Հայր անտեսանելի է եւ անմարմին, նոյնակս եւ Հոգին, պարտ էր Որդւոյ դատել զմարմնաւորս վասն մարմնով երեւելոյն, զի որ զփորձ առեալ էր եւ կարող էր փորձանաւորաց աւգնական լինել<sup>3</sup>:

Վեցերորդ. զի Որդին մարդ եղեւ եւ ընդ ամենայն էանց, բաց ի մեղաց, պարտ էր Որդւոյն դատաւոր լինել եւ հատուցանել մարդկան ըստ գործոց, հաւատացելոց եւ անհաւատից:

Եւթներորդ. զի որ զնա խաչեցին, տեսցեն յայնժամ եւ իմասցին, թէ աստուածասպանք եղեն, ըստ այնմ. «Յայեսցին ի նա, յոր խոցեցինն» (Յովհ. ԺԹ 37):

Ութներորդ. զի վկայքն վասն Քրիստոսի հեղին զարիւնս եւ տանջանս կրեցին, պարտ էր Քրիստոսի դատել եւ պսակել զնոսա:

Իններորդ. զի ուրախ լիցին քրիստոնեայք, յորժամ զնա տեսցեն դատաւոր եւ վրէժինդիր գործոց մարդկան, ապա պարտ է ի նա ընկենուլ զդատաստան զրկողացն մեր, զի. «Իմ է վրէժինդրութիւն» (հնմտ. Երեմ. Ծ 15, Յովհ. ԺԹ 19, Եբր. Ժ 30), ասէ Տէր:

Տասներորդ. զի Քրիստոս է գլուխ մեր եւ մեք անդամք, պարտ է, զի նա լիցի մեզ<sup>4</sup> դատաւոր, եւ մեք մի դատեսցուք զմիւնս, այլ սիրեսցուք, որպէս զանձինս մեր:

**Այսքան առ այս:**

Բան. «Զի ամենեքեան պատուեսցեն զՈրդի» (Յովհ. Ե 23):

ՄԵԼՈՆԻՔԻՆ. Այսու յայտնապէս զինքն Աստուած ասաց, զի ամենայն արարածք ոչ են այնպէս պատուելի, որպէս զԱստուած, եւ զի Քրիստոս ընդ Հաւր հաւասար Աստուած է, վասն այն զՀաւր պատիւն ունի:

**Այս ի ստորասութենէ:**

Ասէ եւ ի բացասութենէ. որ ոչ պատուէ զՈրդի, ոչ պատուէ զՀաւր, իսկ թէ աւրինակ խնդրես, մի գործոց, բազումք են. նախ՝ որպէս լոյսն եւ աւգն լուսաւորեալ զմի ներգործեն: Երկրորդ. որպէս լոյս աչաց եւ արտաքին զմի տեսութիւն գործէ: Երրորդ. որ-

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> A B չեք

<sup>3</sup> A B չեք

<sup>4</sup> A B մեր

պէս երկաթ հրացեալ զայրելն գործէ: Զորբորդ. որպէս հոգի եւ մարմին զմի գործ առնէ:

Եւ այլ բազում, որպէս գործիքն եւ արուեստաւորն մի գործ առնէ, թէպէտ աւտար են աւրինակքս ի ճշմարտութենէն:

Այսքան առ այս:

### Վասն վկայից Տեառն

Բան. «Եթէ ես վկայեմ վասն իմ<sup>1</sup>, վկայութիւն իմ չէ ճշմարիտ» (Յովհ. Ե 31):

**Մեկնութիւն.** Տարակուսելի է յերկու դէմս, զի թէ չէ ճշմարիտ, որպէս ինքն ասաց, զի<sup>2</sup>նչ լինիցի, որ յառաջ քան զայս ասաց զանձն իւր հաւասար Հաւը եւ զինքն յարուցիչ եւ դատաւոր եւ այլն: Իսկ թէ ճշմարիտ է, զիա՞րդ այժմ ասէ, թէ՝ չէ ճշմարիտ, զոր քաւ լիցի սուտ խաւսել:

**Պատասխան<sup>3</sup>.** Որպէս առ Աբրահամ ասաց, թէ՝ «Այժմ ծանեայ, զի երկիւղած ես յԱստուծոյ» (տես Ծննդ. ԻԲ 12): **Սոյն աւրինակ տարակուսանք** է, զի թէ գիտէր յառաջն<sup>3</sup>, ընդէ՞ր ասէր. «Այժմ ծանեայ, զի երկիւղած ես յԱստուծոյ<sup>4</sup>», այսինքն՝ գիտացի, եւ թէ ոչ գիտէր մինչ ի զենումն Որդւոյն, զիա՞րդ է Աստուած, զի Աստուած կանխագէտ է: Այլ այս է, զի գիտէր նա եւ յառաջն, այլ ի դիմաց աշխարհիս ասէր զայս, զի այժմ ծանեաւ ամենայն ոք զաստուածպաշտութիւն նորա, նոյնպէս եւ զայս ի դիմաց հրէից կարծեացն ասէ:

Եւ երեք է տեսութիւն. նախ՝ ի դիմաց հրէիցն, զկարծիս նոցայայտնէ, որք ասէին, թէ Դու վասն անձին քո վկայես, եւ վկայութիւն քո չէ ճշմարիտ: Երկրորդ. ի դէմս աշխարհի, զի երկու եւ երեք վկայիւք հաստատեսցի ամենայն բան: Երրորդ. թէպէտ ես միայն վկայեմ, ասէ, ճշմարիտ է, այլ որպէս դուք խորհիք թերահաւատ մտաւք, զի ոչ զվարդապետեալն եւ ոչ զնշանս ի միտ առնոյք, այլ միայն զվկայութիւնսն ասէք չէ ճշմարիտ:

Բան. «Այլ է, որ վկայէ վասն իմ» (Յովհ. Ե 32):

**Մեկնութիւն.** Այսինքն՝ Յովաննէս: Եւ չորիւք երեւի յաղագս Քրիստոսի վկայութիւն. նախ՝ Յովաննէս Մկրտչին: Երկրորդ.

<sup>1</sup> A B չեք վասն իմ

<sup>2</sup> C չեք

<sup>3</sup> C յառաջագոյն

<sup>4</sup> A B չեք յԱստուծոյ, C զի երկիւղած ես յԱստուծոյ

սքանչելեաց գործն Քրիստոսի: Երրորդ. վկայութիւնն Հաւը եւ իշումն Հոգւոյն: Զորրորդ. գրեալքն ի մարգարէիցն:  
եւ վկայութիւն Հաւը երիւք է. նախ՝ ի Յորդանանն, երկրորդ՝ ի Թաթաւը, երրորդ՝ ի ժամ խաչին:

### ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՅՈՎԱՆՆՈՒ

Բան<sup>1</sup>. «Եւ զիտէք<sup>2</sup>, զի ճշմարիտ է» (Յովի. Ե 32):

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Այսինքն<sup>3</sup> վկայութիւն նորա վասն իմ:

Եւ յայտ է ի չորից. նախ՝ զի ելէք յանապատն հարցանել զնա եւ մկրտիլ: Երկրորդ<sup>4</sup>. վասն սրբութեան վարուցն ճշմարիտ վկայէ: Երրորդ. զի Զաքարիա հոգւովն մարգարէացաւ. «Գնասցես<sup>5</sup> առաջի Տեառն՝ տալ զգիտութիւն<sup>6</sup> փրկութեան<sup>7</sup> ժողովրդեան», եւ փրկութեան վկայութիւն պարտ է, զի ճշմարիտ լինիցի: Զորրորդ. զի<sup>8</sup> Եսայի ասէ. «Զայն բարբառոյ յանապատի<sup>9</sup>, պատրաստ արարէք զճանապարհս Տեառն» (Եսայի Խ 3), եւ այլն, եւ Մաղաքիա. «Ես առաքեցից զհրեշտակ իմ առաջի քո» (Իմնտ. Մաղաք. Գ 1):

Ապա ուրեմն ճշմարիտ է վկայութիւն նորա:

Բան. «Դուք առաքեցէք առ Յովաննէս» (Յովի. Ե 33):

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Այն է, որ գնացին քահանայք եւ ղեւտացիք առ Յովաննէս, եւ նա վկայեաց ճշմարտութեան, այսինքն՝ Քրիստոսի, վկայելով, թէ Թիսուս էր Քրիստոս, եւ վասն ինքեան ուրանալով ասաց. «Չեմ ես Քրիստոսն» (տես Յովի. Ա 20) եւ այլն:

Եւ զիտելի է, զի չորից ոմանց վկայութիւն ընդունելի է եւ ճշմարիտ<sup>10</sup>, եւ այս տեսանի առ Յովաննէս. նախ՝ զի յայտնի սուրբ լիցի. եւ Յովաննէս ոչ ուտէր եւ ոչ ըմպէր: Երկրորդ. վկայեալ՝ եւ Յովաննու մարգարէքն վկայեն: Երրորդ. զի նախ հարցանեն զվկայն, որպէս նոքա զՅովաննէս հարցին: Զորրորդ. զի զայլմէ վկայեցէ, որպէս Յովաննէս զՔրիստոսէ:

Ապա յայտ է, զի ոչ վկայեալն եւ անսուրբն եւ առանց հարցանելոյ վկային, եւ որ վասն ինքեան վկայէ, անընդունելի է:

<sup>1</sup> B չեք

<sup>2</sup> A B զիտեմք

<sup>3</sup> B չեք

<sup>4</sup> B չեք

<sup>5</sup> C գնասցէ

<sup>6</sup> B զիրկութիւն

<sup>7</sup> C չեք

<sup>8</sup> C չեք

<sup>9</sup> C չեք

<sup>10</sup> C չեք եւ ճշմարիտ

Բան. «Այլ ես<sup>1</sup> ոչ [Ե]թէ ի մարդկանէ առնուն վկայութիւն» (Յովհ. Ե 34):

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ<sup>2</sup>. Յուցանէ զմեծութիւն բնութեան իւրոյ, իբրու ասել, թէ՝ ես առնում զվկայութիւն Յովաննու, ոչ թէ վկայութիւն նորա մեծ առնիցէ զիս, կամ թէ կարաւտ եմ վկայութեան մարդոյ, այլ վասն ձերոյ փրկութեան, զի դուք վկայութիւն ընկալջիք եւ այնու ապրեսջիք ի դատաստանէն:

### Վասն Հասարակ վկայից

Եւ գիտելի է, զի ճշմարիտ վկայն զամենայն սուտ կարծիս<sup>3</sup> խափանէ եւ զծածուկ ճշմարիտն յայտնէ, եւ զվկայեալն մեծացուցանէ, իսկ սուտ վկայն ընդդէմ այսմ զճշմարիտն խափանէ եւ զսուտն յայտնէ:

Եւ դարձեալ գիտելի է, զի ամենայն վկայք յերեք բաժանին, զի են, որ վկայն մեծ է, քան զվկայեալն, որպէս ցուցաւ ըստ աշշարհի, եւ են, որ վկայելն մեծ է, քան զվկայն, որպէս Քրիստոս քան զՅովաննէս: Եւ են, որ Հաւասարք են վկայն եւ վկայեալն, որպէս Հայր վկայեաց ի վերայ Որդւոյ:

Եւ դարձեալ՝ վկայութիւնք երեք բաժինք են, զի են վկայութիւնք, որ վկայելոյն է շահ, որպէս որք յաշխարհի, եւ են որք վկայողացն են աւգուտ, որպէս Հաւատով վկայք, եւ են վկայութիւնք, որ ընդունողացն են աւգուտ, որպէս Յովաննուն վասն Հրէիցն:

Եւ դարձեալ՝ չորք են վկայք. ոմանք բանիւ, որպէս Յովաննէս, ոմանք գրով, որպէս այլ մարգարէքն, ոմանք գործով, որպէս սրբութեամբ, ոմանք արեամբ, որպէս վկայքն:

Մեծ էր ի մարգարէսն Յովաննէս վասն չորից. նախ՝ զի յետ դարձին մինչ<sup>4</sup> ի բազում ամս այլ ոչ երեւեցաւ մարգարէ: Երկրորդ. վասն սուրբ վարուցն: Երրորդ. զմարգարէացեալն ետես: Զորրորդ. զաւրէնս եւ զշնորհս քարոզէր, վասն որոյ առաքեալ եւ մարգարէ կոչեցաւ եւ այլն:

### Վասն ճըագի

Բան. «Նա էր ճրագն» (Յովհ. Ե 35):

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> C չեք

<sup>3</sup> C կարծիսն

<sup>4</sup> C չեք

**Մեկնութիւն.** Որպէս ասեն այլ վարդապետք այսու համառաւտ բանիւ երեք պատճառս ցուցանէ վասն ընդունելի վկայութեան Յովաննու.

Նախ՝ վասն կարապետ գոլոյն, ուստի ասէ. «Նա էր ճրագն», այսինքն՝ առաքեալ եւ կարապետ, զի որպէս ճրագն ոչ ունի յինքենէ լոյս, սոյնպէս եւ Յովաննէս ոչ էր լոյս, այլ զի վկայեսցէ վասն Լոսոյն (Յովի. Ա 8):

**Երկրորդ.** վասն սիրոյ եւ նախանձուն ջերմութեան, որպէս ասէ. «Լուցեալ էր» (Յովի. Ե 35), այսինքն՝ վառեալ, քանզի վասն նախանձաւոր սիրոյն նա զմահ ընկալաւ:

**Երրորդ.** վասն երեւման սրբութեան վարուցն, վասն այն ոմանք համարեցան զնա Քրիստոս գոլ, վասն որոյ ասէ՝ ծագեալ (Յովի. Ե 35):

**Իսկ Ոսկերեանն չորս կերպիւ ասէ ճրագ համեմատեալ ընդ արեգակն արդարութեան, որ է Քրիստոս.**

Նախ՝ զի ճրագն նուազ ունի զլոյսն առ արեգակն, սոյնպէս Յովաննէս առ Քրիստոս:

**Երկրորդ.** զի ծածկի ի լուսոյ արեգականն, սոյնպէս նշանքն Քրիստոսի եւ մկրտութիւն ծածկեաց զՅովաննուն:

**Երրորդ.** ի գիշերն լուսաւորէ, սոյնպէս Յովաննէս ի ստուերացեալ միտս նոցա: Եւ աղջամդջին ասէ, զի տգիտութեամբ եւ անհաւատութեամբ էին խաւարեալ: Իսկ ծագելն երիւք է, այսինքն՝ սրբութեամբ էր եւ մկրտութեամբ<sup>1</sup>, եւ քարոզութեամբն:

**Չորրորդ** պատճառ. զի ճրագն ոչ ունի բնութեամբ լոյս, այլ ի հրոյն ստացեալ, սոյնպէս Յովաննէս զամենայն շնորհս ի վերուստ ընկալաւ: Իսկ արեգակն Քրիստոս նախ՝ զի բնութեամբ է լոյս, երկրորդ<sup>2</sup> անորոշելի, երրորդ՝ միշտ, չորրորդ՝ համայնից լոյս եւ ճառագայթ:

**Դարձեալ վասն յատկութեան ճրագի**

**Ժողովեալ<sup>3</sup> ասեմ զյատկութիւն ճրագի տաս կերպիւ.**

Նախ՝ որպէս ճրագն ի խաւարի լուսաւորէ եւ ի ծագել արեգականն նուազի, սոյնպէս Յովաննէս նախ քան զՔրիստոս լուսաւորէր զխաւարեալ միտս հրէիցն:

<sup>1</sup> Ը մկրտութեամբն

<sup>2</sup> Ե չիք է լոյս, երկրորդ

<sup>3</sup> Ը եւ ժողովեալ

**Երկրորդ.** զի ճրագն յայլմէ ունի զլոյսն, սոյնպէս Յովաննէս՝ ի Քրիստոս:

**Երրորդ.** զի ճրագն ոչ միշտ լուսաւորէ, այլ փութով շիջանի, սոյնպէս եւ Յովաննէս:

**Չորրորդ.** զի ճրագն ի մին տեղւոջ տայ զլոյս, սոյնպէս Յովաննէս միայն հրէից ազգին:

**Հինգերորդ.** ըստ մտաց, զի «ճրագ նարմնոյ ակն է» (Մատթ. Զ 22, Դուկ. ԺԱ 34), ասաց Տէրն, զի որպէս ի մարմինս մեր պատուական աչքն է, սոյնպէս եւ ի մարգարէսն պատուական է Յովաննէս:

**Վեցերորդ.** ճրագն զընթացս լուսոյն զառիվեր ունի, սոյնպէս եւ Յովաննէս զբան քարոզութեան իւրոյ առ Բանն Աստուած ունէր, առ որ ասէր. «Գաօն Աստուծոյ» եւ այլն:

**Եւթներորդ.** զի պայծառ է լոյս ճրագին, նոյնպէս եւ Յովաննէս պայծառ առաքինութեամբ եւ ազատ յամենայն ախտից:

**Ութերորդ.** զի յորժամ ճրագ վառեմք, նշանակ է գալ գիշերոյ, սոյնպէս եւ Յովաննէս քարոզութեամբն նշանակ էր զկորուստ ազգին հրէից, այսինքն՝ ի խորս անհաւատութեան մերձիլ:

**Իններորդ.** զի ճրագն ի մին մասն ունի զլոյսն, իսկ այլն ամենայն տգեղ երեւի, սոյնպէս Յովաննէս հոգւով էր պայծառ, իսկ մարմնովն մերկ եւ անզարդ:

**Տասներորդ.** զի ճրագն ի վերայ աշտանակի դնի, սոյնպէս Յովաննէս բարձրացաւ քարոզութեամբն առաւել<sup>1</sup> քան զամենայն մարգարէս, զի զԱստուած ետես աչաւք եւ մկրտեաց եւ մեծ ի ծնունդով վկայեցաւ ի Քրիստոս:

**Բան.** «Եւ դուք կամեցարուք ցնծալ առ ժամանակ մի ի լոյս նորա<sup>2</sup>»

(Յովի. Ե 35):

**Մեկնութիւն<sup>3</sup>.** Յիրաւի առ ժամանակ մի, զի թէպէտ եւ զնա մեծ քան Քրիստոս համարեցան, սակայն յետոյ նախանձեցան եւ ի մահ մատնեցին: Դարձեալ՝ ցուցանէ ամենայն բանս յետ գլխատմանն Յովաննու լինել<sup>4</sup>, վասն այն յանցեալն պատմէ զնմանէ:

**Այսքան յառաջին վկայութիւն Յովաննու:**

### Վասն գործոյ վկայիցն

**Բան.** «Այլ ես ունիմ վկայութիւն մեծ եւս» (Յովի. Ե 36):

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> A B չեք ի լոյս նորա

<sup>3</sup> A C չեք

<sup>4</sup> A B չեք

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Եւ աստ երեք վկայութիւն բերէ յինքեան. նախ՝ զգործ սքանչելեացն: Երկրորդ. զձայնն Հաւը ի Յորդանանն եւ ի Թաբաւը: Երրորդ. աստուածային Գրոց մարգարէիցն, որպէս ասէ. «Քննեցէք զԳիրս» (Յովի. Ե 39):

**Վասն առաջնոյն ասէ.** «Ես ունիմ վկայութիւն մեծ եւս քան զՅովանու» (Յովի. Ե 36), եւ այս վասն չորից.

Նախ՝ զի աստուածային վկայութիւն վասն ամենատես գիտոթեան եւ վասն անփոփոխելի գոլոյն մեծ է քան զՅովաննէս<sup>1</sup>:

**Երկրորդ.** զի գործ սքանչելեացն կարողութիւն Աստուծոյ է եւ ոչ մարդոյ, ըստ այնմ. «Դու ես Աստուած, որ առնես զսքանչելիս միայն» (Սահմ. ՂԶ 14):

**Երրորդ.** զի գործ սքանչելեացն հրապարակատես եւ մնացական է, իսկ բանքն վկայութեան ոմանցէ եւ լուծանելի<sup>2</sup>:

**Չորրորդ.** զի ամենայն գործք զմեծութիւն գործողին յայտնեն, ըստ այնմ. «Գործք Տեառն զՏէր աւրհնեցէք» (Ղան. Գ 57), այսինքն՝ յայտնեցէք եւ փառաւորեցէք, նոյնպէս գործ սքանչելեացն Քրիստոսի յայտնի ցուցանէ, թէ Աստուած է Քրիստոս, եւ զի մարմնով կատարէր, Աստուած էր մարմինն, եւ Հոգւով իշխանութեամբ խաւսէր, Աստուած էր Հոգին: Եւ զի բանիւն առնէր զնշանս, Աստուծոյ էր Բանն: Եւ զի կամաւքն բժշկէր, Աստուծոյ էր կամքն, եւ այլն նմանապես, որպէս<sup>3</sup> ասէ:

**Բան.** «Եւ գործն, զոր ես գործեմ, նորին վկայեն վասն իմ<sup>4</sup>» (տես Յովի. Ե 36):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ<sup>5</sup>.** Ոմանք վարդապետք վկայական<sup>6</sup> գործ ոչ միայն զսքանչելիքն ասեն<sup>7</sup>, այլ եւ զգործ սրբութեան եւ իմաստութեան Քրիստոսի, որովք նա ամենեւին աստուածային երեւէր: Այսքան յառաջին վկայութիւն վասն գործոցն աստուածային:

### Վասն վկայութեան Հաւը

**Բան.** «Եւ որ առաքեացն զիս՝ Դայր, նա վկայեաց վասն իմ<sup>8</sup>» (Յովի. Ե 37):

<sup>1</sup> Ա Յովաննու, Ը զՅովաննուն

<sup>2</sup> Ը ձեռագիրը Երկրորդը և Երրորդը հակառակ է ներկայացնում:

<sup>3</sup> Ա Բ որ

<sup>4</sup> Ա Բ չեք վասն իմ

<sup>5</sup> Ա Բ չեք

<sup>6</sup> Բ զգայական

<sup>7</sup> Բ առնեն

<sup>8</sup> Ա Բ վկայէ

Մեկնութիւն. Այս երրորդ վկայութիւն է ըստ կարգի, եւ երկրորդ՝ ըստ<sup>1</sup> գործոցն աստուածային: Պիտառութիւն վկայութիւն լսի, եւ գունակն՝ նման:

Հարց. Վասն Է՞ր Հայր ի յերկնից վկայեաց:

Պատասխան. Վասն չորից. Նախ՝ զի ցուցցէ, թէ երկնաւոր է վկայն: Երկրորդ. զի յերկնից է վկայեալն: Երրորդ. Եւ յերկինս հանէ զլսողս հաւատով: Չորրորդ. զի բազումք լսիցեն զձայնն շար:

Եւ զի՞նչ էր ձայնն, այսինքն՝ «Դա է Որդի իմ սիրելի» (Մատթ. 4 17, Մարկ. Թ 6): Դա ասելովն ցուցանէ, զի միաւորեալ է բնութեամբ, զի չասաց, որ ի դմա է: Դարձեալ՝ ցուցանէ զմի անձնաւորութիւն, եւ մի է<sup>2</sup> դէմ Բանին մարդացելոյ, զի չասաց՝ դոքա Որդի իմ, զի բնութեամբ է Որդի եւ ոչ չնորհաւք, վասն այն ասէ սիրելի, այսինքն՝ յէութենէ իմմէ ծնեալ, եւ փառակից Որդի: Եւ զայս բարբառ ի թաբաւը եւ մերձ առ խաչին վասն փառացն վկայեաց, այլ դեռեւս միայն զմկրտութեան էին լուեալ:

Բան. «Դուք ոչ զձայն նորա [Երբէք] լուարուք, եւ ոչ զտեսիլ նորա տեսէք<sup>3</sup>, եւ ոչ զբան նորա ունիք<sup>4</sup> [ի ձեզ բնակեալ]» (Յովհ. Ե 37-38):

Մեկնութիւն<sup>5</sup>. Նախ՝ զի այնպիսի ձայն ոչ երբէք լուան, զի թէպէտ առ Մովսէս եւ յԱբրահամ<sup>6</sup> եղեւ ձայն, այլ ոչ թէ՝ Որդի իմ, եւ թէ յաւրինակն տեսին աղաւնի առ նոյիւ, եւ այլն, այլ զճշմարիտ աղաւնակերպ Հոգին անդ տեսին, եւ թէպէտ զԲանն Աստուծոյ ունէին ի Գիրս, այլ զարդիւնք<sup>7</sup> եւ զկատարումն, որ էր մարմնացեալ Բանն<sup>8</sup>, այժմ տեսին ի մէջ ինքեանց մարմնով բնակեալ: տե՛ս անդ, ուր ասաց. «Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ<sup>9</sup>» (Յովհ. Ա 14), աստ լուծանէ զտարակոյսն, զի բնակելն այն է, որ մարմնով ի մէջ մարդկան բնակեցաւ, ապա թէ բնակութեամբ է ի մարմինն, որպէս երկարնակն ասէ, եւ ի մեզ բնակութեամբ, չէ ինչ առաւելքան զմեզ եւ զայլ սուրբս: Եւ դարձեալ՝ բնակարանն ի մեզ բնակէ եւ ոչ բնակիչն, եւ դարձեալ՝ մեք տաճարին լինիմք տաճար եւ ոչ Աստուծոյ:

Բան. «Դուք ոչ զձայն նորա [Երբէք] լուարուք» (Յովհ. Ե 37):

<sup>1</sup> B չիք

<sup>2</sup> C եւ զմի

<sup>3</sup> C չիք

<sup>4</sup> A B չիք նորա ունիք

<sup>5</sup> A չիք

<sup>6</sup> B Աբրահամ եւ Մովսէս

<sup>7</sup> C զարդիւնքն

<sup>8</sup> B Բանն մարմնացեալ

<sup>9</sup> A B չիք ի մեզ

**ՄԵԼԻՆՈՒԹԻՒՆ.** Դարձեալ՝ ոմանք սոյնպէս մեկնեն, եթէ իր ինչ աստուածային երեք կերպիւ ցուցանի.

Նախ՝ զգալի նշանաւ, որպէս ի մկրտութիւն եւ ի Թաթաւը եղեւ ձայն զգալի, եւ այնպէս ոչ յայտնեցաւ նոցա<sup>1</sup>, զի ըստ ոմանց ոչ էին մերձ հրէայքն՝ հալածիչքն Քրիստոսի, վասն այն ասէ. «Ոչ զձայն նորա լուարուք»:

**ԵՐԿՐՈՐԴ.** իր ինչ ցուցանի յԱստուծոյ տեսութեամբ աստուածային էութեան, որպէս եւ երանելեացն յայտնի, եւ զայս Քրիստոսի ի բաց բառնայ ի հրէիցն՝ ասելով. «Ոչ զտեսիլ նորա տեսէք<sup>2</sup>, այսինքն՝ զէութիւն:

**ԵՐՐՈՐԴ.** իր ինչ ցուցանի աստուածային ազդմամբ ի միտս, եւ զայս բառնայ ի նոցանէ՝ ասելով. «Եւ ոչ զբան նորա ունիք ի ձեզ բնակեալ» (Յովի. Ե 38), եւ ապա Քրիստոս ցուցանէ զպատճառ:

Բան. «Զի զոր նա առաքեաց, դուք նմա ոչ հաւատայք» (Յովի. Ե 38):

**ՄԵԼԻՆՈՒԹԻՒՆ.** իբրու ասել. այս եղեւ ոչ վասն պակասութեան ինչ Հաւը<sup>3</sup> Աստուծոյ, այլ վասն ձերոյ անհաւատութեան, եւ այսմ մերձ դնէ Քրիստոս զվկայութիւն Աստուածաշունչ Գրոց:

### ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՍՊԵՐԲ ԳՐՈՑ

Բան. «ՔՅՈՒԵցէք զԳիրս» (Յովի. Ե 39):

**ՄԵԼԻՆՈՒԹԻՒՆ.** Այս չորրորդ վկայութիւնքն է, եւ զի ըստ աւրինացն ամենայն մարդոյ բան յերից վկայից հաստատի, այլ զի Քրիստոս Աստուած մարդացեալ էր, պարտ էր չորս վկայ լինել, վասն որոյ եւ չորք աւետարանիչք եղեն վկայք Քրիստոսի:

Եւ տես զգեղեցիկ կարգ վկայիցն ի ներքուստ ի վեր. նախ՝ զՅովաննուն եղ, զի մարդ էր, եւ ապա զգործոցն, զի Աստուծոյ մարդացելոյ էր, եւ ապա զբարձրագոյնն Հաւը եւ Հոգւոյն Սրբոյ:

Եւ Սուրբ Գրոց վկայութիւն Հաւասար է երիցն. նախ՝ զի ի Հոգւոյն Սրբոյ է, երկրորդ՝ առ նոյն վկայեալն է: Իսկ չորիւք առաւել. նախ՝ զի ի բացեայ վկայեցին, երկրորդ՝ զի բազումք էին, երրորդ՝ զի բազում բանս, չորրորդ՝ զի բազում անգամ ի միտս վկայեն:

<sup>1</sup> Ա Բ չեք

<sup>2</sup> Ա Բ չեք

<sup>3</sup> Ա Բ հաւասար

### Վասն քննութեան գրոց

**Իսկ որ ասէ.** «ՔԱՅԵցէք զԳիրս», բազում ունի տեսութիւն, եւ<sup>1</sup> ասեմ վեց մտաւք.

Նախ՝ Գիր ասելով զաւրէնքն Մովսիսի եւ զամենայն մարդարէս նշանակէ, եւ քննեցէք ասէ եւ ոչ թէ ընթերցէք. նախ՝ զի ընթեռնուլն զգայութեանց է, եւ քննելն՝ մտաց: եւ դարձեալ՝ զ Գիրն ընթեռնումք եւ զմիտս բանին քննեմք:

Երկրորդ.<sup>2</sup> քննեցէք ասէ, զի բանք, որ վասն Քրիստոսի յոյժ ծածկեալ են<sup>3</sup> ի Սուրբ<sup>4</sup> Գիրս եւ ոչ յայտնիք, այլ իբրեւ զգանձս թաքուցեալ, ըստ այնմ. «Դնէ ի խոր<sup>5</sup> զգանձ իւր» (Սաղմ. ԼԲ 7): Եւ այս է քննել, որպէս աղբիւր, զի պեղեմք յերկրէ եւ իբրեւ զգոհար ոսկւոյ սրբեմք ի հողոյ, ըստ այնմ. «Բանք Տեառն ընտրեալ են<sup>6</sup> եւ սրբեալ եւթնապատիկ ի հողոյ» (հմտ. Սաղմ. ԺԱ 7):

Երրորդ. քննեցէք ասէ, այն է, յորժամ վարդապետք զգասն ասեն քննութեամք եւ աշակերտքն քննեն վերստին՝ յիշելով զբանն ի միտս եւ ի լեզուս, որպէս սուրբ կենդանիք որոճեն զկերակուրս:

Չորրորդ. քննեմք զգիրս աւտարս, որպէս արաւտականք հոտովն ի վնասակարէն փախչին եւ զշահեկանսն ճարակեն, սոյնպէս եւ մեզ ի հերձուածողաց բանից փախչելի է եւ զուղղափառսն ուսանելի, եւ որպէս զգրամն որոշեն երեք կերպիւ. նախ՝ զծածկեալ պղինձն, երկրորդ՝ զպատկեր գրոյն, երրորդ՝ զթեթեւն որոշեն, սոյնպէս եւ վարդապետաց պարտ է զբանս ճանաչել եւ որոշել զժիւրն եւ զճշմարիտն, եւ զայլն:

Հինգերորդ. «ՔԱՅԵցէք զԳիրս»: Գիր աւրինակ է զնոյն ինքն զՏէր մեր, զի Բանն Աստուած գրեցաւ, այսինքն՝ միացաւ ի մարմնի, առեալ զմելան զսուրբ արիւնն կուսական, եւ զրիչ՝ Հոգին Սուրբ՝ կամաւ Հաւր գործակից եղեալ: Եւ դարձեալ՝ որպէս տեսանի գիրն եւ անտես է Բանն ծածկեալ, սոյնպէս<sup>7</sup> մարմինն Քրիստոսի տեսանելի եւ Բանն<sup>8</sup> ծածկեալ: Եւ դարձեալ՝ որպէս գիրն յերից միացեալ է, այսինքն՝ գիրն եւ բանն եւ միտք<sup>9</sup>, սոյնպէս յերից միացեալ է մի Քրիստոս, այսինքն՝ զմարմինն եւ Հոգին եւ

<sup>1</sup> Կ իսկ եւ

<sup>2</sup> Ե չեք քննեցէք ասէ եւ ոչ թէ ... եւ զմիտս բանին քննեմք: Երկրորդ.

<sup>3</sup> Ա չեք են

<sup>4</sup> Ե չեք

<sup>5</sup> Ը խորս

<sup>6</sup> Ա Բ չեք են

<sup>7</sup> Ը չեք որպէս տեսանի ... սոյնպէս

<sup>8</sup> Ա Բ չեք

<sup>9</sup> Ը միտքն

**Բանն Աստուած միաւորեալ մի Քրիստոս եւ մի Որդի խոստովանեալ:**

Վեցերորդ. Քննեցէք զԳիրս սոյնպէս, զի արտաքինքն, որպէս ալբապետաւք ի յԱրարածոց իմացան զԱստուած, իսկ Գիրն Մովսիսի, որպէս գիր եւ հեգ: Եւ այլ մարգարէքն որպէս զհեգն ընթեռնուին եւ նոր աւրէնս զմիտու բանին որպէս վարդապետք ուսուցանեն ի Սուրբ Հոգւոյն ուսեալք, զի գիրն սպանանէ, բայց հոգին կեցուցանէ:

**Այս վեց մտաւքս իմանի ասելն. «Քննեցէք զԳիրս<sup>1</sup>:**

Բան. «Զի դուք համարիք [նոքաւք] ունել զկեանսն» (Յովհ. Ե 39):

ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ<sup>2</sup>. Յիրաւի ասէ «Յանարիք ունել», եւ ոչ ասէ՝ ունիք. նախ՝ ըստ Ոսկէբերանին, զի ոչ ունէին զարդիւնս եւ զպտուղս Գրոյն, այսինքն՝ հաւատք եւ իմացումն, այլ միայն զ Գիրս ընթեռնուին եւ այնու համարէին հասանել փրկութեան: Եւ սոյնպէս մեկնել ասաց Քրիստոս զայս ի նախատինս հրէիցն: Դարձեալ կարելի է եւ սոյնպէս մեկնել զբանս ի գովութիւն Սուրբ Գրոց, զի նոքաւք համարիք, այսինքն՝ նոցա հաւատովն եւ պահպանութեամբն հասանի մարդ ի փրկութիւն կենացն: Եւ սոյնպէս է Սուրբ Գիրն, զի որք գրեն, եւ որք ընթեռնուն, եւ որք մեկնեն, եւ որք լսեն, հաւատով պահեն, եւ պատճառ է<sup>3</sup> կենացն յաւիտենից:

Իսկ զպատճառ քննելոյ զ Գիրս դնէ՝ ասելով.

### Վկայութիւնք մարգարէից

Բան. «Եւ նոքին իսկ են, որ<sup>4</sup> վկայեն վասն իմ» (Յովհ. Ե 39):

ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ. Աստ այսմ յեղանակի, զի ժամանակ գալստեանն Քրիստոսի գրեալ էր յԱրարածքն<sup>5</sup>. «Մի պակասեսցէ պետ եւ իշխան ի Յուղայէ, մինչեւ եկեսցէ այն, որ գալոցն է» (հմնտ. Ծննդ. Խթ 10): Եւ դարձեալ Դանիէլ եզրել զթիւ եւթանասուն շաբաթուց ամացն դնէ, եւ զկնի զգալուստն Քրիստոսի ասէ: Դարձեալ՝ Միքիա զտեղի ծննդեանն Քրիստոսի դնէ. «Եւ գու, Բեթղեհէմ, երկիր Յուղայ» (տես Սիքիա Ե 2) եւ այլն: Եւ դարձեալ՝ զկերպ ծնանելոյն գրեալ է եսայի. «Ահա կոյսն<sup>6</sup> յղասցի եւ ծնցի Որդի<sup>7</sup>»

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> B չեք

<sup>3</sup> C եւ պահեն, պատճառ է

<sup>4</sup> A B չեք իսկ են, որ

<sup>5</sup> C յԱրարածքն, այսինքն

<sup>6</sup> C կոյս

<sup>7</sup> C ծնցի

(Եսայի Ե 14) Եւ այլն: Ուստի յայտ է, զի Քրիստոս ծնանելոց էր առանց ապականութեան մաւրն, եւ ծնեալն էմմանուէլ, այսինքն՝ Աստուած մարդացեալ կոչի: Եւ կեանք վարուցն Քրիստոսի գրեալ է Զաքարիա, յորժամ ասէ. «Ահա, թագաւոր քո գայ առ քեզ, արդար եւ փրկիչ, նոյն հեզ» (Զաքար. Թ 9) Եւ այլն: Եւ զկերպ մահուանն Քրիստոսի գրեալ է Եսայի. «Իբրեւ զոչխար ի սպանդ վարեցաւ» (Եսայի ԾԳ 7) Եւ այլն, սոյնպէս զխոցումն եւ զթաղումն եւ զյարութիւն եւ զհամբարձումն, եւ զնստելն ընդ աջմէ Հաւը, ասէ Դաւիթ: Եւ համառաւտ ասելով ամենայն խորհուրդ մարդեղութեան Քրիստոսի գրեալ են ի Հին Կտակարանս եւ ի Քրիստոս կատարեցան, վասն այն հրէայքն կարէին գիտենալ, թէ Յիսուս է Քրիստոսն՝ խաւսեցեալ աւրինաւք եւ մարդարէիւք: Եւ թէպէտ Սուրբ Գիրք վկայէին Քրիստոսի, հրէայքն զնա ոչ ընդունէին, վասն որոյ ասէ.

Բան. «Եւ դուք ոչ կամիք գալ առ իս, զի զկեանս ունիցիք» (Յովի. Ե 40-41):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ<sup>2</sup>.** Նախ զայն ասէ, զի սակաւ հրէայք հաւատով եկին առ Քրիստոս: Դարձեալ՝ առաւել յանդիմանէ «Ոչ կամիք» ասէ, եւ ոչ թէ՝ «Զգիտէք զաւրէնսն եւ զվկայութիւնսն վասն իմ»:

### Վասն փառաց

Բան. «Ես զփառս ի մարդկանէ ոչ առնում» (Յովի. Ե 41):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Այսինքն՝ ոչ խնդրեմ, զի հրէայքն վասն կրկին պատճառի հալածէին զՔրիստոս. Նախ՝ վասն հայհոյութեան, թէ՝ «Զանձն Քո Աստուած առնես» (Յովի. Ժ 33): Երկրորդ. վասն շաբաթուն լուծմանն:

Վասն առաջնոյն ասէ. «Ես փառս ոչ խնդրեմ հակառակ Աստուծոյ»: Վասն երկրորդին. «Դուք զսէրն Աստուծոյ ոչ ունիք, վասն այն ինձ չարիս խորհիք<sup>3</sup>»:

Եւ դարձեալ՝ չորիւք է իմացումն բանիս.

Նախ՝ զասացեալ վկայութիւնս վասն գովութեան անձին իմոյ ոչ ասացի, զի ոչ խնդրեմ զփառս մարդկան: Եւ այս<sup>4</sup> յայտնի է, յորժամ կամեցան զՔրիստոս թագաւոր առնել, խոյս ետ եւ փախեաւ:

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> B չեք

<sup>3</sup> C խօսիք

<sup>4</sup> A B սոցա

**ԵՐԿՐՈՐԴ.** Կրկին է փառք, այսինքն՝ հոգեկան եւ մարմնական։ Զմարմնականն, որ է մոլորութիւն եւ սնափառութիւն, ոչ խնդրեմ, այլ զհոգեւորն։

**ԵՐՐՈՐԴ.** ի մարդկանէ փառս ոչ խնդրեմ, զի եւ հրեշտակք իմ փառաւորեն զիս, զոր սերովբէքն ասէին. «Լի են երկինք եւ երկիր փառաւք նորա» (տե՛ս Եսայի Չ 3)։

**ՉՈՐՐՈՐԴ.** մարդկան փառաց ոչ եմ կարաւտ, զի Հայր իմ փառաւորէ զիս, ըստ այնմ. «Փառաւորեա զիս առ իր քեն փառաւըն» (տե՛ս Յովհ. Ժ 5) եւ այլն։

**ՀԱՐՋ.** Վասն էր մեք հանապազ փառս տամք Աստուծոյ, եւ ինքն ասէր. «Զփառս իմ այլում ոչ կամիմ» (տե՛ս Եսայի ԽԲ 8)։

**Պատասխան.** Ասելն «Զփառս իմ այլում ոչ կամիմ» ի կողցն դարձուցանէ զմեզ, իսկ որ միշտ փառս տամք Աստուծոյ, ոչ թէ լիութիւն ինչ է նմա, զի նա անկարաւտ է՝ ոչ առաւելու եւ ոչ նուազէ, այլ մեզ է լիութիւն եւ փառք, որպէս տեսանել զլոյմն արեւու մեզ է յաւելուած եւ ոչ արեգականն, նոյնպէս փառաւորելն զԱստուծած մեզ է աւգուտ, ըստ որում. «Ես զփառաւորիչս իմ<sup>1</sup> փառաւորեմ» (տե՛ս Ա Թագ. Բ 30)։

**Բան.** «Այլ զիտեմ զձեզ» (Յովհ. Ե 42)։

**ՄԵԼՈՆԻՔԻՆ.** Թէ զսէրն Աստուծոյ ոչ ունիք յանձինս, այսինքն՝ այլոց ծանուցի այսու բանիւքս, զի ոչ ունիք զկատարեալ սէրն Աստուծոյ։ Եւ այնու յայտնի էր, զի ոչ հալածէին զթիսուս<sup>2</sup> վասն սիրոյն Աստուծոյ եւ ջատագով լինել աւրինացն, այլ զի չունէին զսէրն Աստուծոյ։

### Յանուն Հաւըն եկի

**Բան.** «Ես եկի յանուն Յաւը իմոյ եւ ոչ ընդունիք զիս» (Յովհ. Ե 43)։

**ՄԵԼՈՆԻՔԻՆ.** չորիւք է իմանալ.

**Նախ՝ զի ասէր.** «Յայր առաքեաց զիս, եւ ելի ի Յաւը եւ եկի յաշխարի» (Յովհ. Ը 42)։

**ԵՐԿՐՈՐԴ.** զի ասէր. «Ո՛չ, զի զկամս իմ արարից, այլ զկամս առաքչին իմոյ» (տե՛ս Յովհ. Չ 38)։

**ԵՐՐՈՐԴ.** զի զբանի եւ զգործոց սքանչելեաց պատճառն ի Հայր ձգէր. «Զբանն, զոր լսէք, ոչ է իմ, այլ Յաւըն» (հմմտ. Յովհ. ԽԴ 10) եւ «Ի Յաւը լսեմ եւ ուսուցանեմ» (հմմտ. Յովհ. Ը 28), այլ եւ «Յայրն, որ յիս

<sup>1</sup> Ը Հեք

<sup>2</sup> Կ զթիսուս

բնակեալ է, նա գործէ զգործս, եւ ես յանձնէ ոչինչ կարեմ առնել» (հմնտ. Յովի. ԺԴ 10) **Եւ այլ սոյնպիսիք:**

**Զորրորդ.** զի զհաւատն ի Հայր ձգէր. «Որ լսէ զբանս իմ եւ հաւատայ այնմ, որ առաքեացն զիս» (Յովի. Ե 24), **Եւ դարձեալ.** «Որ հաւատայ յիս, ոչ յիս հաւատայ, այլ յայն, որ առաքեաց<sup>1</sup>» (Յովի. ԺԲ 44) **Եւ «Զիք ոք բարի, բայց մի Աստուած»** (Մարկ. Ժ 18): **Այս է յանուն Հաւը գալն:**

### Վասն նեռինն

Բան. «Եթէ այլ ոք եկեսցէ յիւր անուն, զնա ընդունիցիք» (Յովի. Ե 43):

**Մեկնութիւն.** **Այսինքն՝** թէ ոք գայ առանց աստուածային վկայութեան, զնա կամիք ընդունել: **Եւ յայսմանէ յայտ է,** զի զսէրն **Աստուծոյ ոչ ունիք երեք կերպիւ.** նախ՝ զի վասն նախանձու հալածէք զիս, որ չեմ հակառակ: **Երկրորդ.** զիս, որ յանուն Հաւըն եկի, ոչ ընդունիք: **Երրորդ.** զնա, որ յիւր անունն գայ, ընդունիք:

**Եւ այս մասնաւոր կատարեցաւ Յուղասն եւ ի Թեւդասն, որք ասէին զանձնէ,** թէ մեծ ոմն իցէ: **Եւ դարձեալ՝ կատարի յորժամ ընդունին զնեռն, որ է դերաքրիստոսն, որ յիւր անունն գայ:** **Զորից ասացելոցն ընդդէմ եւ զինքն ասէ աստուած եւ ուրանալ տայ զծմարիտն Աստուած, եւ զինքն թլփատել տայ եւ նստի ի տաճարն Աստուծոյ, եւ զինքն ճշմարիտ մեսիս ասէ՝ խոստացեալ հրէիցն, յայնժամ հրէայքն ընդունին զնա, մինչեւ ստութիւն նորա յայտնի ի ձեռն ենովքայ եւ եղիայի, եւ մերձ դնէ զպատճառ անհաւատութեան հրէիցն:**

Բան. «Զիա՞՞ կարէք դուք հաւատալ, զի փառս ի միմեանց առնուք<sup>2</sup>» (Յովի. Ե 44):

**Մեկնութիւն.** **Յուցանէ,** թէ փառք աշխարհիս խափան լինի հաւատոցն Քրիստոսի:

**Եւ այս յայտ է ի չորից.**

Նախ՝ զի հրէայքն ուխտ եղեալ էին չխոստովանել զնա Քրիստոս, որպէս ասէ Աւետարանն. «Բազումք յետս կացին ի Քրիստոսէ» (հմնտ. Բ Պետր. Բ 21), զի սիրեցին զփառս մարդկան առաւել քան զփառս Աստուծոյ:

**Երկրորդ.** դարձեալ հրէայքն մարմնաւոր մեծութեան եւ փառաց յուսային ի ձեռն Մեսիային, իսկ զՔրիստոս աղքատ եւ անարդ տեսանէին, վասն որոյ ոչ ընդունէին, եւ զփառքն երկնա-

<sup>1</sup> С չիք եւ դարձեալ ... առաքեաց

<sup>2</sup> А В չիք ի միմեանց առնուք, С առնուլ

յին, զոր խոստանայ Քրիստոս, ոչ իմանային, եւ կարէին ի մարդքարէից գիտել, զի աղքատ լինէր ըստ մարմնոյ, իսկ զնեռն ընդունին վասն մարմնաւոր փառացն եւ մեծութեան եւ առատաբաշխ լինելոյն։ Դարձեալ՝ առ մեզ է բանս, զի փառքն աշխարհի<sup>1</sup> խափան լինի փառացն Աստուծոյ կրկին կերպիւ. նախ՝ զի սէր աշխարհիս թշնամութիւն է առ Աստուծած, զի. «Ոչ կարէք Աստուծոյ ծառայել եւ մանոնայի» (Մատթ. Զ 24, Ղուկ. Ժ 13), ~ ասէ։

**Երկրորդ.** զի վասն փառաց մարդկան եւ սիրոյ աշխարհիս ոչ ուսանիմք եւ ոչ պահեմք եւ ոչ աղաւթեմք եւ այլն, վասն այն. «Զփառս ի միմեանց առնուք եւ զփառս զառ ի միոյն Աստուծոյ ոչ խնդրէք» (Յովհ. Ե 44)։

Եւ չորիւք էր վկայութիւն, եւ չորիւք եղ յանդիմանութիւն, այսինքն՝ ոչ ունիք զկեանս եւ ոչ զսէրն Աստուծոյ, եւ զիս ոչ ընդունիք, այլ զաւտարն<sup>2</sup>, եւ զփառս Աստուծոյ ոչ խնդրէք։  
Այժմ ասէ։

### Վասն Մովսիսի

Բան. «Մի' համարիք, եթէ [ես] չարախսաւեմ առ Հայր» (Յովհ. Ե 45):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ. Յայտնեմ զչարիս ձեր:**

Եւ կրկին է միտք. նախ՝ եթէ ոչ միայն ես յայտնեմ զչարիս ձեր, այլ ես եւ այլ ոք ընդ իս, որպէս ասէ. «Գոյ, որ չարախսաւս կայ [զձէնջ], Մովսէս՝ յոր դուքն յուսացեալ էք» (Յովհ. Ե 45): Երկրորդ. զայն ասէ, թէ ես<sup>3</sup> ոչ չարախսաւեմ զձէնջ, այլ այլ ոք, զի առաջին գալստեամբն Քրիստոս եկն ի փրկել եւ ոչ դատապարտել, որպէս յայտ է, որ աղաւթէր վասն խաչողացն, բայց յերկրորդ գալստեանն դատելոց է, որպէս ասէ Երեմիա. «Ես եմ դատաւոր եւ վկայ, ~ ասէ Տէր» (Մես Երեմ. Խթ 23):

**Հարց. Մովսէս վասն է՞ր չարախսաւսէ:**

Պատասխան. նախ՝ զի ոչ իմացան զբանն Մովսիսի: Երկրորդ. զի ոչ հաւատացին Քրիստոսի: տե՛ս զմիտքն. հրէայքն վասն Մովսիսի չարախսաւէին, եւ Քրիստոս իւր կամակից<sup>4</sup> եցոյց զՄովսէս, եւ նոցա՝ չարախսաւս: Եւ տե՛ս դարձեալ որպէս Մովսէս եւ ամենայն մարդարէք վասն հրէից չարախսաւեն, նոյնպէս առաքեալք կանոնադիրք վասն յանցաւոր քրիստոնէից չարախսաւսն աստ եւ անդ:

<sup>1</sup> Ե յաշխարհիս, Ը փառք աշխարհիս

<sup>2</sup> Ե զաւտարան

<sup>3</sup> Ը չեք

<sup>4</sup> Ը համակից

Բան. «Զի [ե]թէ հաւատայիք [դուք] Մովսիսի, հաւատայի՞ք արդեաւք եւ ինձ» (Յովհ. Ե 46):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Արդեաւք ասելովն<sup>1</sup> զագատութիւն կամաց հրէիցն ցուցանէ, զի ոչ ոք հաւատայ, եթէ ոչ կամաւորապէս:

### ԳԻՐՆ ՄՈՎՍԻՍԻ

Բան. «Նա վասն ին գրեաց» (Յովհ. Ե 47):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Զորս կերպիւ գրեաց վասն Քրիստոսի. նախ՝ ի յԱրարածքն զբանն Յակովբայ. «Մի՛ պակասեացէ պետ յերանաց նորա» (տես Ծննդ. Խթ 10) եւ այլն: Երկրորդ. ի յԵրկրորդ Աւրէնքն գրէ<sup>2</sup>. «Մարգարէ յարուսցէ Տէր<sup>3</sup>» (հմնտ. Բ Օր. Ժը 15): Երրորդ. ի նոյն գրոց տեսանիցէք զկեանս ձեր կախեալ<sup>4</sup>: Զորրորդ. զոհքն եւ պատարագն եւ ողջակէզն եւ ամենայն գործք Հին Աւրինացն եւ Կոտակարանացն ծածկաբար աւրինակ էին Քրիստոսի:

Բան. «Զի թէ նորա Գրոցն ոչ հաւատայք, զիա՞րդ ինոց բանից հաւատայցէք» (Յովհ. Ե 47):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Ոչ թէ առաւել մեծ եւ արժանաւոր էր Մովսէս, զի զմեծութիւն ամենայն ի Քրիստոսէ ունէր, այլ վասն<sup>5</sup> մտաց նոցա զիջանէ, որ ի միտս հրէիցն մեծ կարծէին զՄովսէս, որպէս յայտ է ի մեկնիչդ<sup>lxxv</sup>: Եւ գիտելի է, զի աւրէնքն Մովսիսի Գիր կոչի, զի Մովսէս զիւր վարդապետութիւն գրով ետ, իսկ Քրիստոսի վարդապետութիւն «Բան» ասի, զի բանիւ քարոզեաց եւ ոչ ի քարտէզ գրեաց: Նոյնպէս եւ Հոգին Սուրբ ի սիրտս առաքելոցն զբանն տպաւորեաց, յորժամ էջ ի նոսա, բայց յետոյ առաքեալքն գրեցին հրամանաւն Քրիստոսի. նախ՝ զի գիրն<sup>6</sup> անկատարիցն է, եւ բանն՝ կատարելոցն: Երկրորդ. գիրն զմի եւ զնոյն խաւսի, եւ բանն՝ զբագումս: Երրորդ. գիրն ջնջելի է, եւ բանն անջինջ մնայ: Զորրորդ. գիրն<sup>7</sup> յանկենդան տախտակս գրի, իսկ բանն՝ ի<sup>8</sup> կենդանի տախտակս եւ ի հոգի եւ ի մարմինն գրի:

Եւ այլ պատճառն ասացաւ ի սկիզբն մեկնութեան Մատթէոս գլխոյն<sup>lxxvi</sup>:

**Այսքան առ այս:**

<sup>1</sup> Կ ասելն

<sup>2</sup> Կ գրեաց

<sup>3</sup> Կ ձեզ Տէր

<sup>4</sup> Կ կախեալ զիայստ

<sup>5</sup> Կ ըստ

<sup>6</sup> Բ նախ՝ զգիրն

<sup>7</sup> Բ չիք

<sup>8</sup> Բ չիք

## ԳլոՒԽ Q

Երկրորդ գլուխ երկրորդ հատորիս

«Յետ այսորիկ գնաց Յիսուս» (Յովի. Զ 1):

**ՄԵԼՆՈՎԾԻՒՆ.** Այս վեցերորդ գլուխ է ըստ կարգի եւ երկրորդ՝ ըստ հատորի: Նախ ճառեաց աւետարանիչս վասն կենդանական պարզեւացն Աստուծոյ, աստ<sup>1</sup> ճառէ վասն հոգեւոր սննդեան եւ կերակրոյ, եւ նախ ճառէ վասն մարմնաւոր կերակրոյն, որ աճեցոյց զհացն, եւ ապա քարչէ ի գիտութիւն հոգեւոր կերակրոյ՝ հացի մարմնոյ իւրոյ: Եւ զի որ յառաջ քան զայս գլուխն եցոյց ի ներգործութենէն, զի Աստուած է Քրիստոս չորս կերպիւ, աստ ցուցանէ ի կերակրելոյն<sup>2</sup>, զի որ ոք հաւասարի Աստուծոյ կերակրելով եւ սնուցանելով, Աստուած է, իսկ Քրիստոս եւ այսու հաւասարի Աստուծոյ, ապա ուրեմն Աստուած է Քրիստոս:

Եւ զ Քրիստոսի կերակրելն եւ սնուցանելն ցուցանէ չորս կերպիւ. նախ՝ սքանչելեաւք աճմամբ նկանակացն, եւ երկրորդ՝ ձկանցն: Երկրորդ. միխթարութեամբ աշակերտացն ի վերայ ծովուն, որ եւ ասացն. «Ես եմ, մի՛ Երկնչիր» (Յովի. Զ 20): Երրորդ. քարոզութեամբն, որով եցոյց զինքն Հաց Կենաց: Չորրորդ. խոստմամբ Պատարագին, յորժամ ասաց. «Սարմին իմ ճշնարիտ կերակուր է, եւ արիւն իմ ճշնարիտ ընպելի<sup>3</sup>» (Յովի. Զ 56) եւ այլն:

**Իսկ այժմ սկիզբն դնէ վասն առաջնոյն՝ ասելով.**

**Բան<sup>4</sup>.** «Յետ այսորիկ գնաց Յիսուս» (Յովի. Զ 1):

Եւ գիտելի է, զի խնդրէին հրէայքն սպանանել զ Յիսուս, եւ դեռեւս ոչ էր հասեալ ժամ նորա, վասն որոյ ել ի Հրէաստանէ եւ գնաց աւրինակ տալով մեզ, զի տեղի տացուք ի ժամանակի փորձութեան, զի մարթ է խոյս տալ հաւատացելոցն Քրիստոսի առժամանակ մի: Եւ ծովն գալիլեացւոց Տիբերեայ ասի, զի յերկիրն գալիլեացւոց քաղաք մի անուն Սեներէթ, ի վիճակն նեփթաղիմաշինեաց Հերովդէս եւ մեծացոյց զնա յանուն Տիբերեայ կայսեր: Եւ այս երկրորդ անգամ գնալն է յերուսաղէմ ի Գալիլեայ, զի առջին այն է, որ գնաց ի Սամարիայ եւ ի Գալիլեայ:

**Բան.** «Եւ զիետ երթայի նորա ժողովուրդ բազում» (Յովի. Զ 2):

<sup>1</sup> A B այս

<sup>2</sup> C կերակրոյն

<sup>3</sup> A B չեք իմ ճշնարիտ ընպելի

<sup>4</sup> A B չեք

**Մեկնութիւն.** Վասն չորից. նախ՝ ոմանք նենգութեամբ, որպէս փարիսեցիքն, որ կամէին զնա որսալ բանիւք: Երկրորդ. ոմանք ի սիրոյ, այսինքն՝ հաւատացեալքն: Երրորդ. ոմանք ի լսել զբանն փափագանաւք: Զորրորդ. ոմանք վասն սքանչելեաց տեսութեան միայն, այլ ոչ վասն հաւատոցն ճշմարտութեան:

Բան. «Զի տեսանէին զնշանսն, զոր առնէր ի վերայ հիւանդաց<sup>1</sup>» (Յովի. Զ 2):

**Մեկնութիւն.** Առ ի ցուցանել, զի սքանչելիքն այն լինէին աստուածահրաշ զաւրութեամբն Քրիստոսի, զի կատարելապէս առողջանային, որպէս թէ չէր բնաւ հիւանդացեալ զորս բժշկէր Քրիստոս, քանզի կախարդութեամբ լինի երբեմն զարմանալի բան, սակայն անաւգուտ, որպէս զխաւսիլ պատկերաց եւ այլ սոյնպիսիք:

### Թէ<sup>2</sup> ի լեառն ել Քրիստոս

Բան. «Ել ի լեառն Յիսուս եւ անդ նստէր աշակերտաւքն հանդերձ<sup>3</sup>» (Յովի. Զ 3):

**Մեկնութիւն.** Ի լեառն ել նախ վասն<sup>4</sup> աղաւթելոյ: Երկրորդ. մեղմով զաշակերտսն ուսուցանելոյ, որպէս թէ դաս ասել:

Եւ չորս ինչ ուսուցանէ մեզ. նախ՝ յետ ժողովրդեանն քարոզելոյ պարտ է եւ զաշակերտսն ուսուցանել: Երկրորդ. նախ աղաւթել հասարակ եւ ապա առանձին: Երրորդ. հասարակաց պահել եւ յետոյ՝ առանձնակի: Զորրորդ. զգործս մարմնաւոր եւ հոգեւոր. նախ՝ պարտ է հասարակաց<sup>5</sup> գործել միաբանից եւ ապա՝ զառանձնականն, թէ չիցէ բաւական, զի ընդհանուրն պատուական է, քան զմասնաւորն<sup>6</sup>:

### Վասն զատկաց

Բան. «Եւ էր մերձ Զատիկ՝ տաւնն իրէից» (Յովի. Զ 4):

**Մեկնութիւն.** Այս երկրորդ Զատիկն է, զոր յիշէ Աւետարանն, զի առաջին խարագանաւ եհան ի տաճարէն, իսկ որ ի<sup>7</sup> Պո-

<sup>1</sup> A չիք ի վերայ հիւանդաց, C հիւանդացն

<sup>2</sup> C Յարց. թէ

<sup>3</sup> A B չիք

<sup>4</sup> C չիք

<sup>5</sup> C զհասարակացն

<sup>6</sup> C զմասնականն

<sup>7</sup> A B չիք ի

պատիկէն զհիւանդն ողջացոյց, տաւն էր Պենտէկոստէն<sup>1</sup> կամ Տաղաւարահարացն։ Այլ ոմանք ասեն, թէ այս է Տաղաւարահարացն ըստ կարգին իմացեալ, այլ ոչ է, զի<sup>2</sup> Զատիկ ասէ։

Եւ<sup>3</sup> յայսմ Զատիկի Յիսուս ոչ գնաց յերուսաղէմ վասն կրկին պատճառի. նախ՝ զի գրեալ էր յաւրէնսն վասն այնոցիկ, որ յայտնապէս թշնամիք ունիցին, ոչ երթալ ի տաւնն, զի մի նենգեսցին ի ճանապարհին։ Եւ Քրիստոս յայտնի թշնամիս ունէր զհրէայսն, որ խնդրէին սպանանել զնա։ Դարձեալ՝ որպէս Քրիստոս երբեմն պահելով զաւրէնսն ցուցանէր զինքն մարդ գոլ ճշմարտապէս ծնեալ յիսրայէլացւոցն ըստ մարմնոյ, նոյնպէս երբեմն ոչ պահելով զաւրէնսն<sup>4</sup> զինքն Աստուած ցուցանէր եւ ի վեր քան զաւրէնսն։

### Վասն նկանակացն

Բան. «Բարձ ի վեր զաշ իւր Յիսուս» (Յովի. Զ 5):

ՄԵԼՈՒԹԻՒՆ. Նախ՝ մարմնոյ աչաւք, երկրորդ՝ զգայութեամբ նայիլն ասէ։

Բան. «Եւ ետես, զի ժողովուրդ բազում գայր առ նա» (Յովի. Զ 5):

ՄԵԼՈՒԹԻՒՆ. Քանզի այնչափ ցանկային լսել զքարոզութիւն Յիսուսի եւ տեսանել զսքանչելիս նորա, մինչ զի մոռացեալ էին Հաց տանել ընդ ինքեանս<sup>5</sup>։

Բան. «Ասէ ցՓիլիպպոս. “Ուստի” զնեսցուք հաց, զի կերիցեն դոքա”» (Յովի. Զ 5):

ՄԵԼՈՒԹԻՒՆ. Եւ բանն այն, որ ի Մատթէոս ասէ. «Մատեան [առ նա] աշակերտքն եւ ասեն. “Տեղիս անապատ<sup>6</sup> է [եւ աւրս տարաժանեալ], արձակեա՛ զժողովուրդսդ”» (Սատթ. ԺԴ 15): Եւ այլն, չեն ընդդէմ միմեանց, զի նախ աշակերտքն ասացին. «Արձակեա՛ զժողովուրդսդ», եւ ապա Քրիստոս զՓիլիպպոս եհարց, զոր աստ ասէ։

Իսկ վասն է՞ր զՓիլիպպոս եհարց, ասէ մեկնիչն<sup>lxxvii</sup>, զի նմա ուղղութեան պէտք էր սքանչեաւք, զի ունէր ինչ թերութիւն, որպէս անդ ասաց. «Յոյց մեզ զՅայր, եւ շատ է մեզ» (Յովի. ԺԴ 8):

Բան. «Պատասխանի ետ Փիլիպպոս. “Երկերիւր դահեկանի հաց չէ դոցա բաւական”» (Յովի. Զ 7):

<sup>1</sup> Կ Պենտակոստէն

<sup>2</sup> Բ չիք

<sup>3</sup> Կ չիք

<sup>4</sup> Բ չիք ցուցանէր զինքն մարդ ... ոչ պահելով զալունսն

<sup>5</sup> Կ մինչ զի հաց անզամ ոչ մտածէին տանել ընդ ինքեանս

<sup>6</sup> Բ յանապատ

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Որպէս թէ ասել՝ եւ առ մեզ եւ ոչ մի դրամ ոչ<sup>1</sup> գոյ: Դարձեալ<sup>2</sup> ցուցանէ, թէ թանձրամիտ էր Փիլիպպոս, եւ ոչ հայէր ի զաւրութիւն Քրիստոսի, որ զջուրն ի գինի դարձոյց, եւ զայլ նշանսն:

Բան. «Զայս ասէր փորձելով զնամ<sup>3</sup>» (Յովի. Զ 6):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Փորձէր զնա Քրիստոս. նախ՝ զի այնու պակասութիւն գնոջն յայտնի լինէր: Երկրորդ. որպէս փորձեաց Աստուած զԱբրահամ, զի հնազանդութիւն նորա եւ հաւատք յաշխարհի յայտնի լինէր, եւ սորայս պատասխանին:

Բան. «Այլ ինքն գիտէր զինչ առնելոց էր» (Յովի. Զ 6):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Ոչ թէ հարցանէ վասն ինքեան գիտելոյ, զի չորս ինչ գիտէր աստ. նախ՝ գիտէր զպակասութիւն գնոջն: Երկրորդ. գիտէր զտեղիքն<sup>4</sup> անապատ: Երրորդ. գիտէր զպատասխանին Փիլիպպոսի: Չորրորդ. գիտէր զսքանչելիքն, որ<sup>5</sup> առնէր:

Բան. «Ասէ ցնա մի յաշակերտացն [նորա] Անդրէաս» (Յովի. Զ 8):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ<sup>6</sup>.** Մատթէոս գրեալ է, թէ աշակերտքն ասացին, եւ ոչ՝ մի ոմն (հմնտ. Մատթ. ԺԴ 17): Ասեն վարդապետք, թէ ոչ են ընդդէմ միմեանց. նախ՝ թէ անդ բազմաւորական վասն եզականին ասէ, զի յորժամ ոմն ի յամբոխէն իր ինչ գործեաց, ասեն սովորաբար, թէ ամբոխն արար: Երկրորդ. լինի թէ առանձին<sup>7</sup> բազումքն ասացին զբանն, իսկ յայտնի՝ մինն ասաց: Եւ Անդրէաս ներհուն երեւի քան զՓիլիպպոս, որ թանձրամիտ էր:

### Եւ<sup>8</sup> զի՞նչ է թանձրամիտն

Եւ նախ տեսցուք, թէ<sup>9</sup> զի՞նչ է թանձրամիտն.

Գիտելի է, զի երեքն են սոքա, այսինքն. Անմիտ, Թանձրամիտ եւ Նրբամիտ: Անմիտ է, որ զբանն ի միտ ոչ առնու, իսկ թանձրամիտ<sup>10</sup>, որ միայն զնոյնն իմանայ, եւ Նրբամիտ է, որ զբանն համեմա-

<sup>1</sup> C չեք

<sup>2</sup> B չեք

<sup>3</sup> A B չեք

<sup>4</sup> C զտեղիքն

<sup>5</sup> B զոր

<sup>6</sup> B չեք

<sup>7</sup> C առանձինն

<sup>8</sup> C չեք

<sup>9</sup> C չեք

<sup>10</sup> C չեք

տէ առ այլս եւ իմանայ, որպէս աստ Փիլիպպոս թանձրամիտ էր<sup>1</sup>, որ բազում նշանս տեսեալ էր, այլ ի վերայ հացի՝ ոչ, եւ Անդրէաս նըբամիտ էր, զի ի միտ էած զհացն, զոր աճեցոյց եղիսէ (հմնտ. Դ Թագ. Դ 42-44), վասն այն ասէ.

Բան. «Է աստ պատանեակ մի, որ ունի իինգ գարեղէն նկանակ<sup>2</sup> եւ երկուս ձկունս, այլ այն զի՞նչ է առ այդչափ մարդիկդ<sup>3</sup>» (տես Յովի. Զ 9):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Իբրու ասել՝ թէպէտ եղիսէէ աճեցոյց զհացն, այլ այն քսան նկանակ էր, եւ կերողքն՝ հարիւր մարդ: Եւ մեկնիչդ<sup>lxxviii</sup> յայտնէ<sup>4</sup>, զի ոչ ինչ ծածկէին աշակերտքն ի Տեառնէ:

Եւ թէպէտ Քրիստոս կամաւ արար սքանչելիքն, այլ հարկ էր վասն երեք<sup>5</sup> պատճառի. Նախ՝ վասն բազում ժողովրդեանն, զի քաղցեալ էին, եւ վասն փափագման բանին եւ սքանչելեացն հաց մոռացան տանիլ ընդ ինքեանս<sup>6</sup>: Երկրորդ պատճառ. զի յայտնի լինէր պակասութիւն գնոջն, զի ոչ ինչ ունէին որով գնէին, որպէս ասէ Մատթէոս. «Այլ ոչինչ ունիմք, բայց հինգ նկանակ միայն եւ երկուս ձկունս» (հմնտ. Մատթ. Ժ 17): Երրորդ պատճառ. վասն սակաւութեան կերակրոյն, որպէս ասէ. «Յինգ նկանակ եւ երկուս ձկունս»:

### Վասն աղքատութեան

Եւ տես զաղքատութիւն աշակերտացն, որ զմարգարէական կատարելութիւն յանձինս ստացեալ ունէին, որով անփոյթ առնէին վասն կերակրոյ, զի երկոտասանք էին եւ հինգ հաց միայն ունէին, եւ տակաւին այն ոչ էր նոցա, այլ միոյ պատանեկի սիրելոյ իւրեանց եւ բարեկամի<sup>7</sup>, ապա յայտ է, զի մարգարէքն աղքատութեամբ կեցին եւ Տէր մեր եւ աշկերտքն աղքատութեամբ շրջեցան, եւ երանի ետ աղքատաց հոգւով (հմնտ. Մատթ. Ե 3): Եւ վայ ասաց մեծատանց (հմնտ. Դուկ. Զ 24): Յայտ ուրեմն է, զի քրիստոնէից զաղքատութիւն կամի Քրիստոս, եւ առաւել ազգիս մերոյ զաղքատութիւն է շնորհեալ:

Բան. «Ասէ Յիսուս. “Բազմեցուցէք զմարդիկդ”» (Յովի. Զ 10):

<sup>1</sup> Ը է

<sup>2</sup> Ը նկանակս

<sup>3</sup> Ը այսչափ մարդիկս

<sup>4</sup> Ը մեկնչէդ յայտնի է

<sup>5</sup> Բ չորս

<sup>6</sup> Ը որ հաց անգամ ոչ բարձին ընդ ինքեանս

<sup>7</sup> Ը պատանեկի միոյ, բարեկամի իւրեանց

<sup>8</sup> Ը շնորհեալ, եւ է յիրաւի

Մեկնութիւն. Կարգաւ եւ սահմանաւ նստան, ուր հարիւր-հարիւր եւ ուր<sup>1</sup> հիցուն-հիցուն վասն կրկին պատճառի. նախ՝ զի ամենայն գործք մեր կարգաւ եւ սահմանաւ լիցի: Երկրորդ. զի առաւել յայտնեսցի թիւ բազմելոցն եւ լինելութիւն սքանչելեացն:

Իսկ մեկնիչն ասէ վասն երեք պատճառի<sup>lxxix</sup>. նախ՝ զի ի միտ ածցեն զկարողութիւն սքանչելեացն: Երկրորդ. զի աճեսցին ի հաւատն: Երրորդ. զի հաստատուն մնասցէ առ նոսա: Առաջինն սկիզբն է հաւատոյն, միջինն՝ աճումն, վերջինն՝ կատարումն:

### Վասն խրատոյն

Բան<sup>2</sup>. «Եւ էր խոտ յոյժ ի տեղլոջն» (Յովի. Զ 10):

Մեկնութիւն<sup>3</sup>. Վասն չորից յիշէ զխոտն. նախ՝ զի ցուցցէ զտեղին պատշաճ առ ի նստել եւ յուտել: Երկրորդ. զի խոտն փոխանակ սեղանոյ լիցի: Երրորդ. զի խոտն անասնոց է կերակուր, եւ գլուխն՝ մարդկան, որ գլխաւորն է: Չորրորդ. խոտն զհին աւրէնս նշանակէ, ուր նստան ի վերայ, եւ կերակուրն՝ զշնորհս, որ ի Քրիստոսէ ընկալան:

### Զի՞նչ է «իբրեւ»-ն

Բան. «Եւ բազմեցան մարդիկն թուով իբրեւ հինգ հազար» (Յովի. Զ 10):

Մեկնութիւն. Հստ սովորութեան երրայեցւոցն թուին միայն որք ի քսան՝ ամենիցն ի վեր, եւ ոչ<sup>4</sup> թուին աստ կանայք եւ մանկտիքն, որպէս ասէ Մատթէոս (հմնտ. Մատթ. ԺԴ 21):

Իբրեւն չորս նշանակութիւն ունի. նախ՝ է տեղիք<sup>5</sup> ստուգութեան, որպէս այն. «Իբրեւ, զի բարի է Աստուած իսրայէլի» (Սաղմ. ՂԲ 1): Երկրորդ. է տեղիք<sup>6</sup> աւրինակի, զի «իբրեւն» եւ «որպէսն» զնոյն ցուցանեն: Երրորդ. է ժամանակի ցուցակն, ըստ այնմ. «Իբրեւ նոքա գնացին» (Մատթ. ԻԵ 10), այսինքն՝ յորժամ գնացին նոքա: Չորրորդ. է տեղի սովորութեան, զի զմեծ մասն յիշելով զաւելին կամ զպակասն զանց առնեն մարդիկ, սոյնպէս

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> C Մեկնութիւն

<sup>3</sup> C չեք

<sup>4</sup> A B չեք

<sup>5</sup> C ի տեղի

<sup>6</sup> C իսրայէլի Աստուած

<sup>7</sup> B տեղի, C ի տեղի

Եւ չորս աւետարանիչքն իբրեւ ասելով ըստ սովորութեան մարդկան զգուշութեամբ խաւսեցան:

Եւ այս վասն կրկին պատճառի. նախ՝ զի գրէին որպէս պատգամարանքն<sup>1</sup> եւ հետեւէին<sup>2</sup> հասարակ համբաւոյն, որպէս եւ նոցա յիշողականին պատահէր: Երկրորդ. ուսուցանէին, թէ պարտ է ամենայն ումեք զգուշութեամբ խաւսել:

Բան. «Եառ զիացն Յիսուս, աւրինեաց եւ բաշխեաց» (Յովհ. Զ 11):

ՄԵԼՆՈՒԹԻՒՆ. Ինքն էառ զհացն եւ բաշխեաց վասն չորս պատճառի. նախ՝ զի իւրով զաւրութեամբն լինէր սքանչելիքն այն: Երկրորդ. զի ցուցանէր զիւր սէրն առ ժողովուրդն: Երրորդ. զի տացէ աւրինակ խոնարհութեան մեզ: Չորրորդ. զի ինքն է աղբիւր շնորհաբաշխութեան, որ տայ արժանաւորացն զամենայն պարզեւս աստ եւ ի հանդերձեալն, որպէս ասէր. «Ի սեղան Յաւր ինոյ բազմեցուցից եւ անցեալ<sup>3</sup>» (հնմտ. Ղուկ. Իբ 30):

### Վասն աւրհնութեան հացին

Եւ գիտելի է, զի Քրիստոս ի<sup>4</sup> սկիզբն նշանացն, զոր առնէր, գոհանայր զԱստուծոյ վասն չորս պատճառի. նախ՝ զի ցուցցէ, թէ պարտ է զամենայն ինչ յԱստուծոյ խնդրել: Երկրորդ. զի զամենայն պատիւ առ Հայր վերաբերէր: Երրորդ. ցուցանէր զինքն ի Հաւրէ, զի զամենայն ինչ, զոր առնէր, կամաւ եւ զաւրութեամբ Հաւր առնէր: Չորրորդ. առ ի յուսումն մեզ, որ զամենայն գործս մեր ի պատիւ եւ ի փառմ<sup>5</sup> Աստուծոյ արասցուք եւ մի՛ ի գովութիւն անձանց մեր:

Իսկ որ ասէ Մատթէոս, թէ Քրիստոս հայեցաւ ի վեր յերկինս (հնմտ. Մատթ. ԺԴ 19), եւ այն վասն երեք պատճառի. նախ՝ առ<sup>6</sup> ի ցուցանել, թէ զմիտս ունէր առ Աստուած վերացեալ: Երկրորդ. ի յուսուցանել զմեզ ի յաղաւթելոյն ժամն արտաքին նշան համեստութեան ստանալ եւ մի յայս կոյս եւ յայն կոյս նայիլ<sup>7</sup>: Երրորդ. զի այնպէս վայել էր Քրիստոսի պատուել զՀայր մտաւք, որպէս եւ ցուցանէ հայեցուածք աչացն եւ համբարձումն ձեռաց ամբառալ ի վեր ընդ մտացն:

<sup>1</sup> Ը պատգամականքն

<sup>2</sup> Ը համբերէին

<sup>3</sup> Ը եւ անցեալ պաշտեցայց զձեզ

<sup>4</sup> Ը չիք

<sup>5</sup> Ը ի փառս եւ ի պատիւ

<sup>6</sup> Ը չիք առ

<sup>7</sup> Ը Յայիլ, Ը Նայել

Դարձեալ՝ ըստ Մատթէոսի Քրիստոս աւրհնեաց, այսինքն՝ զԱստուած եւ զհացն, բայց այլ եւ այլ կերպիւ, զի զԱստուած աւրհնեաց շնորհակալ լինելով եւ զհացն աւրհնեաց՝ սրբելով եւ աճողական գաւրութիւն տալով:

Բան. «Առ զիացն [Յիսուս, ԵՒ] գոհացաւ եւ բաշխեաց բազմականացն, նոյնպէս եւ ի ձկանցն որչափ եւ կամեցան» (Յովի. Զ 11):

**Եւ աստ լինի երեք հարց.**

Առաջին. Թէ վասն է՞ր գոհացաւ ի վերայ հացին միայն, եւ ոչ ի ծովուն սաստելն, եւ ոչ յանդամալուծին, եւ ոչ ի կուրին բժշկելն:

Պատասխան. Ասէ այսմ<sup>1</sup> Ոսկեբերանն երեք պատճառ. նախ՝ զի ուսուացէ զմեզ<sup>2</sup> յամենայն ժամ աղաւթել եւ գոհանալ եւ ապա ճաշակել: Երկրորդ. զի ցուցցէ, թէ ոչ է հակառակ Հաւր, որպէս հրէայքն կարծէին, այլ<sup>3</sup> միշտ միակամ եւ միազաւր ընդ Հաւր: Երրորդ. գոհացաւ, զի մի՛ կարծեսցի չար արուեստիւ եւ սատանայիւ լինել, այսինքն՝ կախարդութեամբ, այլ ի գաւրութենէն Աստուծոյ:

Դարձեալ՝ վասն չորս պատճառի պարտ է մեզ աղաւթել եւ գոհութեամբ ճաշակել. նախ՝ զի աղաւթքն հոգւոյն է կերակուր, որպէս հացն մարմնոյն, վասն այն պարտ է նախ զհոգին կերակրել եւ ապա՝ զմարմինն: Երկրորդ. զի պարտ է աւրհնել զպարգեւատուն եւ ապա զպարգեւն ընդունել, զի մի ապերախտ լիցուք: Երրորդ. զի գոհութիւն կրկին աւգտութիւն ունի, այսինքն՝ զի առաւել պարգեւացն հատուցումն է եւ վերստին պարտական առնէ: Չորրորդ. զի որոշեսցին կերակուրք քրիստոնէից ի յայլ ազգեաց, ե՛ւ ի կոպապաշտիցն, ե՛ւ ի հրէիցն, այլ եւ յանասնոց եւ ի գազանաց, որք միայն կերակուր ուտեն առանց աղաւթից եւ գոհութեան, ապա պարտ է ի ճաշակել զՍուրբ Խորհուրդ մարմնոյն<sup>4</sup> եւ արեանն<sup>5</sup> Քրիստոսի «զ Գոհանամքն» ասել, այլ եւ ընդունելով զնշխարքն<sup>6</sup> սուրբ զսազմոսն երգել. «Աւրհնեցից զՏէր յամենայն ժամ» (Սաղմ. ԼԳ 2), եւ ի մարմնաւոր սեղանն. «Զբարձր առնեմն» երգել: Եւ որպէս Տէրն մեր եւ աշակերտքն կանգնեալ գոհացան, նոյնպէս եւ մեզ պարտ է կանգնել, աւրհնել եւ նստել ճաշակել, եւ վերստին կանգնել եւ գոհանալ:

<sup>1</sup> Բ յայսմ

<sup>2</sup> Ը ուսուցանէ մեզ

<sup>3</sup> Բ չիք

<sup>4</sup> Բ մարմնոյ

<sup>5</sup> Ա չիք եւ արեանն

<sup>6</sup> Ը զնշխարդն

### Թէ յանապատն ետ զհացն

Երկրորդ հարց. Վասն Է՞ր յանապատն եւ ոչ ի քաղաքի աճեցոյց զհացն:

Պատասխան<sup>1</sup>. Ասեն վարդապետք՝ վասն վեց պատճառի. նախ՝ զի թէ ի քաղաքի էր, կարծէին հրէայքն, թէ ծածկաբար ի տանէ հաց առին եւ բաշխեցին, այլ յանապատի արար, յորժամ յայտնեցաւ քաղց ժողովրդեանն եւ աղքատութիւն աշակերտացն: Երկրորդ. վասն պիտոյից ժողովրդեանն, զի թէ ի շինագահս էին, հաց առնուլ կարէին իւրեանց: Երրորդ. զի բարձցէ զկարծիս փառասիրութեան ախտի, զի թէ ի քաղաքի էր եղեալ, սնափառութիւն լինել կարծէին: Չորրորդ. ի ցուցանել զջերմ սէր ժողովրդեանն եւ զհաւատս, որ անփոյթ արարեալ էին զամենայն հոգս մարմնական եւ գնացեալ յանապատ ընդ Քրիստոսի: Հինգերորդ. առ ի համեմատութիւն այսմ սքանչելեացս առ հին սքանչելիքն, որ մանանայիւ կերակրեցան յանապատին: Վեցերորդ. առ ի ցուցանել, թէ այնոցիկ, որ փախչին յաշխարհէ եւ հետեւին Քրիստոսի կամաւոր աղքատութեամբ, ամենայն պիտոյք նոցա պարգեւեալ լինէին:

### Թէ ոչ նոր ստեղծ

Երրորդ հարց. Վասն Է՞ր ոչ ստեղծեաց<sup>2</sup> նոր հաց, այլ զհինն աճեցոյց:

Պատասխան. Եւ այս վասն վեց պատճառի.

Առաջին. ի յայտնութիւն այնմ սքանչելեացն, զի թէ նոր հաց էր ստեղծեալ, ասէին հակառակքն, թէ ծածուկ ունէր եւ յայտնեաց:

Երկրորդ. ի յանդիմանութիւն չար հերձուածողաց մանիքեցւոցն, որ զամենայն մարմնական իրս չար ասէին եւ ի սատանայէ եղեալ, իսկ Քրիստոս աճեցոյց զհացն՝ եցոյց զնա բարի գոլ:

Երրորդ. Եցոյց զնոր կարգ<sup>3</sup> գործելոյն եւ զիւր իշխանութիւն ի վերայ աշխարհի<sup>4</sup>, զի ոչ էր եկեալ նոր իր<sup>5</sup> ստեղծանել ի յոչնչէ<sup>1</sup>, այլ զհինն նորոգել եւ ի կատարելութիւն ածել:

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> A B ստեղծ

<sup>3</sup> C կերպ

<sup>4</sup> B յաշխարհի

<sup>5</sup> C իրս

**Չորրորդ.** ցուցանէ այսու զաճումն քրիստոնէական իմաստութեանց, այսինքն՝ վարդապետութեան եւ չնորհաց, զոր ի մէջ եկեղեցւոյ արար եւ առնէ միշտ, զի ի սակաւ գրոց եւ խորհրդոց անբար իմաստութիւն եւ չնորհ աճեցոյց:

Հինգերորդ. զայն ցուցանէ, որ ի մի աղբերէ չնորհացն Քրիստոսի զանազան պարգեւք ելանեն յազգս մարդկան, եւ որպէս բեկանելով բաժանին առ մեզ, վասն այն աստ զնկանակսն երեկ, եւ յորժամ զմարմինն իւր ետ աշակերտացն, զհացն զայն երեկ: Եւ զկնի յարութեան ետ ծանաւթս ի բեկանել հացին:

Վեցերորդ. զայն ցուցանէ, զի ազգս մարդկան ի գործ չնորհացն Աստութոյ, որ զմեզ կերակրէ, որպէս նիւթական գործակից լինի հինգ զգայութիւն մարմնոյս, որպէս հինգ նկանակն, եւ հանճար եւ կամս մեր որպէս զերկու ձկունս, եւ ի սոցանէ զանազան գործ առաքինութեան աճէ: Իսկ թէ հացն եւ ձուկն յում ձեռս աճէին, ոմանք ասեն՝ միայն ի ձեռս Քրիստոսի աճէր, եւ առաքեալքն բաշխէին, զի սքանչելիքն միայն ի ձեռս Քրիստոսի լիցի<sup>1</sup>, եւ Ոսկեբերանն ասէ, թէ ի ձեռս Քրիստոսի աճէր եւ բաշխէր, այլ եւ ի ձեռս առաքելոցն եւս աճէին, առ ի ցուցանել, թէ զամենայն չնորհս, որ տայ Քրիստոս եւ մարդիկ աճեցուցանեն յինքեանս, որպէս ցուցաւ: Եւ գիտելի է, զի Քրիստոս ոչ աճեցոյց ի միոյ հացէ բազումս առնելով, այլ<sup>2</sup> զնշխարս աճեցուցանելով, զի առաւել զգալի յայտնեսցի սքանչելիքն, զի ոչ կարէին հակառակ ասել<sup>3</sup>, թէ ծածկաբար բերէին: Եւ տե՛ս, զի Քրիստոս միապէս ետ ամենեցուն, եւ ի հասարակ տեղիք նստոյց ի վերայ դալար խոտոյ: Ասէ Ոսկեբերանն, զի ցուցցէ այնու զիսոնարհութիւն եւ զեղբայրսիրութիւն եւ զպարկեշտութիւն, զի ամենայն ինչ հասարակ լիցի աստուածապաշտիցն: Դարձեալ՝ զի աստ բաշխեաց եւ ետ զնշխարսն, նոյնպէս եւ մեզ պարտ է զնշխարսն բաշխել եւ տալ ժողովրդեանն: Եւ որպէս զհաց մարմնոյն բաշխեաց ի Վերնատունն եւ ետ, պարտ է եւ մեզ մասն տալ զհաղորդութիւն, եւ ոչ՝ բոլոր: Եւ որպէս յետ յարութեան խաչանման երեկ եւ ետ ծանաւթս ի բեկանել հացին, որ սոյնպէս սովոր էր նախ քան զիսաչն առնել, նոյնպէս եւ մեզ պարտ է ի սեղանն զաղուհացն կտրել խաչանման:

<sup>1</sup> Բ ի ոչ ընչէ

<sup>2</sup> Ը միայն ի քրիստոսէ լիցի

<sup>3</sup> Բ այլ եւ

<sup>4</sup> Բ ասել քրիստոսի

### Վասն դոնի

Դարձեալ գիտելի է, որ ի վանորայս եփեն զհացն եւ կոչեն «դոն», այսինքն՝ դուն նուազ եւ փոքր ի ձեւ ձկան, եւ բեկեալ նկանակացն նմանեցուցեալ:

### Վասն ժողովելոյ գնշխարս

Բան. «Եւ իբրեւ յագեցան, ասէ Յիսուս ցաշակերտսն. “Ժողովեցէք զնշխարեալ կոտորսդ<sup>1</sup>”» (Յովի. Զ 12):

**ՄԵԼԱՆՈՒՐԻՆ.** Եւ աստ լինի երեք հարց.

Առաջին. **Վասն է՞ր հրամայէ ժողովել զնշխարս<sup>2</sup>:**

Պատասխան<sup>3</sup>. **Ասեն վարդապետք՝ վասն երեք պատճառի.**

Նախ՝ ցուցանէ, թէ պարտ է առաջնորդաց հոգ տանել վասն աղքատաց, եւ աշակերտքն եպիսկոպոսք եւ առաջնորդք լինելոց էին, վասն այն նոցա հրամայեաց:

Երկրորդ. ի յայտնութիւն սքանչելեացն, զի թէ ուրուական էր, նշխար մնացուածոց<sup>4</sup> ոչ երեւէր, զի տարան զնշխարսն առ այլս, որք ոչ էին տեսեալ, եւ նոցա ուտելովն գիտացին, զի ստոյգ հաց էր, եւ հաւատացին:

Երրորդ. ցուցանէ, թէ պարտ է վարդապետաց ժողովել զբանս ի Սուրբ Գրոց, զի զմեծագոյն խորհուրդս, զոր թանձրամիտ ժողովուրդն ոչ կարէ իմանալ, չէ պարտ անփոյթ առնել, այլ պարտ է վարդապետաց<sup>5</sup> քննել զ Գիրս եւ կերակրել բանիւ զժողովուրդն: Այլ գիտելի է, զի որպէս Քրիստոս զհացն ի նոցանէ էառ եւ բազմացոյց, եւ ոչ թէ նոր ստեղծեաց, սոյնպէս պարտին վարդապետք զհոգելից եւ ուղղափառ առաջնորդաց իւրոց զբանս քննել եւ ժողովել եւ ոչ թէ նորաձեւ կարգս ի յեկեղեցիս մուծանել, եւ անտի զանկարգութիւն եւ զկոխւ շահել: Այլ եւ Քրիստոս որքան յերկրի էր զհին աւրէնս եւ զմարդարէից բանս ուսուցանէր եւ զմեկնութիւնս նոցա:

### Զվարիւն մի հոգայք

Երկրորդ հարց. **Վասն է՞ր այլ ուրեք հրամայեաց Քրիստոս զվարդուեանն մի հոգալ եւ մի ստանալ պարկ եւ մի հաց եւ աստ հրամայեաց ժողովել զկոտորսն:**

<sup>1</sup> A B չեք զնշխարեալ կոտորսդ

<sup>2</sup> C զնշխարսն

<sup>3</sup> C չեք

<sup>4</sup> C մնացուածոցն

<sup>5</sup> C վարդապետացն

Պատասխան. Նախ՝ անդ ասաց վասն անձին մի հոգալ, աստ ասաց<sup>1</sup> վասն աղքատաց ժողովել:

Երկրորդ. թէ պէտք կարեացն այլ ուստեք լինի հնար, ոչ է պարտ զվաղիւն հոգալ, իսկ յորժամ ոչ լինի հնար, պարտին զվաղիւն հոգալ<sup>2</sup>:

Երրորդ. զի չհոգալ զվաղիւն ոչ է ամենեցուն կանոնք, այլ միայն նոցա է, որ ի վարս առաքինութեան շրջին<sup>3</sup>, իսկ հասարակ տանց եւ գեւղից պարտ է զվաղիւն հոգալ վարելով եւ սերմանելով եւ այլն:

Չորրորդ. զվաղիւն չհոգալ<sup>4</sup> վասն մարմնոյ եւ ժամանակիս ասաց, իսկ վասն հոգեւոր իմաստից եւ հանդերձեալ կենացն, որ վաղիւն է, պարտ է այսաւը հոգալ, որպէս աստ ասէ.

### Վասն սակառացն

Բան. «Ժողովեցին եւ լցին երկոտասան սակառի զկոտորոցն<sup>5</sup>» (Յովի. Զ 13):

Մեկնութիւն. Եւ այս ոչ պատահմամբ, այլ աստուածային նախախնամութեամբն, ըստ թուոյ առաքելոցն առ ի բառնալ զնոսա, զի այնու նշանակեցաւ, որ առաքեալքն կրելոց էին զնշխարս բանին Քրիստոսի ընդ ամենայն աշխարհս:

Երրորդ հարց. թէ ուստի<sup>6</sup> էին սակառիքն:

Պատասխան. Չորս է իմացումն. Նախ՝ ոմանք ասեն, թէ ի մերձաւոր գեղջէ առին: Երկրորդ. ասեն ոմանք, թէ բերեալ էին առ ի վաճառել ժողովրդեանն: Երրորդ. ոմանք ասեն, թէ զհիւանդքն բերէին<sup>7</sup> սակառաւքն եւ բժկեցան, յայնցանէ էր: Չորրորդ. ասեն ոմանք, թէ տարան զկոտորսն ընդ ինքեան ի գիւղ մի եւ անդ լցին ի սակառի եւ այնու կատարելապէս յայտնեցան սքանչելիքն, զի վերջին մնացորդն առաւել էր, քան զառաջին սկիզբն:

Բան. «Իսկ մարդիկն իբրեւ տեսին զնշանսն, զոր արար Յիսուս» (Յովի. Զ 14):

Մեկնութիւն. Եւ այսու երեք պտուղ ցուցանէ. Նախ՝ զի հաւատացին ի Քրիստոս: Երկրորդ. զի պատուեցին զՔրիստոս: Եր-

<sup>1</sup> Հ հրամայեաց

<sup>2</sup> Ե ԿՐ. իսկ յորժամ ... զվաղիւն հոգալ

<sup>3</sup> Հ շոջիցին

<sup>4</sup> Հ չիք Վարելով եւ ... զվաղիւն չհոգալ

<sup>5</sup> Ա Բ չիք

<sup>6</sup> Հ որ բերէին

ըորդ. զի խնդրեցին զՔրիստոս ի վերայ ինքեանց թագաւոր կացուցանել:

### Վասն մարդարէին

Բան. «Եւ նա է ճշմարիտ մարգարէն, որ գալոց էր յաշխարհ<sup>1</sup>» (Յովի. Զ 14):

**ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ.** *Տե՛ս, զի գիտէին ի Գրոց եւ գողանային: Այն, զոր Մովսէս ասաց յԵրկրորդ Աւրէնքն. «Մարգարէ յարուսցէ ձեզ<sup>2</sup> Տէր» (հմնտ. Բ Օր. ԺԸ 15), եւ յորժամ տեսին ժողովուրդն զսքանչելիսն Յիսուսի, խոստովանեցան զնա նոյն եղական մարգարէ, եւ ասացին. «Սա է ճշմարիտ Քրիստոսն, որ գալոցն էր» (Յովի. Զ 14), զի այլ մարդարէքն ոչ եկին յայս<sup>3</sup> անուն, այլ եկին ի պատմել զգալուստն Քրիստոսի:*

Եւ թէ Մովսէս վասն էր մարգարէ կոչեցաւ, ասէ մեկնիչդ<sup>lxxx</sup>. վասն երեք պատճառի. նախ՝ վասն մեծամեծ սքանչելեացն: Երկրորդ. վասն տկար հաւատոց ժողովրդեանն, որպէս եւ այժմ այլազգիք վասն անհաւատութեան փեղամբար ասեն: Երրորդ. զի մարգարէ անուամբ յարեսցին ի նա եւ ի նշանացն<sup>4</sup> ի կատարեալ գիտութիւն հասցեն նմա:

### Վասն երեքկին<sup>5</sup> գալստեան Հռոմայեցւոցն

Եւ տե՛ս, զի ասէ. «Որ ոչ լուիցէ մարգարէին, սատակեսցի յիսրայէլէ» (հմնտ. Բ Օր. ԺԸ 19), որպէս եղեւ. նախ՝ առ խաչահանունքն յետ քառասուն ամի ի ձեռն Տիտոսի եւ Վէսպիանոսի ի նոյն Զատկի տաւնին ժողովեցան ի վերայ Երուսաղէմի, եւ հաւատացեալքն ցրուեցան յԵրկիրս Հեռաւորս եւ պաշարեալ առին զԵրուսաղէմ, եւ երեսուն եւ վեց թիւր ի սուր արկին եւ յիսուն թիւր գերի վարեցին եւ վաճառեցին Հինգ-Հինգ դահեկանի զգլուխն մարդոյ:

Այս առաջին կոտորումն Հրէից:

Երկրորդ եղեւ յետոյ. Հինգ հարիւր քառասուն եւ ելթ թուին Հռոմայեցւոց եկին ի վերայ քաղաքին ի չորս կողմանց եւ առին զԵրուսաղէմ եւ զայլազգիսն կոտորեցին սրով քառասուն եւ

<sup>1</sup> A չիք

<sup>2</sup> B չիք

<sup>3</sup> B այս

<sup>4</sup> C ի կատարեալ նշանացն

<sup>5</sup> A B երեքին

Հինգ հազար ողիս, եւ ոչ մնաց ի նոցանէ եւ ոչ մի, մինչ կաթողիկոսին, զոր «Պապ» կոչեն, բուռն ձեռաց մածեալ արեամբ ընդուրն, եւ լուացեալ տաք ջրով, ասաց զսաղմոսն. «Եւ զձեռս իւր լուացէ յարեան<sup>2</sup> մեղաւորի» (Սաղմ. Ծէ 11) եւ պատարագ մատոյց ի Սուրբ Յարութիւն:

Երրորդ. Դարձեալ գալոց են հռոմայեցիքն ամենայն եւ զկարապետս նեռինն բարձցեն ի քրիստոնէից ըստ պատմութեան Առաջդրոնի<sup>3</sup>, յորժամ թագաւորութիւն Հայոց վերստին նորոգեսցի եւ քահանայք եւ եկեղեցիք ազատեսցին, եւ ապա երեւեսցի մարդն անաւրէնութեան եւ որդին կորստեան՝ նեռն<sup>4</sup>, մերձ ի կատարած աշխարհի:

### Մեկնութիւն այլաբանութեամբ

Եւ զսքանչելիքս հացին այլաբանութեամբ մեկնեն վարդապետք չորս կերպիւ.

Նախ՝ ի յերեկոյացեալ ժամուն հինգ հաց երեկ Քրիստոս եւ երկու ձկունս, սոյնպէս եւ ի կատարած հրէիցն զհինգ Գիրսն Մովսիսի, որպէս զհինգ նկանակսն երեկ, այսինքն՝ երաց եւ աճեցոյց ի խորհրդական միտս հաւատացելոց, եւ երկու ձկունս, այսինքն՝ այլ մարդարէականք եւ պատմութեան բանք աստուածային Սուրբ Գրոց:

Երկրորդ. որպէս ասացաւ հինգ նկանակն հինգ զգայութիւնս մեր, եւ երկու ձկունք իմացումն եւ կամքն, որով աճեմք ի հաւատս եւ ի գործ զանազան առաքինութեանց:

Երրորդ. հինգ գարեղէն նկանակն եւ երկու ձկունս, զի նախքան զՔրիստոս գործ մեր անբանից էին<sup>5</sup> կերակուր, եւ հոգւով եւ մարմնով ի ծով մեղաց շրջէաք, իսկ գալստեամբն Քրիստոսի պատանիք եղաք բանական հրեշտակաց եւ Աստուծոյ, զկամս կատարելով, յորժամ ի ծովէ մեղաց ի ցամաք արդարութեան վերածեաց զմեզ:

Չորրորդ. նկանակն է յաւրինակ խոնարհաց եւ անմեղաց, որք ոչ ունին զխմոր չարութեան եւ զփքացումն հպարտութեան, եւ ձկունք, որ ջերմացեալ սիրովն Աստուծոյ պիտանիք եղեն, զի<sup>6</sup> ոչ

<sup>1</sup> В չիք

<sup>2</sup> В արեան

<sup>3</sup> А В Ազաղոնի

<sup>4</sup> С չիք

<sup>5</sup> С չիք էին

<sup>6</sup> С դարձեալ

միայն զի մերձ էր ի Զատիկն նկանակ էր հացն, զի ահա չորս  
նկանակն, որ յեւթ հազարսն բաշխեաց, հեռագոյն էր ի Զատկէն,  
այլ զի վասն յանապատ տեղի<sup>1</sup> շրջէին, նկանակ ուտէին:

Թէ ոչ ի պահքն ուտելի է ձուկն

*Եւ վա՛յ ասեմ որովայնամոլ ազգին ֆռանկաց, որ զամենայն  
պահք լուծանեն ի ձուկն անխտիր, որոց աստուած որովայնք իւ-  
րեանց է եւ փառք՝ ամաւթն մեղաց, եւ պատճառեն զպատճառս  
մեղաց գործողքն անաւրէնութեանց:*

*Նախ՝ թէ Քրիստոս յորժամ զնկանակն եւ զծուկն աճեցոյց,  
մերձ էր Զատիկն: Ասեմք առ այս, թէ հրէից նախ Զատիկն էր եւ  
ապա բաղարջակեր պահքն: Եւ յայտ է, զի ուտիք էր, որ բաժա-  
նեաց զծուկն: Եւ դարձեալ՝ ի քառասունս իւր ոչ եկեր ձուկն, եւ  
մեք զքառասունսն Քրիստոսի պահեմք եւ ոչ՝ զհրէիցն:*

*Երկրորդ. ասեն, թէ ի Վերնատունն Քրիստոս ձուկն եկեր,  
պարտ է ի նմին աւուր ձուկն ուտել: Ասեմք, թէ ի Վերնատունն  
զհինն կատարեաց մինչ զմարմինն բաշխեաց, եւ նոր աւրէնս եղ  
եւ հնոյն ոչ եմք պարտական, ապա թէ ոչ, եւ գառն կերաւ ի  
Վերնատունն, կե՛ր եւ դու ի պահոցն:*

*Երրորդ. ասեն, թէ յետ յարութեան ձուկն եկեր ընդ աշա-  
կերտսն, յորում կրակեալ<sup>2</sup> կայծականց տեսին եւ ձուկն խորովեալ  
եւ հաց, եւ աւրն էր չորեքշաբթի, եւ ի<sup>3</sup> հինգշաբթի համբարձաւ:*

*Ասեմք, թէ կրկին սուտ եւ նոր աւետարան. նախ՝ զի յետ յա-  
րութեան ոչ էր պահք, այլ Զատիկ, մինչ փեսայն էր ընդ նոսա,  
որպէս ինքն հրամայեաց (Սատթ. Թ 15): Եւ կրկին սուտ, զի ուր  
զծուկն կերան ի Գալիլեա, յեզր Տիբերական ծովուն էր, չորս ա-  
ւուր ճանապարհաւ հեռի յերուսաղէմէ եւ ի լեառնէն Զիթենեաց,  
ուստի համբարձաւ Քրիստոս: Ապա յայտ է, զի ոչ ի չորեքշաբթի  
եկեր զծուկն<sup>4</sup>, այլ յանցեալ կիրակէն<sup>5</sup>: Եւ զայլն վասն ձկանց եւ  
նկանակաց<sup>6</sup> գտցես ի Հարցմունքն, յութներորդ հատորն եւ ի  
քսան եւ իններորդ համարն<sup>bxxii</sup>:*

*Այսքան առ այս:*

<sup>1</sup> Ծ տեղիս

<sup>2</sup> Բ Ը Կրակակետող

<sup>3</sup> Բ չիք

<sup>4</sup> Ծ չիք

<sup>5</sup> Ծ կիրակէն

<sup>6</sup> Բ չիք եւ նկանակաց

Բան. «Յիսուս իբրեւ գիտաց, եթէ գալոց են յափշտակել զնա» (Յովհ. Զ 15):

**Մեկնութիւն.** Այսու Քրիստոս կրկին աւրինակ տայ մեզ. նախ՝ փախչել ի ժամանակաւոր պատուոց, որպէս եւ զինքն տալով<sup>1</sup> ի չարչարանս աւրինակ ետ մեզ զչարչարանս ընդունել: Երկրորդ. աւրինակ տայ, զի ոչ մնաց այնչափ, զի առ Նա հասանէին, այլ յառաջագոյն փախեաւ, ցուցանելով այնու, զի որ ոք կամիցի պահել զանձն ի պատճառէ մեղաց, նախքան զգալ փորձութեան, պարտ է, զի տեղի տացէ: Իսկ Դարձեալ (Յովհ. Զ 15) ասելն ցուցանէ, զի նախ ի գլուխ լերինն էր եւ էջ ի դաշտ եւ կերակրեաց զժողովուրդն, եւ յորժամ կամեցան<sup>2</sup> թագաւորացուցանել, ել դարձեալ ի գլուխ լերինն, կալ յաղաւթս, որպէս Մատթէոս ասէ.                   Թէ Քրիստոս ոչ կամեցաւ թագաւորել

### Աստ լինի կրկին հարց.

**Առաջին.** Թէ Քրիստոս ընդ է՞ր<sup>3</sup> ոչ կամեցաւ զթագաւորութիւն, եւ այն, զի սեպհական ունէր զթագաւորութիւն, որպէս ասաց առ Պիղատոս. «Ի յայդ իսկ ծննեալ եմ եւ ի դոյն եկեալ յաշխարհս» (տե՛ս Յովհ. Ժ 37):

**Պատասխան.** Ասեն վարդապետք՝ վասն ութ պատճառի.

Նախ՝ զի նա Աստուած էր եւ Տէր ամենայնի, ոչ վայել էր լինել թագաւոր միոյ ազգի<sup>4</sup>, որպէս զկայսր ոմն առնել թագաւոր միոյ գաւառի:

Երկրորդ. ըստ որակի թագաւորութեան Քրիստոսի, զի թագաւորութիւն նորա հոգեւոր էր եւ յաւիտենական, ոչ վայել էր նմա լինել մարմնաւոր եւ անցաւոր թագաւոր:

Երրորդ. վասն կարծեաց հրէիցն, զի վասն հացին կամեցան թագաւորեցուցանել եւ ոչ ճշմարիտ հաւատով, զի որովայնամոլք էին, կամէին զի անաշխատ կերիցեն: Եւ յայտ է, յորժամ յագեցան, ոչ ասէին նմա անցաւոր շաբաթուն կամ հակառակ Մովսէսի, վասն որոյ ոչ վայել էր նմա այնպիսի թագաւոր լինել, որ ի պատճառս որկորսառութեան էր, որպէս ասէ. «Երթայք գործեցէք՝ նի՛ զկորստական կերակուրն» (Յովհ. Զ 27):

Չորրորդ. վասն խաղաղութեան ոչ թագաւորեաց, զի մի խոռվութիւն լիցի աշխարհի, զի կայսր եւ Հերովդէս եւ քահանայապետքն ամենայն ի բարկութիւն շարժէին:

<sup>1</sup> Ա Յ տանելով

<sup>2</sup> Ը կամէին

<sup>3</sup> Ա Յ թէ վասն է՞ր

<sup>4</sup> Ը միոյ թագաւոր լինել ազգի

**Հինգերորդ.** Զի մի աղարտեսցին զրեալքն մարգարէից<sup>1</sup>, որ զնա հեզ եւ խոնարհ թագաւոր գուշակեցին եւ ոչ՝ բռնաւոր (հննտ. Զաքար. թ 9, Առակ. Իթ 22):

**Վեցերորդ.** զի մի աւրէնք քրիստոնէութեան մերոյ<sup>2</sup> արհամարհեսցի յայլ ազգեաց, թէ բռնութեամբ եւ իշխանութեամբ ունին եւ ոչ՝ անձնիշխան կամաւք, որպէս Մահմէտի աւրէնքն, որ սրով սկսաւ եւ սրով մնայ եւ աճէ:

**Եւթներորդ.** զի ինքն եկեալ էր ուսուցանել մեզ աղքատութիւն եւ հեզութիւն եւ խոնարհութիւն, որպէս ասէր. «Թէ ածիցեն քեզ ապտակ» (Սատթ. Ե 39) եւ այլն: Ապա ոչ էր պարտ մարմնական փարթամութիւն ընդունել:

**Ութերորդ.** միտք կարէ ասիլ, զի Քրիստոս խաչիւ եւ չարչարանաւք կամէր ազատել զազգս մարդկան, եւ թէ թագաւորեալ էր ըստ մարմնոյ, երկնչէին հրէայքն զրպարտել կամ ձեռս ի նա արկանել:

#### Այսքան յառաջինն:

Երկրորդ հարց. Ապա վասն է՞ր մարգարէքն զնա թագաւոր ասացին, որպէս ասաց Դաւթի. «Ի պտղոյ որովայնի քո նստուցից յաթոռ քո՞» (տես Սաղմ. 61Ա 11), եւ թէ. «Խնդրեա՛ յինէն եւ տաց քեզ զհեթանոսս ի ժառանգութիւն» (Սաղմ. Բ 8), եւ երեմիա ասէ. «Յարուցից Դաւթի ծագումն արդարութեան եւ թագաւորեսցէ իշրաւամբք ի վերայ ամենայն երկրի» (Եր ԻԳ 5):

Պատասխան. Ասեմք, թէ բազում են վկայութիւնք վասն թագաւորութեան Քրիստոսի ի Գիրս մարգարէից, այլ հոգեւոր եւ ոչ մարմնաւոր: Ասաց՝ հրեշտակն տացէ նմա զաթոռն Դաւթի եւ թագաւորեսցէ ի վերայ տանն Յակովբայ անվախճան: Եւ զայս ոչ<sup>4</sup> գիտէին յառաջն, որպէս Սողոմէ խնդրէր վասն որդւոցն յաջմէ եւ յահեկէ նստուցանել ի թագաւորութիւն: Նաեւ առաքեալքն ոչ գիտէին, յորժամ հարցին. «Տէր, եթէ ի ժամանակի՝ աստ հասուցանես զարքայութիւն իսրայէլի: Ասէ ցնոսա. «Ոչ է ձեզ գիտել զժամս եւ զժամանակս, զոր Հայր եղ յիւրում իշխանութեան»» (Գործք Ա 6-7):

Բան. «Եւ իբրեւ երեկոյ եղեւ, մտին աշակերտքն ի նաւ» (Յովի. Զ 16):

**Մեկնութիւն.** Այսու յայտնէ զսէր աշակերտացն առ Քրիստոս, զի<sup>5</sup> ի գիշերի մտին ի նաւ եւ խնդրէին զնա, զի յորժամ նսե-

<sup>1</sup> Ծ ի մարգարէից

<sup>2</sup> Ծ Քրիստոնէութեան մերոյ

<sup>3</sup> Ա Հեք

<sup>4</sup> Ա Բ Հեք

<sup>5</sup> Բ Հեք

**մացաւ եւ ոչ եկն առ նոսա<sup>1</sup>, վասն այն կամեցան անցանել ընդ ծովն:**

Բան. «Եւ ծովն ի սաստիկ հողմոյ [շնչելոյ] յուզէր» (Յովի. Զ 18):

**Մեկնութիւն. Եւ այս եւս ցուցանէ զսէր աշակերտացն, զի ոչ գիշերն եւ ոչ խոռվութիւն ծովուն ոչ արգել զնոսա<sup>2</sup>:**

### Վասն ասպարէզին

Բան<sup>3</sup>. «Եւ վարեալ իբրեւ ասպարէզս քսան եւ հինգ<sup>4</sup> կամ երեսուն» (Յովի. Զ 19):

**Մեկնութիւն. Վասն խորշ եւ խութ եզերաց ծովուն ասէ քսանհինգ կամ երեսուն, ըստ երկրաչափական<sup>5</sup> արհեստին զհինգ ոտն մի քայլ առնեն եւ հարիւր քսան եւ հինգ քայլն՝ ասպարէզ մի, եւ ութ ասպարէզն՝ միլ միլ<sup>6</sup>, եւ երկու միլն է ֆրսանկ մի: Եւ այսու յայտնի է, զի քսան եւ հինգ ասպարէզն երեք միլ է եւ ասպարէզ մի:**

Բան. «Եւ տեսանէին զՅիսուս, զի զայր<sup>7</sup> ի վերայ ծովուն<sup>8</sup>» (Յովի. Զ 19):

**Մեկնութիւն. Ոմանք այլ եւ այլ ասեն զայս եւ որ ի Մատթէոսն պատմի, բայց նոյն էր եւ ի՛ ժամանակէն<sup>9</sup> եւ ի տեղոյն եւ ի ժողովրդենէն, զի ի նոյն աւրն յորում զհացն կերան եւ գիշերն մտին աշակերտաքն ի նաւ եւ չորրորդում պահու գիշերոյն<sup>10</sup> եկն առ նոսա թիսուս:**

**Եւ առաքեալքն զարհուրեցան վասն կրկին պատճառի. նախ՝ զի կարծէին զՔրիստոս առ աչաւք իր ինչ<sup>11</sup> լինել, զի գնայր ի վերայ ծովուն: Երկրորդ. Երկնչէին վասն ալեկոծութեան, իսկ Քրիստոս զկրկին երկիւղն երարձ ի նոցանէ:**

Բան. «Ես եմ, մի՛ Երկնչիք» (Յովի. Զ 20):

**Մեկնութիւն. Յորժամ ասաց՝ Ես եմ, զկարծիս նոցա երարձ, որք առ աչաւք իմն համարէին, եւ ասելովն՝ մի՛ Երկնչիք, բառնայ զերկիւղ ալեկոծութեան: Եւ այս երկրորդ բանն<sup>12</sup> է, որ կերակրե-**

<sup>1</sup> Ը ոչ եկն Յիսուս

<sup>2</sup> Ը ի խոռվութիւն ծովուն արգել զնոսա

<sup>3</sup> Ը Հեք

<sup>4</sup> Ա Բ քսան

<sup>5</sup> Ա Բ վասն երկրաչափութեան

<sup>6</sup> Ը է միլ մի

<sup>7</sup> Ա Բ զնայր

<sup>8</sup> Ա Բ Հեք

<sup>9</sup> Ը նոյն երեւիահի ժամանակէն

<sup>10</sup> Ը պահուն, Հեք օհշերոյն

<sup>11</sup> Ը Հեք ինչ

<sup>12</sup> Բ բան

լովն<sup>1</sup> եւ սնուցիչ լինելովն ցուցանի, թէ Աստուած է Քրիստոս: Առաջին. ածմամբ նկանակացն, եւ երկրորդ՝ ձկանցն: Երկրորդ. երթալով ի վերայ ծովուն եւ միսիթարելով բանիւ զաշակերտուն, թէ՝ Ես Եմ, մի՛ Երկնիչիք:

Եւ դարձեալ գիտելի է, զոր յետ յարութեան հասարակ մարդկան չորս փոփոխումն լինելոց է ի մարմինն.

Առաջին<sup>2</sup>. թափանցութիւն, եւ զայս եցոյց Քրիստոս, յորժամծնաւ ի Կուսէն:

Երկրորդ. թեթեւութիւն, եւ զայս եցոյց Քրիստոս՝ գնալով ի վերայ ծովուն:

Երրորդ. պայծառութիւն, եւ զայս եցոյց Քրիստոս ի լեառն թաբաւը:

Չորրորդ. անապական մարմինն, եւ զայս եցոյց Քրիստոս ի Վերնատունն, յորժամ զանապական մարմինն իւր բաշխեաց առաքելոցն, զի թէ ապականացու էր մարմինն, զի՞նչ աւգուտ էր կերպացն:

Եւ զչորսս զայս եցոյց նախ քան զիսաչն, զի մի ասիցեն չարափառքն, թէ յետ յարութեան փոխեցաւ մարմինն Փրկչին, այլ զոր յառաջն ի կէտ յղութեան յարգանդի ունէր ծածկապէս ի մարմինն, յետ յարութեան յայտնի երեւեցոյց մարմնովն:

### Վասն սքանչելեաց

Եւ գիտելի է, զի սքանչելիքն է գործ ի վեր քան զբնութիւն, իսկ առ մեզ ի վեր քան զմիտս մեր, զի որպէս սքանչելի է գործն, սքանչանամք ի միտս մեր: Եւ դարձեալ՝ որպէս նոքա, որք տեսին զսքանչելիսն, աւգտեցան ի տեսանելն, եւ մեք յորժամ սքանչանամք ի միտս, շահիմք ի սքանչելեացն, ապա ուրեմն ճշմարիտ Աստուած է Քրիստոս եւ Միածին Որդի եւ<sup>3</sup> Բան, միացեալ մարմնովն, որ առնէր զմեծամեծ սքանչելիսն:

Եւ աստ երեք ասեն սքանչելիք, այլ ես ասեմ հինգ եղեալ սքանչելիք ի միում վայրկենի. նախ՝ զի Քրիստոս ի վերայ ծովուն գնայր, ըստ մարգարէին. «Ի ծովու են ճանապարհք [քո], շաւիղք [քո ի ջուրս բազումս]» (Սաղմ. ՂԶ 20): Երկրորդ. զի ալիք ծովու<sup>4</sup> հանդարտեաց: Երրորդ. զի սաստիկ հողմ<sup>5</sup> դադարեաց:

<sup>1</sup> Կ կերակրովն

<sup>2</sup> Կ թափանցութիւն

<sup>3</sup> Բ չիք

<sup>4</sup> Կ ծովուն

<sup>5</sup> Կ հողմն

**Զորբորդ.** զի վաղվաղակի ել նաւն ի ցամաքն: Հինգերորդ. զի Պետրոսի շնորհեաց ի վերայ ալեացն կոխել ըստ Մատթէոսի (հմնտ. Մատթ. ԺԴ 22-23):

**Բան.** «Ի վաղիւ անդր ժողովուրդն, որ կայր յայնկոյս ծովուն» (Յովի. Զ 22):

**Մեկնութիւն<sup>1</sup>.** Նոքա էին, որ զհացն կերան եւ անդ մնացին գիշերն, զի նաւ ոչ գոյր, բայց մին միայն, յոր աշակերտքն մտեալ էին<sup>2</sup>: Ապա ի վաղիւն գնացին նաւք, զի վարձով անցցեն յայս կոյս, նոքա զարմացեալ հարցանէին զե՞րն գալոյն, այլ զկերպն ոչ յիշէին, այսինքն՝ զսքանչելեաւք գալն ի վերայ ծովուն, զի խորամանկ եւ նենգաւորք էին որպէս յայտ է ի մեկ-նիշդ<sup>lxxxi</sup>:

**Բան.** «Պատասխան ետ նոցա<sup>3</sup>» (Յովի. Զ 26):

**Մեկնութիւն.** Ոչ պատասխանեաց նոցա, թէ՝ ե՞րբ կամ որպէ՞ս եկեալ էր. նախ՝ զի զայն կարէին յաշակերտացն ուսանել: Երկրորդ. զի առաւել պարտ էր աշակերտացն պատմել զսքանչելեաւք գալուստն Քրիստոսի, քան թէ նոյն ինքն Քրիստոս, այլ յանդիմանեաց զնոսա:

**Բան.** «Խնդրեք դուք [զիս]<sup>4</sup>, զի կերայք ի հացէ<sup>5</sup>» (Յովի. Զ 26):

**Մեկնութիւն.** Վասն երից յանդիմանեաց. նախ՝ զի բազումք ի հրէիցն խնդրէին զնա վասն մարմնաւոր կերակրոցն, զոր ետ նոցա, եւ յուսային եւս առնուլ: Երկրորդ. զի ոչ վասն հաւատոյ եւ նշանաց խնդրէին, այլ խարբէութեամբ: Երրորդ. յանդիմանեաց, զի զհոգեւոր գործն ուսուցէ:

### Վասն կորստական կերակրոյ

**Բան.** «Երթայք գործեցէք՝ մի՛ զկորստական կերակուրն, այլ զկերակուրն, որ մնայ ի կեանս<sup>6</sup>» (Յովի. Զ 27):

**Մեկնութիւն.** Առաջին միտք՝ կորստական է ամենայն գործ չար. նախ՝ զի ինքն կորստական է: Երկրորդ. զգործողն կորուսանէ:

**Իսկ գործն բարի մնացական է.** նախ՝ ըստ ինքեան<sup>1</sup>: Երկրորդ՝ զգործողն մնացական առնէ ի կեանսն յաւիտենից:

<sup>1</sup> B չիք

<sup>2</sup> C մտին

<sup>3</sup> C բայց ամեաց նոցա

<sup>18 - Սեպ. Յովի.</sup> զ զիս

<sup>5</sup> C ի հացէն

<sup>6</sup> A B չիք ի կեանս

Դարձեալ՝ մարմնոյ կերակուրն կորստական է չորս կերպիւ. նախ՝ ըստ իրին, զի որքան ի յէռութեան իւրում է, անաւգուտ է մեզ, եւ յորժամ կրեմք ի մեզ, իրն այն ապականի, զի կերակրիլն կրել լսի: Երկրորդ. զի սակաւ ժամս տայ մեզ զաւրութիւն եւ այն եւս կորուսանի: Երրորդ. զի յիշատակն եւս մոռասցի: Չորրորդ. եւ վարձս ոչ ունի:

Եւ սոյնպէս չորիւք կորուսանէ. ըստ իրին<sup>2</sup>, ըստ զաւրութեան, ըստ յիշման, ըստ վարձուց: Եւ դու տե՛ս, զի կերակուրս, որ ի յէռութիւնս մեր խառնի, այնպէս կորստական է, քանի<sup>3</sup> եւս այլ ստացուածք, որք աւտարք են եւ հեռու ի մէնջ:

Իսկ հոգեւոր կերակուրն չորիւք մնացական է. նախ՝ ըստ իրին: Երկրորդ՝ ըստ աւգտութեան ի մեզ: Երրորդ՝ յիշմամբն առ Աստուած: Չորրորդ՝ վարձուցն հատուցմամբ:

### Վասն հոգեւոր կերակրոյ<sup>4</sup>

#### Աստ լինի երեք հարց.

Առաջին. Զի ասէ Դաւիթ. «Զվաստակս ձեռաց քոց կերիցես, երանի է քեզ, եւ<sup>5</sup> բարի եղիցի» (Սաղմ. ճիւ 2), իսկ Տէրն հրաժարեցոյց:

Պատասխան. Ասեմք նախ, եթէ Դաւիթ ի դէմս<sup>6</sup> զրկողացն ասէ, եւ Տէրն ընդդէմ անվաստակ կերողացն:

Երկրորդ. Դաւիթիւ աւրէնքն<sup>7</sup> մարմնոյ էր, եւ զգործն մարմնոյ յարգէր, եւ Տէրն աւրէնք հոգեւոր եղ եւ զգործն հոգեւոր յարգեաց:

Երրորդ. Տէրն<sup>8</sup> ոչ ամենեւին արգիլէ զմարմնոյ գործելն, զի ահա եւ առաքեալ գրէ. «Որ արասցէ ոչ, կերիցէ մի՛» (տես Բ Թեսաղ. գ 10), այլ Տէրն արգիլէ, որ սիրով հոգայ զայսմ կենաց հանապազ<sup>9</sup> միայն, եւ հոգեւորին ոչ փոյթ ունիցի եւ ոչ հոգայ. նախ՝ զի մարթ է եւ փոքր ինչ հոգ տանել<sup>10</sup> եւ վասն մարմնաւոր կերակրոյ, առ ի պահել զբնութիւն եւ կարող լինել բարեգործութեանց, եւ այնպէս զերկոսինն կարէ հոգալ զմարմնաւոր եւ զհոգեւորն:

<sup>1</sup> С չիք երկրորդ. զգործողն... ըստ ինքեան

<sup>2</sup> С չիք զի որքան ի յեւրեան... կորուսանէ. ըստ իրին

<sup>3</sup> В կերակրոյ հոգեւորի, С կերակրոց

<sup>4</sup> С չիք երանի է քեզ, եւ

<sup>5</sup> С ընդ դեմ

<sup>6</sup> В աւրենքն Դաւիթիւ

<sup>7</sup> С դարձեալ Տէրն

<sup>8</sup> С հանապազ զայսմ կենաց

<sup>9</sup> С փոքր ինչ տեսանել

**Այս առաջինն:**

Երկրորդ հարց. Զի՞նչ է հոգեւոր կերակուրն:

Պատասխան. Չորս ինչ. առաջին<sup>1</sup> հաւատն, երկրորդ<sup>2</sup> գործքն, երրորդ՝ սուրբ գիտութիւն, չորրորդ՝ մարմին եւ արիւն Փրկչին, վասն այն ասէ. «Զոր Որդին Մարդոյ տացէ ձեզ» (Յովի. Զ 27):

Երրորդ հարց. Որպէ՞ս են կերակուր սոքա:

Պատասխան. Ասեմք՝ չորիւք, երկուքն ի հասարակութենէ եւ երկուքն ի զանազանութենէ. նախ՝ հաւատն է հոգւոյս եւ գործն մարմնոյս կերակուր, գիտութիւն՝ մտաց եւ սուրբ խորհուրդն՝ բոլոր անձինն, այսինքն՝ հոգւոյն եւ մարմնոյն եւ մտաց:

Երկրորդ. Հաւատն է որպէս հաց, որ հաստատէ զսիրտ մարդոյ<sup>3</sup>, եւ գործքն զանազան խորտիկք, որ պարարէ, եւ գիտութիւն ըմպելի, որ զմայլէ, եւ Սուրբ Խորհուրդն զբոլորն ունի, զի կերակուր է եւ ըմպելի եւ պարարէ եւ զմայլէ, եւ այլն ամենայն: Այս հաւասարութիւն:

Երրորդ. զանազանութիւն, զի մարմնոյ կերակուրն ի մեզ փոխի եւ ապականի, իսկ հոգեւորն զմեզ ի յինքն փոխէ եւ անապականս առնէ, ուստի յայտ է յորժամ կոչեմք զմարդն գիտութիւն եւ սուրբ, եւ հաւատացեալ եւ հաղորդեալ:

Չորրորդ. զի հոգեւոր կերակուրն ունի որակութիւն եւ ունի էութիւն, եւ ամենայն որակութեամբ ի մեզ փոխի, իսկ էութեամբն, զի անապական է, զմեզ առ ինքն փոխէ եւ մնացականս առնէ:

Դարձեալ՝ ըստ այլ վարդապետաց. «Երթայք գործեցէք՝ մի՛ զկորստական [կերակուրն], այլ զկերակուրն, որ մնայ ի կեանսն<sup>4</sup>» (Յովի. Զ 27): Գիտելի է, զի հոգեւոր կերակուր զոր ասէ, է նոյն ինքն<sup>5</sup> մարդացեալն Աստուած՝ Յիսուս Քրիստոս, որ կերակուր է մերս հոգւոյ առաւել ըստ Իւրում Աստուածութեան, եւ զկնի՝ ըստ Իւրում մարդկութեան, որ պարգեւի մեզ խորհրդով Պատարագին, վասն այն Քրիստոս նախ ցուցանէ զմարմնաւոր<sup>6</sup> կերակուրն, որ է Բանն, եւ ապա ցուցանէ զհոգեւոր կերակուրն, որ է խորհուրդ Պատարագին, յորժամ ասէ. «Զհացն, զոր ես տաց, մարմին իմ է» (Յովի. Զ 52):

<sup>1</sup> Ը առաջինն

<sup>2</sup> Ը երկրորդն

<sup>3</sup> Յ զմարդոյ սիրտն

<sup>4</sup> Ա Յ չիք ի կեանսն

<sup>5</sup> Կ չիք

<sup>6</sup> Ա Յ զհոգեւոր

Եւ այս բաժանի ի<sup>1</sup> չորս մասն.  
Նախ՝ յաւժարացուցանէ զնոսա առ ի խնդրել զհոգեւոր կերակուրն:

Երկրորդ. ցուցանէ զկերպ գտանելոյ կերակրոյն, յորժամ աւեն ցնա. «Զի՞նչ առնիցենք, զի զգործսն<sup>2</sup> Աստուծոյ զործեսցուք» (Յովի. Զ 28):

Երրորդ. ցուցանէ, թէ զի<sup>3</sup>նչ է հոգեւոր կերակուրն, յորժամ աւեն. «Տէ՛ր, յամենայն ժամ տուր մեզ զիացն զայն» (Յովի. Զ 34):

Չորրորդ. ցուցանէ, թէ ով ոք իցեն, որ կարեն ճաշակել զկերակուրն զայն, մինչ ասէ. «Զամենայն, զոր տայ ինձ Յայր, առ իս եկեց» (Յովի. Զ 37):

Վասն առաջնոյն գիտելի է, որ յանդիմանեաց զնոսա, եթէ՝ «Երթայք գործեցէք լմի՛յ<sup>4</sup> զմնացական կերակուրն» (հմնտ. Յովի. Զ 27), այսինքն՝ բարեգործութիւն, որով հասանեն մարդիկ ի յաւիտենական<sup>5</sup> կեանսն, եւ զի մի ասիցեն ոմանք, թէ ի մէնջ կարեմք զբարիս զայս<sup>6</sup> գործել, վասն այն Քրիստոս բառնայ զկարծիքս զայս<sup>6</sup> ասելով. «Զոր Որդին Սարդոյ տացէ ձեզ» (Յովի. Զ 27), այսինքն՝ պատրաստ է տալ ձեզ: Եւ ապա զյաւժարութիւն եւ զկարողութիւն իւր ցուցանէ՝ ասելով.

### Վասն կնքելոյն Աստուծած

Բան. «Զի զնա Յայր կնքեաց Աստուծած» (Յովի. Զ 27):

ՄԵԼԱՆՈՒՐԻՆ. Խոր է տեսութիւն, եւ ասեմ հինգ մտաւք: Թող զանիծելոյն նեստորի, որ չնորհաւք Որդի ասաց զՔրիստոս եւ յետոյ ի մկրտութիւն՝ աստուածանալ չնորհաւք, եւ յետ յարութեան անապական լինել մարմնով, զի որպէս կնքեալ ասեմք մարդոյն զմկրտելն, զի կնիք է ի հոգին անբաժանելի, սոյնպէս նեստոր կնքահայր ասաց զԱստուծած Քրիստոսի, եւ ոչ բնութեամբ Որդի, զորս որոշեալ նզովէ Սուրբ Եկեղեցի, եւ զայս վասն այն<sup>7</sup> եղաք, զի փախիցուք ի չար հերձուածողացն:

Արդ, ասեն ուղղափառ վարդապետք երկու մտաւք.

<sup>1</sup> С չեք հ

<sup>2</sup> А В զգործն

<sup>3</sup> А В С չեք

<sup>4</sup> В հանդերձեալ

<sup>5</sup> В չեք

<sup>6</sup> В չեք

<sup>7</sup> А В վասն որոյ

Նախ՝ որպէս մեկնիչդ ասէ<sup>lxxxiv</sup>. Կնքեաց Յայր, այսինքն՝ յայտնեաց ի Յորդանան Որդի հւր սիրելի<sup>1</sup>, էակից եւ հաւասար Աստուած վկայեաց:

Երկրորդ. սոյնպէս մեկնեն, զի Աստուած Հայր կնքեաց գՔրիստոս, այսինքն՝ զիւր աստուածային բնութիւն որպէս կնիք իմն միաւորելով ի մարդկութիւն նորա, զի կերպարան եւ նկարագիր էութեան Հաւր է Բանն Աստուած, եւ նա առաքմամբ Հաւր միաւորեցաւ ի մարմնի, ապա մի է Աստուածութիւն ի Հայր, եւ ի Բանն, եւ ի մարդկութիւն Քրիստոսի:

Երրորդ. սոյնպէս մեկնեն, զի Աստուած Հայր կնքեաց զՈրդի, այսինքն՝ զՔրիստոս, զի յատուկ նշան եղ ի նմա զաստուածային սքանչելիս առնել, որ ի վեր է քան զբնութիւն, զի ոչ այլ ոք ունէր ի մարդկանէ:

Չորրորդ. Ուսկերերանն<sup>2</sup> սոյնպէս մեկնէ. «Կնքեաց զՔրիստոս», այսինքն՝ յատուկ առաքմամբ առաքեաց յաշխարհս, առ ի տալ մեզ զհոգեւոր կերակուրն, որ է ուսուցանել մեզ զճշմարտութիւն, որպէս ասաց ինքն, թէ. «Յայս իսկ ծնեալ եմ<sup>3</sup>, զի վկայեցից ճշմարտութեան» (Յե՞ս Յովհ. ԺԸ 37):

Հինգերորդ. ոմանք սոյնպէս մեկնեն, «Զի Յայր կնքեաց զՔրիստոս», այսինքն՝ վկայութեամբ նշանեաց<sup>4</sup> զնա ճշմարիտ Քրիստոս գոլ եւ Որդի Աստուծոյ, եւ այնու հաւատալով ի նա կարեմք ընդունել ի նմանէ զհոգեւոր կերակուրն:

Այս վասն կնքոյ ասացաւ յառաջին հատորն համարն:

Բան. «Ասեն ցնա. «Զի՞նչ արասցուք, զի զգործս Աստուծոյ գործեցուք»» (Յովհ. Զ 28):

Մեկնութիւն. Նախ՝ ոչ հարցանեն զի ուսցին, այլ զի կերակրոյ հանդիպեսցին: Դարձեալ՝ Քրիստոս յորժամ յաւժարեցոյց զմեզ ի խնդրել զհոգեւոր կերակուրն, այժմ ցուցանէ զկերպ ստանալոյ զկերակուրս զայս, զի յորժամ յուան հրէայքն զբարութիւն կերակրոյն, փափագեցան ի նա եւ հարցանեն. «Զի՞նչ պարտ է գործել, որով հասանեմք ի մնացական կերակուրն»:

Բան. «Պատասխանէ Քրիստոս. «Այս է գործն Աստուծոյ, զի հաւատացիք [յայն], զոր առաքեացն<sup>5</sup>»» (Յովհ. Զ 29):

<sup>1</sup> Ծ եւ սիրելի

<sup>2</sup> Ծ Ուկիաբանն

<sup>3</sup> Ծ Եկեալ են

<sup>4</sup> Ծ նշանակեաց

<sup>5</sup> Ծ որ առաքեացն նա

**ՄԵԼԻՆՈՒԹԻՒՆ.** Նոյն է ասելն. «Հաւատասածի՞ք յայն, որ առաքեաց զնա», զի յորժամ յառաքողն հաւատան, եւ յառաքեալն հաւատան:

Բան. «Զի՞նչ նշան ցուցանես» (Յովի. Զ 30):

**ՄԵԼԻՆՈՒԹԻՒՆ.** Նախ՝ ուրացողաց է բանս, զի ոչ միայն լսողք էին նշանացն, այլ եւ տեսողք եւ կրողք ի ձեռս եւ յորովայնս, եւ մերձ էր ժամանակ նշանին: Դարձեալ՝ թէ կամիս, զի հաւատասցուք Քեզ, եւ իբրեւ զառաքեալն յԱստուծոյ համարեսցուք, պարտ է զի արասցես մեզ սքանչելիք<sup>1</sup>, որպէս Մովսէս արար, վասն որոյ զկնի ասեն<sup>2</sup>.

### Վասն մանանային

Բան. «Դարքն մեր կերան զմանանայն յանապատի<sup>3</sup>» (Յովի. Զ 31):

**ՄԵԼԻՆՈՒԹԻՒՆ.** Չորս կերպիւ երեւի ծածկեալ չարութիւն նոցա. նախ՝ անպատուեն զՔրիստոս: Երկրորդ. անարգեն զնշանն: Երրորդ. հաց խնդրեն դարձեալ: Չորրորդ. ոչ մնացին պատասխանոյ առաջին հարցմանն, որպէս յայտ է ի մեկնչէդ:

Դարձեալ՝ մանանայիւն չորս կերպիւ արհամարհեն զնշանն Քրիստոսի<sup>4</sup>. նախ՝ Մովսէս մանանայ ետ, դու՝ գարեղէն հաց: Երկրորդ. նա քառասուն ամ, դու՝ մի անգամ: Երրորդ. նա՝ յերկնից հաց, դու՝ յերկրէ տուէր: Չորրորդ. նա՝ զբոլոր հարքն մեր, դու զմանաւորս կերակրեցեր:

Բան. «Ամէն, ամէն ասեն ծեզ» (Յովի. Զ 32):

**ՄԵԼԻՆՈՒԹԻՒՆ.** Հարց. Աստ վասն է՞ր ոչ ասաց. «Կարող եմ առնել որպէս Մովսէս եւ առաւել տալ ձեզ մանանայ»:

Պատասխան. Վասն երից. նախ՝ զի նոքա ունայն<sup>5</sup> եւ նանիր մտաց հայցէին նշան տեսանել, եւ թէ Քրիստոս ասացեալ էր՝ կարող եմ<sup>6</sup>, նոցա ունայնութիւն առաւել աճէր: Երկրորդ. զի ոչ ունէր ախտ փառասիրութեան, որպէս զի զանձն գովեսցէ: Երրորդ. զի<sup>7</sup> զգործս իւր առաւել ցուցանէ, զի կամէր արդարացուցանել եւ հոգեւոր կերակրել զմարդիկ, եւ այնու յայտնէ, զի կարող էր տալ զմանանայն:

<sup>1</sup> Ե սքանչելիք արասցես մեզ

<sup>2</sup> Ե ասես

<sup>3</sup> Ե յանապատի անդ

<sup>4</sup> Ե չիք Դարձեալ՝ ... զնշանն Քրիստոսի

<sup>5</sup> Ե վասն ունայն

<sup>6</sup> Ե թէ կարող եմ

<sup>7</sup> Ե կրկ

Բան. «Եթէ ո՞չ Մովսես ետ ձեզ զհացն յերկնից զճշմարիտ» (Յովի. Զ 32):

ՄԵԿՆՈւԹԻՒՆ<sup>1</sup>. Կրկին կերպիւ<sup>2</sup> ասի ճշնարիտ. մին այն, որ ընդդէմ ստոյն որոշի, եւ այնպէս մանանայն ճշմարիտ էր: Երկրորդ. ասի ճշնարիտ ընդդէմ աւրինակին: Եւ սոյնպէս մանանայն աւրինակ էր ճշմարիտ մարմնոյն Քրիստոսի<sup>3</sup>:

Եւ երեք կերպիւ է աւրինակ մարմնոյն Քրիստոսի. նախ՝ զի յերկնից իշեալ, որպէս ինքն ասէր. «Այս է հացն, որ յերկնից իշեալ է<sup>4</sup>» (Յովի. Զ 50, 59): Երկրորդ. մանանայն, որ շատ ժողովեաց, ոչ յաւելաւ, եւ պակասն ոչ նուազեաց, եւ հաց մարմնոյն Քրիստոսի, որ զբոլոր եւ որ զմասն ճաշակէ, միոյ կենաց հաղորդի: Երրորդ. զի անապական էր մանանայն, յաւրինակ անապական մարմնոյն Քրիստոսի: Եւ յայտ է այսու, զի ի մէջ սափորին մնաց անապական:

Եւ զայլն տեսցես ի գիրս Հարցմանց, վեցերորդ հատորն Քսանիններորդ համարն<sup>5</sup>:

Բան. «Զի հաց յԱստուծոյ է, որ իշանեն» (Յովի. Զ 33):

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ<sup>5</sup>. Աստ զմարմին եւ զարիւնն իւր Սուրբ ի վեր դնէ, քան զմանանայն վեց կերպիւ.

Նախ՝ զի Քրիստոս Աստուած է, եւ իւր մարմինն՝ Աստուծոյ մարմին, որպէս ասէ. «Յաց յԱստուծոյ է», եւ մանանայն՝ Հրամանաւն Աստուծոյ նոր իր գոյացեալ:

Երկրորդ. մարմինն Քրիստոսի յերկնից է վասն Աստուածութեան, եւ մանանայն ի յաւդոյդ, որպէս զցաւղ կամ զեղեամն իշեալ:

Երրորդ. վասն ճշմարիտ քաղցրութեան, զի մարմինն Քրիստոսի է ճշմարիտ քաղցր եւ ծայրագոյն բարի, իսկ մանանայն՝ ստուերական նմանութիւն<sup>6</sup> այսմ բարւոյ:

Չորրորդ. վասն աւգտութեան, զի մանանայն մարմնաւոր կեանս տայր կերպացն, եւ մարմինն Քրիստոսի կեանս տայ հոգեւոր եւ յաւիտենական<sup>7</sup>:

Հինգերորդ. զի Բանն Աստուած մարմնացեալ կերակուր է ամենայն հաւատացելոց եւ մանանայն միայն հրէիցն տուաւ:

<sup>1</sup> B չիք

<sup>2</sup> C պատճառաւ

<sup>3</sup> C օրինակ էր ճշնարտութեան. այսինքն՝ մարմնոյն Քրիստոսի

<sup>4</sup> C որ ի յերկնից իշեալ

<sup>5</sup> B չիք

<sup>6</sup> C նմանութեամբ

<sup>7</sup> B յաւիտենական եւ հոգեւոր

Վեցերորդ. մանանայն ի մին ժամանակս էր, եւ մարմինն Քրիստոսի միշտ կերակուր է հաւատացելոց. աստ խորհրդով հացին եւ անդ՝ իմանալի տեսութեամբ, այն է՝ «Ի սեղան Հաւըն բազմեցուցէ, եւ անցեալ պաշտեսցէ» (տես Ղուկ. ԺԲ 37):

Բան. «Տէ՛ր, յամենայն ժամ տուր մեզ զիացն<sup>1</sup> զայն» (Յովի. Զ 34):

ՄԵԼՈՒԹԻՒՆ. Յորժամ եցոյց, թէ որպէս կարեմք հասանել ի Հոգեւոր կերակուրն, այժմ ցուցանէ, թէ զի՞նչ է կերակուրն այն:

«Ասեն. Տո՛ր մեզ յամենայն ժամ». նախ՝ յորժամ լսեցին Հրէայքն զբարութիւն այսմ հացի, վասն այն յամենայն ժամ խնդրեն, զի առանց աշխատանաց ուտիցեն: Երկրորդ. որպէս կինն սամարացի ասաց. «Տէ՛ր, տուր մեզ զցուրեն, զի նի Եկից այսր հանել ջուր» (տես Յովի. Զ 15), եւ ոչ իմանայր զհոգեւոր ջուրն, նոյնպէս եւ սոքա ոչ իմացան զհոգեւոր հացն, վասն այն Քրիստոս ցուցանէ, զի՞նչ է այս հաց:

Բան. «Ես են հացն կենաց» (Յովի. Զ 35). որպէս յայտնի է ի մեկնիչդ<sup>lxxvii</sup>:

### Վասն էութեան Պատարագին

Հարց<sup>2</sup>. Զի՞նչ է էութիւն Պատարագին:

Պատասխան. Ոմանք՝ զբանն Քրիստոսի, որ ասէ. «Այս է մարմին իմ, եւ արիւն իմ» (Խննտ. Մատթ. ԻՉ 26-27), եւ ոմանք զՀոգին, որ իջանէ ի Պատարագն, ասեն էութիւն է Պատարագին: Եւ ոչ սակաւ ընդ դիմանան առ այս, այլ ես ասեմ, թէ էութիւն Պատարագին Բանն Աստուած է մարմնացեալ, եւ բանիւն Աստուծոյ էանայ Պատարագն, այն, որ ասէ. «Այս է մարմին իմ, եւ այս է արիւն իմ»:

Բայց Հոգին Սուրբ գործակից է Պատարագին չորս կերպիւ.

Նախ՝ որպէս անդ ի յարգանդին Սուրբ կազմեաց զմարմին Փրկչին, նոյնպէս եւ ի Պատարագն կազմէ:

Երկրորդ. որպէս յերկրի զսքանչելիսն Հոգւովն ներգործէր Քրիստոս, սոյնպէս եւ մարմինն Սուրբ Հոգւովն կատարէ:

Երրորդ. որպէս էջ Հոգին ի վերայ Քրիստոսի, նոյնպէս եւ իշանէ Հոգին ի մարմինն Քրիստոսի:

Չորրորդ. որպէս<sup>3</sup> էջ Հոգին ի Վերնատունն եւ ճշմարտապէս ծանեան առաքեալքն զԱստուածութիւն Քրիստոսի, սոյնպէս ի

<sup>1</sup> A B Տէ՛ր, տուր մեզ յամենայն ժամ զիացն

<sup>2</sup> A B չեք

<sup>3</sup> B կրկ

մեզ իջանէ Հոգին Սուրբ, զի ծանիցուք ճշմարտապէս մարմին եւ արիւն եղեալ Քրիստոսի, որպէս ասէ ի Պատարագն. «Մարմին եւ արիւն<sup>1</sup> ստուգապէս արասցէ Քրիստոսի, զի ճշմարիտ մարմին եւ արիւն եղեւ բանիւն Քրիստոսի, այլ<sup>2</sup> Հոգին Սուրբ ի մեզ ճշմարտեացէ եւ հաստատեացէ», այսպէս<sup>3</sup> եւ մեկնիչդ ասէ<sup>bxxvii</sup>, որպէս մարմին ատուածային Բանին միաւորութեամբն յերկնից իջեալ ասի, սոյնպէս եւ յատուկ հացս Հոգւոյն Սրբոյ իջմամբն մարմին Փրկչին իմանի ի մեզ աներկբայ հաւատովք, վասն որոյ պարտ է երիցս խաչակնքել, այսինքն՝ նախ ի հացն, երկրորդ՝ ի բաժակն, երրորդ՝ ի դէմս իւր:

Եւ այս վասն կրկին պատճառի. նախ՝ զի Հոգին Սուրբ խաչիւն իջանէ, զի պարզեւք խաչին է: Երկրորդ. զի Քրիստոս Աստուած էր, որ խաչեցաւ, նոյնպէս եւ Պատարագն Աստուծոյ է մարմին, պարտ է, զի խաչիւ կնքեացի մինչ ի յիջանել Հոգւոյն, եւ յետ այնորիկ ոչ է պարտ խաչակնքել ի Պատարագն, այլ ի յինքն եւ ի ժողովուրդն եւ յեկեղեցին բազում անգամ:

#### Այսքան առ այս:

Եւ գարձեալ գիտելի է, զի Հոգեւոր կերակուրն, որ է մարմինն Քրիստոսի, ոչ փոփոխի ի մարմին մարդոյն որպէս մարմնական կերակուրք, այլ միշտ մնայ եւ զարժանաւոր ընդունողս ի յինքն փոխարկեալ ձգէ, որպէս եւ ասէ ոմն ի սրբոցն բարառնաբար ի դիմաց աստուածային մարմնոյն. «Ես կերակուր եմ քեզ, որ ոչ փոխես զիս ի քեզ, այլ դու փոխիս ի յիս», վասն որոյ պարտիմք Հոգեւոր կերակրոյն Հոգ տանել առաւել, քան զարմնաւորին, որպէս Հոգի առաւել է քան զմարմին, որպէս ցուցաւ ի վերոյ վասն Հոգեւոր կերակրոց: Այլ եւ գիտելի է, զի հացն, որ լինի մարմին Քրիստոսի, գոյացութիւն հացին աստուածանայ եւ պատահմունքն մնայ, զի պատահմամբ եւ որակութեամբն փոխի ի մեզ եւ գոյացութեամբն փոխէ զմեզ ի յինքն, եւ սոյնպէս լինիմք Աստուած ընդ Աստուած միացեալ:

Բան. «Ես եմ հացն կենաց» (Յովհ. Զ 35):

Մեկնութիւն<sup>4</sup>. Ներգործութիւն է հացին պահել զկենդանութիւն մարմնոյ, իսկ Քրիստոս ոչ միայն պահէ զկենդանութիւն, այլ եւ կեանս տայ Հոգեւոր եւ յաւիտենական: Եւ այս է երրորդ

<sup>1</sup> B չիք եղեալ Քրիստոսի, ... եւ արիւն

<sup>2</sup> B չիք

<sup>3</sup> C զայս

<sup>4</sup> B չիք

բանն՝ ցուցանելով<sup>1</sup>, թէ Աստուած է Քրիստոս, զի մարմին նորա հաց կենաց է եւ անմահութեան:

Բան. «Որ գայ առ իս, ոչ քաղցիցէ եւ ոչ ծարաւեսցի» (Յովի. Զ 35-36):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Գալն հաւատովն ասէ եւ սիրով:

Հարց. Ընդէ՞ր աստ ասէ. «Ոչ քաղցիցէ եւ ոչ ծարաւեսցի», եւ այլ ուր ասէ. «Երանի որ քաղցեալ եւ ծարաւի իցեն արդարութեան» (Մատթ. Ե 6):

**Պատասխան.** Զեն ընդդէմ միմեանց. անդ զմարմնոյ կարաւտն ասէ՝ քաղց եւ ծարաւ, աստ զհոգւոյն ասէ՝ ոչ կարաւտիլ եւ նուազիլ: Դարձեալ՝ անդ վասն փառաց երանութեան ասէ կարաւտիլ, որ է տեսութիւն Աստուծոյ, որպէս եւ Դաւիթ ցանկայր. «Ծարաւի է անձն իմ առ Քեզ, Աստուա՛ծ», եւ թէ՝ «Ե՞րբ եկից եւ յագեցայց յերեւել փառաց քոց<sup>2</sup>» (տես Սաղմ. ԽԱ 3), իսկ աստ վասն շնորհացն Աստուծոյ ասէ, որ այժմ ոչ քաղցնուն եւ ոչ ծարաւին հաւատացեալքն ի Քրիստոս, եւ գտցես դարձեալ զտեսութիւն բանիս ի չորրորդ գլուխն առ սամարուհի կինն ասացեալ: Եւ քանզի կարէին հրէայքն ասել Քրիստոսի. «Մեք ի քէն զայդ հացդ խնդրեմք, եւ դու պատասխանի ոչ տաս, թէ տալո՞յ ես, թէ՝ ոչ», վասն այնորիկ պատասխանէ.

Բան. «Այլ ասացի ձեզ, թէ տեսէք զիս<sup>3</sup> եւ ոչ հաւատայք» (Յովի. Զ 36-37):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Նախ այն, որ ասաց, թէ՝ ես եմ հացն կենաց, եւ զիս տեսանէք, որ կենաց հացս եմ՝ առաջի ձեր ունիք, եւ պատրաստ եմ առ ի պարզեւել ձեզ, եւ դուք ոչ ընդունիք, զի ոչ հաւատայք յիս, եւ հացս այս հաւատով ընկալեալ լիցի: Դարձեալ՝ զոր յառաջադոյնն ասաց, որպէս յայտ է ի մեկնիչդ<sup>lxxviii</sup>, յորժամ եցոյց, թէ զինչ է այս հոգեւոր կերակուրս:

Այժմ կամի ցուցանել, թէ ո՞ք կարէ<sup>4</sup> ստանալ զկերակուրս զայս:

Ասէ.

### ԶԻ՞Նէ է տալն Հաւը

Բան. «Չամենայն, զոր տայ ինձ Յայր, առ իս եկեսցէ» (Յովի. Զ 37):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Նախ՝ տեսցուք, թէ զի՞նչ է տալն Հաւը: Գիտեմ է, զի առաքեալքն ի Հաւը ընտրեալքն են ի սկզբանէ:

<sup>1</sup> Ե ցուցանէ

<sup>2</sup> Ե եւ յագեցայց յերեսաց քոց

<sup>3</sup> Ե չիք զիս

<sup>4</sup> Ա Ե ո՞ք կամի կարէ

Եւ տալն Հաւը երեք կերպիւ է. նախ՝ յայտնել զհաւատն, որպէս Պետրոսի ասաց: Երկրորդ. տալն Հաւը կամելն է, որ ախորժէ զփրկութիւն ընտրելոցն: Երրորդ. տալն առաջնորդելն է ի հաւատոս, եթէ ի<sup>1</sup> ծածուկ, եւ եթէ ի<sup>2</sup> յայտնի, ըստ այնմ. «Տունկն, զոր ոչ տնկեաց Հայրն իմ, խլեսցի» (Մատթ. Ժ 13):

Երկրորդ. Տեսցուք, զի՞նչ է<sup>3</sup>, որ ասէ. «Առ իս եկեսցէ» (Յովհ. Զ 37), եւ ոչ եթէ՝ ես եկից առ նա:

Պատասխան. Վասն երեք պատճառի. նախ՝ զինքն ցուցանէ գլուխ գոլ, որում մեք յԱստուծոյ Հաւը պարգեւիմք, որպէս ծառայք պարգեւեալ ումեմն ի Հաւը իւրմէ: Երկրորդ. զի յաղթանակաւ եւ աղաչանաւք նորին շնորհեալ լինի մարդ, ըստ սաղմոսին. «Խնդրեա՛ յինչն եւ տաց քեզ<sup>4</sup> զհեթանոսս ի ժառանգութիւն» (Սաղմ. Բ 8): Երրորդ. ցուցանէ թէպէտ հրէայք եւ այլք ոչ հաւատացեն ի նա, սակայն Քրիստոս զամենայն<sup>5</sup> ընտրեալ ժողովուրդոն ունի:

Երրորդ. Տեսցուք, թէ հաւատացեալք որպէ՞ս գամք առ Քրիստոս:

Պատասխան. Երեք կերպիւ. նախ՝ կամաւք, երկրորդ՝ սիրով, երրորդ՝ համբերութեամք մինչ իսպառ, որ ունի զհաւատն եւ զյոյսն ի յինքեան:

Չորրորդ. Տեսցուք զի՞նչ առնէ Քրիստոս:

Պատասխան. Երեք ինչ, որպէս ասէ ի բանս. նախ՝ «Որ գայ առ իս հանից արտաքս» (Յովհ. Զ 37), այսինքն՝ որ կատարեալ սիրով եւ հաւատով գայ առ իս<sup>6</sup>, ոչ մերժէ ի բաց, զի ի հաւատոյն եւ ի շնորհացն ոչ զրկեցից ասէ, այլ եւ զամենայն պարտս թողից նմա: Երկրորդ. «Ոչ կորուսից ի նոցանէ» (տես Յովհ. Զ 39) ոչ ի հաւատոցն կորուսից եւ ոչ ի շնորհացն, որ տուեալ լինի նմա, ոչ կորուսից: Ապա յայտ է, զի Քրիստոս ոչ բառնայ զշնորհն, որ տուեալ է մարդոյ ումեք, կամ հաւատ, կամ քահանայութիւն կամ այլ ինչ, եթէ ոչ վասն մեղաց, զի թէ ոք մեղաւք կորուսանէ զինքն, կամ զշնորհն, նա զինքն մերժէ, եւ ոչ՝ Քրիստոս: Երրորդ. «Ես յարուցից զնա յաւուրն յետնում<sup>7</sup>» (տես Յովհ. Զ 39), այսինքն՝ յարուցից զհաւատացեալն եւ զիւր շնորհն, եւ զգործս ընդ նմա յարուցից:

<sup>1</sup> C չեք

<sup>2</sup> C չեք

<sup>3</sup> C չեք է

<sup>4</sup> A B չեք

<sup>5</sup> C չեք

<sup>6</sup> C Քրիստոս

<sup>7</sup> A B չեք յաւուրն յետնում

### Վասն կամացն

Բան. «Զի իջի ես յերկնից, ոչ զի զկամս իմ արարից» (Յովի. Զ 38):

**ՄԵԼԱՆՈՒԹՅՈՒՆ.** Յայսմ բանէ<sup>1</sup> նախ Արիոս եւ ապա Նեստոր Հակոռակի: Եւ նախ Արիոս յերկու կողմն Հակառակի, զի երկու Հակառակ կամս Բանին եւ Հաւրն ասէ, որպէս զի արարած ասիցէ զԲանն եւ զկամք: Եւ դարձեալ՝ ասեն ոչ ունել ամենեւին կամս, որ ցուցանէ, թէ գործիք է Բանն եւ ոչ ունի կամք եւ ոչ զաւրութիւն: Ընդ դէմ առաջնոյն ասէ. «Մի է կամք Հաւրն եւ Որդոյն», վասն այս մի կամաւքն, զոր Հայր կամի, զնոյն եւ Որդին կամի: Այլ եւ առնել ասէ զկամս Հաւր, զի մի Հակառակ կարծիցեն: Ընդ դէմ երկրորդին ասէ. «Ունի անձնիշխան կամք եւ զաւրութիւն», եւ յայտ է. «Զի իջի ես<sup>2</sup> յերկնից»: Եւ դարձեալ՝ իւր կամաւքն եւ զաւրութեամբն Հաւասարէ կամացն եւ զաւրութեան Հաւր: Իսկ Նեստոր. «Երկու կամք Քրիստոսի Հակառակ. մին անստեղծ եւ մին<sup>3</sup> ստեղծեալ, եւ թէ՝ զմարդկային կամքն ոչ ունի, պակաս ունի զգոյացութիւն մարդոյ»: Առ այս նոյն է պատասխանին, զի ոչ ասեմք մի կամք վասն պակաս գոլոյն մարդկային կամացն, այլ մի կամք է վասն միաւորութեան, զի որպէս երկու բնութիւն մի է վասն միաւորութեան<sup>4</sup>, նոյնպէս եւ կամքն, զի ի սկիզբն ստեղծման մարդկային բնութեան ի Քրիստոս ստեղծումն միաւորութեամբն եղեւ ի Բանն Աստուած միացեալ անբաժանելի միաւորութեամբ: Իսկ ասելն՝ երկու կամք եւ երկու բնութիւն, այս բաժանելն է, եւ յորժամ բաժանես զբնութիւն եւ զկամս եւ զգործն, յայնժամ բաժանի երկու անձն, եւ յորժամ երկու անձն բաժանես<sup>5</sup>, յայնժամ ոչ լինի Աստուած մարդացեալ եւ ոչ լինի Քրիստոս, զի Քրիստոս միաւորութիւն է, եւ ոչ լինիս դու քրիստոնեայ, յորժամ նա ոչ լինի Քրիստոս, որպէս եւ ցուցաւ վասն մի կամաց եւ մի գործոց յառաջագոյն ի համարն:

Իսկ Մեծն Աթանաս ճանապարհորդ ասէ զՏէր մեր Յիսուս Քրիստոս ի խորհուրդ փրկագործ Պատարագին, «Ճանապարհորդեաց ընդ ամենայն մարդկային կիրս առանց մեղաց եւ յաշխարհակեցոյց եւ յառիթն փրկութեան մերոյ»: Եւ Ալպերտ վարդապետն Փռանգաց ասէ, թէ Տէր մեր Յիսուս Քրիստոս ի կէտ յղու-

<sup>1</sup> Բ բանի

<sup>2</sup> Ը զի, ասէ, իջի ես

<sup>3</sup> Ը հակառակը. մինն անստեղծ եւ մինն

<sup>4</sup> Ը չեք զի որպէս... միաւորութեան.....

<sup>5</sup> Ը յորժամ բաժանես երկու անձն

թեան էր ճանապարհորդ եւ ըմբռնող<sup>lxxxix</sup>: Նախ այսպէս է տեսութիւն Աթանասի, զի զնուաստականքն եւ զմարդկային կիրսն աշխարհակեցոյց եւ առիթ մարդկան ասէ, զի չարչարանաւքն, և խաչիւն, եւ մահուամբ, եւ թաղմամբ ազատեցաք եւ փրկեցաք ի մեղաց եւ ի դժոխոց, զի ամենայն նուաստական մարդկային կիրքն, այսինքն՝ չարչարանքն, խաչն և մահն եւ այլքն փրկութեան ճանապարհորդ էին, ընդ որս կամաւ կրելովն կարգաւ ընթացաւ Տէրն ընդ նմանութեան ճանապարհի, զի բարեկրութիւն ասէ Աստուածաբանն զմարդկային նուաստական կիրսն: Եւ ամենայն բարեաց ընդունակ է Աստուած, ապա ուրեմն զբարի կիրսն կամաւ կրել բնական է Աստուածոյ եւ ոչ աւտար եւ եկամուտ:

Դարձեալ՝ ճանապարհորդ եղեւ Քրիստոս եւ ըմբռնող, զի մարդանալովն աստուածացոյց զմարդն եւ ծառայ լինելովն տէր արար զծառայն, եւ արարած լինելովն արարիչ եւ ստեղծող արար զառեալն, եւ չարչարելովն անչարչարելի պահեաց, եւ մեռնելովն միշտ անմահ մնաց, եւ զայլն ամենայն այսպէս ծանի՛ր եւ հաւատա՛:

Դարձեալ՝ ճանապարհորդ, զի չարչարէր Աստուած մարդովն, եւ անչարչարելի մնայր մարդն Աստուածովն, մեռանէր Աստուած մարդովն, եւ անմահ մնայր Աստուած մարդովն եւ մեռանէր մարդն Աստուածովն, եւ զայլն ամենայն այսպէս իմա:

Դարձեալ՝ ճանապարհորդ, զի նախընթաց է մարդն բանին ի նուաստական կիրսն մարդկային, եւ նախընթաց է Աստուածութիւն մարդկութեան ի բարձրագոյնսն, ոչ բաժանմամբ ըստ մասին, այլ միութեամբ եւ համանգամայն: Եւ ըմբռնող, զի նախընթաց էր Աստուածն մարդոյն ի մարդկայինսն, եւ նախընթաց էր մարդն բանին ի բարձրագոյնս եւ յաստուածայինսն:

Դարձեալ՝ ճանապարհորդ, զի Աստուած մարդովն կրէր զկիրսն մարդկային, եւ ըմբռնող, զի Աստուած մարդովն ներգործէր զաստուածայինսն: Ճանապարհորդ, զի մարդն Աստուածով ներգործէր զաստուածայինսն, եւ ըմբռնող, զի մարդն Աստուածով կրէր զաստուածայինսն, այսինքն՝ ճանապարհորդէր, զի Աստուած մարդովն քաղցնոյր եւ ծարաւէր, եւ մեռանէր, եւ ըմբռնող էր, զի Աստուած մարդովն զծարաւեալսն արբուցանէր եւ զքաղցեալսն կերակրէր: Եւ Աստուած մարդովն յառնէր եւ զմեռեալսն յարուցանէր եւ անդրադարձեալ: Ճանապարհորդէր, զի մարդն Աստուածութեամբն զմեռեալսն յարուցանէր, եւ ըմբռնող, զի մարդն Աստուածութեամբն մեռանէր, եւ զայլսն սոյնպէս ծանի՛ր:

Դարձեալ՝ ճանապարհորդ, զի աղաւթելով եւ երկրպագելով զմեզ ճանապարհ յորդեաց առ Հայր, եւ ըմբռնող, զի ընդ Հաւր գաղաւթս եւ զերկրպագութիւնս մեր ընկալաւ:

Դարձեալ՝ ճանապարհորդ, զի մարդապէս կամաւ տգիտացաւ, եւ ըմբռնող, զի հաւասար գիտէ զամենայն, ըստ այնմ. «Որպէս գիտէ զիս Հայր, գիտեմ եւ ես զՀայր», եւ առաքեալ ասէ, թէ՝ «Ի նմա եւ հաւաքեալ ամենայն գանձք իմաստութեան եւ գիտութեան Աստուծոյ»:

Զի Ալպերտ վարդապետն Փուանգաց ասէ, թէ՝ «Միաւորութիւն ի Քրիստոս աստուածային եւ մարդկային բնութեան է», զի Քրիստոս անձամբ եւ բնութեամբ մի է միայն<sup>xc</sup>: եւ թէ առողն ոչ է առեալն, այլ առեալն է առողն՝ բնութեամբ եւ էութեամբ Աստուած: եւ է անդ այնչափ միութիւն, զի զոր ինչ ասի Աստուծոյ, այն ամենայն ասի մարմնոյն եւ մարդոյն, որ ի Մարիամայ, եւ անդրադարձեալ, զի այն մարդ է աստուածային էութիւն, եւ անդրադարձեալ, եւ ամենայն յատկութիւնք Բանին Աստուծոյ. ասի այն մարդոյ, եւ անդրադարձեալ, եւ թէ չէ պարտ այնպիսի անուանք կոչել Քրիստոս, որ նշանակէ շփոթութիւն կամ բաժանումն, այլ կոչել անուանս անշփոթ եւ անբաժանելի միաւորութիւն: եւ որք զմարմինն Աստուածութեան հանդերձ եւ բնակութիւն ասեն՝ հերետիկոս, եւ հերձուածող, եւ խոտելի ասէ, եւ անիծանէ, եւ ոչ զհասարակ բնութիւն, որ յերիս անձինսն ասէ մարմնացեալ, այլ զյատուկ բնութիւն, որ ի յանձն Որդւոյ ասէ միացեալ ընդ բնութիւն մարդոյն, եւ զմարդիկ, որ ի հոգւոյ եւ ի մարմնոյ միացեալ են անբաժան եւ անշփոթ, Քրիստոսի միաւորութեան տայ, որպէս սուրբն Կիւրեղ եւ Աթանաս ասեն<sup>1</sup>:

### Վասն յետին աւուրն

Բան. «Յարուցից զնա յաւուրն յետնում» (Յովի. Զ 39):

Մեկնութիւն. Բազում կերպիւ լսի աւր յետինն. նախ՝ զի չորիւք է աւր. առաջին՝ աւր ստեղծմանն, որ ունի երեկոյ, այլ ոչ՝ առաւաւտ: Եւ միջինն ունի երեկոյ եւ առաւաւտ, եւ վերջինն ոչ ունի երեկոյ, այլ՝ առաւաւտ: Երկրորդ. յետին աւր է, յորում յետին ընտրեալն ծնանի, որ կատարէ զթիւ ընտրելոցն: Երրորդ. յետին ասէ զկէտ յարութեան, որ վախճանն է ժամանակի եւ սկիզբն մշտնջենաւորին: Զորբորդ. յետին է, զի դադարին շարժումն երկ-

<sup>1</sup> Ա Բ չեք իսկ Մեծն Աթանաս ծանապարհորդ ասէ... Կիւրեղ եւ Աթանաս ասեն...

նի եւ լուսաւորաց եւ ժամանակի, եւ խափանին լինելութիւնք եւ անապականութիւն աշխարհիս<sup>1</sup>:

Բան. «Այս են կամք Յաւր իմոյ» (Յովի. Զ 39):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Կրկին է զայս. նախ՝ զի հաստատեսցի բանն, երկրորդ՝ որպէս<sup>2</sup> զմիտք բանին յայտնեսցէ նոցա:

### Վասն տեսութեան Աստուծոյ

Բան. «Որ տեսանիցէ զՈրդի եւ հաւատայցէ ի նա<sup>3</sup>» (Յովի. Զ 40):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Նախ՝ տեսցուք զբանս ի չորս տրամանկեանց, զի են ոմանք, որ տեսանեն եւ հաւատան, բարի է, եւ են, որ ոչ տեսանեն եւ հաւատան, առաւել բարեգոյն, եւ են դարձեալ, որ ոչ տեսանեն եւ ոչ հաւատան, չար է, եւ են, որ տեսանեն եւ ոչ հաւատան, առաւել չարագոյն է<sup>4</sup>:

Դարձեալ՝ տեսանելն զՔրիստոս երեք կերպիւ իմանի.

Նախ՝ որ տեսանեն ըստ մարմնոյն, եւ սոյնպէս ոչ իմանի աստ, զի հաւատալ ի Քրիստոս առանց մարմնոյ տեսութեան առաւել հաճոյ է, քան մարմնաւոր տեսանել, ըստ այնմ. «Այդ զի տեսերդ եւ հաւատացեր, երանի որ ոչ տեսեալ հաւատասցեն<sup>5</sup>» (տես Յովի. Ի 29):

**ԵՐԿՐՈՐԴ.** տեսութիւն երանութեան, որով երանեալքն տեսանեն զԱստուածութիւն Քրիստոսի, եւ սոյնպէս ոչ իմանի աստ, զի հաւատն է տեսութիւն, որոց ոչ երեւին:

**ԵՐՐՈՐԴ.** տեսանի հանճարոյ տեսութեամբ, որ առաւել տեսութիւն ասի, քան աչացն:

Եւ այս է ճանաչումն հաւատոյ եւ գիտութեան, եւ զայս ասէ<sup>6</sup> աստ, թէ՝ ամենայն, որ տեսանէ զՔրիստոս եւ հաւատայ, ընդունի զկեանսն<sup>7</sup>, եւ հաւատս այս կենդանի հաւատն է, որ է սիրովն Աստուծոյ, եւ զայս պարտ է իմանալ վասն այնոցիկ, որ համբերեն մինչ իսպառ եւ բարի վարուք վախճանին: Եւ երկու է կեանք, այսինքն՝ ժամանակեայ եւ յաւիտենից<sup>8</sup>, եւ հաւատն ի յաւիտենից մահուն ազատէ եւ յաւիտենից կեանքն հանէ: Եւ սոքա երկոքեանս յետ յաւրութեան են, վասն այն ասէ.

<sup>1</sup> Յաշխարհիս, Ը ապականութիւնք յաշխարհիս

<sup>2</sup> Ը որպէս զի

<sup>3</sup> Ը ի նա

<sup>4</sup> Յ չար է առաւելագոյն

<sup>5</sup> Ը հաւատայ

<sup>6</sup> Յ կրկ

<sup>7</sup> Ը զկեանս

<sup>8</sup> Յաւիտենից: Եւ կրկին է մահ, այսինքն՝ ժամանակեայ եւ յաւիտենից

### Վասն յարութեան

Բան. «Ես յարուցից զնա յաւուրն յետնում» (Յովի. Զ 40):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Եւ այս է կարգն. նախ՝ մահն է աստ, եւ ապա յարութիւն, եւ ապա դատաստանն, եւ ապա յաւիտենից կեանքն, որ հատուցումն է: Եւ այսու կակծեցուցանէ զհրէայսն, որ զինքն ասէ ներգործող այսոցիկ:

Դարձեալ՝ «Ես յարուցից» ասէ, վասն երեք պատճառի. նախ՝ զի ցուցանէ զինքն Աստուած գոլ, զի յարութիւն զաւրութեամբն Աստուծոյ լինի եւ ոչ՝ տկարութեամբ մարդկան: Երկրորդ. զի յարութիւն Քրիստոսի ըստ մարմնոյն պատճառ եւ աւրինակ է հասարակ յարութեան մարմնոյ<sup>1</sup>: Երրորդ. զի յարութիւն այն լինի վասն հատուցման պարզեւաց, որ միայն Աստուծով կարէ պարզեւիլ, իսկ թէ երբեմն զբարձրագոյնսն եւ երբեմն զնուաստ<sup>2</sup> ճառէ, որպէս ասացաւ յառաջն ի սոյն հատորի համարն:

Բան. «Տրտնջէին զնմանէ» (Յովի. Զ 41):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Տրտունջ է ծածուկ չարախաւսելն: Եւ վասն երկու իրաց տրտնջէին. նախ՝ զի ասաց. «Ես եմ հացն կերակրելի եւ կենսատու»: Երկրորդ. զի ասաց. «Իջեալ յերկնից», վասն որոյ ամէին<sup>3</sup>.

### Որպէս ասի որդի Յովսէփիայ

Բան. «Ո՞չ սա է որդին Յովսէփիայ» (Յովի. Զ 42):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Գիտելի է, զի հրէայքն զՔրիստոս սոսկ մարդ համարէին, եւ ոչ գիտէին զնա Աստուած՝ յԱստուծոյ Հաւրէ ծնեալ եւ իջեալ ի յերկնից<sup>4</sup>: Եւ դարձեալ՝ համարէին զՔրիստոս ըստ կարգի հասարակ բնութեան ի Յովսէփիայ ծնեալ, եւ ոչ գիտէին թէ զաւրութեամբ Հոգւոյն Սրբոյ է կերպարանեալ:

Իսկ մեկնիչդ ասէ<sup>xci</sup>. վասն չորից յիշեցին<sup>5</sup> զՅովսէփ. նախ՝ զի սուտ արասցեն զերկնից իջանելն, երկրորդ՝ զի հաց խնդրէին, երրորդ՝ զի ապերախտ էին, չորրորդ՝ զի ուղացողք:

Եւ գիտելի է, զի Քրիստոս որդի Յովսէփիայ ոչ կոչի ըստ Աստուածութեան, եւ ոչ՝ ըստ մարդկութեան, զի բնութեամբ Որդի է

<sup>1</sup> Ը մերոյ

<sup>2</sup> Ը զբարձրագոյնս եւ երբեմն զնուաստագոյնսն

<sup>3</sup> Ա Յ ասէ

<sup>4</sup> Ը յերկնից իջեալ

<sup>5</sup> Ը իսկ մեկնիչդ վասն չորից ասէ յիշեցին

Աստուծոյ եւ Որդի Կուսին, եւ ազգակցութեամբ Որդի է Դաւթի եւ Աքրահամու, եւ եղելութեամբ Որդի է Աղամայ, եւ կոչմամբ՝ Որդի Յովսէփայ:

Բան. «Մի՛ քրթմնջեք ընդ միմեանս» (Յովի. Զ 43):

Մեկնութիւն. Նոյն է քրթմնջելն եւ տրտնջելն, չորս ինչ ցուցանէ. նախ՝ զի ծածկագէտ է: Երկրորդ՝ անոխակալ: Երրորդ՝ Որդի Հաւր Աստուծոյ: Չորրորդ՝ եւ ոչ յիս միայն, այլ եւ ի<sup>1</sup> Հայր ելանէ տրտունջ ձեր:

Դարձեալ՝ հարքն նոցա վասն տրտնջալոյ<sup>2</sup> տապաստ անկան յանապատին, վասն այն Քրիստոս խրատէ զնոսա, զի մի անկցին ի նոյն պատիճն:

### Թէ Հայր որպէս ձգէ զմարդ

Բան. «Ոչ ոք կարէ գալ, եթէ ոչ Յայրն իմ ձգեսցէ» (Յեւ Յովի. Զ 44):

Մեկնութիւն. Նախ՝ այն է տեսութիւն, որպէս ասացաւ ի տալն Որդւոյ երեք կերպիւ, այսինքն՝ շնորհաւք եւ կամաւք եւ առաջնորդելով: Դարձեալ՝ մեկնիչդ կրկին ասէ<sup>ՀՀ</sup>. նախ՝ հաւատով, երկրորդ՝ մարդարէիւք, զի որ զՀայրն հաւատայ եւ զԲան նորա ուրանայ, ոչ հաւատայ զՀայր: Դարձեալ՝ այլ վարդապետք ասեն, քանզի իր ինչ ոչ կարէ վերանալ առ այն, որ բարձր է, եթէ ոչ յայլմէ առ այն ձգեսցի, որպէս եւ քար ոչ կարէ զառ ի վեր ընթանալ, եթէ ոչ շարժմամբ այլոց, իսկ հաւատն տեսակցեալ սիրով կերպիւ ինչ ձգէ զմարդն առ աստուածային բնութիւն, որպէս ասէ Պետրոս ի Կաթողիկէն. «Որով մեծամեծ եւ պատուական աւետիքն պարգեւեալ են մեզ, զի նոքիմբք աստուածեղէն բնութեան լիցիմք հաղորդակիցք» (Բ Պետր. Ա 4):

Բան. «Եւ ես յարուցից զնա» (Յովի. Զ 44):

Մեկնութիւն. Քանզի մարդոյն հոգի ոչ է<sup>3</sup> կատարելապէս երանեալ, մինչեւ հաղորդեսցի մարմնոյն միաւորութեամբն, վասն որոյ փափագի<sup>4</sup> հոգին միաւորիլ մարմնոյն, եւ վասն այսմ փափագման<sup>5</sup> ոչ կարէ վերանալ առ Աստուած: Դարձեալ՝ ձգումն լինի առ Աստուած աստուածային հեղմամբն, որպէս եւ ցուցանէ վկայութեամբ Սուրբ Գրոց:

<sup>1</sup> Ըի՞ ի

<sup>2</sup> Ծ տրտնջելոյ

<sup>3</sup> Ա Բ Հեռ Ի

19. Մեկն. Յովի.

<sup>5</sup> Յ Վ կափաքնան

### ԹԻ ՈՐԱՋԻ ՈՒՍանին յԱՍՏՈՒԾՈՅ

Բան. «Գրեալ է ի մարգարէս. «Եւ եղիցին ամենեքեան<sup>1</sup> ուսեալը յԱստուծոյ»» (Յովհ. Զ 45):

**ՄԵԼԱՆՈՒՐԻՆ.** Բազմաւորապէս ասէ՝ ի մարգարէս. Նախ՝ զայն ցուցանէ, որ ամենայն մարգարէքն միով հոգւով խաւսեցան: Երկրորդ. զի զոր ինչ մի ոք ի նոցանէ ասաց կերպիւ ինչ, ամենեքեան զնոյն ասացին: Եւ բանս այս գրեալ է Ցովէլ. «Որդիք Սիովնի, ցնծացէք եւ ուրախ լերուք ի Տէր Աստուած ձեր, զի ես ձեզ ուսուցիչ արդարութեան» (տես Յովէլ Բ 23): Եւ եսայի յիսուն եւ չորրորդ [գլուխն] ասէ. «Զամենայն որդիս խրատեալս յԱստուծոյ» (Եսայի ԾԴ 13), եւ Երեմիա չորրորդ [գլուխն] ասէ. «Տաց ձեզ հովիւ ըստ սրտի իմում, առ ի հովուել զձեզ իմաստութեամբ» (տես Երեմ. Գ 15), եւ թէպէտ բանն Քրիստոսի կատարելապէս ոչ է ըստ ձայնին եւ նկարագրին Յովելայ, Եսայեայ եւ Երեմիայ, սակայն ըստ մտացն անթերի է, եւ վասն այսորիկ զմարգարէս ասէ, ցուցանելով, զի ոչ առնու վկայութիւն ի միոյ մարգարէէ, այլ ի բազմաց: Եւ այսու յայտնի է, զի Քրիստոս եւ առաքեալքն ոչ առնուին վկայութիւն ի Սուրբ Գրոց ըստ նկարագրին, այլ միայն ըստ մտացն:

Եւ աստ լինի երեք հարց.

**Առաջին.** Զի՞նչ է. «Ամենեքեան ուսեալը յԱստուծոյ» (Յովհ. Զ 45):

**Պատասխան.** Կրկին է. Նախ զայն ասէ, թէ մարգարէք եւ առաքեալք, փիլիսոփայք եւ արուեստաւորք, ամենեքեան յԱստուծոյ են ուսեալք, ըստ այնմ, որ ասէ Պաւղոս, թէ՝ «Իմաստութեամբն Աստուծոյ ոչ ծանեաւ աշխարհ իմաստութեամբն զԱստուած» (Ա Կորնթ. Ա 21): Երկրորդ. ցուցանէ աստ եւ ի հանդերձեալն ուսանիմք յԱստուծոյ:

Երկրորդ հարց. Ապա զի՞նչ է առաւելն:

**Պատասխան.** Նախ՝ զի մարգարէքն միջնորդիւ եւ աւրինակաւք ուսան, եւ առաքեալքն՝ անընդմիջաբար, իսկ փիլիսոփայք բնական բանականութեամբ ուսան, եւ եկեղեցիս զճշմարտութիւն շնորհաց գիտութեամբն, այլ ի հանդերձեալն փառաւք եւ դէմ յանդիման է տեսութեամբ<sup>2</sup> ուսումն: Երկրորդ. դարձեալ ի Հաւրէ ծածկաբար, եւ ի Բանէն մարմնացեալ, եւ ի Հոգւոյն Սրբոյ հեղեալ ուսանիմք. այս է առաւելն:

<sup>1</sup> Ա Բ չեք

<sup>2</sup> Ը յանդիման տեսութեամբ է

Երբորդ հարց. Որպէ՞ս են ամենեքեան ուսեալք, զի դեռեւս բազումք ոչ են ուսեալք զհաւատս:

Պատասխան. Կրկին մտաւք ասեն վարդապետք. Նախ՝ ի կողմանէ ուսուցչին, որ է Աստուած, պարտ է, զի ամենեքեան ուսեալք լիցին, թէպէտ ի կողմանէ մարդոյն բազում խափանումն լինի: Երկրորդ. զոր աւրինակ ի մի քաղաքի կամ ի մի վանք լինի մի ոմն ուսուցիչ տղայոց, թէպէտ եւ ոմանք ոչ ուսանին ի նմանէ, սակայն ըստ հասարակաց բանի ասեն, թէ ամենեքեան ուսանին ի նմանէ, այսինքն՝ որ ոք կամի ուսանել, սոյնպէս եւ ամենայն ոք, որ ուսանի գծմարտութիւն հաւատոյ, յԱստուծոյ ուսանի, հեղմամբ հաւատայ, որպէս եւ ամէ.

Բան. «Ամենայն, որ լսէ ի Յաւրէ եւ<sup>1</sup> ուսանի, զայ առ իս» (Յովի. Զ 46):

Մեկնութիւն. Նախ՝ ցուցանէ զազատ կամս մեր, զի ոչ հարկիւ եւ բռնութեամբ գամք ի հաւատս, այլ յաւժար կամաւք է, զի յայնժամ լսէ մարդ ի Հաւրէ, յորժամ հեղումն շնորհաց ընդունի ի սիրտն, եւ յայնժամ ուսանի, յորժամ հաւանի, եւ այնպիսի այրգայ առ Քրիստոս հաւատով՝ տեսակցեալ սիրով: Երկրորդ. ցուցանէ զլսելն ի Հաւրէ. Նախ՝ ծածուկ հեղմամբ, երկրորդ՝ մարգարէիւքն, երրորդ՝ ձայնիւն ի Յորդանան: Իսկ Աստուած Հայր ուսուցանելով զմարդ, ոչ զգալապէս երեւելով որպէս մարդ եւ կամ կերպարանեալ մարմնով, որպէս հրեշտակք, եւ կամ որպէս Որդին Աստուծոյ, որ<sup>2</sup> միաւորեցաւ ի մարմին, եւ կամ որպէս Հոգին աղաւնակերպ եւ հրեղէն լեզուաւք, վասն որոյ ասէ.

Բան. «Իբր ոչ եթէ զՅայր ուրուք տեսեալ իցէ, եթէ ոչ որ էն յԱստուծոյ՝ նա ետես զՅայր» (Յովի. Զ 46):

Մեկնութիւն. Որպէս թէ ասել, թէպէտ ընտրեալքն յԱստուծոյ<sup>3</sup> Հաւրէ ուսանին, սակայն ոչ տեսանեն զնա<sup>4</sup>, այլ միայն Որդինորա ըստ բնութեան զնա տեսանէ, որ ի սկիզբն յղացման իւրոյ յարգանդի Կուսին ետես զ Աստուածային էութիւն, ոչ դոյզն ինչ եւ առժամայն յանկարծաբար տեսութեամբ, այլ մնացական ունակութեամբ: Տե՛ս, թէ որպէս մեղմագոյն բանիւ զինքն ի յէռթենէն Աստուծոյ Հաւր եցոյց, եւ ոչ՝ Որդի Յովսէփայ, որպէս նոքա կարծէին:

Բան. «Զի որ հաւատայ, ընդունի զկեանսն յաւիտենականս» (Յովի. Զ 47):

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> A B չեք

<sup>3</sup> B Աստուծոյ

<sup>4</sup> C զՅայր

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Զսիրով հաւատոն ասէ, որ մինչ իսպառ ուղիղ ի սէրն Աստուծոյ կայ: Եւ դարձեալ՝ որ այնպէս հաւատայ, նա ճաշակէ զմարմնացեալ Բանն, որպէս ասէ. «Ես եմ հացն կենաց» (Յովի. Զ 48):<sup>1</sup>

### Թէ յուսով կենդանացաք

**ԱՅԼ** գիտելի է, զի կեանք յաւիտենական ասելով ոչ կարծիցես, թէ<sup>2</sup> զմարմնաւոր մահս ոչ կրէ, սակայն ի կեանս յայս զյաւիտենից կենաց զսկիզբն ի մեզ ընդունիմք չորս կերպիւ, որպէս ասէ մեկնիչդ<sup>3</sup>.

Նախ՝ որպէս կենդանի մարմնով մեղքն ի մեզ մեռեալ է, սոյնալիս եւ մեռեալ մարմնով հաւատովքն կենդանի եմք:

**ԵՐԿՐՈՐԴ.** Հաւատոն եւ յոյսն յարութեան ի մեզ հաստատեալ մահն որպէս նինջ համարեալ է, ըստ Պաւղոսի. «Աստուած զննջեցեալսն ի ձեռն Յիսուսի ածցէ ընդ նմա» (Ա Թեսադ. Դ 13):

Երրորդ. աստ ծածուկ եւ զաւրութեամք ունիմք զյաւիտենից կեանսն, եւ անդ ներգործութեամք յայտնապէս ստանամք:

**ՉՈՐՐՈՐԴ.** աստ շնորհաւք ունիմք եւ անդ՝ փառաւք, զի մկրտութիւն եւ հաղորդութիւն եւ դաւանութիւն եւ այլն ամենայն շնորհաւք է ի մեզ, որպէս սերմ եւ արմատ ծաղկեալ, եւ անդ՝ զարդարեալ փառաւք, որպէս ծաղկեալ եւ պտղաւետեալ:

### Զի հաց անուանի

**ԲԱՆ.** «Ես եմ հացն կենաց»<sup>3</sup> (Յովի. Զ 48):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Եւ գիտելի է, զի հացն տասն կերպիւ լսի. նախ՝ հաց, այսինքն՝ հայցողացն է տուեալ: Երկրորդ. հաց, այսինքն՝ որ զհայցողքն հաւատով փրկէ: Երրորդ. հաց, այսինքն՝ կենաց տուող: Չորրորդ. հաց, որ կերակուր է մարդկան: Դարձեալ՝ հաց երեք գիծ եւ մի հետ. նախ՝ զի յերից միացեալ է մի Քրիստոս: Երկրորդ. զի եռակի տարորոշէ մարմինն Քրիստոսի: Երրորդ. զի մարմնով եւ հոգւով եւ մտաւք<sup>4</sup> ճաշակեմք զհացն: Չորրորդ. զի հաւատով եւ յուսով եւ սիրով հաղորդիմք նմա: Հինգերորդ. զի մարմնոյ եւ հոգւոյ եւ բանից մեղաց թողութիւն

<sup>1</sup> Ը եւ այլն

<sup>2</sup> Ա Յ չեք

<sup>3</sup> Ա Յ չեք

<sup>4</sup> Յ մարմնով եւ մտաւք եւ հոգւով

շնորհէ: Վեցերորդ. զի աստ եւ յետ մահու եւ յարութեան փրկութիւն է ընդունողացն զնա:

### Վասն մանանային

Բան. «Յարօն մեր կերան զմանանայն եւ մեռան<sup>1</sup>» (տես Յովի. Զ 49):

Մեկնութիւն<sup>2</sup>. Նախ զայն տեսցուք, զի հրէայքն<sup>3</sup> հաց մարմնաւոր խնդրէին, այլ եւ զփոքրն եւ զանցաւորն եւ զանաւգուտն խնդրէին, եւ Քրիստոս զհոգեւորն եւ զմեծագոյնն եւ մնացականն եւ զաւգուտն շնորհեաց, եւ սոյնպէս յամենայն ժամ առնէ խնդրողաց իւրոց:

Դարձեալ՝ զմանանայն փոքր ասէ վասն վեց իրաց. նախ՝ զի ի մահու ոչ ապրեցոյց: Երկրորդ. ի պատուհասէն ոչ փրկեաց: Երրորդ. յերկիրն աւետեաց ոչ հասոյց: Զորբորդ. զմեղս ոչ եթող: Հինգերորդ. ի տանջանաց ոչ ազատեաց: Վեցերորդ. յերկինս ոչ եհան:

Իսկ հաց մանանային Քրիստոսի ընդդէմ այսմ. նախ՝ զի կեանս տայ եւ ի պատուհասէ փրկէ, եւ ի վերինն երուսաղէմ տանի, եւ զմեղս թողու, եւ ի պատժոցն ազատէ, եւ յերկինս հանէ, եւ զայլն ամենայն:

### Թէ այլ է ի հասարակաց հացէ

Հարց<sup>4</sup>. Վասն է՞ր այնչափ կրկնէ զհացն:

Պատասխան. Վասն չորից. նախ՝ զի հրէայքն հացի ցանկային: Երկրորդ. զի հաստատեացէ ի յերկնից գոլ: Երրորդ. վասն առաւել աւգտին քան զմանանայն: Զորբորդ. զի որոշեացէ յերկրաւոր հացէ, վասն որոյ ասէ.

Բան. «Ես եմ հացն յերկնից իջեալ» (Յովի. Զ 50):

Մեկնութիւն. Հաց մարմնոյն<sup>5</sup> Քրիստոսի տաս կերպիւ որոշի ի հասարակաց<sup>6</sup> հացէ. նախ՝ զի հացս այս յերկը է, երկրորդ՝ զի ապականացու, երրորդ՝ զի անկենդան, չորրորդ՝ զի ոչ է պատճառ կենաց, այլ պահող կենաց, հինգերորդ՝ զի մարմնաւոր է, վեցերորդ՝ զմարմինն զաւրացուցանէ, եւթներորդ՝ բնական կերակուր,

<sup>1</sup> B չիք զմանանայն եւ մեռան

<sup>2</sup> B չիք

<sup>3</sup> A B չիք զի հրեայքն

<sup>4</sup> A B չիք

<sup>5</sup> A B մանանայն

<sup>6</sup> C ի հասարակ

ութներորդ՝ հասարակաց, իններորդ՝ աւելի ուտելն մեղք է, տասներորդ՝ ի կերպովն փոխի:

Իսկ հացն մարմնոյն Քրիստոսի ընդդէմ սոցա. նախ՝ ի յերկնից է: Երկրորդ՝ անապական: Երրորդ՝ զի կենդանի ընդ կենդանի Բանն միացեալ: Չորրորդ. պատճառ է<sup>1</sup> կենացն: Հինգերորդ. զի հոգեւոր կերակուր: Վեցերորդ. զհոգին զաւրացուցանէ: Եւթներորդ. շնորհաց կերակուր: Ութերորդ. հաւատով եւ յուսով կերակրի: Իններորդ. թողութիւն է մեղաց: Տասներորդ. զմեզ առ ինքն փոխէ, որ է Աստուած եւ Աստուծոյ մարմին:

### Ի խորհուրդ Պատարագին

Բան. «Յացն, զոր ես տաց, մարմին իմ է<sup>2</sup>, զոր ես տաց վասն կենաց աշխարհի<sup>3</sup>» (Յովի. Զ 52):

Մեկնութիւն. Յորժամ ճառեաց աւետարանիչս զբանն Քրիստոսի վասն հոգեւոր հացին, որ է Բանն Աստուծոյ, այժմ ճառէ վասն հոգեւոր հացին, որ է խորհուրդ Պատարագին:

Բան. «Յացն, զոր ես տաց»:

Մեկնութիւն<sup>4</sup>. Որպէս Պետրոսի խոստացաւ. «Տաց քեզ զփականս երկնից» (տես Մատթ. Ժ 19), եւ յետոյ ետ ընդ այլ առաքելոցն հաւասար, նոյնպէս աստ խոստանայ եւ յետոյ տայ յորժամ ի խաչն բարձրանայ: Դարձեալ ցուցանէ, թէ հանապազ ինքն է, որ պատարագի ի ձեռն քահանային, եւ ինքն ընդունի ընդ Հաւր: Իսկ կրկնելն այն է, որ ի Վերնատունն կացոյց զխորհուրդ Պատարագին, եւ զնոյն մարմինն ի խաչին պատարագեաց ի փրկութիւն ամենայն աշխարհի: Դարձեալ զիտելի է, զի ի<sup>5</sup> խորհուրդ Պատարագին է ինքն Քրիստոս՝ Բանն մարմնացեալ:

Եւ վասն այսմ չորս ինչ ցուցանէ. նախ՝ զխորհուրդ Պատարագին: Երկրորդ. զհարկաւորութիւն, յորժամ ասէ. «Մարտնչէին ընդ միմեանս» (Յովի. Զ 53): Երրորդ. ցուցանէ զաւգտութիւն, յորժամ ասէ. «Որ ուտէ զմարմին իմ եւ ընպէ զաւրիւն իմ<sup>6</sup>» (Յովի. Զ 55): Չորրորդ. ցուցանէ զնոր ճշմարտութիւն, յորժամ ասէ. «Մարմին իմ ճշմարիտ կերակուր է եւ ընպէլի» (տես Յովի. Զ 56):

<sup>1</sup> B չեք

<sup>2</sup> A B չեք իմ է

<sup>3</sup> A B չեք կենաց աշխարհի

<sup>4</sup> C Յարց

<sup>5</sup> C չեք ի

<sup>6</sup> A B չեք

**Եւ առաջինն, որ ասէ.** «Յացն, զոր ես տաց» (Յովհ. Զ 52), **չորս իրս ցուցանէ.**

Նախ՝ որ միայն խորհուրդ է, այսինքն՝ հացն: Եւ զայն ցուցանէ՝ ասելով. «Եւ հացն», քանզի զկնի էութեան բանին ոչ մնայ հաց ըստ գոյացութեան հացին, այլ ըստ պատահմանցն:

**Երկրորդ.** ցուցանէ զարարող այսմ խորհրդոյս, որ է ինքն Քրիստոս մեծագոյն քահանայ, զի քահանայն, որ պաշտանեայ է այսմ խորհրդոյ, ոչ ասէ զկութիւն բանին ի դէմս անձին իւրոյ կամ ի դէմս եկեղեցւոյ, որպէս ի յայլ խորհուրդս ասէ, այլ զբանն Քրիստոսի պատմէ, որպէս ասէ. «Առեալ զհացն Յիսուս ի ձեռս իւր, աւրհնեաց, գոհացաւ, երեկ եւ ետ աշակերտացն եւ<sup>1</sup> ասէ. «”Այս է մարմին իմ”, նոյնպէս եւ զբաժակն. “Այս է արիւն իմ”» (Իմմտ. Ղուկ. ԻԲ 19-20), վասն այնորիկ ասէ. «Յացն, զոր ես տաց, մարմին ին է<sup>2</sup>» (Յովհ. Զ 52):

**Երրորդ.** Է իր նշանակեալ եւ ի ներքոյ կացուցեալ, որ է ճշմարիտ մարմին Քրիստոսի, որպէս ասէ. «Մարմին ին է», եւ աստ իմանի մարմին բաց ի<sup>3</sup> հոգւոյ եւ յարենէ, զի թէպէտ ի խորհուրդ Պատարագին ի ներքոյ տեսակի հացին է Քրիստոսի բանական հոգին եւ արիւնն, սակայն այս ոչ է ի զաւրութենէ խորհրդոյն, այլ ի կցորդութենէ իրին, որպէս եւ Աստուածութիւն ի գինին է եւ ի նշխարն զկնի էութեան Բանին, ոչ ի զաւրութենէ բանին, այլ հետեւաբար, այսինքն՝ վասն անբաժանելի միաւորութեան առ մարմինն եւ առ արիւն<sup>4</sup>:

**Չորրորդ.** Է իր ոչ ի ներքս կացուցեալ, այլ միայն նշանակեալ, որ է խորհրդական մարմինն Քրիստոսի, այսինքն՝ հաւատացեալք, առ որ գլուխն Քրիստոս սիրով միաւորին, վասն այն ասէ Քրիստոս. «Զոր ես տաց վասն կենաց աշխարհի<sup>5</sup>» (Յովհ. Զ 52), քանզի որպէս բնական կեանքն է ի յանդամս վասն միաւորութեան առ գլուխն իւր եւ ի նմանէ ունին շարժումն եւ զգայութիւն, սոյնպէս եւ ի հաւատացեալքս, որ<sup>6</sup> Քրիստոսի անդամք են, կենդանութիւն հոգեւոր իջեալ լինի, վասն միաւորութեան ի գլուխն Քրիստոս խորհրդով Պատարագին:

<sup>1</sup> A B չեք եւ

<sup>2</sup> A C չեք մարմին ին է

<sup>3</sup> A B չեք ի

<sup>4</sup> C արիւնն

<sup>5</sup> C որ առ

<sup>6</sup> B Զոր ես տաց մարմին ին է վասն կենաց յաշխարհի

<sup>7</sup> C որք

Դարձեալ՝ որ ասէ. «Վասն կենաց աշխարհի» ընդհանրաբար զայն ցուցանէ, որ այլ խորհուրդքն միայն աւգուտ գործեն ընդունողին, քանզի որ մկրտի, զնորհս միայն ինքն ընդունի, որ մկրտեցաւ, եւ ոչ այլ ոք, նոյնպէս եւ դրոշմն եւ քահանայութիւն եւ այլն: Իսկ խորհուրդ Պատարագին ոչ միայն աւգուտ գործէ քահանային, որ պատարագէ, այլ եւ ամենայն աշխարհի՝ կենդանեաց եւ մեռելոց, վասն զի յիշատակ մահուն Քրիստոսի է: Բայց թէ զխորհուրդս զայս ընդունի աշխարհական այր, միայն նմա է աւգտակար, որ ընդունեցաւ:

Բան. «Մարտնչէին ընդ միմեանս» (Յովի. Զ 53):

Մեկնութիւն. Այժմ ցուցանէ գհարկաւորութիւն այսմ խորհդոյ: Տե՛ս, նախ տրտնջէին, այժմ յայտնի մարտնչէին ընդ միմեանս. զանհաւատութիւն նոցա եւ զչարութիւն եւ զապերախտութիւն ցուցանէ, զի թէ յիշէին զնշանս, որ ի վերայ նկանակացն, կարէին հաւատալ այսմ<sup>2</sup> եւ զորպէսն հարցանել առանց մարտնչելոյ:

Բան. «Ասէ<sup>3</sup>. «Թէ ոչ կերիջիք զմարմին<sup>4</sup> եւ ոչ արթիք զարիւն<sup>5</sup>, ոչ ունիք կեանս»» (Ինմտ. Յովի. Զ 54):

Մեկնութիւն. Վասն մարմնոյն մարտնչէին եւ զարիւնն այլ յաւել, քանզի որպէս մարմնաւոր կերակուրն հարկաւոր է առ ի պահել զկեանս մարմնոյն, նոյնպէս հարկաւոր է խորհուրդ Պատարագին առ ի պահել զկեանս հոգւոյ, քանզի որպէս մկրտութիւն է հոգեւոր վերստին ծնունդ, նոյնպէս եւ խորհուրդ Պատարագին է սնունդ հոգեւոր:

Այսուհետեւ ցուցանէ զաւգտակարութիւն այսմ խորհրդոյ՝ ասելով.

Բան. «Որ ուտէ զմարմին իմ<sup>6</sup> եւ ընպէ զարիւն իմ<sup>7</sup>» (Յովի. Զ 55):

Մեկնութիւն. Զի որպէս մարմնաւոր կերակուր ոչ միայն սնուցանէ եւ պահէ զկենդանութիւն, այլ եւ աճեցուցանէ զմարմինն մինչեւ ի կատարեալ չափ քանակութեան մարմնոյն, նոյնպէս եւ խորհուրդ Պատարագին հասուցանէ զմարդն ի կատարելութիւն չնորհաց, որ է աճումն հոգեւոր, վասն այնորիկ ասէ. «Որ

<sup>1</sup> A B չեք է

<sup>2</sup> B յայսմ

<sup>3</sup> C Ասէ Յիսուս

<sup>4</sup> C չեք

<sup>5</sup> C չեք

<sup>6</sup> A չեք

<sup>7</sup> A B չեք

ուստի զմարմին իմ<sup>1</sup> եւ ընպէ [զարդիւն իմ], ունի կեանս յաւիտենականս», այսինքն՝ *յինքն ունի զԱստուած բնակեալ, որ է կեանք յաւիտենական<sup>2</sup>:*

### Վասն յարութեան

Բան. «Եւ ես յարուցից զնա յաւուրն յետնում» (Յովի. Զ 55):

**Մեկնութիւն<sup>3</sup>.** Վասն յետին աւուրն ասացաւ մեզ, այլ աստվասն յարութեան երեք լինչ հարցանելի է.

**Առաջին.** Վասն է՞ր այնչափ կրկնէ զյարութիւն:

Պատասխան. Ասեմք վասն հնգից. նախ՝ զի ցուցցէ, թէ՝ ես եմ<sup>4</sup> Տէր մահու եւ կենաց, ըստ այնմ. «Ես սպանանեմ եւ ես կեցուցանեմ» (ԲՕր. ՂԲ 39): Երկրորդ. զի ցուցցէ զինքն դատաւոր եւ հատուցանող, զի յետ յարութեան դատաստան է, եւ դատաստան վասն հատուցման լինի: Երրորդ. զի ցուցցէ, թէ հատուցումն եւ կեանքն յաւիտենից անդ է լինելոց՝ յետ յարութեան, եւ ոչ աստ՝ յառաջ քան զյարութիւն: Չորրորդ. յարութիւն ասելով ցուցանէ զմահն, զի յարութիւն զկնի մահուանն է, զի թէ ոչ մեռանին, ոչ յառնեն, որպէս յայտ է ի<sup>5</sup> սահմանէ յարութեան, զոր ասելոց եմք: Հինգերորդ. չորիցս կրկնեաց զյարութիւն. զայն ցուցանէ, զի նախ ընտրելոցն յարութիւն է, եւ հաւատացելոցն ի Քրիստոս յարութիւն է, եւ որք սիրով գան առ Քրիստոս յարութիւն է, այլ առաւել հաղորդողաց զմարմին եւ զարիւն Տեառն յարութիւն է:

Երկրորդ հարց. Զի՞նչ է սահման յարութեան:

Պատասխան. Ասեն վարդապետք. նախ՝ թէ յարութիւն է վերատին կենդանութիւն հոգւոյ եւ մարմնոյ: Երկրորդ. յարութիւն է անմահ կենդանութիւն: Երրորդ. յարութիւն է այնմ, որ անկաւ<sup>6</sup>:

Երրորդ հարց. Վասն է՞ր լինի յարութիւն:

Պատասխան. Ասեմք, ի վարդապետաց ժողովեալ, վասն ուժն պատճառի.

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> A B յաւիտենականք

<sup>3</sup> A չեք

<sup>4</sup> C չեք եմ

<sup>5</sup> A B չեք ի

<sup>6</sup> C անկաւ վերստին յառնել ի կենդանութիւն յաւիտենական անմահ: Եւ այս սահմանս կատարեալ է, այլ գիտելի է, զի կրկին է անկումն, այսինքն նախ, զի հոգեւոր մահուանք հոգին մեղօք անկանի, Երկրորդ՝ մարմնաւոր, վասն որոյ կրկնէ յարութիւն հոգեւոր եւ մարմնաւոր

Նախ՝ վասն անմահութեան հոգւոյն լինի եւ մարմինն անմահ, զի որպէս հոգին վասն մարմնոյն զթողութիւն գտանէ, նոյնպէս եւ մարմինն վասն հոգւոյն զանմահութիւն:

*Երկրորդ.* զի անձն հոգւով եւ մարմնով է կատարեալ, եւ հոգին առանց մարմնոյն ոչ է կատարեալ անձն, պարտ է զի յարիցէ մարմինն, զի կատարեալ լիցի անձն մարդոյն:

*Երրորդ.* զի մարդն հոգւով եւ մարմնով ի պատկերն Աստուծոյ արարաւ եւ վասն մեղաց եղծաւ, պարտ է զի յարութեամբն պատկերն Աստուծոյ վերստին<sup>1</sup> նորոգեսցի:

*Չորրորդ.* զի մարդն ի յանմահութիւն ստեղծաւ եւ վասն նախանձու բանսարկուին մահացաւ, պարտ է, զի զաւրութեամբն Քրիստոսի դաձեալ անմահացի:

*Հինգերորդ.* զի մարմինս մեր գործակից է հոգւոյս մեր, պարտ է զի եւ փառակից լիցի այսմ յարութեամբն, զի ի միասին գործեցին զբարիս, ի միասին փառաւորեսցին ի կեանս:

*Վեցերորդ.* զի հոգին մեր բնականապէս փափագի միաւորիլ մարմնոյ, զի կատարեալ երանեալ լիցի, բայց ոչ է պատշաճ, զի երանեալ հոգին անքակ միաւորեսցի ապականեալ մարմնոյ, վասն որոյ պարտ է, զի յարութիւն լիցի մարմնոյ առ ի յանմահութիւն կենաց, որպէս ասէ. «Ես յարուցից զնա յաւորն յետնում<sup>2</sup>» (Յովհ. Զ 55):

*Եւթներորդ.* պատճառ յարութեան մերոյ յարութիւն Քրիստոսի է, որպէս գլուխն մեր յարեաւ նոյնպէս եւ զանդամս յարուսցէ, ըստ այնմ. «Առաջին պտուղ ննջեցելոց եւ անդրանիկ<sup>3</sup>» (տե՛ս ԱԿորնթ. ԺԵ 20):

*Ութերորդ.* յարութիւն լինի վասն անմահ կենացն, զի յարութիւն է սկիզբն եւ պատճառ անվախճան կենացն, եւ որպէս ծննդեամբն ի կեանս ժամանակեայ գամք, սոյնպէս եւ յարութեամբն յաւիտենից կեանքն ելանեմք:

*Այսքան առ այս:*

Բան. «Մարմին ին ծշմարիտ կերակուր է» (Յովհ. Զ 56):

*Մեկնութիւն<sup>4</sup>.* Աստ ցուցանէ զչորրորդն ի կերակրելոյն, թէ Աստուած է Քրիստոս. նախ՝ ասաց վասն նկանակացն: *Երկրորդ.* որ ասաց աշակերտացն, թէ՝ «Ես եմ, մի՛ երկնչիք» (Յովհ. Զ 20): *Երրորդ.* որ ասաց Զինքն Յաց Կենաց: *Չորրորդ.* աստ պատարագաւ, որ ասէ. «Մարմին իմ<sup>5</sup> ճշմարիտ կերակուր է»:

<sup>1</sup> C չեք

<sup>2</sup> A չեք

<sup>3</sup> C անդրանիկ մեռելոց

<sup>4</sup> A B չեք

<sup>5</sup> A B չեք

Եւ վասն չորից ասէ ճշմարիտ. նախ՝ զի աստ կայ մարմինն Քրիստոսի ըստ իրին եւ ոչ ըստ աւրինակին: Երկրորդ. զի ճշմարտապէս կերակրեն եւ սնուցանեն զհոգի, որ անմահ է: Երրորդ. զի ճշմարտապէս պատճառ է եւ առիթ յաւիտենական կենացն: Չորրորդ. զի մշտնջենաւոր կերակուր է հոգւոյ, աստ եւ յետ մահու եւ յետ յարութեան, վասն այն խնդրեմք, թէ՝ «Զհաց հանապագորդ տո՛ւր մեզ այսաւր»:

Եւ զի սուտ են ազգն ֆուանգաց. նախ՝ զի բազում հաց դնեն ի Պատարագն: Երկրորդ. սուտ են, զի ոչ աւրհնեալ<sup>1</sup> հացէն տան ժողովրդեանն, այլ սոսկ հաց ի սեղանոյն: Երրորդ. զի<sup>2</sup> զարիւնն ոչ տան ժողովրդեանն: Չորրորդ. սուտ են, զի զտղայսն զրկեն ի հաղորդելոյ: Հինգերորդ. զի<sup>3</sup> ջուր խառնեն ի խորհուրդն անապական:

**Զայսոցիկ զպատճառն եւ զպատասխանին տե՛ս<sup>4</sup> ի գիրս Հարցմանց, իններորդ հատորն, երեսուն եւ մէկերորդ համարն<sup>xciv</sup>:**

Յետ ասելոյն զճշմարտութիւն կերակոյն այժմ ասէ զզաւրութիւն այսմ խորհրդոյս:

Բան. «Որ ուտէ զմարմին իմ<sup>5</sup> եւ ընպէ զարիւն իմ<sup>6</sup>, նա յիս բնակեսցէ եւ ես ի նմա<sup>7</sup>» (Յովի. Զ 57):

**Մեկնութիւն. Վեց ինչ ցուցանէ բնակել ասելովն.**

Նախ՝ որպէս կերակուրն միաւորի ի բնութիւնս մեր, նոյնպէս մարմինն Քրիստոսի միաւորի ի հոգիս մեր անորոշաբար:

Երկրորդ. որպէս մարմինն ի մէնջ առեալ փառաւորեցաւ Աստուած լինելովն եւ անապական, սոյնպէս եւ բնակելովն ի մեզ զմարմինս մեր փառաւորէ ի յարութեան անապական առնելով, ըստ այնմ. «Նման նմա լինելոց եմք» (Ա Յովի. Գ 2):

Երրորդ. մեք հաւատով եւ յուսով ի նա բնակիմք եւ նա շնորհաւք ի մեզ բնակէ աստ, եւ անդ՝ փառաւք:

Չորրորդ. սիրով բնակեմք ի միմեանս, զի սիրելին սիրով բնակէ ի սիրեցեալն, եւ անդրադարձեալ:

Հինգերորդ. բնակեմք ի միմեանս, որպէս անդամք՝ ի գլուխն, եւ գլուխն՝ յանդամս շարժմամբ եւ զգայութեամբ:

<sup>1</sup> Ը յօրհնեալ

<sup>2</sup> Ը սուտ են, զի

<sup>3</sup> Ը սուտ են, զի

<sup>4</sup> Ը տեսցես

<sup>5</sup> Ա Յ չիք

<sup>6</sup> Ա Յ չիք

<sup>7</sup> Ը չիք եւ ես ի նմա

**Վեցերորդ.** որպէս բանն ի մարմինն իւր միաւորեալ, եւ մարմինն ի բանն ասի, նոյնպէս մարմնովն նա ի մեզ բնակէ, եւ մեք նովաւ ի Հայր, որպէս այլուր ասէ. «Դու<sup>1</sup>, Յայր, յիս եւ ես ի քեզ, եւ սոքա ի մեզ իցեն» (հնմտ. Յովի. ԺԴ 20):

**Հարց.** Վասն է՞ր Քրիստոս զինքն ի մարմին եւ յարիւն բաժանէ, եւ ոչ ջիլ կամ յոսկը եւ յայլ:

**Պատասխան.** Վասն չորից.

Նախ՝ զի արիւնն ի մարմինն Քրիստոսի առաւել պատշաճ է յըմպիլ, քան զայլ մասունս, վասն այնորիկ Քրիստոս զայս միայն յիշէ՝ մարմին եւ արիւն, առ ի ցուցանել զսնունդ կատարեալ հոգւոյ մեր ի Քրիստոսէ:

**Երկրորդ.** զի ի չարչարանքն Քրիստոսի մարմին եւ արիւնն բաժանեցան ի միմեանց, եւ ոչ՝ մարմին եւ ջիլ եւ ոսկը:

**Երրորդ.** արիւնն զհոգին նշանակէ, զի հիմն է հոգւոյ<sup>2</sup> եւ տեղի, զի<sup>3</sup> ընդ ամենայն մարմինն սփռեալ կայ, որպէս եւ հոգին, որպէս ի չարչարանքն<sup>4</sup> Քրիստոսի բանական հոգին բաժանեցաւ ի մարմնոյն:

**Չորրորդ.** զի կրկին կերպիւ ընդունիմք զաստուածայինսն, որպէս գրէ Դիոնէսիոս ի թուղթն Տիտոսի<sup>ԽՎ</sup> մեկնելով զբան առակացն. «Իմաստութիւն զէն զզէնլիս եւ խառնեաց ի խառնարանս զգինի<sup>5</sup>» (հնմտ. Առակ. Թ 1-2), վասն այնորիկ եկեղեցիս Հայաստանեայց խառնէ եւ միաւորէ զմարմին եւ զարիւնն սուրբ:

Եւ դարձեալ՝ զկնի էութեան Բանին բոլորովին Քրիստոս է ի նշխարն եւ բոլորովին ի գինին, որ կեանս անմահականս տայ արժանապէս կերողացն եւ ըմպողացն:

Բան. «Որպէս առաքեաց զիս կենդանին Յայր» (Յովի. Զ 58):

**ՄԵԼՈՆԻՔԻՆ.** Զպատճառ ի միմեանս բնակելոյն եւ կենդանի գոլոյն այժմ ցուցանէ, զի Քրիստոս Աստուած է մարդացեալ եւ Աստուածութեամբն եւ մարդկութեամբն կենդանի է վասն Հաւր, զի Աստուածութիւն զբնութիւն եւ զկենդանութիւն ի Հաւրէ ունի, յաղագս որոյ վասն Հաւր կենդանի ասի, իսկ մարդկութիւն, զի միացեալ է ի բնութիւն Աստուծոյ, վասն այնորիկ եւ մարմինն կենդանի ասի վասն Հաւր, իսկ մեք՝ միաւորութեամբն առ Աստուած խորհրդով Պատարագին կենդանի եմք հոգեւորապէս, ոչ ըստ միութեան բնութեան, զի այն միայն Քրիստոսի է, այլ ըստ

<sup>1</sup> Ս Որպէս դու

<sup>2</sup> Ս հոգւոյն

<sup>3</sup> Ս եւ

<sup>4</sup> Ս որպէս ի հոգին եւ ի չարչարանքն

<sup>5</sup> Ս զգինի իւր

միութեան հաւատոյ եւ սիրոյ, վասն այն ասէ. «Եւ որ ուտեն զիս, եւ նա կեցցէ վասն իմ» (հնմտ. Յովի. Զ 55), զի այնու միաւորի առ սկիզբն հոգեւոր կենացն։ Յետ այսորիկ եղրակացնէ Քրիստոս ճշմարիտ գոլ զայն, զոր հրէայքն սուտ գոլ համարէին եւ տրտնջէին։

Բան. «Այս է հացն կենաց<sup>1</sup>» (Յովի. Զ 59):

**Մեկնութիւն.** Հստ գոյացութեան հացին նոյն մարմինն է Քրիստոսի, որ ընդ աշմէ Հաւը, եւ նոյն մարմինն, որ ի սեղանն պատարագի, այլ նա է ի ներքոյ քանակութեան<sup>2</sup> մարմնոյն, իսկ սա ի ներքոյ որակութեան եւ քանակութեան հացի եւ գինւոյ։

Եւ մարմինն, որ ի Կուսէն ի յերկնից իջեալ ասի. նախ՝ զի յերկնից իջեալ Բանն է միացեալ։ Երկրորդ. զի ի Հոգւոյն Սրբոյ կազմեցաւ մարմինն յարգանդի։

Եւ նոյն մարմինն Քրիստոսի, որ կայ ի խորհուրդս յայս ի յերկնից իջեալ ասի. նախ՝ զի բանիւն Աստուծոյ էացաւ, երկրորդ՝ զի Հոգւոյն Սրբոյ զաւրութեամբն ձեւացաւ մարմինն Քրիստոսի։

Եւ զինի այսմ դարձեալ ցուցանէ Քրիստոս զաւգտակարութիւն այսմ խորհրդոյ։

Բան. «Ոչ որպէս հարքն ձեր կերան զմանանայն եւ մեռան» (տես Յովի. Զ 59):

**Մեկնութիւն.** Ուստի<sup>3</sup> յայտ է, զի մանանայն ոչ էր ճշմարտապէս երկնային կերակուր, այլ միայն աւրինակ նորա, զի ոչ տայր զկեանս հոգեւոր։ Սոյնպիսի կերպիւ. զի մանանայն զամենայն բաղձանս կերակրոց ունէր ի բերանս բարի արանց, որպէս զրէ Սողոմոն յիմաստութիւն։ «Հստ մատուցանելոյ ցանկութեան արբանեկեալ, առ որ ինչ եւ կամէր ոք» (տես Իմաստ. Ժ 21), իսկ չար արանց անախորժ էր, որպէս զրեալ է ի Թիւքն։ «Յորժամ բամբասեցին զ Աստուած եւ զ Մովսէս՝ ասելով. “Անձինք մեր տաղտկացեալ են ի սնոտի հացէս”» (տես Թիւք ԻԱ 5)։ Նոյնպէս<sup>3</sup> եւ այս խորհուրդ Սրբոյ Պատարագիս արժանաւոր ընդունողաց է<sup>4</sup> միսիթարութիւն եւ պատճառ հոգեւոր կենաց, իսկ անարժան ընդունողացն է դատաստան անձին, վասն որոյ զինի ասէ Քրիստոս։

Բան. «Որ ուտէ զիաց զայս կեցցէ յաւիտեան<sup>5</sup>» (Յովի. Զ 59):

**Մեկնութիւն.** Եւ զայս ասէր վասն արժանաւոր ընդունողաց։  
Եւ աստ լինի երեք<sup>1</sup> հարց։

<sup>1</sup> Ը կենաց ի յերկնից իջեալ

<sup>2</sup> Ը որակութեան եւ քանակութեան

<sup>3</sup> Ը Որպէս

<sup>4</sup> Ա ընդունողէ միսիթարութիւն, Բ ընդունողէ միսիթարութիւն է

<sup>5</sup> Ա Բ չեք յաւիտեան

Առաջին. Վասն է՞ր այնչափ կրկնեաց յաղագս հացին:

Պատասխան. Ասացաւ մեզ յառաջագոյն վասն յարութեան, եւ վասն չորից կրկնէ զհացն:

Այժմ մեկնիչդ ասէ վասն ութն պատճառի<sup>xcvi</sup>.

Նախ՝ զի մեր հաւատոց կատարումն այն է, որ զմարմինն Քրիստոսի Աստուած հաւատամք եւ այնու զկեանքն<sup>2</sup> յաւիտենից ընդունիմք, եւ Քրիստոս վասն սոցա եկն յաշխարհ, ասէ:

Երկրորդ. զի առաւել ցուցցէ, քան զմանանայն զհաց մարմնոյն Քրիստոսի, որպէս այն աւրինակ եւ այս ճշմարտութիւն:

Երրորդ. զի ցուցցէ զյարութիւն գոլ սկիզբն յաւիտենական կենացն եւ ամենայն խաւատացեալ բարեացն, որպէս ցուցաւ:

Չորրորդ. որպէս լուաւ Աղամ սատանայի եւ եկեր զպտուղն եւ ծածուկ մահացաւ, սոյնպէս որ հաւատայ Քրիստոսի եւ ճաշակէ զմարմին նորա, ծածկապէս զանմահ կեանքն ընդունի:

Հինգերորդ. որպէս Աղամ նախ զաւրութեամք մեռաւ եւ յետոյ՝ ներգործութեամք, սոյնպէս եւ մեք այժմ զաւրութեամք կենդանացաք Քրիստոսիւ եւ յարութեան ներգործութեամք կենդանացուք:

Վեցերորդ. որպէս կերակուրն պատճառ եղեւ մահուան Աղամայ, սոյնպէս ասս կերակուրն պատճառ եղեւ մեզ կենաց:

Եւթներորդ. որպէս ոչ թէ պտուղն բնութեամք մահացու էր, այլ զի անժամանակ կերաւ եւ եթող զպատուէրն Աստուծոյ եւ լուաւ սատանայի, սոյնպէս որք ունկնդիր լինին Քրիստոսի եւ ճաշակեն ի հացէն, որ է մարմին նորա՝ կենդանասցին հաւատով:

Ութերորդ. որպէս ծառն կենաց ունէր երեք յատկութիւն. նախ՝ զի անկարաւտութիւն տայր ուտողին, երկրորդ՝ կատարեալ առողջութիւն եւ ուրախութիւն, երրորդ՝ ի յաւիտենից կեանք եւ առողջութիւն հաստատէր հակառակ մահացու պտղոյն, սոյնպէս եւ մարմինն Քրիստոսի զնոյնս առնէ ի մեզ չոգեպէս, վասն այնորիկ այնչափ կրկնէ վասն հացին կենաց, որ է մարմին Որդւոյն Աստուծոյ:

Երկրորդ հարց. Թէ վասն է՞ր զսոյնպիսի ճշմարիտ եւ բարձրագոյն բանս ասաց ի լուր հրէիցն, զի անարժանք էին ընդունել, զի ինքն ասաց ի Մատթէոս. «Մի՛ տայք զսրբութիւն շանց» (Մատթ. Է 6):

Պատասխան. Ասեն այլ վարդապետք վասն<sup>1</sup> ութ պատճառի վայելչաբար ասաց Քրիստոս զբանս զայս.

<sup>1</sup> A B չեք  
<sup>2</sup> C զկեանս

Նախ՝ համեմատելով զբանս զայս ի սքանչելիս հացին, զոր արար, պարտ էր ցուցանել, թէ ա է Հաց Կենաց հաւատացելոց:

**ԵՐԿՐՈՐԴ.** Հրէայքն ի տարակոյս էին եւ սիրէին զնա մարմնապէս, որք կամէին թագաւոր կացուցանել<sup>2</sup>, վասն որոյ զայս ասաց Քրիստոս եւ վերացոյց զնոսա առ Հոգեւոր հացս եւ կերակուրս, եւ եհան ի սրտից նոցա զմարմնասիրութիւն:

**ԵՐՐՈՐԴ.** Հայելով ի ժամանակ քարոզութեան Քրիստոսի, զի այլ ոչ եւս կայր քան<sup>3</sup> զմի ամն<sup>4</sup> մինչեւ ի մահն Քրիստոսի, եւ Յովաննէս զվկայութիւն իւր վկայեալ էր եւ մեռեալ, վայել էր Քրիստոսի զբարձրագոյն վկայություն իւր ցուցանել:

**ՉՈՐՏՈՐԴ.** Հայելով ի տրամադրութիւն հրէիցն, որ է փոխադրութիւն, որ յետ այնքան սքանչելեացն պարտ էր վերահասու լինել բանիս եւ խոնարհութեամբ խնդրել ի Քրիստոսէ եւ ուսանել:

**ՀԻՆԳԵՐՈՐԴ.** վասն կուրութեան նոցա, զի ոչ վասն<sup>5</sup> նշանաց եւ ոչ վասն վկայութեանցն ոչ կամէին հաւատալ զնա գոլ կեցուցիչ Հոգւոց եւ մարմնոց, զի եթէ զայս հաւատացեն<sup>6</sup>, զբանս Քրիստոսի դիւրաւ ընդունէին:

**ՎԵցԵՐՈՐԴ.** Հայելով ի խորհուրդս Պատարագին, որ նշանակէ զմիաւորութիւն անդամոցս առ գլուխն Քրիստոս եւ մեծագոյն է ի մէջ խորհրդոյ եկեղեցւոյ եւ վայել էր, զի Քրիստոս ոչ միայն ծածկապէս, այլ յայտնապէս ուսուցանէր:

**ԵՎՑԵՐՈՐԴ.** զի յաղթութենէ ներհակացն առաւել յայտնի ճշմարտութիւն, որպէս եւ պայծառութիւն լուսոյ առաւել յայտնի յորժամ փախուցանէ զխաւար: Եւ դարձեալ՝ Քրիստոսի վարդապետութիւն այսու հաստատագոյն երեւի իբրեւ ոչ հաստատեալ մարդկան հաճութեամբ:

**ՈՒԺԵՐՈՐԴ.** վասն մխիթարութեան մեր, յորժամ զծմարիտն ասեմք եւ լսողին գայթակղին եւ ի մէնջ ի բաց որոշին, ոչ է պարտ մեզ խոռվել եւ տրտմել, այլ ուրախանալ, զի զծմարիտն խաւսեցաք:

**Այսքան առ երկրորդն:**

<sup>1</sup> С թէ վասն

<sup>2</sup> В թագաւորեցուցանել, С ցուցանել

<sup>3</sup> С չիք

<sup>4</sup> С ան

<sup>5</sup> С չիք

<sup>6</sup> С հաւատային

### Բաղդատութիւն նկանակին եւ Պատարագին խորհրդոյ

Երբորդ հարց. Վասն է՞ր զհացն աճեցոյց Քրիստոս<sup>1</sup> յանապատին եւ ոչ յայլ ինչ նիւթոյ ելից զքաղց ժողովրդեանն:

Պատասխան. Ասեն վարդապետք վասն ութ պատճառի.

Առաջին պատճառ. զի յորժամ զհացն մարմին իւր արասցէ, եւ զգինին՝ արիւն, հաւատարիմ լիցին ասացեալքն, վասն այսմ եւ զջուրն գինի արար:

Երկրորդ. որպէս «Գինին պատճառ է ուրախութեան մարմնոյ, եւ հացն հաստատէ զսիրտ մարդոյ» (հմնտ. Սաղմ. 64 15), ասաց մարդարէն, սոյնպէս հոգեւոր ուրախութեան եւ առաքինութեան վարուց, որ է կենդանութիւն հոգւոյն, պատճառ մարմին եւ արիւն Տեառն<sup>2</sup>, յորժամ սրբութեամբ մերձեսցին:

Երրորդ. որպէս զհացն եւ զգինին ձրի եւ առանց գնոյ ետ Քրիստոս կերպացն եւ ըմպողացն, սոյնպէս եւ մեզ ձրի եւ առանց գնոյ պարտ է մատուցանել զՊատարագն Աստուծոյ եւ բաշխել հաւատով խնդրողացն:

Չորրորդ. զի որպէս յառաքելոցն առ Տէրն<sup>3</sup> զհացն եւ աճեցոյց, եւ դարձեալ ետ ի ձեռս նոցա բաշխել ժողովրդեանն, սոյնպէս ի մարդկային բնութենէս առ զմարմինն եւ աստուածացոյց՝ միաւորելով ընդ իւրում աստուածութեան: Եւ դարձեալ՝ ետ ի ձեռս մարդկան բաշխել հոգեւորապէս քաղցելոցն:

Հինգերորդ. որպէս ոչ թէ նոր հաց գոյացոյց Տէրն, այլ զգոյացեալն աճեցոյց, սոյնպէս՝ ոչ թէ նոր մարմին ստեղծ ինքեան, այսինքն՝ աւտար ի մարդկային զանգուածոյս, այլ ի մերմէ բնութենէս առ եւ աստուածացոյց խառնմամբ բանին:

Վեցերորդ. որպէս հացն այն, զոր աճեցոյց, յագեցոյց զկերողսն յանապատին, եւ անծախելի մնաց, սոյնպէս եւ մարմին Տեառն յագեցուցանէ զհաւատով ճաշակողս, եւ անսպառելի մնայ միշտ յեկեղեցի, մինչ ի կատարած աշխարհի:

Եւթներորդ. զի ամենայն հաց, որ հնանայ եւ ապականի, փտի եւ բորբոսի, իսկ հացն, զոր Տէրն աճեցոյց, ոչ փտէր եւ ոչ ապականէր, այլ հնանալովն առաւել գեղեցկանայր եւ անուշանայր, նոյնպէս եւ մարմինն Տեառն ոչ ետես զապականութիւն, ըստ Սաղմոսին (հմնտ. Սաղմ. ԺԵ 10):

<sup>1</sup> ԸՒՔ

<sup>2</sup> Արիւն Տեառն

<sup>3</sup> Տէր

Ուժներորդ. որպէս առաքելոցն միայն հրամայեաց բաշխել զհացն զայն եւ ժողովել զնշխարս կոտորոցն, սոյնպէս եւ քահանայքն, որ սուրբ են<sup>1</sup> սրտիւք եւ մաքուր անձամբ, նոցա միայն է պատշաճ սպասաւորել մարմնոյ եւ արեան Տեառն:

Այսքան առ այս ի մերոց վարդապետաց:

### Յորդորակ Պատարագի

Հայեսցո՛ւք, եղբարք, զանձառ բարիսն, զոր պարգեւեաց մեզ Քրիստոս՝ Որդին Աստուծոյ, այլ եւ զանչափ սէր նորա, զի մարդիկ<sup>2</sup> յորժամ սիրեն զմիմեանս, աւտար կերակուր եւ առ ժամանակեայ պարգեւք տան, իսկ Տէր մեր այնքան սիրեաց զմեզ, մինչեւ<sup>3</sup> զմարմինն եւ զարիւնն իւր սուրբ ետ մեզ<sup>4</sup>, որ պատճառ է յաւետենական կենացն: Եւ թէ որքա՞ն սրբութեան պէտք են մեզ, զի արժանասցուք մեծի պարգեւացն, ցուցանէ նախ նոյն ինքն Փրկիչն. «Եթէ մատուցանիցես զպատարագն եւ յիշեսցես զխէթն, թո՛ղ զպատարագն եւ նախ<sup>5</sup> հաշտեաց ընդ եղբաւըն» (տես Սատր. Ե 23-24), զի զեղբաւը հաշտութիւն առաւել համարի, քան զպատարագն իւր: Եւ տե՛ս, զի ոչ միայն ի մեծամեծ մեղաց պահանջէ մաքրիլ, այլ զփոքր ինչ խէթ, որ է մնացորդ բարկութեան, զոր ոխակալութիւն ասեմք, եւ այն մոռացումն ի մէջ անցեալ<sup>6</sup>: Եւ դարձեալ՝ զի եղբաւըն լինի խէթն, եւ ոչ քո հրամայեաց ոչ կատարել զՊատարագն: Ապա որքա՞ն լրբենի համարձակութիւն իցէ, թէ ընդ ոխակալութեան եւ<sup>7</sup> ատելութիւն ունիցիս<sup>8</sup> կամ նախանձ կամ հպարտութիւն, կամ այլ ինչ, եւ յանդգնի ի Սուրբ Խորհուրդ մերձենալ:

Բան. Առաքեալն Պաւոս աղաղակէ. «Փորձեսցէ մարդ զանձն [իւր] եւ ապա ի հացէն կերիցէ եւ ի բաժակէն արբցէ» (Ա Կորնթ. ԺԱ 28) եւ հաց կոչէ եւ բաժակ, զի գոյացութիւն հացին եւ գինւոյն փոխեալ է ի մարմին եւ յարիւն Քրիստոսի, այլ պատահմունքն մնացեալ է, այս է՝ գոյնն եւ համն եւ հոտն, վասն երկու պատճառի. մին՝ զի կարասցուք ճաշակել որպէս սովոր կերակուր, զի թէ

<sup>1</sup> A B չեք են

<sup>2</sup> C չեք

<sup>3</sup> C մինչ

<sup>4</sup> A B չեք իւր սուրբ ետ մեզ

<sup>5</sup> B երթ

<sup>6</sup> C չեք եւ այն ... անցեալ

<sup>7</sup> A B չեք եւ

<sup>8</sup> A B չեք

յայտնի միս եւ արիւն լինէր, ո՛չ կարէաք հպել, երկրորդ՝ զի հաւատով տեսցուք, թէ մարմին եւ արիւն է Քրիստոսի, եւ մի՛ աշաւք, զի վարձք ի հաւատոյն է, եւ հաւատն յաներեւոյթն է, եւ որպէս հացս այս, նոյնպէս եւ մարդեղութիւն Քրիստոսի կերպարանք մարմնոյն եւ չափն եւ գոյնն մարդոյ էր եւ գոյացութիւն մարդոյն ի Բանն Աստուած միացեալ էր եւ աստուածացեալ:

Դարձեալ՝ հաց կոչի, զի հայցելով տայ մեզ<sup>1</sup> զհացն զայն, այլ եւ հաց, այսինքն՝ զի հայեցմամբ հաւատովն տայ մեզ զկերակուրն:

Դարձեալ՝ հացն կերակուր է բանական մարդկան, եւ հացն այն կերակուր է հոգւոց մերոց եւ տայ զկեանքն յաւիտենական հաւատով ճաշակողացն, վասն որոյ ասէ առաքեալ. «Փորձեացէ մարդ զանձն եւ ապա ի հացէն [կերիցէ]» (Ա Կորնթ. ԺԱ 28): Փորձել, ընտրել եւ սրբել<sup>2</sup> զհոգին, եւ այնպէս փորձէ, որ ինքն տեսանէ զսրբութիւն ի հոգին իւր, զի այլոց բազում կերպիւ ցուցանեմք զմեզ սուրբ:

Եւ երեք կերպիւ սրբիմք. նախ՝ զղմամբ, երկրորդ՝ խոստովանութեամբ, երրորդ՝ ապաշխարութեամբ, զհոգի, զմարմին եւ զմիտս մեր սրբեմք: Ապա թէ՝ ոչ, տե՛ս զահագինն, որ ի վերայ արկանէ. «Վասն այնորիկ են ի ձեզ բազում հիւանդք եւ ախտաժէտք եւ շատն այնոքիկ են, որ ննջեցեալքն [իսկ իցեն]» (տես Ա Կորնթ. ԺԱ 30-31), այսինքն՝ զի բազումք ցաւք<sup>3</sup> ի մարմինն եւ հիւանդութիւնք եւ մահ տարաժամք ի յանարժան հաղորդութենէն լինի եւ ի Պատարագէն:

Երրորդ. դարձեալ ասէ Պաւլոս. «Վերստին անձանց ի խաչ հանեն զՈրդին Աստուծոյ<sup>4</sup>» (տես Եբր. Զ 6): Եւ դարձեալ խայտառակ<sup>5</sup>. տե՛ս, զի խաչողացն հաւասարէ զանարժան հաղորդողքն<sup>6</sup>, եւ այս է պատճառն, զի որպէս հրէայքն զՔրիստոս սոսկ մարդ կարծէին, վասն որոյ խաչեցին, որպէս ասէ Պաւլոս. «Զոր ոչ ոք յիշխանաց աշխարհիս այսաւրիկ ծանեաւ, զի թէ էր ծանուցեալ, ոչ արդեաւք զՏէրն փառաց ի խաչ հանէին» (Ա Կորնթ. Բ 8), նոյնպէս եւ նա սոսկ մարդ համարի զՔրիստոս, վասն այն ժպրհի եւ զմարմինն եւ զարիւն նորա ճաշակէ: Ահա, տեսէ՛ք, եղբա՛րք, զի թէ աշխարհական մարդ անարժան հաղորդի, սոյնպէս պատուհաս

<sup>1</sup> C չեք

<sup>2</sup> C սրբելն է

<sup>3</sup> A B չեք

<sup>4</sup> C չեք

<sup>5</sup> C խայտառակել

<sup>6</sup> A B հաղորդեալքն

ունի իւր անձինն միայն, այլ թէ քահանայ անարժան պատարագէ, աշխարհի է պատուհասն, զի որպէս յարժանաւոր Պատարագէն հաշտութիւն եւ փրկութիւն աշխարհի է, նոյնպէս յանարժան քահանայէն բարկութիւն է աշխարհի<sup>1</sup>, որպէս ասացաւ՝ հիւանդութիւն, սով, սուր, մահ տարածամ եւ այլն, այլ եւ ի խաչողաց կարգն դասէ զանարժան քահանայն: Ապա հարքն սուրբ զանկեալ քահանայն արգիլեցին ի պատարագելոյ, զի թէպէտ պատարագն ճշմարիտ է, զի Բանն Աստուծոյ է եւ Հոգին Սուրբ, որ զՊատարագն կատարէ, այլ յորժամ աշխարհի պատուհաս լինի եւ ինքն ի խաչողացն Քրիստոսի լինի, զի<sup>2</sup>նչ աւգուտ է ժամ առնելն, այլ վա՛յ է մեզ հազար թերան եւ եղուկ վասն անմխիթար վշտացս, զի գեղն յաւիտենական կենացն գեղ եւ պատճառ լինի յաւիտենական մահուն, որպէս ցուցաւ: Ապա պարտ է զգուշանալ մեզ, զի մի՛ յաւիտենական մահուն պարտական գտանիցիմք:

**Չորրորդ.** ասէ քահանայն ի Սուրբ Պատարագն. «Մի՛ ոք յերախայից» եւ այլն: **Չորսք** են սոքա. մին երախայքն, որ գեռեւս չեն մկրտեալք, մին թերահաւատքն, որ ոչ հաւատան զՍուրբ Խորհուրդն ճշմարիտ մարմին եւ արիւն Որդւոյն Աստուծոյ, մին անմաքուրն, որ չէ զղջացեալ եւ ոչ խոստովանեալ զմեղս, եւ մին ապաշխարողքն են, որ չեն զփոխարէն մեղացն զբարիս գործեալ: Զսոսա արտաքսէ յեկեղեցւոյն, զի մի՛ տեսցեն զՍուրբ Խորհուրդն, այլ արտաքոյ զձայնն լուիցեն: Զայն ցուցանէ, որ անարժանքն ելցեն յարքայութենէն Աստուծոյ, որպէս յիմար կուսանքն, որ փակեցաւ դուռն առագաստին ընդդէմ նոցա, այլ զսարսափելի զձայնն<sup>2</sup> միայն լսէին<sup>3</sup> ի փեսայէն, թէ՛ ի բաց գնացէք, այլ զերեսն ո՛չ տեսին:

Դարձեալ հայեսցուք յաւրինակն այսմ անճառելի խորհրդոյս, զոր եսայի ետես զՏէր նստեալ ի վերայ աթոռոյ բարձրացեալ եւ սերովբէք շուրջ զնովաւ<sup>4</sup>, զոր առեալ ունելեաւք ի կայծականց սեղանոյն եւ մերձեցոյց ի շրթունս մարգարէին (հննտ. Եսայի Զ 1-8), այլ նստեալ Տէր ի վերայ բարձրութեան աթոռոյն Քրիստոս է՝ Որդին Աստուծոյ, բազմեալ ի վերայ սեղանոյն, եւ սերովբէքն անմարմին զաւրքն են, զի ուր Տէրն փառաց է, անդ եւ հրեշտակքն ւր սպասաւորեն, եւ կայծակն հրոյն մարմինն է Քրիստոսի, որ միացեալ է ի հուր աստուածութեան, եւ ունելիքն, որ էառ զկայ-

<sup>1</sup> Ը բարկութիւն աշխարհի է

<sup>2</sup> Ը ծայնն

<sup>3</sup> Ա Յ լսեն

<sup>4</sup> Յ չիք զոր Եսայի ետես ... շուրջ զնովաւ

ծակն, այսինքն՝ է<sup>1</sup> հաւատն եւ յոյսն մեր: Դարձեալ՝ սրբութիւն հոգւոյ եւ մարմնոյ, դարձեալ՝ սէրն է ունելիքն, զի նովաւ կարեմք միանալ ի Քրիստոս: Եւ տե՛ս մտաւքդ, զի սերովբէն ջերմութիւն ասի եւ ի հրոյ գոյացեալ ունելիս կարաւտանայր, որ ըմբռնէր զկայծակն հրոյ, մեք՝ հողեղէնքս, որպէ՞ս զհուրն Աստուած անարժանութեամբ ի մեզ կրեսցուք եւ ոչ այրեսցուք<sup>2</sup>, զի Աստուած մեր հուր ծախիչ է, որ զանարժանս հրդեհէ եւ ապականչ: Եւ ո՞ւր իցեն այնպիսիքն, որ չար սովորութեամբ միշտ անխտրաբար հաղորդին՝ ո՞չ խոստովանելով եւ ո՞չ ապաշխարելով զմեղս, եւ պատճառեն զպատճառս մեղաց, թէ՝ փոխանակ ապաշխարութեան մատիր եւ հաղորդեցիր եւ սրբեցիր: Այլ մեք հրաժարեսցուք յայնպիսի չար<sup>3</sup> խորհրդոց՝ ո՞չ անարժանութեամբ հաղորդիլ եւ ո՞չ չարաչար ի բաց կալ, զի երկուսն չար են<sup>4</sup>, որպէս ի վերայ կամրջին, ի վերին կոյսն եւ ի ներքինն անկանել չար է, այլ ի մէջն անցանել<sup>5</sup> բարի է, եւ որպէս ի հրոյ առաւել հեռանալ եւ ամենեւին մերձենալ չար է, այլ չափաւորն բարի է, նոյնպէս եւ վասն<sup>6</sup> հաղորդութեան իմացիր:

Եւ արդ, եղբա՛րք, երկոքինն չար են, որպէս ցուցաւ, այլ առաւել չար է ծուլութեամբ հրաժարել ի Սուրբ Խորհրդոյն:

Եւ չորս ինչ ցուցանէ. նախ՝ զանհաւատութիւն, զի ոչ հաւատայ Քրիստոսիւ փրկիլ: Երկրորդ. զյուսահատութիւն, զի հատեալ է զյոյս կենացն յաւիտենից: Երրորդ. զատելութիւն, զի ոչ սիրէ ի Քրիստոս միանալ: Չորրորդ. զհիւանդութիւն հոգւոյն, զի որպէս հիւանդն ոչ ցանկայ կերակրոյ, նոյնպէս եւ նա հոգեւոր եւ առողջարար կերակրոյն:

Դարձեալ՝ այնպիսիքն նման են չորից ոմանց. նախ՝ նման են հրէից, որ Քրիստոս հիւր գնաց եւ ոչ ընկալան, որպէս ասէ Աւետարանն. «Յիւրսն եկն, եւ իւրքն զնա ոչ ընկալան, իսկ որք ընկալան<sup>7</sup> [զնա], ետ նոցա<sup>8</sup> իշխանութիւն Որդիս Աստուծոյ լինել<sup>9</sup>» (Յովհ. Ա 11-12), սոյնպէս բարի հիւր է եկեալ յերկնից, եւ ոչ ընդունին:

<sup>1</sup> B չեք

<sup>2</sup> B այրիցուք

<sup>3</sup> C չեք

<sup>4</sup> B չեք զի երկուսն չար են, C երկուքն չար են

<sup>5</sup> B անցանելն

<sup>6</sup> C չեք

<sup>7</sup> C ընկալան

<sup>8</sup> A չեք

<sup>9</sup> A B չեք Որդիս Աստուծոյ լինել

**Երկրորդ.** Նման են գերգեսացւոց, որք վարեցին զՔրիստոս գնալ ի սահմանաց նոցա, նոյնպէս եւ նոքա զՔրիստոս հեռացուցանեն ի հոգւոյ եւ ի<sup>1</sup> մարմնոյ իւրեանց:

**Երրորդ.** Նման են նոցա, որ թագաւորն պատրաստեաց զսեղանն եւ առաքեաց կոչել ի սեղանն մեծ, եւ նոքա յուլացեալ պատճառեցին եւ ոչ գնացին. ոմն ի վաճառ եւ ոմն յագարակ եւ այլն, եւ զրկեցան ի հոգեւոր սեղանոյն, որպէս ասէ Տէրն. «Ամէն<sup>2</sup> ասեմ ձեզ, նա ո՛չ կերիցէ ճաշ յարքայութեան Աստուծոյ<sup>3</sup>» (հնատ. Դուկ. ԺԴ 24):

**Չորրորդ.** Նման են նոցա, յորժամ հրամայեաց Քրիստոս. «Մարմին ին ճշմարիտ կերակուր է» (Յովհ. Զ 56), ասացին. «Խիստ է բանդ» (Յովհ. Զ 61), այսինքն՝ ծանր եւ դժուարին, եւ յետս չոգան ի Քրիստոսէ, նոյնպէս նոքա ծանր համարէին զխոստովանիլն եւ հաղորդիլ<sup>4</sup>, եւ որպէս հոտեալ եւ խոց անդամ կտրին եւ բաժանին ի գլխոյն: Արդ, որպէս հաղորդեալքն լինին անդամք Քրիստոսի, նոյնպէս որ ոչ հաղորդին Քրիստոսի<sup>5</sup> սրբութեամք, անդամք են սատանայի: Ապա ուրեմն պարտ է մաքուր եւ սուրբ խորհրդով եւ ջերմ սիրով արժանի լինել խորհրդոյ, մարմնոյ եւ արեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որպէս ասէ Պաւղոս. «Հաւատով եռացէք, Տեառն ծառայեցէք» (տես Յօնն. ԺԲ 11), եւ ոչ միայն մինչ ի հաղորդելն սուրբ լինել, այլ յետ հաղորդելոյն սուրբ մնալ, զի միապէս չար է յառաջ եւ յետ հաղորդութեան անսուրբ լինել, զի զի<sup>6</sup>նչ աւգուտ է մարդոյ զսրբութիւն առնուլ եւ յանսուրբ մեղս շաղախիլ, կամ զի<sup>6</sup>նչ աւգուտ է զհիւրն սիրով մեծարել եւ անարգութեամք վարել, զի նման են այնպիսիքն հրէիցն, որք ի գալուստն Քրիստոսի դէմ ընդ առաջ եղեն եւ պատուով եւ ովսաննայով<sup>6</sup> ընդունեցան զՔրիստոս ի սուրբ տաճարն Երուսաղէմ եւ յետ վեց աւուր անարգանաւք ի խաչ հանին, ապա պարտ է նախ սրբել զմեզ յամենայն մեղաց՝ խոստովանութեամք եւ ապաշխարութեամք, եւ ապա սրբութեան<sup>7</sup> հաղորդ լինել, եւ յետոյ զբնակութիւն նորա սուրբ պահել, այսինքն՝ զհոգի եւ զմարմին մեր, զի սա է մաքրութիւն ազգի մարդկան, զի սովաւ արար սրբութիւն մեղաց մերոց Քրիստոս: Սա է ճանապարհն, որ տանի յանկո-

<sup>1</sup> B չիք

<sup>2</sup> C կրկ

<sup>3</sup> C Երկնից Աստուծոյ

<sup>4</sup> C հանարին խոստովանելն եւ հաղորդելն

<sup>5</sup> C չիք

<sup>6</sup> C պատուելով եւ ովսաննա Երգով

<sup>7</sup> A B սրբութեամբն

**ըուստ<sup>1</sup> ճոխութիւն երկնից, ըստ այնմ.** «Ես եմ ճանապարհ եւ ճշմարտութիւն եւ կեանք» (Յովի. ԺԴ 6): **Սա է դուռն, որ մուծանէ ի դրախտն փափկութեան, ըստ այնմ.** «Ես եմ դուռն, ընդ իս եթէ ոք մտցէ եւ<sup>2</sup> ելցէ եւ ճարակ գտցէ<sup>3</sup>» (Յովի. ԺԴ 9): **Սա է նաւն հոգեւոր, որ տանի ի նաւահանգիստն երկնաւոր՝ ի ծովէ կենցաղոյս ապրեցուցանել զընդունողս իւր:** **Սա է յարութիւն եւ կեանք մեր, որ երամակից առնէ հրեղինացն դասուց:** **Սա է, որ արժանի առնէ տեսութեան եւ ընդունելութեան անմարմին Սուրբ երրորդութեան, զի ի տեսանելն զմարմին եւ զարիւն Որդւոյն Աստուծոյ նովաւ զՀայր տեսանեմք:** **Այլ եւ ընդունելով զՍուրբ մարմինն Քրիստոսի ի մեզ միանայ, եւ նովաւ Հայր եւ Հոգին ի մեզ բնակէ, ըստ այնմ.** «Որպէս գու՝ Հայր, յիս, եւ ես՝ ի քեզ, եւ նոքա ի մեզ իցեն» (հմնտ. Յովի. ԺԴ 20), **որով արժանաւորապէս փառաւորեսցուք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն:**

Բան. «Զայս ասաց ի Կափառնաում» (Յովի. Ջ 60):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Նախ՝ զժամանակն ասաց, որ էր ի վաղիւն յետ նշանաց նկանակին, աստ զտեղին ասէ ի Կափառնաումն:**

Բան. «Եւ բազումք յաշակերտացն» (Յովի. Ջ 61):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Սոքա աշակերտք ոչ երկոտասանքն կամ եւթանասունքն, այլ աշակերտք էին անկատար, որպէս այն, որ ի տաւնի Զատկին բազումք հաւատացին ի նա, իսկ Յիսուս ոչ հաւատայր զանձն նոցա:**

Բան. «Խիստ է բանդ» (Յովի. Ջ 61):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Հստ մարմնոյ կրկին ասի խիստն. Նախ՝ յորժամ կարծր իցէ եւ դժուարագծելի:** երկրորդ. յորժամ դժուարին լինի շաւշափելեաց:

**Այսպէս ի հոգեւորն. Նախ՝ խիստ է, յորժամ հանճար մեր ոչ կարէ գործել եւ ի ներս մտանել, երկրորդ՝ յորժամ անհաճելի<sup>4</sup> լինի կամաց մեր:** **Այսպէս բանն Քրիստոսի խիստ է նոցա. Նախ՝ զի ոչ իմանային, երկրորդ՝ զի ոչ հաճէին ի բանն Քրիստոսի, որ զմեծամեծս ասէր վասն անձին իւրոյ, ասէին. «Խիստ է բանդ այդ», այսինքն՝ դժուարին եւ անհաւատալի:**

Բան. «Իբրեւ գիտաց Յիսուս» (Յովի. Ջ 62):

<sup>1</sup> Ը յանկապուտ

<sup>2</sup> Ը եւ

<sup>3</sup> Ա Յ չեք

<sup>4</sup> Կ անհաճոյ

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Նոքա ի ծածուկ տրտնջեցին, եւ Քրիստոսի աստուածութեան յատուկ<sup>1</sup> էր զծածուկսն գիտել:

Բան. «Այդ գայթակղեցուցանէ՞ զձեզ» (Յովի. Զ 63):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ<sup>2</sup>.** Որպէս մարմինն գթէ, միտքն երկբայի եւ թերանայ: Եւ յերկու իրս գթէին. նախ՝ զի ասաց<sup>3</sup>: «Իջի ես յերկնից», երկրորդ՝ ասաց. «Մարմին իմ կեանս տայ կերողացն» (Իմմտ. Յովի. Զ 55) եւ այլն, եւ նոքա զնա յաղքատ կնոջէ ծնեալ գիտէին եւ մարդ մահկանացու, եւ Քրիստոս կամեցաւ բառնալ զգայթակդութիւն նոցա: Ասէ վասն առաջնոյն. «Տեսանիցէք<sup>4</sup>, ուր էր զառաջինն» (Յովի. Զ 63), եւ վասն երկրորդին ասէ. «Դոգին է կենդանարար» (Յովի. Զ 64):

Բան. «Եթէ տեսանիցէք ելեալ, ուր էր զառաջինն» (տես Յովի. Զ 63):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Եթէ ոչ վասն երկբայութեան ասէ աստ, այլ վասն ստուգութեան եւ ճշմարտութեան, զի բազումք յաշակերտացն տեսին զնա ի համբառնալն յերկինս: Ասէ. «Մի՛ զարմանայք, թէ ասացի զիս իջեալ յերկնից, զի ըստ Աստուածութեան նախկին գոլ ասի յերկինս եւ միշտ է յամենայն տեղիս, եւ մարդկութեամբն ելեալ ասի յերկինս, ուր էր զառաջինն», այսինքն՝ բնականապէս է որ ամենայն իր առ իւր տեղին դառնայ, ուստի յայտնի է, զի յերկնից իջեալ էր եւ յերկինս էր տեղին նորա եւ բնակութիւն:

### Վասն միաւորութեան<sup>5</sup> Քրիստոսի

**տե՛ս զբան միաւորութեան Բանին եւ մարմնոյն, որպէս ասէ.** «Որդին մարդոյ, ուր էր զառաջինն» (տես Յովի. Զ 63), նոյնպէս եւ առ Նիկողիմոս ասէք. «Ոչ ոք ել յերկինս, եթէ ոչ որ էջն յերկնից՝ Որդին Մարդոյ, որ էն յերկինս» (տես Յովի. Գ 13), զի յատուկ բաժանմամք Որդի մարդոյ եւ ելեալ մարմնոյն պատշաճի, որ ի կուսէն է, եւ Որդի Աստուծոյ եւ իջանել միայն Բանին յարմարի, որ ի Հաւը է: Արդ, վասն անորոշելի Բանին միութեան եւ մարմնոյն իջանել ասի Որդին մարդոյ, եւ ելեալ՝ Որդին Աստուծոյ, զի մի եւ նոյն է Որդին Աստուծոյ եւ Որդին մարդոյ՝ մարմնացեալ եւ մարդացեալն Աստուած: Եւ տե՛ս դարձեալ, զի ասէ. «Ո՞ւր են, որ զմի Քրիստոսն յերկու բնութիւնս բաժանեն, զի մի է Քրիստոս, եւ մի Տէք, եւ մի

<sup>1</sup> Յատկութիւն

<sup>2</sup> Ա չիք

<sup>3</sup> Ա Բ չիք

<sup>4</sup> Յ Տեսանիցէք ելեալ

<sup>5</sup> Ա Բ միութեան

**Որդի»**, եւ յերկուս բնութիւնս բաժանել չարափառացն է եւ երկարնակաց, այլ յերկուց բնութեանց մի ասել Որդի եւ մի Քրիստոս ուղղափառաց է դաւանութիւն, զի յերկուց բնութեանց ի միութիւն ժողովեցաւ Քրիստոս, եւ այն է մարդեղութիւն։ Եւ թէ ասէ երկարնակն՝ մեք զանձն մի ասեմք եւ զբնութիւն՝ երկու, ասեմք, եթէ Աստուածն Բան զբնութիւն էառ ի Կուսէն եւ խառնելով յինքեան անձնաւորեաց զնա, իսկ յատուկ անձն ոչ էառ։ Արդ, դուք զոչ առեալն ասէք մի, եւ ոչ զառեալն, զի զառեալ մարդկութիւն բաժանէք եւ զոչ առեալ անձն մի ասէք։ Եւ դարձեալ՝ զառեալն ոչ ասէք Աստուած, այլ զոչ առեալն, զի զանձն ասէք Աստուած, որ յաւիտենից էր, եւ ոչ՝ զբնութիւն, որ ժամանակեայ։ Ապա յայտ է, զի զԱստուածն ասէք Աստուած եւ զմարդն՝ մարդ, եւ սոյնպէս որոշելով զերկու բնութիւն, որոշի երկու անձն եւ երկու դէմք, եւ լինիք նեստորականք, ապա մի՛ անձն ասել, յայտ է, թէ միայն զկոչումն ասէք մի եւ զանունն, իսկ զիրն բաժանէք։

**Այսքան առ այս:**

Երկրորդ պատճառ գայթակղութեան նոցա այն է, զի ասաց Քրիստոս զմարմին իւր կերակուր լինել մարդկան, եւ զարիւնն՝ ըմպելի, եւ զայս իմացան մարմնապէս ուտելոյ եւ ըմպելոյ, ըստ որում կերպի՝ հալի եւ տարածի<sup>1</sup> եւ ապականի կերակուրն, այլ թէ զբանն Քրիստոսի կարէին հասկանալ, նա երեք կերպիւ ասաց։

Նախ՝ որ զինքն կենդանի ասէր ընդ Հաւը եւ կերպացն խոստանայր զկենդանութիւն. «Եւ ես յարուցից զնա» (Յովհ. Զ 55), ասէր, ապա ուրեմն ո՛չ ասէր զինքն ապականելի։

Երկրորդ. դարձեալ ուտելն ասէր հաւատալ ի նա եւ սիրով գալ առ նա։

Երրորդ. դարձեալ ուտողացն զինքն ասէր Քրիստոս բառնալ ամենայն քաղց եւ ծարաւ եւ պահել ի մահուանէ եւ տալ կեանս յաւիտենականս, եւ սոյնպիսի բանք ոչ պատկանին մեռեալ մարմնոյ եւ ապականեալ կերակրոյ, սակայն նոքա զայս ոչ իմացան, վասն այնորիկ Քրիստոս զայսպիսի<sup>2</sup> թիւր կարծիս բառնայ ի նոցանէ՝ ասելով։

Բան. «Յոգին է կենդանարար, մարմինն ինչ ոչ աւգնէ<sup>3</sup>» (Յովհ. Զ 64):

Մեկնութիւն. եւ տեսանի այս վեց մտաւք, երեքն ի Տէր մեր.

<sup>1</sup> Ը տարածանի

<sup>2</sup> Ա Յ զայնպիսի

<sup>3</sup> Յ չեք

Նախ՝ հոգին է կենդանարար, որպէս թէ ասել՝ բանս, զոր ասացի, հոգեւոր միտք ունի եւ այնպէս կենդանարար են, բայց մարմին, այսինքն՝ մարմնապէս իմացումն բանիս ոչինչ աւգուտ է:

Երկրորդ. հոգին է կենդանարար, այսինքն՝ որ տայ կեանս շնորհաց եւ փառաց մարմինն Քրիստոսի հոգւով կերպացն զնա, իսկ մարմինն, այսինքն՝ մարմնապէս ընկալեալ եւ ծածկեալ, առանց Հոգւոյն Սրբոյ ոչ է աւգտակար:

Երրորդ. հոգւով եւ հաւատով տեսանել զմարմինն Քրիստոսի միացեալ Բանիւն կենդանարար է տեսողացն, իսկ մարմին, այսինքն՝ միայն մարմին տեսանել որիշ ի Բանին եւ մարմնապէս խորհել վասն նորա՝ ոչինչ աւգուտ է, այլ եւ<sup>1</sup> վնաս է եւ գայթակղութիւն, որպէս հրէիցն եւ հերձուածողացն:

Այսպէս ի Տէր մեր, իսկ առ մեզ.

Նախ՝ հոգիս է կենդանարար եւ շարժող մարմնոյս, եւ մարմինս<sup>2</sup> առանց հոգւոյս ոչինչ աւգտէ, որպէս յայտ է ի մահն, ապա պարտ է զհոգւոյն գործել եւ ոչ զմարմնոյն:

Երկրորդ. խաւսք առ Աստուած<sup>3</sup>՝ միտք բանին հոգի է եւ աւգտակար, եւ ձայն եւ բառն մարմին է եւ անաւգուտ:

Երրորդ. գիրն մարմին է բանին եւ ծածուկ միտքն՝ հոգի, պարտ է զգրոյն միտքն իմանալ, զի գիրն սպանանէ, այլ հոգին կեցուցանէ:

Եւ գիտելի է, զի չորիւք որոշի տեսանել մտաց եւ աչաց. Նախ՝ զի աչքն սխալի ի տեսանելն, որպէս զղեկ նաւին բեկեալ տեսանեմք ի ջուրն<sup>4</sup>, այլ միտքն անսխալ տեսանէ: Երկրորդ. աչքն զմերձն եւ զներկայն տեսանէ, եւ միտքն՝ զհեռուն եւ զանցեալն եւ զհանդերձեալն: Երրորդ. աչք զմասն տեսանէ, եւ միտք՝ զբոլորն: Զորրորդ. աչք զորակ եւ զքանակն տեսանէ, եւ միտք՝ զգոյացութիւն իրին:

Բան. «Բանս, զոր խաւսեցայ ընդ ձեզ՝ հոգի է եւ կեանք<sup>5</sup>» (Յովի. Զ 64):

Մեկնութիւն. Այսինքն՝ զհոգեւոր միտքն ունին, զի ի Հոգւոյն Սրբոյ են եւ պարտ է ձեզ հոգւով իմանալ, եւ կեանք է, ապա ոչ է մահկանացու մարմին: Դարձեալ՝ Բանս հոգի է եւ կեանք, որ է միաւորեալ ի մարմինս իմ, որ կենդանի է եւ լի Հոգւով Սրբով եւ ընդունողացն պատճառ է սրբութեան եւ յաւիտենից կենացն:

Բան. «Այլ են ոմանք ի ձենջ, որ ոչ հաւատան» (Յովի. Զ 65):

<sup>1</sup> B չեք

<sup>2</sup> B չեք եւ մարմինս

<sup>3</sup> C խօսք, որ առ մեզ

<sup>4</sup> C ի ջուրս

<sup>5</sup> B C չեք եւ կեանք

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Որպէս թէ ասել՝ վասն այնորիկ ոչ իմանան, զի ոչ հաւատան, եւ կամ թէ ասել՝ գայթակղութիւն նոցա ի յանհաւատութենէ նոցա ել եւ ոչ ի բանից իմոց:

### Վասն ճանաչման Աստուծոյ

Բան. «Զի գիտէր ի սկզբանէ» (տես Յովի. Զ 65):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Չորս կերպիւ է ի սկզբանէ<sup>1</sup>.

**Առաջին.** ի նախասահմանեալ<sup>2</sup> տեսութեան Աստուծոյ գիտէր զհաւատացեալս եւ զանհաւատս, ըստ այնմ. «Յառաջ քան զլինելն աշխարհի ընտրեաց զմեզ» (տես Եփես. Ա 4):

**Երկրորդ.** ի սկիզբն յղացման իւրոյ ըստ մարդկութեան ընկալաւ զգիտութիւն ամենայնի վասն միաւորութեան ի Բանն Աստուծած, զի Հոգին Քրիստոսի գիտէ զանցեալն եւ զհանդերձեալն, եւ մարմինն Աստուծած է՝ արարիչ երկնի եւ երկրի:

**Երրորդ.** ի սկզբանէ առաջին մարդոյն մինչեւ ի կատարած աշխարհի գիտէ զամենայն մարդ զբարիս եւ զչարս:

**Չորրորդ.** ի սկզբանէ ծննդեան իւրաքանչիւր մարդոյ մինչեւ ի մահն գիտէ զամենայն գործս նորա:

Բան. «Ոչ որ կարէ օալ առ իս, եթէ ոչ իցէ<sup>3</sup> տուեալ<sup>4</sup> ի Յաւրէ [իմնէ]» (Յովի. Զ 66):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ<sup>5</sup>.** ի Հաւրէ ձգիլ առ Որդի եւ ի Հաւրէ հաւատ ունել առ Որդի մի եւ նոյն է, այլ գիտելի է, զի այսու ոչ եթէ զանձնիշխանութիւնս մեր բառնայ ի մարդոյն, զի այս ընտրութիւնս ազատ կամաւք լիցի, որպէս ցուցաւ յառաջ, այլ նախ ցուցանէ, զի Աստուծած միշտ պատրաստ է տալ, եթէ մարդիկ կամին ընդունել:

**Երկրորդ.** զի տեսանէ Աստուծած զյաւժարութիւն մարդոյ<sup>6</sup> ի հաւատս եւ ի կեանս եւ այնպէս առաջնորդէ նմա, եւ զայն յաւծարութիւն, որ այժմ է առ մեզ, Աստուծած յառաջագոյն տեսանէ, ըստ այնմ. «Զանգործս իմ տեսին աչք քո» (Սաղմ. 6ԼԸ 16):

Բան. «Բազումք յաշակերտաց<sup>7</sup> յետս չոգան» (տես Յովի. Զ 67):

<sup>1</sup> Ս Զորս կերպ է ի սկզբանէն

<sup>2</sup> Ս ի նախասահման

<sup>3</sup> Ա Բ չեք

<sup>4</sup> Ս տուեալ նմա

<sup>5</sup> Ա Բ չեք

<sup>6</sup> Բ նոցա

<sup>7</sup> Ս յաշակերտաց նորա

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ<sup>1</sup>.** Ոչ վասն առաքելոցն է իմանալի եւ ոչ վասն եւթանասուն եւ երկու աշակերտացն, թէպէտ ոմանք յեւթանասնիցն ասեն, այլ բազում ոմանք զկնի շրջէին առ ի լսել զվարդապետութիւն նորա եւ կերպիւ ինչ աշակերտեալ էին նմա, ի նոցանէ բազումք յետո կացին ի Քրիստոսէ:

Բան. «Ասէ ցերկոտասանսն. “Մի՞թէ եւ դուք կամիք երթալ”» (տես Յովհ. Զ 68-69):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Վասն վեց պատճառի հարցանէ զնոսա Քրիստոս. նախ՝ զի ցուցցէ, թէ զոք ոչ յակամայ ածէ ի հաւատս եւ<sup>2</sup> ի հնազանդութիւն, այլ կամաւորն է հաճոյ նմա: Երկրորդ. զգուշացուցանէ զնոսա յորոց այլքն գործեցին: Երրորդ. ցուցանէ, զի ոչ էին նմա պիտոյ առաքեալքն, եւ ի նոցանէ ոչ ինչ ընդունէր, քան թէ շնորհէր նոցա: Չորրորդ. այսու առաւել հաստատեաց զնոսա, քան թէ ասելով. «Առ իս լեռուք եւ մի՛ երթայք», զի կարէին խոստանալ ի սիրտս<sup>3</sup>, թէ առանց մեր ոչ կարէ լինել եւ ապրել: Հինգերորդ. հարցանելով զայս ամաւթ գոյր ինքեանց ի բաց լինելն: Վեցերորդ. եհարց, զի ի պատասխանւոյն Պետրոսի յայտնի լինէր հաստատուն հաւատք առաքելոցն, որպէս ասաց Պետրոս.

Բան. «Տէ՛ր, առ ո՞վ երթիցուք» (Յովհ. Զ 69):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Նախ՝ թէ զքեզ թողումք, նման քեզ ոչ զոք կարեմք գտանել: Երկրորդ. թէ զազգականս մեր թողաք եւ զքեզ սիրեցաք, այժմ առ ո՞վ երթիցուք: Երրորդ. զպատուէրսն քո կատարեցաք, այժմ ի յո՞ր պատուէրն<sup>4</sup> երթիցուք եւ զթերին լցցուք:

Եւ վասն չորից բարւոք ետ զպատասխանին. նախ՝ զընկերան իւր բարի համարելով, վասն այնորիկ բազմաւորակի ասաց, երկրորդ՝ զՔրիստոս ի վեր քան զամենայն համարելով, երրորդ՝ զմիաւորութիւն իւրեանց առ Քրիստոս խոստովանելով, չորրորդ՝ զբանն պատշաճագոյն կարգելով, զի ասաց. «Մեք հաւատացաք եւ ծանեաք» (Յովհ. Զ 70) եւ այլն:

Բան. «Բանս կենաց յաւիտենականաց<sup>5</sup> ունիս» (Յովհ. Զ 69):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Նախ՝ որ զհաւատն եւ զսրբութիւն եւ զսէր այնմ կենաց ուսուցանէր: Երկրորդ. մարմինդ քո կեանք է եւ բան քո կեանք է ի մարմնոյդ կենաց: Երրորդ. կեանք է բան քո ըստ ինքեան, որպէս յայտ է՝ ի մեռեալն հասանէր կենդանի առնէր եւ

<sup>1</sup> A չիք

<sup>2</sup> C չիք ի հաւատս եւ

<sup>3</sup> C ի միտս

<sup>4</sup> C պատուիրան

<sup>5</sup> C չիք

գհիւանդն բժշկէր: Զորբորդ. յաւիտենից կեանք է, որպէս ասաց.  
«Ես [իսկ] եմ յարութիւն եւ կեանք» (Յովի. ԺԱ 25) եւ այլն:

Բան. «Դու ես Քրիստոսն Որդի Աստուծոյ» (Յովի. Զ 70):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Նախ՝ որոշէ յաշակերտացն, որք ուրացան, ասէ.  
«Մեք հաւատացաք, թէ դու ես Քրիստոսն»: Երկրորդ. որոշէ ի  
հրէիցն, որք որդի Յովսէփայ ասէին: Երրորդ. ի նշանացդ ծա-  
նեաք, թէ դու ես Քրիստոսն: Զորբորդ. ի մեծամեծ խոստմանցդ  
հաւատացաք, թէ դու ես Քրիստոսն՝ Որդի Աստուծոյ<sup>1</sup>:

Դարձեալ՝ Դու ես Քրիստոսն, զի հաւատալս մեր ոչ լինի  
վասն իմացման հանճարոյ մեր<sup>2</sup>, այլ իմանալ զաստուածայինսն  
հետեւի հաւատոյ, վասն որոյ հաւատով ծանեաք, թէ դու ես  
Քրիստոսն, այսինքն՝ Յիսուսդ, երեւեալ մարմինդ, աւծեալ ես աս-  
տուածութեամբդ եւ Որդի Աստուծոյ միաւորութեամբդ: Դար-  
ձեալ՝ ի բազում աւծելոցն, որ չնորհաւք եւ իւղով աւծեցան<sup>3</sup>, որ-  
պէս մարգարէքն, թագաւորք եւ քահանայք, յատուկ դու միայն  
ես աւծեալ՝ հոգեւոր եւ ընդհանուր, թագաւոր եւ քահանայ:  
Դարձեալ՝ Որդի Աստուծոյ, գեր ի վերոյ քան զամենայն արա-  
րածս Աստուած դաւանեաց զնա:

### Թէ զՅուդայ սատանայ կոչեաց

Բան. «Ո՞չ զերկոտասանսդ ընտրեցի, եւ մինդ ի ձենջ սատանայ է»  
(Յովի. Զ 71):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Եւ աստ լինի վեց հարց.

Առաջին. թէ ի նախ ընտրելոցն Աստուծոյ ոչ ոք կորնչի, Յու-  
դա վասն է՞ր կորեաւ:

Պատասխան. Ասեն վարդապետք, եթէ աստ ընտրութիւն ըստ  
առաքելութեան ասէ եւ ոչ վասն յաւիտենական կենացն, զի մինն  
ի նոցանէ կորեաւ եւ ոչ եհաս ի կեանսն յաւիտենից:

Երկրորդ հարց. Յուդա որպէ՞ս է սատանայ:

Պատասխան. Ասեմք չորիւք. նախ՝ զի ոչ բնութեամբ էր սա-  
տանայ, այլ հետեւմամբ կամացն սատանայի: Երկրորդ. զի հա-  
մախոհ եղեւ սպանման Տեառն: Երրորդ. որպէս սատանայ չարա-  
խաւսեաց զԱստուած, նոյնպէս եւ Յուդա: Զորբորդ. սատանայ  
զերկնայինսն խռովեցոյց, եւ Յուդա՝ զերկնայինսն<sup>4</sup> եւ զդասս ա-  
ռաքելոցն, վասն այնորիկ ի մէջ երկնի եւ երկրի խեղդեցաւ, եւ

<sup>1</sup> Ը հաւատացաք, թե Որդի ես Աստուծոյ

<sup>2</sup> Ը վասն նախկին իմացման հանճարոյ մերոյ

<sup>3</sup> Ը օծեցան, այսինքն՝

<sup>4</sup> Ը զերկիրն

զի զբերան Տեառն համբուրեաց, նորա բերանն ոչ ապականեցաւ, այլ փորն, ուստի չար խորհուրդն ել:

Երրորդ հարց. Որպէ՞ս է, որ զՅուղա կոչեաց, նոյնպէս եւ զ Պետրոս՝ ասելով. «Ե՛թ յետս իմ, սատանայ» (Մատթ. Ժ 23, Մարկ. 33):

Պատասխան. Ասեմք, թէ ոչ են նման միմեանց, եւ յայտ է յերից. նախ՝ թէ Պետրոս կամացն եղեւ հակառակ, իսկ Յուղա՝ կենացն Քրիստոսի: Երկրորդ. զի յաւժարէր Պետրոս ոչ մեռանել Քրիստոսի, եւ Յուղա ի մահ մատնեաց: Երրորդ. Պետրոս վասն սիրոյն Քրիստոսի հակառակեցաւ, եւ Յուղա՝ վասն ատելոյն զՔրիստոս:

Չորրորդ հարց. Եթէ չար էր Յուղա, Քրիստոս վասն է՞ր ընտրեաց<sup>1</sup>:

Պատասխան. Ոմանք ասեն, եթէ կանխաւ ետես Քրիստոս, զի նորա չարութեամբն աւգուտ էր լինելոց մարդկան, զի նա մատնեաց զՔրիստոս ի մահ, որով վրկեցան ազգ մարդկան: Այլք ասեն, թէ յառաջն բարի էր, այլ յետոյ չարացաւ ախտիւ արծաթսիրութեան:

Հինգերորդ հարց. Վասն է՞ր<sup>2</sup> սատանայ կոչեաց:

Պատասխան. Զի յորժամ զամենայն առաքեալսն բարի եւ լաւ եցոյց Պետրոս, աստ ասաց վասն Յուղայի վատութեան վասն չորս պատճառի. նախ՝ զի ցուցցէ, թէ խորհրդագէտ է, որով հաւատացին, թէ Աստուած է: Երկրորդ. զգաստացոյց զՅուղա, թէպէտ նա ոչ զղջացաւ: Երրորդ. զի ցուցցէ, թէ կամաւ եկն ի խաչ, զի կանխագոյն գիտելովն ոչ զանգիտեաց: Չորրորդ. զի զմեզ ուսուցէ ոչ ակնառութեամբ ծածկել զվատութիւն մարդոյ, այլ ճշմարտութեամբ յանդիմանել, որպէս ասէ իմաստունն. «Սիրելի է այր, եւ սիրելի՝ ճշմարտութիւն, յերկուցելոց սիրելեաց մանաւանդ սիրելի է ճշմարտութիւն<sup>3</sup>»: Եւ մարգարէն ասէ. «Վայ, որ ասէ զչարն բարի եւ<sup>4</sup> զբարին՝ չար» (տես Եսայի Ե 20) եւ այլն<sup>5</sup>:

Վեցերորդ հարց. Անուամբն ոչ յանդիմանեաց զՅուղա:

Պատասխան. Նախ՝ զի մի համարձակեսցի որպէս սովորութիւն է չար մարդկան. ի յայտնել զմեզս առաւել յանդգնի<sup>6</sup>: Երկրորդ.

<sup>1</sup> Ը վասն է՞ր ընտրեաց Քրիստոս

<sup>2</sup> Ը վասն է՞ր աստ

<sup>3</sup> Ե չիք յերկուցելոց սիրելեաց ... ճշմարտութիւն

<sup>4</sup> Ը կան

<sup>5</sup> Ը չիք եւ այլն

<sup>6</sup> Ը յանդգնին

զի մի ատեսցեն աշակերտքն եւ լիցի պատճառ մատնութեան նորա, որպէս յայտ է ի մեկնիչդ<sup>xcvii</sup>:

Բան. «Եւ ասէր վասն սիմոնեան Յուղայէ» (Յովի. Զ 72):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ.** Այս մեկնութիւն է Յոհաննու, որ զբանն Քրիստոսի յայտնեաց: Եւ տե՛ս վասն ստուգութեան զանունն Յուղայի եւ զհաւրն Սիմոնի եւ զտեղին<sup>1</sup>, որ է մերձ յերուսաղէմ, եւ զդասն, որ էր յերկոտասանիցն, յայտնապէս գրեաց: Յայսմանէ ոմանք ասեն, թէ սատանայ ի ներքին դասէն հրեշտակաց անկաւ, եւ զնոսա երկոտասան գունդս ասաց Տէրն, եւ աստ ի երկոտասանիցն զմինն ասաց սատանայ եւ չարեցեալ, որ եւ զմեզ փրկեսցէ Քրիստոս ի չարութենէ պատրանացն սատանայի: Ամէն<sup>2</sup>:

<sup>1</sup> C չիք եւ զտեղին

<sup>2</sup> C չիք

## Գլուխ Է

Եւթներորդ գլուխ է ըստ կարգի եւ երկրորդ՝ ըստ հատորի

Վասն վարդապետութեան Տեառն

Բան<sup>1</sup>. «Յետ այսորիկ շրջէր Յիսուս» (Յովի. Է 1):

**Մեկնութիւն.** Յառաջագոյն<sup>2</sup> ճառեաց աւետարանիչս զկենդանութիւն մեր եւ զսնունդն, զոր ունիմք ի Քրիստոսէ, աստ ճառէ զուսումն եւ զվարդապետութիւն: Եւ նախ գիտելի է, որ<sup>3</sup> զեւթներորդ պատճառն, եթէ Աստուած է Քրիստոս, աստ դնէ, սոյնպէս որ ոք հաւասարի Աստուծոյ բարի վարդապետութեամբ, նա Աստուած է, իսկ Քրիստոս սոյնպէս հաւասարի Աստուծոյ, ապա ուրեմն Աստուած է Քրիստոս, իսկ զհաւասար Աստուծոյ վարդապետութիւն Քրիստոսի ցուցանէ չորս կերպիւ. նախ՝ վասն հրէից սքանչանալոյն, որ ասէին. «Զիա՞րդ գիտէ զԳիրս, զի ուսեալ բնաւ չիք»: Երկրորդ. իւրոյ վարդապետութեան ծննդեամբ, որպէս ասէ. «Իմ վարդապետութիւնս չէ իմ, այլ Դաւին, որ առաքեացն զիս» (Յովի. Է 16), եւ այլ բազում: Երրորդ. աւրինացն մեկնութեամբ, որ ցուցանէր, թէ ի շաբաթու զոր գործ կարէին գործել եւ զոր՝ ոչ: Զորրորդ. վկայութեամբ սպասարորացն, որք ասէին. «Ոչ երբէք [այնպէս] խաւեցաւ նարդ, որպէս այրն այն» (Յովի. Է 46), եւ վասն առաջնոյն աստ ասէ:

Դարձեալ գիտելի է, զի նախ ցուցանէ զպատշաճաւոր տեղի վարդապետութեան Քրիստոսի, որ է Երուսաղէմ: Երկրորդ. ասէ զպատճառ այսմ յայտնութեան, յորժամ ասէ. «Եւ հրեայքն խնդրէին զնա ի տանի անդ» (Յովի. Է 11): Երրորդ. ասէ զյայտնութիւն վարդապետութեան, յորժամ ասէ. «Պատասխանի ետ [նոցա] Յիսուս եւ ասէ<sup>4</sup>. «Իմ վարդապետութիւնս չէ<sup>5</sup> իմ»» (Յովի. Է 16):

Վասն առաջնոյն գիտելի է, զի պատշաճ տեղի վարդապետութեան Քրիստոսի էր Երուսաղէմ. նախ՝ զի մայրաքաղաք էր Հրէաստանի, Երկրորդ՝ զի անդ ժողովեալ էին ամենեքեան ի

<sup>1</sup> С չիք

<sup>2</sup> А В Առաջին

<sup>3</sup> В չիք

<sup>4</sup> А չիք եւ ասէ, В չիք Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ

<sup>5</sup> А С ոչ է

տաւնն, վասն այնորիկ եղբարքն նորա աղաչէին, զի անդր երթիցէ եւ յայտնեսցէ զվարդապետութիւն, վասն այնորիկ ասէ.

Բան. «Յետ այսորիկ շրջէր Յիսուս ի Գալիլեայ» (Յովհ. Է 1):

ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ. Գիտելի է, զի Քրիստոս վասն չորս պատճառի ոչ շրջէր ի Հրէաստանի. նախ՝ զի ցուցցէ, թէ ունի զծմարիտ մարդկութիւն եւ գտկարութիւն մարդոյս: Երկրորդ. զի չեւ էր հասեալ ժամանակ չարչարանացն: Երրորդ. զի տայ մեզ աւրինակ խոնարհութեան առ ի տալ տեղի հալածանացն<sup>1</sup>: Չորրորդ. զի ցուցցէ, թէ երբեմն պարտ է փախչել, թէ եւ կատարեալ ոք իցէ, զի յորժամ չարչարանքն աւգուտ ոչ լինի, այլ խափանումն հաւատոց եւ աստուածպաշտութեան, յայնժամ պարտ է փախչել:

Զկնի ցուցանէ զժամանակն.

### Տաղաւարահարաց

Բան. «Եւ էր մերձ տաւնն իրէց տաղաւարահարաց» (Յովհ. Է 2):

ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ. Լինէր տաւնս այս յիշատակ քառասուն ամացն, զոր կացին յանապատին, վասն այնորիկ ելանէին արտաքոյ տանց եւ շինէին տաղաւարս յուռեաց եւ յայլոց իրաց, եւ զաւուրս եւթն ի տաղաւարի բնակէին եւ անդ ուտէին: Եւ լինէր տաւնս այս ի սեպտեմբերի քսան եւ եւթն եւ թշրինի տասն, սիզբն տաւնի քառութեան, վասն որթագործութեան յանապատին, եւ ապա տաւն տաղաւարահարացն ի հնգետասաներորդ [աւր] ամսոյն մինչ ի քսան եւ երկուս նորին ամսոյն: Եւ զառաջին աւրն եւ զյետինն հանդիսաբար կատարէին:

### Վասն եղբարցն Քրիստոսի

Բան. «Ասեն ցնա եղբարց նորա. “Գնա աստի, եւ երթ ի Յուկաստան”» (Յովհ. Է 3):

ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ. Յակոր եւ Յովսէ, Սիմոն եւ Յուդա որդիք Յովսէփայ էին եւ եղբարք Քրիստոսի կոչէին, եւ սոքա ոչ թուին, որք յուղարկեն զՔրիստոս ի տաւնն. նախ՝ զի ասէ թէ<sup>2</sup> եղբարքն չէին հաւատացեալ, իսկ սոքա հաւատացեալք էին: Երկրորդ. զի ի սոցանէ երկուքն<sup>3</sup> ի թիւ երկուտասանիցն էին եւ երկուսն ի թիւ<sup>4</sup> եւ թանասնիցն, որ այժմ ասաց. «Ես զձեզ զերկուտասանսդ ընտրեցի»

<sup>1</sup> Կ հալածացն

<sup>2</sup> Կ երէ

<sup>3</sup> Կ երկուսն

<sup>4</sup> Բ չիք ի թիւ

(տես Յովի. Զ 71), ապա յայտ է, զի սոքա եղբարք ասին, զի ազգականք Քրիստոսի էին եւ կամէին ի գործոցն Քրիստոսի ժամանակաւոր փառս ստանալ:

Եւ սոքա վասն երեք պատճառի ասէին. «Գնա՛ աստի ի Յրէաստան». Նախ՝ վասն աշակերտացն, որ յետս կացին, զի դարձեալ տեսցեն զնշանս եւ միաբանեսցին: Երկրորդ. վասն<sup>1</sup> զի փառասիրեցան, թէ՝ ե՛թ ի տաւնն եւ արա նշանս, վասն այնորիկ Քրիստոս յանդիմանեց զնոսա, թէ՝ իմ գալս յաշխարհ ոչ է վասն փառաց, այլ վասն աւգտութեան մարդկան: Երրորդ. զի գիտէին զնախանձ հրէիցն, որ կամէին որսալ զնա եւ ունել ի տաւնին, զի սպանցեն, անդ հրաւիրէին, զի տեսցեն զզաւրութիւն նորա, թէ կարէ զերծանել, թէ՝ ոչ:

Բան. «Զի ոչ ոք [է, որ] ի ծածուկ [ինչ] գործէ» (Յովի. Է 4):

Մեկնութիւն. Երկու ինչ յայտնէ զմարդ. մին՝ յայտնի գործն, եւ մին՝ յայտնի տեղիք: Արդ, Քրիստոս զյայտնի գործս առնէր եւ յանապատս շրջէր, վասն այնորիկ զայս ասեն:

### Վասն ժամանակաց

Բան. «Ժամանակ իմ չեւ է հասեալ» (Յովի. Է 6):

Մեկնութիւն. Ժամանակ յառաջագոյն սահմանեալ էր մահուն Քրիստոսի վասն փրկութեան աշխարհի: Եւ գիտելի է, զի ամենայն իրաց ժամ է եւ ժամանակ, ասէ Սաղմոսն<sup>2</sup>, զի ի ժամանակի ստեղծ Աստուած զամենայն եւ ի ժամանակի փրկեաց զմարդն եւ ի<sup>3</sup> ժամանակի յարուցանէ եւ նորոգէ զաշխարհս:

Արդ, չորս են սոքա, այսինքն<sup>4</sup> գիտութիւն Աստուծոյ եւ կամքն, ժամանակն եւ իրն, որ լինելոց է ի ժամանակին: Եւ յայտմանէ երեւի միութիւն կամաց եւ գիտութեան Քրիստոսի եւ Հաւը Աստուծոյ, զի սահմանեալ էր ի Հաւը ժամանակն, եւ կամէր Հայր<sup>5</sup> զչարչարին Քրիստոսի, եւ գիտէր Քրիստոս զժամանակն եւ կամաւ իւրով չարչարեցաւ: Ապա յայտ է, զի մի է կամքն Հաւը եւ Որդւոյ, իսկ թէ ընդդէմ բերեն աստեղագէտք, թէ ամենայն իր ի ժամանակի է, ապա ամենայն կեանք մարդկան ի ձեռս աստեղաց է: Եւ զպատասխանին այսմ գտցես յառաջին հատորն, յերկրորդ գլուխն վասն հարսանեացն ասացեալ:

<sup>1</sup> B չեք

<sup>2</sup> Այսպիսի միտք ավելի ցայտուն կերպով տեսնում ենք ժող. Գ 1 համարում:

<sup>3</sup> B չեք

<sup>4</sup> C չեք

<sup>5</sup> A B չեք

**Դարձեալ՝ «Ժամանակ իմ չեւ է հասեալ»** (Յովի. Է 6) վասն երից ասաց. նախ՝ ժամանակ չարչարանաց: Երկրորդ. ժամանակ յայտնութեան փառացն, զի վայել էր Քրիստոսի յետ յարութեան յայտնութիւն փառաց: Երրորդ. կերպիւ ինչ չէր հասեալ ժամանակ քարոզութեան, այսինքն՝ ի սկիզբն տաւնին ոչ էր պատշաճ ժամանակ քարոզութեան, այլ ի վերջն:

Բան. «Բայց ձեր ժամանակ [յամենայն ժամու] պատրաստ է» (Յովի. Է 6):

**Մեկնութիւն.** Այսինքն<sup>1</sup> աւրհասն մահու, զի Քրիստոս գիտութեամբ եւ կամաւ կրեաց զմահ, իսկ մեք անգիտութեամբ եւ ակամայ կրեմք:

**Դարձեալ՝ Քրիստոս Տէր էր մահու եւ իշխան, իսկ մեք ընդ իշխանութեամբ մահու եմք յամենայն ժամ, վասն այն զգուշացոյց Տէրն. «Արթուն կացէք եւ յամենայն ժամ աղաւթս արարէք» (տես Մատթ. ԻԶ 41): **Դարձեալ.** «Զեր ժամանակ յամենայն ժամ հասեալ է», այսինքն՝ որ փառասիրութեամբ ի տաւնն հանդիսացեալ ուրախանայք, վասն որոյ ասէ.**

Բան. «Ոչ կարէ աշխարհ ատել զծեզ» (Յովի. Է 7):

**Մեկնութիւն.** Աշխարհ զաշխարհասէրն ասէ. նախ՝ զի միախորհուրդ էք անհաւատութեամբ: Երկրորդ. զմի գործ նախանձու չարութեան ունիք:

Իսկ «զիս ատեայ». նախ՝ զի բարիս գործեմ, Երկրորդ՝ զի զչարս յանդիմանեմ, ըստ այնմ. «Ատեցին զյանդիմանիչս ի գրունս իւրեանց» (տես Անովս Ե 10):

Բան. «Դուք երթայք ի տաւնն յայն<sup>3</sup>, ես ոչ երթամ ի տաւնն յայն<sup>4»</sup>

(Յովի. Է 8):

**Մեկնութիւն.** Երեք բանիւ յանդիմանեաց զնոսա. նախ. «Զեր ժամանակ յամենայն ժամ է»: Երկրորդ. «Աշխարհ զծեզ սիրէ»: Երրորդ. «Դուք երթայք ի տաւնն յայն<sup>5</sup>»:

Նախ՝ վասն առաջին աւուր տաւնին է իմանալ, որ մարդիկն առաւել հանդիսանային եւ խրախ լինէին ի կերակուրս եւ յըմպելիս, զոր ոչ կամեցաւ Քրիստոս գնալ:

Երկրորդ. գուշք երթայք ի տաւնն յայն, ուր յարգի հրէիցն հպարտութիւն եւ ունայնութիւն, զոր նոքա խնդրեն, եւ ոչ՝ Քրիստոս:

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> A B չեք

<sup>3</sup> B այն

<sup>4</sup> A C չեք

<sup>5</sup> B այն

Երրորդ. յայն ուրախութիւն, որ վասն մահուն իմոյ է, դուք գնացէ՛ք, զի կամակից եւ ընկեր էք նոցա:

Չորրորդ. փառասիրութիւն ինձ ոչ է պիտոյ, դուք երթայք ի տաւնն յայն, զի ձեզ է պիտոյ փառք ժամանակաւոր, այլ իմ գալն յաշխարհս վասն աւգտութեան մարդկան է:

Եւ թէ որք էին սոքա, որ ստիպէին զՔրիստոս երթալ ի տաւնն, գիտելի է, զի սոքա ոչ էին ճշմարիտ եղբարքն Քրիստոսի, որպէս<sup>1</sup> որդիքն Յովսէփու, որպէս ցուցաւ նախ, բայց այլ ոմանք յազգականաց անտի, որ կերպիւ ինչ եղբարք ասին, վասն այնորիկ յանդիմանէ զնոսա փառասիրութեամբն եւ համախոհ հրէիցն ցուցանէ<sup>2</sup> ասելով. «Դուք երթայք ի տաւնն», եւ այսու ոչ թէ ածէ զնոսա ի փառասիրութիւն, այլ ցուցանէ, թէ միայն զաշխարհիս խնդրէին:

### Թէ ի ծածուկ ել

Բան. «Իբրեւ ելին նոքա, ապա եւ ինքն ել ի տաւնն, ոչ յայտնի, այլ իբրեւ<sup>3</sup> ի ծածուկ» (Յովի. Է 10):

Մեկնութիւն. Եւ զի ճշմարիտ ասաց Քրիստոս. «Ես ոչ երթայց ի տաւնն յայն» վասն չորս պատճառի. նախ՝ ոչ գնաց ի սկիզբն տաւնին, այլ ի չորրորդ աւրն: Երկրորդ. ոչ գնաց ընդ նոսա, այլ յետոյ: Երրորդ. զի ոչ գնաց ըստ հաճութեան ունայն կամաց նոցա, այլ վասն աւգտութեան: Չորրորդ. զի ոչ գնաց յայտնապէս, այսինքն՝ աշակերտաւքն, այլ ծածկաբար:

Զայս եւ<sup>4</sup> ի հարսանիսն արար, յորժամ սաստեաց մաւրն եւ յետոյ կատարեաց զինդիրն: Զայն եցոյց, թէ չէր ըստ քո կարծեացդ սքանչելիքն<sup>5</sup>, այլ վասն աւգտի մարդկան, սոյնպէս եւ սստ իմացիր:

Հարց. Վասն է՞ր ել ի ծածուկ:

Պատասխան. Ոչ թէ զանգիտելոյ ինչ, զի թէ սոյնպէս էր, կամաւ ոչ գայր ի չարչարանս, այլ վասն աւգտութեան. նախ՝ զի լսողացն քարոզեսցէ եւ ոչ լսողացն զթշնամութիւն լուծցէ: Երկրորդ. զայն ցուցանէ, որ աստ եւ անդ սիրելեացն իւր երեւի եւ ատելեացն ոչ երեւի անգամ, զայս ասէ մեկնիչդ<sup>xviii</sup>:

<sup>1</sup> С չիք

<sup>2</sup> Յ ասէ

<sup>3</sup> Ա Յ չիք

<sup>4</sup> С չիք

<sup>5</sup> С սքանչելիքս

իսկ այլ վարդապետք ասեն՝ վասն վեց պատճառի ծածուկ ել յերուսաղէմ. նախ՝ զի ոչ խնդրէր զփառս աշխարհի: Երկրորդ. զի եւ մեզ ուսուցէ հեռանալ ի փառաց եւ հաստատիլ ի խոնարհութիւն: Երրորդ. զի թէ բազում արամբք եկեալ էր ի տաւնն, տրտմութիւն հրէիցն առաւել սաստկանայր: Չորրորդ. առ ի ցուցանել զիւրն մարդկութիւն: Հինգերորդ. առ ի յուսումն մեզ, զի խորագիտութեամբ զգուշանամք ի թշնամեաց եւ ոչ է պարտ, թէ մարդ յիմարութեամբ զանձն իւր ի մահ մատնէ: Վեցերորդ. առ ի ցուցանել խորհուրդ ինչ, զի տեսական ելումն յԱստուած լինի ի ծածուկ ի ներքին մտածութիւնս մեր<sup>1</sup>, արտաքս քարշելով զմիսս յամենայնէ, եւս յինքենէ, որպէս զի զամենայն մոռանալով եցէ ի ծայր լերինն եւ մտցէ ի մէգն յափշտակութեամբ մտացն:

Յորժամ ասաց զպատշաճաւոր տեղին, այժմ ճառէ զպատճառ յայտնութեան:

Բան. «Եւ հրեայքն խնդրէին զնա՞» (Յովհ. Է 11):

Մելոնութիւն. Ոմանք առ ի սպանանել, եւ այլք՝ խոնարհութեամբ ունկնդիր լինել վարդապետութեան նորա:

Բան. «Եւ ասէին. “Ո՞ւր իցէ նա”» (Յովհ. Է 11):

Մելոնութիւն. «Ոմանք առ նախանձու եւ ատելութեան զանունն ոչ տային», ասէ Ոսկերեանն, եւ այլք վասն սիրոյ ասեն, զի զնա այնպէս մեծ եւ ծանալութ ամենեցուն գոլ համարէին, մինչ զի ասէին՝ ո՞ւր իցէ նա, այսինքն՝ որ այնքան մեծ է այնպէս սքանչելագործն: Եւ խնդիրն յառաջնումն աւուր տաւնին լինէր:

Բան. «Եւ քրթմնջիւն էր զննանէ ի ժողովուրդն» (Յովհ. Է 12):

Մելոնութիւն. Վասն ներհակ կարծեացն, որպէս զկնի ասէ.

Բան. «Կէսքն ասէին՝ բարւոք է, այլքն ասէին՝ ոչ, այլ մոլորեցուցանէ զժողովուրդն» (Յովհ. Է 12):

Մելոնութիւն. Բազմութիւն ժողովրդեանն զնա բարի ասէին, այսինքն՝ ի բարւոյն Աստուծոյ եկեալ, եւ ինքն բարի է եւ զբարին մեզ ուսուցանէ, իսկ փարիսեցիքն եւ քահանայապետքն չար համբաւէին եւ ասէին. «Ո՞չ է յԱստուծոյ եւ խաթէ զպարզամիտսն եւ ուրուական առնէ զսքանչելիսն»: Եւ զի չարախաւսքն նորա մեծք էին, վասն այն հասարակ ժողովուրդն ոչ իշխէր յայտնի համբաւել զնա, որպէս ցուցանէ մեկնիչդ<sup>xcix</sup>:

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> A B չեք

<sup>3</sup> A չեք

<sup>4</sup> A չեք

Հարց. Վասն է՞ր ժողովուրդն հաւատայր, եւ քահանայքն եւ դպիրքն՝ ոչ:

Պատասխան. Ասեն վարդապետք վասն վեց պատճառի.

Նախ՝ հայելով ի ցասմնական զաւրութիւն հոգւոյն, զի զքահանայսն պնդագոյնս յանդիմանէր Քրիստոս, եւ նոքա իշխանք էին եւ ամբարտաւանք եւ մանաւանդ նախանձ էին, զի ժողովուրդն ընդունէին զնա:

Երկրորդ. վասն<sup>1</sup> ցանկութեան, զի ագահք էին եւ սովոր էին ձիրս եւ պարզեւս ընդունել վասն վարդապետութեան, իսկ վարդապետութիւն Քրիստոսի ներհակ էր բարուց նոցա:

Երրորդ. վասն<sup>2</sup> բանականին, զի նոքա վարժեալք էին<sup>3</sup> Սուլք Գրոց գիտութեան, թէպէտ թանձր եւ անկատար, վասն այնորիկ զվարդապետութիւն<sup>4</sup> Քրիստոսի մոլորութիւն<sup>5</sup> համարէին:

Չորրորդ. զի աներկիւղ ունէին զիսիղ մտաց իւրեանց եւ սովոր էին պատճառել զմեղս իւրեանց, իսկ պարզամիտքն խղճիւլինէին եւ պատուէին զՔրիստոս:

Հինգերորդ. զի նոքա սովոր էին յանդիմանել զնուաստսն ի ներքոյ ինքեանց, եւ արհամարհել եւ դատել եւ խածանել:

Վեցերորդ. զի սովոր էին կեղծաւորութեամբ զչարիս իւրեանց ծածկել, զի փառասէրք էին, վասն այն նոքա զՔրիստոս հայհոյէին եւ պարզամիտքն գովէին, թէ<sup>6</sup> ոչ յայտնապէս, զի ոչ էին ազատ յախտէ փառասիրութեան, որպէս ասաց. «Դուք զիառս ի միմեանց առնուք եւ զառ ի միոյն ոչ խնդրէ» (տես Յովի. Ե 44), զկնի դնէ երկրորդ պատճառ յայտնութեան քարոզութեան, յորժամ ասէ.

Բան. «Իբրեւ տաւնն ընդմիջեցաւ» (Յովի. Ե 14):

Մեկնութիւն. Եւթն աւր էր տաւնն, եւ մէջ տաւնին էր չորրորդ աւրն: Եւ զի՞ի<sup>7</sup> չորրորդ աւրն գնաց ի տաւնն. նախ՝ զի ցուցցէ, թէ ոչ վասն երկիւղին յամեցոյց զգալն ի սկիզբն տաւնին, վասն այն ի մէջն գնաց: Երկրորդ. զի ի սկիզբն տաւնին ժողովուրդն ի զբաղանս էր առ ի զարդարել զտաւնն, եւ ոչ կարէին զքարոզն լսել: Երրորդ. զի կարաւտ լիցին քարոզութեան եւ յայնժամ առաւել ունկնդիր լինէին: Եւ ժխորելն ամբոխել եւ խոռվելն է:

<sup>1</sup> А С ըստ

<sup>2</sup> С ըստ

<sup>3</sup> С վարժք էին

<sup>4</sup> С զգիտութիւն

<sup>5</sup> В մոլար

<sup>6</sup> С թեպէտ

<sup>7</sup> А В չեք ի

*Տե՛ս, զի պիտոյ է վարդապետին ընտրել զժամանակ քարողին,  
յորում ժողովուրդն անզբաղ լիցին:*

*Եւ Քրիստոս երթայր ի տաւնն վասն երկու պատճառի. նախ՝  
առ ի պատուել զաւրէնս Մովսիսի, երկրորդ՝ զի յայնժամ առա-  
ւել ժողովեալ լինէին հրէայքն:*

Բան. «Զարմանային հրէայքն եւ ասէին» (Յովի. Է 15):

*ՄԵԼՈՒԹԻՒՆ. Թէպէտ եւ ոչ գրէ աւետարանիչս, թէ զի<sup>1</sup>նչ ու-  
սուցանէր, այլ զարմանալ հրէիցն ցուցանէ, թէ սքանչելապէս ու-  
սուցանէր: Այս առաջինն, որ ցուցանէ, թէ Աստուած է Քրիստոս,  
զի որ հաւասարի Աստուծոյ բարի վարդապետութեամբ՝ Աստուա-  
ծէ: Եւ Քրիստոս սոյնափէս հաւասարի Աստուծոյ, ապա ուրեմն  
Աստուած է Քրիստոս:*

### Վասն Գիր գիտելոյ

Բան. «Զիա՞րդ զԳիրս գիտէ [սա], զի ուսեալ բնաւ չիք» (Յովի. Է 15):

*ՄԵԼՈՒԹԻՒՆ. Եւ աստ չորս ինչ գիտելի է.*

*Նախ՝ զի գիտէին զնա որդի Յովսէփայ, եւ զի մարմնաւոր  
աշխատութեամբ կայր մինչեւ յայն ժամանակն հիւսնութեամբ  
անվարժ ուսմանէ<sup>2</sup>, եւ տեսանէին, զի<sup>3</sup> բարձրագոյն իմաստիւք ու-  
սուցանէր առաւել քան զդպիրսն, վկայս ածել յաւրինաց եւ ի  
մարգարէիցն, եւ այնու գիւրին էր իմանալ զնա յԱստուծոյ եւ  
պատուել ըստ արժանւոյն:*

*Երկրորդ. գիտելի է, զի այսու քամահէին զնա<sup>4</sup> չորիւք. նախ՝  
զի զԳիրս ոչ գիտէ, ապա զաւրէնքն ոչ գիտէ, երկրորդ՝ թէ<sup>5</sup>  
զԳիրս ոչ գիտէ, ապա զճմարիտն ոչ գիտէ, երրորդ՝ զի ոչ կատա-  
րեալ գիտէ, այլ մասն ի լսելոյ, չորրորդ՝ զի յանձնէ իւրմէ խաւսի:*

*Երրորդ. գիտելի է, թէ վասն էր Քրիստոս զԳիրն ոչ ուսաւ:*

*Պատասխան. Ասեմք վասն չորից. նախ՝ զի կատարումն էր  
Գրոյն, որպէս բան եւ իմաստութիւն, ապա ոչ էր պարտ ուսանել  
Գիր: Երկրորդ. զի այնու ցուցցի, թէ Աստուած է, որ առանց ու-  
սանելոյ զԳիրս գիտէր: Երրորդ. զի կամէր նոր աւրէնս շնորհաց  
եւ բանի ուսուցանել, վասն այն ինքն ոչ ուսաւ զԳիրն: Չորրորդ.  
զի ինքն էր զիր կենդանի, առեալ զմելան յԱստուածածին կու-  
սէն, եւ Բանն Հաւը միացեալ հոգւով եւ մարմնով խաւսէր ի մեզ*

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> A յուսմանէ

<sup>3</sup> B չեք

<sup>4</sup> A B չեք

<sup>5</sup> A B զի

զիմաստութիւն Աստուծոյ, ըստ այնմ. «Լեզու իմ որպէս գրիչ երազագիր դպրի» (Սաղմ. ԽՂ 2):

### Արուեստից քահանայից

**Զորրորդ.** գիտելի է, զի գործ քահանայից<sup>1</sup> ուսումն է<sup>2</sup> եւ պաշտաւնն իւր, ապա թէ պէտք լիցին, չորս ինչ ուսումն պատշաճաւոր է. նախ՝ զգիրս գրել, որպէս զտախտակն գրեաց Աստուած: Երկրորդ. մորթի գործել եւ զգենուլ, որպէս արար Աստուած հանդերձս մաշկեղէնս Աղամայ: Երրորդ. հիւսնել, որպէս Յիսուս ի տղայութեան ընդ Յովսէփայ հիւսնէր: Չորրորդ. կոփել զվէմս ի շինուածս եկեղեցւոյ, ըստ այնմ. «Ես դնեմ ի հիմունս Սիոնի վէմ» (Եսայի ԻՇ 16), եւ Տէրն ասէր<sup>3</sup>. «Ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ<sup>4</sup>» (Մատթ. ԺԶ 18), իսկ թէ վասն հասարակաց տանց գործել զերկիր եւ զբանջար պիտանի է, այլ վասն անձին թողուլ զգործս Աստուծոյ եւ հետեւել սոյնպիսեացս, կամ<sup>5</sup> ի վիճակս, կամ անբանից ծառայել, զոր այժմ զբազումս տեսանեմք, անաստուածութիւն է եւ ագահութիւն:

Յորժամ յայտնեաց զպատճառ վարդապետութեան, այժմ յայտնէ զծնունդ վարդապետութեան իւր:

### Թէ Աստուծոյ է վարդապետութիւն<sup>6</sup>

Բան. «Պատասխանի ետ եւ ասէ. “Իմ վարդապետութիւնս չէ իմ<sup>7</sup>, այլ այնմ, որ առաքեացն զիս”» (Յովի. Է 17):

**Մեկնութիւն.** Այս երկրորդն, որ ցուցանէ ըստ վարդապետութեան, թէ Աստուած է Քրիստոս, որ ունի զվարդապետութիւն Աստուծոյ Հաւր, իսկ ասելն. «Իմ վարդապետութիւնս ոչ է իմ». իմ է եւ ոչ է իմ, ասէ: իմ է, զի ի Հաւրէ ունիմ ըստ Աստուածութեանս, եւ ոչ է իմ, զի ոչ եմ վարժեալ ըստ մարդկային կրթութեան, այլ զի տուեալ է ինձ, զի ստեղծեալ գիտութիւն Քրիստոսի ըստ մարդկութեան զայն ոչ ունի կրթութեամբ, այլ ի սկզբանէ յղացման իւրոյ ունի զգիտութիւն զայն<sup>8</sup> հեղմամբ Աստուծոյ:

<sup>1</sup> Ը քահանայից

<sup>2</sup> Ե չիք

<sup>3</sup> Ը չիք եւ Տէրն ասէր

<sup>4</sup> Ա Ե չիք

<sup>5</sup> Ը այսինքն

<sup>6</sup> Ը վարդապետութիւն իւր

<sup>7</sup> Ը ոչ է իմ

<sup>8</sup> Ե Աստուծոյ

Եւ դարձեալ այսպէս մեկնի. զի Որդի է Բանն Հաւը, իսկ զԲան<sup>1</sup> ումեք եւ վարդապետութիւն նորա մի է, վասն այն Որդի է վարդապետութիւն Հաւը:

Իսկ զկնի երկու պատճառաւ ցուցանէ Քրիստոս, զի վարդապետութիւն նորա տուեալ է նմա յԱստուծոյ Հաւըէ. նախ՝ զի վարդապետութիւն Քրիստոսի էր ի յառնել զկամս Հաւը, որպէս եւ ասէ. «Եթէ ոք կամի զկամս նորա առնել, գիտացէ վասն վարդապետութեանս, յԱստուծոյ իցէ արդեաւը» (Յովի. Է 17), եւ առնել զկամս Աստուծոյ է<sup>2</sup> պահել զպատուիրանս տուեալ ի նմանէ, եւ ի սոյն ածէր վարդապետութիւն Քրիստոսի: Ապա յայտնի է, զի նորա վարդապետութիւն յԱստուծոյ էր, եւ ոչ խաւսէր յինքենէ: Միւս կերպիւ բացայայտէ մեկնիչդ<sup>3</sup>, թէ առնել զկամս Հաւը ոչ ունել յատուկ կամք եւ ատելութիւն եղբաւը, եւ թէ հրէայքն ի բաց բառնային զատելութիւն եւ զնախանձ, որ ունէին առ Քրիստոս, յայնժամ կարէին գիտել, թէ վարդապետութիւն նորա յԱստուծոյ Հաւըէ է, քանզի յոյժ սէր եւ ատելութիւն թիւրէ զդատումն մտաց: Երկրորդ<sup>4</sup>. զի Քրիստոս քարոզելով խնդրէր զփառս երկնային Հաւըն, ուստի յայտ է, զի վարդապետութիւն նորա յԱստուծոյ է, վասն այնորիկ ասէ.

Բան. «Որ յանձնէ իւրմէ խաւսի, փառս անձին իւրում խնդրէ» (Յովի. Է 18):

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ<sup>5</sup>. Վասն զի<sup>5</sup> խնդրէր զփառս առաքչին իւրոյ, այսինքն՝ Հաւը, վասն այնորիկ ճշմարիտ էր վարդապետութիւն նորա, եւ զի հրէայքն կարէին առարկել Քրիստոսի, թէ քո վարդապետութիւնդ ոչ է յԱստուծոյ, զի ոչ պահես զարւէնս Մովսէսի, վասն այնորիկ Քրիստոս պատասխանի տայ եւ երկու կերպիւ ցուցանէ, զի նոքա էին յանցաւորք մեծագոյն աւրինացն. նախ՝ զի ասէ. «Խնդրէք զիս սպանանել» (Յովի. Է 19): Երկրորդ. ասէ<sup>6</sup>, թէ՝ զշաբաթն անցանէք թլփատութեամբն (Յովի. Է 22-23):

Բան. «Ո՞չ Մովսէս եւ ձեզ զաւրէնսն» (Յովի. Է 19):

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Այս երրորդն, որ ցուցանէ, թէ Աստուած է Քրիստոս աւրինացն մեկնութեամբ, եւ ցուցանէ, թէ ի շաբաթու զո՞ր գործ կարէին գործել եւ զո՞րն՝ ոչ:

Բան. «Եւ ոչ ոք ի ձենջ պահէ զաւրէնսն» (Յովի. Է 19):

<sup>1</sup> Ը Բան

<sup>2</sup> Ե Եւ

<sup>3</sup> Երկրորդ պատճառ

<sup>4</sup> Ե չիք

<sup>5</sup> Ը Քրիստոս

<sup>6</sup> Ը զի ասէ

Մեկնութիւն. Իբրու թէ ասել՝ դուք պարտական էք պահել զաւրէնսն, զի ձեզ տուեալ է, եւ ոչ պահէք, եւ ես ոչ եմ պարտական, զի ի վեր եմ քան զաւրէնս, եւ ես պահեմ, ըստ այնմ. «Ոչ եկի լուծանել, այլ լնուլ» (Մատթ. Ե 17), որպէս յայտ է ի մեկնչէդ, եւ ապա ցուցանէ, թէ որպէս անցանէին զաւրէնսն:

Բան. «Զի խնդրէք զիս սպանանել» (Յովհ. Ե 19):

Մեկնութիւն<sup>1</sup>. Վասն զի աւրէնքն արգելու զանմեղն սպանանել, եւ զի նոքա ոչ կարէին բանաւոր<sup>2</sup> պատասխանել նմա, այլ նախատեն՝ ասելով.

### Վասն ստութեան

Բան. «Դեւ գոյ ի քեզ, ո՞վ<sup>3</sup> խնդրէ զքեզ սպանանել<sup>4</sup>» (Յովհ. Ե 20):

Մեկնութիւն. Կատաղեցան անամաւթ եւ կրկին սուտ խաւսեցան. առաջինն յայտնապէս սուտ էր, զի Քրիստոս զգեւսն հանէր եւ հալածէր, եւ երկրորդն՝ յայտնի սուտ, որ յետոյ սպանողք եղեն:

Դարձեալ՝ առաջինն զուր է եւ երկրորդն ուրացումն: Եւ երկուքն սոքա սուտ կոչին, զի տեսակ են ստոյն եւ սուտն սեռ է սոցա<sup>5</sup>, եւ սուտ է դնել զոր ոչ ունի, եւ բառնալ, զոր ունի<sup>6</sup>:

Հարց. Հնդէ՛ր ոչ ետ պատասխանի նոցա առ այս:

Պատասխան. Վասն չորից. Նախ՝ զի վասն հեղութեան, զի ուսուսցէ մեզ, երկրորդ՝ վասն սիրոյ, երրորդ՝ զի զղջասցին, չորրորդ՝ զի անմարթ էր թողուլ զքարոզելն, զոր վարդապետէր, եւ այս եւս խրատ մեզ է:

Բան. «Զարմացեալ էք» (Յովհ. Ե 20):

Մեկնութիւն. Այսինքն՝ խոռվեալ էք, զի որպէս զարմանալն վասն հաճոյ ինչ իրաց հաճութեամբ լինի, սոյնպէս եւ զարմանալ վասն անհաճոյ իրաց, որ անհնարին<sup>7</sup> երեւի՝ խոռվութիւն լինի, եւ ապա ցուցանէ, զի ոչ էր յանցող շաբաթու:

<sup>1</sup> B չիք

<sup>2</sup> C բանաւորաբար

<sup>3</sup> A C ո՞վ

<sup>4</sup> A չիք

<sup>5</sup> C նոցա

<sup>6</sup> C չիք եւ բառնալ, զոր ունի

<sup>7</sup> C հնար

## Վասն թլիքատութեան

**Բան.** «Վասն այնորիկ ետ ձեզ Մովսէս<sup>1</sup> թլփառութիւն, եւ ոչ թէ ի Մովսէսէ էր, այլ ի հարց անտի» (տես Յովի. Ե 22):

Մեկնութիւն. Թլփատութիւն Մովսէսի տուեալ ասի, զի նա գրեաց յաւրէնսն, այլ նախ Աբրահամու տուեալ եղեւ, որպէս գրէ յԱրարածքն, եթէ՝ «Մանուկ քո ութաւրեայ թլփատեսցի» (Ծննդ. ժԷ 12):

Եւ վասն թլփատութեան լինի երեք հարց.

Առաջին. Թէ զի՞նչ է թլփատութիւն։

**Պատասխան.** Ասեմք, թէ թլվատութիւն էր նշան ազգին Աբրահամու, որպէս զրոշմ ի վերայ ոչխարաց, զի բաժանեացին ի հեթանոսաց: Ուստի յայտ է, թէ քառասուն ամ յանապատին ոչ թլվատեցան, զի ոչ էին ի մէջ հեթանոսաց, այլ յելսն Յորդանանանու թլվատեցան:

Երկրորդ հարց. Վասն է՞ր յառնականաց մասինն եղ:

**Պատասխան.** Վասն չորից. Նախ՝ անդ եղ զթլիքատութիւն, զի ոչ եղեւ պակասութիւն մասինն այն, զի թէ յայլ մասին էր, լինէր պակասութիւն, որպէս ի մատն կամ յականջն եւ յայլսն: Երկրորդ. զի մասամբն այն մեղք սկզբնական տարածի յայլս, եւ թլիքատութիւն է ընդդէմ սկզբնական մեղաց: Երրորդ. զի շնութիւն այնու կատարի, անդ եղ զթլիքատութիւն, զի խափանեսցի յայնպիսի գործոյ: Չորրորդ. զի խոստացեալ զաւակն աւրհնութեան, որ էր Քրիստոս, ի մարմնով գալուստն իւր զգործս մասին այն խզեաց եւ անսերմն յութեամբ գոյացաւ, եւ ի կոյս յարգանդէ ծնաւ:

Երրորդ հարց. Զի՞նչ նշանակէ ութաւրեալ թիվատելն:

Պատասխան. Զորս ինչ ցուցանէ. նախ՝ ցուցանէ<sup>2</sup> ի յութներորդ գարուն զբոլոր հատումն մեղաւորաց դասուն ի մարմնոյ: Երկրորդ. նշանակէ արդարոց զխորհուրդ մկրտութեան, որ աստթողութիւն մեղաց շնորհէ եւ<sup>3</sup> յութներորդին զյարութիւն եւ եւ զկեանքն, զի երկուքն ընդդէմ սկզբնականին են: Երրորդ. նշանակէ զխոստովանութիւն Քրիստոսի, որ աստ մասնաւորէ եւ յութներորդին ամենայն լեզու խոստովան լիցի, թէ Տէր է Թիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հաւը: Զորրորդ. զայն ցուցանէ, որպէս յութ աւուր թլիքատութեամբս որոշեցաւ ազգն աստուածա-

1 A B

2 C Աշանակէ

<sup>3</sup>C  $\Sigma$ <sub>b</sub>

ծանաւթ, նոյնպէս սուրբք ամենայն դէմ յանդիման տեսանեն զԱստուած<sup>1</sup> յութներորդ դարուն:

Այլ եւ գիտելի է, զի Աստուած երեք թլփատութիւն ետ մարդոյս. զմինն յԱրարածքն ասէ, այսինքն՝ սերականին, եւ երկրորդն յԵրկրորդ Աւրէնքն՝ ասելով. «Թլփատեցէ՛ք զանթլփատութիւն սրտից ձերոց, եւ թլփատեցէ՛ք զպարանոցս ձեր<sup>2</sup>» (տե՛ս ԲՕր Ժ 16): Այս է խորհուրդն, զի հոգիս մեր եռամասնեա է՝ բան, ցասումն եւ ցանկութիւն: Բանին գործիք է պարանոցն, որով հպարտանայ, եւ ցասման գործիք է սիրտն, որով բարկանայ, եւ ցանկութեան գործիք<sup>3</sup> սերականն, որով շնայ<sup>4</sup>: Հատմամբ սերականին զբղջախոհ ցանկութիւն եւ զշնութիւն ասաց Աստուած հատանել: Եւ սրտիւն՝ զբարկութիւն հատանել, եւ պարանոցաւն զհպարտութիւն կտրել եւ հատանել:

Իսկ աստ Քրիստոս զթլփատութիւն յիշելով վասն չաբաթուն յանդիմանեաց զնոսա չորիւք. նախ՝ զի թլփատութիւն Աբրահամու զշաբաթն Մովսէսի խափանէր եւ անմեղ էր: Երկրորդ. զի աւրէնքն Մովսէսի զիւր եղեալ աւրէնսն խափանէր, ըստ որում ի չաբաթու հրամայէր թլփատել: Երրորդ. զի քահանայքն թլփատելովն զշաբաթն լուծանէին եւ անմեղ էին: Չորրորդ. զի թլփատելն մարդն զշաբաթն լուծանէր եւ արդարանայր:

Արդ, եթէ չորք սոքա զշաբաթն լուծանեն եւ չեն հակառակ աւրինացն<sup>5</sup>, ես վասն է՛ր եմ հակառակ, որպէս ասէ.

### Եթէ մարդ թլփատութիւն առնու ի չաբաթու<sup>6</sup>

Բան. «Զի ողջոյն իսկ մարդ բժշկեցի ի շաբաթու» (Յովի. Է 23):

Մեկնութիւն. Կամ զբոլոր մարմինն անդամալուծին, կամ զհոգի եւ զմարմինն, իբրու ասել, թէ բանաւորութեամբ ոչ վարիք, զի բոլոր բժշկութիւն հոգւոյն եւ մարմնոյն բարեգոյն է եւ առաւել ի փառս Աստուծոյ, քան զթլփատութիւն:

Իսկ որ ասէ մեկնիչդ<sup>7ci</sup>, թէ՝ յոյժ զրկող եւ անիրաւ էք. նախ՝ զշաբաթն միշտ զրկէք թլփատութեամբն<sup>1</sup>: Երկրորդ. զՔրիստոս հակառակ ասէին եւ ինքեանք միշտ լուծանէին զշաբաթս:

<sup>1</sup> Հ զիսուս

<sup>2</sup> Հ չիք

<sup>3</sup> Հ գործիք է

<sup>4</sup> Հ չիք

<sup>5</sup> Հ օրինացն Աստուծոյ

<sup>6</sup> Հ չիք ի շաբաթու

<sup>7</sup> Հ չիք

Եւ զի չարութիւն հրէիցն ի չար մտաց դատմանէ ելանէր,  
վասն այնորիկ ասէ.

### Վասն դատաւորաց

Բան. «Մի՛ ըստ աչս դատիք, այլ ուղիղ դատաստան արարէք<sup>2</sup>» (Յովի.  
Է 24):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Առաջին՝ ի դէմս հրէից եւ ինքեան ասէ չորս  
կերպիւ. նախ՝ մի՛ դատիք ըստ ձերում ատելութեան, այլ ըստ ի-  
րին ճշմարտութեան, եւ յայնժամ գիտենայք, թէ իմ վարդապե-  
տութիւնս յԱստուծոյ է: Երկրորդ. մի՛ դատիք ըստ երեսաց, այ-  
սինքն՝ ըստ<sup>3</sup> արտաքին երեւմանն կամ ըստ աւրինացն մակերե-  
ւոյթ տեսութեամբ, այլ քննեցէք զարինացն ներքին ճշմարտու-  
թիւն եւ զուղիղ դիտաւորութիւն, եւ յայնժամ ծանիցէք, թէ ո՛չ  
եմ յանցող աւրինացն: Երրորդ. մի՛ ակնառութեամբ դատիք եւ ի-  
րաւունս տայք Մովսիսի, զի նա ելոյծ ի ձեռն թլփատութեան  
զշաբաթն, ապա նա առաւել մեղադրելի է<sup>4</sup>, եւ ոչ՝ ես: Չորրորդ.  
մի՛ թիւր դատիք, զի Մովսէս հաճեցաւ զայլոց աւրէնս իւր աւրի-  
նացն գեր ի վերոյ առնել եւ դուք հետեւողք աւրինացն նոյնպէս  
հաճեցէք:

Դարձեալ՝ ի դէմս ամենեցուն ասէ. նախ՝ մի՛ ըստ աչս դատիք,  
այսինքն՝ որ մարմինդ տեսանի, եւ հոգիդ՝ ոչ, մի՛ զմարմինդ՝  
միայն սիրէք եւ զհոգիդ ատէք: Երկրորդ. ի դէմս քրիստոնէից՝  
մի՛ միայն զքեզ սիրել եւ զընկերն ատել, զի՝ «Միրեսցես զընկեր  
իբրեւ զանձն քո<sup>5</sup>» (հնմտ. Մատթ. Ժթ 19, Իբ 39, Մարկ. Ժթ 31), ասէ աւ-  
րէնքն, եւ զթշնամին սիրել հրամայէ Քրիստոս (հնմտ. Մատթ. Ե 43):  
Երրորդ. ի դէմս դատաւորաց՝ մի՛ թիւր դատիք առ երկու դատա-  
խազն եւ մի՛ զսուտն եւ զճշմարիտն փոփոխէք, այլ ուղիղ դատե-  
լով զճշմարիտն ճշմարտեցէք եւ զսուտն ստեցէք, զի չորիւք թիւ-  
րի դատաստանն, որպէս նախ ասացաւ, այսինքն՝ տգիտութեամբ,  
ակնառութեամբ, երկիւղիւ եւ կաշառաւք:

### Այսքան առ այս:

Յորժամ ասաց զծնունդ վարդապետութեան Քրիստոսի, զի  
յԱստուծոյ էր, այժմ ասէ զծնունդ եւ զելումն վարդապետին  
Քրիստոսի:

<sup>1</sup> C զշաբաթն զրկէք թլփատութեամբ

<sup>2</sup> A չեք

<sup>3</sup> A B չեք

<sup>4</sup> C նա է առաւել մեղադրելի

<sup>5</sup> A B չեք

Բան. «Ասէին ոմանք յերուսաղեմացւոց անտի<sup>1</sup>» (Յովհ. Ե 25):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Նախ՝ զի նոքա գիտէին զչարութիւն քահանայիցն, զի կամէին զՔրիստոս ապանանել: Երկրորդ. զնոսա առաւել չար ցուցանէ<sup>2</sup>, որք առաւել զնշանսն տեսանէին, եւ ի յանդիմանելն զնոսա չիշխեցին ասել ինչ ընդ նմա կամ ոչ ըմբռնեցին, զայն ասէ չխաւսել: Ասէ Ոսկեբերանն. «Թոյժ սքանչելիք<sup>3</sup>, զի խորհէին<sup>4</sup> սպանանել զնա եւ փոխեցան յայնպիսի կամաց, յայտէ, զի գիտացին զնա Քրիստոս գոլ»: Եւ իշխանք զքահանայսն ասէին, բայց ոչ եթէ ստոյդ հաւատացին, այլ միայն կարծեաւք, վասն այնորիկ ասեն.

### Ոչ գիտել զՔրիստոս

Բան. «Զսա գիտեմք՝ ուստի է<sup>5</sup>, բայց զօրիստոս<sup>6</sup> ոչ գիտեմք՝ ուստի է<sup>7</sup>» (Յովհ. Ե 27):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Գիտել եւ ոչ գիտել. նախ՝ այն է, որ զտեղի սննդեանն գիտէին ի Գալիլէ գոլ, այլ զտեղի ծննդեանն կամաւ անդիտանային, որ ի Բեթղեհէմ ըստ Միքիա (հմնտ. Սիրիա Ե 2): Երկրորդ. գիտէին ըստ մարդկութեան ի գաւառէ եւ յազգէ, այլ ոչ գիտէին ըստ Աստուածութեան, որպէս ասէ Եսայի. «Զազգատոհմն նորա ո՞ պատմեսցէ» (Եսայի ԾԳ 8): Երրորդ. ընդհանրաբար գիտէին, թէ յազգէ Դաւթի եւ ի Բեթղեհէմ<sup>8</sup> ծնանելոց է Քրիստոս, բայց մասնաւրապէս ո՛չ գիտէին, թէ յորպիսի<sup>9</sup> հաւրէ կամ յորպիսի<sup>10</sup> մաւրէ ծնանելոց է Քրիստոս: Չորրորդ. ի մէջ հրէիցն հասարակ համբաւէր, թէ զազգս եւ զգաւառս մեսիային ոչ ոք կարէ գիտել, եւ համարէին, թէ յանկարծակի եւ յանձանաւթս յայտնէր զինքն, եւ սոքա գիտէին զմայրն եւ զթովսեփ հայր կոչեցեալ, վասն այնորիկ ասէին, թէ նա ոչ էր Քրիստոսն:

**Զկնի ճառէ զպատասխանին Քրիստոսի վասն տարակուսանաց ժողովրդեանն:**

Բան. «Աղաղակեաց Յիսուս ի տաճարին<sup>9</sup>» (Յովհ. Ե 28):

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> A B չարացուցանէ

<sup>3</sup> C սքանչելիք է

<sup>4</sup> B խնդրէին

<sup>5</sup> C իցէ

<sup>6</sup> C զօրիստոսն

<sup>7</sup> C չեք գիտեմք ուստի է

<sup>8</sup> C Բեթղաեն

<sup>9</sup> A B Աղաղակեաց Քրիստոս ի տաւնին

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Աղաղակն է իղձք սրտին եւ բանին եւ ձայնին յայտնի լինելն։ Եւ<sup>1</sup> նախ ցուցանէր զմեծ փափագումն իւր վասն փրկութեան մերոյ։ Երկրորդ. ցուցանէր զարիութիւն իւր։ Եւ ի տաճարին ուսուցանէր, զի ամենեքեան կարէին լսել։ Տե՛ս, զի պարտ է վարդապետին յեկեղեցին քարոզել եւ ոչ ի տունս առանձին խարել զկանայս, որպէս ազգն ախթարմայից։

Բան. «Եւ զիս գիտէք, եւ ուստի եմն<sup>2</sup> գիտէք» (Յովի. Է 28):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ<sup>3</sup>.** Հրէայքն ի մասնէ գիտէին զնա<sup>4</sup> ի գաւառէ եւ յազգէ, իսկ զբոլորն ոչ գիտէին, զի յերկնից էր եւ բնութեամբ Որդի Աստուծոյ եւ Աստուած ճշմարիտ։ Եւ Քրիստոս յանձնէ իւրմէ ոչ եկեալ ասի, զի ի Հաւրէ էր եւ ոչ յինքենէ։

Բան. «Այլ ճշմարիտ է Յայր» (Յովի. Է 28-29):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Նախ՝ ճշմարիտ է վասն առաքմանն Որդւոյ, զի զխոստմունսն կատարեաց։ Երկրորդ. ճշմարիտ Հայր է Քրիստոսի, զի ի վերայ Որդւոյ վկայեաց։ «Դա է Որդի իմ» (Մատթ. Գ 17), այլ Հրէայքն, որ գիտէին զմարդկութիւն<sup>5</sup>, ոչ գիտէին զԱստուած Հայր, այսինքն՝ բնութեամբ Հայր Քրիստոսի։ Եւ ոչ գիտէին զՔրիստոս ճշմարիտ Աստուած եւ հաւասար Աստուծոյ, վասն որոյ ասէ։

Բան. «Զոր դուքն ոչ գիտէք» (Յովի. Է 28):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Զորս կերպ է ոչ գիտելն զՈրդի. Նախ՝ որպէս Հրէայքն, որ գիտէին զմարդկութիւն, այլ զԱստուածութիւն ոչ գիտէին։ Երկրորդ. հերձուածողք, որ գիտեն զբանն Աստուած, այլ զմարմինն Աստուած ոչ գիտեն եւ ոչ խոստովանին։ Երրորդ<sup>6</sup>. որ զՀայր ոչ ճանաչէ եւ ոչ զՈրդին, եւ որ զՈրդին ոչ ճանաչէ, նա եւ ոչ զՀայր։ Զորրորդ. դարձեալ ցուցանէ այս զՔրիստոս Աստուած գոլ, զի յաղագս ամենայն արարածոց գիտեն, զի յոչնչէ են, եւ թէ ոչ գիտէին զուստն Քրիստոսի, ապա յայտ է, զի նա չէր արարած, այլ Աստուած ճշմարիտ։

### Թէ գիտէ Որդի զՀայր

Բան. «Իսկ ես գիտեմ զնա<sup>7</sup>, զի ի ննանէ իսկ<sup>8</sup> եմ» (Յովի. Է 29):

<sup>1</sup> C չեք

<sup>2</sup> A B եմ

<sup>3</sup> A B չեք

<sup>4</sup> A B զսաւ

<sup>5</sup> A B չեք որ գիտէին զմարդկութիւն

<sup>6</sup> C Երրորդ կերպ

<sup>7</sup> A B չեք

<sup>8</sup> A B չեք

Մեկնութիւն. Զորս կերպիւ առաւել գիտէ Քրիստոս, քան զմարդարէքն. նախ՝ զի մարդարէքն այլ էին էութեամբն, երկրորդ՝ ի մասնէ գիտէին, երրորդ՝ անկատար, չորրորդ՝ երբեմն գիտէին:

Իսկ Քրիստոս ընդդէմ այսմ գիտէ զՀայր. նախ՝ զի յԱստուծոյ Հաւրէ էութեամբ, երկրորդ՝ զբոլորն գիտէ, երրորդ՝ կատարեալ, չորրորդ՝ միշտ: Զի Աստուածութեամբն նոյն է գիտութեամբ ընդ Հաւր, եւ մարդկութեամբն ի սկզբանէ յղացման իւրոյ միացեալ ի Բանն Աստուած, գիտէ զՀայր ոչ պակաս եւ մասնաւոր, այլ բոլոր եւ կատարեալ եւ սոյնպէս առաւել գիտէ, քան զմարդարէսն, ըստ այնմ. «Որպէս գիտէ զիս Յայր, գիտեն եւ ես զՅայր» (Յովհ. Ժ 15):

### Ընդդէմ երկաբնակաց

Այլ թէ ասիցէ երկաբնակն, թէ Քրիստոս Աստուածութեամբն գիտէ զՀայր բոլոր եւ կատարեալ, այլ մարդկութեամբն չափաւոր գիտէ, զի մարդկութիւն ստեղծեալ է եւ չափաւոր, անչափ ոչ կարէ գիտել:

Առ այս ասեմք. նախ՝ ապա մարդկութիւն Քրիստոսի ոչ առաւել գիտէ քան զմարդարէսն, զի հաւասար ստեղծեալք են եւ չափաւոր: Դարձեալ՝ ասեմք, թէ ահա, որ յայտնապէս երկու բնութիւն որոշէք Քրիստոսի եւ ծածկապէս երկու անձն, զի թէ բնութիւն մարդոյն ի յանձն Բանին Աստուծոյ<sup>1</sup> միացեալ է անբաժանելի, ապա մի անձնաւորութեան հաւասար է գիտութիւն եւ կարողութիւն Աստծոյն մարդացելոյ: Ապա թէ մարդկութիւն տգէտ եւ տկար<sup>2</sup> է, յայտ է, զի որոշեալ է յանձնէ Բանին Աստուծոյ եւ որոշեալն ի յանձնէն յատուկ անձն է, եւ սոյնպէս երկու անձն եւ երկու բնութիւն ասէք ընդ նեստորի: Նման է ապա դաւանութիւն ձեր խորհրդոյ Պատարագին, որ յայտնապէս յարենէն որոշէք զժողովուրդն եւ ծածկապէս՝ ի մարմնոյն փրկական: Ցիրաւի, ասէ սուրբն Կիւրեղ ի գիրս Պարապմանց, թէ յայտնապէս որոշելով երկու բնութիւն ի Քրիստոս, որոշի եւ երկու անձն ի Քրիստոս: Եւ սոյնպէս որոշելով ըստ ձեզ ո՛չ Աստուած մարդացեալ է, եւ ո՛չ Քրիստոսն՝ ճշմարիտ Աստուած, ապա<sup>3</sup> եւ ոչ է ճշմարիտ փրկութիւն մարդկան:

<sup>1</sup> Ծիք

<sup>2</sup> Յ տկար եւ տգէտ

<sup>3</sup> Յ ապա ուրեմն

Եւ դարձեալ ասէ սուրբն Կիւրեղ. «Յայսմանէ Հարկաւորեցաւ<sup>1</sup> Նեստոր եւ ասաց մի անձն եւ երկու բնութիւն ոչ ճշմարտութեամբ, այլ խարէութեամբ, զի մի անձն առանց միաւորեալ բնութեանց կոչմամբ միայն է մի եւ ոչ էութեամբ, որպէս ասեմք մինքաղաք, մին գեհ, մին շեղ, սոյնաչս եւ ասելն մի Տէր, մի Քրիստոս, մի անձն եւ երկու բնութիւն բաժանեալ»:

Եւ<sup>2</sup> դարձեալ՝ պատրեն մի անձն ասելով, եւ զամենայն զաւրութիւն եւ զներգործութիւն եւ Աստուածութիւն անձինն վերագրեն, զի մարդկութիւն որոշեսցի յամենայն աստուածային զաւրութեանցն եւ ներգործութեանց:

Դարձեալ՝ այն է մի անձն եւ երկու բնութիւն բաժանեալ, որպէս միագլխի վիշապ երկու տուտ ունելով, որպէս ասէ Դաւիթ Անյաղթն<sup>3</sup>. «Ապա զի՞նչ լինի յորժամ ընդ երկու բնութեան եւ երկու գիտութիւն, եւ երկու կարողութիւն, եւ երկու կամք, եւ երկու գործք բաժանեն ի միոյն Քրիստոսի»: Զոր զայնպիսի բաժանողքն եւ զիորհողք բաժանեսցէ Հոգին Սուրբ սրովն երկսայրի ի կենաց գլխոյն Քրիստոսի եւ յանդամոց Սուրբ Եկեղեցւոյ քրիստոնէից եւ եղիցին ի նզովսն յաւիտենից անիծից<sup>4</sup>. Ամէն:

Բան. «Եւ խնդրէին զնա ունել» (Յովի. Է 30):

ՄԵԼՈՆԻՔԻՆ<sup>5</sup>. Ի վերայ վերոյ ասացեալ բանիցն ժողովուրդն բաժանեցան, զի չարքն առաւել եւս չարացան, եւ բարիքն եւս ի բարին հաստատեցան:

Բան. «Չեւ էր հասեալ ժամ նորա» (Յովի. Է 30):

ՄԵԼՈՆԻՔԻՆ. Այսինքն՝ ժամանակն, զոր նախասահմանեալ էր վասն նորա:

Բան. «Քրիստոսն յորժամ զայցէ, մի՞թէ [աւելի ինչ նշանս առնիցէ, քան զոր սայս առնէ]» (Յովի. Է 31):

ՄԵԼՈՆԻՔԻՆ. Նախ՝ միամտութեամբ ասէին: Երկրորդ. թէ ոչ է պարտ այլոյ Քրիստոսի սպասել:

Հարց. Վասն էր ասէ. «Կամաւ եկն ի չարչարանս»:

Պատասխան. Վասն չորից. նախ՝ ընդդէմ հրէիցն, զի ոչ բռնութեամբ կարէին<sup>6</sup> չարչարել, այլ ինքն<sup>7</sup> կամաւ եկն: Երկրորդ. զի Տէր է մահու եւ կենաց եւ ոչ անկեալ ընդ մահուամբ, որպէս

<sup>1</sup> A B հարկեցաւ

<sup>2</sup> C չիք

<sup>3</sup> C Անյաղթ Փիլիսոփայն

<sup>4</sup> C ի նզովս յաւիտենից անիծիցն

<sup>5</sup> A չիք

<sup>6</sup> B կամնին

<sup>7</sup> A B չիք

**մեք:** Երրորդ. զկատարեալ սէրն ցուցանէ կամաւ մեռանելն, զի ակամայիցն, ասէ, ոչ է կատարեալ սէր: Զորրորդ. զկատարեալ փրկութիւն, որ արար խաչիւն, զի փրկութիւն մարդկան յաղթանակ խաչին է:

Բան. «Լուան փարիսեցիքն օտրտունջ ժողովրդեամն» (Յովհ. Է 32):

Մեկնութիւն<sup>1</sup>. Տրտնջէին, այսինքն՝ առանձին խաւսէին, եւ ոմանք տրտնջէին չարախաւսելով: Եւ զայս փարիսեցիքն պատմեցին քաջանայապետիցն, վասն այնորիկ առաւել բարկացան եւ առաքեցին սպասաւորս, զի կալցեն զնա:

Հարց. Վասն է՞ր ոչ կարացին ունել զնա:

Պատասխան. Վասն երից. Նախ՝ վասն փառաց երեսացն, որպէս յաւուր մատնութեան զարկան ի գետինն: Երկրորդ. զի անշարժ գործեաց զանդամս նոցա, որ ոչ կարացին ըստ չար կամաց իւրեանց շարժել: Երրորդ. զի խափանեաց զկամս նոցա առ ի շարժումն անդամոց, զի մի ձգեսցեն ի նա զճեռս:

Յորժամ եցոյց Քրիստոս զծնունդն իւր, թէ ուստի էր, զկնի ցուցանէ, թէ յո՞ երթայ, այսինքն՝ առ Հայր, զի Աստուածութեամբն անբաժանելի էր ի նմանէ:

### Վասն փոքր ժամանակին

Բան. «Այլ<sup>2</sup> փոքր միւս եւս ժամանակ ընդ ձեզ եմ» (Յովհ. Է 33):

Մեկնութիւն. Զորիւք երեւի. Նախ՝ թէ այժմ ոչ կարէք ըմբռնել զիս, այլ յետ փոքր ժամանակի ես կամաւ տամ զանձն իմ ի ձեռս ձեր՝ ի խաչ, զի յայսմ աւրէ մինչ<sup>3</sup> ի խաչ վեց ամիս թուի: Երկրորդ. իբրու<sup>4</sup> ասել հրէիցն, թէ այժմ ոչ կարէք ունել զիս, զի տակաւին ընդ ձեզ եմ՝ ուսուցանել եւ սքանչելիս առնել: Երրորդ. փոքր ժամանակ վասն տնաւրէնութեանս կատարելոյ ընդ ձեզ եմ առ ի յաւգուտ աշխարհի: Զորրորդ. փոքր ժամանակ ի վերայ խաչին ասէ, յորժամ եղեն ահագին նշանքն ի յանդիմանութիւն նոցա եւ քարոզ Աստուածութեան Քրիստոսի:

Բան. «Երթամ առ այն, որ առաքեացն զիս<sup>5</sup>» (Յովհ. Է 33):

Մեկնութիւն. Թէպէտ Աստուածութեամբն անբաժանելի էր ի Հաւրէ, այլ չոգաւ առ Հայր՝ ընդունել ի նմանէ զփառս մարմնոյն: Դարձեալ վասն համբարձմանն ասէ յերկինս, որ Աստուծոյ

<sup>1</sup> B չեք

<sup>2</sup> չեք Բան, Այս

<sup>3</sup> C չեք

<sup>4</sup> C իբր

<sup>5</sup> A B չեք

**տեղի ասի, վասն զի Աստուծոյ զաւրութիւն եւ մեծութիւն առաւել անդ երեւի:**

Բան. «Խնդրիցք զիս եւ ոչ գտանիցէք» (Յովի. Է 34):

**ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ.** Զորիւք է իմանալ. նախ՝ խնդրեցէք զիս նշան<sup>1</sup> առնել եւ բժշկութիւն, եւ ոչ գտանիցէք: Երկրորդ. զկնի համբարձման, յորժամ տեսին յառաքելոցն զնշանսն, ապաշաւեցին բազումք եւ ի հաւատս Քրիստոսի եկին, բայց ըստ մարմնոյ այլ ոչ եւս գտին զՔրիստոս, թէպէտ ճշմարիտ հաւատացեալքն հոգեպէս գտին: Երրորդ. յաւուրս պաշարման հոռմայեցոցն գիտացին, որ վասն Քրիստոսի անպարտ մահուն եղեւ, ցանկային, զի փրկեցին եւ ոչ գտին զխնդրելին: Զորրորդ. զի ամենայն անհաւատ հրէայքն յետ մահուանն Քրիստոսի խնդրէին զՔրիստոս եւ այժմ եւս խնդրեն եւ ոչ գտանեն, զի եկն Քրիստոս, եւ ոչ հաւատացին:

Բան. «Եւ դուք ոչ կարէք զալ<sup>2</sup>» (Յովի. Է 34):

**ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ.** Եւ թէպէտ այժմ կարէին ըմբռնել զՔրիստոս, այլ յետոյ ոչ եւս կարեն ունել եւ կամ<sup>3</sup> վնասել. նախ՝ զի ոչ կարէին հասանել յերանութիւն երկնից առանց հաւատոցն Քրիստոսի: Դարձեալ՝ ոչ կարէին հասանել յերկինս, առ ի վնասել զՔրիստոս:

**Եւ զարմացեալ հրէայքն ասէին.**

Բան. «Յո՞ երթայցէ դա, [մի՞թէ] ի սփիւռս հեթանոսաց<sup>4</sup>» (Յովի. Է 35):

**ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ.** Երեք է իմացումն. նախ՝ սփիւռս զհեթանոսս ասէին, զի սփոեալ էին ի վերայ երեսաց երկրի, եւ ինքեանք յերուսաղէմ էին: Երկրորդ. վասն կուպաշտութեան ասէին սփոեալ եւ տարածեալ, եւ ինքեանք՝ ի մի հաւատս: Երրորդ. արհամարհելով զհեթանոսս սփոեալ ասէին, որպէս զյարդ ցրուեալ եւ անկարդ թողեալ, եւ զինքեանս համարէին իրբեւ զցորեան ի շտեմարանս ժողովեալ:

Յորժամ եցոյց Քրիստոս զծնունդ վարդապետութեան իւրոյ, յետ այսորիկ կոչէ զմարդիկ յունկնդրութիւն վարդապետութեան իւրոյ:

Բան. «Ի վերջնուն աւուր մեծի տաւնին» (Յովի. Է 37):

**ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ.** Վերջին աւր կոչի եւթներորդ աւր տաւնին տաղաւարահարացն, եւ զվերջին աւրն առաւել հանդիսաւոր կատա-

<sup>1</sup> Հ խնդրիցք զիս նշանս

<sup>2</sup> Ա «Եւ դուք ոչ գիտէք», Յ «Եւ ոչ գիտէք զալ»,

<sup>3</sup> Հ չեք

<sup>4</sup> Ա Յ չեք

րէին, որպէս զառաջինն: Եւ կամ վերջին է ութներորդ աւրն<sup>1</sup> տաշղաւարահարաց, որ կոչէր «Տաւն ժողովման», որ սրբութեամբ կատարէին եւ յիւրաքանչիւր տեղիս դառնային, որպէս գրեալ է ի գիրս Ղեւտացւոցն եւ Թուոցն, որ նշանակէ յութներորդ դարուն զժողովումն սրբոց ի վերինն երուսաղէմ:

Բան. «Կայր Յիսուս» (Յովհ. Է 37):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Այսինքն՝ կանգուն: Եւ ի լերինն Զիթենեաց նստեալ ուսուցանէր զաշակերտսն առ ի խրատ վարդապետաց, յորժամ քարոզէ ժողովրդեանն՝ կանգնել, եւ ի դաս ասել աշակերտացն նստի<sup>2</sup>: Եւ թէ զի՞նչ է պատճառն, ասացաւ անդ ի Մատթէոսն, առ ինն երանութիւնսն:

Բան. «Աղաղակէր» (Յովհ. Է 37):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Նախ՝ զի ամենեքեան լռեսցեն: Երկրորդ. զի հեռաւորքն լսիցեն: Երրորդ. զի ընդուսուցանէ զթմրեալսն<sup>3</sup>: Զորորորդ. զի լսելի լիցի հոգւոց նոցա, որպէս եւ խլից: Հինգերորդ. զի մեծ էր բանն եւ աւգտակար լսողացն: Վեցերորդ. զի ջերմ էր ի սէր բանին, այսինքն՝ ի փրկութիւն նոցա: Եւթներորդ. զի ազդողական լիցի ի միտս նոցա: Ութերորդ. ի ցուցանել զարիութիւն իւր, որպէս ցուցաւ նախ:

Զի ջուր է իմաստութիւն Աստուծոյ<sup>4</sup> եւ հաւատն սուրբ:

Բան. «Եթէ որ ծարաւի իցէ, Եկեսցէ [առ իս եւ արքցէ]» (Յովհ. Է 37):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Զուր զհաւատն ասէ Ոսկերեանն, եւ ծարաւ փափագն է, եւ գալն՝ յաւժարելն, զի հաւատն զչորս տապն շիջուցանէ. Նախ՝ զտապ անհաւատութեան, երկրորդ՝ կռապաշտութեան, երրորդ՝ զտգիտութեան, չորրորդ՝ զցանկութեան մեղաց:

Եւ այլք ջուր զիմաստութեան ասեն, որ փափագէ առ կենարար վարդապետութիւն եւ գալն առ նա, հաւատալն ի նա: Եւ ապա կարէ մարդ ըմպել զջուր կենարար իմաստութեան, ոչ միայն ի բաւականութիւն, այլ ի յաւելուած, որ առ այլս տարածի:

Բան. «Որ հաւատայ յիս, որպէս [եւ] ասեն Գիրք» (Յովհ. Է 38):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Աստ դնել զկէտն, վկայութիւն Գրոցն ի Քրիստոս վերաբերի, եւ բազում է ի Սուրբ Գիրս վկայութիւն վասն Քրիստոսի, իսկ յորժամ ենթամնայիւ ասեմք, որպէս ասեն Գիրք. «Գետք յորովայնէ Նորա բղխեսցեն [ջրոց կենդանութեան]» (Յովհ. Է 38), դժուարին է, զի ըստ ճառին ոչ ուրեք երեւի ի բանս

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> B չեք եւ ի դաս ասել աշակերտացն նստի

<sup>3</sup> C զբնբրեալսն

<sup>4</sup> A B չեք

մարգարէիցն, վասն այնորիկ զանազան կերպիւ ասեն<sup>1</sup>. նախ զբանն եսայեայ. «Որ ծարաւիդ էք, երթայք ի ջուր» (Եսայի ԾԵ 1), եւ Քրիստոս կոչէ, զի լցցէ զմարգարէութիւն: Դարձեալ՝ Սողոմոն ասէ. «Բղխեսցեն ջուրք ի քումմէ աղբերէ եւ ի քո հրապարակս գնասցեն ջուրք» (Առակ. Ե 16), ոմանք, թէ՝ «Աղբիւր կենաց է բերան արդար» (հմնտ. Առակ. Ժ 11), եւ այլք, թէ՝ «Ջրհոր խոր է<sup>2</sup> սիրտ առն եւ գետ բղխեալ աղբերէ կենաց» (հմնտ. Առակ. Ժ 4): Եւ ոմանք զ Դաւթին, թէ՝ «Գնացք գետոց ուրախ առնեն զքաղաքն Աստուծոյ<sup>3</sup>», իսկ որովայն զշտեմարանս Հոգւոյն ասէ, որ [է] միտք եւ յիշողական:

### Վասն գետոց

Իսկ գետք ասել բազմաւորական. նախ՝ զի բազմազանք են աստիճանք հաւատոյ<sup>4</sup> եւ տեսակք առաքինութեան: Երկրորդ. բազումք են իմաստութիւնք եւ գիտութիւնք: Երրորդ. զանազան են եւ<sup>5</sup> սրբութիւնքն ի մեզ: Չորրորդ. յոգնապատիկ են եւ պարգեւք Հոգւոյն:

Դարձեալ՝ ըստ Ոսկերերանին. նախ՝ զի մշտահոս է եւ անհատ<sup>6</sup>: Երկրորդ՝ յորդ եւ առատ: Երրորդ՝ շահաւէտ եւ աւգտակար: Չորրորդ. նախ ծածկեալ են եւ ապա արտաքս հոսեն, սոյնպէս<sup>7</sup> հաւատոք եւ գործք եւ իմաստութիւն եւ սրբութիւն նախ ի սիրտս ժողովի ի հոգւոյն եւ ապա արտաքս ի յայլս<sup>8</sup> տարածի:

Բան. «Ձրոց կենդանութեան» (Յովի. Ե 38):

Մելնութիւն<sup>9</sup>. Հաւատոք եւ իմաստութիւն եւ այլն կենդանի ջուր ասի վասն երկու պատճառի. նախ՝ զի նովաւ միաւորի մարդ առ սկիզբն կենդանութեան իւրոյ, որ է Աստուած: Երկրորդ. զի միշտ նորոգէ զբարութիւնս եւ ընդ ինքեան ոչ պակասի, այլ միշտ բղխէ, եւ զի մեծագոյն է ի մէջ պարգեւացն Աստուծոյ, որով եւ այլ<sup>10</sup> ամենայն պարգեւք տուեալ լինին, թէ<sup>11</sup> Հոգին

<sup>1</sup> Եկեղական զանազան ասեմք

<sup>2</sup> Ծ Զրինը է խոր

<sup>3</sup> A B չեք

<sup>4</sup> B բազում աստիճանք են աստիճանք հաւատոյս

<sup>5</sup> B չեք

<sup>6</sup> B անհաս

<sup>7</sup> C չեք

<sup>8</sup> B յայլս

<sup>9</sup> C չեք

<sup>10</sup> B չեք

<sup>11</sup> C է

**Սուրբ:** Վասն այնորիկ աւետարանիչս<sup>1</sup> մեկնելով զբանս Քրիստոսի, ի սոյն յարեալ, ասէ.

Բան. «Զայս ասէր վասն Յոգույն, զոր ընդունելոց էին» (Յովհ. Է 39):

**Մեկնութիւն.** Յաւուր Պենտակոստէին, որով լցան առաքեալքն պարզեւաւք Հոգւոյն Սրբոյ, եւ ապա ի նոցանէ բղխեցին գետք իմաստութեան եւ ոռոգեցին զաշխարհս, ըստ այնմ. «Գնացք գետոց ուրախ առնեն զքաղաքն Աստուծոյ<sup>2</sup>» (Սաղմ. ԽԵ 5): Եւ չորք են, որ բաշխեն զշնորհս, ցուցաւ ի չորրորդ գլուխն, առ կինն սամարացի:

### Վասն Հոգւոյն Սրբոյ

Բան. «Զի չեւ էր Յոգի, քանզի Յիսուս չեւ էր փառաւորեալ<sup>3</sup>» (Յովհ. Է 39):

**Մեկնութիւն<sup>4</sup>.** Երեք է իմացումն. նախ՝ ասէ զայս, զի երեւելի նշանաւ ոչ էին ընկալեալ առաքեալքն, այլ մասնաւոր ընկալան զՀոգին Սուրբ ի Քրիստոսէ, իշխանութեամբն, որ ետ նոցա զդեւս հանել (հնմտ. Մատթ. Ժ 1), եւ այլն: Երկրորդ. ասէ զայս վասն յայտնի պարզեւման Հոգւոյն Սրբոյ, զի յառաջագոյն եզական առեալ էր Հոգին Սուրբ Մարիամու Աստուծածնին եւ Յովհաննու Մկրտչին: Երրորդ. ասէ զայս վասն ժամանակցացն Քրիստոսի, զի յառաջագոյն<sup>5</sup> տուեալ էր զՀոգին Սուրբ նախահարց եւ մարգարէից:

Եւ աստ լինի երեք հարց.

Առաջին<sup>6</sup>. Թէ զի՞նչ զանազանի պարզեւք Հոգւոյն, որ տուաւ մարգարէիցն եւ առաքելոցն, այսինքն՝ ի հին եւ ի նորս:

Պատասխան. Ասեմք չորիւք. նախ՝ զի մարգարէիցն մասնաւոր էր, եւ առաքելոցն բոլոր լցումն. «Լցան, - ասէ, - Հոգւով Սրբով» (Գործք Բ 4): Երկրորդ. մարգարէիցն ազգումն ի շնորհաց Հոգւոյն եւ առաքելոցն՝ էութեամբ Հոգին Սուրբ, որպէս աղաւնակերպ էջ ի վերայ Քրիստոսի, սոյնպէս հրեղէն լեզուաւք էջ յառաքեալսն: Երրորդ. ի մարգարէսն երբեմն ազդէր Հոգին Սուրբ, եւ յառաքեալսն՝ միշտ. «Նստաւ, - ասէ, - ի վերայ նոցա» (Գործք Բ 3) եւ այլ ոչ մեկնեցաւ, նոյնպէս եւ յեկեղեցի սուրբ: Զորրորդ. ի հինն

<sup>1</sup> ասէ աւետարանիչս

<sup>2</sup> A B չեք առնեն զքաղաքն Աստուծոյ

<sup>3</sup> A B չեք

<sup>4</sup> A չեք

<sup>5</sup> C չեք եզական առեալ էր... զի յառաջագոյն

<sup>6</sup> C Առաջինն

միայն ի մարգարէսն եւ միոյ բանի եւ միայն ի տաճարն էր Հոգին Սուրբ, եւ ի նորս յամենայն եկեղեցիս եւ յամենայն հաւատացեալս բազմապատիկ շնորհաւք ծաւալեալ:

### Խաչն փառք կոչի

Երկրորդ հարց. Վասն է՞ր փառք կոչէ զխաչն Քրիստոսի, որպէս ասէ. «Չեւ էր Շոգի, քանզի<sup>1</sup> Յիսուս չեւ էր փառաւորեալ» (Յով. Է 39):

Պատասխան. Փառաւորիլն Քրիստոսի ոչ թէ յետոյ ստացեալ եղեւ, այլ վասն յայտնութեան փառացն ասէ, զի ի<sup>2</sup> սկիզբն յղութեան յարգանդի հոգւովն եւ մարմնովն փառաւորեալ էր, միանալովն աստուածային էութեամբն, այլ փառքն այն չէր ումեք յայտնի, այլ խաչիւն յայտնի եղեւ փառքն Քրիստոսի չորս կերպիւ.

Նախ՝ խաչիւն յայտնեցաւ, զի Յիսուս բնութեամբ Որդի Աստուծոյ է<sup>3</sup>, եւ այս հինգ կերպիւ. Նախ՝ խաւարմամբ լուսաւորացն, երկրորդ՝ շարժմամբ երկրի, երրորդ՝ պատառմամբ վիմաց, չորրորդ՝ բացմամբ գերեզմանաց, հինգերորդ՝ ցելմամբ վարագուրին: Այս առաջինն:

Երկրորդ. Խաչիւն կապեաց զսատանայ, եւ զմեղս, եւ զմահ, եւ զպարտիքն ելոյց եւ ազատեաց զհոգիսն:

Երրորդ. զի յետ խաչին հաւատացին ի նա եւ փառաւորեցաւ ի հաւատացելոց իւրոց:

Չորրորդ. զի խաչիւն բազմապատիկ երախտիքն, զոր արարմարդկան յայտնեցաւ, եւ մեք ընկալաք եւ ծանեաք, եւ որպէս զբազմերախտ եւ զբազմապարգեւ փառաւորեցաք:

Այլ եւ խաչիւն ել յերկինս եւ նստաւ ի փառս Աստուածութեան մարմնով իւրով: Եւ դարձեալ՝ խաչիւն զՀոգին պարզեւ մեք ընկալաք եւ ապա փառաւորեցաք:

Մին նման իմացիր եւ յորժամ բարձրանալ ասէ ի խաչին. Նախ՝ զի խաչն բարձր է յերկրէ: Երկրորդ. զի տեղին բարձր էր եւ գագաթն: Երրորդ. զի ի նմա բարձրացաւ, այսինքն՝ յայտնեցաւ եւ փառաւորեցաւ Աստուածութիւն նորա: Չորրորդ. զի խաչիւն ել յերկինս, որպէս սանդուղքն Յակոբայ (հնմտ. Ծննդ. Ի՛ւ 10-22):

Այս առ երկրորդն:

<sup>1</sup> A C զի

<sup>2</sup> B չիք

<sup>3</sup> C Որդի է Աստուծոյ

### Թէ յետոյ էջ Հոգին

Երրորդ հարց. Վասն է՞ր ոչ նախ քան զիսաչն էջ Հոգին Սուրբ յառաքեալսն:

Պատասխան. Վասն ութ պատճառի.

Նախ՝ զի Քրիստոս ընդ նոսա էր մարմնով, ոչ կարաւտանային Հոգւոյն, այլ յորժամ ել յերկինս, ապա մխիթարիչն էջ ի նոսա:

Երկրորդ. զի ոչ էր փառաւորեալ Քրիստոս ի ձեռն խաչին, ոչ էր պարտ պարզեւել զփառաւոր Հոգին, այլ յորժամ փառաւորեցաւ, փառաւորեաց զաշակերտսն փառաւոր Հոգւովն:

Երրորդ. մարգարէն ասէ. «Ել ի բարձունս խաչին գերեաց զգերութիւն հոգւոց, առ աւար եւ բաշխեաց պարզեւս եւ ետ զՀոգին Սուրբ ազգի մարդկան» (տես Սաղմ. Կէ 19):

Չորրորդ. զի նախ արար Փրկիչն մեր զիսաղաղութիւն յերկինս եւ յերկրի եւ ապա ետ զիսաղաղութիւն զՀոգին Սուրբ: Ցուցանէ, զի Հոգին Սուրբ ոչ իջանէ ի խոռվարարս, այլ «Սուրբ Հոգին փախչի ի նենգութենէ» (Իմաստ. Ա 5), ասէ:

Հինգերորդ. զթշնամին նախ խորտակեաց եւ ապա զՀոգին պարզեւեաց, զի պարտ է նախ զպիղծ Հոգին մերժել եւ ապա սուրբն ընակէ:

Վեցերորդ. զմիջնորմն ցանկոյն քակեաց, այսինքն՝ զմեղս եւ զկուապաշտութիւնս եւ ապա ետ զՀոգին Սուրբ, զի պարտ է զանհաւատութիւն մերժել եւ հաւատով զՀոգին Սուրբ<sup>1</sup> ընդունել:

Եւթներորդ. որպէս թագաւորք նախ հաշտին ընդ մահապարտս եւ ապա պարզեւս տան, նոյնպէս Քրիստոս նախ հաշտեցոյց զՀայր եւ ապա պարզեւս հաշտութեան ետ զՀոգին Սուրբ մարդկան, ըստ այնմ. «Հաշտեցաք ընդ Աստուծոյ մահուամբ Որդւոյ նորա» (Յօն. Ե 10):

Ութերորդ. զի նախ Հայր եղեւ ծանուցեալ, եւ ապա՝ Որդին մարմնացեալ, եւ զկնի՝ Հոգին<sup>2</sup> իջեալ: Եւ սոյնպէս Երրորդութիւն Սուրբ յայտնեցաւ, որպէս յայտ է ի մեկնչէդ:

Իսկ այլ վարդապետք դնեն տասն պատճառս, զի զկնի խաչին պարզեւեցաւ Հոգին.

Նախ՝ զի չարչարանքն Քրիստոսի եղեւ պատճառ Հոգւոյն պարզեւաց, եւ նախկին է պատճառն քան զպատճառելին: Ցայսմանէ ուսեալք յորժամ յիշեմք զՀոգին Սուրբ, խաչ յերեսս դրոշմեմք, զի խաչիւն իջանէ Հոգին:

<sup>1</sup> С չիք  
<sup>2</sup> С Հոգին Սուրբ

**ԵՐԿՐՈՐԴ.** զի թէ Քրիստոս այնպէս փառաւորեալ էր յառաջն, որպէս յետ խաչին, արգել եւ խափան լինէր խաչին չարչարանաց եւ փրկութեան մարդկան:

**ԵՐՐՈՐԴ.** զի պարտ էր Քրիստոսի, որ խոնարհութեամբ հովուէր զաշակերտսն, որ պարզամիտք էին, որպէս հաւ՝ զձագս, եւ մայր՝ զմանկունս, եւ թէ յառաջմէ զՀոգին ընկալեալք էին, ոչ էր պիտոյ հովուել զնոսա:

**ՉՈՐՐՈՐԴ.** զի աշակերտքն ճանաչիցեն զտկարութիւնս իւրեանց եւ գիտասցեն, թէ ոչ վասն իւրեանց արժանաւորութեան ընտրեցան, այլ ի Քրիստոսէ:

**ՀԻՆԿԵՐՈՐԴ.** զի գիտասցեն, թէ ի Քրիստոսէ պարգեւեցաւ, թէ յառաջն ընկալեալք էին, ասէին, թէ<sup>1</sup> յԱստուծոյ է եւ ոչ ի Քրիստոսէ:

**ՎԵցԵՐՈՐԴ.** որպէս սերմանելն յառաջ է, քան զպտուղն եւ զհունձն, վասն որոյ պարտ է նախ<sup>2</sup> զսերմ հաւատոյ<sup>3</sup> ընդունել նոցա եւ ապա փոքր-փոքր աճմամբ ի Քրիստոսէ հասանել պարգեւաց հոգւոյն եւ պտղաբերել:

**ԵՒԹՆԵՐՈՐԴ.** պարտ է<sup>4</sup> պատուականութիւն պարգեւաց Հոգւոյն սոյնպէս յայտնի լինել:

Եւ յայտնեցաւ երեք կերպիւ. նախ՝ ի կողմանէ պարգեւողին, զի յայնժամ նստեալ էր Քրիստոս մարմնով յաթոռ փառաւորութեան իւրոյ եւ պարգեւեց զՀոգին Սուրբ: Երկրորդ. ի կողմանէ ընդունողացն առաքելոցն,<sup>5</sup> որ պատշաճաւորեցան Հոգւոյն, զի փորձիւ գիտէին զվարդապետութիւն Քրիստոսի՝ զմահն եւ զյարութիւն եւ զայլն, զի թէ ոչ գիտէին, ոչ էին պատշաճ Հոգւոյն Սորբոյ: Երրորդ. ի կողմանէ այսմ<sup>6</sup> պարգեւի, զի առաւել փառաւք եւ հոչակելի եղել, սոյնպէս զի յորժամ ընկալան<sup>7</sup> զՀոգին, վաղվաղակի սքանչելիս առնէին, այնու զմեծութիւն իւրեանց ցուցանելով եւ Քրիստոսի վկայելով եւ զառաքեալսն լի ցուցանելով, եւ նոքա զայլսն:

Դարձեալ կարելի է եւ ութներորդ պատճառս ասել՝ առ ի ցուցանել, զի Հոգին Սուրբ ոչ ումեք առատապէս պարգեւի, եթէ ոչ Քրիստոս ի սիրտ նորա յատկապէս փառաւորեսցի, զի ոչ միայն

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> A B չեք

<sup>3</sup> C զհաւատոյ սերմն

<sup>4</sup> C էր

<sup>5</sup> C ընդունողաց առաքելոց

<sup>6</sup> B յայսմ կողմանէ

<sup>7</sup> C ընկալեալք

մեծ համարի զԱստուածութիւն նորա, այլ եւ զաղքատութիւն եւ զչարչարանս եւ զանարդանս նորա: Եւ յորժամ այս ամենայն քաղցրասցի ի ճաշակելիս մեր, յայնժամ առատապէս ընդունի զՀոգին Սուրբ:

Իններրորդ պատճառ. զի Հոգին Սուրբ վասն այնորիկ տուաւ, որ զցանկութիւն հաւատացելոցն ձգէ առ յերկնային փառսն, եւ յայնժամ լինի ցանկալի, որ կարելի լիցի, իսկ ներմարդութեամբն Քրիստոսի յայտնի եղեւ հասանել մարդկան յերկնային փառսն, ուստի ճահ իսկ էր, զի նախ Քրիստոս մտանէր ի փառս եւ ապա Հոգին Սուրբ պարզեւեալ լինէր:

Տասներրորդ. զի թէպէտ հասարակ է Ամենասուրբ Երրորդութեան Տէրութիւն, Աստուածութիւն եւ այլն ամենայն, սակայն վարդապետք եկեղեցւոյ դնեն զստեղծանելն՝ Հաւր, զտրոհելն՝ Որդւոյ, եւ զզարդարելն՝ Հոգւոյն Սրբոյ, որպէս ի ստեղծումն ասացաւ, սոյնպէս պարտ էր յառաջագոյն Հաւր յայտնի լինել եւ ապա Որդւոյ, եւ ապա Հոգւոյն Սրբոյ, որպէս ասաց Քրիստոս. «Մկրտեցէք զհեթանոսս յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ<sup>1</sup>» (տե՛ս Մատթ. ԻՇ 19):

#### Այսքան առ այս:

Յետ այսորիկ ճառէ աւետարանիչս զհերձուածս, որ վասն բանիցս այս անկաւ ի մէջ ժողովրդեանն:

Բան. «Ոմանք ասէին՝ սա է<sup>2</sup> ճշնարիտ նարգարէն» (Յովհ. Է 40):

Մեկնութիւն. Ոմանք ի ժողովրդենէն, որ կատարեալ հաւատացեալք էին, նոքա զՅիսուս Քրիստոս ասէին, եւ որք ոչ էին կատարեալք ի հաւատս, նոքա մարդարէ կոչէին եւ զայն եզական մարդարէն, զոր Մովսէս խաւսեցաւ, ոմանք ի հրէիցն հակառակէին, ոչ գոլ Քրիստոսս ասէին:

Բան. «Միթէ ի Գալիլէ<sup>3</sup> զալոց է Քրիստոս» (Յովհ. Է 41):

Մեկնութիւն. Տգիտութիւն եւ սուտն յայտնի երեւի, որ վերջին բանն զառաջինն սուտ առնէ, որպէս յայտնէ մեկնիչդ երեք կերպիւ<sup>cii</sup>.

#### Վկայութիւնք Գրոց վասն Քրիստոսի

Բան. «Ո՞չ Գիրք ասեն, թէ ի զաւակէ Դաւթի եւ ի Բեթղեհէմ<sup>1</sup> գեղջէ զալոց է Քրիստոս» (Յովհ. Է 42):

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> A չեք

<sup>3</sup> C Քրիստոսն

Մեկնութիւն. Եւ աստ լինի երեք հարց.

Առաջին. Թէ ուստի<sup>1</sup> գիտեմք զՔրիստոս<sup>2</sup> յազգէ Դաւթի:

Պատասխան. Բազում են վկայութիւնք վասն Քրիստոսի ի մարգարէսն, այլ թէ յազգէ<sup>3</sup> Դաւթի է, ցուցանի վեց իմն վկայութեամբ. նախ՝ Միքիա ասէ. «Եւ դու Բեթղեհէմ, երկիր Յուդայ, ի քէն ելցէ ինձ իշխան<sup>4</sup>» (տես Սիրիա Ե 2) եւ այլն: Երկրորդ. Երեմիա ասէ. «Յարուցից Դաւթի ի բոյս արդարութեան եւ իմաստուն եղիցի եւ<sup>5</sup> թագաւորեացէ եւ արասցէ իրաւունս եւ արդարութիւն ի մէջ Իսրայէլի եւ յաւուր նորա փրկեսցի Յուդա, եւ Իսրայէլ բնակեսցէ յուսով» (տես Երեմ. ԻԳ 5-6): Երրորդ. Եսայի ասէ. «Բղխեսցէ գաւազան յարմատոյն Յեսսեայ» (Եսայի ԺԱ 1) եւ այլն: Չորրորդ. Ինքն Դաւիթ ասէ. «Երդուաւ Տէր<sup>6</sup> Դաւթի [ճշմարտութեամբ եւ ոչ ստեաց նմա], ի պտղոյ որովայնի քումմէ նստուցից յաթոռ քո<sup>7</sup>» (Սաղմ. ճԼՍ 11): Եւ<sup>8</sup> զի մի կարծեսցի վասն Սողոմոնի գոլ, ասէ. «Զաւակ նորա յաւիտեան կացցէ, եւ աթոռ նորա՝ որպէս զարեգակն<sup>9</sup>» (Սաղմ. ԶԸ 37): Հինգերորդ. յայսմանէ յայտ է վասն Քրիստոսի, որ ասէին առ հասարակ՝ Դաւիթ գալոց է, Դաւիթ յայտնելոց է: Եւ վեցերորդ. եւս յայտնի, յորժամ Մարիամ յազգէ Դաւթի էր, եւ<sup>10</sup> զի Դուստր էր Յովակիմայ եւ զի Յովսէփայ էր խաւսեցեալ, պարտ էր, զի ծնեալն ի Մարիամայ<sup>11</sup> յազգէ Դաւթի լիցի:

Երկրորդ. Հնդէ<sup>12</sup> ոչ գիտէին զՔրիստոս որդի Դաւթի:

Պատասխան. Վասն երից. Նախ՝ վասն նախանձու եւ հակառակութեան ծածկէին, թէպէտ գիտէին: Երկրորդ. յերկար բնակելոյն ի նազարէթ, եւ այս ի բացեայ էր յերկրէն Յուդայ: Երրորդ. վասն աղքատութեան եւ խոնարհութեան ասէին՝ ոչ է սա Քրիստոսն:

Երրորդ. Հարց. Հնդէ<sup>12</sup> ոչ ասաց Քրիստոս զվկայութիւնս վասն իւր:

<sup>1</sup> A Բեթղեհէմ

<sup>2</sup> A B չեք

<sup>3</sup> C յազգէն

<sup>4</sup> A B չեք ինձ իշխան

<sup>5</sup> C չեք

<sup>6</sup> A B չեք

<sup>7</sup> A B չեք քումմէ նստուցից յաթոռ քո

<sup>8</sup> B չեք

<sup>9</sup> C զարեգակն եւ զլուսինն

<sup>10</sup> A B չեք

<sup>11</sup> C ի Մարիամու

**Պատասխան.** Վասն չորից. նախ՝ զի գիտէր, զի չէին<sup>1</sup> ընդունելոց եւ աւգտելոց: Երկրորդ. զի անարժանք էին, որպէս ասէ Եսայի. «Տեսանելով տեսցեն եւ մի՛ տեսցեն, զի թանձրացաւ սիրտ ժողովրդեան<sup>2</sup> [այդորիկ]» (Եսայի Զ 9-10): Երրորդ. զի նոքա կամէին զմեծագոյն հիմունս քրիստոնէական հալածել, ոչ վայել էր զսակաւ բան հաւատոյս յայտնել նոցա, զի ի Բեթղեէմ ծնաւ եւ ի Նազարէթ սնաւ, զի առագաստեալ լիցի ի չար մարդկանէ: Չորրորդ. զի ոչ վայել էր, թէ Քրիստոս զինքն ի թագաւորական ազգէ ասէր ծնեալ, զի պարտ էր վկայիւք փորձել, եւ նոքա չարութեամբն իւրեանց կարէին վկայիցն հակառակիլ:

Բան. «Եւ Եղեւ հերձուած ի մէջ ժողովրդեանն» (Յովի. Է 47):

**Մեկնութիւն.** Եւ գիտելի է, զի կարէր Քրիստոս այնպէս գալ<sup>3</sup>, որ ոչ լինէր հակառակութիւն, բայց ոչ վայել էր վասն երկու պատճառի. նախ՝ որպէս լոյս արեգականն ոչ առնէ խաղաղութիւն ընդ խաւարի, եւ գեղ բժշկութեան ոչ միաբանի ընդ ցաւսն, այլ մերժէ, սոյնպէս եւ գալն Քրիստոսի յաշխարհս, որպէս ասաց ինքն. «Ոչ Եկի տալ խաղաղութիւն յերկրի, այլ սուրբ» (Յովի. Է 43): Երկրորդ. թէ այնպէս էր եկեալ, մինչ ոչ լինէր հերձուած եւ հակառակութիւն, յայնժամ ծաղիկ հաւատոյն եւ առաքինութիւն քաջացն եւ բարին ոչ երեւէին:

Բան. «Ոնանք ի նոցանէ կամեցան ունել զնա, [այլ ոչ ոք միտեաց ի նա ձեռն]<sup>4</sup>» (Յովի. Է 44):

**Մեկնութիւն<sup>5</sup>.** Որպէս եւ ասացաւ նախ, վասն չորից ոչ կարէին ունել զնա. նախ՝ զի լինէր ահ ժողովրդեանն ի վերայ նոցա: Երկրորդ. յահէ հայեցուածոցն Քրիստոսի սարսեցին: Երրորդ. լինէր երբեմն, որ կամք չարութեանցն փոխէր: Չորրորդ. երբեմն<sup>6</sup> դողային զգայարանք նոցա, ձեռք եւ ոտք ի մերձենալն նենդութեամբ առ Քրիստոս:

Բան. «Եւ Եկին անդէն սպասաւորքն եւ ասեն սոքա ցնոսա. “Ընդէ՞ր ոչ ածէք զնա այսր”» (Յովի. Է 45-46):

**Մեկնութիւն.** Քանզի յայն սակս առաքեցին, զի կալցեն զնա:

Բան. «Եւ նոքա ասեն. “Ոչ Երբէք [այնպէս] խաւսեցաւ մարդ, որպէս այրն այն”» (Յովի. Է 46):

<sup>1</sup> A B չեն

<sup>2</sup> A B չեք սիրտ ժողովրդեան, C ժողովրդեանն

<sup>3</sup> A B չեք

<sup>4</sup> C ունել զնա, եւ ոչ կարացին

<sup>5</sup> A չեք

<sup>6</sup> A B չեք

<sup>7</sup> A B չեք զնա այսր

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Այս չորրորդն է, որ ի վարդապետութենէն ցուցանի, զի<sup>1</sup> Աստուած է Քրիստոս. ի վկայութենէ սպասաւորացն, թէ՝ «Ոչ երբէք խաւսեցաւ մարդ, որպէս այրն այն», իբրու թէ ասել. «Այնպէս գեղեցիկ խաւսի, մինչ զի ոչ երեւի սոսկ մարդ, այլ գերի ի վերոյ քան զմարդ»: Աստուստ երեւի, զի Քրիստոս այլ բանս ասաց ընդ սպասաւորսն, եւ նոքա զկերպ խաւսելոյն<sup>2</sup> ասեն, այլ զբանն ոչ յիշեն, թէ զայս ինչ<sup>3</sup> խաւսեցաւ:

Տե՛ս, նախ զինուորք էին, երկրորդ՝ կաշառեալք, երրորդ՝ հեթանոսք, չորրորդ՝ ոչ գիտէին զաւրէնս, հինգերորդ՝ ոչ էին տեսեալ նշանս, վեցերորդ՝ եւ ոչ երկար վարդապետել, եւ այնպէս փութով հաւատացին, իսկ քահանայքն ամենայնի սոցա ընդդէմ եւ ոչ հաւատացին Քրիստոսի:

Բան. «Մի՞թէ եւ դուք մոլորեցարուք<sup>4</sup>» (Յովի. Է 47):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Որք ի Քրիստոս հաւատացին, մոլորեալ ասէին, յայտ է, թէ զբարին չար ասեն եւ զլոյսն՝ խաւար, եւ այնու ցուցանէին, թէ փարիսեցիքն, որք կրաւնաւորք եւ դպիրք էին, ոչ հաւատացին ի նա, այլ տգէտ եւ յիմար ժողովուրդն, վասն այն ասեն.

Բան. «Մի՞թէ յիշխանաց ոք հաւատաց ի նա<sup>5</sup>, այլ խաժամուժ անբոխն» (Յովի. Է 48-49):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Եւ սուտ են, զի նիկողիմոս իշխան էր եւ վարդապետ եւ հաւատացեալ էր, եւ այլք բազումք<sup>6</sup> ի ծածուկ<sup>7</sup> հաւատացեալք: Խաժամուժ խառնիճաղանձ ժողովուրդն է, որ ծերք եւ տղայք լինին, եւ ծերք քան զտղայս անմտագոյնք, որ ոչ գիր գետեն եւ ոչ զաւրէնս:

Բան. «Եւ նզովեալք են» (Յովի. Է 49):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Որպէս գրեալ էր յԱւրէնս. «Անիծեալ [ամենայն մարդ], որ ոչ կացցէ<sup>8</sup> յամենայն բանս<sup>9</sup> աւրինացն» (Մես Բ Օր. Իւ 26):

Բան. «Պատասխանի ետ նիկողիմոս, որ մի էր ի նոցանե» (Յովի. Է 50):

<sup>1</sup> A B թէ

<sup>2</sup> C պատասխանոյն

<sup>3</sup> A B չեք

<sup>4</sup> C մոլորեցայք

<sup>5</sup> C յիշխանացն եւս հաւատաց

<sup>6</sup> C բազումք էին

<sup>7</sup> B չեք ի ծածուկ

<sup>8</sup> A B կայցէ

<sup>9</sup> A B չեք

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Մի էր ըստ իշխանութեան, զի եպիսկոպոս էր եւ վարդապետ, այլ ոչ ըստ չարութեան, զի նա հաւատացեալ էր եւ բարեմիտ, եւ նոքա՝ չարք եւ անհաւատք:

Բան. «Միթէ աւրէնքն մեր դատի՞ն [զմարդ]» (Յովհ. Է 51):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Այսինքն՝ զի նախ հարցանեն եւ<sup>1</sup> զվկայս<sup>2</sup> կացուցանեն եւ ապա դատապարտեն: Զայս ասէր իմաստութեամբ, զի յաւժարեսցին նոքա կոչել գՔրիստոս եւ լսել ի նմանէ: Մի՞թէ հաւատային, որպէս ինքն հաւատացեալ էր, եւ նոքա ոչ ընկալան զիրատն, այլ բարկացան.

Բան. «Միթէ եւ դո՞ւ [եւս] ի Գալիլէ [իցես]<sup>3</sup>» (Յովհ. Է 52):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Այսինքն՝ աշակերտ գալիլեացւոյն, զի նախատանաւք ասէին:

Բան. «Մարգարէ ի Գալիլէ ոչ յառնէ» (Յովհ. Է 52):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Եւ սուտ ասեն, զի շատք ի մարդարէիցն անտիէին, որպէս եղիսէ եւ Տուբիաս եւ Դեբովրա, լինի թէ եւ այլք եւս, իսկ թէ վասն եղական<sup>4</sup> մարդարէին ասէին, որ էր Մեսիայն, ըստ այսմ եւ<sup>5</sup> սուտ են, զի եսայի գրեալ է, զի Քրիստոս նազովրեցի կոչեսցի: Եւ յայտ է, զի գալիլեացի լինէր, զի նազարեթ ի Գալիլեա էր, զի ըստ եբրայեցւոցն թարգմանութեան սոյնպէս գրեալ է եսայի ժԱ «Ելցէ նազովրեցի<sup>6</sup> յարմատոյ անտի» (հմնտ. Եսայի ԺԱ 1), եւ զայս վկայութիւն կարող էր ի մէջ ածել նիկողիմոս, զի աւրէնսգէտ էր, սակայն ոչ իշխեաց:

### Թէ մարդարէ ոչ է Քրիստոս

**Հարց<sup>7</sup>.** Պա՞րտ է Քրիստոսի մարդարէ ասել, թէ ոչ:

Պատասխան. Պարզաբար մարդարէ ոչ ասեմք Քրիստոսի, այլ բաղդատութեամբ, ուստի յայտ է, որք կատարեալ ունէին զհաւատն, ասէին՝ սա է Քրիստոսն, եւ անկատարքն հաւատով ասէին՝ ճշմարիտ մարդարէն է: Նախ՝ զմարդարէութիւն մասնաւոր գիտութիւն է շնորհաց, իսկ գիտութիւն ի Քրիստոս լրումն է շնորհաց անդաման յարգանդին միութեամբ<sup>8</sup> Բանին: Երկրորդ. նսեմաբար գիտութիւն հանճարոյն, ուստի յայտ է, զի երանեալքն փոխի

<sup>1</sup> С չիք

<sup>2</sup> А В վկայս

<sup>3</sup> В С գալիլեացի ես

<sup>4</sup> С եղական յատուկ

<sup>5</sup> В չիք

<sup>6</sup> С նազարացի

<sup>7</sup> А В չիք

<sup>8</sup> С միաւորութեամբ

մարգարէութիւն ըստ Պաւղոսի, իսկ գիտութիւն ի Քրիստոս էր պայծառ լուսաւորութիւն քան զերանելեացն եւ զհրեշտակացն, ապա ուրեմն Քրիստոս ոչ է մարգարէ, այլ բաղդատութեամբ կոչի մարգարէ, որպէս առաքեալք եւ քահանայապետ, նոյնպէս եւ մարգարէ։ Նախ՝ զի մարգարէութիւն է ծածկելոց գիտութիւն, այսինքն՝ ներկայի, անցելոյն եւ հանդերձելոյն, եւ զայս գիտութիւնս ունէր Քրիստոս։ Երկրորդ. զի մարգարէն զպատգամս Աստուծոյ բերէ, եւ սոյնպէս կոչի Քրիստոս, ըստ այնմ. «ԶԱՍՏՈՒԱԾ ոչ ոք ետես երբէք<sup>1</sup>, բայց Միածինն, նա պատմեաց» (Յովհ. Ա 18):

Իսկ որք մինչ ի խաչն մարգարէ ասեն զՔրիստոս եւ ուղեւոր, այսինքն՝ ճանապարհորդ, եւ յետ խաչին ըմբռնող, նոքա կատարեալ ուրացողք են եւ նեստորականք վասն չորից. նախ՝ զի մեզ հաւասար ցուցանեն զՔրիստոս եւ ոչ ինչ առաւել, զի եւ<sup>2</sup> մեք ի հասարակ յարութեան փոփոխիմք։ Երկրորդ. յարգանդէ ոչ ասեն Աստուծած եւ անապական մարմնով ծնեալ։ Երրորդ. ի վերնատունն ոչ ասեն անապական մարմին բաշխեալ, այլ ապականացու, որ ոչ վրկէ զճաշակողս։ Զորրորդ. զի ասէ Ալպէրտ վարդապետն նոցա<sup>3</sup>, թէ Քրիստոս էր համանգամայն ճանապարհորդ եւ ըմբռնող ի կէտ յղութեան իւրոյ։

Արդ, ճանապարհորդ էր ըստ մարմնոյ տնաւրէնութեան մահուամբն եւ յարութեամբն մտանել ի փառս, եւ ըմբռնող, զի բանական իմացմամբ մտաց զմայլեալ էր միաւորութեամբ աստուծային փառաց, եւ այսու փառաւք ըմբռնէր Քրիստոս զամենայն հունաւորս ներգործութեամբ եւ ճանաչէր զամենայն անհունս գերազանց տեսութեամբ։

Այսքան առ այս։

<sup>1</sup> C չիք

<sup>2</sup> C չիք

<sup>3</sup> C ֆռանգաց

## Գլուխ Հ

**Եւ աստ է աւելորդ աւետարանն, որ վասն կնոջն շնացելոյ<sup>1</sup>,**  
զոր մեք ի վերջոյ Աւետարանիս դիցուք զմեկնութիւն նորա<sup>ciii</sup>:

**Եւ աստ ճառէ դարձեալ վասն լուսաւոր վարդապետութեան  
Քրիստոսի եւ ասէ.**

Բան. «Դարձեալ խաւսեցաւ Յիսուս» (Յովհ. Ը 12):

**Մեկնութիւն. Թիւս այս ըստ կարգին է ութներորդ գլուխ<sup>2</sup> եւ  
չորրորդ ըստ հատորին:**

**Սոյնպէս, զի որ ոք Աստուծոյ զուգի տեւողութեամբ եւ յաւի-  
տենականութեամբ Աստուած է, իսկ Քրիստոս սոյնպէս հաւասա-  
րի Աստուծոյ, ապա ուրեմն Աստուած է Քրիստոս:**

**Եւ զՔրիստոսի յաւիտենականութիւն<sup>3</sup> ցուցանէ աստ չորս  
կերպիւ. նախ՝ զի յետ արձակման կնոջն շնացելոյ տրամաբանու-  
թիւն եղեւ ի մէջ Քրիստոսի եւ դպրացն եւ փարիսեցւոցն, եւ  
Քրիստոս պատասխանի ետ. «Ես ի Վերուստ եմ եւ ոչ յայսմ աշխարհ<sup>4</sup>»  
(Յովհ. Ը 23): **Երկրորդ. ամենայնի արարչութեամբ, զի որ զամենայն  
առնէ, յաւիտենական է՝ ասելովն. «Ես եմ նախ, - որ է սկիզբն, - եւ որ  
խաւսիմս ընդ քեզ» (Յովհ. Ը 25): **Երրորդ. ի մշտնջենաւորութիւն պար-  
գեւելոյն՝ ասելով. «Եթէ ոք զբանն իմ պահեսցէ, զնահ մի՛ տեսցէ յաւի-  
տեամ<sup>5</sup>» (Յովհ. Ը 51), եւ այլն: **Չորրորդ. յառաջագոյն գոլոյն Քրիս-  
տոսի, քան զԱբրահամ:********

**«Դարձեալ խաւսեցաւ Յիսուս». Երեք քան կամի վարդապետել.  
նախ՝ «Ես եմ լոյս աշխարհի» (Յովհ. Ը 12): **Երկրորդ. «Որ գայ զիես իմ, ի  
խաւարի մի՛ մնասցէ» (տես Յովհ. Ը 12): **Երրորդ. «Այլ ընկալցի զլոյսն կե-  
նաց» (Յովհ. Ը 12):******

**Եւ զառաջինն աստ ճառէ, յորժամ ասեն ցնա փարիսեցիքն:**  
**Զերկրորդն անդ, յորժամ ասէ<sup>6</sup> ցնոսա դարձեալ Յիսուս. «Երթան եւ  
խնդրիցեք զիս» (Յովհ. Ը 21): **Զերրորդն անդ, ուր ասէ. «Ամէն, ամէն ա-  
սեմ ձեզ, եթէ ոք զբանն իմ պահեսցէ, զնահ մի՛ տեսցէ» (Յովհ. Ը 51):****

<sup>1</sup> А В չեք որ վասն կնոջն շնացելոյ

<sup>2</sup> А В չեք

<sup>3</sup> С յատկութիւն

<sup>4</sup> А աշխարհի

<sup>5</sup> А В չեք

<sup>6</sup> В կրկ

### Թէ լոյս է Քրիստոս

**Իսկ աստ ցուցանէ նախ վասն լուսաւոր եւ մեծ վարդապետութեան Քրիստոսի, որպէս ասէ.**

Բան. «Դարձեալ խաւսեցաւ [ընդ նոսայ] Յիսուս եւ ասէ. «Ես եմ լոյս աշխարհի<sup>1</sup>»» (Յովի. Ը 12):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Եւ վարդապետութիւն Քրիստոսի մեծ է վասն երեք պատճառի.**

**Նախ՝ վասն յատուկ մեծութեան Քրիստոսի, որպէս ասէ. «Ես եմ լոյս աշխարհի», զի այլ սուրբք ոչ են լոյս, այլ լուսաւորեալք յայսմ լուսոյ, ըստ այնմ. «Եր լոյսն ճշնարիտ, որ լուսաւոր առնէ զամենայն նարդ, որ գալոց է<sup>2</sup> աշխարհ<sup>3</sup>» (Յովի. Ա 9):**

**Երկրորդ. ասէ վասն բարութեան այսմ լուսոյ.**

Բան. «Որ գայ զկնի իմ, ի խաւար մի՛ մնասցէ» (տե՛ս Յովի. Ը 12):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Զկնի Քրիստոսի երթալն է հաւատով եւ սիրով հետեւիլ նմա, եւ որ այնպէս զհետ Քրիստոսի երթայ, ոչ գնայ ընդ խաւար մեղաց եւ անգիտութեան եւ ոչ հասանէ ի խաւար դժոխոցն:**

**Երրորդ. ասէ վասն պտղոյ այսմ լուսոյ:**

Բան. «Այլ ընկալցի զլոյսն կենաց» (Յովի. Ը 12):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Զի աստ հանճար մեր լուսաւորի ի տեսանելն զԱստուած եւ կամք մեր վերասցի ընդունել զԱստուած կատարելապէս, եւ անդ՝ կեանքն յաւիտենական, որ է լոյսն անստուեր եւ անմահութեան:**

**Դարձեալ՝ որպէս ասէ եսայի. «Զերկիր Զաքուղոնի լոյս մեծ ծագեալ<sup>4</sup>» (ինմտ. Եսայի Թ 1-2), այսինքն՝ ոչ մարգարէ, այլ լոյս ի լուսոյն, ո՛չ ի Գալիլէէ, այլ յերկնից, ո՛չ Իսրայէլի միայն, այլ ամենայն հաւատացելոց:**

**Դարձեալ՝ չորս ինչ ցուցանէ. նախ՝ ասելն՝ Ես, ցուցանէ զմիաւորութիւն Բանին եւ մարմնոյն: Երկրորդ՝ եմ, զի մշտնջենաւոր է: Երրորդ՝ լոյս բնութեամբն: Զորրորդ. աշխարհի, զմեծութիւն, որպէս արեգական լոյս:**

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> B չեք որ գալոց է

<sup>3</sup> A B չեք

<sup>4</sup> C ծագեաց նոցա

### Վասն վկայութեան

Բան. «Ասեն ցևա փարիսեցիքն. “Դու վասն անձին քո վկայես, եւ [վկայութիւն քո] չէ ճշմարիտ<sup>1</sup>» (Յովի. Ը 13):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** **Այսինքն**<sup>2</sup> ոչ է հաստատ կամ ոչ է ընդունելի: Եւ գիտելի է, զի վկայութիւն հաստատի եւ ճշմարտի վասն ստոյդ ճանաչմանն, եւ վասն այնորիկ վկայութիւն մարդոյ վասն ինքեան ոչ է հաստատ, զի թէպէտ մարդ ստուգապէս զինքն<sup>3</sup> ճանաչէ, սակայն մարդ զինքն միշտ առաւել սիրէ<sup>4</sup> անկարգաբար եւ վասն անչափ սիրոյն կուրանայ ճանաչումն իւր, վասն այնորիկ վկայութիւն նորա անհաստատ լիցի, իսկ Աստուած զինքն եւ զամենայն ստուգապէս ճանաչէ, եւ ի սէր նորա թիւրութիւն ոչ է, վասն այնորիկ վկայութիւն նորա վասն ինքեան ճշմարիտ է: Եւ վկայութիւն մարդոյ վասն Աստուծոյ անհաստատ է վասն պակասութեան ճանաչմանն, ապա ուրեմն վկայութիւն ճշմարիտ է<sup>5</sup>, թէպէտ վասն ինքեան վկայէ, զի ոչ ունէր պակասութիւն ի<sup>6</sup> ճանաչումն եւ ոչ անկարգութիւն սիրոյ, ո՛չ յԱստուածութիւն եւ ո՛չ ի մարդկութիւն իւր, որպէս ասէ.

Բան. «Թէպէտ [եւ ես] վկայեմ վասն իմ<sup>7</sup>, ճշմարիտ է, զի գիտեմ՝ ուստի եկի եւ յո՞ երթամ<sup>8</sup>» (Յովի. Ը 14):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** **Այսինքն**<sup>9</sup> կատարելապէս<sup>10</sup> ճանաչեմ զՀայր, ուստի ելի եւ եկի յաշխարհ վասն փրկութեան մարդկան, եւ առ Հայր վերստին դառնամ: Այսու յայտնի է նախկին ասացեալն, այսինքն՝ զի Քրիստոս լոյս է էութեամբ, զի նա է Բանն ելեալ ի Հաւրէ, որպէս լոյս ի լուսոյ: Եւ զայս յայնժամ ոչ ծանեան հրէայքն, վասն այնորիկ ասէ.

Բան. «Դուք ո՛չ գիտէք ուստի գամ, կամ յո՞ երթամ» (Յովի. Ը 14):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Զի ոչ գիտէին զՔրիստոսի Աստուածութիւն: Իսկ թէ ոք ասիցէ՝ գրեալ է յԱռակն. «Դովեսցէ զքեզ ընկերն եւ մի՛ քո բերան» (Առակ. Իւ 2):

<sup>1</sup> A B չեք քո վկայես, եւ վկայութիւն քո չէ ճշմարիտ

<sup>2</sup> B չեք, C Զի

<sup>3</sup> C չեք

<sup>4</sup> C չեք

<sup>5</sup> C չեք ճշմարիտ է

<sup>6</sup> C չեք պակասութիւն ի

<sup>7</sup> C թէպէտ վկայութիւն իմ

<sup>8</sup> B չեք յո՞ երթամ

<sup>9</sup> B չեք

<sup>10</sup> C չեք այսինքն՝ կատարելապէս

**Պատասխան.** Ասեն վարդապետք, թէ փառասիրութեամբ գովելն մեղք է, այլ ճշմարտութեամբ գովութիւն, որ խափանէ զստութիւն եւ վասն հասարակաց աւգտի, առաքինի գործ է:

Եւ գիտելի է, զի վկայութիւն ինչ թիւրի վասն երեք պատճառի. նախ՝ վասն տգիտութեան հանճարոյն: Երկրորդ. վասն փառասէր կամացն: Երրորդ. յորժամ բանն եւ իրն ոչ յարմարի, վկայութիւն չէ ընդունելի:

Իսկ Քրիստոսի վկայութիւն ճշմարիտ է. նախ՝ զի գիտէր ուստի եկն՝ ի Հաւրէ, եւ յո՞ երթայ՝ առ Հայր: Երկրորդ. զի անախտ էր կամքն Քրիստոսի եւ ազատ ի մարդահաճութենէ<sup>1</sup>, զի զճմարիտն ասաց, զի էակից էր Հաւր եւ բնութեամբ Որդի Աստուծոյ: Երրորդ. զի ասաց. «Ես են լոյս աշխարհի» (Յովի. Ը 12), եւ այլն: Եւ ճշմարտապէս Բանն եւ իրն հաւասարեցան, զի լուսաւոր կեանս տայ հաւատացելոց իւրոց, մանաւանդ զառհաւատչեայն աստ զկոյրսն լուսաւորէր, ապա ուրեմն ճշմարիտ է վկայութիւն Քրիստոսի վասն իւր:

Բան. «Դուք ըստ մարմնոյ դատիք» (Յովի. Ը 15):

**ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ.** Զորս կերպիւ է. նախ՝ զի ոչ դատէին հոգւով եւ ոչ կամաւքն Աստուծոյ, այլ ըստ չարութեան իւրեանց, զի աստ մարմնոյ անուամբ զչարութիւն մեղացն ասէ: Երկրորդ. զի զՔրիստոս վասն զգալի կերպի եւ աղքատութեան տկար մարդ կարծին: Երրորդ. զի ըստ արտաքին կեղեւոյ աւրինացն քննէին եւ դատէին զՔրիստոս, եւ ոչ ըստ իմացման մտացն: Զորրորդ. դատելն ըստ մարմնոյ է, որպէս հերձուածողք բաժանեն զմարմինն ի Բանէն եւ հաւասար մեզ սոսկ մարդ եւ բնութիւն մարդոյ որոշեալ քննեն:

Բան. «Ես ոչ դատիմ եւ ոչ զոք» (Յովի. Ը 15):

**ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ.** Այսինքն<sup>2</sup> ոչ դատիմ, որպէս դուք ըստ արտաքին երեւմանն, այլ իրեւ Աստուած ի սիրտս նայիմ<sup>3</sup>: Դարձեալ՝ յառաջին գալուստոս<sup>4</sup> ոչ արհամարհեմ եւ ոչ դատեմ զոք, այլ կերպ ցուցանեմ, այլ ի վերջին գալուստն դատեմ<sup>5</sup>:

Բան. «Եւ դատաստանմ<sup>6</sup> իմ ճշնարիտ է» (Յովի. Ը 16):

**ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ.** Այսինքն՝ հաստատուն:

<sup>1</sup> Ծ ծեռագրում առաջին և երկրորդ բաժանումների բացատրության տեղերը շփոթել:

<sup>2</sup> Բ չեք

<sup>3</sup> Ծ ի սիրտս հային

<sup>4</sup> Ծ գալուստն

<sup>5</sup> Ծ գալստեանն դատին

<sup>6</sup> Ծ դատաստան

**Եւ ասէ զպատճառն.**

Բան. «Զի չեմ միայն, այլ ես, եւ որ առաքեացն զիս՝ Յայր<sup>1</sup>» (Յովի. Ը 16):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Նախ՝ զանորոշելի անձինքն նշանակէ, քանզի մինն աստուածային<sup>2</sup> անձանցն միշտ ի միւսն կայ, եւ ոչ կարեն յատուկ գոլ, վասն այնորիկ զի համագոյակիցք են միմեանց, վասն այն Հայր ընդ Քրիստոսի էր միշտ, եւ զոր ինչ Քրիստոս դատի, նա դատի: Դարձեալ՝ զի մի է բնութիւն եւ իմաստութիւն եւ կամքն եւ փառքն եւ այլն, սոյնպէս մի է եւ վկայութիւն իւր եւ Հաւրն, որպէս ասէ:

### Վասն երկու եւ երեք վկայից

Բան. «Եւ յարենս<sup>3</sup> ծեր գրեալ է» (տե՛ս Յովի. Ը 17):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Յերկրորդ Աւրէնքն ասէ՝ Ժէ, թէ երկուց մարդոց վկայութիւն ընդունելի է իբրեւ ճշմարիտ եւ հաստատ (հնմտ. Բ Օր. ժե 6-7), թէպէտ սակաւ ունիցին զճանաչումն եւ կամք նոցա չար ցանկութեամբ կարէ խոտորիլ, ապա ուրեմն առաւել հաստատուն է վկայութիւն Հաւր եւ Որդւոյ<sup>4</sup>, որք ոչ ունին պակասութիւն ճանաչման եւ ոչ թիւրութիւն կամաց: Ասեն ոմանք, թէ երկու եւ երեք վկայ կացուցաւ ի խորհուրդ երից անձնաւորութեանցն Աստուծոյ, ըստ այնմ. «Երեք են, որ վկայեն յերկինս՝ Հայր, Բանն եւ Հոգին Սուրբ» (հնմտ. Ա Յովի. Ե 8): Եւ ոմանք ասեն, թէ երկու վկայն կարեն ստել եւ չարանալ կամաւք, որպէս ծերքն Շուշանայ (տե՛ս Դան. ԺԳ), եւ երեքն՝ ոչ:

Դարձեալ՝ յորժամ<sup>5</sup> ի մին կողմանէ մին լինի վկայ եւ ի միւս կողմանէն<sup>6</sup> երկու, երկուքն առաւել վկայեն քան զմինն, եւ որքան առաւել են վկայքն, առաւել լինի հաստատուն: Եւ դարձեալ՝ յորժամ երկու վկայք լինին եւ մին վկայեալն,<sup>7</sup> սոյնպէս երեք եղեն վկայք միոյ Բանին:

Այս ըստ մարդկան վկայից:

Այլ առ Աստուած մինն յերից անձանցն հաւատարիմ վկայ է. նախ՝ զի իւրաքանչիւր յաստուածային<sup>8</sup> անձանցն այնպէս հաւա-

<sup>1</sup> A B չեք զիս՝ Յայր

<sup>2</sup> A յաստուածային

<sup>3</sup> C յօրէնս իսկ

<sup>4</sup> C Հոգւոյն Որդոյն

<sup>5</sup> C չեք

<sup>6</sup> B կողմանէ

<sup>7</sup> B վկայելն

<sup>8</sup> B աստուածային

**տարիմ** է, որպէս երեքեանն, զի զմի եւ զնոյն զիմաստութիւն<sup>1</sup> եւ զբարութիւն ունին: Երկրորդ. զի Քրիստոս այնու ցուցանէ զինքն ճշմարիտ Աստուած եւ հաւասար Հաւր, զի վկայութիւն իւր ճշմարիտ է, իսկ մարդոյ վկայութիւն վասն իւր չէ ճշմարիտ, եւ յայտ է ի մեկնչէդ<sup>2</sup>: Դարձեալ՝ կարեմք ասել, զի Հաւր եւ Քրիստոսի վկայութիւնքն էին բազմադիմի գործ սքանչելեացն:

**Զկնի ճառէ զդիմադրութիւն հրէիցն ընդդէմ Բանին Քրիստոսի.**

Բան. «Ասեն ցնա. “Ո՞ւր է Յայր քո”» (Յովի. Ը 19):

**Մեկնութիւն. Իբրու ասել, թէ<sup>3</sup> Հայր քո ոչ այնպիսի մեծ ոք լինիցի, զի պարտ է նմա հաւատալ, զի զՔրիստոս սոսկ մարդ Համարէին եւ որդի Յովսեփայ, զոր եւ աղքատ գիտէին:**

Բան. «Ոչ զիս գիտէք եւ ոչ զՅայրն իմ<sup>4</sup>» (Յովի. Ը 19):

**Մեկնութիւն. ԶՔրիստոս Աստուած ոչ գիտէին, վասն այնորիկ եւ զՀայրն ոչ գիտէին:**

Բան. «Եթէ զիս գիտէիք, եւ զՅայրն [իմ] թերեւս [գիտէիք]» (Յովի. Ը 19):

**Մեկնութիւն. Թէպէտ հրէայքն մեծագոյն<sup>5</sup> ճանաչումն Աստուծոյ ունէին քան զհեթանոսս, ըստ այնմ. «Յայտնի է ի Հրէաստանի Աստուած» (Սաղմ. ՂԵ 2), եւ այլն, սակայն զխորհուրդ եռանձնեայ Աստուածութեան ոչ ճանաչէին, զոր Աւետարանն ուսուցանէ, վասն որոյ ոչ հրէայքն եւ ոչ տաճիկքն<sup>6</sup> զԵրրորդութիւն ոչ ճանաչեն, զի ոչ ունին զԱւետարանն:**

Եւ չորիւք գիւրաւ ճանաչի Որդւովն Հայր. նախ՝ առընչութեամբն, զի Որդին Հաւրն է Որդի: Երկրորդ. տեսանելեաւն անտեսն ճանաչի: Երրորդ. ի պատճառելոյն զպատճառն ճանաչեմք եւ<sup>7</sup> գտանեմք: Չորրորդ. ի հաւասարէն զհաւասարն գիտեմք, որպէս մեկնիչդ երեք աւրինակ տայ հաւասարութեան<sup>civ</sup>. վասն ընութեան, վասն իմաստութեան եւ վասն բարի կամացն<sup>8</sup>:

Բան. «Զայս ասաց ի տան զանձին» (Յովի. Ը 20):

**Մեկնութիւն. Ոչ զայն ասէ, ուր զգանձանակն դնէին<sup>9</sup>, եւ ոչ, ուր զարծաթն փոխէին ի տաճարին, այլ տուն զանձի ասի տեղին**

<sup>1</sup> Հ զի մի եւ զնոյն իմաստութիւն

<sup>2</sup> Հ յայտնի է ի մեկնիչդ

<sup>3</sup> Հ չիք

<sup>4</sup> Ա չիք

<sup>5</sup> Բ չիք

<sup>6</sup> Ա Բ ոչ իրեայն եւ ոչ տաճիկն

<sup>7</sup> Հ չիք ճանաչեմք եւ

<sup>8</sup> Հ բարեկամացն

<sup>9</sup> Հ գորին

այն, յորում պահեալ լինէր նուէրք ժողովրդեանն ի շինուածս տաճարին եւ ի պէտս աղքատաց<sup>1</sup>:

Եւ զտեղիս զայս<sup>2</sup> յիշէ աւետարանիչս վասն երից. նախ՝ առ ի ցուցանել զհամարձակ եւ զյայտնի վարդապետութիւն Քրիստոսի: Երկրորդ. առ ի հաւատարմութիւն եւ ի ստուգութիւն պատմութեանս: Երրորդ. առ ի ցուցանել զաստուածային զաւրութիւն, զի թէպէտ ի տեղին յայն<sup>3</sup> դիրաւ կարէին ըմբռնել զՔրիստոս, որք կամէին սպանանել, այլ խափանեցան ի զաւրութենէ Քրիստոսի:

Բան. «Զի չեւ էր հասեալ ժամ նորա» (Յովհ. Ը 20):

Մեկնութիւն. Այսինքն<sup>4</sup> ի նմանէ նախասահմանեալ ժամանակն<sup>5</sup>, զի յորժամ կամեցաւ, ըմբռնեցաւ եւ ոչ՝ յառաջ:

#### Քրիստոս կամաւ մեռաւ

Հարց. Վասն է՞ր կամաւ մեռաւ Քրիստոս:

Պատասխան. Ասացաւ ի վերոյ վասն չորս պատճառի, եւ այժմ ասացից, զի մահն Աղամայ եւ որդւոց նորա եւ Տեառն մերոյ<sup>6</sup> որոշեսցի, զի մահն Աղամայ եղեւ ի ներգործութենէն, յորժամ եկեր զպտուղն, զի թէ ոչ էր կերեալ, ոչ էր մեռեալ: Եւ մահ որդւոց նորա է ի հարկէ եւ՝<sup>7</sup> ակամայ եւ անդիտութեամբ մեր, իսկ մահն Քրիստոսի է կամաւոր եւ գիտութեամբ, զի թէ ոչ էր կամեցեալ, ոչ էր ըմբռնեալ:

Յորժամ ճառեաց աւետարանիչս զբանն Քրիստոսի, թէ որպէս էր լոյս աշխարհի, այժմ ասէ, զի հետեւողք նորա ոչ երթան ի խաւար:

Բան. «Ասէ ցնոսա դարձեալ Յիսուս» (Յովհ. Ը 21):

Մեկնութիւն<sup>8</sup>. Աստ նախ ցուցանէ, թէ նոքա, ընդ որս խաւսէր, պակասեալ էին յայսմ լուսոյ, որպէս<sup>9</sup> զգալի արեգակն յորժամ ելանէ յայսմ կիսագնդէ, առ մեզ խաւար լինի, նոյնպէս Քրիստոս, որ արեգակն է արդարութեան, յորժամ մահուամբ ել

<sup>1</sup> Ա այլ տուն գանձի ասի տեղին այն

<sup>2</sup> Ա Բ այս

<sup>3</sup> Բ այն

<sup>4</sup> Բ չեք

<sup>5</sup> Ծամն

<sup>6</sup> Բ չեք եւ Տեառն մերոյ

<sup>7</sup> Ծամն

<sup>8</sup> Բ Մեկնութիւն. Ասէ ցնոսա դարձեալ Յիսուս ի Մեկնութիւն

<sup>9</sup> Բ յորժամ

յայսմ աշխարհէ, խաւարեցան<sup>1</sup> հրէայքն անհաւատութեամբ եւ ի չարիս իւրեանց խստացան: Եւ այս եղեւ արդար դատաստանաւն Աստուծոյ, զի զայն<sup>2</sup> ամենայն նշանքն, զոր արար եւ քարոզեաց, այլ եւ զնշանս խաչին եւ յարութեան տեսին եւ գիտէին զաւրէնսն եւ զմարգարէսն, եւ ոչ հաւատացին: Եւ հեթանոսք, որք չունէին զմարգարէսն եւ հաւատացին, որպէս Ղունկիանոս հարիւրապետն, յորժամ ետես զնշանս ի մահն Քրիստոսի, ասաց. «Արդարեւ սա է<sup>3</sup> Որդին Աստուծոյ» (հնմտ. Դուկ. ԻԳ 47):

Յիրաւի եթող զհրէայսն, որպէս ասէ.

Բան. «Ես երթամ, եւ խնդրիցէք զիս» (Յովհ. Ը 21):

ՄԵԼԱՆՈՒՐԻՆ. Քրիստոս մահուամբ առ Հայր գնաց մարմնով<sup>4</sup>, յորմէ Աստուծութեամբն ոչ բնաւ որոշեցաւ<sup>5</sup> ի Հաւրէ, եւ զկնի մահուանն Քրիստոսի հրէայքն խնդրէին զնա ոչ սիրով վասն սքանչելեաց, կամ վասն քարոզի, կամ խաղաղութեան, այլ ատելութեամբ հալածելով զնա ընդ անդամս իւր, զի հալածեցին զառաքեալս եւ զհաւատացեալսն ի Քրիստոս, որպէս ասէ ի Պործսն<sup>6</sup>:

Բան. «Եւ ի մեղս ձեր մեռանիցիք» (Յովհ. Ը 21):

ՄԵԼԱՆՈՒՐԻՆ. Նախ՝ անհաւատութիւն: Երկրորդ. այլ անապաշաւ մեղք, որ անհաւատութեան հետեւի, եւ այնու հասին ի մահն յաւիտենական: Եւ դարձեալ՝ վասն իւրեանց մեղացն, որ ոչ ընկալան զՔրիստոս եւ ոչ զառաքեալսն նորա, գերեցան ի Տիտոսէ, որպէս Քրիստոս յառաջագոյն մարգարէաբար ասաց. «Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կոտորէր<sup>7</sup> [զմարգարէս եւ քարկոծ առնէր զառաքեալսն առ նա]» (Սատթ. ԻԳ 37):

Եւ սոքա ոչ կարացին գնալ, ուր Քրիստոս գնաց. նախ՝ զի բարձր է երկինք, երկրորդ՝ հեռի, երրորդ՝ անհաւատութիւն, չորրորդ՝ մեղքն խափանէ յերկնային փառացն, որպէս ասէ Պաւղոս. «Առանց հաւատոյ անհնար է հաճոյ լինել Աստուծոյ» (տես ԵԲ ԺԱ 6):

Բան. «Ասէին իրէայքն. “Միթէ զիւրովի՞ն երթայցէ<sup>9</sup>”» (Յովհ. Ը 22):

<sup>1</sup> Կ համրեցան

<sup>2</sup> Կ զայս

<sup>3</sup> Կ էր

<sup>4</sup> Կ մարմնովն

<sup>5</sup> Կ ոչ եմ որոշեալ

<sup>6</sup> Կ չիք

<sup>7</sup> Կ չիք ի գործսն

<sup>8</sup> Կ կոտորէիր

<sup>9</sup> Ա Բ չիք երթայցէ

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Կամ չարութեամբ ասէին՝ անձնամահ լինի<sup>1</sup> վասն երկիւղի մեր, որպէս ասէ մեկնիչդ: Դարձեալ՝ զիւրովի երթալն, այսինքն՝ ինքն<sup>2</sup> ըստ ինքեան վարի ի դիւէ յանապատ: Դարձեալ՝ լուեալ էին հրէայքն, թէ Քրիստոս կամաւորապէս մեռանելոց է, ըստ Եսայեայ. «Զի ի մահ մատնեաց զանձն իւր» (տես Ես ԾԳ 12), եւ զայս փոխս վասն չարչարանացն ասէ, վասն այնորիկ հրէայքն այպն առնելով զՔրիստոս, զոր եւ սուտ քրիստոս համարէին եւ ասէին. «Միթէ զիւրովին երթայցէ»: Անմտաբար զբանն Քրիստոսի ծանեան եւ ասացին, զի թէ Քրիստոս վասն զիւրովին երթալոց էր խաւսեցեալ զբանն, կարէին նոքա այնպէս զկնի նորա գնալ, իսկ միտք բանիցն Քրիստոսի էր, զի նոքա ոչ կարէին հետեւել նմա ի կեանսն յաւիտենականս:

Այժմ ճառէ զպատասխանին Քրիստոսի, որ յայտնէ զմիտս ասացեալ բանին:

### Ի ՎԵՐՈՒՍ Է ՔՐԻՍՏՈՍ

Բան. «Ռուք ի ներքուստ աստի եք<sup>3</sup>, եւ<sup>4</sup> ես ի վերուստ անտի եմ» (Յովի. Ը 23):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Ասացաւ ի վերոյ, թէ յաւիտենականութիւն Քրիստոսի ցուցանի չորս կերպիւ: Այս առաջինն է, որ ասէ. «Ես ի վերուստ եմ, եւ ոչ եմ յաշխարհէ, դուք՝ ի ներքուստք»: Նախ՝ որպէս ասէ մեկնիչդ, զի թանձրամիտք էին եւ չարախորհուրդք, ես բարձրագոյն եմ մտաւք եւ բարի, որպէս ասէ մեկնիչդ<sup>5</sup>:

Դարձեալ՝ ի ներքուստ. Նախ՝ ի ներքոյ սկզբնական մեղաց եւ ապականութեամբ ծնեալք: Երկրորդ. ի ներքոյ մահու եւ դատապարտութեան, վասն որոյ հարկ էր նոցա մեռանել, եւ մերժումն հոգւոց նոցա ի մարմնոյ ոչ էր ազատ կամաւք իւրեանց:

Իսկ Քրիստոս ի վերուստ ասի երեք կերպիւ. Նախ՝ զի Աստուածութեամբն ի Հաւըէ է<sup>6</sup>, այլ եւ մարդկութեամբն զբանական հոգին միայն յԱստուծոյ ունէր, եւ մարմինն ներգործութեամբ Հոգւոյն Սրբոյ էր ձեւացեալ: Երկրորդ. ի վերոյ էր սկզբնական մեղաց: Երրորդ. ի վերոյ էր մահու եւ ապականութեանց, վասն որոյ Քրիստոս ունէր կատարեալ տէրութիւն ի վերայ մարմնոյ իւ-

<sup>1</sup> Ը լինել

<sup>2</sup> Ը եք

<sup>3</sup> Ա Ը եք աստի եք

<sup>4</sup> Ա Ը եք

<sup>5</sup> Ա Ե Ե

րոյ՝ մերժել զհոգի ի մարմնոյն կամ միաւորել, որպէս ասէր. «Իշխանութիւն ունիմ դնել զանձն<sup>1</sup> եւ առնուլ զսա» (տես Յով. Ժ 18):

Բան. «Եւ ես չեմ յաշխարհե» (Յով. Ը 24):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Նախ՝ Աստուածութեամբն չէր յաշխարհէ, թէպէտ մարմինն եւ հոգին: Երկրորդ. զի ոչ ունէր զչարութիւն աշխարհական: Իսկ հրէայքն յաշխարհէ ասին վասն անհաւատութեան եւ այլ մեղացն, զոր ունէին, իսկ կսկիծն մարմնոյն է<sup>2</sup>, եւ մորմոքումն՝ սրտին: Դարձեալ՝ կսկիծն զգայականին է, եւ մորմոքելն՝ բանականին: Եւ Դարձեալ՝ մորմոքն ի բանիցն, լինի եւ կսկիծն՝ ի գործոցն, որպէս ասէ մեկնիչդ<sup>cvi</sup>:

Ապա զկնի ասէ զհնար փրկութեան նոցա.

Բան. «Զի թէ ոչ հաւատասջիք, թէ ես եմ, մեռանիջիք ի մեղս ծեր» (Յով. Ը 24):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Այսինքն՝ թէ ոչ կատարեալ խոստովանիք, թէ ես եմ Քրիստոսն, մեռանիք ի մեղս, եւ եթէ հաւատայք եւ սիրէք, կարէք ազատիլ ի մեղաց:

Եւ երեք կերպիւ ի մեղս մեռանին. Նախ՝ սկզբնական մեղաւք, Երկրորդ՝ անհաւատութեամբ, Երրորդ՝ առանց զղջման եւ խոստովանութեան: Սոքա մեռանին ի մահն յաւիտենից, իսկ մկրտեալք եւ հաւատացեալք եւ զղացեալք փոխին ի մահուանէ ի կեանս, որպէս ասացաւ յառաջագոյն:

Նոյնպէս չորս է իշխանութեամբ մահն բարի եւ չար. Նախ՝ կամաւ մեռանել մարմնով, որպէս Քրիստոս եւ մարտիրոսքն: Երկրորդ՝ զմեղս մեռուցանել, եւ սոքա բարի են: Երրորդ՝ անձնամատն լինել եւ մեռանել մարմնով<sup>3</sup>: Զորրորդ՝ զհոգին մեռուցանել: Եւ սոքա չար են:

Յորժամ եցոյց զհնար փրկութեան, ապա ածէ զնոսա ի հաւատոս, եւ նախ դնի հարց հրէիցն:

Բան. «Ասեն ցնա. “Դու ո՞ւ ես”» (Յով. Ը 25):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Իբրու ասել՝ ցոյց մեզ, թէ որպիսի եւ որչափ իցես, զի հաւատասցուք քեզ:

### Զի նախ է Քրիստոս

Բան. «Ասէ ցնոսա Յիսուս. “Նախ զի եւ խաւսիմ իսկ ընդ ծեզ”» (Յով. Ը 25-26):

<sup>1</sup> Հ զանձն իմ

<sup>2</sup> Հ չիք եւ այլ մեղացն . . . մարմնոյն է

<sup>3</sup> Բ չիք որպէս Քրիստոս եւ մարտիրոսքն . . . եւ մեռանել մարմնով

ՄԵԿՆՈւԹԻՒՆ. ԵՐԿՐՈՐԴ բան, որ ցուցանէ, թէ յաւիտենական է<sup>1</sup> Քրիստոս, այս է, որ ասէ՝ նախ եւ առաջին սկիզբն եմ ամենայն արարածոց, ապա ուրեմն Աստուած է Քրիստոս:

Եւ գիտելի է, զի նախ, որ է սկիզբն, երեք յեղանակաւ իմանի աստ.

Առաջին. թէ Աստուած եմ սկիզբն արարածոցս, որ միացեալ մարմնով խաւսիմ ընդ ձեզ, ըստ այնմ. «Ի սկզբանէ էր Բանն» (Յովհ. Ա 1):

ԵՐԿՐՈՐԴ. զի վասն խաւսիցս, որ ընդ ձեզ, կարծէք զիս սոսկ մարդ եւ գայթակղիք, այլ ես ի սկզբանէ գոյացուցիչ եմ ամենայն մարմնոց եւ ամենայն աշխարհի, ըստ այնմ. «Ամենայն ինչ նոր վաւ եղեւ» (Յովհ. Ա 3):

ԵՐՐՈՐԴ. ըստ Ոսկեբերանին. «Ոչ էք դուք արժանի, թէ խաւսեցայց ընդ ձեզ, այլ ծանիջիք, զի նախ եմ, այսինքն՝ սկիզբն եւ դատաւոր, որ է ի կատարածին, որ ցուցանէ, թէ ես եմ առաջին եւ վերջին, այսինքն՝ սկիզբն եւ կատարած»:

Դարձեալ՝ չորս կերպիւ ասի նախ ըստ մարմնոյն: Նախ է անսերմն յղացմամբ, եւ ապա՝ եկեղեցի սուրբ: Երկրորդ. նախ է սրբութեամբ գործով, մկրտութեամբ եւ այլն: Երրորդ. նախ է կամաւ մեռանելովն<sup>2</sup>, եւ ապա՝ այլ սուրբք: Չորրորդ. սկիզբն է յարութեամբ եւ մտանելովն ի փառս, եւ<sup>3</sup> ապա՝ հաւատացեալք, վասն այն ասէ. «Ես, որ խաւսիմս իսկ նախ եւ սկիզբն եմ ամենայնի»: Եւ դարձեալ՝ վասն այն խաւսիմս իսկ, զի հաւատայցէ զիս սկիզբն գոլ:

Եւ վասն չորս պատճառի ոչ ասաց զինքն յայտնապէս. նախ՝ զի ոչ հաւատային: Երկրորդ. զի դաւաճանութեամբ հարցին: Երրորդ. զի ասաց ի<sup>4</sup> սկիզբն քարոզութեան, թէ՝ «Ես եմ լոյս աշխարհի» (Յովհ. Ը 12): Չորրորդ. զի նշանաւք բազում եցոյց, եւ նոքա առաւել չարցան:

Եւ զի Քրիստոս սկիզբն է ամենայն արարածոց, վասն այն եւ զամենայն արարածս վերաբերէ առ ինքն, զի որպէս սկիզբն է արարածոց, սոյնպէս եւ վախճան է ամենայնի, վասն այն դատաստանաւ առ նա վերաբերին, որպէս ասէ.

Բան. «Բազում ինչ ունիմ [վասն ձեր] խաւսել եւ դատել» (Յովհ. Ը 26):

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ. Յառաջագոյն ասաց՝ «Ես ոչ դատիմ զոք» (Յովհ. Ը 15), զայն իմանալի է վասն առաջին գալստեանն, իսկ աստ ասէ՝

<sup>1</sup> Ե յաւիտեան է

<sup>2</sup> Ա Ե մարդանալովն

<sup>3</sup> Ե չիք

<sup>4</sup> Ե չիք

բազում ունել դատել, վասն երկրորդ գալստեանն ասէ: Դարձեալ՝ ըստ Ոսկեբերանին, զի պատժելոց էր զնոսա վասն հայՀոյութեան, զոր նմա ասէին: Եւ ոչ վասն անկարութեան կամ երկիւղի, կամ անգիտութեան թողու զնոսա անպատիժ, եւ թէ ընդէ՛ր այժմ ոչ դատէ, ցուցանէ զկնի:

Բան. «Որ առաքեացն զիս, ճշմարիտ է» (Յովի. Ը 26):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Աստուած Հայր, որ առաքեաց զՈրդի, ճշմարիտ ասի: Նախ՝ ճշմարիտ է, զի կատարեաց զխոստումն իւր՝ առաքելով զիս: Երկրորդ. զի փրկել եւ կեցուցանել եւ բարի առնել առաքեաց զիս, եւ ոչ ի դատել:

Առ այնոսիկ, որ ասեն, թէ ընդէ՛ր յապաղէ Քրիստոս եւ ոչ վաղվաղակի հատուցանէ զդատաստանն: Գիտելի է, զի ամենայն ոք, որ ոչ առնու վրէմս եւ ոչ դատէ զպարտաւորս, լինի վասն չորս պատճառի. նախ՝ վասն երկիւղի մեծաց: Երկրորդ. վասն տկարութեան իւրեանց: Երրորդ. վասն տգիտութեան եւ մոռացման: Չորրորդ. վասն հեղութեան եւ քաղցրութեան բարուց ներէ յանցաւորաց:

Իսկ Քրիստոս ոչ վասն երկիւղի ումեք յամէ զդատաստանն, զի ըստ մարգարէին. «Հայի յերկիր եւ տայ դողալ» (Սաղմ. Ծ 32): Երկրորդ. եւ ոչ վասն տկարութեան, ըստ առաքելոյ. «Քրիստոս<sup>1</sup> Աստուծոյ զարութիւն» (Ա Կորնթ. Ա 24): Երրորդ. եւ ոչ վասն տգիտութեան, զի իմաստութիւն եւ գիտութիւն է Հաւր, ապա ուրեմն ի դէպ է յաղագս չորրորդին, զի վասն հեղութեան եւ քաղցրութեան ներէ եւ ոչ պատմէ:

Բան. «Եւ ես զոր լուայ ի նմանէ<sup>2</sup>, խաւսիմ յաշխարիի» (Յովի. Ը 26):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ<sup>3</sup>.** Քրիստոս ի Հաւրէ լսել ասի, զի որպէս զԱստուածութիւն ի Հաւրէ ունի ծննդեամբն ի նմանէ, նոյնպէս զգիտութիւն եւ<sup>4</sup> մարդկութիւն միութեամբ ի Բանն ընկալաւ զգիտութիւն հեղմամբ ի Հաւրէ, վասն այն ի նմանէ լսել ասի: Եւ զի թանձրամիտ էին, վասն այն զբանն Քրիստոսի ոչ իմանային, որպէս ասէ.

Բան. «Ոչ գիտէին, թէ զՅաւրէ ասէր ցնոսա<sup>5</sup>» (Յովի. Ը 27):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Զի զԱստուած Հայր իւր ասաց:

<sup>1</sup> Ը Քրիստոսս է

<sup>2</sup> Ա Յ ի Յաւրէ

<sup>3</sup> Ա չեք

<sup>4</sup> Բ ի

<sup>5</sup> Ա Յ չեք

### Վասն բարձրութեան խաչին

Բան. «Յորժամ բարձրացուցանիցէք ի խաչին<sup>1</sup>, գիտասջիք, թէ ես եմ» (Յովի. Ը 28):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Բարձրութիւն զխաչն ասէ, զի մահուամբն Քրիստոսի եւ զկնի յարութեամբ բազումք հաւատացին եւ ծանեան, թէ նա է ճշմարիտ Քրիստոսն, վասն այն ասէ, թէ՝ «Յայնժամ գիտասջիք, թէ ես եմ», այսինքն՝ ճշմարիտ Քրիստոսն<sup>2</sup>:

Եւ գիտելի է, որպէս ասէ մեկնիչդ<sup>cvi</sup>, երիցս է բարձրութիւն Քրիստոսի. նախ՝ խաչն, երկրորդ՝ համբառնալն, երրորդ՝ ի դատաստանի:

Իսկ խաչն բարձրութիւն է Քրիստոսի վասն չորից. նախ՝ զի բարձր էր խաչն: Երկրորդ՝ ի բարձր տեղւոջ: Երրորդ. զի փառաւորեցաւ ի Հաւրէ ըստ Պաւղոսի. «Վասն այն Աստուած զնա առաւել բարձրացոյց» (Փիլիպ. Բ 9): Չորրորդ. զի հաւատացեալք խաչիւն ծանեան զնա Քրիստոս Աստուած:

Դարձեալ՝ համբառնալն բարձրութիւն է Քրիստոսի վասն չորից. նախ՝ զի յերկինս ել մարմնով: Երկրորդ. զի ի փառս Աստուածութեան նստաւ: Երրորդ. ի հրեշտակաց երկրպագեցաւ: Չորրորդ. զհոգիսն ընդ ինքեան բարձրացոյց:

Դարձեալ՝ ի դատաստանին բարձրանալ ասի չորս կերպիւ. նախ՝ զի նստի ի բարձր յաթոռ դատաստանի: Երկրորդ. եւ զանգամս իւր բարձրացուցանէ: Երրորդ. զթշնամիսն դատէ: Չորրորդ. զխոսամունքն Աղամայ եւ զխորհուրդ անդ կատարեսցէ:

Բան. «Ես եմ» (Յովի. Ը 28):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Նախ յուշ ածէ զբանն, որ ի յելսն յերրորդ<sup>3</sup> գլուխն ասէ. «Ես եմ, որ ին» (տես Ելք Գ 14): Երկրորդ. Ես եմ սկիզբն եւ վախճան (հմնտ. Յայտն. ԻԱ 6, ԻԲ 13): Երրորդ. Ես եմ անսկիզբն եւ անվախճան (տես Յայտն. Բ 8), զի որպէս անսկիզբն է Աստուածութեամբ եւ անվախճան է մարդկութեամբն<sup>4</sup>: Չորրորդ. «Ես» յատուկ զդէմս Քրիստոսի ցուցանէ յերկուց գծից միացեալ, եւ Տէր մեր՝ Աստուած եւ մարդ միացեալ: Եւ որպէս ի յերգս ասի՝ առեալ ի Բարսղէ. «Որ ինդ՝ Հայր, որ եսդ՝ Որդի, եւ էդ՝ Հոգի Սուրբ<sup>5</sup>»:

<sup>1</sup> Ըիք ի խաչին

<sup>2</sup> Ըիք Վասն այն ասէ . . . ճշմարիտ Քրիստոսն

<sup>3</sup> Ա Երկրորդ

<sup>4</sup> Երկրորդ. Ես եմ սկիզբն եւ վախճան, զի որպէս անսկիզբն է Աստուածութեամբ եւ անվախճան մարդկութեամբ: Երրորդ. Ես եմ անսկիզբն եւ անվախճան

<sup>5</sup> Ծոգին

Բան. «Եւ ես յանձնէ ինմէ ոչ ինչ առնեն» (Յովի. Ը 28):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Զի Քրիստոս որպէս Աստուածութիւն ի Հաւրէ ունի, նոյնպէս եւ զզաւրութիւն եւ զներգործութիւն եւ մարդկութիւն միացեալ Բանիւն ներգործէ եւ ոչ բաժանմամբ։ Իսկ զմարմինն գործիք ասել Բանին նեստորի է եւ երկաբնակաց, որպէս Արիոս զԲանն ասէր գործիք Հաւր, սոյնպէս եւ զմարմինն գործիք ասէր։ Եւ սոքա ամենքն հերձուածողաց է ասացեալ, զի Բանն բնութեամբ Որդի է Աստուծոյ եւ մարդկութիւն բնութեամբ միացեալ է ընդ Բանին Աստուծոյ, եւ մարմինս մեր բնութեամբ միացեալ է ի հոգիս մեր, եւ որպէս ի հոգւոյ եւ ի մարմնոյ մի բնութիւն է մարդոյ, զի մի ասեմք զմարգն եւ մի զբնութիւն մարդոյն, նոյնպէս Բանին եւ մարմնոյն մի բնութիւն է միաւորեալ. մի Քրիստոս եւ մի Որդի։ Եւ վասն առաքման Որդւոյ ոչ է պարտ ասել հեռացեալ ի Հաւրէ, զի էութիւն եւ բնութիւն մի է, որպէս ասէ։

Բան. «Եւ որ առաքեացն զիս Յայր, ընդ իս է» (Յովի. Ը 29):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Հայր ընդ Քրիստոսի գոլ ասի, զի Աստուածութեամբն Հայր յՈրդի է, եւ Որդի՝ ի Հայր, իսկ մարդկութեամբն ընդ Հաւր գոլ ասի, զի Աստուածութիւն յատուկ եւ եզական միաւորութեամբ բնութեամբ միացեալ է ի մարմնի, եւ սոյնպէս ոչ գոլ յայլ<sup>1</sup> ոք, թէպէտ շնորհաւոք եւ խնամաւոք է ի սուրբս բնակեալ, այլ բնութեամբ միայն միացեալ է ի մարդկութիւն Քրիստոսի։ Եւ Քրիստոս ըստ Աստուածութեան ոչ կարէ բաժանիլ ի Հաւրէ, իսկ ըստ մարդկութեան ոչ երբէք բնաւ բաժանի ի Հաւրէ, որպէս գլխաւորն երկաբնակ աղանդոյն Դամասկացին ասէ, թէ՝ «Զորինչ մի անգամ Միածինն ընկալաւ ի միութիւն ինքեան, ոչ թողու, քանզի յորժամ Քրիստոս մեռաւ, թէպէտ հոգին նորա եւ մարմինն ի միմեանց բաժանեցան, սակայն մարմինն եւ բանական Հոգին Քրիստոսի միշտ միաւորեալ էին առ Աստուածութիւն»։

Եւ վասն այսորիկ կատարեալ միաւորութեանս Քրիստոս միշտ առնէ որպէս Հայր, եւ ընդ կամացն Հաւր, որպէս ասէ։

Բան. «Զի ես զիածոյս նորա առնեն հանապազ» (Յովի. Ը 29):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ<sup>2</sup>.** Զի Քրիստոս Աստուածութեամբն զնոյն կամի եւ առնէ, որպէս Հայր, զի մի է կամք եւ ներգործութիւն Հաւր եւ Որդւոյ, նոյնպէս եւ մարդկութեան կամաւոքն եւ ներգործութեամբն միացեալ էր միշտ ընդ աստուածային կամացն անբաժան

<sup>1</sup> Յ այլ

<sup>2</sup> Ա չիք

միութեամբ եւ առանց թիւրութեան: Եւ թէ զի՞նչ է<sup>1</sup> կամք, եւ զի՞նչ՝ հաճոյք, գտցես ի լուծմունքն Յոթայ, յառաջին համարն:

**Զկնի այսմ ցուցանէ զպտուղ քարոզութեան Քրիստոսի:**

Բան. «Իբրեւ զայս ասաց, բազումք հաւատացին ի նա» (Յովի. Ը 30):

**Մեկնութիւն.** Նախ ցուցանէ, եթէ<sup>2</sup> հակառակութիւն հրէիցն ոչ կարէր ամենեւին խափանել զպտուղ քարոզութեան Քրիստոսի: Երկրորդ. ցուցանէ թէպէտ բազումք ի հրէիցն խստասիրտք էին, այլ ոչ՝ ամենքն: Եւ տե՛ս, զնուաստութիւնսն<sup>3</sup> խաւսելով բազումք հաւատացին, յորժամ զբարձրագոյնսն ասէր, բազումք յետս չոգան ի հաւատոցն եւ ասէին. «Խիստ է բանդ, ո՞ կարէ լսել դնա» (Յովի. Զ 61): Եւ թէ վասն է՞ր երեմն զխոնարհագոյնսն եւ երեմն զբարձրագոյնսն խաւսէր, որպէս մեկնիչդ ասէ<sup>cviij</sup>, ասացաւ մեզ յառաջագոյն յերկրորդ հատորն, համարն:

### Վասն հաւատոց

**Ցուցանէ աստ,** թէ հաւատն ներգործական զաւրութիւն ունի առ ի տալ կատարեալ ազատութիւն մարդոյ: Եւ զի մարդն ազատ կամք ունի, որով բաժանի յայլ կենդանեաց, վասն այն սիրէ եւ ընտրէ զծշմարիտ ազատութիւն քան զայլ իրս, որպէս ասէ.

Բան. «Եւ ասէր Յիսուս առ հաւատացեալսն<sup>4</sup>» (Յովի. Ը 31):

**Մեկնութիւն.** Ծանեաւ Քրիստոս զնոսա, զի ոմանք անկատարք էին ի հաւատս եւ ոմանք ստութեամբ եւ կեղծեաւք ցուցանէին հաւատացեալս, վասն այն ասէ ցնոսա.

Բան. «Եթէ դուք կացջիք ի բանի ինում, ճշնարիտ աշակերտք իմ էք<sup>5</sup>»

(Յովի. Ը 31):

**Մեկնութիւն.** Այսինքն՝ հաստատուն մնայք ի բանն իմ մինչեւ ի սպառ կատարեալ հաւատով, զոր քարոզեցի, նա ճշմարիտ աշակերտ<sup>6</sup> իմ էք՝ ունել զծշմարտութիւն առանց ստութեան:

Եւ չորիւք է կատարեալ հաւատն. Նախ՝ զի ի ճշմարտութիւն հիմնացեալ լինի: Երկրորդ. զի սիրով եւ գործով լինի: Երրորդ. զի բանիւ եւ սրտիւ լինի: Զորրորդ. զի միշտ եւ անփոփոխ լինի:

**Իսկ որ ընդդէմ է չորիցս, սուտ է եւ անկատար հաւատ:**

Բան. «Եւ ծանիջիք զճնարտութիւն» (Յովի. Ը 32):

<sup>1</sup> Ը չիք է

<sup>2</sup> Ը թէ

<sup>3</sup> Յ զնուաստութիւն

<sup>4</sup> Ա Ը Եւ Յիսուս ասէր առ հաւատացեալս

<sup>5</sup> Յ Ը ճշնարիտ իմ աշակերտք էք

<sup>6</sup> Կ աշակերտք

**ՄԵԼԻՆՈՒԹԻՒՆ. Այսինքն<sup>1</sup> ճանաչէք զի ես եմ Որդի Աստուծոյ եւ փրկիչ աշխարհի:**

**Եւ զկնի ասէ.**

Բան. «Եւ ճշմարտութիւն ազատեսցէ զձեզ» (Յովի. Ը 32):

**ՄԵԼԻՆՈՒԹԻՒՆ. Աստ ճշմարտութիւն հաւատոյն, զոր Քրիստոս քարոզեաց, ազատէ ի ծառայութենէ մեղաց, զի աստ սկսանի ճշմարիտ ազատութիւն եւ ի հանդերձեալն ազատէ ի ծառայութենէ թշուառութեան, յորժամ ամենայն ստեղծուածք ազատեսցին ի ծառայութենէ ապականութեան, եւ յայնժամ կատարեալ ազատք լինիջիք: Դարձեալ՝ ճշմարտութիւն Քրիստոս է, ըստ այնմ. «Ես են ճշմարտութիւն» (տես Յովի. ԺԴ 6):**

**Եւ վասն չորից ասի ճշմարիտ Քրիստոս. նախ՝ ընդդէմ աւրինակին Քրիստոս ճշմարտութիւն է<sup>2</sup>: Երկրորդ. ընդդէմ ստութեան ամենայն բան քարոզութեան եւ խոստմունքն Քրիստոսի ճշմարիտ է: Երրորդ. ընդդէմ խարէկութեան ամենայն գործք եւ սքանչելիք եւ փրկութիւն Քրիստոսի ճշմարիտ է: Չորրորդ. ընդդէմ ուրուականին՝ Քրիստոս ճշմարիտ Աստուծած է մարդացեալ եւ ոչ առ աչաւք մարմին կամ հոգի:**

**Դարձեալ՝ ճշմարտութիւն ազատէ վասն չորից. նախ՝ զի ճշմարտութիւն արդարութեան ի դատաստանի ազատէ եւ փրկէ ի պատժոց, այսինքն՝ ի մարմնաւոր եւ ի հոգեւոր դատաստանաց: Երկրորդ. ճշմարիտ հաւատն հաստատէ զսիրտ մարդոյ ի ծառայական երկիւղէ, որչափ հաստատուն է ի<sup>3</sup> հաւատն: Երրորդ. ճշմարտութիւն Որդւոյն Աստուծոյ յատկանայ, զի նա է Բանն Աստուծոյ, եւ նա տայ մեզ զազատութիւն շնորհաց եւ սիրոյ: Չորրորդ. որպէս Քրիստոս Որդի է Աստուծոյ եւ բնութեամբ ունի զազատութիւն, զի Աստուծած է եւ Տէր ժառանգութեան, նոյնպէս զմեզ շնորհաւք Որդի Աստուծոյ առնէ, եւ ոչ բնութեամբ, եւ մասնակից ժառանգութեան իւրոյ:**

### Վասն ազատութեան եւ ծառայութեան

**Գիտելի է, զի կրկին է<sup>4</sup> ազատութիւն, այսինքն՝ հոգեւոր եւ մարմնաւոր, եւ կրկին<sup>5</sup> ծառայութիւն, այսինքն՝ հոգեւոր եւ մարմնաւոր: Արդ, հոգեւոր ազատութիւն է չորս, այսինքն՝ հա-**

<sup>1</sup> B չիք

<sup>2</sup> B ճշմարտութիւն է Քրիստոս

<sup>3</sup> C չիք ի

<sup>4</sup> B չիք

<sup>5</sup> C չիք

ւատն, արդարութիւն, շնորհքն, սէրն: Եւ հոգեւոր ծառայութիւն ընդդէմ այսմ՝ անհաւատութիւն եւ<sup>1</sup> մեղքն, եւ աւրէնքն հին եւ պատիժն: Իսկ մարմնաւոր ազատութիւն է, այսինքն՝ մեծութիւն, իշխանութիւն, թագաւորութիւն եւ այլն: Եւ մարմնաւոր ծառայութիւն՝ աղքատութիւն, վարձկանութիւն, գերութիւն, գանել<sup>2</sup> եւ գերել: Արդ, Քրիստոս զհոգեւոր ազատութիւն խոստացաւ հաւատացելոց, եւ հրէայքն զմարմնաւորն կամէին, որպէս եւ ասեն.

Բան. «Զաւակ Աբրահամու եմք եւ ոչ [ումէք] երբէք ծառայեցաք» (Յովի. Ը 33):

**Մեկնութիւն.** Զազնուականութիւն յիշեն եւ զմարմնոյ ազատութիւն: Մինն հպարտութիւն է եւ մինն՝ սուտ, զի չորս հարիւր ամ յեղիպտոս ի ծառայութիւն կացին եւ ելթանասուն ամ ի Բարիլոն եւ յունաց եւ ասորոց, եւ այժմ կայսեր, որպէս ասացին. «Չիք մեր թագաւոր, բաց ի կայսերէ» (Յովի. ԺԹ 15):

Բան. «Չիա՞րդ ասես, թէ ազատը լինիշիք» (Յովի. Ը 33):

**Մեկնութիւն.** Քրիստոս կրկին բան խոստացաւ. նախ՝ զճանաչումն ճշմարտութեան՝ ասելով. «Օանիշիք զճշմարտութիւն» (Յովի. Ը 32): Երկրորդ. զպարգեւս ազատութեան՝ ասելով. «Նշմարտութիւն ազատեսցէ զձեզ» (Յովի. Ը 32), ցուցանելով այնու, զի ոչ ունին ճանաչումն եւ ոչ ազատութիւն, եւ թէպէտ չարագոյն է պակասութիւն ճանաչմանն, քան զպակասութիւն ազատութեան, սակայն հրէայքն իբր զմարմնաւորք եւ ամբարտաւանք ոչ արարին փոյթ վասն պակասութեան ճանաչմանն, այլ միայն վասն պակասութեան ազատութեան զինքեանս ընդունայն ազատ ասելով:

Բան. «Պատասխանի ետիուն»<sup>3</sup> (Յովի. Ը 33):

**Մեկնութիւն.** Գիտելի է, զի հրէայքն պատասխանի տալովն մին բանիւն ուրացան եւ միւսովն հաստատեցին, այսինքն՝ զծառայութիւն ուրացան՝ ասելովն. «Ոչ ումեք ծառայեցաք», եւ զաշնուականութիւն իւրեանց հաստատեցին՝ ասելով. «Զաւակ Աբրահամու եմք», իսկ Քրիստոս ընդդէմ այսմ<sup>4</sup> ցուցանէ, թէ<sup>5</sup> առաջին, զոր ուրանան զծառայութիւն, ճշմարիտ է, զի որ առնէ զմեղս, ծառայ է մեղաց: Երկրորդ. ցուցանէ թէ<sup>6</sup> միւսն, զոր հաստատեցին, սուտ է անդ, որ ասէ. «Գիտեմ, զի զաւակ Աբրահամու էք» եւ այլն: Եւ վասն մարմնոյ ծառայութեան նոցա անփոյթ արար

<sup>1</sup> B չեք

<sup>2</sup> A B C զնել

<sup>3</sup> C եւ Յիսուս

<sup>4</sup> A B չեք

<sup>5</sup> B կրկ

<sup>6</sup> A B չեք ցուցանէ թէ

Եւ ոչ ինչ ասաց, զի ծառայ եւ ազատ ոչ խտրի առ Քրիստոս, որպէս ասէ Պաւլոս (հնմտ. Գաղատ. Գ 28):

### Վասն ծառայութեան

Գիտելի է, զի երեք կերպ է ծառայութեան, այսինքն՝ բարի եւ չար եւ միջակ: Արդ, բարի ծառայութիւն է արդարութեան գործոց ծառայել եւ Աստուծոյ, իսկ չար է մեղաց ծառայել եւ սատանայի, այլ միջակ է մարդոյ ծառայել, զի ընդ չարսն չար է եւ ընդ բարիսն՝ բարի, վասն որոյ ասէ առաքեալ. «Ծառա՛յք, Հնազանդ լերուք մարմնաւոր տէրանց» (Եփես. Զ 5):

Արդ, առաջինն, որ բարի ծառայութիւն է, չորս յատկութիւն ունի. նախ՝ որ բարւոյ ծառայէ<sup>1</sup>, ոչ կարէ ծառայել մեղաց: Երկրորդ. զի ծառայէ բարւոյն գործակցաց եւ Հնազանդի եւ սիրէ: Երրորդ. զի ծառայէ աւրինացն Աստուծոյ եւ պատուիրանացն: Չորրորդ. զի ծառայէ հաւատով եւ յուսով կենացն յաւիտենից:

Իսկ երկրորդն, որ չար ծառայութիւն է, այս է, որ հրամայէ Տէրն.

Բան. «Ամենայն, որ առնէ զմեղս, ծառայ է մեղաց» (Յովի. Ը 34):

ՄԵԼՈՆԻՔԻՆ. Նախ՝ ամենայն ոք, այսինքն՝ եթէ հրեշտակք եւ<sup>2</sup> եթէ մարդիկք, սուրբք կամ անսուրբք, որ առնէ զմեղս, ծառայ է մեղաց: Երկրորդ. ամենայն մեղաց՝ թէ՛ հոգեկան, թէ՛ մարմնական, մեծ կամ փոքր, մեղաց ծառայ է: Երրորդ. ամենայն, որ սիրող եւ գործունեայ է մեղաց, ո՛չ կարէ գործել զարդարութիւն, ըստ այնմ. «Ո՛չ կարէք Աստուծոյ ծառայել եւ մամոնայի» (Մատթ. Զ 24):

Այս, թէ ամենայն, նոյնպէս որ առնէ զմեղս, ծառայ է մեղաց չորս կերպիւ.

Առաջին՝ որ առնէ զմեղս. նախ՝ ծառայ է գործոց մեղաց: Երկրորդ՝ պատճառին մեղաց, որ է սատանայ: Երրորդ՝ գործակցաց մեղաց: Չորրորդ՝ արբանեկաց, որք սպասաւորք են մեղաց:

Երկրորդ. որ առնէ զմեղս, ծառայ է նախ՝ մեղաց, երկրորդ՝ մահու, երրորդ՝ ապականութեանց, չորրորդ՝ տանջանացն յաւիտենից:

Երրորդ. որ առնէ զմեղս, ծառայ է մեղաց վասն չորս պատճառի. նախ՝ ազատ այն ասի, որ իւր կամաւքն չարժի, եւ ծառայ է, որ յայլմէ հրամանէ չարժի, իսկ որ առնէ զմեղս, ընդդէմ բա-

<sup>1</sup> Ե որ բարուոյ ծառայ է աւրինացն Աստուծոյ եւ պատուիրանաց

<sup>2</sup> C չիք

նականութեան շարժի, թէպէտ կամաւք գործէ զմեղս, այլ յոյժ ծառայ է մեղացն կամաց: Երկրորդ. զի յորժամ մարդ<sup>1</sup> ի մեղս անկանի, ի ներքոյ մեղացն է<sup>2</sup> եւ ոչ կարէ ազատել զանձն<sup>3</sup> ի մեղաց, եթէ ոչ շնորհաւքն Քրիստոսի ազատեսցի: Երրորդ. զի վասն մեղաց պարտական է մարդն յաւիտենից տանջանացն<sup>4</sup>, իսկ այս պարտականութիւնս յոյժ ծառայութիւն է: Զորբորդ. զի մարդ մեղաւոր ոչ ազատ կամաւք եւ սիրով յարենայ առ Աստուած, այլ բռնութեամբ եւ ի հարկէ, եւ ոչ որպէս որդի առ հայր, այլ որպէս ծառայ:

Զորբորդ. ծառայէ մեղացն չորս կերպիւ. նախ՝ որ զազատ եւ զբարի բնութիւն յԱստուծոյ ստեղծեալ դարձուցանէ ի չար: Երկրորդ. զի սովորութեամբն ի մեղս այնքան ծառայ մտանէ մեղաց, մինչ զի թէ եւ կամի, ոչ կարէ արտաքս քարշիլ: Երրորդ. զի գրաւական լինի մեղքն գործողին տանջանացն յաւիտենից, որպէս զապալա առ տէրս պարտուց: Զորբորդ. զի ոչ կարէ ինքն իւր անձնիշխան կամաւն դառնալ, այլ կարաւտի խրատելոյն Աստուծոյ եւ ապա թերեւս դառնայցէ, ըստ այնմ. «Դարձայ ի թշուառութենէ, զի հարան յիս փուշք» (տես Սաղմ. ԼԱ 4): Իսկ հրէայքն յայտնապէս մեղաւորք էին, ապա յայտ է, զի ծառայք էին, վասն այն զկնի այսմ<sup>5</sup> զպատիժն ցուցանէ՝ ասելով.

### ՈՐԴԻՆ Ի ՄԱՆ ԿԱՅ, ԵՎ ՈՇ ԾԱՌԱՅՆ

Բան<sup>6</sup>. «Եւ ծառայն ոչ յաւիտեան] կայ ի տան» (Յովի. Ը 35):

Մեկնութիւն. Զորս է իմացումն. նախ՝ մարմնաւոր ծառայք ոչ կան ի տան, զի չունին իշխանութիւն, այլ ի սպասու եւ յաշխատութեան կան, իսկ որդիք թագաւորաց ի տան կան իշխեցողք եւ ժառանգորդք տան: Երկրորդ. տուն է աշխարհս, եւ ծառայքն աշխարհի ոչ մնան ի սմա, այլ մահուամբ ելանեն ի սմանէ: Երրորդ. տունս այս է եկեղեցի, ուր ծառայք մեղաց ոչ մնան յաւիտեանս, զի թէպէտ առ ժամանակ մի այժմ մտան յեկեղեցիս, զի ընդ հաւատացեալսն թուին, եւ խառնեալ են բարիքն ընդ չարս, այլ ի հանդերձեալ դատաստանին մեկնեսցին ի միմեանց, որպէս աւդիք յայծեաց: Զորբորդ. կարելի է մեկնել վասն երկնային

<sup>1</sup> A B չիք

<sup>2</sup> C ի ներքոյ է մեղացն

<sup>3</sup> B զանձն ազատել

<sup>4</sup> C մարդ յաւիտենից տանջանաց

<sup>5</sup> A B այժմ

<sup>6</sup> B չիք

տանն Աստուծոյ, յոր կայ յաւիտենական ժառանգութիւն եւ անդոչ հասանի ծառայն մեղաց, եթէ ոչ ազատեսցի յայնմ ծառայութենէ:

Եւ թէ որպէս կարասցեն յայսմ պատժոյ փրկիլ՝ ասէ.

Բան. «Իսկ որդին յաւիտեան կայ» (Յովի. Ը 35):

ՄԵԼՈՆԻՔԻՆ. Որդին Աստուծոյ յաւիտեան կայ. նախ՝ որպէս մեկնիչդ ասէ<sup>1</sup> ի տան աշխարհի կայ մշտնջենաւոր, զի թիսուս Քրիստոս երէկ եւ այսաւը, նոյն եւ յաւիտեան: Երկրորդ. զի յաւիտեան կայ եւ յաւիտեան մնայ յեկեղեցիս<sup>2</sup> սատ եւ անդ, զի նա միայն է անմեղ ինքեամբ եւ է բնութեամբ Որդի Աստուծոյ: Երրորդ. որդիք կոչին հաւատացեալք Աստուծոյ, թէպէտ ոչ բնութեամբ, այլ<sup>3</sup> շնորհաւք մկրտութեամբ: Զորրորդ. որդիք են, որք զորդիական սէրն ունին առ Աստուծած, նոքա մնան ի տանն Աստուծոյ եւ ոչ վարձկանքն եւ ծառայքն<sup>4</sup> մարմնական երկիւզի, այլ բնութեամբ Որդին Աստուծոյ՝ նա միայն իշխանութիւն ունի ազատելոյ զայլս ի մեղաց, առնելով զնոսա որդիս Աստուծոյ ըստ որդեգրութեան շնորհի, որպէս ասէ.

Բան. «Եթէ Որդին զձեզ ազատեցուսցէ, ճշմարիտ ազատք լինիչիք» (Յովի. Ը 36-37):

ՄԵԼՈՆԻՔԻՆ. Այն է ճշմարիտ ազատութիւն, յորժամ մարդ ազատի ի մեղաց ըստ ասացեալ կերպի, յայնժամ ի ճշմարիտ ազատութիւն մտանէ:

Իսկ յորժամ Քրիստոս եցոյց ընդդէմ հրէիցն զծառայութիւն ճշմարիտ գոլ, զոր նոքա ուրանային, այժմ ցուցանէ զորդին Աբրահամու սուտ գոլ, զոր նոքա հաստատէին, որպէս ասէ.

### Թէ չեն Աբրահամու որդիք

Բան. «Գիտեմ, զի զաւակ<sup>4</sup> Աբրահամու էք» (Յովի. Ը 37):

ՄԵԼՈՆԻՔԻՆ<sup>5</sup>. Աստ նախ ցուցանէ, թէ չեն որդիք Աբրահամու, երկրորդ՝ ցուցանէ, թէ չեն որդիք Աստուծոյ: Անդ, ուր ասեն ի պոռնկութենէ չեմք ծնեալ, երկրորդ ցուցանէ, թէ որդիք են սատանայի, որպէս ասէ անդ. «Դուք ի հաւրէն սատանայէ էք» (Յովի. Ը 44): Վասն առաջնոյն գիտելի է, զի այն է ճշմարիտ որդին, որ հաւրն

<sup>1</sup> Ը մնա ի տան յեկեղեցիս

<sup>2</sup> Ե Հիք բնութեամբ, այլ

<sup>3</sup> Ա Ե ծառայք, Ը ծառայքն եւ վարձկանքն

<sup>4</sup> Ա Ե որդիք

<sup>5</sup> Ա Հիք

գործոց հետեւի. «Այլ գիտեմ, ~ ասէ, ~ զի որդիք էք Աբրահամու մարմնով, այլ ոչ հետեւիք գործով եւ սիրովն Աստուծոյ»:

Բան. «Խնդրեք սպանանել զիս<sup>1</sup>» (Յովի. Ը 37):

Մեկնութիւն. Խորհիք եւ կամիք, եւ բազմաւորական սպանանել ասէ, զի բազումք էին սպանանողքն, եւ չորիւք է վնասն. նախ՝ զի սպանանէք, երկրորդ՝ զանմեղ, երրորդ՝ նախանձով, չորրորդ՝ վասն ճշմարտութեան խրատու:

Բան. «Եւ բանին իմոյ չիք տեղի ի ձեզ» (Յովի. Ը 37):

Մեկնութիւն. Վասն չորից. Նախ՝ զի ատէին, երկրորդ՝ զի սուտք էին, երրորդ՝ աշխարհասէրք, չորրորդ՝ հպարտք:

Դարձեալ՝ «Բանին իմոյ չիք տեղի ի ձեզ», այսինքն՝ ճշմարտութեան եւ սրբութեան, զոր քարոզեմ: Եւ Քրիստոս վասն բանին իւրոյ խաւսի իրրու կարթիւ, որ ոչ ըմբռնէ զձուկն, եթէ ոչ ըմբռնեսցի ի ձկանէն, նոյնպէս եւ բանն Աստուծոյ ոչ ըմբռնէ զմարդն ի կեանսն յաւիտենից, եթէ ոչ հաւատովք ըմբռնեսցի ի մարդոյն:

Բան. «Ես զոր տեսի ի Յաւր իմուն խաւսիս<sup>2</sup>» (Մես Յովի. Ը 38):

Մեկնութիւն<sup>3</sup>. Նախ՝ զի ցուցցէ, թէ ճշմարիտ է խաւսքն, երկրորդ՝ զի չեմ հակառակ, երրորդ՝ զի ոչ միայն իմ է բանս, այլ Հաւրն, իսկ տեսանելն ոչ որպէս արտաքուստ ինչ տեսանէ, այլ զայն ասէ, զի զԱստուածութիւն ի Հաւրէ ունի, իսկ մարդկութեամբն ի սկզբանէ յղացմանն տեսանէր զԱստուածութիւն միաւորութեամբ Բանին, զի որպէս կամքն մի է Քրիստոսի, նոյնպէս եւ տեսութիւն մի է Բանին մարմնացելոյ:

Բան. «Դուք զոր լուայք ի Յաւրէ ձերմէ, առնեք<sup>4</sup>» (Մես Յովի. Ը 38):

Մեկնութիւն. Ոչ հրամայելով ասէ, այլ նախ յանդիմանութեամբ է, իբր թէ դուք հետեւիք ազդմանց եւ գործոցն սատանայի: Երկրորդ. յայտնէ զածուկս նոցա: Երրորդ. ցասմամբ է, որպէս ոք ցասնու չար ծառայի: Չորրորդ. մարգարէաբար է, որպէս թէ առնելոց էք:

Բան. «Պատասխանի ետուն. “Յայր մեր Աբրահան է”» (Յովի. Ը 39):

Մեկնութիւն. Նախ՝ իբր թէ ոչ գիտեմք, թէ զո՞ ոք մեզ հայր կոչես<sup>5</sup>, երկրորդ՝ պարծելով է, երրորդ՝ վկայելով<sup>6</sup>, թէ կամաւք նորա գործեմք:

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> A B ի Յաւրէ խաւսիս

<sup>3</sup> B չեք

<sup>4</sup> A B խաւսիք

<sup>5</sup> A B զո՞ ոք հայր մեր կոչես

<sup>6</sup> C վկայելով է

Բան. «Ասէ ցնոսա, թէ որդիք Աբրահամու [էիք], զգործսն Աբրահամու<sup>1</sup> [գործէիք]» (Յովի. Ը 39):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Կատարեալ նշան որդիութեան է, որ հետեւին Հաւրն գործովք իւրեանց, այլ գուշք կամիք սպանանել զիս:

Բան<sup>2</sup>. «Չայր մի» (Յովի. Ը 40):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ<sup>3</sup>.** Ցորժամ այր ասէ, մի՛ սոսկ մարդ իմանալ, զի Աստուած է այրացեալ, եւ յորժամ Աստուած ասէ, մի՛ բաժանմամբ զԲանն իմանալ, այլ մարմնովն միաւորեալ:

Բան. «Զոր լուայ ի Յաւրէ» (Յովի. Ը 40):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Տեսանել եւ լսել ասէ<sup>4</sup>, զի առ մեզ սոքա պատուականք են, քան զայլ զգայութիւնս, նախ՝ զի իշխանականք են սոքա: Երկրորդ. զի Հաստատուն է տեսանելն եւ լսելն: Երրորդ. զի զամենայն տեսական եւ գործնական սոքաւք ուսանիմք: Եւ<sup>5</sup> չորրորդ. լսել եւ տեսանել եւ ուսանել ամենայն ուրեք զկամաց Հաւր կատարումն ասէ, իսկ կատարել զկամս Հաւրն զմիութիւն կամացն յայտնէ ամենայն ուրեք:

Բան. «Չայր Աբրահամ ոչ արար» (Յովի. Ը 41):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ<sup>6</sup>.** Երեք ի վերոյ եղիր որոշմունք. նախ՝ զի աստուածասէր էր, երկրորդ՝ զկամս նորա առնէր, երրորդ՝ զբարիս գործէր:

Երեք աստ դնէ. նախ՝ նա զհրեշտակս Աստուծոյ խոնարհութեամբ ընկալաւ, դուք զառաքեալսն նորա հալածէք: Երկրորդ. նա զաւտարսն սիրէր, դուք զձերն ատէք: Երրորդ. նա չարեացն բարի առնէր, դուք բարերարիս չար հատուցանէք:

Եւ թէ ոք ասիցէ. «Քրիստոս ի ժամանակս Աբրահամու ոչ էր, զիա՞րդ զնա հալածէր»:

**Ասեն** վարդապետք. նախ՝ թէպէտ Քրիստոս մարմնով ի ժամանակս Աբրահամու ոչ էր, այլ որք նման էին Քրիստոսի, ընդունեցաւ եւ ոչ հալածեաց: Երկրորդ. թէպէտ յայնժամ ոչ էր եկեալ մարմնով, այլ միշտ հոգեպէս զգալուստն Քրիստոսի ի միտս սրբոցն էր:

Ցորժամ տեսին հրէայքն, թէ Քրիստոս ի գործոցն խնդրէ զորդիութիւն, վասն որոյ ասեն զինքեանս որդիս Աստուծոյ գոյ՝ զպատուիրանս նորա պահելով:

<sup>1</sup> B C չեք

<sup>2</sup> B չեք

<sup>3</sup> A B չեք

<sup>4</sup> B չեք մի սոսկ մարդ իմանալ ... տեսանել եւ լսել ասէ

<sup>5</sup> C չեք

<sup>6</sup> B չեք

### Թէ մի է կռապաշտն եւ հերձուածողն<sup>1</sup>

Բան. «Մեք ի պոռնկութենէ չեմք ծնեալ» (Յովի. Ը 41):

**Մեկնութիւն.** Պոռնկութիւն կոչէ զկռապաշտութիւն, նախ՝ զի մարգարէքն սոյնպէս սովոր էին կոչել: Երկրորդ. զի որպէս կինն պոռնկութեամբ որոշի յառնէ իւրմէ, սոյնպէս կռաւքն հոգի մարդոյ բաժանի յԱստուծոյ, իսկ հրէայքն չէին կռապաշտք, այլ մի՛ Աստուած հաւատային, վասն այն ասեն.

Բան. «Մի է Յայր մեր՝ Աստուած» (Յովի. Ը 41):

**Մեկնութիւն.** Գիտելի է, զի որպէս կռապաշտք ի հինն էր, ի նորս հերձուածողք են, վասն չորից. Նախ՝ զի միապէս զհոգին որոշեն յԱստուծոյ: Երկրորդ. զի միապէս անարգեն զԱստուած: Երրորդ. զի թողեալ զծշմարիտն եւ ստոյն հետեւին: Զորրորդ. զի երկոքին զսուտն ճշմարիտ կարծեն, այսինքն՝ կռապաշտք եւ հերձուածողք:

### Թէ ոչ է Աստուած հայր նոցա

Բան. «Մի է Յայր մեր՝ Աստուած» (Յովի. Ը 41):

**Մեկնութիւն.** Եւ Քրիստոս զհայրութիւն Աստուծոյ<sup>2</sup> բառնայ ի նոցանէ՝ ասելով.

Բան. «Եթէ Աստուած էր հայր ձեր, սիրեիք արդեաւը<sup>3</sup> եւ զիս» (Յովի. Ը 42):

**Մեկնութիւն.** Նշան որդիութեան է հետեւումն գործոց, որպէս ասէ Պաւղոս յԵփեսացիսն. «Եղերո՛ւք հետեւողք Աստուծոյ իբրեւ որդիք սիրելիք եւ գնացէք սիրով» (Եփես. Ե 1): Իսկ հրէայքն զայս սէրս ոչ ունէին, զի թէ սիրէին զԱստուած Հայր, սիրէին եւ զՈրդի, քանզի բնութեամբ Քրիստոս Որդի է Աստուծոյ որպէս եւ ասէ.

Բան. «ՅԱստուծոյ Ելի եւ Եկի» (Յովի. Ը 42):

**Մեկնութիւն.** Քրիստոս յԱստուծոյ Հաւրէ է յաւիտենական ծննդեամբ, եւ եկն յաշխարհ ժամանակաւոր ներմարդութեամբ, եւ զի Քրիստոս Որդի է Աստուծոյ, պարտ էր ի վարդապետութենէն եւ ի վարուցն<sup>4</sup> ճանաչել, վասն այն ասէ.

<sup>1</sup> Ըար հերձուածողն

<sup>2</sup> Ա Յ չեք

<sup>3</sup> Ա Յ չեք

<sup>4</sup> Յ ի վարուցն եւ ի վարդապետութենէն

Բան. «Ընդէ՞ր զիսաւսս իմ ո՛չ լսէք<sup>1</sup>» (տես Յովի. Ը 43):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Իբրու թէ ասել. «Հնդէ՞ր ի բանից իմոց եւ ի գործոց<sup>2</sup> ոչ ճանաչէք, թէ՝ ես եմ Քրիստոսն», եւ ինքն տայ պատասխանին.

Բան. «Վասն զի ո՛չ կարէք լսել զբանս իմ<sup>3</sup>» (Յովի. Ը 43):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Իբրու թէ ասել. «Այդ պակասութիւնդ ոչ է ի գործոց իմոց կամ ի վարդապետութենէ, այլ ի չար նախանձու եւ յատելութենէ ձեր, զոր ընդդէմ ինձ ունիք, ո՛չ կարէք լսել զբանս իմ, զի ատելութիւն եւ նախանձ եւ այլ չարութիւնք թիւրէ զբանաւորութիւն»:

Յորժամ ցուցեալ եղեւ, թէ հրէայքն ոչ էին որդիք Աբրահամու եւ ոչ Աստուծոյ, այժմ ցուցանէ, թէ ո՞յլ էին որդիք:

Բան. «Դուք ի Յաւրէն սատանայէ էք» (տես Յովի. Ը 44):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Ոչ ստեղծմամբ, այլ հետեւմամբ գործոց:

Եւ գիտելի է, յորժամ ասացին հրէայքն զինքեանս որդիս Աստուծոյ, յերիս դէմս վնաս գոյր. նախ՝ ի դէմս Հաւր, զի նուաստացուցին: Երկրորդ. զի Քրիստոսի հաւասարեցին: Երրորդ. զինքեանս բարձրացուցին, վասն որոյ զայրացաւ Քրիստոս: Արդ, վասն հաւասարելոյն ինքեան մեղմով պատասխանեաց, թէ՝ «ՅԱՍՏՈՒԾՈՅ ԷՒՔ, ՍԻՐԵՒՔ ԵՒ ՕԻՍ», եւ այլն, իսկ վասն Հաւրն վրէմինդրեաց եւ վասն բարձրութեան նոցա զընդդէմ քամահեաց, որպէս յայտ է ի մեկնչէդ: Եւ տե՛ս, զի յորժամ մեք անարժան գոլով Հայր կոչեմք զԱստուած, այդպէս անարգութիւն է մեզ, որպէս ասէ.

### Վասն սատանայի

Բան. «Դուք ի Յաւրէն սատանայէ էք եւ զցանկութիւն Յաւրն ձերոյ կամիք առնել<sup>4</sup>» (Յովի. Ը 44):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Աստ երեք չարութիւն դնէ սատանայի եւ ցուցանէ, թէ հրէայքն ունէին զչարութիւնսն զայն. նախ՝ մարդասպան էր, երկրորդ՝ ի ճշմարտութեան ոչ եկաց, երրորդ՝ յիւրոցն խաւսի զսուտն:

Վասն առաջնոյն գիտելի է, զի սատանայ մարդասպան է կրկին կերպիւ. նախ՝ որ զնախաստեղծքն մահացոյց եւ նոքաւք զբնութիւնս, որպէս ասէ Սողոմոն. «Նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ» (Խնաստ. Բ 25): Երկրորդ. զի մարդն կարգաւո-

<sup>1</sup> Ը լսէք դուք

<sup>2</sup> Ը ի բանից եւ ի գործոց իմոց

<sup>3</sup> Ա չեք

<sup>4</sup> Ա Յ չեք կամիք առնել

ըի ի բանական հոգւոյն, վասն որոյ առաւել մարդասպան է, որ զհոգին մահու չափ մեղաւք սպանանէ, քան զայն, որ զմարմինն սպանանէ, որ նման է անասնոց: Եւ զայս արար սատանայ ի սկզբանէ աշխարհի, ազգումն չարեաց դնելով ի սիրտն եւայի, եւ ազգմամբ նորա ամենայն մեղք մարդոյն եղեւ մինչեւ ցայժմ, զնոյն ներգործէ եւ առ յապա, վասն այն մարդասպան ասի:

Եւ այսու, զի ասէ՝ ի սկզբանէ, ոչ է պարտ իմանալ, թէ Աստուած զնա չար ստեղծ եւ կամ յայլմէ չարեցաւ, զի Աստուած զնա անմեղ ստեղծ, եւ ինքն եղեւ սկիզբն չարաց, այլ զայն ասէ ի սկզբանէ. նախ՝ որ յետ ստեղծման իւրոյ արագ-արագ ի մեղս անկաւ եւ զդեւսն ընդ<sup>1</sup> իւր մեղանչական արար, ապա սուտ են, որ ասեն, թէ յերկուշաբթին կամ ի<sup>2</sup> չորեքշաբթին անկան, զի յառաջին կէտն, որ ստեղծան, յերկրորդ կէտն չարացան եւ անկան: Երկրորդ. զի յետ լինելութեան մարդոյն վաղվաղակի զմարդն փորձեաց եւ ի մեղս էած, վասն այն ասէ. «Ի սկզբանէ մարդասպան էր»: Դարձեալ՝ ամենայն մեղք, զոր այժմ գործեմք, սկիզբն սատանայ լինի եւ ապա՝ անձնիշխան կամքս մեր: Եւ դարձեալ՝ ի սպանումն Տեառն սկիզբն սատանայ եղեւ, եւ ապա հրէայքն՝ ի նմանէ շարժեալք:

**Այս առաջինն:**

Երկրորդ. չարութիւն սատանայի, որ ի ճշմարտութեան ոչ եկաց:

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Աստ անուամբ ճշմարտութեան իմանի հնագանդութիւն առ Աստուած, զի իր ինչ ճշմարիտ ասի, յորժամ համաձայնի նախկին ճշմարտութեան<sup>3</sup>, որ է Աստուած<sup>4</sup>, եւ յայսմ ճշմարտութեան ոչ եկաց սատանայ՝ հնազանդելով նմա, այլ հպարտութեամբ եթող զնա, որպէս ասէ.

Բան. «Զի ոչ գոյ ճշմարտութիւն<sup>5</sup> ի նմա» (Յովի. Ը 44):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Որպէս թէ հարցեալ էաք. «Ուստի՝ երեւի, թէ սատանայ ի ճշմարտութեան ոչ եկաց<sup>6</sup>»: Պատասխանէ Քրիստոս<sup>7</sup>. «Զի ոչ գոյ ճշմարտութիւն ի նմա», զի թէ ի ճշմարտութեան կացեալ էր, արդեալք գոյը ի նմա ճշմարտութիւն:

Երրորդ. չարութիւն սատանայի, որպէս ասէ.

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> A B չեք ի

<sup>3</sup> B կրկ. ինանի ինազանդութիւն առ Աստուած, զի իր ինչ ճշմարիտ ասի

<sup>4</sup> B չեք որ է Աստուած

<sup>5</sup> B ճշմարիտ

<sup>6</sup> C ոչ եկաց ի ճշմարտութեան

<sup>7</sup> C չեք

Բան. «Յորժամ խաւսիցի սուտ, յիւրմէ անտի խաւսի<sup>1</sup>» (տես Յովի. Ը 44):

**Մեկնութիւն.** *Այսինքն՝ ի չար ունակութենէ, ըստ որում խոստացեալ է: Եւ զպատճառն յայսմ դնէ՝ ասելով.*

Բան. «Զի սուտ է եւ Յայր նորա» (Յովի. Ը 44):

**Մեկնութիւն.** *Այսինքն՝ սատանայ սուտ է եւ հայր ստութեան, զի սոյնպիսի մարդ սուտ ասի, որ զսուտն յայլմէ լուեալ պատմէ, բայց սուտ եւ հայր ստութեան այն է, որ միայն պատմէ զայլոց ստութիւն, այլ յինքենէ նոր սուտ ծնանի եւ ասէ, եւ սոյնպէս սատանայ հայր ստութեան ասէ, զի նա զառաջին ստութիւն եղիտ եւ ասաց առ եւա՝ ոչ նեռանիցիք (Ծննդ. Գ 5), այլ եւ զԱստուած չարախաւսեաց, որպէս գրեալ է յԱրարածքն, նոյնպէս եւ բազումք ի մարդկանէ սուտ խաւսելով հայր լինին ստութեան, այլ եւ որդիք ստութեան սատանայի նմանեալ:*

*Եւ աստ լինի երեք հարց.*

**Առաջին.** *Վասն է՞ր ասէ ի ճշմարտութեան ոչ եկաց:*

**Պատասխան.** *Վասն երից. նախ՝ զի ճշմարտութիւն է յաւիտենական եւ հաստատուն հիմն ամենայն հոգեւոր բարութեան, ապա ուրեմն ընդդէմ նմին ստութեան հիմն է ամենայն չարութեան: Երկրորդ. զի սատանայ ոչ ստեղծաւ չար, որպէս ոմանք ասացին, զի երբեմն ի ճշմարտութեան կայր, բայց ստուգապէս ոչ եկաց ի ճշմարտութիւն: Երրորդ. զի ցուցցէ, թէ սատանայ յուղութենէն, յոր կայր, անկաւ:*

**Երկրորդ.** *Հարց. Քրիստոս աստ ճառէ զառաջին մեղքն սատանայի, վասն է՞ր ոչ ասէ ի բարոյն չարացաւ, քան թէ ի ճշմարտութենէն անկաւ:*

**Պատասխան.** *Ասեն վարդապետք վասն չորս պատճառի. նախ՝ զի սկիզբն վարդապետութեան Քրիստոսի էր վասն ճշմարտութեան, որպէս ասէր. «Եթէ կացջիք ի բանն իմ, ճշմարիտ աշակերտը ին էք» (տես Յովի. Ը 31) եւ այլն, վասն որոյ առաւել յիշէ զճշմարտութիւն քան զբարութիւն: Երկրորդ. զի աստ խաւսի Քրիստոս վասն անձին Բանին Աստուծոյ, եւ ճշմարտութիւն առաւել յատուկ է Բանին, որ է պատկեր եւ նմանութիւն հայրական էութեան, զի բարութիւն Հոգւոյն է յատուկ եւ կարողութիւն՝ Հաւր: Երրորդ. զի յիշէ զելումն ի ճշմարտութենէն, եցոյց զսնոտի եւ զխաբող վարդապետութիւն, որով զառաջին մարդն խարեաց եւ զբոլոր աշխարհս ստութեամբ եւ խարելով ի զանազան մեղս ձգէ եւ ի կոապաշտութիւն եւ ի հերձուածս, իսկ այս ամենայն ոչ կա-*

<sup>1</sup> Ա Յ Յորժամ խաւսի սուտ յիւրմէ անդ

ըէ նշանակիլ ելմամբն ի բարութենէն: Զորրորդ. զի ցուցցէ, թէ սատանայ ո՛չ միայն անկաւ ի մեղս, այլ եւ ի պատիժն, եւ ընդդէմ իւրոյ գիտաւորութեան խաբեցաւ, յորժամ հպարտացաւ, զի զփառս եւ զիշխանութիւն ի վեր սիրեաց քան զԱստծոյն, եւ յիմարացաւ, վասն այն ասէ. «Ի ճշնարտութեան ո՛չ եկաց» (Յովի. Ը 44):

### Վասն մանիքեցւոցն

Երրորդ հարց<sup>1</sup>. Գիտելի է, զի յիմար մանիքեցիքն ասեն, թէ սատանայ աստուած եւ ստեղծող էր Հին Կտակարանացն, եւ թէ սատանայ ունի միւս եւս գերագոյն աստուած՝ չար եւ սուտ, որ հայր է նորա, զի յորժամ ասաց Քրիստոս՝ սուտ է եւ հայր նորա, սոյնպէս իմանան, թէ սուտ է սատանայ եւ հայրն սատանայի:

Իսկ բնաբանս յանդիմանէ զնոսա հինգ պատճառաւ. նախ՝ զի Քրիստոս ասէ. «Գիտեմ, զի զաւակ Աբրահամու էք» (Յովի. Ը 37), որ իմանի վասն բնական ծննդեանն: Եւ յայտ է, զի սատանայ ոչ էր հայր նոցա ըստ բնութեան: Երկրորդ. զի ասէ Քրիստոս. «Եթէ զաւակ Աբրահամու էիք, զգործս Աբրահամու [գործէիք]» (տե՛ս Յովի. Ը 39), եւ յետոյ ասէ. «Դուք առնեք զգործս հաւրն ձերոյ» (Յովի. Ը 41), այսինքն՝ սատանայի: Այսու յայտնապէս ցուցանէ, զի խաւսի աստ վասն հայրութեան եւ որդիութեան, որ ըստ հետեւման գործոց եւ ոչ ըստ բնութեան ելման: Երրորդ. զի թէ սոքա ըստ իւրեանց գոյացութեան եւ բնութեան էին յաստուծոյ ումեմնէ չարէ, յայնժամ ոչ վայել էր Քրիստոսի յանդիմանել զնոսա վասն նոցին մեղացն եւ դարձուցանել ի մոլորութենէ, այլ Քրիստոս կամէր դարձուցանել զնոսա, որպէս ասաց. «Ընդէ՞ր զբանս իմ ոչ ճանաչէք» (Յովի. Ը 43): Եւ յառաջն ասաց. «Թէ ոչ հաւատաչիք, թէ ես եմ, մեռանիցիք ի մեղս ձեր» (Իմնտ. Յովի. Ը 24): Եւ ցանդամալոյծն ասէր. «Ողջացար, մի՛ եւս մեղանչեր» (Յովի. Ե 14): Զորրորդ պատճառ. զի սատանայ ոչ ասի ստեղծող մարդոյ, այլ սպանող, զոր եսպան<sup>2</sup> մեղաւք: Եւ յայտնի է, զի մահն եւ մեղքն ոչ են բնական եւ գոյացական մարդոյն: Հինգերորդ. զի թէ սատանայ հայր ունէր, յորմէ ստութիւն ընկալաւ, յայնժամ սատանայ ոչ խաւսէր յանձնէ զսուտն, իսկ Քրիստոս ասէ. «Յորժամ սատանայ սուտ ասէ, յանձնէ իւրմէ ասէ» (Իմնտ. Յովի. Ը 44), ապա ուրեմն յայտ է, զի ոչ ունի<sup>3</sup> հայր, յորմէ ստութիւն

<sup>1</sup> С չիք հարց

<sup>2</sup> Յ սպան

<sup>3</sup> С չիք ապա ուրեմն ... ոչ ունի

ընկալաւ սատանայ, վասն այն<sup>1</sup> հրէիցն ասէ<sup>2</sup> Քրիստոս, թէ՝ ոչ էք յԱստուծոյ, պարտ է սոյնպէս իմանալ, զի ընդունելութեամբ շնորհաց ոչ էին յԱստուծոյ, նոյնպէս եւ սատանայ հայր ասի նոշա, զի հետեւողք էին գործոց նորա:

Յորժամ եցոյց Քրիստոս զչարութիւն սատանայի, այժմ ցուցանէ, թէ չարութիւն այն գոյ ի հրէայքն:

Բան. «Իսկ ես, զի զճշմարտութիւն խաւսին, ոչ հաւատայք ինձ<sup>3</sup>»

(Յովի. Ը 45):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ.** Իբրու ասել. «Այսու յայտնի է, զի յատուկ սովորութիւն է ձեր ընդունել զսուտն եւ ոչ զճշմարիտն»: Իսկ թէ ասեն. «Ոչ հաւատամք Քեզ, ոչ վասն ատելոյ զճշմարտութիւն, այլ վասն քոյո՞յ չարութեանդ»: Զայս յետակայ բանիւդ ի բաց բառնայ Քրիստոս՝ ասելով.

Բան. «Ո՞ ի ձենջ յանդիմանէ<sup>4</sup> զիս վասն մեղաց<sup>5</sup>» (Յովի. Ը 46):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ.** Իբրու թէ ասել. «Մեղս ինչ ոչ գիտէք, կամ ստութիւն, զոր ի վերայ իմոյս անձին կարէք ցուցանել, պատրաստ եմ ի լսել եւ ի<sup>6</sup> պատասխանել», բայց հրէայքն զայն ոչ կարէին առնել, վասն այն զկնի ասէ.

Բան. «Թէ զճշմարիտն ասեմ, ընդէ՞ր ոչ հաւատայք ինձ<sup>7</sup>» (Յովի. Ը 46):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ.** Եւ ինքն պատասխանէ՝ ասելով.

Բան. «Որ էն յԱստուծոյ, զբանն Աստուծոյ լսէ» (Յովի. Ը 47):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ.** Զի իւրաքանչիւր մարդ յաւժար կամաւք զայն բանն լսէ, զոր սիրէ<sup>8</sup>, եւ թէ ոք շնորհաւք եւ հաւատովք<sup>9</sup> յԱստուծոյ իցէ, հածութեամբ զԲանն Աստուծոյ լսէ, իսկ հրէայքն թէպէտ ըստ բնութեան յԱստուծոյ էին, այլ հաւատովք եւ շնորհաւք ոչ էին յԱստուծոյ, վասն այն զԲանն Քրիստոսի ոչ բնդունէին, որպէս ասէ.

Բան. «Եւ դուք վասն այնորիկ ոչ լսէք, զի չեք յԱստուծոյ» (Յովի. Ը 47):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ.** Ուստի հետեւի, զի ի սատանայէ էին<sup>10</sup> ոչ ստեղծմամբ, այլ հետեւմամբ գործոց: Արդ, հաւաքեալ յառաջն եւ զկնի չորս բանիւ եցոյց, զի ոչ էին հրէայքն որդիք Աստուծոյ.

<sup>1</sup> B չիք

<sup>2</sup> C չիք վասն այն իրէիցն ասէ

<sup>3</sup> A B չիք

<sup>4</sup> C յանդիմանեաց

<sup>5</sup> A չիք

<sup>6</sup> C չիք

<sup>7</sup> A B չիք

<sup>8</sup> C չիք զոր սիրէ

<sup>9</sup> C շնորհելով եւ հաւատով

<sup>10</sup> A B զի սատանայ էին

նախ՝ զի ոչ սիրէին զՔրիստոս, երկրորդ՝ զի ոչ ունէին զգործս Աստուծոյ, երրորդ՝ զի ոչ ընկալան զծշմարտութին, չորրորդ՝ զի ոչ լսէին զԲանն Աստուծոյ: Այսուհետեւ ճառէ զհակառակութիւնս հրէիցն:

### Սամարացի եւ դիւահար

Բան. «Պատասխանի ետուն. “Ո՞չ բարւոք ասեմ<sup>1</sup> [նեք՝ եթէ] սամարացի ես [դու] եւ դեւ գոյ ի քեզ<sup>2</sup>» (Յովհ. Ը 48):

Մեկնութիւն. Սովորութիւն է մարդկան, որք ոչ գիտեն պատասխանել, նախատինք եւ խովութիւն առնեն, վասն որոյ հրէայքն, որ ոչ գիտէին ըստ բանաւորութեան պատասխանել<sup>3</sup> Քրիստոսի, սկսան կռուել եւ հերձուած խաւսել՝ սամարացի ես, թէպէտ գիտէին նոքա զՔրիստոս, զի յազգէն հրէից էր եւ ոչ սամարացի:

Այլ վասն կրկին պատճառի սամարացի կոչեն. նախ՝ զի սամարացիքն զմասնաւոր աւրէնս պահէին եւ զմասն լուծանէին, որպէս ցուցաւ ի չորրորդ գլուխն Աւետարանիս, եւ վասն լուծման շաբաթուն եւ այլոցն զՔրիստոս սամարացի կոչէին: Երկրորդ. զի սամարացիքն հակառակ էին հրէիցն, եւ զՔրիստոս այնպէս համարէին, եւ ոչ մի անգամ ասէին զայս, այլ բազում անգամ սովորութիւն կալեալ եւ որպէս բարի այժմ հաստատեն. «Ո՞չ բարւոք ասացաք» (Յովհ. Ը 48):

«Դեւ գոյ ի քեզ» (Յովհ. Ը 49) վասն չորից ասէին. նախ՝ վասն սքանչելեացն, զոր առնէր, կախարդութեամբ համարէին: Երկրորդ. զի զծածուկ խորհուրդս նոցա յայտնէր եւ զայն ոչ գիտէին, թէ դեւք զխորհուրդս մարդկան ոչ իմանան: Երրորդ. զի մարգարէաբար զլինելոցն կանխաւ ցուցանէր, ասէին. «Զսա առաւել լիկ այսն չար եւ մարգարէանայ, որպէս զԱւուղ թագաւոր»: Զորրորդ. վասն բարձր եւ նուրբ բանիցն, զոր խաւսէր, անհաւատալի թուէր, որպէս այն. «Յառաջ քան զլինելն Աբրահամու եմ<sup>4</sup>» (Յովհ. Ը 58) եւ «Թէ ոք զբանն իմ պահէ, զմահ մի՛ տեսցէ» (Յովհ. Ը 51): վասն այն դիւահար կոչէին: Այժմ դնէ զհեղութեամբ պատասխանին Քրիստոսի, որպէս ասէ Պետրոս ի կաթուղիկէն. «Որ անիծանէին, եւ նա ոչ անիծանէր» (հմնտ. Ա Պետր. Բ 23):

<sup>1</sup> C չեք

<sup>2</sup> A B չեք գոյ ի քեզ

<sup>3</sup> C պատասխանի տալը

<sup>4</sup> C ես եմ

Բան. «Յիս դեւ ոչ գոյ» (Յովի. Ը 49):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Ոչ ուրանայ զինքն գոլ սամարացի. նախ՝ զի սամարացին «պահապան» թարգմանի, եւ նա է պահապան ամենայնի: Երկրորդ. եւ Ղուկաս յառակսն գրեաց զՔրիստոս սամարացի, որ բժշկեաց զկիսամահ վիրաւորեալն (հննտ. Դուկ. Ժ 29-37):

Եւ զի ոչ ունէր դեւ, յայտնի է ի վեցից. նախ՝ զի զդեւս հանէր, Երկրորդ՝ զի ոչ ունէր չար վարդապետութիւն, այլ բարի, Երրորդ՝ դեւն սպանանէ, այլ Քրիստոս կեցուցանէր, չորրորդ՝ զի մեծամեծ սքանչելիք զաւրութեամբն Աստուծոյ լինի եւ ոչ դիւաց, Հինգերորդ՝ զշայր փառաւորէր, վեցերորդ՝ զհաճոյսն Աստուծոյ առնէր հանապազ, զոր ոչ առնեն դեւք:

Բան. «Այլ պատուեմ զՅայր իմ<sup>1</sup>» (Յովի. Ը 49):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Մքանչելեաւք ցուցանելով զզաւրութիւն նորա:

Բան. «Եւ դուք անարգէք զիս» (Յովի. Ը 49):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Հրէայքն անարգէին զՔրիստոս, զի ասէին զգործս հրաշից նորա զաւրութեամբ դիւաց լինել:

### Վասն փառս խնդրելոյ

Բան. «Ես ոչ խնդրեմ զփառս իմ» (Յովի. Ը 50):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Մի եւ նոյն է<sup>2</sup> փառքն Հաւր եւ Որդւոյ, եւ Քրիստոս խնդրէր զփառս Աստուծոյ Հաւր<sup>3</sup>, զիա՞րդ ասէ, թէ՝ ոչ խնդրեմ զփառս իմ:

Պատասխան. Նախ՝ զկարծիք<sup>4</sup> հրէիցն բառնայ, զի նոքա համարէին, թէ սնափառ է եւ ժամանակաւոր պատիւ խնդրէ: Երկրորդ. Ես ոչ խնդրեմ փառք<sup>5</sup> որիշ եւ յատուկ ի փառացն Աստուծոյ:

Բան. «Ե, որ խնդրէ[ն], եւ դատի» (Յովի. Ը 50):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Որպէս ասել, թէ բազումք են, որ զփառս աշխարհիս խնդրեն, եւ նոքա հային ի գործս իմ, եւ դատեմ, զի ոչ խնդրեմ զփառս աշխարհիս<sup>6</sup>:

Եւ յայտնի է ի չորից. նախ՝ որ զփառս խնդրէ, ձաղանաց ոչ ներէ: Երկրորդ՝ միշտ զայլս ձաղէ: Երրորդ՝ զփառթամութիւն սի-

<sup>1</sup> Ը չիք

<sup>2</sup> Ը Զի եւ նոյն

<sup>3</sup> Ը չիք Աստուծոյ Հաւր

<sup>4</sup> Ը չիք Պատասխան. Նախ՝ զկարծիք

<sup>5</sup> Ը փառս

<sup>6</sup> Ը աշխարհի

ըէ: Զորբորդ՝ պատուական զգեստիւ լինի: Այս է նշան փառասիրաց եւ Քրիստոս զայս ոչ ունէր:

### Վասն դատաստանի

Դարձեալ եւ այլ կերպիւ մեկնի բանս. «Ես ոչ խնդրեմ զիառս», այսինքն՝ ոչ կամիմ այժմ բարձրանալ, զի նախքան զչարչարանս անարգութիւն խնդրէր եւ ոչ բարձրութիւն:

Բան. «Ե, որ խնդրէ[Ա], եւ դատի» (Յովհ. Ը 50):

Մեկնութիւն. Զի Հայր Աստուած խնդրեաց ի պատշաճ ժամանակի բարձրացուցանել զնա խաչիւն, որպէս ասէ Պաւղոս Փիլիպեցւոց. «Աստուած զնա առաւել բարձրացոյց եւ շնորհեաց նմանուն» (Փիլիպ. Բ 9), եւ ինքն ասէր. «Փառաւոր արարի եւ դարձեալ փառաւոր արարից» (Յովհ. ԺԱ 28): Դարձեալ՝ Աստուած Հայր դատեցաւ զայնոսիկ, որք ատեցին զՔրիստոս եւ վրէժինդիր եղեւ ի վերայ նոցա՝ աւերմամբ քաղաքին եւ տաճարին: Եւ դարձեալ՝ դատելոց է<sup>1</sup> զնոսա ի կատարածի, որպէս ասէ մեկնիչդ<sup>ex</sup>:

Հարց. Որպէս ասէ աստ, թէ Հայր դատի, զի ինքն ի սոյն Աւետարանի ասաց, թէ՝ «Հայր ո՛չ դատի զոք, այլ զամենայն դատաստան ետ Որդույ» (Յովհ. Ե 22):

Պատասխան<sup>2</sup>. Այսպէս մեկնեն վարդապետք. նախ՝ թէ կրկին իր է ի դատաստան, այսինքն՝ բաժանումն եւ դատապարտութիւն, անդ վասն դատաստանի դատապարտութեան ասէ, որ միայն Որդւոյ է յայտնապէս, եւ աստ վասն դատաստանի բաժանմանն, իբրու ասել. «Ե, որ զփառու<sup>3</sup> ի ձեր փառացդ բաժանէ եւ զանազանէ, զի դուք ըստ այսմ աշխարհի սնափառ էք, եւ ես՝ ոչ այդպէս»: Երկրորդ. կարեմք ասել, թէ միայն Որդին դատելոց է արտաքին եւ զգալի երեւմամբ, բայց ծածուկ իշխանութեամբ եւ հրամանաւ Հաւը:

Եւ զի դատաստան առնել եւ<sup>4</sup> դատել յատկանայ Հաւը, վասն երեք պատճառի. նախ՝ զի ծննդեամբ սկիզբն է Որդւոյ, վասն այն Որդին ի նմանէ ունի իշխանութիւն դատելոյ: Երկրորդ. վասն մեծութեան եւ վերակացութեան Հաւը ի վերայ մարդկութեան Քրիստոսի: Երրորդ պատճառ. վասն զի Քրիստոս վրէժինդիր մի երեւեսցի, վասն այն Հայր դատէ զնոսա:

<sup>1</sup> A B չեք է

<sup>2</sup> C չեք

<sup>3</sup> C զիառս իմ

<sup>4</sup> C չեք առնել եւ

Իսկ յորժամ ցուցաւ, թէ Քրիստոս է լոյս աշխարհի, եւ ցուցաւ, թէ Հետեւողք նորա ոչ ըրջին ընդ խաւար, այժմ ցուցանէ, թէ Հետեւողք նորա ունին զլոյսն կենաց:

### Վասն Բանին կենաց

Բան. «Ամէն, ամէն ասեն ձեզ» (Յովի. Ը 51):

ՄԵԼՈՒԹԻՒՆ. «Ամէն» երայեցերէն է, «Հաւատարիմ» եւ «Հաստատ» թարգմանի, եւ կրկին ասելն վասն ստուգութեան բանին:

Բան. «Եթէ որ զբանն<sup>1</sup> իմ պահեսցէ, զնահ մի՛ տեսցէ<sup>2</sup>» (Յովի. Ը 51):

ՄԵԼՈՒԹԻՒՆ. Նախ՝ որ հաւատով եւ սուրբ գործով պահեն, որպէս ասէ Դաւիթ. «Ի սրտի իմում թաքուցի<sup>3</sup> զբանս քո» (Սաղմ. ճմ՛ 11) եւ այլն: Երկրորդ. զի Բանն Աստուծոյ սերմն է, որպէս այլ աւետարանիչքն ասեն. «Ամենայն, որ սերմանէ, զբանն սերմանէ» (Մարկ. Ղ 14), զի կեանքն յաւիտենական գոյ ի Բանն Աստուծոյ, որպէս ի սերմն զաւրութեամբ գոյ պտուղն, նոյնպէս որ պահէ զբանն Աստուծոյ, հասանէ ի կեանս երանութեան, որպէս ասէ. «Զնահ մի տեսցէ յաւիտեան» (Յովի. Ը 51): Եւ այսու յայտնի է, զի Հետեւողքն Քրիստոսի ունին զլոյսն կենաց, եւ այս է երրորդ բանն, որ ցուցանէ, զի յաւիտենական է Քրիստոս, որպէս ասէ. «Որ պահէ զբանն իմ, զնահ մի՛ տեսցէ յաւիտեան» (Յովի. Ը 51):

Դարձեալ՝ զայս ասաց Քրիստոս վասն երեք պատճառի. Նախ՝ ցուցանէ, թէ ոչ կամէր վրէժինդրութիւն ի վերայ նոցա, այլ կամէր զնոցա փրկութիւն, վասն որոյ ասէ. «Որ զբանն իմ պահէ, զնահ մի՛ տեսցէ»: Երկրորդ. ցուցանէ զիւր վարդապետութիւն ոչ գոլ դիւրական, զի ոչ էր գործ սատանայի փրկել ի մահուանէ, այլ ածել ի մահ: Երրորդ. ցուցանէ, զի Հայր սիրէ<sup>4</sup> զփառսն Քրիստոսի եւ զհետեւողաց նորին ի դատաստանին:

Բան. «Ասեն հրեայքն. “Արդ, զիտացաք, թէ դեւ գոյ ի քեզ<sup>5</sup>”» (Յովի. Ը 52):

ՄԵԼՈՒԹԻՒՆ. Որպէս թէ ասել. «Նախ՝ միայն կարծեաւք, թէ դեւ գոյ ի քեզ<sup>6</sup>, այժմ յայտնի եւ ստոյդ գիտեմք», նախ՝ զի յԱս-

<sup>1</sup> Ը զբան

<sup>2</sup> Ա Յ չեք մի՛ տեսցէ

<sup>3</sup> Ը պահեցի

<sup>4</sup> Ը չեք

<sup>5</sup> Ը չեք դեւ գոյ ի քեզ

<sup>6</sup> Ը չեք թէ դեւ գոյ ի քեզ

**տուած երբէք սուտ<sup>1</sup> ոչ գտանի, այլ ի սատանայ, իսկ բան քո սուտ է:** Երկրորդ. զի<sup>2</sup> սնափառութիւն սատանայի է, որպէս ի բան քո երեւի:

Բան. «Աբրահամ<sup>3</sup> մեռաւ եւ մարգարեքն<sup>4</sup>» (Յովի. Ը 52):

**Մեկնութիւն.** Թէաէտ նոքա պահեցին զբանն Աստուծոյ, որ զաւրագոյն է, քան զբան քո, եւ դու ասես.

Բան<sup>5</sup>. «Թէ<sup>6</sup> ոք զբանն իմ պահեսցէ, զմահ [մի՛ ճաշակեսցէ]» (Յովի. Ը 52):

**Մեկնութիւն.** Յայտ է, զի պատրեալք ի հոմանունութենէ մահու<sup>7</sup> Քրիստոս խաւսեցաւ վասն հոգեւոր մահուանն եւ նոքա իմացան վասն մարմնաւոր մահուանն<sup>8</sup>, վասն այն այպն առնելով զՔրիստոս երկու ինչ խնդրեն ի նմանէ.

**Առաջին.** Մի՞թէ դու մեծ ինչ ոք իցես, քան զհայրն մեր Աբրահամ, որ մեռաւ, եւ մարգարէքն:

Մեկնութիւն. Իբր թէ ոչ ես մեծ, քան զնոսա:

Երկրորդ. Արդ, դու զո՞ առնես զքեզ:

**Մեկնութիւն.** Իբր թէ ասել յայտնի է, զի ստութեամբ զանձն քո գովես:

Բան. «Պատասխանի ետ Յիսուս» (Յովի. Ը 54):

**Մեկնութիւն.** Եւ նախ Քրիստոս պատասխանի տայ առ Երկրորդն, եւ Երկրորդն<sup>9</sup> առ առաջինն: Անդ, ուր ասէ. «Աբրահամ հայր ծեր, ցանկացաւ [տեսանել զաւր իմ]» (Յովի. Ը 56), եւ վասն առաջնոյն գիտելի է, որ զնա փառասէր համարէին, վասն այն Քրիստոս զայս ի բաց բառնայ:

Բան. «Եթէ ես փառաւորեմ զանձն իմ, փառքն իմ ոչ ինչ են» (Յովի. Ը 54):

**Մեկնութիւն.** Նախ՝ ըստ կարծեաց հրէիցն ասէ, որ ոչ հաւատային եւ ոչ փառաւորէին: Երկրորդ. Եթէ մարմնական փառք խնդրեմ, ոչ ինչ են, այսինքն՝ սուտ, զի որպէս էակն եւ ճշմարիտն հակագարձին առ միմեանս, սոյնպէս ոչ ինչն եւ սուտն: Եւ փառքն Քրիստոսի ոչ էր սուտ, զի ի Հաւրէ Աստուծոյ էր, որպէս ասէ.

<sup>1</sup> Ծիք յԱստուած Երբէք սուտ

<sup>2</sup> Ծիք Երկրորդ. զի

<sup>3</sup> Յաղու Աբրահամ

<sup>4</sup> Ծիք «Աբրահամ մեռաւ եւ մարգարեքն»

<sup>5</sup> Ծիք

<sup>6</sup> Ծիք

<sup>7</sup> Ծիք

<sup>8</sup> Ծիք

<sup>9</sup> Ծիք

Բան. «Ե Հայր, որ փառաւորէ զիս» (Յովի. Ը 54):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ.** Հայր զՔրիստոս փառաւորեաց. Նախ՝ սքանչելագործութեամբ, երկրորդ՝ յարութեամբն, երրորդ՝ համբարձմամբն, չորրորդ՝ ի դատաստանին: Իսկ զՀայրն Քրիստոսի հրէայքն ոչ փառաւորէին, թէ ոչ բանիւ միայն, որպէս ասէ.

Բան. «Զորմէ դուքն ասէք, թէ Աստուած մեր է, եւ ոչ ճանաչէք զաա» (Յովի. Ը 54):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ.** Հրէայքն զԱստուած իւրեանց Հայր ասէին, եւ սուտ են. Նախ՝ զի կատարեալ եւ կենդանի հաւատով ոչ ճանաչեն զնա, որով լինի որդեգրութիւն: Երկրորդ՝ ոչ ճանաչէին գործով:

Բան. «Բայց ես գիտեմ զնա<sup>1</sup>» (Յովի. Ը 55):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ.** Զի Քրիստոս բնութեամբ Որդի Աստուծոյ էր, վասն որոյ զնոյն գիտութիւն ունէր ընդ Հաւը, այս ըստ բոլորին, իսկ ըստ մասին, զի Աստուածութեամբն միշտ ընդ Հաւը էր եւ մարդկութեամբն՝ ի սկզբանէ յղացմանն ունէր զգիտութիւն միացեալ Բանիւն:

Բան. «Զեզ նման սուտ լինիմ» (Յովի. Ը 55):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ.** Նախ՝ հրէայքն սուտ էին, զի ասէին, թէ գիտեմք զԱստուած, զոր ոչ գիտէին, նոյնպէս Քրիստոս սուտ լինէր, թէ ասէր՝ ոչ գիտեմ զԱստուած, զոր գիտէր: Երկրորդ. նոքա սուտ էին, որ զԱստուած ինքեանց Հայր ասէին, եւ նա սուտ լինէր, թէ զԱստուած Հայր ինքեան ոչ ասէր:

Բան. «Եւ զբան նորա պահեմ» (Յովի. Ը 55):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ.** Զայս ասէր Քրիստոս, զի ճշմարիտ գիտութիւն գործով ցուցանի, զի յամենայն չար գործս անգիտութիւն ինչ լինի, որպէս ասէ Արիստոպաէլ, թէ ամենայն չար անգէտ է<sup>ext</sup>:

Եւ այժմ պատախանէ առաջին հարցմանն, թէ՝ մե՞ծ ես քան զԱբրահամ: Ասէ՝ այո՛, մեծ եմ, վասն որոյ<sup>2</sup> ասէ.

### Տեսանելն Աբրահամու<sup>3</sup>

Բան. «Աբրահամ՝ հայր ձեր, ցանկացաւ տեսանել զաւը իմ» (Յովի. Ը 56):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ.** Ամենայն բանի գիրն եւ բառն եւ առակն առագաստ եւ ծածկոյթ է, վասն այն պարտ է քննել եւ մտաւք ի խորն

<sup>1</sup> A B չիք

<sup>2</sup> B վասն այն

<sup>3</sup> C չիք Տեսանելն Աբրահամու

իջանել, որպէս ասէ. «Աբրահամ ցանկացաւ տեսանել», եւ ի վերայ այսմ բանի չորս ինչ հարցանելի է.

**Առաջին.** Թէ վասն Է՞ր ասէ զայս:

Պատասխան. Վասն չորից. նախ՝ զպարծիլն հրէից առ Աբրահամ կամի զիջուցանել: Երկրորդ. զինքեան մեծութիւն ցուցանէր, զի Աբրահամ փափագէր եւ յուսայր փրկութեան Քրիստոսի: Երրորդ. զի արժանաւոր է ընդունելոյ, յորժամ Աբրահամ ցանկացաւ: Զորրորդ. ցուցանէ, թէ որպիսի ամբարշտութիւն է սպանումն նմա խորհել, որում Աբրահամ ցանկացաւ:

Երկրորդ՝ Հարցանելի է. Ո՞ր է աւրն, որում ցանկացաւ տեսանել:

Պատասխան. Զորս է. նախ՝ խաչելութեան աւրն, յորում փրկութիւն եղեւ ազգի մարդկան, որպէս ասէ մեկնիչդ<sup>xxii</sup>: Երրորդ. ասեն՝ աւր նշանակի աստ յաւիտենական երանութեան: Երրորդ.<sup>1</sup> ասի աւր ժամանակաւոր գալստեանն Քրիստոսի: Եւ զայսոսիկ ետես Աբրահամ իմացմամբ հանճարոյն: Զորրորդ. ասեն աւր գալստեանն Քրիստոսի ի դժոխս, յորժամ ետես զՔրիստոս եւ ուրախ եղեւ, եւ թէպէտ ապառնի էր գալն<sup>2</sup> ի դժոխս, սակայն Քրիստոս իբրեւ զանցեալ ճառէ վասն ստուգութեան բանին:

Երրորդ Հարց. Յո՞րժամ ետես զաւրն Քրիստոսի<sup>3</sup>:

Պատասխան. Զորս է իմանալ. նախ՝ յորժամ զպատարագն մատուցանէր զիսոյ երեմեանն եւ զայլսն, յորում թմրեցաւ ընդ երեկս եւ ի նոյնն ետես զտնաւրէնութիւն Քրիստոսի: Երկրորդ. յորժամ ասաց նմա Աստուած. «Ի զաւակի քում աւրհնեսցին ամենայն ազգ երկրի<sup>4</sup>» (տես Ծննդ. Իբ 28): Երրորդ. յորժամ առ կաղնեաւն Մամբրէի ետես երիս հրեշտակս եւ ծանեաւ զխորհուրդ Երրորդութեան եւ եկեր առ նա եւ ետ զաւետիսն իսահակայ<sup>5</sup> յաւրինակ ծննդեանն Քրիստոսի: Զորրորդ. յորժամ զիսահակ պատարգ հանէր<sup>6</sup>, որպէս ասէ մեկնիչդ<sup>xxiii</sup>:

Զորրորդ Հարց. Որպէս Է՞ր աւրինակ իսահակ Քրիստոսի:

Պատասխան. Ասեմք աստ չորս կերպիւ. նախ՝ որպէս Հայր նորա Աբրահամ ոչ խնայեաց որդին պատարագ Աստուծոյ, սոյնպէս Հայրն երկնաւոր զՄիածինն ետ ի մահ վասն կենաց աշխարհի: Երկրորդ. որպէս իսահակ առանց աղաղակելոյ եկաց ի զե-

<sup>1</sup> Եզի արժանաւոր է ընդունելոյ

<sup>2</sup> Ը գալն Քրիստոսի

<sup>3</sup> Ը գալն Քրիստոսի

<sup>4</sup> Ա Ե չիք ամենայն ազգ Երկրի

<sup>5</sup> Ե կրկ. զաւետիս

<sup>6</sup> Ը հանէր պատարագ

նումն, նոյնպէս եւ Տէր մեր ի խաչին, ըստ այնմ. «Որպէս զորոջ առաջի կտրչի անմռունչ կայ» (Գործք Ը 32): Երրորդ. որպէս իսահակ զփայտ ողջակիզին երարձ, նոյնպէս եւ Տէր զփայտ խաչին ի վերայ ուսոյն երարձ: Չորրորդ. որպէս ի ձեռն իսահակայ աւրհնեցան ազգն Աբրահամու, նոյնպէս ի ձեռն Քրիստոսի ամենայն ազգք յաւրհնութիւն փոխեցան յառաջին անիծիցն: Իսկ ոմանք զտեղին Գողգոթայ<sup>1</sup> ասեն, եւ ոմանք զ Գարեզին լեառն, որպէս ցուցաւ ի չորրորդ գլուխն Աւետարանիս: Եւ զայլ բազում կերպիւ աւրինակն իսահակայ առ Քրիստոս տե՛ս ի Հարցմանցն, վեցերորդ հատորն ի մետասաներորդ համարն<sup>շին</sup>:

Բան. «Յիսուն ամ չեւ է քո եւ զԱբրահամ տեսեր» (Յովի. Ը 57):

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Նախ հարցանելի է. վասն Է՞ր ասեն. «Յիսուն ամ չեւ է քո<sup>3</sup>»:

Պատասխան. Վասն չորս պատճառի<sup>4</sup>. նախ՝ ասեն իբր թէ<sup>5</sup> անհնար է, թէ տեսեալ լինիս, զի ի մահուանէն Աբրահամու մինչ ի ժամանակն Քրիստոսի եղեն իբրեւ երկու հազար ամք: Երկրորդ. Յիսուն ամ ասէին, որպէս պատահեցաւ ի միտս նոցա: Երրորդ. ասեն՝ թէպէտ երեսուն երեք ամեայ էր Քրիստոս, այլ վասն բազում աշխատանաց եւ պահոց մեծագոյն երեւէր հասակաւ: Չորրորդ. զի յիսներորդ ամն պատուելի էր նոցա եւ յորելեան կոչէին, վասն որոյ՝ Յիսուն ամ չեւ է քո, իբր թէ յորելեան մի չես տեսեալ, զիա՞րդ զ Աբրահամ տեսեր:

Երկրորդ հարց. Վասն Է՞ր ասեն, թէ զԱբրահամ տեսեր, զի Քրիստոս չասաց, թէ՝ ես տեսի, այլ թէ՝ Աբրահամ ետես:

Պատասխան. Վասն չորից. նախ՝ վասն նենգութեան հրէիցն, զի կամէին սուտ<sup>6</sup> առնել զբանն: Երկրորդ. սոյնպէս ասացին, զի համարէին, թէ յորժամ Աբրահամ ետես զնա, եւ նա ետես զ Աբրահամ, զի մարմնաւոր տեսութեամք սոյնպէս լինի, որ մին զմին տեսանեն, իսկ ի մարգարէաբար տեսութիւն այս ոչ է ճշմարիտ, զի Դանիէլ, որ մարգարէաբար ետես զժամանակ նեռինն, ոչ եղեւ տեսեալ ի նեռէն, սակայն Քրիստոս Աստուածութեամբն տեսանէր<sup>7</sup> զ Աբրահամ յառաջ քան զլինելն մարդ: Երրորդ պատճառ. զի այս բանիւս որքան ասեն, կարեն<sup>8</sup> հակառակիլ, քան բանիւն

<sup>1</sup> Ա Գողգոթա

<sup>2</sup> Ա չեք

<sup>3</sup> Ա Բ չեք

<sup>4</sup> Կ Վասն չորից

<sup>5</sup> Կ թէ իբր

<sup>6</sup> Կ սոյնակս սուտ

<sup>7</sup> Կ տեսեալ

<sup>8</sup> Կ առաւել կարեն

Քրիստոսի, վասն զի զՔրիստոս սոսկ մարդ համարէին, վասն այն Քրիստոս ցուցանէ զիւր Աստուածութիւն՝ ասելով.

Բան. «Ամէն, ամէն [ասեմ ձեզ], յառաջ քան զլինելն Աբրահամու եմ ես» (Յովի. Ը 58-59):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ<sup>1</sup>.** Այս չորրորդ բանն է<sup>2</sup>, որ ցուցանէ, թէ յաւիտենական է Քրիստոս, ըստ որում այնպէս յամենայն ժամանակի գոյ:

Եւ երեքն ի վերոյ ասացաւ ի նոյն գլուխս բանս այս. «Յառաջ քան զլինելն Աբրահամու եմ ես<sup>3</sup>», չորս իմացումն ունի. նախ՝ ցուցանէ, թէ անեղ եւ անսկիզբն է Որդի: Երկրորդ. բառնայ զկարծիս հրէիցն, որ որդի Յովսեփայ ասէին: Երրորդ. ընդդէմ է Արիոսի, զի ոչ ասաց, թէ՝ եղէ, այլ թէ՝ եմ: Չորրորդ. ընդդէմ է բաժանողացն զՔրիստոս, զի ոչ ասաց թէ՝ էի, կամ որ ի յիսս է, յառաջ է, այլ թէ՝ ես եմ, որ զմիութիւն Բանին եւ մարմնոյն ցուցանէ, որպէս ցուցանէ մեկնիչդ<sup>ՀՅՎ</sup>:

### ԵՐԿԱԲՆԱԿԱՑ

Հարց. Զի՞նչ է Երկաբնակն, եւ զի՞նչ՝ Երկախունբն:

Պատասխան. Երկաբնակ է, որ յերկուս բնութիւնս որոշէ զՔրիստոս եւ յերկուս կամս, որպէս քաղկեդոնիկք, թէպէտ անձն մի համբաւեն, նոքա բնակութեամբ ասեն զՔրիստոս եւ ոչ՝ միաւրութեամբ: Իսկ Երկախումբն է, որպէս նեստորականք, զի խումբն դաս լինի<sup>4</sup>, եւ նոքա յերկուս դասս բաժանեն զՔրիստոս, այսինքն՝ Երկու անձն եւ Երկու դէմ, եւ այլն ամենայն: Եւ սոյնպէս<sup>5</sup> տեսցե՛ս ի գիրս Հարցմանց<sup>ՀՅՎ</sup>:

Բան. «Վէճս առին հրեայքն» (Յովի. Ը 59):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Այսինքն՝ կամէին քարկոծել, որպէս զհայհոյիչ:

Եւ յայտնի է, զի ոչ առնէին վասն սիրոյն Աստուծոյ, այլ վասն նախանձուն իւրեանց, զի առ ի քարկոծել զհայհոյիչն<sup>6</sup> չորս իր խնդրի. նախ՝ դատաստան դնի, Երկրորդ՝ վկայութիւն բերի, Երրորդ՝ վճիռ հատանի, չորրորդ՝ արտաքոյ քաղաքին քարկոծի: Արդ, սոքա առանց այսմ ամենայնի ի սուրբ տեղիսն կամէին քարկոծել զՔրիստոս:

<sup>1</sup> Ե քան

<sup>2</sup> Ը չորրորդ Բան

<sup>3</sup> Ա Ե չեք եմ ես

<sup>4</sup> Ա Ե լսի

<sup>5</sup> Ա Ե չեք

<sup>6</sup> Ը չեք

Բան. «Եւ Յիսուս խոյս ետ» (Յովհ. Ը 59):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Նախ՝ աւրինակ ետ համբերութեան մեզ, դարձեալ՝ եցոյց, զի երբեմն մարթ է հաւատացելոց ի հալածչացն թաքուցանել զանձն: Եւ խոյս տալն ոչ փախչել կամ թաքչելն է<sup>1</sup>, այլ զինքն անտես արար ի նոցանէ եւ գնաց ի մէջ նոցա, բայց աշակերտքն տեսանէին զՔրիստոս:

Եւ ոչ է պարտ յանկեան ուրեք փախչել կամ<sup>2</sup> թաքչել Քրիստոսի վասն երեք պատճառի. Նախ՝ թէ որպէս զերկչոս թաքեալ էր ի միում տեղի, ըմբռնէին եւ քարկոծէին, զի նոքա պահապանք էին տաճարին: Երկրորդ. զի Քրիստոս աստ եցոյց զիւր մեծութիւն եւ անմահութիւն, որ ի վեր է<sup>3</sup> քան զԱբրահամ, վասն որոյ ոչ էր պատշաճ իբր զտկար փախչել: Երրորդ պատճառ. զի հայելով ի սքանչելիսն, զոր եցոյց Քրիստոս ի մարմինն իւր տասն կերպիւ:

### Վասն տասն սքանչելեաց մարմնոյն

Նախ՝ ի կուսէ առանց առն ծնաւ եւ առանց ապականութեան մաւրն: Երկրորդ. քառասնաւրեայ պահք առանց կերակրոյ: Երրորդ. ի գահավէժ լինելն յԱրտեւան լերինն ի վերայ աւգոյն ի մէջ նոցա գնաց: Չորրորդ. գնալն ի վերայ ծովուն իբր ի թռիչս ի վերայ մկանաց ալեացն: Հինգերորդ. փառաւոր այլակերպութիւն: Վեցերորդ. հացին ի մարմին իւր յանկարծակի փոփոխումն: Եւթներորդ. ինքեան յարութիւն ի մեռելոց: Ութերորդ. դրաւքն փակելաւք եմուտ առ աշակերտուն: Իններորդ. հրաշապէս համբարձումն: Տասներորդ. այս, որ ի մէջ նոցա անտես եղեալ գնաց:

Եւ այլաբանութեամբ ցուցանէ բանս զծածուկ եւ զանգիտելի դատաստանն Աստուծոյ. Նախ՝ որ զանձն իւր թաքոյց մինչեւ ցայժմ ի ժողովրդենէն հրէից, երկրորդ՝ զի ել ի մարմնական եւ յաւրինական տաճարէն եւ յաստուածպաշտութենէն հրէից եւ յանգեաւ յեկեղեցիս եւ<sup>4</sup> նմա փառք յաւիտեանս յաւիտենից<sup>5</sup>: Ամէն<sup>6</sup>:

<sup>1</sup> Կ ոչ թաքչել կամ փախչելն է

<sup>2</sup> Կ եւ

<sup>3</sup> Կ չեք է

<sup>4</sup> Կ յեկեղեցիս քրիստոնէից

<sup>5</sup> Ա Բ չեք

<sup>6</sup> Ա չեք

## Գլուխ Ձ

Վասն ի ծնէ կուրին

Իններորդ գլուխ է ըստ կարգի եւ հինգերորդ ըստ հատորի<sup>1</sup>

Բան. «Եւ մինչդեռ անցանէր» (Յովի. Թ 1):

**Մեկնութիւն.** Նախ՝ Քրիստոս բանիւ եցոյց, թէ վարդապետութիւն նորա լուսաւորիչ է, աստ զսոյն ցուցանէ զգալի նշանաւ: Դարձեալ՝ յորժամ վարդապետեաց, թէ յառաջ քան զլինելն Արքահամու եմ, այժմ գործով զնոյն հաստատէ: Եւ գիտելի է, զի որ ոք հաւասարի Աստուծոյ, որպէս զԱստուած պաշտաւն ընդունելով՝ Աստուած է, իսկ Քրիստոս հաւասարի Աստուծոյ պաշտաւն ընդունելով, ապա ուրեմն Աստուած է Քրիստոս:

Եւ զի Քրիստոս հաւասար Աստուծոյ պաշտաւն ընկալաւ, ցուցանէ աստ չորս կերպիւ. նախ՝ որ զծնէ կոյրն լուսաւորեաց: Երկրորդ. զհաւատ նորին խնդրելով, յորժամ եհարց. «Դու հաւատա՞ս յՈրդին Աստուծոյ» (Յովի. Թ 35): Երրորդ. աստուածային որդիութեամբն, որ Քրիստոս վասն ինքեան վկայեաց, թէ ես եմ: Զորորդ. կուրին երկրպագութեամբ:

Իսկ այժմ սկիզբն առնէ առաջնոյն՝ ասելով. «Եւ մինչդեռ անցանէ Եսեսը այր մի կոյր» (Յովի. Թ 1): Եւ ճառս այս յերիս բաժանի. առաջին՝ նախադրութիւն առնէ վասն սքանչելեացն: Երկրորդ. դնէ զլինելութիւն սքանչելեացն<sup>2</sup>, անդ. «Զայս իբրեւ ասաց, եթուք ի գետինմ<sup>3</sup>» (Յովի. Թ 6): Երրորդ. գրէ զստուգութիւն սքանչելեացն, անդ. «Իսկ դրացիքն, եւ որոց տեսեալ էր զնա» (Յովի. Թ 8):

Եւ-ն<sup>4</sup> զառաջինն ասէ. «Մինչդեռ անցանէր», որպէս ասացաւ ի վախճան միւս գլխոյն. «Ել Յիսուս ի տաճարէն» (հմնտ. Յովի. Ը 59), եւ մինչդեռ<sup>5</sup> ելեալ էր եւ անցանէր, ետես զկոյրս զայս, որ անդ նստէր, զի մուրացիկ էր եւ ողորմութիւն խնդրէր, որք ի տաճարն ընթանային:

<sup>1</sup> Ըստ կարգին եւ ըստ հատորին

<sup>2</sup> Ե չեք Երկրորդ. դնէ զլինելութիւն սքանչելեացն

<sup>3</sup> Ե գետին

<sup>4</sup> Ե

<sup>5</sup> Ե մինչ

### Վասն աղքատաց

*Լինի աստ կրկին հարց. Առաջին. վասն է<sup>՝</sup>ր կաղք եւ կոյրք<sup>1</sup> նստէին մերձ տաճարին:*

Պատասխան. Վասն երից. նախ՝ զի անդ ողորմութիւն բազում լինի վասն գնացողացն: Երկրորդ. զի առ Դաւթիւ ասացաւ. «Կաղք եւ կոյրք մի մտցեն ի տուն Տեառն» (Բ Թագ. Ե 8), յորժամ ընդդիմացան նմա յերուսացիքն: Երրորդ. յաւրինակ նորոյս, զի հոգլով կաղք եւ կոյրք<sup>2</sup> արտաքսին յեկեղեցւոյ:

Երկրորդ հարց. Վասն է<sup>՝</sup>ր կաղք եւ կոյրք մուրացիկ լինին:

Պատասխան. Վասն երից. նախ՝ զի պակասէ գործիքն, որով զպէտսն գտանէ, վաս որոյ մուրայ եւ<sup>3</sup> գտանէ: Երկրորդ. մեզ պարտ է զպակասութիւն ընկերին լնուլ, զի հաւասարեսցուք, եւ յորժամ ոչ կարեմք զպակասութիւն մարմնոյն լնուլ, զընչիցն լնուցումք: Երրորդ. յաւրինակ հոգլով աղքատաց, զի պարտ է մի-մեանց աւգնել ուսմամբ եւ գործով:

Բան. «Ետես կոյր մի ի ծնե» (տես Յովի. Թ 1):

Մելանութիւն. Յատուկ եւ մի էր կոյրս այս վասն չորից. նախ՝ զի ի<sup>4</sup> ծնէ կոյր էր եւ ոչ յետոյ պատահմամբ: Երկրորդ. զի բոլոր գործարանք աչացն էր պակաս եւ ոչ մի մասն: Երրորդ. սա միայն ի փառս Աստուծոյ եղեւ: Չորրորդ. սա միայն բժշկեցաւ ի ծնէ կոյր:

### Վասն աչաց եւ վասն զգայութեան աչաց<sup>5</sup>

Եւ վասն զգայութեան աչաց երեք ինչ գիտելի է.

Առաջին. գիտելի է, զի եւթն գործարանք են աչաց<sup>6</sup>. նախ՝ ե-րակն լուսոյ: Երկրորդ. պտուղն սեւ, զի մի վնասեսցի լոյսն: Եր-րորդ. սպիտակն, որ է ճրագու հովէ եւ բարեխառնող<sup>7</sup> հրոյն: Չոր-րորդ. փառն մզղնաձեւ<sup>8</sup> եւ թափանց: Հինգերորդ. բիբն, որ պա-հապանն է եւ սրբող փոշոյն: Վեցերորդ. արտեւանունքն, որ սրբէ զարտաւսր եւ ուղիղ տեսցէ: Եւթներորդ. յաւնքն ի վերոյ, որ

<sup>1</sup> Ե կոյրը եւ կաղք

<sup>2</sup> Ե կաղք եւ կոյրը մուրացիկ լինին, Ը կոյրըն

<sup>3</sup> Ը մուլայ եւ

<sup>4</sup> Ա Բ Ը ի

<sup>5</sup> Ե վասն աչաց, այսինքն՝ զգայութեան աչաց

<sup>6</sup> Ե Ը երեք ինչ գիտելի է.

<sup>7</sup> Ա Յաջին. գիտելի է, զի եւթն գործարանք են աչաց

<sup>8</sup> Ա բարեխառնէ

<sup>9</sup> Ը մզղնաձեւ

զքիրտն արգիլէ, եւ ապա կոկոնն ի մէջն<sup>1</sup>, որ եմ տեսողական լոյսն՝ պահպանեալ ի նոցանէ:

Երկրորդ. գիտելի է, զի փոս է տեղիք աչացն, որպէս այլ զգայութեանցն. նախ՝ զի յարտաքին վնասուցն պահեսցին: Երկրորդ. զի տեւող լիցին եւ պատշաճ առ ի զգացումն:

Երրորդ. գիտելի է, զի գիրք աչաց ի վերոյ է քան զայլս. նախ՝ զի պատուական մասն է զվերին տեղին ընկալեալ, որպէս լուսաւորքն յերկինս: Երկրորդ. զի աչքն զհուրն զգայ, որ է վերնագոյն ի տարերս, ականջ՝ զաւդն, որ<sup>2</sup> ի ներքոյ, բերանն՝ զծուրն ըստ կարգի, եւ շաւշափելիքն՝ զհողն, որ ի ներքոյ է այլոցն:

Իսկ որ ասէ. «Ետես կոյր մի»՝, նախ՝ զի ետես զսքանչելիսն, որ նովաւ լինելոց էր: Երկրորդ. գթութեամբ ետես, զի բժշկելոց էր: Եւ աստ մարմնապէս կատարեցաւ բանն Քրիստոսի. «Որք ոչ տեսանեն, տեսցեն, եւ որք տեսանենն, կուրացին» (Յովի. Թ 39), թէպէտ հոգեպէս առ հրէայս եւ հեթանոսս իմասցի:

### Վասն հարցման<sup>3</sup> աշակերտացն

Բան. «Ռաբբի, ո՞յր վնաս է» (Յովի. Թ 2):

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ. Եւ աստ չորս ինչ հարցանելի է.

Նախ՝ վասն է՞ր հարցին աշակերտքն:

Պատասխան. Նախ՝ զի գթութեամբ ետես Քրիստոս, իմացան զի բժշկելոց էր: Երկրորդ. զի թանձրամիտք էին նախքան զգալ չոգւոյն Արբոյ:

Երկրորդ հարց<sup>4</sup>. Վասն է՞ր պատճառ կուրութեան զմեղքն հարցին:

Պատասխան. Նախ՝ զի Տէրն անդամալուծին ասաց՝ «Մի՛ եւս մեղանչեր», իմացան թէեւ կուրութիւն սորա վասն մեղաց լինէր, կամ իւր, կամ վասն<sup>5</sup> ծնողացն: Երկրորդ. զի լուեալ<sup>6</sup> էին ի հրէիցն, թէ փորձութիւնք վասն մեղաց գայ, որպէս բարեկամքն Յոբայ ասացին (Յոբ Ը 3-4), վասն այն հարցանեն, թէ ո՞յր վնասու համար սա կոյր ծնաւ<sup>7</sup>:

<sup>1</sup> Ա ի մէջն, որ գքիոտն արգիլէ

<sup>2</sup> Բ չիք

<sup>3</sup> Բ չիք

<sup>4</sup> Ը հարցանելի է

<sup>5</sup> Ը չիք

<sup>6</sup> Ը լսեալ էին

<sup>7</sup> Ը կոյր է ծնեալ

ԵՐՐՈՐԴ ՀԱՐԳ. ԶԻ՞ՆԸ Է ԿՐԿՆԱՇԱԼԻՂ ՀԱՐԳ<sup>1</sup>:

Պատասխան. Կրկին է Հարց. նախ՝ ապացուցական, որպէս թէ՝ զի՞նչ է մարդ: Երկրորդ. տրամաբանական, որպէս թէ՝ աշխարհս ապականացո՞ւ է, թէ անապական: Այս է<sup>2</sup> կրկնադէմ Հարց, որպէս այն ժամանակն ի ժամանակի է, թէ ոչ ժամանակի է: Իսկ պատասխանին Քրիստոսի յերկուց դիմացն հեռացոյց եւ զերրորդն ասաց:

ՉՈՐՐՈՐԴ ՀԱՐԳ. ԶԻ՞ՆԸ Է պատճառ սոյնպիսի անկատար եւ խեղ ծնանելոյս:

Պատասխան. Չորս ինչ. նախ՝ մեղք ծնողացն, զի երբեմն պատուհասէ<sup>3</sup> զծնողս ի զաւակս իւրեանց ծննդեամբ<sup>4</sup> եւ մահուամբ: Երկրորդ. անպատշաճութիւն նիւթոյ մաւրն: Երրորդ. զի<sup>5</sup> սերմ առն ոչ լինի զաւրաւոր ի ձեւացուցանել զմարմին մանկանն: Չորրորդ. ասեն՝ անյարմար ժամանակն: Եւ սոքա են պատճառ սերման ցորենոյ վասն բուսոց, եւ թէպէտ սոյնպիսի պատահմունք վերաբերին առ ստեղծեալ բնութիւնս, սակայն սոքա ներգործին նախախնամութեամբն Աստուծոյ, իսկ այս կուրիս վերբերի առ աստուածային զաւրութիւն, որպէս ասէ.

Բան. «Այլ զի յայտնի լինին գործըն Աստուծոյ ի դմա» (Յովի. թ 3):

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Այսինքն՝ առ ի յայտնել զգործ աստուածային կարողութեան, իմաստութեան եւ ողորմութեան: Իսկ որ մեկնիչդ ասէ վասն կուրին եւ գործոցն Աստուծոյ, երեք մտաւք իմասցիս<sup>cxvii</sup>. նախ՝ սոյնպէս, թէ զաւրութիւն Աստուծոյ ոչ եղեւ պատճառ կուրութեան նորա, այլ կուրութիւն եղեւ պատճառ զաւրութեան Քրիստոսի<sup>6</sup>: Երկրորդ. թոյլ տալն եղեւ պատճառ՝ կուրութեան եւ կամելն պատճառ սքանչելեացն<sup>8</sup>: Երրորդ. գիտութիւն նախ էր քան զկուրութիւն, այլ ի գործոցն Քրիստոսի եղեւ լուսաւորութիւն:

Բան. «Եւ ինձ պարտ է գործել զգործս<sup>9</sup>» (Յովի. թ 4):

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Պարտն ոչ ցուցանէ, թէ Հարկիւ եւ բռնութեամբ ինչ առնէ, այլ զմիակամութիւն ընդ Հաւը<sup>10</sup> ցուցանէ կատարեալ

<sup>1</sup> B չեք

<sup>2</sup> B չեք

<sup>3</sup> C պատժէ

<sup>4</sup> B եւ ծննդեամբ

<sup>5</sup> B չեք

<sup>6</sup> C զօրութիւն Աստուծոյ

<sup>7</sup> C չեք

<sup>8</sup> C սքանչեաց

<sup>9</sup> B զգործս այն

<sup>10</sup> C չեք ընդ Հաւը

զլնուլն, ասէ, պակասութեան ստեղծուածոյն, եւ գործել՝ զգործակցութիւն եւ զհաւասարութիւն ընդ Հաւը:

### Հոգեպէս աւը եւ գիշեր

Բան. «Մինչ աւը կայ» (Յովի. Թ 4):

**Մեկնութիւն.** Աւը կոչի ժամանակ մարդեղութեան Քրիստոսի ի վերայ երկրի վասն չորից. նախ՝ որպէս<sup>1</sup> մերձաւորութիւն արեգականն տեւէ ի վերայ երկրի՝ աւը եւ տիւ կոչի, նոյնպէս մարմնով երեւելն Քրիստոսի արար աւը եւ լոյս չնորհաց: Երկրորդ. արեգակն չորս փոփոխմամբ կատարէ զաւը, նոյնպէս արեգակ արդարութեան՝ Քրիստոս. նախ՝ ծնաւ ի կուսէն, երկրորդ՝ մկրտեցաւ, երրորդ՝ քարոզեաց, չորրորդ՝ չարչարեցաւ եւ ապա համբարձաւ: Երրորդ. երկոտասան ժամ է աւուր եւ երկոտասան առաքեալքն Քրիստոսի: Չորրորդ. աւրն ունի առաւաւտ եւ երեկոյ, եւ ծնեալ ի Հաւը Բանն յերեկոյացեալ<sup>2</sup> ժամանակի մարդ եղեւ:

Բան. «Գայ գիշեր» (Յովի. Թ 4):

**Մեկնութիւն.** Իսկ գիշեր յետ համբառնալոյն եղեւ մեզ, թէպէտ<sup>3</sup> խորհրդաբար ընդ մեզ է մինչ ի կատարած աշխարհի: Եւ սուրբքն անուամբն Քրիստոսի սքանչելիս կատարեն, այլ մարմնոյ երեւմամբ եւ զգալի բանիւ ոչ ուսուցանէ մեզ, սոյնպէս առաջի աւը Քրիստոս կոչեցաւ: Երկրորդ. աւրս այս նշանակ է զժամանակ ընտրելոցն, որ ի սկզբանէ աշխարհի մինչ ի վախճան, իսկ գիշեր է դատաստանն մեղաւորաց վասն պակասութեան լուսոյն Աստուծոյ եւ տանջանաց զժոխոցն: Երրորդ. աւր է իւրաքանչիւր<sup>4</sup> կեանք մարդոյ, եւ գիշեր է մահ նոցա, զի որպէս ի գիշերի ոչ ոք կարէ գործել, նոյնպէս յետ մահու ոչ ոք կարէ գործել բարիս<sup>5</sup>, զի ոչ կարէ հաւատալ եւ ոչ ապաշխարել եւ այլն. «Զի ահա ժամանակ ընդունելի եւ աւը փրկութեան» (Բ Կորնթ. Զ 2), ասէ առաքեալ: Եւ սոյնպէս բացայայտի, զի ի կեանս կարէ մարդ ապաշխարել եւ զբարիս գործել ինքեամբ եւ այլով, եւ յետ մահու հոգին ոչ կարէ քաւել ինքեամբ, զի անցեալ է ժամանակն եւ փոխեալ որպիսութիւն իւր, այլ ի ձեռն այլոց կարէ ողորմութիւն գտանել յԱստուծոյ, որպէս ի ձեռն Սուլք Եկեղեցւոյ եւ Պատարագաց, եւ յետ յարութեան ո՛չ ինքեամբ, եւ ո՛չ այլով, ո՛չ կարէ ապաշխարել, այլ

<sup>1</sup> Բ որ

<sup>2</sup> Ա Բ եւ յերեկոյացեալ

<sup>3</sup> Ա Բ զի թւակտ

<sup>4</sup> Ը օր է իրը չար

<sup>5</sup> Ը ոչ ոք գործէ բարիս

դատապարտիլ: Զորբորդ. աւր եւ լոյս կոչի բարի գործք, ըստ այնմ. «Այնպէս լուսաւորեսցի լոյս ձեր առաջի մարդկան» (Մատթ. Ե 16), իսկ գիշեր կոչի մեղքն, զի ի մէջ մեղաց գոլով ոչ ոք կարէ զբարիս գործել:

*Այս չորս կերպիւս կոչի աւր եւ գիշեր հոգեպէս:*

Բան. «Լոյս եմ աշխարհի» (Յովի. Թ 5):

ՄԵԼՈՒԹԻՒՆ. Վասն վեցից ասէ. նախ՝ զի զբոլորս լուսաւորէ եւ ոչ զմասն: Երկրորդ. զի լոյս է բնութեամբ եւ ոչ լուսաւորեալ, որպէս առաքեալքն: Երրորդ. զի միշտ պատրաստ է լուսաւորել զմարդիկ, որքան կենդանի իցեմք: Զորբորդ. զի կրկին լուսաւոր է, այսինքն՝ վարդապետութեամբ եւ սքանչելեաւք: Հինգերորդ. զիսւար մեղաց եւ անգիտութեան փարատէ: Վեցերորդ. ի գործս բարիս առաջնորդէ, որպէս յայտ է ի մեկնչէդ:

### Վասն թքոյն եւ կաւոյն

Բան. «Եթուք ի գետին<sup>1</sup> եւ արար կաւ ի թքոյն<sup>2</sup>» (Յովի. Թ 6):

ՄԵԼՈՒԹԻՒՆ. եւ ի վերայ այսմ բանի չորս ինչ հարցանելի է.

Առաջին. Զի՞նչ նշանակէ թուք եւ կաւն:

Պատասխան. Զորս ինչ. նախ՝ ցուցանէ զինքն Արարիչ գոլ Ադամայ, որ ի կաւոյ ստեղծեաց: Երկրորդ. տեսողն մասն նշանակէ զհոգին Ադամայ եւ այլ գործարանք աչացն՝ զմարմինն, զի եւթ մասն է մարմնոյն, այսինքն՝ ոսկը<sup>3</sup>, ջիլ, երակ, արիւն, միս, մորթ, մազն անզգայ ծածկոյթ: Երրորդ. թուքն զբանն ցուցանէ, որ ել ի բերանոյ Հաւր եւ էջ յերկիր եւ զհողեղէն մարմինս մեր խառնեալ միացոյց ընդ իւրում Աստուածութեան: Զորբորդ. որպէս ասէ մեկնիչդ. «Յառաջ քան զինելն Աբրահամու եմ ես», որ է Բանն միաւորեալ մարմնովն՝ անեղ եւ անսկիզբն, Միածին Որդին<sup>4</sup> Աստուծոյ<sup>cixviii</sup>:

Երկրորդ հարց. Վասն է՞ր ոչ ասաց բանիւ միայն, որպէս անդամալուծին եւ Ղազարու եւ յայլսն<sup>5</sup>:

Պատասխան. Նախ՝<sup>6</sup> նոր էր նշանս եւ նոր կերպիւ կամեցաւ առնել: Երկրորդ<sup>7</sup>. զի անդ, որ բանիւ հրամայէր, ցուցանէր զՀո-

<sup>1</sup> A B ի գետինն

<sup>2</sup> A B չեք ի թքոյն

<sup>3</sup> C է ուկը

<sup>4</sup> A B որդին

<sup>5</sup> B չեք եւ յայլսն

<sup>6</sup> B չեք

<sup>7</sup> B Երկրորդ հարց

գին իւր Աստուած գոլ, եւ աստ՝ զմարմինն, զի թուքն ի մարմնոյն  
<sup>է</sup><sup>1</sup> եւ մատամբ կազմեաց, յորմէ աստուածային զաւրութեամբն  
 լուսաւորեցաւ ակն, ապա թէ ոչ, կաւն ըստ ինքեան թանձր է եւ  
 կուրացուցիչ առաւել, քան թէ<sup>2</sup> սրբիչ, որպէս ասէ Ոսկէբերանն:

Երրորդ հարց. Վասն է՞ր ծեփեաց զաշքն:

Պատասխան. Աչք զսահման ըովանդակ գործարանացն ասէ:

Եւ ծեփեաց վասն երեք պատճառի. նախ՝ զի կուրութիւն սորա  
 յայտնի էր, սոյնպէս լուսաւորելն առաւել սքանչելեաւք երեւես-  
 ցի: Երկրորդ. ցուցանէ, թէ Քրիստոս էր ձեւացուցիչ ամենայն  
 մարմնոց, զի ի մէջ կենդանեաց պատուական է մարմին մար-  
 դոյս<sup>3</sup>, եւ ի մարդկային մարմնոյս գլուխն է պատուական, եւ ի  
 գլուխն աչքն է ազնուական<sup>4</sup> մասն: Եւ զպատուականն նորոգե-  
 լով եցոյց, զի նորոգիչ էր ամենայն մարմնոց: Երրորդ պատճառ  
 ցուցանէ, թէ ընդունելով զգալի նիւթ ի խորհրդոց եկեղեցւոյ,  
 միտք մեր լուսաւորի շնորհաւեքն Աստուծոյ<sup>5</sup>:

Չորրորդ հարց. Վասն է՞ր ոչ<sup>6</sup> ջրով զանցոյց:

Պատասխան. Ասէ մեկնիչդ, զի հանդերձեալ էր զկոյրն ի Սելո-  
 վամ առաքել, զի մի ասիցեն հրէայքն, թէ ի ջրոյն էր բժշկութիւն<sup>7</sup>  
 եւ ոչ՝ ի Քրիստոսէ<sup>cxix</sup>:

### Վասն Սելովամայ

Բան. «Ե՛րթ, լուա՝ յաւազանին Սելովամայ» (Յովի. Թ 7):

Մեկնութիւն. Սելովամս այս է աղբիւր ի ստորոտ լերինն Սիո-  
 նի, զոր նախ Բեթհեղդայ կոչեաց:

Եւ վասն չորս պատճառի անդ առաքեաց. նախ՝ զի յայտնի լի-  
 նէր սքանչելիքն, որպէս ասէ մեկնիչդ<sup>cxx</sup>: Երկրորդ. ի պատիւ զո-  
 հից հնոյ աւրինացն<sup>8</sup>, զոր լուանային յաւազանս յայս<sup>9</sup>: Երրորդ. ի  
 հնազանդութիւն եւ ի հաստատութիւն հաւատոյ եւ յուսոյ կուրի:  
 Չորրորդ. ասէ Ոսկէբերանն. «Սելովամն թարգմանի առաքեալ,  
 ցուցանէ զՔրիստոս, որ ի Հաւրէ առաքեցաւ<sup>10</sup> ի լուացումն մեղա-

<sup>1</sup> C չիք է

<sup>2</sup> A B չիք

<sup>3</sup> A B պատուական մարմին մարդոյս է

<sup>4</sup> B ի գլուխն է աչքն ազնուական

<sup>5</sup> A B C Քրիստոսի

<sup>6</sup> B չիք

<sup>7</sup> C բժշկելն

<sup>8</sup> C օրինաց

<sup>9</sup> B այս

<sup>10</sup> A B որ առաքեցաւ ի Հաւրէ

ւորաց, զի «Նա է աղբիւր յայտնեալ ի տանն Դաւթի առ ի լուացումն մեղաւորին եւ տեռատեսին» (տես Զաքար. ԺԳ 1), ~ որպէս ասէ Զաքարիա ի երեքտասասներորդ [գլուխն]:

Բան. «Չոգաւ, լուացաւ, [Եկն] եւ տեսաներ» (Յովհ. Թ 7):

ՄԵԼԱՆՈՒՐԻ ՅՈՒԹ. Զայս ցուցանէ, թէ ոչ լուսաւորեցաւ միայն կաւովն: Եւ յայտ է, զի յորժամ եղ զկաւն, ոչ լուսաւորեցաւ, եւ ոչ լուսաւորեցաւ միայն ջրովն, եւ յայտ է, զի բազում անգամ լուացեալ էր եւ ոչ լուսաւորեալ: Ապա յայտ է, զի լուսաւորեցաւ զաւրութեամբն Քրիստոսի ի ձեռն կաւոյն եւ ջրոյն: Արդ, նախ կաւն ի թքոյ եւ ի հողոյ խառնեալ նշանակէ զհաւատն Քրիստոսի ներմարդկութեամբն միացեալ, իսկ ջուրն՝ զմկրտութիւն: Զայն ցուցանէ, թէ հաւատն առանց մկրտութեան ոչ փրկէ, եթէ կարէ մկրտիլ, եւ մկրտութիւն առան հաւատոց ոչ փրկէ<sup>1</sup>: Երկրորդ. կաւզգործնականն նշանակէ, եւ ջուր՝ զտեսական իմաստութիւն, եւ սոքա մինն առանց միւսոյն անկատարք են ի փրկութիւն: Եւ գետելի է, զի ոմանք ասեն, թէ կաւն ոչ բարձաւ յաչացն, այլ յակն փոխեցաւ ընդ լուանալ ջրոյն:

Յորժամ ասաց վասն սքանչելեացն, իսկ այժմ ճառէ զյայտնութիւն այսմ սքանչելեաց:

Բան. «Իսկ դրացիքն եւ որոց տեսեալն [էր]» (Յովհ. Թ 8):

ՄԵԼԱՆՈՒՐԻ ՅՈՒԹ. Աստ երեք բան հարցանէ ժողովուրդն: Առաջին՝ զանձն լուսաւորելոյն: Երկրորդ՝ զկերպ լուսաւորելոյն: Երրորդ՝ զլուսաւորիչն<sup>2</sup>:

Վասն առաջնոյն ասէ.

Ոմանք ասեն, թէ սա է նա, որ բարեկամքն էին Քրիստոսի, եւ հակառակքն ասէին՝ ո՛չ է նա:

Եւ հակառակին սոքա վասն երեք պատճառի. նախ՝ զի ժխտողք էին, երկրորդ՝ զի զարմացեալ<sup>3</sup> էին, երրորդ՝ զի զնա ոչ ճանաչէին, զի մարդն ճանաչի<sup>4</sup> յերեսացն եւ նորայն փոխեալ էր:

Եւ մուրացիկ ասէին վասն երից. նախ՝ զի բազում անգամ տեսեալ էին, երկրորդ՝ զի յայտնի լիցի մեծութիւն սքանչելեացն, երրորդ՝ զի արժանի էր գթալոյ, զի կոյր էր եւ տնանկ:

Բան. «Եւ ինքն ասէր<sup>5</sup>, թէ ես եմ» (Յովհ. Թ 9):

<sup>1</sup> A B չեք եթէ կարէ մկրտիլ... ոչ փրկէ

<sup>2</sup> C զլուսաւորիչն

<sup>3</sup> C զարմացեալք

<sup>4</sup> B ոչ ճանաչի

<sup>5</sup> A B ասէ

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Նախ՝ զտարակոյս նոցա բառնայ: Երկրորդ. գուշութեամբ պատմէ զբարերարութիւն Աստուծոյ: Երկրորդ. Հարցանեն զկերպ լուսաւորելոյն, յորժամ ասեն.

Բան. «Զիա՞րդ բացան աչք քո» (Յովի. Թ 10):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Այսինքն՝ որպէս լուսաւորեցար:  
Նա պատասխանի ետ.

Բան. «Այր մի, որում Յիսուսն ասեն» (Յովի. Թ 11):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Որպէս անդ «ոյր մի» ասաց, աստ «այր մի» ասէ վասն չորից. Նախ՝ զի նա միայն էր Աստուած մարդացեալ, երկրորդ՝ նա միայն էր յանապական կուսէ, երրորդ՝ նա միայն էր անմեղ, չորրորդ՝ նա միայն էր Փրկիչ մարդկան:

Բան. «Որում Յիսուսն ասէին» (Յովի. Թ 11):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Թէպէտ չէր տեսեալ, այլ նախ լուեալ էր զանունն, երկրորդ՝ ի ձայնէն ճանաչեաց:

Բան. «Կաւ արար եւ ծեփեաց» (Յովի. Թ 11):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Կոյրս այս ստուգութեամբ պատմէ զոր գիտէ, զի ծանեաւ յորժամ շաւչափելով զկաւն ի վերայ աչացն եղիր, եւ զի տեղիքն ցամաք էր, վասն այն ծանեաւ, թէ Քրիստոս զայն կաւ արար, բայց ո՛չ ծանեաւ, թէ ի թքոյ էր, թէ ի ջրոյ, վասն որոյ չսաց՝ արար կաւ ի թքոյ: Ապա զհնազանդութեամբ գնալն ասէ եւ զլուսաւորելն, իսկ նոքա կատաղեալք էին, զոր տեսեալ եւ լսեալ էին: Ի կուրէն Հարցանեն ոչ վասն Հաւատալոյ, այլ զնշանս<sup>1</sup> արհամարհելոյ:

Երրորդ. Հարցանեն զլուսաւորիչն.

Բան. «Ո՞ւր է նա» (Յովի. Թ 12):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Ոմանք արհամարհելով խնդրէին<sup>2</sup>, եւ ոմանք՝ ոչ:

Բան. «Ասէ ցնոսա՝ ոչ գիտեմ» (Յովի. Թ 12):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Զի յորժամ չոգաւ ի Սելով եւ դարձաւ, ոչ եգիտ զՔրիստոս ի տեղին յայն: Զայս եւ առ անդամալոյծն արար, յորժամ բժշկեաց վասն չորս պատճառի. Նախ՝ զի մի գովեսցի: Երկրորդ. զի հրաշքն հոչակեսցի: Երրորդ. զի չարութիւն հակառակացն մեղմացցի: Զորրորդ. զի զմեզ ուսուսցէ այնպէս առնել: Ոմանք այլաբանութեամբ ասեն. կոյրս այս նշանակէ զդասս ընտրելոցն<sup>3</sup>, որ ի սկզբնական ծննդենէ կոյրք են յաստուածայինսն եւ ընդ թշուառութեամբ եւ աղքատութեամբ են յայսմ աշխարհի,

<sup>1</sup> Ա Յ զնշանսն

<sup>2</sup> Ա Յ խնդրեն

<sup>3</sup> Ընտրելոց

**իսկ Քրիստոս անցանելով ընդ ճանապարհ կենցաղոյս ետես գթութեամբ ի նոսա եւ նոքա ի Քրիստոսէ ընկալան զփրկական տեսութիւն:**

Բան. «Ածեն առ փարիսեցիսն<sup>1</sup> զնա» (Յովի. Թ 13):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Նախ՝ վասն քննելոյ, զի դպիրք էին: Երկրորդ. զի ուրասցի լուսաւորեալն զծշմարտութիւն: Երրորդ. զի ցուցցեն յանցող աւրինացն զՔրիստոս, որպէս ասէ.**

Բան. «Եւ էր շաբաթ, յորում<sup>2</sup> զկաւն արար Յիսուս<sup>3</sup>» (Յովի. Թ 14):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Ցորժամ զանդամալոյծն բժշկեաց, նոյնպէս շաբաթ էր, եւ այլքն յայտնի է ի մեկնչէդ:**

Բան. «Ոչ է այրն այն յԱստուծոյ, զի զշաբաթս ոչ պահէ<sup>4</sup>» (Յովի. Թ 16):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Սոքա սուտ ասէին. Նախ՝ զի գործ մարմնաւոր, որ<sup>5</sup> ի փառս Աստուծոյ էր, կարէր լինել ի շաբաթու: Երկրորդ. զի քահանայքն թլփատէին ի շաբաթու եւ անմեղք էին, որպէս ցուցաւ ի վերոյ ի հինգերորդ գլուխն:**

Բան. «Զիա՞րդ կարէ մարդ մեղաւոր այդպիսի նշանս առնել<sup>6</sup>» (Յովի. Թ 16):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Սոքա կամէին մեծացուցանել զՔրիստոս, իբրու ասել. «Անհնար է մեղաւոր առն սոյնպիսի նշանս առնել», իսկ ընդդէմ բարեկամացն Քրիստոսի առարկի, որպէս ասէ Մատթէոս. «Տէ՛ր, յանուն քո դեւս հանաք եւ զաւրութիւն<sup>7</sup> արարաք, եւ Քրիստոս պատասխանէ. “Ո՛չ գիտեմ զձեզ, ի բաց կացէք, ոյք գործէք զանաւրէնութիւն”» (Իննտ. Մատթ. Է 21-23):**

**Ասեն վարդապետք, թէ սքանչելիքն գործ է ի վեր<sup>9</sup> քան զբնութիւն, վասն այն միայն յԱստուծոյ լինի սքանչելիք<sup>10</sup>, առ ի վկայել, թէ ի վեր է քան զբնական ճանաչումն մարդոյ: Եւ կրկին է սքանչելիք, զի երբեմն լինի առ ի վկայել զծշմարտութիւն վարդապետութեան ինչ, որ ի վեր է քան զիմացումն մեր: Եւ պարտ է, զի վարդապետութիւն այն ճշմարիտ լինի, զի Աստուած ոչ կարէ լինել վկայ ստութեան, այլ ոչ է պարտ, թէ ուսուցանողն այն<sup>11</sup>**

<sup>1</sup> A B փարիսեցիս

<sup>2</sup> A B յորժամ

<sup>3</sup> A չեք

<sup>4</sup> A չեք ոչ պահէ

<sup>5</sup> B չեք

<sup>6</sup> B չեք նշանս առնել

<sup>7</sup> B զաւրութիւնս

<sup>8</sup> C գործէիք

<sup>9</sup> A B սքանչելիքն ի վեր է

<sup>10</sup> C լինին սքանչելիքս

<sup>11</sup> C չեք

բարի լինի, զի սքանչելիքն այն ոչ վկայէ զբարութիւն վարդապետին, այլ զճմարտութիւն վարդապետութեան, եւ սոյնպէս չարք ոմանք քարոզողք ուղղափառ վարդապետութեան սքանչելիս արարին վասն հաստատութեան ուղղափառ հաւատոյ, եւ սոյնպէս իմանի բանն, որ ի Մատթէոս գրեալ է: Երկրորդ կերպիւ լինի սքանչելիք առ ի վկայել եւ ցուցանել զբարութիւն վարդապետին, եւ յայնժամ պարտ է, զի վարդապետն այն բարութիւն ունիցի, զի Աստուած ոչ կարէ վկայել ստութեան, եւ սոյնպէս լինին սքանչելիք<sup>1</sup> Քրիստոսի, որպէս ասէք. «Գործքն, զոր ես առնեն յանուն Յաւը մոյ, նորին] վկայեն վասն ին» (Յովհ. Ժ 25), զի Որդի եմ Աստուծոյ: Եւ սոյնպէս աստ ասէ. «Զիա՞րդ կարէ մարդ մեղաւոր նշանս առնել», իբրու թէ ասել՝ Աստուած սքանչելեաւք վկայէ զբարութիւնս մեր զճմարտութիւն վարդապետութեան, վասն այն անհնար է, զի նա մեղաւոր լիցի:

Բան. «Ասեն դարձեալ ցկոյրն. «Դու զի՞ ասես վասն նորա, զի եբաց զաշս քո?»» (Յովհ. Թ 17):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Զայս ոչ հարցին հակառակքն Քրիստոսի, զի ստուգապէս կարծէին, որն<sup>2</sup> զլուսաւորչին զճմարտութիւն պատասխանի տայր, որպէս ասէ.

Բան. «Եւ նա ասէ, թէ մարդարէ է» (Յովհ. Թ 17):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ<sup>3</sup>.** Ոչ խոստովանեցաւ իբր զհասարակ մարդարէ, որպէս եսայի, Երեմիա եւ այլն, այլ եղական մարդարէ կոչէ, որպէս Մովսէս ասէ յերկրորդ Աւրէնքն. «Մարգարէ յարուսցէ ձեզ Տէր յեղբարց ձերոց» (Ստես Բ Օր. Ժ 15), սակայն ոչ հաւատայր զնադեռեւս Որդի Աստուծոյ:

Հարց. Վասն Է՞ր աւետարանիչս մանրամասն եւ ստուգութեամբ պահէ զամենայն բան:

Պատասխան. Յերեք դէմս աւեգուտ է. նախ՝ ի դէմս Փրկչին, որ ցուցանէ զբարերարելն նոցա: Երկրորդ. զներել թշնամեաց:

Երկրորդ. ի դէմս Հրէիցն. նախ՝ ցուցանէ զանհաւատութիւն նոցա: Երկրորդ. զչար հատուցանելն:

Երրորդ. առ մեզ. նախ՝ զի ուսցուք ի Քրիստոսէ: Երկրորդ. մի՛ նմանեսցուք չարութեան Հրէիցն:

Եւ այժմ, թէ որպէս հարցին զծնողս նորա.

<sup>1</sup> Ս սքանչելիքն

<sup>2</sup> Ա Բ չեք

<sup>3</sup> Ա չեք

<sup>4</sup> Ա Բ չեք

<sup>5</sup> Ա Ը նախ

Բան. «Սա՞ է որդին ձեր, եւ զի կոյր ծնաւ, եւ զիա՞րդ տեսանէ» (Յովի. թ 19):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Ոչ հարցանեն, զի ուսցին, այլ զի հայՀոյեսցեն, զի ստուգապէս գիտէին զկոյրն<sup>1</sup> լուսաւորեալ, եւ լուսաւորիչ զՔրիստոս, որպէս յայտ է ի մեկնիչդ<sup>xxi</sup>:

**Արդ,** երիս բանս հարցանեն. նախ՝ վասն անձին որդւոյ նոցա. «Սա՞ է որդին ձեր»: Երկրորդ. վասն կերպի ծնանելոյն. «Զորմէ ասէիք, թէ կոյր ծնաւ», որպէս թէ ասել՝ սուտ ասէիք, թէ կոյր ծնաւ<sup>2</sup>, զի ուրասցին զայն, զի խեղութիւն որդւոցն ի ծննդենէ ամաւթ առնէ ծնողացն, քան թէ յետոյ պատահի: Երրորդ. հարցանեն, թէ կոյր էր, զիա՞րդ լուսաւորեցաւ, ասեն՝ զիա՞րդ տեսանէ:

Բան. «Պատասխանի ետուն ծնողըն» (Յովի. թ 20):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Երկու բանի պատասխանի ետուն զՃմարիտն ասելով, զի ասացին, թէ՝ «Սա է որդին մեր, եւ զի կոյր ծնաւ» (Յովի. թ 20), իսկ երրորդին, թէ՝ որպէ՞ս տեսանէ<sup>3</sup>, ոչ իշխեցին պատասխանել, այլ յաւժարէին ի վկայելն, վասն որոյ ասեն.

Բան. «Զդա իսկ հարցէք, [ինքն] ի չափ հասեալ է, ինքն խաւսեսցի վասն իւր» (տես Յովի. թ 21):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Որպէս ասել, թէ ինքդ բարւոք գիտէ պատմել քան զմեզ, զի երից ոմանց բանն հաւատալի է. նախ՝ որ ի չափ հասեալ լինի: Երկրորդ. որ ճՃմարտախաւս լինի, զի բանն եւ իրն հաւասարի: Երրորդ. որ բարի լինի կամաւքն: Իսկ ընդդէմ սոցա՝ անկատարից եւ ստախաւսից եւ չարակամաց բանք եւ վկայութիւնք ոչ է հաւատալի:

Բան. «Զայս ասացին ծնողըն [նորա], զի երկնչէին ի հրեհցն» (Յովի. թ 22):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Այսինքն՝ փարիսեցւոց եւ ի քահանայապետից, որք գլուխ եւ առաջնորդք էին, եւ զպատճառ<sup>4</sup> երկիւղին ասէ.

Բան. «Քանզի ուխտ եղեալ էին» (Յովի. թ 22):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Այսինքն՝ ահ եւ սպառնալիք կամ նզովք եւ բանագրանք՝ ի բաց կալ ի ժողովարանէն, որ էր յոյժ նախատինք նոցա, վասն այն նիկողիմոս ի գիշերի եկն առ Քրիստոս: Եւ յետ խաչին այլ իմն յաւելին զչար ուխտն, որ ի հայրենեացն եւս զրկէին, եւ հաւատացեալքն առ ոտս առաքելոցն ժողովէին, որպէս յայտ է ի Գործքն, եւ ապա այլ իմն հնարին՝ ածել զնա յուրացութիւն:

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> C չեք որպէս թէ... կոյր ծնաւ

<sup>3</sup> C պատասխանէ

<sup>4</sup> C պատճառ

Բան. «Դարձեալ [կրկին անգամ] կոչեցին զայրն» (Յովի. թ 24):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Աստ նախ ցուցանէ, թէ ջանան ուրացնել ի ճշմարտութենէն<sup>1</sup>: Երկրորդ. ցուցանէ, թէ որպէ՞ս դատապարտեցին զնա, անդ. «Նոքա հայինեն եւ ասեն. «”Դու լիջիր ննա աշակերտ”» (տես Յովի. թ 28): Երրորդ. ցուցանէ, թէ Քրիստոս որպէ՞ս ընկալաւ զնա, անդ. «Լուաւ Յիսուս, եթէ<sup>2</sup> հանին զնա արտաքս» (Յովի. թ 35):

Եւ զառաջինն ասէ. «Դարձեալ կոչեցին զնա եւ ասեն» (Յովի. թ 24).

Բան. «Տուր փառս Աստուծոյ» (Յովի. թ 24):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Կամէին խաբէութեամբ եւ սիրով ուրանալ տալ. «Տուր փառս Աստուծոյ». Նախ՝ խոստովան լեր զճշմարտութիւն, զի կախարդութեամբ լուսաւորեցար եւ ոչ զաւրութեամբն Աստուծոյ: Երկրորդ. Աստուծոյ տուր փառք եւ ի նմանէ հրաժարեա՛:

Բան. «Մեք գիտեմք, զի [այրն այն] մեղաւոր է» (Յովի. թ 24):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Այսինքն՝ մեք բազումք եմք, այլ եւ գիտունք, որ վկայեմք վասն մեղաց նմա, եւ դու տգէտ եւ մի, որպէս ասէ մեկնիչդ<sup>cxvii</sup>: Հանգոյն այսմ եւ երկաբնակք ասեն, թէ մեք բազումք եմք եւ իմաստունք եւ Հայք՝ մին ազգ եւ տգէտք, եւ սոցապատասխանին տե՛ս ի գիրս Հարցմանց հատորն, համարն:

Բան. «Եւ նա ասէ. “Թէ մեղաւոր է ես ոչ գիտեմ”» (Յովի. թ 25):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Ոչ երկիւղի է բանս, այլ իմաստութեան. Նախ՝ զչարութիւն նոցա այպանէ, իբր թէ գուք ասէք, թէ մեղաւոր է: Երկրորդ. զխոստովանութիւն իւր ասէ՝ ես ոչ գիտեմ զնա մեղաւոր, եւ ոչ ասեմ: Երրորդ. զսրբութիւն նորա<sup>3</sup> գործով գիտեմ<sup>4</sup>, զի այս լուսաւորութիւնս գործ Աստուծոյ է<sup>5</sup> եւ ոչ մարդոյ մեղաւորի կամ կախարդի:

Դարձեալ հարցանեն զնա վասն կերպի լուսաւորութեան.

Բան. «Զի՞նչ արար քեզ, զիա՞րդ երաց զայս քո» (Յովի. թ 26):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Նախ՝ ըստ Ոսկեբերանին. մի՞թէ կախարդութեամբ արար զայդ: Երկրորդ. բազում հարցումն նշան նախանձու է, զի ունայն ցուցանեն զսքանչելիսն: Երրորդ. եւ զայլս տկարցուցանեն ի հաւատս: Չորրորդ. զի թէ այլ եւ այլ խաւսեցի եւ այնու սուտ առնեն զվկայութիւն նորա, որպէս ասէ մեկնիչդ<sup>cxviii</sup>:

Բան. «Ասացի ձեզ, եւ ո՛չ լուարուք» (Յովի. թ 27):

<sup>1</sup> Բ ի հաւատոցն եւ ի ճշմարտութենէն

<sup>2</sup> Ա Բ թէ

<sup>3</sup> Ա Բ սրբութիւն իւր

<sup>4</sup> Բ սրբութիւն նորա սրտով գործեն գիտեն

<sup>5</sup> Ա Բ չեք

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Նախ՝ զկերպ բժշկութեան ասացի, թէ կաւ արար: Երկրորդ. զկերպ վկայութեան ասացի, թէ մարգարէ է<sup>1</sup>: Երրորդ. վասն սրբութեան նորա ասացի, թէ լուսաւորեաց զիս:

Բան. «Մի՞թէ եւ դուք կամիք աշակերտել ննա» (Յովի. Թ 27):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Նախ բարկութեամբ խաւսի ընդդէմ խստութեան նոցա: Երկրորդ. ասէ Ոսկեբերանն. «Համարձակ խաւսի, զի յաղթեալ էր նոցա, իբր թէ ասել. «Զոր ինչ ասեմ, ո՛չ առնոյք ի միտ, վասն այն այլ ոչ առնեմ պատասխանի ձեզ, զի բազում անգամ հարցանէք ոչ վասն ուսանելոյ, այլ վասն հակառակելոյ»: Եւ սոյնպէս զաւրաւոր է ճշմարտութիւն, եթէ առ մինն լինի եւ առ տկարն եւ առ տգէտն, զաւրացուցանէ եւ իմաստուն եւ յաղթող բազմաց [դարձուցանէ]: Իսկ ընդդէմ նմա ստութիւն տկար<sup>2</sup> եւ թոյլ է, եթէ առ բազումս լինի եւ զաւրաւորս եւ իմաստունս, տկարացուցանէ զնոսա, որպէս ասացաւ»:

**Այժմ ասէ,** թէ որպէս փարիսեցիքն դատապարտեցին զնա.

Բան. «Նորա հայիոյէին» (Յովի. Թ 28):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ<sup>3</sup>.** Այսինքն՝ անիծանէին:

Բան. «Դու լիջիր ննա աշակերտ» (Յովի. Թ 28):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Այս ոչ էր նորա<sup>4</sup> անէծք, այլ աւրհնութիւն:

Յայսմանէ երկու ինչ գիտելի է. նախ՝ որ զբարիսն անիծանէ, աւրհնութիւն է նմա, այլ անիծողին է վնաս. «Որպէս հաւ թռչի ի բունոյ իւրմէ եւ անդրէն դադարի, նոյնպէս եւ անէծք անզգամին», ասէ Սողոմոն: Երկրորդ. գիտելի է, որ զչարսն աւրհնէ, անէծք է չարին, այլ աւրհնողին է աւգուտ, վասն այն ասէ Տէր. «Աւրհնեցէք զանիծիչս ձեր» (Մատթ. Ե 44, Ղուկ. Չ 28), եւ այլն:

«Դու լիջիր ննա աշակերտ». Նախ՝ զի իմացան զյաւժարութիւն նորա ի հաւատուն Քրիստոսի: Երկրորդ. դու լեր աղանդաւորին եւ աւրինացն յանցողին աշակերտ, մեք աւրինադրին եմք աշակերտ եւ ոչ աւրինազանցին: Հանգոյն այսմ եւ Փիլոն ասէ<sup>5</sup>. «Որ ողորմեսցի Մովսիսի աւրինադրի, ողորմեսցի եւ<sup>6</sup> Փիլոնի աւրինապահի»:

Բան. «Մեք Մովսիսի աշակերտը եմք» (Յովի. Թ 29):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Սոքա Մովսիսի աշակերտք էին միայն ըստ անուան եւ ոչ ըստ իրին. Նախ՝ զի գործոց նորա ոչ հետեւին, զի ու-

<sup>1</sup> Ա մարգարէն է

<sup>2</sup> Ը ստութիւն այնպէս տկարացուցանէ

<sup>3</sup> Ը տեղ

<sup>4</sup> Ը տեղ

<sup>5</sup> Ը ասէր

<sup>6</sup> Ը տեղ

րանան զնշանսն Քրիստոսի եւ կամին սպանանել զնա: Երկրորդ զի Գրոց նորա ոչ հաւատան, որպէս ասէր. «Թէ հաւատայիք դուք Մովսէսի, հաւատայիք եւ ինձ» (տե՛ս Յովի. Ե 46):

**Ապա ասէ զպատճառ ոչ հաւատալոյն Քրիստոսի.**

Բան. «Մեք գիտեմք, զի ընդ Մովսէսի խաւեցաւ Աստուած, զսա ոչ գիտեմք [ուստի է]» (Յովի. Թ 29):

**Մեկնութիւն.** տե՛ս զանմտութիւն, որպէս ասէ մեկնիչդ<sup>xxiv</sup>. նախ՝ ի պատմութեանց գիտելն հաւատան եւ զականատեսն Քրիստոս ուրանան: Երկրորդ. «Ոչ գիտեմք ուստի իցէ», ոչ զայն ասեն, թէ յորմէ<sup>1</sup> աշխարհէ, կամ յազգէ իցէ, զի զայն յառաջագոյն ասացին. «Զսա գիտեմք ուստի իցէ» (հնմտ. Յովի. Թ 24), բայց զայն ասեն՝ չգիտեմք, թէ յԱստուծոյ իցէ առաքեալ ստուգապէս, այլ զՄովսէս գիտեմք (հնմտ. Յովի. Թ 29): Երրորդ. ասեն. «Ոչ գիտեմք», այսինքն՝ ոչ կարեմք թողուկ զՄովսէս եւ սմա լսել, զի սա Մովսէսի հակառակ երեւի, զի նախ լուսաւորեալն յանդիմանէ զխստասրտութիւն նոցա:

Բան. «Այդ իսկ են սքանչելիք» (Յովի. Թ 30):

**Մեկնութիւն.** եւ երեք կերպ են սքանչելեաց. այսինքն՝ ի բանն, ի գործն եւ յիրն: Այն, որ ի բանն է սքանչելիք, ի վեր է քան զիմացումն: Որ ի գործն է սքանչելիք, ի վեր է քան զսովութիւն: Որ յիրն է<sup>2</sup> սքանչելիք, ի վեր է քան զբնութիւն: Եւ ամենայն սքանչելիք հաւատով տեսանի, եւ զի սովորութիւն էր հրէիցն նշան խնդրել, որպէս ասէ Պաւղոս. «Հրէայք նշան խնդրեն» (Ա Կորնթ. Ա 22), նախ՝ այդ իսկ են սքանչելիք, որ տեսանէք զիս լուսաւորեալ եւ ոչ հաւատայք: Երկրորդ. այդ են սքանչելիք, զի դուք ոչ գիտէք, զի թէ գիտէիք, ոչ էր սքանչելիք: Երրորդ. այդ են սքանչելիք, զի դուք գիտունք զմեծատունն ոչ գիտէք, եւ ես գիտացի գործով, որ զիմ աչս երաց:

Բան. «Գիտեմ[ք], զի Աստուած մեղաւորաց ոչ լսէ» (Յովի. Թ 31):

**Մեկնութիւն.** Այսինքն<sup>2</sup> Աստուած ոչ առնէ սքանչելիք առ ի վկայել բարութեան ի վերայ չարեաց, զի ընդ նմա սուտ վկայ լինէր, որ անհնար է, այլ թէ երբեմն սքանչելիք առնէ վասն մեղաւորին, ոչ առնէ վասն նորա չարութեան, այլ վասն իւրոյ մարդասիրութեան, բայց վասն բարեաց սքանչելիք առնէ՝ վկայելով ճշմարիտ վարդապետութեան եւ վասն բարութեան նոցա, որպէս ասէ.

<sup>1</sup> Ա Բ որ ի յիրն է

<sup>2</sup> Բ չիք Մեկնութիւն. Այսինքն

Բան. «Բայց թէ<sup>1</sup> աստուածապաշտ ոք իցէ եւ զկամս նորա առնիցէ» (Յովի. Թ 31):

**ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ.** Կրկին մասունք են բարութեան, այսինքն՝ ներքին եւ արտաքին: Վասն առաջնոյն ասէ. «Թէ աստուածապաշտ ոք իցէ», այսինքն՝ հաւատով եւ սիրով ի հանճարն եւ ի կամսն: Վասն երկրորդին ասէ<sup>2</sup>. «Զի զկամս նորա առնիցէ», այսինքն՝ զհրամայեալսն կատարելով: Եւ այնպիսոյ առն լսէ Աստուած եւ յայտնէ զսրբութիւն նորա վասն շինութեան եկեղեցւոյ:

Հարց<sup>3</sup>. Որպէս ասէ, թէ Աստուած մեղաւորաց ոչ լսէ, զի մաքսաւորին լուաւ, եւ անառակին:

Պատասխան. Ասեն վարդապետք. նախ՝ զի Աստուած մեղաւորաց ոչ լսէ, այլ զղջացեալն ոչ է մեղաւոր, իսկ մաքսաւորն եւ անառակն զղջացեալք էին, այսինքն՝ հեռացեալք ի չարեաց եւ մերձեցեալք ի բարին<sup>4</sup>: Երկրորդ. ասեն՝ Աստուած ոչ տայ իշխանութիւն մեղաւորաց առնել սքանչելիս վասն բարութեան նոցա, այլ վասն պատուոյ անուանն Քրիստոսի եւ վասն փրկութեան ընտրելոց, որպէս չար քրիստոնեայք եւ հերձուածողք բանիւն Քրիստոսի եւ խորհրդովք եկեղեցւոյ առնեն սքանչելիս: Եւ դարձեալ ասեն, թէ այլ կերպիւ կախարդք եւ այլ կերպիւ չար քրիստոնեայք, եւ այլ կերպիւ բարի քրիստոնեայք սքանչելիս առնեն, զի կախարդք սքանչելիս առնեն ծածկաբար միութեամբն ընդ սատանայ, թէպէտ ոչ են սքանչելիք, այլ զարմանալիք եւ անսովոր իրք, իսկ բարի քրիստոնեայք սքանչելիս առնեն առ հասարակ արդարութեամբ, եւ չար քրիստոնեայք սքանչելիս առնեն նշանաւ արդարութեան, որպէս աշակերտքն ասէին. «Տէ՛ր, տեսաք զոմն, զի յանուն քո դեւս հանէր եւ զկնի մեր ոչ շրջէր» (Մարկ. Թ 37):

### Վասն յաւիտեանց

Բան. «Ի յաւիտենից ոչ ոք լուաւ» (Յովի. Թ 32):

**ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ.** Չորս են յաւիտեանք. նախ՝ որ ոչ սկիզբն ունի եւ ոչ կատարած, որպէս յարածքականն: Երկրորդ. որ սկիզբն ունի եւ կատարած, որպէս ժամանակն<sup>5</sup>: Երրորդ. որ ոչ ունի սկիզբն,

<sup>1</sup> Ը եթէ

<sup>2</sup> Ը չիք

<sup>3</sup> Ը չիք

<sup>4</sup> Ը ի բարիս

<sup>5</sup> Ը չիք որպէս ժամանակն

այլ կատարած, որպէս սկզբնականն: Զորրորդ. որ սկիզբն ունի եւ ոչ կատարած, որպէս մշտնջենաւորն:

Արդ, որ ասէ. «Ի յաւիտենից ոչ ոք լուաւ», զժամանակականն ասէ զյառաջին դարսն, զի իւրաքանչիւր դարք յաւիտեան կոչին:  
Բան. «Ի ծնէ կոյր ծնելոյ» (Յովհ. Թ 32):

Մեկնութիւն. Զորիւք որոշի ի ծնէ կոյրն. նախ՝ զի ընական է կոյրն եւ այլք պատահմամբ: Երկրորդ. զի անտես է լուսոյ, իսկ այլք զրկեալք: Երրորդ. զի բովանդակ է սխալեալ եւ այլոցն՝ մասն: Զորրորդ. զի ոչ բուժի դեղաւք, այլ նոր ստեղծանելոյ կարաւտի:

Եւ չորիւք ցուցանէ մեկնիչէ<sup>cxxxv</sup>, զի Որդի Աստուծոյ ասէ.

Բան. «Եթէ ոչ յԱստուծոյ էր այրն» (Յովհ. Թ 33):

Մեկնութիւն. նախ՝ զի Որդի Աստուծոյ էր, երկրորդ՝ սիրելի Աստուծոյ, երրորդ՝ յԱստուծոյ եկեալ, չորրորդ՝ ի քարոզելն բազում էր լուեալ:

Բան. «Ի մեղս իսկ ծնեալ ես» (Յովհ. Թ 34):

Մեկնութիւն. նախ՝ անարգութեամբ ասէին: Երկրորդ. սուտ ասեն, զի անմեղ ծնանին մանկունք եւ յետոյ մեղանչեն: Երրորդ. սկզբնական մեղաւք ասեն, եւ այս հասարակաց է: Զորրորդ. չնութեան որդիք եւ զայս թլփատութիւն ի հինն եւ մկրտութիւն ի նորս սրբէ: Հինգերորդ. կարծէին, թէ վասն մեղաց էր կոյր ծնեալ: Վեցերորդ. կարծեն, ըստ բարեկամացն Յոքայ, զի ամենայն նեղութիւն եւ հիւանդութիւն վասն մեղաց լինի: Եւ յայսցանէ Քրիստոս անմեղ երեւեցոյց յասելն. «Ոչ դորա վնաս է» (Յովհ. Թ 3), եւ այլն: Ապա ուրեմն ցասմամբ եւ անարգութեամբ ասեն, եւ ոչ միայն բանիւ, այլ եւ գործով, որպէս զկնի ասէ.

Բան. «Եւ հանին զնա արտաքս» (Յովհ. Թ 34):

Մեկնութիւն. Այսինքն<sup>1</sup> բանադրանաւք ի բաց կտրեցին ի ժողովրդենէն:

Եւ այս վասն չորս պատճառի. նախ՝ զի զՔրիստոս քարոզեաց: Երկրորդ. զի ասաց ի յաւիտեանց ոչ ոք լուաւ եւ<sup>2</sup> արարայնպիսի նշան: Երրորդ. զի առաւել զայրացան: Զորրորդ. զի մի յանդիմանեսցէ զնոսա:

Իսկ ասելն.

Բան. «Եւ դու վարդապետ լինիս մեզ» (Յովհ. Թ 34):

<sup>1</sup> B չիք

<sup>2</sup> A C չիք լուաւ եւ

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. իբրու ասել. «Դու՝ տգէտ եւ մեղաւոր, վարդապե՞տ լինիս մեզ»: եւ այս սուտ է, զի զծշմարտութիւն ո ոք եւ պատմեսցէ, ընդունելի է:

Թէ ընկալաւ զնա Քրիստոս<sup>1</sup>

Բան. «Լուաւ Յիսուս, եթէ հանին զնա» (Յովի. Թ 35):

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Թէպէտ Քրիստոս զամենայն ինչ գիտէ նախքան զլինելն, այլ կամեցաւ զգալի ունկամք լսել:

Բան. «Եւ իբրեւ եգիտ զնա» (Յովի. Թ 35):

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Ոչ պատահմամք, այլ խնդրելով է:

Եւ վասն չորս պատճառի երեւեցոյց Քրիստոս զինքն նմա. նախ՝ վասն զի հրէայքն ի բաց մերժեցին, Քրիստոս ընկալաւ զնա: Երկրորդ. զի հաստատուն եկաց եւ ոչ զանդիտեաց ի հակառակացն: Երրորդ. զի գոհանայր զերախտագործէն: Զորրորդ. զի կամեցաւ որպէս զմարմինն, եւ զհոգին լուսաւորել:

Եւ վեց իրաւք համեմատէ բացումն կուրին եւ առողջութիւն<sup>2</sup> անդամալուծին. նախ՝ զի այն շաբաթ էր աւրն, եւ աստ շաբաթ ասէ: Երկրորդ. անդ բոլոր անդամն էր լուծեալ, եւ աստ բոլոր աչքն խաւարեալ: Երրորդ. մերձ ի Պրոպատիկէն, եւ աստ՝ ի Սելովամ առաքեաց: Զորրորդ. անդ ասաց. «Յայր իմ մինչեւ ցայժմ գործէ, եւ ես գործեմ» (Յովի. Ե 17) եւ աստ. «Պարտ է ինձ գործել զգործս Աստուծոյ» (հմնտ. Յովի. Թ 4): Հինգերորդ. անդ՝ յետ նշանին խոյս ետ (հմնտ. Յովի. Ե 13), եւ աստ՝ գնաց ի տեղւոջէն: Վեցերորդ. զնա եգիտ ի տաճարին եւ ասէ՝ մի՛ եւս<sup>3</sup> մեղանչեր (Յովի. Ե 14), եւ աստ ասէ<sup>4</sup>. «Դու հաւատա՞ս յՈրդին Աստուծոյ» (Յովի. Թ 35), զի զբոլոր մարդն բժշկեսցէ:

### Վասն հաւատոց

Բան. «Դու հաւատա՞ս յՈրդին Աստուծոյ» (Յովի. Թ 35):

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Վասն երկու պատճառի հարցանէ. նախ՝ զի տացէ պատճառ խնդրելոյ, թէ ո՞վ է Որդին Աստուծոյ: Երկրորդ. զի արտաքերեալ բանիւ վկայեսցէ, որպէս զնոր մկրտեալն հարցանեմք, թէ՝ հաւատա՞ս ի Քրիստոս: Եւ ոչ ասաց՝ դու հաւատա՞ս յիս, այլ յՈրդին Աստուծոյ՝ առ ի բառնալ զփառասիրութեան

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> C ողջութիւն

<sup>3</sup> A չեք

<sup>4</sup> B չեք մի՛ մեղանչեր, եւ աստ ասէ

ախտ: Այլ եւ ոչ ասաց՝ հաւատա՞ս յայն, որ կաւով զաչս քո ծեփեաց, զի գիտէր զծածուկ սրտի նորա հաստատուն գոլ, այլ, թէ՝ յՈրդին Աստուծոյ, վասն որոյ ընդ հրէայսն հակառակէր:

Պատասխանի ետ յաւժարութեամբ.

Բան. «Տէր, ո՞վ է, զի հաւատացից ի նա<sup>1</sup>» (Յովի. Թ 36):

Մեկնութիւն. Նախ՝ այր մի եւ մարզարէ եւ յԱստուծոյ վկայեաց, եւ այժմ Տէր դաւանեաց: «Ո՞վ է» երկու գիծն ձայնաւոր եւ անձայն ցուցանէ յերկուց բնութեանց միացեալ զՔրիստոս եւ Ե յաւիտենից, զի անսկիզբն է Աստուծութեամբ եւ անվախճան՝ մարդկութեամբն:

Եւ երեք դէմք է հաւատալոյն, այսինքն՝ հաւատալ զնա, եւ հաւատալ նմա, եւ հաւատալ ի նա: Արդ, հաւատալ զնա լեզուաւէ, եւ հաւատալ նմա, այսինքն՝ բանից նորա, իսկ հաւատալ ի նա, այսինքն՝ սրտիւ հաւատալ եւ սիրով կապիլ ի նա, վասն այն ասեմք ի դաւանութիւն. «Հաւատամք ի մի Աստուծած եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս եւ ի Հոգին Սուրբ»:

Այս ըստ մասին<sup>2</sup> տեսութիւն, եւ ըստ բոլորին վասն երից ասէ. «Տէր, ո՞վ է». նախ՝ հարցանէ, զի զՔրիստոս ոչ ճանաչէր ըստ կերպարանին: Երկրորդ. զփափագումն սրտին ցուցանէ: Երրորդ. զի տեսութեան միայն սպասէր եւ ոչ քննութեան կամ ուսման, որպէս յայտ է ի մեկնչէդ:

Բան. «Եւ տեսեր զնա եւ որ խաւսի ընդ քեզ<sup>3</sup>, նա է» (Յովի. Թ 37):

Մեկնութիւն. Զորմէ հարցէրն, թէ՝ ո՞վ է, սա է, զոր տեսանես եւ որ խաւսի ընդ քեզ:

Եւ վասն հինգ պատճառի ի միասին դնէ տեսանել եւ լսել. նախ՝ զի մի զայլ ոք<sup>4</sup> կարծիցէ ի տեսողացն, այլ անվրէպ զնա, որ խաւսի: Երկրորդ. զի ի մարմին եւ ի հոգին իւր կրեսցէ զուրախութիւն տեսլեամբ եւ լսելեաւք: Երրորդ. զի մարմնովն եւ հոգւովն հաւատասցէ զնա Որդի Աստուծոյ գոյ: Զորրորդ. զմարմինն Քրիստոսի Աստուծած ետես եւ զՀոգին Աստուծած եւ այնու որոշեցաւ ի հրէիցն, որ զնա սոսկ մարդ տեսանէին: Հինգերորդ. զնա եւ նա է, զմիութիւն ցուցանէ անբաժանելի մարդկութեան եւ Աստուծածութեան, այսինքն. «Մի անձն եւ միաւորեալ մի բնութիւն Բանին մարդացելոյ», որպէս ասէ սուրբն Կիւրեղ եւ Աթանաս, զի ոչ ասաց զնոսա, որ ցուցանէ երկու անձն ըստ Նեստորի, եւ ոչ ասաց՝ ի նմա, որ ցուցանէ երկու բնութիւն ըստ Քաղկեդոնի:

<sup>1</sup> A B չեք ի նա

<sup>2</sup> C մօրն

<sup>3</sup> A B չեք ընդ քեզ

<sup>4</sup> C զայլս

**Եւ նա առժամայն հաւատաց, որպէս ասէ.**

Բան. «Յաւատա՞ն, Տէր» (Յովի. Թ 38):

ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ. Երեք ինչ ցուցանէ. Նախ՝ ներկայական է՝ հաւատամ, զի անդ ի գործոցն հաւատաց եւ աստ ի բանիցն: Երկրորդ, զի սրտին է հաւատալն, եւ բերանոյն՝ խոստովանել<sup>1</sup>, որպէս ասէ առաքեալ. «Սրտիւ հաւատալ յարդարութիւն եւ բերանով [խոստովանիք ի փրկութիւն]»<sup>2</sup> (Յով. Ժ 10): Երրորդ. զերեւելիդ մարմին Տէր եւ Աստուած հաւատամ ըստ Թումայի (հմնտ. Յովի. Ի.26-29), որ ետես եւ հաւատաց:

Բան. «Եւ Երկիր եպագ ննա» (Յովի. Թ 38):

ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ. Նախ՝ հաւատալն հոգւոյն է, եւ երկրպագութիւն՝ մարմնոյն: Երկրորդ. մինն տեսական է, եւ մինն՝ գործնական: Երրորդ. հաւատալն բանին եւ երկրպագութիւն մարմնովն շնորհակալութիւն մատոյց: Զորրորդ. զՔրիստոս ճշմարիտ Աստուած մարդացեալ խոստովանեցաւ, վասն այն երկիր եպագ իբր Աստուծոյ:

Եւ աստ կատարեցաւ չորիւք հաւասարութեամբ, թէ Աստուած է Քրիստոս. Նախ՝ որ զծնէ կոյրն լուսաւորեաց: Երկրորդ. յորժամ ասաց. «Դու հաւատա՞ս յՈրդին Աստուծոյ» (Յովի. Թ 35): Երրորդ. որ վասն ինքեան վկայեաց, թէ՝ Ես եմ Որդին Աստուծոյ: Զորրորդ. կուրին երկրպագութեամբն, որ նմա երկիր եպագ, եւ ոչ նոցա:

Եւ մեք ընդ կուրին լուսաւորեալք երկիր պագանեմք միոյ եւ անբաժանելի միաւորութեան Քրիստոսի Աստծոյն մերոյ ընդ Հաւը իւրում եւ Սուրբ Հոգւոյն: Ամէն:

### Վասն դատաստանի

Բան. «Ի դատաստան Եկի յաշխարիս յայս» (Յովի. Թ 39):

ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ. Դատաստանն ցուցանէ զքննութիւն եւ զտեղիք, զի «դատ»-ելն քննելն է եւ «աստան»՝ ատեանն եւ տեղիք, որպէս ասեմք՝ Հայաստան:

Եւ ի վերայ այսմ բանի երեք ինչ հարցանելի է.

Առաջին. Վասն է՞ր յայսմ աշխարհիս դատէ:

Պատասխան. Վասն չորս պատճառի. Նախ՝ զի աստ գործեմք զբարիս եւ զչարս, վասն այն աստ դատիմք: Երկրորդ. զի դատաստան<sup>3</sup> լինի ի հասարակ տեղիս եւ աշխարհս այս հասարակ է

<sup>1</sup> Ը Եւ բերանով խոստովանել զիրկութիւն

<sup>2</sup> Ը Եր որպէս ասէ... ի փրկութիւն ...

<sup>3</sup> Ը դատելն

ամենեցուն: Երրորդ. զի<sup>1</sup> միջին տեղիք է սա, այսինքն՝ արքայութեան երկնից եւ դժոխոց: Չորրորդ. զի չորս իր հարկաւոր է դատաստանին, այսինքն՝ նախ դատաւորն, երկրորդ՝ տեղիքն, երրորդ՝ դատեցեալքն, չորրորդ՝ վկայք, եւ սոքա ամենեքեան աստեն, վասն այն դատաւորն աստ գայ եւ դատէ:

Երկրորդ հարց. Ընդէ՞ր է նախ ասաց. «Ոչ առաքեցայ ի դատել զաշխարհս, այլ փրկել» (Յովհ. Գ 17), իսկ այժմ ասէ. «Ի դատաստան եկի յաշխարհս» (Յովհ. Թ 39):

Պատասխան. Կրկին կերպիւ լինի դատաստան. նախ՝ դատաստան որոշման: Երկրորդ. դատաստան հատուցման: Արդ, յառաջին գալստեանն Քրիստոս արար դատաստան որոշման հաւատացելոց յանհաւատից, որպէս ասէր. «Ոչ եկի առնել խաղաղութիւն, այլ սուր եւ բաժին» (Մատթ. Ժ 34), իսկ զդատաստան հատուցման առնէ ի հանդերձեալն՝ յերկրորդ գալստեանն, որ զոմանս դատապարտէ եւ զոմանս վարձատրէ, իսկ որ ասէ ի դատաստանս, եւ ոչ միայն ի դատաստան, նախ՝ ցուցանէ զմերձաւորն, երկրորդ՝ զբազմաւորն, երրորդ՝ զնշանաւորն, չորրորդ՝ զյայտնին:

Երրորդ հարց. Զի՞նչ է. «Որք ոչն տեսանեն, տեսցեն, որք տեսանեն, կուրասցին<sup>2</sup>» (Յովհ. Թ 39):

Պատասխան. Բազում է տեսութիւն, եւ ասեմք տասն կերպիւ.

Նախ՝ որպէս հանին հրէայքն զլուսաւորեալն ի տաճարէն<sup>3</sup>, նոյնպէս եւ Քրիստոս եհան զնոսա ի տաճարէն, նախ՝ յաւրինակէն եւ ապա ի ճշմարտէն, այսինքն՝ նախ՝ չուանեայ խարազանաւն եւ ապա<sup>4</sup> ի ձեռն Տիտոսի:

Երկրորդ. մարմնապէս կոյրն լուսաւորեցաւ, եւ աչքն հրէից առագաստեալ ծածկեցաւ, որ կամէին զբարինսն<sup>5</sup> ձգել:

Երրորդ. կոյրն մարմնով եւ հաւատով լուսաւորեցաւ՝ յաւրինակ հեթանոսաց ազգի:

Չորրորդ. ազգն հրէից կուրացաւ, որ աստուածատես<sup>6</sup> կոչէին, եւ ազգն հեթանոսաց լուսաւորեցաւ, որ նստէին<sup>7</sup> ի խաւարի, որպէս յայտ է ի մեկնիչդ<sup>exxvi</sup>:

<sup>1</sup> Ծ Երրորդ. զի լինի ի հասարակ տեղիս, զի

<sup>2</sup> A B չեք

<sup>3</sup> A B հանին զլուսաւորեալն ի տաճարէն իրեայքն

<sup>4</sup> B եւ ապա ի ճշմարտէն եւ ապա

<sup>5</sup> A B զբարինս

<sup>6</sup> C աստուածատեսք

<sup>7</sup> C նստէր

**Հինգերորդ.** սատանայ կուրացաւ, զի ոչ ծանեաւ զտնաւրէ-նութիւն Քրիստոսի, որպէս ասէ Յոր. «Ոչ ետես զնա ակն անգեղ» (Յոր ԻԸ 7), եւ ազգ մարդկան ետես եւ փրկեցաւ:

**Վեցերորդ.** Հոգիքն ի գժոխս խաւարեալ լուսաւորեցան, որպէս քարոզեց Քրիստոս<sup>1</sup>. «Որք ի կապանսդ էք, ելէ՛ք, եւ որք ի խաւարի, յայտնեցարուք», եւ դեւք կուրացան եւ կապեցան, ըստ այնմ. «Որ զիզաւս կապեաց» (հմնտ. Ղուկ. Ա 52):

**Եւթներորդ.** Դպիրքն եւ իմաստունքն տգիտացան եւ առաքեալքն պարզամիտք իմաստնացան, ըստ այնմ. «Ծածկեցար յիմաստնոց եւ յայտնեցար տղայոց» (տես Մատթ. ԺԱ 25):

**Ութերորդ.** Հերձուածողք ըստ մտաց քննութեան իւրեանց կուրացան եւ ուղղափառք հաւատով լուսաւորեցան, ըստ այնմ. «Յիմարեցոյց Աստուած զիմաստութիւն աշխարհիս այսորիկ, եւ յիմարութեամք քարոզութեան ապրեցոյց զհաւատացեալս» (տես Ա Կորնթ. Ա 20-21):

**Իններորդ.** ասէ Սիմէոն. «Սա է նշան հակառակութեան» (տես Ղուկ. Բ 34), այսինքն՝ ոմանց կանգնումն եւ ոմանց գլորումն, վէմ հաստատութեան եւ քար գայթակղութեան, այսինքն՝ հաւատացելոց եւ անհաւատից:

**Տասներորդ.** ի դատաստանին, որ աստ երեւելի մեծութեան են<sup>2</sup> եւ հպարտութեան, անդ խաւարեսցին, եւ որք աստ՝ ի խոնարհութեան եւ տնանկութեան, անդ տեսցեն զփառս եւ լուսաւորեսցին:

Բան. «Լուան ոմանք ի փարիսեցւոցն» (Յովհ. Թ 40):

**Մեկնութիւն.** Ոմանք, որ չարագոյնք էին, նոքա էին, որ զլուսաւորեալն արտաքսեցին<sup>3</sup> ի տաճարէն:

Բան. «Մի՞թէ եւ մեք կոյրք հցեմք» (Յովհ. Թ 40):

**Մեկնութիւն.** Թանձրամիտն եւ հերձուածողն ըստ մտաց իւրոց փոխէ զբարի բանս ի չար, որպէս հիւանդ ոք զկերակուրն ի մաղձ փոխէ, եւ ձի զյստակ ջուր ըմպելով ապականէ ի փորի իւրում:

Բան. «Թէ կոյրք էիք, ոչ էր ձեր<sup>4</sup> մեղ» (տես Յովհ. Թ 41):

**Մեկնութիւն.** Նոցա բանիւն զնոսին յանդիմանէ:

**Զորս է իմացումն.** նախ՝ թէ ոչ էիք տեսեալ զգործս իմ<sup>5</sup>, ունէի՞ք ինչ պատճառ չհաւատալոյ յիս: Երկրորդ. թէ ոչ գիտէիք

<sup>1</sup> A B ասէ Պետրոս

<sup>2</sup> A B մեծութեան

<sup>3</sup> B հանին

<sup>4</sup> A B ձեզ, C չեք

<sup>5</sup> A B չեք

զ Գիրս եւ զմարգարէութիւնս վասն իմ, այնքան չունէիք մեղք, որպէս այժմդ ունիք: Երրորդ. թէ զձեզ կոյր համարէիք, ոչ ունէիք մեղս, զի առ բժիշկն երթայիք եւ հաւատայիք: Չորրորդ. կոյր զտգէտն ասէ, որպէս մանուկ, զի անգիտութեամբ մեղանչելն փոքր է քան զգիտութեամբն, որ գան սաստիկ առնու:

Դարձեալ՝ ըստ մարմնոյ կոյրն անմեղ է ի ցանկութենէ մեղաց, այլ եւ ի նախանձու եւ յատելութեանց, զի ոչ տեսանէ:

Բան. «Արդ, ասէք, թէ տեսանեմք, եւ մեղքն ձեր [ի ձեզ] հաստատեալ են<sup>1</sup>» (տես Յովի. Թ 41):

Մեկնութիւն. Այսինքն<sup>2</sup> առաւել ծանունք են, զի տեսէք զիս եւ ոչ հաւատացէք, կամ անզեղջ եւ անդարձ էք ի մեղս ձեր:

Եւ գիտելի է, զի կոյր կոչի մեղաւորն եւ անհաւատ, եւ ասեմք վասն տասն պատճառի.

Նախ՝ զի կոյրն ոչ ինչ տեսանէ ամենեւին, սոյնպէս եւ մեղաւորն ոչ ինչ իմանայ յաստուածայնոցն:

Երկրորդ. զի է կոյր, որ բնական է, որպէս ի ծնէ կոյրն, եւ է, որ պատահմամբ, սոյնպէս է մեղաւոր, որ բնականապէս յիմար է, այսինքն՝ անհաւատն, որպէս այլազգիք, որ անխտիր գործեն զմեղս, եւ է որ յետոյ պատահմամբ, որպէս քրիստոնեայք յետ աւազանին ծննդեանն<sup>3</sup>:

Երրորդ. զի է կոյր, որ սուր է մտաւք եւ շարժի որպէս աչքաւոր, սոյնպէս եւ է մեղաւոր, որ ճարտարապէս իբրեւ զարդար կայ, սակայն մեղաւոր է, որպէս հրէայքն յայնժամ:

Չորրորդ. կոյր կոչի, որ բնական լոյսն պակասեալ է յաչացն, սոյնպէս եւ մեղաւոր կոյր կոչի, վասն զի խիղճ մտացն բարձեալ է ի նմանէ:

Հինգերորդ. զի զկոյրն եթէ ոք հարկանէ, ոչ գիտէ, թէ ով է<sup>4</sup>, սոյնպէս եւ մեղաւորն ոչ գիտէ, թէ յո՞ր չարիս ձգէ զնա սատանայ:

Վեցերորդ. զի ոմն կիսամասնեայ է կոյր, սոյնպէս եւ ոմն սակաւ մեղս ունի:

Եւթներորդ. զի ոմն բորոտ է աչքն, թէպէտ լոյս ունի, սոյնպէս եւ ոմնք հերձուածողք են եւ ոչ ունին զկատարեալ հաւատն եւ կոչին մեղաւորք:

<sup>1</sup> A B չեք ձեր ի ձեզ հաստատեալ են

<sup>2</sup> B չեք

<sup>3</sup> C ծննդեան

<sup>4</sup> C ոչ գիտէ ո՞վ էր

**Ուժերորդ.** զի կոյրն գիտէ ստուգիւ, որ ոչ տեսանէ, սոյնպէս եւ մեղաւորք ոմանք գիտեն, զի մեղաւք լցեալ են, վասն այն գղջանան:

**Իններորդ.** զի անհնար է թագչել կուրութեան, սոյնպէս անհնար է մեղացն ոչ բերել պատիժ, թէ՛ աստ, թէ՛ անդ:

**Տասներորդ.** զի դժուարաւ բժշկի կոյրն, սոյնպէս եւ դժուարաւ ելանէ ոք ի մեղաց, մի՞թէ՛ իմաստուն բժիշկ լինիցի, վասն այն ասէ Տէր. «Թէ ասէք, թէ տեսանեմք, եւ մեղքն ձեր ի ձեզ հաստատեալ են» (Յովի. թ 41):

**Աստ կատարումն է Հինգերորդ գլխոյ երկրորդ հատորին:**

## Գլուխ Ժ

Ամէն, ամէն ասեմ ձեզ

Այս տասներորդ գլուխն է ըստ<sup>1</sup> կարգի եւ վեցերորդ ըստ հատորի<sup>2</sup>

**Եւ աստ դնի տասներորդ պատճառն, թէ Աստուած է Քրիստոս:** Այսպէս, որ ոք էութեամբ եւ մեծութեամբ նոյն է ընդ Աստուածոյ, Աստուած է, իսկ Քրիստոս նոյնն է էութեամբ եւ մեծութեամբ ընդ Աստուածոյ, ապա ուրեմն Քրիստոս Աստուած է<sup>3</sup>:

Եւ զէութիւն եւ զմեծութիւն Քրիստոսի ցուցանէ աստ չորս կերպիւ. առաջինն է Հաւատացելոցն ներգործութեամբ, որպէս<sup>4</sup> ասէ. «Ես եմ դուռն եւ մուծանող» (հմնտ. Յովի. ժ 9): Երկրորդ. որ հովուէ զամենայն բարի եւ քաջ հովուութեամբ, որպէս ասէ. «Ես եմ հովիւն քաջ» (Յովի. ժ 11): Երրորդ. Հայրական Հաղորդութեամբ, որպէս ասէ. «Դայր իմ, որ ես ինձ [զնոսա], մեծ է քան զամենայն» (Յովի. ժ 29), այս է զԱստուածութիւն: Զորբորդ. իւր վկայութեամբն, որպէս ասէ. «Ես եւ Դայր իմ մի ենք» (Յովի. ժ 30):

Արդ, նախ եցոյց աւետարանիչս զվարդապետութիւն Քրիստոսի լուսաւորիչ<sup>5</sup> գոլ: Աստ ցուցանէ զսոյն վարդապետութիւնս կենդանացուցիչ գոլ, զի յայս գլուխս բանիւ ցուցանէ, զի կենդանացուցիչ է, եւ յետ այսորիկ զգալի նշանաւ ցուցանէ: Եւ այս գլխոյս նախ ճառէ զհեզութիւն Քրիստոսի, առ ի յուսուցանել<sup>6</sup>, եւ Երկրորդ՝ ճառէ զշարութիւն Հրէից՝ առ ի զնա հալածել: Անդ եղեն յայնժամ նաւակատիքն յերուսաղէմ, այլ աստ ցուցանէ զաւրութիւն<sup>7</sup> բարի հովուին եւ գողին, եւ զանազանութիւն նոցա երեք եղանակաւ<sup>8</sup>.

**Առաջին.** Վասն զանազան մտանելոյ ի հաւտն, որպէս ասէ. «Ամէն, ամէն<sup>9</sup> ասեմ ձեզ, որ ոչ մտանէ ընդ դուռն ի գալիք [ոչխարացն], այլ

<sup>1</sup> B չիք

<sup>2</sup> B չիք

<sup>3</sup> B չիք իսկ Քրիստոս նոյնն է ... ապա ուրեմն Քրիստոս Աստուած է

<sup>4</sup> C որ

<sup>5</sup> B լուսաւոր ինչ

<sup>6</sup> B ցուցանել

<sup>7</sup> C զորպիսութիւն

<sup>8</sup> C յեղանակաւ

<sup>9</sup> A չիք

ընդ այլ ելանէ, նա գող է եւ աւազակ, իսկ որ մտանէ ընդ դուռն<sup>1</sup>, հովիւ է ոչ-խարաց» (Յովի. Ժ 1-2):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ<sup>2</sup>.** Արդ, ի կարճոյ սոյնպէս բացայայտի. դուռն զաւրէնսն ասէ, հովիւ՝ զքահանայսն եւ զփարիսեցիսն, ոչխար՝ զժողովուրդն, գալիք՝ զխորանն էին, որպէս պատուական է ներքին տաճարն քան զգաւիթն, սոյնպէս մերս եկեղեցի, քան զիսորանն իսրայէլացւոց:

Երկրորդ. Զի ամենայն ոք նախ զգաւիթն կոխէ եւ ապա ի ներքս<sup>3</sup> մտանէ, սոյնպէս առաջին է այն, քան զմերս, այլ ընդ այլ ելանէ: Քահանայքն եւ փարիսեցիքն ոչ պահեցին զաւրէնս. գող զփարիսեցիսն ասէ, զի կեղծաւորք էին, աւազակ՝ քահանայքն, որ յայտնապէս յանցանէին<sup>4</sup>, իսկ հովիւ, որ մտանէ ընդ դուռն, Քրիստոս վասն իւր ասէ:

Եւ այլ կերպիւ մեկնեն վարդապետք. աստ<sup>5</sup> անուամբ դրանն իմանի ուղիղ մուտ հովուութեան, իսկ այլ ընդ այլ ելանելն նշանակէ զթիւր մուտն ի հովուութիւն հոգւոց, եւ Քրիստոս ասէ յառաջիկայդ. «Ես եմ դուռն» (Յովի. Ժ 7), զայն ցուցանէ, թէ որ լինի հովիւ ի վերայ ոչխարաց, պարտ է, զի ի Քրիստոսէ ունիցի իշխանութիւն<sup>6</sup> եւ զծմարտութիւն Քրիստոսի եւ զմէրն առ Քրիստոս: Եւ զի հովիւ է Քրիստոս, զայս ճշմարտութիւնս եւ զիշխանութիւնս եւ զմէրս Քրիստոս<sup>7</sup> գոյացութեամբ ունի, եւ այլք զերիս զայս ունին հաղորդութեամբն ի Քրիստոս, եւ նոքա բարի հովիւք են, իսկ որք հաւատովն հերձուածող են եւ չունին ճշմարիտ իշխանութիւն եւ ոչ սիրեն զՔրիստոս, այլ զինքեանս, նոքա չար հովիւք են եւ չար որոմն սերմանեն եւ գողանան զմիտս եւ զհաւատոս եւ սպանանեն զհոգիս ժողովրդեանն: Եւ թէ ոք ճշմարիտ հաւատացեալ է ի Քրիստոս եւ զծմարիտ իշխանութիւն ընդ Քրիստոսի ոչ ունիցի, վարձկան ասի: Եւ այնպիսին գող ասի, զի ոչ խնդրէ զփրկութիւն ոչխարաց եւ ոչ զփառս Քրիստոսի, այլ զփառս անձին իւրոյ: Այլ առաւել գող եւ աւազակ ասի, որ առանց հաւատոյ եւ ուղիղ իշխանութեան զանձն հովիւ կացուցանէ բռնութեամբ, սա յատկաբար կորուսանէ զոչխարս եւ սպանանէ, իսկ վարձկանն չար աւրինակաւ միայն սպանանէ:

<sup>1</sup> A B չեք ընդ դուռն

<sup>2</sup> B չեք

<sup>3</sup> C ի ներս

<sup>4</sup> B անցանէին

<sup>5</sup> C ըստ

<sup>6</sup> A զիշխանութիւն

<sup>7</sup> B չեք

### Վասն դրան

Դարձեալ՝ դուռն տասն յատկութիւն ունի. նախ՝ զի նովաւ մտանեմք եւ ելանեմք: Երկրորդ՝ զի առաջին է ի մուտն, երրորդ՝ զի ամենեցուն է մուտ, չորրորդ՝ բանայ եւ փակէ, հինգերորդ՝ զմտեալսն ի ներքս պահէ, վեցերորդ՝ ուղղութիւն է, եւթներորդ՝ նեղութիւն է, ութներորդ՝ խոնարհութիւն է, իններորդ՝ բարձրութիւն է, տասներորդ՝ նախ<sup>1</sup> մի ոտամք կոխեմք:

Եւ վեց են դրունք. նախ՝ Քրիստոս, որպէս ասէ. «Ես եմ դուռն»: Երկրորդ. աւրէնքն, որպէս ցուցաւ: Երրորդ. Եկեղեցի Սուրբ՝ «Սիրէ Տէր զգրունս Սիոնի» (Սաղմ. ԶԶ 2), ասէ: Չորրորդ. ծնունդն եւ մահն դուռն է հանդերձեալ կենացն: Հինգերորդ. դրունք են զգայութիւնքն<sup>2</sup> հոգւոյն: Վեցերորդ. դրունք են հաւատն եւ մկրտութիւն ի գործս բարեաց:

Գաւիթ չորս կերպիւ է. նախ՝ մարմնոյ շրջապատք: Երկրորդ. հին ժողովարանն գաւիթ է նորս Եկեղեցւոյ: Երրորդ. գաւիթ է ստորինս Եկեղեցի վերնոյն երուսաղէմի, ըստ այնմ. «Ի գաւիթս Աստուծոյ մերոյ ծաղկեսցին» (Սաղմ. ՂԱ 14): Չորրորդ. գաւիթ է կայանք հոգւոցն վերնոց փառաց երկնաւոր արքայութեան: Յայս<sup>3</sup> միտս ի կողմ հարաւոյ շինեմք զգաւիթս Եկեղեցւոյ, զի հոգիքն են ի լոյս հանգստեան եւ ի ջերմ սէրն Աստուծոյ:

Չորս են ոչխարք բանաւոր հաւտից. նախ՝ երկնաւոր բանակք: Երկրորդ. մարդկային ազգ ըստ մոլորեալ ոչխարին: Երրորդ. հրէիցն ժողովք յորդան ետ, որպէս խաշին ասէ: Չորրորդ. քրիստոնէից ժողովք, ըստ այնմ. «Արածեա՛ զոչխարս Ին» (Յովի. ԻԱ 16):

Եւ դռնապանք չորք են. նախ՝ դռնապան կոչի Հոգին Սուրբ: Երկրորդ՝ Մովսէս եւ այլ մարգարէքն: Երրորդ՝ հայրապետք եւ վարդապետք Եկեղեցւոյ: Չորրորդ՝ միտք բանական, ըստ այնմ. «Դռնապանին պատուէր տացէ, զի արթուն լինիցի<sup>4</sup>» (Սարկ. ԺԳ 34):

**Այս ըստ մասին տեսութիւն:**

Երկրորդ. Զանազանութիւն է բարի հովուին ի գործոյն՝ ուղիղ առաջնորդելով ոչխարացն եւ յարաւտս ածելով<sup>5</sup>, որպէս ասէ.

Բան. «Նմա դոնապանն բանայ» (Յովի. Ժ 3):

<sup>1</sup> С չիք բարձրութիւն է, տասներորդ՝ նախ

<sup>2</sup> В զգայութիւնս

<sup>3</sup> А В С ի յայս

<sup>4</sup> А չիք, С լիցի

<sup>5</sup> В յարածելով

**ՄԵԼԻՆՈՒԹԻՒՆ.** Նախ՝ մարմնապէս աւրինակն, զի դռնապանն հովուին բանայ եւ ընդդէմ գողիցն փակէ, եւ ոչխարքն զձայն հովուին ճանաչեն ի սովորութենէ, որպէս ասէ Եսայի. «Ծանեաւ եզն զստացիչ<sup>1</sup> իւր» (Եսայի Ա 3), եւ հովիւն ճանաչէ զնոսա յանուանէ եւ առաջի նոցա երթայ, եւ այլն յայտնի է: Դարձեալ՝ հոգեպէս ի Քրիստոս տեսանի, որպէս ասէ մեկնիչդ<sup>cxxvii</sup>. դռնապանն Մովսէս է, զի ի ձեռն նորա տուան աւրէնք, եւ բանալն է, որ յաղագս Քրիստոսի մարգարէացաւ. «Մարգարէ յարուսցէ ձեզ Տէր Աստուած» (տես Բ Օր. ԺԸ 15), եւ թէ՝ «Տեսանիցէք զկեանս ձեր կախեալ»: Այլ եւ զաւրհնութին Յակովբայ վասն Յուդայի. «Մի՛ պակասեսցէ իշխան ի [Յուդայ եւ պետ յերանաց նորայ]<sup>2</sup>, մինչեւ եկեսցէ նա, որոյ իւրն է հանդերձեալքն]» (Ծննդ. Խօթ 10): Դարձեալ՝ դռնապանն զՅոհաննէս ասէ, եւ բանալ վկայութեամբն, որ յաղագս Քրիստոսի:

Բան. «Եւ ոչխարքն ձայնի նորա լսեն» (Յովի. Ժ 3):

**ՄԵԼԻՆՈՒԹԻՒՆ.** Որպէս առաքեալքն եւ հաւատացեալքն ի ժողովարանին:

Բան. «Կոչէ յանուանէ» (Յովի. Ժ 3):

**ՄԵԼԻՆՈՒԹԻՒՆ.** Նախ՝ զերկնաւորսն, որպէս ասէ Դաւիթ. «Զամենեսեան զնոսա<sup>3</sup> յանուանէ կոչէ» (Սաղմ. ՇԽՎ 4): Երկրորդ. զթիւ ընտրելոցն<sup>4</sup> անուանք ձեր գրեալ են յերկինս: Երրորդ. կոչեաց յանուանէ զառաքեալսն: Չորրորդ. զամենայն հաւատացեալս յաւագանէն կոչէ:

Բան. «Չամենեսեան<sup>5</sup> հանէ» (տես Յովի. Ժ 3):

**ՄԵԼԻՆՈՒԹԻՒՆ.** Նախ՝ ի հաւատս, երկրորդ՝ յարդարութիւնս, երրորդ՝ յԱւետարանս, չորրորդ՝ յերկինս. «Ուր եսն եմ, անդ եւ պաշտամեայն [իմ Եղիցի]» (Յովի. ԺԲ 26):

Բան. «Առաջի նոցա երթայ» (Յովի. Ժ 4):

**ՄԵԼԻՆՈՒԹԻՒՆ.** Նախ՝ քարոզութեամբ, երկրորդ՝ վարուք, երրորդ՝ չարչարանաւք, չորրորդ՝ յարութեամբն եւ փառաւք: Սոյնպէս պարտ է առնել բարի հովուաց եւ առաջնորդաց Եկեղեցւոյ՝ հանել զժողովուրդն ի խաւարէ մեղաց եւ անգիտութեանց եւ լինել առաջի նոցա բարի աւրինակաւ առաքինութեան<sup>6</sup> վարուց:

<sup>1</sup> Բ ստացիչ, Ը զտածիչ

<sup>2</sup> Ը իշխան ի քէն

<sup>3</sup> Ա Բ չեք

<sup>4</sup> Ը ընտրելոց

<sup>5</sup> Ա Բ զամենայն

<sup>6</sup> Ա Բ չեք

**ԵՐԵՊՈՐԴ.** Զանազանութիւն ցուցանէ բարի հովուին եւ չար, որպէս ասէ.

Բան. «Եւ ոչխարքն զիետ նորա երթան, զի ճանաչեն զձայն նորա<sup>1</sup>» (Յովի. Ժ 4):

**ՄԵԼԿՆՈՒԹԻՒՆ.** Սոյնպէս ժողովուրդն զհետ բարի հովուին ընթանայ, որպէս զհետ Քրիստոսի բանիցն եւ վարուցն եւ այլ առաջինութեանց<sup>2</sup>: Իսկ չար հովուացն, որպէս ասէ.

Բան. «Զաւտարի զիետ ոչ երթցեմ<sup>3</sup>, այլ փախսցեն ի նմանէ<sup>4</sup>, զի ոչ ճանաչեն զձայն աւտարաց<sup>5</sup>» (Յովի. Ժ 5):

**ՄԵԼԿՆՈՒԹԻՒՆ.** Ի չորս բաժանեաց զհովիւմ՝ զերկուսն բարի հովիւ. նախ՝ զՔրիստոս, երկրորդ՝ զծմարիտ եւ զուղղափառ առաջնորդս Եկեղեցւոյ: Եւ զերկուսն՝ չար. նախ՝ զփարիսեցիւն, երկրորդ՝ զհերձուածողս եւ զծոյլս, եւ աւտար զնոսա<sup>6</sup> քարոզութեամբն եւ վարուքն: Եւ աւտար է նախ՝ որ յԵկեղեցւոյ որոշեալ լինի: Երկրորդ՝ զի յայտնի մոլորեալ ի հերձուածու: Երրորդ՝ ի կարգէն թիւրեալ: Յայնպիսի աւտարացն պարտ է ամենեւին ի բաց փախչել:

Եւ գիտելի է, զի աստ անուամբ ոչխարաց նախ իմանին ամենեքեան, որք ունին շնորհս յԱստուծոյ, այսինքն՝ հաւատ եւ սէր յայնմ ժամանակի: Երկրորդ. իմանին միայն նախասահմանեալքն յԱստուծոյ ի փրկութիւն, յորում ժամանակս եւ իցեն: Եւ սոքա երկոքին ոչխարք ոչ լսեն զձայնն եւ ոչ հետեւին աւտարին, այլ միայն ճշմարիտ հովուին, զի նոքա, որք ունին զշնորհս, մնալով ի շնորհս, ոչ մեկնին ի ճշմարիտ հովուէն, այլ թէ թողուն զշնորհս, կարեն թողուլ եւ զծմարիտ հովիւն: Եւ դարձեալ՝ նախասահմանեալն<sup>7</sup> յԱստուծոյ ի փրկութիւն ոչ որոշին ի ճշմարիտ հովուէն, զի ընդ ժամանակի նախասահմանեցաւ հնազանդիլ Քրիստոսի: Եւ ասացեալ բանքս Քրիստոսի ծածուկ էր, զի առակաւ էր, որպէս ասէ.

Բան. «Զայս առակ ասաց նոցա<sup>8</sup> Յիսուս» (Յովի. Ժ 6):

**ՄԵԼԿՆՈՒԹԻՒՆ.** Այսինքն՝ փարիսեցւոցն: Առակ ասի, յորժամբան ինչ վասն այլոյ բանի դնի, կամ յորժամ իր ինչ նշանակէ եւ

<sup>1</sup> A B չեք զի ճանաչեն զձայն նորա

<sup>2</sup> A B եւ այլոց

<sup>3</sup> A B երթան

<sup>4</sup> A B չեք ի նմանէ

<sup>5</sup> A B չեք զձայն աւտարաց, C զձայն նորա

<sup>6</sup> C չեք

<sup>7</sup> C նախասահմանեալքն

<sup>8</sup> A B չեք

նովաւ այլ ինչ իր ցուցանի: Եւ թէ վասն է՞ր առակաւ խաւսէր Քրիստոս, ասացաւ Հատորն համարն: Եւ զի նոքա ոչ ծանեան զառակն Քրիստոսի, վասն այն պարտ էր մեկնել զնա, որպէս զկնի դնէ.

Բան. «Ասէ ցնոսա Յիսուս» (Յովի. Ժ 7):

ՄԵԼՈՆԻՔԻՆ. Եւ զի առակն Քրիստոսի երկու մասն ունէր՝ մին, զոր ընդ այլ մտանէ, զող է եւ աւազակ, եւ զայս նախ մեկնէ: Երկրորդ. զի որ մտանէ ընդ դուռն, Հովիւ է ճշմարիտ: Եւ զայս երկրորդ մեկնէ: Անդ. «Ես եմ հովիւն քաջ», իսկ աստ վասն առաջնոյն ասէ.

Բան. «Ամէն, ամէն<sup>1</sup> ասեմ ձեզ<sup>2</sup>, [զի] ես եմ դուռն ոչխարաց» (Յովի. Ժ 7):

ՄԵԼՈՆԻՔԻՆ. Քրիստոս դուռն ասի<sup>3</sup>, զի նովաւ մարդիկ առ Աստուած մտանեն, եւ զի առաջին մասն առակին ոչ միայն գդուռն յիշէ, այլ եւ զգալն, վասն այն զկնի մեկնէ զգալն.

Բան. «Ամենեքեան, որ յառաջ քան զիս եկին, գողք էին եւ աւազակք» (Յովի. Ժ 8):

ՄԵԼՈՆԻՔԻՆ. Զայս ոչ է պարտ իմանալ վասն մարդարէիցն, որ յԱստուծոյ առաքեցան, այլ նախ վասն նոցա, որք եկին առանց Հաւատոցն Քրիստոսի, զի ի սկզբանէ աշխարհի, որք փրկեցան, Հաւատովն Քրիստոսի փրկեցան, թէպէտ Հաւատ նոցա ծածուկ էր եւ մերս յայտնի, այլ որք ոչ ունէին գհաւատն Քրիստոսի, ոչ մտին ընդ դուռնս այս, զողք էին եւ աւազակք:

Երկրորդ. իմանի բանս վասն Յուղայի եւ Թեւղայի գալիլեացւոյ, որ ի Գիրս Գործոցն է գրեալ (հմնտ. Գործք Ե 34-42), որք յանձնէ եկին եւ ոչ առաքմամբն Աստուծոյ, որպէս ասէ Յովսէպոս. «Թեւղաս կախարդ ոմն էր, որ խաբեաց զբազումս ի ժողովրդենէն իսրայէլի եւ տարաւ զնոսա մինչեւ Յորդանան գետ՝ խոստանալով նոցա բաժանել զջուրն եւ անցուցանել անթաց ոտիւք, որպէս եւ հարքն նոցա յառաջագոյն անցին», իսկ Յուղաս գալիլեացի ի ժամանակս ծննդեանն Քրիստոսի արգելոյր զժողովուրդն Հրէից ի հնազանդութենէ կայսեր եւ ի հարկ<sup>4</sup> տալոյ, եւ բազումք հետեւցան նմա, որք ոչ էին ճշմարիտ ոչխարք: Նոքա էին աւտարք եւ գողք, զի Թեւղասն կախարդութեամք պատրէր զժողովուրդն, եւ Յուղայ գալիլեացի յայտնի իբրեւ զաւազակ, ասէր զինքն թագաւոր իսրայէլի:

<sup>1</sup> A չիք

<sup>2</sup> A B չիք ասեմ ձեզ

<sup>3</sup> B դուռն է ոչխարաց

<sup>4</sup> B հարկս

Երրորդ. Իմանի բանս վասն սաղուկեցւոցն, որ աւտարացան ի բանից եւ ի կամաց եւ ի գործոց մարդարէից, եւ ոչ լուան նոցա ոչխարքն, որպէս լուսաւորեալն ի կուրութենէ, որպէս յայտ է ի մեկնիչդ<sup>cxxxviii</sup>:

### Եւ դուռն կոչի

Բան. «Ես եմ դուռն» (Յովհ. Ժ 9):

Մեկնութիւն. Որպէս այլուր ճանապարհ կոչի<sup>1</sup> եւ որթ անուանեաց զինքն եւ այժմ դուռն կոչէ: Եւ այս է առաջին, որ ցուցանէ, թէ Աստուած է Քրիստոս էութեամբ եւ մեծութեամբ հաւասար է Աստուծոյ, որպէս ասէ՝ ես եմ դուռն եւ մուծանող հաւատացելոց:

Եւ ի վերայ այնմ բանի լինի վեց իմն հարց.

Առաջին. Վասն է՞ր Քրիստոս դուռն կոչի:

Նախ՝ զի Քրիստոսիւ մտանեն մարդիկ առ Աստուած, ըստ այնմ. «Ոչ ոք գայ առ Հայր, եթէ ոչ ինեւ» (հնմտ. Յովհ. Ժ 9): Երկրորդ. զի ոմանց փակէ եւ ոմանց բանայ, այսինքն՝ անհաւատից եւ հաւատացելոց, որպէս յիմար կուսից եւ իմաստնոց: Երրորդ. զի պահէ զորս ի տանն են<sup>2</sup>, եւ Քրիստոս է պահապան քրիստոնէից: Չորրորդ. զի մուտ եւ ելն նովաւ լինի, որպէս ասէ. «Ընդ իս մտցէ եւ ելց» (հնմտ. Յովհ. Ժ 9), եւ այլ յատկութիւն ասացաւ ի վերոյ:

Երկրորդ հարց. Վասն է՞ր ասէ յաւդիւն՝ դուռն:

Պատասխան. Նախ՝ զի յատկասցի ի հասարակ դրանց, Երկրորդ՝ զի կենաց է դուռն, Երրորդ՝ զի երկնից<sup>3</sup>, չորրորդ՝ առ Հայր մտից:

Երրորդ հարց. Վասն է՞ր յոմանս եկեղեցիս միափեղկ է դուռն եւ յոմանս՝ երկփեղկ:

Պատասխան. Երկոքինն խորհրդաւորք են. Նախ՝ զի ետես Յոհաննէս ի տեսլեան զդուռն վերին քաղաքին յողջոց մարդարտաց, իսկ Սողոմոն արար զդուռն տաճարին երկբացիկս: Դարձեալ՝ միափեղկեանն զմիութիւն Բանին մարդացելոյ<sup>4</sup> նշանակէ, իսկ երկփեղկն զհոգի եւ զմարմինն Քրիստոսի:

Եւ սուտ են, որ ասեն զԱստուածութիւն եւ զմարդկութիւն նշանակէ. Նախ՝ զի Աստուածութիւն եւ մարդկութիւն ոչ բաժանեցան, այլ հոգի եւ մարմինն: Երկրորդ. զի Սողոմոն արար զդրունս երկբացիկս ի գիոց եւ պատեաց ոսկով, որ ցուցանէր

<sup>1</sup> Կ կոչեաց

<sup>2</sup> Կ տանէն

<sup>3</sup> Բ յերկնից

<sup>4</sup> Կ մարդացելոյն

փայտն զանապական մարմին եւ հոգին, եւ ոսկին՝ զԱստուածութիւն միաւորեալ: Երրորդ. զի ողջ մարդարիտն նշանակէ զԲանն միացեալ ի մարմնի: Չորրորդ. ասէ աստ. «Ես եմ դուռն»՝ միաւոր, եւ ոչ՝ դրունք՝ բազմաւոր: Եւ զի մուտ դրանն, որ է բացուածք ընդ որ մտանեն, որ ասի դուռն, եւ այս միաւոր է եւ ոչ բազմաւոր, զի ընդ տախտակն թէ մի, թէ<sup>1</sup> բազում ոչ ոք մտանէ, այլ բացուածն, որ մի է, որով զինքն նշանակեաց Տէրն:

Չորրորդ հարց. Զի՞նչ է. «Ընդ իս մտցէ եւ ելցէ» (Յովի. Ժ 9):

Պատասխան. Նախ՝ հաւատովն մտցէ եւ առ իս ելցէ: Երկրորդ. մտցէ առ իս եւ ելցէ յերկինս՝ առ Հայր: Երրորդ. մտցէ յեկեղեցիս եւ ելցէ յերկինս: Չորրորդ. մտցէ ի չնորհս եւ ելցէ ի փառս, այսինքն՝ Քրիստոսիւ մտանեմք ի հաւատս եւ յաշխարհիս թշուառութենէն ելանեմք ի փառս:

Հինգերորդ հարց. Զի՞նչ է ճարակն:

Պատասխան. Չորս ինչ. Նախ՝ դալար արաւտն յաւիտենական կենդանութեան: Երկրորդ. աւետարանական վարդապետութիւն Քրիստոսի: Երրորդ. մարմին եւ արիւնն փրկական: Չորրորդ. ի սեղան Հաւրն բազմեցուցանել եւ անցեալ պաշտել, այսինքն՝ յիմաստութեանց եւ ի տեսութեանց փառաց Աստուածութեանս կերակրեցից զնա:

Վեցերորդ հարց. Զի՞նչ է ճարակք բազմաւորապէս կոչէ:

Պատասխան. Վասն բազում երանութեանց մարդկային մասանց, զի հինգ պատճառաւ ասէ. «Մտցէ եւ ելցէ», նախ՝ զի այս է սահման դրան, զի ել եւ մուտ ընդ նոյն արասցեն: Երկրորդ. զի ոչխարքն արտաքս ճարակին յանդաստանս եւ ձմեռն ի տան: Երրորդ. ցուցանէ խորհրդաբար, զի ընտրեալքն ճարակեն մտածութեամբ մտանելով առ Աստուած եւ արտաքս հային՝ խոկալով ի գործս նորա: Չորրորդ. ցուցանէ, թէ միտք մեր կերակրին հայելով ի հոգեւոր եւ իմացական<sup>2</sup> իրս իբրեւ ի ներս եւ հայելով ի զգալի իրս իբրեւ արտաքս: Հինգերորդ. ցուցանէ, թէ երանեալքն կերակրին ի միտս՝ հայելով զԱստուածութիւն Քրիստոսի եւ արտաքս տեսանելով զգալապէս զմիաւորեալ մարդկութիւն Քրիստոսի<sup>3</sup>: Եւ վասն այսմ պատճառի ճարակք ասէ, որ է արաւտք բազմաւորական:

<sup>1</sup> Ըի՞ք թէ մի, թէ

<sup>2</sup> Ա Յիմացական

<sup>3</sup> Ըի՞ք եւ արտաքս ... նարդկութիւն Քրիստոսի

**Յորժամ եցոյց զինքն դուռն գոլ, զկնի ցուցանէ զմտեալսն,  
որք ոչ Քրիստոսիւ՝ գողս գոլ, որք ոչ եկին ի փրկութիւն ժողովր-  
դեան<sup>1</sup>, այլ ի մահ:**

Բան. «Գող ոչ օայ<sup>2</sup>, եթէ ոչ զի գողասի եւ սպանցէ եւ կորուսցէ<sup>3</sup>» (Յովի. Ժ 10):

**Մեկնութիւն. Երկու բացասութիւն ի մի ստորասութեան տե-  
ղի դնէ<sup>4</sup>, զի այս է ըստ մարմնոյ գողի խորհուրդն եւ կամքն եւ  
գործ<sup>5</sup>, որ ասաց:**

Եւ հոգեպէս գող հինգ կերպիւ ասեն. նախ՝ փարիսեցիքն եւ  
սաղուկեցիքն, եւ թուղաս եւ թեւղաս, որ յառաջ քան զՔրիստոս  
եկին եւ ի չարիս առաջնորդէին: Երկրորդ. յետ Քրիստոսի հեր-  
ձուածողք եւ չար առաջնորդք եկեղեցւոյ, որ մոլորութիւն են ժո-  
ղովրդեանն եւ կորուստ: Երրորդ. գող ասի նոյն ինքն սատանայ,  
որ խաբելով մտանէ ի մարդ: Չորրորդ. գող ասի մեղք, որ կորու-  
սիչ է հոգւոց: Եւ չորքս այսոքիկ չար են յայտնապէս, իսկ հին-  
գերորդ՝ գող ասի մահն, ըստ այնմ. «Ո՛չ գիտէք յորում աւուր  
գողն ձեր գայ» (հմնտ. Դուկ. ԺԲ 39): Եւ սա միջակ է գող, զի բա-  
րեացն բարի հանդիպի եւ չարեացն՝ չար:

Բան. «Ես եկի, զի զկեանս ունիցին, եւ առաւել եւս ունիցին» (Յովի. Ժ  
10):

**Մեկնութիւն. Գալն ի յերկնից զմարդեղութիւն ասէ, եւ ընդ-  
դէմ չար գողոցն զկեանս տայ, զի ունիցին, եւ առաւել եւս ունի-  
ցին:**

**Վեց է իմացումն. Նախ՝ շնորհքն, որ աստ ունիմք, կեանք է  
հոգւոյ, որպէս ասէ Պաւղոս ի Հռոմայեցիսն. «Շնորհքն Աստուծոյ  
կեանք են յաւիտենական» (տես Յօն. Զ 23), վասն որոյ ասէ. զկեանս  
ունիցին, եւ առաւել եւս ընդունիցին<sup>6</sup> զկատարումն շնորհաց յարքա-  
յութեան երկնից: Երկրորդ. առաւել կեանս զխորհուրդ նոր աւրի-  
նացս ասէ, զի թէպէտ պատարագ հնոյն շնորհս տայր, ոչ յին-  
քեանց, այլ միայն վասն բարութեան ընդունողին, նոյնպէս եւ  
թլփատութիւն ի սկզբնական մեղացն մաքրէր, այլ ոչ այնպէս,  
որպէս մկրտութիւն եւ Պատարագն Սուրբ: Երրորդ. առաւել  
կեանս զյաւիտենականն ասէ ի վերայ ժամանակեայս, որպէս ասէ  
մեկնիչդ<sup>xxix</sup>: Չորրորդ. որպէս մեղքն մահ է եւ առաւել տանջանք,**

<sup>1</sup> Ծ ժողովրդեանն

<sup>2</sup> Ծ չիք գող ոչ օայ

<sup>3</sup> Ծ չիք եւ կորուսցէ

<sup>4</sup> Ծ չիք ստորասութեան տեղի

<sup>5</sup> Ծ խորհուրդ եւ կամք եւ գործք

<sup>6</sup> Յ ունիցին

նոյնպէս արդարութիւն կեանք է, եւ առաւել կեանք՝ ազատն ի տանջանաց: Հինգերորդ. աստ յուսով եւ զարութեամբ կենդանացաք եւ առաւել անդ արդեամբ եւ ներգործութեամբ: Վեցերորդ. աստ հոգւով միայն կենդանացոյց եւ անդ հոգւով եւ մարմնով յարուցանէ, զայն առեալ կեանք ասէ:

Յորժամ եցոյց Քրիստոս զառաջին մասն առակին, զի ընդ այլ մտեալքն գողք են եւ աւազակ, զկնի ցուցանէ զմիւս մասն առակին, որ է բարի հովիւ մտեալ ընդ դուռն:

### Թէ Հովիւ է Քրիստոս

Բան. «Ես եմ հովիւն քաջ» (Յովհ. Ժ 11):

Մելանութիւն. Այսինքն՝ բարի: Եւ այս է երկրորդ բանն, որ ցուցանէ, թէ Աստուած է Քրիստոս եւ էութեամբ եւ մեծութեամբ հաւասար է Աստուծոյ, որ զամենայն հովուէ բարի եւ քաջ հովուութեամբ, որպէս ասէ. «Ես եմ հովիւն քաջ»: Եւ մի երկմտեսցիս վասն նուաստ անուանս, զի ոչ միայն հովիւ ասէ, այլեւ բարի, որ Աստուծոյ է յատուկ, ըստ այնմ. «Զիք ոք բարի, բայց մի Աստուած» (Ղուկ. Ժ 19): Նաեւ զշայր մարգարէքն հովիւ կոչէին, ըստ այնմ. «Ո՞ հովուեսդ իսրայէլի, նայեաց եւ փրկեաց<sup>1</sup> զմեզ» (Մել Սաղմ. Ղթ 2-4): «Դարձեալ՝ որպէս Քրիստոս զինքն լոյս անուանէ վասն խաւարելոյն, եւ կեանք՝ վասն մահացելոյն, եւ բժիշկ հիւանդաց<sup>2</sup>, սոյնպէս եւ հովիւ կոչեաց վասն ցրուելոյն, փոխարկաբար շփոթմամբ միաւորելն է<sup>3</sup>, որպէս ալիւր եւ ջուր, եւ փոխարշապէս<sup>4</sup> անշփոթ միաւորութիւն, որպէս հուր եւ երկաթ եւ որպէս լոյս ընդ աւդ:

### Վասն յատկութեան հովուին

Եւ վեց յատկութիւն հովուին, որ աստ ասաց. նախ՝ զի ընդ դուռն մտանէ ի փարախն: Երկրորդ. զի դռնապանն բանայ: Երրորդ. զի ոչխարքն ձայնի նորա լսեն: Զորբորդ. զիւրսն կոչէ յանուանէ: Հինգերորդ. զի հանէ զիւրսն ամենայն: Վեցերորդ. զի առաջի նոցա երթայ:

Դարձեալ ասեմք տասն յատկութիւն հովուին, որպէս ասէ Դաւիթ. «Տէր հովուեսցէ զիս» (Մաղմ. ԻԲ 2), նախ. «Ի վայրի դա-

<sup>1</sup> Ը փրկեա

<sup>2</sup> Ը վասն հիւանդաց

<sup>3</sup> Յ միաւորեալն է

<sup>4</sup> Ը փոխարշաբար

լարւոյ բնակեցոյց» (Սաղմ. ԻԲ 2), այսինքն՝ ի վայրենացեալ գիտութիւնս Սուրբ Գրոց: Երկրորդ. «Առ ջուրս հանգստեան սնոյց» (Սաղմ. ԻԲ 2), այսինքն՝ մկրտութեամբ սուրբ աւազանին: Երրորդ. առաջի հաւտին ընթանայ, ըստ այնմ. «Երթան եւ պատրաստեն ծեզ տեղի» (Յովի. ԺԴ 2): Զորրորդ. ընդ թշնամիսն պատերազմի, որ է սատանայ եւ մահ եւ մեղք: Հինգերորդ. զմոլորեալսն դարձուցանէ ըստ առակի անառակին (Իմնտ. Ղուկ. ԺԵ 11-32): Վեցերորդ. զկորուսեալն գտանէ, որպէս զդրամն (Իմնտ. Ղուկ. ԺԵ 8-9): Եւթներորդ. զբեկեալն պատէ, որպէս զկիսամահ վիրաւորեալն (Իմնտ. Ղուկ. Ժ 29-37): Ութերորդ. զզաւրավարսն պահէ, որպէս՝ «Ընդ<sup>1</sup> ծեզ եմ զամենայն աւուրս» (տես Մատթ. ԻԸ 20): Իններորդ. ի վերջ աւուրն ի փարախն ժողովէ<sup>2</sup>, այսինքն՝ ի կատարածի երկնաւոր<sup>3</sup> փարախն: Տասներորդ. հովուական բանիւք մխիթարէ, այսինքն՝ «Ի սեղան Հաւրն բազմեցուցանէ» (Իմնտ. Մատթ. ԻԸ 34), – ասէ:

Իսկ յաւդիւն ասելն՝ հովիւն, եւ ոչ սոսկ՝ հովիւ, չորս ինչ նշանակէ. նախ՝ ցուցումն է եզական ի հասարակ հովուութեանց: Երկրորդ. նշանակ է ծանաւթութեան յառաջին ժամանակաց: Երրորդ. որոշող է յատկութեան եւ բարի հովուին եւ չարեաց: Զորրորդ. ընդդէմ է եւ ներհակ հովուին մահացու, ըստ որում. «Մահ հովուեացէ զնոսա» (Սաղմ. ԽԸ 15), եւ աստ կենաց է հովիւ:

Բան. «Յովիւ քաջ դնէ զանձն ի վերայ ոչխարաց<sup>4</sup>» (Յովի. Ժ 11):

Մեկնութիւն. Զորս է իմացումն. նախ՝ զի ազնիւն վասն անարգին ոչ մեռանի, այլ անարգն վասն ազնուին մեռանիցի, վասն որոյ հովիւն վասն ոչխարին ոչ մեռանի, թէպէտ աշխատի եւ պահէ, այլ ոչխարն վասն մարդոյն մեռանիցի, իսկ հոգի մարդոյն ազնիւ է քան զմարմինն, վասն որոյ հովիւն հոգւոց վայելչարար դնէ զմարմնոյ կենդանութիւն վասն փրկութեան հոգւոց հաւտին: Երկրորդ. ընդդէմ է չար հովուացն, որ սպանանէ զոչխարս, այլ նա կեցուցանէ: Երրորդ. զի վասն փրկութեան մարդկան մեռանի, այլ ինքն ոչ է պարտական մահու, զի ոչ արար մեղս: Զորրորդ. զի կամաւ եւ գիտութեամբ մեռանի, ասէ զայս յառաջագոյն:

Ասաց զզանազանութիւն բարի եւ չար հովուաց, այժմ ասէ զանազանութիւն վարձկանաց:

Բան. «Իսկ վարձկանն, որ ոչ է հովիւ» (Յովի. Ժ 12):

<sup>1</sup> С չեք

<sup>2</sup> А В չեք

<sup>3</sup> С յերկնաւոր

<sup>4</sup> А В չեք

ՄԵԼՆՈՒԹԻՒՆ. Նախ՝ գիտելի է, զի վարձկանն կրկին է, այսինքն՝ բարի եւ չար: Բարի վարձկան է, որ վասն հոգւոյ եւ յաւիտենից կենացն աշխատի, որպէս մարդարէքն եւ արդարքն սուրբ: Եւ չար վարձկան է, որ վասն մարմնոյ եւ ժամանակիս լինի, ոչ մարմնոյ վարձկանաց ասեմ, այլ հոգւոյ, որպէս եպիսկոպոսք, վարդապետք, որ վասն մարմնոյ շահի եւ փառաց աշխարհի լինին, նոյնպէս եւ կրկին են ծառայական երկիւղն. բարի է, որ վասն հոգւոյն տանջանաց երկնչի, եւ չար, որ վասն մարմնոյն:

«Իսկ վարձկանն, որ ոչ է հովիւ», զմարդարէսն ասէ, եւ զարդարսն, որ փոխարէն աշխատութեան զերանութիւն ընկալան:

### Զանազանութիւն մարդարէից եւ Տեառն<sup>1</sup>

Եւ գիտելի է, զի մարդարէքն եւ արդարք չորս իրաւք հաւասարեն ընդ Տեառն եւ չորս իրաւք պակաս:

Եւ հաւասար են. նախ՝ զի ի կոոցն դարձուցանէին զժողովուրդն: Երկրորդ. ի մեղաց հանէին: Երրորդ. զհաւատն Քրիստոսի ուսուցանէին: Չորրորդ. վասն սիրոյն Աստուծոյ մեռանէին եւ սրբութիւն գործէին:

Զայսոսիկ եւ Տէրն արար, իսկ պակաս եւ տկարք եղեն. նախ՝ զի վասն ոչխարացն ոչ կարացին մեռանել: Երկրորդ. զանէծս Ադամայ ոչ բարձին: Երրորդ. ի մահու հոգւոյ եւ մարմնոյ<sup>2</sup> ոչ ազատեցին: Չորրորդ. զփառս եւ զերանութիւն մարդկան ոչ տուին: Եւ զայսոսիկ հովիւն քաջ կատարեաց:

Դարձեալ՝ վարձկան վասն վարձուն ասի, եւ այն է, որ վերակցու լինի վասն աւգտի ժամանակաւորացս, որ վարձ կոչի, որպէս ասէ յառակս<sup>3</sup> անառակին. «Ի տան հաւը իմոյ վարձկանք բազում են» (տես Ղուկ. Ժ 17), իսկ երկնաւոր փառքն ոչ ասի վարձ, այլ ի հասարակ սովորութենէ վասն աշխատանաց հատուցմանն վարձ ասի, ըստ այնմ. «Վարձք ձեր բազում են յերկինս» (Սատթ. Ե 12), իսկ երկնային փառքն յատկաբար ժառանգութիւն կոչի, որ հատուցանի որդւոց, իսկ վարձկանն, որ հայի յերկրաւոր իրս, ոչ է ճշմարիտ հովիւ, որպէս ասէ.

Բան. «Որոյ ոչ իւր են ոչխարքն» (Յովի. Ժ 12):

ՄԵԼՆՈՒԹԻՒՆ. Աստ անուամբ հովուին իմանի տէր ոչխարացն, որ պահէ զոչխարն իբրեւ զիւր, եւ վարձկանն վասն վարձուն

<sup>1</sup> С չեք

<sup>2</sup> В ի մահոյ մարմնոյ եւ հոգւոյ

<sup>3</sup> В առակս

պահէ եւ ոչ վասն ոչխարաց, վասն որոյ ի նեղութեան ժամանակի հեռանայ յոչխարաց, որպէս ասէ.

### Թէ գայլ է սատանայ

Բան. «Իբրեւ տեսանէ զգայլն, զի գայ» (Յովի. Ժ 12):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Գայլ կոչի սատանայ վասն տասն պատճառի: Դարձեալ գիտելի է, զի երեքն են գայլք եկեղեցւոյ. նախ՝ սատանայ, երկրորդ՝ հերձուածողք, երրորդ՝ չար իշխանք, որ բռնութեամբ ածեն ի մեղս: Եւ յորժամ ի զանազան չարիս կործանին ոչխարքն, գիտացեն, եթէ<sup>1</sup> եկեալ է սատանայ, զոր պարտ է աղաւթիւք ընդդէմ կալ սատանայի եւ ուղիղ վարդապետութեամբ հերձուածողաց ընդդիմանալ, եւ բռնաւոր իշխանին բանադրական բանիւ կամ մխիթարելով զոչխարսն: Այլ այսու զանազանի վարձկանն ի գայլոցն, զի թէպէտ վարձկանն ոչ խնդրէ զփրկութիւն բանական ոչխարաց, սակայն ոչ հալածէ զնոսա, այլ պահէ վասն ընչից շահելոյ ի նմանէ, եւ յորժամ ոչ շահի, փախչի, որպէս ասէ.

Բան. «Թողու զոչխարսն եւ փախչի» (Յովի. Ժ 12):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ<sup>2</sup>.** Կրկին է փախչելն, կամ տեղւոջէ ի տեղ ընթանայ, կամ զի ոչ ինչ աւգնէ ոչխարացն:

Բան. «Եւ գայլն յափշտակէ զնոսա<sup>3</sup> եւ ցրուէ» (Յովի. Ժ 12):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Յայնժամ յափշտակին, յորժամ ի մեղս ածին, եւ յայնժամ ցրուին, յորժամ ի հաւատոցն բաժանին, ապա ասէ զպատճառ փախչելոյն:

Բան. «Քանզի վարձկան է եւ չէ փոյթ նմա<sup>4</sup> վասն ոչխարացն<sup>5</sup>» (Յովի. Ժ 13):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Այսինքն<sup>6</sup> միայն հպի ի ժամանակաւոր իրս եւ ոչ սիրէ վասն ինքեան, այլ վասն շահին, եւ յորժամ շահն պակասի, թողուն եւ փախչին:

<sup>1</sup> Ա թէ

<sup>2</sup> Բ չիք Մեկնութիւն. աստ անուանը հովուին իմանի ... Բան. «Թողու զոչխարսն եւ փախչի»

Մեկնութիւն

<sup>3</sup> Ա Բ չիք

<sup>4</sup> Ա Բ չիք

<sup>5</sup> Ա չիք

<sup>6</sup> Բ չիք

### Վասն ճանաչմանն<sup>1</sup>

**Յորժամ ասաց վասն բարի հովուաց եւ չարաց եւ վարձկանաց, այժմ ասէ զանազանութիւն ոչխարաց:**

**Եւ զայս կրկին նշանաւ. նախ՝ վասն անդրադարձութեան ճանաչման հովուին եւ ոչխարաց, որպէս աստ ասէ. «ճանաչեմ զիմսն եւ ճանաչիմ յիմոցն» (Յովի. Ժ 14): Երկրորդ. վասն սիրոյ հովուին, որ ունի առ ոչխարս, անդ. «Եւ զանձն ին դնեմ ի վերայ ոչխարաց» (Յովի. Ժ 14):**

**Եւ զառաջինն ասէ.**

**Բան. «Ես եմ հովիւն քաջ. եւ ճանաչեմ զիմսն եւ ճանաչիմ յիմոցն<sup>2</sup>» (Յովի. Ժ 14):**

**ՄԵԼԱՆՈՒՐԻ ԿՐԿԻՆ. Որպէս մարմնաւոր հովիւն ճանաչէ զոչխարս իւր դրոշմամբ եւ կերպիւն եւ խնամելովն, նոյնպէս եւ ոչխարն զհովիւն ճանաչէ, միշտ ի նա հայելով եւ ձայնիւն եւ տածելովն, այսպէս եւ<sup>3</sup> ճշմարիտ հովիւն Քրիստոս ճանաչէ զհաւատացեալս հաւատով եւ մկրտութեամբն եւ բարի գործով եւ Աւետարանին շնորհաւք:**

**Դարձեալ՝ ճանաչումն Աստուծոյ կրկին է. նախ՝ տեսական ճանաչումն, եւ այսու Աստուած զամենայն գիտէ զբարի եւ զչար, որպէս ասէ Պաւղոս. «Ամենայն ինչ մերկապարանոց կայ առաջի [աչաց] նորա» (Եբր. Դ 13): Երկրորդ. ասի ճանաչումն Աստուծոյ հաճոյական սիրով եւ հոգացողութեամբ, եւ Քրիստոս այս կրկին կերպիւս<sup>4</sup> ճանաչէ զհաւատացեալս իւր: Դարձեալ՝ ճանաչէ Աստուած զեղեալսն եւ զլինելոցն եւ զծածուկս սրտին: Եւ սոյնպէս ճանաչէ Քրիստոս, զոր ոչ ճանաչէ մարդ: Դարձեալ՝ որպէս մեկնիչդ ասէ<sup>ՀՀՀՀ</sup> անդ ճանաչէ Քրիստոս, զի հատուցանէ բազում վարձս եւ յաճախ պարզեւս եւ փառս անկողոպտելիս:**

**Եւ զայս չորս մտաւք իմասցիս. նախ՝ առ որդիսն եւ վարձկանսն<sup>5</sup> եւ ծառայսն է<sup>6</sup>: Երկրորդ. ի հոգի, ի մարմին եւ ի միտս: Երրորդ. վասն հաւատոյ եւ յուսոյ եւ սիրոյ: Չորրորդ՝ հարիւրաւոր, վաթսունաւոր եւ երեսնաւոր:**

**Բան. «Որպէս գիտէ զիս Յայր, գիտեմ եւ ես զՅայր<sup>7</sup>» (Յովի. Ժ 15):**

<sup>1</sup> Ճանաչման

<sup>2</sup> A B չեք

<sup>3</sup> C չեք

<sup>4</sup> B կերպիւ կրկին

<sup>5</sup> C վարձկանս

<sup>6</sup> A B ծառայականսն է

<sup>7</sup> A B չեք, C եւ ես գիտեմ զՅայր

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Նախ՝ զի<sup>1</sup> գիտութեամբն Հաւը հաւասար է, ապա եւ էութեամբն ընդ Հաւը հաւասար Աստուած է, եւ զայս մի իմանալ բաժանմամբ, այլ միութեամբ, զի որպէս էութեամբ միացեալ է Բանն Աստուած ի մարդկութիւն իւր եւ մի է բնութեամբ եւ մի է անձամբ, սոյնպէս մի է եւ գիտութեամբ, մի է եւ կամաւք, եւ որպէս մարդկայինս ընդ Բանն Աստուած միաւորեալ մի է անբաժանելի, սոյնպէս եղական գիտութիւն ընդ անեղ գիտութեան է միացեալ եւ ստեղծական կամք ընդ անստեղծ կամացն է միաւորեալ, զի յետ անձառ միաւորութեան Բանին եւ մարմնոյն, այլ ոչ ունի երկուութիւն եւ ոչ բաժանումն, եւ որ բաժանէ ի Քրիստոս իր ինչ ի բնաւորական գոյացութեան, բաժանեալ լիցի ինքն եւ որոշեալ ի շնորհաց միութենէն Քրիստոսի եւ ի փառաց նորին զրկեսցի:

Յետ այսաւրիկ դնէ զերկրորդ նշանն, որ է սէր ճշմարիտ հովուին առ հաւատացեալս:

Բան. «Եւ զանձն ին դնեն ի վերայ ոչխարօց» (Յովի. Ժ 15):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Այն է դնել զանձն, զի Քրիստոս կամաւորապէս մեռաւ վասն մարդկան հաւատացելոց եւ հոգին բաժանեցաւ ի մարմնոյն, այլ հոգին եւ մարմինն միշտ միաւորեալ մնացին առ Աստուածութիւն, զի անձն զհոգին ասէ, որ մատոյց Հաւը Աստուծոյ, որպէս ասէր. «Հա՛յր, ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ<sup>2</sup>» (Ղուկ. Ի 46): Եւ զի կարծէին հրէայքն, թէ միայն նոքա էին<sup>3</sup> ոչխարք եւ միայն վասն նոցա մեռանելոց էր, վասն որոյ զայս կարծիքս ի բաց բառնայ:

Բան. «Նա եւ այլ եւս ոչխարք են իմ» (Յովի. Ժ 16):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ<sup>4</sup>.** Վասն հեթանոսաց ասէ, որ չէին ի գաւթէ եւ ի ժողովարանէ հրէիցն:

Իսկ ասելն՝ նա, երեք ինչ ցուցանէ. Նախ՝ բառ է նախդիր, երկրորդ՝ գերանուն է, երրորդ՝ բացասական է, որպէս ասել, թէ՝ ոչ, որպէս եւ Դաւիթ ասէ. «Նա՝ երանի ժողովրդեանն, որոյ Տէր Աստուած աւգնական է նմա<sup>5</sup>» (Մես Սաղմ. ճ Խ 4 15), զի բացասելով զկարծիս հրէիցն ի բաց բառնայ եւ դերանուն զդէմս հեթանոսաց ասէ, եւ նախդիրն սկիզբն է բանի:

Եւ աստ լինի չորս հարց.

<sup>1</sup> B չեք

<sup>2</sup> A B չեք

<sup>3</sup> B նոքա միայն էին

<sup>4</sup> A չեք

<sup>5</sup> A B չեք

Առաջին. Թէ՛ որպէ՞ս էին հեթանոսք ոչխարք նմա, զի դեռ չէին հաւատացեալք:

Պատասխան. Նախ՝ զի թէպէտ հնազանդութեամբ չէին նմա, այլ նախասահմանութեամբ նմա էին: Երկրորդ. թէպէտ<sup>1</sup> հաւատով չէին նմա, այլ արարչութեամբ նմա էին:

Երկրորդ հարց. Վասն է՞ր ասէ. «Եւ զայն եւս] պարտ է ինձ ածել այսր» (Յովի. Ժ 16):

Պատասխան. Զի քան զհրէայս նոքա պարտականք էին վասն չորից. նախ՝ վասն բազմութեան ազգացն: Երկրորդ. զի դիւրահաւանք էին: Երրորդ. զի զճշմարտութիւն ստացան եւ ոչ՝ զաւրինակն: Չորրորդ. զի կատարեալք եւ հաստատուն մնացին ի հաւատոս: Եւ հրէայք<sup>2</sup> ընդդէմ այսմ սակաւք էին, եւ անհաւանք, եւ անկատարք, եւ փոփոխեալք ի հաւատոցն:

Երրորդ հարց. Վասն է՞ր ասէ. «Զայնի ինում լուիցեն» (Յովի. Ժ 16):

Պատասխան. Զի թէպէտ առաքեալքն զհեթանոսս ի հաւատս ածին, այլ գործակցութեամբն Քրիստոսի էր, որպէս գոէ Մարկոս ի վերջքն. «Հսկ նոքա<sup>3</sup> ելեալ քարոզէին<sup>4</sup> ընդ ամենայն տեղիս Տեառն գործակցութեամբ» (Մարկ. Ժ 20):

Եւ ձայնի, ասէ, լսեն վասն հնգից. նախ՝ զի միջնորդաւք խաւսեցաւ: Երկրորդ. զի հեռաւորք էին: Երրորդ. զի բազումք էին: Չորրորդ. զի յայտնի քարոզեցաւ նոցա: Հինգերորդ. զի դիւրաւ լսեցին, վասն այն ձայն ասէ:

Չորրորդ հարց. Վասն է՞ր ասէ. «Եղիցին մի՛ հաւտ եւ մի՛ հովիւ» (Յովի. Ժ 16):

Պատասխան. Նախ՝ զի սատանայ ցրուեաց զազգս մարդկան ի պէսպէս կուռս եւ ի զանազան մեղս, Քրիստոս ընդդէմ նմին ժողովեաց ի մի հաւտս եւ ի մի հովիւ: Երկրորդ. զի ինքն Քրիստոս ի բաժանմանէ ի միութիւն եկն, վասն այն եւ զբաժանեալ ազգս ի միութիւն ածէ, այսինքն մի՛ հաւատովն, եւ մի՛ մկրտութեամբն, եւ մի՛ հաղորդութեամբն, եւ մի՛ յուսովն, եւ սիրովն եւ այլն:

Միութիւն է ի մէջ քրիստոնէից, եւ թէ ոք ասէ<sup>5</sup> պարտ է մի՛ գլուխ լինել, որպէս պապն Հռովմայ<sup>6</sup>, ասեմք, թէ՝ սուտ են ամենեւիմք վասն չորս պատճառի. նախ՝ զի Քրիստոս առաքելոցն հա-

<sup>1</sup> Ը թէպէտ եւ

<sup>2</sup> Ա Բ չեք եւ հաստատուն ... իրեայքն

<sup>3</sup> Ը նոցա

<sup>4</sup> Ը քարոզեցին

<sup>5</sup> Ը ասիցէ

<sup>6</sup> Ա Բ Հռովմայ

ւասարապատիւ ետ զերկոտասասան աթոռս դատողութեան: Երկրորդ. զի յորժամ համբարձաւ, եղ զձեռս ի վերայ առաքելոցն եւ արար զնոսա կաթուղիկոսունս: Երրորդ. զի իւրաքանչիւր յազգս առաքեալքն ձեռնադրեցին եպիսկոպոսունս: Չորրորդ. զի ի ժողովն նիկիոյ<sup>1</sup> ի չորիս բաժանեցին զչորս կողմս աշխարհիս ըստ չորից աւետարանչացն, եւ զերուսաղէմ, եւ զկիպոս, եւ զՀայքինքնագլուխ սահմանեցին:

Եւ թէ ոք ասիցէ, եթէ ընդէ՞ր Հայոց ազգիս երեք կաթողիկոսէ, զի անպատշաճ է միոյ մարմնոյ երկու կամ երեք գլուխ լինել, կամ միոյ հարսին երեք փեսայ: Ասեմք առ այս, եթէ ճշմարիտ մի՛ է կաթողիկոս եւ մի՛ գլուխ ազգիս Հայոց, որ ի սրբոյն Գրիգորէ յաջորդեցին մինչեւ ցայժմ, իսկ աղուանիցն ոչ է Հայոց, այլ աղուանից կաթողիկոս եւ ի Լուսաւորչէն մերմէ կարգեալ զսուրբն Գրիգորիս թոռն իւր: Իսկ Աղթամարայն<sup>2</sup> թերակատար եւ սուտ անուն, ո՛չ է կաթողիկոս, այլ արքեպիսկոպոս, եւ այժմ ապստամբեալ ո՛չ աւրինաւք, այլ բռնութեամբ կոչեն զինքեանս կաթողիկոս, միայն անուամբ եւ ոչ իրաւք ստացեալ սուտ անուն, որպէս եղջերուաքաղն եւ յարաէզն:

**Այսքան առ այս:**

**Յետ այսորիկ զկատարեալ սէրն ցուցանէ, որ ունի Քրիստոս առ ոչխարս:**

Բան. «Վասն այսորիկ սիրէ զիս Յայր իմՅ, զի ես դնեմ զանձն իմ<sup>4</sup>»

(Յովհ. Ժ 17):

Մեկնութիւն<sup>5</sup>. Չորս է իմացումն. նախ՝ վասն որոյ սիրէ զիս Հայր, այսինքն՝ վասն սիրոյն Հաւը առ իս զիս առաքեաց ի փրկութիւն ոչխարաց: Երկրորդ. վասն այն սիրէ զիս Հայր<sup>6</sup>, այսինքն՝ վասն հնազանդութեանս իմոյ առ Հայր, զի կատարեցից զկամս Հաւը: Երրորդ. վասն սրբութեան հոգւոյս եւ չարչարանաց մարմնոյս սիրէ զիս Հայր: Չորրորդ. վասն հեթանոսաց ժողովելոյս ի մի հաւտ եւ ի մի<sup>7</sup> հովիւ սիրէ զիս Հայր իմ:

<sup>1</sup> Ը Նիկիայ

<sup>2</sup> Ա Բ Ը Կիսթամարայն

<sup>3</sup> Ա Բ Հեք

<sup>4</sup> Ա Հեք զանձն իմ, Բ Հեք դնեմ զանձն իմ

<sup>5</sup> Ա Բ Հեք

<sup>6</sup> Ը Հեք

<sup>7</sup> Ը Հեք

### Թէ զինչ է մահն Քրիստոսի

Բան. «Զի ես դնեմ [զանձն իմ]<sup>1</sup>, զի միւսանգամ առից զնա<sup>2</sup>» (Յովի. Ժ 17):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Զորս ինչ ցուցանէ. նախ՝ զաստուածային զաւրութիւն իւր, ըստ այնմ. «Ես սպանանեմ եւ ես կեցուցանեմ» (ԲՕՐ. ԼԲ 39): Երկրորդ. զկամաւոր չարչարանս եւ զյարութիւն: Երրորդ. զտկարութիւն հրէիցն յանդիմանէ: Զորրորդ. զանազանէ զմահն իւր յամենայն մարդկանէ:

Հարց. Որպէ՞ս որոշի մահն Քրիստոսի յամենայն մարդկանէ:

Պատասխան. Չորիւք. նախ՝ որպէս ասէ. «Դնեմ զանձն իմ», այսինքն<sup>3</sup> զհոգիս դնեմ արտաքոյ մարմնոյս եւ առնում յարութեամբն: Իսկ մարդիկ բանիւ ոչ զհոգիս հանել կարեն եւ ոչ արգելու ի յելանելն եւ ոչ միւսանդամ առնուլ, որպէս յայտ է ի մեկնիչզ<sup>չչչչ</sup>: Եւ չգիտելն զայն ասէ, զի ոմանք ի խաւար ասեն եւ ոմանք ի լոյս, ոմանք ի տանջանս եւ ոմանք ի հանգստի: Եւ դարձեալ՝ թէպէտ գիտեմք առ հասարակ, այլ յատկապէս ոչ գիտեմք զտեղիս հոգւոց:

Եւ չորս ինչ ճարտարապէս է Քրիստոս ի յարութիւն մեր. նախ՝ զապականեալ մարմինն անապական կազմէ: Երկրորդ. զզանազանեալ մարմինս անխառն<sup>4</sup> յարուցանէ: Երրորդ. զհոգի եւ զմարմին ի մին կապէ: Չորրորդ. ամենայն ուստեք եւ զամենայն մարդիկ յարուցանէ<sup>5</sup>: Եւ զայս առնէ ի քթթել ական եւ ի սուլ վայրկենի:

Երկրորդ. դարձեալ զանազանի մահն Քրիստոսի երիւք. նախ՝ ի ձայն բարձր աղաղակեաց (հնմտ. Մատթ. ԻԵ 50): Երկրորդ. զգլուխն խոնարհեցոյց (Յովի. ԻԹ 30): Երրորդ. զաշսն եխից, զի ամենայն մարդոյ ի մեռանելն ձայնն նուազի, եւ գլուխն պնդի, եւ աչքն ի բաց մնայ:

Երրորդ. այլ է մահն Քրիստոսի սոյնպէս, զի մահն Աղամայ եղեւ ի ներգործելոյն, եւ մահ ամենայն մարդկան պարտաւորութիւն է եւ ակամայ, իսկ մահն Քրիստոսի կամաւ է, ո՛չ ի գործոյ եւ ո՛չ պարտք, զի ոչ ունի մեղս:

<sup>1</sup> А С զնա

<sup>2</sup> А В չեք առից զնա

<sup>3</sup> В չեք

<sup>4</sup> А В անխառն է

<sup>5</sup> В չեք Եղորորդ. զիոգի եւ զմարմին ... եւ զամենայն մարդիկ յարուցանէ

**Զորբորդ.** յայտ է ի սքանչելեացն, որ նախքան զխաչն, յորժամ ոչ կարէին ձեռն արկանել ի նա եւ ի խաչին սքանչելիքն ամենայն:

Հարց. Վասն է՞ր կամաւ էր մահն Քրիստոսի:

Պատասխան. Վասն չորից, որպէս<sup>1</sup> նախ ասացաւ յերկրորդ հատորն<sup>2</sup>, համարն. նախ՝ զի ցուցցէ զինքն Տէր մահու եւ կենաց, եւ ոչ ի ներքոյ մահու: Երկրորդ. զտկարութիւն հրէիցն, զի իւր կամաւն չարչարեցաւ: Երրորդ. զի կամաւն զկատարեալ սէրն ցուցանէ: **Զորբորդ.** զմեծամեծ հատուցմունքն, որով փրկեցան մարդիկ:

Բան. «Միւսանգամ առից զնա<sup>3</sup>» (Յովի. Ժ 17):

Մեկնութիւն. Ցուցանէ, զի Քրիստոս իւր յատուկ զաւրութեամբն յարեաւ ի մեռելոց, զի ինքն զինքն յարոյց, զի ինքն էր յարուցիչ եւ ինքն էր յարուցեալ, որպէս ի խաչին, նոյն ինքն մեռեալ էր եւ կենդանի, որպէս ինքն է Պատարագ եւ ինքն ընդունի, եւ զի Քրիստոս կամաւորապէս չարչարեցաւ, վասն այն ասէ:

Բան. «Ոչ ոք հանէ զնա յինէն, այլ ես դնեմ զնա անձամբ իմով<sup>4</sup>» (Յովի. Ժ 18):

Մեկնութիւն. Ոչ ոք հանէ, այսինքն՝ բռնութեամբ բաժանէ զՀոգիս իմ յինէն, եւ զայս ոչ է պարտ իմանալ, թէ Քրիստոս ոչ մեռաւ ի չարչարանացն, զի թէ կամեցեալ էր, միով բանիւ կարէր զչարչարողսն կորուսանել, այլ զայն պարտ է իմանալ, թէ Քրիստոս կամաւ եկն ի չարչարանս եւ ի չարչարանացն մեռաւ:

Եւ զի ցուցցէ, թէ Քրիստոս<sup>5</sup> ոչ ի հարկէ եւ ոչ յանկարութենէ ետ զՀոգին, ասէ.

Բան. «Իշխանութիւն ունիմ<sup>6</sup> դնել զնա եւ իշխանութիւն ունիմ<sup>7</sup> [միւսանգամ] առնուլ զնա<sup>8</sup>» (Յովի. Ժ 18):

Մեկնութիւն. Եւ այսու ոչ է պարտ իմանալ, թէ Հոգին Քրիստոսի բաժանեալ եղեւ ի Բանէն, զի Բանն Աստուած զմի անդամ առեալն զՀոգի եւ զմարմինն եւ միաւորեաց ընդ իւրում Աստուածութեան, այլ ոչ բաժանեցաւ ի նմանէ, վասն այն մարմինն Քրիստոսի եւ Հոգին<sup>9</sup> բաժանեցան ի միմեանց ի մահն, այլ Աս-

<sup>1</sup> B չեք

<sup>2</sup> C հատորին

<sup>3</sup> A B չեք

<sup>4</sup> A B չեք զնա անձամբ իմով

<sup>5</sup> B եւ զի Քրիստոս ցուցցէ

<sup>6</sup> B չեք

<sup>7</sup> A B չեք

<sup>8</sup> A B չեք

<sup>9</sup> B մարմինն եւ հոգին Քրիստոսի Քրիստոսի ...

ՄՈՒԱԺՈՒԹԻՒՆ անբաժանելի մնաց ի մարմնոյն, որ ի գերեզմանի եւ ի Հոգւոյն, որ ի դժոխս, այլ զայն պարտ է իմանալ, զի հոգին եւ մարմինն բաժանեցան ի մահն եւ միաւորեցան յարութեամբն:

Եւ զայն ոչ արար անկարգ եւ անսահման, վասն որոյ ասէ.

Բան. «Զայս պատուեր առի ի Յաւրէ իմնէ<sup>1</sup>» (Յովի. Ժ 18):

ՄԵԼԱՆՈՒՐԻՆ. Այսինքն<sup>2</sup> Հաւը հրամանաւ զանձն իմ դնեմ ի մահ, եւ ոչ պատահմամբ, եւ ոչ ի հարկէ, այլ սահմանաւ եւ կամաւ Հաւը, որպէս յայտ է ի մեկնիչդ<sup>շահ</sup><sup>3</sup>: Ոմանք տարակուսին առ այս, եթէ՝ ոչ ոք եհան զնա յինէն. նախ՝ զի հրէայքն խաչեցին եւ սպանին:

Դարձեալ՝ զի թէ կամաւ ետ զանձն, ահա ինքեան սպանող<sup>4</sup> է եւ անձնամատն:

Պատասխան<sup>5</sup>. Այս է առաջնոյն լուծումն, զի հրէայքն ոչ կարէին խաչել, որպէս յամենայն տեղիս, ուր ոչ կամէր, ելանէր ի ձեռաց նոցա, այլ Քրիստոս ազատ կամաւքն իւր<sup>6</sup> խաչեցաւ եւ եհան զոգին: Իսկ երկրորդին, զի թէպէտ կամաւ ետ զանձն՝ ոչ որպէս այլք, որ վասն նախանձու, կամ այլ իրաց լկելով ի դիւէ անձնամատն լինին, այլ Քրիստոս վասն փրկութեան մարդկան ետ զանձն:

Դարձեալ ասեն վարդապետք, թէ Քրիստոս ոչ եսպան զինքն եւ ոչ եղեւ մերձաւոր պատճառ մահուան իւրոյ, թէպէտ իւր մահուանն պատճառ էր տիրական եւ իշխանական կամաւքն, ըստ չորս յեղանակի. նախ՝ զի իշխանութեամբ ընկալաւ զհարկ մեռանելոյն: Երկրորդ. զի զանձն ի մահ մատոյց: Երրորդ. զի իշխանութեամբ թոյլ ետ, որ զնա չարչարէին<sup>7</sup>: Չորրորդ. թոյլ ետ, զի<sup>8</sup> մահն հետեւէր չարչարանացն, ապա յայտ է լուծումն բանին:

Յորժամ ճառեաց զվարդապետութիւն Քրիստոսի, այժմ ճառէ, թէ զի<sup>9</sup>նչ գործ եղեւ ի վարդապետութենէն, այսինքն՝ զի բարի մարդիկքն հաստատեցան ի հաւատուն եւ չարք խստացան<sup>10</sup> ի չարն, զի արհամարհեցին զվարդապետութիւն, որպէս ասէ.

Բան. «Դարձեալ հերձուածք լինէր<sup>10</sup>» (Յովի. Ժ 19):

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> B չեք

<sup>3</sup> B սպաննող

<sup>4</sup> A B չեք

<sup>5</sup> A B չեք

<sup>6</sup> B չարչարեցին

<sup>7</sup> B չեք

<sup>8</sup> C չարքն

<sup>9</sup> B խոստացան

<sup>10</sup> C լինէին

**ՄԵԼԿՆՈՒԹԻՒՆ.** Մի անգամ եղեւ հերձուած, որպէս ասաց յեւթներորդ գլուխն, վասն այն դարձեալ ասէ, եւ տե՛ս ի մեկնիչդ, որ չորս ինչ ցուցանէ<sup>cxxxiii</sup>. նախ՝ անհաստատ միտք, երկրորդ՝ անհանճար խորհուրդ, երրորդ՝ աղմկեալ հոգիք, չորրորդ՝ բաժանեալ կամք, զի նախ ի խորհուրդն լինի հերձուած<sup>1</sup> եւ ապա ի կամքն, եւ ապա ի բանն, եւ ապա ի գործն:

Բան. «Դեւ գոյ ի նմա եւ մոլեգնի» (Յովի. Ժ 20):

**ՄԵԼԿՆՈՒԹԻՒՆ<sup>2</sup>.** Ի չորս տեղիք ասացին զայս. առաջին, որ ասացին. «Մի՞թէ զիւրովին երթիցէ»: եւ այլքն յայտնի է, որ սամարացի ասացին (Յովի. Ը 48): Սոքա խստացեալք էին ի չարն, զի զսքանչելիսն<sup>3</sup> Քրիստոսի համարէին զաւրութեամբն սատանայի լինել<sup>4</sup>. նոյնպէս<sup>5</sup> զբանն Քրիստոսի, զոր ոչ իմանային՝ իբր զդեւահարի համարէին, վասն այն ասէին. «Զի՞ բնաւ լսէք նմա»:

Իսկ բարիքն ասէին.

Բան. «Սոյնափսի բանքս ոչ դիւահարի են» (Յովի. Ժ 21):

**ՄԵԼԿՆՈՒԹԻՒՆ.** Թէպէտ դիւահարք նուրբ բանիւ եւ զարմանալիս խաւսին, այլ նախ սուտ խառնեն ի ներս: Երկրորդ. ի չար կամին ածել: Իսկ բանն Քրիստոսի նախ՝ զի ճշմարիտ էր, երկրորդ՝ կեանք էր յաւիտենական:

Ապա զկնի վասն սքանչելեացն ասեն.

Բան. «Մի՞թէ դեւ կարէ զասս կուրի բանալ<sup>6</sup>» (Յովի. Ժ 21):

**ՄԵԼԿՆՈՒԹԻՒՆ.** Իբրու ասել, թէ՛ ոչ կարէ, զի թէպէտ դեւքն կարեն զարմանալի ինչ երեւեցուցանել, որպէս գորտքն, որ եղեն ի կախարդացն փարաւոնի, որ զկերպն եւ զձեւն փոխեն, եւ ոչ զէութիւն (հնմտ. Ելք Է 7), եւ ոչ առնեն զսքանչելիս<sup>7</sup>, որ ի վեր է քան զբնութիւն, որպէս լուսաւորութիւն կուրին, զի դեւք զաչս շրտուցանեն, այլ ոչ լուսաւորեն<sup>8</sup>:

Հարց. Զի՞նչ է, որ ասէ մեկնիչն<sup>cxxxiv</sup>, եթէ<sup>9</sup> ոչ է պարտ վասն անձին ջատագով լինել, այլ պարտ է Աստուծոյ վրէժինդրել, որպէս արար Քրիստոս, զի յորժամ դիւահար ասէին, ոչ բարկանայր, եւ յորժամ զՀայր կամ զՀոգին հայհոյէին, բարկացաւ եւ անթողլի ասաց:

<sup>1</sup> A B հերձուածն

<sup>2</sup> A չիք

<sup>3</sup> B սքանչելիսն

<sup>4</sup> C հանարէին լինել զարութեամբն սատանայի

<sup>5</sup> A B նախ

<sup>6</sup> A չիք

<sup>7</sup> C սքանչելիս

<sup>8</sup> C չիք զի դեւք ... ոչ լուսաւորեն

<sup>9</sup> B թէ

Պատասխան. Զի անձին վրէժխնդիր լինել, նախ՝ զդատաստանն Աստուծոյ զրկէ, զի՝ «Իմ է վրէժխնդրութիւն» (Յուն. ԺԲ 19, տես նաև Սաղմ. ՂԳ 1), – ասէ Տէր: Երկրորդ՝ զի<sup>1</sup> անձնասիրութիւն է, երրորդ՝ անհամբերութիւն, չորրորդ՝ վարձուցն պակասութիւն, հինգերորդ՝ չար հատուցումն: Իսկ ներել վասն նախատանաց անձին, սոցա ամենայնին ընդդէմ է, զբարիս ժողովէ:

Իսկ ի հայհոյելն զԱստուծած վրէժ ոչ խնդրել. նախ՝ անհաւատութիւն եւ թերութիւն է, երկրորդ՝ թուլութիւն, երրորդ՝ ատելութիւն, չորրորդ՝ անհանճարութիւն:

Իսկ յորժամ ջատագով լինիս Աստուծոյ, բարի վրէժխնդրութիւն է. նախ՝ բարեպաշտութիւն է, երկրորդ՝ աստուծամիրութիւն, երրորդ՝ արիութիւն, չորրորդ՝ իմաստութիւն, բարութիւն եւ այլն:

Եւ գիտելի է աստ, զի Քրիստոս գեղեցկապէս կարգաւ յաւրինեաց զբանս իւր. նախ՝ յիշելով զդուռն, երկրորդ՝ զբարի հովիւն, որ դնէ զհոգին ի վերայ ոչխարացն, երրորդ՝ զվարձկանն, չորրորդ՝ զգայլն, հինգերորդ՝ դարձեալ զբարի հովիւն եւ ի մի հաւատ զոչխարսն ժողովել:

Եւ այսու այլաբանապէս Քրիստոս եցոյց զընթացս եկեղեցւոյ, որում դուռն եղեւ Քրիստոս. նախ՝ զի կրկին ասաց զդուռն, որ դուռն եկեղեցւոյս կրկին կերպիւ բացեալ եղեւ. առաջին՝ մարդեղութեամբն Քրիստոսի եւ Հոգւոյն Սրբոյ հեղմամբն: Երկրորդ. բացաւ, յորժամ հրէայքն ի բաց մերժեցան, որք ի բաց բառնային զծմարիտ միտք ի Գրոց մարգարէիցն:

Երկրորդ. եղեւ ընթացք եկեղեցւոյ ի մարտիրոսքն, յորժամ առաքեալքն եւ մարտիրոսքն որպէս բարի հովիւք ի վերայ հաւտին Քրիստոսի եղին զանձինս իւրեանց:

Երրորդ. ընթացք կամ զիջումն եղեւ յագահ եւ ի սիմոնական հովիւսն, որք զվարձս իւրեանց ընդունէին ի ժողովրդոց ընչիւք մարմնական:

Չորրորդ. ընթացք եկեղեցւոյ եղեւ ի յափշտակող գայլս, որք պէսպէս հերձուածաւք ցրուեցին զոչխարս հաւտին Քրիստոսի, որպէս Արիոս, Նեստոր, չար ժողովն Քաղկեդոնի եւ այլք:

Իսկ հինգերորդ. ի կատարածի լինելոց է կատարեալ դարձումն հեթանոսաց եւ հրէից, որպէս ասէ Պաւղոս, յորժամ լրումն հեթանոսաց մտցէ, ապա ամենայն հսրայէլ կեցցէ, եւ յայնժամ լինի<sup>2</sup> մեծ հերձուած ի ժամանակս նեռինն, եւ բարի հովիւքն՝ ենովք եւ եղիա եւ այլք բազումք, դնեն զանձինս իւրեանց ի վե-

<sup>1</sup> Հ չեք  
<sup>2</sup> Հ լինիցի

ըայ հաւտին Քրիստոսի եւ մարտիրոսանան ի նեռնէն: Եւ յայնժամ ասեն Քրիստոսի եւ հաւատացելոց նորին, թէ դիւահարք են, եւ յայնժամ ընտրեալքն պատասխանեն, թէ այնչափ լուսաւորութիւն կուրաց ոչ է ի դիւէ, այլ ի նմանէ, որ լուսաւոր գալստեամբն իւրով եւ հոգով շրթանցն սատակէ զամբարիշտն պեղծ: Եւ յայնժամ իսկապէս եղիցի մի հաւտ եւ մի հովիւ, յայնժամ ամենայն լեզու խոստովան լիցի, թէ Տէր է Թիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հաւր, ամէն<sup>1</sup>:

Յորժամ ճառեաց զՔրիստոսի հեղութեամբ ուսուցանելն, այժմ ճառէ զհրէիցն նենգութիւն եւ զչարութիւն:

### Վասն նաւակատեաց տաճարին

Բան. «Եղեն յայնժամ նաւակատիքն յԵրուսաղէմ» (Յովի. Ժ 22):

Մեկնութիւն. Այս մասն յերկուս բաժանի. նախ՝ ցուցանէ, թէ հալածէին բանիւ, երկրորդ՝ ցուցանէ, թէ հալածէին գործով, անդ. «Վէմս առին հրէայքն» (Յովի. Ժ 31): Եւ առաջին մասն ցուցանէ զժամանակ եւ զտեղին եւ զկերպ հարցմանն:

Վասն ժամանակին ասէ. «Եղեն յայնժամ նաւակատիքն յԵրուսաղէմ» (Յովի. Ժ 22):

Մեկնութիւն. Նաւակատիքն հասարակ տաւն լսի, այլ յատկապէս ուրախութիւն լսի, զի տաւն էր աւրհնութեան տաճարին:

Եւ գիտելի է, զի երիս գտանեմք ի Սուրբ Գիրս աւրհնութիւն տաճարին<sup>2</sup>.

Առաջին՝ ի Սողոմոնէ, որ ի տասներորդ աւրն էր սեպտեմբերի, որ յառաջ էր քան զտաղաւարահարացն, որպէս յայտ է յԵրրորդ թագաւորութեանցն (հմմտ. Գ Թագ. Զ 37-38, Ը 62-66), վասն այն զսուրբ Խաչին եւ Եկեղեցւոյ տաւնն ի նորս կատարի:

Երկրորդ. ի Զաւրաբարէլէ, յորժամ տաճարն վերստին շինեցաւ եւ եղեւ ի գարնան եղանակս ի մարտի ամսոյ, որ է ի նիսան, յառաջ քան զտաւն Զատկին, որպէս գրեալ է յԱռաջին Եզր (Ա Եզր է):

Երրորդ. աւրհնութիւն եղեւ ի Յուղայէ Մակաբայեցւոյ, յորժամ զտաճարն սրբեաց, որ պղծեալ էր<sup>3</sup> յԱնտիոքէ Եպիփանէն, որ կանգնեաց կուռս ի տաճարին, յետոյ եկն Յուղա Մակաբայն հեծելաւք եւ էառ զԵրուսաղէմ եւ սրբեցին զտաճարն, որպէս գրեալ

<sup>1</sup> Ա Յ չեք ի փառս Աստուծոյ Հաւր, ամէն

<sup>2</sup> Ա Յ չեք Եւ գիտելի է ... տաճարին

<sup>3</sup> Ծ է

Է ի Մակաբայեցիսն ի քսան եւ հինգերորդ աւրն, յիններորդ ամսոյն հրէից, որ է քասղեւ (հմնտ. Ա Մակ. Դ):

Ապա յայտ է, թէ ոչ վասն Սողոմոնի աւրհնութեան ասէ եւ ոչ Զաւրաբարէլին, այլ վասն երրորդին:

Բան. «Եւ<sup>1</sup> ձմեռն էր» (Յովի. Ժ 22):

ՄԵԼԱՆՈՒՐԻՆ. Նախ՝ զի ձմեռն է քասղեւ, մերձ ի դարձ արեգականն, եւ ի գարունն յայն<sup>2</sup> չարչարեցաւ Քրիստոս, վասն այն յերուսաղէմ շրջէր: Երկրորդ. ձմեռն զցուրտ նենգութեան հրէիցն ասէ, զի ձմեռն ձիւնամեռ լսի<sup>3</sup>:

Հարց. Զի՞նչ նշանակէ կրկին աւրհնութիւն տաճարին:

Պատասխան. Նախ՝ որ սոյնպէս ի նորս զեկեղեցիս նոր շինեալ աւրհնեմք եւ զպղծեալն վերստին սրբեմք: Երկրորդ. զմեզ նշանակէ, ըստ այնմ. «Դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք» (հմնտ. Ա Կորնթ. Գ 16), զի նախ մկրտիմք եւ յորժամ մեղաւք պղծիմք, վերստին խոստովանութեամբն սրբիմք, զի երկրորդ աւագան է ապաշխարութիւն:

Ասաց զժամանակն, զկնի ցուցանէ զտեղին.

Բան. «Եւ շրջէր Յիսուս [ի տաճարին], ի սրահին Սողոմովնի» (Յովի. Ժ 23):

ՄԵԼԱՆՈՒՐԻՆ. Սրահ Սողոմոնի կոչէ զտեղիքն, յոր Սողոմոն աղաւթէր մերձ տաճարին, եւ թէպէտ առաջինն քակեալ էր, վերստին շինեաց Զաւրաբարէլ զնոյն տեղին եւ նոյն նմանութեամբն<sup>4</sup>:

Եւ որպէս ասէ մեկնիչդ<sup>5</sup> Քրիստոս ի տաւնն գայր. նախ՝ ի պատիւ տաւնին: Երկրորդ. վասն բազմութեան ժողովոյն: Զայն ուսուցանէ, թէ պարտ է վարդապետին յամենայն տաւնի բանիւ պատուել զտաւնն եւ քարոզել ժողովրդեանն, որպէս եւ<sup>6</sup> Քրիստոս առնէր: Եւ թէ մարմնով սքանչելիս ոչ կատարէ, հոգւով կատարեցէ, զկոյրսն յուսաւորեցէ, զհիւանդս բժշկեցէ եւ այլն:

Դարձեալ՝ երբեմն ի տան գանձին, երբեմն ի սրահին, երբեմն ի տաճարին քարոզէր Քրիստոս: Յայս միտս զընթերցուածն<sup>7</sup> կարգեաց Յակոբոս. երբեմն ի յարութիւն, երբեմն ի Սիոն, երբեմն ի մատրանն ժողովել ի նորս:

Այժմ ցուցանէ զկերպ հարցմանն հրէից.

Բան. «Շուրջ եղեն զնովաւ հրէայքն» (Յովի. Ժ 24):

<sup>1</sup> C չեք

<sup>2</sup> B այն

<sup>3</sup> A C չեք

<sup>4</sup> B ընթերցուածն

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ<sup>1</sup>.** Շուրջ եղեն առ ի յըմբռնել զնա բանիւ:

Բան. «Մինչեւ յե՞ր թափես զոգիս մեր» (Յովի. Ժ 24):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** **Այսինքն՝ զմեզ ի տարակոյս մատնես եւ այնունեղես:**

Բան. «Եթէ դու ես օրիստոսն, ասա՛ մեզ համարձակ» (Յովի. Ժ 24):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** **Այսու երեւեցուցանեն, թէ պատրաստ եմք ի հաւատալ եւ ընդունել զՔեզ ճշմարիտ Քրիստոս, այլ նենդութեամբ լի էր սիրտ նոցա:**

Եւ յայտ է ի չորից. նախ՝ ի պատասխանւոյն Քրիստոսի: Երկրորդ. ի բազում սքանչելեացն, զոր տեսին եւ ոչ հաւատացին: Երրորդ. զի [ի] ծնէ կոյրն վկայ էր: Զորրորդ. յայտ է ի բանից իւրեանց, զի ոչ հարցանեն, թէ<sup>2</sup> Որդի Աստուծո՞յ ես, զի Պիղատոսի այս ոչ լինէր փոյթ, զի առ նա կամէին մատնել, այլ ասեն. «Եթէ դո՞ւ ես Քրիստոսն», որ թարգմանի «Աւծեալ», իսկ աւծումն լինէր թագաւորաց: Եւ յայտ է, թէ պատասխանեալ էր զինքն Քրիստոս գոլ, վաղվաղակի մատնէին Պիղատոսի իբր զհակառակ կայսեր, վասն որոյ ասէին. «Ասա՛ մեզ համարձակ», այսինքն՝ ոչ պատրուակեալ բանիւ եւ առակաւք, այլ յայտնապէս եւ պարզ եւ առաջի բազմաց, քանզի կամէին ի նմանէ վկայութիւն ինչ առնուլ: Աստ ասէ Ոսկէբերանն. «տե՛ս զնենդութիւն հրէիցն, յորժամբանիւ ուսուցանէր, ասէին՝ զի՞նչ նշան ցուցանես մեզ, իսկ յորժամ գործով ցուցանէր զինքն Քրիստոս գոլ, ասեն նմա. «Թէ դու ես Քրիստոսն, ասա՛ մեզ համարձակ», իբր միշտ պատրաստք ի հակառակութիւն»:

Բան. «Պատասխանի ետ Յիսուս»: (Յովի. Ժ 25)

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** **Աստ ցուցանէ նախ զչարութիւն հրէից եւ ապա զհեզութիւն աշակերտացն:**

Վասն առաջնոյն ասէ.

Բան. «Ասացի ձեզ եւ ո՛չ հաւատայք» (Յովի. Ժ 25):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** **Եւ ո՞ւր ասաց, յորժամ զհացն կերան եւ դարձեալ խնդրէին, ասէ՝ երթայք գործեցէք զկենաց կերակուրն: Եւ նոքա ասեն՝ զի՞նչ առնիցեմք, ասաց նոցա, թէ՝ հաւատասչի՞ք յայն, որ առաքեացն զիս, այսինքն՝ զհայրն իմ հաւատացէք եւ զիս ի նմանէ առաքեալ: Եւ յորժամ կրկնեաց, թէ մարմին իմ ճշմարիտ կերակուր է եւ ըմպելի, եւ յորժամ ասաց. «Ես եմ լոյս աշխարհի» եւ այլն, բազում անգամ վկայեաց բանիւ եւ նոքա ոչ հաւատացին, այժմ գործով վկայէ:**

<sup>1</sup> A չիք  
<sup>2</sup> C եթէ

Բան. «Զգործսն, զոր ես գործեմ յանուն Հաւր» (Յովի. Ժ 25):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** ԶՀԱՅՐ յիշէ վասն չորից. նախ՝ զի պատճառ է: Երկրորդ. զի դիւրաւ լուիցեն: Երրորդ. զինքն Որդի ցուցանէ: Չորրորդ. զմիակամութիւն նորա: Եւ որպէս ասացաւ յերրորդ գլուխն, թէ ճշմարտութիւն, որ ի վեր է քան զիմացումն բնական հանճարոյ մեր, բաւական ցուցանէ զգործ<sup>1</sup> սքանչելեաց: Այլ նորքա ոչ հաւատային սքանչելեացն, որ յայտնէր զԱստուածութիւն Քրիստոսի:

**ԶԿՆԻ պատճառ անհաւատութեան ցուցանէ.**

#### Վասն ոչխարաց

Բան. «Այլ դուք ոչ հաւատայք, զի ոչ էք<sup>2</sup> յոչխարաց [անտի] իմոց<sup>3</sup>» (Յովի. Ժ 26):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Այսինքն՝ ոչ էք անմեղք եւ խոնարհք, այլ ամբարտաւանք եւ նենգաւորք: Դարձեալ՝ ոչ վասն անարժանութեան կամ ստութեան, կամ փոքրութեան բանից ոչ հաւատայք, այլ վասն ոչ կամելոյդ, որպէս ասէ՝ չէք, այսինքն՝ չէք կամիլ, կամ չէք լինել ի հաւատացելոց, զի հրաժարականս այս ոչ է հրամայական, այլ պատճելով զապայն:

Իսկ ոչխար կոչէ զաշակերտան եւ զհաւատացեալսն ամենայն վասն բազում պատճառի. նախ՝ զի անմեղ է ոչխարն, երկրորդ՝ խոնարհ, երրորդ՝ սուրբ, չորրորդ՝ պատարագելի, հինգերորդ՝ ծննդական, վեցերորդ՝ բազմաշահ, եւթներորդ՝ պարկեշտ ունի զամաւթոյսն, ութներորդ՝ երկնչի ի գայլոց, իններորդ՝ հովանացին միմեանց, տասներորդ՝ ճանաչեն եւ լսեն հովուին: Եւ այլ բազում յատկութիւն ասացաւ ի Մատթէոսի մեկնութիւն, երրորդ հատորին, մետասաներորդ համարն. «Առաքեմ զձեզ որպէս զոչխարս ի մէջ գայլոց» (Մատթ. Ժ 16):

**ԶԿՆԻ այսմ ցուցանէ զհեզութիւն աշակերտացն եւ զպարգեւս նոցա:**

Բան. «Ոչխարք իմ ձայնի իմում լսեն, եւ ես ճանաչեմ [զնոսա]» (Յովի. Ժ 27):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Լսելն է հաւատալ սրտիւ եւ բերանով խոստովանիլ, եւ զնոսա ճանաչէ Քրիստոս ո՛չ միայն տեսական ճանաչմամբ, որ հասարակաց է, այլ եւ սիրողական եւ գթով:

<sup>1</sup> A B գործ

<sup>2</sup> C չէք

<sup>3</sup> A B չէք

Բան. «Եւ<sup>1</sup> զյետ իմ գան» (տես Յովի. Ժ 27):

**Մեկնութիւն.** **Այսինքն՝ գործովք բարեաց մինչ ի սպառ համբերեն եւ ոչ թէ առժամանակ մի, զի «գան» ասէ, եւ ոչ թէ՝ եկին:**

Բան. «Եւ ես տամ նոցա զկեանս յաւիտենականս» (Յովի. Ժ 28):

**Մեկնութիւն.** **Որ մինչ ի սպառ զբարիս գործէ ի կեանս իւր, հատուցանէ նոցա Քրիստոս փոփարէն զկեանս իւր:**

**Եւ յաւիտենից ասէ, նախ՝ զի ոչ է փոփոխական, երկրորդ՝ զի անմահ է, երրորդ՝ երկնաւոր, չորրորդ՝ հրեշտակաց եւ աստուածային կեանք, զի աստի կեանքս փոփոխական է եւ անցաւոր եւ երկրաւոր եւ զգայականաց:**

Բան. «Եւ մի կորիցեն ի յաւիտեամ<sup>2</sup>» (Յովի. Ժ 28):

**Մեկնութիւն.** **Վասն հաւատոյն Քրիստոսի<sup>3</sup>:**

Բան. «Եւ ոչ ոք յափշտակէ ի ձեռաց ինոց» (Յովի. Ժ 28):

**Մեկնութիւն.** **Վասն գործոց բարեացն:** Եւ յափշտակիլն լինի յերից. նախ՝ ի տկարութենէ պահողին, երկրորդ՝ ի զաւրութենէ յափշտակողին, երրորդ՝ ի կամաց յափշտակելոյն: Արդ, ոչ ոք կարէ յափշտակել զնոսա վասն ազատ կամացն եւ անչափ կարողութեան Քրիստոսի: Եւ յափշտակողն կամ սատանայ է, կամ մեղք, կամ մարմինս, կամ բռնաւորք, եւ սոքա տկարք են եւ ոչ զաւրաւորք:

Բան. «Զոր ետ ինձ Յայր, մեծ է քան զամենայն» (տես Յովի. Ժ 29):

**Մեկնութիւն.** **Նախ՝ զՀայր ասէ մեծ քան զամենայն ըստ ճառին:** Դարձեալ՝ զԱստուածութիւն, զոր ունիմ ի Հաւրէ, մեծ է քան զամենայն, զի անչափ է: Է եւ ըստ այսմ հետեւի, զի կարողութիւն մարմնոյն Քրիստոսի անչափ է՝ միաւորութեամբ ի Բանն Աստուած:

Բան. «Եւ ոչ ոք կարէ յափշտակել ի ձեռաց Յաւր ինոյ. Ես եւ Յայր իմ մի եմք» (Յովի. Ժ 29-30):

**Մեկնութիւն.** **Այսինքն՝ զմի բնութիւն եւ զկարողութիւն ունիմք, վասն այն որպէս ի Հաւրէ ոչ ոք կարէ յափշտակել զոչշարս, նոյնպէս եւ յինէն ոչ ոք յափշտակել կարէ: Իսկ մեկնչէդ յայտնի է: Եւ այս է երրորդ պատճառն, որ ցուցանէ զմեծութիւն եւ զէութիւն հաւասար Աստուծոյ, որպէս ասէ. «Յայր իմ, որ ետ ինձ [զնոսա], մեծ է քան զամենայն» (Յովի. Ժ 29), այս է զԱստուածութիւն: Եւ չորրորդն է իւր վկայութեամբն, որպէս ասէ. «Ես եւ Յայր իմ մի եմք» (Յովի. Ժ 30): Եւ գիտելի է, զի բանիւս այս, որ ասաց Տէրն, ի**

<sup>1</sup> С չեք

<sup>2</sup> А В Եւ մի կորիցէ ի յաւիտեան

<sup>3</sup> В Քրիստոսի է

բաց բառնին կրկին ներհակ մոլորութիւնք, քանզի Սաբէլ Լիբէացի ասաց յԱստուած գոլ մի անձն, որպէս եւ մի բնութիւն, եւ այս մոլորութիւն բառնի, յորժամ ասէ<sup>1</sup>. «Ես եւ Յայր իմ մի եմք», զի մի անձն ոչ կարէ ինքեան հայր լինել եւ ծնունդ, վասն այն՝ ես եւ Հայր, ցուցանէ զգանազանութիւն<sup>2</sup> անձանց: Նոյնպէս ասելն բազմաւորական, թէ՝ եմք, զի թէ Հայր եւ Որդի նոյն անձն էին, պարտ էր ասել՝ եմ: Ընդդէմ սորա ներհակաբար ասաց Արիոս, թէ որպէս երեք անձինք յԵրրորդութիւն, սոյնպէս եւ երեք բնութիւն: Եւ այս մոլորութիւնս բառնի, յորժամ ասէ՝ մի եմք, այսինքն՝ բնութեամբ, զաւրութեամբ, հաւասարութեամբ եւ ամենայն ինչ մի է յԵրրորդութիւն, բաց յառանձնութեանցն:

Այժմ ասէ, թէ որպէս հրէայքն հալածեցին զՔրիստոս գործով:  
Բան. «Վէմս առին իրէայքն, զի քարկոծ արացեն զնա<sup>3</sup>» (Յովի. Ժ 31):

ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ. Աստ նախ յանդիմանեաց զնոցա խստութիւն: Երկրորդ. ի բաց բառնայ զչարութիւն, որ զՔրիստոս հայհոյիչ կոչէին, անդ. «Պատասխանի ետուն» (Յովի. Ժ 33): Երրորդ. Քրիստոս խոյս տայ վասն նոցա խստարտութեան, անդ. «Խնդրէին զնա ունել» (Յովի. Ժ 39): Վասն առաջնոյն. «Վէմս առին [իրէայքն], զի քարկոծ արացեն զնա<sup>4</sup>» (Յովի. Ժ 31), զայս առնէին վասն նախանձու եւ ատելութեան եւ ոչ վասն արդարութեան, քանզի արտաքոյ աւրինացն արարին, զի ոչ դատաւորք եւ ոչ վկայք եւ ոչ վճիռ, եւ արտաքոյ տաճարին, որպէս ասացաւ յառաջագոյն յութներորդ գլուխ մեկնութեան:

Իսկ Քրիստոս քաղցր բանիւ յանդիմանեաց զնոցա խստութիւն.

Բան. «Բազում գործս բարիս ցուցի ձեզ<sup>5</sup> ի Յաւրէ իմնէ<sup>6</sup>» (Յովի. Ժ 32):

ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ. Զծշմարտութիւն ուսոյց, զհիւանդս նոցա բժշկեաց եւ զայլսն, որպէս ասէ մեկնիչդ<sup>xxxxviii</sup>: Եւ վասն այսոցիկ պարտ էր, զի հրէայքն զՔրիստոս պատուէին, բայց նոքա զհակառակն առնէին, զի հալածէին:

Եւ զՀայր յիշէ վասն չորից. նախ՝ զի պատճառ է, Երկրորդ՝ զի դիւրաւ լուիցեն, Երրորդ՝ զի Որդի է Հաւրն, չորրորդ՝ զի միակամ:

Եւ ապերախտութիւն մեծ է վասն չորից. նախ՝ զի ամենայն ազգն էին, Երկրորդ՝ զի յամենայն ժամ, Երրորդ՝ զի ամենայն գոր-

<sup>1</sup> С չիք ես եւ Յայր իմ ... յորժամ ասէ

<sup>2</sup> А В զանազանութիւնն

<sup>3</sup> А չիք արացեն զնա, В չիք զնա

<sup>4</sup> А В չիք

<sup>5</sup> А В չիք

<sup>6</sup> А չիք

ծոց, չորրորդ՝ զի մեծամեծաց: Իսկ որ ոմանք լինին ապերախտ, եւ երբեմն եւ նուազ գործոց, փոքր է վնասն:

**Զկնի ցուցանէ, թէ որպէ՞ս ասացին զնա հայհոյիչ.**

Բան. «Վասն բարւոյ գործոյ ոչ առնեմք զբեզ քարկոծ<sup>1</sup>, այլ վասն հայ-հոյութեան» (Յովի. Ժ 33):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ<sup>2</sup>.** Ի բանս նոցա ներհակութիւն ինչ խառնեալ կայ, քանզի վկայէին, թէ զբարի գործ ունի՝ ասելով. «Ո՛չ վասն բարի գործոց, այլ վասն հայհոյութեան» (տես Յովի. Ժ 33): Եւ երկո-քեան սոքա անհնար են զոյգ մնալ, քանզի սքանչելիքն լինէին առ ի վկայութիւն բարութեան նորա, վասն այն թէ գործքն բա-րիք եւ աստուածայինք էին, ոչ կարէր լինել հայհոյիչ եւ վկայ ստութեան, իսկ թէ նա հայհոյիչ էր՝ ասելով զինքն Աստուած կամ Որդի Աստուծոյ, յայնժամ աստուածային սքանչելիքն ոչ կարէին լինել վկայ ստութեան, քանզի սքանչելիքն վկայ էին, թէ Աստուած է Քրիստոս: Ապա յայտ է, զի բանք նոցա ինքեանց հակառակ էին, զի թէ Քրիստոս հայհոյիչ է, գործքն նորա ոչ լի-նէր բարի, եւ թէ գործքն բարի էր, նա ոչ լինէր հայհոյիչ: Եւ կու-րութիւն հրէիցն լինէր, զի միայն հայէին ի մարդկութիւն Քրիս-տոսի, որպէս ասէ.

Բան. «Եւ զի դու մարդ ես եւ զանձն քո Աստուած առնես» (Յովի. Ժ 34):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Գիտելի է, զի երից հերձուածոց ընդդէմ է իմա-ցումն հրէից. նախ՝ Մանիքոսի, որ առ աչաւք ասաց զմարդկու-թիւն Քրիստոսի, իսկ նոքա ճշմարիտ մարդ խոստովանէին: Երկ-րորդ. ընդդէմ է Արիոսի, որ արարած ասէր զբանն, եւ հրէայքն ի-մացան, զի Քրիստոս զինքն ճշմարիտ Աստուած ասէր, թէպէտ զնա Աստուած ոչ հաւատացին: Երրորդ. ընդդէմ է երկարնակ բա-ժանողաց, զի նոքա զմարմինն տեսեալ Աստուած ասացին, լսելով ի Քրիստոսէ, իսկ սոքա զմարմինն մարդ ասեն եւ զԱստուածն՝ Աստուած:

**Զկնի այսմ ցուցանէ Քրիստոս, թէ ոչ է հայհոյիչ՝ վկայու-թեամբ գրոյն:**

Բան. «Ո՞չ յարէնս ծեր գրեալ է» (Յովի. Ժ 34):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Զի Սուրբ Գիրք յԱստուծոյ են, վասն այն ոչ կարեն սուտ լինել, եւ աւրէնք յատկաբար հինգ Գիրքն է Մովսէ-սի, այլ հասարակաբար բոլոր Հին Կտակարանքն Աւրէնք կոչի, որպէս եւ բանս այս ի սաղմոսէն է. «Ես ասացի, թէ Աստուածք ի-ցէք» (Սաղմ. ԶԱ 6): Եւ Դաւիթ ասէր. «Նայեցարուք ժողովուրդք

<sup>1</sup> A B չեք զբեզ քարկոծ

<sup>2</sup> B չեք

**յաւրէնս իմ<sup>1</sup>**» (Սաղմ. 3: 1): *Եւ յԱւրէնս եւ յԵլքն գրեալ է. «զԱստուած ժողովուրդն Քո մի բամբասեսցես»* (տես Ելք ԻԲ 28), այսինքն՝ զքահանայս եւ զվարդապետ եւ զդատաւորս: *Եւ Մովսէս աստուած կոչեցաւ փարաւոնի* (հմնտ. Ելք է 1): *Եւ գիտելի է, զի յատկաբար Աստուած միայն է բնութեամբ Աստուած, իսկ այլքն հեռաւոր, կամ մերձաւոր հաղորդութեամբ կոչին, որպէս իմաստութեամբ, կամ իշխանութեամբ եւ այլ ինչ:*

*Եւ չորք են սոքա. նախ՝ բնութեամբն Աստուած, որ արարիչ է ամենայնի: Երկրորդ. կոչմամբ, որպէս մարգարէքն եւ սուրբքն ի հինն: Երրորդ. շնորհաւք աստուած, որպէս մկրտեալքն ի նորս: Չորրորդ. փառաւք աստուած, որպէս յարուցեալքն եւ փառաւորեալքն<sup>2</sup>:*

*Իսկ կուռքն սուտ են եւ ոչ աստուածք, ո'չ բնութեամբ, եւ ո'չ կոչմամբ, եւ ո'չ գործով եւ այլքն:*

*Նոյնպէս<sup>3</sup> եւ որդիք չորս են. նախ՝ բնութեամբ, որպէս Քրիստոս բնութեամբ Որդի է Աստուծոյ: Երկրորդ. կոչմամբ, որպէս. «Որդի անդրանիկ է իմ հսրայէլ» (տես Ելք Դ 22): Երրորդ. շնորհաւք մկրտեալքն որդիք են Աստուծոյ: Չորրորդ. յարուցեալքն փառաւք որդիք են Աստուծոյ: Ասէ Տէր. «Զի յարութեան որդիք են» (հմնտ. Ղուկ. Ի 36-37):*

Բան. «Եւ չէ մարթ Եղծանել<sup>4</sup> Գրոյն» (Յովի. Ժ 36):

*Մեկնութիւն. Այսինքն՝ ո'չ կարէ ստիլ: Եւ Գիրք Սուրբ զմարդիկ կոչմամբ աստուած ասեն, նոյնպէս եւ զիս բնութեամբ Աստուած քարոզեն, եւ գուք զառաջինն ընդունիք, ապա ուրեմն պարտ է եւ զերկրորդն ընդունել ձեզ, եւ մի՛ համարիք հայհոյիչ, զի Աստուծոյ Որդի կոչեմ զիս:*

### Թէ առաւել է Քրիստոս քան զմարգարէ

*Յառաջագոյն վասն վարձկանացն ցուցաւ չորիւք առաւելութիւն Քրիստոսի քան զմարգարէիցն: Դարձեալ եւ աստ չորիւք ցուցանի. նախ՝ զի մարգարէքն վասն Քրիստոսի խաւսեցան եւ գրեցին, ըստ այնմ. «Մովսէս վասն իմ գրեաց» (հմնտ. Ղուկ. ԻԴ 44), եւ առաւել է Քրիստոս մարգարէացեալն, քան զմարգարէսն ամենայն: Երկրորդ. զի Քրիստոս բնութեամբ է Աստուած, եւ մարգարէքն՝ կոչմամբ: Երրորդ. նոքա յանունն Աստուծոյ սքանչելիս*

<sup>1</sup> А В **չեք**

<sup>2</sup> С փառաւորեալք

<sup>3</sup> С որպէս

<sup>4</sup> А Եղծանիլ

առնէին, եւ Քրիստոս՝ իւր յատուկ զաւրութեամբն: Զորրորդ. Քրիստոսի վկայեաց Հայր բնութեամբ Որդի եւ սիրելի, եւ մարգարէիցն կոչմամբ:

Եւ դարձեալ այլ իմն առաւելութիւն է չորս կերպիւ, որպէս ասացաւ մեզ ի գիրս «Ոսկեփորիկ»<sup>cxxxix</sup>. նախ՝ զի Քրիստոս ի կուսէ ծնաւ, եւ այլք՝ յամուսնութենէ: Երկրորդ. նա կուսութեամբ եկաց, եւ այլք՝ ոչ: Եւ թէ ոք ընդդէմ ասիցէ. «Եւ Աղամ ի կոյս յերկրէ<sup>1</sup>, եւ Մկրտիչն կոյս եկաց», ապատասխանեմք, եթէ Աղամ ի կուսէ, այլ ոչ կոյս եկաց, եւ Յովհաննէս կոյս էր, այլ ոչ ի կուսէ: Երրորդ. զի իւրաքանչիւր մարգարէքն մի-մի սքանչելիս գործեցին, որպէս Եղիա հուր իջոյց (հմնտ. Գ Թագ. ԺԸ 30-40), Եղիսէոս մեռեալ յարոյց (հմնտ. Դ Թագ. Դ 8-38), եւ Մովսէս ընդ ծովն անցոյց (հմնտ. Ելք ԺԴ), այլ Քրիստոս զամենայն սքանչելիսն կատարեաց ի ծովու, ի ցամաքի, ի մեռեալս եւ ի կենդանիս: Զորրորդ. Քրիստոս մարմնով յերկինս ել, եւ այլ մարգարէքն՝ միայն հոգւով, զի թէպէտ ենովք եւ Եղիա ի դրախտն են, այլ ոչ յերկինս եւ ոչ անմահ կենդանութեամբ, զի մեռանելոց են դարձեալ, իսկ Տէրն մեր այսուհետեւ ոչ մեռանի եւ դայ եւ յարուցանէ զմեռեալս:

### Վասն սրբութեան

Բան. «Զոր Յայր<sup>2</sup> սրբեաց եւ առաքեաց» (Յովի. Ժ 36):

Մեկնութիւն. Մի իմասցիս զբնութիւն Բանին կարաւտ սրբութեան, որպէս ասէ մեկնիչդ:

Եւ մի իմասցիս զմարմինն յերկնից բերեալ. նախ՝ զի թէ յերկնից էր, ոչ լինէր Որդի Դաւթի եւ Աբրահամու:

Երկրորդ. Եւ ոչ լինէր այն փրկութիւն մարդկան, այլ չորիւք է իմացումն. նախ՝ Հայր սրբեաց, այսինքն՝ ծնանելովն զՈրդին յաւիտենից ետ նմա Սուրբ լինել: Երկրորդ. ըստ մարդկութեան յայնժամ սրբեաց ի յարգանդի, յորժամ Բանն Աստուած մարդ եղեւ, առեալ զմեր բնութիւնս միաւորեաց ընդ իւրում Աստուածութեան եւ սուրբ սրբոց կազմեաց եւ առաքեաց մարմնովն ի սրբութիւն մարդկան: Երրորդ. սրբեաց զմեզ մկրտութեամբն Յորդանանու, զի սրբեաց զջուրն եւ կացոյց զսրբութիւն աւազանին: Զորրորդ. սրբեաց զմեզ խաչիւն, ըստ այնմ. «Սրբութիւն մեղաց մերոց արարեալ, նստեալ ընդ աջմէ մեծութեան» (Եբր. Ա 3): Արդ, առաջին Երկուքն վայելչական է ըստ ինքեան Քրիստոսի, եւ վեր-

<sup>1</sup> Ա Յ Երկրէ

<sup>2</sup> Ա Յ Հեք

ջին երկուքն՝ հասարակ մարդկան, զի մկրտութեամբն սրբեաց ի<sup>1</sup> սկզբնական մեղաց եւ խաչիւն՝ ի ներգործական զոհից ճենճերաց<sup>2</sup>: Եւ մեղք սկզբնական ի մարմնոյն սկսեալ ի հոգին տարածի, եւ ներգործական եւ զոհիցն ի հոգւոյն սկսեալ<sup>3</sup> ի մարմինն տարածի: Դարձեալ՝ մկրտութեամբն ի մեղաց սրբեաց եւ խաչիւն ի դատապարտութեանցն Աղամայ, եւ ունիմք այժմ Պատարագաւն զխաչին խորհուրդ, եւ զաւազանաւն՝ զմկրտութեան եւ զկուսական ծննդեանն:

Եւ լինի աստ երեք հարց.

Առաջին. Վասն է՞ր կոչեաց զինքն Սուրբ:

Պատասխան. Վասն երից. Նախ՝ ընդդէմ նոցա, որք ասէին հայհոյիչ: Ասաց, թէ՝ Սուրբ եմ եւ ոչ՝ հայհոյիչ: Երկրորդ. զի մարգարէքն եւ մանաւանդ Դանիէլ ինն կոչի Սուրբ Սրբոց Քրիստոս: Երրորդ. զի սրբութիւն ի բան եւ ի գործն ցուցանէ, թէ՝ «Ճշմարիտ եմ, որ ասացի Որդի Աստուծոյ զիս, եւ ոչ՝ սուտ»:

Երկրորդ հարց. Վասն է՞ր առաքեալ ասէ:

Պատասխան. Նախ՝ զի ցուցանէ զինքն չնաշխարհիկ գոլ: Երկրորդ. զի բան նորա հաւատարիմ էր: Երրորդ. ցուցանէ զինքն Աստուած ի Հաւրէ առաքեալ, որպէս ասէ մարգարէն. «Առաքեաց զԲան իւր եւ բժշկեաց զնոսա<sup>4</sup> եւ փրկեաց [զնոսա] յապականութենէ իւրեանց<sup>5</sup>» (Սահմ. 62 20): Դարձեալ՝ սրբին մարմնոյն վայելէ, եւ առաքիլ՝ բանին, որպէս ցուցաւ, ի միասին դնէ, որ զմիութիւն անբաժանելի նշանակէ:

Երրորդ հարց առ այս. Զի՞նչ է, որ ասէ առաքեալ. «Որ<sup>6</sup> սրբեն եւ որք սրբին ի միոջէն էին» (տե՛ս Եբր. Բ 11):

Պատասխան. Նախ՝ որ սրբեն, այսինքն՝ Քրիստոս, եւ որք սրբին՝ այսինքն՝ հաւատացեալք, ի միոջէն Աղամայ են:

Երկրորդ. ի միոջէն Հաւրէն Աստուծոյ Քրիստոս բնութեամբ Որդի, եւ մկրտեալք՝ շնորհաւք կոչին:

Երրորդ. ի միոյ անձնէ Բանին մարմնացելոյ եղեւ սրբութիւն. նախ՝ գլխոյն մերոյ եւ ապա<sup>7</sup> անդամոց նորա: Եւ տես, զի սրբութիւն անբաժանելի նշանակէ:

<sup>1</sup> B չեք

<sup>2</sup> C ճենճերոց

<sup>3</sup> C չեք ի հոգւոյն սկսեալ

<sup>4</sup> A B չեք

<sup>5</sup> A չեք զնոսա յապականութենէ իւրեանց, B չեք եւ փրկեաց ... իւրեանց

<sup>6</sup> B Որք

<sup>7</sup> B չեք

թեամբ կոչիմք եղբարք Քրիստոսի եւ ոչ՝ հասարակութեան<sup>1</sup> մարմնոյս:

Բան. «Թէ ոչ գործեմ զգործս Յաւր իմոյ, մի' հաւատայք ինձ<sup>2</sup>» (Յովի. ժ 37):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Որպէս ասէ Արիստոտէլ. «Ամենայն ինչ յատուկ ներգործութիւն ունի եւ ի գործոյն ճանաչեմք զբնութիւն իրին, որպէս յայտ է ի Հրոյն, զի այրէ եւ աչքն տեսանէ», նոյնպէս եւ Քրիստոս ճանաչի, թէ Աստուած է եւ Որդի Աստուծոյ, որ զգործն Հաւր ներգործէ, զի որպէս բնութիւն մի է Հաւր եւ մարմնացեալն Որդւոյ, նոյնպէս եւ մի է<sup>3</sup> գործն Հաւր եւ Որդւոյ, որպէս ասէ.

Բան. «Թէ եւ ինձ ոչ հաւատայք, սակայն գործոցն հաւատացէք» (Յովի. ժ 38):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Այսինքն՝ զի տեսն հաստատ է քան զլուրն:

Բան. «Զի գիտասօշիք եւ ծանիջիք, թէ ես ի Յայր եւ Յայր ի յիս է<sup>4</sup>» (տես Յովի. ժ 38):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Նախ՝ վասն միութեան բնութեան Հայր յՈրդի է, եւ Որդի՝ ի Հայր: Երկրորդ. անորոշ անձամբ Հայր յՈրդի<sup>5</sup> է, եւ Որդի՝ ի Հայր, զի երեք անձինք անբաժանելի են ի միմեանց, որպէս բանն՝ ի մտաց, եւ կեանքն՝ ի հոգւոյն, զի ոչ են, որպէս երեք մարդիկ՝ բաժան ի միմեանց, որ անհաւատութեամբ եւ տեղեաւ, եւ սահմանաւ, եւ ամանակաւ, եւ տեսութեամբ, եւ կամաւք եւ ներգործութեամբ բաժան են, այլ երրորդութիւն յատկութեամբ անձանց միայն են որոշեալ, այլ ամենայնիւ միաւորեալ, որպէս մի անհատ մարդ եւ մի արեգակ:

Իսկ ասելն. «Գիտասջի՞ք եւ ծանիջի՞ք, թէ Աստուած եմ մարմնովս եւ հոգւովս», դարձեալ՝ գիտասջի՞ք զմիութիւն բնութեանս ընդ Հաւր Աստուծոյ, եւ ծանիջի՞ք անորոշ անձամբ ի Հաւրէ Աստուծոյ<sup>6</sup>:

Զկնի ցուցանէ, թէ որպէս խոյս ետ վասն նենգութեան հրէիցն, ոչ բանիւ եւ ոչ գործով հաւատացին, այլ խստասրտութեամբ հալածէին, որպէս ասէ.

Բան. «Խնդրեին զնա ունել եւ ել ի ձեռաց նոցա» (Յովի. ժ 39):

<sup>1</sup> A B հակառակութեան

<sup>2</sup> A B չեք

<sup>3</sup> A B նոյնպէս մի է եւ

<sup>4</sup> A B թէ ես Յաւր

<sup>5</sup> C ի յՈրդի

<sup>6</sup> B չեք եւ ծանիջիք ... ի Յաւրէ Աստուծոյ

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Այսինքն՝ կամէին զնա ունել<sup>1</sup> առ ի սպանանել, եւ նա աստուածային զաւրութեամբն իւր ել ի ձեռաց նոցա եւ ի մէջ նոցա անցեալ գնայր՝ անտեսանելի ի նոցանէ: Եւ դարձեալ ասէ, զի մի անգամ եւս արարեալ էր, որպէս յութներորդ գլուխն ասացաւ (Յովի. Ը 59) եւ որպէս մեկնիչդ յերկար մեկնէ<sup>cxli</sup>:

**ԶԿՆԻ ԱՍԷ, ԹԷ Ո՞ՎՐ ԳՆԱԳ.**

Բան. «Եւ գնաց միւսանգամ յայն կոյս Յորդանանու» (Յովի. Ժ 40):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Միւսանգամ ասէ, զի զառաջինն անդ մկրտեցաւ, զի անդ եկն Յովհաննէս մկրտել եւ անդ ելանէին ամենայն ազգն ի մկրտութիւն:

Եւ անդ գնաց. նախ՝ զի յապահովս լինէր ի չարութենէ հրէիցն, երկրորդ՝ զի ժողովուրդն<sup>2</sup>, որ անդ գային, յիշէին նախ զվկայութին Յովհաննու, թէ՝ «Սա է Գառն Աստուծոյ» (տես Յովի. Ա 29), եւ այլն: Դարձեալ՝ յիշէին զվկայութիւն Հաւը, թէ՝ «Դա է Որդի իմ սիրելի» (տես Մատթ. Գ 17), եւ հաստատէին ի հաւատն Քրիստոսի:

Բան. «Զի Յովաննէս նշանս ինչ ոչ արար» (Յովի. Ժ 41):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Վասն չորս պատճառի Յովհաննէս նշանս ոչ արար. նախ՝ զի այնու ցուցցի մեծութիւն Քրիստոսի, ըստ այնմ. «Դու ես Աստուած, որ առնես սքանչելիս» (Սաղմ. Յ 14): Երկրորդ. թէ նշան էր արարեալ, Քրիստոս կարծէին զնա, եւ լինէր այն մոլորութիւն մարդկան: Երրորդ. զի ցուցցի, թէ ոչ սրբոցն է սքանչելիս առնել, այլ որոց չնորհեալ է Աստուած: Չորրորդ. զի նա կարապետ էր Քրիստոսի եւ վկայ եւ ոչ սքանչելագործ, զի պարտ է իւրաքանչիւրոց զիւր գործն կատարել:

Բան. «Բայց զամենայն<sup>4</sup>, զոր ինչ ասաց Յովաննէս<sup>5</sup> վասն նորա<sup>6</sup> ճշմարիտ էր<sup>7</sup>» (տես Յովի. Ժ 42):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Զի տեսին սոքա զբանն Յովհաննու կատարեալ ի Քրիստոս, որ ասաց. «Սա է Որդին Աստուծոյ» (տես Յովի. Ա 29), վասն այն բազումք հաւատացին ի նա:

<sup>1</sup> С չիք զնա ունել

<sup>2</sup> В ժողովուրդըն

<sup>3</sup> В չիք

<sup>4</sup> А В չիք

<sup>5</sup> А В չիք

<sup>6</sup> А В սորա

<sup>7</sup> А В է

## Գլուխ ԺԱ

Նորին հաւաքումն Երրորդ հատորի մեջնութեան Աւետարանի

Բան. «Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս ի Բեթանիայ» (Յովհ. ԺԱ 1):

**ՄԵԼԿԱՆՈՒԹԻՒՆ.** Այս մետասան գլուխ է ըստ կարգի եւ առաջին ըստ հատորի, որը ի վերայ այսմ բանի վեց իրս գիտելի է.

**Առաջին.** գիտելի է զկարգն, զի նախ եցոյց աւետարանիչս գոլ ի Քրիստոս զաւրութիւն կենդանարար, եւ զայն եցոյց ի բանէն Քրիստոսի, ըստ այնմ, որ ասաց. «Ես եմ գուռն եւ հովիւ եւ որ լսէ ինձ, տամ նոցա զկեանս» (հնմտ. Յովհ. ԺԱ 9,11,27-28), իսկ աստ ցուցանէ զնոյն գործով նշանաց, որպէս յարոյց զ Ղազար ի գերեզմանէն, վասն այն ճառէ. «Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս» եւ այլն:

**Երկրորդ.** գիտելի է, զի որ ոք հաւասարի Աստուծոյ գթութեամբ, Աստուած է, իսկ Քրիստոս հաւասարի Աստուծոյ գթութեամբ<sup>1</sup>, ապա ուրեմն Քրիստոս Աստուած է<sup>2</sup>:

Եւ գթութիւն Քրիստոսի երեւի չորս կերպիւ. նախ՝ գալստեամբն ի Բեթանիայ վասն Ղազարու: Երկրորդ. Մարթայի եւ Մարիամու բանիւ, որպէս ասէին. «Տէ՛ր, եթէ աստ լեալ էիր, եղբայրն ին չէր մեռեալ» (Յովհ. ԺԱ 21): Երրորդ. վասն արտասուացն Քրիստոսի, որ ելաց ի վերայ Ղազարու (հնմտ. Յովհ. ԺԱ 35): Չորրորդ. ընդունելութեամբ մահու վասն փրկութեան մարդկան ըստ մարգարէութեան Կայիափայ, որ ի գլուխս այս յիշէ:

Երրորդ. գիտելի է, զի աստ երեք իրք ճառի. նախ՝ Ղազարու հիւանդութիւն անբժշկելի: Երկրորդ. մահ նորա ստուգեալ ցուցանի, անդ. «Իբրեւ լուաւ, թէ հիւանդացեալ է» (տես Յովհ. ԺԱ 6): Երրորդ. յարութիւն նորա ճառի<sup>3</sup>, անդ՝ «Յիսուս իբրեւ ետես զնա, զի լայ» (Յովհ. ԺԱ 33): Դարձեալ՝ առաջին մասն յերկուս բաժանի, զի նախ հիւանդութիւն նորա ճառի, որպէս ասէ. «Էր ոմն հիւանդ Ղազարոս» (Յովհ. ԺԱ 1): Երկրորդ. հիւանդութիւն նորա Քրիստոսի պատմի, անդ. «Առաքեցին առ նա քորքն նորա» (Յովհ. ԺԱ 3):

<sup>1</sup> Յ չիք Աստուած է, իսկ ... Աստուծոյ գթութեամբ

<sup>2</sup> Յ ապա ուրեմն Քրիստոս Աստուած է, իսկ Քրիստոս հաւասարի Աստուծոյ գթութեամբ

<sup>3</sup> Յ չիք նախ՝ Ղազարու հիւանդութիւն ... յարութիւն նորա ճառի

### Թէ քանի «եւ» կայ ի Սուրբ Գիրս

**Չորրորդ.** գիտելի է, զի եւ-ն ի Սուրբ Գիրս յերիս տեղւոջ դնի. նախ՝ ի սկիզբն բանի, ըստ այնմ. «Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր սոյնպէս» (Մատթ. Ա 18): Երկրորդ. ի մէջն, ըստ այնմ. «Բարի առնէ Տէր բարեաց եւ այնոցիկ, ոյք<sup>1</sup> [ուղիղ են սրտիւք]» (Մաղմ. ճ՛՛՛ 4): Երրորդ. ի վերջոյ, ըստ այնմ<sup>2</sup>. «Տէր թագաւոր յաւիտեանս յաւիտենից եւ եւս<sup>3</sup>» (Մաղմ. Թ 16), եւ ամենայն ուրեք երկու դէմս նշանակէ, նոյնպէս «Եւս» այս երկու դէմս նշանակէ, այսինքն՝ զհիւանդութեան, զի է, որ առողջանայ եւ է, որ մեռանի: Իսկ այս հիւանդութիւնս ոմն էր, այսինքն՝ առանձնակի յերկուցն, զի ոչ առողջանայ եւ ոչ մեռանի, որպէս այլք, մինչ ի կատարածի աւրն, այլ միջակ է երկուցն:

Հինգերորդ. գիտելի է ըստ այլաբանութեան, ոմն զբնութիւն մարդկան ասէ, զի առանձին է ի մէջ իմանալեաց եւ զգալեաց: Յիւանդ՝ զմեղացն, Ղազարոս՝ աւգնեալ, Բեթանիա՝ տուն սգոյ, Մարիամ՝ մխիթարել կամ լուսաւորել, Մարթա՝ տէրունի, Յիսուսն՝ Փրկիչ: Այս մեկնաբանութեամբս իմանի, զի մարդկային բնութիւնս հիւանդացեալ էր եւ մեղաւք մեռեալ ի տան աշխարհիս սգոյ, եկն Փրկիչն եւ տէրունական գալստեամբն աւգնեաց մեզ, եւ մխիթարեաց, եւ լուսաւորեաց, եւ փրկեաց ի մահուանէ:

### Վասն նեղութեան սրբոցն

**Վեցերորդ.** գիտելի է, զի ոմանք երկբային յիմարութեամբ, տեսանելով զսիրելիսն Քրիստոսի ի փորձանս եւ ի նեղութիւնս<sup>4</sup> անկեալ, զոր լինի վասն հինգ պատճառի. նախ՝ զի կատարեացի բանն Քրիստոսի, որ ասաց. «Երանի է ձեզ, յորժամ նախատեսցեն եւ հայածեսցեն» (տե՛ս Մատթ. Ե 11) եւ թէ՝ «Դուք չէք յաշխարհէ» (հնմտ. Յովի. Ժ 16), վասն այսորիկ<sup>5</sup> ոչ սիրեն զձեզ<sup>6</sup> եւ այլն: Երկրորդ. որպէս պատերազմ ի վերայ ամուր դղեկի լինի եւ ոչ ի դիւր դաշտի, սոյնպէս սատանայ միշտ ընդ արիագոյնս պատերազմի, որք ամրացեալ են հաւատով եւ գործով: Երրորդ. թէ փոշետեսակ սխալանս իցէ մարդ գոլով, այնու մաքրեսցի, որպէս զարծալթ ի

<sup>1</sup> A B որ, C չիք այնոցիկ, ոյք

<sup>2</sup> B չիք ըստ այնմ

<sup>3</sup> Աստուածաշնչում չկայ «Եւ եւս»

<sup>4</sup> C նեղութիւն

<sup>5</sup> C այնորիկ

<sup>6</sup> A B չիք

**մէջ բովի:** Զորրորդ. զի որ այլոց քարոզէ թողուլ զհեշտութիւն աշխարհիս, պարտ է եւ ինքն նոյնպիսի լինել: Հինգերորդ. զի զյոյսն հաստատուն ունիցի, թէ որպէս սիրելոյն Ղազարու պարգեւեաց կեանս, նոյնպէս եւ մեզ պարգեւեսցէ զկեանսն յաւիտենից:

**Այսքան առ այս:**

**Զտեղին Բեթանիա յիշէ վասն ստուգութեան պատմութեան.**

Բան. «Ի գեղջէ Մարիամայ» (Յովի. ԺԱ 1):

**Մեկնութիւն.** Վասն երկու պատճառի զգեղն քերցն ասէ. նախ՝ ըստ Ոսկեբերանին. «Զի նոքա կենդանիք էին, պատշաճ էր նոցա քան մեռելոցն կոչել», իսկ այլք ասեն, թէ հարսնութեան պոռյգ էր նոցա տուեալ, այսինքն՝ բաժինք փեսային: Դարձեալ՝ զայն ցուցանէ, թէ յայնմ գեղ բնակեալ կային երկոքին քորքն՝ Մարիամ եւ Մարթա, ուր հիւանդ կայր Ղազարու՝ եղբայր նոցա, եւ չէր ըստ հասարակ հիւանդաց, այլ անբուժելի ախտիւ ըմբռնեալ:

### Վասն մարիամանց եւ աւծանող կանանց

Բան. «Այս այն Մարիամ էր, որ աւծ զՏէրն իւղով եւ ջնջեաց զոտս նորա հերով իւրով» (Յովի. ԺԱ 2):

**Մեկնութիւն.** Բազում կանայք կոչէին Մարիամ, վասն այն զանազանէ զսա յայլոցն, զի վեց Մարիամ յիշէ Աւետարանն. նախ՝ Աստուածածին կոյսն: Երկրորդ. Մարիամ Կղէովպայն, որ էր մաւրաքոյր Տիրամաւրն: Երրորդ. Մարիամ Յակովբայ փոքր-կանն եւ Սիմոնի մայրն, որ էր կինն Յովսէփայ: Զորրորդ. քոյրն Ղազարու: Հինգերորդ եւ վեցերորդ՝ Մարիամ մագդաղենացիքն:

Իսկ աւծանելն զՔրիստոս չորս ինչ ցուցանէ. նախ՝ զկատարեալ սէրն, որ ունէր առ Քրիստոս: Երկրորդ. անհամեմատ երախտեացն չնորհակալ լինէր: Երրորդ. խոնարհութեամբ երկիր պագանէր՝ զգլուխն եղեալ ի վերայ գարշապարին: Զորրորդ. զի քան զամենայն արտաքին հանդերձս պատուական էր հերն ի գլխոյն աճեալ:

Բայց տարակոյս է ի մէջ ամենայն ազգաց վարդապետաց, վասն աւծանող կանանց չորս կերպիւ. նախ՝ զի ոմանք յառաջին վարդապետացն երեքն ասեն աւծանող Քրիստոսի՝ այլ եւ այլ կանայս. այլ զՄատթէոսին եւ այլ՝ զՄարկոսին, քանզի նոքա երկու աւուրբ յառաջ ասացին քան զԶատիկն լինել, եւ այլ զՅոհան-

<sup>1</sup> Ա Յ Մարիամու

նուն, զի վեց աւուրբ յառաջ էր, եւ այլ զ Ղուկասուն, վասն զի յառաջ էր ժամանակաւ եւ կին պոռնիկ:

Երկրորդ. ոմանք ասեն, որպէս Ոսկեբերանն. «Երկու, ~ ասեն, ~ լինել զկանայսն, այլ զերեք աւետարանչացն, որ ի տունն Սիմոնի, եւ այլ զ Յոհաննուն ասէ, զի սա կին պարկեշտ, եւ այն՝ մեղաւոր»:

Երրորդ. ոմանք, որպէս Իգնատիոս վարդապետն Հայոց ազգիս մեր, ընդդիմանայ այսմ կերպիւ ինչ. «Զի այն, որ Մատթէոս եւ Մարկոս եւ Յոհաննէս ասեն, մի' է, ~ ասէ, ~ վասն ժամանակին եւ խաւսից երիցն, եւ այլ ասէ զ Ղուկասուն վասն չորից. նախ՝ զի ի տան փարիսեցւոյն, երկրորդ՝ կին պոռնիկ, երրորդ՝ ոչ մերձ ի չարչարանս, չորրորդ՝ ոմանք<sup>1</sup>, որպէս լատինացիք, «մի» ասեն աւծանող, զոր չորեքին յիշեն, բայց երկու անդամ. մին այն, զոր Ղուկաս յիշէ եւ այժմ ասեն, թէ Յոհան<sup>2</sup> ցոյց տայ աւծմանն առաջնոյ, որ մեղաւքն թողաւ եւ երկու անդամ էաւծ նոյն Մարիամ՝ քոյրն Հագարու, մերձ ի չարչարանս շնորհամատոյց լինէր վասն յարութեան եղբաւըն»:

Բան. «Առաքեցին առ նա քորքն» (Յովի. ԺԱ 3):

ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ. Եւ ընդէ՞ր ոչ ինքեանք գնացին, որպէս Հարիւրապետն եւ թագաւորազն:

Ասեմք վասն երեք պատճառի. նախ՝ վասն ջերմեռանդ ընդունելութեան: Երկրորդ. զի ոչ էր աւրէն սգաւոր կանանց ի գուրս ելանել, զի թէպէտ չէր մեռեալ, այլ ի մահ էր<sup>3</sup> խոնարհեալ: Երրորդ. զի ոչ էին ամենեւին կատարեալ ի հաւատս, որպէս եւ ոչ առաքեալքն նախ քան զիջումն Հոգւոյն Սրբոյ:

Բան. «Չոր դուն սիրէիր, հիւանդացեալ է» (Յովի. ԺԱ 3):

ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ. Վասն է՞ր ոչ աղաչեն գալ Քրիստոսի:

Ասեմք վասն երեք պատճառի. նախ՝ վասն մեծութեան պատոյն, ոչ հարկիւ ասեն, թէ՝ եկ, այլ զգացուցանեն: Երկրորդ. զի մի եւ նոքա լինիցին պատճառք յարութեան, այլ կամքն Քրիստոսի: Երրորդ պատճառ. զի ոչ է պարտ զբարեկամն աղաչել, այլ միայն յուշ ածել զբանն: Եւ տե՛ս զիմաստութիւն նոցա, զի սիրովն Քրիստոսի զնա ի գութ շարժեն:

### Վասն Հիւանդութեան

Եւ աստ լինի չորս Հարց. առաջին՝ զի՞նչ է Հիւանդութիւն:

<sup>1</sup> A B չորրորդ՝ զի այլ էր պատասխանին Քրիստոսի: Չորրորդ. ոմանք

<sup>2</sup> A Յովիան

<sup>3</sup> A B չեք

Պատասխան. Սահման դնեն վարդապետք, եթէ հիւանդութիւն է անչափութիւն տարերաց: Եւ յայտ է, որպէս չափաւորն առողջութիւն է, նոյնպէս անչափն՝ հիւանդութիւն: Դարձեալ՝ հիւանդութիւն է նուազութիւն առողջութեան, որպէս առողջութիւն նուազութիւն է հիւանդութեան: Եւ գարձեալ՝ հիւանդութիւն է փոփոխումն որակութեան, եւ այս նոյն է, զի առողջութիւն եւ հիւանդութիւն որակութիւնք են փոփոխականք:

Երկրորդ հարց. Քանի՞ է յեղանակ<sup>1</sup> հիւանդութեան:

Պատասխան. Կրկին, այսինքն՝ հոգեւոր եւ մարմնաւոր: Հոգեւոր, որպէս մեղք, զի ասէ Դաւիթ. «Ողորմեա' ինձ Տէր, զի հիւանդ եմ ես» (Սաղմ. Զ 3), եւ մարմնաւոր ցաւք մարմնոյն զանազան, որպէս ցուցաւ ի մեկնութիւն Մատթէոսի Երկրորդ հատորն երրորդ համարն<sup>շիլի</sup>:

Երրորդ հարց. Զի՞նչ է պատճառ հիւանդութեան:

Պատասխան. Չորս ինչ. նախ՝ ներքին խառնուած որակացն՝ յաւելուած եւ պակասութիւն: Երկրորդ. արտաքին տարերց ստահակութիւն: Երրորդ. յղփութիւն կերակրոց եւ կամ նուազութիւն: Չորրորդ. նախախնամութիւն Աստուծոյ, որ տայ ոմանց հիւանդութիւն:

Չորրորդ հարց. Վասն է՞ր նախ հիւանդութիւն է եւ ապամահ:

Պատասխան. Վասն չորս պատճառի. նախ՝ զի հիւանդութիւն է ի մէջ մահու եւ կենաց, որպէս կամուրջն ի վերայ եզերաց գետոյն: Երկրորդ. զի հիւանդութիւն է նշան եւ կարապետ մահու, զի պատրաստեցուք զմեզ, որպէս ալիքն ծերութեան է նշան եւ ձիւն՝ ձմերան: Երրորդ. հիւանդութիւն ի ներքս եմուտ ընդ մեղացն եւ է առհաւատչեայ տանջանաց: Չորրորդ. հիւանդութիւն զառողջութիւն<sup>3</sup> քակտէ, եւ մահն՝ զկեանքն, զի որոշման հոգւոյն թմրութիւն առնէ:

Ապա զկնի ճառէ զպատախանին Քրիստոսի:

Բան. «Իբրեւ լուաւ Յիսուս, ասէ. “Այն հիւանդութիւն չէ ի մահ”» (Յովհ. Ժ 4):

Մեկնութիւն. Քրիստոս ասաց զայս առ այրն, որ առաքեալ էին եւ միջնորդութեամբ նորա ասաց<sup>5</sup> առաքողացն զնա: Եւ վասն այսմ բանի ժպրհեցան ոմանք, թէ Ղազարոս ոչ մեռաւ:

<sup>1</sup> Ե եղանակ

<sup>2</sup> A B չեք են ես

<sup>3</sup> A B զարողըն

<sup>4</sup> A B չեք չէ ի մահ

<sup>5</sup> C եւ ասաց

**Եւ չորս է իմացումն բանիս. նախ՝ պարտ է իմանալ, որ ասէ.** «Այն իիւանդութիւն չէ ի մահ», այսինքն՝ ոչ է ի մահ, որ մնայ մինչ ի հասարակաց յարութիւն, այլ վերաբերի մինչ ի սքանչելի յարութիւն:

**Երկրորդ. որպէս վասն կուրին ասաց.** «Ոչ դորա եւ ոչ հաւը եւ մաւը իւրոյ վնաս է, այլ վասն փառացն Աստուծոյ» (տես Յովի. թ 3), **նոյնպէս եւ աստ ասէ մահն Ղազարու վասն փառացն Աստուծոյ է՝ Հաւը եւ Որդւոյ նորա:**

**Երրորդ. ասէ Ոսկեբերանն.** «Զի՞ ոչ ցուցանէ զպատճառ հիւանդութեան, այլ պատահումն, զի Քրիստոս ոչ հիւանդացոյց զնա, զի յետոյ յարուցէ, այլ ի բնական ախտիցն հիւանդացաւ եւ մեռաւ, իսկ Քրիստոս զհիւանդութիւն զայն ի փառս Աստուծոյ կարգեաց յարութեամբն»:

**Չորրորդ.** ասեն ոմանք, թէ հիւանդութիւն այն կրկին կարգ ունէր. մին բնական, ըստ ինքեան յատուկ պատճառաւաւն, եւ այնպէս կարգեալ էր առ ի մահ, եւ միւս սահման ունէր արտաքոյ բնութեան կարգի՝ ի թոյլ տալոյ կամացն Աստուծոյ առ ի յայտնել զկարողութիւն եւ զփառսն Աստուծոյ: Եւ կամք աստ ոչ ասեմ զպատճառ ներգործական կամացն, այլ զթոյլտութեան կամսն, քանզի թոյլ ետ նմա հիւանդանալ եւ մեռանիլ:

**Դարձեալ՝ որպէս ասէ մեկնիչդ<sup>cxlvi</sup>.** վասն փառացն Աստուծոյ չորս իմն ցուցանէ. նախ՝ զԴայր ասէ եւ ապա զՈրդի (հնմտ. Յովի. ԺԱ 4), վասն համոզելոյ զչար նախանձ հրէիցն, որք հակառակ կարծին, որպէս եւ ի<sup>1</sup> գերեզմանն նախ աղաւթեաց առ Հայր եւ ապա յարոյց (հնմտ. Յովի. ԺԱ 41-42): **Երկրորդ.** զի գործակից եւ փառակից Հաւը ցուցանէ զՈրդին: **Երրորդ.** զի վասն յարութեան համբաւոյ ծերքն եւ տղայքն աւրհնութիւնս երգէին: **Չորրորդ.** որպէս ի խաչին եղեն մեծամեծ սքանչելիք վկայք Աստուածութեան Քրիստոսի, նոյնպէս մի ի մեծ սքանչելեացն էր, այո՛, ի վկայութիւն փառացն Աստուծոյ:

Բան. «Եւ սիրեր Յիսոսս զՄարիամ եւ զՄարթայ» (Յովի. ԺԱ 5):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** **Ըստ Ոսկեբերանին,** զի փոյթ էին, այսինքն՝ առաքինիք եւ ջերմ ի սէրն Քրիստոսի, յաւրինակ, զի որք սիրեն զՔրիստոս, սիրին եւ նոքա ի Քրիստոսէ, որպէս ասէ Սողոմոն. «Ես, որք սիրենն զիս, սիրեմ» (տես Առակ. Ը 17), իսկ այլք ասեն, թէ Հայր սոցա դահճապետ էր եւ վասն փախստեայ կալանաւորի ումեմն թագաւորն զամենայն ինչս նորա յափշտակեաց, իսկ Հայրն առեալ զնոսա գնաց յեգիպտոս ի քաղաք մի Լիկոպաւլիս անուն:

<sup>1</sup> Ե չեք

Նոյն եւ Յովսէփի եւ Մարիամ հանդերձ մանկամբն փախեալ ի Հերովդէէ անդ բնակեցան ի միասին եւ ընդ ելք էին եւ սննդակից միմեանց<sup>cxliv</sup>:

Բան. «Իբրեւ լուաւ<sup>1</sup>,թէ հիւանդացեալ է» (Յովի. ԺԱ 6):

**ՄԵԿԱՆՈՒԹԻՒՆ.** ՅԵԿԵԼՈՂՆ ԼՈՒԱԼ:

Բան. «Զտեղի կալաւ [անդէն], ուր էրմ<sup>2</sup>» (Յովի. ԺԱ 6):

**ՄԵԿԱՆՈՒԹԻՒՆ.** Յայն կոյս Յորդանանու էր, ուր զառաջինն մկրտէր Յովհաննէս: Եւ յամեաց երկու աւր. նախ՝ զի ցուցցէ, թէ կամաւ եւ գիտութեամբ յամեաց: Երկրորդ. զի համբաւեսցի մահ նորա, թէ ստուգապէս մեռաւ եւ թաղեցաւ: Երրորդ. զի մի ուրասցին հրէայքն եւ կամ կախարդութեամբ կարծեսցեն: Զորրորդ. զի չորեքաւրեայ լիցի յարութիւն:

Զկնի ճառէ զ Ղազարու մահուն զյայտնութիւն:

Բան. «Ապա յետ այնորիկ ասէ ցնոսա» (Յովի. ԺԱ 7):

**ՄԵԿԱՆՈՒԹԻՒՆ.** Աստ երեք իր ցուցանէ. նախ՝ Քրիստոս զկամս իւր յայտնէ երթալոյ ի Հրէաստան: Երկրորդ. զպատճառն ասէ, անդ. «Զայս իբրեւ ասաց» (Յովի. ԺԱ 11): Երրորդ. ի տեղին հասանէ, անդ. «Եկն Յիսուս, եգիտ զնա» (Յովի. ԺԱ 17): Վասն առաջնոյն ասէ. «Ապա յետ այնորիկ» (Յովի. ԺԱ 7), այսինքն՝ զկնի երկուց աւուրցն:

Բան. «Եկայք երթիցուք [միւսանգամ] ի Յրէաստան» (Յովի. ԺԱ 7):

**ՄԵԿԱՆՈՒԹԻՒՆ.** Գիտելի է, զի չորս բանիւ կամի Քրիստոս զերկիւղ աշակերտացն ցուցանել, այլ եւ զկամկածն բառնալ ի նոցանէ. նախ՝ որ ասէ. «Երթիցուք ի Յրէաստան», երկրորդ. «Որ զնայ ի տունջեան» (հմնտ. Յովի. ԺԱ 9), երրորդ. «Պազարոս ննջեաց» (հմնտ. Յովի. ԺԱ 11), չորրորդ. «Պազարոս մեռաւ, եւ ես ուրախ եմ [վասն ձեր]» (Յովի. ԺԱ 15):

**Եւ զառաջինն ասէ.** «Եկայք երթիցուք ի Յրէաստան» (տես Յովի. ԺԱ 7):

Հարց. Վասն է՞ր այժմ զտեղին ասէ, զի ոչ ասէր յամենայն ժամ, ուր եւ երթային:

Պատասխան. Վասն չորից. նախ՝ զի մի յափշեալ ինչ կարծեսցեն զՔրիստոսէ վասն վաղվաղակի դառնալոյն անդրէն, այլ զպատճառն իմասցին: Երկրորդ. զի զերկիւղ նոցա փարատեսցէ, զի որ մահացելոյն կեանս տամ, կարող եմ զկենդանիքս ի բռնութենէ հրէիցն զերծուցանել: Երրորդ. զոր դուք կարծէք քարկոծող ինձ, նոքա լինելոց են քարոզող ինձ եւ վկայ՝ աւետարանչիս, թէ՝ «Բազումք հաւատացին ի նա» (Յովի. Բ 23): Զորրորդ. յիշէ զՀրէաստան

<sup>1</sup> Ա Բ լուաւ Յիսուս

<sup>2</sup> Ա Բ էր

քան զԲեթանիայ, զի հաստատուն եւ արի կազմեսցէ զնոսա, զի ասեն վարդապետք, թէ փոքր ինչ վնասեն որոգայթք յառաջագետակ լեալք:

Ապա յայտնեն աշակերտքն զերկիւղն<sup>1</sup> իւրեանց.

Բան. «Այժմ եւս խնդրեին<sup>2</sup> զքեզ [իրեայքն] քարկոծ առնել<sup>3</sup>» (Յովի. ԺԱ 8):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ.** Ասեն զայս վասն կասկածանաց եւ երկիւղի, իբր թէ երթալ ի Հրէաստան ոչ է բարւոք Քեզ եւ մեզ, եւ յիշեն զքարկոծումն, որ անցեալ<sup>4</sup> ճառին ասացաւ, թէ՝ «Դու նարդ ես եւ զանձն քո Աստուած [առնես]» (Յովի. Ժ 33): Դարձեալ՝ բառնայ զերկիւղ նոցա:

Բան. «Ո՞չ երկոտասան ժամ է յաւուր» (Յովի. ԺԱ 9):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ<sup>5</sup>.** Նախ ասէ. «Թէպէտ յամենայն ժամ կամէին զիս քարկոծ առնել, սակայն այժմ ոչ առնեն, զի ըստ փոփոխման ժամանակի կարէ փոփոխիլ մարդկային կամք»: Երկրորդ. ասէ, զի մի երկիցեն, որպէս գիշերային ժամն լոյսն պակասէ եւ որոգայթն ոչ տեսանի, վասն այն երկնչի, իսկ տիւն գիշերին է տեսանել զորոգայթն եւ զգուշանալ, ոյոյնպէս՝ «Լոյս եմ աշխարհի (հմմտ. Յովի. Ժ 12), ոչ է պարտ ձեզ երկնչել, որովհետեւ ընդ իս կայք», – որպէս ասէ.

Բան. «Եթէ ոք գնայ ի տուրնջեսան, ոչ գայթակղի» (Յովի. ԺԱ 9):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ.** Այսինքն՝ ո՛չ գթի, ո՛չ վնասի եւ ո՛չ երկնչի: Սուրբ Գիրք զՔրիստոս արեգակ արդարութեան կոչեն, զի որպէս զգալի արեգակնս մերձ լինել տիւ առնէ, սոյնպէս գալուստն Քրիստոսի յաշխարհս զտիւ շնորհաց արար, եւ առաքեալքն ի լոյս շնորհացն<sup>6</sup> ընթանային հաւատով եւ վարուք, վասն այն ոչ է պարտ երկնչել: Տե՛ս, զի լոյսն ի Քրիստոսէ առ մեզ ճառագայթեալ հաւատքն է եւ սուրբ վարքն:

Բան. «Եւ որ գնայ ի գիշերի, գայթակղի» (Յովի. ԺԱ 10):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ.** Նախ քան զգալն Քրիստոսի խաւար մեղաց էր եւ անհաւատութեան, եւ այժմ որք չունին զհաւատն Քրիստոսի, ի խաւարի են: Աստուած ցուցանէ Քրիստոս՝ որքան ինքն յաշխարհի էր, աշակերտացն ոչ լինէր մեծ հալածումն, բայց յետոյ

<sup>1</sup> Ըերկիւղս

<sup>2</sup> Ը խնդրեն

<sup>3</sup> Ա Բ չիք

<sup>4</sup> Ա յանցեալ

<sup>5</sup> Բ չիք

<sup>6</sup> Ա Բ շնորհաց

լինելոց էր, եւ<sup>1</sup> յայտ է, յորժամ Քրիստոս ըմբռնեցաւ, զաշակերտքն փրկեաց՝ ասելով. «Թէ զիս խնդրէք, թոյլ տուք դոցա երթալ» (տես Յովհ. ԺԸ 8), բայց զկնի մահուանն Քրիստոսի<sup>2</sup> միշտ ի հալածանս կացին ի հրէից եւ ի հեթանոսաց, որպէս երկոքին Յակոբոսքն սպանին եւ այլքն ցրուեցան<sup>cxlv</sup>:

Հարց. Ընդէ՞ր յիշէ Քրիստոս երկոտասան ժամ աւուրս<sup>3</sup>, զի բաւական էր ասել՝ մի՛ երկնչիք, այժմ տիւ է:

Պատասխան. Վասն չորս պատճառի. նախ<sup>4</sup> աւր կոչէ զինքն եւ ժամք՝ զերկոտասան առաքեալքն, զի նոքաւք լուսաւորեաց զմեզ:

Երկրորդ. միտք, որպէս աւրն ոչ մթանայ մինչեւ կատարին երկոտասան ժամքն, սոյնպէս եւ ես ոչ վերանամ յաշխարհէ մահուամք մինչ ի կէտ ժամանակին, որ հաստատեալ է եւ դեռեւս կայ ժամ մի կամ կէս, որպէս աւուրն, թէպէտ երիկուն կոչի:

Երրորդ. միտք ցուցանէ, թէ ամենայն ընթացք եկեղեցւոյ երկոտասան թուով կատարի<sup>5</sup>:

Եւ այս վեց կերպիւ է. նախ՝ երկոտասանք էին առաքեալքն: Երկրորդ. երկոտասան ազգ հաւատացելոց: Երրորդ. երկոտասան աստիճանք հաւատոյն: Չորրորդ. երկոտասան գիր է աստուածային<sup>6</sup> առաքինութեանց, այսինքն՝ հաւատ, յոյս, սէր: Հինգերորդ. երկոտասան գիր երեք անձանցն, որ է՝ Զայր, Որդի, Չորդի: Վեցերորդ. երկոտասան գիր միոյ բնութեան, այսինքն՝ Երրորդութիւն:

Չորրորդ միտք, որպէս ասէ մեկնիչդ<sup>7</sup>, զի աւրն պատկեր է տարւոյն վեց կերպիւ. նախ՝ զի աւր եւ տարի յարեգակնէ կատարի, որպէս ամիս՝ ի լուսնէ, եւ շաբաթ՝ ի մոլորակաց: Երկրորդ. որպէս աւրն չորս ժամք փոխին<sup>8</sup>, եւ տարին՝ չորս եղանակ<sup>9</sup>: Երրորդ. որպէս աւրն՝ երկոտասան ժամք<sup>9</sup>, եւ տարին՝ երկոտասան ամիսք: Չորրորդ. որպէս ժամն երեսուն մասն է<sup>10</sup>, եւ ամիսն՝ երեսուն աւր: Հինգերորդ. որպէս աւրն երեք հարիւր վաթսունհինգ մասն է, եւ տարին երեք հարիւր վաթսունհինգ աւր է: Վեցերորդ. որպէս աւրն թէպէտ յաւելու եւ նուազէ, այլ բոլոր սահմանն երկոտա-

<sup>1</sup> B չիք

<sup>2</sup> A B չիք

<sup>3</sup> A B աւուր

<sup>4</sup> C առաջին

<sup>5</sup> C կատարին

<sup>6</sup> B այսինքն՝ աստուածային

<sup>7</sup> B չիք

<sup>8</sup> A յեղանակ

<sup>9</sup> B չիք չորս յեղանակ: Երրորդ. որպէս աւրն երկոտասան ժամք

<sup>10</sup> C չիք է

սան ժամ է, սոյնպէս եւ տարին թէպէտ շարժի, այլ բոլոր սահմանն երկոտասան ամիս է առանց յաւելուածոյ եւ պակասութեան, եւ դիւրին է այս, որ ոք կամի առ Քրիստոս տեսանել խորհրդաբար:

Արդ, յորժամ երարձ զպատճառ երկիւղի աշակերտացն, այժմ ասէ զպատճառ երթալոյն ի Հրէաստան վասն յարուցանելոյ զ Ղազարոս:

Բան. «Ղազարոս՝ բարեկան մեր, ննջեաց» (Յովի. ԺԱ 11):

Մեկնութիւն. Զորս իր ցուցանէ<sup>1</sup>. նախ՝ զերկիւղն բառնայ յաշակերտացն՝ ասելով. «Ո՛չ յերուսաղէմ եւ ո՛չ ի Հրէաստան երթամ, այլ ի Բեթանիայ, եւ ոչ ի տրամաբանել, այլ ի կեցուցանել»:

Երկրորդ. բարեկամ ասէ զ Ղազար իբրեւ եղական սիրեցեալ եւ սիրող, ապա հարկ է գնալն:

Երրորդ. զայս ասաց յառաջագոյն, զի յորժամ յարուսցէ, իմասցին, թէ գիտէր կանիսաւ:

Զորրորդ. զմահն Ղազարու նինջ կոչէ վասն երեք պատճառի. նախ՝ զի շուտ յառնելոց էր: Երկրորդ. զարթուցից ասէ, զի դիւրին է Քրիստոսի մեռեալ մի յարուցանել, քան մարդոյ զայլ ոմն ի քնոյ զարթուցանել: Երրորդ պատճառ. զի հոմանունք են, զի սոյնպէս սահմանին սոքա. «Մահ է քուն յաւիտենական, եւ քուն է մահ ժամանակեայ: Բայց առաքեալքն ոչ մնացին առանց երկիւղի եւ ոչ կամէին, թէ Քրիստոս անդ երթայ, որպէս ասեն.

Բան. «Տէ՛ր, եթէ ննջեաց, ապա ապրի» (Յովի. ԺԱ 12):

Մեկնութիւն. Ապա կամ նախդիր բառ է կամ «յետոյ» լսի:

Եւ չորս է իմացումն. նախ՝ եթէ ննջեաց, ապա զարթչի<sup>2</sup> եւ յառնէ, եւ ոչ է մեզ ճեպել անդ վասն զարթուցանելոյ զնա: Եւ զայս ասէին, զի կարճեացեն զգնալն: Երկրորդ. ըստ Ոսկէբերանին քուն հիւանդաց նշան է մարմնոյ առողջութեան նոցա եւ ոչ է պարտ երթալ եւ զարթուցանել զնա: Երրորդ. մարգարէաբար ասեն, թէ ննջեաց ի մահ, ապրի յարութեամբն: Զորրորդ. ի հասարակ յարութիւն է, զի նախ մեռանին եւ ապա յառնեն, որպէս ասէ Պաւոս յառաջին Կորնթացիս. «Դու զոր սերմանես, ոչ բուսանի, եթէ ոչ նախ<sup>3</sup> մեռանի» (տես Ա Կորնթ. ԺԵ 36):

Բան. «Նոցա այսպէս թուեցաւ, թէ վասն ննջելոյ քնոյ<sup>4</sup> ասէ<sup>5</sup>» (Յովի. ԺԱ 13):

<sup>1</sup> Ծ ցուցանէ բանս

<sup>2</sup> Ծ ապա ապրի, զարթչի

<sup>3</sup> Ե ոչ նախ

<sup>4</sup> Ե քնոյն

<sup>5</sup> Ա չիք քնոյ ասէ

Մեկնութիւն. Բակերերանն ասէ. «Մեծ յիմարութիւն է կարծել, թէ զայսքան ճանապարհս տանի վասն ի քնոյ զարթուցանելոյ զոմն», այլ ոմանք ասեն, թէ առակ իմացան զբանն Քրիստոսի, զի սովոր էր առակաւ խաւսիլ, վասն այն ոչ գիտացին, թէ որպիսի<sup>1</sup> մտաւք ասէր, զի զարթուցից զնա: Իսկ այլք ասեն, զի նինջս զայս<sup>2</sup> թմրութիւն կարծեցին, որպէս յաւուրս Երեմիայի գերութեամբն իսրայէլի, եւ որպէս յետոյ մանկանցն Եփեսոսի: Բայց մեք ասեմք, թէ թանձրամիտք էին յայնժամ առաքեալքն եւ յոյժ Երկնչէին, վասն որոյ թիւր իմացան զբանն Քրիստոսի:

Զկնի յայտնապէս ցուցանէ զմեռանելն Ղազարու.

Բան. «Ղազարոս նեռաւ, եւ ես ուրախ եմ վասն ձեր» (Յովհ. ԺԱ 15):

Մեկնութիւն. Եւ այս եւս զերկիւղն նոցա բառնայ, որպէս թէ<sup>3</sup> դուք մի՛ Երկնչէք, Երթամք անդ յարուցանել զնա<sup>3</sup>:

Եւ կրկին է ուրախութիւն աստ. նախ՝ ուրախ էր ի մահն Ղազարու ոչ ըստ ինքեան, այլ վասն առաքելոցն, զի հաստատեսցին ի հաւատու: Երկրորդ. ուրախ էր, զի չէր անդ, նախ՝ զի մի կարծեսցեն առ աչաւք եւ խաբէութեամբ ինչ լինել: Երրորդ. զի թէ անդ էր լեալ, ոչ էր մահացեալ Ղազար եւ ոչ յարուցեալ, զի անպատշաճ էր մերձ յաղբերն կենաց իշխել մահու: Եւ չէր անդ, զմարմնոյն ասէ, այլ Աստուածութեամբն յամենայն տեղիս է Քրիստոս: Տե՛ս, զի յորժամ զնինջն յիշեաց, ասաց, թէ զարթուցանեմ, իսկ յորժամ ասաց, թէ մեռաւ, ո՛չ ասաց, թէ յարուցանեմ՝ աւրինակտալով, զի մի նախքան զգործն մեծաբանեսցուք:

Այժմ ճառէ զպատասխանին միոյ առաքելոյն:

Բան. «Ասէ Թովմաս՝ անուանեալն Երկուորեակ» (Յովհ. ԺԱ 16):

Մեկնութիւն. Այսինքն՝ Երկու եղբարք ի միասին էին<sup>4</sup> ծնեալք՝ թովմաս եւ զՓիլիպպոս<sup>5</sup> ասեն:

Բան. «Ա՛ւն Եկայք» (Յովհ. ԺԱ 16):

Մեկնութիւն. «Ա՛ւն» բառն Երբեմն նախդիր է, որ ոչինչ նշանակէ, որպէս աստ, զի բառ է Երկրի, որպէս սեբաստացիք<sup>6</sup> «կա՛ձ» ասեն եւ Կարնոյ քաղաքացիքն «տի՛», արճիշեցիք՝ «անէ՛», իսկ բզնունիք, որ է խլաթցիք<sup>7</sup>, «ա՛ւն» ասեն ամենայն բանի, իսկ Եր-

<sup>1</sup> Ը ասեն զմինջս այս

<sup>2</sup> Ե եւ

<sup>3</sup> Ը չիք եւ այս եւս ... յարուցանել զնա

<sup>4</sup> Ա Ե ին ի միասին

<sup>5</sup> Ե Փիլիպպոս

<sup>6</sup> Ը սեբաստացիքն

<sup>7</sup> Ե խլաթցիք

բեմն մի լսի աւնն, որպէս՝ ա՛ւն եւ ա՛ւն արասցէ ինձ Տէր, այսինքն՝ մի՛ եւ մի՛:

Բան. «Եկայք, զի եւ մեք ընդ ննա մեօցուք» (Յովի. ԺԱ 16):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Այսինքն՝ ընդ Ղազարու կամ ընդ Քրիստոսի:  
Հստ Ոսկեբերանին երկմտութեան եւ թերութեան է խաւսք, իբր թէ Ղազար մեռաւ, զմեզ այլ տայ սպանանել հրէիցն: Իսկ ոմանք ասեն, թէ ակնառութեան է բանս, իբր թէ յորդորէ զաշակերտակիցսն ի սոյն, որպէս ասել. «Լաւ է մեզ ընդ Քրիստոսի մեռանել, քան առանց նորա ապրել»: Այլ Ոսկեբերանին է ճշմարիտ. նախ՝ զի երկիւղն, զոր ունէին առաքեալքն, որ ասէին. «Ռաբբի, այժմ եւս խնդրէին<sup>1</sup> [իրէայքն] զքեզ քարկոծ առնել» (Յովի. ԺԱ 8), դեռեւս չէր բարձեալ ի սրտէն թովմայի<sup>2</sup>:

Երկրորդ. զի եւ թովմաս զյարութիւն Քրիստոսի դժուար հաւատաց, քան զայլ առաքեալսն եւ համարձակութիւն էր այս նմա. նախ՝ զի ընդ նմա միայն չասաց Քրիստոս: Երկրորդ. զի այլ ծերագոյն եւ սիրելի աշակերտք էին, յառաջեաց քան զնոսա:

**Հարց.** Ապա ընդէ՞ր ոչ յանդիմանեաց Քրիստոս:

Պատասխան. Նախ՝ զի առաջին վանդն հրաւիրէր երթալ, թէպէտ վերջինն երկիւղի էր: Երկրորդ. զի յետոյ քան զամենեսեան գերագոյն լինելոց էր: Եւ տե՛ս զմեծ զաւրութիւն խաչին, զի որ այժմ ընդ Քրիստոսի ի Բեթանիայ<sup>3</sup> երկնչի երթալ, յետ խաչին յամենայն տեղիս միայն ընթանայր քարոզել զՔրիստոս ի մէջ սպանողացն:

### Վասն չորք աւուրն

Բան. «Եկն Յիսուս. Եգիտ<sup>4</sup> զնա չորեքաւրեայ ի [գերեզմանի]» (Յովի. ԺԱ 17):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Եւ զի ասացաւ ի վերոյ, եթէ գթութեամբն ցուցանի, զի Քրիստոս Աստուած է: Եւ է առաջին գթութիւն<sup>5</sup> այս, որ վասն Ղազարու եկն ի Բեթանիայ: Ցորժամ ասէ եկն, ո՛չ ի գերեզմանն գալ ասէ եւ ո՛չ ի Բեթանիայ, այլ մերձ եղեւ: Եւ յորժամ ասէ՝ Եգիտ, ո՛չ եթէ չոգաւ ի գերեզմանն, այլ յայլոց պատմութենէ լուաւ, թէ չորք աւր է, զի մեռաւ, թէպէտ այլ կերպիւ զսոյն գիտէ:

<sup>1</sup> Ը խնդրեն

<sup>2</sup> Ը թումայի

<sup>3</sup> Ը Բեթանիա

<sup>4</sup> Ը եւ Եգիտ

<sup>5</sup> Յ գթութիւնս

*Եւ աստ լինի կրկին հարց.*

*Հարց առաջին<sup>1</sup>. Թէ որպէ՞ս է չորեքաւրեայ:*

Պատասխան. Նախ՝ ոմանք ասեն, թէ<sup>2</sup> սոյնպէս թուին չորք աւր, յորժամ հրաւիրակքն եկին առ Քրիստոս երկու աւր անդ մնացին եւ զկնի արձակելոյն զնոսս երկուս եւս աւրս անդէն մնաց: Եւ այս սուտ է եւ ընդգէմ Աւետարանին, զի թէ սոյնպէս էր, պարտ էր ասել, թէ չորս աւր զտեղի էառ Յիսուս<sup>3</sup>: Երկրորդ. ոմանք ասեն, որպէս մեկնիչդ<sup>4cxlvii</sup>, թէ երկու աւր անդէն մնաց ի վերայ մահուանն Ղազարու եւ երկաւրեայ ճանապարհն, եւ յորժամ եկն, չորեքաւրեայ էր: Երրորդ. ոմանք ասեն, թէ այրն, որ առաքեցին ի տանէն, յորժամ զմին մասն աւուրն կատարեաց, մեռաւ Ղազար, եւ զկնի այնմ Քրիստոս երկու աւր եկաց ի տեղին, ուր կայր եւ ապա ի չորրորդ աւրն գնաց ի Բեթանիայ: Թէ կատարեալ էր աւրն եւ թէ յեւթներորդ ժամն եհաս եւ յարոյց, վասն այն ի Ղազարու տաւնին յեւթներորդ ժամ աւուրն Պատարագ մատչի, զի ի նմին ժամու յարոյց զ Ղազար: Եւ պատշաճ էր մեռանելն Ղազարու նախքան զհասանել հրաւիրակին առ Քրիստոս եւ յառաջ քան զպատմելն զհիւանդութիւն Ղազարու, զի թէ Քրիստոս<sup>5</sup> լուեալ էր զհիւանդութիւն Ղազարու եւ զաղաչանս քերցն, կարէին ասել անկարող կամ անգութ զՔրիստոս, թէ չէր գնացեալ մինչ կենդանին էր Ղազարոս, իսկ յորժամ մեռեալ էր, սոյնպիսի կարծիք ոչ անկանի ի սիրտ մարդկան:

*Այս առաջին հարց:*

*Երկրորդ հարց. Վասն է՞ր չորեքաւրեայ յարոյց:*

Պատասխան. Նախ՝ ասեն ոմանք, եթէ ցաւ ինչ կայ, որ այժմ սխալախ կոչեն, որ թուի, թէ մեռաւ, սակայն մինչ ի չորրորդ աւրն ոչ մեռանի, վասն այն չորեքաւրեայ յարոյց, զի թէ կենդանի եւս եղեալ էր անդ, յայսչափ աւուրս մեռեալ լինէր: Դարձեալ՝ ի կէտ բաժանման հոգւոյն մարմինն շարժի<sup>6</sup> յապականութիւն, այլ ի չորրորդ աւրն բոլոր լուծանին եւ քակտին տարերք, որպէս ասեն քորքն. «Դոտեալ է, քանզի չորեքաւրեայ է» (հնմտ. Յովի. ԺԱ 39):

*Դարձեալ ասէ մեկնիչդ չորս պատճառ<sup>7cxlvii</sup>. Նախ՝ ընդգէմ կարծեաց մխտողացն, որք առ աչաւք եւ կախարդութեամք եւ դի-*

<sup>1</sup> Ը Առաջինն

<sup>2</sup> Ը Եթե

<sup>3</sup> Ը Քրիստոս

<sup>4</sup> Ը ասեն ոմանք մեկնիչդ

<sup>5</sup> Ը Եթե

<sup>6</sup> Ը շարժի մարմինն

<sup>7</sup> Ը կերպիւ

ւական ասէին, զի սոքա ի նոյն ժամն ձեւանան եւ ոչ ի հարիւր ժամս: Երկրորդ. զի հրաշքն մեծ եւ յայտնի լիցի: Երրորդ. զի գործող նշանին հգաւրագոյն ցուցցի: Չորրորդ. զի աւգտակար հաւատացելոցն լիցի:

### Վասն ասպարիզաց

Բան. «Եւ էր Բեթանիայ մերձ յԵրուսաղէմ հնգետասան ասպարիզաւը» (Յովհ. ԺԱ 18:19):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Վասն կրկին պատճառի զայս ասէ. նախ՝ զհեռաւորութիւն տեղւոյն<sup>1</sup> ցուցանէ երկու աւուր ճանապարհ գոլ յայնկոյս Յորդանանու, ուր էր նախ: Երկրորդ. զմերձաւորութիւնս Երուսաղէմի, վասն որոյ բազումք եկեալ էին ի սուզն: Եւ սուտ են, որ կարծեն զհնգետասան ասպարէզն յայնկոյս Յորդանանու լինել մինչ ի Բեթանիայ, այլ ի Բեթանիոյ մինչ յԵրուսաղէմ է թիւ ասպարիզացն, եւ ութ ասպարէզն միլայ<sup>2</sup> մի է, այսինքն՝ մղոն մի, եւ երկու մղոնն մին ֆարսանկ է, եւ սոյնայէս Բեթանիա հեռի էր յԵրուսաղէմէ ֆարսանկ մի, պակաս մին ասպարէզ: Եւ վասն ասպարիզաց ասացաւ յԵրկրորդ հատորն, համարն<sup>3</sup>:

Բան. «Քազումք ի հրէիցն [անտի] Եկեալ էին [առ Մարթա եւ Մարիամ], զի մխիթարեսցեն» (Յովհ. ԺԱ 19):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Աստ խնդրէ Ռսկերեանն, թէ հրէայքն որպէս մխիթարէին զսիրելիսն Քրիստոսի, զի դաշն եղեալ էր, թէ ոք խոստովանեսցի<sup>4</sup> զնա Քրիստոս, ի բաց ելցէ ի ժողովրդենէն:

Եւ նոյն ինքն պատասխանէ վասն երից. նախ՝ զի մեծ տագնապ եւ սրտմտութիւն եհաս: Երկրորդ. կամ զի մեծ ազգիք էին, պատուէին զնոսա: Երրորդ. կամ որք եկին, ոչ էին ի չարաց եւ ի հայածչացն Քրիստոսի, այլ բարեգոյնք էին, զի թէպէտ բազումք ի հրէիցն հալածէին զՔրիստոս, սակայն բազումք հաւատային, եւ ոմանք միջակ իմն երեւէին:

Եւ եկին վասն երկու պատճառի. նախ՝ մխիթարել<sup>5</sup> զնոսա, Երկրորդ՝ ի տեսանել զհրաշքն ի խնամոցն Աստուծոյ, որպէս ասէ մեկնիչդ<sup>6</sup>:

<sup>1</sup> Երկրին

<sup>2</sup> Ա Յ ասպարէսն միլա

<sup>3</sup> Հ հանարքն

<sup>4</sup> Հ խոստովանի

<sup>5</sup> Հ մխիթարէին

**Այսուհետեւ զկնի ցուցանէ, թէ որպէ՞ս զՔրիստոս ընկալան ի Բեթանիայ, նախ՝ Մարթա եւ ապա՝ Մարիամ:**

Բան. «Մարթա իբրեւ լուաւ, գնաց» (հմնտ. Յովի. Ժովի. ԺԱ 20):

**Մեկնութիւն.** Ոմանք ասեն, թէ Մարթա էր աւագ քոյրն, նախ՝ զի նմա ազգեցին զգալ վարդապետին: Երկրորդ. զի Մարթա ի դուրս էր եւ հոգայր զպէտսն, եւ Մարիամ նստէր ի տանն՝ առ ի շահել զհրէայսն: Եւ յորժամ լուաւ Մարթա, միայն փութացաւ ընդ առաջ ել եւ պատուեաց զՔրիստոս եւ խաւսեցաւ վասն եղբաւրն, եւ յորժամ լուաւ զքաղցր լուր յարութեան եղբաւրն, ապա կոչեաց զքոյրն:

**Առընթեր սմին ցուցանի հաւատն Մարթայի, թէպէտ ոչ կատարեալ:**

Բան. «Տէ՛ր, եթէ աստ լեալ էիր, ոչ էր մեռեալ եղբայրն ին» (տես Յովի. ԺԱ 21-22):

**Մեկնութիւն.** Այսու յայտնի է, զի ստուգապէս հաւատայր, թէ մերձեալ<sup>1</sup> էր Քրիստոս, ոչ էր մեռեալ եղբայրն, այլ ոմանք ասեն, թէ կարծէր, թէ ի բացեայ գոլով ոչ կարէր փրկել, այլ բնաբանս զայս ոչ ցուցանէ, այլ զայն, թէ աստ էիր եղեալ, թախանձէաք զքեզ, եւ դու ոչ թողուիր մեռանել եղբաւրն: Ասեն զայս մարդկաւրէն, թէ ուր լոյս է, ոչ է անդ խաւար, եւ ուր կեանքն<sup>2</sup>, ոչ մահ:

Բան. «Այլ եւ<sup>3</sup> արդ գիտեմ, [թէ] զոր ինչ խնդրեսցես<sup>4</sup> [Աստուծոյ], տացէ քեզ Աստուած<sup>5</sup>» (Յովի. ԺԱ 22):

**Մեկնութիւն.** Խաւաի աստ զՔրիստոսէ որպէս յառաքինի մարդոյ, կամ մարդարէէ, զի աղաչանաւք յարուսցէ, զի դեռ եւս ոչ գիտէր զնա ճշմարիտ Աստուած, զի թէ զնա Աստուած հաւատայր, ոչ էր պարտ ասել, թէ՝ զոր ինչ խնդրեսցես, այլ թէ՝ զոր ինչ Հրամայեսցես:

**Առընթեր սմին խոստանայ Քրիստոս զյարութիւն եղբաւրն:**

Բան. «Ասէ ցնա Յիսուս. “Յարիցէ եղբայրն քո”» (Յովի. ԺԱ 23):

**Մեկնութիւն.** Ասելն քաղցրութեամբ է եւ պատասխանին ընդդիմութեամբ: Ասացաւ ի վերոյ, թէ գթութեամբն ցուցանի, զի Աստուած է Քրիստոս, եւ է այս երկրորդ գթութիւն, որ ասէ առ Մարթա, եթէ՝ յարիցէ եղբայրն քո: Ոչ ասէ զերբն. նախ՝ զթերի կա-

<sup>1</sup> A B մերձ լեալ

<sup>2</sup> C կեանք

<sup>3</sup> A B չեք

<sup>4</sup> C խնդրես

<sup>5</sup> A B չեք

**բծիսն Մարթայի խախտէ եւ ի հաւատս ճշմարիտս հաստատէ, որպէս ասէ.**

Բան. «Ասէ ցևա Մարթա. «Գիտեմ, զի յարիցէ ի յարութեան՝ յաւուրն յետնում<sup>1</sup>»» (Յովի. ԺԱ 24):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ. Եւ ուստի՝ գիտէր զյետին յարութիւն։ Հստ Ուկբերանին բազում անգամ լուեալ էր ի Քրիստոսէ, եւ ասէ: Իսկ ըստ այլոց. զի փարիսեցիքն հաւատային յարութեան, եւ սա ի նոցանէ էր, իսկ սադուկեցիքն միայն ուրանային զյարութիւն եւ զհրեշտակս, եւ զհոգիս անմահ<sup>2</sup> գոլ։**

Բան. «Ես իսկ են յարութիւն եւ կեանք» (Յովի. ԺԱ 25):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ. Զինքն ցուցանէ Քրիստոս՝ պատճառ եւ տուող յարութեան, եւ այս կրկին կերպիւ. նախ՝ զի յարութիւն Քրիստոսի է պատճառ մերոյ<sup>3</sup> յարութեան: Երկրորդ. զի հասարակաց յարութիւն լինելոց է զաւրութեամբն Քրիստոսի, որպէս ասաց ինքն. «Եկեսցէ ժամանակ, որ ի գերեզմանս [կայցեն], լուիցեն ձայնի նորա<sup>4</sup> եւ եկեսցեն արտաքս<sup>5</sup>» (տես Յովի. Ե 28-29), եւ առաքեալ ասէ, եթէ՝ «Ի ձայն հրեշտակապետի եւ ի փող Աստուծոյ իջցէ [յերկնից], եւ մեռեալք ի Քրիստոս յարիցեն» (տես Ա Թաղ Դ 15), եւ Քրիստոս կեանք է ըստ բնութեան եւ ամենեցուն պատճառ է կենդանութեան եւ կարող գոյ կենդանացուցանել զմեռեալս, զի այնպիսի է բնութեամբն, որ պատճառ է ամենեցուն, որ ստանան հաղորդակցութեամբն, որպէս ասէ.**

Բան. «Որ հաւատայ յիս, թէպէտ եւ մեռանի, կեցցէ» (Յովի. ԺԱ 25):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ. Զբնական մահն ասէ:**

Բան. «Եւ [ամենայն], որ կենդանի է եւ հաւատայ յիս<sup>6</sup>, մի' մեռցի» (Յովի. ԺԱ 26):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ. Զյաւիտենական կենացն ասէ, եւ որպէս մեկնիչդ ասէ. «Որ հաւատայ յիս, թէ ես եմ յարութիւն եւ կեանք», որպէս ի հայելոց տեսցէ զյարութիւն իւր ի Ղազարոս<sup>cl</sup>:**

Եւ այս չորս կերպիւ. նախ՝ որպէս Ղազար նոյն հոգւով եւ մարմնով կենդանացաւ: Երկրորդ. որպէս ձայնիւն Քրիստոսի կենդանացաւ: Երրորդ. Ղազարոս անապական հոգւով եւ մարմնով յարեաւ: Չորրորդ. Ղազարու հոգին ոչ կարաց սատանայ կամ դժոխք արգելուլ, եւ ոչ մարմինն՝ մահ եւ ապականութիւն,

<sup>1</sup> A B չեք ի յարութեան՝ յաւուրն յետնում

<sup>2</sup> C ոչ անմահ

<sup>3</sup> B մարմնոյ

<sup>4</sup> C ձայնի Որդուոյն Աստուծոյ

<sup>5</sup> A B չեք եւ եկեսցեն արտաքս

<sup>6</sup> A B չեք

եւ ոչ գերեզմանն արգել<sup>1</sup>, նոյնպէս եւ ամենայն հաւատացելոցն ի Քրիստոս:

Դարձեալ՝ ասեն վարդապետք, թէ զանազան է «Հաւատալ Քրիստոսի» եւ «Հաւատալ զՔրիստոս» եւ «Հաւատալ ի Քրիստոս»: «Հաւատալ Քրիստոսի» է հաւատալ ճշմարիտ գոլ բանիցն Քրիստոսի, եւ «Հաւատալ զՔրիստոս» է հաւատալ զնա ճշմարիտ Քրիստոս: Եւ այս երկու կերպիւ կարեն հաւատալ չարք՝ ի մարդկանէ եւ սատանայ եւս, իսկ «Հաւատալ ի Քրիստոս» է զնա վերագոյն բարի համարել, եւ Աստուած յամենայնի մարդացեալ եւ եղական սիրով առ նա փութալ: Եւ այնպէս միայն հաւատան բարի մարդիկ, եւ որ այնպէս հաւատան, թէպէտ մարմնով մեռանին, սակայն կեցցեն փառաց յարութեամբն հոգւոյ եւ մարմնոյ:

Դարձեալ՝ բանս, որ ասէ, եթէ՝ «Կենդանի իցէ, մի՛ մեռցի» (հնմտ. Յովի. ժԱ 26), ոմանք կարծեցին, թէ ի կատարածի, որ ի գալստեանն Քրիստոսի կենդանիքն մի մեռցին մահուամք մարմնոյ, եւ դնեն զառաքելոյ բանն ի Կողոսացիս, թէ. «Ոչ ժամանեմք ննջեցելոցն» (տես Թեսաղ. Դ 14), զորոյ զվնասն ոչ իմանան: Նախ՝ զհարկիւ մեռանելն ամենայն մարդոյ, որպէս զնախահայրն Ադամ ըստ մարդարէին. «Ո՞վ է մարդ, որ կեցցէ եւ ոչ տեսցէ զմահ» (Սաղմ. ԶԸ 49): Երկրորդ. զի Քրիստոս մեռաւ, եւ որք մահու նորա ոչ կցորդին եւ ոչ փառացն<sup>2</sup> հաղորդին ըստ առաքելոյ: Արդ, որ ասէ աստ կենդանի. նախ՝ որ այժմ գործով արդարութեան կենդանի իցեն: Երկրորդ. որ ի ժամանակս նեռինն հաւատով կենդանի մնան:

Բան. «Հաւատա՞ս այսմիկ» (Յովի. ժԱ 26):

Մեկնութիւն. Ոչ հարցանէ զնա վասն անգիտութեան, այլ վասն չորից հարցանէ. նախ՝ զի յայտնի լիցի, թէ վասն հաւատոցն արժանացաւ պարգեւացն Աստուծոյ: Երկրորդ. ոչ հարցանէ վասն հասարակաց յարութեան, զի նախ խոստովանեցաւ, այլ զի հաւատասցէ առանձին յարութեան եղբաւրն: Երրորդ. որպէս ասէ մեկնիչդ, մեծամեծս խաւսեցաւ վասն ինքեան, զոր նա ոչ գիտէր եւ զայն կամի, զի հաւատասցէ նա<sup>clii</sup>: Չորրորդ. որպէս ասէ Պաւոս ի Հռոմայեցիս. «Արտիւ հաւատալ յարդարութիւն եւ բերանով խոստովանել զփրկութիւն գործէ<sup>3</sup>» (հնմտ. Յովմ. ժ 10), վասն այն բերանով խոստովանիլ տայ նմա: Յայս միտս յորժամ զերախայն մկրտէ քահանայն, հարցանէ խոստովանիլ բերանով տղային:

<sup>1</sup> Ե չիք եւ ոչ մարմինն ... գերեզմանն արգել

<sup>2</sup> Ա Բ փառացն

<sup>3</sup> Ծ հաւատալ արդարութիւն գործ է եւ բերանով խոստովանել զփրկութիւն

Բան. «Ասէ ցնա Մարթա. “Այո՛, Տէր, ես հաւատացի, թէ դու ես Քրիստոսն՝ Որդի Աստուծոյ<sup>1</sup>, որ յաշխարհ գալոց էիր<sup>2</sup>”» (Յովի. ԺԱ 27):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Հաստ Ոսկեբերանին՝ զայլ հարցեալ եւ զայլ պատասխանէր. հարցանէր վասն հաւատալոյ յարութեան, իսկ նա զՔրիստոս խոստովանէր, վասն զի սգաւոր էր, եւ միտքն՝ շփոթեալ ի տրտմութենէն<sup>3</sup>: իսկ այլ վարդապետք ասեն, թէ յարմար է պատասխանին հարցմանն, զի Քրիստոս ասաց. «Ես եմ յարութիւն եւ հաւատացեալք յիս ոչ մեռանին» (հմնտ. Յովի. ԺԱ 25-26), եւ զի Քրիստոսիւ լինելոց էր այս յարութիւն եւ կեանս, նա դաւանեաց, թէ՝ «Դու ես Քրիստոսն՝ Որդի Աստուծոյ» եւ այլն:

### Վասն դաւանութեան

Եւ աստ լինի կրկին հարց.

Առաջին. Թէ զի՞նչ դաւանեաց Մարթա:

Պատասխան. Ասեմք, եթէ չորք իրս դաւանեաց ի Քրիստոս. նախ՝ զանբաժան միութիւն Քրիստոսի՝ ասելով. «Դու ես»: Երկրորդ. խոստովանի ի Քրիստոս քահանայութիւն եւ թագաւորութիւն՝ ասելով. «Քրիստոսն», որ է աւծեալ, եւ աւծումն թագաւորացն<sup>4</sup> եւ քահանայիցն էր: Երրորդ. խոստովանի Աստուած գոյ զՔրիստոս՝ ասելով. «Որդին Աստուծոյ», այսինքն՝ բնութեամբ Որդի Աստուծոյ, զի եղական ասէ: Չորրորդ. խոստովանի ճշմարիտ մարդ եղեալ՝ ասելով. «Որ յաշխարհ եկիր», զի գալն ոչ զտեղւոյ փոփոխումն յայտնէ, այլ զմարմին լինելն:

Երկրորդ հարց<sup>5</sup>. Պետրոս զնոյնս դաւանեաց եւ երանեցաւ, եւ ընդէ՞ր սա ոչ երանեցաւ:

Պատասխան. Ոմանք ասեն, թէ Պետրոս նախ խոստովանեցաւ, վասն որոյ երանեցաւ: Ասեմք, թէ ոչ է<sup>6</sup> այդպէս, զի եւ<sup>7</sup> նաթանայէլ նախ դաւանեաց եւ ոչ երանեցաւ, եւ թովմայի ասաց Տէրն. «Երանի, որք ոչ տեսցեն եւ հաւատասցեն յետոյ» (հմնտ. Յովի. Ի.29), այլ այս է, զի Պետրոս զՔրիստոս Աստուած մարդացեալ խոստովանեցաւ եւ բնութեամբ Որդի Աստուծոյ, որպէս աւետարանիչն ասէ. «Բանն մարմին եղեւ» (Յովի. Ա. 14), իսկ սոքա՝ մարդ շնորհաւք

<sup>1</sup> A B չիք Որդի Աստուծոյ

<sup>2</sup> A չիք գալոց էիր

<sup>3</sup> C տրտմութենէ

<sup>4</sup> A B թագաւորաց

<sup>5</sup> C չիք

<sup>6</sup> B չիք

<sup>7</sup> B չիք

աստուածացեալ եւ փառաւորեալ խոստովանեցան<sup>1</sup>, վասն որոյ ոչ երանեցան, ապա ուրեմն յայտնի եղեւ, զի Նաթանայէլ եւ Մարթա, որ զմիութիւն խոստովանեցան, որպէս Պետրոս, եւ մարդ փառաւորեալ, ոչ երանեցան, որպէս եւ Նեստոր ասաց՝ սոսկ մարդ շնորհաւք փառաւորեալ, ապա<sup>2</sup> քանի<sup>3</sup> առաւել մերժին յերանութենէն, որք երկուս<sup>4</sup> բնութիւնս որոշեն զՔրիստոս եւ սոսկ մարդ դաւանեն, որպէս հայՀոյիչք մարդեղութեան Քրիստոսի եւ ուրացողք:

#### Այսքան առ այս<sup>5</sup>:

Բան. «Զայս իբրեւ ասաց, [գնաց] կոչեաց զքոյր իւր լռելեայն» (Յովի. ԺԱ 28):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Ոչ ամենեւին լռելով, այլ խոնարհ եւ ծածուկ խաւսելով. «Ասէ. “Վարդապետն<sup>6</sup> եկեալ է”» (Յովի. ԺԱ 28):

Եւ այս վասն երեք պատճառի. նախ՝ վասն երկիւղին հրէից, որ անդ էին, ոմանք լինէին ի հակառակիցն: երկրորդ. համարէր, թէ Քրիստոս առանց ամբոխի խաւսի ընդ Մարիամու: երրորդ. կարծէր, թէ առանց ամբոխի աղաչեսցէ վասն եղբաւրն:

Բան. «Վարդապետն եկեալ է եւ կոչէ զքեզ» (Յովի. ԺԱ 28):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Եւ ոչ երեւի, թէ կոչեաց զՔրիստոս: Ասեն ումանք, եթէ վասն կարճութեան ոչ յիշէ աւետարանիչս, թէ՝ ո՞ւր կամ ե՞րբ, կամ որպէ՞ս հրամայեաց կոչել, սակայն հաւատալի է, թէ Քրիստոս կոչեաց, զի Մարթա սուտ ոչ ասէր: Դարձեալ՝ ասեն ոմանք, թէ Մարթա ասաց<sup>6</sup> կոչէ զքեզ, եւ ոչ ասաց սուտ, զի գալն Քրիստոսի կոչումն էր Մարիամու, զի պարտ էր ընդառաջ ելանել նմա, եւ ասէ՝ կոչէ զքեզ, այսինքն՝ հարկ է գալ քեզ: Եւ տե՛ս զիսնարհութիւն սորա որպէս զՄարթային, զի ոչ փառասիրեաց գնալ Քրիստոսի վասն սգոյն, որպէս այժմ ունին սգաւորք, խնդրեն մեծարանս ի մերձաւորաց:

Բան. «Իբրեւ լրւաւ, յարեաւ վաղվաղակի եւ եկն» (Յովի. ԺԱ 29):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Զմեծ սէրն նշանակէ Մարիամու, որ ունէր առ Քրիստոս:

Բան. «Այլ էր անդէն ի տեղւոշն» (Յովի. ԺԱ 29):

<sup>1</sup> А В փառաւորեալ խոստովանեցան, որպէս եւ Նեստոր ասաց սոսկ մարդ շնորհաւք փառաւորեալ

<sup>2</sup> А В չիք փառաւորեալ, որպէս ... փառաւորեալ, ապա

<sup>3</sup> А С յերկուս

<sup>4</sup> С չիք այսքան առ այս

<sup>5</sup> С վարդապետ

<sup>6</sup> С ասաց, թէ

**Մեկնութիւն.** Քրիստոս անդէն մնայր Մարիամու եւ Մարթայի. նախ՝ զի ընդ նոսա տեսանիցէ զգերեզմանն: Երկրորդ. ասէ Ոսկէրանն. «Անդէն մնաց, զի ոչ կամէր նշանս առնել վասն փառասիրութեան, այլ վասն աղաչանաց այլոց եւ հաստատել զայլս ի հաւատոս»: Երրորդ. լինի եւ այն<sup>1</sup>, թէ ոմանք ընդ նմա խաւսէին, եւ Մարիամ, եւ Մարթա արագեցին եւ անդ<sup>2</sup> գտան զնա: Բայց մեկնիչդ չորս պատճառս<sup>3</sup> դնէ անդէն մնալոյն, եւ գեղեցիկ են<sup>clii</sup>:

Բան. «Իսկ իրէայքն, որ էին ընդ նմա<sup>4</sup>, գնացին եւ նոքա<sup>5</sup>» (Յովհ. ԺՈՒ 31):

**Մեկնութիւն.** Սոքա ոչ էին լուեալ զբանն Մարթայի առ Մարիամ, վասն այն համարեցան, թէ յանկարծ ի գթոյն շարժեցաւ երթալ ի գերեզմանն, եւ նոքա զկնի գնացին, զի մխիթարեսցեն զնա:

Բան. «Անկաւ առ ոտս նորա» (Յովհ. ԺՈՒ 32):

**Մեկնութիւն.** Մեծագոյն է հաւատ սորա, քան զՄարթային, եւ յայտ է յերից. նախ՝ զի ոչ զանգիտեաց ի հրէիցն:

Երկրորդ. զի անկաւ առ ոտս նորա:

Երրորդ. զի արտասուաւք խնդրէր, բայց պակաս խաւսեցաւ քան զՄարթա. նախ՝ զի արտասուաւքն խափանէին զնա ի խաւսելոյ<sup>6</sup>: Երկրորդ. զի Յիսուս ոչ ետ երկար պատասխանի, որպէս Մարթայի վասն հրէից ժողովրդեանն, այլ զնոյն բանն կրկնեաց զքեռն, զի ի միասին խորհեալ էին զայն:

Առընթեր այսմ դնէ եւ զՂազարու յարութիւն, յորժամ ասէ.

Բան. «Յիսուս իբրեւ ետես զնա, զի լայր» (Յովհ. ԺՈՒ 33):

**Մեկնութիւն.** Աստ նախ ճառի յարութիւն Ղազարու: Երկրորդ. ճառի գործ ինչ պատճառեալ յայնմ յարութենէն, անդ. «Բազումք ի հրէիցն [անտի] եկեալ էին<sup>7</sup> առ [Մարթայ եւ] Մարիամ» (Յովհ. ԺՈՒ 19): Իսկ առաջին մասն յերիս բաժանի մասունս, զի նախ ցուցանի սէրն Քրիստոսի առ Ղազարու՝ նշանաւ եւ բանիւ եւ գործով: Երկրորդ. տրտունջ հրէիցն, անդ. «Ասէին իրէայքն. “Տեսէք ո՞րչափ սիրէր զնա”» (Յովհ. ԺՈՒ 36): Երրորդ. յարութիւն Ղազարու, անդ.

<sup>1</sup> Կ անդ

<sup>2</sup> Հ չեք

<sup>3</sup> Ա Բ պատճառ

<sup>4</sup> Ա որ ընդ նմա էին, Ը որք ընդ նմա էին

<sup>5</sup> Ա Բ չեք

<sup>6</sup> Բ լսելոյ

<sup>7</sup> Հ հրէիցն, որ եկեալ էին

«Յիսուս, դարձեալ զայրացեալ ի միտս իւր, գայ ի գերեզմանն» (տես Յովհ. ԺԱ 38):

**Առաջին մասն ցուցանի սէրն Քրիստոսի առ Ղազար երիս<sup>1</sup> կերպիւ.**

**Առաջին. սէրն նշանաւ ցուցանի, որպէս ասէ աւետարանիչս.** «Յիսուս իբրեւ ետես, զի լայր, եւ որ ընդ նմա հրեայքն լային» (տես Յովհ. ԺԱ 33):

**Բան.** «Խօռվեցաւ հոգի<sup>2</sup> իւր իբրեւ զայրացեալ» (Յովհ. ԺԱ 33):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Յոգի ասելով ընդդէմ Ապողինարի<sup>cliv</sup> է, որ ասաց, թէ Բանն մարմին միայն էառ՝ առանց հոգւոյ: Իսկ զայրանալն ի ցասմանէ է. արդ, զայրացաւ Յիսուս ընդդէմ սատանայի, որոյ փորձութեամբն եմուտ մահ յաշխարհ, եւ Քրիստոս իբրեւ ի մատոյ ընկճելոց էր զնա: Իսկ խօռվել ասի, այսինքն՝ տրտմեալ վասն գթոյն, որ ի վերայ Ղազարու եւ քերց նորա: Եւ խօռվեցաւ ասելն իբր<sup>3</sup> թէ կոչեաց զտրտմութիւն, զի առեցեալ բնութիւն ոչ էր իբրեւ զմեզ ի ներքոյ ակամայ<sup>4</sup> կրից, այլ ազատ էր ի հարկէ կրից եւ կամաւ կրէր զամենայն, որպէս յայտ է ի մեկնիչդ<sup>cliv</sup>: Այլ վասն կրիցն նախ գիտելի է, զի բարկութիւն եւ տրտմտութիւն<sup>5</sup> եւ այլ այնպիսիք ոչ ասին ի Քրիստոս իբրու մեղք, այլ իբրու<sup>6</sup> առաքինութիւնք: Եւ վասն այն ի մեզ մեղք են սոքա, զի նախքան զընտրութիւն բանին լինին եւ յետոյ խափանեն զընաւորութիւն մեր, իսկ ի Քրիստոս կիրքս այսոքիկ ընտրութեամբ եւ գիտութեամբ<sup>7</sup> բանին լինէին, այլ եւ ոչ կարէր խափանել զբանական մասն, որ միացեալ էր ի Բանն Աստուած, վասն այն առաքինութիւնք են սոքա ի Քրիստոս:

**Դարձեալ գիտելի է,** զի են ի մեզ մասունք հոգեկան, որ հնագանդեն բանին, որպէս ցասումն եւ ցանկութիւն, եւ են, որ անհնազանդ, որպէս բնականքն, այսինքն՝ քաղց եւ ծարաւ եւ այլն: Արդ, սոքա ամենեքեան հնազանդք են ի<sup>8</sup> Քրիստոս<sup>9</sup> բանական մասինն, եւ նա Տէր՝ ի վերայ սոցա, վասն որոյ զոր ինչ կրէր

<sup>1</sup> A ընդ երիս

<sup>2</sup> A C հոգի, B ոգի

<sup>3</sup> B ասելն. այսինքն՝ տրտմել, իբր թէ

<sup>4</sup> B յականայ

<sup>5</sup> A B սրտմտութիւն

<sup>6</sup> C իբր

<sup>7</sup> A B չիք եւ գիտութեամբ

<sup>8</sup> B չիք

<sup>9</sup> B Քրիստոսի

Քրիստոս՝ քաղց եւ ծարաւ եւ տրտմեալ<sup>1</sup> եւ այլն, կամաւ եւ իշխանութեամբ կրէր:

Եւ սոյնպէս չորիւք զանազանի կիրք մեր ի Տեառնէ. նախ՝ նորայն՝ առաքինութիւն միշտ, իսկ ի մեզ՝ մոլորութիւն երբեմն: Երկրորդ. Նորայն՝ գիտութեամբ, իսկ մերս՝ անգիտութեամբ: Երրորդ. Նորայն՝ կամաւոր, իսկ մերս՝ հարկաւոր: Զորրորդ. նա Տէր եւ իշխան ի վերայ կրիցն, իսկ մեք՝ ծառայք եւ ընդ իշխանութեամբ:

Իսկ աստ տրտմեցաւ Քրիստոս վասն կրկին պատճառի. նախ՝ զի ծանիցեն զճշմարիտ մարդանալն: Երկրորդ. զի եւ նոքա տեսանելով զնա տրտմիցին եւ արտասուեցեն, զի արժանի լիցին ուրախութեան, որ յարութեամբն Ղազարու:

Այս առաջին սէրն Ղազարու, որ նշանաւ է:

Երկրորդ. սէրն ցուցանի բանիւ, յորժամ ասէ.

Բան. «Ո՞ւր եղիք զնա: Ասեն զնա. “Տէր, եկ եւ տես”» (Յովհ. ԺԱ 34):

Մեկնութիւն. Ոչ էր այս տգիտութիւն ի Քրիստոս վասն երկու պատճառի. նախ՝ զի եւ Հայրն Հարցանէր. «Ո՞ւր ես, Աղա՛մ» (տես Ծննդ. Գ 9), եւ ցԿայէն. «Ո՞ւր է Աբէլ եղբայրն քո<sup>2</sup>» (տես Ծննդ. Դ 9)՝ պատճառ խաւսից նոցա տալով: Երկրորդ. զի ի բացեայ գոլով զմահն գիտէր, զիա՞րդ ի գեւդն եկեալ՝ զգերեզմանն անգիտանայր:

Այլ աստ վասն չորից Հարցանէր. նախ՝ զի ցուցցէ, թէ ճշմարիտ մարդ եղեւ: Երկրորդ. զի մի կարծիցեն յառաջագոյն գնացեալ նմա ի գերեզմանն եւ պահեալ անդ կենդանի մարդ: Երրորդ. զի հանդարտ եւ հաստատ արասցէ զնշանն: Զորրորդ. զի ինքեանք վկայ եւ քարոզ լիցին յարութեան:

Այս բանիւ սէրն:

Երրորդ. գործով ցուցանի սէրն Քրիստոսի<sup>3</sup> առ Ղազարոս, յորժամ ասէ.

Բան. «Եւ արտասուեաց Յիսուս» (Յովհ. ԺԱ 35):

Մեկնութիւն. ի գթոյն շարժեալ եւ արտասուեաց, յորժամ ետես զգերեզմանն: Ասացաւ ի վերոյ, թէ գթութեամբն ցուցանի, թէ Աստուած է Քրիստոս, եւ է այս երրորդ գթութիւն, որ արտասուեաց ի վերայ Ղազարու:

Եւ վասն վեց պատճառի արտասուեաց Յիսուս. նախ՝ զի ցուցէ, թէ եղական սիրով սիրէ<sup>4</sup> զՂազար, վասն այն յատուկ նշան

<sup>1</sup> Ե տրտմեալ

<sup>2</sup> Ա Բ Հեք

<sup>3</sup> Ըստ Պրիստոսի գործով ցուցանի

<sup>4</sup> Ըստ Եղիշէ

սիրոյ ցուցանէ: Երկրորդ. զի ցուցցէ հաւաստեաւ զճշմարիտ մարդեղութիւն, զի որպէս վնաս է ուրանալ զԱստուածութիւն, նոյնպէս վնաս է ուրանալ զմարդկութիւն: Երրորդ. զի չափ եւ սահման եղ արտասուաց, որք հաւատան յարութեան մեռելոց: Չորրորդ. զի աւրինակ ետ մեզ ամենայն մարդոյ տեսանել զմեռեալն ի դի, ողբալ զմեղքն մեր, որ ժառանգեցոյց մեզ զմահաբեր երկիրս: Հինգերորդ. արտասուեաց ի վերայ ազգին հրէից, որ անհաւատութեամբն<sup>1</sup> մեռանելոց էին զյաւիտենից մահն: Իսկ վեցերորդ. արտասուեաց Յիսուս, զի այնու յայտնեսցէ զկարծիս նոցա, թէ ոչ է կարող յարուցանել, որպէս ասացին:

Զկնի ճառէ զտրտունջ հրէիցն, զի յորժամ տեսին զՔրիստոս յայնպիսի կիրս բերեալ, զայն հաւաքաբանէին, թէ մահն Ղազարու էր ամենեւին ընդդէմ կամացն Քրիստոսի, զի տրտմութիւն է ախտ, որ լինի յանախործ կրից յոչ կամելեաց, վասն այն ասեն.

Բան. «Տեսէք ո՞րչափ սիրէր զնա» (Յովհ. ԺԱ 36):

Մեկնութիւն. Զի արտասուելն Քրիստոսի նշան է սիրոյ, եւ թէ ունէր կարողութիւն, վասն բազում սիրոյն փրկէր զնա ի մահուանէ, իսկ զի ոչ կարէ, վասն այն արտասուէ: Եւ այսու կամէին եւ զբժշկութիւն ի ծնէ կուրին ի դերեւս հանել:

Բան. «Ո՞չ կարէր սա, որ երաց զաշս կուրին, առնել զի եւ սա մի՛ մեռցի» (Յովհ. ԺԱ 37):

Մեկնութիւն. Իբր թէ ասել, թէ զայս ոչ կարէ, ապա յայտնի է, զի զայն ոչ արար, սոքա զերկուսն ուրանային, իբր թէ ո՛չ զկոյրն լուսաւորեաց եւ ո՛չ զսա առողջացնել կարէ, սոքա ոչ մնացին ժամանակին<sup>2</sup>, այլ նախքան զժամանակն դատէին, զի առաւել է զմեռեալն յարուցանել, քան զհիւանդն առողջացնել:

Իսկ զկնի ճառէ զՂազարու յարութիւն:

Բան. «Յիսուս, դարձեալ զայրացեալ [ընդ միտս իւր], գայ ի գերեզմանն» (Յովհ. ԺԱ 38):

Մեկնութիւն. Զայն ասէ այժմ զայրացեալ, որ զտրտմութիւն ի բաց վարեաց յանձնէ, զի առնելոց էր սքանչելիս: Եւ այլք ասեն, թէ զայրացաւ վասն չարութեան հրէիցն, որք զսքանչելիս նորա բամբասէին: Եւ այնպիսի զայրացումն կամ ցասումն առաքինութիւն ասի, զի որպէս գործ առաքինութեան է ուրախակցիլ բարեաց, նոյնպէս առաքինութիւն է զայրանալ ընդդէմ չարեաց:

Բան. «Եւ էր այր մի, եւ վէճ մի եղեալ ի [վերայ նորա]» (Յովհ. ԺԱ 38):

<sup>1</sup> Ը անհաւատութեամբ

<sup>2</sup> Ե ի ժամանակին

<sup>3</sup> Ը կը գայ ի գերեզմանն

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Աստ հինգ<sup>1</sup> ինչ ճառէր վասն յարութեան Ղազարու եւ վասն ստուգութեան մեծ սքանչելեացն.

Առաջին է գերեզմանին գծագրութիւն, որ էր այր մի ի վիմէ փորեալ եւ խոր, զի բազում մարմինք կարէին անդ դնիլ, զի սահման էր յազգն Խորայէլի՝ յերկիրն Երուսաղէմի, զի իւրաքանչիւր ազգ եւ ընտանիք կտրէին զգերեզմանս իւրեանց ի քարէ: Այնպէս էր եւ գերեզմանն Ղազարու, եւ ի վերուստ փակեալ կայր մեծագոյն վիմով, որով յայտնի ճշմարիտ մահն Ղազարու<sup>clvi</sup>:

**ԵՐԿՐՈՐԴ.** Ճառէ զստուգութիւն սքանչելեացն, յորժամ ասէ<sup>2</sup>.

Բան. «Ի բաց արարէք զվենդ» (Յովհ. ԺԱ 39):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Նա, որ զմեռեալն ձայնիւ միայն յարոյց, ո՛չ տկարանայր ի բաց դնելով զվէմն, այլ ըստ Ոսկերեանին՝ արար զայս, զի մի ասիցեն, որպէս վասն լուսաւորեալ կուրին, թէ՝ ո՛չ է սա նա, այլ նման է<sup>3</sup> նորա, զի յորժամ զլասցին ոտքն, որ ընթացան, ձեռքն, որ ի վեր առին, ոնդունքն, որ զհոտն էառ, վկայ լիցին Ղազարու յարութեան եւ յանդիմանեսցեն զնոսա: Եւ դարձեալ՝ տեսանելով զմեռեալն ի գերեզմանին կողմանեալ եւ զժահահոտութիւն ապականեալ մարմնոյն, ցուցանէր, թէ նա է<sup>4</sup>:

Եւ քանզի ոչ երբէք պատահեալ էր, որ չորեքաւրեայն յառնէր ի մեռելոց, վասն այն ասէ.

Բան. «Ասէ Մարթա. “Արդ հոտեալ է, քանզի չորեքաւրեայ է”» (ՄԵ Յովհ. ԺԱ 39):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Ոչ թէ կարծեաւք ինչ ասաց զայս, այլ զի աւրէն էր նոցա յերկրորդ աւրն գնալ եւ աւծանել զմեռեալն եւ մինչ ի յեւթներորդ աւրն գնալ ի գերեզմանն, եւ գիտէր, որ հոտեալ էր: Դարձեալ՝ ի կէտ բաժանման հոգւոյն շարժի մարմինն ի հոտիլ, եւ մինչ ի չորրորդ աւրն քակտին չորս տարերքն, որպէս ասացաւ ի վերոյ: Դարձեալ՝ չորս աւր եթող ի գերեզմանի, զի այնու անյուսութիւն նոցա յայտնէր<sup>5</sup>, եւ այնու սէր եւ կարողութիւն Քրիստոսի առաւել յայտնէր<sup>6</sup>:

Իսկ բանն Մարթայի, թէ՝ չորեքաւրեայ է եւ հոտեալ, չորս կերպիւ մեկնեն վարդապետք. Նախ՝ ասեն, թէ՝ ոչ երբէք էր լուեալ ի Սուրբ Գիրս, թէ չորեքաւրեայ մեռեալ յառնէ: Երկրորդ. ասեն թէ յուսահատութեամբ ասաց: Երրորդ. ասեն, թէ զարմացեալ էր:

<sup>1</sup> Ե ԵՒԲ

<sup>2</sup> Ը ասէ Յիսուս

<sup>3</sup> Ը ՀԵՔ

<sup>4</sup> Ա Բ ՀԵՔ

<sup>5</sup> Ը յայտ Լինէր

<sup>6</sup> Ը սէր եւ կարողութիւն Քրիստոսի առաւել յայտնէր

**Չորրորդ.** ասեն, թէ մասնաւոր յուսացեալ էր եւ մասնաւոր յուսահատեալ, զի հայելով ի կարողութիւն Քրիստոսի յուսայր եւ հայելով յերկարութիւն մահուն՝ յուսահատէր: Եւ նոյնպէս անկարաւու ունէր զհաւատն, զի մի եւ նոյն զաւրութեան գործ է յարուցանել զնոր մեռեալս եւ զչորեքաւրեայն, վասն այն զժերութիւն նորա յանդիմանեաց Քրիստոս:

Բան. «Ո՞չ ասացի քեզ, [Ե]թէ հաւատացես<sup>1</sup>, տեսցես զիառսն Աստուծոյ» (Յովի. ԺԱ 40):

**Մեկնութիւն<sup>2</sup>.** Այսինքն<sup>3</sup> զփառաւոր զաւրութիւն Աստուծոյ ի յարութեան եղբաւրն քո: Եւ թէ ո՞ւր ասաց զայս Քրիստոս, ումանք ասեն այն է. «Ես եմ յարութիւն եւ կեանք եւ թէ հաւատաս յայսմիկ» (հմնտ. Յովի. ԺԱ 25), եւ ոմանք ասեն, թէ այլ բազում բանս խաւսեցաւ Քրիստոս ընդ նմա, որք ոչ են գրեալ, յորոց մի է եւ այս:

Եւ յորժամ Քրիստոս եբարձ զպակասութիւն հաւատոյ եւ յուսոյն Մարթայի, ապա կատարեն զհրամայեալն ի Քրիստոսէ, որպէս ամէս:

#### Վասն աղաւթից<sup>4</sup>

Բան. «Եւ իբրեւ ի վեր առին զվեմն» (Յովի. ԺԱ 41):

**Մեկնութիւն.** Երրորդ՝ ճառէ զստուգութիւն սքանչելեացն, որ էր աղաւթքն Քրիստոսի ի յարութիւն Ղազարու:

Բան. «Յիսուս անբարձ զաշու իւր<sup>5</sup> ի վեր» (Յովի. ԺԱ 41):

**Մեկնութիւն.** Վասն երեք պատճառի. նախ՝ զի ցուցցէ, թէ պարտ է աղաւթողին արտաքին նշան ինչ հանգաւոր ցուցանել: Երկրորդ. զի ուսոււցէ, թէ պարտ է աղաւթողին զմիտքն յերկինս ի վեր առ Աստուած ունել, զի ասեն վարդապետք, թէ աղաւթք է ամբարձումն մտաց առ Աստուած: Երրորդ. ցուցանէ, թէ ի նմանէ առաքեցայ, եւ զամենայն ինչ ի նմանէ ունիմ:

Բան. «Դայր, գոհանամ զքէն, զի լուար ինձ» (Յովի. ԺԱ 41):

**Մեկնութիւն.** Ամենայն խնդրող նախ առնու եւ ապա գոհանայ, իսկ Քրիստոս յառաջ գոհացաւ վասն երեք պատճառի. նախ՝ վասն անցելոյն գոհանայ, զի ի սկզբանէ յղացմանն իւրոյ Աստուած Հայր լուաւ նմա, զոր կամեցաւ: Երկրորդ. զի ստոյգ գի-

<sup>1</sup> Ը հաւատաս

<sup>2</sup> Ա Յ չեք

<sup>3</sup> Յ չեք

<sup>4</sup> Ը չեք Վասն աղաւթից

<sup>5</sup> Ա Յ չեք

տէր զլինելոցն եւ ոչ ունէր երկբայութիւն ի խնդրելն<sup>1</sup>: Երրորդ ընդ մեզ աւրինակաւ իմասցուք, զի մեծատունք առաւել յաւժարին ի տալ, յորժամ զառաւել պարզեւսն յիշեսցեն, թէպէտ նա ի վեր է, քան զամենայն աւրինակս, վասն այն ասէ.

Բան<sup>2</sup>. «Զի լուար ինձ, եւ ես գիտէի, զի յամենայն ժամ լսես ինձ<sup>3</sup>»

(Յովի. ԺԱ 42):

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Քանզի բանական կամքն միշտ միաւորեալ էր<sup>4</sup> ի կամսն Հաւը<sup>5</sup> Աստուծոյ, վասն այն Աստուած միշտ լսէր նմա, այլ գիտելի է, զի բանական կամքն Քրիստոսի խոնարհեալ առ զգայական մասն, յորժամ կամեցաւ անցանել ի նմանէ բաժակ չարչարանացն,<sup>6</sup> եւ այնպիսի կամացն ոչ միշտ լուաւ աստուածային կամաւքն: Իսկ ըստ Ոսկեբերանին այս է մեկնութիւն աղաւթիցն, որ նուաստ կարծէ գոլ, քան զՀայր. «Ամենայն ուրեք ցուցանէ Քրիստոս զգալուստն ոչ վասն փառաց ինչ ի մարդկանէ, այլ վասն փրկութեան մարդկան լինել, եւ այնչափ զմեծամեծսն<sup>7</sup> բարբառէր, մինչ զմարդիկ ի հաւատսն<sup>8</sup> հնագանդէր»:

«Եւ<sup>9</sup> հիւսու զնոսա ի միասին»:

Լուծմունք<sup>10</sup>. Այսինքն<sup>11</sup> զբարձրագոյն եւ զխոնարհագոյնքն միոյ դիմացն ցուցանէր, եւ ստեղծանելն գործելն է: Եւ դարձեալ, յորժամ զաստուածայինսն գործէր, ընդ նմին եւ զմարդկայինսն, եւ յորժամ զմարդկայինս եւ զտկարս, ընդ նմին եւ զաստուածայինսն զաւրաւորսն, զի յորժամ ծնաւ ի կուսէն, որ մարդկութեան էր, աստղ ի յերկնից երեւեցոյց զԱստուածութիւն նորա, եւ յորժամ խաչեցաւ, լուսաւորքն խաւարեցան, նոյնպէս աստ. յորժամ կամեցաւ յարուցանել զՂազար, որ Աստուծոյ զաւրութեան էր գործ, նախ տրտմեցաւ եւ ելաց եւ աղաւթեաց, զի ցուցցէ, թէ նոյն Աստուածն մարդ էր, եւ նոյն մարդն՝ Աստուած:

Բան. «Առեալ նա ի մէջ նոցա կանխէր»:

Լուծմունք<sup>12</sup>. Այսինքն՝ ի մէջ տկարագունիցն:

<sup>1</sup> Ը Երկբայութիւն, վասն այն: Բան.

<sup>2</sup> Ը Հեք վասն այն ասէ. Բան.

<sup>3</sup> Ա Բ Հեք

<sup>4</sup> Ը Հեքէր

<sup>5</sup> Ա Բ Հեք

<sup>6</sup> Ը չարչարանաց

<sup>7</sup> Ա Բ զմեծամեծս

<sup>8</sup> Ա Բ ի հաւատս

<sup>9</sup> Ա Բ Բան. «Եւ

<sup>10</sup> Ա Բ մեկնութիւն

<sup>11</sup> Բ Հեք

<sup>12</sup> Ա Բ մեկնութիւն

Բան. «Եւ ոչ զնոյն բովանդակ բարբառի»:

Լուծմունք. Զտկարութիւն, այլ եւ զբարձրութիւն խաւսի վասն վերջնոցս:

Բան. «Եւ<sup>1</sup> ոչ դարձեալ զնոյն լոէ»:

Լուծմունք. Այլ խաւսի զխոնարհս, զի մի՛ գայթակղեսցին յայնժամ, զի որ կատարեալք են մտաւք ի հաւատս, մին բանն բաւական է նոցա հաստատութեան, ասէ, եւ այլն յայտնի է:

### Թէ վասն Է՞ր աղաւթեաց Քրիստոս

Նախ գիտելի է, զի աղաւթելն Քրիստոսի ոչ պատշաճի ընդ Աստուածութեան, այլ ընդ մարդկութեան, զի աստուածութեամբն Հաւը եւ Հոգւոյն հաւասար է եւ մարդկութեամբն մեզ է հաւասար: Դարձեալ՝ Արիոս ասէր Բանին աղաւթել, զի արարած ասէր զԲանն: Արդ, ընդ մեզ հաւասար աղաւթէ Քրիստոս եւ ընդ Հաւը հաւասար ընդունի զաղաւթս, որպէս այն, որ ինքն պատարագէ եւ ինքն ընդունի զպատարագն, նոյնպէս եւ զաղաւթելն իմասցիս:

Իսկ աստ վասն բազում պատճառի աղաւթեաց. Նախ՝ զի մի՛ կարծիցի յայլմէ աստուծոյ, այլ ի Հաւը Աստուծոյ առաքեալ: Երկրորդ. զի մի՛ կարծեսցեն հակառակ Աստուծոյ Հաւը: Երրորդ. զի մի՛ ասիցեն լուծիչ աւրինացն: Չորրորդ. զի շիջուսցէ զնախանձ հրէցն: Հինգերորդ. զի մի՛ կարծեսցեն, թէ Բեեղերուզաւ առնէ զսքանչելիսն: Վեցերորդ. զի մի Աստուած էր յաւրէնս գրեալ<sup>2</sup> (հմնտ. Ելք Ի 3), վասն այն աղաւթէ, զի մի՛ երկու Աստուած կարծեսցեն: Եւթներորդ. վասն խոնարհութեան մարմին զգենլոյն<sup>3</sup>, որպէս ասաց Ոսկերերանն: Ութերորդ. զի մեզ ուսուսցէ զաղաւթս եւ զխոնարհութիւն ունել: Իններորդ. զի Հաւը Աստուծութիւն յայտնի էր ի մէջ նոցա, յայնժամ եւ Որդւոյն ի ծածուկ: Տասներորդ. զի կամաւ Հաւը էր, որով ցուցանի միակամութիւն ընդ Հաւը:

Ո՞վ չարափառ, եթէ զայս շունչ յաղաւթելոյն ընկալաւ Ղազար, իսկ զի՞նչ այն, զոր առանց աղաւթելոյ իշխանութեամբ յարուցանէր զՈրդի այրոյն (հմնտ. Դուկ. Է 11-17) եւ զգուստը քահանայապետին (հմնտ. Դուկ. Ը 40-56) եւ զսաստել ծովուն (հմնտ. Մարկ. Դ 35-41) եւ զայլ ամենայն բժշկութիւնսն, զոր կատարէր հրամայելով

<sup>1</sup> С չեք

<sup>2</sup> С գրեալ յօրէնս

<sup>3</sup> А В զգենլոյ

եւ ոչ՝ աղաւթելով։ Այլ դու տես զլուրն ի Քրիստոսէ եւ իմա զպատճառն, զի ասէ. «Վասն ժողովրդեանս, որ շուրջ կան, առնեն, զի հաւատասցեն, թէ<sup>1</sup> դու առաքեցեր զիս»<sup>2</sup> (Յովի. ԺԱ 42):

Դարձեալ՝ զիտեն, ցուցանէ զհաւասար գիտութիւն ընդ Հաւր, ըստ այնմ. «Որպէս զիտ զիս Յայր, զիտեն եւ ես զՅայր» (Յովի. ԺԱ 15): Դարձեալ՝ լուար եւ լսես, զկամաց կատարելն ասէ, զի մի է կամքն Հաւր եւ Որդոյ։ Եւ դարձեալ չորրորդ պատճառ եւ պիտանի միտք, զի լուար եւ լսես զանցեալ եւ զպապայն ասէ, իսկ այժմ ասէ առնեն, ինքնիշխանութեամբ եւ աստուածաբար։

Յետ այսաւրիկ ճառէ զՉորրորդ կերպ ստուգութեան սքանչելեացն, որ է կոչումն Ղազարու։

### Վասն ձայնին Քրիստոսի

Բան. «Զայս իբրեւ ասաց Յիսուս, ի ձայն մեծ աղաղակեաց եւ ասէ<sup>3</sup>» (Յովի. ԺԱ 43):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Եւ աստ լինի երկու հարց։

**Առաջին.** Թէ զի՞նչ է աղաղակն։

Պատասխան. Աղաղակն երեք կերպիւ իմանի. նախ՝ բազմախուռն<sup>4</sup> ձայնք ամբոխից աղաղակ կոչի։ Երկրորդ. ձայն եւ բան եւ բարձր իդք սրտին խառնեալ աղաղակ կոչի<sup>5</sup>։ Երրորդ. ուժգին ձայնն աղաղակ կոչի։ Իսկ աստ ոչ առաջինն, այլ երկուքն յարմարին, զի ձայնն՝ ի մարմնոյն, եւ բանն՝ ի մտացն, եւ աստուածային զաւրութիւն խառնեալ ի նոսա։ Այլ եւ ուժգին եւ բարձր ձայնեաց, վասն այն ասէ. «Ի ձայն մեծ աղաղակեաց»։

Երկրորդ հարց. Վասն է՞ր ձայնիւ աղաղակեաց, զի մեռեալն ոչ զգայ զձայնն։

Պատասխան. Ասեմք վասն տասն պատճառի. նախ՝ որպէս այլ ուրեք առնէր սքանչելիս կամաւք կամ բանիւ, կամ ձեռաւք, կամ մատամբ, կամ թքով եւ այլով։ Եւ աստ ձայնիւն յարոյց զՂազար, զի Աստուած էր մարմինն եւ Աստուծոյ էր ձայնն, որ ի մարմնոյն։ Երկրորդ. զի մի կարծիցեն, թէ կախարդութեամբ ինչ ասիցէ բան։ Երրորդ. զի լսիցեն ամենայն ժողովուրդն եւ իմասցին ի նմանէ լինել զյարութիւն<sup>6</sup>։ Չորրորդ. զի ի ձայնէն ծանիցեն զաս-

<sup>1</sup> Ե եթէ

<sup>2</sup> A B չեք առաքեցեր զիս

<sup>3</sup> A C չեք եւ ասէ

<sup>4</sup> C բազմախառն

<sup>5</sup> A B չեք աղաղակ կոչի

<sup>6</sup> B յարութիւն

տուածային զաւրութիւն իւր, զի ոչ որպէս մարգարէքն անուամբն Աստուծոյ, եւ ոչ որպէս առաքեալքն անուամբն Քրիստոսի յարուցանէին: Հինգերորդ. զի բարձցէ զկարծիսն, որք ասեն զհոգիս զաւղեալ ի գերեզմանս, եցոյց, թէ ի հեռուստ է, այսինքն՝ ի գժոխս, կոչէ դառնալ ի մարմինն: Վեցերորդ. զի բարձցէ զմոլորութիւն, որք ասեն զհոգիսն մեռեալ ընդ մարմնոյն, եցոյց, թէ կենդանի են հոգիքն եւ ի զգայութեան: Եւթներորդ. զի վստահէր յանձն իւր եւ աներկբայ գիտէր, զի լինելոց էին հրաշքն: Ութերորդ. զի մեր ընտել սովորութեամբն տնաւրինէ՝ ի բացուստ ձայնելով: Իններորդ. զի սաստիւ գոչմամբն թիսուսի ահարեկ եղեալ բարապանք դժոխոցն եւ արձակեցին զհոգին յարգելեալ բանտէն: Տասներորդ. հնչումն ձայնին իջեալ ի յայր գերեզմանին եւ զապականեալ մարմինն նորոգեալ կենդանացոյց, եւ որպէս բանն ոչ մասամբ, այլ բոլոր բաժանի յամենեցուն սիրտն<sup>1</sup>, նոյնպէս ձայնն Քրիստոսի բոլորն էր առ հոգին Ղազարու եւ առ մարմինն ի գերեզմանի եւ յամենեցունց լսելիսն:

Բան. «Ղազարէ, արի՛, եկ արտաքս» (Յովհ. ԺԱ 44):

**Մեկնութիւն.** Զորս բառ է. մինն անուն եւ երեքն հրամայական բայ:

Ղազարէ՝ Ղազարոս, որպէս Ստեփաննէ՝ Ստեփաննոս: Եւ է վեց զիր կամ եւթն, որպէս Յիսուս Քրիստոս վեց եւ եւթ գրով դրոշմի: Իսկ որ ասէ՝ արի, մարմնոյն ասէ, որ անկեալ էր մահուամբ, եկ հոգին էր հեռացեալ, արտաքս՝ մարմինն ի գերեզմանէն եւ հոգին ի դժոխոցն: Եւ տե՛ս, զի ոչ ասաց, թէ Հայր յարո՛ զսա, կամ՝ յանուն Հաւը արի՛, այլ ինքն իշխանաբար հրամայէ մեռելոյն իբրեւ կենդանի խաւսելով:

Եւ աստ լինի կրկին հարց.

Առաջին. Վասն է՞ր ի ձայնելն մի միայն Ղազար ել, զի բազում Ղազարք էին անդ:

Պատասխան. Նախ՝ զի միաւոր ձայնեաց. Ղազարէ, արի՛, եկ, եւ ոչ բազմաւոր՝ Ղազարք, արի՛ք, եկա՛յք: Երկրորդ. զի ակնարկութիւն աստուածային առ մինն եղեւ եւ ոչ առ բազում:

Երկրորդ հարց. Վասն է՞ր զ Ղազար կենդանացոյց եւ ոչ զայլս:

Պատասխան. Զի մեծատունն զ Ղազար ինդըեաց ի մեռելոց յարուցանել, զի հաւատասցեն եղբարքն (հննտ. Դուկ. ԺԶ 19-31), Վասն այն փոխանակ Ղազար աղքատին յարոյց զ Ղազար սիրելին, եւ ոչ հաւատացին նոքա:

<sup>1</sup> Ըստածու

**Զկնի այսմ դնէ զհինգերորդ ստուգութիւն սքանչելեացն:**

Բան. «Եւ Ել մեռեալն վաղվաղակի ոտիւր կապելովք Եւ ձեռաւքն<sup>1</sup> Երիզապնդաւք Եւ Երեսաւք վարշամակապատաւք» (տես Յովհ. ԺԱ 44):

Չորս էր պատանք ազգին հրէից, այսինքն՝ վարշամակ գլխոյ Եւ ձեռացն Եւ ոտիւր Եւ բոլոր մարմնոյն, սոյնպէս զՔրիստոս պատեցին ըստ աւրինացն հրէից, սոյնպէս Եւ առ մեզ մին պատանքն զչորեսին մասն պատէ: Իսկ ասելն՝ Երիզապինդ, այն է, որով պատեալ<sup>2</sup> էր կտաւեայ շառափոկաւք, զի ստուգաբանութեամբ ասէ. Էր զնա պնդեալ, կամ՝ որիշապնդաւք: Եւ կրկին իրս նշանակէ. նախ՝ զի կապեալ է մեռեալն յամենայն գործոյ զգայութեանց<sup>3</sup>: Երկրորդ. զի նախահայրն մեր ոտիւր գնաց ի ծառն Եւ ձեռաւքն եհատ զպտուղն Եւ բերանովն եկեր, վասն այն զայն մասունսն<sup>4</sup> կապեմք պատկառելով:

Եւ աստ լինի կրկին հարց.

Առաջին. Թէ զի՞նչ նշանակէ<sup>5</sup> պատանք մեռելոյն:

Պատասխան. Կոչի պատանք, զի պատեալ է Եւ կապեալ զամենայն զգայարանսն Եւ ոչ ինչ կարէ գործել՝ ո՛չ չար Եւ ո՛չ բարի, Եւ զի կտաւն յերկրէ է Եւ արուեստիւ գործեալ, ցուցանէ, թէ զորինչ գործեաց ոք յերկրի, զնոյն զգենու Եւ զարդարի: Եւ զայլ արարողութիւն մեռելոյն գիտ ի Հարցմունքն, տասներորդ գլուխն չորրորդ համարն<sup>clvii</sup>:

Երկրորդ հարց. Վասն է՞ր Փրկիչն առանց պատանաց յարեաւ, Եւ Ղազար՝ պատանաւք:

Պատասխան. Նախ՝<sup>6</sup> վասն ստոյգ յարութեան երկոցունց, զի պատանք Փրկչին ցուցանէր, թէ ստուգապէս յարուցեալ է Եւ ոչ գողացեալ, Եւ պատանք Ղազարու ցուցանէ, թէ ստուգապէս Ղազարն է Եւ ոչ այլ ոք նման նմա, որպէս ասէ մեկնիչդ<sup>clviii</sup>:

Դարձեալ՝ խորհրդաւոր է, զի Քրիստոս յարեաւ ի կեանս անմահ, ոչ էր<sup>7</sup> պիտոյ պատանք նմա, որպէս Եւ ոչ մեզ ի հանդերձեալն, իսկ Ղազար՝ ի կեանս ժամանակեայ, պիտոյ էր նմա ունել պատանս Եւ ծածկոյթ մարմնոյ: Եւ բարւոք ասէ. «Ել Վաղվաղակի», զի զարութիւն Աստուծոյ ի նոյն վայրկենի Եւ յանմասն ըոպէի ներգործէ զհրաշւ:

<sup>1</sup> Ը Ել վաղվաղակի մեռեալն ոտիւրն կապելեօք Եւ ձեռաւք

<sup>2</sup> Ա Յ պնդեալ

<sup>3</sup> Ա Յ զգայութեան

<sup>4</sup> Ա Յ մասունս

<sup>5</sup> Ա Յ զի՞նչ է

<sup>6</sup> Ա Յ չեք

<sup>7</sup> Ա Յ որ ոչ էր

Եւ աստ երեք հրաշք ի միասին եղեւ. նախ՝ զի ընդ ասել ձայնին՝ յարեաւ: Երկրորդ. նոյն մարմնովն, որ եղաւ ի գերեզմանի, յարեաւ: Երրորդ. կապեալ ոտիւք եւ երեսաւք եկն առ Քրիստոս, վասն այն հրամայեաց.

Բան. «Լուծէք զդա եւ թողէք երթալ» (Յովի. ԺԱ 44):

Մեկնութիւն. Երկու ինչ ցուցանէ. նախ՝ ըստ Ոսկեբերանին, զի լուծանելովն զպատանս եւ շաւշափելով ծանիցեն, թէ նա է, որ մեռաւ եւ յարեաւն իսկ: Դարձեալ՝ զայս հրամայեաց Քրիստոս առ ի պատուել զպաշտաւնեայս իւր:

Իսկ զի հրամայեաց Քրիստոս թոյլ տալ նմա երթալ, վասն երկու պատճառի. առաջին է ըստ Ոսկեբերանին՝ վասն խոնարհութեան, զի ոչ հրամայէ ընդ իւր շրջել եւ յայտնել զփառսն Քրիստոսի: Երկրորդ. զի ցուցցէ, թէ ճմարիտ յարուցեալ է եւ ոչ առ աչաւք: Եւ այս յայտ է ի կենդանական գործոյն, որ էր շրջելն եւ ուտել, եւ որպէս ասէ ի սոյն Աւետարանիս, թէ՝ «Ղազար մի էր ի բազմելոցն, որք ուտէինն» (Հմմտ. Յովհ. ԺԲ 2): Եւ դարձեալ այսու եցոյց, թէ ոչ միայն յարուցեալ էր ի կենդանութիւն, այլ ի կատարեալ զաւրութիւն մարմնոյն:

### Թէ զինչ նշանակէր յարութիւն Ղազարու

Մեկնութիւն. Եւ գիտելի է, զի չորս նշանակութիւն ունի լուծումն եւ արձակումն Ղազարու.

Առաջին. նշանակէր զԱղամ ի կապից դժոխոցն արձակիլ<sup>1</sup> գալստեամբն Քրիստոսի, զի զդէմք եւ զբնութիւն Աղամայ ունէր Ղազարոս, որպէս ցուցաւ ի բանն, որ ասացաւ. «Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս»<sup>2</sup> (Յովի. ԺԱ 1):

Երկրորդ. դարձեալ նշանակէ, զի որ ոք մեռանի հոգւով ի մեղս եւ կապէ զգործն նորա սատանայ, իսկ յորժամ յառնէ ի մեռելոց, արձակի կապն սատանայի, որով կարասցէ փոխանակ չարին բարի առնել:

Երրորդ. դարձեալ նշանակէ յարութեան մերում, որք ազատիմք յայնժամ յամենայն<sup>3</sup> կրից մարմնոյ, որք աստ ըմբռնեալ տանջեն եւ կորուսանեն զհոգիս մեր:

Չորրորդ. դարձեալ ասեն այլ վարդապետք. Ղազարոս այս նշանակէ զայր մեղաւոր, զի Ղազարն թարգմանի աւգնեալ ի Տեառ-

<sup>1</sup> Ա չիք արձակիլ, Բ մեղաց դժոխոցն, Ը դժոխոց արձակիլ

<sup>2</sup> Ը չիք որպէս ցուցաւ ... հիւանդ Ղազարոս

<sup>3</sup> Յ ամենայն

Աէ, եւ յայնժամ աւգնեալ է այր ի Տեառնէ, յորժամ յԱստուծոյ շնորհս ինչ ընդունի: Եւ սա հիւանդանայ փորձութեամբ մեղաց, առանց կատարեալ հաւանութեան, եւ յորժամ հաւանի, յայնժամ մեռեալ ասի:

Եւ չորս աւր ի գերեզմանի մնայ<sup>1</sup> վասն չորս ընթացից մահու չափ մեղացն. առաջին է ներքին հաւանումն կամացն: Երկրորդ է արտաքին գործ մեղացն: Երրորդն՝ սովորութիւն ի մեղս: Չորրորդն է խստասրտութիւն, որ անզեղջ մնայ: Իսկ յարութիւն Ղազարու, որ եղեւ միայն ի Քրիստոսէ, նշանակէ զհեղումն շնորհաց ի հոգի մեղաւորին, իսկ լուծումն կապանացն, որ եղեւ սպասաւորութեամբ աշակերտացն, նշանակէ զքահանայական արձակումն, որ մեղաւորն ազատի յամենայն մեղաց իւրոց: Եւ այս լինի, յորժամ գայ ի մկրտութիւն կամ ի խոստովանութիւն մեղաց, զի մկրտութեամբն ազատիմք ի սկզբնական<sup>2</sup> եւ յամենայն ներգործական մեղաց<sup>3</sup>, որպէս յայտ է ի չափ հասեալսն, նոյնպէս եւ որ զղջմամբ խոստովանի եւ ապաշխարէ, ազատի յամենայն գործոց մեղաց եւ ի պատճոցն: Եւ որպէս նախ յարեաւ Ղազար ի մեռելոց եւ ապա արձակեցաւ, սոյնպէս պարտ է մեղաւորին նախ յառնել զղջմամբ եւ խոստովանութեամբ<sup>4</sup>, եւ ապա քահանայն արձակէ ի մեղաց զղջացեալն եւ զխոստովանեալն<sup>5</sup>, որ եւ զմեզ արձակեցէ Քրիստոս յամենայն կապից մեղաց մերոց: Ամէն:

Իսկ յորժամ ճառեաց աւետարանիչս, թէ որպէս<sup>6</sup> եղեւ յարութիւն Ղազարու, զկնի ճառէ, զոր ինչ հետեւեցաւ վասն այնմ յառութեան, որպէս ասէ.

Բան. «Բազումք ի հրէիցն» (Յովի. ԺԱ 45):

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Աստ երկու իրս ճառէ, որ եղեն<sup>6</sup> վասն այնմ յարութեան. առաջին՝ որքա<sup>7</sup>ն առ մերձակայս, երկրորդ՝ որքա<sup>8</sup>ն առ հեռաւորս, անդ. «Ժողովեցին քահանայապետքն եւ դպիրքն ատեան» (տես Յովի. ԺԱ 47), քանզի ասէ Պաւլոս յերկրորդ Կորնթացիս. «Հոտանուշ եմք Քրիստոսի<sup>9</sup>, ի մէջ փրկելոցն եւ կորուսելոցն. ոմանց ի մահ եւ ոմանց ի կեանս<sup>10</sup>» (հմնտ. Բ Կորնթ. Բ 15-16), նոյնպէս եւ<sup>11</sup> աստ վասն այսմ սքանչելեցս եղեւ, զի ոմանք ի հաւատս հաստատե-

<sup>1</sup> A B մնա

<sup>2</sup> B ազատիմք սկզբնական մեղացն

<sup>3</sup> A չիք մեղաց, B ներգործնական

<sup>4</sup> A B չիք եւ խոստովանութեամբ

<sup>5</sup> A B զմկրտեալն

<sup>6</sup> A B որ են

<sup>7</sup> A B Քրիստոսիւ

<sup>8</sup> C ոմանց ի կեանս եւ ոմանց ի մահ

<sup>9</sup> B չիք

ցան եւ ոմանք ի չարն խստացան, սակայն առաջինն եղեւ ի սքանչելեացն ըստ ինքեան եւ երկրորդն ոչ ըստ ինքեան, այլ պատահմամբ:

**Վասն առաջնոյն ասէ աւետարանիչս.**

Բան<sup>1</sup>. «Բազումք ի հրէիցն, որ Եկեալ էին առ մարենանս<sup>2</sup>» (Յովի. ԺԱ 45):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Զի՞նչ նմա ազգական կային, ի նորա յանուանէ մարեմանք կոչին, որպէս յիսրայէլէ իսրայէլեանք: Յիրաւի բազումք հաւատացին, զի մեծագոյն պատճառ ունէին հաւատալոյ, զի նշանս այս յայտնապէս ցուցանէր զաստուածային զաւրութիւն Քրիստոսի:

Բան. «Եւ ոնանք ի նոցանէ գնացին առ փարիսեցիս<sup>3</sup> եւ պատմեցին [նոցա], զոր արար Յիսուս» (Յովի. ԺԱ 46):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** **Վասն սոցա վարդապետք ունին երկու կարծիս.** Նախ՝ որպէս բարեկամքն Քրիստոսի ասացին զայս փարիսեցւոցն ի բաց բառնալ ի նոցանէ զբարկութիւն եւ զատելութիւն, որ ունէին վասն Քրիստոսի, եւ ոմանք ասեն, թէ չար գիտաւորութեամբ առ ի զայրացուցանել զփարիսեցիսն ընդդէմ Քրիստոսի, եւ երկրորդս ճշմարիտ է, որպէս յայտ է ի մեկնիչդ<sup>clix</sup>:

Իսկ ներբողեանն նանայի, որ վասն յարութեան Ղազարու, սոյնպիսի մտաւք է. Նախ՝ ներբողէ զհիւանդութիւն, զննջել եւ զյառնելն Ղազարու, եւ ապա՝ զինչ է շահ եւ աւգուտ մեզ կենդանեաց եւ մեռելոց, եւ ապա զգալն Քրիստոսի եւ որ ձայնիւ հրաշագործեաց, եւ յետոյ յորդորակ վասն յարութեան հասարակաց<sup>clx</sup>:

Բան. «Ո՞վ սիրելիիք»<sup>clxi</sup>:

**ԼՈՒԾՄՈՒՆՔ.** զի Քրիստոս սիրեաց զմեզ որպէս զՂազար, վասն որոյ մեք կոչիմք:

Բան. «Ո՞վ հիւանդութիւն»<sup>clxii</sup>:

**ԼՈՒԾՄՈՒՆՔ.** Նախ՝ հիւացական է, երկրորդ՝ եղական, որպէս ի սկիզբն ասաց. «Եր ոմն հիւանդ» (Յովի. ԺԱ 1), կենդանութեան յոյս ունէին քորքն Ղազարու, վասն որոյ ասեն. «Չոր Դու սիրեիր, հիւանդացեալ է» (Յովի. ԺԱ 3), եւ յարութեան նշանակ եղեւ առաւել քան զյոյս նոցա:

Բան. «Մահու ընդդիմաբաիկ»<sup>4</sup><sup>clxiii</sup>:

<sup>1</sup> B չիք

<sup>2</sup> B C մարենանսն

<sup>3</sup> B C փարիսեցիսն

<sup>4</sup> A B C մահուդ ի մարտիկ

Լուծմունք. այն է, որպէս ասաց Փրկիչն. «Այն հիւանդութիւն ոչ է առ<sup>1</sup> ի մահ» (տես Յովի. ԺԱ 4), եւ ոսոխ բանսարկուին այն է, որ ասաց. «Զի փառաւորեսցի Որդի Աստուծոյ այնուիկ» (տես Յովի. ԺԱ 4):

Բան. «Ախտից բուժումն»<sup>clxiv</sup>:

Լուծմունք. զառաքելոց միտսն բժշկեաց:

Բան. «Հաւատոց հիմն»<sup>clxv</sup>:

Լուծմունք. որպէս ասէ. «Դաւատա՞ս այսմիկ» (Յովի. ԺԱ 26):

Բան. «Թերահաւատից յանդիմանութիւն»<sup>clxvi</sup>:

Լուծմունք. «Ո՞չ ասացի, թէ հաւատաս, տեսցես զփառսն Աստուծոյ» (տես Յովի. ԺԱ 40):

Բան. «Ոչ հիւանդութիւն ասեմ, այլ հիւանդ մտաց առողջութիւն»<sup>clxvii</sup>:

Լուծմունք. այն է, որ առողջացոյց զառաքեալսն՝ ասելով.

«Որ գնայ ի տունցեան, ոչ գայթակողի» (Յովի. ԺԱ 9):

Բան. «Եւ ննջեցելոց կանդնումն»<sup>clxviii</sup>:

Լուծմունք. ասէ. «Ղազարոս ննջեաց, երթան, զի զարթուցից զնամ»<sup>3</sup> (Յովի. ԺԱ 11):

Բան. «Եւ յարութեան մեր պատկեր»<sup>clxix</sup>:

Լուծմունք. զի նախ մեռաւ եւ ապա յարեաւ: տե՛ս զկարգն, զի նախ հիւանդանամք եւ ապա ննջեմք եւ ապա յառնեմք:

Ասաց զներբողեանն Ղազարու, զկնի ասէ զի՞նչ է շահ եւ աւգուտ մեզ.

Բան. «Սքանչանայք ի նորահրաշ յարութիւն»<sup>clxx</sup>:

Լուծմունք. նոր էր չորեքաւրեայ յարութիւն, որպէս ի ծնէ կուրին լուսաւորելն, զի ոչ է եղեալ ի սկզբանէ եւ այլ ոչ լինի մինչ ի կատարած: Գիտելի է, զի սքանչանալն մտացն է, զուարթանալն՝ յերեսաց<sup>4</sup>, եւ բերկրիլն՝ սրտից, զնոյն յոյսն ի մեզ հաստատեալ:

Այժմ ասէ զիսնդութիւն հոգւոյն, զի խայտալն խնդալն է:

Բան. «Ողբայ մահ»<sup>clxxi</sup>:

Լուծմունք. թագաւորեաց մահ յԱղամայ մինչեւ յաւրէնսն Մովսիսի եւ ի Քրիստոս կործանեցաւ, եւ դժոխոց զաւրութիւն քակտեցաւ, որ զհզաւրն կապեաց եւ զտուն նորա աւերեաց Քրիստոս:

Բան. «Հըճուին նախաստեղծքն»<sup>5</sup><sup>clxxii</sup>:

<sup>1</sup> С չիք առ

<sup>2</sup> В յայսմիկ

<sup>3</sup> А В չիք

<sup>4</sup> А В զուարթանալ՝ երեսաց

<sup>5</sup> С նախաստեղծք

Լուծմունք. որպէս ասէ. «Եկն եւ եզիտ զնա չորեքալրեայ» (Յովի. ԺԱ 17): «Ծափն»<sup>clxxiii</sup> հոգւոյ եւ մարմնոյ ուրախութիւն է, «աւետարանելն»<sup>clxxiv</sup> է զգերեզմանս աւրհնել: «Զարհուրեալ»<sup>clxxv</sup> հոգւոյն, եւ «Դողալն»<sup>clxxvi</sup> մարմնոյն, «Ծառ կենաց»<sup>clxxvii</sup> Քրիստոս է, որ ասաց. «Ես [իսկ] եմ յարութիւն եւ կեանք» (Յովի. ԺԱ 25): «Մահաբեր ծառոյն գործն»<sup>clxxviii</sup> մահն է, «Թզենւոյ տերեւն»<sup>clxxix</sup> ապականութիւն:

Այժմ ներբողէ զձայնն աստուածային, զի չորիւք ինչ ներգործեաց ի Ղազարոս. նախ՝ ի հոգի, երկրորդ՝ ի մարմինն՝, երրորդ՝ յառնելն, չորրորդ՝ յարտաքս գալն, որպէս ասէ. «Ղազարէ, արի, եկ արտաքս» (Յովի. ԺԱ 43):

Յետ այսաւրիկ գնէ զյորդորակ վասն հասարակ յարութեան մերոյ. «Լապտեր»<sup>2</sup><sup>clxxx</sup> միտքս է մեր, եւ «անաւթն»<sup>clxxxii</sup> մարմինս, «եւղն»<sup>clxxxiii</sup> ողորմութիւն եւ այլ բարի գործք, իւղավաճառք աղքատքն են: Տէրն հրամայէ. «Որի արարէք միում յեղբարցս այսոցիկ】 ի փոքրկանց, ինձ արարէք<sup>3</sup>» (տես Մատթ. ԻԵ 40): *Սողոմոն ասէ.* «Կաշառել զդատաւորն» (հմնտ. Ղուկ. ԺԲ 58), նախ այն է, որ ծածուկ քահանային խոստովանիմք, երկրորդ՝ տուրք աղքատացն, երրորդ՝ աղաւթքն, այլ եւ միայն խաւսել ընդ դատաւորն, յորժամ միայն քահանային խոստովանիմք, եւ լուծանել զմեղադրանս ապաշխարելն է, եւ փրկողին Քրիստոսի փառք յաւիտեանս, Ամէն<sup>4</sup>:

Աւետարանիչս նախ ճառեաց զչարախաւսելն ոմանց, այժմ ասէ, թէ որպէս<sup>5</sup> խորհուրդ արարին վասն Քրիստոսի:

Բան. «Ժողովեցին քահանայապետքն եւ փարիսեցիքն ատեան<sup>6</sup>» (Յովի. ԺԱ 47):

**Մեկնութիւն.** Լուեալ սոցա զյարութիւն Ղազարու ի<sup>6</sup> նախանձ շարժեցան առ ի մահն Քրիստոսի: Գիտելի է, զի քահանայապետքն էին ի ցեղէն Ղեւայ<sup>7</sup>, եւ փարիսեցիքն՝ ի ցեղէն Շմաւոնի, եւ վասն այս խորհրդոյս ասաց Յակոբ յԱրարածքն քառասուն եւ ինը. «Շմաւոն եւ Ղեւի եղբարք կատարեցին զանիրաւութիւնս [ի] կամաց իւրեանց, ի խորհուրդս նոցա մի մտցէ անձն իմ» (Ծննդ. ԽԹ 5-6):

<sup>1</sup> Հի մարմին

<sup>2</sup> Ա Ը Պ Ա Վ Ա Ր Ո Ւ Ր

<sup>3</sup> Ա Բ Հ Ե Ք

<sup>4</sup> Ա Բ Հ Ե Ք յաւիտեանս, Ամէն

<sup>5</sup> Բ յատեան

<sup>6</sup> Կ Հ Ե Ք ի

<sup>7</sup> Կ ՂԵՎԵԱՅ

Եւ խորհուրդս այս անաւրէն է վասն չորս պատճառի. նախ՝ զի քաշանայապետքն մեծ եւ գիտունք էին եւ փարիսեցիքն սուրբ երեւէին եւ աւրինապահք, վասն որոյ մեղք նոցա ծանրագոյն էր: Երկրորդ. զի զանմեղն դատապարտէին: Երրորդ. զի ոչ վասն հոգեւորաց, այլ վասն մարմնաւոր փառաց եւ ստացուածոց: Չորրորդ. զի յայտնի յատեան եւ ոչ ի ծածուկ մեղանչէին:

**Զկնի ցուցանէ զտարակոյս նոցա:**

Բան. «Զի՞նչ արացուք, զի այրն այն բազում նշանս առնէ» (Յովի. ԺԱ 47):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Նախ ցուցանէ, թէ յայտնիք էին սքանչելիքն, զի ոչ կարէին ուրանալ: Երկրորդ. այսու երեւի, թէ պարտ էր նմա առաւել հաւատալ, քան Մովսիսի, զի Մովսէս ոչ արար այնքան մեծամեծ նշանս, եւ ժողովուրդն հաւատաց նմա, ապա պարտ էր պատուել զնա իբրեւ զծմարիտ Աստուած:

**Եւ ընդդէմ այսմ հակառակէին.**

Բան. «Եթէ թողումք զնա [այնպէս], ամենեքին հաւատան ի նա<sup>1</sup>» (Յովի. ԺԱ 48):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Հստ Ռոկեբերանին կամէին այսու զժողովուրդն ածել ի բարկութիւն եւ յատելութիւն Քրիստոսի, որպէս թէ գիտացեն հոռմայեցիքն զժողովուրդն զկնի նորա գնացեալ, յայնծամ կարծեն, թէ կամիմք տէրութեան նոցա հակառակիլ եւ զնա մեզ թագաւոր կացուցանել: Եւ այլք ասեն, թէ երկեան նոցա, զի մի ամենեքեան հաւատասցեն ի նա, եւ յայնժամ ոչ մնայր ոք, որ զտաճարն կամ զքաղաքն պահէր ի ձեռաց հոռմայեցւոցն<sup>2</sup>, զի կարծէին զվարդապետութիւն Քրիստոսի ընդդէմ<sup>3</sup> տաճարին եւ աւրինացն նոցա լինել:

Բան. «Եւ գայցեն հոռոնք<sup>4</sup>» (Յովի. ԺԱ 48):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Հոռմանուն է հոռոմն, հոռմայեցիք վասն քաղաքին հոռոմ կոչին, եւ յոյնք վասն կայսերն Հոռմայ հոռոմ անուանին: Գիտելի է, զի մարգարէքն խոստանային զՔրիստոս գալ իբր զթագաւոր, իսկ նոքա մոլորեալք ժամանակեայ թագաւոր կարծէին եւ հակառակ կայսերն<sup>5</sup>, եւ այս լինէր պատճառ աւերման, որպէս ասէ.

Բան. «Գայցեն հոռոնք եւ բառնայցեն զազգս մեր եւ զտեղի» (Յովի. ԺԱ 48):

<sup>1</sup> A B չեք ի նա

<sup>2</sup> C հռոմայեցւոց

<sup>3</sup> B ուն

<sup>4</sup> A B հոռոնքն

<sup>5</sup> C կայսեր

Մեկնութիւն. Այսինքն<sup>1</sup> քակտեսցեն զտաճարն եւ զքաղաքն եւ ի գերութիւն վարեսցեն զժողովուրդն: Այսու յայտնի է կիրք երկիւղին մոլորեալ էր ի նոսա զդատումն բանական մասին:  
իսկ զկնի ճառէ զլուծումն այսմ տարակուսանաց:

### Վասն քահանայապետից

Բան. «Մի ուն ի նոցանէ, [անուն] Կայիափա, որ քահանայապետ էր տարույն» (Յովի. ԺԱ 49):

Մեկնութիւն<sup>2</sup>. Գիտելի է, զի Աստուած հրամայեաց մի լինել ծայրագոյն քահանայապետ, որքն եւ ապրէր եւ ապա փոխէր, որպէս Ահարոն զԵղիազար ձեռնադրեաց եւ նա զՓենէհեզ, սոյնպէս եւ ի նորս Տէրն, յորժամ կամէր ամբառնալ, ձեռն եղ եւ աւրհնեաց զաշակերտսն եւ արար զնոսա երկոտասան կաթողիկոսունս:

Եւ յոյժ պատշաճ է միոյ ազգին մի լինել քահանայապետ վասն վեց պատճառի. նախ՝ վասն խորհրդական աւծմանն, որ ի միոյն ի բոլորն սփոփ, ըստ այնմ. «Որպէս իւղ, զի իջանէ ի գլուխ եւ ի մաւրուսն<sup>3</sup> Ահարոնին<sup>4</sup>» (Սաղմ. ՇԼԲ 2) եւ այլն: Երկրորդ. վասն աւագութեան եւ վերակացութեան, որ ելանէ ի քահանայապետէն առ ժողովուրդն: Երրորդ. վասն զգուշանալոյ ընդդէմ ամենայն որոգայթից եւ բաժանմանց, որպէս Աստուած մի է եւ խնամէ զամենայն արարածու, զի թէ երկուս կամ բազումք էին, եղծանէին մի զմիոյ աշխարհ: Չորրորդ. որպէս Քրիստոս մի է եւ երկոտասան առաքեալք, սոյնպէս կաթողիկոսին պարտ է մի լինել եւ երկոտասան արքեպիսկոպոսք ունել: Հինգերորդ. որպէս միոյ անձին մի է գլուխ, սոյնպէս եւ միոյ ազգի մի է կաթողիկոս: Վեցերորդ. որպէս միոյ հարսին մի է փեսայն, սոյնպէս միոյ վիճակին կամ միոյ<sup>5</sup> ազգին մի է կաթողիկոս կամ եպիսկոպոս: Եւ երկուսն կամ երեքն ընդդէմ է ասացելոցս եւ յոյժ անվայելուչ եւ կորուստ հոգւոց: Եւ այս կարգս եղծեալ էր ի նոսա, զի բազումք լինէին քահանայապետ, որպէս այժմ առ մեզ, եւ վասն ագահութեան եւ փառասիրութեան յամենայն ամի նոր քահանայապետ լինէր, վասն այն ասէ. «Կայիափա<sup>6</sup> քահանայապետ էր տարույն այնորիկ» (տե՛ս Յովի. ԺԱ 49):

<sup>1</sup> B չեք

<sup>2</sup> B չեք

<sup>3</sup> C ի մօրուս

<sup>4</sup> A B չեք եւ ի մաւրուսն Ահարովնի

<sup>5</sup> C չեք

<sup>6</sup> C Կայիափաս

Եւ Աստուած թոյլ տար, զի այնպէս բաժանմունք լինէր ի մէջ հրէիցն վասն երեք պատճառի. նախ՝ զի յայտնի նշանակ էր անկման այնմ ժողովրդեանն, ըստ այնմ. «Թագաւորութիւն բաժանեալ յանձն՝ աւերի» (տես Մատթ. ԺԲ 25): Երկրորդ. զի ցուցցէ զմեծութիւն չարութեան իշխանաց եւ հովուաց այնմ ժամանակի: Երրորդ. էր ի պատճառի եւ ի փառս Քրիստոսի, զի որքան դատապարտողքն բազումք<sup>1</sup> լինին, այնքան փառք են դատապարտելոյն, թէ անմեղ լինի, իսկ Կայիշափա աւգտակար համարէր զմահն Քրիստոսի:

Բան. «Դուք ոչինչ գիտէք, [եւ ոչ] բնաւ խորիել [իսկ]» (Յովհ. ԺԱ 50):

ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ. Նախ գրգոէ զնոսա ի սպանանել զՅիսուս Քրիստոս<sup>2</sup>: Երկրորդ. ասէ թէ ամենայն մարդ, որ հանճար ունի, զհասարակաց բարին առաւել ընտրէ, քան զմասնաւորն, զի եթէ զայրս զայս թողումք, ամենայն ժողովուրդն կորնչի, եւ թէ զնասպանանել տամք, ամենայն ժողովուրդն պահեալ լինի, վասն այն բարի է, զի նա մեռանիցի, թէպէտ եւ անմեղ է, որպէս ասէ:

Բան. «Լաւ է մեզ, զի այր մի նեռանիցի ի վերայ ժողովրդեանս, եւ նի ամենայն ազգս կորիցէ» (Յովհ. ԺԱ 50):

ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ<sup>3</sup>. Նախ զայն ասէ, զի մի գայցեն հոռոմք եւ բառնան զազգս մեր<sup>4</sup>: Երկրորդ. նշանակէր, թէ մահն<sup>5</sup> Քրիստոսի փրկութիւն լինէր<sup>6</sup> մարդկան ազգի:

Հարց. Վասն է՞ր մահն Քրիստոսի փրկութիւն է մարդկան ազգի:

Պատասխան. Վասն երեք պատճառի. նախ՝ զի գրեալ է ի նաւմոս թագաւորաց, եթէ զինք արեան թագաւորաց իւր թագաւորութիւն է<sup>clxxxiii</sup>: Եւ քանզի Աստուած է Քրիստոս եւ Տէր ամենայնի, վասն այն մահն նորա զինք եւ փրկանք է ամենայնի: Երկրորդ. զի անմեղ մեռաւ: Երրորդ. զի կամաւ մեռաւ, վասն այն մահն<sup>7</sup> նորա փրկութիւն եղեւ ամենայնի, զի սոսկ մարդոյ մահ եւ որ մեղաւք մեռանի եւ ակամայն ոչ է այլոց փրկութիւն: Այսու յայտնի է, զի ախտ նախանձուն եւ երկիւղ կորստեան ազգին խափանեաց զընտրութիւն նորա, զի բնաւ ոչ է մարթ սպանանել զանմեղն, զի այնու ոչ ինչ լինի հասարակաց բարի, այլ քակտումն եւ

<sup>1</sup> A B բազում

<sup>2</sup> A B սպանանել զՔրիստոս

<sup>3</sup> B չիք

<sup>4</sup> A B չիք զազգս մեր

<sup>5</sup> B թէ մահն նշանակէր

<sup>6</sup> C լինի

<sup>7</sup> C մահ

կորուստ, որպէս վասն սպանմանն Քրիստոսի քակտեցաւ տեղին եւ գերեցաւ ժողովուրդն եւ ի<sup>1</sup> սուր անկաւ յետ քառասուն եւ երկու ամի չարչարանացն Քրիստոսի, ի Տիտոսէ եւ ի Վէսպիանոսէ:

**Ապա դնէ առընթեր զլուծումն բանին Կայիշափայ.**

Բան. «Զայս ոչ յանձնէ ինչ ասաց» (Յովհ. ԺԱ 51):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ. Նախ՝ զի<sup>2</sup> ոչ գիտաց զինչ ասաց, զի մարդարէութիւնք էին վասն Քրիստոսի մահուանն: Երկրորդ. ոչ յանձնէ ասաց, այսինքն՝ գիտաւորութիւն նորա ոչ էր վասն հոգեւոր փրկութեան, որ եղեւ մահուամբն Քրիստոսի:**

Բան. «Այլ զի քահանայապետ էր տարւոյն այնորիկ, մարգարեացաւ» (Յովհ. ԺԱ 51):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ. Այսինքն՝ վասն քահանայապետութեան<sup>3</sup> աւծաւ յԱստուծոյ՝ առ ի յայտնել զբանս զայս:**

Բան. «Թէ մեռանելոց է Քրիստոս ի վերայ ազգին» (տես Յովհ. ԺԱ 51):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ. Ասացաւ ի վերոյ, եթէ գթութեամբն ցուցանի, թէ Քրիստոս Աստուած է, եւ գթութիւն Քրիստոսի երեւի չորս կերպիւ, երեքն ասացաւ վասն յարութեան Ղազարու եւ չորրորդն այս է, զի ըստ մարդարէութեան Կայիշափա ընդունեցաւ զմահ վասն փրկութեան մարդկան: Արդ, մահն Քրիստոսի հասարակաբար աւգտակար էր<sup>4</sup> ամենայն ազգի՝ հրէից եւ հեթանոսաց, որք ժողովեցան ի մի հաւատ եւ ի մի<sup>5</sup> հովիւ, որք բաժանեալք էին ի բազում կուսս եւ ի զանազան մեղս, որպէս յայտ է ի մեկ-նիչդ<sup>clxxxiv</sup>, իսկ ազգ կոչին նմա<sup>6</sup> հրէից ժողովուրդն, որք էին ազգ Քրիստոսի ըստ մարմնոյ, զի ինքն անձամբ իւրով քարոզեաց նոցա եւ բազումք հաւատացին Քրիստոսի, իսկ աշակերտաւքն քարոզեաց հեթանոսաց:**

Բան. «Եւ ոչ ի վերայ ազգին միայն» (Յովհ. ԺԱ 52):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ. Այսինքն՝ ոչ միայն վասն հրէիցն:**

Բան. «Այլ [զի եւ] զորդիսն Աստուծոյ զցրուեալսն ժողովեսցէ [ի մի]» (Յովհ. ԺԱ 52):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ. Այսինքն՝ զհեթանոսս, որք որդիք Աստուծոյ ասին, ո՛չ զի յայնժամ որդիք էին, այլ զի լինելոց էին: Եւ դարձեալ՝ յայնժամն որդիք Աստուծոյ էին ըստ նախասահմանութեան Աստուծոյ, թէպէտ ոչ ըստ ներգործութեան:**

<sup>1</sup> B չիք

<sup>2</sup> C թէ

<sup>3</sup> A B քահանայութեան

<sup>4</sup> C է

<sup>5</sup> A B չիք մի

<sup>6</sup> A ամենայն

**Ապա զկնի ճառէ, թէ հաւանեցան հրէայքն բանիցն կայիափայ:**

Բան. «Ապա յայնն արէ խորհուրդ արարին, զի սպանցեն զնա» (Յովի. ԺԱ 53):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ. Ասէ Ոսկէբերանն.** «Եւ նախ խնդրէին հրէայքն զթիսուս սպանանել, այլ այժմ վճիռ հատին եւ կնքեցին համաձայնութեամբ ժողովոյն սպանանել զնա, որքան եւ շոյտ կարեն»:

**Ապա ցուցանէ զգուշութիւն Քրիստոսի ընդդէմ այսմ հալածման.**

Բան. «Եւ Յիսուս ոչ այնուհետեւ համարձակ շրջէր [ի մեջ հրէիցն], այլ զնաց [անտի] յերկիր մի, որ մերձ էր<sup>1</sup> յանապատ, ի քաղաք [նի, որում անուն էր] Եփրայիմ, [եւ անդ լինէր] աշակերտաւքն<sup>2</sup> [հանդերձ]» (Յովի. ԺԱ 54):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ. Յիսուս ոչ վասն երկիւղի գնաց յանապատ, ուստի յայտ է, զի յետոյ եկն ի չարչարանս:**

Այլ վասն երեք պատճառի. նախ՝ զի դեռ չէր հասեալ ժամանակ չարչարանացն Քրիստոսի, նախասահմանեալն յԱստուծոյ<sup>3</sup>, եւ խնդրէին սպանանել: Երկրորդ. զի մի ակամայ<sup>4</sup> լիցի չարչարանքն, որպէս հրէայքն կարծէին, այլ եկն կամաւ ի չարչարանս: Երրորդ. զի յետ մեծամեծ<sup>5</sup> նշանացն<sup>6</sup> վասն յարութեան Ղազարու գնաց յանապատ, զի մի փառաւորեսցի ի մարդկանէ, որպէս ցուցաւ վասն ի ծնէ կուրին եւ վասն անդամալուծին բժշկութեան: Իսկ Քրիստոս չողաւ ի քաղաքն Եփրայիմ, զի սակաւ ժողովուրդ գոյր անդ եւ ոչ բազում ամբոխով, այլ աշակերտաւքն առանձին գնաց: Եւ անդ եկաց մինչեւ մերձեցաւ ժամանակ չարչարանացն, եւ զի ցուցցէ, թէ սակաւ աւուրս եկաց անդ, ասէ.

### Վասն վերջին Զատկին

Բան. «Եւ մերձ էր Զատիկն հրէից» (Յովի. ԺԱ 55):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ. Զատիկն ազատութիւն լսի, եւ Պասքայն՝ անցիք:** Ասացաւ երեք Զատիկն յառաջագոյն, այս չորրորդ<sup>7</sup> Զատիկն է, յորում չարչարեցաւ Քրիստոս:

<sup>1</sup> A B չեք նի, որ մերձ էր

<sup>2</sup> A B չեք

<sup>3</sup> B C Աստուծոյ

<sup>4</sup> B յականայ

<sup>5</sup> C մեծագործ

<sup>6</sup> B սքանչելեացն

<sup>7</sup> B չորրորդ

Հին Զատիկն գառամբն աւրինակէր զնորս. նախ՝ որպէս զենմամբ գառինն ազատեցան յեղիպտոսէ, եւ «Զատիկ մեր զենաւ Քրիստոս» (Ա Կորնթ. Ե 7), որով ազատեցաք յեղիպտական խաւարէ: Երկրորդ. որպէս արեամբ գառինն աւծան սեամք նոցա, որ նշանակէր զգայութիւնս մեր, որպէս ասէ մեկնիչդ<sup>cixxv</sup>, եւ զի պարտական էին ամենայն<sup>1</sup> հրէայքն ի Զատկին գալ յերուսաղէմ, վասն որոյ ասէ.

Բան. «Եւ բազումք ելին յերուսաղէն ի գաւառէ անտի» (Յովի. ԺԱ 55):

Մեկնութիւն. Նախ՝ ի Հրէաստանէ, եւ դարձեալ՝ յեփրայիմ գաւառէ, յորում Քրիստոս աշակերտաւքն եկն:

Բան. «Յառաջազոյն քան զԶատիկն, զի սրբեսցեն զանձինս» (Յովի. ԺԱ 55):

Մեկնութիւն. Նախ՝ զի զպիտոյքն գնեսցեն Զատկին՝ ոչխար, գառն եւ այլն: Երկրորդ. զի սրբեսցին, այսինքն՝ լուացմամբ եւ պահաւք եւ գերծմամբ հերացն եւ աղաւթիւք, զի արժանապէս ճաշակեսցեն զգառն Զատկին: Արդ, եթէ նոքա զանձինս սրբեն վասն աւրինակին, որքան առաւել պարտ է մեզ սրբել զանձինս աղաւթիւք եւ բարի գործովք, զի արժանապէս ընդունիցիմք զճշմարիտ գառն Աստուծոյ, այսինքն՝ զմարմինն Քրիստոսի<sup>2</sup>, որպէս ասէ Պաւլոս. «Փորձեսցէ մարդ զանձն իւլ<sup>3</sup>» (Ա Կորնթ. ԺԱ 28) եւ այլն: Եւ աստի յայտնի է, զի կարի մոլորեալ են նեստորականքն եւ Յակոբիկ ասորիք եւ այլք, որք ոչ խոստովանին եւ ապա ճաշակեն զմարմինն Քրիստոսի<sup>4</sup>, զի քան զՀրէայսն եւ զխաչանունսն անհաւատագոյնք երեւին:

Բան. «Խնդրէին զՅիսուս եւ ասէին լընդ միմեանս, մինչ կային ի տաճարին, զիա՞րդ թուի ձեզ, եթէ] ո՞չ զայցէ ի տաւն այսր» (Յովի. ԺԱ 56):

Մեկնութիւն. Կրկին է իմացումն. ոմանք ասեն, թէ ի բարեկամացն էին Քրիստոսի եւ փափագանաւք խնդրէին զվարդապետութիւն եւ զյուր սքանչելեացն Քրիստոսի, եւ զարմանային, թէ զիա՞րդ ոչ է եկեալ յուսուցանել<sup>5</sup> զբազմութիւն ժողովրդոց<sup>6</sup>, իսկ ոմանք ասեն, թէ ի հակառակացն էին, որք խնդրէին զնա սպանանել, որպէս ասէ մեկնիչդ<sup>cixxvi</sup>: Սակայն առաջի տեսութիւն ի ճահ թուի քան զվերջինս<sup>7</sup>, զի սոքա ի գաւառէ ասին գալ, ուստի

<sup>1</sup> Յ այսինքն

<sup>2</sup> Յ չեք այսինքն ... Քրիստոսի

<sup>3</sup> Ա Բ չեք

<sup>4</sup> Յ Տեառն

<sup>5</sup> Ա Բ Յ ի յուսուցանել

<sup>6</sup> Յ ժողովոց

<sup>7</sup> Յ վերջինսն

**Երեւի, զի ոչ էին դաւաճանողք Քրիստոսի, որպէս երուսաղէմացիք<sup>1</sup>:**

Բան. «Պատուեր տուեալ էր, զի գուշակեսցեն զննանէ» (տես Յովի. ԺԱ 56):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Պատասխանի տայ աւետարանիչս տարակուսելոցն, թէ վասն չարութեան հրէիցն առ ժամանակ մի տեղի էր տուեալ, եւ գուշակելն, այսինքն՝ զգուշանալ կամ մատնել, կամ ցուցանել, կամ ջաշուշել լսի:

### Վասն մարգարէութեան Կայիշափայ

Աստ խնդրի, թէ Կայիշափայ<sup>2</sup> է՞ր ճշմրիտ մարգարէ: Երեւի թէ՝ այո, վասն կրկին պատճառի. նախ՝ զի Բաղամը<sup>3</sup> ճշմրիտ մարգարէ գրի ի Թիւքն (Թիւք ԻԲ, ԻԳ), եւ նա էր այր չար, սոյնպէս եւ Կայիշափայ էր այր չար եւ ճշմրիտ մարգարէ, զի մարգարէութիւն երբեմն չարեացն պարգեւի յԱստուծոյ: Երկրորդ զի բնաբանս ասէ, զի մարգարէացաւ, թէ թիսուս մեռանելոց էր (հմնտ. Յովի. ԺԱ 51): Արդ, թէ ոչ է մարգարէ, բան Աւետարանիս ի դերեւս<sup>4</sup> ելանէ: Ընդդէմ այսմ առարկի, զի Կայիշափա սուտ ասաց, ապա ուրեմն ոչ է<sup>5</sup> մարգարէ, քանզի նա թշնամեացն Քրիստոսի ասաց, թէ լաւ է ձեզ, զի մեռանիցի այր մի, իսկ մահն Քրիստոսի ոչ եղեւ աւգտակար սպանողացն զնա, եւ ճշմրիտ մարգարէն ոչ ասէ սուտ, ապա ուրեմն Կայիշափայոչ էր մարգարէ:

Պատասխան ասեն նոյն վարդապետքն, եթէ երկու իրս խնդրին ճշմրիտ մարգարէին. առաջին՝ զի ունիցի ճշմրիտ ճանաչումն իրաց ինչ, որ անյայտ է յայլ<sup>6</sup> մարդկան առ որ բնակէ, զի թէ ոք ունիցի երեւումն ինչ, այլ ոչ ճանաչէ զճշմրիտ նշանակութիւն, ոչ ասի մարգարէ, որպէս երազատեսքն, որպէս փարաւոն (հմնտ. Ծննդ. ԽԱ) եւ Նաբուգոդոնոսոր (հմնտ. Դան. Բ) տեսին զերազսն եւ ոչ իմացան զնշանակութիւնսն, ոչ են մարգարէ, իսկ Յովսէփ եւ Դանիէլ, որք իմացան զնոյնն, մարգարէք ասին: Երկրորդ. խնդրի առ ի մարգարէ գոլ, զի ճանաչումն անյայտ իրին միջնորդութեամբ բարի հոգւոյն լինիցի, զի մի ի պարգեւաց հոգւոյն զմարգարէութիւն թուէ առաքեալ, իսկ թէ ի չար հոգւոյն լի-

<sup>1</sup> Ը երուսաղէմացիքն

<sup>2</sup> Ը Կայիշափաս

<sup>3</sup> Ա Յ Բաղամ

<sup>4</sup> Յ թերեւս

<sup>5</sup> Յ էր

<sup>6</sup> Յ այլ

նի ճանաչումն իրին, զոր յայտնէ սատանայ այնմ<sup>1</sup> մարդոյ, ոչ ասի ճշմարիտ մարդարէ պարզաբար, այլ բառ ինչ նուաստական բաղադրեալ, որպէս ասի. «Մարդարէ Բահաղու» (հմնտ. Գ Թագ. ԺԸ 22), կամ բարձանց, կամ անդառի եւ այլ սոյնպիսիք: Զոր աւրինակ մարդ մեռեալ ոչ ասի մարդ պարզաբար<sup>2</sup>, նոյնպէս եւ ասոտ, իսկ յորժամ խնդրի, թէ Կայիափաս մարդարէ է, ասեմք, թէ ոչ է ճշմարիտ մարդարէ, զի ոչ ունէր զանյայտ ճանաչումն չարչարանաց Տեառն, որ լինելոց էր վասն փրկութեան ազգի մարդկան, այլ միայն դիտաւորութիւն նորա էր<sup>3</sup> առ ի թտպիր տալ վասն մահուն Քրիստոսի, զի սպանցեն զնա վասն երկիւղի հոռվմայեցւոցն: Սակայն որպէս ասեն վարդապետք, թէ Հոգին Սուրբ, առանց գիտութեան Կայիափայ, շարժեաց զլեզու նորա, զի բանն նորա նշանակէր զմահն Քրիստոսի, որ վասն փրկութեան մարդկան, սակայն ինքն ոչ ասի ճշմարիտ մարդարէ, զի առանց գիտութեան իւրոյ ասաց զբանն, որպէս եւ էշն Բաղաամու ոչ ասի բանական կենդանի, թէպէտ յաւդեալ խաւսեցաւ բան, որպէս ասէ ի Թիւքն՝ քսան եւ երկու (հմնտ. ԹՎ ԻԲ 21-35), զի բանքն այն ոչ էր ըստ ներքին ճանաչման իշոյն, այլ յաստուածային ներգործութենէն, նոյնպէս եւ աստ Կայիափա խորհեցաւ ի յատուկ մտածութենէ եւ ըստ նշանակութեան բանն նորա մարդարէական էր, այլ ինքն ոչ ասի մարդարէ, զի ոչ ճանաչէր զմարդարէական բանն իւր, որպէս ասէ Ոսկեբերանն. «Մարդարէացաւ ոչ գիտելով զի՞նչ ասէր, քանզի<sup>5</sup> շնորհքն Աստուծոյ միայն ի բերանն նորա պատշաճէր», նոյնպէս եւ այլ վարդապետք ասեն:

Աստ կարեն առարկել, եթէ մի եւ նոյն գործն ոչ կարէ լինել յերկուց հակառակաց<sup>6</sup> պատճառ, իսկ շարժումն լեզուին Կայիափայ եւ ձեւ բանի նորա ըստ այսմ լինէր յերկուց հակառակ պատճառաց<sup>7</sup>, այսինքն՝ ի բարի դիտաւորութենէն Աստուծոյ եւ ի չարդիտաւորութենէն Կայիափայ:

<sup>1</sup> Ե յայնմ

<sup>2</sup> Ըի՞ք այլ բառ ինչ ... նարդ պարզաբար

<sup>3</sup> Ծ դիտաւորութիւն էր

<sup>4</sup> Ա Յ ազդեցութեանցն

<sup>5</sup> Ծ զի

<sup>6</sup> Ա Յ հակառակ

<sup>7</sup> Ե չի՞ք իսկ շարժումն լեզուին ... յերկուց հակառակ պատճառաց

Պատասխանեն վարդապետք, թէ մի եւ նոյն քար կարէ ըստ բնութեան ի վայր շարժիլ յիւրն բնական ծանրութենէ եւ ի կամաւոր շարժմանէ մարդոյն, որ ի վեր արկանէ զքարն, նոյնպէս լեզուն Կայիափայ յԱստուծոյ շարժեալ խաւսեցաւ զբանն եւ ընդ նմին ի չար դիտաւորութենէ եւ ի կամացն նորա: Եւ դարձեալ աւրինակ, որպէս բազում շարժողք կարեն ի միասին զմի նաւ շարժել<sup>1</sup>, նոյնպէս բազում ազդմունք կարեն ի մի իրս մի շարժումն առնել, թէպէտ մինն շարժէ չար դիտաւորութեամբ, եւ միւսն՝ բարի:

Երկրորդ. կարէ ոք առարկել, թէ ոչ է յայտնի ի բնաբանէս, թէ Կայիափայ Հոգւով Սրբով մարդարէացաւ, այլ թուի, թէ չար Հոգւովն, որպէս ասեն ոմանք:

Պատասխանեն վարդապետք, թէ բնաբանս առաւել ցուցանէ, թէ Հոգւով Սրբով մարդարէացաւ վասն չորից. նախ՝ վասն քահանայական աւծմանն եւ պատւոյն: Երկրորդ. զի մեծ վառք Քրիստոսի է, զի Կայիափա Հոգւովն Սրբով մարդարէացաւ զփրկութեան մահն Քրիստոսի, քան թէ սատանայիւ: Երրորդ. զի յայտնութիւն սատանայի ոչ ասի մարդարէանալ, որպէս աստ ասէ: Չորրորդ. ոչ է հաւատալի, թէ սատանայ կամաւն իւր յայտնէր զպատութիւն մեր մահուամբն Քրիստոսի, ապա յայտնի է, զի Հոգւովն Սրբով մարդարէացաւ, թէպէտ ոչ գիտէր՝ զի՞նչ ասէր:

Արդ, պատասխանեսցուք առ երկու առարկութիւնսն, որ ի սկիզբն եղան: Վասն առաջնոյն սոյնպէս ասեմք. թէպէտ Բաղամմ<sup>2</sup> չար էր, սակայն ճշմարիտ ճանաչումն ունէր անյայտ բանից, որպէս գրեալ է ի Թիւքն քսան եւ երեք: Իսկ զայնպիսի ճանաչումն ոչ ունէր Կայիափա, վասն որոյ ոչ էր մարդարէ, վասն պակասութեան ճանաչմանն եւ ոչ վասն չարութեան: Առ երկրորդն ասեմք, զի Կայիափա<sup>3</sup> մարդարէացաւ, որպէս ասէ աւետարանիչս, այսինքն՝ բան մարդարէական ասաց, սակայն ոչ յանձնէ իւրմէ, այլ Հոգւով Սրբով առանց գիտութեան Կայիափայ, վասն որոյ եւ ոչ ասիւր մարդարէ: Ապա յայտ է լուծումն բանիդ, որպէս ցուցաւ համառաւտարար:

Այսքան առ այս:

<sup>1</sup> В չիք խաւսեցաւ զբանն եւ ... զմի նաւ շարժել

<sup>2</sup> А В Բաղամ, С Բաղամ ճշմարիտ

<sup>3</sup> С Կայիափաս

## Գլուխ ԺԲ

Վասն գալստեան Տեառն ի Բեթանիա

Այս երկոտասան գլուխ է ըստ կարգի եւ երկրորդ՝ ըստ հատորի<sup>1</sup>

Բան. «Իսկ Յիսուս վեց աւուրբ յառաջ քան զՁատիկն եկն ի Բեթանիա» (Յովի. ԺԲ 1):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ<sup>2</sup>.** Ի վերայ այսմ բանի չորս իրս գիտելի է. առաջին՝ գիտելի է զկարգն, զի նախ եցոյց աւետարանիչս զԱստուածութիւն Քրիստոսի ի գործոցն Քրիստոսի, զոր արար ընդ մարդկան շրջելով: Աստ զնոյն ցուցանէ գործովքն Քրիստոսի, զոր արար մեռանելովն: Եւ այս մասն յերկուս բաժանի, զի նախ ճառէ զմահն Քրիստոսի եւ զչարչարանքն: Երկրորդ. պատմէ զյարութիւն նորա քսաներորդ գլուխն. «Եւ ի միաշաբաթւոջն Սարիան» (Յովի. Խ 1):

Եւ առաջին մասն յերկուս բաժանի, զի նախ գրէ զպատճառ մահուանն Քրիստոսի, երկրորդ՝ ճառէ զմահն նորա, անդ. «Յառաջագոյն քան զտաւն Զատկին» (Յովի. ԺԳ 1):

Վասն առաջնոյն գիտելի է, զի պատճառ մահուն Քրիստոսի կրկին. նախ՝ էր նախանձ հրէիցն եւ ատելութիւն, զոր ունէին առ Քրիստոս վասն համբաւոյ եւ փառաց նորա ի մէջ ժողովրդեանն, վասն որոյ աստ ցուցանի նախ համբաւ նորա եւ փառաւորութիւն: Երկրորդ պատճառ մահուանն Քրիստոսի էր անհաւատութիւն հրէիցն, անդ. «Եւ այնչափ նշանս արարեալ էր առաջի նոցա» (Յովի. ԺԲ 37): Եւ աստ նախ ճառէ, թէ Քրիստոս որպէս փառաւորեցաւ ի մարդկանէ, յորժամ գայր յաւանակաւ ի տաճարն: Երկրորդ. ճառէ, թէ որպէս փառաւորեցաւ յԱստուծոյ Հաւրէ, անդ. «Բայց այժմ անձն իմ խռովեալ է» (Յովի. ԺԲ 27):

Իսկ փառաւորիլն ի մարդկանէ երեք կերպիւ էր. առաջին՝ փառաւորեցաւ Քրիստոս ի յատուկ բարեկամաց իւրոց, որպէս աստ արարին նմա ընթրիս եւ Մարիամ առեալ նարդու իւղ եւ

<sup>1</sup> Գրաբար տեքստում հետեւայ հաջորդականությամբ է ներկայացված այս երեք նախագասությունները, հարմար համարեցինք կատարել փոքրիկ փոփոխություն՝ ելնելով տրամաբանական կառույցից:

Վասն գպատեան Տեառն ի Բեթանիա

Բան. «Իսկ Յիսուս վեց աւուրբ յառաջ քան զՁատիկն եկն ի Բեթանիա»:

<sup>2</sup> Ա ՄԵԿՆՈՒԹԻՒՆ. մեղայ տան Աստուծոյ

**Հաւծ զոտս նորա** (հմնտ. Յովի. ԺԲ 3): **Երկրորդ.** Փառաւորեցաւ ի Հասարակաց ժողովրդենէ, որպէս անդ. «Իբրեւ գիտաց ժողովուրդ բազում ի հրեհցն<sup>1</sup>, թէ անդ է» (Յովի. ԺԲ 9): **Երրորդ.** Փառաւորեցաւ ի Հեթանոսաց<sup>2</sup>. «Եին անդ<sup>3</sup> ոնանք եւ հեթանոսք յելելոց անդր» (Յովի. ԺԲ 20): **Եւ սոյնպէս է կարգ Աւետարանիս մանր քննութեամբ:**

Երկրորդ. գիտելի է, զի որ ոք Հաւասարի Աստուծոյ տէրութեամբ եւ թագաւորութեամբ, Աստուած է, իսկ Քրիստոս սոյնպէս Հաւասարի Աստուծոյ, ապա ուրեմն Քրիստոս Աստուած է:

Եւ զի Քրիստոսի թագաւորութիւն եւ զտէրութիւն<sup>4</sup> ցուցանէ չորս կերպիւ. առաջին է պատուվ ընդունելն, որ յերուսաղէմ յաւանակաւ ընթանալովն<sup>5</sup> պատուեցին զնա (հմնտ. Յովի. ԺԲ 12-19): **Երկրորդ.** Վկայութեամբ նոցա, որք ընդառաջ ընթացան, որպէս ասէին. «Արինեալ եկեալ, թագաւորդ իսրայէլի» (տես Յովի. ԺԲ 13): **Երրորդ.** Վկայութեամբ մարգարէին, զոր առնու աւետարանիչն՝ ասելով. «Ահա թագաւոր քո գայ» (Յովի. ԺԲ 15, Զաք. Թ 9): **Չորրորդ.** Հայրական փառաւորութեամբ, որպէս ասէ. «Ճայր, փառաւորեալ զՈՐԴԻ քո<sup>7</sup>» (Յովի. ԺԲ 1):

Երրորդ. գիտելի է, թէ վասն է՞ր վեց աւուրբ յառաջ եկն ի Բեթանիա:

Ասեմք վասն չորս<sup>8</sup> պատճառի<sup>9</sup>. նախ՝ զի գիտասցեն, թէ սանա է, որ ի վեց աւրն արար զամենայն արարածս եւ այժմ ի վեցերորդ աւրն նորոգէ վերստին:

Երկրորդ. զի զկարգ խաչելութեան խորհրդով արասցէ, զի նախ<sup>10</sup> ի կիրակէն գայր յերուսաղէմ եւ յերկուշաբաթին անէծ զթղենին (հմնտ. Մարկ. ԺԱ 12-14), որ նշանակէր զանպտուղ ազգն հրէից, եւ յերեքշաբաթին պատմէր զիսորհուրդ կատարածի (հմնտ. Մարկ. ԺԱ 20-25), եւ ի չորեքշաբաթին յայտնեաց զմատնութիւն, եւ ի հինգշաբաթին գառն աւրինակին զենաւ եւ ի միւս աւրն առ ընթեր նմին ճշմարիտ գառն Քրիստոս զենաւ<sup>11</sup>, եւ այնպէս ճշմարտութիւն հետեւէր աւրինակին:

<sup>1</sup> Ա ի հրեհց

<sup>2</sup> Ը հեթանոսաց, անդ.

<sup>3</sup> Յ չիք «Իբրեւ գիտաց ժողովուրդ ... ի հեթանոսաց. «Եին անդ

<sup>4</sup> Յ չիք եւ զտէրութիւն

<sup>5</sup> Յ ընդունելովն

<sup>6</sup> Ա փառաւորեալ

<sup>7</sup> Ա չիք քո

<sup>8</sup> Ա չիք

<sup>9</sup> Յ չիք վասն չորս պատճառի

<sup>10</sup> Ա նախ զի

<sup>11</sup> Յ չիք եւ ի միւս աւրն ... Քրիստոս զենաւ

Երրորդ պատճառ, զի նորագոյն իմն իր կամի ցուցանել, զի ամենայն ուրեք հետիոտս շրջէր, իսկ այժմ՝ յաւանակաւ, զի մարդարէութիւն լցցի Զաքարիայի. «Ուրախ լեր յոյժ, դուստր Սիովնի» (տես Զաք. Բ 10), եւ այլն, «Զի ահա թագաւոր քո գայ առ քեզ<sup>1</sup>, Մարդար եւ փրկիչ], նոյն աղքատ եւ հեծեալ ի վերայ իշոյ» (Զաք. Թ 9):

**Զորրորդ.** յառաջագոյն վասն այն գայ, զի զլուրն լուեալ էին վասն յարութեան Ղազարու, այժմ գայ ի նոյն Բեթանիա, զի յայտնի լիցի, թէ սա է, եւ<sup>2</sup> որ հաւատասցեն ի նա, որպէս ասէ մեկնիչդ:

**Զորրորդ.** գիտելի է, թէ ո՞ր է աւր յարութեան Ղազարու: Ասեմք, թէ ոչ է յայտնի ի բնաբանէս, այլ ասեն վարդապետք, թէ ի շաբաթի աւր էր, որպէս զամենայն բժշկութիւնս ի շաբաթի կատարէր, ապա յայտ է, զի յանցեալ շաբաթին յարոյց զ Ղազար եւ գնաց յեփրայիմ քաղաք եւ սակաւ մնացեալ անդ, զի մերձ էր Զատիկն: Դարձեալ՝ ի միւս շաբաթին եկն ի Բեթանիա, ուր զ Ղազար յարոյց եւ այլ իմն պատճառ, զի շաբաթն Լուսաւորչին, յորում զելն ի վիրապէն տաւնեմք սրբոյն Գրիգորի, է յարութիւն Ղազարու ի գերեզմանէն: Եւ տաւնն Ղազարու, յորում եկն դարձեալ ի Բեթանիա՝ վեց աւուրբք յառաջ, եւ ի միւս շաբաթն՝ յարութիւն Քրիստոսի: Եւ սոյնպէս երեք շաբաթդ զերեք յարութեան խորհուրդն նշանակեն, այսինքն՝ Լուսաւորչին եւ Ղազարու եւ Տեառն մերոյ: Եւ դարձեալ պատճառ, զի հնգետասան աւուրբ յառաջ քան զիսաչն յարոյց զ Ղազար, ուստի յայտ է, զի հնգետասան ամ ապրեցաւ յետ յարութեան, որպէս եզեկիա (հնմտ. Դ Թագ. Ի 1-7): Եւ սոյնպիսի քառասուն աւուրբ յառաջ քան զիսաչն այլակերպեցաւ, ուստի յայտ է, զի յետ յարութեան քառասուն աւուր տաւնեմք այլակերպութեան, իսկ զգալն, յորժամ եկն յեփրայիմ քաղաքէ, պատմէ Մարկոս. «Եւ գան յերիքով» (Մարկ. Ժ 46) եւ անդ աշակերտի Զակրէոս<sup>3</sup> մաքսաւոր (հնմտ. Դուկ. ԺԹ 1-10), եւ ի ճանապարհին զԲարտիմէոս կոյրն լուսաւորէ (հնմտ. Մարկ. Ժ 46-52), եւ բազում ժողովրդաւք<sup>4</sup> գայ ի Բեթանիա, եւ գտեալ զէշն ի միւս աւրն, նստի ի վերայ եւ մտանէ յերուսաղէմ: Այսքան ի վերայ չորս հարցմանցն:

Բան. «Եւ արարին [անոյ] նմա ընթրիս» (Յովհ. ԺԲ 2):

<sup>1</sup> A B չեք քո գայ առ քեզ

<sup>2</sup> C չեք եւ

<sup>3</sup> A Զաքէոս

<sup>4</sup> C ժողովրդովք

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Զոր ի ճաշուն մինչ ի հասարակ աւրն ուտեն, զայն ճաշ կոչեն Սուրբ Գիրք, եւ զոր յայնմ ժամու մինչեւ յերիկունն, զայն ընթրիս կոչեն:

Գիտելի է, զի վասն<sup>1</sup> չորս պատճառի արարին նմա ընթրիս. նախ՝ զի Յիսուս եկն ի Բեթանիա յաւուր շաբաթւոջ նախքան զԴատիկն:

Եւ աւրն այն պատշաճէր ընթրեաց վասն կրկին պատճառի. նախ՝ վասն տաւնին շաբաթուն: Երկրորդ՝ զի Հրէայքն ի տասն նիսան ամսոյ զգառն Զատկի տան արգելեալ պահէին եւ յիններորդ աւրն այնմ ամսոյ, յորմէ մինչեւ ի Զատիկն վեց աւուրք էին, Հրէայքն մեծ ճաշ պատրաստէին, իբր սկիզբն տաւնի զայն աւրն արարեալ:

Երրորդ պատճառ. զի ընթրիս արարին Քրիստոսի իբր ի ճանապարհէ եկեալ եւ աշխատեալ:

Չորրորդ. վասն ուրախութեան յաղագս յարութեան Ղազարու արարին ընթրիս, զի յետ յարութեան<sup>2</sup> առ նոսա<sup>3</sup> սակաւ ինչ մնացեալ էր, եւ գնացեալ զհետ Յիսուսի յԵփրայիմ: Եւ ընթրիսս այս եղեւ ի տան Սիմոնի բորոտի, որպէս պատմէ Մատթէոս եւ Մարկոս (հնատ. Սատր. ԻԶ 6, Մարկ. ԺԴ 3): Եւ բորոտ ասի, զի նախ բորոտ էր եւ ի Քրիստոսէ բժշկեալ, եւ վասն յիշատակի սքանչելեացն առուն բորոտութեան մնացեալ էր:

Եւ Սիմոնս այս դրացի եւ սիրելի էր Մարթայի, վասն այն Մարթա ի տան նորա սպասաւորէր վասն երեք պատճառի. նախ՝ վասն բարեկամութեան, որպէս սովոր են առնել մարդիկ ի տան սիրելեաց իւրեանց: Երկրորդ. վասն Ղազարու, զի բազմեալ էր ընդ Քրիստոսի եւ հրաւիրեալ ի Սիմոնէ յընթրիսն<sup>5</sup>: Եւ այս եղեւ, զի ճշմարիտ ցուցանէ զյարութիւն նորա, որպէս յորժամ ինքն յարեաւ ի գերեզմանէն, եկեր ընդ աշակերտսն, զի ցուցցէ զճշմարիտ յարութիւն:

Այժմ ճառէ յատկաբար զսպասաւորութիւն Մարիամու.

<sup>1</sup> С չիք

<sup>2</sup> Յետ յարութեան Ղազարու

<sup>3</sup> Յետ առ նոսա

<sup>4</sup> С չիք

<sup>5</sup> С հրաւիրեալ Սիմոնի յընթրիսն

### Վասն աւծանելոյն իւղով

Բան. «Իսկ Մարիամ առեալ լիտր մի իւղոյ<sup>1</sup>» (Յովի. ԺԲ 3):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Այս մասն յերիս բաժանի, զի նախ ճառի<sup>2</sup> սպասաւորութիւն Մարիամու: Երկրորդ. Յուղայի տրտմութիւն եւ բամբասանքն. «Ասէ մի ոմն յաշակերտաց անտի» (Յովի. ԺԲ 4): Երրորդ. յանդիմանութիւն Քրիստոսի, անդ. «Ասէ Յիսուս. “Թոյլ տուք դմա”» (Յովի. ԺԲ 7):

**Վասն առաջնոյն ասէ.** «Իսկ Մարիամ առեալ լիտր մի իւղոյ»:

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Մարիամս այս քոյր էր Ղազարու եւ Մարթայի, եւ զհոլովն անկատար առնու, զի «Մարեմայ» ասէ եւ ոչ՝ Մարիամու, զի մի կարծեսցես, թէ Աստուածածինն էր: Եւ վասն մարիամանց եւ վասն աւծանող կանանց ասացաւ ի հիւանդութիւն Ղազարու:

Բան. «Առեալ լիտր մի իւղոյ նարդեան ազնուի մեծագնոյ» (Յովի. ԺԲ 3):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Լիտր մի ցուցանէ զքանակութիւն իրին, բայց ոչ է պարտ իմանալ, թէ իւղն այն թանձրանիւթ էր, որպէս այն, որ աւծանեն զվէրսն, կամ այս, որ առ մարդիկ պաշտի, այլ անաւսր եւ պարզ եւ վճիտ, զի անմարթ էր թանձր եւ յախնթոր իւղով աւծանել զգլուխն Քրիստոսի:

Եւ իւղ կոչի, զի աւծանելիք էր պատուական եւ յանուշահոտ յիրէ հանեալ, որպէս վարդեջուր հանեալ ի վարդէ:

Նարդեան ասէ զնարդուն, ոմանք ասեն է ի հնդիկս ծառ, որ զճիւղն կտրեն եւ ի շիշ կալնուն, որպէս պալասանի, եւ արտասուրքն իջանէ եւ լնու զշիշն, եւ կամ ի բնական թորմանէ ի ժամանակի ինչ, եւ ոմանք ասեն, թէ նարդոսն խոտ է դալար, սեւագոյն եւ անուշահոտ, եւ ընդմէջն ելանէ իբրեւ զհասկ մի, եւ զայն առնուն եւ եփեն, եւ զաւրութիւն սորա է նախ զովացուցիչ, երկրորդ՝ անուշահոտ, երրորդ՝ ջարդեալ եւ տրորեալ անդամոց հաստատիչ:

Ազնիւ ասելն նախ ցուցանէ զպարզութիւն, երկրորդ՝ զի պատուական է:

Եւ մեծագին ասէ, զի աւծումս այս առաւել արժէր, քան զերեք հարիւր դենար, ասէ Մարկոս (հմնտ. Մարկ. ԺԴ 5):

Բան. «Եաւծ զոտս նորա եւ հերով իւրով<sup>3</sup> մաքրէր» (տես Յովի. ԺԲ 3):

<sup>1</sup> A B չիք

<sup>2</sup> C ճառէ

<sup>3</sup> A չիք, C հերովն իւրով

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Ո՞չ միայն զոտսն, այլեւ զգլուխն էաւծ, որպէս ասէ Մատթէոս եւ Մարկոս (իմնտ. Մատթ. ի2 7, Մարկ. ժԴ 3), զի բազում ինչ կամաւ ոչ գրեցին աւետարանիչքն զգործոցն եւ զբանիցն Քրիստոսի, որպէս ասէ ի վերջս<sup>1</sup> Աւետարանիս (իմնտ. Յովհ. ի 30-31): Եւ զոտսն աւծանէր, զի Քրիստոս աշխատեալ էր ի<sup>2</sup> հետիոտս ընթացիցն, այլ<sup>3</sup> աւետարանիչս ներհակ կերպիւ պատմէ, զի նախ ելուաց զոտսն եւ ապա մաքրեաց հերովն եւ ապա էաւծ, որպէս մեք զոտնալուայն առնեմք:

Եւ ի յաւծանելն անուշահոտութիւն բուրեաց եւ ելից զտունն. նախ՝ վասն տարածման իւղոյն:

Երկրորդ. զի մերձեցաւ ի գագաթն աստուածային, որպէս խունկ ի հուր մերձեցեալ:

Երրորդ. զի աւծումն զգալին յաւծումն իմանալին մերձեցաւ: Եւ այս աւծումս չորս ինչ նշանակէր. նախ՝ զմեծ հաւատն Մարիամու: Երկրորդ. զառաւել սէրն: Երրորդ. զշնորհամատոյց<sup>4</sup> լինելն վասն եղբաւըն: Չորրորդ. ի նշան պատանաց ասէ Տէր (իմնտ. Մարկ. ժԴ 8):

Եւ հերովն մաքրէր. նախ՝ զխոնարհութեամբ երկիր պագանելն<sup>5</sup>: Երկրորդ. զի չունէր այլ ինչ պատուական քան զհեր գլխոյն, զի ամենայն զգեստ յարտաքին նիւթոց է, եւ հերն՝ ի պատուական մարմնոյ մարդոյ<sup>6</sup>:

Ապա ճառէ զթուղայի տրտմութիւն եւ զբամբասանքն:

Բան. «Ասէ նի ոմն յաշակերտաց [անտի] Յուղա Սկարիովտացի, որ մատնելոց էր [զնա»] (Յովհ. ժԲ 4-5):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Կրկին էր Յուղա յառաքեալսն: Զայս Սկարիովտացի կոչէ ի գեղջէն եւ զմիւսն Յուղա Յակոբեան, որ Թագէոս կոչի:

#### Վասն ագահութեան եւ արծաթսիրութեան

Եւ այս Յուղա Սկարիովտացի նախ բարի էր, յորժամ կոչեցաւ ի Քրիստոսի յառաքելութիւն, այլ յետոյ անկաւ ի մեղս ագահութեան, որ էր արծաթսիրութիւն, եւ Յիսուս համբերութեամբ տա-

<sup>1</sup> Ը ի վերջ

<sup>2</sup> Ե չիք

<sup>3</sup> Ը այլ եւ

<sup>4</sup> Ա շնորհամատոյց

<sup>5</sup> Ը երկրպագելն

<sup>6</sup> Ը չիք

նէր յաւրինակ մեզ, զի եւ մեք համբերութեամբ տարցուք մեղու-  
ցեալ եղբաւըն որքան ծածուկ իցէ, եւ դարձցին սպասեացուք:

Նշանակելի է աստի, զի յորժամ ագահ մարդիկ պատճառելով  
ծածկեն զագահութիւնս իւրեանց, զի մի ինչ տայցեն, նախ, ասեն,  
պիտոյ է եւ առանց սորա ոչ կարեմ կեալ: Երկրորդ. այլ իմն  
պատճառ<sup>1</sup> դնեն, թէ բարւոք է յայսպիսի<sup>2</sup> իրս ծախել եւ ոչ յայլս:  
Երրորդ. յորժամ կամի շահել զփարթամութիւն ագահ մարդն,  
զայլոց պիտոյսն ոչ համարի պիտոյ, որպէս զի առ ինքն քարշե-  
ցէ, սոյնպէս է եւ բանքն Յուղայի:

Եւ տե՛ս զարծաթսիրութեան ախտն, որ ատելի եւ չար է քան  
զամենայն մեղս վասն տասն պատճառի. նախ՝ զի մեղք եւ չար է  
ի կարգմ<sup>3</sup> ամենայն մեղաց, որպէս ասեմք՝ գինեսէր, կնասէր եւ  
այլն, նոյնպէս ասեմք արծաթասէր: Երկրորդ. զի այլ մեղք միայն  
չարեացն է, իսկ արծաթսիրութիւն՝ չարեաց եւ բարեաց լինի, որ-  
պէս Յուղայի եղեւ: Երրորդ. զայլ մեղս կարէ հատանել մարդ,  
իսկ զարծաթսիրութիւն՝ ոչ, զի ան ի բաց դնելի մնայ: Զորրորդ.  
զի այլ մեղաւորք կարեն ծառայել Աստուծոյ, իսկ արծաթասէրք՝  
ոչ, ըստ այնմ. «Ոչ կարէք Աստուծոյ ծառայել եւ մամոնայի»  
(հմնտ. Մատթ. Զ 24, Ղուկ. Ժ 13): Հինգերորդ. արծաթսիրութիւն  
տրամեցոյց զՅուղա, որ բամբասեաց զՄարիամ եւ զՏէրն: Վեցե-  
րորդ. վասն արծաթսիրութեան զգին<sup>4</sup> իւղոյն առաւել ասաց երեք  
հարիւր դենարի եւ զՏէրն դիւրաւ վաճառեաց երեսուն արծաթի:  
Եւթներորդ. արծաթսիրութիւն արար զՅուղա գող եւ աւազակ,  
որպէս աստ ասէ: Ութերորդ. վասն արծաթսիրութեան մատնեաց  
զՏէրն ի մահ եւ ընդ խաչողսն դասեցաւ: Իններորդ. դարձեալ  
զարծաթսիրութիւն<sup>5</sup> արար բորոտ զԳէեզի, որ առ զարծաթն ի  
Նէման Ասորոյ եւ ծածկեաց յԵղիսէէ վարդապետէն իւրմէ, վասն  
որոյ բորոտեցաւ (հմնտ. Դ Թագ. Ե 20-27): Տասներորդ. վասն արծա-  
թոյն, որ գողացաւ ի նզովիցն երիքովի Աքար Զարմեան, քարկո-  
ծեալ եղեւ տամբ եւ ընտանեաւքն իւր հրամանաւն Յեսուայ՝ որդ-  
ւոյ Նաւեայ (հմնտ. Յեսու Ե):

Արդ, սոյնպէս չար է ախտ ագահութեան եւ արծաթսիրու-  
թեան, որպէս ցուցաւ:

Հարց. Զի՞նչ է, որ այլ աւետարանիչքն՝ Մատթէոս եւ Մար-  
կոս, զամէն աշակերտսն ասեն (հմնտ. Մատթ. ԻԶ 8-9, Մարկ. Ժ 4-5), եւ

<sup>1</sup> Ը պատճառս

<sup>2</sup> Յ այսպիսի

<sup>3</sup> Յ եւ չար է քան զամենայն մեղս ի կարգս

<sup>4</sup> Ը Վեցերորդ. արծաթսիրութիւն զգինն

<sup>5</sup> Ը զարծաթսիրութիւն

**Ղուկաս ոչ յիշէ, բայց «Մի ոճն յաշակերտացն» ասէ, որ էր<sup>1</sup> Յուղաս:**

Պատասխան. Վասն երեք պատճառի. նախ՝ զի Յուղաս զայն ասաց եւ զայլս յաւժարեցոյց զնոյնս ասել, վասն այն այլ աւետարանիչքն զամէնն ասեն, եւ զի Յուղաս սկիզբն եղեւ այլոց բամբասանացն, վասն այն Յոհան զսա միայն յիշէ: Երկրորդ. թէպէտ բանքն նոյն էր ամենեցուն, այլ ոչ խորհուրդն, զի<sup>2</sup> նոքա բարի մտաւք վասն աղքատսիրութեան ասացին՝ ի Տեառնէ ուսեալք, իսկ Յուղաս վասն աղահութեան ասաց եւ չար մտաւք, վասն այն զնա միայն յիշէ: Երրորդ պատճառ. քանզի Տէրն վեց ազգ ողորմութիւն պատուիրեաց մեզ առնել, որք են այսոքիկ՝ քաղցեայ, եւ ետուք ուտել, ծարաւեցի, եւ արբուցէք, աւտար էի, եւ ժողովեցէք, մերկ, եւ զգեցուցէք, հիւանդ եւ ի բանտի եւ եկիք առ իս (հնմտ. Սատթ. ԻԵ 35-36): Զյետին երկուքն ի միասին ասէ, զի որպէս հիւանդն ցաւաւքն է բանտեալ, սոյնպէս եւ որ ի բանտն՝ կապանաւք, ապա ուրեմն յայսցանէ ոչ ասաց Յուղաս, այլ վասն արծաթսիրութեան ասաց, վասն այն առանձին յիշէ:

**Եւ զկնի զչար դիտաւորութիւն որպէս ցուցանէ.**

Բան. «Չայս ասաց ոչ թէ, զի աղքատաց ինչ փոյթ էր ննա, այլ զի<sup>3</sup> գող էր<sup>4</sup> եւ օարկոն ինքն իւնէր, եւ որ ինչ անկանէրն<sup>5</sup>, նա կրէր<sup>6</sup>» (Յովի. ԺԲ 6):

Մեկնութիւն. Ահա յայտնեցան միտք բանիս, զի ոչ եթէ ասաց զայն Յուղաս, վասն աղքատաց հոգ տանելով, այլ զաղքատս յիշելով զագահութիւն թագուցանէր:

Եւ գող էր Յուղաս նախ՝ զի առանց հրամանի Տեառն ծախէր զինչսն: Երկրորդ. գող ասի, զի զոր ինչ առնոյր ի պէտս աղքատաց, ոչ տայր, այլ ի քսակի իւրում պահէր: Եւ սա կացուցեալ եղեւ ի Քրիստոսէ, զի զոր ինչ մարդիկն տային Քրիստոսի<sup>7</sup> վասն աղքատացն բաշխելոյ, սա ընդունէր զայն, թէպէտ եւ ոչ հաւատարմութեամբ<sup>8</sup> առնէր զայն: Եւ արկոն քսակն է:

**Եւ աստ երեք ինչ հարցանելի է.**

Առաջին. Թէ ընդէ՛ր<sup>9</sup> ի Յուղաս ետ զարկոն, իբր գիտէր զնա գող եւ ազահ:

<sup>1</sup> A B է

<sup>2</sup> C եւ

<sup>3</sup> A B չեք

<sup>4</sup> A B չեք

<sup>5</sup> C անկանէր

<sup>6</sup> A B չեք նա կրէր

<sup>7</sup> B վասն Քրիստոսի

<sup>8</sup> A B հաւատարմաբար

<sup>9</sup> A B վասն Է՞ր

Պատասխան. Ասեմք վասն չորս պատճառի<sup>1</sup>. նախ՝ վասն այն ետ ի նա, զի անյագ էր ի սէր արծաթոյ, կամեցաւ ի նա տալ, զի այնու շիջուցանէ<sup>2</sup> զնա յախտէն: Երկրորդ. զի կամեցաւ Տէրն, զի զարծաթն գողանայցէ եւ մի վասն այնը գՏէրն վաճառեսցէ, բայց նա զերկուքն գործեաց: Երրորդ. զի վատժար էր քան զամենեսեան եւ ոչ ունէր միտս պարզ, վասն այն ոչ առաքէր քարոզել, այլ պահէր մերձ իւրն ի գործ ինչ երթեւեկութեան: Զորրորդ պատճառ. ցուցանել զորոգայթ եւ զվիշտ ագահութեան, որ ի ստանալն, կամ ի բաշխելն զինչս եկեղեցւոյ հանդիպի առաջնորդաց, քանզի մի ոմն յառաքելոցն այնու գող եւ մատնիչ եղեւ, պարտ է<sup>3</sup>, զի այնու աւրինակաւ ամենեքեան երկիցեն:

Երկրորդ հարց. Թէ Ընդէ՞ր ոչ յանդիմանեաց զՅուղայ յաղագս գողութեան:

Պատասխան. Ասեմք վասն չորս պատճառի. նախ՝ զի թէ յայտնեալ էր զվնաս նորա, յայնժամ նա առաւել յանդգնէր, զի այնպիսի են գործունեայք չարին, զի մինչդեռ ծածուկ է գործն, ահիւ կատարեն, եւ յորժամ յայտնի լինի, յայնժամ համարձակին ի նոյն: Երկրորդ. զի թէ յանդիմանեալ էր զնա, յայնժամ իրաւ լինէր մատնելն: Երրորդ. զի թէ յանդիմանեալ էր<sup>4</sup>, թողոյր զվարդապետն եւ հեռանայր, յայնժամ խափան լինէր մատնութեան նմա, զոր սահմանեալ էր Հայր<sup>5</sup>, որով աշխարհ փրկեցան: Զսահմանս զայս մի իմանալ որպէս թէ հարկիւ ածեալ զնա ի մատնողութիւն, այլ ամենագէտ կանխատեսութիւն է Աստուծոյ: Զորրորդ. զի թէպէտ<sup>6</sup> ասելոցն էր, գիտէր, զի ոչ լսէր, վասն այն ոչ ետ զսրբութիւն շան, եւ զմարգարիտն՝ խոզի:

Երրորդ հարց. Ընդէ՞ր ինքն Քրիստոս արկղ եւ քսակ պահէր եւ պատուիրէր<sup>7</sup> աշակերտացն ոչ պահել զարկղ, մախաղ, արծաթ եւ այլն:

Պատասխան. Ասեն վարդապետք չորս պատճառ. առաջին՝ զի Տէրն զառաքեալսն ի քարոզել եւ ուսուցանել<sup>8</sup> առաքէր, եւ թէ յուսուցանելն ինչք ստանան, այլ ոչ կարեն ճշմարիտ ուսուցանել եւ ոչ զչարս եւ զյանցաւորս յանդիմանել, զի ախտ արծաթոյն կափուցանէ զաչս նոցա, այլ ինքն Տէրն զվանաց եւ զմիաբանա-

<sup>1</sup> Ե վասն չորս պատճառի ասեմք:

<sup>2</sup> Ա Յ զիջուցանէ, Ծ զի շիջուցանէ

<sup>3</sup> Ծ էր

<sup>4</sup> Ե չիք զնա, յայնժամ իրաւ ... թէ յանդիմանեալ էր

<sup>5</sup> Ծ չիք յայնժամ խափան ... Հայր

<sup>6</sup> Ա Յ թէ

<sup>7</sup> Ա պատուէր, Ծ պատուէր ետ

<sup>8</sup> Ա յուսուցանել

տան<sup>1</sup> ունէր զաւրինակ, զի յամենայն ժամ<sup>2</sup> աղքատք եւ տնանկք ընդ Քրիստոսի շրջէին, պիտոյ էր ինչս վասն<sup>3</sup> նոցա: Երկրորդ. ասեն ոմանք, եթէ Քրիստոս հրամայելով եւ պատուիրելով<sup>4</sup> մի՛ ստանալ ոսկի, արծաթ եւ մի՛ երկուս հանդերձս (հնմտ. Սատր. Ժ 9), եւ վաճառել, զոր ունին ոչ ասաց ամենայն քրիստոնէից, այլ միայն նոցա, որք կամին լինել կատարեալք, սակայն առնուլ զպէտս ի լսողացն ոչ ասաց պատուիրելով, այլ ներելով, ըստ այնմ. «Արժան է մշակն կերակրոյ» (հնմտ. Սարկ. Ժ 10): Եցոյց, թէ զաւելորդն մի ստանայք, այլ զհարկաւորն, որ պիտոյ իցէ: Երրորդ. ասեն ոմանք, թէ Տէրն ոչ միայն արգել զքսակ եւ զմախաղ, այլ եւ ոչ ետ ցրումն ինչ մտաց ընդունել, վասն այն ամէ. «Ի ճանապարհի ունեք ողջոյն մի՛ տայցէք» (Դուկ. Ժ 4) եւ մի՛ ստանայք եւ մի՛ բառնալ զժամանակաւոր<sup>5</sup> իրս, սակայն ոչ արգել զնոսա պահել վասն այլոց, այսինքն՝ առ ի բաշխել աղքատաց եւ որպէս եպիսկոպոսք ունին զինչս<sup>6</sup> եկեղեցւոյ վասն բաշխելոյ կարաւտելոց եւ աղքատաց<sup>7</sup>: Զորբորդ. ասեն ոմանք, թէ Քրիստոս զարկղն ունէր ոչ ըստ տէրութեան իրին, այլ ըստ վերակացութեան յայլոց իրս, նոյնպէս ուսոյց քարոզչաց ունել զինչս ոչ ըստ տէրութեան, այլ վերակացութեան, զի բանս<sup>8</sup> այս ունել երեք նշանակութիւն ունի. նախ՝ ըստ տէրութեան, երկրորդ՝ վերակացութեան, երրորդ՝ սպասաւորութեան: Արդ, ըստ տէրութեան ունէին կանայքն, որք պաշտէին զնա յընչից իւրեանց, ըստ վերակացութեան Տէր էր Քրիստոս, որ հրամայէր բաշխել, ըստ սպասաւորութեան տէր էր Յուղաս, որ զարկղն ունէր, ուստի յայտ է, զի գող էր: Եւ եթէ գող էր, տէր ոչ էր, որպէս այժմ առ մեզ երեւին, զի եկեղեցին տէր է ընչիցն եւ եպիսկոպոս, կամ հայր վանացն վերակացու եւ բաշխող, եւ տնտես եւ եկեղեցապանն սպասաւոր եւ պահապան: Զորբորդ. ասեն ոմանք, թէ գործն Քրիստոսի կատարեալ էր, եւ այնպէս կատարեալ էր, մինչ զի երբեմն ի գործս անկատարիցն խոռնարհեցաւ, զի զկատարելոց ճանապարհն բարձրացուսցէ եւ զանկատարից շաւիղն ոչ դատապարտելի ցուցցէ, զի Քրիստոս արար եւ ուսոյց զկատարելութեան գործս, արար եւ զտկարագունիցն, որպէս յայտ է ի խոյս տալոյն եւ ի յարկղէն: Եւ ինքն Քրիստոս

<sup>1</sup> Կ զմիատան<sup>2</sup> Կ չիք<sup>3</sup> Կ չիք<sup>4</sup> Կ պատուիրելով ասաց<sup>5</sup> Ա Բ զժամանակ<sup>6</sup> Բ ինչս<sup>7</sup> Կ չիք եւ որպէս եպիսկոպոս ... եւ աղքատաց<sup>8</sup> Ա բայս

կատարեալ էր, այլ զայս արար, զի կատարելոց եւ անկատարից զինքն ճանապարհ փրկութեան ցուցանէր, զի վասն երկոցունցն եկն ի փրկութիւն եւ վասն երկոցունցն մեռաւ: Ապա յայտ է, զի Քրիստոս ոչ արկեղն<sup>1</sup> եւ ոչ այլ ժամանակաւոր իրի տիրութիւն ոչ ունէր, ոչ հասարակաբար եւ ոչ յատկապէս, սոյնպէս իմա եւ վասն առաքելոցն:

Դարձեալ գիտելի է, զի ասեն վարդապետք, եթէ վասն չորս պատճառի թոյլ ետ, զի Յուղա զարկղն կրէր. նախ՝ զի ուսուսցէ զկատարեալս, թէ քսակ ունել վասն աղքատաց ոչ է ընդդէմ կատարելութեան, այլ կատարելութեան է, մանաւանդ յորժամ ունողն քսակ առանց տէրութեան ունիցի զայն: Երկրորդ. ունէր արկղ վասն միսիթարութեան տնանկաց եւ<sup>2</sup> տկարաց, որպէս ասեն վարդապետք, թէ Տէրն ունէր արկղ, եւ զոր ինչ հաւատացեալքն տանէին, ընդունէր եւ նմանեցուցանէր զինքն անկատարելոց: Երրորդ պատճառ ի յանդիմանութիւն հերձուածողաց, զի ոմանք ասացին, թէ Քրիստոնեայ ոք ոչ կարէ առանց մեղաց ստանալ ուկի, իսկ այս սուտ է, զի Քրիստոս միայն եզական<sup>3</sup> աշակերտացն պատուիրեաց մի՛ ստանալ ոսկի, այլ Տէր մեր ունէր արկղ, զի ցուցցէ, թէ ոչ է մեղք քսակ ունել: Զորրորդ պատճառ վասն պիտոյից, զի յորժամ առաքելական այր ընդ աշխարհս բարբարոսաց եւ խստասրտից անցանէ, կարէ զթոշակ ճանապարհին բառնալ եւ կամ ի ժամանակի հալածման:

**Այսքան առ երրորդ հարցումդ:**

**Այժմ ճառէ զյանդիմանութիւն Յուղայի.**

Բան. «Ասէ Յիսուս. «Թոյլ տուք դմա, զի յաւրն պատանաց ինոց պահեսցէ զայդ<sup>4</sup>»» (Յովի. ԺԲ 7):

Մեկնութիւն. «Թոյլ տուք դմա» իբր թէ ասել՝ ոչ ունիք իրաւունս բամբասանաց, զի բարի գործ արար: Իսկ բազմաւոր ասելն՝ թոյլ տուք, ցուցանէ<sup>5</sup>, զի ոչ միայն Յուղաս, այլ եւ այլքն եւս բամբասեցին, որպէս ասէ Մատթէոս եւ Մարկոս (Մատթ. ԻԶ 6-13, Մարկ. ԺԴ 3-9), սակայն այլ աշակերտքն ասացին վասն գթութեան աղքատաց, իսկ Յուղաս միայն ագահութեամբ: Իսկ «Յաւր պատանաց» ասելն երկու իր յայտնէ. առաջին՝ զթաղումն, երկրորդ՝ զյարութիւն, որպէս յայտ է ի մեկնիչդ: Իսկ ասելն «Յաւր պատանաց ինոց<sup>6</sup>

<sup>1</sup> А В արկղն

<sup>2</sup> А В չեք տնանկաց եւ

<sup>3</sup> А В չեք

<sup>4</sup> А В չեք

<sup>5</sup> С ցուցանի

<sup>6</sup> А В չեք

պահեսցէ» ոչ ասաց զայն իւղն պահէ, որ հեղեալն էր, այլ զայն իւղն, զոր ի ժամանակի թաղմանն պատրաստեն, զնոյն պահեսցէ, զի ոչ ծախեն ի մարմին իմ վասն փութով յարութեան, իբր թէ ասէ. «Զայն վաճառեցէք երեք հարիւր դենարի եւ տուք աղքատաց, թէ կամիք»: Արդ, քանզի Յուղաս բամբասելով եւ զայլս ի նոյն ածելով պատճառ<sup>1</sup> զաղքատս եցոյց, վասն այն զայս պատճառս ի բաց բառնայ՝ ասելով.

Բան. «Զաղքատս յամենայն ժամ ընդ ձեզ ունիք» (Յովի. ԺԲ 8):

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Այսինքն՝ յամենայն ժամ կարէք աղքատաց բարի առնել, բայց զիս ոչ կարէք միշտ ունել ընդ ձեզ տկար մարմնով, որոյ պիտոյ է սոյնպիսի աւծումն, որպէս յայտ է ի խաչին ժամն թողին եւ փախեան, եւ ի գերեզմանի եղեալ: Այսու յայտ է, զի յորժամ երկու հարկաւոր գործ լիցի, կարելի է գործել զփոքը հարկաւորն, յորժամ փոքը գործն այն<sup>2</sup> յայլ ժամանակի ոչ կարէ լինել, եւ մեծն միշտ կարիցէ լինել<sup>3</sup>:

Աստ երիս պատճառս ցուցանէ Քրիստոս վասն գործոյ այսմ կնոջ. առաջին՝ եթէ գործ գթութեան է տալ զաւծումն տկարաց եւ մեռելոց, սոյնպէս եւ Քրիստոսի առնել, զի աշխատեալ էր եւ շուտով մեռանելոց էր<sup>4</sup>: Երկրորդ. զի պարտ էր նմա նշան սիրոյ ցուցանել, զի չոյտ որոշելոց էր: Երրորդ. զի միշտ ունէին զաղքատս եւ ոչ՝ զՔրիստոս: Այս է միտք բանիս, իբր թէ ասէ Յիսուս ցՅուդա՝ ծա՞նր եմ քեզ, այլ վաղվաղակի երթամ:

Իսկ հոգեւոր տեսութեամբ երիս պատճառս տեսանի աստ. առաջին՝ ցուցանէ, թէ զամենայն գնեալ, այսինքն՝ փրկեալ ի Քրիստոսի պարտական է սիրով գթալ կամ սպասաւորել Աստուծոյ Փրկչին: Երկրորդ. զի դժուարին է մտաց հասանել առ Քրիստոս, վասն զի ճշմարիտ է, զոր ասէ, թէ՝ «Զիս ոչ հանապազ ընդ ձեզ ունիք» (Յովի. ԺԲ 8), եւ երբեմն յորժամ թոյլ տայ Քրիստոս մեր մտացս սիրով յափշտակիլ եւ առ նա հասանիլ, պարտ է ըղձական սիրով եւ աղաւթիւք աւծանել զնա: Երրորդ պատճառ. զի միշտ կարեմք ունել զմերձակայութիւն ներգործական վարուց, այսինքն՝ ողորմութեան, պահոց եւ այն, եւ յորժամ մեծութիւն Քրիստոսի զինքն առ մեզ մատուցանէ, պարտ է թողուլ զներգործականն, որ միշտ լինի, եւ առնել զտեսականն, որ է հրեշտակական վարք, եւ ոչ միշտ լինի:

<sup>1</sup> Ը պատճառս

<sup>2</sup> Ա Յ փոքրն այն

<sup>3</sup> Յ չեք եւ մեծն միշտ կարիցէ լինել

<sup>4</sup> Ա Յ չեք էր

**Զկնի ճառէ, թէ որպէ՞ս պատուեցաւ Քրիստոս ի ժողովրդենէն.**

Բան. «Իբրեւ գիտաց ժողովուրդ բազում ի հրեիցն<sup>1</sup>» (Յովի. ԺԲ 9):

**Մեկնութիւն.** Աստ ճառէ, զի կրկին կերպիւ պատուեցին զՔրիստոս. առաջին՝ գալով ի տեսանել: Երկրորդ՝ Հանդիպելով նմա ի ճանապարհին, անդ՝ «Ի վաղիւ անդր ժողովուրդ բազում» (Յովի. ԺԲ 12):

**Վասն առաջնոյն ասէ.**

Բան. «Իբրեւ գիտաց ժողովուրդ բազում, եկին ոչ միայն վասն Յիսուսի, այլ զի եւ զՊատար տեսցեն, զոր յարոյցն<sup>2</sup>» (Յովի. ԺԲ 9):

**Մեկնութիւն.** Բեթանիա մերձ է յերուսաղէմ երկու միլայ, այսինքն՝ մղոն, որ է Փարսախ մի, այսինքն՝ Փարսանկ մի, պակաս մի ասպարէս, վասն այն Հրէայքն դիւրաւ ծանեան զգալուստն Քրիստոսի:

Եւ աստ ցուցանէ երկու պատճառ գալստեանն նոցա անդր, որ չորս երեւի. առաջին՝ պատուել զՔրիստոս զյարուցիչն: Երկրորդ. ի տեսանել զՂազար յարուցեալ, զի ամենայն մարդ փափագի այսմ: Չորրորդ. ցանկային ուսանել զկայս միւս կենացն, զի ամենքն այնմ<sup>3</sup> գիտութեան փափագին: Եւ զի յայտնի եղեւ փառքն Քրիստոսի, վասն այն ի հնարս խորամանկութեան մտին իշխանքն:

Բան. «Խորհուրդ արարին քահանայապետքն, զի եւ զՊատար սպանցեն, զի բազումք երթային վասն Պազարու եւ հաւատային ի Յիսուս» (տե՛ս Յովի. ԺԲ 10-11):

**Մեկնութիւն.** Այսու յայտնի եղեւ նենգութիւն հրէիցն, զի զյարուցեալն ի Քրիստոսէ կամէին սպանանել, զի ծածկեսցեն զսքանչելիսն: Եւ տե՛ս, զի չար քահանայն զինքն եւ զժողովուրդն կորուսանէ<sup>4</sup>, որպէս բարի քահանայն զերկոսեանն գտանէ, այլ հրէից քահանայքն կորուսիչք էին հոգւոց:

Հարց. Վասն է՞ր առաւել հալածէին զՂազար, քան զծնէ լուսաւորեալ կոյրն կամ զանդամալոյծն, որ ի Բեդհեզդա սրահն:

Պատասխան. Ղազար ազնուական ոմն էր եւ անուանի, վասն այն սքանչելիքն ի նա եղեալ առաւել յայտնի էր եւ հռչակեալ:

Այժմ առ ընթեր ճառէ, թէ Քրիստոս որպէս պատուեցաւ ի ժողովրդենէն<sup>5</sup>, որք ընդառաջ ելին նմա ի ճանապարհն, որպէս ասէ.

<sup>1</sup> A B չեք ի հրեիցն

<sup>2</sup> A C չեք զոր յարոյցն

<sup>3</sup> B յայնն

<sup>4</sup> B զինքեանս եւ զժողովուրդքն իւրեանց կորուսանեն

<sup>5</sup> A B չեք ի ժողովրդենէն

Բան. «Ի վաղիւ անդր ժողովուրդ բազում» (Յովի. ԺԲ 12):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ.** Աստ նախ յառաջ ընթանալ ժողովրդեանն պատմի: Երկրորդ. պատճառ այսմ յառաջ ելանելոյս պատմի, անդ. «Եւ ժողովուրդն վկայէր, որ էր ընդ ննա» (Յովի. ԺԲ 17):

**Վասն առաջնոյն ասէ.**

Բան. «Ի վաղիւ անդր ժողովուրդ բազում, [որ եկեալ էին ի տաւնն], իբրեւ լուան, թէ Յիսուս գայ յերուսաղէմ<sup>1</sup>, առին ոստս արմաւենեաց<sup>2</sup>» (Յովի. ԺԲ 12-13):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ.** Ասացաւ ի վերոյ, եթէ ոք հաւասարի Աստուծոյ տէրութեամբ եւ թագաւորութեամբ<sup>3</sup> Աստուած է, իսկ Քրիստոս սոյնպէս հաւասարի Աստուծոյ, ապա ուրեմն Քրիստոս Աստուած է:

Եւ թագաւորութիւն եւ տէրութիւն Քրիստոսի ցուցաւ նախ չորս կերպիւ. Առաջին. այս է, որ պատուվ ընդունիցին զնա յերուսաղէմ յորժամ գայ յաւանակաւ<sup>4</sup>, «Ժողովուրդ բազում» ասէ, զի ամենայն հրէայքն պարտական էին գալ ի տաւն Զատկին, որք ի մերձակայ գաւառսն կային Հրէաստանի: Գալուստս այս Քրիստոսի յերուսաղէմ եղեւ տասն աւուրբք յառաջ քան զԶատիկն, որ էր նիսանի տասն, եւ աւրն էր միաշաբաթ, զոր կիրակէ կոչեմք: Եւ նոքա աստուածային նախախնամութեամբն առին ճեղս արմաւենեաց առ ի նշանակել զյաղթութիւն, զոր Քրիստոս առնելոց էր ընդդէմ թշնամւոյն, քանզի ի հնումն սովորութիւն էր յաղթողին ճեղս արմաւենեաց մատուցանել: Եւ ընդառաջ ելին Քրիստոսի առ ի պատուել զնա, եւ վայելչաբար ասէին.

Բան. «Ովսաննա» (Յովի. ԺԲ 13):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ.** Որ է «Փրկութիւն ի բարձանց», որպէս ասէ մեկնիչդ: Եւ այլք ասեն՝ «Փրկեա՛, աղաքէն», զի երրայեցիքն ասեն «Աւզինա», իսկ աւզին «Փրկեա՛» թարգմանի եւ «անա» յաւդ է նշանակիչ աղաչանաց:

Եւ խոստովանելով զՔրիստոսի գալուստն՝ ասեն.

Բան. «Աւրինեալ, որ գաս յանուն Տեառն» (Յովի. ԺԲ 13):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ.** Ասել մարդոյն ոչ է առնել, այլ խոստովանել<sup>5</sup>, վասն այն յորժամ բարեբանեմք զԱստուած, ոչ թէ զնա բարի առնեմք, այլ զբարութիւն նորա խոստովանիմք եւ գովեմք, իսկ Աստուծոյ ասելն գործ է, ըստ այնմ. «Ասաց եւ եղեն» (Ծննդ. Ա 3-4),

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> A B չեք արմաւենեաց

<sup>3</sup> A B գրութեանք

<sup>4</sup> B յաւանակաւ յերուսաղէմ

<sup>5</sup> B խոստովանելով

վասն որոյ յորժամ Աստուած աւրհնէ զոք, նմա<sup>1</sup> բարութիւն ինչ պարգելէ, նոյնպէս եւ աւրհնել մեծին զփոքըն այն է, որ շնորհք պարգելէ, եւ աւրհնել փոքու զմեծն, շնորհ ընկալ լինի եւ խոստովանի, իսկ ասելն.

Բան. «Աւրինեալ որ գասդ յանուն Տեառն<sup>2</sup>» (Յովի. ԺԲ 13):

Մեկնութիւն. Գասդ նախ զներկայն նշանակէ: Երկրորդ. զգալն ի հանդերձեալն: Երրորդ. որ յետ յարութեան եկն բազում անգամ եւ հաստատեաց զնոսա ի հաւատս, վասն որոյ մեք նովին խորհրդովն մինչ ի համբարձումն յամենայն կիրակմուտս գալստեան տաւնեմք:

Իսկ ասելն.

Բան. «Յանուն Տեառն» (Յովի. ԺԲ 13):

Մեկնութիւն. Նախ՝ զի Քրիստոս եկն իբրեւ Տէր: Ոչ այնպէս եկն Մովսէս, այլ իբրեւ ծառայ, որպէս գրէ Պաւղոս յԵրրայեցիս (հմնտ. Եբր. Գ 3-6): Երկրորդ. «Յանուն Տեառն» ասի, այսինքն՝ առաքեալ յԱստուծոյ Հաւրէ առ ի կատարել զկամս նորա:

Բան. «Թագաւոր Իսրայէլի» (Յովի. ԺԲ 13):

Մեկնութիւն. Այս երկրորդն ասէ<sup>3</sup> տէրութիւն եւ թագաւորութիւն Քրիստոսի, յորժամ վկայութեամբ ասեն, որք ընդառաջ ընթացան եւ ասեն. «Աւրինեալ թագաւորդ Իսրայէլի»: Երկրորդ. մարգարէից բանքն է Դաւթի եւ Զաքարիայ, որպէս ասէ մեկնիչդ:

Դարձեալ՝ «Թագաւոր Իսրայէլի», զիշխանութիւն նորա խոստովանին, սակայն ոչ կատարելապէս, վասն չորս պատճառի. Նախ՝ զի հաւատային զՔրիստոս ժամանակեայ թագաւոր, այլ նա յաւիտենական էր: Երկրորդ. մարմնաւոր գիտէին, այլ նա հոգեւոր էր: Երրորդ. կարծէին ի կայսերէ ազատեալ, այլ նա ի բանսարկուէն փրկեաց: Զորրորդ. միայն իսրայէլի գիտէին, այլ նա ընդհանուր ամենայն սեռի մարդկան էր թագաւոր եւ փրկիչ, որպէս ի<sup>4</sup> սաղմոսն ասէ. «Աւրհնեալ, որ գասդ յանուն Տեառն, Տէր Աստուած մեր երեւեցաւ մեզ<sup>5</sup>» (հմնտ. Սաղմ. ճժ՛ 26-27) եւ այլն:

Յետ այսորիկ ցուցանէ զկերպ գալստեանն Քրիստոսի.

<sup>1</sup> Ընա

<sup>2</sup> Ա Յ չեք

<sup>3</sup> Ա Յ Երկրորդն է

<sup>4</sup> Ընա ի

<sup>5</sup> Ա Յ չեք

### Վասն յաւանակին

Բան. «Եւ գտեալ Յիսուսի էշ մի, նստաւ ի վերայ նորա<sup>1</sup>» (Յովի. ԺԲ 14):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Զկերպ գտանելոյն զէշն սա ոչ ճառէ, զի այլ աւետարանիչքն ընդարձակ ճառեցին, այլ գտանել զկորուսեալ սեռս մարդկան նշանակէ իշովն: Ի վերայ իշոյ նստաւ, զի կատարեսցէ զմարդարէութիւն, որպէս ասէ:

Բան. «Որպէս եւ գրեալ է. «Մի' երկնչիր, դուստր Սիովնի, ահա թագաւոր քո գայ<sup>2</sup> նստեալ ի վերայ յաւանակի նորոյ<sup>3</sup>»» (Յովի. ԺԲ 15):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Այս երրորդ վկայութիւն է<sup>4</sup> թագաւորութեան Քրիստոսի, զոր ի մարդարէէն առնու աւետարանիչս՝ ասելով. «Ահա թագաւոր քո գայ՝ նստեալ ի վերայ յաւանակի նորոյ<sup>5</sup>» (Մեն Զաք. Թ 9): Մարդարէութիւն Զաքարիայ ոչ ումեք կատարի, բայց միայն Տեառն մերոյ, զի Զաքարիա յետ դարձին մարդարէացաւ, եւ այլ ոչ ոք իշով թագաւոր ցուցաւ բաց ի Քրիստոսէ: Մարդարէն Զաքարիա եւ Մատթէոս ի վերայ երկոցունցն ասեն, այսինքն՝ իշոյ եւ յաւանակի նստեալ, որ նշանակէր զհրէայս եւ զհեթանոսս, իսկ Մարկոս եւ Ղուկաս եւ Յոհաննէս միայն զյաւանակն ասեն վասն երեք պատճառի. նախ՝ զի սկիզբն եկեղեցւոյն առաւել հեթանոսք եղեն, քան զհրէայք: Երկրորդ. զի բազմութիւն հեթանոսաց առաւել են յոյժ, քան զժողովուրդն հրէից: Երրորդ. զի յաւանակն զընդհանուր մարդկային սեռս նշանակէր, զի անկիրթ եւ անմուղ էին:

Տեսուք այժմ զմեկնութիւն բանից մարդարէին, որ աւետէ դստեր Սիոնի. նախ՝ Սիովն<sup>6</sup> կոչի ամրոցքն Դաւթի, եւ դուստր՝ նորա քաղաքն՝ երուսաղէմ: Երկրորդ. հին ժողովուրդն Սիոն կոչի եւ նորա՝ դուստր Սիոնի: Երրորդ. վերինն Սիոն, որ է մայր մեր ամենեցուն ըստ մարդարէին, եւ ստորինս՝ դուստր է նորա, զի նոր է եւ ծննդական եւ հարսն Քրիստոսի, եւ Սիոնն բարձր դիտանոց լսի:

Բան. «Ահաւասիկ<sup>7</sup> թագաւոր քո գայ» (Յովի. ԺԲ 15):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Ահա ներկայական է: Դարձեալ՝ յաւիտենական, որպէս մատամբ ցուցանէ:

<sup>1</sup> A B չեք ի վերայ նորա

<sup>2</sup> A B չեք քո գայ

<sup>3</sup> A B չեք ի վերայ յաւանակի

<sup>4</sup> B չիք

<sup>5</sup> A B չիք

<sup>6</sup> B C Սիոն

<sup>7</sup> B ահա

Բան. «Հեզ» (Զաք. թ 9):

Մեկնութիւն. Նախ՝ աղքատ, երկրորդ՝ խոնարհ, երրորդ՝ անոխակալ. «Եւ սատակեսցէ<sup>1</sup> զկուռմ<sup>2</sup> յեփրեմայ եւ զհեծեալս յերուսաղէմէ» (տես Զաք. թ 10), զբանսարկուն ասէ, որպէս յայտ է ի մեկնիչդ: Իսկ թէպէտ զայս խորհրդաբար արար ի լրումն մարդարէութեան, սակայն աշակերտքն զայն ոչ գիտացին, որպէս ասէ.

Բան. «Եւ զայն [ինչ] ոչ գիտացին աշակերտքն նորա<sup>3</sup> զառաջինն»

(Յովի. ժԲ 16):

Մեկնութիւն. Այսինքն<sup>4</sup>, ի նոյն ժամն եւ նախքան զյարութիւն, զի<sup>5</sup> դեռեւս թանձրամիտք էին:

Բան<sup>6</sup>. «Այլ յորժամ փառաւորեցաւ, յիշեցին» (տես Յովի. ժԲ 16):

Մեկնութիւն. Փառք զխաչն կոչէ, այլ եւ զյարութիւն. Նախ՝ զի յետ խաչին եւ յարութեան երաց զմիտս նոցա եւ ծանեան: Եւ դարձեալ՝ յիշմանէ Հոգույն Սրբոյ ուսան, զի Քրիստոս ուսոյց զնոսա, որպէս զգիրս տղայոց, եւ Հոգին վարդապետեաց նոցա զմիտս բանին որպէս վարդապետք:

Եւ գիտելի է, որպէս ասէ մեկնիչդ, մինչեւ ի գալուստն տաս գլխաւոր բան առաւել ճառեաց Յոհաննէս, զոր թողին այլքն: Եւ հինգն սքանչելիք է. առաջին՝ ի հարսանիսն զջուրն ի գինի փոխեաց: Երկրորդ. ի Պրոպատիկէն զանդամալոյծն բժշկեաց: Երրորդ. զթագաւորապինն որդին ի Կանայ ողջացոյց: Չորրորդ. զծնէ կոյրն ի Սելովամ լուսաւորեաց: Հինգերորդ. զՂազար չորեքաւրեայ ի Բեթանիա յարոյց:

Իսկ հինգ այլ եւս բան. առաջին՝ զի սկզբանէ ծնունդ Բանին: Երկրորդ. զի բազում անգամ ել յերուսաղէմ: Երրորդ. վասն բազում լուսաւոր վարդապետութեան եւ հալածանաց հրէիցն: Չորրորդ. բազում վկայութեանցն Յովհաննու եւ այլ մարդարէիցն: Հինգերորդ. վասն սամարացւոցն<sup>7</sup> հաւատոց:

Եւ այլ բազում մասնաւոր:

Յետ այսաւրիկ ճառէ զպատճառ այսմ յառաջ ելանելոյս, որ էր վասն յարութեան Ղազարու:

<sup>1</sup> Յ սատակեաց

<sup>2</sup> Աստուածաշնչում՝ զկառս

<sup>3</sup> A B չեք

<sup>4</sup> B չեք

<sup>5</sup> B զի յետ զի

<sup>6</sup> B մեկնութիւն

<sup>7</sup> B սամարացւոյն

Բան. «Եւ ժողովուրդն վկայէր<sup>1</sup>, որ էր ընդ նմա<sup>2</sup>, թէ զԴազար կոչեաց, եւ եթ ի գերեզմանէն<sup>3</sup> [Եւ յարոյց զնա ի մեռելոց], եւ վասն այնորիկ ժողովուրդն<sup>4</sup> ընդառաջ ելին նմա<sup>5</sup>» (Յովի. ԺԲ 17-18):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Եւ աստ լինի կրկին հարց.

**Առաջին.** Թէ ընդէ՞ր կամեցաւ Քրիստոս փառաւք մտանել յերուսաղէմ այժմ, քան յամենայն ժամանակս:

**Պատասխան.** Ասեն վարդապետք՝ վասն տաս պատճառի վայել էր, զի նախ քան զմահ իւր փառաւորութիւն ինչ ցուցանէր Քրիստոս վասն անձին իւրոյ եւ հաւատոյ եւ վարդապետութեան նորա.

**Առաջին՝ զի ի բաց բարձցէ զամենայն պատճառս հրէիցն ոչ ընդունելոյ զնա, որ գծուծ եւ անպատիւ կարծէին:**

**Երկրորդ.** զի ցուցցէ, եթէ Քրիստոս ոչ վասն մեղաց ինչ մեռաւ, այլ անմեղութեամբ մեռաւ վասն ճշմարտութեան եւ սիրոյ եւ լուսաւորութեան սրտից:

**Երրորդ.** առ ի նշանակել, թէ ամենայն դարուց վախճան հանդիսիւ եւ ճշմարտութեամբ լինի, վասն այն որպէս վախճան Հին Աւրինաց Քրիստոս ետ զնոր Կտակարանս, եւ ի վախճան աշխարհի յայտնելոց է փառքն Աստուծոյ, եւ ի վախճան եկեղեցւոյ ի ժամանակս նեռինն պայծառ լինի ճանաչումն հաւատոյ, նոյնայէս վայել էր, զի վախճան կենացն Քրիստոսի եւ պտուղ վարդապետութեան պայծառագոյն լիցի:

**Չորրորդ.** ի մեծագոյն աճումն չարչարանացն Քրիստոսի, քանզի յետ մեծագոյն պատուոյ եւ փառաց մեծագոյն է ամաւթանկանիլ յանարգութիւն եւ ի չարչարանս:

**Հինգերորդ.** պատճառ, զի ցուցցէ, թէ ոչ երկիւղիւ եւ ծածկաբար, այլ յայտնապէս եւ փառաւք եկն Քրիստոս ի չարչարանս եւ ի մահ:

**Վեցերորդ.** զի պիտոյ էր տկարացն նախ քան զմահն Քրիստոսի մեծագոյն փառս ի Քրիստոս տեսանել, զի մի առաւել գայթակղեսցին ի չարչարանքն նորա:

**Եւթներորդ.** զի տեսանելով զփառսն Քրիստոսի, աշակերտաց նորա դիւրագոյն հաւատան եւ յուսան վասն յարութեան:

<sup>1</sup> A B չեք

<sup>2</sup> A B չեք

<sup>3</sup> A B չեք Եւ եթ ի գերեզմանէն

<sup>4</sup> A B չեք

<sup>5</sup> A B չեք

<sup>6</sup> A B վասն

Ուժերորդ. զի խորհրդաբար ցուցցէ<sup>1</sup>, զի որպէս փառաւք եմուտ ի ստորինս Երուսաղէմ, նոյնպէս եւ յետ յարութեան մտանելոց էր փառաւք ի վերինն Երուսաղէմ, նոյնպէս եւ ցուցցէ, թէ մեք ի վախճանի եւ ի բարի գործոցն մեր մտանելոց եմք ի նոյն փառս:

Իններորդ. եւ<sup>2</sup> խորհրդաբար ցուցանէ զտաւն հոգեւոր ի խորհրդաբամ մեր, յորժամ Քրիստոս հոգեպէս մտանէ ի քաղաք սրտից, որպէս ի պաղատ իւր, եւ որպէս տէր ի տաճար իւր:

Տասներորդ. զի յայն ժամանակս, յորում կատարեաց զմեծագոյն նշանս եւ յարոյց զՂազար, եկն յերուսաղէմ փառաւք, զի արժանաւոր լիցի պատուոյն եւ զի ցուցցի, թէ սա է թագաւորն, որպէս ասաց Զաքարիա, եւ մեք ամենեքեան սմա սպասէաք:

Այս վասն ժամանակի փառաւոր գալստեանն Քրիստոսի:

Երկրորդ Հարց<sup>3</sup>. Թէ վասն է՞ր ի վերայ յաւանակի նստաւ, եւ ոչ ի ձիս կամ ի ջորիս:

Պատասխան. Ասեն վարդապետք՝ ոչ վասն աղքատութեան եւ կամ<sup>4</sup> կարաւտութեան, զի<sup>5</sup> որպէս հաւանեցոյց զտէրս իշոյն, նոյնպէս<sup>6</sup> կարէր հաւանեցուցանել եւ<sup>7</sup> զտէրս ձիոց, այլ եւ ոչ վասն անբանութեան, զի միապէս են անբանք ե՛ւ<sup>8</sup> ձիք, ե՛ւ ջորիք ըստ մարդարէին:

Այլ վասն չորս պատճառի նստաւ ի վերայ իշոյ. նախ՝ զի կատարեսցի մարդարէութիւն Զաքարիայի, զի ասէ. «Ահա թագաւոր քո գայ՝ նստեալ յէշ եւ յաւանակ իշոյ» (հմնտ. Զաք. Թ 9), զի ճանապարհ տնաւրէնութեան Քրիստոսի բանք մարդարէիցն էր գրեալ: Երկրորդ. զի առաւել նշանակէր զերկու ազգս՝ հրէից եւ հեթանոսաց, բեռնակիր էշն եւ անկիրթ յաւանակն: Երրորդ. զի ընդ փառացն ցուցցէ զխոնարհութիւն իւր, որպէս ամենայն ուրեք, որպէս յորժամ ծնաւ աղքատ<sup>10</sup> մաւրէ եւ յանարդ տեղւոջ ի մսուր եղաւ եւ զաշակերտսն յաղքատաց ընտրեաց եւ գարեղէն նկանակաւ զբազումս կերակրեաց, եւ ի վերայ խոտոյ նստոյց, եւ անպաճոյճ հանդերձ զգեցաւ, եւ տուն ոչ ունէր, եւ աթոռոյ ոչ կարաւ-

<sup>1</sup> Ծ ցուցանէ

<sup>2</sup> Ծ եւս

<sup>3</sup> Ա Բ չեք

<sup>4</sup> Ծ չեք

<sup>5</sup> Ա Բ եւ

<sup>6</sup> Ա Բ զտեարս իշուոյն, նոյնպէս եւ

<sup>7</sup> Ծ չեք

<sup>8</sup> Բ չեք

<sup>9</sup> Ա Բ յաւանակի իշոյ

<sup>10</sup> Ա Ծ ի յաղքատ

տէր, եւ ոչ բարձի, որ ընդ գլխովն դնէր, այլ ի վերայ գետնի նստէր, նոյնպէս յաւանակի նստելն զխոնարհութիւն ցուցանէր։ Զորրորդ. ասէ Ոսկեբերանն, զի կացուսցէ մեզ կանոնս յամենայնի առանց անցանելոյ, եթէ առաջնորդաց եկեղեցւոյ պիտոյասցի վասն տկարութեան գրաստ ունել, զի վճարեսցէ զհարկն, եւ ոչ ձիով եւ ջորով յաւրանալ եւ պատուասիրել։

Եւ թէ ոք ասէ՝ վասն է՞ր այժմ բազումք նստին ի վերայ ձիոյ, ասեմք, եթէ<sup>1</sup> այս թոյլ տալով եղեւ եւ ոչ հրամանաւ, յորժամ աւետարանիչն Յոհաննէս ի ձի նստեալ եւ զմոլորեալ երիտասարդն դարձուցեալ յեկեղեցին եփեսացւոց։<sup>cixxvii</sup>

**Այսքան առ այս։**

**Այժմ զկնի ճառէ զնախանձ փրիսեցւոցն.**

Բան. «Իսկ փարիսեցիքն ասէին ընդ միմեանս<sup>2</sup>» (Յովհ. ԺԲ 19):

ՄԵԼՈՒԹԻՒՆ<sup>3</sup>. Վասն փարիսեցւոցն կրկին մեկնի. առաջին՝ վասն բարի նախանձուն, զի ոմանք ի փարիսեցւոցն ի նա<sup>4</sup> հաւատացին, որպէս նիկոդիմոս եւ այլք, եւ սոքա կամէին զայլ խափանել ի հալածմանէն Քրիստոսի։

Բան. «Տեսանէք, զի ոչ ինչ աւգտիք» (Յովհ. ԺԲ 19):

ՄԵԼՈՒԹԻՒՆ. Իբրու ասել, թէպէտ աշխատիմք ի խափանել զժողովուրդն ի հետեւմանէն Քրիստոսի, ոչ ինչ աւգտիմք, վասն այն թուի, թէ նորա գործքն աստուածային գործք են, նոյնպէս եւ Գամաղիկլ ասաց՝ խափանելով զհրէայսն ի հալածմանէ առաքելոցն, որպէս գրեալ է ի Գործն «Ի բաց կացէք յարանցդ յայդցանէ եւ թոյլ տուք դոցա, զի թէ ի մարդկանէ իցէ խորհուրդդ այդ կամ գործդ՝ քակտեսցի<sup>5</sup>, ապա թէ յԱստուծոյ է, ոչ ոք կարէ քակտել զդոսա» (Գործք Ե 38-39): Միւս այլ կերպիւ մեկնի բանս այս վասն չար նախանձուն, զի ոչ հաւատացեալ հրէայքն ընդ Քրիստոսի նախանձելով ասէին. «Տեսանէք, զի ոչ ինչ աւգտիք», այսինքն՝ ոչ կարեմք խափանել զժողովուրդն ի Քրիստոսէ։

Բան. «Ահաւասիկ աշխարհ ամենայն զկնի նորա գնաց» (Յովհ. ԺԲ 19):

ՄԵԼՈՒԹԻՒՆ. Այսինքն՝ բազում հրէայք թողին զմեզ եւ ընդ նմա միաբանեցան, որպէս յայտ է ի մեկնիչդ։

Զկնի այսմ ճառէ, թէ<sup>6</sup> Քրիստոս որպէս փառաւորեցաւ ի հեթանոսաց։

<sup>1</sup> B թէ

<sup>2</sup> A B չեք ընդ միմեանս

<sup>3</sup> B չեք

<sup>4</sup> B զնա

<sup>5</sup> C խորհուրդ այդ կամ գործք՝ քակեսցի

<sup>6</sup> A B չեք, C ճառի, թէ

Բան. «Եին ոնանք հեթանոսք» (տես Յովի. ԺԲ 20):

**Մեկնութիւն.** Նախ ճառի այսմ հեթանոսաց բարի ցանկութիւն: Երկրորդ. Քրիստոսի պատասխանին, անդ. «Պատասխանի ետ Յիսուս» (տես Յովի. ԺԲ 23):

**Վասն առաջնոյն ասէ.**

Բան. «Եին անդ<sup>1</sup> ոնանք [եւ] հեթանոսք յելելոցն [անդր], զի երկիր պագծեն ի տաւնին» (տես Յովի. ԺԲ 20):

**Մեկնութիւն<sup>2</sup>.** Վասն այս հեթանոսաց<sup>3</sup> երեք է տեսութիւն. նախ՝ որպէս մեկնիչդ ասէ, թէ առաքեալք էին յԱբգարէ<sup>4</sup> առ Քրիստոս, որք բերին զպատմուճանն անկար եւ թուղթ ի նմանէ, եւ Աղդէ կերպասագործն<sup>5</sup> ընդ նոսա, եւ ետ նոցա զպատուական դաստառակն երեսացն Սուրբ: Երկրորդ. ոմանք ասեն, թէ<sup>6</sup> ի հեթանոսացն էին ընդ հրէութեամբ<sup>7</sup> մտեալ, որք եկամուտք կոչէին<sup>8</sup>, եւ նոքա պարտական էին գալ ի տաւն Զատկին, բայց հեթանոսք կոչէին<sup>10</sup> վասն բնական յազգէ հեթանոսաց գոլոյն<sup>11</sup>: Երրորդ. տեսանի բանս վասն ճշմարիտ հեթանոսաց, որք ոչ էին եկամուտք եւ վասն սրբութեան տաճարին ելանէին ի տաւնս եւ պատուէին զնոսս, որք չուրջ էին Հրէաստանի, որպէս գրեալ է յԵրկրորդ Մակաբայեցիսն, բայց հրէայքն ոչ ընդունէին զհեթանոսս առ յուտել զգառն Զատկին, որպէս գրեալ է յԵլիցն, թէ՝ «Անթլփատն մի՛ կերիցէ» (Ելք ԺԲ 48), նոյնպէս եւ մեք զանմկրտեալսն ոչ հաղորդեմք: Բայց հեթանոսք այս լուեալ էին զսքանչելիսն<sup>13</sup> Քրիստոսի վասն Ղազարու, վասն այն կամէին զնա տեսանել եւ զվարդապետութիւն նորա լսել:

Բան. «Նոքա մատեան առ Փիլիպպոս<sup>14</sup>, որ ի Բեթսայիդայ» (Յովի. ԺԲ 21):

**Մեկնութիւն.** Աւետարանիչս զՓիլիպպոս ի Բեթսայիդայ ասէ ի զանազանել զմիւս Փիլիպպոսն, որ էր մի յեթանց սարկաւա-

<sup>1</sup> А В **չեք**

<sup>2</sup> С **չեք**

<sup>3</sup> С հեթանոսաց

<sup>4</sup> В յԱբգարէ

<sup>5</sup> А В կերպասագործ

<sup>6</sup> А В **չեք**

<sup>7</sup> С հրէութեան

<sup>8</sup> В եկամուտ

<sup>9</sup> С կոչին

<sup>10</sup> С **չեք** եւ նոքա ... հեթանոսք կոչէին

<sup>11</sup> С վասն բնական հեթանոսք գոլոյն յազգէ

<sup>12</sup> А С ի յուտել, В ի ուտել

<sup>13</sup> В սքանչելիսն

<sup>14</sup> В Փիլիպպոս

**գաց:** իսկ թէ վասն է՞ր զՓիլիպպոս աղաչեն, թուի թէ գալիլեացի էր, մերձակայ հեթանոսաց եւ դիտէր զլեզուս նոցա:

Բան. «Կամմիք զՅիսուս տեսանել» (Յովի. ԺԲ 21):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** տե՛ս զքարի յաւժարութիւն եւ որ «Տէր» կոչեն զաշակերտսն, բարի խորհրդածութիւն է:

Բան. «Գայ Փիլիպպոս եւ ասէ ցԱնդրեաս» (Յովի. ԺԲ 22):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Միայն Փիլիպպոս ոչ համարձակեցաւ ասել Յիսուսի, զի յոյժ խոտէր զհեթանոսս եւ չուն կոչէր, որպէս զքանանացին (հմմտ. Մատթ. ԺԵ 21-31), վասն այն եկն առ Անդրէաս վասն երկու պատճառի<sup>1</sup>. նախ՝ վասն զի նախկին էր ի մէջ ամենայն աշակերտացն Քրիստոսի: Երկրորդ. զի Փիլիպպոս ի ձեռն նորա առ Քրիստոս դարձաւ, որպէս ցուցաւ յառաջին գլուխն (հմմտ. Յովի. Ա 43-51), իսկ սոքա երկոքեանս ոչ իշխեցին բերել զնոսա առ Քրիստոս առանց հրամանի նորա:

Բան. «Անդրեաս եւ Փիլիպպոս ասեն ցՅիսուս» (Յովի. ԺԲ 22):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Այս նախախնամութեամբն Աստուծոյ եղեւ, զի նշանակէ, թէ հեթանոսք ի ձեռս առաքելոցն վաղվաղակի ընդունելոց են զհաւատն Քրիստոսի: իսկ աւետարանիչս ոչ ճառէ, թէ թոյլ ետ Քրիստոս<sup>2</sup> զհեթանոսս ածել առ նա, այլ առանց գրոյ կարեմք իմանալ, թէ Քրիստոս թոյլ ետ<sup>3</sup>:

Այժմ առընթեր սմին յարէ եւ զպատասխանին Քրիստոսի.

Բան. «Եւ Յիսուս պատասխանի ետ նոցա» (Յովի. ԺԲ 23):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ<sup>4</sup>.** Քրիստոս նախ յայտնէ զչարչարանսն: Երկրորդ. յաւժարեցուցանէ ի սոյն, անդ. «Որ<sup>5</sup> սիրէ զանձն իւր, արծակէ զնա» (Յովի. ԺԲ 25):

**Վասն առաջնոյն գիտելի է,** զի Քրիստոս պատասխանելով ջերմ ցանկութեան հեթանոսաց առ նա յայտնեաց զչարչարանս իւր վաղվաղակի լինել, զի յետ չարչարանացն Քրիստոսի հեթանոսք գալոց էին ի հաւատս:

Բան. «Եհաս ժամ, զի փառաւորեսցի Որդի մարդոյ<sup>6</sup>» (Յովի. ԺԲ 23):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Փառքն Քրիստոսի հինգ կերպիւ լսի. նախ՝ փառաւորեցաւ Քրիստոս ի չարչարանս խաչին, յորժամ արեգակն խաւարեցաւ, երկիր շարժեցաւ եւ այլն: Երկրորդ. փառաւորեցաւ յարութեամբն, զի նախքան զիսաչն Հոգին էր փառաւորեալ եւ

<sup>1</sup> A B չեք վասն երկու պատճառի

<sup>2</sup> B չեք

<sup>3</sup> B թոյլ ետ զիեթանոսս

<sup>4</sup> A չեք

<sup>5</sup> A B չեք

<sup>6</sup> A չեք

յետ խաչին մարմինն փառաւորեցաւ, որպէս ասեն ոմանք: Եւ դարձեալ՝ նախ ծածուկ էր փառքն Քրիստոսի եւ յետ յարութեան<sup>1</sup> յայտնի եղեւ ի մարմինն: Երրորդ. փառաւորեցաւ համբարձմամբն յերկինս, որպէս ասէ Պաւղոս ի Փիլիպպեցիսն. «Աստուած զնա առաւել բարձրացոյց եւ շնորհեաց նմա անուն» (Փիլիպ. Բ 9): Չորրորդ. փառաւորեցաւ Քրիստոսի գալ Հոգւոյն Սրբոյ, որ եկեալ ծանոյց գԱստուածութիւն Քրիստոսի ի սիրտս մարդկան, որպէս ասէ Տէր<sup>2</sup>. «Նա զիս փառաւորեցէ» (Յովի. ԺԶ 14): Հինգերորդ. փառաւորեցաւ ի դարձն հեթանոսաց, որք զնա Աստուած խոստովանին, ըստ այնմ. «Ամենայն լեզու խոստովան լիցի, թէ Տէր է թիսուս Քրիստոսի փառս Աստուծոյ Հաւը<sup>3</sup>» (Փիլիպ. Բ 11): Եւ զի Քրիստոս գիտէր, որ վաղվաղակի լինելոց էր, որ հեթանոսք գային ի հաւատս, ասէ. «Եհաս ժամ, զի փառաւորեցի Որդի մարդոյ» (Յովի. ԺԲ 23): Զոր աւրինակ եթէ ոք տեսանիցէ զաւրայս առ ի հունձս, ասեն՝ եհաս ժամ հնձոցն<sup>5</sup>, եւ այլն յայտնի է ի մեկնիչդ: Իսկ Քրիստոս պատշաճ աւրինակաւ ցուցանէ, եթէ պարտ է մահուան նորա յառաջագոյն լինել քան զդարձն հեթանոսաց:

**Այսքան առ այս:** Եւ Քրիստոսի մարդասիրին փառք յաւետեանս: **Ամէն<sup>6</sup>:**

### Հատն ցորենոյ

Բան. «Եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի<sup>7</sup>, ինքն միայն կայ<sup>8</sup>, ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ<sup>9</sup>» (Յովի. ԺԲ 24):

**Մեկնութիւն.** Վասն չորս պատճառի Քրիստոս զինքն ի հատ ցորենոյ աւրինակէ. նախ՝ զի ազնիւ եւ պատուական է ի մէջ ամենայն սերմանց: Երկրորդ. զի աւգտակար է ի մէջ ամենայն հատոց, յորմէ լինի հաց: Երրորդ. զի ընտելական է ամենայն մարդկան: Չորրորդ. զի յարմար աւրինակ է: Եւ վասն այն առաքեալն Պաւղոս զնոյնս աւրինակ տայ յարութեան մարդկան ի Կորնթացւոցն. «Անմի՛տ, դու զոր սերմանեսն, ո՛չ կենդանանայ, եթէ ոչ նախ մեռանի» (Ա Կորնթ. ԺԵ 36) եւ այլն:

<sup>1</sup> A B չեք յետ յարութեան

<sup>2</sup> A B չեք

<sup>3</sup> C Յաւր, ամէն

<sup>4</sup> A չեք Մարդոյ, B չեք Որդի Մարդոյ

<sup>5</sup> B ի հնձոցն

<sup>6</sup> A C չեք Այսքան առ այս ... Ամէն

<sup>7</sup> A չեք

<sup>8</sup> A չեք

<sup>9</sup> A չեք

Եւ զսերմանելն ցորենոյ անկանել կոչէ<sup>1</sup> վասն երկու պատճառի. նախ՝ ըստ ճառին, զի հատն անկանի ի ձեռաց սերմանողին, յորժամ սերմանէ:

Երկրորդ. առ ի խորհուրդ մահուան ամենայն մարդկան չորս կերպիւ. նախ՝ զի մարմինն անկանի ի կենդանութեան<sup>2</sup>: Երկրորդ. անկանի ի կանգուն մնալոյն: Երրորդ. զկնի ի խոր դնի: Զորրորդ. զինչ կերպ եւ անկանի, յառնէ:

Դարձեալ՝ ի հատ ցորենոյ աւրինակէ զինքն, եւ այս վասն տասն պատճառի. նախ՝ զի հատ ցորենոյ առանց յերկիր ցանելոյ ինքն միայն է<sup>3</sup>, սոյնպէս եւ Տէրն՝ նախքան զչարչարանս սակաւ ունէր հաւատացեալ:

Երկրորդ. զի առանց պատճառի ոչ սերմանի, սոյնպէս եւ Տէրն մեր վասն մարդկան մեռաւ եւ ոչ վասն իւր յանցանաց. «Զի ոչ արար մեղս» (Եսայի ԾԳ 9), ~ ասէ մարգարէն:

Երրորդ. զի ի ժամանակի սերմանի, սոյնպէս եւ Տէրն ի ժամանակի եկն եւ կատարեաց եւ կրեաց զմահ վասն մեր:

Զորրորդ. զի սերմն ծածկի ի սիրտ երկրի, սոյնպէս եւ Տէր մեր ծածկեցաւ վիմով ի սիրտ երկրի:

Հինգերորդ. զի նախ հերկի երկիր եւ ապա սերմն սերմանի, սոյնպէս եւ գերեզման Տեառն նախ փորեալ ի սոմնասայ եւ յետոյ անդ եղաւ Տէրն:

Վեցերորդ. զի նախ մեռանի սերմն եւ ապա աճէ, սոյնպէս եւ Տէր մեր՝ բանական հոգին բաժանեցաւ ի մարմնոյն եւ ապա յարուցեալ ձգեաց զամենեսեան առ ինքն:

Եւթներորդ. զի սերմն նախ զարմատն ի ներքս տարածէ ի սիրտ երկրի եւ ապա զգլուխն արտաքս բերէ, սոյնպէս եւ Տէր մեր նախ զգժոխս աւերեաց եւ անդ ներգործեաց զզաւրութիւն իւր՝ ազատելով զամենեսեան:

Ութերորդ. զի թէպէտ մի է հատ սերմանն, որ անկանի յերկիր, այլ ունի զաւրութիւն, ծղաւտ եւ ծունկս հանել եւ անտի զհասկն, սոյնպէս եւ Տէր մեր մի անհատ մարդ եղեւ եւ այնպէս<sup>4</sup> չարչարեցաւ, այլ Աստուած էր ի մարմնի միացեալ, որ ունէր զզաւրութիւն Աստուածութեան կատարեալ, որ եւ կապեաց զսատանայ եւ քակեաց զդժոխս, ելոյծ զմահ եւ զապականութիւն եւ զայլն:

<sup>1</sup> Ա կոչի

<sup>2</sup> Ա Բ ի կենդանութենէ

<sup>3</sup> Ա չիք

<sup>4</sup> Ը այնչափ

Իններորդ. զի նախ ծաղկի եւ յետոյ ապա կատարի պտղով, սոյնպէս եւ Տէր մեր ծաղկեցաւ յարութեամբն եւ երեր պտղով զհաւատացեալքս:

Տասներորդ. զի մի հատն բազում արդիւնս առնէ ի հասկ, ի ճուղք, ի տերեւ եւ յայլսն, սոյնպէս եւ թաղելով Տէրն մարմնով զմեռեալս յարոյց եւ հոգով զհոգիսն ազատեաց եւ եհան յերկինս եւ ապա յետոյ հեթանոսք հաւատացին ի Քրիստոս, եւ սոյնպէս բազում արդիւնս արար, վասն այնորիկ ասէ. «Եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ<sup>1</sup> [Եերկիր մեռանիցի], ինքն [միայն կայ], ապա եթէ մեռանիցի<sup>2</sup>, բազում [արդիւնս առնէ]» (Յովհ. ԺԲ 24):

**Զկնի այսմ յաւժարեցուցանէ Քրիստոս զայլս ի հետեւումն չարչարանաց իւրոց.**

Բան. «Որ սիրէ զանձն իւր, արձակէ զնա» (Յովհ. ԺԲ 25):

Մեկնութիւն. Աստ գիտելի է, զի սիրել զոմն է նմա բարի ինչ կամիլ<sup>3</sup> եւ եթէ բարին<sup>4</sup> այն է ճշմարտապէս եւ պարզ բարի, որպէս բարութիւն հոգեւոր, յայնժամ սէր նորա է ստոյգ եւ կատարեալ: Եւ դարձեալ՝ է բարի, որ ոչ է ճշմարիտ, այլ անկատար եւ ժամանակաւոր, որպէս մարմնաւոր բարութիւնք:

Եւ սոյնպէս վարդապետք զբանս զայս երկու յեղանակաւ մեկնեն:

Վասն առաջնոյն սոյնպէս. որ սիրէ զանձն իւր ճշմարիտ եւ հոգեւոր, արձակէ զնա, այսինքն՝ ոչ երկնչի աստ համբերութեամբ տանել զիիշտս վասն Քրիստոսի, որպէս ասեն վարդապետք, եթէ կամիս զկեանս ունել ընդ Քրիստոսի, մի՛ երկնչիր մեռանել վասն Քրիստոսի: Եւ արձակելն ի մեր թարգմանս յայլ լեզուս կորուսանել է, զի կերպիւ ինչ կորնչի այսմ կենաց, յորժամ բաժանի հոգին ի մարմնոյն:

Երկրորդ. մեկնի բանս այս հակառակ առաջնոյն, սոյնպէս՝ որ սիրէ զանձն իւր ոչ ճշմարիտ սիրովն, այլ հետեւութեամբ աշխարհիս, կորուսցէ զնա, այսինքն՝ ածէ զնա երթալ ի կորուստ դժոխոցն, վասն այն ասեն վարդապետք՝ մի՛ սիրեր<sup>5</sup> զանձն քո, զի մի կորուսցես, այսինքն՝ մի՛ սիրեր զանձն քո ի կեանս յայս, զի մի կորուսցես<sup>6</sup> զկնի այսմ կենաց:

<sup>1</sup> С չիք

<sup>2</sup> В չիք

<sup>3</sup> В բարի ինչ կամ իրս

<sup>4</sup> А բանին

<sup>5</sup> В С սիրել

<sup>6</sup> С չիք այսինքն ... կորուսցես

**Եւ արծակելն նախ արտաքս հեռացուցանելն է ի կենաց, որպէս ասէ մեկնիչդ:** Երկրորդ. լայն եւ արձակ ընթանալն է, որպէս **այլուր ասաց:**

Բան. «Եւ որ ատէ զանձն իւր յաշխարհիս» (Յովի. ԺԲ 25):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ.** Նախ ասաց. «Որ սիրէ զանձն իւր յայսն աշխարհիս<sup>1</sup>, նա կորուսանէ ի հանդերձեալն, եւ որ ատէ աստ, ի հանդերձեալն գտանէ: Եւ ատելն կատարեալ ատելութիւն է, որ եւ ճշմարիտ սէր ասի, այն է, որ մարդ ի բաց հատանէ զանձն ի մեղաց եւ ի պատճառէ մեղաց, եւ զկիրս չարչարանացն Քրիստոսի կրեսցէ, որպէս ասէ մեկնիչդ:

**Եւ զկնի ցուցանէ Քրիստոս զպատճառ հետեւելոյ չարչարանացն նորա՝ ասելով.**

Բան. «Եթէ ոք զիս պաշտիցէ<sup>2</sup>, զկնի իմ եկեսցէ» (Յովի. ԺԲ 26):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ.** Որպէս թէ ասել՝ պարտ է, զի պաշտաւնեայն հետեւեսցի Տեառն իւրոյ:

**Եւ կրկին է հետեւելն. աստ՝ մտաւք եւ գործաւք, եւ անդ՝ ի կեանսն փառաւք, որպէս ասէ մեկնիչդ:**

**Եւ զկնի ցուցանէ զպարձս հետեւմանն.**

Բան. «Եւ ուր Եսն եմ, անդ եւ պաշտաւնեայն իմ եղիցի<sup>3</sup>» (Յովի. ԺԲ 26):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ.** Բարւոք ասէ. «Ուր Եսն եմ», եւ ոչ ասէ՝ ուր լինելոցն եմ, զի Քրիստոս ըստ Աստուածութեան երանութիւն է էութեամբ, այլեւ ըստ մարդկութեան երանելի է՝ հոգւով եւ մարմնով միաւորեալ ի Բանն Աստուած: Դարձեալ՝ ուր եւ անդ ասելն ոչ միայն զերանութիւն, այլեւ զտեղիքն յերկինս նշանակէ, զոր ճշմարիտ եւ կատարեալ պաշտաւնեայքն ընդունելոց են ի Քրիստոսէ:

Բան. «Եթէ ոք զիս պաշտիցէ<sup>4</sup>, պատուեսցէ զնա Յայրն իմ» (Յովի. ԺԲ 26):

**ՄԵԼՈՒԹԻՒՆ.** Երեք ինչ ցուցանէ բանս.

**Նախ՝ թէ որպէս պաշտի Քրիստոս:**

**Ասեն վարդապետք, եթէ պաշտել զՔրիստոս է հաւատով, եւ սիրով սպասաւորել նմա<sup>5</sup> իրեւ Աստուծոյ, եւ նորա պատուիրանացն հնագանդիլ<sup>6</sup> սրտիւ եւ գործով:**

**Երկրորդ. Թէ վասն է՞ր ի Յաւրէ ասէ:**

<sup>1</sup> Ա յաշխարհիս յայս

<sup>2</sup> Եթէ ոք պաշտիցէ, Ը պաշտեսցէ

<sup>3</sup> Ա չիք իմ եղիցի

<sup>4</sup> Ե Ը պաշտեսցէ

<sup>5</sup> Ա չիք

<sup>6</sup> Ե Ը հնագանդել

Ասեմք վասն երից. նախ՝ զի սպասաւորէ Հաւը եւ Քրիստոսի<sup>1</sup> ի միասին: Երկրորդ. զմիակամութիւն ընդ Հաւը ցուցանէ: Երրորդ. զի որքան մեծագոյն է պատուողն, այնքան մեծ ասի պատիւն, իսկ պատիւս այս յԱստուծոյ լինի:

Երրորդ. թէ որպէ՞ս պատուի:

Ասեմք, թէ պատուելի արասցէ աստ եւ անդ, զի ի կեանս յայս մարդ մարդոյ պատիւ առնէ ի վկայութիւն առաքինութեան, իսկ անդ պատուի մարդ յԱստուծոյ ի վարձս առաքինութեան:

Այսքան առ այս:

Զկնի այսմ ճառէ, թէ Քրիստոս որպէ՞ս<sup>2</sup> փառաւորեցաւ յԱստուծոյ Հաւրէ:

Բան. «Բայց այժմ անձն իմ խռովեալ է» (Յովհ. ԺԲ 27):

Մեկնութիւն. Բանս այս յերկուս բաժանի. նախ՝ աստ դնէ զխնդրուածքն փառաց: Երկրորդ. զխոսառումն փառաց, անդ՝ «Եկն բարբառ յերկնից» (Յովհ. ԺԲ 28):

Վասն առաջնոյն գիտելի է, զի Քրիստոս զծմարիտ մարդկային բնութիւն իւր<sup>3</sup> յայտնելով ցուցանէ զտենչումն զգայական մասինն՝ ասելով. «Բայց այժմ<sup>4</sup> անձն իմ<sup>5</sup> խռովեալ է» (Յովհ. ԺԲ 27):

Աստ հինգ բան ցուցանէ. նախ՝ ընդդէմ Ապողինարի, որ ասէր, թէ հոգի եւ միտք ոչ ունի Քրիստոս: Աստ անձն զհոգին ասէ եւ խռովիլ ի միտս:

Երկրորդ. ընդդէմ նոցա, որք առ աչաւք ասեն զչարչարանսն,<sup>6</sup> զի Քրիստոս զայլս յաւժարեցոյց հետեւել մահուան<sup>7</sup> իւրոյ: Եւ զի մի ասիցեն, թէ դու աներկիւլ ես ի մահուանէ եւ ոչ զգաս զչարչարանսն,<sup>8</sup> վասն այն Քրիստոս այսմ կարծեաց հակառակ յիշեաց զխովութիւն հոգւոյ իւրոյ, որպէս յայտ է ի մեկնիչդ:

Երրորդ. իր ինչ խռովի<sup>9</sup>, յորժամ շարժի, եւ ըստ այսմ<sup>10</sup> ծով, զի յուգեալ եւ<sup>11</sup> խռովեալ կոչի, իսկ ի Քրիստոս, զի Աստուածութիւն թոյլ տայր զգայական մասինն առնել, զոր ինչ յատուկ էր

<sup>1</sup> Ա Քրիստոսի եւ Շաւր

<sup>2</sup> Բ Ը

<sup>3</sup> Ա մարդկութիւն իւր

<sup>4</sup> Ա Ը

<sup>5</sup> Ա Ը

<sup>6</sup> Ա զչարչարանս

<sup>7</sup> Բ Ը մահուան

<sup>8</sup> Ա զչարչարանս

<sup>9</sup> Բ խռովիլ ասէ, Ը խռովիլ ասի

<sup>10</sup> Բ այնն

<sup>11</sup> Ա Ը

նմա առանց մեղաց: Եւ աստ, յորժամ մերձեցաւ չարչարանքն Քրիստոսի, զգայական յաւծարութիւն, որ պիտակ կամք կոչի, շարժեցաւ յերկիւղ, վասն բնական կրիցն՝ սոսկալ եւ քստմնել, եւ զայս կոչէ աստ խռովութիւն Հոգւոյն: Յո՞ր ժամ. «Այժմ անձն ին խռովեալ է», այսինքն՝ նեղեալ եւ տրտմեալ վասն մերձաւոր չարչարանացն:

**Չորրորդ.** գիտելի է, զի այս երկիւղ եւ տրտմութիւն առաւել էր ի Քրիստոս վասն երից. նախ՝ զի գիտէր ստուգապէս ի Հաւրէ ի մահ տուեալ: Երկրորդ. զի ինքն կամաւ եկն: Երրորդ. տեսանէր զհրէայսն ամենեւիմբ յաւծար ի չարչարել զնա: Իսկ մեք յայնժամ զգամք եւ ցաւիմք, յորժամ ցաւն զգալապէս ի մեզ հասանէ, իսկ Տէրն յառաջագոյն գիտէր:

**Հինգերորդ.** գիտելի է, զի տրտմեցաւ Քրիստոս վասն չորից. առաջին՝ յորժամ կամէր Քրիստոս աղաւթել առ Հայր, նախ տրտմեցաւ ըստ սովորութեան մարդկան, յորժամ կամին իր ինչ խնդրել նախ զտրտմութիւն յայտնեն: Երկրորդ. տրտմեցաւ վասն կորստեան անհաւատիցն առ խաչին եւ որք յետոյ: Երրորդ. տրտմեցաւ, զի մի ուրուական, այլ ճշմարիտ չարչարանս եւ ճշմարիտ մարմին ցուցցէ, որով ճշմարիտ փրկութիւն լինի ներգործեալ: Չորրորդ. տրտմեցաւ, զի զտրտմութիւն նախահաւըն եւ զբնութեանս կրեացէ եւ բարձցէ:

Եւ զկնի այսմ աղաւթքն Քրիստոսի դնի առ Հայր.

Բան. «Եւ զինչ ասացից» (Յովի. ԺԲ 27):

**Մեկնութիւն.** Զբանս զայս վեց կերպիւ մեկնեն վարդապետք. նախ՝ որպէս ասէ մեկնիչդ. ոչ թէ Հրաժարելով մաղթէ զչարչարանս խաչին, այլ զի մի խափան լիցի փրկութեան աշխարհի: Նախ ի հաստատութիւն հաւատացելոց, եւ երկրորդ. զի բարձցէ զկարծիս առ աչաւք ասցողացն, որպէս ցուցաւ: Իսկ ասելն. «Վասն այսորիկ եկի», զկամաւոր գալն ի չարչարանս: Եւ դարձեալ՝ խրատէ զմեզ յաւծարութեամբ կրել զտրտմականս, որ վասն փրկութեան մերոյ է եւ վարձուց հատուցման, որպէս յայտ է ի մեկնիչդ: Երկրորդ. ոմանք մեկնեն. «Եւ զինչ ասացից» իբրու ասել, թէ ի զգայական յաւծարութեանցս զայս խնդրուածք արարից:

Բան. «Եթէ Յայր ապրեցն՝ զիս ի ժամանակէ աստի յայսնանէ» (Յովի. ԺԲ 27):

**Մեկնութիւն.** **Այսինքն՝** փրկեա՛ զիս ի մերձակայ չարչարանացս, բայց ըստ<sup>1</sup> բանական կամացն, որ միացեալ էր ի կամս Բանին, որ ամենեւիմբ տիրէր ի վերայ զգայական մասինն, կամէր

<sup>1</sup> Ա վասն

չարչարիլ վասն հնազանդութեան Հաւր եւ վասն փրկութեան մարդկան, վասն այն զկնի ասէ.

Բան. «Այլ վասն այնորիկ եկի ի ժամս յայս» (Յովի. ԺԲ 27):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Որպէս թէ ասել. «Վասն այն եկի յաշխարհ, զի չարչարեցայց»: Դարձեալ՝ վասն այն եկի ի ժամս, զի զկամս Հաւր կատարեցից: Դարձեալ՝ վասն այնորիկ եկի ի չարչարանս, զի զմարդիկ փրկեցից: Այս երկրորդ միտք:

**ԵՐՐՈՐԴ.** Ոսկեբերանն ասէ. «Եւ զի՞նչ ասացից, թէ Յայր, ապրեցն զիս», այսինքն՝ ոչ ինչ կարեմ ասել, խնդրելով զերծումն ի մահուանէ, զի վասն այն եկի ի ժամս յայս, որպէս թէ ասել՝ «Ես խռովեալ ոչ ասեմ զայս՝ առ ի խոյս տալոյ ի մահուանէ»:

**ՉՈՐՐՈՐԴ.** ասեն ոմանք, եթէ զի՞նչ ասացից, եթէ ոչ առ յուսուցանել<sup>1</sup> զխորհրդական անդամս իմ, զի Քրիստոս աղաւթեաց առ ի տալ մեզ աւրինակ աղաւթից:

**ՀԻՆԳԵՐՈՐԴ.** ասեն այլք, եթէ զի՞նչ ասացից, այսինքն՝ զո՞վ կարդացից, եթէ ոչ զշայր, որոյ զկամս նորա նախ գնեմ, քան զկամս<sup>2</sup> իմ, վասն այն եկի ի ժամս յայս, որպէս զի ըստ կամացն Հաւր չարչարիմ: Եւ այս ոչ ցուցանէ երկու կամք ի Քրիստոս, որպէս մինն խնդրէ ազատիլ ի մահու եւ մինն կամի զինքն ի մահ, այլ մի է կամք բանական հոգւոյն ընդ կամս բանին միացեալ, որով խնդրէր մեռանիլ եւ նոյն կամքն թոյլ ետ զգայական յաւժարութեան խնդրել ազատիլ, զի միով կամաւքն խնդրէր ի Հաւր զգայականաւն ոչ մեռանիլ եւ բանականաւն՝ մեռանիլ:

**ՎԵցերորդ.** դարձեալ ասէ նոյն վարդապետն, թէ Քրիստոս յորժամ եցոյց զխուվութիւն իւր, ասէ. «Զի՞նչ ասացից», այսու զմեզ ուսուցանելով, թէ յորժամ զայսպիսի խռովութիւն կրեմք, ոչ է պարտ յուսահատիլ կամ անյուսութեամք ինչ բարբառել, այլ առ Հայր դիմել եւ ի նա յուսալ:

Եւ աստ լինի կրկին հարց. Վասն է՞ր աղաւթեաց Քրիստոս, թէ՝ Յայր, ապրեցն զիս, զի ստոյգ գիտէր, զի այն ոչ լինէր, եւ դարձեալ՝ ոչ կամէր զայն լինել:

**ՊԱՏԱՍԽԱՆ<sup>3</sup>.** նախ ասեմք, եթէ<sup>4</sup> աղաւթեաց Քրիստոս ոչ ազատ կամաւք զայն խնդրելով, այլ զգայական յաւժարութիւն ցուցանելով, որպէս ասացաք: Դարձեալ ասեմք. թէպէտ ստոյգ գիտէր զչարչարանսն իւր նախասահմանեալ յիւրում Աստուածութենէն եւ ընկալեալ ի բանական կամս իւր, սակայն աղաւ-

<sup>1</sup> A B C առ ի յուսուցանել

<sup>2</sup> A զկնանս

<sup>3</sup> C չիք

<sup>4</sup> A թէ

թեաց վասն երկու պատճառի. նախ՝ զի ցուցցէ զյաւժարութիւն մարմնոյն, զի քստմնէր եւ սոսկայր ի մահուանէ եւ այնու ցուցցէ, զի ճշմարիտ մարդ է: Երկրորդ. զի ուսուսցէ զմեզ, թէպէտ իր ինչ լինիցի ընդդէմ յաւժարութեան մարմնոյ մերոյ, սակայն պարտ է զայն ընտրել բանական կամաւք, թէ գիտեմք, զի կամքն Աստուծոյ է<sup>1</sup>:

Երկրորդ հարց. Վասն է՞ր Քրիստոս երկեաւ ի մահու, զի բացում մարտիրոսք համարձակ եւ առանց երկիւղի դիմէին ի մահ:

Պատասխան<sup>2</sup>. Այս մեծութիւն բնական երկիւղիս եղեւ ի Քրիստոս վասն չորս պատճառի. նախ՝ զի Քրիստոսի զգայական բնութիւն ամենեւին յինքն թողեալ եղեւ, զի արդարապէս հատուցէ զբազմադիմի եւ զմեծագոյն մեղս մարդկային սեռի, զի եթէ<sup>3</sup> Քրիստոսի մարմնոյն տուեալ էր մխիթարութիւն յազդմանէ բանական եւ յաստուածային զաւրութենէն, որպէս մարտիրոսացն լինէր ի մխիթարութիւն նոցա եւ բարձրութիւն հաւատոյն, յայնժամ Քրիստոսի չարչարանքն ոչ լինէր դժուարագոյն եւ ոչ կատարեալ հատուցումն: Երկրորդ պատճառ. զի Քրիստոս էառ զմարդկային հոգին եւ զմարմինն կատարելապէս, սոյնպէս զտրտմութիւն հոգւոյն եւ զերկիւղ մարմնոյն էառ, զի կատարեալ լիցի մարդկութիւն: Երրորդ պատճառ. թէպէտ Քրիստոս կարէր զայս ծածկել յինքեան կամ խափանել, կամ նուազ ցուցանել, սակայն պատշաճ էր զտրտմութիւն եւ զերկիւղն իւր յայտնել ի մեզ, նախ՝ զի ցուցցէ զճշմարիտ մարդկութիւն, Երկրորդ՝ զսաստկութիւն չարչարանաց նորա, Երրորդ՝ զմեծութիւն սիրոյն առ մեզ, չորրորդ՝ յաւրինակ<sup>5</sup> Քրիստոսնէից արար, զի ոմանք զարհուրին ի ժամանակի մահուանն, եւ այնպիսին ոչ է մեղք, եթէ ըստ բանաւորութեան չափեալ լինի:

Զկնի աղաւթէ՝ ասելով.

Բան. «Դայր, փառաւորեալ զանուն քո» (Յովհ. ԺԲ 28):

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Չորս բան էր աղաւթից. առաջին՝ զտրտմութիւն ցուցանէր: Երկրորդն<sup>6</sup> զերկիւղն զգայական մասինն: Երրորդն<sup>7</sup> զմահ փրկութեան մարդկան: Չորրորդն<sup>8</sup> զփառս անուանն:

<sup>1</sup> Ա չիք

<sup>2</sup> Ա չիք

<sup>3</sup> Ա թէ

<sup>4</sup> Ա չիք պատճառ

<sup>5</sup> Ա B C ի յաւրինակ

<sup>6</sup> Ա Երկրորդ

<sup>7</sup> Ա Երրորդ

<sup>8</sup> Ա չորրորդ

Եւ գիտելի է, որպէս ասացաւ ի վերոյ, որ ոք հաւասարի Աստուծոյ տէրութեամբ եւ թագաւորութեամբ, Աստուած է, իսկ Քրիստոս սոյնպէս հաւասարի Աստուծոյ տէրութեամբ եւ թագաւորութեամբ, ապա ուրեմն Քրիստոս Աստուած է: Եւ թագաւորութիւն Քրիստոսի ցուցանի չորիւք, երեքն ասացաւ՝ նստելովն ի վերայ յաւանակի, չորրորդն այս է՝ Հայրական փառաւորութեամբ, որպէս ասէ. «Յայր, փառաւորեա՛ զՈրդի քո»: Դարձեալ գիտելի է, որպէս ասէ սուրբն Կիւրեղ. «Եթէ Յայր անունն առաւել փառաւոր է քան զԱստուածն, զի Աստուածն ասել բաղդատութիւն ունի առ ստեղծուածս, իսկ Հայրն առ որդին ունի բաղդատիլ առընչաբար, ապա ուրեմն Յայր անունն պատուոյ է կոչումն, քան՝ զԱստուած, նոյնպէս զՔրիստոս Որդի Աստուծոյ ասելն պատուով՝<sup>1</sup>, քան զԱստուած ասելն, զի Որդին Աստուծոյ զբնութեամբ Աստուածն ցուցանէ, իսկ Աստուածն հոմանուն է, նոյնպէս իմասցիս եւ վասն Հոգւոյն Աստուծոյ: Իսկ բանս, որ ասէ. «Հայր, փառաւորեա՛ զանուն Քո», այսինքն՝ զայն արա, որով յայտնեցի փառք անուանդ Քում, այսինքն՝ զչարչարանս Որդւոյ Քո, զի Հայր փառաւորի ի չարչարանսն Քրիստոսի եւ Որդին եւս սոյն<sup>2</sup> չարչարանաւք փառաւորեցաւ, զի նոյն է էութեամբն Որդի ընդ Հաւը»: Դարձեալ՝ յորժամ չարչարանքն Քրիստոսի տարածեցաւ ընդ ամենայն աշխարհս, քարոզութեամբ առաքելոցն, ի միասին սփռեցաւ ճանաչումն Հաւը եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, որպէս ասաց Քրիստոս. «Մկրտեցէք զամենայն հեթանոսս յանուն Հաւը եւ Որդւոյ եւ Հոգւոյն [Սրբոյ]» (Մատթ. հԸ 19), որպէս<sup>3</sup> յայտ է ի մեկնիչդ:

Այժմ ճառի խոստումն փառացն ի Հաւը.

Բան. «Եկն բարբառ» (Յովի. ԺԲ 28):

Մեկնութիւն. Այս մասն յերիս բաժանի. նախ՝ ճառի բարբառոյն լինելութիւն: Երկրորդ. կարծեաց ժողովրդեանն զանազանութիւն, անդ. «Ժողովուրդն, որ կայր եւ լսէր» (Յովի. ԺԲ 29): Երրորդ. Քրիստոսի մեկնութիւն<sup>4</sup>, անդ. «Պատասխանի ետ Յիսուս» (Յովի. ԺԲ 30):

Վասն առաջնոյն գիտելի է, զի բարբառս այս ձեւացաւ եւ յաւդաւորեցաւ ի Սուրբ Երրորդութենէն, վասն զի ամենայն արտաքուստ ներգործութիւնք անբաժ են Սուրբ Երրորդութեան, սա-

<sup>1</sup> Ա պատուոյ է

<sup>2</sup> Ա այն

<sup>3</sup> Յ Ս Հ ասաց Քրիստոս ... Եւ Յոգևոյն [Սրբոյ], որպէս

<sup>4</sup> Յ Ս Հ անդ. «Ժողովուրդն ... Քրիստոսի մեկնութիւն

կայն բարբառս այս Աստուծոյ Հաւր ձայն ասի, զի Քրիստոս առ  
Հայր աղաւթեաց եւ նա պատասխանեաց:

Բան. «Եկն բարբառ յերկնից» (Յովի. ԺԲ 28):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Նախ՝ ի Սուրբ Երրորդութենէն, որպէս ցուցաւ:  
Երկրորդ. յերկնից, այսինքն՝ յԱստուծոյ Հաւրէ: Երրորդ. յերկնից,  
այսինքն՝ յաւդոյս, որ ձեւացաւ: Իսկ բարբառն է բան յաւդաւոր  
կամ ձայն նշանական:

Բան. «Եւ<sup>1</sup> փառաւոր արարի, եւ դարձեալ փառաւոր արարից» (Յովի.  
ԺԲ 28):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Այս բան է, զոր ասէ Պաւղոս յԵրայեցիս.  
«Քրիստոս ոչ եղ չուք անձին իւրոյ» (տես Եբր. Ե 5), այսինքն՝ ոչ  
փառաւորեաց զինքն լինել քահանայապետ, այլ որ խաւսեցաւն  
առ նա եւ փառաւոր արար սքանչելեաւքն եւ վկայութեամբն, որ  
նախքան զչարչարանսն Քրիստոսի:

Եւ չորս եղեն փառաւորութիւնք նախքան զիսաշն. առաջին՝ ի  
ծնունդն, երկրորդ՝ ի մկրտութիւն, երրորդ՝ ի Թարաւր<sup>2</sup> լերինն,  
չորրորդ՝ սքանչելագործութեամբն:

Նոյնպէս եւ չորս փառաւորութիւնք<sup>3</sup> յետոյ. նախ՝ ի վերայ  
Խաչին, երկրորդ՝ Յարութեամբն, երրորդ՝ Համբարձմամբն, չոր-  
րորդ՝ փառաւոր արար զնա ի խորհրդական մարմինս իւր, այ-  
սինքն՝ ի դարձն հեթանոսաց:

**Առընթեր սմին ճառի զանազան կարծիք ժողովրդեանն.**

Բան. «Ժողովուրդն, որ կայր եւ լսէր, ասէին՝ Որոտումն լինի<sup>4</sup>» (Յովի.  
ԺԲ 29):

**ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ.** Մեկնիչդ ասէ, թէ խաւարեալ մտաւք կամէին  
փոփոխել զբարբառն. ոմանք որոտ ասէին, ոմանք՝ հրեշտակ խաւ-  
սեցաւ, ի հաճել զմիտս ժողովրդեանն, զի մի իմասցին, թէ Հայր  
խաւսեցաւ<sup>clxxxviii</sup>: Իսկ այլ վարդապետք մեկնեն, թէ որք որոտումն  
ասեն, նոքա<sup>5</sup> թանձրամիտք էին, միայն զհնչումն բարբառոյ  
լսէին եւ ոչ զնշանակութիւն, վասն այն համարէին որոտումն լի-  
նել, այսինքն՝ աննշանական հնչումն, իսկ ոմանք նրբատես գոլով  
իմացան նշանական ձայն գոլ:

Բան. «Կէսքն ասէին. “Յրեշտակ խաւսեցաւ ընդ նմա”» (Յովի. ԺԲ 29):

<sup>1</sup> B C չիք

<sup>2</sup> B Թափօր

<sup>3</sup> B C փառաւորութիւն

<sup>4</sup> A չիք

<sup>5</sup> A սոք

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** *Սոքա գՔրիստոս սոսկ մարդ համարէին, վասն այն՝ իրեշտակ խաւսեցաւ ընդ նմա, որպէս ի Սուրբ Գիրս երթեմն հրեշտակ խաւսեցաւ ընդ մարգարէսն:*

**Այժմ զկնի մեկնէ զբարբառս զայս.**

Բան. «Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ<sup>1</sup>» (Յովի. ԺԲ 30):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** *Եւ այս մասն յերիս բաժանի. նախ՝ դնի առընթեր լուծումն ի Քրիստոսէ: Երկրորդ. դնի ներհակութիւն հրէիցն, անդ. «Պատասխանի ետ նմա ժողովուրդն» (Յովի. ԺԲ 34): Երրորդ. Քրիստոսի պատասխանին, անդ. «Ասէ ցնոսա Յիսուս» (Յովի. ԺԲ 35): Յառաջին մասն ցուցանէ Քրիստոս, թէ բարբառս այս ոչ էր աննշանակ հնչումն եւ ոչ որոտումն, որպէս ոմանց թուէր, այլ էր աստուածային ձայն առ ի ծանուցանել ժողովրդեանն, թէ ինքն Քրիստոս է ճշմարիտ Որդի Աստուծոյ, վասն այն վկայէ նմա յերկնից:*

Բան. «Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. “Ոչ վասն իմ ինչ<sup>2</sup> եկն բարբառս, այլ վասն ձեր”» (Յովի. ԺԲ 30):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** *Բարբառս լինի առ յուսումն<sup>3</sup> ումեմն, իսկ Յիսուս ոչ էր կարաւտ ուսման վասն երեք<sup>4</sup> պատճառի. նախ՝ ըստ բոլորին. «Որպէս գիտէ զիս Յայր, գիտեմ եւ ես զՅայր» (Յովի. Ժ 15), «Ես եւ Յայր իմ մի ենք» (Յովի. Ժ 30), որպէս ցուցանէ մեկնիչդ: Երկրորդ. ըստ մասին ոչ էր կարաւտ ուսման, զի Յիսուս ըստ Աստուածութեան ոչ էր կարաւտ ուսանիլ յայլմէ եւ ոչ ըստ մարդկութեան, զի ի սկզբանէ յղացմանն<sup>5</sup> իւրոյ միացեալ ի Բանն զամենայն<sup>6</sup> կատարելապէս ճանաչէր՝ զանցեալն եւ զներկայս եւ զապագայիցն իրս: Երրորդ. Քրիստոս ստոյգ գիտէր, զի փառաւորելոց էր ի Հաւրէ ի չարչարանս իւր եւ զկնի չարչարանացն, վասն այն բարբառս այս ոչ եղեւ յուսումն<sup>7</sup> Քրիստոսի:*

**Այլ եղեւ յուսուցանել զմերձակայ ժողովուրդսն երեք կերպիւ. նախ՝ թէ որպէս եւ որքա՞ն մեծ եւ փառաւոր էր Քրիստոս առաջի Աստուծոյ Հաւր<sup>8</sup>: Երկրորդ. առ ի յածել զնոսա ի հաւատսն Քրիստոսի: Երրորդ. ի յանդիմանութիւն նոցա, որք հակառակ կարծէին Հաւր, որպէս ասէ մեկնիչդ:**

<sup>1</sup> A չիք եւ ասէ

<sup>2</sup> A չիք

<sup>3</sup> A B C ի յուսումն

<sup>4</sup> B չորս

<sup>5</sup> A յղացման

<sup>6</sup> B զամենայն

<sup>7</sup> A B C ի յուսումն

<sup>8</sup> B Յօր Աստուծոյ

### Վասն Դատաստանի

Բան. «Այժմիկ դատաստան է աշխարհիս այսորիկ» (Յովի. ԺԲ 30):

**ՄԵԼԱՆՈՒՐԻ ԱՍՏ ՄԵԼԱՆԻՀԴ դատաստան աշխարհի գմարդկան եւ զսատանայի ասէ:**

Եւ վեց իրս պիտոյ է դատաստանին, զոր աստ յիշէ մելանիչդ. նախ՝ ժամանակն ասէ, նախ յետ վկայութեան Հաւը եւ ապա ժամանակ խաչին: Երկրորդ. տեղիքն դատաստանին, որ է խաչն քառաթեւ որպէս ի վերայ աթոռոյ բարձրացեալ: Երրորդ. դատաւորն, որ է ինքն Քրիստոս: Չորրորդ. դատախազքն, որ էր մարդկան ազգ եւ սատանայ: Հինգերորդ. վկայն, որ էր Հայր: Վեցերորդ. իրաւունք դատաստանին, զայդ ցուցանէ մելանիչդ:

Եւ զի Քրիստոս մարդկան արար փրկութիւն, յայտ է ի չորից. նախ՝ զի զբնութիւն մարդկան էառ: Երկրորդ. զկիրսն<sup>1</sup> կրելով, բաց ի մեղաց: Երրորդ. ի յատեան եմուտ վասն մեր, որպէս վոքիլ: Չորրորդ. զի զպարտա մեր ինքն հատոյց, որպէս մարդարէն ասէ. «Տէր հատուսցէ ընդ իմ» (Սաղմ. ՑԼԵ 8), եւ հատուցմունքդ, զոր կարգէ յերկար, է ինչ, զոր գործեաց Աղամ, եւ է, զոր դատապարտեաց Աստուած:

Դարձեալ՝ է կիրք հոգեւոր եւ է մարմնաւոր, այլեւ մասն եւ բոլոր, զոր ի մարմինն իւր կրելով Քրիստոս ազատեաց զմեզ, սոյնպէս<sup>2</sup> ասէ մելանիչդ, իսկ այլ վարդապետք ասեն. «Այժմիկ դատաստան է աշխարհիս», այսինքն՝ մարդկան ազգի, զի չարչարանաւքն Քրիստոսի բաժանեցան հաւատացեալքն ի խստասիրտանհաւատից:

Եւ այս բաժանումս կոչի դատաստան որոշման, զի երկուս է դատաստան Աստուծոյ. նախ՝ դատաստան որոշման, որ եղեւ առ խաչիւն Քրիստոսի: Երկրորդ. դատաստան հատուցման, որ լինելոց է ի վախճանի, որ ի միւս անգամ գալուստն պատժէ զչարս եւ վարձատրէ<sup>3</sup> զսուրբս: Այս է ասելն. «Այժմիկ դատաստան է աշխարհիս այսորիկ», այսինքն՝ մերձեալ է ժամանակ որոշման հաւատացելոց ի յանհաւատից: Եւ գիտելի է, զի այլ ոմանք մեկնեն զբանս զայս ի վերջին դատաստանն, որ է հատուցումն չարեաց եւ բարեաց, եւ վասն որոշման չարեաց եւ բարեաց: Եւ սոյնպէս<sup>4</sup> զանա-

<sup>1</sup> Ա զի զկիրսն

<sup>2</sup> Բ այսպէս

<sup>3</sup> Ա վարձաւորէ

<sup>4</sup> Բ այսպէս

զանին սոքա երեքեանն<sup>1</sup>, զի որոշումն հաւատացելոց եւ անհաւատից է ի կեանս յայս, եւ որոշումն չարեաց եւ բարեաց՝ յետ մահու, եւ հատուցումն չարեաց եւ բարեաց<sup>2</sup> է յետ յարութեան: Եւ սոյնպէս ասեն, թէ վերջին դատաստանն եւ որոշումն չարեաց եւ բարեաց սկսաւ ի ժամանակէ չարչարանացն Քրիստոսի, զի որպէս Քրիստոս մահուամբ արժանաւորեցաւ ունել զիշխանութիւն դատաստանին առ ի Հաւրէ, սոյնպէս<sup>3</sup> մահուամբ իւրով արժանաւորեաց զընտրեալսն անջատել ի չարեացն եւ եհան զընտրեալսն յերկինս եւ զչարսն յայլ<sup>4</sup> տեղիս, զի թէպէտ դատաստանն վերջին ոչ սկսաւ ի ժամանակէ չարչարանացն Քրիստոսի ըստ ներգործութեան, այլ ըստ պատճառին սկսաւ, զի Քրիստոս վասն չարչարանացն արժանաւորեցաւ դատաւոր լինել: Եւ դարձեալ՝ յայնմ հետէ սկսաւ բաժանել զչարս եւ զբարիս մասնաւոր ազատութեամբ ի սատանայէ եւ ի չար մարդկանէ, վասն այն ասաց Քրիստոս. «Այժմիկ դատաստան է աշխարհիս այսորիկ»: Դարձեալ՝ սոյնպէս մեկնեն. «Այժմիկ<sup>5</sup> դատաստան է աշխարհիս այսորիկ<sup>6</sup>», այսինքն<sup>7</sup> վասն աշխարհիս այսորիկ, ըստ այնմ. «Զի աստուածային հրամանաւն ազատեաց Քրիստոս զաշխարհս ի սատանայի իշխանութենէն, զոր ունէր առ ի փորձել զմարդիկ» (հնմտ. Ա Յովհ. Գ 8), որպէս ամէ.

Բան. «Այժմիկ<sup>8</sup> իշխան աշխարհիս այսորիկ<sup>9</sup> ընկեսցի արտաքս» (տե՛ս Յովհ. ԺԲ 31):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ.** Սատանայ այսմ<sup>10</sup> աշխարհիս իշխան կոչի, ոչ թէ տէր է գոյացութեան աշխարհիս, այլ մարդկան, որ ըստ աշխարհի վարին եւ ծառայեն մեղաց, եւ զյոյս եւ զսէր իւրեանց միայն յաշխարհի դնեն:

Եւ չորից իրաց իշխան էր. Նախ՝ մահու, երկրորդ՝ տանջանաց հոգւոց, եւ այս երկուցս բռնութեամբ տիրէր, զի հրամանաւն Աստուծոյ էր: Երրորդ՝ իշխան էր մեղաց: Չորրորդ՝ զանազան կռապաշտութեանց, եւ այս երկուցս փորձելով իշխան էր, զի ինքեան կամաւքն էր:

<sup>1</sup> Երեքեան

<sup>2</sup> Ա չիք չարեաց եւ բարեաց

<sup>3</sup> Բ այսպէս

<sup>4</sup> Բ Ը ի յայլ

<sup>5</sup> Ա այժմ

<sup>6</sup> Ա չիք

<sup>7</sup> Ը չիք

<sup>8</sup> Ա այժմ

<sup>9</sup> Ա չիք

<sup>10</sup> Ը յայսմ

Եւ երեք կերպիւ արտաքս անկաւ յիշխանութենէն չարչարանաւքն Քրիստոսի. նախ՝ բացեալ եղեւ դուռն երկնից, եւ սատանայ ոչ կարէ արգելուկ զհոգիս ընտրելոց, որպէս յառաջագոյն առնէր, զի յորմէ հետէ ասաց Քրիստոս. «Դայր, ի ձեռս քո աւանդեն զիոգի իմ» (Ղուկ. ԻԳ 46), այսինքն՝ զհոգի իմ հաւատացելոցն եւ իմ ազգակցացն, սատանայ խափանեցաւ ի տանջանս տանելոյ զհոգիսն: Երկրորդ. զի Աստուած յառաջագոյն թոյլ ետ սատանայի փորձել զմարդիկ առ ի կրթութիւն ընտրելոցն, իսկ չարչարանաւքն Քրիստոսի յոյժ նուազեցաւ իշխանութիւն նորա եւ կապեցաւ սատանայ զհազար ամ, զի ոչ կարէ փորձել զմարդիկ որպէս յառաջն: Երրորդ. ի վախճանի աշխարհի կատարելապէս արտաքս մերժեսցի ի դժոխս եւ յայնժամ ընտրեալքն ամենեւին ազատին ի մեղաց, եւ երկոքին սոքա, այսինքն՝ տանջանքն սատանայի եւ ազատիլ ընտրելոց մասնաւորապէս սկիզբն առին ի մահն Քրիստոսի, որպէս ասէ բանս. «Այժմիկ իշխան աշխարհիս ընկեսցի արտաքս<sup>1</sup>», այսինքն՝ այժմ եղիցի չարչարանքս իմ, որ պատճառ է արտաքսելոյ զսատանայ ի դժոխս եւ ազատման ընտրելոցն ի վախճանի աշխարհիս, վասն այն ասէ զկնի.

Բան. «Եւ յորժամ<sup>2</sup> ես բարձրացայց յերկրէ<sup>3</sup>, զամենեսին ձգեցից առ իս<sup>4</sup>» (Յովի. ԺԲ 32):

ՄԵԼՈՆԻՔԻՆ<sup>5</sup>. Չորս կերպիւ է բարձրանալն ի խաչին. նախ՝ ըստ ճառին խաչն բարձրացեալ էր յաւդս ի բարձր տեղւոջ, թէպէտ պատուանդանն յերկրի էր: Երկրորդ. բարձրացաւ ի խաչն առ ի հալածել զիշխան աւգոյս: Երրորդ. բարձրանալ ասի ի խաչն<sup>6</sup>, որպէս սանդղաւք<sup>7</sup> յերկինս ելանել: Չորրորդ. բարձրանալ ասի նշանաւքն ի վերայ խաչին եւ թագաւորել ի վերայ հեթանոսաց, որպէս ասէ Պաւլոս ի<sup>8</sup> Փիլիպպեցիսն. «Հնազանդ եղեւ Հաւը մահու չափ եւ մահու խաչի, վասն որոյ<sup>9</sup> եւ Աստուած զնա առաւել բարձրացոյց, ~ եւ այլն մինչեւ, ~ ամենայն լեզու խոստովան լիցի<sup>10</sup>» (ՏԵՒ Փիլիպ. Բ 11): Եւ խաչիւն Քրիստոս զամենեսեան ձգեաց առ ինքն, այսինքն՝ հաւատովն, եւ դարձեալ՝ սիրովն, զի

<sup>1</sup> A չեք

<sup>2</sup> B C չեք

<sup>3</sup> A չեք

<sup>4</sup> A չեք առ իս

<sup>5</sup> A չեք

<sup>6</sup> A չեք ի խաչն

<sup>7</sup> A սանդուկը

<sup>8</sup> B C չեք

<sup>9</sup> A վասն այն

<sup>10</sup> A չեք

սէրն, զոր եցոյց Քրիստոս խաչիւն մարդկային ազգի, յոյժ ձգէ զմարդիկ առ Քրիստոս:

Հարց. Վասն Է՞ր ասէ զամենեսեան, զի բազումք են անհաւատք յաշխարհի:

Պատասխան. Նախ՝ զի յիւր կողմանէն վասն ամենեցուն խաչեցաւ, այլ նոքա անձնիշխան կամաւք ոչ հաւատացին: Երկրորդ ցուցանէ այնու զբոլոր բազմութիւն ընտրելոցն եւ իբրեւ<sup>1</sup> յոչ ինչ գրելով<sup>2</sup> զչարս:

Այժմ զկնի աւետարանիչս մեկնէ զբանն Քրիստոսի.

Բան. «Զայս ասէր, նշանակեալ, թէ որով մահու մեռանելոց իցէ» (Յովհ. ԺԲ 33):

Մեկնութիւն. Զորս կերպիւ նշանակէ զմահն Քրիստոսի. Նախ՝ ցուցանէ, թէ խաչիւն էր մեռանելոց եւ ոչ այլ ինչ իրաւք, որպէս մարդարէքն մեռան: Երկրորդ. ցուցանէր<sup>3</sup>, թէ կամաւ մեռանէր եւ ոչ ակամայ, որպէս ամենայն մարդիկ: Երրորդ. ցուցանէ, թէ արագ յառնելոց էր եւ զհաւատացեալսն<sup>4</sup> առ ինքն ձգէր: Զորրորդ. ցուցանէ, թէ մահն Քրիստոսի կեանք եղեւ հաւատացելոց, որք ձգեցան առ նա, որպէս ասէ մեկնիչդ: Եւ տե՛ս զաղաւթսն Քրիստոսի, զի չորս բան էր, նոյնպէս եւ բարբառն Հաւր չորս էր, որ փառաւոր արար նախքան զիսաչն եւ յետ<sup>5</sup> խաչին, այլեւ չորս էր մեկնութիւն Քրիստոսի, զոր ուսոյց, եւ չորս կերպիւ նշանակէ աւետարանիչս զմահն Քրիստոսի:

Այսքան առ այս:

Յետ այսորիկ ճառէ զհակառակութիւն հրէից.

Բան. «Պատասխանի ետ ննա ժողովուրդն. “Մեք լուաք յաւրինաց, եթէ<sup>6</sup> քրիստոսն յաւիտեան կայ”» (Յովհ. ԺԲ 34):

Մեկնութիւն. Աւրէնք յատկապէս զհինգ<sup>8</sup> գիրքն Մովսիսի կոչէին<sup>9</sup>, այլ հասարակ անուամբ զբոլոր Հին Կտակարանքն աւրէնք կոչէին, որպէս աստ, զի մարդարէքն ցուցանեն զյաւիտենականութիւն Քրիստոսի, զի Եսայի յիններորդ գլուխն գրեալ է. «Եւ անուն կոչեսցի նմա սքանչելի խորհրդակից, Աստուած, հզաւր, Հայր հանդերձելոյ աշխարհին, եւ խաղաղութեան նորա չիք սահ-

<sup>1</sup> Ե իբր

<sup>2</sup> Ե կուելով

<sup>3</sup> Ե ցուցանէ

<sup>4</sup> Ե երագ յառներ եւ զհաւատացեալս, Ը զհաւատացեալս

<sup>5</sup> Ա Ե յետոյ

<sup>6</sup> Ա թէ

<sup>7</sup> Ա չիք յաւիտեան կայ

<sup>8</sup> Ա հինգ

<sup>9</sup> Ա կոչին

**ման»** (տես Եսայի թ 6-7): **Եւ Դանիէլ յեւթն.** «Իշխանութիւն նորա իշխանութիւն յաւիտենական» (Դան. Դ 31), որ ոչ անցանէ, եւ թագաւորութիւն նորա ոչ եղծանիցի: **Եւ դարձեալ Միքիայ յեւթներորդ.** «Ի քէն ելցէ ինձ [լինել] իշխան իսրայէլի եւ ելք նորա ի սկզբանէ աւուրցն յաւիտենից» (տես Սիրիա Ե 2): **Եւ սոյնպիսի մնացականութիւն ներհակ երեւի մահուանն Քրիստոսի<sup>1</sup>,** վասն այն ասեն.

**Բան.** «Եւ դու զիա՞րդ ասես, թէ պարտ է բարձրանալ Որդուոյ մարդոյ<sup>2</sup>» (Յովի. ԺԲ 34):

**ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ.** **Այսինքն՝ մեռանիլ ի խաչ:** **Եւ տե՛ս զնենգութիւն,** զի այսու կամէին ցուցանել, թէ Քրիստոս ոչ իցէ Աստուած, իբր թէ դու ասես վասն քո մեռանել, ուրեմն ոչ ես Քրիստոս, զի Քրիստոսն յաւիտեան կայ<sup>3</sup>, իսկ թէ վասն այլոյ ումեմն խաւսիս, ասս մեզ:

**Բան.** «Ո՞վ է այն որդին մարդոյ» (Յովի. ԺԲ 34):

**ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ.** **Թէպէտ Քրիստոս աստ ոչ կոչեաց զինքն որդի մարդոյ, սակայն ի յայլ տեղիս բազում լսել<sup>4</sup> էին, որպէս յայտ է ի մեկնչէդ:**

**Հարց.** **Ուստի՝ իմացան հրէայքն, թէ բարձրանալն զիսաչին նշանակ է:**

**Պատասխան.** **Ցերից. նախ՝ յայնմանէ, որ ասաց.** «Որպէս բարձրացոյց Սովուս զաւծն յանապատին, նոյնպէս բարձրանալ» (տես Յովի. Գ 14) **Եւ այլն:** **Երկրորդ.** ասէ **Ոսկեբերանն.** «Եթէ այսու յայտ է, զի հրէայքն բազում բանս կարէին իմանալ, զոր Քրիստոս առակաւ խաւսէր, զի բարձրանալովն իմացան զմահն»: **Երրորդ.** ասեն ումանք, թէ յայնժամ ի մէջ հրէիցն առակաւ ի խաչ հանելն բարձրանալ ասիւր, եւ դեռեւս սոյնպէս խաւսին մարդիկ, զի յորժամ նզովեն զոք, ասեն՝ օշ թէ բարձրանայիր, այսինքն՝ կախեալ լինէիր:

**Զկնի ճառէ զպատասխանին Քրիստոսի, զի թէպէտ ասեն սոքա,** թէ Քրիստոսն յաւիտեան կայ<sup>5</sup>, սակայն ոչ կատարեալ ճանաչեն զՔրիստոս:

**Բան.** «Ասէ ցնոսա. “Փոքր մի ժամանակ լոյսն ընդ ձեզ է”» (տես Յովի. ԺԲ 35):

<sup>1</sup> B C մահուան

<sup>2</sup> A չիք Որդուոյ Մարդոյ

<sup>3</sup> B կեայ

<sup>4</sup> B լսեալ

<sup>5</sup> B կեայ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ. Քանզի սոքա ոչ իմանային, թէ Քրիստոսի մահն եւ չարչարանքն զոյգ կարէ գոլ ընդ յաւիտենականի Աստուածութեան, սակայն Սուրբ Գիրք զերկուսն դնեն, այսինքն՝ զմահն Քրիստոսի եւ զյաւիտենականութիւն նորա: Վասն յաւիտենականութեան ցուցաք, իսկ վասն չարչարանացն գրէ Եսայի յիսուներորդ գլուխն. «Իբրեւ զոչխար ի սպանդ վարեցաւ եւ իբրեւ զորոջ առաջի կտրչի»<sup>1</sup> (Եսայի ԾԳ 7): Եւ վարդապետքն հրէից զյասուներորդ գլուխդ բոլորովին իմանին վասն Քրիստոսի: Եւ Դաւիթ. «Ծակեցին զձեռս եւ զոտս» (Սաղմ. ԻԱ 18) եւ զլեղին գրէ: Եւ Դանիէլ յիններորդ գրեալ է. «Եւ յետ վաժուուն երկու շաբաթուցն սպանցի աւծեալն» (տես Դան. Թ 26), եւ սոքա իմանային զյաւիտենականութիւն Քրիստոսի եւ ոչ զչարչարանան, վասն այն ասէ Քրիստոս. «Սակաւ մի ժամանակ լոյս<sup>2</sup> ընդ ձեզ է» (տես Յովի. ԺԲ 35), նոյնպէս եւ մեկնիչդ վասն չարչարանացն եւ վասն անապական թաղմանն ասէ, եւ զի սոքա անկատար ունէին զճանաչումն, վասն այն Քրիստոս խրատէ զնոսա, զի փութան եւ ստանան կատարեալ ճանաչումն ի Քրիստոս՝ ասելով.

Բան. «Գնացէք» (Յովի. ԺԲ 35):

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ<sup>3</sup>. Այսինքն՝ յառաջեցէք աճմամբ աւր ըստ աւրէ ի հաւատս եւ ի ճանաչումն, զոր դիւրագոյն կարէք այժմ ստանալ, զի առ ձեզ ունիք զլոյսն:

Եւ լոյս կոչի Քրիստոս. նախ՝ զի բնութեամբ լոյս է եւ լուսաւորիչ աշխարհի: Երկրորդ. փարատէ զխաւար տղիտութեան եւ անհաւատութեան եւ մեղաց: Երրորդ. զի որքան մարմնով յերկրի էր, տիւ էր շնորհաց<sup>4</sup>: Չորրորդ. զի հաւատացելոցն լոյս է եւ անհաւատիցն՝ խաւար: Հինգերորդ. որպէս լոյսն յառաջ է քան զարեգակն, եւ Բանն ի սկզբանէ էր եւ յետոյ եղեւ մարմին: Վեցերորդ. որպէս լոյսն անբաժանելի է յարեգակէ եւ Բանն անբաժանելի<sup>5</sup> ի մարմնոյն: Եւթներորդ. որպէս լոյսն եւ անաւթն մի արեգակ է, սոյնպէս Բանն եւ մարմինն, մի Քրիստոս: Ութերորդ. որպէս արեգակն ծածկի ի մէնջ, այլ ոչ ապականի եւ վերստին ծագէ, սոյնպէս Քրիստոս անապական թաղմամբն ծածկեցաւ յերկրի եւ յարութեամբն լուսաւորեաց զմեզ: Իններորդ. որպէս յարեւու կրկին լոյսն ծագէ, սոյնպէս ի Քրիստոսէ վարդապետութիւն եւ շնորհք: Տասներորդ. որ գնայ ի լոյսն ոչ մոլորի, սոյն-

<sup>1</sup> Ես. ԾԳ 7: Զեռագրում սխալ է նշված այս մեջբերման տեղը:

<sup>2</sup> A C լոյսն

<sup>3</sup> B չիք

<sup>4</sup> A շնորհաց եւ յետոյ եղեւ գիշեր

<sup>5</sup> A չիք է

պէս որ գնայ Հաւատովն Քրիստոսի առանց մոլորելոյ ի փրկութիւն հասանէ, որպէս ասէ<sup>1</sup>.

Բան. «Գնացէք ի լոյսն, զի նի խաւար ձեզ հասցէ» (Յով. Ժովի. ԺԲ 35):

**ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ.** Որպէս ստուերն Հասուցանէ ի խաւար գիշերոյն, սոյնպէս խաւար տգիտութեան եւ անհաւատութեան եւ մեղաց Հասուցանէ ի խաւարն անլուծանելի, սոյնպէս<sup>2</sup> եւ լոյս Հաւատոյ եւ գիտութեան եւ արդարութեան Հասուցանէ ի լոյսն մշտնջենաւոր:

Բան. «Զի որ գնայ ի խաւարի, ոչ գիտէ յո՞ երթայ» (Յովի. ԺԲ 35):

**ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ.** Զի մոլորեալն երբեմն Համարի, թէ ընդ ուղիղն երթայ, թէպէտ եւ ի կորուստ երթայ, վասն այն յաւժարեցուցանէ Քրիստոս ի լոյս Հաւատոյն եւ ի ճշմարիտ ճանաչումն: Դարձեալ՝ որպէս ասէ մեկնիչդ, որ գնայ ընդ զգալի խաւար, զգնալն ոչ դադարէ, սակայն ոչ գիտէ յո՞ երթայ, զի ոչ ունի զլոյսն առաջնորդ:

Եւ այս չորս իրաց ունի աւրինակ. նախ՝ որպէս այլազգիք գործեն զբարիս, յորժամ զհաւատն Քրիստոսի ոչ ունին, ի կատարումն ոչ հասանեն: Երկրորդ. որ զմկրտութիւն ոչ ունի, զայլ խորհուրդսն ոչ կատարէ: Երրորդ. որ<sup>3</sup> զմեղս ոչ խոստովանի, զայլ բարիսն ոչ կարէ կատարել: Չորրորդ. որ զգիտութիւն տեսականին ոչ ունի, զգործնականն ոչ կարէ կատարել, զի ոչ գիտէ զպատճառ գործոյն:

Բան. «Յաւատացէք ի լոյսն, զի որդիք լուսոյ Եղիջիք<sup>4</sup>» (Յովի. ԺԲ 36):

**ՄԵԼՈՆՈՒԹԻՒՆ.** Յաւատացէք ի լոյսն, այսինքն՝ յիս Հաւատացէք եւ յայնժամ կարէք լինել որդիք լուսոյ ըստ որդեգրութեան աւագանին ծննդեան:

Հարց. Վասն է՞ր մկրտութեամբն որդիք լուսոյ ծնանիմք:

Պատասխան. Որպէս յայտ է ի սահմանէ նորին, զի մկրտութիւն է կնիք հոգեւոր, լուսաւոր եւ աստուածայնագոյն ծնունդ:

Եւ այս վասն չորից. նախ՝ զի ի հոգւոյն ծնանիմք, Երկրորդ՝ հաւատով, Երրորդ՝ արդարութեամբ, չորրորդ՝ ի հանդերձեալ կեանս: Եւ զի<sup>5</sup> սոքա ոչ ընկալան զբանն Քրիստոսի, այլ կամեցան հակառակիլ, վասն որոյ ասէ.

Բան. «Զայս խաւսեցաւ Յիսուս եւ չոգաւ թաքեաւ ի նոցանէ» (Յովի. ԺԲ 36):

<sup>1</sup> B C չիք որպէս ասէ

<sup>2</sup> B այսպէս

<sup>3</sup> B C չիք

<sup>4</sup> A չիք, C Եղիջիք

<sup>5</sup> B չիք

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Հստ Ոսկերերանին չոգաւ թաքեաւ իբրեւ յանհաւատից եւ ի չարակամաց, սոյնպէս<sup>1</sup> յութներորդ եւ ի տասներորդ գլուխն արար, զի թէպէտ ոչ ասի, թէ կամէին զնա սպանանել, որպէս անդ գրի, սակայն աստ զկամս եւ զխորհուրդս ի սոյն ունէին:

Եւ վասն այն թաքեաւ. նախ՝ զի չէր հասեալ ժամ չարչարանաց նորա: Երկրորդ. զի ոչ ի հարկէ ի ձեռաց նոցա ըմբռնեսցի, այլ յետոյ կամաւ գայցէ, եւ յորժամ կամեսցի, ապա չարչարեսցի:

**Այժմ զկնի ճառի հրէից անհաւատութիւն եւ խստութիւն:**

Բան. «Եւ այնչափ նշանս արարեալ էր առաջի նոցա» (Յովի. ԺԲ 37):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Եւ աստ նախ ցուցանի խստութիւն սոցա: Երկրորդ. յանդիմանի, անդ. «Եւ Յիսուս աղաղակէր եւ ասէր» (Յովի. ԺԲ 44): Եւ առաջին մասն յերկուս բաժանի, զի նախ ցուցանի անհաւատ հրէիցն խստութիւն: Երկրորդ. հաւատացեալ հրէիցն անկատարութիւն, անդ. «Բայց սակայն եւ յիշխանաց անտի» (Յովի. ԺԲ 42):

**Վասն առաջնոյն ասէ.**

Բան. «Եւ այնչափ նշանս արարեալ էր եւ նոցա ոչ հաւատային ի նա<sup>2</sup>» (տե՛ս Յովի. ԺԲ 37):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Բազում նշանս արար Յիսուս, եւ սքանչելիս, որէ բանիւ եւ գործով՝ ի հիւանդս, ի կաղս, ի կոյրս, ի մեռեալս, եւ վարդապետութիւն ծածուկ եւ անյայտ բանից եւ ապագայիցն, որովք յայտնի լինէր Աստուածութիւն, սակայն հրէայքն ոչ ամենքն հաւատացին ի Քրիստոս, եւ յամառեալ, այսինքն՝ յիմարեալ կամ ամրացեալ, խստացեալ լսի:

**Այժմ զկնի աւետարանիչս ցուցանէ, թէ անհաւատութիւն սոցա ոչ եղեւ առանց դատաստանին նախագիտութեան<sup>3</sup> եւ արդարութեան Աստուծոյ, զի այս յառաջագոյն մարգարէացեալ էր եւ այժմ զլրումն էառ, որպէս եւ ասէ.**

Բան. «Զի լցոցի բանն Եսայեայ մարգարէի» (Յովի. ԺԲ 38):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Այս ոչ<sup>4</sup> ցուցանէ զպատճառն, այլ զհետեւումն, այսինքն՝ զի մարգարէութիւն ոչ եղեւ պատճառ անհաւատութեան սոցա, այլ անհաւատութիւն սոցա հետեւեցաւ լրումն մարգարէութեան, որպէս ասէ.

Բան. «Տէր, ո՞ հաւատաց ի լուր մեր<sup>5</sup>, եւ բազուկ Տեառն ո՞ւն յայտնեցաւ<sup>1</sup>» (Յովի. ԺԲ 38):

<sup>1</sup> Ե այսպէս

<sup>2</sup> Ա չիք ի նա

<sup>3</sup> Ե նախս գիտութեան

<sup>4</sup> Ե Յ զի ոչ

<sup>5</sup> Ա չիք

ՄԵԼԱՆՈՒԹԻՒՆ. Իբրու ասել՝ յոյժ սակաւ հաւատացին, քանզի թէպէտ հաւատացեալք ի Հրէիցն բազումք էին, սակայն համեմատելով առ անհաւատսն յոյժ սակաւք էին:

### Վասն տեսութեան մարգարէից<sup>2</sup>

Եւ բարւոք ասէ ի լուր մեր, զի մարգարէքն ոչ ծանեան զխորհութեամբ<sup>3</sup> իրին, զի տակաւին յապագայս<sup>4</sup> էր իրն այն եւ ոչ կարէին տեսանել ըստ իրին, որպէս եւ է, զի զորինչ տակաւին ոչ է, ոչ է տեսանելի ըստ ինքեան: Եւ դարձեալ ասեն, թէ մարգարէքն ոչ տեսանէին, զոր մարգարէանային, որպէս երանեալքն տեսանեն զապագայսն, որքան Աստուած յայտնեացէ նոցա, զի<sup>5</sup> մարգարէքն յորժամ մարգարէանային, ոչ էին երանեալք, թէպէտ եւ այժմ երանեալք են: Եւ յայտ է, զի մարգարէացեալ իրն ոչ ճանաչէին ըստ իրին, կամ աստուածային տեսութեամբն, այլ միայն աստուածային յայտնութեամբն: Եւ այս յայտնութիւնս ի կողմանէ յայտնողին Աստուծոյ խաւսք կոչի, եւ ի կողմանէ մարգարէին լուր կոչի<sup>6</sup>, զի լուաւ յԱստուծոյ, վասն այն ասէ ի լուր մեր: Դարձեալ գիտելի է, զի բանք մարգարէիցն երբեմն տեսութիւն կոչի կամ տեսիլ, ոչ յատկապէս, այլ ըստ այնմ, զի ամենայն ճանաչումն տեսութիւն կոչի, վասն այն, զի երբեմն երեւումն ինչ պատկերանայր առաջի երեւակայութեան նոցա, եւ երբեմն առաջի մարմնաւոր աչաց: Եւ թէպէտ զպատկերն զայն տեսանէին, սակայն զմարգարէացեալն ոչ տեսանէին, թէպէտ իմանային, զի յատկաբար խաւսէին, այլ ոչ ամենայն իմացումն տեսութիւն ասի:

Այսքան վասն մարգարէիցն:

Իսկ աստ՝ բազուկ Տեառն. նախ՝ ասէ մեկնիչդ բազուկ զսքանչելիսն եւ զմեծամեծ նշանսն: Դարձեալ՝ բազուկ Տեառն կոչի ըստ բնութեան Որդին Աստուծոյ, որ էր ներգործական զաւրութիւն Աստուծոյ Հաւր, զի Հայր զամենայն առնէ բանիւն, եւ եթէ ի մարդիկ այնպէս լինէր, զի զոր ինչ կամէին բանիւ, առնէին, յայնժամ բան նոցա կարէր ասիլ բազուկ նոցա: Եւ այս բազուկ<sup>7</sup>

<sup>1</sup> Ա չիք

<sup>2</sup> Բ մարգարէիցն

<sup>3</sup> Ը տեսութեան

<sup>4</sup> Ա յապայն

<sup>5</sup> Ը կրկ

<sup>6</sup> Ա չիք

<sup>7</sup> Ա Ը բազուկս

Տեառն, այսինքն՝ Որդին Աստուծոյ, սակաւուց ի հրէիցն յայտնեցաւ: Դարձեալ՝ առընթեր սմին այլ վկայութիւն ի մէջ բերէ աւետարանիչս:

Բան. «Վասն այնորիկ ոչ կարեին հաւատալ» (Յովի. ԺԲ 39):

Մեկնութիւն<sup>1</sup>. Զոչ կարելն ոչ ասէ ըստ բնութեան, այլ ըստ կամաց անզղութեան, զի ոչ կարելն ոչ կամելն է, եւ նախ յայտէ յաւրինակաց, որպէս ոք ասէ. «Ոչ կարեմ սիրել զայս ոք, այսինքն՝ ոչ կամիմ, զի կամքն խստացեալ է յատելութիւն»: Երկրորդդ. յայտ է ի վկայութեանց<sup>2</sup>, որպէս ասէ Տէր. «Ոչ կարէ աշխարհ զձեզ ատել<sup>3</sup>» (տես Յովի. Է 7), այսինքն՝ ոչ կամի: Եւ զմարդարէութիւն եսայեայ առնու աւետարանիչս եւ զբառն փոքր մի այլայլելով ասէ.

Բան. «Թէ կուրացոյց զաքս նոցա եւ ապշեցոյց զսիրտս<sup>4</sup>» (Յովի. ԺԲ 40) եւ այլն:

Մեկնութիւն. Կուրացոյցն այն է, որ անձնիշխան կամաւք կուրացան եւ յիմարացան<sup>5</sup>, եւ Աստուած եթող զնոսա ի խնամոց իւրոց եւ ոչ ակամայ էած ի հաւատս եւ ի ճշմարտութիւն, զի մի բարձցէ զանձնիշխան կամսն, որպէս ասէ մեկնիչդ:

Եւ այլք ասեն սոյնպէս. Աստուած կուրացոյց գհրէայսն կրկին կերպիւ. առաջին է թոյլ տալով, զի վասն նոցա չարութեան թոյլ ետ նոցա անկանիլ ի մեղաց ի մեղս եւ ի խստութիւն չարեաց եւ ի կուրութիւն մտաց, այլեւ թոյլ տալով սատանայի փորձել զնոսա զանազան մեղաւք: Երկրորդ. ի բաց բառնալով, զի Աստուած վասն չարութեան նոցա ի բաց բառնայ զլոյս իւր եւ զբարերարութիւն իւր՝ ներքին եւ արտաքին, այսինքն՝ զոր ինքեամբ եւ կամ ի ձեռն հրեշտակաց մարդկան պարգեւէ, եւ սոցա պատրաստէր<sup>6</sup> ի պարգեւել, եթէ չարութիւն սոցա ոչ արգելոյր: Եւ սոյնպէս մեկնի ամենայն ուրեք սոյնպիսի<sup>7</sup> բանս, որպէս ասէ Պաւղոս. «Մատնեաց զնոսա Աստուած<sup>8</sup> ի միտս անարդութեան» (Յով. Ա 28) եւ թէ՝ «Խստացոյց Աստուած զսիրտն փարաւոնի» (տես Ելք ԺԴ 4, 17) եւ այլն:

<sup>1</sup> А չիք

<sup>2</sup> А չիք որպէս ոք ասէ... յայտ է ի վկայութեանց

<sup>3</sup> В С սիրել

<sup>4</sup> А չիք եւ ափշեցոյց զսիրտս

<sup>5</sup> А В յիմարեցան

<sup>6</sup> С պատրաստէ

<sup>7</sup> В այսպիսի

<sup>8</sup> А չիք

Եւ գիտելի է, զի ասեն վարդապետք, թէ երեք իրաւուք պարտ է տեսանել զԱստուած, այսինքն՝ իմանալ աստ արժանապէս։ Առաջին է առողջութիւն մտացն աչաց, որ առողջ լինի հաւատով, յուսով<sup>1</sup> եւ սիրով։ Երկրորդ. է հայեցումն ի նա, կամ դարձուցանել զաս առ նա։ Երրորդ. է իմացումն։

Առաջինն է շնորհաց եւ առաքինութեան, երկրորդն՝ դարձելոցն ի մեղաց, երրորդն՝ է միշտ խոկումն սրբոցն առ Աստուած։ Եւ ըստ այսմ կերպի հրէայքն կուրացեալք ոչ տեսանէին աչաւք մտացն եւ ոչ իմանային սրտիւ, զոր ինչ պարտ էր հաւատալ, եւ վասն այն ոչ դարձան ի մեղաց առ Աստուած, եւ վասն այն ոչ առողջացան հոգւով, որ առողջութիւն է շնորհաւուք եւ առաքինութեամբ, իսկ առ ի ցուցանել, թէ ոչ կուրացան վասն պակասութեան լուսոյն, վասն այն զկնի ասէ.

Բան. «Զայս ասաց Եսայի, զի ետես զփառս նորա, եւ խաւսեցաւ վասն նորա» (Յովի. ԺԲ 41):

**ՄԵԼՆՈՒԹԻՒՆ. Զայս Եսայի ասէ ի վեցերորդ գլուխն.** «Յամին յորում մեռաւ Ոզիա արքայ, տեսի զՏէր նստեալ ի վերայ աթոռոյ» (տես Եայի Չ 1), եւ մարմնակերպ երեւմամբն<sup>2</sup> արտաքուստ ցուցանէ, զի Աստուած մարդ լինելոց էր<sup>3</sup>։ Եւ տեսանելով տեսջիք (Եսայի Չ 9, տես Յովի. ԺԲ 40), այն է, որ ներքին եւ արտաքին տեսութիւն է ի մեզ, նոյնպէս եւ լսելիքն կրկին է։ Եւ զայլն<sup>4</sup> տես յԵսայեայ քաղուածին ի [...] համարն (Եսայի Չ 10-13)։ Եւ առաջին ի միտ պահեա՛, զի Տէր եւ աբոր ասելով (Եսայի Չ 1-2)՝ զմի անձնաւորութիւն ցուցանէ եւ ոչ զերեք, որպէս եւ<sup>5</sup> Դանիէլ ետես։ «Աթոռք անկանէին, եւ հին աւուրցն նստաւ, եւ որդի մարդոյ եկն առ նա» (Դան. Է 6-14)։ Երկրորդ. տե՛ս, զի Եսայի մարդարէն ի դէմս Հաւը ասէ, զի յայն ժամ Հայր միայն էր յայտնի, իսկ աւետարանիչս Յոհաննէս ի վերայ Որդւոյ պատմէ, իսկ առաքեալն Պաւղոս ի վերայ Հոգւոյն Սրբոյ ասէ, ի վերջքն Գործոց Առաքելոցն ասէ։ «Բարւոք խաւսեցաւ Հոգին Սուրբ ի ձեռն Եսայեայ մարդարէի զբանս զայս» (տես Գործք ԽԸ 25)։ Երրորդ. տե՛ս, զի մարդարէն բացարձակ ասաց. «Տեսանելով տեսչիք եւ մի՛ իմասչիք» (Եսայի Չ 9) եւ այլն, իսկ աւետարանիչն. «Աստուած, ~ ասէ, ~ կուրացոյց եւ յիմարեցոյց» (հնմտ. Յովի. ԺԲ 40), զթոյլ տալն ասէ, իսկ Պաւղոս.

<sup>1</sup> B C եւ յուսով

<sup>2</sup> B երեւմամբ

<sup>3</sup> A է

<sup>4</sup> A զայն

<sup>5</sup> A չիք

<sup>6</sup> A տեսջիք

«Ինքեանք, ~ ասէ, ~ կափուցին զաչս եւ զականջս» (հմնտ. Գործք ի՛ւ 27) վասն անձնիշխան կամացն ասէ:

### Վասն երեքսրբենին

**Աստ լինի չորս հարց.**  
Առաջին. Վասն է՞ր զերեքսրբեանն ի դէմս միոյ անձինն աւսեմք:

Պատասխան. Վասն չորս պատճառի. նախ՝ զի մարգարէն Եսայի Տէր եւ աթոռ ասելով զմի անձնաւորութիւն եցոյց եւ ոչ՝ երեք, որպէս Դանիէլ: Երկրորդ. զի աւետարանիչն ի վերայ Որդւոյ պատմեաց: Երրորդ. զի Պաւղոս ի դէմս Հոգւոյն Սրբոյ<sup>1</sup> ցուցանէ, որպէս ասացաւ ի վերոյ: Չորրորդ. զուղղափառութիւն հաստատէ, զի միոյ անձին փառքն երիցն է<sup>2</sup> եւ երեք անձինն միոյ վայելէ, վասն զի մի է բնութիւն եւ Աստուածութիւն:

Երկրորդ հարց. Վասն է՞ր մեք ի դէմս Քրիստոսի երգեմք զերեքսրբեանն:

Պատասխան. Վասն վեց պատճառի. նախ՝ զի երեք գոյացութիւն է ի Քրիստոս միաւորեալ ի մի անձն եւ ի մի բնութիւն, այսինքն՝ Բանն եւ Հոգին եւ մարմինն: Երկրորդ. զի աւետարանիչն ասէ ի դէմս Քրիստոսի, ըստ այնմ. «Զայս ասաց Եսայի, զի Ետես զիառս նորա, - որ է խաչն, - եւ Խաւեցաւ վասն նորա» (Յովհ. ԺԲ 41): Երրորդ. մարգարէն Եսայի ուսուցանէ. «Անուն ծնիցելոյն, ~ ասէ, ~ կոչեսցի<sup>3</sup> Աստուած, Հզաւր, Հայր Հանդերձելոյ աշխարհին» (հմնտ. Եսայի Թ 6), որ է յաւիտենական եւ անմահն: Չորրորդ. սոյնպէս մեկնի, զի թէպէտ մարդ եղեւ, Աստուած է, եւ զմեր տկարութիւնս առեալ<sup>4</sup> Հզաւր է, եւ վասն մեր մեռեալ՝ անմահ է: Հինգերորդ. զի զմեր խոնարհութիւնս բարձրացոյց եւ զտկարութիւնս մեր զաւրացոյց եւ ի մահու անմահացոյց, զայն նորա կոչեմք: Վեցերորդ. զի Աստուած Երեւեցաւ ի խաչին, եւ հզաւր՝ ի թաղումն, եւ անմահ՝ ի յարութիւն, վասն այն ի դէմս Քրիստոսի նուագեմք զերեքսրբեանն<sup>օլքական</sup>:

Երրորդ հարց. Վասն է՞ր ասեմք զիսաչեցարն զկնի:

Պատասխան. Վասն չորս պատճառի. նախ՝ զի Աստուածն, Հզաւրն եւ անմահն ի յետին ժամանակս վասն մեր խաչեցաւ: Երկրորդ. զի վերջին եւ կատարումն ամենայն տնաւրէնութեան

<sup>1</sup> Ա չեք

<sup>2</sup> Ա չեք

<sup>3</sup> Ա կոչի

<sup>4</sup> Յ առաւել

խաչն եղեւ: Երրորդ. զի խաչն պարծանք է ըստ Պաւղոսի (Գաղատ. Զ 14) եւ փառք է Քրիստոսի, վասն այն հանապազ յիշելով զողորմութիւն խնդրեմք: Չորրորդ. զի հանապազ մեղանչեմք եւ պատժապարտ լինիմք, եւ Տէրն վասն մեր մարդ եղեւ եւ խաչեցաւ: Հանապազ յիշեմք զիսաչն վասն մեր, զի կշռեսցէ զկիրս չարչարանաց իւրոց առ յանցանս մեր, զի չարչարանք անչարչարելոյն եւ մահն անմահին անհուն մեծութեամք յաղթեսցէ մեղաց եւ պատժոց մերոց եւ տկարացուցեալ<sup>1</sup> ջնջեսցէ եւ սրբեսցէ:

Չորրորդ հարց. Զի՞նչ է<sup>2</sup> սիալանքն, որ այլազգիք զերեքսորբեանն ի դէմս Երրորդութեան ասեն:

Պատասխան. Երեք ինչ. նախ՝ զի զոր ինչ մի անձինն կոչեն, յերկուցն բառնան, զի Աստուած ասեն զՀայր եւ ոչ՝ զՈրդին, եւ ոչ՝ զՀոգին Սուրբ: Եւ հզաւր ասեն զՈրդի եւ ոչ՝ զՀայր կամ զՀոգին Սուրբ: Եւ անմահ ասեն զՀոգին, այլ ոչ զՀայր կամ զՈրդին: Երկրորդ սիալանքն, յորժամ ասեն.<sup>3</sup> «Սուրբ Աստուած, Սուրբ եւ հզաւր, Սուրբ եւ անմահ, Քրիստոս, որ խաչեցար վասն մեր, որ զորմեա՛», զՔրիստոս սոսկ մարդ դաւանեն եւ ոչ՝ Աստուած, եւ ոչ՝ հզաւր, եւ ոչ՝ անմահ: Երրորդ. զի սոյնպէս ասելն Երրորդութիւն լինի չորրորդութիւն: Եւ զայլն վասն երեքսրբենին տեսցե՛ս ի գիրս Հարցմանցն, իններորդ հատորն<sup>4</sup>, քառասունվեց համարն<sup>5</sup>: Իսկ յետ այսորիկ ճառի անկատարութիւն հաւատացեալ հրէիցն ի Քրիստոս, զի կատարումն հաւատոյ է ոչ միայն սրտիւ հաւատալ, այլեւ բերանով խոստովանել, որպէս գրէ Պաւղոս ի Հոռմայեցիս. «Սրտիւ հաւատալ արդարութիւն եւ բերանով խոստովանել զփրկութիւն» (տես Նոոմ. Ժ 10) գործ է, բայց հրէայքս այս թէպէտ սրտիւ հաւատացին, բերանով ոչ իշխէին խոստովանել զՔրիստոս:

Բան. «Բայց սակայն եւ յիշխանացն [անտի] բազումք հաւատացին» (Յովի. ԺԲ 42):

Մեկնութիւն. Իշխանք կոչին քահանայապետքն եւ աւրինացն գէտքն, դպիրք, յորոց բազումք ի Քրիստոս հաւատացին<sup>5</sup>. նախ՝ վասն սքանչելեացն, Երկրորդ՝ վասն լրման գրելոցն ի Քրիստոս Յիսուս, սակայն յայտնապէս ոչ խոստովանէին վասն երկնչելոյ ի փարիսեցւոցն, որք այնպէս հրաման եղեալ էին, զի թէ ոք խոստովանեսցէ զնա Քրիստոս, ի բաց կացցէ ի ժողովրդե-

<sup>1</sup> Ե տկարացուցեալ

<sup>2</sup> Ա չիք

<sup>3</sup> Ա չիք

<sup>4</sup> Ա հատորն եւ

<sup>5</sup> Ա հաւատացին ի Քրիստոս

նէն, եւ մեծ ամաւթ էր ի մէջ հրէիցն բանադրածն, զի բաժանել լինէր յամենեցունց, սակայն այնպիսի բանադրանս կրել վասն ճշմարտութեան արժանաւորէ գմարդն Աստուծոյ, բայց սոքա ոչ կամէին վասն ճշմարտութեան ամաւթ կրել եւ հաճոյանալ Աստուծոյ<sup>1</sup>:

**Եւ պատճառ զհպարտութիւն եւ զփառասիրութիւն ասէ.**

Բան. «Սիրեցին<sup>2</sup> զփառս մարդկան առաւել քան զփառս<sup>3</sup> Աստուծոյ<sup>4</sup>» (Յովի. ԺԲ 43):

**Մեկնութիւն.** Նախ՝ զի մեծ պատիւ, երկրորդ՝ ճշմարիտ, երրորդ՝ երկնաւոր, չորրորդ՝ մնացական, զոր թողին: Եւ փառք մարդոյ նախ զի փոքր է, երկրորդ՝ սնոտի, երրորդ՝ երկրաւոր, չորրորդ՝ անցաւոր, զոր սիրեցին:

**Այժմ յետ յայսորիկ անհաւատութիւն հրէիցն յանդիմանի ի Քրիստոսէ.**

Բան. «Եւ Յիսուս աղաղակէր եւ ասէր» (Յովի. ԺԲ 43):

**Մեկնութիւն.** Աստ նախ Քրիստոս զհրէայսն բերէ ի հաւատս: Երկրորդ. ցուցանէ զպտուղ եւ զպատիւ հաւատոյն<sup>5</sup>, անդ. «Ես լոյս յաշխարհ<sup>6</sup> եկի» (Յովի. ԺԲ 46): Երրորդ. ցուցանէ զպատիժ անհաւատից, անդ. «Եւ<sup>7</sup> եթէ ոք լուիցէ» (Յովի. ԺԲ 47):

**Վասն առաջնոյն ասէ.**

Բան. «Եւ Յիսուս աղաղակէր եւ ասէր. “Որ հաւատայ յիս, ոչ հաւատայ յիս, այլ յայն, որ առաքեացն զիս<sup>8</sup>”» (Յովի. ԺԲ 44):

**Մեկնութիւն<sup>9</sup>.** Աղաղակէր վասն չորս պատճառի. նախ՝ ի ցուցանել զմեծութիւն բանին: Երկրորդ. զի ցուցցէ զմեծ փափագումն ի փրկութիւն մարդկան: Երրորդ. զի առաւել հաստատեսցի բանն ի սիրտս մարդկան: Չորրորդ. ասէ մեկնիչդ՝ որք հակառակ կարծէին Աստուծոյ, ի լսելիս ամենեցուն յանդիմանէ զստութիւն նոցա եւ կարկէ զբերանս<sup>10</sup> նոցա եւ ցուցանէ զինքն միակամ եւ միախորհուրդ ընդ Հաւը, որ զինքեան հաւատացեալս Հաւը ասէ հաւատացեալ:

<sup>1</sup> B C չեք բայց սոքա ոչ ... հաճոյանալ Աստուծոյ

<sup>2</sup> B C Զի սիրեցին

<sup>3</sup> B C զփառս

<sup>4</sup> A չեք

<sup>5</sup> A հաւատոյ

<sup>6</sup> C յաշխարհի

<sup>7</sup> A չեք

<sup>8</sup> A չեք այլ յայն, որ առաքեացն զիս

<sup>9</sup> A չեք

<sup>10</sup> B C զբերանս

Դարձեալ՝ մեծագոյն բան խաւսեցաւ աստ, զի աստանաւը զԱստուածութիւն իւր յայտնապէս ցուցանէ, թէ մի է հաւատալ ի նա եւ ի Հայր, վասն այն ասէ. «Որ հաւատայ յիս», այսինքն՝ որ հաւատայ յիս, զի Որդի է<sup>1</sup> էակից, եւ փառակից եմ Հաւր, ոչ հաւատայ յիս միայն, այլ յառաքիչն իմ:

Եւ ի վերայ բերէ.

Բան. «Որ տեսանէ զիս, տեսանէ զառաքիչն իմ» (տես Յովի. ԺԲ 45):

ՄԵԼԱՆՈՒՐԻՆ. Զորս մտաւք<sup>2</sup>. Նախ՝ զի այս տեսութիւն երկնային է իբրեւ զվարձ հաւատոյ, վասն այն յետ հաւատոյն ասէ. «Որ տեսանէ զիս, զառաքիչն իմ տեսանէ»: Երկրորդ. Հայր եւ Որդի թէպէտ մի են բնութեամբ, սակայն առընչական յատկութեամբ զանազանին եւ սահմանէ առընչիցն, զի յորժամ ճանաչի մինն, ի հարկէ միւսն ճանաչեալ լինի, վասն այն որ տեսանէ զՀայր, տեսանէ զՈրդին, եւ անդրագարձեալ: Երրորդ. «Պատկեր եւ նկարագիր էութեան Հաւր Որդի է» (հնմտ. Բ Կորնթ. Դ 4, Կողոս. Ա 15), ասէ առաքեալ, վասն այն որ տեսանէ զպատկերն, տեսանէ զնախատիպն ստուգապէս: Զորրորդ. յայտ է ի մեկնիչդ, որ ասէ ընդդէմ Արիոսի, զի Հայր ոչ է մեծ քան զՈրդի:

Եւ դարձեալ՝ ասեն վարդապետք, եթէ ճշմարիտ է այս բանս վասն ճանաչմանն Աստուծոյ, զոր աստ ունիմք, զի եթէ<sup>3</sup> ոք ճանաչէ զԱստուած Հայր, ըստ Հայրութեան իմանալով զնա Հայր գոլ, ծանիցէ՝ զի եւ<sup>4</sup> Որդի եւս գոյ, բայց թէ ոչ ճանաչիցէ ըստ Հայրութեան միայն<sup>5</sup>, որպէս իմաստասէրքն ծանեան գոլ Աստուած, յայնժամ ոչ ճանաչեն զՈրդի, որոյ պատճառ է, զի անկատար է ճանաչումն այսմ կենաց, իսկ թէ ոք երանապէս տեսութեամբ ծանիցէ զԱստուածութիւն, ի հարկէ ճանաչիցէ եւ զՀայրութիւն եւ զորդիութիւն եւ միահեծանն անբաժանելի<sup>6</sup>:

Այժմ զկնի ցուցանէ զպտուղ հաւատոյն՝ ասելով.

Բան. «Ես լոյս յաշխարհ<sup>7</sup> եկի» (Յովի. ԺԲ 46):

ՄԵԼԱՆՈՒՐԻՆ. Զորս մտաւք ասէ մեկնիչդ, եւ չորեքին ասի խաւար, այսինքն՝ անգիտութեան եւ անհաւատութեան եւ մեղաց եւ գժոխոց: Եւ զսոյնպիսի չորեքին խաւարս ի բաց բառնայ լու-

<sup>1</sup> B C չեք

<sup>2</sup> B չեք

<sup>3</sup> A թէ

<sup>4</sup> A չեք

<sup>5</sup> A B հայրութեան, այլ ըստ Աստուածութեան միայն

<sup>6</sup> B անբաժանելի է

<sup>7</sup> C յաշխարհի

**սաւորութիւն Քրիստոսի ի յընդունողէ այսմ լուսոյ:** Եւ ի յառաւել ածել ի հաւասս ցուցանէ զպատիժ անհաւատիցն:

Բան. «Եւ եթէ ոք լուիցէ բանից իմոց եւ ոչ պահեսցէ» (Յովհ. ԺԲ 47):

**Մեկնութիւն.** Լսել ասի աստ լուրն մարմնական ականջով եւ ոչ սրտիւ, եւ այնպիսի լսողն ոչ պահէ զբանն Քրիստոսի հաւատով եւ սիրով եւ գործով, եւ զայնպիսին Քրիստոս ոչ դատէ, այսինքն՝ ոչ դատապարտէ ընդ առաջին գալստեանն, որպէս ասէ.

Բան. «Քանզի ոչ եկի, թէ դատեցայց զաշխարհ, այլ զի փրկեցից զաշխարհ<sup>1</sup>» (տես Յովհ. ԺԲ 47):

**Մեկնութիւն.** Զառաջին գալն ասէ, որ եկն ի մարմին եւ յայնժամ ոչ եկն ի դատել կամ ի<sup>2</sup> դատապարտել, այլ ի դատիլ եւ ի մեռանիլ: Դարձեալ՝ Ես ոչ դատիմ զնա, Ոսկեբերանն սոյնպէս մեկնէ, թէ՝ «Ես ոչ եմ պատճառ կորստեան նորա, այլ ինքն, որ զբանն իմ արհամարհէ, նա է պատճառ կորստեան իւրոյ»:

Եւ զկնի առաւել ցուցանէ զայնպիսոյն զվնաս եւ զպակասութիւն՝ ասելով.

Բան. «Որ անարօք զիս եւ ոչ ընդունի զբանս իմ, գոյ, որ դատի զնա<sup>3</sup>» (Յովհ. ԺԲ 48):

**Մեկնութիւն.** Զոչ հաւատալն անարգութիւն կոչէ, զի ոչ հաւատալն Քրիստոսի զնա իբր<sup>4</sup> սուտ ցուցանէ, որ է յոյժ անարգութիւն, եւ այնպիսի անարգողքով<sup>5</sup> ունին զայն, որ դատապարտելոց է զնոսա, ըստ Ոսկեբերանին . «Նա ունի ինքեան զպատճառ դատապարտութեան իւրոյ, զի քարոզութիւն Քրիստոսի ըստ պատհման պատճառ է նորա դատաստանի եւ դատապարտութեան, իսկ մեղքն<sup>6</sup> նորա ըստ ինքեան պատճառ է դատապարտութեան նորա, իսկ քարոզութիւն Քրիստոսի ըստ ինքեան պատճառ է եւ յայտնապէս ցուցիչ այնպիսեացն ոչ ունելոյ պատճառ փրկութեան», վասն այն ասէ.

Բան. «Քանն, զոր [ես] խաւսեցայ, նա դատի զնա յաւուրն յետնում» (Յովհ. ԺԲ 48):

**Մեկնութիւն.** Նախ՝ որպէս ասէ մեկնիչդ, թէ բանն համակամութեան ընդ Հաւը, նա դատի զնոսա, որ ասէին հակառակ դոլ Հաւը: Դարձեալ՝ զինքն ցուցանէ դատաւոր եւ դատապարտող, եւ

<sup>1</sup> Ա չիք

<sup>2</sup> Ա չիք

<sup>3</sup> Ա չիք

<sup>4</sup> Ա իբրու

<sup>5</sup> Ա անարգող

<sup>6</sup> Ա մեղք

զժամանակն ցուցանէ, իսկ այլք ասեն, թէ որպէս ի<sup>1</sup> քաղաքական աւրէնս ասի դատապարտել զգողս եւ զմարդասպանս, ցուցանելով զնա արժանի գոլ դատաստանի եւ դատապարտութեան, նոյնպէս եւ գործքն Քրիստոսի եւ վարդապետութիւն դատեն եւ դատապարտեն զանհաւատու, զի ցուցցէ զնոսսա արժանի գոլ դատապարտութեան:

*Եւ զկնի դնէ զպատճառն.*

Բան. «Զի ես յանձնէ իմնէ ոչ խաւսեցայ» (Յովի. ԺԲ 49):

Մեկնութիւն<sup>2</sup>. Վասն այն բանն Քրիստոսի ցուցանէ զանհաւատու արժանի գոլ դատապարտութեան, զի ելանէ յանխարելի ճշմարտութենէն, այսինքն՝ Աստուծոյ Հաւրէ, որպէս եւ<sup>3</sup> ասէ.

Բան. «Այլ որ առաքեացն զիս՝ Դայր, նա ետ ինձ պատուէր՝ զինչ ասացից եւ զինչ խաւսեցայց<sup>4</sup>» (Յովի. ԺԲ 49):

Մեկնութիւն. Պատուէր վասն մարդեղութեան ասէ, եւ ի կատարումն պատուիրանին Քրիստոս ոչ կարէր խոտորիլ յաստուածային ճշմարտութենէն, զի մարդկութիւն Քրիստոսի միաւորեալ էր ի Բանն Աստուծած, ի միութիւն բնութեան եւ ի միութիւն կամաց: Եւ մեկնիչդ ասէ, թէ ի Հայր<sup>5</sup> ձգէ զվարդապետութիւն եւ զամենայն գործն, զի որպէս զէութիւն<sup>6</sup> իւր ի Հաւրէ ունի, նոյնպէս եւ զգիտութիւն, եւ զգործ սքանչելեացն: Եւ զայս ասէ, զի մի հակառակ Հաւր կարծեսցեն:

Իսկ ասելն զինչ ասացից կամ զինչ խաւսեցայց չորս մտաւք իմանի. նախ՝ ասացից ի սրտի եւ խաւսեցայց ի լեզուի: Երկրորդ ասացից բանիւ եւ խաւսեցայց գործով: Երրորդ. ասացից զմեծամեծս եւ խաւսեցայց զնուաստականս: Չորրորդ. ասացից զստորասականս, որ է յանձնառականն, եւ խաւսեցայց զբացասականս, որ է հրաժարականն:

*Եւ զի մի ոք փոքր համարեսցի զայս պատուէրս, վասն այն<sup>7</sup> ասէ.*

Բան. «Եւ գիտեմ, զի պատուէրն այն կեանք են յաւիտենականք» (Մելութիւն Յովի. ԺԲ 50):

Մեկնիչդ զքարոզութիւն ասէ, որ հաւատացելոցն ի Քրիստոս կեանս յաւիտենից պարգեւէ<sup>8</sup>, իսկ այլ վարդա-

<sup>1</sup> Ե ողափոխ

<sup>2</sup> Ա չիք

<sup>3</sup> Ա չիք եւ

<sup>4</sup> Ա չիք եւ զինչ խաւսեցայց

<sup>5</sup> Ե Դայրն

<sup>6</sup> Ը եռթիւն

<sup>7</sup> Ա վասն որոյ

պետք չորս կերպիւ մեկնեն. նախ՝ պատուէր ասեն զկամքն Աստուծոյ, եւ կամքն Աստուծոյ կեանք են յաւիտենական, զի նոյն է ընդ Աստուածութեան, եւ էութիւն Աստուծոյ կեանք է յաւիտենական, ապա ուրեմն պատուէրն այն է կեանք յաւիտենական ըստ առաջակայ գոլոյ երանելեացն, զի աստուածային բնութիւն եւ կամքն, որ նոյն են յառաջակայեն երանելեացն տեսութեան, զի զԱստուածութիւն տեսանելով երանեալք լինին: Երկրորդ. պատուիրի անուամբ ասեն զանձն Որդւոյն, որ յատկապէս Բան ասի, եւ Նա է կեանք յաւիտենական ըստ էութեան եւ ըստ առաջակայ գոլոյ երանելեացն տեսութեան: Երրորդ կերպիւ ասեն զպատուէրս զայս<sup>1</sup> վասն արտաքին բանին եւ կամ գրոյն, որ յայտնէ զկամս Աստուծոյ, եւ սոյնպէս պատուէրս այս ոչ էութեամբ է կեանք յաւիտենական, այլ զի պատճառ է հասուցանել ի կեանս յաւիտենականս, զի ուղղէ զճանապարհ փրկութեան: Չորրորդ կերպիւ պատուէրս աստ կարէ նշանակել զպատուիրանս, եւ պատուէրս այս, յորժամ կատարի գործով, պատճառ է յաւիտենական կենացն, վասն այն կեանք յաւիտենական ասի:

Բան. «Արդ, զոր եսն խաւսիմ, որպէս ասաց ինձ Յայր, այնպէս խաւսիմ<sup>2</sup>» (Յովի. ԺԲ 50):

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.** Նախ ցուցանէ, թէ պատուէրս այս ուղիղ եւ ճշմարիտ է: Երկրորդ. ցուցանէ, թէ նոյն է խաւսք իմ եւ Հաւը: Երրորդ. զի մի է կամք իմ ընդ Հաւը վասն փրկութեան մարդկան: Բայց ըստ այլ վարդապետաց խնդրի աստ, որպէս ասացաւ յայսմ գլխուս, եթէ ոմանց յիշխանացն, ի Քրիստոս հաւատացեալ, ոչ խոստովանէին զՔրիստոս յայտնապէս վասն երկիւղի փարիսեցւոցն:

Եւ աստ հարցումն<sup>3</sup> լինի, թէ սոքա մահու չափ մեղանչէի՞ն ոչ խոստովանելովն զՔրիստոս:

**Պատասխան.** Նախ երեւի, թէ՝ ոչ, վասն կրկին պատճառի. նախ՝ զի թողուլ զայն, որ այլոց պատճառ է խոսովութեան եւ գայթակղութեան, ոչ է մեղք, այլ բարի գործ, իսկ խոստովանութիւն սոցա պատճառ լինէր այլոց խոսովութեան եւ գայթակղութեան, ապա ուրեմն ոչ մեղք էին ոչ խոստովանելովն: Երկրորդ պատճառ է, զի ոմանք ի սոցանէ յոյժ բարի եւ արդարք եղեն, որպէս Նիկողիմոս եւ Յովսէփ Արեմաթացին, որք ծածկաբար աշակերտք էին Քրիստոսի, վասն այն երեւի, թէ լոելն սոցա ոչ էր մեղք:

<sup>1</sup> Ա այս

<sup>2</sup> Ա չիք

<sup>3</sup> Ա հարց

Ընդդէմ այսմ ասէ Պաւղոս ի Հռոմայեցիսն. «Սրտիւ հաւատալն յարդարութիւն է, եւ բերանովն խոստովանել՝ փրկութիւն է<sup>1</sup>» (Իմնտ. Ղոռմ. Ժ 10), ուստի երեւի, զի խոստովանութիւն հաւատոյ հարկաւոր է ի փրկութիւն, որպէս եւ հաւատն: Ապա ուրեմն յայտ է, զի թողուլ զխոստովանութիւն հաւատոյ մահու չափ մեղք է:

Պատասխան. Զմահու չափ մեղքն սոյնպէս սահմանեն վարդապետք. մահու չափ մեղք է յանցանել յաստուածային աւրէնսն եւ անհնազանդութիւն աստուածային պատուիրանացն, վասն այն թողուլ զխոստովանութիւն մեղք է, յորժամ հարկաւոր լինի ըստ աստուածային պատուիրանին, իսկ հաւատոյ խոստովանութիւն, որպէս այլ գործք առաքինութեանց պատուիրին մեզ ստորասական պատուիրանաւուն: Արդ, ստորասական պատուիրան է, զոր մարդն միշտ պարտական է կատարել ոչ վասն ժամանակի, այլ ի պատշաճաւոր ժամանակի եւ ի տեղւոջ, այսինքն՝ յորժամ պակասութիւն այնմ գործոյ է ընդդէմ սիրոյն Աստուծոյ կամ ընկերին: Եւ սոյնպէս պակասութիւն խոստովանութեան հաւատոյ է ընդդէմ սիրոյն Աստուծոյ, յորժամ ի բաց բառնի պատիւն Աստուծոյ եւ յորժամ մարդիկ համարին, թէ այնպիսի հաւատն սուտ է եւ ոչ ծշմարիտ: Իսկ յայնժամ պակասութիւն խոստովանութեան է ընդդէմ սիրոյ ընկերին, յորժամ այնու փրկութիւն ընկերին խափանի, որպէս յորժամ երեւելի մարդ զհաւատն իւր ոչ խոստովանի, պարզամիտ մարդիկ անտի աւրինակ առնուն եւ ոչ խոստովանին զհաւատս ի պատշաճ ժամանակի եւ ի տեղւոջ:

Եւ արդ, սոքա որ իշխանքն են հրէից, վասն կրկին պատճառի մահու չափ մեղք գործեցին՝ ոչ<sup>2</sup> խոստովանելով զհաւատս. նախ՝ զի սոքա աւրէնսգէտք եւ քահանայք եւ քահանայապետք էին եւ գիտէին զՍուրբ Գիրս, յորժամ վասն երկիւղի զխոստովանութիւն Քրիստոսի թողին, այնու պատճառս տային այլոց, թէ հաւատն այն սուտ է եւ ոչ ծշմարիտ: Դարձեալ՝ զի նուաստքն նոցա բանիցն<sup>3</sup> եւ գործոցն հետեւէին եւ արգելեալք լինէին ի հաւատոցն Քրիստոսի: Եւ սոյնպէս<sup>4</sup> պակասութիւն խոստովանութեան իշխանացն էր ընդդէմ սիրոյն Աստուծոյ եւ ընդդէմ ընկերին: Երկրորդ պատճառ, զի սոքա վերակացուք էին եւ պարտական էին ուսուցանել զժողովուրդն, զոր ինչ փրկութիւն էր նոցա, որպէս եւ էր Քրիստոսի հաւատն, վասն այն սոցա լոելն պատճառ էր մեղաց,

<sup>1</sup> Ա չիք է

<sup>2</sup> Բ ով

<sup>3</sup> Բ Ծ բանից

<sup>4</sup> Բ այսպէս

**որպէս ասէ աւետարանիչն, թէ՝ «Սիրեցին զփառս մարդկան առաւել, քան զփառսն Աստուծոյ»** (տես Յովհ. ԺԲ 43):

**Արդ, նախասացեալ առարկութեանցն.**

Պատասխան<sup>1</sup>. Առաջնոյն ասեն վարդապետք, թէ խոստովանութիւն հաւատոյն յորժամ պատճառ լինի խոռվութեան եւ ի նմանէ ոչ ելանէ աւգութիւն ինչ, ի բաց թողլի է, որպէս ասէ. «Մի՛ տայք զսրբութիւն շանց» (Մատթ. Է 6), իսկ եթէ<sup>2</sup> ի խոստովանութենէն լինի աւգուտ ինչ, կամ ոք հարցանէ ի վերայ հաւատոց, յայնժամն պարտ է խոստովանել եւ ոչ վասն գայթակղութեան եւ խոռվութեան անհաւատից թողուզ զխոստովանութիւն: Եւ յայտ է, յորժամ փարիսեցիքն վասն քարոզութեան Քրիստոսի գայթակղեցան, ասաց Քրիստոս. «Թոյլ տուք դոցա, կոյրք են կուրաց առաջնորդք» (Մատթ. ԺԵ 14), այսինքն՝ թոյլ տուք, զի խոռվեսցին եւ գայթակղեսցին:

<sup>1</sup> Բ Արդ, նախ ասացեալ առարկութեանցն պատասխանի.

<sup>2</sup> Ա թէ

## Գլուխ ԺԳ

Բան<sup>1</sup>. «Յառաջազոյն քան զտաւնն Զատկին գիտաց Յիսուս, թէ հասեալ է [ժամ նորա]» (Յովի. ԺԳ 1):

Մեկնութիւն<sup>2</sup>. Այլ աւետարանիչքն յառաջնումն աւուր բաղարջակերացն ասեն, եւ սա յառաջ քան զՁատիկն: Թուի, թէ ընդդէմ խաւսին միմեանց աւետարանիչքս, այլ ոչ են հակառակ, բայց յոյժ զծշմարտութիւն պատմեն, քանզի սովորութիւն էր հրէիցն զի եւ զաւրն երկու ազգ հաշուէին. Նախ՝ ըստ Մովսէսի պատմելոյն, եւ երկրորդ՝ ըստ լուսնին համարէին: Մովսէս ասէ. «Եղեւ երեկոյ, եւ եղեւ վաղորդայն, աւր մի» (Ծննդ. Ա 5), զերեկոյն հետ առաւաւտին համարէին եւ զլուսնին համարն զերեկոյն մինչեւ յառաւաւտն յանցեալ աւրն ասէին: Երեք աւետարանիչքն, որ յառաջնումն աւրն ասեն, զերեկոյն հետ առաւաւտին ասեն, եւ Յոհաննէս յառաջագոյն քան զՁատիկն ասէ ըստ թուոյ լուսնին համարի, որ զառաւաւտն հետ անցեալ աւուրն ասէին: Յայնժամ այս հաշիւս յառաջ գայ, այն որ սա ասէ, ապա ուրեմն երկոքեանն ճշմարիտ ասեն<sup>3</sup>:

«Գիտաց Յիսուս, թէ հասեալ է ժամ նորա» (Յովի. ԺԳ 1):

Ոչ թէ յառաջն ...<sup>4</sup> եւ այժմ գիտաց, այլ զի արար զի աշակերտացն յայտնեսցի ...<sup>5</sup> զչարչարանացն ասէ. փոխիլ զայն, որ մարմնովն մեկնելոց էր<sup>6</sup> ի նոցանէ եւ առ Հայր ամբառնայր, բայց Աստուածութեամբն էր<sup>7</sup> ընդ նոսա, որպէս ինքն ասաց:

«Սիրեաց զիւրսն» (Յովի. ԺԳ 1):

Իւր զառաքեալսն ասէ, որ բանիւն ընտանիք էին, զի թէպէտ ամենքն սիրեն, սակայն ստեղծմամբ, իսկ<sup>8</sup> թէ ընդէ՞ր մինչեւ ցայս ժամ ոչ եցոյց զայս սէր: Նախ՝ զի սովորութիւն է<sup>9</sup>, յորժամ ոք ի հեռաւոր աշխարհ երթայ, ի ժամ գնալոյն առաւել գութ եւ սէր ցուցանէ առ ընտանիս, զի ի ձեռն այնմիկ հանապազ յիշեն զնա, զսոյն եւ զՏէրն արար: Երկրորդ. զի սոքա վիրաւորք եւ

<sup>1</sup> Բ չեք

<sup>2</sup> Բ չեք

<sup>3</sup> Բ ճշմարիտ են

<sup>4</sup> Բ Ը պակասում է մեկ բառ

<sup>5</sup> Բ Ը հավանաբար պակասում է երկու բառ

<sup>6</sup> Ը մեկնեսցէ

<sup>7</sup> Բ Աստուածութեամբ էր

<sup>8</sup> Բ բայց

<sup>9</sup> Բ էր

տրտում էին վասն Քրիստոսի, թէ մեկնելոց է ի նոցանէ, զայսպեսի սէր ցուցանէ, զի զայս յիշեսցեն եւ սովաւ մխիթարեսցին, իսկ թէ զինչ է, որ ասէ. «Զիւրսն, որ յաշխարհի աստ են» (Յովի. ժԳ 1), *Ուկերերանն սոյնպէս<sup>1</sup>*, թէ՝ զնահապետսն ասէ, որ իւր էին<sup>2</sup> հաւատով, բայց... <sup>3</sup> աշխարհէ զսոսա սիրեաց, որ յաշխարհի են<sup>չչոյ</sup>, այսինքն՝ զառաքեալսն...<sup>4</sup>, եւ ի գժոխս էին նահապետքն, սակայն ի մասն աշխարհիս էին, զի գժոխքն յաշխարհէս է:

Եւ դարձեալ՝ թէպէտ եւ հոգիբն ի գժոխս, սակայն մարմինքն ի գերեզմանի էին, այլ զիւրսն, որ յաշխարհիս են, ասէ, որ զբնութիւնս ի հրեշտակաց զատուցանէ, թէ զմարդկային բնութիւնս առաւել սիրեաց քան զնոսա: Նախ ասէ, թէ յոյժ սիրեաց, եւ երկրորդ, թէ մինչեւ ի յայս կենաց կատարումն, որ կամի փոխիլ, եւ երրորդ, թէ՝ մինչեւ յաւարտ սիրոյն սիրեաց զնոսա:

«Եւ ի լինել ընթրեացն սատանայի իսկ արկեալ էր ի սիրտ» (Յովի. ժԳ 2):

Երեք անգամ շարժեցաւ Յուղա, զի մատնեսցէ զնա. նախ՝ յորժամ զիւղն Մարիամ ի վերայ գլխոյն Քրիստոսի թափեաց, յայնժամ ասէ Մատթէոս, թէ՝ «Գնաց մի յերկոտասանիցն [անուանեալն] Յուղա [Սկարիովտացի] առ քահանայապետսն» (Մատթ. ԻԶ 14): Երկրորդ. որ աստ ասէ, թէ՝ «Սատանայի իսկ արկեալ էր ի սիրտ, զի մատնեսցէ» (Յովի. ժԳ 2): Երրորդ. յորժամ առ զպատառն եւ ել արտաքս եւ գնաց առ քահանայապետսն:

«Յառնէ յընթրեացն անտի եւ դնէ զիանդերձն» (Յովի. ժԳ 4):

Այսինքն՝ զվերին պատմուճանն, որ արգել լինէր գործոյն, եւ հան:

«Եւ առեալ ղենջակ մի սփածաւ» (Յովի. ժԳ 4):

Ղենջակ զայն ասէ, որ մի դաստառակ զառաջեաւն էարկ եւ յետուստ կողմանէ ընդ մէջսն ամրացոյց ընդդէմ հանդերձին:

«Եարկ ջուր ի կոնք եւ սկսաւ լուանալ» (Յովի. ժԳ 5):

Տէրն հինգ ազգ սէր ցուցանէ առ աշակերտսն. նախ՝ է սէր, զի վասն իրաց ինչ սիրեն, իսկ Քրիստոս ձրի սիրեաց: Երկրորդ. է կատարեալ սէր, որ նախ սիրէ, իսկ Տէրն նախ սիրեաց զմեզ: Երրորդ. է սէր հասարակաբար, իսկ աստ Տէրն զիւրն միայն սիրեաց: Չորրորդ. է սէր, որ աստ միայն, իսկ Տէր մեր յետ մահուն եւս սիրեաց զառաքեալսն, որպէս ասէ. «Զի պահեսցես զնոսա ի չարէ»

<sup>1</sup> С չիք

<sup>2</sup> В չիք որ իւր էին

<sup>3</sup> В С պակասուն է մեկ բառ

<sup>4</sup> В С պակասուն են մի քանի բառեր

(Յովի. ԺԵ 15): Հինգերորդ. է սէր աշխարհի, բայց ոչ ամենեւին կատարեալ<sup>1</sup>, իսկ Տէրն իսպառ սիրեաց զնոսա:

Իսկ թէ վասն է՞ր զոտսն լուաց եւ ոչ զայլ ինչ անդամ:

Եւ այս<sup>2</sup> վասն բազում պատճառի. նախ՝ զի ոտն վերջին մասն է մարմնոյն, եւ սոյնպէս ուսոյց զվերջին մեղսն ամենեւին լուանալ, որ ձեզ մեղս ոչ երեւին: Երկրորդ. զի հաստատ գործ ի վերայ ոտից գործի, սոյնպէս ուսոյց, զի զկատարեալ<sup>3</sup> մեղքն ամենեւին սրբել: Երրորդ. զի ոտքն ի մէջ ամանոյ իւրոյ ծածուկ լինի միշտ, զորս եւ բանալովն ուսոյց, թէ զծածուկն յայտնի արարէք խոստովանութեամբ: Չորրորդ. զի որք զոտսն լուանան, աչքն լուսաւորին, զի անդ է երակ աչացն, վասն որոյ լուանալովն եցոյց, թէ որք զմեղսն սրբեն, լուսաւորին միտք նոցա: Հինգերորդ. զի ծանրութիւն մարմնոյն ի վերայ ոտիցն է, վասն որոյ զնա լուանալովն ուսոյց, թէ ծանրութիւն մեղացն ոչինչ է, եթէ ոք լուասցի խոստովանութեամբն: Վեցերորդ. զի սկիզբն մեր անկման ի գալոյն Աղամայ եղեւ ի ծառն, վասն որոյ լուանալով զոտսն բժշկեաց զգարշապարս նախահաւըրն: Եւթներորդ. զի ոտքն է անարդ մասն, համեմատելով առ գլուխն, զնա լուաց, զի ուսուսցէ, թէ մի անարգէք զորք, թէ եւ կարի յետին ոք իցէ: Ութերորդ. զի զոտսն լուանալով ուսոյց զխոնարհութիւն աշակերտացն, որով կարեն բնակարան Սուլք Երրորդութեան լինել: Իններորդ. զի ոտք մարդկան ոչ էին արժանի մտանել ի վերինն Երուսաղէմ վասն յոյժ մեղացն, վասն որոյ լուաց եւ փոխեաց զճանապարհն գնալ մեզ յերկնից յարքայութիւն: Տասներորդ. զի թէ նա ոչ էր լուացեալ զոտսն, մեք ամենեւին հպարտանայաք, վասն որոյ զոտսն լուանալով եցոյց մեզ ամենեւին ոչինչ համարել զմեզ, որքան ի մարմնի իցեմք:

Իսկ մեք զայս աւրինակ պարտիմք առնել վասն հինգ պատճառի. նախ՝ վասն Քրիստոսի հրամանացն, զի ասաց. «Աւրինակ մի ետու ձեզ, որպէս ես զձեզ լուացի, եւ դուք զմիմեանս» (տես Յովի. ԺԳ 14): Երկրորդ. զի նմանեսցուք Քրիստոսի՝ խոնարհութեամբ զոտսն ուսաստիցն մեր լուանալով: Երրորդ. վասն սիրոյ նորա, զի յամենայն ամի առնեմք, որ սէր նորա ի մեզ առաւելացի: Չորրորդ. վասն մեծութեան Քրիստոսի, զի թէ Տէրն ամենեցուն զայս արար, պապ եւ մեք, որ նուաստք եմք, պարտիմք առնել: Հինգերորդ. զի

<sup>1</sup> Բ չիք

<sup>2</sup> Ը չիք եւ այս

<sup>3</sup> Բ կատարեալ

վարձս առցուք ի Քրիստոսէ, վասն զհրամանսն նորա<sup>1</sup> կատարելով:

Բայց քննելի է, թէ յառաջ զո՞վ յաշակերտացն լուաց:

Ոմանք ասեն, թէ յառաջ զմետասանսն լուաց եւ ապա գայ առ Սիմովն<sup>2</sup>, բայց այս է ճշմարիտն, զի միայն զթուղային էր լուացեալ եւ ապա գայ առ Պետրոս, զի յորժամ սկսաւ լուանալ, Յուղա միայն ժպիրհ դիմաւք եւ յանդուգն երեսաւք եկն էարկ զոտսն<sup>3</sup> ի կոնքն, որ լուաց: Արդ, միտ դիր բարերարին, թէ ո՞րչափ ջերմ էր ի նորա դարձն, որ մինչեւ զոտսն եւս լուանալոյ արժանի արար զնա, եւ նա ամենեւին անդարձ մնայր ի նոյն չարիսն:

Արդ, թէ զի՞նչ էր խորհուրդ լուանալոյն զոտս նոցա, ասասցուք. նախ՝ զի առաքեալքն ամենայն ուրեք բոկ շրջէին, եւ ոտք նոցա յաղտոյն ներկեալ էր, լուանայ զոտս նոցա յաղտոյն, բայց ոչ էր լոկ լուացումն յաղտոյ, այլեւ զհողիս նոցա մաքրէր ի մեղաց: Երկրորդ. զի զնոսա ընդ ամենայն աշխարհս առաքելոց էր, եւ զայնքան երկարութիւն ճանապարհին ընթանալոց էին բազում աշխատութեամբ, վասն որոյ լուանայ զոտսն եւ զաւրութիւն կարողութեան ի նոսա դնէ, զի յամենայն ուրեք անաշխատ եւ առանց վաստակելոյ գնացեն: Երրորդ. զի զվճիռն, որ յառաջագոյն եհատ ի վերայ բնութեանս ի յանցանել մարդոյն, իշխանութիւն տալով աւձին, թէ նա սպասեսցէ քում գլխոյդ, եւ դու՝ նորա գարշապարին, որպէս զամենայն էր լուծանելոց, սոյնպէս եւ զայս եբարձ: Չորրորդ. զի համարձակութիւն տացէ աներկիւղ եւ անվեհեր գնալ ի վերայ աւձից եւ կարճաց եւ ոչ զանգիտել, քանզի այսուհետեւ խորտակեցաւ խայթոց նորա:

«Գայ առ Սիմոն Պետրոս, եւ նա ասէ [ցնա]. «Տէ՛ր, դո՞ւ զիմ զոտս [լուանաս]»» (Յովի. ժԳ 6):

Յայս միտս ասաց, զի զնա Որդի Աստուծոյ դաւանէր եւ Արարիչ, զի ասէր, թէ ձեռքդ այդ, որ զբորոտն սրբեաց եւ զմեռեալս յարոյց եւ զծնէ կուրին ի կաւոյն ակն է ստեղծ, զի՞մ զոտսն<sup>4</sup> լուանաս: Ոչ բարւոք արար զայս Պետրոս, քանզի զայն կարծեաց լոկ իմն լուացումն, ոչ կարաց գիտել, թէ ամենայն բանք եւ արարուածք նորա աւգտակարք եւ խորհրդաբարք էին, զի ամենայն ծառայ եւ կամ աշակերտ<sup>5</sup>, որ ոչ առնէ զմեծին իւրոյ զկամքն,

<sup>1</sup> Ե վասն զի հրամանսն

<sup>2</sup> Ե Ը ի լուսանցս՝ «Որոգին[ես]»

<sup>3</sup> Հ զոտսն

<sup>4</sup> Հ զոտսն

<sup>5</sup> Ե ամենայն աշակերտ եւ կամ ծառայ

կամ սուտ կարծէ զվարդապետն եւ կամ անգէտ բանին, եւ այսու պատճառաւ ոչ առնէ զասացեալն ի վարդապետէն, բայց թէ ընդէ՞ր Պետրոս միայն ընդդիմացաւ, եւ այլքն՝ ոչ: Այս է, զի յորժամ զմատնչին լուաց, առ Պետրոս եկն եւ նա ոչ կամեցաւ, իսկ զի՞նչ Տէրն առ Պետրոս:

«[Ե]թէ ոչ լուացից [զքեզ], ոչ ունիս ընդ իս մասն» (Յովի. ԺԳ 8):

Եւ զայս լուեալ աշակերտացն, դողումն եւ սարսուռ երկիւղին կալաւ զնոսա, եւ ոչ ոք իշխեաց ընդդիմանալ, այլ հնագանդեցան:

«Պատասխանի ետ Յիսուս. «Զոր ինչ ես գործեմ, դու այժմ ոչ գիտես, բայց ապա գիտացես»» (Յովի. ԺԳ 7):

**Այսինքն՝ զգործոյս իմոյ զաւգտութիւն եւ զշահն այժմ ոչ գիտես, զի գեռ անկատարք էին, բայց ապա գիտասջիր, յորժամ զտնաւրէնութեան խորհուրդն զամենայն կատարեմ եւ առ Հայր երթամ եւ զշոգին առաքեմ, զի<sup>1</sup> եկեցէ եւ զշամանդաղ մտաց ձերոց սրբեսցէ եւ յամենայն մարմնական կարծեաց ազատս արացէ, յայնժամ կատարելապէս կարէք գիտել, զոր ինչ առ ձեզ հրաշս գործեսցի: Սոյն բանի հաստատութիւն գրէ Կղեմ յեւթանասնիցն՝ աշակերտ Պետրոսի առաքելոյն, եւ զկնի նորա յաջորդ նորին աթոռոյ ի Հռոմ քաղաքի, թէ Պետրոս առաքեալն յետ զշոգին Սուրբ ընդունելոյ ի վերնատանն, յայնմ հետէ զամենայն ժամանակս կենաց իւրոց աչքն արտասուելոյ<sup>2</sup> ոչ դադարեաց եւ կամ դէմք կերպարանացն ի գեղնութենէ տրտմութեան շառագունայր, եւ յորժամ հարցանէաք, թէ ընդէ՞ր այդպէս անդադար լաս եւ ի տրտմութենէդ ոչ միսիթարիս, զայս պատասխանի տայր, թէ յորժամ զմտաւ ածեմ զգութն եւ զսէրն Քրիստոսի, յորժամ ընդ նմա շրջէաք, առ մեզ ցուցանէր, գալարի սիրտ իմ եւ յաղետիցն արտասուեմ<sup>cxciiij</sup>:**

«Ասէ ցնա Սիմոն Պետրոս. «Տէ՛ր, մի' միայն զոտս [իմ], այլ եւ զձեռս եւ զգլուխս»» (Յովի. ԺԳ 9):

Երիս կարգս դնէ աստանաւր, վասն զի ամենայն ինչ երեք է. սկիզբն եւ մէջն եւ կատարումն, սոյնպէս սա ասէ, թէ ոչ զոտս, այլ զբոլորս իսկ: Դարձեալ՝ զի ոտք ասէ զայն, որ յերեւակայութիւն մեղանչէ, որ է փոքրագոյն մեղք, եւ զայն, որ գործով կատարեն, զայն ծեռք ասէ, եւ այն, որ ի մեղսն բանտեալ մնայ, զայն գլուխս ասեն վարդապետք, վասն որոյ ասէ Պետրոս. «Տէ՛ր, մի'

<sup>1</sup> Ըեթէ

<sup>2</sup> Կարտասուելոյ

միայն ի փոշատեսակ թեթեւագոյն մեղացս մաքրէր, այլեւ ի կատարելագունիցն մեղաց»:

«Ասէ ցնա Յիսուս. «Լուացելոյն չէ ինչ պիտոյ»» (Յովհ. ԺԳ 10):

Ոմանք ասեն, թէ սոքա յառաջագոյն ի Քրիստոսէ մկրտեալք են, վասն այսորիկ ասէ Տէրն. «Լուացելոյն չէ ինչ պիտոյ, այլ զի զոտսն լուանայցէ»: Ասեն, թէ ի մեծամեծ մեղացն մաքրեալք են, այլ այժմ զայն ասէ լուանալ, որ ներելի յանցանքն է ի ձեզ, զոր ոտք առուանէ, եւ զայս դնեն նիւթ իւրեանց, թէ Քրիստոս ոչ ունէր<sup>1</sup> կարաւտութիւն Հոգւոյն, զի միշտ ի նմա էր, եւ նա զ Պետրոս եւ զՈհաննէս մկրտեաց, եւ նոքա՝ զայլսն: Ապա ուրեմն կատարեալ մկրտութիւն ունէին առաքեալքն յառաջ, քան զգալ Հոգւոյն, իսկ իջումն Հոգւոյն իբրեւ զդրոշմ էր, բայց Յոհան Ոսկեբերանն սոյնպէս գրէ. «Լուացեալ զնոսա ի հրէական չարութեանցն, - ասէ, - իսկ զկատարեալ մկրտութիւն ի գալ Հոգւոյն ասէ ընդունել առաքելոցն»<sup>օչօվ</sup>, քանզի վասն բանին, զոր խաւաէ, զնոսա սուրբս անուանէ, զոր սովորութիւն է Գրոց բանիւ սրբել, ասէ, որպէս այն, թէ՝ «Լուացարուք, ընկեցարուք զչարիս յանձանց»<sup>2</sup>»:

Դարձեալ՝ որք մկրտեալք են, ասէ, ոչ եւս է պիտոյ նոցալուանալ, բայց եթէ յետ մկրտութեան ի մեղս իցէ անկեալ, խոստովանութեամբ լուասցէ: Արդ, է տարակոյս ինչ աստ, եթէ Տէրն Յուդային ետ զիւր մարմինն, թէ՝ ոչ: Ոմանք ասեն, թէ՝ ոչ, եւ յայտնեն՝ ասելով, թէ յետ կերակրոյն ասաց Տէրն. «Ոչ արբից ի բերոյ որթոյ, մինչեւ արբից ընդ ձեզ նոր յարքայութեան երկնից» (ՄԵՍ Մատթ. ԻԶ 29): Արդ, եթէ Յուդա եւս էր առեալ զայն, ուրեմն ոչ էր ուրացեալ, զի Քրիստոսի բանն հարկիւ կատարել արժան է: Արդ, պատասխանի այսմ դիւրին է, զի ասելն՝ ընդ ձեզ, ոչ է հասարակ իմանալ վասն ամենեցուն, այլ վասն բազմաց, զի սովորութիւն Գրոց զբոլորն վասն մասինն գրել:

Իսկ Ոսկիարան եւ ամենայն վարդապետք ասեն, թէ՝ ետ, եւ յայտ է յերկուց իրաց. նախ՝ զի ի սոյն գլուխս պատմի, թէ յետ ընթրեաց լուաց զոտս աշակերտացն եւ ասէ. «Մի ոմն ի ծենջ նատնելոց է զիս» (Յովհ. ԺԳ 21, Մատթ. ԻԶ 21), եւ ի հարցանելն Յոհաննու, թացեալ զպատառն ետ Յուդայի, եւ նորա առեալ ել արտաքս, ուստի յայտ է, թէ անդ էր Յուդա, յորժամ բաշխեաց զմարմինն իւր: Եւ երկուքն յայտնապէս ցուցանէ Ղուկաս, զի յորժամ պատմէ, թէ որպէս ետ Տէրն զմարմինն իւր, զկնի ասէ. «Ահաւասիկ

<sup>1</sup> Ընդունէր

<sup>2</sup> Կ անձանց

**ՃԵՌՆ ՄԱՏՆՀԻ ԻՄՊՅ [ԸՆԴ ԻՄ] Ի ՍԵՂԱՆԱ»** (ՂՈՎԿ. ԻԲ 21), **ՊԼԱՏԻ ՅԱՅՄ Է, ԹԻ ԷՐ:**

Իսկ Տէրն վայելչաբար ետ զմարմինն իւր Յուղայի վասն չորս պատճառի. նախ՝ առ ի ցուցանել զՔրիստոսի զգարմանալի զբարութիւն եւ զխոնարհութիւն առ ամբարիշտու: Երկրորդ. զի ուսուցէ մեզ, զի զթշնամիս մեր եւ զատելիս կատարելապէս սիրեսցուք: Երրորդ. առ ի ցուցանել, թի ոչ է պարտ ուրանալ եւ ոչ տալ, յորժամ մեղաւորք, որ ծածուկ ունիցին յանցանս, եւ ընդայլսն գայցէ ի հաղորդութիւն, այլ պարտ է հաղորդել: Զորրորդ. առ ի ցուցանել, թի ոչ ամենայն ոք, որ սուրբ խորհուրդս մարմնաւորապէս, թի եւ հոգեւորապէս ընկալեալ իցէ, այլ է երեմն, զի ի դատապարտութիւն անձին իւրոյ ընդունի ըստ Պաւղոսի:

«Այն է, որում ես թացից» (Յովի. ԺԳ 26):

Զայս պատասխանի Քրիստոս լոելեայն ասաց Յոհաննու վասն վեց պատճառի. նախ՝ զի յայտնապէս էր ասացեալ, Պետրոս ոչ կարէր հանդուրժել, այլ յայնժամ սպանանէր զնա: Երկրորդ. զի թի յայտնի էր ասացեալ զնշան պատառոյն, Յուղա ոչ առնոյր զպատառն: Երրորդ. զի մեղք նորա էր ծածուկ, ոչ էր պարտ յայտնել: Զորրորդ. զի մեզ ուսուցէ ոչ խայտառակել զմեղս ուրուք: Հինգերորդ. զի թի յայտնապէս ասէր, պատճառ խոռվութեան տայր Յուղայի: Վեցերորդ. զի ծածկաբար էր հարցուածն, ծածկաբար պարտ է լինել պատասխանին:

Եւ զի ծածկաբար ասաց, յայտնի էր<sup>1</sup> կրկին վկայութեամբ. նախ՝ զի նշան ետ զպատառն, զի թի<sup>2</sup> յայտնապէս ասէր, պարտ էր զանունն ասել, եւ ոչ նշանաւք ծանուցանել: Երկրորդ. զի ասէ աւետարանիչս, թի ասաց Տէրն Յուղայի. «Արդ, զոր ինչ առնելոց ես, արա՛ վաղվաղակի» (Յովի. ԺԳ 27), եւ ոչ ոք իմացաւ, թի առ ինչ ասաց:

«Եւ յետ պատառոյն ապա եմուտ ի նա սատանայ» (Յովի. ԺԳ 27):

Ոչ թի յայն ժամ նոր եմուտ ի նա սատանայ, զի նախ վաճառեալ էր զՔրիստոս հրէիցն, այլ եմուտ յայն ժամ առաւել իշխելով ի վերայ նորա:

Եւ այս վասն չորս պատճառի. նախ՝ վասն նորագոյն ապերախտութեան եւ արհամարհութեան զՔրիստոս: Երկրորդ. վասն նորագոյն աճման մատնողական կեղծաւորութեան, զի ցուցանէ, թի զպատառն զայն ընկալաւ վասն յատուկ սիրելութեան: Երրորդ. վասն նորագոյն հակառակութեան եւ խստասրտութեան,

<sup>1</sup> Ը է

<sup>2</sup> Յ չիք

որպէս ասէ Պաւղոս ի Հռոմայեցիս. «Ըստ խստասրտութեան անձին քո գանձես անձին քում բարկութիւն» (տես Յօն. Բ 5): Զորորդ. առ ի ցուցանել, զի աստուածային պարգեւք անարժան ընդունողացն պատճառ դատապարտութեան է:

«Եւ ասէ յնոսա. “Գիտէ՞ք զինչ արարիդ<sup>1</sup> ձեզ”» (Յովհ. ԺԳ 12):

Նախ այսպէս երեւի, թէ կարացիք իմանալ զայս, զոր արարի, զի խոնարհութեան աւրինակ ետու ձեզ, զի դուք միմեանց առնիցէք: Երկրորդ. խրատէ զմեզ պատրաստ լինել, զի մի անկանիցիմք ի մեղս, այլ թէ անկանիմք, դժուարաւ ազատիմք:

«Եթ զայս գիտէք, երանելի եւս էք, թէ առնիցէք զայս» (Յովհ. ԺԳ 17):

Այսինքն՝ թէ ոչ միայն գիտել արժան է զխոնարհութիւն, այլ եւ առնել, զի սկիզբն զխոնարհութիւնս սկսաւ ուսուցանել լուանալովն, եւ ի կատարումս զխոնարհութիւն պատուիրէ, զի սովորութիւն էր Փրկչին, յորժամ բանիւ վարդապետէր, զկնի զսքանչելիս գործէր, զի նոքաւք վարդապետութիւն հաւատարիմ լինէր, իսկ երբ սքանչելիս առնէր, զկնի բանիւ ուսուցանէր, զի սքանչելիքն հաւատարմագոյն լինէր:

«Ոչ վասն ամենեցուն ձեր ասեն, զի [ես] գիտեն զորս ընտրեցիդ» (Յովհ. ԺԳ 18):

Այս բանս<sup>2</sup> վասն առաջիկայ բանիդ ասէ, որ ասելոց է. «Որ ուտէր ընդ իս հաց, արար ինձ խաբէութիւն» (Յովհ. ԺԳ 18): Ասէ՝ ամենքն ուտելոց էք ընդ իս հաց, այլ որ յաճախեն ի խարէութիւն, ես գիտեմ զորս ընտրեցի, զի ընտրեալն երկու ազգ էր առաքելոցն, առաջին՝ որ յառաքելութիւն ընտրեաց, եւ երկրորդ՝ թէ որք ի նոցանէ երանութեան արժանանան:

«Զայս իբրեւ ասաց, խռովեցաւ հոգի իւր» (Յովհ. ԺԳ 21):

Նախ վասն թուղայի, զի այլ առաքեալքն այնմ պատուիրանին, որ Քրիստոս ետ, պահողք լինելոց էին եւ երանութեան հաղորդք, իսկ թուղա զրկելոց էր: Եւ երկրորդ. զի զմարմնոյն<sup>3</sup> կիրսն ցուցանէր, թէ իսկապէս մարմին զգեցեալ եմ, զի ի չարչարանաց ժամանակն խռովէր:

«Յայէին ընդ միմեանս աշակերտքն<sup>4</sup> տարակուսեալք» (Յովհ. ԺԳ 22):

Զի թէպէտ ոչ գոյր ի նոսա խիղճ մտաց, սակայն գիտէին, թէ ամենայն բանք ասացեալք ի վարդապետէն ոչ լինէր դատարկ, այլ կատարէր: Կարծեցին ի միտս, թէ գուցէ յետոյ պատահի առ-

<sup>1</sup> Յ արարի

<sup>2</sup> Յ բան

<sup>3</sup> Յ զմարմնոյ

<sup>4</sup> Յ Յայէին աշակերտքն ընդ միմեանս

նել մեզ զայն եւ յայսպիսի աղէտ ի սուրբ գունդն պաշարեալ կայր:

«Եւ էր մի ոմն յաշակերտացն բազմեալ առ Յիսուսիւ, զոր սիրեր» (Յովի. Ժ4 23):

**ԶՅՈՀԱՆՆԻՍ ԱՍՔ,** քանզի փափկասուն էր սա եւ առաւել սիրեցեալ ի Քրիստոսէ: Ընդէ՞ր առաւել սիրէր զսա, քան զայլսն: Ռմանք ասեն, թէ զի հասակաւն տղայ էր եւ ըստ մարմնոյ քուեր որդի էր նորա, այնր աղագաւ սիրէր, եւ այլք ոմանք ասեն, թէ զի միտք նորա առաւել պարզ եւ մաքուր էր յամենայն մարմնական կրից եւ ի սէրն՝ առաւել ջերմ, յաղագս որոյ նոյն չափովն, որով նա պարզ եւ մաքուր էր եւ ի սէրն Քրիստոսի ջերմ, նովիմք սիրէր զնա: Եւ այս անտի է յայտ, զի սա ի սկիզբն Աւետարանի իւրում մինչեւ ի կատարումն զամենայն աստուածաբանութիւն առնէ, եւ վկայէ քեզ Կիւրեղ, որ զ Պարապմանցն է գրեալ գիրս, զի յայլ աւետարանչացն սակաւ ինչ առնու յաղագս աստուածաբանութեան իւրոյ, բայց ի Յոհաննու զամենայն առնու յաստուածաբանութիւն վկայ:

«Ակնարկէ նմա Սիմոն Պետրոս» (Յովի. Ժ4 23):

Եւ թէ ընդէ՞ր նմա ակնարկէ եւ ոչ ինքն հարցանէ, քանզի յորժամ սաստեաց նմա Տէրն, յորժամ սասաց. «Ոչ լուասցես զոտս իմ», զարհուրեալ եւ յայնմ հետէ այլ ոչ իշխէր հարցանել :

«Եւ նա անկեալ զլանջաւըն Յիսուսի, ասէ ցնա՝ Տէր, ո՞վ է» (Յովի. Ժ4 25):

Ի վերայ բարձանցն Յիսուսի էր նստեալ Յոհաննիս, յորժամ ակնարկեաց նմա Պետրոս եւ զգլուխն ընդ լանջաւքն ի վեր բերեալ սասաց յունկն Քրիստոսի գաղտնապէս՝ Տէ՞ր, ո՞վ է, որ մատնելոցն է զքեզ, եւ Տէր նոյնպէս գաղտ սասաց առ նա, թէ՝ որում ես թացից զպատառն եւ տաց, նա է: Ոսկերերան զծշմարիտն այսպէս գրէ<sup>ՀՀՀՎ</sup>, թէ յիւր մարմնոյն ետ, զի յորժամ այնպիսի անարժանութեամբ եւ անզեղջ գոլով ի նոյն չարիսն ճաշակեսցէ զմարմինն Որդւոյն Աստուծոյ, յիւրաւի դատապարտի, որպէս Տէրն սասաց. «Լաւ էր, թէ չէր ծնեալ մարդն այն» (տես Մատթ. ԻՉ 24, Մարկ. ԺԴ 21):

«Եւ յետ պատառոյն ապա եմուտ ի նա սատանայ» (Յովի. Ժ4 27):

**Մի՞թէ պատառն եղեւ պատճառ, ո՞չ, այլ յորժամ առ զպատառն,** Տէրն զիւր խնամքն ի նմանէ արգել եւ առժամայն եմուտ ի նա սատանայ, զի որքան Տէրն զիւր խնամքն ի վերայ նորա ունէր, թէպէտ կայր ի նմա սերմն չարութեան, սակայն ուր լոյսն էր ոչ իշխէր խաւարն մերձենալ:

*Եւ զի՞նչ էր խնամքն:*

*Այս էր, զի ընդ առաքելոցն կարգի համարէր եւ ընդ նոսա զոտս նորա լուաց եւ իւր մարմնոյն եւ արեանն հաղորդ արար, զի թերեւս դարձցի:*

*Դարձեալ՝ զայս եւս գիտելի է, զի յորժամ կամէր զմարմին իւր աշակերտացն տալ, նախ ինքն եկեր եւ արբ ի նմանէ եւ ապա ետ աշակերտացն, զի մի ասիցեն, թէ զիա՞րդ կարեմք մարմին եւ արիւն ուտել եւ ըմպել:*

*Բայց այն, որ ասէ. «Մինեաց օձեռն իւր ի սկաւառակն», զի՞նչ է, ի մարմնոյն եւ արեա՞նն էր, թէ ի հասարակ հացէն:*

*Ի հասարակ հացին սկաւառակն էր եւ սահման էր աշակերտացն, զի յորժամ վարդապետն զձեռն իւր ի սկաւառակն տանէր, նոքա ոչ տանէին զձեռս իւրեանց ընդ նմա, զայս որպէս մեծարանք համարէին վարդապետին, իսկ Յուդա լրբութեամբ ընդ Քրիստոսի միսեաց զձեռն իւր ի սկաւառակն եւ Քրիստոս զայն, որ ի ձեռինն ունէր ետ ի նա եւ ասէ. «Շտապի՛ր առ զայդ», եւ այս պատու ի հասարակաց հացէն էր, զի յորժամ զիւր մարմինն ետ, դարձեալ հացկերոյթ արարին, անտի էր:*

*Դարձեալ գիտելի է, զի ոչ էր ի հացէ մարմնոյ Տեառն, քանզի զմարմինն, զոր ետ, ոչ մնաց անտի, այլ ճաշակեցին, իսկ այն ի հացէ սեղանոյն էր, զոր յետոյ ուտէին յընթրիս:*

*«Արդ, զոր ինչ [առնելոցն ես], արա՛ վաղվաղակի» (Յովի. ԺԳ 27):*

*Այսինքն՝ թէ մատնելոց ես, թէ չարախաւսելոց ես յինէն առ հրէայսն, արա՛:*

*«Եւ զայս ոչ ոք ինացաւ» (Յովի. ԺԳ 28):*

*Ընդէ՞ր ոչ իմացան: Զի թէ գիտացեալ էին աշակերտքն զմատնիչն յայտնապէս առժամայն սրախողխող առնէին, եւ յայտ ի Պետրոսէ է, զի յորժամ եկին քահանայապետքն ըմբռնել զՏէրն, որ գիտաց Պետրոս, թէ չարութիւն կամին առնել նմա, այնչափ ջերմ էր ի սէր նորա, զի հանեալ զսուրն կամէր հարկանել զմի ի նոցանէ ի վերայ պարանոցին եւ սպանանել, բայց Տէրն այնպէս տնաւրինեաց, զի զականջն եհատ եւ ինքն մերձեցեալ առողջացոյց եւ ոչ թոյլ ետ Պետրոսի սուր հանել:*

*«Իսկ նորա առեալ զպատառն՝ ել արտաքս [վաղվաղակի], եւ էր գիշեր» (Յովի. ԺԳ 30):*

*Այսինքն՝ կերեալ եւ ել, իսկ գիշեր ասելն ցուցանէ զՅուդայի յաւժարութիւն, զի եւ ոչ անգամ ի մթին ժամուն արգելաւ ի չարութենէն<sup>1</sup> իւրմէ: Երկրորդ. զի մութն ժամանակ է չարութեան,*

<sup>1</sup> Ը չարութենէ

**որպէս ասէր Տէրն.** «Որ գործէ զչար, ատեայ զլոյսն» (տես Յովի. գ 20): **Երրորդ.** զի որպէս գիշեր ի պակասել լուսոյն լինի, սոյնպէս իմանալի լուսոյն Քրիստոսի խնամքն ի նմանէ պակասեալ եղեւ: **Չորրորդ.** զի գիշեր մեղացն զնա պատեալ էր, որ ոչ երբէք ունէր կամք զղջանալոյ, քանզի զի՞նչ չարագոյն խաւար, քան զոր անդարձ մնայ մարդ ի մեղսն, եւ թէ ոք գտանի անզեղջ եւ անապաշխար, որպէս զՅուղա, ընդ նմա է դասելոց, յորոց փրկեսցէ զմեզ Քրիստոս Աստուած<sup>1</sup>:

«Եւ իբրեւ ել, ասէ Յիսուս. “Այժմ փառաւորեցաւ Որդի Մարդոյ”» (Յովի. ԺԳ 31):

**Գիտէ զսկիզբն չարչարանացն, քանզի գնալն Յուղայի սկիզբն էր խաչին եւ խաչիւն փառաւորեցաւ Քրիստոս:**

«Որդի Մարդոյ»:

**Յաղագս նոցա կարծեաց, զոր նոքա կարծէին:**

«Եւ Աստուած փառաւորեցաւ ի նմա» (Յովի. ԺԳ 31):

**Յորժամ լուան վասն մեկնելոյ նորա ի նոցանէ, տրտմական իմն եղեն, մխիթարէ զնոսա, թէ յորժամ խաչիմ, փառքն իմ յայտնի լինին եւ Աստուած փառաւորի յիս, զՀաւրէ ասէ, ապա դուք զիա՞րդ տրտմիք ընդ իմ փառքն: Բայց այս տարակուսելի է, զի թէ ամենայն արարածք իմանալիք եւ զգալիք առհասարակ բիւր անչափելի ամաւք փառաւորեն եւ մեծարեն յԱստուծոյ փառքն ոչ առնեն յաւելուած, զի որ յաւելու, նաեւ նուազել կարէ, եւ անկատարն ոչ կարէ Աստուած լինել, ապա զիա՞րդ ասէ, թէ. «Աստուած փառաւորեցաւ ի նմա»: **Այս է, զի մեր բնութենակից գոլով ըստ մարմնոյն, վասն մեր չարչարի, զի զմեզ փառաւորեսցէ, զմեր փառաւորութիւն իւր համարի:****

«Եւ Աստուած փառաւորեսցէ զնա յանձն իւր» (Յովի. ԺԳ 32):

**Ոչ ի ձեռն հրեշտակի կամ մարգարէի, այլ յանձն իւր, այսինքն՝ թէ նոյն բնութեամբն եւ նոյն կարողութեամք զմեծամեծ նշանսն յարեգակն եւ ի լուսին եւ յերկիր եւ ի դժոխս երեւեցուցանեմ, թէ հաւասար Հաւր եմ Աստուած:**

«Եւ վաղվաղակի փառաւորեսցէ» (Յովի. ԺԳ 33):

**Զայն ասէ, որ յառաջ քան զյարութիւն արեգակն խաւարեցաւ, գերեզմանք բացան, մեռեալք յարեան:**

«Որդեակը իմ» (Յովի. ԺԳ 33):

**Նախ որդեակը վասն այսորիկ ասէ, զի տրտմեալք էին աշակերտքն յաղագս մեկնելոյ վարդապետին ի նոցանէ: Որդի ասէ զնոսա, թէ որպէս հայր, թէպէտ ի հեռաւոր աշխարհ երթայ յա-**

<sup>1</sup> C չեք

դագս իրիք ինչ, սակայն գորովն եւ գութն անբաժանելի է յորդւոյն, սոյնպէս ես թէպէտ մարմնով մեկնիմ<sup>1</sup> ի ձէնջ, սակայն Աստուածութեամբ հանապազ ընդ ձեզ եմ:

Դարձեալ ոմանք ասեն<sup>2</sup>, թէ յայս միտս ասաց որդեակը, զի դեռեւս թերակատարք էին որպէս զտղայս, եւ վկայ քեզ, որ ի ժամ<sup>3</sup> մատնելոյն թողին եւ փախեան, զի տակաւին ոչ էին զնա Աստուած հաւատացեալ, բայց յետոյ ի գալ Հոգւոյն առ նոսա ապա կատարելապէս գիտացին, որ Աստուած էր, եւ յայնմ յետէ այլ ոչ եւս մեկնեցան ի սիրոյ Նորա, որպէս վկայէ առաքեալ ի Հռոմ, թէ՝ «Ո՞վ մեկնեսցէ զմեզ ի սիրոյն Քրիստոսի. նեղութիւն, թէ անձկութիւն» (Հռոմ. Լ. 35), եւ այլն:

«Փօքր ինչ ժամանակ ընդ ձեզ եմ» (Յովի. ԺԳ 33):

Ոմանք յանտի մինչեւ ի խաչն ասեն, ոմանք՝ մինչեւ ի համբարձումն, զի թէպէտ խաչեցաւ, սակայն մինչեւ ի քառասուն աւր գեռ յաշխարհի էր եւ յամենայն կիրակէի երեւէր աշակերտացն:

«Խնդրեցէք զիս» (Յովի. ԺԳ 33):

Որպէս Մովսիսի ասաց, թէ գրեա' զանուն իմ եւ առ քեզ պահեա', ի նստել, ի յառնել, ի գնալ ի ճանապարհ, զնոյն այժմ աշակերտացն պատուիրէ, զի մի մոռանայցեն զնա:

«Ուր եսն երթամ, դուք ոչ կարէք գալ» (Յովի. ԺԳ 33):

Բայց թէ զիա' րդ զաշակերտսն որպէս զհրէայսն խրատէր:

Այս է, զի հրէիցն ամենեւին արգել զառ նա գնալն եւ սոցաթէ ոչ այժմ, սակայն է երբեմն եւ ո՞ր է այն, յորժամ ի մեռելոց յառնէր, զհոգին նոցա շնորհէր, եւ նոքա ընդ ամենայն տիեզերս ընթանային եւ մահուամբ եւ պէս-պէս նեղութեամբ կատարիք եւ ընդ իս գայք վայելէք զանանց բարիսն եւ զանզրաւ ուրախութիւնսն:

«Պատուիրան նոր տամ ձեզ, զի սիրեսջիք զմիմեանս» (տես Յովի. ԺԳ 34):

Ո՞ր է նոր պատուիրանն:

Զսիրոյն ասէ, եւ ընդէ՛ր է սա նոր, զի յառաջումն ետ զայս Մովսիսիւ, այս զի Մովսէսին ասէր՝ սիրեսցես զընկեր քո (Ղև. ԺԹ 19), որ նշանակէր զազգակիցն, եւ զայն Մատթէոս նախատէ յԱւետարանի անդ. «Եթէ սիրէք զսիրելիս ձեր, զի՞նչ վարձք են

<sup>1</sup> Ե մարմնովս մեկնիմ

<sup>2</sup> Լուսանցքում գրված է «Որոգ»

<sup>3</sup> Ծ ժամանակ

**ՃԵՐ»** (տես Մատթ. Ե 46), **այլ Տէրն պատուիրէ զմիմեանս սիրել, որ նշանակէր զաւտարս եւ զաղքատս եւ զատելիսն եւս:**

«Որպէս սիրեցի ես զձեզ» (Յովհ. ԺԳ 34):

**Զի Քրիստոս չորս կերպիւ սիրեաց զմեզ. այսինքն՝ ճրի, ներգործական եւ ուղիղ սիրով:** Ճրի, զի նա նախ սրբեաց զմեզ, որպէս ասէ Յոհաննէս ի Կաթողիկեաց. «ՄԵՔ սիրեացուք զԱստուած, [վասն] զի նա նախ սիրեաց զմեզ» (Ա Յովհ. Դ 19) եւ գործով զանձն եղ ի վերայ մեր, զոր եւ ինքն վկայէ, թէ մեծ եւ քան զայս սէր ոչ ոք ունիցի, եթէ ոք զանձն իւր դիցէ ի վերայ բարեաց եւ առանց կեղծաւորութեան, զի նա վասն հոգեւորին սիրեաց զմեզ, զի զհոգեւոր կեանսն չնորհեաց մեզ, պատուիրէ սոյնպէս սիրել զմիմեանս, որով որոշիմք յորդւոցն կորստեան:

«Յայսմ գիտասցեն [ամենեքեան], թէ ին աշակերտ էք, եթէ սիրիցէք զմիմեանս» (Յովհ. ԺԳ 35):

**Ոչ ասաց ծանիցեն, թէ՝ իմ աշակերտք էք, թէ զկոյրս լուսաւորէք կամ զկաղս գնացուցանէք եւ կամ այլ այսպիսիս առնէք, այլ թէ սիրիցէք զմիմեանս, քանզի յորժամ դարձան եւթանասունքն եւ ասացին առ Տէր, թէ յանուն քո եւ դեւք հնազանդին մեզ (հմմտ. Ղուկ. Ժ 17), զայս ետ նոցա պատասխանի, թէ մի՛ խնդայք ընդ այն, թէ դեւք հնազանդին, այլ խնդացէք, զի անունք ճեր գրեալ են յերկինս (հմմտ. Ղուկ. Ժ 20): Բայց դու միտ դիր, թէ որպէս կարգաւորաբար առնէ զամենայն, զի զսէրս զայս իբր զդրոշմ եւ զկնիք ետ աշակերտացն, եւ նոքաւք՝ մեզ հաւատացելոցս, զի որպէս յառաջնումն ստեղծագործութեան զարդարեաց զմարդն ի պատկեր իւր բանականութեամբն եւ անձնիշխան կամաւքն, սոյնպէս եւ յերկրորդ նորոգմանս ի ձեռն սիրոյն կցորդս եւ հազորդս առնէ զմեզ իւր:**

«Անդէն զանձն ին իսկ եղից ի վերայ քո» (Յովհ. ԺԳ 37):

**Յորժամ ասաց Տէրն առ Պետրոս.** «Ուու ոչ կարես օալ այժմ զկնի ին, բայց ապա եկեսցես» (Յովհ. ԺԳ 36), մեծաբանեաց Պետրոս, զի թէպէտ ջերմագոյն էր, այլ մասն ինչ հպարտութեան երեւեցոյց յանձն, զի անձին զաւրութեամբ համարեցաւ առնուլ զայն:

**Եւ ո՞յք էին նորա հպարտութիւնքն:**

**Նախ այն է, զի ասաց, թէ ամենեքեան գայթակղին, սակայս ես՝ ոչ: Երկրորդ.** զի ասաց, թէ պատրաստ եմ ընդ քեզ ի չարչարանս եւ ի բանտ: Երրորդ. զի ասաց, թէ արդէն զանձն իմ եղից ի վերայ քո: Կամեցաւ Տէրն զերիս հպարտութեան ախտն խորտակել՝ երից յանցանցն յայտնելովն:

Դարձեալ բանքն Պետրոսի ընդ մեղադրանաւք է ըստ երից պատճառաց. նախ՝ զի ընդդէմ էր Քրիստոսի բանին: Երկրորդ. զի առաւել քան զայլ առաքեալսն զինքն համարէր՝ յասելն. «Թէպէտ ամենեքեան գայթակղեցին, [սակայն ես ոչ գայթակղեցայց]» (Մատթ. ԻԶ 33): Երրորդ. զի զբարութիւն իւր, քան զոր էր, առաւել կարծէր, նմին իրի Քրիստոս թոյլ ետ անկանել նմա, զի զտկարութիւն անձինն ծանիցէ, այլեւ այնու յանդիմանէ զտկարութիւն մարդկանս բնութեան:

«Չեւ իցէ հաւու խաւսեալ, մինչ դու երիցս ուրասցիս [զիս]» (Յովհ. ԺԳ 38):

**Յոհաննէս եւ Ղուկաս եւ Մատթէոս ասեն, թէ.** «**Չեւ իցէ հաւու խաւսեալ, զի դու երիցս ուրասցիս**» (Մատթ. ԻԶ 34, Ղուկ. ԻԲ 34), **եւ Մարկոս ասէ, թէ.** «**Չեւից հաւու երիցս խաւսեցեալ, մինչ<sup>1</sup> դու երիցս ուրասցիս զիս**» (տես Մարկ. ԺԴ 30): **Թուի, թէ ընդդէմ ասեն միմեանց աւետարանիչքս, եւ ոչ են ընդդէմ, այլ յոյժ համաձայնք միմեանց, զի աւետարանիչքս ամենայն ուրեք զճշմարտութենէն հոգ տանին, զի յամենայն կարծեաց եւ երկրայութեանց դրժելի աւետարանական վարդապետութիւնս լիցի, քանզի են<sup>2</sup> ազդ հաւուց ոմանք վաղվաղկոտք եւ յառաջախաւսք, որ չէ ժամանակ խաւելոյ, բայց նախ խաւսին, եւ յորժամ հասարակաց հաւախաւ լինի, գարձեալ ընդ նոսա այլ խաւսին, որ լինի երկու անգամ: **Մարկոս զայսպիսի հաւս, եւ Յոհաննէս եւ Ղուկաս եւ Մատթէոս զհասարակաց հաւախաւսէն:****

**Սովորութիւն է աւետարանչացս, զի զայն բան, զոր մէկն ոչ է յիշեալ, միւսն յիշէ, եւ թէպէտ մինն յիշէ, եւ երեքն՝ ոչ, համայն նոյն է:**

Դարձեալ՝ այլ իմն գեղեցիկ միտք, զոր ասացեալ են վարդապետք Եկեղեցւոյ. «Մինչ չեւ իցէ հաւու խաւսեալ», զայն ասէ, թէ յառաջ քան զհաւախաւսն այդպիսի երկիւղ եւ սերմն եւ արմատ ուրացութեան ի սրտի նորա տնկեցաւ, եւ յորժամ սոյնպէս իմանամք, այս այլ պայծառ տեսութիւն է:

Դարձեալ գիտելի է, զի Քրիստոս վասն եւթն պատճառի թոյլ ետ Պետրոսի ուրանալ զինքն.

Նախ՝ առ ի խոնարհեցուցանել զյանդգնութիւն եւ զհպարտութիւն նորա եւ մեր, զի մի ոք յանձն վստահացեալ պարձեցի ի զաւրութիւն իւր:

<sup>1</sup> Ը մինչդեռ

<sup>2</sup> Ե չիք են

**ԵՐԿՐՈՐԴ.** առ ի տալ յոյս նորոգման եւ թողութեան մեղաւորաց, թէպէտ եւ ծանրագոյն մեղուցեալ իցեն, եւ թէպէտ ի վեհագունից իցէ եւ ի պատուաւորաց, եւ որք յաստիճան բարձրացեալ կան:

**ԵՐՐՈՐԴ.** զի Պետրոս, որ ամենեցուն էր հովիւ կարգեալ ի Քրիստոսէ, իբր ի հարկէ բռնադատեալ, ամենեցուն ողորմութիւն եւ գութ խնամոց ցուցանիցէ, թէպէտ եւ կարի չարք իցեն, յորժամ զղացին:

**ՉՈՐՐՈՐԴ.** զի նոյն Պետրոս, որ հովիւ էր լինելոց, իբր ի հարկէ բռնադատեալ փոքր համարիցի զինքն քան զամենայն եւ խոնարհ, եւ այսպէս իշխանութիւն եկեղեցւոյն զնա ոչ փքացուցանէր:

**ՀԻՆԳԵՐՈՐԴ.** առ ի ցուցանել խորհրդաբար, զի իմասցուք մեք այնպէս առնել զնոքա, որ ուրանալոց են զՔրիստոս:

**ՎԵցԵՐՈՐԴ.** զի հաստատութիւն մարտիրոսաց եւ ժուժկալութիւն ի տանջանս մի ոք կարծեսցէ բնական զաւրութեամբ լինել, այլ առաւել ի Հոգւոյն Սրբոյ զաւրութենէ: Եւ վասն սմին պատճառի թոյլ ետ Քրիստոս եւ այլ աշակերտացն զայթակղելոյ եւ փախչելոյ, զի զկնի յայտնի լիցի, զի այնոքիկ, որ նախ ուրացան զՔրիստոս եւ թողին, յորժամ յետոյ զղացան, ոչ կամէին այնպէս մեծագոյն տանջանաց եւ գառն մահուան տանել, եթէ ոչ գետէին ճշմարիտ գոլ զՔրիստոս եւ զհաւատն, որ ի նա:

## Գլուխ ԺԴ

«Մի խռովեսցին սիրտը ձեր» (Յովի. ԺԴ 1):

**Նախ ծանուցանէ զինքն գիտող գաղտնեաց եւ խորհրդոց, զի իմացաւ, թէ խռովեալ են աշակերտքն: Երկրորդ զի յորժամ ասաց Պետրոսի. «Մինչ չեւ իցէ հաւու խաւեալ, զի դու երիցս ուրասցիս» (Յովի. ԺԳ 38), տրտմեցան աշակերտքն, թէ սա, որ այնքան ջերմ է ի սէր նորա եւ գլուխ մեր, սա ուրանալոց է, ապա մեզ զի՞նչ է հասեալ լինի, որ մեք այլ ուրանամք: Երկրորդ զի ասէին ի միտս իւրեանց աշակերտքն, թէ այնքան դառն եւ անբերելի չարչարանքն պիտի հասուցանեն Պետրոսի, որ ուրանայ, սակայն եւ այն եւս պահեալ է մեզ:**

«Այլ հաւատացէք յԱստուած եւ յիս հաւատացէք» (Յովի. ԺԴ 1):

**Քաջալերէ զնոսա մի՛ երկնչել, այլ յԱստուած հաւատալ, թէ կարող է զերծուցանել զնոսա յուրացութենէն եւ ի չարչարանացն: Այլ արդ իմա զինչ ասէ Տէրն. «ՅԱստուած հաւատացէք եւ յիս հաւատացէք», նովին չափովն ասէ, որով յԱստուած հաւատայք, նովիմք յիս հաւատացէք, զի թէ ոչ էր հաւասար Հաւը, զիա՞րդ ասէր. «Եւ յիս հաւատացէք»:**

«Ի տան Դաւը իմոյ օթեւանք բազում են» (Յովի. ԺԴ 2):

**Յորժամ ասաց առ Պետրոս, թէ՝ «Այժմ ոչ կարես, բայց յետոյ գաս» (իմնտ. Յովի. ԺԳ 36), կարծեցին աշակերտքն, թէ նորա մեծագոյն իմն պարզեւք տալոց էր, եւ նոցա՝ ոչ, վասն որոյ ինքն ծածկագէտ գոլով զտարակուսանս ի նոցանէ բառնայ՝ ասելով, թէ՝ «Ի տան Դաւը իմոյ օթեւանք բազում են»: Բայց զայս բան տարակուսանս արկանեն բազումք, թէ երկոտասան աշակերտքն հաւասար էին ընդ Քրիստոսի, եւ զնոսա զամէնքն ընտրեաց եւ զառաքելութեան շնորհն ամենեցուն միապէս ետ ի հանդերձեալն, այլ հաւասարապէս տալոց է նոցա զպատիւն<sup>1</sup>, թէ առաւել եւ նուազ: Ամենեքեան նոքա ըստ իւրաքանչիւր կամաց առաւել եւ նուազ ունէին զջերմն եւ զսէրն առ վարդապետն, վասն որոյ ըստ զանազան կամացն եւ հաւատոցն զանազանէ նոցա եւ պատիւն, եւ փառքն, եւ յայտնի քեզ աւրինակ, որ միոյ մարտիրոսի եւ կամ միոյ առաքեալի կերպարն ոչ են մէկմէկի նման, նոյնպէս եւ ամենայն մարդոյ ի սկզբանէ ստեղծմանն մինչեւ ի կատարած ոչ նմանի մարդ մարդոյ կամ անասուն անասնոյ, զի թէպէտ մէկ իւրաւք կամ երկուով նմանին, սակայն բազմաւք՝ ոչ:**

<sup>1</sup> Ընտրեց եւ զառաքել նոցա զպատիւն

«Ապա թէ ոչ՝ ասացեալ էր իմ ձեզ, թէ երթամ եւ պատրաստեմ ձեզ տեղի» (Յովի. ԺԴ 2):

*Հստ ճառին սոյնպէս երեւի, թէ չէի ասացեալ ձեզ, թէ երթամ պատրաստեմ ձեզ տեղի, պարտ էր ձեզ խռովիլ, զի այլ ոչ տեսանէիք զիս, այլ գերագոյն իմացք եւ պայծառ տեսութիւն բանիս այս է, զի այն, որ ասէ. «Ապա թէ ոչ՝ ասացեալ էր իմ ձեզ, թէ երթամ եւ պատրաստեմ ձեզ տեղի»<sup>1</sup>, եւ ապա գամ առնում զձեզ, այլ վասն զի յառաջագոյն պատրաստեալ [էր] այն տեղի ձեզ ի Հաւրէ: Եւ վկայէ այսմ բանի Մատթէոս յԱւետարանի անդ. «Եկայք աւրհնեալք Հաւր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւն ի սկզբանէ աշխարհ» (Մատթ. ԻԵ 34):*

«Դարձեալ գամ եւ առնում զձեզ առ իս» (Յովի. ԺԴ 3):

*Նախ զայս պատուիրէ, թէ այնմ գերագոյն տեղեացն արժանաւոր գործք եւ հաւատք պարտիք ստանալ, զի արժանի լինիցիք այնմ տեղեաց: Երկրորդ. զի որպէս դուք կարծէք, ասէ, թէ յորժամ մեռանիմ, այլ ոչ յառնեմ, ոչ սոյնպէս, այլ դարձեալ յառնեմ ի մեռելոց եւ գամ առ ձեզ, զի տեսանիցէք յայտնապէս: Երրորդ. զի ասէ, թէ յետ յարութեան իմոյ զՀոգին առաքեմ առ ձեզ, զի եկեալ յարդարեսցէ զձեզ զասպարէզ առաքինութեամբ հատարել ձեզ, եւ բազում առաքինութեամբ ճգնեալք առ իս վերափոխիցիք: Բայց ոմանք ասեն. «Դարձեալ գամ եւ առնում զձեզ», զհանդերձեալ դատաստանէն ասէ:*

«Ոչ որ գայ առ Հայր, եթէ ոչ՝ ինեւ» (Յովի. ԺԴ 6):

*Այսինքն՝ թէ որպէս ի ձեռն ճառագայթից արեգականն զնորաբոլորակութիւն ճանաչեմք եւ ի ձեռն բանին, որ արտաքերեալն է, զներտարամադրեալն իմանամք, որպէս ասէ Արիստոտէլ, թէ ներձայնոջքն ներանձիցն ախտից նշանակք են, սոյնպէս ոչ ոք կարէ զՀայր տեսանել, եթէ ոչ ի ձեռն Որդւոյ:*

«Աստ ցնա Փիլիպոս. «Ցոյց մեզ զՀայր»» (Յովի. ԺԴ 8):

*Կարծեաց, թէ մարմնաւոր տեսլեամք պիտէր տեսանել զՀայր, ասէ, թէ՝ զքեզ տեսաք եւ ծանեաք եւ պակասէ մեզ զՀայր տեսութիւն:*

*Ապա զի՞նչ առ նա Տէրն ասէ<sup>2</sup>.*

«Այսչափ ժամանակ ընդ ձեզ եմ եւ ո՞չ ծանեար զիս, Փիլիպոս. որ ետես զիս՝ ետես զՀայր» (Մատթ. ՅՈ 9):

<sup>1</sup> Ե ձեզ տեղի», այսինքն՝ թէ ի տան Հաւր իմոյ աւթեւանք բազում են, ոչ էին պատրաստեալ աւթեւանք յառաջագոյն, պարտ էր իմ ձեզ ասել, թէ երթամ եւ պատրաստեմ ձեզ տեղի

<sup>2</sup> Ընթացք

<sup>3</sup> Ե որ ետեսն զիս եւ ետես զՀայր իմ

Ասէ, թէ ոչ արժանապէս կարացեր գիտել զիմ Աստուածութիւնս, զի թէ կարացեալ էր տեսանել հոգւոյդ ակամք զԱստուածութիւնս իմ, ո՞չ արդեաւք կարաւանայիր հարցանել զՀայր, զի նոյն բնութիւն եւ Աստուածութիւն եւ կամք, որ իմս է, նոյնն եւ Հաւը է: Բայց թուի, թէ այն, որ ասաց, թէ՝ «Ոչ ծանեար զիս, Փիլիպպէ», ընդդէմ է այսմ բանիս, որ յետոյ ասաց, թէ՝ «Որ ետես զիս, ետես զՀայր», զի նա մարմին թանձր շաւշափելի տեսանէր, ոչ է ընդդէմ, այլ յոյժ վայելուչ, զի թէ զոր զգալի ակամքն տեսանէր զայն, կարացեալ էր մտացն աչաւք ի նմա զԱստուածութիւն տեսանել, ոչ էր ասացեալ, թէ ցոյց մեզ զՀայրն, այլ վասն զի ոչ ծանեաւ, որպէս արժանն էր, զի որպէս բան մտացն է թարգման, սոյնպէս Որդի Հաւը թարգման է, որպէս ասէ առաքեալ, թէ՝ «Որ է<sup>1</sup> պատկեր աներեւութիւն Աստուծոյ» (Բ Կորնթ. Դ 4) եւ ոչ թէ ի մէնջ է անհասանելի, այլ եւ հրեշտակաց եւս: Ապա աստանաւը յամաւթ առնէ զՍաքէլիոս հրէականն եւ զԵւնոմիոս<sup>2</sup> եւ զԱետիոս եւ զԱրիոս հետեւող նոցա, որք արարած զՈրդի ասացին, եւ ոչ զնոսա միայն ըմբերանէ, այլ զայնոսիկ եւս, որք յետ անձառ միաւորութեան երկու բնութիւնս եւ երկու կամս ասեն Քրիստոսի, որ են քաղկեդոնիքն, իսկ մեք յետ անձառ միաւորութեան Բանին Աստուծոյ ընդ մարմնոյն մի խոստովանիմք բնութիւն եւ կամք եւ ներգործութիւն, որպէս ինքն ասաց. «Որ ետես զիս, ետես զՀայր» (տե՛ս Յովհ. ԺԴ 9), եթէ ոչ էր մարմինն, որ ի նմա միացեալ Աստուած՝ Հաւասար Հաւը Աստուծոյ, զիա՞րդ ասէր. «Որ ետես զիս, զՀայր ետես»: Զնոյնս եւ Թովմաս յետ յարութեան շաւշափեաց եւ դաւանեաց զնա Տէր եւ Աստուած (Յովհ. Ի 26-29), իսկ եթէ ի չարափառացն ոմանք ասիցեն, թէ զայն յաղագս Աստուածութեան ասաց, թէ՝ «Որ ետես զիս, ետես զՀայր», զայս ասացուք առ նա, թէ՝ ո՞վ յիմարք, թէ այդ այդպէս էր, այն պատշաճ էր ասել, թէ որ ետես զԱստուածութիւնս, որ ի մարմինս է եւ հաւատայ, ի Հայր հաւատայ եւ զայն, ինչ առ աշակերտան խաւսէր, զի դեռեւս թերակատարք էին, պարտ էր ի ձեռն այս փոքր բանիս զիտուն առնել զնոսա, նա եւ հրէայքն իսկ զնա Որդի Աստուծոյ եւ Աստուած կարծէին, բայց յորժամ ասէր. «Ես եմ հացն իջեալ յերկնից» (Յովհ. Զ 41), եւ «Որ ուտէ զմարմին իմ, զմահ մի' տեսցէ» (հմնտ. Յովհ. Զ 57-59), ի խոլովութիւն շարժէին, ապա զիա՞րդ ոչ ասաց առ հրէայսն, թէ զմարմինս ոչ ասեմ<sup>3</sup> աստուած, այլ

<sup>1</sup> Ըլք է

<sup>2</sup> Ը եւ զՆոմիոս

<sup>3</sup> Յ ոչ եմ

զԱՍՊՈԼԱԾՈՒԹԻՒՆՆ ՀԱԼԱՄՈՎԵՔ, որ ի մարմինս, եւ նոքա զայս  
յաւժարութեամբ ընդունէին եւ հաւատային, այլ զմարմինն<sup>1</sup> ա-  
սէր հաւասար Հաւը Աստուած, վասն զի<sup>2</sup> նորա էին բարձրա-  
գոյնքն, եւ նորա՝ խոնարհագոյնքն, զի ոչ եթէ քաղցն եւ ծարաւն  
եւ վաստակելն կամ զհիւանդս բժշկել եւ զբորոտս սրբել եւ զմե-  
ռեալս յարուցանել բնութեանցն էին յատկացուցանող, այլ հետե-  
ւանք միայն, զի գիտասցես հաւաստեաւ, թէ Աստուած է եւ  
մարդ, զի թէ լինի ոք, որ զբարձրագոյնսն Աստուածութեան ասի-  
ցէ, եւ զիսոնարհագոյնսն՝ մարդկութեան, նզովեա՛լ եղիցի, որպէս  
ասէ Կիւրեղ յերկոտասասն կանոնսն<sup>3</sup>, բայց թէ զիսոնարհա-  
գոյնսն եւ թէ զվեհագոյնսն ներգործէր, նոյն մարմինն, առ որ  
աստուածացեալն էր, քանզի հաւասար Հաւը գործէր. նա ի հողոյ  
զԱղամ, սա ի հողոյ զաչս կուրին ստեղծեաց: Արդ, ամաչեսցէ Ա-  
րիոս, որ արարած զՈրդի ասէր եւ ոչ անեղ ի Հաւըէ, կամեցաւ  
յարծաթոյ բնութիւն զոսկին խնդրել, ո՛չ կարաց իմանալ ան-  
միտն, թէ անեղն ոչ կարէ արարած լինել, վասն որոյ Տէրն առ  
Փիլիպպոս ասէ. «Որ ետես զիս, ետես զՀայր», զի զնա<sup>3</sup> ծանաւթս  
արասցէ իւրում Աստուածութեան, զի թէ գիտէր իսկապէս, ոչ  
հարցանէր զՀաւըէ:

«Ո՞չ հաւատաս, թէ Յայր՝ յիս, եւ ես՝ ի Յայր» (տես Յովի. ԺԴ 10):

Արդ, ո՞ւր են այնոքիկ, որ ասեն առաւել եւ նուազ զԱս-  
տուած, զի թէ էր Որդի նուազ, զիա՞րդ կարէր տանել զՀայր, որ  
ասէ, թէ՝ Յայր յիս է, եւ թէ փոքր էր քան զՀայր, զիա՞րդ լնոյր  
զՀայր, որ ասէ, թէ՝ ես ի Յայր եմ, քանզի անհնար է նուազն զբա-  
զումն տանել եւ կամ փոքրերն առ մեծն ձգտել հաւասարիլ:

«Զբանն, զոր ես խաւսիմ ընդ ձեզ, ոչ եթէ յանձնէ ինչ խաւսիմ, այլ  
Յայրն, որ յիս բնակեալ է, նա գործէ զգործսն» (Յովի. ԺԴ 10):

Երիս վկայութիւնս դնէ Տէրն իւր բանին, զի ճշմարիտ է. նախ՝  
զի Յայր իմ գործէ, եւ նա Աստուած է, եւ ստութիւն ի նմա ոչ գոյ:  
Երկրորդ. զգործն տայ վկայ, զի թէպէտ ինձ ոչ հաւատայք, սա-  
կայն գործն, զոր գործեմ, նոքին վկայեն, որ Աստուած եմ: Եր-  
րորդ. զի հաւատացելոցն յիս տաց այնպիսի շնորհս, զի մեծամեծս  
գործեսցեն, քան զիս:

Եւ ո՞րք են մեծամեծքն. այս է, զի Քրիստոս ձեռն դնելով  
բժշկէր զհիւանդս եւ աշակերտացն ստուերն բժշկէր, Տէրն բանիւ  
բժշկէր եւ նոցա թաշկինակն քրտամբն, ապա յորժամ այս սոյն-

<sup>1</sup> Ը մարմինն

<sup>2</sup> Ե չիք զի

<sup>3</sup> Ե նա

պէս էր, առաքեալքն մեծ գային քան գՔրիստոս, վասն որոյ յարէ ի նոյն, թէ՝

«Ես առ Յայր Երթամ: Եւ զոր ինչ խնդրիցէք յանուն իմ, արարից օայն» (Յովհ. ԺԴ 12-13):

**Այսինքն՝ թէ յորժամ մեկնիմ ի ձէնջ, եւ դուք ընդ ոլորտս տիեզերաց սփոփք քարոզել եւ ուսուցանել, եւ զոր ինչ նշան խնդրէք յանուն իմ, արարից օայն, զի նոքաւք հաւատարմացուցանէք զմարդիկք եւ առաւել եւս քան զնոյնս գործիցէք:**

Նախ աստի յայտ է, այսինքն՝ ի վարդապետութենէ առաքելոցն, զի առաւել բազումք են, որ դարձան ի Քրիստոս քարոզութեամբ առաքելոցն, քան թէ վարդապետութեամբն Քրիստոսի, քանզի քարոզութեամբ առաքելոցն բազմութիւն հաւատացելոց դարձան առ Քրիստոս եւ վարդապետութիւն Քրիստոսի սակաւք ի հրէիցն դարձան:

**Երկրորդ.** զի առաքեալքն քարոզէին յամենայն լեզուս, որպէս յայտնի է ի Գործքն, իսկ Քրիստոս միայն ի մի լեզու քարոզեաց, այսինքն՝ եբրայեցի, որպէս ինքն ասէր. «Ոչ ուրեք առաքեցայ, եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Խարայէլի» (Մատթ. ԺԵ 24):

**Երրորդ.** զի Տէրն միայն ի Պաղեստին քարոզեաց, իսկ առաքեալքն ընդ ամենայն տիեզերս:

**Չորրորդ.** յայտնի է ի սքանչելեացն, զի մեծ երեւէր, որք բժշկէին ի քղանցիցն Քրիստոսի, բայց եւս մեծագոյն երեւի, յորժամ բժշկէին հիւանդք ի ստուերէ հանդերձիցն Պետրոսի, որպէս ասէ Գործքն (Գործք Ե 15):

Իսկ եթէ հարցանես, զի՝ է, զի առաքեալքն մեծամեծ սքանչելիս առնէին քան գՔրիստոս, ինքն իսկ Քրիստոս պատասխանի տայ՝ ասելով. «Զի ես առ Յայր Երթամ», զի յոյժ վայել էր մեծամեծ լինել սքանչելիս զկնի գալստեան Հոգւոյն Սրբոյ, բայց Քրիստոս եւ առաքեալքն այլ եւ այլ կերպիւ սքանչելիք առնէին, զի առաքեալքն աղաչելով եւ Քրիստոս ներգործելով եւ պատուիրելով, եւ թէպէտ սքանչելիքն ի ձեռս առաքելոցն եղեն, առաւել ասի ի փառս Քրիստոսի Աստուծոյ:

**Սակայն գիտելի է, թէ վասն է՞ր մարդ յորժամ խնդրուածք առնէ առ Աստուծած եւ ոչ առնու:**

**Այս է. նախ՝ զի յորժամ վասն անարժանի ուրուք խնդրեսցէ, զինդրելին ոչ առնու:**

**Երկրորդ.** զի յորժամ ինքն անարժան լինի, ոչ առնու:

**Երրորդ.** զի թէ վաղվաղկոտ լինի խնդրելն եւ ոչ յերկար համբերութիւն ստանայ, ոչ առնու:

**Զորբորդ.** զի թէ խնդրելին մարմնական ինչ իցէ եւ կամ յաղագս մարմնոյ, անհնար է առնուլ, բայց թէ արժանաւոր ուրուք խնդրիցէ եւ ինքն խնդրողն արժանաւոր լինի եւ թէ յապաղէ Աստուած եւ ոչ տայ, նա ոչ վաղվաղկոտ լինի եւ անհամբեր, այլ համբերութիւն ստանայ եւ խնդրելին հոգեւոր իրք լինի եւ վասն հոգեւորին, անհնար է թէ ոչ առնու խնդրողն, թէ զչորեսինս զայս ունենայ:

«Եթէ սիրեք զիս, զպատուիրանս իմ պահեսջիք» (Յովի. ԺԴ 15):

**Յորժամ խոստացաւ տալ նոցա,** զոր ինչ խնդրեսցեն յանուն նորա, զգուշացուցանէ դարձեալ, թէ մի կարծէք, թէ կատարեալ հաւատք եւ արժանաւոր գործք ոչ ստանայք, թէ զոր ինչ խնդրէք, կարէք առնուլ, այլ եթէ սիրեք, ասէ, զիս, որ նշանակէ զհաւատն կատարեալ ստանալ եւ ի վերայ բերէ, թէ՝ պատուիրանս իմ պահեսջիք, որ ցուցանէ, թէ զնոյն գործով կատարեսցուք, քանզի են բազումք, որ այլոց ուսուցանեն զբարիս գործել, բայց ինքեանք հեռի են ի նմանէ, այլ պահել զպատուիրանս նորա է յատուկ գործ ճշմարիտ քրիստոսամիրութեան, վասն որոյ ասէ<sup>1</sup> Պաւղոս. «Գլուխ պատուիրանացն սէր է» (Ա Տիմ. Ա 5):

«Եւ ես աղաչեցից զՅայր» (Յովի. ԺԴ 16):

**Նախ զայս նշանակէ,** զի աղաչելն սիրոյ ցոյցք է, զի վասն նոցա ցաւակցէր եւ փոյթ տանէր զնոցանէ: Երկրորդ. զի ցուցցէ, թէ յորժամ ես աղաչեմ առանց ամենայն երկբայութեան, առնելոց էք զմիմիթարութիւն: Երրորդ. զի զկամացն իւր եւ զՀաւը զմիութիւն յայտնէ, թէ որպէտ ես փոյթ եմ վասն ձեր, սոյնպէս եւ Հայր: **Զորբորդ.** առ ի ցուցանել զզանազան մխիթարութիւն յՈրդւոյ եւ ի Հոգւոյն Սրբոյ, զի Հոգին Սուրբ այլ եւս բարձրագոյն կերպիւ մխիթարեաց զառաքեալսն քան զՔրիստոս<sup>2</sup> մարմնական երեւմամբ, զի ոչ եկաց ժամանակաւ ինչ, որպէս Տէր յառաքեալսն, այլ յաւիտեան, որպէս ասէ զկնի, վասն որոյ յայտ է, զի առաքեալքն յընդունելութեան Հոգւոյն Սրբոյ ի բարին հաստատեցան եւ յայնմ յետէ ոչ կարէին մահու չափ մեղանչել:

«Եւ այլ մխիթարիչ տացէ ձեզ» (տես Յովի. ԺԴ 16):

**Նախ յաղագս այսորիկ մխիթարիչ,** ասէ, առաքեմ, զի զձեր տրտմութիւնդ փարատէ: Երկրորդ. զի ասելովն՝ այլ մխիթարիչ, յայտնի արար, թէ եւ ինքն մխիթարիչ է: Երրորդ. զի զանձնաւորութիւն Հոգւոյն յայտնապէս երեւեցուցէ, թէ նա է մխիթարիչ ամենայն տրտմութեանց: **Զորբորդ.** զի թէպէտ Հոգին մխիթարիչ

<sup>1</sup> B չիք

<sup>2</sup> C զնոսա

է, սակայն ոչ աւտար ի բնութենէ Որդւոյ, այլ մի եւ նոյն գոլ բնութիւն եւ կամք Հաւը եւ Որդւոյ եւ Հոգւոյն:

Դարձեալ քննելի է, թէ ընդէ՞ր յետ յարութեան վաղվաղակի ոչ ետ զՀոգին, այլ այնքան յերկարեաց: Այս է պատճառն, զի որքան յերկարէր, նոքա առաւել փափագէին, եւ յորժամ գայր փափանաւք, ընդունէին:

«Զի ընդ ձեզ բնակեսցէ» (Յովի. ԺԴ 16):

Կէտ եւ չափ ոչ դնէ բնակելոյն, այլ ծանուցանէ, թէ անմարնապէս է բնակելոց ի ձեզ, վասն զի Հոգի է, եւ հոգին անմարմին է, իսկ յաւիտեան ասելն նշանակէ, թէ միշտ ընդ ձեզ լինելոց է: Աստ շնորհաւք, որ է ազգի-ազգի նշանաւք եւ ի հանդերձեալն փառաւք, վասն զի Հոգին է զարդարող:

«ԶՇոգին ճշնարտութեան» (Յովի. ԺԴ 7):

Վասն է՞ր ճշմարիտ Հոգի կոչէ զնա:

Նախ այս է, զի ամենայն հոգիք եղականք են, եւ նա՝ անեղ: Երկրորդ. զի ամենայն հոգի ստութիւն կարէ ազդել, վկայ քեզ, որ սատանայ անմեղ ստեղծաւ եւ անձնիշխան կամաւքն ի սուտն խոտորեցաւ, նաեւ հոգիք մարդկան ներ ընդունականք եղեն, բայց ի հոգին Աստուծոյ ոչ մերձենայ ստութիւն, այլ ճշմարտապէս զամենայն ոք ի բարին առաջնորդեսցէ: Երրորդ. զի ըստ էութեան բնութեան իւրոյ ճշմարտութիւն է, եւ ոչ՝ պատահական: Չորրորդ. զի ուսուցանէ զճշմարտութիւն վերին, եւ ի սոյն ածէ զլսողսն: Հինգերորդ. զի ի մեզ ճշմարիտ եւ ուղիղ կարգք եւ փափառմն եւ բան եւ գործ ներգործէ:

«Զոր աշխարհս ոչ կարէ ընդունել (զչարսն ասէ), բայց դուք ճանաչէք զնա, զի առ ձեզ» (Մես Յովի. ԺԴ 17):

Առ ձեզ ասէ, որ ճանաչէք զնա, եւ ոչ առ չարսն:

«Փօքր միւս եւս աշխարհս ոչ տեսանէ զիս, բայց դուք տեսանիցէք» (Մես Յովի. ԺԴ 19):

Ասէ, թէ դարձեալ յետ յարութեան երեւելոց եմ ձեզ, ապա ոչ որպէս յառաջնումն ամենայն ոք տեսանէ զիս, այլ ձեզ միայն, եւ զայն ի միաշաբաթւոջ ի միաշաբաթ, զի Տէրն զքառասուն աւրն, որ յետ յարութեան յաշխարհիս եկաց, յամէն կիրակէի երեւէր աշակերտացն:

«Զի ես կենդանի եմ, եւ դուք կենդանի լինելոց էք» (Յովի. ԺԴ 19):

Ցուցանէ, թէ իմ յարութիւնս նախագուշակ է ձեր յարութեան, որ մահուամք եւ չարչարանաւք կատարիք եւ յառնէք յանմահութիւն: Չոր աւրինակ որ յայգւոջն մէկ ազգ պտուղն ի հաս գայ, նշանակ է, թէ ամենեքեան հասանելոց են:

«Յայնմ աւուր զիտասչիք» (Յովի. ԺԴ 20):

**Նշանաւքն ասէ, որպէս դրաւքն փակելովք, որպէս ձկամբն եւ կրակետղ կայծակամբն:**

«Զի ես՝ ի Յաւը իմում, եւ դուք՝ յիս, եւ ես՝ ի ձեզ» (Յովի. ԺԴ 20):

**Ես՝ ի Հայր բնութեամբ, եւ դուք՝ ի յիս հաւատով եւ յուսով եւ սիրով։ Դարձեալ՝ ըստ Դիոնիսեայ, որպէս բազում լապտեր ի մի տուն յամէն դիմաց լոյս արձակեն, ոչ գոյ որոշումն լուսոյն, այլ զանազանէ լապտերքն, սոյնպէս Երրորդութիւն. անձինք յատուկ, միութիւն<sup>1</sup> էութիւն մի, զի միով իւիք հպի աւրինակն ի ճշմարտութիւն։**

«Զի<sup>2</sup> ես՝ ի Յաւը իմում, եւ դուք՝ յիս» (Յովի. ԺԴ 20):

**Բանս այս մեկնեալ լինի կամ վասն ճանաչման նոցա, որք ի կենցաղոյս ճանապարհ ընթանան, եւ կամ ըստ նոցա, որք ի փառս կան, զի ի փառս կատարելագոյն լինի միութիւն աստուածային Երրորդութեան, ըստ որում Քրիստոս գոյ ի Հայր։ Եւ դարձեալ՝ խորհուրդ մարդեղութեան Քրիստոսի, որ շաղկապեալ է միութեամբ առ Եկեղեցի, եւ Եկեղեցի առ նա, եւ աստ կերպիւ ինչ յայտնի է հաւատով եւ կերպիւ ինչ ծածկեալ, իսկ անհաւատից ամենեւին աներեւոյթ։**

**Արդ, քանզի բազմաց գժուարին է իմանալ, թէ որպէս Հայր յՈրդի է, կամ Որդի՝ ի Հայր։ Նմին իրի զայս ճշմարտութիւնս կերպիւ ինչ ցուցանեմ. եւ նախ այսպէս, զի ուր եւ իցէ էութիւն Հաւը, անդ է եւ Հայր, զի էութիւն եւ բնութիւն Հաւը Հայր մի են։ Արդ, էութիւն Հաւը գոյ յՈրդի, զի մի է բնութիւն նոցա, որպէս ասէ. «Ես եւ Յայր իմ նի ենք» (Յովի. ԺԴ 30), ապա ուրեմն Հայր կայ յՈրդի։ Երկրորդ. սոյնպէս ցուցանի, զի ամենայն իր համեմատելով առ միւսն, կամ ի նա է, կամ արտաքոյ նորա։ Արդ, ոչ կարէ գոլ արտաքոյ նորա, զի իրն այն, որոց մինն արտաքոյ է միւսոյն, գոյութեամբ եւ բնութեամբ զանազանին։ Արդ, Հայր եւ Որդի մի են բնութեամբ, ապա ուրեմն մինն գոյ ի միւսն։ Երրորդ. զի աստուածային անձինքն անդրադարձութեամբ մինն ի միւսն կան եւ այս անդրադարձումս միայն պատշաճի աստուածային անձանցն եւ ոչ այլ արարածոց, զի այս անդրադարձութիւն խնդրէ միութիւն էութեան եւ զանազանութիւն անձանց։ Եւ այս գտանի միայն յԱստուած, եւ զի յԱստուած կայ միութիւն զանազան եւ կայ զանազանութիւն անշփոթ, վասն որոյ Աստուծոյ միայն յարմարի այս անդրադարձութիւն կատարեալ։**

<sup>1</sup> Բ բնութիւն

<sup>2</sup> Բ չիք

<sup>3</sup> Ը յանհաւատից

«Որ ունի զպատուիրանս իմ եւ պահէ զնոսա, նա է, որ սիրէ զիս» (Յովի. ԺԴ 21):

**Զգուշացուցանէ զնոսա, քանզի են ոմանք, որք ոչ ունկնդիր լինին պատուիրանին, եւ են ոմանք, որ թէպէտ լսեն եւ ի միտ առնուն, սակայն զնոյն գործով ոչ կատարեն, պատուիրէ ունակացուցանել յինքեանս զիւր սէրն, զի ասէ առաքեալ. «Զի ոչ, որ լսելիք աւրինացն են, արդարացեալ են, այլ առնելիքն արդարասցին» (հնմտ. Յովն. Բ 13):**

«Ասէ զնա Յուղա, ոչ Սկարիովտացին» (Յովի. ԺԴ 22):

**Սա Յակովբայն է Յուղայն փոքրկան, որ Նէրէոսն էր, որ անուանեցաւն Թագէոս:**

«Տէր, զի՞ եղեւ, զի մեզ յայտնելոց ես [զքեզ] եւ ոչ աշխարհի» (Յովի. ԺԴ 22):

**Ոմանք ասեն զայս Յուղայս ամենեւին հեղաբարոյ եւ խոնարհամիտ այր, յորժամ լսեաց ի Քրիստոսէ. «Աշխարհս ոչ տեսանիցէ զիս, բայց դուք տեսանիցեք» (Յովի. ԺԴ 19), գժուարացաւ ընդ այս, թէ՝ դու Աստուած ես, ասէ, եւ Որդի Աստուծոյ հաւատացաք զքեզ, զիա՞րդ է Հայրն քո, հասարակ ինամէ զամենեսեան, եւ դու զմեզ սիրես եւ զաշխարհս՝ ոչ: Զայս ասելով այնպէս համարէր ի միտս, թէ աշակերտքս ոչ են առաւել քան զհասարակաց մարդիկ, եւ յայտ անտի է, որ ասէ. «Զի՞ եղեւ մեզ, զի մեզ յայտնելոց ես», այսինքն՝ թէ զի՞նչ առաւել գործք բարի գործեցաք կամ աւելի առաքինութիւն արարաք քան զնոսա, բայց Ոսկիաբանն ասէ. «տե՛ս զանկատարութիւն աշակերտիս, զի<sup>1</sup> պարտ էր ասել՝ վա՛յ մեզ, զի մեկնելոց ես ի մէնջ, զայս թողեալ զաշխարհէ հարցանէր»:**

«Պատասխանի ետ Յիսուս. “Եթէ ոք սիրէ զիս, զբանն իմ պահեսցէ”» (տես Յովի. ԺԴ 23):

**Ասէ. թէ դուք այժմ զբանս իմ ընդունել էք, եւ աշխարհս տակաւին ոչ է ընկալեալ զբանս իմ, եւ թէ լինի ոք, որ ասասցէ, թէ՝ Տէ՛ր, զկամս քո արարաք եւ զբանս քո պահեցաք, քեզ գալ բնակել ի մեզ պատշաճ է, ապա Հաւր գալն յաղագս ո՞յր է, վասն որոյ յարէ ի նոյն. «Բանն իմ, զոր լսէք, ոչ է իմ, այլ Յաւրն, որ առաքեացն զիս» (Յովի. ԺԴ 24):**

«Զայս խաւսեցայ ընդ ձեզ մինչ առ ձեզ եմ, իսկ Մխիթարիչն, զոր առաքեսցէ Յայր» (Յովի. ԺԴ 25-26):

**Աստանաւր զերիս անձնաւորութիւնսն բացայայտէ. զայս խաւսեցայ զինքն զՈրդի, Մխիթարիչ՝ զՀոգին, եւ առաքող՝ զՀայր: Բայց**

<sup>1</sup> Ե զի եւ

այլ իմն խորագոյն բանս յայտնէ աստանաւր, քանզի որպէս ինքն ծնունդ գոլով ի Հաւըէ առաքեալ, սոյնպէս եւ զշոգին Սուլը բղխումն ի Հաւըէ, ասէ, առաքեալ: Բայց այն, թէ՝ յանուն իմ, ցուցանէ յայնոսիկ գալ հոգւոյն, որք քրիստոնեայք լինին եւ ի նա հաւատացեալ: Իսկ այն, թէ՝ ուսուցէ ձեզ զամենայն, ցուցանէ, թէ զՊրդւոյ տնաւրէնութեան խորհուրդն եւ զԱստուածութիւն նա կատարելապէս ուսուցէ ձեզ: Իսկ թէ՝ յիշեցուցէ ձեզ զամենայն, ասէ զոր ի ձեռն տրտմութեան եւ խոռվութեան զպատուէրս իմ մոռացեալ լինիք, նա վերստին յիշատակէ ի միտս ձեր, զի անջնջելի մնասցէ:

«Խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ» (Յովի. ԺԴ 27):

**Ոմանք ասեն, թէ խաղաղութիւն աստանաւր զշոգին ասէ, այլ ոմանք ասեն, թէ խաղաղութիւն զինքն ասէ, որ մահուամբն իւրով խաղաղութիւն արար մեզ եւ հաշտեցոյց զշայր ընդ բնութիւնս, եւ վկայ քեզ բանն աղաւթական, որ ասէ. «Խաղաղութիւն մեր եւ կեանք ի Հաւըէ առաքեցար, միածին Որդի»:**

Դարձեալ զայս Քրիստոս արար զկնի յարութեան, յորժամ երեւեցաւ, ասաց. «Խաղաղութիւն ընդ ձեզ» (Ղուկ. ԻԴ 36), եւ յայնժամ զաւուրս քառասուն նորա այցելութեամբն խաղաղեցան ի խոռվութենէն, որ վասն նորա չարչարանացն: Իսկ որ ասէ՝ տաց եւ թողում, այժմ անսուտ խոստմամբ, իսկ յետոյ՝ ներգործութեամբ: Երկրորդ. տաց՝ այժմ սկզբնարար եւ անկատար եւ յետոյ՝ կատարելապէս: Երրորդ. այժմ տաց՝ խաղաղութիւն ի մէջ հոգւոց եւ մարմնոցդ, զի մի՛ մեղանչիցէք, եւ յետոյ՝ տաց զանտարակոյս խաղաղութիւն, որ է արքայութիւն: Զորրորդ. զխաղաղութիւն իմ տաց, այսինքն՝ սէր եւ միաբան լինել ձեզ, որպէս ես առ Հայր եւ զհաճոյս նորա առնեմ հանապազ:

«Ոչ որպէս աշխարհս տայ, տամ ես ձեզ» (Յովի. ԺԴ 27):

**Սուտ եւ ընդունայն է խաղաղութիւն, զոր տայ աշխարհս, այսինքն՝ նախ խարէութեամբ, երկրորդն՝ չարութեամբ, երրորդն՝ նենգութեամբ, չորրորդն՝ կեղծաւորութեամբ: Եւ աւրինակաւ ծանուցից խարէութեամբ, որպէս յորժամ ականատ արկանես հաւուց կամ ձկանց, կամ երէոց ի վերայ որոգայթիցն կուտ ցանես եւ կամ այլ որ ինչ ի դէպ է եւ այնու զխաղաղութեան կերպարանք ցուցանես, եւ յորժամ ըմբռնի յորոգայթն, լինի խաղաղութիւն խոռվութեան: Իսկ չարութեամբ յորժամ ընդ ոք խաղաղութեան կերպարանաւք ծանաւթանաս, կամ ընդ կնոջ, կամ ընդ այլ ումեք, եւ ընդ նմա ի պղծութիւն եւ ի մեղս խառնակիս, որ խաղաղու-**

թիւն ի չարութիւն փոխի, իսկ նենգութեամբ յորժամ ընդ ումեք խեռես եւ չունիս կարողութիւն առնել ինչ նմա, յորժամ<sup>1</sup> հնարիս եւ նորա սպասաւոր կամ աշակերտ դառնաս եւ խաղաղութեան կերպարանաւք երեւեցնես, բայց նենգութիւն ի սրտիդ է եւ դիպող ժամաւ սպասես<sup>2</sup>, զի զքո քէնն առցես ի նմանէ եւ կամ այլոց մատնեսցես, զի նենգեսցեն, իսկ կեղծաւորութեամբն, որպէս հարք զորդի կամ տեարք զծառայս կամ եղբայր զեղբայր սիրիցէ, բայց յորժամ տեսանիցէ, թէ փառացն կամ պատուոյն պակասութիւն է, անդէն ջանայ սպանանել զնա, իսկ Տէրն խաղաղութիւն ընդդիմակէ<sup>3</sup> սոցա, վասն որոյ ասէ. «Ոչ որպէս աշխարհս տայ, տան ես ձեզ»:

Բայց խնդրի երիս կարգ խաղաղութեան. նախ՝ առ ինքն, զի մի գործեսցէ զայն ինչ, վասն որոյ դատիցի ի խղճմտանաց: Երկրորդ. առ ընկերն, այսինքն՝ կցորդութեամբ սիրոյն զամենայն ինչ անձինն ընկերին կամել: Երրորդ. առ Աստուած, այսինքն՝ զի մի անցցէ զպատուիրանաւ նորա, յորոյ պահելն գոյ խաղաղութիւն, եւ ոչ<sup>4</sup> պահելն՝ ոչ: Իսկ աշխարհիս խաղաղութիւն մահ բերէ, այն է, որ ասէ. «Գիրացաւ ստուարացաւ Յակոբ եւ եթող զՏէր Աստուած» (հնմտ. Բ Օր ԼԲ 15), յաղագս որոյ հուր տեղեաց ի Սոլոմ:

«Մի' խօռվեսցին սիրուր ձեր, եւ մի' զանգիտեսցեն» (Յովի. ԺԴ 27):

Յորժամ զխաչէն ճառեաց եւ զմեկնելոյն ի նոցանէ, տրտմութիւն անկաւ ի նոսա, վասն որոյ չորս ազգ մխիթարութիւն յառաջիկայդ դնէ. նախ՝ եթէ կամաւ եմ տալոց զանձն ի չարչարանս: Երկրորդ. գերագոյն ոմն գնամ առ մեծն Հայր, եւ ուր եսն երթամ եւ զձեզ անդ եմ տանելոց, եւ այս մխիթարութիւն մեծ էր: Երրորդ. զի ես, որ չարչարելոց եմ, ոչ թէ վասն պարտուց իմիք կամ յանձանց չարչարիմ, այլ անպարտ եմ, ապա ուրեմն շահ եւ աւգտութիւն սորա վասն ձեր է: Զորրորդ. զի կամաւք Հաւրն եմ տալոց զանձն իմ, վասն զի կամք Հաւր իմոյ այս էր, զի ի ձեռն իմոյ մահուանս փրկութիւն ձեզ լիցի:

«Զի Յայր իմ մեծ է քան զիս» (Յովի. ԺԴ 28):

Նախ այս է, զի ըստ նոցա կարծեացն զիջանէ, զի նոքա զՀայր մեծ կարծէին, քան զնա: Երկրորդ. զի ըստ պատճառին մեծ ասի Հայր քան զՈրդի, թէպէտ եւ ոչ բնութեամբ: Երրորդ. զի յորժամ կամիցիս հարցանել, թէ ո՞րքան մեծ է Հայր, զորչափութիւն ցուցանէ, թէ մեծ է քան զիս եւ ոչ այլ առաւել:

<sup>1</sup> Ը յայնժամ

<sup>2</sup> Ե չիք բայց նենգութիւն սպասես

<sup>3</sup> Ե ընդդիմակացէ

<sup>4</sup> Ե յոչ

«Ոչ եւս այլ շատ խաւսեցայց ընդ ձեզ» (Յովի. ԺԴ 30):

**Այսինքն՝ թէ որպէս այժմ բազումս վարդապետել եւ ուսուցանել զձեղ յետ յարութեան իմոյ ոչ այլ այսպիսի առնեմ:**

«Գայ իշխան աշխարհիս» (Յովի. ԺԴ 30):

**Զսատանայ ասէ, բայց ոչ եթէ բնութեամբ է նա իշխան աշխարհի, այլ այնոցիկ միայն իշխան է եւ իշխէ, որք չարքն են եւ նորա կամարարքն, եւ յայտ է, զի ոչ տարերացդ անգամ իշխէ, զի թէ ունէր իշխանութիւն, արգելոյր զանգրեւս եւ զբոյսս, զի ի հարկէ մարդիկ հնազանդին նմա:**

«Յիս ինչ ոչ գտանէ» (Յովի. ԺԴ 30):

**Յիւրոցն ասէ չարեացն՝ յիս ինչ ոչ գտանէ, եւ այս յիւրաւի է, զի ամենայն մարդիկ կարաց մասն ինչ մեղաց գտանել, թէպէտ ոչ յամենեսեան մահու չափն, սակայն ի ներելի եւ ի փոշէտեսակ մեղացն ոչ ոք կարաց զերծանիլ, իսկ ի Քրիստոս ոչ գտաւ ամենեւին մեղս, որպէս ասէ Գիր, թէ՝ «Ոչ արար մեղս եւ ոչ գտաւ նենդութիւն ի բերան նորա» (հմնտ. Եսայի ԾԳ 9, Ա Պետր. Բ 22):**

«Աւն արիք զնասցուք աստի» (Յովի. ԺԴ 31):

**«Աւն» բառդ աստանաւը զտեղի նախդրի ունի, բայց թէ զինչ է՝ արիք զնասցուք, աշակերտքն զարհուրեալք էին յահէ<sup>1</sup> հրէիցն եւ հանապազ զակն առ դուրս տանն ունէին, համարէին ի միտ, թէ ահա հասին ի վերայ մեր հրէայքն<sup>2</sup>: Եւ զպատուիրանքն Տեառն վասն ահին եւ երկիւղին ոչ կարէին ստուգապէս ի միտ առնուլ, վասն որոյ Տէրն կամի զնոսա յապահովս առնել, զի մի երկիցեն, ասէ՝ արիք զնասցուք, եւ յորժամ հրամայեաց, վաղվաղակի յարեան, բայց թէ զայսքան վարդապետութիւնս, որ աստից մինչեւ յայն տեղին, որ ասէ: Զայս իրեւ ասաց Յիսուս, ել աշակերտաւքն հանդերձ յայնկոյս ձորոյն կեղրոնի:**

**Ո՞ւր ասաց, ոմանք ասեն, թէ յորժամ կանգնեցաւ զայսչափ բանս ի տեղիքն ի կանգման ասաց եւ ապա սկսան գնալ, եւ ոմանք ասեն, թէ ի ճանապարհն, որ երթային<sup>3</sup>, ի միում տեղւոջ կանգնեցաւ եւ զայս ասաց: Բայց դարձեալ յայլ միտս ասեն վարդապետք, թէ Տէրն փութացուցանել զաշակերտսն նշանակէր, թէ յայս մեր կեղալից եւ ցաւալից կենացս փութասցուք ի ձեռն չարչարանաց եւ զանազան առաքինութեանց գնալ յանմահ եւ յանշխատ կեանսն:**

<sup>1</sup> Յ Յ ի յահէ

<sup>2</sup> Կ հասին հրէայքն ի վերայ

<sup>3</sup> Յ Երթայ

## Գլուխ ԺԵ

«Ես եմ որթն ճշմարիտ» (Յովի. ԺԵ 1):

**Յորժամ որթ լսես, երիս իրս յայտնէ. նախ՝ զուռն, երկրորդ՝ զպտուղն տերեւովն եւ երրորդ՝ զմշակն:**

Իսկ թէ ընդէ՞ր որթ անուանէ զինքն, այս է, զի որթոյն չորս յատկութիւն կայ. նախ՝ զի կենդանական ունի զաւրութիւն, երկրորդ՝ զի աճողութիւն ունի, երրորդ՝ զի պտուղ բերէ, չորրորդ՝ զի տերեւ բերէ, որով ի տաւթոյ զպտուղն պահէ եւ ի ցըտոյ: Այսպէս եւ Քրիստոս կենդանութիւն է ամենայն կենդանեաց:

Երկրորդ. զի յորժամ սոքա ի Քրիստոս միանան սիրով եւ հաւատով, բազումս կարող են դարձուցանել յաստուածպաշտութիւն եւ զփոքը հաւտն Քրիստոսի աճեցուցանեն: Երրորդ. զի բարեպաշտութեան պտուղն ի Քրիստոս միանալով ի հանդերձեալ կեանս պտղաբերեն: Չորրորդ. զի խնամքն Աստուծոյ ի վերայ հաւատացելոց իբրեւ գտերեւս ի վերայ պտղոց հանապազ հովանի է, զի յամենայն վնասակար աւդոց չարութեանց պահէ զնոսա:

«Եւ Հայր իմ նշակ է» (Յովի. ԺԵ 1):

Մշակ ասի Հայր եւ բոլոր երրորդութիւն, զի լրումն չնորհաց եւ ճշմարտութեան եհեղ եւ տնկեաց ի մարդկութիւն Քրիստոսի, բայց գիտելի է, զի մշակն ոչ աշխատի եւ յաւտէ զարմատն, այլ զուռն, նոյնպէս եւ Հայր ոչ աշխատի եւ հոգայ վասն արմատոյն, որ է Քրիստոս, այլ զուռն կամի սրբել եւ խնամել, որ են հաւատացեալք:

«Ամենայն ուռ, որ յիս է եւ ոչ [բերէ պտուղ]» (Յովի. ԺԵ 2):

Զորս ազգ մխիթարութիւն դնէ աստանաւը յառաջիկայդ առաքելոցն. նախ՝ թէ յիս հաստատուն լինիք հաւատով, նա պտուղ յոյժ բերելոց էք: Երկրորդ. զի զերկիւղն եւ զխորշումն պահապան դնէ նոցա, այսինքն՝ թէ ոք հատանի յինէն որպէս ուռ յորթոյ, այնու հետեւ<sup>1</sup> պտղաբերել, այլ հրոյ ճարակ լինի, զգուշացուցանէ զնոսա այսու երկիւղիւս, զի յորժամ նեղութիւն գայցէ, մի' վաղվաղակի գայթակղիցին: Երրորդ. զի զոր ինչ խնդրէք յանուն իմ, առնուք (տես Յովի. ԺԵ 23): Չորրորդ. զի Հայր իմ փառաւորի ի ձեզ պտղաբերելն:

«Այս է պատուելո իմ, զի սիրեսջի՞ք» (Յովի. ԺԵ 12):

Զի է, զի այսքան զսիրոյս բան յեղյեղէ, մի՞թէ ոչ ունի այլ պատուիրան: Այո՛, սա միայն է պատուիրան, թէպէտ բազում են,

<sup>1</sup> Երկու ձեռագրերում էլ պակասում է մեկ բառ:

**սակայն ամենեքեան ի սա բովանդակին, որպէս առաքեալ ասէ.**  
**«Լրումն աւրինացն սէրն է»** (Յոռմ. ԺԳ 10):

«Դուք բարեկամք էք իմ» (Յովհ. ԺԵ 14):

**Զիա՞րդ բարեկամս ասէ զնոսա, քանզի առաքեալքն ամենայն ուրեք ի թուղթսն իւրեանց ծառայս գրէին զինքեանս Քրիստոսի, եւ զայն գովութիւն եւ պատիւ մեծ համարէին ծառայս Քրիստոսի անուանիլ:** Այս է պատճառն, զի որովհետեւ Բանն եկն միացաւ ի մարմնի, այնուհետեւ ի ծառայութենէ մեղաց ազատեցաք, եւ այժմ ոչ եւս կոչիմք ծառայս, այլ բարեկամս, ըստ որում ինքն ասաց. «Սեծ եւս քան զայս սէր ոչ ոք ունիցի, թէ զանձն իւր դիցէ<sup>1</sup> ի վերայ բարեկամաց իւրոց» (Յովհ. ԺԵ 13), եւ ինքն եղ զանձն իւր<sup>2</sup> ի վերայ մեր:

**Բայց թէ առաքեալքն ընդէ՞ր ծառայս անուանէին զինքեանս, յորժամ ի ծառայութենէ մեղաց ազատեալ եմք. նախ՝ յաղագս այսորիկ, զի որպէս ծառայն զհնազանդութեան ունի զկարդ, զի զորինչ Տէրն կամի, զնոյն ի հարկէ առնէ, սոյնպէս եւ առաքեալքն ամենայն ուրեք զհնազանդութեան կերպարանս ունէին<sup>3</sup>, զի առանց կամացն Քրիստոսի ոչ ուրեք ընթանային եւ կամ բան առանց նորա խաւսէին, այլ զամենայն յանուն նորա գործէին եւ ուսուցանէին: Երկրորդ. զի որպէս ծառայն գնով գնեալ է եւ վասն գնոյն իւր ի հարկէ ծառայ կոչի, սոյնպէս եւ մեք պատուական արեամբն Քրիստոսի գնեալ եմք եւ ծառայ եմք նորա, որպէս առաքեալն Պետրոս ասէ, թէ. «Գիտասջի՛ք, զի ոչ ապականացուարծաթեղինաւք եւ ոսկեղինաւք փրկեցարուք ի ձերոց ունայնութեան, այլ պատուական արեամբն Քրիստոսի» (Ա Պետր. Ա 18):**

«Զի ծառայն ոչ զիտէ զինչ գործէ տէրն» (Յովհ. ԺԵ 15):

**Ոչ թէ ոչ գիտէ ծառայն, զոր Տէրն գործէ, այլ ոչ կարէ գործակից լինել, վասն որոյ Տէրն զնոսա բարեկամս անուանէ եւ գործակից իւր առնէ: Եւ ո՞ր է գործն այն, այսինքն՝ զի զոր Տէրն սքանչելիս եւ նշանս եւ արուեստս արար, զնոյն կարողութիւն եւ նոցա շնորհեաց, զի արասցեն:**

«Եթէ աշխարհ զձեզ ատեայ, գիտասջի՛ք, զի նախ զիս ատեաց» (Յովհ. ԺԵ 18):

**Զգացուցանէ նոցա յառաջագոյն, թէ գալոց է ի վերայ ձեր նեղութիւն, բայց դուք մի՛ յուսահատ լինեք, զի վասն իմ ատեն**

<sup>1</sup> Կ դնէ

<sup>2</sup> Ե չիք

<sup>3</sup> Ե ցուցանէին

**զձեզ, եւ այս նոցա միսիթարութիւն մեծ է Քրիստոսի ատելակից եւ չարչարակից լինել:**

«Աշխարհ զիւսն սիրել արդեաւք» (Յովի. ԺԵ 19):

**Ասէ, թէ դուք չէք նման նոցա չար եւ մեղսասէր եւ յանցաւոր, այլ յանդիմանիչք էք նոցա եւ կշտամբիչք, վասն այն ատեն զձեզ, զի թէ իբրեւ զնոսա էիք, ոչ երբէք ատէին զձեզ, բայց այս տարակուսանք է, զոր ասէ Տէրն առ աշակերտսն, թէ յաղագս այնորիկ ատէ զձեզ աշխարհ, զի չէք իբրեւ զնոսա, այլ սուրբ էք եւ գերագոյն եւ երկնայինք, քանզի եւ չարքն եւս ատեն զմիմեանս. գողք՝ զգողս, եւ ագահք՝ զագահս, նաեւ իշխանդ եւս ինքեանք անիրաւք եւ զրկողք, սակայն զգողս եւ զաւազակս սպանանեն: Եւ ապա զինչ է, որ ասէ Տէրն. «Կասն այնորիկ ատէ զձեզ աշխարհ» (Յովի. ԺԵ 19), զի չէք յաշխարհէ: Այս է, զի ամենայն մարդ թէպէտ չար է, սակայն առանց բարութեան ոչ է, զի խիղճ մտացն, որ ի նմայն հաստատեալ է յԱրարչէն, իբրեւ զդատաւոր է կարգեալ ի բնութիւնս, եւ յորժամ մարդն մեղանչէ, թէպէտ կամաւքն ի չարն խոտորեալ է, սակայն բնութիւն, որ յԱրարչէն բարի է ստեղծեալ, ընդ գտանէ զնա, եւ այս բարիս է, որ տայ ատել մեղաւորաց զմեղաւորս եւ չարացն՝ զչարս:**

«Յիշեցէք զբանն, զոր ասացի, թէ ոչ է ծառայ մեծ» (տե՛ս Յովի. ԺԵ 20):

**Միսիթարէ զնոսա, թէ յանուն իմ տանջիցիք եւ ատիցիք, զի թէ Քրիստոսի չարչարակից եւ ատելակից լիցին, մեծ պատիւ է նոցա, բայց թէ զի՞նչ է, որ վերագոյն ասաց Տէրն, թէ ոչ կոչեցից զձեզ ծառայս, այլ բարեկամս, եւ այժմ ծառայս կոչէ, մի՞թէ այսպիսի անվայելուչ բան վայել է նմա, որ երբեմն այնպէս ասէ եւ երբեմն այսպէս, բայց այս է միտք բանիս, զի ծառայութիւնս զանազանէ, այսինքն՝ է ազգ մի, որ ընդ երկիւղիւ ծառայութեամբ է, եւ է, որ սիրով եւ հնագանդութեամբ ի ծառայութեան են: Այն, որ ասաց՝ ոչ կոչեցից զձեզ ծառայս, զմեղացն<sup>1</sup> զծառայութիւն ասէ, որ երկիւղիւն է, զի անտի ազատեաց, եւ այժմ, որ ծառայս ասէ զսիրով եւ զհնազանդութեամբ ծառայութիւն ասէ:**

«Բայց յորժան եկեսցէ միսիթարիչն, զոր ես առաքեցից ձեզ ի Յաւրէ» (Յովի. ԺԵ 26):

**Զայն, զոր վերագոյն աղաչել ասաց, այժմ առաքեցից ասէ, իսկ ես ասելովն զիւր պատիւն յայտնեալ եւ ի Յաւրէ ասելն ցուցանէ, թէ որպէս ես ի Հաւրէ եմ ծնունդ, սոյնպէս եւ նա ի Հաւրէ է բղխումն, որպէս ասէ. «Յոգին, որ ի Յաւրէ ելանէ» (հմնտ. Յովի. ԺԵ 26), ոչ ասաց, թէ ի Հաւրէ ելեալն է, այլ թէ՝ ելանէ, որ միշտ ելումն եւ**

<sup>1</sup> Ե եւ զմեղացն

միշտ բղխումն եւ ոչ երբէք հատանի ի նմանէ: Արդ, ո՞ւր առանձնութիւն բնութեան, ապա ուրեմն յամաւթ լիցի Արիոս, որ ըստ անձանց եւ բնութիւնս զանազան ասաց, քանզի Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյ մի է Աստուածութիւն, էութիւն, բնութիւն, կամք եւ ներգործութիւն: Եւ որպէս բնութեամբն, էութեամբն, կամաւքն անբաժանելի են Հայր եւ Որդի եւ Հոգին, սոյնպէս եւ առանձնաւորութեամբքն անխառն եւ անշփոթելի են, եւ այս է պայման անբաւութեան եւ անհասութեան, երրորդական անձնաւորութեան:

«ԶՅոգին ճշմարտութեան, որ ի Յաւրէ Ելանէ» (Յովի. ԺԵ 26):

Աստի ցուցանեմք բազում կերպիւ, զի Հոգին Սուրբ միայն ի Հաւրէ բղխումն եւ ոչ յՈրդւոյ. նախ՝ զի ոչ է պարտ Բանիս Աստուծոյ ստել, զոր ասէ. «Ի Յաւրէ Ելանէ», եւ ոչ յիշէ անդ Որդի, զի թէ էր եւ յիշէր եւս, վասն որոյ ասէ. «Երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք իմ մի՛ անցցեն» (Մատթ. ԻՂ 35):

Երկրորդ. զի ի կանոն երիս սուրբ ժողովոցն բաւականաբար տուեալ է ի դաւանութիւն սուրբ հաւատոյն զՀոգին Սուրբ միայն ի Հաւրէ հաւատալ եւ ոչ՝ յՈրդւոյ, այլ եւ կապանք եւս եղեալ է, որք այլապէս դաւանին, քան զայս:

Երրորդ. սոյնապէս, զի բղխումն Հոգւոյն Սրբոյ է ելումն: Արդ, ելումն է շարժումն ի միոյն ի միւսն, արդ, եթէ Հոգին Սուրբ ելանէ յՈրդւոյ, պարտ է, զի ելցէ ի Հայր, կամ ի միւս անձն յաւիտենականապէս, զոր ոչ ելանէ յՈրդւոյ ի Հայր, զի ոչ ունի Հայր իր ինչ յՈրդւոյ եւ ոչ ի միւս անձն, զի ոչ գոյ միւս անձն:

Չորրորդ. զի Հոգին Սուրբ ելանէ իբրեւ զարտաշնչեալ եւ բղխեալ, եւ արտաշնչումն ոչ ելանէ ի բանէ, ապա ուրեմն եւ Հոգին Սուրբ ոչ ելանէ յՈրդւոյ:

Հինգերորդ. զի ըստ ամենեցունց Հոգին Սուրբ ելանէ իբր զշաղկապ եւ միաւորիչ: Արդ, շաղկապ եւ միաւորիչ իբր զմէջէ եւ ոչ որպէս եզր, արդ, եթէ ելանէ ի Հաւրէ եւ յՈրդւոյ, լինի իբրեւ եզր եւ երրորդ եւ ոչ իբրեւ միջին, ապա ուրեմն ոչ ելանէ ի Հաւրէ եւ յՈրդւոյ, այլ ի Հաւրէ յՈրդի:

Վեցերորդ. զի Հոգին Սուրբ եթէ ի Հաւրէ եւ յՈրդւոյ ելանէ, կամ կատարեալ ելանէ, կամ անկատար: Արդ, եթէ անկատար ելանէ երկոցունցն, ապա ուրեմն երկուքն անկատար են ի բղխողութիւն, եւ անկատար իր յԱստուած ոչ գոյ, ապա ուրեմն ի Հաւրէ ելանէ միայն:

Եւթներորդ. զի ասէ Աստուածաբան, զի Որդի եւ Հոգի Սուրբ են իբր զկրկին շառաւեղ<sup>1</sup> ի Հաւրէ, ապա ուրեմն ոչ ելանէ կրկին շառաւեղ մին ի միւսոյ, այլ երկուքն ի պատճառէն:

Ութներորդ. զի Դամասկացին ասէ յայտնապէս. «ԶՀոգին Սուրբ ի Հաւրէ ասեմք եւ զնա Հոգի Հաւր անուանեմք»: Արդ, զՀոգին Սուրբ ի յՈրդւոյ ոչ ասեմք, սակայն զնա Հոգի Որդւոյ անուանեմք, վասն զի բնութենակից է Որդւոյ եւ հաւասարակից:

Իններորդ. զի Հոգին ելանէ իբր ջերմութիւն ի հրոյ, արդ, տեսանեմք, զի ջերմութիւն ոչ ելանէ ի լուսոյ, այլ ի հրոյ, ապա ուրեմն Հոգին Սուրբ ելանէ ի Հաւրէ միայն եւ ոչ՝ յՈրդւոյ:

Տասներորդ. զի ամենայն, որ ելանէ, ըստ այնմ, որ երկուք են, բաղադրեալք է եւ կամ յերկու սկզբանց է, արդ, Հոգին Սուրբ պարզ է եւ ոչ բաղադրեալ, ապա ուրեմն ոչ ելանէ յերկուցն, այլ ի միոյն, այսինքն՝ ի Հաւրէ, եւ զի մի է սկիզբն երկոցունցն՝ Որդւոյ եւ Հոգւոյ Հայր, վասն որոյ ոչ կարէ Որդի երբեմն Հայր լինել եւ երբեմն Որդի: Յայսցանէ յայտ է, զի Հոգին Սուրբ միայն ի Հաւրէ ելանէ եւ ոչ՝ յՈրդւոյ, եւ մի՛ հաւատար անդէպ բարբաջանացն երկաբնակացն, զի ոչ գոյ վկայութիւն յաստուածային Գրոց, որպէս այս, թէ՝ «Յոգին ճշնարտութեան, որ ի Յաւրէ ելանէ» (տե՛ս Յովի. ժԵ 26):

<sup>1</sup> Ե շառաւիղ

## Գլուխ ԺԶ

«Ի ժողովրդոց իւրեանց հանիցեն զձեզ» (Յովի. ԺԶ 2):

**Խորհուրդ արարին հրէայքն եւ ուխտ եղին, թէ ոք խոստովանեսցի զնա Քրիստոս, ի բաց կացցէ ի ժողովրդենէն, եւ ի բաց կալն այս էր, զի զինչքն եւ զհայրենիքն առնուին եւ ի ժողովրդենէն ի բաց մերժին:** Եւ ոչ զայս միայն, այլ եւ զայս եւս առնէին, զի ոչ ողջոյն տային եւ ոչ ի տունս նորա երթային եւ ոչ ընդ նմա խաւսէին: Զայս պատուիրէ Տէրն յառաջագոյն առաքելոցն, այլ եւ զայս եւս զգացուցանէ, թէ ոչ միայն զայս առնեն ընդ ձեզ, այլ գայ ժամանակ, զի որք սպանանեն զձեզ, այնպէս բարեպաշտութիւն համարին իւրեանց, որպէս թէ<sup>1</sup> պատարագ մատուցանել Աստուծոյ, բայց դուք մի' զանդիտէք, այլ հաստատուն կացէք ի սէր իմ:

«Զայս ի սկզբանէ ոչ ասացի ձեզ, քանզի ընդ ձեզ էի» (Յովի. ԺԶ 5):

**Նախ վասն այն ոչ ասացի, զի գեռեւս անկատարք էիք:** Երկրորդ. զի որքան ընդ ձեզ էի, ամենայն նեղութիւն եւ տառապանք յիս հասանէր, եւ դուք անվիշտ մնայիք: Երրորդ. զի թէպէտ եւ հասանէր ձեզ նեղութիւն, սակայն ես ընդ ձեզ էի եւ միսիթարէի: Բայց թէ զիա՞րդ ասէ, թէ՝ ի սկզբանէ ոչ ասացի, քանզի քան զայս պատուէրս յառաջ զայս ասացեալ էր, թէ մատնեսցեն զձեզ ի<sup>2</sup> նեղութիւնս եւ տանիցեն առաջի դատաւորաց: Այս է, զի այս, որ այժմս պատուիրէ, այլ առաւել զկծեցուցանէ եւ մորմոքէ զնոսա, զի ասէ. «Որ սպանանեն զձեզ, համարին պաշտաննատուցանել Աստուծոյ» (հմնտ. Յովի. ԺԶ 2):

«Բայց արդ երթամ ես առ առարիշն իմ, եւ ոչ ոք ի ձէնց հարցանէ ցիս՝ թէ յո՞վ երթաս» (Յովի. ԺԶ 5):

**Եւ թովմաս ասէր.** «Տէ՛ր, ոչ գիտեմք՝ յո՞վ երթաս» (Յովի. ԺԴ 5), **ո՞չ ապաքէն յառաջագոյն Պետրոս հարցանէր,** թէ՝ «Տէ՛ր, յո՞վ երթաս» (Յովի. ԺԳ 36), **եւ թովմաս ասէր.** «Տէ՛ր, ոչ գիտեմք յո՞վ երթաս եւ զիա՞րդ զճանապարին կարասցուք [գիտել]» (Յովի. ԺԴ 5), **եւ Փիլիպպոս ասէր.** «Ցոյց մեզ զշայր» (Յովի. ԺԴ 8), **եւ այժմ ասէ Տէրն,** թէ՝ «Ոչ ոք ի ձէնց հարցանէ ցիս, թէ յո՞վ երթաս» (Յովի. ԺԶ 5): **Այս է,** զի յորժամ զայսպիսի խստագոյն եւ զկծանաց բանս խաւսեցաւ առ նոսա Տէրն, այնպէս<sup>3</sup> յիմարեալք եւ ապշեալք եղեն ի տրտմութենէն, զի ոչ երբէք կարացին զմտաւ ածել հարցանել, թէ՝ յո՞վ երթաս, զայս ասէր. «Ոչ ոք ի ձէնց հարցանէ ցիս»:

<sup>1</sup> Բ թէ որպէս

<sup>2</sup> Ընդհանուր է

<sup>3</sup> Կ այնպիսի

«Եւ նա եկեալ յանդիմանեսցէ զաշխարհ» (Յովի. ԺԶ 8):

**Զի՞նչ է յանդիմանելն.** նախ այս է, զի յորժամ կամիցի ոք, որ զմարդ սուտ առնէ, խիստ բանիւք բարբառի ընդ նմա, զի այնու յանդիմանեսցէ զնա առաջի մարդկան եւ սուտ առնէ: Երկրորդ. յանդիմանել ասի, որ զծածկեալ բանս բառով եւ մտաւք վերլուծանէ եւ յանդիման կացուցանէ: Իսկ այն, թէ զաշխարհ զաշխարհասէրսն, մանաւանդ զհրէայսն որք ոչ հաւատային զնա Աստուած:

«Վասն մեղաց» (Յովի. ԺԶ 9):

**Զի՞նչ է մեղքն.** ամենայն որ արտաքոյ բնական եւ գրաւորական<sup>1</sup> աւրինացն են ընթացք եւ չարժմունք, նոքա մեղք են:

եւ զի՞նչ է, որ ասէ.

«Զի ոչ հաւատան յիս» (Յովի. ԺԶ 9):

**Ամենայն բարեգործութեան հիմն** եւ արմատ հաւատոն է, զի յորժամ հաւատաս, թէ Աստուած կայ եւ բարեգործացն զբարիս հատուցանէ եւ չարագործացն՝ զտանջանս, յայնժամ ոչ երբէք գործես զչարն, այլ խորչիս ի չարէն եւ առ բարին ընթանաս, յաղագս այսորիկ ասէ, թէ յանդիմանեսցէ վասն մեղաց, զի ոչ հաւատան յիս:

«Վասն արդարութեան, զի առ Յայր [իմ] երթամ» (Յովի. ԺԶ 10):

**Զի՞նչ է արդարութիւն.** արդարութիւն է հաւասարաբաշխութիւն, ըստ որում առաքեալ ասէ. «Արդ, հատուցէք ամենեցուն զպարտս, որում զհարկու զհարկն» (Յոն. ԺԳ 7), եւ այն ի սոյն միտս, վասն որոյ Տէրն ասէ. «Վասն արդարութեան, զի առ Յայր [իմ] երթամ, եւ ոչ եւս տեսանեք զիս»:

Նախ յաղագս այսորիկ ասէ արդարութիւն զգնալն իւր, զի յառաջագոյն ի ծոց Հաւը էր եւ վասն մերոյ փրկութեան ի ծառայի կերպարանս եղեալ փրկեաց զմեզ: Եւ դարձեալ անդրէն առ Հայր երթայ, որպէս առաքեալ ասէ, թէ՝ «Որ ի կերպարանս Աստուծոյ էր<sup>2</sup>, ոչ ինչ յափշտակութիւն համարեցաւ զլինելն հաւասար Աստուծոյ, այլ զանձն ունայնացոյց՝ զկերպարանս ծառայի առեալ» (Փիլիպ. Բ 7):

Երկրորդ. զի որպէս սկզբնաչարն զմարմինս աւձին ծածկոյթ զգեցաւ եւ նովաւ պատրեաց<sup>3</sup> զնախահայրն, սոյնպէս եւ եւ զմարմինն Աղամայ զգեցայ եւ նովաւ յաղթեցի բելիարայ:

Երրորդ. զի զմարդն, զոր յանմահութիւն եւ յանապականութիւն ստեղծի, սատանայ յապականութիւն քարշեաց եւ կործա-

<sup>1</sup> Ը գրաւական

<sup>2</sup> Աստվածաշնչում՝ «է»

<sup>3</sup> Յ պարտեաց

**Նեաց:** Դաձեալ՝ եկի վերստին ի յանմահութիւն փոխել եւ յանապականութիւն:

**Զորրորդ.** զի զիս հակառակ Աստուծոյ կարծէիք, յորժամ եկեսցէ Հոգին, նա յայտնապէս ծանուսցէ զիս արդարութեամբ եկեալ Աստուած եւ Որդի Աստուծոյ եւ ոչ հակառակ Աստուծոյ:

**Հինգերորդ.** զի ոչ տեսանիցեն զիս ի հանդերձեալ կեանսն այնոքիկ, որք աստ սոսկ մարդ կարծեցին եւ ոչ հաւատացին յիս:

Բայց աստ տարակուսելի է, թէ զիա՞րդ ասէ, թէ ոչ տեսանիցեն զիս ի հանդերձեալն, զի ասէ Գիրն, թէ՝ «Յայեսցին ի նա, յոր խոցեցինն» (Յովի. ԺԹ 37), քանզի թէ հային ի նա եւ տեսանեն զերեսս նորա, որ նոյն ինքն է երանութիւն Քրիստոս, ոչ կարէ ի նոսսա մերձենալ տանջանք, այլ այս է, որ այնոքիկ, որք աստ սոսկ մարդ տեսին զնա եւ ոչ հաւատացին յԱստուածութիւն նորա, նոյնպէս եւ ի հանդերձեալն զփառս Աստուածութեան նորա ոչ կարեն տեսանել, այլ զնոյն սոսկ մարմինն, զոր աստ տեսին, զնոյն երեւեցուցանէ նոցա եւ զտիգին խոցուածն, յոր հայեցեալ տեսանեն եւ գիտեն, զի աստուածասպանք են:

«Կասն դատաստանի, զի իշխան աշխարհիս [այսորիկ] դատապարտեալ է» (Յովի. ԺԹ 11):

Իշխան աշխարհի զսատանայ ասէ, զի յորժամ գայ Հոգին ճշմարտութեան, այնպէս կարողացուցանէ զձեզ, զի ոչ եւս կարէ սատանայ գամագիւտ լինել ի վերայ ձեր: Եւ դարձեալ, զի յամենայն աշխարհական ցանկութեանց եւ ի հեշտութեանց մարմնոյ սրբեսցէ զձեզ:

«Իշխան աշխարհիս [այսորիկ] դատապարտեալ է» (Յովի. ԺԹ 11):

**Զի յորժամ տեսանիցէ սատանայ յայտնապէս Աստուած գոյ զնա, յայնժամ ծանիցէ, թէ սուտ է ինքն եւ կամարարքն իւր, որ զնա որդի հիւսան եւ սամարացի կոչէին եւ կամէին զնա սպանանել՝ համարելով, թէ մահացուցանեն:**

«Եւս բազում ինչ ունին ասել ձեզ, այլ ոչ կարէք հանդարտել» (Յովի. ԺԹ 12):

**Զանկատարութիւն նոցա ասէ, որ ոչ ունէին այնպիսի միտս, զի զոր ինչ խաւսեսցի Տէրն, կատարեսցեն իմանալ առ ժամայն, զի յերկիւղէն պակուցեալք էին, յաղագս որոյ Տէրն ըստ նոցա կարծեացն զիջանէ եւ զկատարեալ գիտութեան տալն ի գալ Հոգւոյն ձգէ, ապա ուրեմն զամենայն նուաստագոյնսն, զոր արար Տէրն յաղագս մարդկան տկարութեան արար, այլ ոչ յաղագս զբնութիւնսն յատկացուցանելոյ:**

Եւ ապա յիրաւի զրկեալք են հերձուածողքն ի չորիցս յայս-  
ցանէ, զոր ասելոց եմք. նախ՝ ի Քրիստոսէ, զի ոչ հաւատան  
զբնութիւնս ի նմա միացեալ եւ տակաւին ի ծառայութիւն սա-  
տանայի են: Երկրորդ. յաւետարանական վարդապետութենէն, զի  
սուտ առնեն: Երրորդ. ի Հոգւոյն Սրբոյ շնորհացն, զի ոչ հաւա-  
տացին յՈրդին: Չորրորդ. յառաքելական քարոզութենէն, զի ոչ  
հաւատան վկայութեանց նոցա, այլ բաժանեն յերկուս կամս եւ  
յերկուս բնութիւնս զՈրդի, որով ինքեանք բաժանեսցին եւ ընդ  
մէջ կտրեսցին ի շնորհաց Հոգւոյն Սրբոյ:

«Զի ոչ եթէ յանձնէ ինչ խաւսեսցի, այլ զոր լսիցէ, խաւսեսցի» (Յովհ. ԺԶ  
13):

Յորժամ ասաց առ աշակերտան, թէ յետ համբառնալոյն իմոյ  
զՀոգին առաքեցից, զի նա եկեալ ուսուսցէ ձեզ զճմարտութիւն  
եւ տացէ ձեզ կարողութիւն սքանչելիս առնելոյ եւ հեղցէ ի ձեզ  
զշնորհս մարդարէութեան զյառաջիկայ լինելոցն գիտել ձեզ, զի  
Քրիստոս այնպէս կարողութիւն ոչ ետ առաքելոցն կատարել եւ  
մեծամեծ սքանչելիս առնել եւ զառաջիկայ իրաց գիտել: Եւ ի վե-  
րայ այսր բանի թերացան աշակերտքն, թէ ոչ ունէր այնպիսի կա-  
րողութիւն, որ ինքն էր տուեալ, այլ ասէ, թէ Հոգին տայ, վասն  
որոյ Տէրն զայս տարակուսանս լուծանէ, թէ ոչ յանձնէ ունի  
զայն, այլ նա զիս փառաւորեսցէ, քանզի զոր լսիցեն, խաւսեսցի:  
Յորժամ զայս լսես, մի' կարծեր զՀոգին իբրեւ զպատգամաւոր ոք,  
այլ որպէս Որդի միայն գիտէ զԱստուծոյսն, որ ի նմայն է, որպէս  
ասէ առաքեալ. «Ո՞ ոք ի մարդկանէ գիտէ ինչ զմարդոյն, եթէ ոչ  
Հոգին, որ ի նմա, նոյնպէս եւ ոչ զԱստուծոյսն ոք գիտէ, եթէ ոչ  
Հոգին Աստուծոյ» (Ա Կորնթ. Բ 10:11), ապա ուրեմն եւ Հոգին ընդ  
Որդւոյ հաւասար Աստուծած է, յաղագս որոյ եւ յարէ ի նոյն, թէ.

«Զգալոցն պատմեսցէ ձեզ» (Յովհ. ԺԶ 13):

Քանզի արարածական բնութեան անհնար է զառաջիկայ ի-  
րաց լինելոցն գտանել, այլ միայն Աստուծոյ է սեփական այս:  
Բայց գիտելի է, յորժամ արարածական բնութեան հնար է զլինե-  
լոցն գտանել, զիա՞րդ մարդարէքն զառաջիկայ լինելոցն պատ-  
մէին ժողովրդեանն: Այս է, զի նոքա ի Հոգւոյն ներգործութենէն  
շարժեալք խաւսէին, այլ ոչ յինքեանց, որպէս ասէ առաքեալն  
Պետրոս. «Քանզի ոչ [եթէ] ըստ կամաց մարդկան տուաւ մարդա-  
րէութիւն [երբէք], այլ ի Հոգւոյն Սրբոյ կրեալք՝ խաւսեցան  
[մարդիկ յԱստուծոյ]» (Բ Պետր. Ա 21), եւ յորժամ գնայր ի նոցանէ  
Հոգին, մնային իբրեւ զմի ի հասարակաց մարդկանէ, այլ յորժամ  
կարաւտութիւն լինէր, կամ վասն ժողովրդեանն պիտոյից եւ կամ

վասն աշխարհին, աղաւթս մատուցանէին առ Աստուած եւ յայտնէր նոցա զելս իրին եւ նոքա դարձեալ ժողովրդեանն պատմէին, եւ վկայ քեզ երազքն, զոր Դանիէլ պատմեաց, քանզի յորժամ կոչեցին, ասել ոչ գիտէր, այլ կէտ եղեալ դարձաւ աղաչեաց զԱստուած, զի յայտնեսցէ նմա, եւ ապա կարաց ասել:

«Խա զիս փառաւորեսցէ, զի յինմէ անտի առնուցու» (Յովի. ԺԶ 14):

Յինմէ ասէ բնութենէս ունել զուսուցանելն, եւ թէ<sup>1</sup> ոք ի հերձուածողացն ասէ, թէ ինքն Տէրն ասաց, թէ՝ յիմմէ առնուցու, եւ այսր պատճառաւ զՀոգին յՈրդւոյ ասեն, իմասցին զայն, որ զկնի ասէ՝ յինմէ անտի, ցուցանելով զՀայր, թէ ի նմանէ է: Եւ յետ այսորիկ ասէ. «Զամենայն, զոր ինչ ունի Յայր, իմ է» (տես Յովի. ԺԶ 15), մի կամք եւ մի Աստուածութիւն, եւ մի բնութիւն ցուցանէ զինքն եւ զՀայր եւ զՀոգին:

«Փօքր մի, եւ ոչ եւս տեսանիցէք զիս, եւ ապա սակաւիկ մի, եւ տեսանիցէք զիս. եւ ես երթամ առ Յայր» (Յովի. ԺԶ 16):

«Փօքր մի եւ ոչ եւս տեսանել» զչարչարանացն եւ զթաղմանէն մինչեւ յարութիւն: Եւ դարձեալ. «Սակաւ մի եւս տեսանել» զյարութենէն մինչեւ ի համբարձումն ասէ, որ յայս միջոցս քառասուն աւր եկաց առ նոսա:

«Անէն, ամէն ասեն ձեզ, զի լացջիք եւ ողբասջիք դուք, եւ աշխարհ խնդասցէ» (Յովի. ԺԶ 20):

Զտրտմութենէ նոցա գուշակէ, որ ի ժամ չարչարանացն նոցա պահելոց էր, զի յորժամ եկին ըմբռնել զՏէրն, նոքա թողին զնա եւ փախեան յերկիւղէն, բայց թէ ո՞ր է աշխարհ, զի խնդան, աստանաւր աշխարհ զհրէայս ասէ, զի քահանայապետքն եւ իշխանքն նախանձէին ընդ Յիսուսի, զի նոցա մեծարանաց եւ պատուոյն պակասութիւն էր ի մէջ ժողովրդեանն, եւ ոամիկ ժողովուրդն այսպիսի երկիւղիւ զարհուրեալք էին, զի կարծէին, թէ լսեն հոռմայեցիքն զհամբաւ սորա, թէ թագաւոր է ծնեալ ի Հրէաստան, եւ այլ ոչ հնագանդին մեզ, յայնժամ արձակին ի վերայ մեր զաւրաւք եւ զաշխարհս մեր գերիվարեն եւ ի սուր սուսերի մաշեն, բայց յորժամ զնա ի խաչ հանին, ուրախացան քահանայքն եւ ժողովուրդն, թէ փրկեցաք ի գերութենէն:

«Դուք տրտմեսջիք, այլ տրտմութիւն ձեր յուրախութիւն եղիցի» (Յովի. ԺԶ 20):

Յորժամ յառնեմ, ասէ, հրէայքն, որ ուրախացան, տրտմեսցին զյաւիտենական տրտմութիւն, զի աստուածասպանք երեւեսցին,

<sup>1</sup> Եթէ

եւ դուք, որ առ սակաւ մի տրտմեցայք, զյաւիտենիցն ուրախանայք :

«Կին յորժամ ծնանիցի, տրտմութիւն է նմա, զի հասեալ է [ժամ նորա]» (տե՛ս Յովի. ԺԶ 21):

**Կամի ի ձեռն ընդելական աւրինակի զնոսա հաւաստի գիւտունս առնել,** զի որպէս երկունք կնոջն տրտմութիւն է, բայց ի ծնանելն զմանուկն ոչ յիշէ զցաւն յուրախութենէն, սոյնպէս թէպէտ նեղութիւնք եւ տառապանք հասանեն ձեզ, սակայն յորժամ ի հանդերձեալն թագաւորէք ընդ իս, ոչ յիշէք զտրտմութիւն յուրախութենէն: Երկրորդ. զի խրատէ զմեզ, թէ յորժամ ի բարեգործութիւն ձեռնարկեմք, թէպէտ նեղութիւնքն եւ տառապանքն խիստ է, ապա յայնժամ ուրախանամք, յորժամ ի հանդերձեալն առաքինութեամբն ծնանիմք զանմահութիւն եւ զմշտնջենաւոր ուրախութիւն:

**Դարձեալ՝ ընդէ՞ր ի կին առակէ. նախ՝ զի կինն խիստ գիթուն է:** Երկրորդ. զի որպէս կինն ի ձեռն երկանցն ծնանի զմանուկն, այսպէս առաքեալքն, որ զեկեղեցւոյ ունէին զխորհուրդ, զհաւատացեալքս ի ձեռն երկանց չարչարանացն ծնան աւագանին մկրտութեամբ ի յաւիտենական ուրախութիւն:

«Եւ յայնն աւուր զիս ինչ ոչ հարցանիցէք» (Յովի. ԺԶ 23):

**Աւր աստանաւր զՀոգւոյն գալն ասէ,** զի այնպէս կարողացուցանէ զնոսա, որ ոչ երբէք կարաւտանան հարցանել ինչ:

«Զայս առակաւք խաւսեցայ [ընդ ձեզ], եկեսցէ ժամանակ, յորժամ ոչ լես առակաւք խաւսեցայց ընդ ձեզ]» (Յովի. ԺԶ 25):

**Զայն ասէ,** որ յետ յարութեան ճառէր նոցա վասն արքայութեան:

«Ելի ի Յաւրէ եւ եկի յաշխարհ, դարձեալ թողում զաշխարհ եւ երթամ [առ Յայր]» (Յովի. ԺԶ 28):

Ելանել յորժամ լսիցես, մի՛ կարծեր հատանիլ ի Հաւրէ եւ գալ յաշխարհս, այլ որպէս բան ի մտաց յառաջ եկեալ ի ձեռն ձայնի, այլ ի նմանէ անբաժանելի է, ապա ուրեմն ելանել ի Հաւրէ եւ գալ զյերեւոյթ գալն ասէ ի մկրտութիւնս եւ թողուլ զաշխարհս եւ երթալ առ Հայր, զայն ասէ, որ զբնութիւնս, զոր զգեցաւ ընդ աջմէ Հաւր տարեալ նստոյց, եւ որպէս յառաջն, անտեսանելի եղեւ ի մէնջ:

## Գլուխ ԺԷ

«Զայս իբրեւ խաւսեցաւ Յիսուս, ամբարձ զաշս իւր յերկինս» (Յովի. ԺԵ 1):

**Յորժամ բանիւ ուսոյց, թէ՝ «Քաջալերեցարուք, զի ես յաղթեցի»** (Յովի. ԺԵ 33), այժմ կամի գործով կատարել, զի բանիւ ասելն դիւրին է, իսկ առնելն մեծագոյն նեղութիւն է, որպէս ինքն ասաց. «Որ արացէ եւ ուսուցէ, [նա] մեծ կոչեսցի» (Մատթ. Ե 19), եւ մեզ ուսուցանէ, յորժամ ի նեղութիւնս անկանիցիմք, զաւգնութիւն Աստուծոյ խնդրել եւ ոչ ի մարդ ապաւինել: Եւ թէ զինչ գիտութիւն ունէր նա յաղաւթել, զի ինքն Աստուած էր, այս է, զի զնոսա ուսուցէ, քանզի եւ զայս առ Ղազարոս արար, աղաւթէ առ Հայր վասն ժողովրդեանս, որ չուրջ կան, առնեմ, զի հաւատասցեն, թէ դու առաքեցեր զիս:

«Որպէս ետուր ննա իշխանութիւն ամենայն նարմնոյ, զի ամենայն զոր ետուր ննա, տաց զկեանսն յափունականս» (Յովի. ԺԵ 2):

**Այս բան յառաջաբանէ հաւատալոյն հեթանոսաց, զի ցուցանէ, թէ եւ Հայր կամի զվրկութիւն, ոչ միայն զհրէից, այլ եւ զհեթանոսաց, վասն որոյ եւ ինքն յետ յարութեան ասաց առ նոսա. «Երթայք մկրտեցէք զամենայն հեթանոսս» (հմնտ. Մատթ. ԻԸ 19), քանզի յառաջ քան զխաչն գարչէին հրէայք ի հեթանոսացն, թէ ոք առ նոսա երթայր, ոչ ընդունէին զնա ի ժողովս իւրեանց: Եւ յայտ ի Պետրոսէ է, որ զկոռնելիոս գնաց մկրտեաց եւ զընտանիս նորա, այնուհետեւ ոչ ընդունէին, այլ առաքեալքն զնոսա ի միջի իւրեանց մինչեւ պատմեաց նոցա զտեսիլ անաւթոյն, եւ ապա այնուհետեւ համարձակեցան գնալ ի հեթանոսս եւ անդ քարոզել (հմնտ. Գործք Ժ-ԺԱ 18): Եւ զայս ոչ թէ հրէիցն միայն էր խարել զհեթանոսս, այլ եւ ինքն Տէրն պատուիրեաց աշակերտացն. «Ի ճանապարհս հեթանոսաց մի՛ երթայցէք» (Մատթ. Ժ 5):**

Բայց թէ զի՞նչ է իշխանութիւն ամենայն մարմնոյ. նախ՝ զի առաքելոցն, որ մարմինք էին նորա եւ անդամք յանդամոց նորա, իշխանութիւն ետ Աստուած ամենայն մարդկան քարոզել ոչ հրէից միայն, այլ եւ հեթանոսաց: Երկրորդ. զի այն մարմինն, որ ընդ Բանին միաւորեցաւ, այնպէս իշխանութիւն ընկալաւ ի վերայ ամենայն մարմնոյ, որպէս զԱստուած<sup>1</sup> կարող եւ զաւրեղ յամենայնի:

Բայց արդ, հարցցուք զհերձուածողսն<sup>2</sup>, թէ յորո՞ւմ ժամու ընկալաւ Բանն զիշխանութիւն<sup>1</sup>: Ասեն՝ յետ խաչին: Ապա թէ յետոյ

<sup>1</sup> Յ զամենայն

<sup>2</sup> Յ ցհերձուածողսն

քան զիսաչն, զիս<sup>1</sup>րդ կարես ասել զնա ամենայնի, եւ թէ արարիչ է, զիս<sup>1</sup>րդ ոչ ունի իշխանութիւն իւր արարածոյն: Եւ քանզի ի հնումն կեցուցանէր եւ զոմն պատժէր, որպէս Աբրահամու ասէ. «Ոչ ի ծածուկ ինչ է յԱբրահամէ ծառայէ իմմէ» (հննտ. Ծննդ. ԺՇ 17), եւ զՍոդոմ այրեաց, ապաքէն զոր ունէրն, կորո՞յս. քաւ լիցի, այլ այս է իշխանութիւն տալն, զոր վերագոյն ասացաք, իսկ թէ ընդէ՞ր ամենայն մարմնոյ ասէ, յորժամ ամենեքեան ոչ հաւատային, ոչ թէ արեգակն էր մեղ, զի ոչ լուսաւորեցան, այլ նոցա, որք կամաւ կափուցին զաչս ի չտեսանել<sup>2</sup> զնա:

«Այս են յաւիտենական կեանք, զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած, եւ զոր առաքեցերս՝ զՅիսուս Քրիստոս» (Յովի. ԺԵ 3):

Բազում անգամ վասն յաւիտենից կենացն ասացեալ էր, բայց զի՞նչ էր այն կեանք, ոչ էր ուսուցեալ: Այժմ յայտնապէս ուսուցանէ, թէ այս է. «Որ ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած Հայր, թէ այս սոյնպէս է, զոր Պաւլոս ասէ. «Թագաւորին յաւիտենից, անեղծի եւ աներեւութի, միոյն Աստուծոյ» (Ա Տիմ. Ա 17): Եւ դարձեալ՝ միայն թագաւոր թագաւորաց, որ միայն ունի զանմահութիւն, ապա ոչ է Որդի անեղ կամ թագաւոր եւ կամ ի լոյս անմատոյց բնակեալ, ըստ քոյդ կարծեաց, ապա ուրեմն զրկես զնա յայսց ամենայնէ: Զայս յայս միտս ասաց միայն ճշմարիտ, զի էին աստուածք, որ անուանեալ էին աստուած, այլ ոչ էին իսկապէս աստուած, այլ դեւք եւ ձեռագործք<sup>3</sup> մարդկան, վասն որոյ ասէ. «Դու միայն ես ճշմարիտ Աստուած»:

Այլ վասն երեք պատճառի պարտ է մեզ իմանալ զայն, որ ասէ. «Ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած» (Յովի. ԺԵ 3). Նախ ըստ Աստուածութեանդ ասէ, որ մեր հասարակաց միայն դու ճշմարիտ Աստուած: Երկրորդ. զքեզ միայն ասելով զՀայր ասէ, եւ ճշմարիտ՝ զՀոգին, եւ զոր առաքեցեր՝ զՅիսուս Քրիստոս զՈրդի ասէ: Երրորդ. զի որպէս Որդի ճշմարտութիւն ասի եւ կեանք, սոյնպէս եւ Հոգին ճշմարտութիւն ասէ, որ ի Հաւրէ ելանէ, այսպիսի ճշմարիտ Որդի եւ Հոգին ասին՝ դու միայն ես Հայր:

«Ես զքեզ փառաւորեցի յԵրկրի» (Յովի. ԺԵ 4):

Ճշմարդիկ, ասէ, ի հնազանդութիւն Քեզ ածի, բայց ոմանք աւսեն, թէ զայն ասէ, որ<sup>4</sup> ի ձեռն Որդւոյն զՀայրութեան անունն ու-

<sup>1</sup> Հուսանցքում՝ Արիոս

<sup>2</sup> Ը ի տեսանել

<sup>3</sup> Ը ձեռագործ

<sup>4</sup> Ը զայն որ ասէ

**սաք, թէպէտ զԱստուած գիտէին, բայց զՀայրութիւն ոչ ճանաչէին, եւ թէպէտ ասէ ի Գիրս, թէ ոչ սա ինքն է Հայր քո, որ ստացաւ զքեզ, այլ այն զստեղծմանէն ասէ, իսկ Հայր Որդւոյ ոչ գիտէին, այժմ զայս ասէ. «Յայտնեցի զՀայրութեան անունդ յերկրի»:**

«Արդ, գիտացին, եթէ զամենայն ինչ, զոր ետուր ինձ, ետու նոցա» (Յովի. ԺԷ 7-8):

**Զնշանագործութիւնսն ասէ եւ զնախատեսութիւնսն, որ շնորհեաց նոցա:**

«Եւ նոքա [ընկալան եւ] ծանեան ճշմարտութեամբ, թէ առ ի քէն ելի» (Յովի. ԺԷ 8):

**Քանզի տակաւին ոչ էին հաւատացեալ եւ ծանուցեալ զնակատարելապէս, ապա զիա՞րդ ասէ՝ ծանեան. նախ՝ ասեն, թէ յայնժամ, յորժամ ասաց. «Ելի ի Դաւրէ եւ եկի յաշխարի» (Յովի. ԺԷ 28): Զնշոյլք Աստուածութեան երեւեցոյց նոցա, որ ծանեան զնա եւ ասացին, թէ այժմիկ գիտեմք, զի Որդի ես Աստուծոյ եւ հաւատամք, թէ յԱստուծոյ ելեր, զայն ասէ ծանեան: Երկրորդ. զի զորյետոյ ծանելոց էին զայն ասէ, զի Աստուծոյ ներկայն եւ ապագայն միապէս է, որպէս ասէ Դաւիթ. «Առ գետս բարելացւոց կախեցաք»: Եւ այն յառաջ էր քան զգերութիւն, որ առ գետովն նստէին, նոյնպէս եւ աստ ասէ:**

«Արդ, ես վասն նոցա աղաչեն եւ ոչ վասն աշխարհի» (Յովի. ԺԷ 9):

**Վասն չորս պատճառի ի վերայ նոցա աղաւթէ. նախ՝ զի պարտ է, որ ոք զինչ եւ իցէ աստիճան, որ առնու, զնոյն գործով կատարել, վասն որոյ Տէրն զվարդապետութեան ունէր աստիճան, խնամ տանի եւ աղաւթէ վասն նոցա: Երկրորդ. զի որպէս սիրով հնազանդեալք էին նմա աշակերտքն, պարտ էր եւ նա նոյն չափովն զնոսա սիրել եւ վասն նոցա աղաւթս առնել: Երրորդ. զի պարտ է, որ ոք զինչ եւ նմա յանձնեսցեն զայն բազում հոգաբարձութեամբ հոգ տանել եւ խնամ: Չորրորդ. զի ինքն մեկնելոց էր ի նոցանէ, զնոսա Հաւը յանձնեսցէ:**

«Ես ետու նոցա զբանն քո» (Յովի. ԺԷ 14):

**Այսինքն՝ նախ զհաւատն, երկրորդ՝ զյաւիտենական կեանքն եւ երրորդ՝ զՀայրութեան անունն:**

«Յաշխարհէ աստի չեն, որպէս եւ ես չեն յաշխարհէ» (տե՛ս Յովի. ԺԷ 14):

**Ոչ թէ բնութեամբ չեն յաշխարհէ առաքեալքն, այլ գործով:**

«Սուրբ արա զնոսա ճշմարտութեամբ քով» (Յովի. ԺԷ 17):

**Սուրբ ասէ գործեա՛ հաւատովն, եւ ճշմարտութեամբ՝ գիտութեամբ:**

**Բայց վարդապետք եկեղեցւոյ չորս յեղանակաւ ասեն՝ սուրբ արա զնոսա.**

**Նախ՝ թէ այնպիսի սուրբ հաւատս շնորհեա՛ նոցա եւ ճշմարիտ գիտութիւն, զի բաւական լինիցին ճանաչել զքեզ Հայր՝ ծնող, եւ զիս Որդի՝ ծնունդ ի քէն, եւ զՀոգին Սուրբ բղխումն ի քէն:**

**Երկրորդ. ասէ՝ սուրբ արա, զի հրէական զոհքն եւ պատարագն եւ ողջակէզքն մշտկաւն համարէին, թէ սրբութիւն եւ մաքրութիւն առնէր, այլ այն ոչ էր կատարեալ, զՔո ճշմարիտ սրբութիւնդ տուր սոցա:**

**Երրորդ. զի հեթանոսք, որ զկուռս անշունչս աստուած եւ սրբութիւն համարէին, պարգեւեա՛ նոցա այսպիսի<sup>1</sup> սրբութիւն եւ ճշմարիտ գիտութիւն, զի կարասցեն գիտել զկուռսն ստութիւն եւ ընդունայնութիւն, եւ զքեզ միայն ճանաչեն ճշմարիտ Աստուած կենդանի:**

**Չորրորդ. զի որպէս ինքն ասաց յԱւետարանի անդ, թէ Երկր պագուաց նորա պարտ է հոգւով եւ ճշմարտութեամբ երկիր պագանել, զնոյն աստանաւը խնդրէ յԱստուծոյ այնպիսի իմացք մտաց եւ ճշմարիտ հաւատս, զի արժանաւոր լիցին երկրպագութեան նորա:**

«Զի քո բանդ ճշնարտութիւն է» (Յովի. ժԷ 17):

**Նախ՝ զինքենէ ասէ, որ Բան է Հաւը եւ ճշմարտութիւն: Երկրորդ. զի ասէ. «Որ ի քէն լսին բանք, նոքա միայն են ճշմարիտ», եւ այլք ամենայն պիտակաբար ասին:**

«Այլ ոչ վասն նոցա միայն աղաչեն, այլ եւ վասն ամենայն հաւատացելոց» (Յովի. ժԷ 20):

**Այսպէս պատուիրէ ի Գիրս, թէ նախ ընկերին աղաւթէ եւ քո անձինդ: Եւ Տէրս զիա՞րդ յառաջ իւր աղաւթէ եւ ապա աշակերտացն եւ հաւատացելոցս. նախ այս է, զի ի սկզբանէ հաստատեալ կարգս կամէր բացայայտել, զի պարգեւքն, որ ի յԱստուծոյ գայ, նախ յաթոռսն իջանէ եւ ապա ի սերովքէս եւ ի քերովքէս եւ ապա ի մարդիկ: Երկրորդ. զի Տէրն յաղագս ներկային աղաւթէր:**

«Նայիր, զորս ետուրն ինձ, կամիմ, զի ուր ես եմ, եւ նոքա իցեն ընդ իս» (Յովի. ժԷ 24):

**Զփառսն ասէ, որ տալոց էր նոցա, զոր ի Մատթէոս ասէ. «Նստջիք յերկոտասան աթոռ» (տես Սատթ. ժԹ 28):**

«Զի տեսանիցեն զփառսն իմ, զոր ետուրն ցիս» (Յովի. ժԷ 24):

<sup>1</sup> Ը այնպիսի

Հերձուածողքն ասեն, թէ յորժամ առեալ է նա զփառսն, փոքր է քան զՀայր, բայց հարցուք առ նոսա, թէ յորժամ յաղագս փառացն, զոր ի Հաւրէ ունէր, ասէք կրտսեր զնա գոլով, ապա է՞ր աղագաւ ոչ ասաց վասն նոցա, թէ հաղորդք լինիցին ի փառսն իմ, այլ թէ՝ տեսանիցեն, որով յայտնի ճանաչեմք, թէ միայն տեսութիւն Աստուծոյ է յաւիտենական փառքն, զոր այժմ ասէ, թէ տեսանիցեն զփառսն իմ եւ նորայն բնութեամք է փառքն ի Հաւրէ, զի զոր ինչ կամէր, առնէր, իսկ առաքեալքն, զոր ինչ առնէին, յանուն նորա գործէին:

«Զի սիրեցեր զիս յառաջ քան զլինելն աշխարհի» (Յովի. ԺԷ 24):

Երկու ազգ յանդիմանէ զհրէայսն. նախ՝ զի զնա հակառակ ասէին Աստուծոյ, ասէ՝ սիրեցեր զիս, զի գիտասցեն, թէ ոչ եմ հակառակ: Երկրորդ. զի ասէին, թէ երեսնամեայ մարդ գոլով քո եւ ասես, թէ յառաջ քան զլինելն աշխարհի եմ, եւ սուտ կարծէին զնա, վասն որոյ սիրեցեր զիս, ասէ, յորժա՞մ յառաջ քան զլինելն աշխարհի:

«Ծանուցի զանուն քո նոցա եւ ծանուցից» (Յովի. ԺԷ 26):

Ծանուցի զայն ասէ, որքան ընդ նոսա շրջէր եւ ուսուցանէր զնոսա եւ զՀաւրէ տեղեկացոյց նոցա, իսկ ծանուցից, զոր յետ յարութեան դարձեալ երեւելոց էր նոցա եւ ուսուցանելոց: Եւ կամ դարձեալ զՀոգւոյն ասէ զգալն առ նոսա, զի զՈրդւոյ Աստուծութիւն կատարելապէս անդ ծանեան:

«Զի սէրն, զոր սիրեցեր զիս, ի նոսա իցէ, եւ ես՝ ի նոսա» (Յովի. ԺԷ 26):

Զսկիզբն պատուիրանացն զսէրն եղ, եւ զաւարտն դարձեալ ինա կատարեաց, զի ամենայն ուրեք զսէրն պատուիրէ մեղ հաստատ ունել:

## Գլուխ ԺԼ

«Զայս իբրեւ ասաց Յիսուս, ել աշակերտաւքն իանդերձ յայնկոյս ձորյն կեղրոնի» (Յովի. ԺՇ 1):

**Մատթէոս եւ Մարկոս<sup>1</sup>** ի գեղն Գեթսեմանի ասեն, եւ Ղուկաս. «Հստ սովորութեան, - ասէ, - գնաց ի լեառն Զիթենեաց» (տես Ղովկ. ԻԲ 39): Թուլին ընդդէմ ասել, այլ ոչ են ընդդէմ, այլ յոյժ համաձայնք խաւսին, քանզի գեղն, որ զ Գեթսեմանին անդ է, ուր պարտէզն էր: Եւ այն, թէ ի լեառն Զիթենեաց, պարտէզս այս ի ստորոտ լերինն Զիթենեաց է, յաղագս այսորիկ Զիթենեաց ասէ: Իսկ թէ զի՞նչ իցէ Կեղրոն, ի յերայեցւոցն ի մերս միսիթարութիւն ասի<sup>ՀՀԿՎII</sup>: Եւ այլք ոմանք ասեն, թէ Կեղրոնն նոճի ծառ ասի, բայց ճշմարիտն այս է, զի Կեղրոն հեղեղատ ասի, քանզի ձորս այս հեղեղատ է եւ ի կատարս իւր ունի զդաշտն Յովսափաթու, յաղագս այսորիկ, որ հեղեղատ է՝ Կեղրոն ասի:

Բայց թէ ընդէ՞ր յայսմ ժամու ի պարտիզի անդ գնաց Տէրն. նախ՝ զի սովորութիւն էր նմա զցերեկն ի տաճարն կայր եւ զգիշերն՝ ի լեառն Զիթենեաց: Երկրորդ. զի հրէայքն յամենայն ժամ կամէին ունել զնա, այլ երկնչէին ի ժողովրդենէն: Ամայի տեղիք եւ դիպող ժամանակ խնդրէին, վասն որոյ Տէրն ըստ նոցա ախորժելոյն առնէ, զի անդ միայն ինքն եւ աշակերտքն էին: Երրորդ. զի պարտէզ էր տեղիքն, եւ շուրջն պատեալ, եւ ոչ գոյր ճար յայլուստ կողմանէ փախչել, եւ յորժամ նոքա զդուռն ունիցին, կարծեն աներկբայ ըմբռնել զնա: Եւ զի այլ աւետարանիչքն յիշեն զմեկուսանալն յաղաւթսն ի ժամ չարչարանացն, վասն այն սա ոչ յիշէ:

Տեսցո՞ւք, թէ ընդէ՞ր երիս առաքեալս միայն էառ, այսինքն՝ զ Պետրոս, զ Յոհաննէս եւ զ Յակոբոս: Էառ առ ի յայտնել զերեքին առաքեալսն նախապատիւ առաջի առաքելոցն, զի սոքա աւրինակ են զերիս Աստուածային անձինսն: Արդ, էառ զ Պետրոս վասն ծերութեան, վասն որոյ գլուխ եղ առաքելոցն, եւ զ Յակոբոս վասն նախկին մարտիրոսութեան ի մէջ առաքելոցն, եւ զ Յոհաննէս, զի լինելոց էր աստուածաբան:

Երկրորդ. թէ ընդէ՞ր մեկնեցաւ յառաքելոցն առ ի յաղաւթել, եւ այն սակաւ իբրեւ զքարընկեց մի: Զի Քրիստոս կամէր այնպէս աղաւթել միայն առանձինն, բայց կամէր, զի աւրինակաւ իւրով յառաքեալքն յաւժարեսցին առ ի յաղաւթել: Եւ դարձեալ՝ կամէր եւս գաղափարաւ ցուցանել, թէ պարտ է, զի առաջնորդն այնպէս

<sup>1</sup> Ը Մարկոս եւ Մատթէոս

խոկասցէ առանձնաբար վասն աստուածայնոցն, մինչ զի ի հաւտիցն ոչ կարի հեռասցի, զի երկիւղ եւ պատիժ նուաստիցն, զորունին յառաջնորդէն, յոյժ արգելու զնոսա ի չարէ եւ ածէ ի բարիս:

**ԵՐՐՈՐԴ.** թէ վասն է՞ր խիստ երկիւղ կրեաց Տէր մեր: Այսինքն՝ անչափ երկիւղ կրեաց վասն անչափ մեղաց մարդկան, զի բոլոր բնութեան առնէր փրկութիւն, վասն որոյ բոլոր բնութեան չափ երկիւղ կրեաց, եւ զի աւրինակ իւր անդամոցս, այսինքն՝ եկեղեցւոյ, որով եցոյց, թէ յոյժ վիշտ կրելոց են:

**ՉՈՐՐՈՐԴ.** թէ ընդէ՞ր հրեշտակը զաւրացուցանէին զնա: Զի ցուցցէ, թէ տէր է զաւրութեանց, որք սպասաւորել եկեալ նմա ի չարչարանսն, եւ զի ցուցցէ զաւաւել խոնարհութիւն, որ եւ հրեշտակաց մխիթարութեան կարաւացաւ, եւ պարտ էր տրտմութիւն Տեառն մերոյ զգալի կերպիւ երեւել մեզ:

**ՀԻՆԳԵՐՈՐԴ.** թէ ընդէ՞ր քրտինքն իբր զկայլակս արեան իջանէին: Զի այն քրտինքն եղեն ի յոյժ երկիւղէ եւ ի զարհուրանաց մահուն, քանզի նա աղաւթէր վասն անցանելոյ մահուն բաժակի, իբր կարի երկուցեալ, զի Ղուկաս ասէ. «Կայր ի տագնապ» (տես Ղուկ. ԻԲ 43), այսինքն՝ յաշխատութիւն մահուն, ուստի երեւի, զի վասն երկիւղի ել այն քրտինքն: եւ այսոքիկ ամենեքեան կամաւ եւ ոչ հարկիւ, որպէս մեզ:

**ՎԵցԵՐՈՐԴ.** թէ ընդէ՞ր երիցս աղաւթեաց: Առ ի ցուցանել երեք սահման, յոր լինին<sup>1</sup> բարեգոյն աղաւթքն, այսինքն՝ խոնարհութեամբ, հաւատով եւ սիրով, որք պատասխանի տան երիս աստուածային անձանցն. խոնարհութիւն առ Հայր, որ յատկանայ կարողութիւն, հաւատն առ Որդին, որում յատկանայ իմաստութիւն, եւ սէրն առ Հոգին Սուրբ, որում յատկանայ բարութիւն: եւ զի պարտ է աղաւթել ընդդէմ երից մեղացն, որ լինի ի տկարութենէ, ի յանգիտութենէ եւ ի չարութենէ կամաց:

Դարձեալ պարտ է աղաւթել ընդդէմ երից թշնամեացն. սատանայի, աշխարհի եւ մարմնոյ, եւ պարտ է երիս խնդրուածս առնել. այսինքն՝ զերծանել ի չարէ, ուղղիլ շնորհաւք եւ հասանել ի փառս:

Դարձեալ՝ առ ի ցուցանել, զի երեք զաւրութեանց գործք խնդրին առ ի կատարել զաղաւթս, այսինքն՝ գործ հանճարոյ, կատարեալ հաւատով՝ յարենալով յԱստուած: Գործ յիշողականին՝ յիշելով զաստուածային պագեւսն եւ գոհանալով, եւ գործ կամաց՝ փափագելով երկնային բարեացն: Զայս ամենայն աւետա-

<sup>1</sup> Ե լինի

ըանիչն Յոհաննէս գիտութեամբ զանց արար, զի բաւական գրեալ կայր:

«Գիտէր Եւ Յուղա, որ զնայն մատնելոց էր, զտեղին, զի բազում անգամ ժողովեալ էր անդր Յիսուսի աշակերտաւքն հանդերձ» (Յովհ. ԺԸ 2):

**Ասացեալ են վարդապետք, թէ վասն չորս պատճառի գնաց Տէրն ի պարտէզն.**

Նախ՝ զի սովորութիւն էր յանդ գնալ, եւ Յուղա ընդ նմա, նոյնպէս այժմ երթայ անդ, զի Յուղա եկեալ գտցէ:

**Երկրորդ. զի ցուցցէ, թէ յաւժարութեամբ երթայ ի չարչարանս, զի աշակերտաւքն հանդերձ գնայ համարձակ:**

**Երրորդ. զի ուսուցանէ մեզ ի փորձութիւնս զսովորական աշաւթսն ոչ թողով, զոր հնքն առանձնացաւ եւ արար:**

**Չորրորդ. զի խրատէ ի ժամ նեղութեան զմարդկան յոյս հատանել եւ յԱստուած ապաւինել եւ առ նա աղաւթել:**

Իսկ Յուղա երեք կերպիւ պատրաստեցաւ յըմբռնել զՏէրն.

**Մին. զի բազումս էառ ընդ ինքեան զաւրս գունդ կոչէ, որք էին զաւրագլուխք, զի Պիղատոս զկայսեր տեղի ունէր, զգունդն ի նմանէ առին, սոյնպէս եւ ի քահանայից սպասաւորս յերկուց կողմանց ամրացուցին, զի մի ոք խլեսցէ զՔրիստոս:**

**Երկրորդ. պատրաստեաց զինքն ջահիւք եւ լապտերաւք, վասն զի գիշեր էր, զի գտանիցեն եւ մի փախիցէ կամ թաքիցէ Քրիստոս<sup>1</sup>:**

**Երրորդ. պատրաստեաց զինքն զինուք առ ի յերկեցուցանել զմարդիկ, զի մի ոք ձեռն տացէ աւգնել Քրիստոսի եւ կամ զամբոխ ժողովրդեանն շարժեսցէ ի վերայ նոցա:**

**Աստ խնդրի, թէ ընդէ՞ր նշան ետ Յուղա, թէ՝**

«Որում ես համբուրեցից, նա է» (Սատթ. ԻԶ 48, Սարկ. ԺԴ 44, Ղուկ. ԻԲ 47):

**Զի բազում անգամ կամեցան ըմբռնել եւ Յիսուս խոյս ետ, վասն որոյ կամեցաւ համբուրիւ ըմբռնել, զի մի փախիցէ:**

**Երկրորդ. զի Յակոբոս նման էր կերպարանաւքն Քրիստոսի, որ կոչէր «Եղբայր Տեառն», վասն որոյ նշան ետ զհամբոյրն, զի մի զաշակերտան տգիտութեամբ ըմբռնիցեն:**

**Երրորդ. զի ոչ համարձակէր յայտնապէս թշնամութիւն առնել, այլ նենգութեամբ կամեցաւ արտաքին պատուով մեծարել խոնարհութեամբ:**

**Չորրորդ. այլք ասեն՝ աւանդութեամբ ինչ լուաք վասն Քրիստոսի, զի նա բազում անգամ կերպարանափոխ լինէր եւ ընդ իւրաքանչիւր մարդոյ որպէս եւ կամէրն, երեւէր:**

<sup>1</sup> Յ Յիսուս

Հինգերորդ. զի համբոյրն սիրոյ է ցուցումն, որով երեւեցաւ,  
թէ որք ի ծածուկ ունին զիսէթ, սիրով կամին որսալ ի կորուստ:

«Իբրեւ ասաց, թէ ես եմ, յետս չոգան եւ զարկան զգետնի» (Յովհ.

ԺԸ 6):

Ե՞ր աղագաւ արար զայս Տէրն: Զի ծանիցեն, թէ կամաւ տայ  
զանձն ի չարչարանս, զի որ ի ձայնէն միայն անկան յերկիր, կա-  
րող էր, թէ կամեցեալ էր զամենեսեան սատակել:

Երկրորդ. զի նշանակէր զանկումն հրէիցն, որ անկանգնելի  
անկան յանհաւատութիւն:

Երրորդ. զի զնախապատմեալս ի մարգարէէն. «Թշնամիք մեր  
տկարցան եւ անկան» (Սաղմ. ԻԶ 2):

«Արդ, եթէ զիս խնդրէք, թոյլ տուք դոցա երթալ» (Յովհ. ԺԸ 8):

Թուի, թէ զաշակերտսն կամէին ըմբռնել, զի խրատ տուեալ  
էր Յուղայի, թէ՝ եւ զաշակերտսն կալէք, զի մի գոյժ արկցեն հա-  
ւատացելոցն, եւ նոքա եկեալ ի վերայ մեր քարկոծ արասցեն:

Յայսմ վայրի վասն երկու պատճառի ոչ տայ թոյլ Տէրն ըմբռ-  
նել զաշակերտսն.

Նախ՝ զի մի թերասցին ի հաւատս, քանզի զՊետրոս դեռեւս  
ըմբռնեալ ոչ էին անգամ, նա ուրանայր, եւ Թովմաս ասէր. «Ե-  
կայք երթիցուք, զի ընդ նմա մեռցուք» (Իմնտ. Յովհ. ԺԸ 16):

Երկրորդ. զի յորժամ յայսմանէ փրկեաց զնոսա, հաստատեալ  
գիտասցեն, թէ յամենայն նեղութեանց կարող է փրկել զնոսա:

«Իսկ Սիմովն Պետրոս, քանզի ունէր սուր» (Յովհ. ԺԸ 10):

Եւ արդ, գիտելի է, զի Տէրն պատուէր ետ աշակերտացն ա-  
ռանց մախաղի եւ առանց քսակի շրջել, սուրն ուստի՝ էր նոցա:  
Ասեն, թէ վասն զզատիկն զենլոյ, յաղագս գառինն պատրաստեալ  
էին: Դարձեալ՝ այլ ոմանք ասեն, թէ յորժամ ասաց նոցա. «Կա-  
րաւատացայ՝ իք իմիք յառաքելն իմ զձեզ առանց քսակի», նոքա ա-  
սեն՝ ոչ իմիք, յայնժամ ասէ ցնոսա. «Որ ունիցի, բարձցէ, եւ որ  
ոչն ունիցի, վաճառեսցէ զձորձս իւր եւ գնեսցէ սուր» (Իմնտ. Դուկ.  
ԻԲ 35-36), յայնմանէ համարձակեցան եւ բարձին ընդ իւրեանս  
սուր: Եւ արդ, գիտելի է, զի անհնար է Տեառն իւր ընդդէմ ասել,  
այլ զայս մարգարէացաւ ի վերայ նոցա, թէ յետ յարութեան դար-  
ձեալ ի ձկնորսութիւն ձեր եւ ի մախաղ ստանալն գնալոց էք, զոր  
եւ արարին իսկ: Եւ ապա ուստի՝ արդեաւք ունէին, ասեն, թէ յոր-  
ժամ լուան ի Քրիստոսէ, թէ հասեալ է ժամ, զի մատնեսցի Որդի  
մարդոյ, առեալ Պետրոսի ընդ իւր սուր, զի յորժամ ըմբռնեսցեն  
զվարդապետն, Հնարեսցի ինչ, զոր եւ արարն իսկ: Եւ այլք դար-  
ձեալ, թէ սոքա ձկնորսք էին, թէպէտ յամենայն ընչից մեկնեցան,  
սակայն զսովորական գործն իւրեանց երբեմն-երբեմն առնէին եւ

պիտոյանայր նոցա ձողի, զի զնաւն վարեսցեն, այնը աղագաւ առեալ է, զի կատարեսցեն զծաւզին: Եւ դարձեալ, այլք ասեն, թէ վասն զի զհաց երկրին այնորիկ դանակաւ հատանէին, վասն այն ունէին ընդ ինքեանս սուր: Այլ ճշմարիտն այս է, զի խաւսեցեալն ի Մովսիսէ, թէ ամենայն անձն որ ոչ հնազանդեսցի մարդարէին, սատակեսցի, յիրաւի յայս խորհուրդս հանաւ սուրն:

«Եհար զծառայ քահանայապետին եւ ի բաց առ զունկն նորա» (տե՛ս Յովի. ԺԸ 10):

**Պետրոս կամէր զպարանոցն հատանել,** բայց Տէրն պատշաճեցոյց զունկն եհար: Եւ ընդէ՞ր զաջոյն, զի որպէս աւրէն էր նոցա ի կատարումն որելինին զամենայն ծառայս եւ զանդաստանս, զոր գնեալ էին, ազատ առնէին: Եւ այնոքիկ, որք ոչ կամէին ելանել ի ծառայութենէ, քահանայիցն վկայութեամբ զաջոյ ունկն ծակէր եւ զինդ անցուցանէր ի նմա եւ յայնմ հետէ ծառայութեամբ կենայր ի տան նորա, սոյնպէս Քրիստոս ազատիչ էր եկեալ նոցա եւ նոքա ոչ կամեցան ազատ լինել, վասն որոյ զունկն սորա տնաւրինեաց հատանել, զի ի ձեռն նորա զամենայն հրէայսն ի ծառայութիւն յաւիտենական կամաւն իւրեանց խոնարհեալ ցուցցէ: Եւ ընդէ՞ր դարձեալ բժշկեաց, զի ցուցցէ, թէ ի կատարածի դարձեալ ի յազգէ նոցա հաւատացելոց են:

«Զբաժակն, զոր ետ ինձ Յայր, ո՞չ ընպիցեն զնա» (Յովի. ԺԸ 11):

**Զչարչարանքն բաժակ կոչէ.** Նախ՝ զի դառն է բաժակն, սոյնպէս եւ դառն էր խաչելութիւն Տեառն, զի չարչարանք էր: Երկրորդ. զի ամենայն ոք սիրով ըմպէ զբաժակն, սոյնպէս եւ Տէր մեր կամաւ կրեաց զչարչարանսն: Երրորդ. զի բաժակն թմրեցուցանէ զմարդն որպէս թէ մեռեալ, սակայն ոչ է մեռեալ, սոյնպէս Տէր մեր ի չարչարանսն մեռաւ մարմնով, սակայն կենդանի էր Աստուածութեամբն: Չորրորդ. զի զբաժակն սակաւ-սակաւ ըմպել թմրին, սոյնպէս եւ Տէր մեր կրեաց նախ զապտակն եւ զնախատինսն եւ զթուքն, եւ ապա ի խաչին մեռաւ: Հինգերորդ. զի ուրախարար է գինին, սոյնպէս եւ չարչարանք Տեառն մեզ ուրախութիւն երեր: Վեցերորդ. զի յորժամ արբի ոք բաժակաւ, անխտիր սպանանէ զթշնամիսն իւր, սոյնպէս<sup>1</sup> Տէր մեր ի մահուն եսպան զմահ եւ զսատանայ եւ զմեղս, որ էր թշնամի բնութեանս: Եւթներորդ. զի զմարմինն պարարէ բաժակ, սոյնպէս եւ չարչարանքն Տեառն ստուարացոյց հոգեպէս՝ զխորհրդական մարմինքս, որք եմք ժողովուրդ, զի ի ձեռն նորին չարչարանացն կոչեցաք որդիք Աստուծոյ:

<sup>1</sup> Յ սոյնպէս եւ

«Եւ ածին զնա նախ առ Աննա, որ էր [աներ Կայիափայի]» (Յովի. ԺՇ 13):

**Նախ՝ զի ընդ երթալն առ Կայիափա ի մէջ ճանապարհին կայր տունն Աննայի, եւ նա էր այր երեւելի:** Երկրորդ. զի յիւրաքանչիւր ամի զքահանայութիւն վարձուք ստանային, եւ երկոքին սոքա մի զմիոյ կնի գնէին<sup>1</sup> զքահանայութիւն, եւ վասն զի Աննա յանցեալ տարին էր քահանայապետ, վասն այն որպէս քահանայապետ համարէին զնա: Երրորդ. զի Քրիստոս ի բազում դատաւորաց դատապարտեսցի, որպէս ասէր՝ մատնեսցի դատաւորաց: Չորրորդ. զի նա աներ էր Կայիափայի, վասն այն կամեցան զնա պատուել, իսկ փոփոխումն քահանայիցն նշան էր քակտման նոցին աւրինացն, զի գնով ստանային:

«Երթային օյետ Յիսուսի Սիմովն Պետրոս եւ միւս աշակերտն» (Յովի. ԺՇ 15):

**Ի Մատթէոս ասէ. «Թողին աշակերտքն եւ փախեան»** (Մատթ. ԻԶ 56), եւ աստ ընդէ՞ր ասէ՝ Երթային օյետ: Յորժամ եկին ըմբռնել, առժամայն փախեան, բայց յետոյ Պետրոս եւ Յոհաննէս դարձան եւ հետ<sup>2</sup> ընթանային: Միւս աշակերտ զինքն ասէ, բայց ոչ անուանէ կոչէ, զի<sup>3</sup> մեծամտութիւն մի<sup>4</sup> վարկցես նմա, թէ ամէնքն փախեան, եւ ես՝ ոչ:

«Եւ աշակերտն այն [քանզի] ծանալք էր քահանայապետին» (Յովի. ԺՇ 15):

**Ընդէ՞ր ասեն՝ ծանալք էր, զի ցուցցէ, թէ՝ ես ոչ այլ<sup>5</sup> առաւել սէր ունէի, քան զՊետրոս, այլ յաղագս ծանաւթութեան մտի: Եւ ուստի՝ էր սա ծանաւթ: Ոմանք ասեն, թէ սա յառաջագոյն զդպրութիւն ուսեալ էր եւ ի նոցանէ վարժեալ, յաղագս այնորիկ ծանաւթ էր, բայց որք զայս ասեն, ոչ է ճշմարիտ, զի նա զԳիր ոչ գիտէր, այլ զոր ինչ կամէր գրել<sup>6</sup>, Պրոխորոնս գրէր, եւ ապա ուստի՝ էր ծանաւթ, ասեն, թէ էր ոմն ազգական քահանայիցն եւ սա նմա էր ծանաւթ, յայն սակա եմուտ ի ներքս: Եւ այլք դարձեալ ասեն, թէ սորա հայրն ձկնորս էր եւ բազում անդամ զգեղեցիկ ձկունս ըմբռնէր ի սա տայր, զի քահանայիցն տարցէ, եւ այսու էր ծանաւթ: Այլք ասեն, թէ սա ի քահանայից ցեղէն էր, որպէս ամենայն ցեղ զիւր ազգն ճանաչէր, սոյնպէս քահանայքն զսա գիտէին:**

<sup>1</sup> Բ դԱԷՒԱ

<sup>2</sup> Բ չիք եւ հետ

<sup>3</sup> Բ չիք կոչէ, զի

<sup>4</sup> Բ չիք

<sup>5</sup> Ը չիք

<sup>6</sup> Բ չիք

«Եւ Պետրոս կայր առ դրանն արտաքոյ» (Յովի. ԺՇ 16):

**Նախ այս էր, զի անծանաւթ<sup>1</sup> էր: Երկրորդ. զի վասն զունկն հատանելոյ ծառային կասկածէր՝ գուցէ ծանիցեն:**

«Ել միւս աշակերտն, որ էր ծանալք [քահանայապետին], եւ եմոյծ [ի ներքս] զՊետրոս» (Յովի. ԺՇ 16):

**Ինքն էր աղագաւ ել եւ կոչեաց, այս է, զի զոր ինչ հրէայքն հարցանեն զՏէրն, լսիցէ, եւ զոր Տէրն պատասխանի առնէ<sup>2</sup>, ի միտ առցէ: Իսկ Պետրոս ի յաղջկանէն շարժեալ ցուցանէր զկարի տկարութիւն Պետրոսի, զի ոչ թէ բռնութեամբ ուրացոյց զնա:**

«Ես յանենայն ժամ<sup>3</sup> ուսուցի ի ժողովրդեանն եւ ծածուկ ինչ ոչ խաւեցայ» (Յովի. ԺՇ 20):

**Զի յորժամ ի մէջ ժողովրդեանն ուսուցանէր, դարձեալ առանձնանայր եւ աշակերտացն առանձինն ուսուցանէր, եւ յունկն Յոհաննու ի ծածուկ ասաց զթացեալ պատառն, այժմ ընդէ՞ր ասէ՝ ի ծածուկ ինչ ոչ խաւեցայ: Այս է, զի ասէ, թէ այնպիսի բան ոչ խաւսեցայ ի ծածուկ, որ յետոյ ոչ յայտնեցաւ:**

«Եւ Յիսուս ասէ ցնա. «Եթէ չար ինչ խաւեցայ, վկայեա՛ վասն չարին, իսկ եթէ բարի, ընդէ՞ր հարկանես զիս»» (Յովի. ԺՇ 23):

**Տէրն պատուիրեաց աշակերտացն. «Եթէ ոք հարկանէ զծնաւտքո, մատո՛նմա զմիւսն» (տես Ղուկ. Չ 29), եւ ինքն ընդէ՞ր ոչ արար: Այս է պատճառն. նախ՝ յորժամ զերեսդ հարկանէ ոք եւ դու զմիւսն դարձուցանես, նա զղջանայ եւ<sup>4</sup> գտանէ զանձն, յաղագս այսորիկ պատուիրէ նոցա զմիւս երեսն դարձուցանել, իսկ ինքն յաղագս այնորիկ ոչ մատոյց, զի ոչ գոյր ի հարկանողն տեղիք զղջանալոյ, այլ եւ զմիւսն եւս կամէր հարկանել: Երկրորդ. զի յորժամ զմիւսն դարձուցանէ զերեսն իւր հարկանողին, ոչ թէ միայն ինքն զղջանայ եւ ապրի, այլ եւ զանձն աւրինակ տայ այլոց, այսր աղագաւ զայս պատուիրէր աշակերտացն, բայց հարկանողն Քրիստոսի եւ ոչ զայս ունէր: Երրորդ. զի նա միակողմանի էր ի հաւատսն, այսինքն՝ ի մի կողմն չարին անդառնալի հաստատեալ, յաղագս այնորիկ զմի կողմն մատոյց ապտակ<sup>5</sup>, զի զնորա հաւատսն յայտնեցէ: Չորրորդ. զի ոչ միայն զերեսն էր մատուցեալ յապտակ<sup>6</sup>, այլ եւ բոլորն իսկ տայր ի չարչարանս:**

«Եւ Սիմոն Պետրոս կայր անդ եւ ջեռնոյր» (Յովի. ԺՇ 25):

<sup>1</sup> Բ ծանօթ

<sup>2</sup> Բ առնի՝ առնէ

<sup>3</sup> Բ չիք

<sup>4</sup> Բ եւ սա

<sup>5</sup> Բ յապտակ

<sup>6</sup> Բ ապտակ

**Ստեղ-ստեղ զ Պետրոս յիշելովն ոչ աղարտելով զնա յիշէ, այլ զի զկանխասացութիւն Քրիստոսի յուշ արասցէ, որ ասացն. «Մինչ չեւ հաւու խաւսեցեալ» (Ղուկ. ԻԲ 61): Երկրորդ. զի նա, որ գլուխ էր առաքելոցն եւ ջերմ սիրող Քրիստոսի, յայնպիսի ախտ ուրացութեան անկեալ, եւ դարձեալ թողութիւն եգիտ ճշմարիտ խոստովանութեամբն եւ արտասուաւքն, այս մեզ յոյս մեծ եղեւ, յորժամ դառնամք ի մեղաց ի ձեռն զղման եւ արտասուաց, կարեմք թողութիւն գտանել, թէպէտ եւ խիստ ծանրագոյն իցէ մեղքն: Երրորդ. զի ուսուցանէ մեզ ոչ յանձնապաստան լինել ի գործս, այլ Աստուծոյ կարողութեամբն հաւատայ առնել զինչ եւ իցէ: Իսկ Պետրոս կրկին անգամ ուրացաւ, ոմանք ի տան քահանայապետին ասեն, եւ այլք՝ արտաքոյ:**

«Եւ ածեն զՅիսուս ի վանացն Կայիափայ յապարանս դատաւորին» (Յովի. ԺԸ 28):

**Վանքն բարեգործութեան եւ առաքինութեան ասի տեղի, եւ սա քահանայապետ էր, պարտ էր ի սորա տունն իրաւունք եւ բարեգործութիւն լինել, աւետարանիչս նախատելով զնա վանք կոչէ, որ փոխանակ իրաւանց եւ բարեգործութեան անիրաւութիւն եւ չարագործ գործեցաւ անդ:**

«Եւ նոքա ոչ նտին յապարանս, զի մի՛ պղծիցին, այլ զի ուտիցեն զզատիկն» (Յովի. ԺԸ 28):

**Սովորութիւն էր հրէիցն ոչ գրով, այլ աւանդութեամբ, զի յեւթն աւրս յայս ոչ մտանէին ի յարկս հեթանոսաց, զի մի պղծիցին, զի զզատիկն ուտելոյ արժանաւորք եղիցին, եւ սովորութիւն էր նոցա եւ աւրէն յաւիտենական, զի չորեքտասաներորդն աւր երիկուն զենուին եւ ուտէին, զի մի յայդ ելանիցէ: Եւ Տէրն աշակերտաւքն զայս արար, զի թէ ոչ կատարեալ էր զայն, որ հնարիւք սուտ վկայութիւնք մատուցանէին չարախաւսելով, սակայն ի դէպ էր ասել, թէ զաւրէնսն մեր քակէ եւ զզատիկն յերեքտասաներորդին առնէ, բայց հրէայքն ինքեանք լուծին զաւրէնսն, զի յաղագս նախանձուն եւ խոռվութեան ոչ կերան զզատիկն, այլ ի միւս աւրն հանին եւ ընկալան ի վերայ իւրեանց զերկրորդ անէծս, զի երիկունն ոչ զենին եւ կերան<sup>օհօվի</sup>: Եւ երկրորդ. զի յայգն հանին եւ յայտ աստի է, զի ասէ՝ ոչ մտանէին յապարանս, զի մի պղծիցին, այլ զի ուտիցին զզատիկն: տե՛ս զանհաւատութիւն նոցա, զի զաւրէնս լուծին եւ ոչ խտրէին, եւ յապարանսն մտանել խտրէին:**

**Դարձեալ<sup>օհօվի</sup> ոմանք ասեն, թէ եւ նոքա այլ ի նոյն դաժանն լուսնին կերան զզատիկն, այլ ոչ մտանել յապարանսն այս էր, զի**

**թէպէտ զգառնն կերեալ էին, սակայն զեւթներորդ աւր բաղարջ ուտէին, եւ այս զգուշութիւնս, որ առնէին, յաղագս բաղարջին էր:**

«Ասեն ցնա հրեայքն. ”Մեզ ոչ է արժան սպանանել զոք”» (Յովի. ԺԸ 31):

**Նախ յաղագս այնորիկ ասեն, զի իշխանութիւն մահապարտաց դու ունիս, եւ ոչ՝ մեք: Երկրորդ. թէ ի տաւնիս, որ է ազատութիւն, ոչ է մեզ զաւրէն սպանանել զոք: Երրորդ. զի թէպէտ կարէին սպանանել զնա այլով մահուամբ, որպէս զՍտեփանոս, սակայն ոչ կամէին: Այլ այս էր յաւծարութիւն նոցա, զի հոչակելի եւ ձաղելի մահուամբ սպանցեն զնա, սակս այնորիկ ասէին.**

«Մեզ ոչ է արժան սպանանել զոք»:

«Եմուտ միւս անգամ յապարանս Պիղատոս, կոչեաց զՅիսուս [եւ ասէ զնա]. Դո՞ւ ես թագաւորն հրեից» (Յովի. ԺԸ 33):

**Երիս չարախաւսութիւնս մատուցին զփրկչէն հրէայքն առ Պիղատոս. նախ՝ թէ խոռովէ զժողովուրդն, այսինքն՝ ի սորա քարոզութենէն բազումք առ նա դառնան եւ կէսք մեզ հաւատան, եւ խոռովութիւն է հանապազ յերկոցունց միջի, բայց զայսմանէ ոչինչ փոյթ եղեւ Պիղատոսի: Երկրորդ. թէ արգելու հարկս տալ կայսեր, սակայն եւ ոչ զայսմանէ փոյթ եղեւ Պիղատոսի, զի յորժամ կամեցան փորձել զթիսուս, թէ հարկս տացուք կայսեր, թէ՝ ոչ, ասաց Յիսուս. «Ճուք զկայսեր՝ կայսեր, եւ զԱստուծոյ՝ Աստուծոյ» (Սատր. ԻԲ 21), եւ այս համբաւ ընդ ամենայն գաւառն տարածեալ էր, վասն որոյ ոչ փոյթ ինչ էր Պիղատոսի: Երրորդ. զի ասէին, թէ զանձն թագաւոր անուանէ: Յորժամ զայս լուաւ, երկեաւ, թէ գուցէ փոքր-փոքր զաւրք ժողովէ եւ զթագաւորութիւնս յափշտակէ: Այսր աղագաւ հարցանէ զթագաւորութենէն Պիղատոս:**

«Պատասխանի ետ Յիսուս. ի քէն ասես զայդ, եթէ այլք ասացին քեզ զինէն» (Յովի. ԺԸ 34):

**Է՞ր վասն ասէ, թէ՝ ի քէն ասես զայդ, թէ այլք: Զի ինքն գիտէր, որ հրէիցն էր չարախաւսութիւն. նախ՝ այս է, զի գիտասցէ, թէ յինէնէ հարցանէ նմա զպատասխանին տացէ, իսկ թէ հրէայքն ասացին, թող գան կացուցանեն, թէ յորում ժամու կամ տեղւոջ ասացեալ եմ: Երկրորդ. զի ասեն, թէ յաղագս այսորիկ եհարց զՊիղատոս, թէ որպէս հրէայքն ակամայ թագաւոր խոստովանին զնա, թերեւս նա հեթանոս գոլով խոստովանի զնա թագաւոր:**

## Գլուխ Ժմ

«Յայնժամ ա՛ռ Պիղատոս զՅիսուս եւ գան Եհար» (Յովի. Ժթ 1):

**Ոմանք ասեն, թէ ինքն եհար եւ այլք ասեն, թէ հրաման ետ զինուորացն, եւ նոքա հարին: Եւ յայտ է, զոր թագաւորն հարկանէ, այլ ոչ ոք իշխէ ի նա ձեռն արկանել:**

«Եւ զինուորացն արարեալ պսակ ի փշոց՝ Եղին ի գլուխ նորա» (Յովի. Ժթ 2):

**Այսինքն՝ ի կնիւնէ ծովու, որ փուշ լինի, զի որ յեզր ծովուն է, առաւել պինդ ունի զփուշն, քան այն, որ ի ցամաքի: Դարձեալ՝ ըստ բարուական տեսութեան նշանակէ թագն փշեղէն զագահութիւն, որ վասն վկայութեան Քրիստոսի յինքն ունի զփուշ հոգացողութեան եւ պատրանացն: Եւ այս թագ եղեալ կայ ի գլխաւորս եկեղեցւոյ, որք են առաջնորդք, եւ այնպէս յոյժ այպանեն եւ խոցոտեն զգլուխն Քրիստոս, զի վասն ագահութեան առաջնորդաց ժողովուրդն հայհոյէ զհաւատն Քրիստոսի, մանաւանդ թէ՝ զՔրիստոս: Իսկ կարմիր քղամիդն նշանակէ զսաստկութիւն բոնաւորաց եւ իշխանաց, զի զարիւնս աղքատաց ծծեն եւ անիրաւ դատեն: Եւ եղեգամբն նշանակէ զունայնութիւն եւ զխարէնութիւն կեղծաւորաց: Եւ քանզի այս թագ եւ հանդերձ եւ ապտակ, համեմատելով առ համբերութիւն Քրիստոսի, արժանաւորեն վարձուց, եւ հաճոյ Աստուծոյ եւ առիթ փառաց, վասն այն առ ի բարեգոյն մեկնեմք, զի այսու նշանակի չորս յատկութիւնք գովելիք, որպէս Քրիստոսի, նոյնպէս եւ ընտրելոց նորա յարմարին. նախ՝ զի ամենայն, որ ցաւ կրէ վասն ճշմարտութեան, է նմա իբրեւ զթագ, իսկ արիւնն հեղեալ, որով բոլորն կարմրացաւ եւ կամ բոցափայլ զերմութեամբ սիրոյ, որով վասն մեր զարիւն եհնեղ, նմա է իբրեւ թագաւորական ծիրանի: Արդ, նորա չարչարելի եւ պարզ հեղութիւն եւ խոնարհութիւն, որ արտաքուստ իբրեւ զեղէզն ունայն կարծիւր մարդկան, նմա է իբր զթագաւորական ոսկեղէն գաւազան, իսկ ապտակին տանիլն է նմա իբրեւ զփորձ եւ ի նշան զինուորական, զի ապտակ տուեալ լինի զինուորաց:**

**Գիտելի է, զի Յոհաննէս զանց առնէ, թէ որպէս կին Պիղատոսի առաքեաց, թէ չկայ քո եւ արդարոյն: Ոսկեբերանն եղեւ, ասէ, այս յԱստուծոյ, իսկ այլք ոմանք, թէ ի սատանայէ է, զի ծանեաւ, թէ Աստուած էր եւ կամէր աւերել զդժոխսն եւ յափշտակել զիւրսն չարչարանաւք իւրովք, բայց ոչ երեւի, թէ սատանայ իմացաւ զայն, եթէ ոչ զկնի մահուանն Քրիստոսի: Արդ, եթէ հարցանես, թէ Աստուած ընդէ՞ր յայտնեաց, զի այնու երեւի, թէ**

կամէ՞ր Աստուած խափանել զչարչարանսն Քրիստոսի: Ասեմք, զի գիտէր Աստուած, զի այնու ոչ լինէր խափան, այլ գիտէր, զի հրէայքն եւ դեւքն այնու առաւել բորբոքէին առ ի խստութիւն չարչարանացն Քրիստոսի, եւ այս վայելչաբար եղեւ առ ի յայտնել Քրիստոսի արդարութիւն եւ առ ի տալ զտեղի պատճառ դարձմանն ի չարէ եւ առ ի բառնալ զամենայն պատճառ ի Պիղատոսէ եւ ի հրէիցն, զի անպատասխանի լիցին:

Դարձեալ՝ եւ զայս եւս զանց առնէ Յոհաննէս, թէ առաքեաց Պիղատոս զՅիսուս առ Հերովդէս, եւ նա ոչ արար նշանս եւ ոչ պատասխանի, եւ այս վասն երեք պատճառի. նախ՝ առ ի տալ աւրինակ փախչելոյն ի փառաց եւ երեւելի լինելոյ յաշխարհի եւ ոչ տրտմել վասն արհամարհանաց աշխարհիս, եւ այս է իմաստնոյ գործ: Երկրորդ. զի Քրիստոս կամէր յայնժամ վասն մերոյ փրկութեան չարչարիլ եւ մեռանիլ, ուստի ոչ վայելէր յայնժամ սքանչելեաւք փառաւորիլ: Երրորդ. վայելէր, զի նա վասն մեր բազում չարչարանս կրէր, նոյնպէս վայելէր, զի զայս կերպ արհամարհանաց եւ ամաւթոյ կրէր, զի մի է այս ի գործարագոյն կրիցն Քրիստոսի:

Աստ խնդրի, թէ ընդէ՞ր Տէրն երբեմն տայր պատասխանի եւ երբեմն՝ ոչ. նախ՝ զծշմարտութիւն հաւատոյ մեզ ուսուցանէ, զի պարտ է յամենայն տեղիս խոստովանել, որպէս ինքն ասաց. «Ես յայտնապէս խաւսեցայ ի տաճարին» (հմնտ. Յովի. ԺԸ 20), բայց երբեմն լոել յետ խոստովանութեան, զի մի խափան ինչ լիցի գործոյն ի բազում խաւսելոյն:

Երկրորդ. զի ցուցցէ, թէ ինքն է գերագոյն Աստուած եւ Որդի Աստուծոյ, վասն որոյ պարտ էր իր ինչ յայտնել զգուշութեամբ, բայց զծշմարտութիւն հաւատոյ պարտ է<sup>1</sup> մասնաւորաբար լոել. նախ՝ զի մի ամբարտաւան եւ յանդուզն երեւեսցի զմեծութիւն իւր կատարելապէս յայտնելով: Երկրորդ. զի զսրբութիւն իւր մի տացէ շանց կամ յերգիծումն խոզաց, այսինքն՝ զի մի զԱստուածութիւն իւր յանդունումն եւ յայպանումն տացէ: Երրորդ. զի թէ յայտնեալ էր զԱստուածութիւն իւր, ուրեմն ոչ կարէին հանդուրմել եւ խափան լինէր գործոյն:

Երրորդ. զկատարեալ աւրինակ առաքինութեան ուսոյց Տէրն մեր, լինել ընդդէմ սատանայի եւ դատաւորաց, զի<sup>2</sup> փոքր խաւսելովն ուսոյց ծանր լինել եւ համեստ, եւ հեզ, եւ քաղցր, եւ հաստատ, եւ ոչ խաւսել, զի ցուցցէ զինքն գառն եւ աղաւնի անբիծ:

<sup>1</sup> Ը էր

<sup>2</sup> Ը էք առաքինութեան ... դատաւորաց, զի

**Չորրորդ.** վասն դատաստանին, ուր գոյր յոյժ աղաղակ եւ խոռվութիւն, վասն որոյ ոչ վայել էր ջանաւք զբարձրութիւն Աստուածութեան յայտնել, զի այնպիսի մեկնութիւն աստուածային ճշմարտութեան բազում ժամանակ խնդրէ, եւ Պիղատոս եւ զինուորք նորա թանձրամիտք էին եւ անսովորք առ այնպիսի բան, վասն որոյ ոչ կարէին վաղվաղակի վերահասու լինել այնպիսի բանից, եւ յայսցանէ յայտ է երբեմն խաւսիլն եւ ոչ խաւսիլն, բայց Ոսկեբերանն ասէ. «Վասն այն լոէր թիսուս, զի անդ ոչ գոյր ճշմարիտ դատաստան, այլ միայն ձեւ դատաստանի, որպէս ժողովումն աւազակաց ի վերայ ըմբռնելոց»: Եւ ըստ Որոգինէ. «Լոէր թիսուս, զի արհամարհէր զձայն չարախաւսութեան սուտ վկայիցն, մեզ աւրինակ տալով զչարախաւսացն ստութիւն ոչ արժանի արկցուք պատասխանւոյ»: Ըստ այլոց՝ լոէր թիսուս, վասն զի գիտէր, զի զոր ինչ ասէր, ընդդէմ նորա բերեն, եւ վասն այն ամենայն պատճառ անաւգուտ էր: Դարձեալ՝ լոէր, զի զամենայն հեզութիւն լցուսցէ եւ մեզ ուսուսցէ, եւ զի կատարեսցի մարգարէութիւն եսայեայ եւ Դաւթի. «Եղէ ես որպէս մարդ, որ ոչ խաւսի» (տես Սահմ. Լէ 15), եւ թէ՝ «Իբրեւ զոչխար առաջի կտրչի անմոռւնչ կայ» (տես Եսայի ԺԳ 7):

«Էր ուրբարն Զատկի» (Յովի. ԺԹ 14):

**Ուրբաթն ի յոյնն պարսկեւի ասի,** եւ պարսկեւին պատրաստութիւն ասի:

«Եւ էր ժամ իբրեւ վեցերորդ, եւ ասէ ցիրեայսն. “Ահա, թագաւորդ ձեր ցձեզ”» (Յովի. ԺԹ 14):

**Մարկոս ժամ երրորդ ասէ** (հմնտ. Մարկ. ԺԹ 25), եւ սա՝ վեցերորդ: Եւ արդ, զի՞նչ այս. այս են, զի Մարկոս ի Պիղատոսի վճիռէն առնէ սկիզբն եւ ասէ մինչեւ ի խաչն երրորդ ժամ, իսկ սա ի տանէ քահանայապետին մինչեւ ի խաչն դնէ վեց ժամ: Եւ այլք ասեն, թէ քան զերեքն ի վեր էր, եւ քան զվեցն՝ ի վայր, ըստ որում վեցն ոչ էր լցեալ, Մարկոս երեք ասէ, եւ ըստ որում զերեքն անցեալ էր, Յոհաննէս վեց ասէ էր ժամ:

«Եւ նոքա առեալ տանէին զնա, եւ բարձեալ էր ինքնին զխաչափայտն» (Յովի. ԺԹ 17):

**Այլ աւետարանիչքն զՍիմոն պահակն ասեն բարձող խաչին,** եւ սա զինքն ասէ բարձող: Արդ, երկոքեանն ճշմարիտ են, զի յառաջ Տէրն եբարձ զխաչն եւ մեղմով երթայր զկնի նոցա: Նոցա այսպէս թուէր, թէ ի չարչարանացն, որ ի գիշերոյն մինչ յայն ժամն կը եալ էր, ոչ ունէր կարողութիւն ընթանալ, վասն որոյ կաւան զՍիմոնն եւ եղին ի վերայ նորա զխաչն:

«Եւ ելանէր ի տեղին, որ անուանէր Գագարն՝ *յունարէն*, [Եւ կոչէր] երրայեցերէն Գողգոթա» (Յովի. ժթ 17):

Եւ հայերէն՝ կառափելոյ տեղ, բայց թէ վասն է՞ր ինքն էր բարձեալ զխաչն. նախ՝ զի երեւի, թէ խրոխտաբար գնայ ի վերայ թշնամւոյն, որպէս ոք զմարդ հարկանելով զփայտն ի յուսն դնէ: Երկրորդ. զի կամաւ երթայր, որպէս ասաց. «Իշխանութիւն ունին դնել եւ դարձեալ առնուլ» (տես Յովի. ժթ 18). բայց թուի երկուս դէմս ցուցանել այսմ բանի, զի ասեն, թէ՝ դնեմ, երեւի, թէ մի անգամ առեալ ի յուսն եւ այժմ դարձեալ առնու, յիրաւի է, զի մինն յաւրինակէն յայտ է, որ իսահակաւ եբարձ (հնմտ. Ծննդ. ԻԲ), եւ երկրորդու՝ այժմ մարմնովս: Երկրորդ. ցուցանէ, թէ բարձեալ եմ, զի ամենայն ոք, որ զբեռն բառնայ, վասն այլոց կրէ զայն եւ ոչ վասն ինքեան, սոյնպէս անպարտ գոլով, որպէս ասէ՝ ոչ արար մեղս, այլ վասն մեր կրէ զայն:

«Եւ ընդ նմա երկուս եւս այլս [աստի եւ անտի եւ] ի միջի զՅիսուս» (Յովի. ժթ 18):

*Նոքա ընդ չարագործսն կամէին սպանանել, զի ինքեանք անպարտք երեւիցին, այլ տնաւրէնութիւն այսպէս պատշաճեցոյց, զի մարգարէութիւն կատարէր, թէ ընդ անաւրէնսն համարեսցի* (հնմտ. Եսայի ժԳ 12): Բայց թէ զի՞նչ էին աւազակքն, հրէա՞յ, թէ հեթանոս: Ասեն, թէ այն, որ հաւատաց, յառաջ հեթանոս էր, եւ յետոյ ընդ աւրինաւք էր եկեալ մտեալ, իսկ որ ձախմէն, որ ոչ հաւատաց, բուն հրէայ էր: Իսկ թէ զի՞նչ անուանէ<sup>1</sup> նոցա. Հաւատացելոյն Դեմնոս եւ անհաւատին՝ Կեստոս: Իսկ այն, որ ապտակեաց՝ Մաղքոս, զորոյ զունկն եհատ Պետրոս, իսկ որ եթուք ի Տէրն՝ Ոչքոր, եւ այն, որ զլեղին արբոյց՝ Ռագոս, եւ որ զկողն խոցեաց՝ զՂունկիանոս հարիւրապետն ասեն, սա միականի էր, խոցեաց զկող կենարարին եւ զտէգն սրբեաց եւ յաչքն հասոյց եւ առժամայն լուսաւորեցաւ եւ հաւատաց: Բայց ոչ է խոցողն սա, այլ այս գործ անարդ ծառայիցն, լինի թէ այլ ոք էր:

Գիտելի է, զի Մատթէոս պատմէ վասն Յուդայի, թէ զղջացաւ եւ դարձոյց զարծաթն եւ չոգաւ խեղգեցաւ: Արդ, զղջումն այն ընդունելի<sup>2</sup> է:

Ասեմք, թէ զղջումն երիս կերպիւ իմանի. նախ՝ զղջումն է տրտմութիւն վասն մեղաց եւ վասն աստուածային բարութեանց, ըստ որում մարդ դառնայ ի չարէ եւ յաւժարանայ առ ի կրել պատիժ վասն մեղաց: Եւ այսպիսի զղջումն ոչ գոյր ի Յուդայ:

<sup>1</sup> Ը անուն է

Երկրորդ. ասի զղջումն դառնութիւն եւ տրտմութիւն եղեալ վասն գարշելոյ ի մեծութենէ մեղաց, ըստ որում մարդ յուսահատի, եւ այսպիսի զղջումն գոյր ի Յուղայ կրկին պատճառաւ. առաջին՝ եղեւ մասնաւրապէս ի խղճմտանաց կայծէ, որ ոչ ամենեւին շիջեալ էր ի Յուղայ: Երկրորդ. եղեւ մասնաւրապէս ի ներգործութենէ բանսարկուին, զի ասէ Ոսկեբերանն, թէ՝ «Սատանայ ոչ թոյլ տայ այնոցիկ, զորս փորձէ տեսանել զչար նախքան զկատարումն չարին, ապա ուրեմն թոյլ ետ սատանայ Յուղայի, զի առ ինքն դարձցի եւ զմեծութիւն մեղացն իւրոց ծանիցէ եւ յուսահատեսցի»:

Դարձեալ՝ լինի, թէ Աստուած կամեցաւ չնորհ ինչ առնել մատնչին իւրոյ, վասն այն նմա ետ պատճառ զղժման ինչ եւ նա ինքեամբ յանյուսութիւն անկաւ: Երեք կերպիւ ասի զզղջումն տրտմութիւն եղեալ վասն իմանալոյ միայն զպատիժ մեղացն, այսպիսի զղջումն գոյ ի դատապարտեալսն, որպէս գրեալ է յիմաստութեան. «Եւ զղացին ի միտս իւրեանց. եւ առ նեղութիւն անձանցն հոգւոց<sup>1</sup> հանիցեն» (տես Ինաստ. Ե 3), իսկ Յուղա ունէր զայս երկու ազգ զղջումմ<sup>2</sup>, սակայն անյոյս եղեալ եւ զառաջինն ոչ ունէր, վասն այնորիկ ոչ եղեւ ընդունելի զղջումն նորա: Իսկ Յուղաս զղացեալ ընկեց զարծաթն, թերեւս ոչ սպանցեն՝ գիտելով զմեծութիւն վնասուն: Իսկ նոցա առեալ զարծաթն ոչ դարձան, բայց գնեցին զագարակն բրտի արծաթովն այն: Արդ, առ ի մեկնել խորհրդաբար գիտելի է, զի Աստուծոյ նախախնամութեամբն եղեւ, զի ի բրտէ լիցի գնեալ ագարակն ի գերեզման աւտարաց՝ գնով<sup>3</sup> արեանն Քրիստոսի: Բրուտ նշանակէ զԱստուած՝ Հայր ամենեցուն կերպարանող, եւ ի նմանէ գնեցաւ ի գնոջ չարչարանացն Քրիստոսի ագարակ երկնային, զի անդ ընդ Քրիստոսի մեռցին եւ թաղեսցին այնոքիկ, որ նախ աւտարք էին յԱստուծոյ կտակէ, այսինքն՝ հեթանոսք եւ ամենայն մեղաւորք:

Եւ զի զաւագակացն խաւսիլն ոչ յիշէ Յոհաննէս, տեսցուք, թէ ուստի<sup>4</sup> ճանաչէր բարի աւազակն զՔրիստոս: Ասեմք, թէ Երեք կերպիւ ճանաչէր.

Նախ՝ ճանաչէր զնա ի հասարակաց համբաւէ, որ տարածեալ էր յամենայն ժողովուրդս Հրէստանի, վասն սքանչելեացն Քրիստոսի եւ վարդապետութեան:

<sup>1</sup> Ե Ը յոգոց

<sup>2</sup> Ե զղջումնն

<sup>3</sup> Ե գնելով

Երկրորդ. կարէր ճանաչել ի վարուցն Քրիստոսի ի համեստութենէն, որ երեւէր ի նմա՝ անմեղութիւն, ժուժկալութիւն եւ հաստատմառթիւն:

Երրորդ. ճանաչեաց ի զարմանալի ազգմանցն եղական շնորհացն, որ զսիրտ նորա յանկարծակի փոխեաց առ ի յիմանալ, թէ նա է Աստուած եւ Տէր, վասն որոյ դարձոյց զբան իւր առ Քրիստոս՝ ասելով. «Յիշեա՛ զիս, Տէ՛ր, յորժամ գաս արքայութեամբ» (տես Ղուկ. ԻԳ 42):

Զկատարելութիւն սուրբ աւազակիս գիտելի է, զի յանկարծակի տուեալ եղեւ նմա հաւատ, յոյս եւ սէր. առաջին՝ յայտնի է հաւատ նորա, զի զխաչն եւ զմերձ ի մահն Տէր եւ թագաւոր կարդաց: Երկրորդ. այնու, զի ոչ հանդուրժեաց թշնամանաց ընկերին: Իսկ յոյս նորա այնու յայտնի է, զի ոչ միայն թողուլ աղաչէր, այլ յիշել ի փառս Աստուածութեան նորա: Եւ սէր նորա այնու երեւի, զի ոչ այլ ինչ խնդրեաց, բայց թէ թագաւորութիւն Քրիստոսի:

Եւ ծանի՛ր, զի այս աւազակս երեք շնորհաւք ընկալաւ ի վեր քան զամենայն մարդիկ. նախ՝ զի նա միայն ընտրեցաւ խաչակից եւ մահակից լինել Քրիստոսի, եւ թէ ասես՝ միւս աւազակն եւս առ Տէրն էր, ասեմք, թէ սա հաւատով մեռանէր ընդ Տէրն, եւ նա՝ անհաւատ, զոր աւրինակ եւ ծուղա եւս առաքեալ էր եւ մերձ Քրիստոսի, այլ կորեաւ, զի ուրացաւ եւ ոչ ինչ էր շահ մերձ լինել Քրիստոսի, սոյնպէս եւ մեզ բարւոք գործով պարտ է մերձ լինել Քրիստոսի, քան պիղծ մարմնով եւ վարուք: Երկրորդ. ընկալաւ զշնորհս, զի նա միայն գտաւ ի ժամ խաչելութեան քարոզող եւ վկայ եւ դաւանող: Երրորդ. եղական շնորհ խոստումն պարգեւաց փառացն, որ ասաց. «Այսաւը ընդ իս իցես ի դրախտին» (Ղուկ. ԻԳ 43): Աստ դրախտ ոչ այլ ինչ իմասցի, բայց միայն տեսութիւն Աստուծոյ, որ էր մերձ նմա ի նոյն աւրն:

«Գրեաց եւ տախտակ [մի] Պիղատոս» (Յովի. ԺԹ 19):

Ոմանք ասեն, թէ հրէայքն աղաչեցին գրել, եւ ոմանք ասեն, թէ՝ ոչ: Այլ սովորութիւն էր հռոմայեցւոցն, որ զմահապարտն յորժամ [դատապարտ]էին<sup>1</sup> զվնասն, որ գործեալ էր ի վերայ գլխոյ նորա գրէին, զի ամենեքեան գիտասցեն, թէ վասն այսր գործոյս է պատժեալ, բայց թէ որպէս գրեաց կամ ամրացոյց ի խաչն, ասեն, թէ ի վերայ քարտիսի գրեաց եւ սոսնձով ի տախտակի ամրացոյց եւ զայն ի վերայ խաչի գլխոյն բեւեռեաց: Եւ ասեն, թէ յառաջ խաչն որպէս գաւազան երեք ստեղ ունէր եւ

<sup>1</sup> Բ չեք

**յորժամ զայս տախտակս ի գլխին բեւեռեցին, չորեքկուսի դարձաւ, բայց ճշմարիտն այս է, զի ի սկզբանէ քառանկիւն եղեւ:**

**Արդ, ասեն ոմանք վասն խաչին, թէ չորս ազգ փայտ էր. բունն, որ պատուանդանն էր, յորում զխաչն ի նմա ամրացուցին, այն կիպարի էր, որ է անուշահոտ, եւ որ բունն էր ուղղակի երկայն՝ նոճի էր, որ է բարձրագոյն, խոտորնակ թեւք խաչին՝ արմաւենի էր, որ է քաղցրաբեր: Տախտակն, զոր Պիղատոս գրեաց, ձիթենի էր, որ է պարարտ: Եւ այս չորս ազգ փայտս ըստ խորհրդոյ մեկնեալ լինի, զի կիպարին նշանակէ զբարեգործութիւն հոչակեալ, զի անուշահոտ է, եւ դարձեալ՝ ցուցանէ, թէ սկիզբն նորա յԱստուածութենէն էր, զոր այժմ իբրեւ զմարդ խաչի: Եւ նոճին նշանակէ զբարձրագոյն մտաց տեսութիւն, որ հաստատեալ իցէ ի հաւատն, զի բարձր է: Եւ արմաւենին նշանակէ զքաղցր արդարութեան պտղաբերութիւն, զի քաղցր է, իսկ ձիթենին՝ զպարարտ ողորմութիւն: Եւ սոյնպէս խաչն ունի չորս թեւս, որ եւ խորհրդաբար չորս ինչ նշանակէ. վերին մասն՝ գլուխ խաչին, նշանակէր զնա արարիչ երկնի եւ երկնայնոցն եւ զբացումն արքայութեան, եւ ներքին մասն՝ երկրի եւ երկրայնոցս, եւ զաւերումն դժոխոց: Իսկ աջ թեւն ցուցանէր զսէրն նորա ի մեզ սփոեալ եւ զպարգեւսն փառաց: Եւ ձախն՝ զյանցանաց թողութիւն եւ զպարգեւսն չնորհաց, եւ կամ աջն յաւգնութիւն հասեալ հաւատացելոց, եւ ձախն զհարումն դիւացն, որ ի ձախմէն են:**

**Իսկ<sup>1</sup> տախտակն ձիթենի զլուսաւորութիւն իմաստից Հոգւոյն Սրբոյ առ մերս բնութիւն: Եւ էր գրեալ ի նմա չորս բան. նախ՝ զանունն, թէ Յիսուս: Երկրորդ. զգաւառ նորա, թէ՝ Նազարեցի: Երրորդ. զի իշխանութեան անունն՝ թագաւոր: Չորրորդ. զոր վնաս դնէին նմա, թէ՝ հրեից, ասէր, թագաւոր եմ:**

«Զայն տախտակ ընթերցան բազումք ի հրեից, զի մաւտ էր ի քաղաք անդր տեղին, ուր խաչեցաւ Յիսուս» (Յովի. Ժթ 20):

**Հնդէ՞ր արտաքոյ քաղաքին կամեցան խաչել. նախ այս է, զի զամենայն մահապարտսն անդ տանէին սպանանել, զի ի հոտոյ գարշութեան մի՛ զազրացին քաղաքացիքն: Հստ իւրեանց սովորութեան եւ զՏէրն մեր անդ տարան: Երկրորդ. զի ի դուքս տեղիս համարձակ երթան մարդիկք<sup>2</sup> ի տեսանել զայնպիսի գործն: Երրորդ. զի չարչարանք նորա ամաւթալի լիցի, եւ այնպէս առաւելասցի փառք, վասն զի յաւժարութեամք համբերեաց: Չորրորդ. զի ի ճանապարհին էր, ամենայն, որ ելանէր եւ մտանէր ի քա-**

<sup>1</sup> Բ իսկ դարձեալ

<sup>2</sup> Ը մարդիկ

դաքն եւ տեսանէր, թէ այս անուն յաղագս այսպիսի գործոյ խաչեալ է:

Դարձեալ՝ արտաքոյ քաղաքին խաչին Տեառն նշանակ էր զելն նորա մարմնով յաշխարհէս, եւ այս մեզ ի խրատ եւ յուսումն եղեւ, որ ամենայն ոք, որ զկնի Քրիստոսի ընթանայ, զխաչ հնագանդութեան եւ չարչարանաց յանձն առնու գնալով զհետ Քրիստոսի:

Դիմելի է, զի որ յայնժամ արտաքոյ էր քաղաքին, այժմ ի ներս է տեղին, զի զկնի աւերմանն Տիտոսի, այնպէս շինեցաւ, բայց թէ զիա՞րդ տնաւրինեաց յայնմ տեղւոջ խաչի նմա, վասն զի անդ էր թաղեալ նախահայրն Աղամ, պատշաճ էր, զի վասն նմա եկն Տէրն յաղագս որոյ մահ ի բնութիւն մուծաւ, ի վերայ նորա խաչի, զի վերստին կենդանացուսցէ զնա:

Դարձեալ՝ զաւրինակն կատարելոյ, որ անդ իսահակաւ խոյն կախեցաւ, բայց ոմանք ասեն զգերեզման նախահայրն յԵփրայիմ լինել, բայց ոչ է ճշմարիտ:

«Եւ էր գրեալ յունարէն, Եբրայեցերէն, դաղնատերէն» (տես Յովհ. ժթ 20):

Զիա՞րդ երիւք գրովս այսորիկ գրեաց. նախ այս է. զի յայնժամ երեք ազգս այս մեծագոյնք եւ անուանիք էին, զի եբրայեցիքն աւրինաւքն պերճացեալք էին, յոյնք վասն իմաստասիրացն եւ բազմազան իմաստութեամբքն<sup>1</sup> բարգաւաճեալք էին, լատինացիք վասն ընդհանրական իշխանութեան եւ բոնութեան զաւրացեալք էին, յաղագս այսորիկ նոցա գրովն միայն գրէ:

Երկրորդ. զի անդ կային հոռմայեցիք, զի իշխանութիւն Հրէստանի նոքա ունէին, գրէ դաղմատերէն, զի նոքա ընթեռնուն, եւ Հրէայերէն, զի նոքա Հրէայք էին, եւ յունարէն, զի բազումք կային բնակեալ յԵրկրին Հրէստանի յազգէն յունաց, զոր Անտիոքոս գերեաց զերկիրն կապագովկացոց եւ տարեալ անդ բնակեցոյց, զի յԱղեքսանդրէ մինչ ի Յուլիոս կայսր ի մէջ Հրէից կային յոյնք, վասն որոյ երիւք գրով գրեցաւ: Եւ դարձեալ՝ ասեն ոմանք, թէ յայնժամ այնչափ գիր կայր յաշխարհս:

Երրորդ. զի ցուցանէր, թէ սորա վարդապետութիւն ընդ երիս մասունս աշխարհիս տարածելոց է, զոր նոյ յԵրիս բաժանեաց զաշխարհս. յԱսիայ, Լիբիայ, յԵւրոպիայ, եւ ետ երից որդւոց իւրոց. Սեմայ, Քամայ, Յաբեթայ:

«Պատասխանի ետ Պիղատոս. «Զոր ինչ գրեցին, գրեցի»» (Յովհ. ժթ 22):

<sup>1</sup> Յ իմաստասիրութեամբքն

Նախ զայն ասէ, թէ զոր ինչ մարգարէքն գրեցին վասն ոորա, թէ թագաւոր է հրէից, ես զնոյն գրեցի: Իսկ երկրորդ. յորժամ նու ոչ գնես, այլ թէ՝ զոր ինչ գրեցի, գրեցի, ցուցանէ, թէ այս է ճշմարիտ, զոր ես գրեցի: Եւ զայս ոչ թէ յինքենէ գրեաց, այլ ի Հոգւոյն տնաւրէնութենէ:

«Իսկ զինուորքն իբրեւ հանին ի խաչ զՅիսուս, առին զիանդերձս նորա եւ արարին չորս մասուն» (Յովի. Ժթ 23):

Երեւի, թէ չորք էին զինուորքն, արարին, զի իւրաքանչիւր զմինն առցեն, բայց դու մի՛ խառն ի խուռն ինչ կարծէր զայս եղեալ կամ պատահմամբ, այլ Հոգւոյն տեսչութեամբ, զի լցցի, թէ՝ «Բաժանեցին զհանդերձս իմ» (Սաղմ. ԻԱ 9), բայց ոմանք ասացեալ են, թէ հինգ ունէր հանդերձս Տէրն, իւրաքանչիւր զմինն առին եւ<sup>1</sup> ի վերայ պատմուճանին վիճակ արկանէին, զի ոչ պատառեցին, որ ցուցանէ զմիութիւն ընութեան ի Քրիստոս անբաժանելի՝ աստուածայինն ընդ մարդկայինն, որ էր առանց կարանի, նշանակէ այսինքն՝ զառանց սերման ծնունդ Տեառն Յիսուսի: Իսկ որք զՔրիստոս յերկուս բաժանեն, առաւել չար են քան զհրէայսն եւ զիսաչանունսն, զի նոքա ոչ բաժանեցին զպատմուճանն:

Եւ ո՞յք էին հինգ հանդերձն Քրիստոսի. շապիկն, ասեն, եւ ընկերն, եւ մին այլ բոլոր ի վերայ շապկին, եւ մին վերարկուն, եւ հինգերորդն՝ անկար պատմուճանն:

Եւ այս որպէ՞ս կարի լինել, զի ինքն պատուիրեաց աշակերտացն ոչ ստանալ երկու հանդերձս, ինքն զիա՞րդ ստանայր:

Ասեն, թէ յայս միտս ասաց զայս. նախ՝ զի մի երկու դաս հանդերձ ստանալ, զմէկ դասն ի յանձն զգենուլ եւ զմիւսն ի տանն պահել, այլ զայն կարաւտելոց բաշխեալ: Եւ երկրորդ. զի ուսուցանէ ոչ երկուս-երկուս զգենուլ:

«Ասէ ցաշակերտն. “Ահա նայր քո”» (Յովի. Ժթ 27):

Աստ խնդրի, թէ զի՞նչ յայելումն եղեւ Յոհաննու վասն յանձին<sup>2</sup> առնլոյ զՄարփիամ:

Ասեմք, թէ յոյժ յաւելաւ հայելով ի կողմն Քրիստոսի, եւ Մարփիամու եւ Յոհաննու, եւ նախ ի կողմանէ Քրիստոսի, զի մեծ երանութիւն է սիրիլ յԱստուծոյ, եւ սա առաւել սիրեցաւ ի Տեառնէ, այսինքն՝ զի եզականաբար կոչմամբ որդի ասացաւ ի Տեառնէ, առընչաբար ըստ համեմատութեան Մարփիամու:

Երկրորդ. զի ընտրութիւն եւ սէրն Աստուծոյ առ մեզ պատճառ է ամենայն բարեաց, ապա ուրեմն ընտրեցաւ ի Քրիստոսէ

<sup>1</sup> Ը Հեք եւ  
<sup>2</sup> Յ անձին

**որդի կոչիլ Մարիամու, վասն որոյ ցուցանի, թէ արժանի եղեւ ի սոյն:**

Երրորդ. ի կողմանէ Մարիամու երեւի, զի մայր Տեառն ոչ միայն վասն Տեառն բանին հնազանդեցաւ, այլ եւ յայնմ հետէ ունէր զինքն առ Յոհաննէս իբրեւ առ եզական որդի: Արդ, եթէ մեք աղաչելով զկոյսն արժանի լինիմք փառաց, ո՞ր չափ եւս առաւել նա:

**Չորրորդ.** եթէ ծանաւթութիւն այլ սրբոց սրէ զմիտս աշակերտացն ի սրբութիւն եւ ի սէրն աստուածային, ապա ուրեմն առաւել ընտանութիւն մաւր Տեառն զնա ի բարին յաւել եւ առատացոյց:

**Դարձեալ հինգերորդ.** ի կողմանէ Յոհաննու, զի ամենայն սրբոց սովորութիւն է զպարգեւսն Աստուծոյ ճանաչել գոհութեամբ, եւ որքան մեծ լինի, այնքան յաւէտ գոհանան, վասն որոյ պարտ է իմանալ, զի Յոհաննէս գիտէր յատուկ սիրեցեալ զինքն ի Քրիստոսէ եւ փոխանակ այնմ սիրոյն եւ ինքն սիրէր զՔրիստոս:

**Վեցերորդ.** զի չնորհք Հոգւոյն Սրբոյ իջեալ ի սիրտ մարդոյն ըստ մեծութեան Հոգւոյն ածէ զնա ի կատարելութիւն: Արդ, Յոհաննու յանձնեցաւ ի տեղի Քրիստոսի, ապա ուրեմն չնորհք Հոգւոյն Սրբոյ եզականաբար յաւել զսէրն ի Յոհաննու, որ առ Քրիստոս:

«Ասէ ծարաւի են» (Յովի. ԺԹ 28):

**Զայս ասաց վասն չորս պատճառի.** առաջին՝ զի մարմնաւորապէս ծարաւի էր, զի յոյժ չարչարեալ էր զգիշերն ամենայն: Երկրորդ. զի ոչ թէ միայն զգալապէս ծարաւի էր, եւ թէ էր ծարաւի, գիտէր, զի ոչ տային ըմպել, այլ վասն այն ասաց, թէ որպէս ամենայն ոք փափագէ զջուրն ի ստամոքսն մերձեցուցանել, սոյնպէս ես ծարաւի եմ զհոգիս եւ զմարմինս մարդկան ի խորհրդական մարմինս միաւորեալ: Երրորդ. ասաց, զի դառնագոյն ըմպելիս արբցէ: Չորրորդ. զի կատարեսցէ զմարդարէութիւն, թէ՝ «Ետուն ի կերակուր ինձ լեղի եւ ի ծարաւ [իմ արբուցին ինձ քացախ]» (Սահմ. ԿԸ 22): **Դարձեալ՝ ասաց ծարաւի եմ, այսինքն՝ փրկութեան մարդկան, որ յայտնապէս ցուցանէ զկատարեալ փափագն:**

«Եարբ, ասէ. «Ամենայն ինչ կատարեալ է»» (տես Յովի. ԺԹ 30):

**Կըկին ունի իմացումն.** առաջին՝ քացախին անուամբ զբոլորն ցուցանէ, որպէս եւ բաժակ զչարչարանքն, երկրորդ. զի այն վերջին չարչարանք նորա էր, եւ թէպէտ յետոյ մահն այլ քացախին ըմպելն նշանակէր, թէ այլ ոչ է զգալապէս կալ ի յերկրի: Դարձեալ ասէ՝ ամենայն մարդարէութիւն, որ վասն իմ՝ կատարեալ է:

Դարձեալ զայս ցուցանէ Տէրն՝ ասելով. «Ամենայն ինչ կատարեալ է», այսինքն՝ կատարեցաւ փրկութիւն մարդկան:

«Եւ խոնարհեցուցեալ զգլուխն՝ աւանդեաց զիոնին» (տես Յովհ. ժթ 30):

**Վասն երեք պատճառի խոնարհեցոյց զգլուխն.** առաջին՝ նշան խոնարհութեան առաջի Հաւր զհողին իւր նորա յանձնելով: Երկրորդ. խոնարհեցոյց ի նշան գթութեան մաւրն եւ ամենայն մարդկային սեռի: Երրորդ. առ ի վճարել զպարտիս բոլոր բնութեանս: Դարձեալ՝ «Հայր ի ձեռս քո յանձնեմ [զհողի իմ]» (տես Ղուկ. ԻԳ 46), այսինքն՝ զհողիս մարդկան յանձնեաց ի Հայր եւ զճանապարհն փոխեաց, որ ի գժոխս, եւ դարձոյց եւ ելս արար առ Հայր: Աստ գիտելի է, զի բազմադիմի ցաւս կրէր Քրիստոս ի խաչին, զի առաջին՝ ցաւեցաւ վասն յոյժ ապերախտութեան եւ բազմութեան մեղաց մարդկան: Երկրորդ. ցաւէր նմա վասն իւրոցն, այսինքն՝ մաւրն եւ աշակերտացն: Երրորդ. ցաւէր նմա վասն սակաւութեան սրբոցն եւ խաչակցացն եւ պատերազմողացն, որպէս աւազակն, որ յանդիմանեաց զմիւսն, վասն որոյ ողորմեցաւ Քրիստոս նմա: Զորրըրորդ. ցաւէր Քրիստոս վասն թողեալ գոլոյ մարդկայինս բնութեան: Հինգերորդ. ցաւէր վասն դառնազոյն ըմպելոյն, զի յոյժ փափագէր փրկութեան մերոյ, զոր մեք զներհակն մատուցանեմք: Վեցերորդ. ցաւ էր նմա վասն յոյժ դժուարութեան տանջանացն, մինչեւ ի վախճան, վասն որոյ ասաց. «Ամենայն ինչ կատարեալ է», այսինքն՝ ամենայն ազգ տանջանք եւ դառնութիւնք կրից յիս հասեալ է: Եւթներորդ. ցաւ էր նմա վասն անջատման հոգւոյն, վասն որոյ Հաւրն յանձին արար:

Արդ, առ ի դիւրագոյն իմանալ զչարչարանսն Քրիստոսի գիտելի է, զի ի տասն տեղիս յոյժ անարգեցաւ Տէրն. մին անարգեցաւ ի պարտէզն, եւ իբրեւ աւազակ ըմբռնեցաւ եւ կապեցաւ: Երկրորդ. ածաւ ի տունն Աննայի եւ անդ դատապարտեցաւ եւ ապտակեցաւ, եւ ի Պետրոսէ երեք անգամ ուրացեալ եղեւ: Երրորդ. կապեալ ածաւ ի տուն Կայիշափայ եւ թուք ընկալաւ: Զորրորդ. կապեալ ածաւ յապարանս Պիղատոսի եւ մատնեցաւ նմա որպէս զչարագործ: Հինգերորդ. ածաւ առ Հերովդէս, անարգեցաւ եւ սպիտակ հանդերձ ի նախատինս զգեցաւ: Վեցերորդ. վերստին ածաւ առ Պիղատոս եւ անդ ի խաչ խնդրեցին հանել: Եւթներորդ. ածաւ ի տեղի կառափելոյ եւ անդ խաչեցաւ: Ութներորդ. ի խաչին անարգէին. «Վա՛հ, որ քակէիր զտաճարն» (Մատթ. ԻԵ 40): Իններորդ. զի տիգաւ խոցէին: Տասներորդ. զի ոչ տային թաղել, մինչ խնդրեաց Յովսէփ:

Իսկ խաչին Քրիստոսի ի մէջ աւազակացն նշանակէ զկրկին կերպ ապաշխարողաց, որոց մարմինք ի խաչ ապաշխարութեան հանեալք են, եւ մին ընդ աջմէ կացուցեալ, այն է որ առնէ դիտաւորութեամբ աստուածային փառացն, եւ միւսն յահեկէ կացուցեալ, այն է որ առնէ զայն յաղագս փափագանաց մարդկային գովութեան: Եւ այն, զի նախ Քրիստոս զիսաչն տարաւ եւ ապա միւսն բռնադատեալ տարաւ զկնի նորա, նշանակէ, զի վայելուչ էր Քրիստոսի յառաջ ընթանալ իբր զգլուխ եւ մեք զկնի նորա իբրեւ աստուածային դատաստան, այսինքն՝ երկիւղիւ բռնադատեալք ի սկիզբն եւ զկնի սիրով շարժեալ մտցուք առ խաչն: Իսկ բռնադատութիւն Սրբոնի նշանակէ զամենեւին ակամայսն, այսինքն՝ զայնոսիկ, որ միայն ապաշխարէ վասն երկիւղի պատժոյ:

Իսկ բաժանումն հանդերձիցն Քրիստոսի ի չորից զինուորացն եւ պատմուճանին ոչ բաժանելոյ նշանակէ զհանդերձեալսն յեկեղեցւոյ, որ լինելոց էին ի չորս կողմ աշխարհիս ի զինուորաց, այսինքն՝ ի գիտնոց, որ ըստ աշխարհիս, սակայն մի է աղաւնի, յոր միշտ մնայ հոգի սիրով, եւ մի հաւտ, որ ոչ կարէ բաժանիլ:

Իսկ խաւարումն արեգական նշանակէ զկուրութիւն հրէիցն եւ զամենայն կուրութիւնս մարմնասիրաց ի մէջ եկեղեցւոյ: Եւ դարձեալ՝ զմահն Քրիստոսի նշանակէ նոյն խաւարումն, որով յաւետենական արեգակն կամեցաւ ի մարմին իւր թաքչիլ, զի զմեզ լուսաւորեսցէ:

«Տեսին, զի այն, ինչ մեռեալ էր, ոչ խորտակեցին» (Յովի. ԺԹ 33):

Աստ խնդրի, թէ ընդէ՞ր ասէ թէ իբրեւ եկն առ Յիսուս, զի Յիսուս կացուցեալ էր ի մէջ երկուց աւազակացն, պարտ էր սկսանել ի մի աւազակին եւ ըստ կարգի գալ առ Յիսուս, որ ի միջին կայր եւ ապա երթալ առ միւս աւազակն: Առ որս ասեմք, թէ երկուս էին, որ խորտակէին զբարձսն, զի մին խորտակեաց զբարձ մի աւազակին, եւ մինն՝ զմիւսն ի միւս կողմանէն: Եւ սոյնպէս երկոքինն աստի եւ անտի եկին առ Յիսուս, որ էր ընդ մէջ, եւ այն ինչ մեռեալ էր, եւ ոչ խորտակեցին:

Գիտելի է, զի վասն չորս պատճառի Քրիստոս կանխագոյն մեռաւ յառաջ քան զայլսն, որ ի խաչին կային. առաջին՝ զի մարմին նորա ի բազում աշխատանաց եւ տքնութենէ վաստակեալ էր, եւ վասն յոյժ չարչարանացն: Երկրորդ. վասն փափկութեան շինուածոյ իւրոյ մարմնոյն<sup>1</sup>: Երրորդ. վասն բազմադիմի ցաւոցն եւ տրտմական կրիցն, զոր ունէր վասն մեր: Չորրորդ. զի մի փշրեցն զոսկը նորա ըստ մարդարէին (հմմտ. Զաք. ԺԲ 10, Յովի. ԺԹ 37):

<sup>1</sup> Յ մարմնոյն իւրոյ

Բայց գիտելի է, զի աստ կրկին սքանչելիք եղեւ. առաջին՝ զի արիւն ել ի մեռեալ մարմնոյն, եւ այս անհնար է, զի յորժամ մեռանի մարդ, արիւն նորա պակնու եւ պաղի: Երկրորդ. զի ել պարզ ջուր այնքան քանակութեամբ, մինչ զի տեսեալ եղեւ, որ եւ զանազան էր յարենէն:

Աստ մոլորեալ յոյնք եւ լատինք ջուր դնեն ի Պատարագն՝ ընդդէմ եւ հակառակ Քրիստոսի, զոր ցուցից բազում յեղանակաւ. նախ՝ զի Տէրն ասաց յաւանդելն այսմ խորհրդոյ, թէ՝ «Զայս արարէք առ իմոյ յիշատակի» (Ղուկ. ԻԲ 19), եւ ոչ զայն, որ ի խաչին, վասն որոյ պատժոց են արժանի:

Երկրորդ. զի յաւանդելն<sup>1</sup> ոչ խառնեաց ջուր, զի թէպէտ Երուսաղէմի Երկիրն այնպէս ըմպեն, բայց ոչ թէ ջուր խառնեն եւ ապա ծախեն, այլ մերձ գինուոյն եղեալ է ջուրն<sup>2</sup>, զի թէ ոք կամեսցի, խառնեսցէ, ուստի յայտ է, թէ Տէրն անխառն գինի էառ, եւ թէ էր խառնեալ, ուրեմն ասէր աւետարանիչս, ուստի յայտ է, թէ ոչ է ի խորհրդոյս այսմիկ:

Երրորդ. յայտ է ի ճեւէ բանին, քանզի ասէ. «Այս է արիւն իմ» (հմնտ. Սատթ. ԻԶ 27): Խսկ արդ, գիտէր Տէրն, զի ի խաչին յինքենէ ջուր եւս ելանէր, եւ թէ պատշաճ էր խառնել ջուր, որպէս պատուիրեաց վասն արեանն, պատուիրեալ էր եւ վասն ջրին, ապա ուրեմն ոչ պատուիրեաց, պատժապարտք են, որք խառնեն:

Չորրորդ. զի ի կողիցն թէպէտ ջուր եւ արիւն ել, ոչ նշանակէ զայս խորհուրդ, այլ վասն այն ել, այսինքն՝ ցուցանելոյ զմիշտ կենդանին եւ զմեռեալն, որով յայտ է, թէ ոչ է ի խորհրդոյս այսմիկ:

Հինգերորդ. զի թէ ի Պատարագն ջուր պարտ է խառնել, ապա եւ ի մկրտութիւն պարտ է գինի խառնել, զի Երկոքին սոքա ելին ի կողէն: Արդ, եթէ ոք գինի խառնէ ի<sup>3</sup> ջուր մկրտութեան, ոչ է մկրտութիւն, նոյնպէս եւ թէ ոք յանդգնի ջուր խառնել ի Պատարագն, ոչ է Պատարագ, զի ոչ ասաց ջուր խառնել:

Վեցերորդ. զի յայտնեաց Տէրն՝ ասելով. «Ոչ արբից յայսմհետէ ի բերոյ որթոյ» (Ղուկ. ԻԲ 18), ուստի յայտ է, զոր ասաց առնել ոչ էր խառնեալ ի ջրոյ, զի որթ գինի բերէ եւ ոչ ջուր:

Եւթներորդ. զի իր ինչ ասի պատարագել Հարկաւոր ասի ըստ կրկին եղանակի. մի ի կողմանէ խորհրդոյն, այսինքն՝ զի զնաթողլով ոչ լինի Պատարագ, եւ այսմ կերպի հաց ցորենի եւ գինի

<sup>1</sup> B C ի յաւանդելն

<sup>2</sup> B ջուր

<sup>3</sup> C չեք ի

անապակ հարկաւոր է ի խորհուրդ Պատարագին, եւ ըստ այսմ կերպի հարկաւոր է էութիւն բանին առ ի խորհուրդ Պատարագին, զի մի՛ ի սոցանէ թողլով ոչ լինի պատարագ, զի գոլովն գոյացուցանեն եւ բառնալովն ապականեն, իսկ ջուր ոչ է յայսմ հարկաւորաց<sup>1</sup>, զի ոչ գոլովն գոյացուցանէ եւ ոչ բառնալովն ապականէ, զի ոչ պատուիրեցաւ ի Տեառնէ, ապա ուրեմն ոչ է ի խորհրդոյս յայսմիկ:

Ութներորդ. զի եւս հարկաւոր ասի ոչ ի կողմանէ խորհրդոյն, այլ քահանային, որպէս սրբութիւն քահանային եւ բաղարջ հացն եւ եկեղեցին, իսկ ջուրն եւ ոչ յայսմ հարկաւորացէ, զի բաղարջն, եկեղեցին եւ սրբութիւն քահանային հարկ է լինել, եւ ջուր՝ ոչ, զի ոչ աւանդեցաւ յերիս սուրբ ժողովն: Արդ, եթէ քահանայ առանց սրբութեան Պատարագէ, մահու չափ մեղանչէ, զի ոչ հետեւեաց Քրիստոսի<sup>2</sup>, զի դատաստան անձին իւրում ուտէ, ըստ առաքելոյ. «Բայց Պատարագն Քրիստոս է ճշմարտապէս» (հմնտ. Եբր. Է 27), եւ ոչ անարգէ Քրիստոս զժողովուրդն վասն պղծութեան քահանային, սոյնայէս եթէ ոք համարձակեալ ջուր դնէ ի Պատարագն, ընդ անիծեաւք է եւ մահու չափ մեղանչէ<sup>3</sup>:

Իններորդ. զի թէ ասեն բաժակ անունն անաւթոյ է եւ ոչ գինւոյ, վասն այսր գիտելի է, զի թէ անաւթոյն էր անուն, ապա ուրեմն ոչ գիտեմք զինչ կայր յանաւթն յայն՝ կաթն, թէ՝ մեղր, թէ՝ ջուր, զի յետ բաժակին ոչ այլ ինչ անուանեաց՝ գինի կամ ջուր, իսկ զանաւթն դատարկ զիա՞րդ ըմպել տայր մեզ, ապա ուրեմն յայտ է, զի բաժակն աստ վասն գինւոյն ասաց, որ էր անապական, որպէս անդ բաժակ զչարչարանքն կոչեաց, ուր ասէ. «Զբաժակն, զոր ետ ինձ Յայր, ո՞չ ընալիցեմ [զնա]» (Յովի. ԺԸ 11), ապա ուրեմն յայտ է, թէ ոչ է ի խորհրդոյս այսմիկ:

Տասներորդ. զի ի խաչին արիւն եւ ջուր ել յատուկ քանակաւ, որպէսզի ամենայն ոք ճանաչէր զջուրն եւ զարիւնն, որով ցուցանի, թէ ջուրն վասն այլ իրաց է, այսինքն՝ վասն մկրտութեան, իսկ արիւնն՝ վասն Պատարագին, իսկ թէ պարտ էր խառնել, ընդէ՞ր խառնեալ ոչ երեւեցաւ, իսկ զի ի մի կողիցն ել երկոքինն, ցուցանէ յեկեղեցի լինել երկուսն՝ մկրտութիւն եւ Պատարագն, իսկ աստ ի խորհուրդ Պատարագին եթէ ջուր խառնես, ապականի ջուրն ընդ գինի եւ շփոթի՝ ոչ ջուր է եւ ոչ գինի: Եւ ըստ այսմ յայտնի խորհուրդ քո, որ ունիս առ Քրիստոս, զի զնա ոչ Աստուած ասես

<sup>1</sup> Ըի՞ք եւ այսմ կերպի հաց ... յայսմ հարկաւորաց

<sup>2</sup> Յ չի՞ք զի ոչ հետեւեաց Քրիստոսի

<sup>3</sup> Յ մեղանչէ, զի ոչ հետեւեաց Քրիստոսի

Եւ ոչ մարդ, այլ շփոթեալ եւ կորեալ երկոքին, որպէս Եւտիքէս, ապա ուրեմն յայսց ամենայնէ յայտ է, թէ ջուրն ոչ է ի խորհուրդս այսմիկ, զի զ Նեստորին խորհին նոքա, թէպէտ չյայտնեն:

«Յետ այսորիկ աղաչեաց զՊիղատոս եւ հրամայեաց» (տես Յովի. ԺԹ 38):

**Զայս արարին վասն կրկին պատճառի, որոց առաջինն է վասն մեծութեան խնդրողին:** Երկրորդ է վասն անմեղութեան խնդրելոյն, զոր եւ նա եւս ծանեաւ:

«Եւ պատեցին կտաւով» (Յովի. ԺԹ 40):

**Այսինքն՝ վշով, որ ի կտաւատէ լինի, զորոյ աւրինակն շուափայն ունի, որ ի վերայ սկոյն:**

«Եղ զնա ի գերեզման նոր» (հմնտ. Յովի. ԺԹ 41-42):

**Աստուածային նախախնամութիւն այնպէս պատշաճեաց, զի Քրիստոս ի նոր գերեզմանի թաղեսցի:**

Եւ այս վասն երեք պատճառի.

Նախ՝ զի այս գերեզմանս վաղ, ուրեմն, փորեալ եղեւ ի Սոմնասայ եւ ինքն ոչ թաղեցաւ անդ, զի վասն Քրիստոսի պահեցաւ:

Երկրորդ. զի սա աւրինակ էր արգանդի կուսին, նոյնպէս ոչ ոք նախքան զՔրիստոս ի գերեզման անդը թաղեցաւ եւ ոչ զկնի նորա:

Երրորդ. ստուգութեան յարութեան Քրիստոսի, զի մի ոք ասիցէ, թէ ոչ Քրիստոս յարեաւ, այլ միւս ոմն, զոր անդ թաղեալ կայր:

## Գլոհն Ի

«Եւ ի միաշաբաթւոցն Մարիամ Մագդաղենացի» (Յովի. ի 1):

**Գիտելի է, զի ի սուրբ Աւետարանն պատմին տասն երեւ-  
մունք Քրիստոսի զկնի յարութեան:**

Հինգն եղեն ի նոյն աւրն յարութեան. մին եղեւ Մագդաղե-  
նացւոյն, որ երեւեցաւ ի պարտիզին որպէս պարտիզպան, եւ  
զայս պատմէ Յոհաննէս եւ Մարկոս (հմնտ. Յովի. ի 11-16, Մարկ. Ժ 9-  
10):

**Երկրորդ. երեւեցաւ Մագդաղենացւոյն եւ այլ կանանցն, յոր-  
ժամ դարձան ի գերեզմանէն ի մէջ ճանապարհին, եւ զայս պատ-  
մէ Մատթէոս (հմնտ. Մատթ. Իւ 9-10):**

**Երրորդ. եղեւ Պետրոսի, զոր պատմէ Ղուկաս (հմնտ. Ղուկ. ի 12,  
34), զի ասէ Ոսկեբերանն, թէ ի մէջ արանց նախ երեւեցաւ Պետրո-  
սի վասն երից պատճառաց. առաջին՝ վասն ծերութեան, երկրորդ՝  
զի մի յուսահատեսցի վասն ուրախութեան, երրորդ. առ ի յայտ-  
նել զողորմութիւն առ մեղաւորս:**

**Չորրորդ. երեւումն եղեւ, բայց աշակերտացն, որ երթային յե-  
մաւուս, եւ զայս Ղուկաս պատմէ (հմնտ. Ղուկ. ի 13-35):**

**Հինգերորդ. եղեւ ի նոյն աւուր երեկոյին, որ դրաւքն փակե-  
լովք երեւեցաւ առաքելոցն բաց ի թուրմայէ (հմնտ. Յովի. ի 19-23):**

**Վեցերորդ. երեւումն զկնի ութաւրէիցն, եւ յայնժամ թովմաս  
ետես զնա ընդ այլ առաքեալսն (հմնտ. Յովի. ի 24-29):**

**Եւթներորդ. եղեւ ի ծովակին Տիբերեայ, զոր ճառէ Յոհաննէս  
(հմնտ. Յովի. Իւ 1-14):**

**Ութներորդ. եղեւ ի լեառն Գալիլեայ, զոր պատմէ Մատթէոս  
(հմնտ. Մատթ. Իւ 16-20):**

**Իններորդ. եղեւ մետասանիցն բազմելոց, զոր պատմէ Ղու-  
կաս<sup>1</sup> (հմնտ. Ղուկ. ի 36-49):**

**Տասներորդ. եղեւ ի նոյն աւրն ընդ իններորդին երեւմանն  
մինչ համբառնայր յերկինս, զորմէ կատարեալ պատմէ Ղուկաս,  
եւ ի Գործքն (հմնտ. Գործք Ա 6-11):**

**Իսկ այլ երեւմունք պատմէ Պաւղոս՝ երիս, որ լինի երեքտա-  
սան, քանզի ասէ. «Երեւեցաւ աւելի քան զեւթանասնից եղ-  
բարցն<sup>2</sup>, ~ եւ զկնի ասէ, ~ երեւեցաւ Յակովբայ եւ հուսկ յետոյ ե-  
րեւեցաւ եւ ինձ» (հմնտ. Ա Կորնթ. ԺԵ 5-8), որպէսզի ցուցցէ այնու, թէ  
յետ յարութեան Քրիստոսի յերեքտասան ամին եղեւ առաքեալ**

<sup>1</sup> Ը Մարկոս

<sup>2</sup> Աստվածաշնչում եւս քան զիինգ հարիւր եղբարց միանգամայն

**Հեթանոսաց:** Իսկ հրեշտակն ոչ երարձ զվէմն իբր թէ ճանապարհ արասցէ յարութեան, այլ երարձ եւ աւետեաց կանանցն, թէ ահա տեղին տեսէք, զի ոչ է աստ, այլ յարեաւ (հմմտ. Մատթ. ԻԸ 6):

Իսկ զի ի ձեռն հրեշտակաց զարհուրեցոյց զնոսա Աստուած՝ վասն երիս պատճառի. առաջին՝ զի նոքա այնու իմասցին, թէ գործ Աստուծոյ էր, երկրորդ՝ զի այնու բռնադատեացին փութանակի եւ ստուգապէս պատմել այլոց, երրորդ՝ զի կարիցեն աշակերտքն ազատ եւ համարձակ ի գերեզմանն Քրիստոսի մատչել:

«Զի չեւ եւս գիտէին զԳիրս» (Յովհ. Ի 9):

**Այսինքն՝** զոր Ովսէէ մարգարէացաւ վեցերորդ գլուխն. «Կեցուսցէ զմեզ յետ երկուց աւուրց եւ յաւուրն երրորդի յարուսցէ զմեզ» (հմմտ. Ովս. Զ 3):

Գիտելի է՝ զեկեղեցի հեթանոսաց ըստ այլաբանութեան նշանակէ Պետրոս, եւ զժողովուրդն հրէից՝ Յոհաննէս, եւ այս երկորքին ժողովուրդս նախքան զժամանակս Աբրահամու ի միասին ընթանային, այսինքն՝ ի մի Աստուած հաւատով, բայց յԱբրահամէ մինչեւ ի Քրիստոս ժողովուրդն հրէից յառաջեաց քան զհեթանոսաց, սակայն ոչ եմուտ ի ներս, եւ յորժամ կատարումն հրթանոսաց մտցէ, ապա ամենայն հսրայէլ կեցցէ, իսկ Յոհաննէս միայն զկատարումն ետես, նշանակ է զհրէայսն, որ միայն գիրք աւրինակին մնացին առ նոսա, ոչ պարզեալ եւ մեկնեալ, այլ ծալեալ: Իսկ զի պատմեաց առաքելոցն, նշանակէ զնախկին լուսաւորութիւն ինչ, որով նսեմաբար իմացան զ Գիրս:

Իսկ հրեշտակք, զի երեւեցան Մարիամու, վասն առաւել միսիթարութեան եւ առաւել հաստատութեան մտաց նորա, իսկ զի սպիտակ հանդերձիւ, առ ի նշանակել զպայծառութիւն Քրիստոսի յարութեան եւ փառաց, այլ վասն այն երեւեցան մեզ հանդերձիւ սպիտակ, զի եւ մեք պայծառացուք տաւնիւս, իսկ զի նստեալք երեւեցան, առ ի նշանակել զյաւիտենական հանգիստն, բայց ի փառսն Քրիստոսի: Իսկ Մարիամ պարտիզպան գոլ կարծեաց զնա՝ առաջին. զի անարդ երեւէր հանդերձիւ, երկրորդ. զի գիտէր, զի զինուորքն ի գերեզմանէն փախուցեալ էին, վասն այն զնա եհարց, թէ ո՞ւր տարան թաքուցին: Իսկ Քրիստոս աւտար կերպարանաւք երեւէր, առ ի ցուցանել, զի ի պարտէզ Սուլր Գրոց եւ եկեղեցւոյ եւ իւրաքանչիւր Սուլր Հոգւոյ կայ եւ երեւի Քրիստոս իբրեւ զծշմարիտ պարտիզպան:

«Մի մերձենար յիս» (Յովհ. Ի 17):

**Նախ սոյնպէս,** այսինքն՝ մի՛ յանդգնիր հպիլ առ իս, զի անարժան ես, իբրու ասել, թէ ոչ հաւատաս զիս Աստուած: Երկ-

ըորդ՝ սոյնպէս մի՛ մերձենար, այսինքն՝ մի՛ հաւատալ զիս սոսկ մարդ, զի որպէս սոսկ մարդոյ յարենաս առ իս, զի ըստ քո սրտիդ ոչ եւս ելեալ եմ առ Հայր իմ: Իսկ զի կանանցն իւղաբերից երեւեցաւ ի ճանապարհին, եւ նոքա համբուրեցին, այս է, զի թոյլ ետ ըմբռնել զնա առ ի ցուցանել զծշմարիտ յարութիւն:

«Այլ երթ դու առ Եղբարսն իմ» (Յովհ. Ի 17):

**Զառաքեալսն իւր եղբայր կոչէ վասն չորս պատճառի՝ առաջին.** վասն նմանակից գոլոյն մարդկային բնութեան, երկրորդ՝ վասն եղական սիրոյն, որ առ նոսա, երրորդ. վասն համաձայնութեան առ սաղմոսն, զոր ասէ. «Պատմեցից զանուն քո եղբարց իմոց» (Սաղմ. ԻԱ 23), չորրորդ. վասն զհնազանդութիւն իւր երեւեցանել եւ մեզ ուսուցանէ զնուաստքն քան զմեզ եղբարս կոչել եւ ոչ վեհ երեւիլ:

«Ելանեմ ես առ Յայր իմ» (Յովհ. Ի 17):

**Այսինքն՝ Հայր իմ է բնութեամբ եւ ձեր՝ շնորհաւք, իսկ Աստուած իմ՝ շնորհաւք, վասն միութեանս ի մարմնի, իսկ ձեր՝ Աստուած բնութեամբ:**

Աստ խնդրի, թէ ընդէ՞ր ոչ յայսմ աւետարանչէ եւ ոչ յայլոցն ճառեցաւ երեւումն Քրիստոսի Աստուածածնին, առ որս ասեմք, թէ վասն երից պատճառի ոչ վայել էր ճառել՝ առաջին. զի կոյսն աներկբայ էր վասն յարութեան Քրիստոսի, վասն որոյ լռութեամբ գրոց յայտնի անտարակուսութիւն Աստուածածնին, երկրորդ. վասն մայրական գթոյն ոչ վայել էր, իբր առաջի մարմնասիրաց ածել ի վկայութիւն, երրորդ. զի երեւումն Քրիստոսի առ մայրն իւր պարտ էր, զի լինէր ի վեր քան զմարդկային հանճար, եւ անպատմելիք եւ անճառելիք, վասն որոյ ոչ կարացին ճառել:

Իսկ թէ վասն է՞ր Տէրն ի յարութեան նախ կանանցն երեւեցաւ եւ ապա արանց, եւ այս վասն տասն պատճառի:

**Նախ՝ զի նորոգումն մեր պատասխանի տացէ անկմանն մեր,** զի որպէս ի ձեռն եւայի պատմեցաւ փորձ բանսարկուին եւ խոց մահ զբնութիւնս, սոյնպէս եւ նորոգութիւն յարութեան մեր ի ձեռն կանանց պատմեցի արանց՝ առ ի վերստին նորոգել զբնութիւնս:

Երկրորդ. առ ի յայտնել զզանազանութիւն սիրոյ առ շնորհս Աստուծոյ, այսինքն՝ զի ոչ անարգէ Աստուած զկատարեալ սէր, եթէ առ այր եւ եթէ առ կին:

Երրորդ. զի կանանց բնութիւն տկար է, վասն որոյ նախ՝ զտկարսն հաստատեաց եւ ապա զկատարեալսն:

**Չորրորդ. զի կանայք յոյժ փոյթ ունին զբանն համբաւել:**

Հինգերորդ. առ ի ցուցանել խորհուրդ իմն, զոր յառաջագոյն ասացաք, այսինքն՝ ի ձեռն ներքին<sup>1</sup> բանաւորութեան մեր բանաւորութիւն վերին մերձենայ առ Քրիստոս:

Վեցերորդ. զի առաջին անէծք կնոջն տուաւ, ըստ այնմ. «Տրտմութեամբ ծնցիս որդիս» (Ծննդ. գ 16) եւ այլն:

Եւթներորդ. զի ցուցցէ, թէ եւ ի կանանց բազումք յառաջեացեն յարքայութիւն Աստուծոյ:

Ութներորդ. զի ցուցցէ զգործն Աստուծոյ, որ հանապազ ի ձեռն տկարաց զմեծամեծս ներգործէ:

Իններորդ. զի նոքա առաւել սիրէին զՔրիստոս, քան զառաքեալսն, վասն որոյ եւ յոյժ լային:

Տասներորդ. վասն կուսին, զի տրտմեալ էր յոյժ, վասն որոյ նոցա ետ աւետիս, զի փութով պատմեսցեն:

### Զատկի կիւրակէն

«Եւ էր երեկոյ ի միաշաբաթւոցն, եւ դրաւք...» (Յովի. ի 19):

Վասն կրկին պատճառի երեկոյին երեւեցաւ նոցա. առաջին՝ զի գիշերի առաւել երկնչին մարդիկ, երկրորդ՝ զի ի տուէ ցրուեալք էին եւ յահէն հրէից ոչ կարէին ժողովել ի միասին, երրորդ՝ զի ցուցցէ, եթէ յերեկոյի մահուն ձեր ապա կարէք զԱստուած տեսանել, իսկ զի փակեալ դրամբք, զի ցուցցէ, թէ նոյնպէս ծնայ ի կուսէն:

Իսկ եկաց ի մէջ վասն կրկին պատճառի. առաջին՝ զի այնուցուցցէ զինքն գոլ միջնորդ Աստուծոյ եւ մարդկան, երկրորդ՝ զի առաւել յայտնեսցի եւ վասն սմին եկաց եւ ոչ նստաւ:

Իսկ զի ողջոյն ետ վասն հինգ պատճառի. առաջին՝ զի այնուուսուսցէ, թէ նա է, որ պատրաստեաց նոցա ուսանել. «Ողջոյն տանս այսմիկ» (Մատթ. Ժ 12): Երկրորդ՝ զի կատարեսցէ զբանն, զոր խոստացաւ յառաջ քան զյարութիւն, թէ՝ «Զխաղաղութիւն զիմ տամ ձեզ» (Յովի. Ժ 27): Երրորդ. ցուցանէ այնու, թէ կեանք փառաց է կերպ կատարեալ խաղաղութեան: Զորրորդ. յայտնէ այնու, զի յարութիւն նորա ողջունաբեր էր, եւ աւետիս խաղաղութեան մատուցանեն աշխարհի, որպէս աղաւնին տապանակին: Հինգերորդ. զի զիւր ընտանի սիրելութիւն յայտնեսցէ եւ կատարելագոյն միսիթարեսցէ:

Իսկ Տէր մեր պահեաց զսպի խոցուածոյն ի մարմին իւր վասն հինգ պատճառի. առաջին՝ զի այնուցուցցէ, թէ նոյն մարմինն է,

<sup>1</sup> C չեք

որ խաչեցաւ եւ որ յարեաւ: Երկրորդ. առ ի յաւիտենական նշան ընդդէմ թշնամեաց իւրօց, որով զնոսա ամաչեցուսցէ եւ տրտմեցուսցէ: Երրորդ. առ ի նշան յաղթողական զաւրութեան եւ անպատմելի սիրոյ նորա, վասն որոյ խաչեցաւ վասն մեր: Զորրորդ. զի միշտ վայելեցուք ի խոցուածն նորա, որ վասն մեր, եւ դարձցուք ի մեղաց: Հինգերորդ. զի ցուցցէ, թէ միշտ ազատեմ զձեզ ի մեղաց, որպէս ի խաչելութեանս:

**Դարձեալ ասէ.**

«Ողջոյն ընդ ձեզ» (Յովհ. ի 20):

Վասն տասն պատճառի կրկնեաց զխաղաղութիւն. նախ՝ զի ի նոսա գոյր տրտմութիւն կրկին՝ մի վասն մահուն Տեառն եւ մի վասն ահին հրէից, վասն որոյ կրկին ասաց: Երկրորդ. զի կրկին է խաղաղութիւն՝ մի առ Աստուած եւ միւս՝ առ ընկեր, զոր ետ կրկնելովն: Երրորդ. զի զնոսա առ երկու ազգս առաքէր ի քարոզութիւն՝ ի հրէայս եւ ի հեթանոսս, վասն որոյ կրկնելովն ետ նոցա իշխանութիւն՝ դարձուցանել զազգսն առ ինքն: Զորրորդ. զի յետ մկրտութեան կրկին մեղք կորուսանեն զմարդիկ, այսինքն՝ խորհրդոց եւ գործոց, զոր եւ կրկնելովն եբարձ ի նոցանէ: Հինգերորդ. զի կրկին իր պիտոյ էր նոցա՝ իշխանութիւն եւ սրբութիւն, զորս ետ կրկնելովն: Վեցերորդ. զի կրկին է մարդս՝ հոգի եւ մարմին, եւ ի մէջ նոցա արժան էր խաղաղութիւն տալ յերկուց կողմանէն: Եւթներորդ. զի կրկին էին մարդիկք, յորս առաքէր զնոսա, այսինքն՝ սիրելիք եւ թշնամիք, վասն որոյ կրկնելով արար առ նոսա խաղաղութիւն յամենայն կողմանէ: Ութներորդ. զի կրկին են անձնաւորութիւնքն բաց ի Բանէն, այսինքն՝ Հայր եւ Հոգին, յորոց ետ զխաղաղութիւն՝ իբր ցուցանելով, թէ նոքա ընդ իս են: Իններորդ. զի կրկին են թշնամիք, այսինքն՝ յաջ եւ յահեակ, վասն որոյ կրկնելովն ետ նոցա ամրանալ ընդդէմ երկոցունցն: Տասներորդ. զի կրկին իր պիտոյ էր նոցա՝ հաւատք եւ գործք բարիք, վասն որոյ խաղաղութիւն<sup>1</sup> տալովն պարգեւեաց նոցա, վասն որոյ եւ այլ ոչ կարացին մահու չափ մեղանչել:

«Փչեաց ի նոսա եւ ասէ. “Առեք Շոգի Սուլրբ”» (Յովհ. ի 22):

Արդ, գիտելի է, զի Հոգին Սուլրբ երեք անգամ տուեալ եղեւ նոցա եւ երեք կերպարանաւք, այսինքն՝ ի մկրտութիւն ի տեսակ աղաւնոյ, եւ ի Զատկին ի տեսակ փչման եւ ի Պենտէկոստէին ի տեսակ հրոյ:

Եւ նախ գալուստ Հոգւոյն Սրբոյ, որ ի մկրտութիւն եղեւ առ ի ծննդական ելումն շնորհաց եւ աղաւնին պարզմտութեամբ, զի

<sup>1</sup> Ե կրկին խաղաղութիւն

աղաւնին է բազմածին ձագուց, որ նմանի նմա գեղեցկութեամք: Երկրորդ. բաշխումն Հոգւոյն Սրբոյ եղեւ առ ի յընդոստուցանել զհեղգսն, եւ վասն այն վայելչաբար եղեւ յաւուր յարութեան, եւ եւս եղեւ առ ի չնչել ի վերայ աշխարհի՝ մերժելով այնու զվնասակար գոլորշիս: Երրորդ. եղեւ առ ի բորբոքել եւ այլակերպել եւ առ ի ձուլել եւ մարսեցնել եւ հրացուցանել զամենեսեան եւ մաքրել եւ իբրեւ զհուր զաւրաւոր առնել:

«Եւ յետ ուր աւուր դարձեալ էին» (Յովի. Ի 26):

Աստ խնդրի, թէ վասն է՞ր Տէր մեր յառաջին աւրն զմի յաշակերտացն ի բացեայ եթող եւ տարակուսեալ, եւ յետ ուժն աւուր այլ աշակերտսն ետես:

Եւ այս վասն բագում պատճառի. նախ՝ առ ի անկարծիք յայտնութիւն յարութեան Քրիստոսի, զի թէ ամենայն առաքեալքն առանց նախաքննութեան հաւատացեալք էին, կարէին ոմանք ասել, թէ առաքեալքն իբրեւ անմիտ խաբեալք եղեն եւ վասն այն անհաւատալի իր հաւատացին փութով, եւ վասն այսմ թոյլ ետ, զի մի վաղվաղակի հաւատացեն: Երկրորդ. զի յորժամ թերահաւատեցաւ թումաս, եթէ Քրիստոս առժամայն երեւեալ նմա յայտնէր զինքն, իբրեւ սնափառութիւն իմն կարծիս տայր, որ ոչ վայել էր Աստուծոյ: Երրորդ. զի յայնժամ տարակոյսն թումայի եւ խնդրուածք նորա փորձիւ էր<sup>1</sup> առ ի գիտել զյարութիւն ոչ բաւական փորձեալ լինէր: Զորրորդ. զի ոչ վայել էր այնպիսոյն վաղվաղակի երեւումն, եւ վասն այն յամեաց Քրիստոս երեւիլ թումայի: Հինգերորդ. զի ցուցցէ մեզ խորհուրդ յետ ուժ աւուրն երեւելն, որ լինի յութներորդ դարուն յարութեան մեր: Վեցերորդ. զի երեւումն Քրիստոսի առ թումաս լինէր առաջի աշակերտացն, որպէս զի նոքա այնմ երեւմանն եւ ցուցմանն վկայք լինիցին: Եւթներորդ. առ ի հաստատել զաշակերտսն, զի զանազան եւ պէս-պէս յայտնութիւն զնոսա հաստատէր ի Քրիստոս: Ութներորդ. որպէս բերելով առարկութիւն ինչ եւ քննութիւն, ճշմարտութիւն անկարծիք հաստատի, նոյնպէս եւ աստ: Իններորդ. առ ի ցուցանել բարոյական խորհուրդ ինչ, զի այսու նշանակի կերպ, որով ճշմարտութիւն հաստատի ի յանդունդս մարդկային սրտի եւ որով սիրտ հաւանի ի խորս ճշմարտութեան, զի թումաս թարգմանի «Անդունդք»<sup>cc</sup>, զի այս ոչ լինի յանկարծակի կամ ի սկիզբն լուսաւորութեան, այլ ի վախճանի: Տասներորդ. պատճառ է առ ի ցուցանել ըստ այլաբանութեան, զի թումաս

<sup>1</sup> Ե չիք եր

նշանակէ զժողովուրդս հրէիցն կամ զիւրաքանչիւր ոք երկմիտ  
եւ անհաստատ, որ ի վախճանի գալոց է ի հաւատ:

«Տէր իմ եւ Աստուած իմ» (Յովհ. ի 28):

**Աստ Թովմաս յայտնի ասաց զնա Աստուած, զի մինչեւ ցայժմ  
այլ անուամբ յորջորջէին զնա:**

«Այս այնչափ գրեցաւ, զի հաւատասցիք» (Յովհ. ի 31):

**Հաւատալ ըստ կրկին յեղանակի ասի. մի է պարզ հաւատալ  
թարց միրոյ, եւ այս հաւատս ոչ արժանաւորէ արքայութեան, եւ  
միւս կերպիւ<sup>1</sup> ասի հաւատալ կարգի հաւատով, այսինքն՝ փափա-  
գումն եւ սէր կցորդեալ ընդ հաւատոյն, զոր տեսակացեալ հա-  
ւատ կոչին, եւ այս արժանաւոր է արքայութեան, եւ վասն այսմ  
հաւատ իմանի բանս այս:**

Իսկ զարմանալի համեմատութեամբ նորոյ զատկի ընդ հնոյն.  
նախ՝ զի որպէս Աստուած յայնժամ դաւաճանել հրամայեաց զե-  
գիպտացիս եւ կողոպտել, նոյնպէս եւ ի սոյն ամիս մարտի կո-  
ղոպտեաց Տէրն զտարտարոսն: Երկրորդ. առ ի նշան յարութեան  
իւրոյ, զի յաջէր: Երրորդ. զի ուսուսցէ զբան ուռկանին նոցա-  
տալ, որ լսենն, ըստ այնմ. «Զեզ ասեմ, որ լսէքդ»:

«Տեսին կրակետող կայծականց» (տե՛ս Յովհ. ԻԱ 9):

**Գործելիքն հրացեալք էին, զոր կայծականց ասէ, եւ ձուկն  
առ ի խորովեալ եւ հացն արտաքոյ կայծականցն մերձ եղեալ:**

Եւ զայս Քրիստոս նոր ստեղծ վասն երեք պատճառի. առա-  
ջին՝ վասն նշանակելոյ զսէր իւր, երկրորդ՝ առ ի հաստատել զնո-  
սա ի հաւատս յարութեան ի ձեռն սքանչելեաց, երրորդ՝ առ ի  
ցուցանել խորհուրդ ինչ, զոր ասացուք, այսինքն՝ թէ կարող եմ  
յամենայն ժամ նոր ստեղծագործութիւն առնել, չորրորդ՝ զի  
ցուցցէ, թէ նոյն Աստուածն եմ, որ յանապատին զժողովուրդն կե-  
րակրեցի, հինգերորդ՝ առ ի ցուցանել խորհրդապէս, թէ նոյն եմ,  
որ յոչընչէ առնեմ զամենայն:

«Իբրեւ ճաշեցին, ասէ Յիսուս. “Սինոն Յունանու, սիրե՞ս զիս”» (տե՛ս  
Յովհ. ԻԱ 15):

**Երրորդ. վասն չորս պատճառի երիցս հարցանէ. առաջին՝ զի  
երիցս անգամ, ուրացաւ նա, ասաց Տէրն, զի այնու փառաւորես-  
ցէ: Երկրորդ. զի երիցս խոստովանեսցի Պետրոս ընդդէմ ուրացու-  
թեանց, որպէս զի լեզու Պետրոսի առաւել սպասաւորեսցէ երկիւ-  
ղի քան սիրոյ: Երրորդ. զի այնու ցուցցի, թէ սէրն Աստուծոյ հա-  
յի ի հովուումն ոչխարաց ըստ երիս եղանակի, այսինքն՝ զի հո-**

<sup>1</sup> Բ չեք

վուումն ընկալեալ լինի վասն շարժման սիրոյ եւ զի ի սէր եւ ըստ սիրոյ ի ներգործութիւն նորա կրթեսցի:

**Չորրորդ.** զի երիս վկայութիւն կատարեալ է եւ վասն այն երեքկին խոստովանութիւն ի Պետրոսէ խնդրէ Քրիստոս.

«Ասէ Երիցո անգամ. «Կրածեա զոչսարս իմ»» (տես Յովհ. ԻԱ 17):

Վասն երեք պատճառի ասէ. առաջին՝ ըստ Ուկիբերանի, որպէս զի ցուցցէ Քրիստոս, թէ որքան համարի զհովուումն ոչխարացն եւ վասն նոցա հոգ տանի: Երկրորդ. զի<sup>1</sup> պարտ է հովուել առաջնորդաց զհաւտս երեքկին կերպիւ, այսինքն՝ աւրինակաւըարի վարուց, բանիւ՝ ուղիղ վարդապետութեամբ եւ աւգնականութեամբ ժամանակաւորացս ողորմութեամբ: Երրորդ. զի պարտ է պահել զհաւտն Քրիստոսի յերիս չարեաց, այսինքն՝ ի բռնութենէ չար իշխանաց եւ ի նենգութենէ հերետիկոսաց եւ ի փորձութենէ դիւաց:

Իսկ Տէրն թէպէտ եհարց, թէ՝ սիրե՞ս զիս, Պետրոս ոչ ասաց, թէ՝ սիրեմ, վասն չորս պատճառի. առաջին՝ զի հեռասցի եւ աւրինակ տացէ հեռանալոյ ի յանդգնութենէ, երկրորդ՝ զի ոչ գիտէր ստուգապէս զմեծութիւն սիրոյ առաքելոցն, եւ այնու աւրինակ տայ ոչ ասել զայն, զոր ոչ գիտեմք ստուգապէս, երրորդ՝ ի նշան մաքուր խղճմտանաց եւ խոստովանութեան, վասն որոյ եւ ասէր. «Դու գիտես, զի սիրեն» (տես Յովհ. ԻԱ 17), չորրորդ՝ զի նա փորձիւ գիտէր գտկարութիւն իւր, վասն որոյ ոչ ասաց, թէ՝ սիրեմ:

Գիտելի է, զի կրկին անգամ ասաց՝ արածեա զգաոինս իմ, եւ մի անգամ՝ զոչսարս: Եւ այս վասն երկու պատճառի. նախ՝ զի այնու ցուցցէ, թէ պարտ է առաւել հոգալ վասն հոգեւոր ծննդեան այնոցիկ, որ նոր եւ անկատար են ի հաւատս, քան թէ վասն կատարելոցն: Երկրորդ պատճառ. զի երեքն են ազգ քրիստոնէից՝ ոմանք կրաւնաւորք, ոմանք առաջնորդք, որք պարտին գաոին անբծութեամբ վարիլ, ոմանք աշխարհականք, որք ոչխար կոչին:

«Մինչ մանուկ էիր, անձանբ անձին գաւտի ածիր՝ [եւ Երթայիր յո եւ կամէիր], եւ յորժան ծերասցիս, [ձեռս] ի վերայ<sup>4</sup> [կալցես եւ այլք ածցեն քեզ գաւտի, եւ տարցին ուր ոչ կամիցիս]» (տես Յովհ. ԻԱ 18):

Զայս մին վասն չարչարանացն ասէ, զոր կրելոց էր Պետրոս, զի ի մանկութեան հասակին ոչ չարչարեցաւ, այլ ի ծերութեան խաչակից եղեւ Քրիստոսի: Երկրորդ. ըստ խորհրդոյ իբրու ասել, թէ մինչ մանուկ էիր, այսինքն՝ ի նորութեան առաքելութեան եւ-

<sup>1</sup> Եւ զի

<sup>2</sup> Սօրինակաւ

<sup>3</sup> Եւ չեք

<sup>4</sup> Սէք ի վերայ

կեղեցւոյ քո, դու ինքնին աւրէնս դնէիր եկեղեցւոյ, իսկ զկնի մահուան քո այնոքիկ, որ յետ քո<sup>1</sup> յաթոռ քո<sup>2</sup> նստին, բարձցեն զքո հրամանսղ եւ ըստ ինքեանց կամաց դիցեն աւրէնս եկեղեցւոյ եւ հաւտի քո եւ արտաքոյ քո կամացդ վարեսցեն, որպէս եւ այժմ, զի քակեցին զաւրէնս առաքելոցն լատինք եւ ըստ իւրեանց կամացն դնան, որպէս եւ հաճոյ է իւրաքանչիւրոցն:

«Այս աշակերտ է, զոր սիրերն Յիսուս, որ եւ գրեացն իսկ զայսոսիկ» (տես Յովի. ԻԱ 24):

**Բազում անգամ Յոհաննէս զիւր յատուկ անունն<sup>3</sup> ոչ եղ վասն երեք պատճառի. առաջին՝ առ ի պահպանել զխոնարհութիւն առ ի կերպ խաւսելոյ եւ առ ի տալ մեզ այնու աւրինակ զսոյն առնելոյ: Երկրորդ՝ զի երախտահատոյց լինի Քրիստոսի զպարզեւ սիրոյ նորա ցուցանելով: Երրորդ՝ զի յատուկ անուամբ սիրեցելոյն զյատկութիւն տեսակ վարուցն յայտնեսցէ, քան թէ յատուկ անուամբ իւրով:**

**Եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. [Ամէն]:**

<sup>1</sup> Ը չիք յետ քո

<sup>2</sup> Յ չիք յաթոռ քո

<sup>3</sup> Յ անուն

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախարան, գլուխ Ա, Բ, Գ:

- i Նանա աճվանը, որ նշանակում է Հովհաննես, համդիպում ենք իր՝ Նանա մեկնիչի, «Հովհաննու մեկնության» առաջաբանի մեջ: Այդ առաջաբանը գոել է մի հայ վարդապետ, որը խոնարհություն ցուցաբերելով չի հիշատակում իր անունը: Մեկնության գրության ստույգ թվականը հայտնի չէ, հավանաբար այն շարադրվել է 840-ական թվականներին Բագրատ Բագրատունու պատվերով: Մեկնությունը նա գոել է ասորերեն լեզվով, որը հետազայում թարգմանել է արաբերենի, քանի որ Բագրատ Բագրատունին լավ գիտեր այդ լեզուն: Նանան սարկավագապետ էր և մասնակցել է Շիրակավանի ժողովին, նա Յայ Եկեղեցում մեծ ազդեցություն ուներ: Նանայի մեկնության առաջարանի հեղինակը նշում է, որ Նանան իր վարդապետական գիտելիքների շնորհիվ կարողացել է Յայաստան աշխարհից հայածել հերետիկոս երկարակներին (տե՛ս էջ 5): Նանան ամուսնացած էր եւ որդիներ ուներ, նա միշտ մարդկանց քաջալերում էր, որպեսզի ամուր մանա իրենց հավատքի մեջ: Շուտով գալիս է նաև իր հավատքի փորձության ժամանակը, քանի որ այդ ընթացքում Յայոց աշխարհը արաբական իշխանության տակ էր: Գերության փորձությունները չեն կարողանում նրան շեղել քրիստոսի լույս հավատքից: Յոթնամյա աքսորից հետո՝ 862 թվականին, Նանան վերադառնում է Յայաստան: Այս դեպքերից հետո տեղի է ունենում Շիրակավանի (Երազգավորս) ժողովը, որին մասնակցում է նաև Նանա սարկավագապետը: (Տե՛ս Զամյան, Պտտ. Յայոց, Խո. Բ. էջ 441; 678: Յ. Քերոբը Ա Զրաբեան «Նանայի Ասորուց վարդապետի մեկնութիւն Յովհաննու Աւետարանին» ներածություն):
- ii Նանայի մեկնությունը թարգմանող հայ Եկեղեցականը, որ նաև հեղինակն է երկի նախարանի, չի հիշատակում իր անունը: Սուլր Գր. Տարեացին նրա խոնարհությանն է վերագրում այս փաստը:
- iii Նանա, էջ 1:
- iv Նանա, էջ 1:
- v Նանա, էջ 2:
- vi Նանա, էջ 3:
- vii Նանա, էջ 3:
- viii Նանա, էջ 3:
- ix Նանա, էջ 3:
- x Նանա, էջ 3:
- xi Նանա, էջ 4:
- xii Նանա, էջ 4:
- xiii Նանա, էջ 4:
- xiv Նանա, էջ 4:
- xv Նանա, էջ 5:
- xvi Նանա, էջ 5:
- xvii Նանա, էջ 7:
- xviii Նանա, էջ 7:
- xix Կարծում ենք, որ այս հատվածը Նանայի մեկնության առաջաբանության մեջ ոչ թե Սմբատ իշխանի մասին է, այլ սուրբ Նանա Ասորու:

- xx Կարծում ենք, որ խոսքը Բագարատ Բագրատունու որդի Աշոտի մասին է (տես ՀԺՊ. 3 II, էջ 356):
- xxi Ղնմտ. Նամա, էջ 8:
- xxii Ղնմտ. Նամա, էջ 9:
- xxiii Նամա, էջ 9:
- xxiv Նամա, էջ 10:
- xxv Ավ. Մտք., թերթ 12 թ:
- xxvi Ավ. Մտք., թերթ 9-12:
- xxvii Ավ. Մտք., թերթ 12:
- xxviii Եղեկելի մարգարեության մեջ՝ առաջին գլխում, զգտանք հաճապատասխան համարը: Նմանատիպ միտք արտահայտում է վեցերորդ համարը, սակայն ի նկատի ունի մարդու կերպարը որպես «ի վերայ նոցա» (հմնտ. Եղեկ., Ա, 6):
- xxix Տես Դիոն., էջ 19, տող 18:
- xxx Ղնմտ. սուրբ Գր. Տաքեւացի «Ուկեփորիկ» (աշխարհ. թրգմ.), էջ 199, ուր, սակայն, «Կետ-գիծ-մարմին» խորհրդաբանությամբ հեղինակը հատկորոշում է Ս. Երրորդության անձերի հարաբերակցությունը, որտեղ «Երկու կետը բոլիսմը և առումն է»:
- xxxi Ղնմտ. և տես «Եռամեծի եւ երիցս երջանկի Ցովհաննու Որոտնեցւոյ արարեալ դրուատ քանի սովերական պայծառատես եւ հոգնահանձար ի քան մարգարեին, որ ասէ ի սկզբանէ Տեր գերկիր հաստատեցեր եւ գործը ձեռաց քոց Երկինք են» ՄՄ, ձեռ. 2017, թ. 354ա-355ա: Դոլումն ըստ՝ Դակոր Քյոսեյան, «Դրվագներ հայ միջնադարյան արվեստի աստվածաբանության», Ս. Էջմիածին, 1995, էջ 52-53:
- xxxii Ավ. Մտք., թերթ 15թ-17ա:
- xxxiii Ավելիոսին Ս. Գր. Տաքացին հիշատակում է նաև իր Ուկեփորիկի առաջին հատորի Ե գլխի մեջ (տես «Ուկեփորիկ» Երևան, 1995, էջ 13, թարգմանությունը՝ Դակոր Քյոսեյանի): Ավելիոս Կորդուքացին (Իբն Ուշդ՝ 1126-1198 թթ.) արար համբավաշատ իմաստաեր և բժիշկ է: Դայտնի է Արիստոտելի աշխատություններին նվիրված իր մեկնություններով (տես Յ. Ս. Անասյան, Դայկական նատենագիտություն, Խո. Բ, Երևան, 1976, էջ 1027-1028):
- xxxiv Ղնմտ. Ա Հովի. Ե 8; Աստուածաշունչ մատյանի հնագույն բնագրերը տարբեր ձևով են ներկայացնում այս տեղին: Երկրորդ տարբերակը հետևյալն է. «Սոքա երեքին են, որ վկայեն. հոգին, եւ ջուրն, եւ արիւնն. եւ երեքին մի են»: Այս երկրորդ ձևն է ներկայացնում 1860 թվականի գրաբար հրատարակությունը:
- xxxv Ուկ., էջ 24 (ԴՊ):
- xxxvi Այս վկայությունը, որ բերված է նաև հեղինակի Հարցմանց գրքում (էջ 219) և «Ուկեփորիկում» (էջ 556), քաղված է Դավիթ Անհատիքի «Սահմանք իմաստասիրության» Երկից (տեսն Դավիթ Անյաղը «Երկասիրութիւնք փիլիսոփայականք», աշխատ. Ս. Ս. Արևշատյանի, Երևան, 1980, էջ 40):
- xxxvii Յոմերոսի անվամբ վկայաբերված քաղվածքին իրավանում մեկ հատվածն է «Եերմեայ Եռամեծի առ Ասկեպիոս սահմանք» Երկի (քննական բնագիրը՝ Յ. Մանանոյանի, ուսւերեն թարգմանությունը՝ Ս. Արևշատյանի, «Բանքեր Մատենադարանի» թիվ 3, 1956, էջ 287, նորագույն քննական բնագիրը ֆրանւելեն համբիկադիր թարգմանությամբ տես J.-P. Mahe), Herme's en Haute-Egypte, t. II: Le fragment du Discours Parfait et les definitions hermetiques arménienne, Gueles, Canada, 1982, P. 358):
- xxxviii Ղնմտ. Պլատոնի Երկերի հայ. թրգմ., Վենետիկ, 1877, 1890:
- xxxix Նամա, էջ 24:
- xxxi Դարց., էջ 139:

- xl Յարց., էջ 353:  
xli Նանա, էջ 29:  
xlii Ղնմտ. "Творения святаго отца нашего Иоанна Златоуста, архиепископа Константинопольского" С.-Петербург, 1901 г. т. 7, кн. 1, ст. 123-124.  
xliii Ավ. Մատթ., էջ 28:  
xlv Նանա, էջ 32:  
xlv Ավ. Մատթ., էջ 34-35: Иоанн Златоуст т. 7 кн. 1, 1901г. С.-Петербургъ. "Толкование на святаго Матфея евангелиста" ст. 125-126:  
xlvii Յարց., էջ 617:  
xlviii Օձի մասին տեղեկությունը գտնվում է Յարցմանց գրքի վարսուներեքերորդ համարում, էջ 386:  
xliii Լատիներեն purgatorium բառի տառադարձումն է, որ նշանակում է Քավարան: Այս հարցին Տաթևացին անդրադարձել է նաև իր Սաղմոսաց մեկնության մեջ (տե՛ս Գրիգոր Տաթևացի, «ՄԵԼՈՒԹԻՒՆ Սաղմոսաց», էջ 7, Երևան, 1993, աշխատասիրությամբ՝ Արմինե Ջողվարյան):  
xlii Յարց., էջ 698:  
i Ավ. Մատթ., էջ 90:  
ii Քաղված է Ս. Գրիգոր Աստվածաբանի «Ի Սուրբ Պատրիա» ճառից, ՍՍ ձեռ. 948, թ. 204բ:  
iii Նանա, էջ 74:  
iv Նանա, էջ 74:  
liv Յարց., էջ 383, 496:  
lv Նանա, էջ 80:  
lvi Նանա, էջ 81:  
lvii Նանա, էջ 82:  
lviii Նանա, էջ 82-83:  
lix Նանա, էջ 83-84:  
lx Նանա, էջ 85:  
lxi Սուրբ Հովհան Ոսկերերան «Հովհաննու ՄԵԼՈՒԹԻՒՆ» Կ. Պոլիս, 1717, էջ 331 (ԳԲԼԱ) - 332(ԳԲԼԲ):  
lxii Նանա, էջ 94:  
lxiii Նանա, էջ 98-99:  
lxiv Նանա, էջ 98-99:  
lxv Նանա, էջ 99:  
lxvi Տե՛ս սուրբ Եկեղեց Խորի Ասորի, «Յորդորակ ապաշխարութեան» աշխատ. Վահան Կոկի., «Էջմիածին», 1998, Ա, էջ 77:  
lxvii Տե՛ս Գր. Նարեկացի «Մատեան ողբերգութեան», աշխատ. Պ. Խաչատրյան, Ա. Ղազինյան, Երևան, 1985, էջ 474 (Բան ԾԸ):  
lxviii Նանա, էջ 103:  
lxix Նկատի ունի Եվսեբիոս Կեսարացու կազմած Ավետարանի համարադրանը (համաձայնության տախտակները), որոնցում մասնավոր սյունակների մեջ տրված են չորս Ավետարանների՝ բովանդակությամբ համերաշխվող հատվածների համարները:  
lxx Նանա, էջ 105-107:  
lxxi Յարց., էջ 77:  
lxxii Նկատի ունի Ս. Գրիգոր Աստվածաբանի նշանավոր «Առ որս» ճառաշարը, ՍՍ, ձեռ. 4146:  
lxxiii Նանա, էջ 109:  
lxxiv Նանա, էջ 111:

- lxxv Նանա, էջ 124:
- lxxvi Հմմտ. Ուկերերան, «Մեկնութիւն Սատրէի», Վենետիկ, 1826 թ. էջ 1-3:
- lxxvii Նանա, էջ 125:
- lxxviii Նանա, էջ 126:
- lxxix Նանա, էջ 126-127:
- lxxx Նանա, էջ 128:
- lxxxi Նկատի ունի այս անունով միջնադարյան Հայաստանում լայն տարածում գտած մարգարեական հետևյալ գրվածքը. «Ազադրոնի անյաղթ փիլիսոփայի Աբենացոյ ասացեալ վասն բարի ժամանակին եւ սուրբ թագաւորացն յայտնելոյ, եւ վասն ազգին նետողաց կործանմանն եւ դարձեալ յայտնելոյ եւ վասն թագաւորացն, որը յարձակելոց են իբրեւ զչար ... եւ վասն այդոք եւ անճարուր նեղինն, որ յայտնելոց է եւ դարձեալ կործանելոց չարութեամբ Սուրբ Խաչին...», ՍՄ, ձեռ. 1382, թ. 309ա-318բ:
- lxxxii Յարց., էջ 509:
- lxxxiii Նանա, էջ 130:
- lxxxiv Նանա, էջ 132:
- lxxxv Յարց., էջ 338:
- lxxxvi Նանա, էջ 136:
- lxxxvii Նանա, էջ 136:
- lxxxviii Նանա, էջ 136:
- lxxxix Այս միտքը, որ վկայաբերված է նաև հեղինակի «Ուկեփորիկում» (Երևան, 1995, էջ 219), քաղված է Ալբերտ Մեծի (1193-1280) անունով հայտնի (բայց իրապես Հուգո Ուիպելինին պատկանող) «Համառօտութիւն աստուածաբանութեան» երկից (Վենետիկ, 1715, էջ 265):
- xc Հմմտ. «Համառօտութիւն աստուածաբանութեան», էջ 247-248:
- xci Նանա, էջ 140:
- xcii Նանա, էջ 141:
- xciii Նանա, էջ 143:
- xciv Յարց., էջ 594:
- xcv Տես Դիոն., էջ 249-257:
- xcvi Նանա, էջ 144:
- xcvii Նանա, էջ 157:
- xcviii Նանա, էջ 161:
- xcix Նանա, էջ 162:
- c Նանա, էջ 164:
- ci Նանա, էջ 167:
- cii Նանա, էջ 174:
- ciii Քանի որ սուրբ Գրիգոր Տաթևացին չի ավարտել այս Ավետարանի մեկնությունը, հետևաբար այս հատվածը չի մեկնվել: Սատրեսոս Զուղայեցին ավարտին հասցնելով այս գործը ևս չի անդրադարձել այս հատվածին:
- civ Նանա, էջ 180:
- cv Նանա, էջ 182:
- cvi Նանա, էջ 182:
- cvi Նանա, էջ 185:
- cvi Նանա, էջ 186:
- cix Նանա, էջ 189:
- cx Նանա, էջ 195-196:

- cxi Տես եւ հմնտ. «Արիստոտելի յաղազս առաքինութեան ... », «Կորիւն վարդապետի, Մամբրէ Վերծանողի եւ Դաւթի Անյաղթի նատենագրութիւնք», Վենետիկ, 1883, էջ 623-635:
- cxii Նանա, էջ 198-199:
- cxiii Նանա, էջ 199:
- cxiv Յարց., էջ 303:
- cxv Նանա, էջ 199-200:
- cxvi Յարց., «Երկարնակաց հարցումն» էջ 84, «Նեստոականաց դեմ» էջ 66: Երկարնումք բարին անդրադարձել է նաև սուրբ Նանա, Ասորին, տես էջ 198, 200:
- cxvii Նանա, էջ 203:
- cxviii Նանա, էջ 203:
- cxix Նանա, էջ 206:
- cxx Նանա, էջ 206-207:
- cxxi Նանա, էջ 210:
- cxxii Նանա, էջ 212:
- cxxiii Նանա, էջ 212:
- cxxiv Նանա, էջ 213:
- cxxv Նանա, էջ 215:
- cxxvi Նանա, էջ 217-218:
- cxxvii Նանա, էջ 220:
- cxxviii Նանա, էջ 222:
- cxxix Նանա, էջ 224:
- cxxx Նանա, էջ 227:
- cxxxi Նանա, էջ 228:
- cxxxii Նանա, էջ 229:
- cxxxiii Նանա, էջ 229-230:
- cxxxiv Նանա, էջ 230:
- cxxxv Զմեռ բարի այսօրինակ ստուգաբանությունը առկա է Վանական վարդապետի մոտ («Զմեռն, որ ծիւնամեռ լինին») սուրբ Գր. Տաթևացու Քարոզգրքի Զմեռան հատորում (Ա) և Յարցմանց գրքում (էջ 197), տես Յր. Աճառյան «Յայերեն արմատական բառարան», III, էջ 156:
- cxxxvi Ղմնտ. Նանա, էջ 231:
- cxxxvii Նանա, էջ 231:
- cxxxviii Նանա, էջ 234:
- cxxxix Տես Ոսկեփորիկ, էջ 84-86:
- cxl Նանա, էջ 235-236:
- cxli Նանա, էջ 237:

#### ԳԼՈՒԽ ԺԱ

- cxlii Ավ. Մատթ., էջ 44:
- cxliii Նանա, էջ 248-249:
- cxliv Այս պատմությանը բավականին նման է Ս. Եպիփան Կիպրացու բերած ավանդագրույցը, որ առկա է հեղինակի ճառերից մեկում:
- cxlv Տես «Անկանոն գիրք առաքելականք», Վենետիկ, 1904, («Պատմութիւն առաքելոյն Յակոբայ, թէ որպէս զնաց ի Սպանիս եւ դարձեալ եկն յերուսաղէմ եւ գլխատեցաւ», «Վկայաբանութիւն Յակոբայ Տեառնեղբարին»):
- cxlvi Նանա, էջ 251:

- cxlvii Նանա, էջ 253:  
 cxlviii Նանա, էջ 253:  
 cxlix Անդ էջ 145:  
 cl Նանա, էջ 253-254:  
 cli Նանա, էջ 255:  
 clli Նանա, էջ 255-256:  
 cliii Նանա, էջ 256:  
 cliv Ապողիմար Լառողկացու քրիստոսաբանության մասին տես Փլորովսկի  
“Վոստօնի ժողով IV վ.” Պ. 1930, տ. 23-24:  
 clv Նանա, էջ 257-258:  
 clvi Քանի որ այս հատվածը, որը ներկա է երեք ձեռագրերում էլ, և չի բովան-  
դակում իմաստային ավարտուն վիճակ, հարմար հանարեցինք դուրս բերել  
բնագրից. զի թէ կենդամի եւ առողջ անդ եղեալ լինէր, նախքան զշորս աւրի հ  
տեղույն պղծութեն եւ ժահահոտութեն:   
 Յարց. էջ 671:  
 clviii Նանա, էջ 262:  
 clix Նանա, էջ 262-263:  
 clx Նանա, էջ 263-265:  
 clxi Նանա, էջ 263, առաջին գործի վերջամասում եղող հորդորակին է վերաբերում  
Սուլր Գր. Տաթկացու լուծնունքը:  
 clxii Անդ:  
 clxiii Անդ:  
 clxiv Անդ:  
 clxv Անդ:  
 clxvi Անդ:  
 clxvii Անդ:  
 clxviii Անդ:  
 clxix Անդ:  
 clxx Անդ:  
 clxxi Անդ:  
 clxxii Անդ:  
 clxxiii Անդ:  
 clxxiv Անդ:  
 clxxv Անդ:  
 clxxvi Անդ:  
 clxxvii Անդ, էջ 264:  
 clxxviii Անդ:  
 clxxix Անդ:  
 clxxx Անդ:  
 clxxxi Նանայի մեկնության հորդորակի մեջ այս բառը չկա:  
 clxxxii Անդ:  
 clxxxiii Նկատի ունի «Աւրենք թագաւորաց Կոստանդիանոսի, Թեոդոսի եւ Լետոնի՝  
թագաւորաց հռուայցոց» (Syrisch-romisches Rechtslehr aus dem funften  
jahrhundert», Leipzig, 1880, s. 95-141), կամ «Քաղաքային օրենք Ներսիսի  
Լամբրոնացույ ըստ Կոստանդիանոսի ... » երկը (աշխատ. Կ. Դ. Բասմաշյան,  
Փարիզ, 1907, էջ 9-41):  
 clxxxiv Նանա, էջ 267:  
 clxxxv Նանա, էջ 268:  
 clxxxvi Նանա, էջ 269:

#### ԳԼՈՒԽ ԺԲ

cxxxvii տե՛ս Գանձասար, Բ, 1992, էջ 257-258:

cxxxviii Նամա, էջ 283:

cxxxix «Երեքսրբեանի» դավանաբանական մեկնությունը տրված է նաև Ս. Ստեփանոս Սյունեցու(Ը դ.) ժամանակագրության մեկնության Դ գլխում, ուր հայ Եկեղեցու դավանական տեսակետը «հիմնավորվում է նրանով, որ Կույսից մարմնացած Բանը(միտքը) Աստված է. Նա հզոր է, որովհետև իրու Երկրորդ Աղամ հաղթեց սատանային, Աննահ է, որովհետև իրու Աստուծու անմահ և անապական Բան, մեզ անմահացրեց մարմնով։ Արդ Սուրբ Աստուծած"-ի երիցս արտաքերմամբ խորհրդական իմաստով խաչի վրա Յոր և Սուրբ Յոզու՝ Որդու հետ համակամ լինելու ենք ծանուցում», տե՛ս Յակոբ Քյոսեյան, «Խորհրդանշանը Ստեփանոս Սյունեցու Եկեղեցաբանական ժառանգության մեջ» (հրատ. ընթացքում):

cxc Յարց., էջ 631-635:

cxcı Նամա, էջ 296:

#### ԳԼՈՒԽ ԺԳ

cxcii Տե՛ս Ոսկ., էջ 765:

cxciii Վկայությունը բացակայում է Կոյնես Յոռմայեցու(92-101) մեզ հասած միակ Երկում՝ կորնթացիներին հղած Ա նամակում, տե՛ս «Գանձասար» Ե, էջ 114-136, Զ, էջ 203-227:

cxciv Տե՛ս Ոսկ., էջ 769:

cxcv Յնմտ. Յովիաննու Ոսկեբերանի ի Կորնթացւոց թղթոյն մեկնութենէ, «Բանբեր մատենադարանի», 1994, թիվ 16, էջ 185:

cxcvi Տե՛ս Կիւրեղ Ալեքս., «Գիլր Պարապման», էջ 472-474:

#### ԳԼՈՒԽ ԺԸ

cxcvii Բարի այսօրինակ ստուգաբանությունն, ինչպես երևում է, քաղված է «Բառք Եբրայեցւոց» բառարանից, որտեղից էլ այն ներմուծվել է Երեմիա Սեղրեցու «Բառգիրք Յայոց»-ի մեջ (քննակ. բնագ. առաջարան և ծանոթ. Մ. Մ. Ամալյանի, Եր., 1975, էջ 163, տ. 230):

cxcviii Բ Ծ ի լուս. «Ոսկի» (=Ոսկեբերան):

cxcix Բ Ծ ի լուս. «Լատին» (=լատին հեղինակներ):

#### ԳԼՈՒԽ Ի

cc Անվան այսօրինակ ստուգաբանությունը ամենայն հավանականությամբ քաղված է «Բառք Եբրայեցւոց» բառարանից, որտեղից և մուտք է գործել Երեմիա Սեղրեցու բառարան, էջ 122, տ. 205: